Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Նուիրուած է

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

զոհաբերութեան
առաջին տարեդարձին

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՑԱԽԻ ԹԵՄ
«ԳԱՆՁԱՍԱՐ»
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

DIOCESE OF THE ARMENIAN APOSTOLIC
CHURCH OF ARTSAKH
"GANDZASAR"
THEOLOGICAL CENTER

Գանձասար

Զ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
"GANDZASAR" THEOLOGICAL REVIEW

Գլխաւոր խմբագիր
Մեսրոպ քահանայ Արամեան

Պատասխանատու քարտուղար
Տիգրան Խաչատրեան

Տեխնիկական խմբագիր
Յովհաննէս Կիզողեան

Գեղարուեստական խմբագիր
Արեգ Աաատրեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
REPUBLIC OF ARMENIA
ԵՐԵՒԱՆ 1996 YEREVAN

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՎԻ

ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՑ

Սոյն Հրատարակը
պատրաստեալ է
ԱՏՏԻՍ
ընկերութեան
ծախսերովն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

7 Մուտք

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

11 ԱԼՕՅՍ ԳՐԻԼՄԱՅԵՐ
Քաղկեդոնի ժողովը. ընդհարման մի վերլուծութիւն

44 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս Նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ի՛ցն» ժողովածուն

79 ԱՆԴՐԷԱ ԲԱՐԲԱՐԱ ՇՄԻԴՏ
Հայոց թաղման ծէսը մահացածների պաշտամունքի հին քրիստոնէական հաւատալիքների շրջանակում

110 ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱՅ ՏԻԳՐԱՆԵԱՆ
Խաչվերացի տօնի աւանդութիւնները

132 ԱՋԱՏ ԲՈՋՈՅԵԱՆ
Հայ եկեղեցին տիեզերական նուիրապետութեան աստիճանակարգում

148 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ
Ս. Եպիփան Կիպրացու Աւետարանի մեկնութեան հայերէն թարգմանութիւնը

160 ՇԱՌԼ ՈԸՆՈՒ
Աստուածայայտնութեան տօնը Երուսաղէմում Դ եւ Ե դարերում՝ ըստ Երուսաղէմի հայկական ճաշոց գրքի

180 ԳԼԻԼ ԲԱՆԱՏԷԱՆՈՒ
Որմնանկարը հին եւ միջնադարեան Հայաստանում

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

203 Ս. ԿՂԵՄԷՍ ՀՌՈՄԷԱՑԻ
Կղեմէսի առաջին նամակը կորնթացիներին

228 ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ
Անանիայի հայոց վարդապետի՝ ի խնդրոյ... (շարունակութիւն)

278 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ
Յաղագս Նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ի՛ցն

298 ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱՅ ՈՒՋՈՒՆԵԱՆ
Յովհաննէս Սարկաւագ վարդապետ

308 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ
Հարցումն վասն գայթակղութեան
Հարցումն վասն մեղաց եւ հանդերձելոց
Նորին խրատք մանկանց
Յաղագս կուսութեան
Եթէ արժան իցէ թողուլ զեղբարս

336 ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Մխիթար Գոշի՝ վրացիներին ուղղուած դաւանական թուղթը

137 ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՇ
Թուղթ առ Վրացիսն

403 ՄԽԻԹԱՐ ՍԿԵՒՌԱՑԻ
Մխիթար քահանայ Սկեւռացու Հակաճառութիւնները տասներկու առաքեալների համապատուութեան մասին

421 ԱՐՄԷՆՈՒՀԻ ՍՐԱՊԵԱՆ
Յովհաննէս Երզնկացի-Պլուզ

426 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Յաւուր Ծննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի

454 ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
Յովհաննէս Պլուզ-Երզնկացու «Յաղագս միաբանութեան եղբարց» խրատական թուղթը

459 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Յաղագս միաբանութեան եղբարց

473 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Ամանորեայ օրհնութիւն եւ խրատք առ բնակիչսն Եկեղեաց գաւառի

478 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Ներսէս Լամբրոնացու «Յովհաննէս աւետարանչի Ննջման պատմութեան» մեկնութիւնը

482 Սուրբ Յովհաննէս առաքեալի եւ աւետարանչի ննջումը

487 ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ
Յովհաննէս Աստուածաբան աւետարանչի Ննջման պատմութեան աղօթքի խօսքերի մեկնութիւնը

550 ԱՒԵՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Կիրակոս Երզնկացի

557 ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Թուղթ առ Կարնեցիս

ՅԱՒԵԼՈՒԱԾ

587 Ղպտի եկեղեցի

616 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ
Զաքարիա կաթողիկոս Չագեցի, «Ճառք»
(աշխատ. հ. Պօղոս Անանեանի)

623 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Հայ աստուածաբանական մատենադարան

© «ԳԱՆՁԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոն

Շարուածքը՝ «ԳԱՆՁԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոնի համակարգչային ծառայութեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ 375009,
ԵՐԵՒԱՆ, ՏԷՐԵԱՆ 91
91, TERIAN, YEREVAN, 375009,
REPUBLIC OF ARMENIA
Հեռ./Tel. 58.12.32, 58.14.21 • Հեռապատճէն/Fax 56.59.16
Էլեկտրոնային փոստ/E-mail root@ganzasar.arminco.com

ՄՈՒՏՔ

«Գանձասար» հանդէսի այս հատորը լոյս է տեսնում զգալի կառուցուածքային եւ բովանդակային փոփոխութիւններով: Յետայսու հանդէսը բաղկացած է լինելու երկու հիմնական բաժիններից՝ «Ուսումնասիրութիւններ», «Բնագրեր եւ թարգմանութիւններ»: Նախկին «Սուրբ Գրոց մեկնութիւններ», «Վարք սրբոց», «Հայոց նոր վկաները», «Հոգեւոր մշակոյթ» բաժինների նիւթերը ամփոփուած են լինելու վերը նշուած բաժիններում: Սակայն վարքագրական ժանրի ծաւալը խիստ սահմանափակ է լինելու. ներկայացուելու են միայն այնպիսի վարքեր եւ վկայաբանութիւններ, որոնց բնագրերը ցարդ չեն հրատարակուած:

Այս հատորից սկսեալ՝ «Գանձասար» հանդէսը դառնում է հայ հոգեւոր ժառանգութեան վերհանմանը նուիրուած ուսումնասիրական-բնագրագիտական մի ժողովածու, որը լոյս է տեսնելու տարին մէկ անգամ: Նախկին հատորներում առկայ քարոզիսական տարրը պատշաճ նկատուեց զետեղել առաւել մատչելի հրատարակութիւնների մէջ, որոնք կարող են կատարուել թէ՛ «Գանձասար» կենտրոնի, թէ՛ այլ հրատարակչութիւնների կողմից:

Այս փոփոխութիւնները պատահական չեն եւ արդիւնք են «Հայ աստուածաբանական մատենադարան» շարքի հրատարակման պատմական ծրագրի, որի իրականացմանը ձեռնամուխ է եղել «Գանձասար» աստուածաբանական կենտրոնը: Այս մատենաշարը պիտի ներառի Հայ Առաքելական Եկեղեցու ողջ աստուածաբանական ժառանգութիւնը՝ ըստ ժամանակագրական կարգի: Այժմ կենտրոնը հիմնականում աշխատում է այդ ծրագրի առաջին փուլի վրայ, որն ընդգրկում է Գրիգոր Լուսաւորչից մինչեւ Յովհաննէս Սարկաւագ (1129 թ.) ժամանակաշրջանը:

Նկատի ունենալով այս՝ «Գանձասար» հանդէսը փաստօրէն վերածւում է այս աշխատանքներին նուիրուած տարեգրքի, որտեղ արտացոլուելու են նշուած ծրագրի ընթացիկ աշխատանքների արդիւնքները: Սակայն հանդէսում կարող են տեղ գտնել նաեւ այլ ուսումնասիրութիւններ եւ բնագրեր, որոնք կարեւոր կնկատուեն Հայ Ե-

կեղեցու աստուածաբանութեան եւ հոգեւոր աւանդութեան ճանաչման տեսանկիւնից:

Անշուշտ, այսօրինակ փոփոխութիւնների պատճառով հանդէսը դառնում է աւելի ծաւալուն եւ ոչ այնքան դիւրամատչելի իր բովանդակութեամբ: Ընթերցողից կպահանջուեն աւելի մեծ ջանքեր եւ իմացական մակարդակ՝ ընկալելու համար առաջադրուող նիւթերը:

Հոգեւոր գրականութեան ուսումնասիրութիւնը եւ արդիականացումը (ոչ պարզունակացումը) միանգամայն անխուսափելիօրէն յանգեցնում են աւելի գիտական եւ լրջմիտ մօտեցման: Եւ ահա թէ ինչու: Հոգեւոր կեանքի անկման հետեւանքով մենք մի կողմից՝ օտարացել ենք մեր հոգեւոր ժառանգութիւնից, միւս կողմից՝ այդ ժառանգութեան փոխանցման ոչ բաւարար մակարդակի պատճառով այն կրել է երբեմն զգալի աղաւաղումներ: Ուստի, երբ մենք փորձում ենք հաղորդակցութիւն հաստատել այն հոգեւոր արժէքների հետ, որոնք անջրպետուած են մեզանից ճանաչողական, ժամանակային, մշակութային, լեզուական զանազան պատնէշներով, պէտք է ծայրաստիճան զգուշութիւն ցուցաբերենք... որպէսզի աղաւաղումները սխալ պատկերացումների առիթ չհանդիսանան, եւ մակերեսային մօտեցմամբ չվրիպենք էական գիտելիքից: Հետեւաբար քննական բնագրերի, գիտական թարգմանութիւնների եւ ծաւալուն ուսումնասիրութիւնների մէջ պէտք է նկատել ոչ թէ արհեստական եւ անիմաստ բարդացումներ, այլ նախ եւ առաջ մատուցման մաքրութեան, աւանդութեան անաղարտ փոխանցման ճիգեր: Այսպիսի քննական մօտեցումը բնորոշ է եղել մեր հայրերին, որոնք իրենց գրուածքներում մշտապէս դիմել են զանազան սրբագրութիւնների եւ ստուգաբանութիւնների, անգամ Սուրբ Գրքի թարգմանութեան խնդրում:

Յուսով ենք, որ մեր այս համեստ ճիգերը օգտակար կլինեն նրանց համար, ովքեր փորձում են մերձաւորուել մեր հոգեւոր ժառանգութեան ակունքներին եւ վերահաստատուել մեր հայրերի լուսաւոր աւանդութեան ծիրի մէջ:

Մեսրոպ քահանայ Արամեան

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալոյս Գրիլմայեր

ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԸ. ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

431 թ. Եփեսոսի ժողովի պէս Քաղկեդոնի ժողովն էլ սկիզբ դարձաւ առ այսօր շարունակուող պառակտումների. այս բաները պէտք է ծանրակշիռ ազդեցութիւն թողնեն մեր գիտակցութեան վրայ: Բոլոր եկեղեցիները չարչարուել են [այս պառակտումներով, ուստի] բոլոր քրիստոնեաները պէտք է սուր հետաքրքրութիւն ցուցաբերեն դրանց յաղթահարման փորձով: Մեզ բաժանող գործօնները թուագրւում են 1500 տարի առաջ ժամանակաշրջանին: Այսպիսով, հրամայական է դարձել կանգ առնել «հիւանդութեան պատմութեան» վրայ, որը պէտք է ներառի այս, ինչպէս նաեւ քրիստոնէական աւանդութեան նախընթաց ժամանակաշրջանը՝ յայտնաբերելու բոլոր այն գործօնները, որոնք սիստեմատիկօրէն *խանգարում են մեր հաղորդակցութիւնը: Սակայն այս գործօնների* ցուցադրումը *համընդհանուր դեղամիջոցը չէ. աւելին՝ անհրաժեշտ կլինի քննադատել եւ մանրամասնօրէն քննել մեր աւանդութիւնների եւ բանաձեւերի այն կողմերը, որոնք նպաստում են պառակտմանը՝ բարի հաւատի մղումով երկու կողմերում: Երբ էլ որ հերձուածները ծագէին «բարի հաւատից», անշուշտ գոյութիւն ունէին նաեւ անյաջող հակազդեցութիւններ, թիւրիմացութիւններ, դիմացինի սխալ քննադատում, տեղեկութեան սակաւութիւն, վատ կամ անբաւարար մեկնաբանութիւն եւ այլն:*

Միութեան հիմքը, սակայն, թաղուած է բաժանման ակնյայտ պատճառների տակ: Որովհետեւ բոլոր նրանք, ովքեր խզեցին հաղորդակցութիւնը 431-ին կամ 451-ին, դա արեցին՝ պաշտպանելու եւ հաստատելու Քրիստոսի իրենց մեկնաբանութիւնը եւ մասնաւոր խոստովանութիւնը, որը նրանք համարում էին միակ ճշմարիտը: Ուստի աւելի կարեւոր կլինի փորձել ու բացայայտել թաքնուած միաւորող գործօնները, որոնք խոր նստած են մեր գիտակցութեան եւ ենթագիտակցութեան *մէջ: Այսուհանդերձ մեր խնդիրը պիտի լինի դարձեալ երեւան հանել այն իրականութիւնը, որ Քրիստոսի սէրն ընդհանուր է բոլորի համար, որովհետեւ հէնց այս Հաւատի եւ այս Սիրոյ մէջ ենք*

մենք միշտ միաւորուած եղել: Մեզ բաժանող գործօնները այլ ոլորտի են պատկանում, այսինքն՝ լեզուի, բանական խոկման եւ խորհրդածութեան՝ իր յղացքներով եւ ծրագրերով: Քանի որ մենք չպէտք է կանգ առնենք մեր ի Քրիստոս Հաւատի բուն միջուկի եւ անբացատրելի լիութեան վրայ, մենք պէտք է բարձրացնենք մէկ հարց. որո՞նք էին այն տարրերը մեր լեզուի եւ բանաձեւման մէջ, որոնք թիւրիմացութիւն էին առաջացնում: Ջկա՞յ պատճառի արտայայտման այլ ճանապարհ, որն ի վերջոյ իսկապէս միաւորում է մեզ: Կամ աւելի լաւ է՝ չե՞նք կարող մենք բոլորիս համար ընդհանուր եզրերով խօսել մեր Տիրոջ մասին, Ում մենք միասնաբար խոստովանում ենք որպէս Նոյնը:

Թերեւս նոյնիսկ աւելի հեշտ է բովանդակութեան եւ արտայայտութեան հաղորդակցութիւն հիմնել նրանց միջեւ, ովքեր դեռեւս հասկանում են 431-ի եւ 451-ի լեզուն, լինեն նրանք քաղկեդոնական կամ ոչ, քան՝ միեւնոյն Եկեղեցով միաւորուածների միջեւ, որոնք հակադրւում են իրենց պահպանողական կամ առաջադիմական կեցուածքներով: Բողոքականութեան ազդեցութեան ներքոյ Արեւմտեան Եկեղեցին աւելի հակուեց զարգացնելու կամ քննելու իր աստուածաբանութիւնը, քան Արեւելեան Եկեղեցիները, որոնք շատ թոյլ հաղորդակցութիւն ունեցան քննադատութեան, լուսաւորութեան եւ ազատականութեան հետ, եւ որոնք աւելի զբաղուեցին քարոզութեամբ եւ հայեցողութեամբ, քան խորհրդածութեամբ*: Արեւելքի եւ Արեւմուտքի այս տարամէտ զարգացման պատճառով էկումենիկ շփումները յատուկ նշանակութիւն են ստանում այսօր: Արեւմուտքում տիրող յարաճուն քննադատութեան հետ Արեւելքի վկայութիւնը յատկապէս անհրաժեշտ կլինի: Միւս կողմից՝ մենք այսօր կարող ենք տեսնել, որ անհանգստութիւնը ծագում է հէնց այնտեղ, որտեղ եղել են զօրեղ աւանդութիւններ: Աշխարհում ամէնուրեք խառնաշփոթ է տիրում՝ իսլամում, ինչպէս նաեւ քրիստոնէութեան մէջ, ինչը կարող է անկառավարելի արտայայտութիւն ստանալ Արեւմուտքում, մոխիրներում մորմոքող կրակների տեսք կարող է ստանալ արեւելեան բլոկի երկրներում: Այսպիսով, Արեւելքի Եկեղեցիները կարող են նոյնպէս սովորել արեւմտեան փորձառութիւնից, որպէսզի պատրաստ լինեն համարձակօրէն դիմաւորելու գալիք ճգնաժամերը:

* Նախադասութիւնը հրատարակիչների կողմից թիւրիմացաբար բաժանուած էր երկու առանձին նախադասութիւնների, ինչն անորոշ էր դարձնում նրա իմաստը (թարգմ.):

Մօտենալու համար մեր ժամանակներին՝ եկէք փորձենք ցոյց տալ, թէ ինչն է միաժամանակ մեզ միաւորում եւ ինչը՝ բաժանում Քաղկեդոնի ժողովի կապակցութեամբ՝ այնուամենայնիւ որոշ չափով նկատի ունենալով Քաղկեդոնին նախորդող եւ յաջորդող պատմութիւնը:

Ա. ԵՓԵՍՈՍԻՆ ԵՒ ՔԱՂԿԵԴՈՆԻՆ ԲԱԺԱՆՈՒԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԱՔՆՈՒԱԾ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Դ դարը աստուածաբանական մտքի մեծ դպրոց դարձաւ Եկեղեցու առաջնորդների համար: Նիկիոյ ժողովի (325) շուրջ ծաւալուած վիճաբանութիւնը որոշակիօրէն ցաւալի եւ աղէտալի էր Եկեղեցու համար: Ներքին վէճերը ծաղրանքի առարկայ էին դառնում հեթանոսների համար: Այս վէճերը, սակայն, Եկեղեցու եւ աստուածաբանութեան համար ընդհանուր առմամբ աւելի օգտակար էին, քան վնասաբեր: Այս օգտակարութիւնը երկու նիստ ունէր.

ա) Նիկիոյ ժողովն ազատագրում էր միջին-պլատոնական մտածողութիւնից, որ խիստ անխտրաբար ընդունուել էր քրիստոնեայ աստուածաբանների կողմից իրենց վէճերում ընդդէմ հեթանոսութեան:

բ) Նիկիոյ ժողովի գլխաւոր եզրի՝ համագոյութեան (ὁμοουσία) համար պայքարի ընթացքում քրիստոնէութեանը հարազատ Աստուծոյ պատկերը, մինչեւ իր յետագայ արտայայտութիւնը Եկեղեցու դաւանութեան եւ քարոզութեան մէջ, աւելի բնականօրէն ըմբռնուեց, աւելի խոր նշանակութիւն ձեռք բերեց իր բովանդակութեան մէջ եւ ձեւակերպուեց բանաձեւով:

1. Քրիստոնէութեան ապահովագործումը

Սա Նիկիայի գլխաւոր նուաճումն էր, որը, սակայն, ակնյայտ էր դառնում միայն աստիճանաբար: Այս բանի վրայ մեծապէս ազդեց նաեւ Արիոսը, որ Ալեքսանդրիայի երէցներից էր: Նա ցանկանում էր պաշտպանել Աստուծոյ միակութիւնը եւ եզակիութիւնը: Նա ծանօթ էր Եկեղեցու քարոզութեանը Հօր եւ Որդու (եւ Սուրբ Հոգու) մասին, սակայն զուգահեռ է անցկացնում այս քարոզութեան եւ միջին-պլատոնականների տիեզերաբանական (կոսմոլոգիա) սխեմայի (նախապատ-

կեր) միջեւ եւ յանգում եզրակացութեան, որ Որդին պէտք է դուրս հանուի աստուածային ոլորտից եւ վերագրուի միակի եւ հիւլէի (ὕλη) միջեւ գտնուող միջին-պլատոնական ոլորտին: Սա կարելի է լուսաբանել հետեւեալ կերպ.

Աստուածաշնչային.	Արիոսական - միջին-պլատոնական.
Հայրը	Միակը (Μονάς, Μονάδος)
Մարմնաւորուած Որդին	(միջանկեալ ոլորտ)
Հոր եւ Որդու Հոգին	Բանը (Λόγος), Միտքը (Νοῦς)
Արարուած աշխարհը	(Հոգին (Πνεῦμα))
	Հիւլէն (Ὕλη)

Հարցը հետեւեալն էր. որտեղո՞վ պէտք է քաշուի այն գիծը, որը բաժանում է անստեղծ ստեղծուածից: Աստուծոյ միակութիւնը պահպանելու համար Աստուծոյ քրիստոնէական պատկերացման մէջ, ինչպէս այն հասկացւում էր միջին-պլատոնական իմաստով, Արիոսը Որդուն (Բան, Միտք) վերագրում էր արարուած միջանկեալ ոլորտին՝ որպէս միջնորդ բացարձակ միակութեան եւ բազմակիութեան սկզբունքի՝ հիւլէի միջեւ: Արիոսի կենտրոնական միտքը յստակօրէն ակնյայտ է Աստերիոսի (մահ. 341 թ.) հետեւեալ հատուածից.

«Նա (Բանը) առաջինն է արարուածների մէջ եւ մէկը՝ ճանաչելի բնութիւններից: Եւ ճիշտ այնպէս, ինչպէս արեւը միայն մէկն է լուսաւոր մարմիններից տեսանելի ոլորտում, մինչդեռ լուսաւորում է ողջ աշխարհը համաձայն Իր Արարչի կարգաւորութեան, այնպէս էլ Որդին, Ով մէկն է ճանաչելի բնութիւններից, ճառագայթում եւ լուսաւորում է բոլոր նրանց, ովքեր իմանալի տիեզերքում (νοετός κόσμος) են»[1]:

Թէպէտ Որդին (եւ Հոգին) գերակայ է Իրենից բացի բոլոր արարածների նկատմամբ, որովհետեւ Նա առաջին եւ կատարեալ արարածն է, Նա դեռեւս մէկն է արարածներից (եւ նմանապէս Հոգին՝ Իր համապատասխան մակարդակում): Արիոսականները նորից ու նորից

1 Մէջբերուած է ըստ՝ Fr. Ricken, Nikaia als Krisis des altchristlichen Platonismus, "Theologie und Philosophie" 44 (321-341), 331:

դիմում էին [Առակ. Ը 22] եւ [Կող. Ա 15] տեղիներին, որոնց խօսքերը, ինչպէս նրանք կարծում էին, արտայայտում են Որդու արարած լինելը: Արդիւնքում Արիոսը եւ նրա հետեւորդները Որդուն եւ Սուրբ Հոգուն առաքող Հոր քրիստոնէական քարոզութիւնը մեկնաբանում էին ըստ միջին-պլատոնական պատկերացման աշխարհի մասին՝ իր զանազան մակարդակներով. այս աշխարհի, որը ծաւալուել է գերագոյն, անիմանալի, անբաժանելի, անեղ եւ նոյնիսկ Բանի համար անիմանալի Միակից՝ միջանկեալ ոլորտով դէպի ներքեւ՝ դէպի անձեւ հիւլէն՝ նիւթը: Թէպէտ խիստ մէկաստուածութիւնը պահպանւում էր, սակայն այս մէկաստուածութիւնը ծագում էր յունական տիեզերաբանութիւնից (կոսմոլոգիա) եւ ոչ թէ քրիստոնէական քարոզութիւնից եւ նրա փրկաբանութիւնից (սոտերոլոգիա):

Նիկիան կ. Գոլսի ժողովի (381) հետ միասին միւս կողմից ներկայացնում էր Աստուծոյ մասին Արիոսի տիեզերաբանական պատկերացման մերժումը: Որդին (Բանը) ծնուել է Հօրից, ոչ թէ արարուել. Նա համագոյ է (ὁμοούσιος) Հօրը: Նա յաւիտեաններից պատկանում է Աստծուն եւ որոշակիօրէն մէկ մասն է աստուածային էութեան: Այսպիսով, Աստուծոյ մէջ միութեան եւ տարբերութեան հարցը ներկայացւում է աւելի նոր եւ զօրեղ կերպով: Սակայն քրիստոնէութիւնը պահեց իր սեփական ասանդութիւնը, քանի որ նա իր աշխարհընկալումից օտարում էր միջին-պլատոնական միջանկեալ ոլորտը, թէպէտ վերջինիս վերակենդանացման փորձութիւնը երեւան էր գալիս նորից ու նորից (այս միտումը ամենացայտուն կերպով առկայ է Եւագրիոսի որոգինէականութեան մէջ, ինչն Արեւմուտքում յայտնի դարձաւ Ապոլինիոսի միջոցով): Մի կողմից՝ գոյութիւն ունի Արարիչը (Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու միութեամբ), միւս կողմից՝ գոյութիւն ունի արարուած ոլորտը:

2. Աստուծոյ քրիստոնէական պատկերը

Ապահելլենացման գործընթացը իր զարգացման վճռորոշ փուլին հասաւ Դ դարում, մասնաւորապէս՝ Գրիգոր Նիւսացու օգնութեամբ, ով, որպէս առաջին մտածողներից մէկը, ապացուցեց Աստուծոյ անսահմանութիւնը՝ հակառակ պլատոնա-արիստոտելեան փիլիսոփայութեան, եւ ներմուծեց այս գաղափարը աստուածաբանութեան պատմու-

թեան մէջ: Այսպիսով, Նիւսացու՝ Աստուծոյ մասին տեսական պնդումներն ի յայտ եկան կատարելապէս այլ լոյսի ներքոյ: Յունական բնազանցութեան (մետաֆիզիկա) գիտելիքը փոխարինուեց հաւատի լարումով[2]: Դրանից յետոյ միայն Աստուածաշնչի արարչական գաղափարը, արդէն ենթարկուած լինելով Նիկիոյ ժողովի ազդեցութեանը, ճշմարիտ հեռանկար ստացաւ, քանի որ այն այլեւս չէր բնութագրւում անսահմանութեամբ (ἄπειρον), որը, չսահմանուած լինելով, ունի անվստահութիւն, քան վստահութիւն էր յարուցում յունական փիլիսոփայութեան այդ մասի նկատմամբ:

Այնուամենայնիւ առաւել նշանակալից է այն, որ մեծ կապադովկեան աստուածաբանները, մասնաւորաբար՝ Ալեքսանդրինէսի, Որոգինէսի եւ Դիդիմոսի կատարած նախապատրաստութիւնից յետոյ, ի վիճակի էին բառային ձեւակերպումներով արտայայտել Մի Աստուծոյ՝ որպէս Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու քրիստոնէական քարոզութիւնը (ինչպէս այն տեսանելի էր փրկաբանական տեսանկիւնից). սա, այսինքն՝ «Մի Աստուծոյ մէջ կան Երեք Անձեր (հիպոսթասիս, պրոսոպոն) մի բնութեան կամ էութեան մէջ (ֆիսիս, ուսիա)» բանաձեւը, արտայայտում էր այն մակարդակը, որի վրայ իրական էր դառնում Աստուծոյ միութիւնը, եւ այն մակարդակը, որի վրայ ըմբռնելի էր դառնում տարբերութիւնը: Գրիգոր Նիւսացին եւ Գրիգոր Նազիանզացին առաջինն էին, որ համարձակուեցին կատարել որոշ տեսական դատողութիւններ, որքանով որ դա հնարաւոր էր ընդհանրապէս: Մասնաւորաբար հէնց Գրիգոր Նիւսացին էր, որ փորձում էր սահմանել, թէ որտեղ է վերջանում հիպոսթասիսը (անձ) եւ սկսւում ֆիսիսը (բնութիւն): Սա առաջնորդում էր (թէպէտ պարզապէս առաջին քայլն էր) անձի գաղափարի բացայայտմանը, որը պէտք է առանձնայատուկ նշանակութիւն ունենար մարդկային մտքի պատմութեան, ինչպէս նաեւ մարդկային իրաւունքի[3] պատմութեան համար: Մենք հակիրճ

2 Հմմտ. E. Mühlenberg, Die Unendlichkeit Gottes bei Gregor von Nyssa, Gregors Kritik am klassischen Gottesbegriff der Metaphysik, Forschungen zur Kirchen - und Dogmengeschichte, 16 (Göttingen, 1966), 202; Հիմա ճ. Ս. Ժ. Մակդերմոտը պատրաստում է ապացուցել, որ Աստուծոյ անսահման բնութեան այս ըմբռնումն առկայ է ս. Հիլարի Պուատիէի մօտ (պատրաստում է հրատարակութեան):

3 Հմմտ. A. Halder-A Grillmeier, յօդուած "Person", Lexicon f. Theologie u. Kirche 5 (1961), 230-235; M. Müller-A. Halder, յօդուած "Person", Sacramentum Mundi 3 (Freiburg, 1969), 1115-1127:

կանդրադառնանք սրան, որպէսզի հասկանանք Նեստորին եւ Եփեսոսի ժողովի ժամանակների ճգնաժամը:

Գրիգոր Նիւսացին, հետեւաբար, տեսնում էր, որ անհրաժեշտ է սահմանել հիպոսթասիսի եւ ֆիսիսի առնչակցութիւնը, եթէ թրեյս հիպոսթասեյս* (երեք անձեր) բանաձեւն իսկապէս պէտք է պաշտպանուէր ընդդէմ իր հակառակորդների: Յերոնիմոսը, օրինակ, մեծապէս բարկացած էր՝ դրանում եռաստուածութեան խոստովանութիւն տեսնելով: Դժբախտաբար, Նիւսացին անյաջող ուղով շարժուեց առաջ: Նա բաւականին անխոհեմ գտնուեց՝ հիմնաւորելով իր վերլուծութիւնները ens phisicum concretum-ի վրայ, ինչպէս հասկացւում էր ստոիկների կողմից: Այստեղ յունական ֆիսիս ըմբռնման դեռեւս գերիշխող ազդեցութիւններն ակնյայտ դարձան: Ի՞նչ է հիպոսթասիսը: Ens phisicum concretum-ը նախ եւ առաջ ունի իր մէջ անորոշ էաւորութիւն՝ ուսիա հիւլէ, որը մաքուր գոյացութիւն է առանց սահմանիչ յատկութիւնների (մի ὑποκείμενον եւ ուրիշ ոչինչ): Այս գոյացութեանը գումարւում են ընդհանուր որակները (κοινή ποιότης), օրինակ՝ մարդեղութիւնը՝ ընդհանրապէս բոլոր մարդկային էակներին: Այսպիսով, գոյութեան եկող ens concretum-ի վերջնական կազմաւորումն ամբողջանում է, հէնց որ գումարւում են առանձնայատուկ (մասնաւոր) որակները (ἰδία ποιότης կամ ἰδιότητες կամ χαρακτῆρες): Արդիւնքը անշփոթելի ինդիւիդումն է կամ հիպոսթասիսը: Եթէ մինչ այդ հիպոսթասիսը նաեւ նշանակել է գոյութիւն եւ այդպիսով Նիկիոյ ժողովին կարող էր համարժէք լինել ուսիային, ապա յետոյ զանազանութիւն կատարուեց այս երկու գաղափարների միջեւ:

Այնուհետեւ Գրիգոր Նիւսացին կիրառեց այս փիլիսոփայական վերլուծութիւնները՝ Մի Աստուածութեան մէջ զանազանելու Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Նա պնդում էր, որ «Աստուծոյ մէջ կան երեք հիպոսթասիսներ, սակայն՝ միայն մէկ ուսիա»: Ուստի հետեւում է, որ Հայրը մէկ ուսիան է որոշակի յատկութիւններով, մինչդեռ Որդին նոյն ուսիան է այլ խարակտերներով, եւ վերջապէս՝ Սուրբ Հոգին միեւնոյն [բնութիւնն է] մէկ այլ խարակտերներով: Գրիգոր Նիւսացին Իր կողմից գրուած մի նամակում, որը թէպէտ Մինի հրատարակութեան մէջ յայտնուել է որպէս Բարսեղի նամակների ԼԸ թուղթ, բե-

* Ցոգնակի ձեւն է հիպոսթասիսի:

ում է մէկ արեւի եւ բազմադոյն ծիածանի օրինակը՝ ցոյց տալու համար, որ Աստուծոյ մէջ կարող է մէկ բնութիւն լինել, մինչդեռ այնտեղ կան այնուամենայնիւ երեք հիպոսթասիսներ *(PG 32, 328C, 333B-336A): Անկասկած, Նիւսացին առաջնորդւում էր ներըմբռնմամբ՝ բաւականին ճշտօրէն ասելու, որ Աստուծոյ մէջ միութեան եւ տարբերութեան դոյակերպերի զանազանութիւն պէտք է կիրարկուէր: Որոգինէսն արդէն ցոյց էր տուել սա Հերակլիդէսի հետ իր երկխօսութեան մէջ (յայտնաբերուած Տուրայի մօտ, հրատ. Scherer, Paris, 124, 7-126, 11): Սակայն տեսութիւնը ներդաշնակ չգտնուեց այս ներըմբռնմանը: Այստեղ վճռորոշ սխալն այն էր, որ Նիւսացին* հիպոսթասիսը *սահմանելիս չափից շատ կենտրոնանում էր* ֆիսիսի *վրայ: [Նիւսացու մօտ]* հիպոսթասիսը *դեռեւս ընդհանուր* ուսիայի *մի որակական սահմանում է: Այս վերլուծութիւններում չափից աւելի կարեւորութիւն տրուեց «բնութեան նիւթական իրողութեանը», թէպէտ Նիւսացին անհատական յատկութիւնների միջեւ* (τὰ τοῦ ἔθους γνωρίσματα) *ներդրեց նաեւ իմացական-բարոյական ներգործութիւնները: Այսպիսով,* ֆիսիսից *առանձնացումը միայն մասնակիօրէն իրագործուեց:*

Գրիգոր Նիւսացին եւ Գրիգոր Նազիանզացին առաջինները եղան, ովքեր Երրորդութեանը վերաբերող աստուածաբանական եզրաբանութիւնը փոխանցեցին Քրիստոսին վերաբերող եզրաբանութեանը: Այս ենթատեքստի մէջ Գրիգոր Նիւսացին պէտք է իսկապէս նկատէր, որ իր վերլուծութիւնների դիտաւորութիւնը սկզբունքօրէն ճիշտ էր, սակայն յաջող ելքը դեռեւս ապահովուած չէր: Այս առումով մենք քննարկում ենք քրիստոսաբանական խնդիրը, որը պէտք է վճռական կէտի հասնէր Նեստորի պատճառով. եւ կապադովկացիները, յատկապէս Նիւսացին եւ նրա հիպոսթասիսի *վերլուծութիւնները, մեծ ներդրում կատարեցին այս խնդրի մէջ:*

Հետեւաբար Աստուծոյ քրիստոնէական պատկերի հիմնական տարրերը արդէն գոյութեան էին կոչուած Դ դարում: Դա եռամի Աստուծոյ պատկերն է, որն այսպէս ըմբռնուեց աստուածաբանութեան *մէջ, այսինքն՝ ինչպիսին է Աստուած Իր մէջ, սակայն ինչպէս է ներդաշնակւում* տնօրինութեան *հետ: Իր «Մեծ երախայից վարդապետութեան ճառում» (PG 45, 9-105) Գրիգոր Նիւսացին իր դարաշրջանի համար ի մի բերեց այն, որը հէնց արիոսական շփոթի յաղթահարումից յետոյ պարզուեց, որ կազմում է Հաւատի [ուսուցումը] ինչպէս Արեւելեան, այնպէս էլ Արեւմտեան Եկեղեցիների համար: Բացառութեամբ արիոսականների փոքրաթիւ «երկրորդ սերնդի», բոլորը խոստովանեցին այն, ներառեալ ապողինարականները, որոնք պէտք է համարուեն իսկական հերետիկոսներ, եթէ քրիստոսաբանութիւնը դիտւում է իր ստոյգ իմաստով, Նեստորի հետ միասին, որը վերջերս (սակայն, իհարկէ, փոքր-ինչ արդարացումով) մեղադրուեց «եռաստուածութեան»*[4] *պաշտպանութեան մէջ: Ցոյց տալու համար Եկեղեցու թաքնուած միութիւնը Դ դ. վերջին՝ մենք կներկայացնենք մի հակիրճ ամփոփում այն զարմանալի Երախայից վարդապետութեան (նկատի ունի Նիւսացու վերը նշուած երկը - խմբ.), որը պէտք է գործածուէր հովուական փորձառութեան մէջ՝ ուսուցանելու ճշմարիտ քրիստոնէական հաւատը հրեաներին, հեթանոսներին եւ հերետիկոսներին, ինչպէս նաեւ՝ պաշտպանելու հաւատը:*

Ա. Գոյութիւն ունի Մի Աստուած Երեք Անձերով: Այս Աստուածութեան մէջ Որդին համագոյ է Հօրը, եւ Հոգին Մի Աստուած է Հօր եւ Որդու հետ միասին: Աստուածային խորհուրդը մեկնաբանելիս եւ սահմանելիս պէտք է դիմել մարդկային համաբանութիւնների, ինչպէս օրինակ՝ արտասանուող խօսքը *եւ արձակուող* շունչը *(Ա-Դ գլուխներ):*

Բ. Փրկութիւն եւ սրբացում (Ե-Ի գլուխներ)՝ «Մեծ երախայից ճառի» հիմնական մասից:

1. Արարչութեան մասին, մարդկութեան մասին՝ նախաստեղծ վիճակում եւ մեղքի մէջ (Ե-Ը գլուխներ). այս գլուխները պատասխանում են այս հարցին՝ ինչո՞ւ է Աստուած մարդ:

2. Մարմնաւորումը, որը լուսաբանուած է մարդու մէջ հոգու եւ մարմնի միութեան այլաբանութեամբ, ինչպէս նաեւ Քրիստոսի ծնունդը եւ մահը ամենեւին էլ անվայել չեն Աստծուն: Աստուած որոշում է խաչելութեան միջոցով գնալ փրկութեան առանց որեւէ խնայողութեան նշոյլի: Աստուած յայտնւում է որպէս արդար, բարի, իմաստուն

4 Ինչպէս ցոյց է տրուած Գ. Ս. Բեբեսի (Մփեմփես)՝ նեստորական հակաճառութեան մասին (Աթէնք, 1964) ներկայացուած դիսերտացիայում: Հմմտ. Լուիս Աբրամովսկու ակնարկի հետ՝ "Byzantinische Zeitschrift", 63 (1970), 338-340: "Liber Heraclidis"-ից մէջբերուած հատուածները յստակօրէն ցոյց են տալիս Նեստորի երրորդաբանական ուսմունքի ուղղափառութիւնը:

եւ հզօր, որովհետեւ Նա որպէս փրկագին Քրիստոսին մահուան չարչարանքների է տալիս սատանայի ձեռքը՝ այդպիսով պարտութեան մատնելով սատանային Քրիստոսի փառաւորման մէջ (Ե-ԼԲ գլուխներ):

3. Դէպի փրկութիւն «ճանապարհը» (ԼԳ-Խ գլուխներ) ընդգրկում է.

ա) Քրիստոնեայ դառնալու ուսուցումը (ԼԳ-ԼԶ գլուխներ), որը Քրիստոսի հետ կապուած իրադարձութիւնների նշանական պատկերն է. «հաւատը եւ ջուրը» առաջնորդում են մեզ Աստուծոյ հետ հաղորդակցութեան (ԼԷ գլուխ):

բ) Հաղորդութիւնը. սա համապատասխանում է մարդու հոգեմարմնաւոր բնութեանը եւ նրա կախուած լինելուն ուտելուց եւ ըմպելուց (ԼԷ գլուխ):

գ) Հաւատը եռամի Աստուծոյ՝ միակ անեղ Գոյութեան նկատմամբ (ԼԸ-ԼԹ գլուխներ):

դ) Հոգին կեանքի գլխաւոր աղբիւրն է: Որովհետեւ վերամարմնաւորումը (մեռելների յարութիւն) եզրափակւում է Հոգու տիրապետութեան վերահաստատմամբ եւ բարոյական վերափոխմամբ՝ Արքայութեան եւ Դժոխքի շօշափելի ճանաչման միջոցով (Խ գլուխ)[5]:

Քրիստոսաբանական վէճերը տեղի էին ունենում այս միութեան մէջ, որոնք կատարուեցին դժուարին ընդդիմակայութիւնների ուղեկցութեամբ Դ դարի ընթացքում: Սա քարոզութեան եւ դաւանութեան միութիւն է, արդիւնքն է խորհրդածութեան յատուկ տեսակի, սակայն դժբախտաբար՝ նաեւ հերձուածողական պառակտումների: Սա նաեւ Քրիստոսի մէջ ապրելու խորհուրդների հայեցողական սիրոյ միութիւն է[6], որն աւելի ուշ ցայտուն կերպով արտայայտուեց Արեւելքի պատկերագրութեան մէջ: Սա նաեւ միութիւն է ծէսի եւ խորհուրդների եւ առհասարակ աղօթքի[7]: Սա իր արտայայտութիւնն է գտնում

5 Հմմտ. A. Grillmeier, Vom Symbolum zur Summa, Kirche und Überlieferung, J. Betz und H. Fries (ed.), (Herder, 1960), (119-169), 150-152:

6 Հմմտ. A. Grillmeier, Geschichtlicher Überblick über die Mysterien Jesu im allgemeinen, Mysterium Salutis III 2 (Einsiedeln, 1969), 3-22:

7 Հմմտ. A. Grillmeier, Die Herrlichkeit Gottes auf dem Antlitz Jesu Christi, Zur Bildtheologie der Väterzeit. Christus und die Heiligen im künstlerischen Ausdruck der Gegenwart. Studien und Berichte der Katholischen Akademie in Bayern, Heft 22 (Würzburg, 1963), 55-83:

Քրիստոսի՝ Աստուծոյ մարմնաւորուած Որդու խորհրդի դաւանութեան մէջ: Մենք հարկ կունենանք աւելի մանրազնին կերպով բացայայտել այդ, որպէսզի խուսափենք եկեղեցիները բաժանող տարբերի դերագնահատումից:

3. Քիստոսին խոստովանելու հիմքում ընկած միութիւնը

Հէնց Դ դարի երկրորդ կէսին էր, որ քրիստոսաբանական խնդիրները իսկապէս դարձան ճնշող: Մինչ այդ քննարկւում էին Նիկիական հարցերը, այսինքն՝ համագոյութեան գաղափարը, Որդու եւ Սուրբ Հոգու Աստուածութիւնը: 350 թ. անմիջապէս յետոյ (եթէ մենք որպէս մեկնակէտ ընդունենք այս ժամանակը) մէկ այլ հարց բարձրացուեց. ո՞րն է Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ մարմնաւորուած Որդու առանձնայատկութիւնը: Նիկիոյ ժողովի բոլոր պաշտպանները հաւատում էին մի Տէր Յիսուս Քրիստոսի՝ որպէս կատարեալ Աստուծոյ եւ կատարեալ մարդու: Նրանց համար Նիկիոյ նշանակը ներկայացնում էր ուղղափառ հաւատը Հօր միակ Որդու՝ Աստուծոյ եւ մարդու հանդէպ: Պնդելով մի աստուածային, ինչպէս նաեւ մարդկային տարրը՝ այս նշանակը կարող էր ընդունուել որպէս ուղղափառ փորձանշան (շիբոլեթ) նոյնիսկ իրենց քրիստոսաբանութեան մէջ, ինչպէս ցուցադրուեց 431 թ. Եփեսոսի ժողովում: Նեստորը դատապարտուեց՝ նկատի ունենալով այս նշանակը, եւ բացայայտուեց որպէս հերետիկոս. նա չէր ընդունում, որ Յիսուս Քրիստոս մի եւ նոյնն է՝ ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ: Ընդհակառակը՝ պարզուեց, որ նա այս Մի Քրիստոսին Աստուծոյ Որդու եւ մարդու որդու բաժանել է ջատագովում: Նեստորն այնուամենայնիւ պնդում էր, որ ինքը կատարելապէս պաշտպանում է նշանակը եւ նրա սահմանումը: Եկէք առայժմ համարենք, որ նա լուրջ էր՝ իրեն նշանակն ընդունել ցանկացող յայտարարելու մէջ: Եկէք նաեւ համարենք՝ Քրիստոսի մէջ միութեան բնոյթի հարցը ոչ մի դաւանական պատշաճութիւն չունէր սկզբում, թէպէտ կային այս խնդրի լուծման որոշակի գաղափարներ, ինչպէս մենք կտեսնենք անմիջապէս: Հետեւաբար մենք գալիս ենք եզրակացութեան, որ Նիկիական նշանակը կարող է համարուել միաւորող տարրը

մինչեւ Կ. Պոլսի ժողովը (381) եւ Նոյնիսկ մինչեւ Եփեսոսի ժողովը (431): Գոյութիւն ունէր մարմնաւորման՝ բոլորի համար ընդհանուր մեկնաբանութիւն. Հօրից ծնուած եւ Նրա հետ համագոյ Որդին Նոյն Նա է, Ով ժամանակի մէջ մարմին դարձաւ Կոյս Մարիամից: Այս նշանակը Եփեսոսին եւ Քաղկեդոնին համարւում էր Եկեղեցու ամենակարեւոր փաստաթուղթը Քրիստոսի վերաբերեալ, որն իր հերթին միայն արտացոլում է ս. Աթանասի կողմից հաստատուած աւանդութիւնը (παράδοσις): Յետագայում Սեւերիոս Անտիոքացու հետեւորդները «Նիկիոյ-Կ. Պոլսեան նշանակը» ներածեցին պատարագի մէջ՝ ցոյց տալու իրենց նիկիական հաւատը, եւ քաղկեդոնականները դրանից անմիջապէս յետոյ պատասխանեցին՝ նոյնը կատարելով[8]: Ինչպէ՞ս կարող էր այսպիսի հիմնարար միութիւնը պառակտուել: Այժմ մենք կքննարկենք այս հարցը:

Բ. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ԱԿՆՅԱՅՏ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Դ-Ե ԴԱՐԵՐՈՒՄ

Ճշմարիտ է, որ Բ-Գ դարերում գնոստիկները եւ դոկետները (երեւութականները) արդէն հիմնել էին իրենց քրիստոսաբանական դիրքորոշումները՝ իրենց դուալիստական (երկուատական) սկզբունքների պատճառով կասկածի տակ դնելով Քրիստոսի մարմնաւորման իսկութիւնը կամ Նրա մարդկային էակ լինելը: Բանի Աստուածութեան արիոսական ժխտումը նոյնպէս ներկայացնում է մի նախնական եզրայանգում Յիսուս Քրիստոսի անձի մասին: Բուն քրիստոսաբանական վէճը, որը մեծապէս ազդել է Եկեղեցու վրայ՝ սկսած Դ դ. վերջից, յարուցուել է Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու միութեան հարցով: Այս միութեան բնոյթի հարցն այնուհետեւ տարաձայնութիւն առաջացրեց եւ ի վերջոյ բերեց Եկեղեցիների բաժանման: Հնարաւոր չէ՞ր լինի չկասէլ այն պարզ եւ սակայն յարմար ձեւակերպումից, որ պարունակւում է սխալմամբ ս. Աթանասին վերագրուած «Ընդդէմ Ապոլինարի» երկում: Այստեղ կարող է վկայակոչուել.

Եւ մարդն է կոչւում Քրիստոս,

8 Հմմտ. Th. Schnitzler, Chalkedon und die westliche Liturgie, Das Konzil von Chalkedon II, A. Grillmeier-H. Bacht (ed.), (Würzburg, 1952); 748/749: Այս աշխատութիւնը յետայսու կվկայակոչուի որպէս Chalkedon:

Եւ Աստուած է կոչւում Քրիստոս,

Եւ Աստուած, եւ մարդ է Քրիստոս,

Եւ մի է Քրիստոս (Ps. Athanasius, Contra Apoll., PG 26, 1116B):

Այս բանաձեւը փաստօրէն պարունակում է ամէն ինչ, որ պէտք է պնդուի Յիսուս Քրիստոսի անձի մասին՝ ըստ վաղ Եկեղեցու հաւատքի: Դոկետիզմը, արիոսականութիւնը, շփոթութեան վարդապետութիւնը, բաժանութեան ուսուցումը՝ ամէն ինչ, որ հակուած է աղաւաղելու Քրիստոսի կերպարը, այսպիսով մերժւում է: Քարոզական տեսանկիւնից սա, անկասկած, հմուտ ձեւակերպման տպաւորութիւն է թողնում: Սակայն նրանում պարունակուող հաւատը պահանջում է այս քարոզութեան արդարացում Եկեղեցու աստուածաբանական մտքի մէջ եւ ընդդէմ հեթանոսական քննադատութեան: Եկեղեցին չէր կարող շրջանցել այս խնդիրը: Աստուածաբանական խորհրդածութեան գործընթացն այնուամենայնիւ հիմք էր դնում դալիք հերձուածների համար: Սակայն ըստ երեւոյթին հնարաւոր է դիրքորոշումների մի հակիրճ եւ ուրուագծային բնութագրում կատարել այս ենթատեքստում: Դրանք հասկանալու համար Եկեղեցու ընդհանուր քարոզութիւնը պէտք է ընդունուի որպէս regula fidei, ինչպէս յստակօրէն շեշտում էր Տերտուղիանոսի եւ Որոգինէսի կողմից: Նմանապէս էլ մենք միշտ պէտք է նկատի ունենանք այն, որ մեր փրկութեան մեկնաբանութիւնն այս գործընթացի մէջ է մտնում, քանի որ հայրերը անվերապահօրէն որդեգրեցին փրկաբանական տեսակէտը:

Հաւատի իսկութիւնը մեկնաբանելիս մենք սովորաբար սկսում ենք մեզ հարազատ ըմռնումներից, որպէսզի հաստատումների եւ բացասումների գործընթացի կիրառումով հասնենք Յայտնութեան խորհրդին: Այսպիսի աստուածաբանութիւնն ապոֆատիկ (անճառելի) տարրի պարունակութիւն ունի, որն, ընդհանուր առմամբ, որոշակիօրէն աւելի զօրեղ էր արեւելեան աստուածաբանութեան մէջ: Սակայն Արեւելքում նոյնպէս կարծիքների տարբերութիւններ կային, ինչ ակնյայտ էր քրիստոսաբանական հակաճառութիւնից: Ընդհանրապէս համարւում է, որ անտիոքեան աստուածաբանները ռացիոնալիստական (խելակարգական) տեսակէտն էին պաշտպանում[9], մինչդեռ ալեքսանդրեան աստուածաբանները աւելի շեշտադրում էին

9 Նոյն կերպով արտայայտուած է G. S. Bebes-ի կողմից (տե՛ս 4):

խորհրդական տարրը: Սակայն այս դասակարգումը չի կարող բացատրել նրանց համապատասխան վարդապետութիւնների ողջ տարբերութիւնը, եւ տարբեր մեկնաբանական մեթոդների վրայ յղելը բաւարար չէ. ալեքսանդրացիները աւելի այլաբանական մեկնաբանութիւն էին կիրառում, մինչդեռ անտիոքացիները դիմում էին փիլիսոփայական-ռացիոնալիստական մեթոդների: Վճռորոշ գործօնը հնարաւոր է գտնել Քրիստոսի անձի մեկնաբանութեան էական տարբերութիւնների մէջ: Գոյութիւն ունի որոշակի համաձայնութիւն ուսումնասիրական մարզում, որ Դ դարում կային քրիստոսաբանական մօտեցումների երկու գլխաւոր սխեմաներ, որոնք կոչւում են «Բան-մարմին սխեմա» եւ «Բան-մարդ սխեմա»[10]: Թէպէտ ամբողջական պատմական զարգացումը կարելի չէ ցուցադրել այս վերլուծութիւնների շրջանակներում: Այն, ինչ ցանկանում ենք քննարկել, երկու սխեմաների ներքոյ միտումներն են, ինչպէս նաեւ հերձուածների պատմութեան մէջ նրանց խաղացած դերերը:

1. Բան-մարմին սխեման

268 թ.-ից (Անտիոքի ժողով՝ ընդդէմ Պօղոս Սամոսատացու) յետոյ նշմարուելի է այսպէս կոչուած Բան-մարմին քրիստոսաբանութիւնը: Նրա գլխաւոր կէտերն են. Աստուածութեան եւ մարդեղութեան միութիւնը Յիսուս Քրիստոսի մէջ պէտք է մեկնաբանուի համաձայն Հոգու եւ մարմնի միութեան մարդու մէջ: Ցունական ուսմունքը Հոգու եւ մարմնի մասին պէտք է ընդունուի այս ենթատեքստի մէջ: Բայց այնտեղ մարմնի եւ Հոգու միութիւնը համարւում է երկու տարբեր եւ առանձին բնական սկիզբների միութեան բարձրագոյն իրականացումը: Հետեւաբար, եթէ Աստուածութեան եւ մարդեղութեան միութիւնը կարելի է «լուսաբանել» որեւէ իրագործելի կերպով, այս համեմատութիւնը պէտք է որպէս հիմք գործածուի: Սա ըստ երեւոյթին օրինական է, առնուազն քանի դեռ խօսքը վերաբերում է յունական հոգեբանութեանը[11]: Ներքին տարբերութիւնները սկսւում են այն պահից,

10 Տե՛ս Chalkedon III, Index Christus-Lehre (Christologie), nr. 6: Աւելի մանրամասն քննութիւն տե՛ս Chalkedon I, 67-202, 709-711:

11 Հմմտ. R. A. Norris Jr., Manhood and Christ, A study in the Christology of Theodore of Morsuestia (Oxford, 1963):

երբ աստուածաբանական խորհրդածութեան մէջ են ընդգրկւում յունական հոգեբանութեան տարբեր ուղղութիւններ (պլատոնական, նորպլատոնական, արիստոտելեան ուսմունքը հոգու մասին, ստոիկեան ուսմունքը պնեւմայի մասին): Որքան աւելի է այս մարմին-հոգի համեմատութիւնը միօրինակօրէն կիրառւում Քրիստոսի անձի նկատմամբ, այնքան աւելի վեր է դառնում վերը նշուած տարբերութիւնների արդիւնքը: Սա Բան-մարմին քրիստոսաբանութեան շատ իրապաշտական մի տարբերակի հետ առնչուած այն դէպքն է, որը պնդում է, թէ Բանը կատարելապէս փոխարինում է մարդկային հոգուն Քրիստոսի մէջ. Յիսուս Քրիստոս սոսկ Բան է եւ մարմին: Հետաքրքիր է այս վարդապետութեան հետքեր յայտնաբերել արիոսականների եւ կիսարիոսականների ուսմունքում, ինչպէս նաեւ նիկիականների մի մասի մէջ, օրինակ՝ ս. Աթանասի եւ յատկապէս Ապողինար Լաոդիկէացու եւ իր հետեւորդների մօտ: Վերջինս յստակօրէն ժխտում էր մարդկային հոգու գոյութիւնը Քրիստոսի մէջ, որը Աթանասը երբէք չէր արել:

Հետեւաբար Քրիստոսի պատկերի հելլենացումը չի կարող ապահովաբար ընդունուել: Որքան աւելի է այս հելլենացումը հեռանում Բան-Աստուծոյ անդրանցականութիւնից, այնքան աւելի վտանգաւոր է այն դառնում: Իրականում արիոսականներն ըստ երեւոյթին ծանօթ են եղել այս եզրայանգմանը, եւ նրանք, կարող է, նոյնիսկ օգտագործել են այն որպէս փաստարկ՝ ժխտելու Բանի Աստուածութիւնը: Համաձայն Աթանասի՝ արիոսականները մի անգամ բարձրացրել էին հետեւեալ հարցը. «Եթէ Նա (Բանը) ճշմարիտ Աստուած է Աստծուց, ապա կարո՞ղ էր Նա դառնալ մարդ» (Athan., Ctr. Arianos, III, 27, PG 26, 381): Հարցն ըստ երեւոյթին իսկապէս գաղտնիքի բացման բանալին է: Ալեքսադրիայի եպիսկոպոսի ընդդիմախօսներն ակնյայտօրէն այն տեսակէտն ունէին, որ ճշմարիտ մարմնաւորումը կարող էր տեղի ունենալ, եթէ երկնքից եկած Բանն իրապէս եւ էապէս միաւորուել է մարմնի հետ: Արիոսականները նաեւ ասում էին. «Ինչպէ՞ս էք դուք համարձակւում ասել, որ Բանը էակից է Հօրը, այնուհետեւ՝ Բանը մարմին ունի, այսինքն՝ Բանը կրում է այդ մարմինը» (PG 26, 381AB): Նրանց հարցն ըստ երեւոյթին իրաւացի է, այսինքն՝ այն պայմանով, որ Բանն այնքան սերտօրէն է միաւորւում մարմնի հետ, որ ֆիզիկական միութիւն (ո՛չ շփոթ) իրագործի այնպէս, ինչպէս մարմնի եւ հոգու միութիւնն է: Այլ խօսքով՝ Բանը չի կարող լինել ճշմարիտ Որդին՝

համագոյակից (ὁμοούσιος) *Հօրը, եթէ այսպիսի միութիւն կարող է կատարուել: Քաջ յայտնի է, որ Արիոսը ջատագով էր այնպիսի խիստ* ապոֆատիկ *(անճառելի) աստուածաբանութեան, որ նա մերժում էր Բանին* (Λόγος, Νοῦς) *Միակը (Մոնադը) ըմբռնելու կարողութիւն վերագրել: Հետեւաբար, եթէ Բանը կարող է մարմին եւ մարդ լինել, ապա հնարաւոր չէ, որ Բանը* համագոյ *լինի անդրանցական Մոնադի հետ:*

Ուրեմն, ըստ Արիոսի, մարմնաւորումն անհամատեղելի է աստուածային անդրանցականութեան հետ, որովհետեւ այն համարւում է Բանի ֆիզիկական միութիւն *մարդկային բնութեան հետ: Ապողինար Լաոդիկէացին այսպէս հետեւողական չէր իր հայեացքներում: Նա մնում էր որպէս Նիկիոյ հետեւորդ, սակայն միանգամայն խորհում էր Բանի եւ մարմնի ֆիզիկական միութեան մասին ոչ պակաս հետեւողականութեամբ: Բանը (կամ Աստուածային Հոգին) շարունակում է լինել անդրանցական, սակայն դառնում է Քրիստոսի բնութեան շարժիչ ուժը մարմնի մէջ: Բանը եւ մարմինը ձեւաւորում են կեանքի եւ գոյութեան միութիւն: Աստուած-մարդկային միութեան մէջ բոլոր կենսական ներգործութիւնները կենտրոնացուած են Բանի մէջ՝ որպէս այդպիսինի: Եթէ մարդկային հոգին միջադրուէր Բանի եւ մարմնի մէջ, Քրիստոս չէր լինի Բանի ճշմարիտ մարմնաւորումը. «Եթէ մենք բացի Աստծուց, Որը բանականութիւնն է, նաեւ մարդկային բանականութիւն ենք ընդունում Քրիստոսի մէջ, մարմնաւորումը չի հասել ամբողջութեան Նրա մէջ» (Fragment 74, in Lietzmann, p. 222, 6-8): Այստեղ կայ թաքնուած քրիստոսաբանական հետաքրքրութիւն[12]: Մարդկութեան փրկութիւնը կախուած է անսխալական աստուածային մտքի, անփոփոխ կամքի եւ աստուածային զօրութեան առկայութիւնից, որը կենսագործում է մարդկային մարմինը Քրիստոսի մէջ: Այս ազդեցութիւնը չպէտք է գայ դրսից, այլ պէտք է հէնց այնքան ներյատուկ լինի, որքան կեանքի ներգործութիւններն են մաքուր մարդկային բնութեան մէջ: Քրիստոս փրկում է մեզ՝ Իր աստուածմարդկային միութեան մէջ բացառապէս Իր Աստուածութեան միջոցով ակտիւացնելով Իր մարդեղութիւնը: Ապողինարը ելնում էր այն հիմնադրոյթից, որ փրկութիւնը մի կողմից՝ իրագործւում է մարդ-*

12 Հմմտ. E. Mühlenberg, Apollinaris von Laodicea (Göttingen, 1969), որ ընդգծում է ապողինարեան քրիստոսաբանութեան փրկաբանական ըմբռնումը:

կային գոյութեամբ, մինչդեռ միւս կողմից՝ հնարաւոր է դառնում, երբ այդ գոյութիւնն ուղղորդուած է մաքուր կամքով, որը ենթակայ չէ մարմնական եւ հոգեկան ազդեցութեան: Մենք վկայակոչում ենք "Κατὰ μέρος Πίστις" *երկից (տե՛ս Lietzmann, 178b, 10-197b, 4).*

«Քանի որ, ըստ Սուրբ Գրքի, իրական մարդն իր կեանքում երբէք ազատ չէ մեղքից, որովհետեւ նա չի կարող իր սեփական կամքի ուժը ներդաշնակել աստուածային կամքի հետ, ուստի եւ ազատ չէ մահուան դատապարտուածութիւնից, Աստուած, որպէս հոգեկան եւ մարմնական ազդեցութիւններից ազատ բանականութիւն, միաւորուելով մարդկային մարմնի հետ, կատարելապէս գործի է դնում Իր սեփական ներգործութիւնը՝ ուղղելով Իր սուրբ Մարմինը եւ Իր ներգործութիւնները աստուածային կերպով, ազատ մեղքից. հետեւաբար ոչ միայն ենթակայ չէ մահուան, այլ նաեւ վերացնում է մահը»:

Այս տեսանկիւնից դիտելով՝ ակնյայտ է դառնում Ապողինարի կողմից բնութեան *գաղափարին վերագրուող նախնական նշանակութիւնը եւ յայտնի* մի բնութիւն *բանաձեւը: Դիոնեսիոսին ուղղած մի նամակում Ապողինարը պնդում է հետեւեալը. նա, ով խօսում է երկու* բնութիւնների *մասին, հոյակապ հնարաւորութիւն է ընձեռում նրանց, ովքեր հակուած են բաժանել միութիւնը Քրիստոսի մէջ: Քանի որ* բաժանումը *կախուած է երկուութեան առկայութիւնից: Երբ Քրիստոսի բուն էութեանը իսկապէս իրազեկ ենք լինում, ապա այսպիսի երկուութիւն չկայ: Քանի որ մարմինը, որպէս այդպիսին,* բնութիւն *չէ, քանի որ այն չի կարող կեանք տալ ex se (ինքնըստինքեան): Այն չի կարող զատուել կենսատու Բանից, եւ Բանը, որպէս այդպիսին, այլեւս զատուած չի համարւում: Բանն այլեւս չի գոյատեւում սոսկ մարմնից ազատ նախագոյ վիճակում, այլ այս աշխարհում՝ միաւորուած մարմնի հետ: Հետեւաբար երկու* բնութեան *որեւէ ակնարկ անտեղի է: «Ո՛չ եղական մարմինն է անեղ Աստուածութիւնից առանձին ապրում, այնպէս, որ եղականը կարող լինէր առանձնանալ Նրանից, ո՛չ էլ անեղ Բանն է այս աշխարհում գոյատեւում մարմնից ազատ, այնպէս, որ Անեղի* բնութիւնը *հնարաւոր լինէր բաժանել» ("Ep. ad Dionysium", A. B.,*

*ed. Lietzmann, 259): Այստեղ մենք գալիս ենք** մի բնութիւն բանաձեւի ծագմանը եւ նրա հետ նախապէս կապուած Ապողինարի գաղափարին:

Այսպիսով, մարմնի եւ հոգու մարդկային միութիւնը միօրինակօրէն *կիրառւում է Քրիստոսի անձի մեկնաբանութեան համար: Քրիստոս* մի բնութիւն *է, «քանի որ ո՛չ մարմինն է առանձին* բնութիւն, *ո՛չ էլ Աստուածութիւնը՝ մարմնաւորումից յետոյ, բայց մարդկային կերպարանքով յայտնուած Քրիստոս* մի բնութիւն *է այնպէս, ինչպէս մարդը» ("Letter to Dionysius", ed. Lietzmann, 257, 15-19): Մենք որպէս* բնութիւն *կարող ենք նկարագրել այն, ինչը* ինքնաշարժ (αὐτοκίνητον) *է, ինչն իր մէջ ունի կեանքի ինքնավար զօրութիւն, որը կարող է որպէս իրական կենսատու բնութագրուել մէկ գոյակերպի մէջ: Ուրեմն, եթէ կեանքի ողջ զօրութիւնը տրւում է Բանի միջոցով, մարմինը, որպէս այդպիսին, արժանի չէ ինքնին կոչուել* բնութիւն: *Սա ինքնաբերաբար բերում է* մի բնութիւն բանաձեւին:

Այս խնդրում հելլենիզմը տիրում էր քրիստոնէական մտքի վրայ: Գերիշխում էր բնութեան *գաղափարը: Մասնաւորապէս հէնց Բանի աստուածային անդրանցականութիւնն էր, որ վտանգւում էր* մարմնի *հետ այսպիսի սիմբիոզով: Ապողինարը եւ այս քրիստոսաբանութեան բոլոր նիկիական համախոհները չկարողացան հասկանալ, որ իրենք մոռացել են 325 թ. ժողովի իմաստն ու նշանակութիւնը: Աստուած եւ աշխարհը մի սիմբիոզ են կազմել: Թէպէտ Քրիստոսի մարդկային մարմինը Բանի գործիք դարձնելու գաղափարը բարեպաշտական էր՝ այս խիստ ապողինարեան ըմբռնումով, այն մեծապէս վտանգեց Բանի անդրանցականութեան յղացքը:*

2. Բան-մարդ կամ Բան-մարմին քրիստոսաբանութեան ռեակցիան

Ովքեր ցանկանում են հետեւել Նիկիոյ ուսմունքին, պէտք է բացառեն ամէն տեսակ սիմբիոզ Բանի եւ մարմնի *միջեւ: Եւստաթիոս Անտիոքացին առաջիններից մէկն էր, որ նկատեց այս թոյլ տեղը արիոսական* Բան-մարմին քրիստոսաբանութեան *մէջ:*

* Նախադասութեան սկիզբը քերականօրէն սխալ է կամ ակնյայտ վրիպակ ունի. ընդգծուած հատուածը թարգմանուած է ենթադրաբար (թարգմ.):

«Ինչո՞ւ են նրանք (արիոսականները) խիստ յամառօրէն նշում, որ Քրիստոս անհոգի մարմին է վերցրել՝ սրանով երկրաւոր պատրանքներ յօրինելով: Եթէ նրանց յաջողւում է համոզել որոշ մարդկանց նոյն վնասակարութեան մէջ, թէ այս ենթադրութիւնը ճիշտ է, ապա նրանք աստուածային Հոգուն (Բանին) կրքերի (πάθη) փոխարկում են վերագրում եւ սրանով կարող են հեշտօրէն համոզել նրանց, որ փոփոխականը չի ստեղծուել անփոփոխ բնութեամբ» (Եւստաթիոս, Fragment 15, De anima adv., Arianos, ed. Spanneut 100, 2-6):

Թէպէտ նիկիական Բան-մարմին *քրիստոսաբանութիւնը փորձում էր խուսափել հէնց այս եզրայանգումներից, նիկիականներն իրականում յանցաւոր էին նոյն սխալի համար: Ուստի, ի պատասխան այս քրիստոսաբանութեանը, անշուշտ տեղին էր ընդգծել Յիսուս Քրիստոսի* կատարեալ մարդեղութիւնը: Բան-մարմին *քրիստոսաբանութիւնը այժմ հակապատկերի մէջ էր մտնում* Բան-մարդ *քրիստոսաբանութեան հետ: Պահանջւում էր, որ վերջինս պէտք է բացատրէր Աստուծոյ եւ մարդու գոյաբանական միակցութիւնը (fusion), ինչը համոզիչ կերպով հասանելի էր դարձել միւս համակարգում: Միւս կողմից՝* երկու բնութիւնն *ըստ երեւոյթին յստակօրէն ակնարկում էր երկու հիպոսթասիս կամ երկու անձ, երկու որդիներ Քրիստոսի մէջ: Երբ Ապողինարը դատապարտուեց 381 թ. Կ. Պոլսի ժողովում, թւում էր, թէ այլեւս անհնար է հետեւել հնացած մի բնութիւն բանաձեւին. սակայն չնշուեց որեւէ այլընտրանք, որ կարողանար շարունակաբար իրական միութիւն վկայակոչել Քրիստոսի մէջ: Գրիգոր Նիւսացին առաջինն էր, որ փորձեց մի նոր ճանապարհ բացել: Այնուամենայնիւ մի* բնութիւն բանաձեւը *կարողացաւ շատ աւելի երկար պատմութիւն ունենալ այսպէս կոչուած «ապողինարեան կեղծարարութիւնների» պատճառով: Ընդսմին, մենք ցոյց տուեցինք յետագայ տրամախօսութեան մէջ առկայ քրիստոսաբանական մտքի երկու գլխաւոր ուղղութիւնները, որն ի վերջոյ գագաթնակէտին հասաւ 431-ի եւ 451-ի բուռն վէճերում: Սակայն մենք պէտք է նկատի ունենանք, որ երկու քրիստոսաբանական տեսութիւնների այս ընդդիմակայութիւնը ծագեց* Բան-մարդ *քրիստոսաբանութեան շրջանակներում: Երբ Կ. Պոլսում Ապողինարը դատապարտուեց,* Տիեզերական Եկեղեցին *պէտք է հրաժա-*

բուէր Բան-մարմին քրիստոսաբանութիւնից՝ իր ծայրայեղ տեսքով[13], թէպէտ՝ ոչ իր չափաւոր նոր մեկնաբանութիւնից, որի գլխաւոր ջատագովն էր ս. Կիւրեղ Ալեքսանդրացին, եւ որը աւելի ուշ պաշտպանուեց միաբնակների կողմից: Քանի որ քրիստոսաբանական հարցադրման երկու ուղղութիւնները դեռեւս զգալի թուլութիւն էին ցուցադրում, մենք հակուած ենք կարծելու, որ սա էր քաղկեդոնական հակաճառութեան իրական պատճառը: Սա աւելի մանրամասնօրէն կբացատրուի շուտով:

3. Թերի փոխզիջումներ

Եթէ մենք բացառում ենք որոգինէսականութեան վերածնունդը Եւագրիոսի հայեացքներում, մենք հարկադրուած կլինենք պնդել, որ 381 թ. յետոյ եկեղեցիների քրիստոսաբանութիւնը միաւորուեց այն ճանապարհի շուրջ, որ տանում է Քրիստոսի մէջ Աստուածութեան եւ մարդեղութեան միութեան աւելի խոր մեկնաբանութեան: Մենք պէտք է ջանանք բնութագրել հիմնական փորձերը մինչեւ 451 թ.:

ա) Գրիգոր Նիւսացու եւ անտիոքացիների պաշտպանած գլխաւոր գիծը

Գրիգոր Նիւսացին փորձեց տարածել Որոգինէս Աղեքսանդրացու տեսութիւնը, որն արդէն մենք վկայակոչեցինք: Նա փորձում է ցոյց տալ այն մակարդակը, որի վրայ Աստուծոյ մէջ տարբերութիւնը հնարաւոր էր ընդունել, եւ այն մակարդակը, որի վրայ հնարաւոր էր պնդել միութիւնը, եթէ ճշմարտապէս Մի Աստուած է Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին: Նա առաջինն էր, որ սահմանազատեց հիպոսթասիս *եւ* ուսիա *գաղափարները: Նիւսացին* հիպոսթասիսի *գաղափարը սահմանեց* բնութեան առարկայի *ստոիկեան վերլուծութիւնների համաձայն, եւ այսպիսով պարզ է դառնում, թէ նա նոյնիսկ ինչ աստիճանի էր սահմանափակուած յունական* ֆիսիսի *ըմբռնմամբ: Մենք կմէջբերենք մի լուսաբանող հատուած լատիներէնով՝ հրատարակուած Մինի կողմից.*

"Quare Filii hypostasis quasi forma (μορφή) *ac facies* (πρόσωπον) *est, qua Pater cognoscitur; et Patris hypostasis in forma Filii agnoscitur, manente quae in illis consideratur proprietate* (ἰδιότητος) *ad clarm hypostaseon distinctionem" (PG 32, 339-340C).*

Հիպոսթասիսը *տեսանելի եւ ճանաչելի է, ինչպէս դէմքը՝* պրոսոպոնը: *Սա է պատճառը այն եզրերի կուտակման, որոնք թոյլ են տալիս ըմբռնել* հիպոսթասիսը *որպէս* սֆերա *եւ նմանապէս՝ որպէս ճառագայթող* սֆերա. հիպոսթասիսը *սահմանւում է* դոքսայի (δόξα), խարակտերի (χαρακτῆρ), ապաուգասմայի (ἀπαύγασμα) *միջոցով (հմմտ. Basilius, hom. 24; PG 31, 608B) կամ* էյկոնի (εἰκών), խարակտերի (χαρακτῆρ), իդիոնի (ἴδιον), իդիազոնի (ἰδιάζων) *միջոցով (հմմտ. Basilius, ep. 236, 6; PG 32, 884A-C): Բոլոր այս* իդիոթետները (ἰδιότητες) *ըստ երեւոյթին կարող են զատելի լինել* ուսիայից, *որին նրանք կապուած են: Սա թոյլ տուեց Նիւսացուն* հիպոսթասիսի *իր սահմանումը տանել Երրորդութեան ուսմունքից դէպի քրիստոսաբանութիւն, այսինքն՝ դէպի Քրիստոսի Աստուածութեան եւ մարդեղութեան մեկնաբանութիւն: Նա տեղեակ էր ապողինարականների այն մասի դէմ ուղղուած մեղադրանքին, որոնք պնդում էին, որ* հիպոսթասիսի *այսպիսի սահմանումը բերում է երկու* հիպոսթասիսների *ընդունման Քրիստոսի մէջ եւ հետեւաբար՝ երկու Որդիների: Եթէ Բանի* հիպոսթասիսը *ամբողջովին ներառուած է Քրիստոսի մէջ, եւ եթէ Քրիստոսի մարդկային բնութիւնը* ուսիա *է իր բոլոր առանձնայատկութիւններով, ապա պէտք է գոյութիւն ունենային երկու* հիպոսթասիսներ: *Նիւսացին այս դժուարին կացութեան մի տարակուսելի ճանապարհ գտաւ, որը նա ցոյց է տալիս Թէոփիլոս Աղեքսանդրացուն ուղղած իր նամակում.*

«Այնուամենայնիւ մարդկային բնութեան երախայրիքը (ἀπαρχή *- ինչն առաջինն է, լաւագոյնը կամ ներկայանալին), որն ամենակարող Աստուած ընդունեց, նման է քացախի մի կաթիլի անծայրածիր ծովում. այն (երախայրիքը՝ Քրիստոսի մարդեղութիւնը) ներառուած է Աստուածութեան մէջ, բայց ոչ՝ Նրա յատկութիւնների* (οὐ μέν τοῖς

13 J. Meyendorff, Le Christ dans la théologie byzantine ("Bibliotheque Oecumenique", 2), Paris, 1969, 14. համամիտ է այն մտքին, որ ես կիրառել եմ *Բան-մարմին քրիստոսաբանութեան* համակարգը Դ-Ե դարերում գրեթէ բոլոր քրիստոսաբանական ուղղուածների նկատմամբ "Christ in Christian Tradition" (London, 1965) աշխատասիրութեան մէջ: Այնուամենայնիւ ես հակուած եմ կարծելու, որ յստակօրէն նշել եմ մօտեցման փոփոխութիւնը Դ-ից Ե դ. անցնելիս. տե՛ս էջ 367 "The pattern by which we attempted to interpret fourth century developments, "Logos-anthropos" against "Logos-sarx", is no longer applicable, clear as the lines which lead back to it still are":

ἰδίοις αὐταῖς ἰδιόμασιν): *Այս ուղով մենք հարկադրուած կլինէինք գալ երկու որդիների առկայութեանը, եթէ Որդու անճառելի Աստուածութեան մէջ հնաբաւոր լինէր պնդել մէկ այլ բնութեան [գոյութիւնը] իր առանձնայատկութիւններով հանդերձ, այնպէս որ այս մէկը (մարդեղութիւնը) լինէր թոյլ կամ փոքր կամ ապականացու կամ ժամանակաւոր, սակայն այն մէկը (այսինքն՝ Աստուածութիւնը) լինէր հզօր եւ մեծ եւ անապական եւ յաւիտենական (Gregory of Nyssa, To Theophilus, ed. Jaeger [Mueller], 126, 17-127, 4; PG 45, 1276CD):*

Ուրեմն Քրիստոսի մէջ կայ մարդկային ուսիա, *սակայն՝ առանց մարդկայնօրէն սահմանափակող* իդիոմատայի. *ընդհակառակը՝ տեղի էր ունեցել փոխանակութիւն՝ "quod humanum est, non in proprietatibus naturae esse ostenditur" (նոյն, p. 128; PG 45, 1277BC): Այս* իդիոմատան *փոխարինուած է աստուածային յատկութիւններով: Ամէն ինչ լցուած է Աստուծոյ փառքով: Սակայն Նիւսացին կարող էր պահել այս դիրքորոշումը՝ Քրիստոսին Իր փառքի մէջ միայն նկատի ունենալով: Թէպէտ Իր չարչարանքների մէջ Քրիստոս ծածկում է Իր ճշմարիտ փառքը:*

Նիւսացին հաւատում էր, որ սա Քրիստոսի մէջ Աստուածութեան եւ մարդեղութեան միութեան եւ հիպոսթասիսի *եզակիութեան բացատրութիւնն է. միայն Աստուածութիւնն է Քրիստոսի մէջ ներկայացուած իր բուն* իդիոմատայով, *մինչդեռ մարդկային բնութիւնը չի արտայայտում մարդկային ցածր յատկութիւնները, այլ աչքի է ընկնում աստուածային որակութիւններով: Այս բացատրութիւնը Նեստորի կողմից առաջ քաշուած մեկնաբանութեան հիմքն է: Նա նոյնպէս որդեգրեց* հիպոսթասիսի *այս կապադովկիական գաղափարը եւ ձգտում էր բացատրել այն, ինչ բացատրել էր Նիւսացին. Քրիստոսի մէջ կայ միայն մէկ* հիպոսթասիս, *սակայն՝ երկու ամբողջական բնութիւններ. քանի որ Աստուածութիւնը կիսում է ողջ* իդիոմատան *Քրիստոսի մարդկային բնութեան հետ, այնպէս որ վերջինս գոյութիւն չունի իր սեփական* իդիոմատայի *մէջ, այլ՝ Աստուծոյ* իդիոմատայի *մէջ:* Իդիոմատայի *այս փոխանակութեան միջոցով Նեստորը ցանկանում էր ապացուցել ճշմարիտ միութիւնը Քրիստոսի մէջ, սակայն նա, ինչպէս նաեւ Նիւսացին ձախողուեցին:*

Այլ խօսքով՝ հիպոսթասիսի *եւ* ֆիսիսի *զանազանութեան լուծում գտնելու այս առաջին փորձն անյաջող էր: Այսպիսի հիմնաւորումով*

Քրիստոսի մէջ մի հիպոսթասիսի *բացատրութիւնը չի կարող յաջող լինել: Սակայն գոյութիւն ունի մէկ փաստ, որը պէտք է ընդունենք. նոյնիսկ այս անկատար փորձը երեւան հանեց Քրիստոսի մէջ ճշմարիտ միութիւնը պնդելու սուր ցանկութիւնը:*

Ճիշտ է, որ ինքը Նեստորը, զանազանելով բնութիւնները, ջանում էր ճշմարիտ միութիւն ցոյց տալ Քրիստոսի մէջ: Նա փորձեց սա անել երկու ճանապարհով. առաջինը Գրիգոր Նիւսացու ճանապարհն էր՝ պրոսոպայի *փոխանակումը: Մարդեղութեան* իդիոմատան *ընդունել է Աստուածութեան կողմից, իսկ Աստուածութեան* իդիոմատան *ընդունուել է Քրիստոսի մարդեղութեան կողմից**: *Միայն Նիւսացու ens concretum-ի վերլուծութիւնների ընդունման նախապայմանով կարող է մի բացատրութիւն տրուել հետեւեալ նախադասութեանը, որ վերցուած է Նեստորի "Liber Heraclidis" երկից.*

«Եւ քանզի նմանապէս մէկի պրոսոպոնը *միւսինն է, իսկ միւսինը՝ մէկինը, եւ մէկը [գալիս է] միւսից, եւ միւսը՝ մէկից, կամքը պատկանում է նրանցից իւրաքանչիւրին» (Bedjan 239; Nau 144, Driver-Hodgson 163):*

«Նա վերցրեց ծառայի նմանութիւնը. եւ ծառայի նմանութիւնը մարդու ուսիա *չէր, բայց Նա, Ով վերցրեց այն, դարձրեց այն [Իր] նմանութիւն եւ Իր* պրոսոպոն: *Եւ Նա դարձաւ* մարդու նմանութիւն, *սակայն չդարձաւ* մարդու բնութիւն, *թէպէտ Նա հէնց մարդու բնութիւնը վերցրեց: Նա, Ով վերցրեց այն, եկաւ՝ լինելու* մարդու նմանութիւն, *միաժամանակ Նա, Ով վերցրեց եւ չէ այն, ինչ վերցրեց, յայտնուեց* կառոյցի մէջ *որպէս մարդ, որովհետեւ այն, ինչ վերցուած էր, մարդու* ուսիա *եւ* բնութիւն *էր, մինչդեռ Նա, Ով վերցրեց, յայտնուեց* կառոյցի մէջ *որպէս մարդ՝ առանց մարդու* բնութիւն *լինելու» (Bedjan 241; Nau 156; Driver-Hodgson 165):*

Եթէ իդիոմատան *է, որ* ուսիան *վերածում է* հիպոսթասիսի, *ապա Նեստորը նոյնպէս ձգտում էր* հիպոսթասիսի *միութեան եւ ոչ՝ Աստուծոյ Որդու եւ մարդու Որդու սոսկ պատահական միակցման: Սա դառնում է նոյնիսկ աւելի ակնյայտ, երբ մենք դիտարկում ենք Նես-*

* Այս միտքը կարող է սխալ հասկացուել: Նիւսացու աստուածային եւ մարդկային *իդիոմատայի* փոխադարձ գործածութիւնը բնորոշ է Նեստորին, սակայն ոչ՝ Նիւսացուն, ինչն արդէն ցոյց է տրուել այս ենթագլխում (խմբ.):

տորի ձեռնարկած երկրորդ ուղին՝ Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու ճշմարիտ միութեան հասնելու համար: Ինչպէս ցոյց է տուել Լ. Ի. Սիպիոնին[14], *սա կատարուեց ստոիկեան շփոթութեան ուսմունքի միջոցով, որը Նեստորը բուռն կերպով կատարելագործում էր՝ վերածելով* περιχώρησις - *շրջադարձութիւն) մի տեսակ քրիստոսաբանական ուսմունքի՝ երրորդութեան վարդապետութեան համանմանութեամբ.*

«Ապա խոստովանի՛ր Վերցնողին, ինչպէս Նա վերցրել է, եւ վերցրածին, ինչպէս նա վերցուած էր, որի մէջ [իւրաքանչիւրը] մի է եւ միւսի մէջ է, եւ որի մէջ գոյութիւն ունի մի եւ ոչ երկուս՝ այնպէս, ինչպէս երրորդութիւնն է» (Bedjan 289; Nau 183; Driver-Hodgson 207):

Լ. Ի. Սիպիոնին ցոյց է տուել, որ գոյութիւն ունի շփոթութեան մի ստոիկեան ուսմունք, որը թոյլ է տալիս տարբեր տարրերի իրական միութիւն՝ առանց այս տարրերին փոփոխութիւն պատճառելու: Ըստ Նեստորի՝ այս կերպով Քրիստոսի մէջ Աստուածութիւնը եւ մարդեղութիւնը ներթափանցում են միմեանց մէջ այնպիսի կերպով, որ առաջացնեն մէկ պրոսոպոն՝ *առանց բնութիւնների շփոթութեան: Հետաքրքրական է նշել, որ Նեստորը պէտք է գործածէր մի այլաբանութիւն, որը գործածել է ինքը Կիւրեղ Ալեքսանդրացին մարմնաւորումը մեկնաբանելիս՝ «այրուող մորենու» օրինակը [Եզ. Գ 1-5].*

«...ինչպէս կրակը մորենու մէջ էր, եւ մորենին կրակ էր, եւ կրակը՝ մորենի, եւ նրանցից իւրաքանչիւրը մորենի էր եւ կրակ եւ ոչ՝ երկու մորենիներ, ոչ էլ՝ երկու կրակներ, քանի որ նրանք երկուսն էլ կրակի մէջ էին, եւ նրանք երկուսն էլ մորենու մէջ էին՝ իսկապէս ոչ թէ բաժանման, այլ միութեան մէջ» (Bedjan 234/235; Nau 141; Driver-Hodgson 160):

Սա կարող է համեմատուել մի հատուածի հետ Կիւրեղի ժէ «Զատկական ճառից» (Ὁμιλία πασχαλίς) *(PG 77,78; C-784B). «Ճիշտ*

14 **L. I. Scipioni,** Ricerche sulla cristologia dell' "Libro di Eraclite" di Nestorio. La formulazione teologica e il suo contesto filosofico (Paradosis, 11), (Fribourg, 1956). հմմտ. **A. Grillmeier,** Das Scandalum oecumenicum des Nestorius in kirchlich-dogmatischer und theologie-geschichtlicher Sicht, in Scholastik 36 (1961), 321-356. նոյնը՝ Christ in Christian Tradition, 369-452, 496-505 (research report):

այնպէս, ինչպէս մորենին կարող էր կրել կրակը, այնպէս էլ [Քրիստոսի մէջ] մեր բնութիւնը [կարող էր կրել] Աստուածութեան մեծութիւնը: Քանի դեռ դիմում ենք մեր բանականութեանն ու ներըմբռնմանը, ապա իրագործելի չէ աստուածային բնութեան եւ մարդկային բնութեան որեւէ ֆիզիկական միութիւն (εἰς ἑνότητα φυσικήν)*: Եւ սակայն նրանք միաւորուած են, քանի որ Քրիստոսի մէջ գոյութիւն ունի էմմանուէլ, որ ընդգրկում է երկու բնութիւնները»:*

Այսպիսով, ե՛ւ Նեստորը, ե՛ւ Կիւրեղը անկասկած ընդունում էին հետեւեալը. Քրիստոսի մէջ Աստուածութիւնը թափանցում է մարդեղութեան մէջ այն աստիճանով, որ գոյութիւն ունի միայն մէկ իրականութիւն՝ առանց աստուածութեան, ինչպէս նաեւ մարդեղութեան գոյութեան երբեւէ դադարեցման: Սա որոշակիօրէն ապացուցում է Նեստորի ձգտումը՝ խոստովանել Քրիստոսին որպէս մի՝ ճշմարիտ Աստուածութեան եւ ճշմարիտ մարդեղութեան մէջ: Նրա գաղափարները, նրա եզրաբանութիւնը, նրա փիլիսոփայութիւնը, սակայն, բաւականաչափ ազդու չգտնուեցին՝ համոզիչ կերպով ներկայացնելու նրա հայեացքները:

բ) Կիւրեղ Ալեքսանդրացու պաշտպանած գլխաւոր գիծը

Երբ Կիւրեղը 429 թ. սկսեց հակաճառութիւնը Նեստորի դէմ, պատահականօրէն հանդիպեց բնագրերի, որոնք կոչւում են Ապողինարեան կեղծարարութիւններ*: Այս բնագրերը ս. Աթանասին, Յուլիոս եւ Ֆելիքս պապերին են վերագրում հետեւեալ բանաձեւը. Քրիստոսի մէջ գոյութիւն ունի* «Մարմնաւորուած Բան-Աստուծոյ մէկ բնութիւն» (μία φύσις τοῦ Θεοῦ Λόγου σεσαρκωμένου *կամ* σεσαρκωμένη)[15]*: Սա բազում թիւրիմացութիւնների պատճառ դարձաւ: Թէպէտ Կիւրեղն ընդունեց այս ապողինարեան բանաձեւը եւ դարձրեց այն իր քրիստոսաբանութեան կենտրոնական պնդումը, նա ինքը ապողինարական չէր, քանի որ իր* Թեսաուրուս *(PG 75, 9-656) եւ* Դիալոգուս *(PG 75, 657-1124) աւելի վաղ շրջանի երկերում Կիւրեղն արդէն խոստովանել էր Քրիստոսի կատարեալ մարդեղութիւնը՝ մարմնով եւ հոգով: Ուստի մի բնութիւն բանաձեւը կատարելապէս խորթ էր այն բանին, ինչն այլ կերպով արտայայտուած էր իր վարդապետութեան մէջ: Այնուամե-*

15 «Մի բնութիւն» բանաձեւի ծագման մասին հմմտ. **A. Grillmeier,** Chalkedon I, 170, յդում 15, **J. Lebon,** La christologie du monophysism syrien, Chalkedon I, 425-580:

նայնիւ Կիւրեղն այս բանաձեւով էր պատկերացնում Քրիստոսի միութիւնը, եւ դրանով նա յանգեց Քրիստոսի մի պատկերի, որը համապատասխանում էր «այրուող մոմենու» այլաբանութեանը. ամէն ինչ ըմբռնում է Բանի մէջ միութեան լոյսի ներքոյ:

Սակայն Քրիստոսի կիւրեղեան պատկերի առանձնայատկութիւնը դառնում է ակնյայտ միայն այն ժամանակ, երբ մենք այն համեմատում ենք Քրիստոսի ապողինարեան պատկերի հետ: Քրիստոսի ապողինարեան պատկերը հիմնուած է այն ենթադրութեան վրայ, որ Բանը կեանքի ողջ գործունէութեան աղբիւրն է Քրիստոսի մէջ: Հետեւաբար Բանը եւ մարմինը միացած են հոգու եւ մարմնի պէս: Ներգործութիւնն ու զօրութիւնը Բանից դէպի մարմին են հոսում: Բանը աղբիւրն է բոլոր ներգործութիւնների, որը նաեւ ընդգրկում է Քրիստոսի մարդեղութեան ողջ ֆիզիկական-բնական ոլորտը: Հետեւաբար Բանը եւ մարմինը մէկ բնութիւն (μία φύσις) են: Կիւրեղն ուղղում է այս պատկերը որոշ էական կէտերով: Նա պնդում էր, որ Քրիստոս ունէր իսկապէս մարդկային հոգեբանութիւն: Ճիշտ այնպէս, ինչպէս չարչարանքը փոխանցւում է մարմնին, այնպէս էլ փոխանցւում է հոգուն, եթէ մենք ցանկանում ենք հետեւել յունական համակարգին: Ամենից առաւել նա գիտակցում էր Քրիստոսի սուբորդինացիայի (ստորադասութիւն) եւ զոհաբերութեան գործերի նշանակութիւնը: Սուկենսոսի հետ իր հակաճառութիւններում Կիւրեղը կարողացաւ ընդունել այն, որ Քրիստոսի մէջ Աստուածութիւնը մէկ բնութիւն է, եւ այն, որ մարդեղութիւնը նոյնպէս բնութիւն է: Նա նաեւ աւելի մանրամասն բացատրում էր երկու բնութիւնների այս վարդապետութիւնը (հմմտ. PG 75, 1381A, 1385C). այստեղ նա երկու բնութիւնների առնչութեամբ նշում էր, որ նրանք անշփոթ են մի եւ նոյն Քրիստոսի մէջ, եւ շեշտում էր նրանց զանազանութիւնը նոյն Քրիստոսի մէջ: Այն փաստը, որ նա մարմին եզրը նախընտրում էր մարդ եզրից, կարող էր պայմանաւորուած լինել Նոր Կտակարանի եզրաբանութեամբ, ինչպէս նաեւ նրա մեծ վախով նեստորական բաժանութեան գաղափարից, որը, նա կարծում էր, հիմք է գտել Նեստորի ուսմունքի մէջ: Այնուամենայնիւ Կիւրեղը շարունակում էր խոստովանել միութիւնը տարբերութեան մէջ:

Տարբերութեան վրայ շեշտադրումը չէր, որ պէտք է վճռորոշ ազդեցութիւն ունենար յետկիւրեղեան քրիստոսաբանութեան զարգացման վրայ. Քրիստոսի պատկերի ողջ ըմբռնումը հիմնուած էր միութեան գաղափարի վրայ: Նախ եւ առաջ՝ Կիւրեղը մեկնաբանում էր Քրիստոսին որպէս Բան-Աստուծոյ ֆիսիս կամ հիպոսթասիս: Լոգոսը (Բանը) է եւ մնում է Քրիստոսի միջուկը: Սոկ մարմնացեալի (սեսարկոմենէ) յաւելումով մարմնաւորումը տարւում է actu secundo-ի մէջ: Նոյնիսկ եթէ Քրիստոսի մէջ կայ հոգու եւ մարմնի իսկական մարդկային միութիւն եւ իսկական մարդկային հոգու գործունէութեան սկզբունք, սա էֆեկտիւ չի դառնում ex se (ինքնըստինքեան): Յանուն միութեան Կիւրեղը ողջ ներգործութիւնը եւ նախաձեռնութիւնը վերագրում էր Բանին: Այսպիսով, նա արդէն խօսել էր մի ներգործութեան մասին. մի վարդապետութիւն, որը յետագայում մշակւում է կեղծ-Դիոնեսիոսի հետեւորդների կողմից եւ ապա հետեւողականօրէն կիրառւում «միաներգործականների» կողմից է դարում: Յայրոսի դստեր եւ նայինցի պատանու՝ մեռելներից յարութիւն առնելը [տե՛ս Մարկ. Ե 35-42, Ղուկ. Է 11-15] մեկնելիս Կիւրեղը յատուկ շեշտադրում էր Յիսուսի դիպչելը մեռած աղջկան կամ դագաղին (նայինցի պատանու դէպքում): Այստեղ հէնց Քրիստոսն է մարմնի մէջ, որ կենսատու աստուածային զօրութիւնը հաղորդում է այս մեռեալներին. «Նա կենսատու է որպէս Աստուած Իր ամենազօր հրամանով («Աղջի՛կ, քեզ եմ ասում, վե՛ր կաց»). Նա նաեւ կենսատու է սուրբ Մարմնի հաղորդակցութեան միջոցով, եւ սրանով Նա ցոյց է տալիս մի գործունէութիւն, ուր Աստուածութիւնը եւ մարմինը միասնաբար են գործում (μίαν τε καί συγγενή δι ἀμφοίν ἐπαδείκνυσι τήν ἐνέργειαν)» (In Joannem, IV; PG 76, 577C):

Քրիստոսի այս պատկերի մէջ, որը նոյնիսկ աւելի յատակօրէն է հասկանալի դառնում ըստ Սեւերիոս Անտիոքացու մի բնութիւն բանաձեւի, Բանը մշտապէս ազդեցութիւն է գործադրում Քրիստոսի մարդկային կարողութիւնների վրայ: Իւրաքանչիւր գործունէութիւն, իւրաքանչիւր շարժում սկզբնաւորւում է Բանի մէջ, նոյնիսկ եթէ խօսքը մարդկային կարողութիւնների մասին է: Յիսուս մարդը այլեւս ինքնավար մարդկային անհատականութիւն չէ. Նրա հոգեւոր եւ հոգեկան կեանքը այնքան խոր արմատացած է ընկալւում Աստուածութեան մէջ, որ Յիսուս մարդու հոգեկան եւ նիւթական ֆիսիսը դառնում է պարզապէս Բանի գործիք: Սեւերիոս Անտիոքացին եւ իր հետեւորդներն այնքան հեռու գնացին, որ նոյնիսկ չէին համարձակւում

գործածել երկու թիւը Քրիստոսի վերաբերեալ: Երբ Քրիստոս գործում է, Նրա մէջ գոյութիւն ունի միայն մէկ հիպոսթասիս, մէկ ֆիսիս, մէկ ներգործութիւն եւ մէկ կամք: Քրիստոսի մէջ այդպիսի (այսինքն՝ աստուածային - խմբ.) գործունէութիւնից տարբեր գործունէութեան դէպքում է միայն, որ նրանք համարձակւում են խօսել երկութեան մասին, այսինքն՝ Յիսուս Քրիստոսի աստուածային եւ մարդկային գործերի դէպքում:

Քրիստոսի այս պատկերը, որն ամբողջովին ընկալւում է Բանից, յետագայում ընդունւում եւ ամբողջացւում է քաղկեդոնական Թէոդորոս Փառանացու կողմից, միակամեայ հակաճառութեան ընթացքում: Ստորեւ մենք կներկայացնենք մի քանի պատառիկներ, որոնք վկայակոչուել են նրա գործերից Լատերանի Ա ժողովի (649) առիթով, որպէսզի բնութագրենք նրա վարդապետութիւնը.

«Այսպիսով, առանց երկիմաստութեան մենք սովորում ենք, որ ամէն բան, ինչ ասուած է փրկական ինոնոմիայի (οἰκονομία - տնօրէնութիւն, տնտեսութիւն) առնչութեամբ, լինի այն աստուածային կամ մարդկային՝ մեր Տիրոջ մասին, նախ եւ առաջ թելադրուած եւ յարուցուած է Աստուածութեամբ եւ իրագործուած մարմնի հոգեւոր շնչի (spiritual soul) միջոցով, լինի այն հրաշքներ գործելը, լինի այն մարդկային կեանքի բնական գործերը, ինչպէս կերակրի եւ քնի ցանկութիւնը, յոգնելը, ցաւի կրելը, տխրութիւնը եւ երկիւղը: Այս ամէնը սովորաբար այլաբանօրէն կոչւում է կրքեր, թէպէտ այն իրականում հոգի եւ զգացումներ ունեցող կենդանի գոյութեան սոսկ բնական ֆունկցիան է: Բայց նաեւ այն, ինչը ճշմարիտ եւ այսպէս կոչուած տառապանք է, չարչարանքը, խաչը, մահապատժի ենթարկուելը, խարազանուելը, վերքերը եւ խաչի վրայ գամուելը, թքի եւ հայհոյանքի մատնուելը՝ այս ամէնը իրաւացիօրէն եւ ճշմարտացիօրէն կոչւում է մի եւ նոյն Քրիստոսի մէկ ներգործութիւն»:

«Բայց մեր հոգիները չունեն նոյն բնածին զօրութիւնը, որը կարողանար հեռացնել մարմնի բնական յատկութիւնները մարմնից եւ իրենցից: Այնուամենայնիւ բանական հոգին ըստ երեւոյթին նոյնիսկ չունի այնպիսի մի տիրապետութիւն մարմնի վրայ, որ այն իշխէր ողջ բնական զանգուածի վրայ, նաեւ ծանրութեան եւ գոյնի վրայ, եւ որ այն կարողանար անջատել մարմինը դրանցից»:

«Սակայն, ըստ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի տնօրէնութեան, այս ամէնն ասուած է աստուածային եւ կենսատու Մարմնի մասին եւ տեղի է ունեցել: Եւ Նա դուրս եկաւ որովայնից առանց զանգուածի, աննիւթական, որպէս էր, ազատ տարածականութիւնից. ճիշտ այնպէս, ինչպէս Նա ելաւ գերեզմանից եւ անցաւ դռների միջով. ճիշտ այնպէս, ինչպէս քայլեց ծովի վրայով այնպէս, որպէս թէ այն պինդ մակերեւոյթ էր»:

«Հետեւաբար մենք պէտք է մտածենք եւ խօսենք այնպէս, որ ամէն ինչ, որ ասուած է մեր Փրկիչ Քրիստոսի մարմնաւորման մասին, կարող է ըմբռնուել ներգործութեան միջոցով: Նա, Ով ներգործում եւ արարում էր այս ամէնը, Աստուած է (=Բանը Քրիստոսի մէջ). սակայն գործիքը [Քրիստոսի] մարդեղութիւնն է: Ինչպէս էլ որ աստուածային եւ մարդկային ասպեկտները (նիստերը) ասուեն Նրա մասին, [դրանք] Բանի Աստուածութեան ներգործութիւններն են» (Հմմտ. Mansi XI 568E-569C, 570CE-527A):

գ) Լեւոն Ա Հռոմէացու մեկնաբանութիւնը Փլաբիանոսին ուղղուած իր տոմարի մէջ ("Tomus ad Flavianum")

«Փլաբիանոսին ուղղուած Լեւոնի տոմարը» ներկայացնում է ուրուանշուած տեսութեան հակառակ տեսանկիւնը: Լեւոն Ա-ը կասկածում էր, որ Եւտիքէսը մի տեսակ երեւութականութիւն (Docetism) եւ մանիքէականութիւն է ուսուցանում, այսինքն՝ ժխտում է Քրիստոսի ճշմարիտ մարդկային բնութիւնը եւ դրանով՝ մարմնաւորումը որպէս ադպիսին: Հետեւաբար Լեւոնն ընդգծում էր Քրիստոսի Աստուածութեան եւ մարդեղութեան տարբերութիւնը հռոմէական աւանդութեան մէջ: Քաղկեդոնեան հակաճառութեան ամենակարեւոր արտայայտութիւնը կարող էր համարուել հետեւեալը. "Agit enim utraque forma cum alterius communione quod proprium est: Verbo scilicet operante quod Verbi est, et carne exsequente quod carnis est. Unum horum coruscat miraculis, aliud succumbit iniuriis. Et sicut Verbum ad aequalitate paternae gloriae non recedit, ita caro naturam nostri generis non relinquit" (ACTA CONCILIORUM OECUMENICORUM II 21, p. 29): Հակառակ կիւրեղ-սեւերիոսեան յղացքին, Լեւոնը մարմինը՝ caro-ն, այսինքն՝ Քրիստոսի մարդկային բնութիւնը, դարձնում է ինքնավար ներգործութիւնների կենտրոն: Անշուշտ, Լեւոնը երբէք չէր ցանկանում մտածել նեստորական վարդապետութեան համաձայն եւ

այդպիսով անկախ անձնաւորութիւն է դարձնում մարդուն Յիսուսի մէջ*: Այնուամենայնիւ Քրիստոսի անձի միութեան մէջ մարդկային բնութիւնը պահպանում է որպէս ներգործականութեան (activity) սկզբունք. "Salva igitur proprietate utriusque naturae et in unam coenunte personam..." (այսինքն՝ բնութիւններից իւրաքանչիւրը պահպանում է իր յատկութիւնները, մինչդեռ միեւնոյն ժամանակ միաւորուած է մէկ անձի մէջ),- ինչպէս գրում էր Լեւոնը նոյն նամակի մէջ:

Հետեւաբար Քաղկեդոնի ժողովի ընթացքում Քրիստոսի Անձի մէկ հաւատի մի շարք տարբեր մեկնաբանութիւններ եղան: Մենք դիտարկեցինք կապադովկիան-անտիոքեան եւ կիւրեղեան-ալեքսանդրեան մեկնաբանութիւնները, ինչպէս նաեւ Լեւոնի հռոմէական մեկնաբանութիւնը: Նրանք բոլորը ընդունում են վերը նշուած կեղծ-աթանասեան բանաձեւը: Նրանք բոլորը խոստովանում են մի Քրիստոսին ճշմարիտ Աստուածութեան եւ մարդեղութեան մէջ: Եւ սակայն, 431 թ. սկսած, ողջ Եկեղեցին ըստ երեւոյթին անհանդստացած էր մեծագոյն հերետիկոսութիւնների վախով: Սա ընդհանուր անվստահութիւն էր. կարծում էր, թէ ամէն ոք ժխտում է մարմնաւորման ճշմարիտ տնօրէնութիւնը: Նեստորը մեղադրում էր ալեքսանդրացիներին բնութիւնների շփոթ ուսուցանելու մէջ, մինչդեռ ալեքսանդրացիները մեղադրում էին նրան բաժանութիւն ջատագովելու մէջ: Լեւոնը համարում էր, որ Եւտիքէսը, Դիոսկորոսը եւ բոլոր ալեքսանդրացիները մանիքէական հերձուած են պաշտպանում, որից նա խորշում էր ճշմարիտ մարմնաւորումը ժխտելու պատճառով: Իրենց հերթին նրանք դատապարտում էին Լեւոնին իբրեւ Նեստորականի: Թէպէտ այն ժամանակի աստուածաբաններն ի վիճակի չէին այնպէս մեկնաբանել իրենց սեփական հաւատը, իրենց պնդումները, որոնք ընդհանուր էին բոլորի համար, որ վերացնէին թիւրիմացութիւնները: Սակայն անհնար է մի քանի խօսքով բնութագրել այս թիւրիմացութեան պատճառը: Ուստի մենք կփորձենք կատարել մի քանի պարզաբանող պնդումներ.

1) 431 թ. եւ 451 թ. ժամանակաշրջանում Ալեքսանդրիայի, Անտիոքի, Կ. Պոլսի եւ Հռոմի Եկեղեցիներում Յիսուս Քրիստոսի՝ Հոր

* Ըստ երեւոյթին անգլերէն բնագրում վրիպակ կայ. man Jesus պէտք է հասկանալ man in Jesus: Այնուամենայնիւ տարակուսելի է նախադասութեան իմաստի հարազատութիւնը Լեւոնի տեսութեանը (թարգմ.):

ճշմարիտ Որդու, Որը ճշմարիտ մարդ դարձաւ, մէկ քարոզութիւն դոյութիւն ունէր:

2) Սակայն այս մէկ քարոզութիւնը մեկնաբանուած է զանազան քրիստոսաբանութիւններով կամ աստուածաբանութիւններով, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր սեփական վաղեմի աւանդութիւնը: Աստուածաբանութիւններով նկատի ունենք այս մէկ քարոզութեան մեկնաբանութեան փորձերը.

ա) որոշակի գաղափարների եւ ըմբռնումների միջոցով, որոնք Յունական եւ Հռոմէական Եկեղեցիները զարգացրել էին մինչեւ Գ դ.

բ) որոշակի սխեմաների միջոցով (Բան-մարմին սխեման, Բան-մարդ սխեման), որոնք շեշտադրում էին կատարում Քրիստոսի պատկերի որոշակի նիստերի վրայ, ինչը հիմնականում նոյնն էր՝ բարձր քրիստոսաբանական մօտեցում, ցածր քրիստոսաբանական մօտեցում, միութեան քրիստոսաբանութիւն, բաժանութեան քրիստոսաբանութիւն:

3) Այնուամենայնիւ այդ ժամանակ Եկեղեցին այնքան էլ լաւ փորձուած չէր աստուածաբանական եզրաբանութեան (ի տարբերութիւն քարոզութեան լեզուի) եւ մտքի մէջ, որ ի վիճակի լինէր տրամաբանօրէն վերլուծել առանձին գաղափարները եւ սխեմաները կամ խորհրդածել (reflect) նրանց շուրջ: Միայն այս ճանապարհով կարող էին ըմբռնման տարբերութիւնները եւ համաձայնութիւնները հիմնաւորուած եւ բացատրուած լինել: Ուրիշներին դատելիս ամէն մէկն իր քննադատութիւնը հիմնում էր իր սեփական գաղափարների, սխեմաների եւ եզրաբանութեան վրայ՝ առանց ուշադրութիւն դարձնելու, որ ուրիշներն իրականում այլ գաղափարներ եւ ըմբռնումներ ունէին: Մենք մի օրինակ գիտենք, երբ ուրիշների եւ սեփական եզրաբանութիւնները խորհրդածութեան ենթարկուեցին, եւ այդպիսով մտածողութեան ընդհանուր գիծ հիմնուեց տարբեր եզրաբանութիւնների միջեւ. սա պատահեց 362 թ. Ալեքսանդրիայի ժողովի ժամանակ, որի սեւեռակէտն էր երրորդաբանական բանաձեւը, այսինքն՝ պէտք է խօսել մի՞ հիպոսթասիսի, թէ՞ երեք հիպոսթասիսների մասին: Աթանասը պնդում էր, որ այն կախուած է հիպոսթասիսի գաղափարի գործածումից: Թէպէտ եզրաբանական տարբերութիւններ կային, ամէն մէկի համար հնարաւոր եղաւ հէնց նոյն բանը նկատի ունենալ (հմմտ. Tomus ad Antiochenos; PG 26, 796A-809C): Նաեւ խաղաղ քննութեան

ենթարկուեցին զանազան քրիստոսաբանական մօտեցումները: Ակեքսանդրիայի ժողովը որպէս օրինակ պէտք է ծառայէր Եփեսոսի եւ Քաղկեդոնի հայրերի համար: Եկեղեցին դեռեւս պէտք է աւելի հաստուն դառնար իր աստուածաբանական մտքի մէջ՝ իր քարոզութիւնը աւելի յստակ մեկնաբանելու համար:

4) Դժբախտաբար այդ ժամանակներում Եկեղեցին սաստիկ խանգարուած էր յախուռն եւ խանդոտ կեցուածքով՝ այսպիսի հաստատութիւն ձեռք բերելու համար, այսինքն՝ յաղթահարելու տարբերութիւնները հանդարտ տրամախօսութեան միջոցով: Մենք տեղեակ ենք մեծ թեմերի միջեւ մրցակցութեան մասին, եւ մեծ թուով վանականներ չափազանց անխոհեմ գտնուեցին աստուածաբանական ընդդիմախօսութիւնները «սրբազան պատերազմի» վերածելու մէջ[16]: Այսպիսով, անյաջող գործողութիւնները բերում էին համարժէք հակագործողութիւնների, ինչը գագաթնակէտին հասաւ երկու անհաշտ կուսակցութիւնների ընդդիմակայութեան մէջ:

5) Վերջին, բայց ոչ նուազագոյն կէտն այն է, որ քաղաքական խմբաւորումներն ըստ երեւոյթին վճռորոշ դեր են խաղացել Քաղկեդոնի պատմութեան մէջ: Սակայն ոչ մէկը չի կարող պնդել, որ քաղաքական գործիչները գերիշխել են աստուածաբանութեան պատմութեան մէջ այնպէս, որ աստուածաբանութիւնն այլեւս չկարողանար հետեւել իր սեփական օրէնքներին: Որքան աւելի շատ ենք պատկերացնում, որ բոլոր տրամախօսութիւնները կենտրոնացած էին բոլորի համար հիմնականում ընդհանուր Հաւատի աստուածաբանական մեկնաբանութեան շուրջ, ինչը նաեւ պաշտպանում էր բիւզանդական կայսրի կողմից, այնքան աւելի քիչ կարող ենք պնդել, որ Քաղկեդոնի դաւանութիւնն առաջ էր մղում քաղաքական նկատառումներով: Ճիշտ է, որ կայսերական հեղինակութիւնը պատահականօրէն օժանդակում կամ մերժում էր այս կամ այն կուսակցութիւնը, բայց սա չնչին նշանակութիւն է ունեցել աստուածաբանութեան զարգացումը կամ մարմնաւորման հաւատը իրեն ենթարկելու համար: Սա մասնաւորապէս ակնյայտ է դառնում յետքաղկեդոնեան պատմութեան մէջ. աստուածաբանների (որոնք նուիրում էին իրենց մի բնութիւն եւ երկու

16 Հմմտ. **H. Bacht,** Die Rolle des orientalischen Mönchtums in den kirchenpolitischen Auseinandersetzungen um Chalkedon (431-519), Chalkedon II, 193-314:

բնութիւն ընդդիմամարտ բանաձեւերի մանրազնին քննութեանը) դիալեկտիկական ճիգերն ամբողջացրին այն գաղափարի եւ ըմբռնումների միասնութիւնը, որոնք կարող էին մի հիմք ապահովել Եկեղեցիների վերահաշտեցման համար: Հետեւաբար էկումենիկ երկխօսութիւնը պէտք է մեկնարկուի ոչ թէ 451 թ. շուրջ ծաւալուած աստուածաբանական դիրքորոշումներից, այլ աւելի՝ Մաքսիմոս Խոստովանողի մեծ կերպարից: Հէնց նա էր, որ յունական աստուածաբանութեան շրջանակներում մեկնաբանեց Քաղկեդոնի ժողովի հիմնարար գաղափարները այնպիսի կերպով, որը շատ աւելի գերազանցեց 451-ին ձեռք բերած գիտելիքի մակարդակը: Նա, ըստ քաղկեդոնեան անբաժանելի եւ անշփոթելի եզրերի, ըմբռնեց, որ հնարաւորին չափ խոր պէտք է խոկալ Քրիստոսի մէջ միութեան, ինչպէս նաեւ տարբերութեան վրայ: Քրիստոսի միութիւնը չպէտք է խարխլուի Աստուծոյ եւ մարդու տարբերութեան շեշտադրմամբ, ճիշտ այնպէս, ինչպէս Աստուածութեան եւ մարդեղութեան միջեւ տարբերութիւնը չպէտք է վերացուի միութեամբ. «Ակնյայտօրէն գոյութիւն ունի իրերի միութիւն, քանի դեռ նրանց ֆիզիկական տարբերութիւնը պահպանւում է» (*Maximus Conf. Opuscula theol. et polem. 8; PG 91, 97A*):

Քաղկեդոնի պատճառով բաժանուած առանձին Եկեղեցիներն անում են հնարաւոր ամէն ինչ յանուն աստուածաբանական տրամախօսութեան, նրանք բոլորը կկարողանան բացայայտել Քրիստոսի այնպիսի մի պատկեր, որը կարող է ունենալ աւելի խոր եւ աւելի արժէքաւոր նշանակութիւն, քան երբեւէ:

Անգլերէնից թարգմանեց
Մեսրոպ քահանայ Արամեանը

Մեսրոպ քահանայ Արամեան

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ «ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱԿԻ ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆՆ ՅԺԸ-ԻՑՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մուտք

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների[1] հոգեւոր ժառանգութիւնն այսօր աննախադէպ ուշադրութեան առարկայ է դարձել աստուածաբանական շրջանակների համար: Մէկը միւսի ետեւից գումարւում են խորհրդաժողովներ[2], կատարւում են ուսումնասիրութիւններ, լոյս են տեսնում բնագրեր: Այս ամենի շնորհիւ հնարաւորութիւն է ստեղծւում առաւել ստոյգ եւ չմիջնորդաւորուած պատկերացումներ ձեռք բերել քրիստոնէական Արեւելքի մասին, որը հսկայական ազդեցութիւն է թողել համաքրիստոնէական քաղաքակրթութեան ձեւաւորման վրայ: Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում յատկապէս դաւանական բնագրերը, քանի որ հէնց նրանցում են անթեղուած այս կամ այն Եկեղեցուն ներյատուկ տարբերութիւնները եւ նմանութիւնները: Ահա թէ ինչու դաւանական բնագրերի ուսումնասիրութիւնն ու լոյսընծայումը դարձել է արդի աստուածաբանական մտքի կարեւորագոյն խնդիրներից մէկը:

1 Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների (Oriental Ortodox Churches) ընտանիքը ներառում է Հայ, Ղպտի, Ասորական (ներառեալ Հնդիկ Մալաբար) եւ Եթովպական Եկեղեցիները, որոնք վերը նշուած միասնական անուան տակ հանդէս են գալիս միջազգային ժողովներում:

2 Յատկապէս յիշատակութեան են արժանի Վիեննայի հինգ ոչ պաշտօնական խորհրդաժողովները (1971, 1973, 1976, 1978, 1988) Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Կաթողիկէ Եկեղեցու միջեւ, ինչպէս նաեւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ ոչ պաշտօնական չորս խորհրդակցութիւնները (1964, 1967, 1970, 1971) եւ երեք պաշտօնական հանդիպումները (Ս. Բիշօյի վանք, 1989, Ծամբեսի, 1990, Ժնեւ, 1993): Այս խորհրդաժողովների որոշ փաստաթղթեր տե՛ս «Գանձասար» Ե, Երեւան, 1994, էջ 48-53: Աւելի մանրամասն տե՛ս "Five Vienna Consultations", ed. by Pro Oriente, Vienna, 1993:

Դաւանական բնագրերով յատկապէս առատ է Հայ Առաքելական Եկեղեցու աստուածաբանական ժառանգութիւնը, ինչն արդիւնք է դաւանական լարուած պայքարի, որ մշտապէս ուղեկցել է մեր Եկեղեցու պատմութեանը: Սակայն եթէ Հայ Եկեղեցու ներդրումը քրիստոնէական մշակոյթի (երաժշտութիւն, ճարտարապետութիւն, մանրանկար եւ այլն) զարգացման մէջ որոշ չափով պատկերացնելի է այսօր, ապա Հայ աստուածաբանական (յատկապէս դաւանական) միտքը եւ նրա զարգացման օրինաչափութիւնները ծածկուած են անյայտութեան մէգով: Արդէն իսկ Հայ դաւանաբանութեան հպանցիկ ուսումնասիրութիւնը ակներեւ է դարձնում այն, որ ուսումնասիրողը գործ ունի մի ուրոյն դաւանական դպրոցի հետ՝ իր զարգացման փուլերով եւ առանձնայատկութիւններով: Դժբախտաբար, մի կողմից՝ դարեր շարունակուող դաւանական պայքարի պատճառով այդ գրականութիւնը արհամարհուած է եղել մեր ընդդիմախօսների կողմից, միւս կողմից՝ աւանդութեան խզումների հետեւանքով նոյն այդ գրականութիւնը մեզ համար դարձել է անմատչելի եւ անհասկանալի: Մեր այս ուսումնասիրութիւնը մէկ փորձ է՝ անյայտութեան խաւարից դէպի լոյս բերելու Հայ դաւանական մտքի խոշորագոյն դրսեւորումներից մէկը՝ Յովհաննէս Սարկաւագի[1] «Յաղագս նշանակի նիկիական հաւատոյ ՅԺԸ-իցն» նշանաւոր ժողովածուն:

Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Յաղագս նշանակի հաւատոյ...» ժողովածուն եզակի արժէք ունի Հայ դաւանական մտքի օրինաչափութիւնները վերհանելու տեսանկիւնից: Մշակութաբանական, գիտական, պատմական լայն անդրադարձները ժողովածուն դարձնում են ընդհանրապէս ԺԱ-ԺԲ դդ. արեւելաքրիստոնէական մշակոյթի կարեւորագոյն կոթողներից մէկը: Յոյս ունենք, որ ներկայացուող ու-

1 Յովհաննէս Սարկաւագի կեանքի եւ գործունէութեան մասին տե՛ս **Ֆ. Ղեւոնդ Ալիշան**, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Բազմավէպ», Ս. Ղազար, 1847, էջ 214-225. «Սարկաւագ Սոփեստէս», «Ցուշիկք հայրենեաց հայոց», ԻԳ, Ս. Ղազար, 1870, էջ 279-307. **Ֆ. Գարեգին Զարբհանալեան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Ս. Ղազար, 1886, էջ 588-597. **Ֆ. Համազասպ Ոսկեան**, Յովհաննէս Սարկաւագ. մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 1-64. **Երուանդ Տէր-Մինասեան**, Հաղբատի դպրոց եւ Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Արարատ», 1902, էջ 340-344. **Մանուկ Աբեղեան**, Հայոց հին գրականութեան պատմութիւն. Գիրք երկրորդ, Առաջին յաւելուած, «Սարկաւագ վարդապետի կենսագրութիւնը», 1946. **Աշոտ Աբրահամեան**, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956. **Կարլեն Միրզոյեան**, Յովհաննէս Իմաստասէրի աշխարհայեացքը, Երեւան, 1984:

սումնասիրութեամբ կկարողանանք փոքր-ինչ լոյս սփռել մեր մատենագրութեան այս մեծարժէք ժողովածուի վրայ:

Ա. Յովհաննէս Երզնկացու ժողովածուն

Սարկաւագի այս երկը մեզ է հասել Յովհաննէս Երզնկացու նշանաւոր ժողովածուի միջոցով, որը, բացի դիտարկուող երկից, ներառում է նաեւ Խոսրովիկ Թարգմանչի եւ Անանիա Սանահնեցու յայտնի Հակաճառութիւնները: Այն, որ Երզնկացին անձամբ հաւաքել է այս երկերը մէկ ժողովածուի մէջ, վառ վկայութիւնն է վերջիններիս բացառիկ կարեւորութեան հայ դաւանական գրականութեան մէջ, ինչը նա մասնաւորապէս շեշտում է իր առաջադրութեան մէջ[1]. «Նախ քան զմտանել քո ի դրունս ըն[թերց]ման[2] գրոցս, պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական եւ բարելի գանձուց: Նուաստ եւ տկարոգի Յոհանէս Ե[ր]զնկայ եպիսկոպոս[3] սպասաւոր բանի եւ իմաստից Գրոց Սրբոց ծարաւի, յոլով ժամանակաւք եւ աշխատութեամբ բազմաւ զսա[4] երեք գիրքս, որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեանն: Եւ թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք, բարեբախտութիւն մեծ եւ փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեան գիտաւղի: Զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի եւ ստացա[յ] զերիս գիրսն եւ ի նոցունց դարձեալ ետու գրել եւ առ միմեանս եդի եւ արարի մի գիրք: Առաջին զԱնանիային զհայոց վարդապետի, երկրորդ զԽոսրվկայ Թարգմանչի եւ հզաւր գիտնականի, երրորդ զՍարկաւագ վարդապետին [եւ] զմեծ[ի]ն իմաստասիրի զհաղբատեց[ւ]ոյ: Եւ թողում զսա [որք յ՞]ետ իմ ժառանգէք յոգնազան բարեաց ճոխութիւն [եւ՞] ամէնառատ գանձուց փարթամութիւն: Աստուածաբանական հանճարով յերկինս թռուցելոց սա թեւք զաւրաւոր եւ վերացուցիչ, յաշխարհիս ծովիս նաւելոց ղեկք վարիչք եւ ուղղիչք, ի մարտս խմբից հերձուածողականացն [...][5] զէնք սրեալք յաջողակ ձեռաց քա-

1 Բնագիրը ներկայացնում ենք այնպէս, ինչպէս գրչագրում է՝ ընդգծելով տառասխալները եւ ուղիղ փակագծերի մէջ առնելով անհրաժեշտ լրացումները:

2 Գրչագրում չորս տառ ընկած է, որը յետագայում անհաւաստի լրացման է ենթարկուած այսպէս՝ ըն[ոհաց]ման:

3 Բառը լաւ չի ընթերցւում:

4 Բառը լաւ չի ընթերցւում:

5 Անընթեռնելի երկու տառ

ղամարտից: Ի խաղաղական ժամու ժողովոց սեղանք երկնաւորք եւ քաղցրաճաշակ լցեալ կերակրովք: Վաճառականաց հ[...][1]արոյ եւ հմտագունից, մարգարիտ անգիւտ եւ աշխարհաւ ամենայնիւ գնեալ: Աղքատաց անձաց եւ նիւթականաց անձեռնհասից սա ճոխութիւն երկնաւոր եւ անհամեմատելի: Իմաստութեամբ լուսաւոր անձանց արփի լուսաբոս[ղ]խ եւ բազմանշոյլ: Անգիտութեան մթով պատելոց ճրագ լուսատու եւ խաւարափարատ: Սա ձեզ յոլով բարեաց բղխմունս աղբերաց եւ մեզ նիւթ յիշատակի եւ բարբառ եւ ձայն առ ձեզ մաղթանաց: Զի որք աւգտիք եւ զուարճանայք, զողորմելի Յոհանէս յիշեսջիք եւ մեղուցելոյս անձին եւ վարդապետին իմոյ եւ ծնաւղաց ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսջիք»[2]:

Երզնկացու ժողովածուն մեզ է հասել հինգ գրչագրերով՝ N 504 (ՍՂՄ), N 436 (ՄՄ), N 567 (ՄՄ), N 6453 (ՄՄ), N 2751 (ՄՄ): Խոսրովիկի եւ Սանահնեցու հրատարակիչները նկատի են ունեցել միայն վերջին երկու գրչագրերը: Մինչդեռ առաջին գրչագիրը պէտք է նկատել որպէս Երզնկացու ինքնագիր[3], եւ ահա թէ ինչու: Նախ եւ առաջ՝ N 504 գրչագրում զետեղուած երեք բնագրերը ակնյայտօրէն գրուած են երեք տարբեր գրիչների կողմից: Այս մասին իր նախագրութեան մէջ ծանուցում է ինքը Երզնկացին. «Զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի եւ ստացա[յ] զերիս գիրսն եւ ի նոցունց դարձեալ ետու գրել եւ առ միմեանս եդի եւ արարի մի գիրք»: Ուրեմն Երզնկացին նախ հաւաքել է այս երեք գրքերը եւ տուել է ընդօրինակելու (հաւանաբար՝ իր աշակերտներին) եւ ապա համադրելով՝ կազմել իր այս ժողովածուն: Մինչդեռ եթէ N 504 գրչագիրը Երզնկացու ժողովածուի սոսկ մի ընդօրինակութիւն լինէր, ապա մեծ հաւանականութեամբ գրուած կլինէր մէկ գրչի կողմից, ինչպիսիք են, օրինակ, ՄՄ NN 567, 6453 եւ 2751 գրչագրերը:*

Սկզբնագիր յիշատակարանը կամ նախագրութիւնը եւ Սանահնեցու Հակաճառութիւնը, որը հերթականութեամբ առաջինն է, ակնյայ-

1 Անընթեռնելի չորս տառ

2 Այս նախադրութիւնը հրատարակել է նաեւ Գարեգին Յովսէփեանը (տե՛ս «Խոսրովիկ Թարգմանիչ», Ս. Էջմիածին, 1899, Մաս Բ, «Երկասիրութիւնք Խոսրովկայ Թարգմանչի», էջ 1-2):

* Այս գրչագիրը չունի Սարկաւագի ժողովածուն:

3 Այստեղ ինքնագիրը առելի շուտ պէտք է հասկանալ իր կողմից կազմուած:

տօրէն գրուած են միեւնոյն գրչի կողմից: Նախագրութեանը կցուած է հետեւեալ մանրատառ գրութիւնը. «Եւ ինձ մեղուցեալ գրչիս Յովհաննու քահանայի», որի գրչութիւնը համընկնում է նախագրութեան եւ Սանահնեցու բնագրի գրչութեան հետ: Յովհաննէս գրիչը կարող է լինել ինքը Երզնկացին կամ նրա աշակերտներից մէկը: Սանահնեցու բնագիրը չունի վերջի յիշատակարան, ինչը նորից խօսում է այն մասին, որ գրիչը թերեւս Երզնկացին է եւ բաւարարուել է միայն նախագրութեամբ: Խոսրովիկի բնագիրը, որը հերթականութեամբ երկրորդն է, վերջում ունի գրչի ընծայական-յիշատակարան. «Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն: Պատուելի եւ ընդրեալ եւ աստուածային շնորհաւքն լցեալ սուրբ վարդապետ Յոհաննէս, ընդա՛լ զսակաւ գծիկս ի նուաստ յանարժան քահանայի Յոհանիսէ եւ յիշեա՛ զիս անմոռաց յիշմամբ յաղաւթս քո եւ խոշորութեան եւ սքալանաց, որ ի սմա, մի՛ մեղադրեր, զի աւրինակն գրապակաս էր, եւ իմ կարն այսչափ, եւ դու յիշեալ լիցիս ի Տուղէն արարածոց, եւ Նմա փառք յաւիտեանս»: Թէպէտեւ գրիչների անունները համընկնում են, այսուհանդերձ գրչութեամբ խիստ զանազանւում են իրարից: Ս. Ղազարի N 504 գրչագրի վերջից երկու թերթ ընկած լինելու պատճառով Սարկաւագի բնագիրը վերջից թերի է, ուստի եւ ոչ մի պատկերացում չենք կարող ունենալ գրչի անուան եւ ընդօրինակութեան տեղի եւ ժամանակի մասին: Խոսրովիկի բնագրի վերջում կայ նաեւ յետագայի յիշատակարան. «Արդ, յերեսս անկեալ պաղատիմ մանկանցդ սուրբ Եկեղեցւոյ, որք հանդիպիք աստուածային կտակիս, յիշեսջիք զվերջին ստացաւղս զնուաստ վարդապետս Սարգիս եւ զհոգեւոր եւ զմարմնաւոր ծնաւղքն իմ: Եւ ետու զսա Թովմա վարդապետի, որ հանապազ ընթեռնու եւ յիշէ զմեզ յաղաւթս իւր: Եւ Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուր բարեաց, զձեզ յիշէ ի փառս եւթնալիր աւրհնութեան. ամէն: Ի թուականիս ՊՀԴ ամի հայկազեանս տումարի»: Փաստօրէն յետագայի յիշատակարանը գրուած է 1425 թ.՝ Երզնկացու մահուանից ընդամէնը 132 տարի յետոյ:

Այսպիսով, երեք տարբեր գրիչների կողմից գրուած լինելու պարագան եւ Խոսրովիկի ընդօրինակող գրչի յիշատակարանը յուշում են, որ Վենետիկի N 504 գրչագիրը հէնց Երզնկացու կողմից կազմուած ժողովածուն է, որը մեզ յայտնի է նաեւ ուշ շրջանի մի քանի

այլ ընդօրինակութիւններով[1]:

Բարեբախտաբար, այսօր հնարաւոր է կատարել նաեւ գրչութեան քննութիւն, ինչը այլեւս կասկած չի թողնում, որ ժողովածուն հէնց Երզնկացու կողմից կազմուածն է: Էդուարդ Բաղդասարեանը իր «Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը» ուսումնասիրութեան մէջ ներկայացնում է ՍՅՄ N 1796 գրչագրի 2ա երեսին զետեղուած Երզնկացու ինքնագիր յիշատակարանը, որի գրչութեան համեմատութիւնը ՍՂՄ N 504-ի նախագրութեան եւ Սանահնեցու Հակաճառութեան գրչութեան հետ ցոյց է տալիս, որ դրանք գրուած են միեւնոյն գրչի կողմից:

Դժուար է պատկերացնել, թէ ինչ կպատահէր այս կարեւորագոյն դաւանական բնագրերի հետ, եթէ Յովհաննէս Երզնկացու կողմից չկազմուէր այս նշանաւոր ժողովածուն: Փաստօրէն, այս ժողովածուից զատ, միայն այս կամ այն գրչագրերում սփռուած պատառիկներ են մեզ հասել եւ Սանահնեցու Հակաճառութեան երկու այլ համառօտ խմբագրութիւններ, որոնցից մէկը ակնյայտ ազդեցութիւններ է կրում Դաշանց թղթից[2]: «Յաղագս նշանակի հաւատոյ...» ժողովածուից այլ ընդօրինակութիւններով մեզ են հասել մի քանի պատառիկներ, որոնցից ամենաարժէքաւորը ՄՄ N 777 գրչագրով մեզ հասած հատուածն է: Այս հատուածի հետ համեմատութիւնը լոյս է սփռում մի շարք լեզուական խնդիրների վրայ, ինչին կանդրադառնանք «Լեզուաոճական առանձնայատկութիւններ» ենթագլխում:

Բ. Ժողովածուի կառուցուածքը

«Յաղագս նշանակի հաւատոյ...» կազմուած է ԺԴ դաւանական թղթերից, որոնք, բացի դաւանական խնդիրներից, հարուստ նիւթ են պարունակում քրիստոնէական մշակոյթի, պատմութեան եւ աւանդութիւնների մասին: Սակայն անյայտ է մնում, թէ այս ժողովածուն ինքը Սարկաւա՞գն է կազմել, թէ՞ յետագայում ի մի բերուած թղթեր են,

1 Տե՛ս ՄՄ NN 567, 2751, 6453 եւ մասամբ N 436 (առանց Սարկաւագի ժողովածուի) գրչագրեր:

2 Տե՛ս Ց. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, էջ 781: Միւս խմբագրութիւնը, որի մասին խօսում է Անասեանը, մեր կարծիքով Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» մէկ մասն է: Այս մասին՝ «Ժողովածուի աղբիւրները եւ ստեղծման դրդապատճառը» ենթագլխում:

քանի որ այդ թղթերը գրուել են այլեւայլ ժամանակներում եւ զանազան պատճառներով: Թղթերի հեղինակային պատկանելութեան հարցերը նոյնպէս հարկ է մանրազնին քննութեան ենթարկել: Քանի որ Երզնկացու ժողովածուում այն ներկայացուած է «Յովհաննու քահանայի յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ից» վերտառութեամբ, եւ այնքան էլ ակնյայտ չէ, թէ Յովհաննէս քահանան նոյն ինքը Յովհաննէս Սարկաւա՞գն է, թէ՞ ոչ: Օրինակ՝ Արիստակէս Լաստիվերտցին իր Պատմութեան մէջ գրում է. «Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք... եւ Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զՀաւատոյ գիրսն գրեաց...»[1]: Յովհաննէս Կոզեռնի անունով մեզ ոչ մի «Գիրք հաւատոյ» չի հասել, սակայն կարող էր աւանդուած լինել Յովհաննու քահանայի անունով[2]: Հեղինակային պատկանելութեան խնդրին մանրամասնօրէն կանդրադառնանք յաջորդ գլխում:

Ստորեւ ներկայացնում ենք այդ թղթերի վերտառութիւնները իրենց հակիրճ բովանդակային նկարագրութիւններով:

Ա. Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի> հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ից

Հայ Եկեղեցու երրորդաբանութեան, քրիստոսաբանութեան եւ Սուրբ Հոգու աստուածաբանութեան համակարգուած շարադրանք է: Քննութեան են առնուած կամ յիշատակուած մի շարք աղանդաւորական եւ հերձուածողական ուսմունքներ, ինչպիսիք են՝ արիոսականութիւն, սաբելիոսականութիւն, վալենտիանոսականութիւն, մանիքէականութիւն, ապողինարիզմ, մակեդոնականութիւն, նեստորականութիւն եւ այլն: Սուր քննադատութեան են ենթարկուած Քաղկեդոնի ժողովը եւ Թէոդորիտի եւ Լեւոն պապի քրիստոսաբանական հայեացքները: Այս թղթի վերտառութեամբ էլ պայմանականօրէն կոչում ենք ամբողջ ժողովածուն:

1 «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Ս. Ղազար, 1844, էջ 6-7

2 Սարկաւագի մի շարք յայտնի գործեր (օրինակ՝ աղօթքները)՝ աւանդուած թէ՛ Յովհաննէս քահանայի, թէ՛ Յովհաննէս Սարկաւագ վարդապետի կամ Սարկաւագ վարդապետի անուններով: Նոյնը կարող էր պատահել մէկ այլ Յովհաննէսի հետ:

Բ. Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականացն գլուխ ԺԸ

Կազմուած է ԺԸ ենթագլուխներից: Դաւանական խնդիրներից զատ, արժէքաւոր տեղեկութիւններ է պարունակում եկեղեցական տօների, սուրբերի յարգանքի, պատկերայարգութեան, ծիսական խնդիրների մասին: Եզրափակւում է որոշ թուերի խորհրդաբանութեան համառօտ տեսութեամբ: Թղթի ամբողջականութիւնը կասկածելի է. մեր կատարած որոշ ստորաբաժանումներ պայմանական բնոյթ են կրում:

Գ. Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ

Մանրամասն շարադրանք է Հայ Եկեղեցու վերաբերմունքի պատկերների եւ սրբոց նշխարների նկատմամբ: Այս մասին անդրադարձներ կան նախորդ եւ յաջորդ գլուխներում: Աստուածաբանական խորհրդածութիւնները ուղեկցւում են որոշ աւանդապատումների վկայակոչութեամբ: Թուղթն ընդհանուր առմամբ ջատագովական բնոյթ ունի՝ ընդդէմ ԺԱ-ԺԲ դդ. Հայաստանում աշխուժացած օտարամուտ աւանդութիւնների:

Դ. Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգլուն

Ջատագովական բնոյթի գործ է՝ ընդդէմ ուտելիքների եւ ըմպելիքների գործածութեան հետ կապուած մեղադրանքների: Հակաճառութիւնն ըստ երեւոյթին սկիզբ է առել վանական միջավայրում, որի մասին հետաքրքիր տեղեկութիւններ կան թղթում: Քննութեան են առնուած մի շարք ծիսական խնդիրներ: Նորից բարձրացնում է ս. խաչի եւ սրբապատկերների նկատմամբ վերաբերմունքի հարցը: Թղթին բնորոշ հակաճառական խիստ ոճը երբեմն բարեխառնւում է զարմանալի հանդուրժողականութեան եւ եղբայրասիրութեան երանգներով: Լեզուն ակներեւ խրթնութիւններ ունի:

Ե. Նորին յաղագս, եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զաստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ զ՚առ ի յինքեանէ գործս կամ կիրս

Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգի շարադրանք է՝ գրուած ընդդէմ քաղկեդոնականների: Անդրադառնում է տպականու-

թեան խնդիրներին: Հերքում են Դիոդորոս Տարսոնացու, Նեստորի եւ Եւտիքէսի տեսութիւնները: Ոչ ընդհանրացած մօտեցում է ցոյց տալիս ապողինարականութեան նկատմամբ, որը մերժում է անապականութեան վարդապետութեան տեսանկիւնից: Հետաքրքիր զուգահեռներ է Հին եւ Նոր Կտակարանների միջեւ՝ փաստելու Քրիստոսի մարդկային կիրընդունակութեան կամովի լինելը: Միանգամայն անընդունելի է համարում մեզ եւտիքէսականութեան մէջ մեղադրելը: Կոչ է անում միմեանց նկատմամբ արդարացի եւ ոչ թշնամական վերաբերմունքի, որը աւարտում է մի զարմանալի գեղեցկութեան աղօթքով Եկեղեցու միութեան համար:

Զ. Ցաղագս, եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոս, ի հարկէ հետեւին նեստորականաց մտաց

Ամենակարճ գլուխն է, ուր քննարկւում են նեստորականութեան ակունքները քաղկեդոնեան վարդապետութեան մէջ: Քաղկեդոնի ժողովը նմանեցնում է երկրորդ ջրհեղեղի՝ ընդգծելով կայսերական իշխանութեան չարաշահումները եւ մարդահաճոյութեան տարրը այդ ժողովի որոշումներն ընդունելիս:

Է. Թէ զիա՞րդ չարչարեալ Բանն մարմին եղեալ եւ անչարչարելի մնացեալ, եւ կամ որպէ՞ս դարձեալ ձայնակցեն չարափառքն

Հակիրճ եւ կուռ շարադրանք է անապականութեան վարդապետութեան: Այդ տեսանկիւնից քննութեան է առնուած քաղկեդոնեան համակարգը: Գործածում է մի շարք կարեւոր աստուածաբանական եզրեր՝ բնորոշելու համար Քրիստոսի մարդկային կրքերը որպէս փրկական եւ տնօրինական գործեր: Աստուածութեանը այլայլելիութիւն եւ չարչարականութիւն չվերագրելու համար պէտք է զանազանել տնօրինական եւ բնութեան նիստերը:

Ը. Ցարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի

Բնութիւնից վերցրած օրինակներով ցոյց է տալիս, որ «մի բնութիւն» բանաձեւի գործածումը արդարացի է նաեւ բնախօսական տեսանկիւնից: Դիմում է նաեւ արարչագործութեան պատմութեանը Մննդոց գրքից՝ լոյսի եւ նիւթի միութիւնը որպէս օրինակ դիտելով աստուածմարդկային միութեան համար: Հետաքրքիր են աննիւթական (սակայն զգալի) եւ նիւթական լոյս ըմբռնումները, որոնք վկայում են Սարկաւագի բարձր բնագիտական պատկերացումների մասին:

Թ. Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայաւդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց

Պատմական ակնարկով անդրադառնում է նեստորականութեանը եւ Քաղկեդոնի ժողովին՝ ցոյց տալով մարդաբանական մաքսիմալիզմի վաղնջական ակունքները Արտեմոնի հերձուածի մէջ: Հիմնականում օգտւում է Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւնից»՝ մէջբերելով Ե դպրութիւնն ամբողջութեամբ: Յիշատակում է Կղեմէս Աղեքսանդրացու, Իրենէոսի, Յուստինոսի, այլ վաղ եկեղեցական հայրերի երկերը, որոնք «քարոզեն վասն Քրիստոսի, թէ Աստուած է եւ մարդ»: Գլուխը եզրափակւում է Քաղկեդոնի ժողովի եւ նախընթաց դաւանական շարժումների հակիրճ ամփոփումով:

Ժ. Նորին յաղագս բնութեանն Բանի եւ միաւորութեան

Գեղեցիկ ոճով գրուած ամփոփում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեան: Շեշտադրւում է կատարեալ աստուածային եւ կատարեալ մարդկային իրականութիւնը Քրիստոսի մէջ, միաժամանակ՝ Աստուծոյ եւ մարդու միութեան անճառելիութիւնը՝ ընդդէմ քաղկեդոնականների:

ԺԱ. Նորին, եթէ զիա՞րդ ասի մի բնութիւնն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան

Խաղաղութեան եւ ներողամտութեան կոչով սկսուող այս ընդարձակ թուղթը հիմնարար շարադրանք է Քրիստոսի աստուածմարդկային բնութեան մասին: Ներկայացուած են եկեղեցական մարդաբանութեան մի շարք կարեւոր ըմբռնումներ: «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» եզրակերպումը դիտւում է կամքի եւ ներգործութեան տեսանկիւնից: Լայնօրէն գործածւում են արտաքին իմաստասիրական մեթոդները, վկայակոչում է Պլատոնին: Ակնյայտ ազդեցութիւններ է կրում Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» նշանաւոր երկից:

ԺԲ. Նորին յայտարարութիւն զանազան հերձուածաց յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց

Ընդարձակ շարադրանք է անապականութեան վարդապետութեան: Քննարկւում են զանազան ժամանակներում սկզբնաւորուած աղանդաւորական-հերձուածողական ուսմունքներ աստուածաբանական կարեւոր վերլուծութիւններով: Նկարագրւում է Սեւերիոս-Յուլիանոս հակաճառութիւնը՝ սուր քննադատութեան ենթարկելով երկու կողմին էլ: Մեծապէս ազդուած է Խոսրովիկ Թարգմանչից:

ԺԳ. Նորին դարձեալ

Թուղթն ըստ երեւոյթին գրուած է միեւնոյն անձնաւորութեան խնդրանքով, որին հասցէագրուած է առաջին Թուղթը: Առաջին մասում համառօտ կերպով ամփոփուած են Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքները: Երկրորդ մասը արժէքաւոր վկայակոչութիւններ է զանազան հերձուածողներից:

ԺԴ. Վկայութիւնք սրբոցն, եթէ մի բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ

Վկայակոչութիւններ Եկեղեցու հայրերից (Յուլիոս Հռոմէացի, Աթանաս Աղեքսանդրացի, Գրիգոր Նէոկեսարացի, Գրիգոր Աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Աղեքսանդրացի, Տիմոթէոս Կուզ):

Գ. Վաւերականութեան խնդիրը

Այս ժողովածուն առաջին անգամ աղբիւրագիտական քննութեան է ենթարկել Գարեգին վրդ. Յովսէփեանը իր «Խոսրովիկ Թարգմանիչ»[1] պատմամատենագրական ուսումնասիրութեան մէջ, ուր նա ցոյց է տալիս, որ.

ա) Յովհաննու քահանայի երկի ԺԲ գլուխը՝ «Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց» վերտառութեամբ, «ամբողջապէս համառօտութիւն կամ բանաքաղութիւն է Խոսրովիկի Ա, Դ եւ Ե գլուխներից»[2]:

1 Տե՛ս Գարեգին վրդ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899 (=ԽԹ):

2 ԽԹ, էջ 37

բ) Դ գլխից՝ «Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանեն եւ զանձինս ոչ արգելուն», մի հատուած է մեզ հասել ՄՄ N 777 գրչագրով, որն ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից: Այսինքն՝ այս գլխի հեղինակն անկասկած Յովհաննէս Սարկաւագն է[1]:

գ) Սարկաւագի յայտնի երկերը աւանդուած են մե՛րթ Յովհաննէս Սարկաւագի, մե՛րթ Յովհաննու քահանայի անունով[2]:

դ) Բ գլխի՝ «Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականաց գլուխ ԺԸ» վերտառութեամբ, V ենթագլխում յիշատակւում է Սարկաւագի «Յաղագս քահանայութեան»[3] ճառը[4]:

ե) Գ գլուխը՝ «Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ» վերտառութեամբ, եզրափակւում է ուշագրաւ արտայայտութեամբ. «Աղաչեմ, զասացող բանից զերանելի վարդապետն Սարկաւագ եւ զհայցողն ի նմանէ յիշեա՛», որով ակնյայտ է դառնում, որ այս գլխի հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է[5]:

Ցաւօք, Գարեգին վրդ. Յովսէփեանը այսքանով բաւարարւում է՝ ասելով. «Մեր փաստերը չեն սպառուել, բայց կարծում ենք՝ բերածներս էլ բաւական էր՝ ընթերցողներին համոզելու, թէ արդարեւ Յովհաննէս քահանան՝ Խոսրովիկի գրքից օգտուողը, Յովհաննէս Սարկաւագ վարդապետն է»[6]: Չնայած մեծանուն մատենագէտի այս եզրայանգմանը, մնում է մէկ կարեւոր չլուծուած հարց. արդեո՞ք բոլոր թղթերի հեղինակը միեւնոյն անձնաւորութիւնն է: Առայժմ մենք գիտենք, որ Գ եւ Դ գլուխների հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է: Ինչ վերաբերում է Բ գլխին, ապա հարկ է նշել, որ «Յաղագս նայիցց» ճառը մեզ յայտնի է միայն մէկ ընդօրինակութեամբ եւ այն էլ՝ Յովհաննու քահանայի անունով (ՍՂՄ ձեռ. N 828, էջ 642): Այն-

1 ԽԹ, էջ 53-54

2 Տե՛ս ԽԹ, էջ 54-56: Այս բանի իրաւացիութեան մասին կարելի է բազում այլ ապացոյցներ բերել ի թիւս Գարեգին վրդ. Յովսէփեանի բերածների:

3 «Սոփերք հայկականք», հտ. Գ

4 ԽԹ, էջ 56

5 ԽԹ, էջ 57

6 Նոյն տեղում

պէս որ, այս փաստարկը բաւարար չէ այս գլուխը Սարկաւագին վերագրելու համար:

Այժմ փորձենք շարունակել փաստերը, որոնք Գարեգին վրդ. Ցովսէփեանը սպառուած չի նկատում: Նախ տեսնենք, թէ ինչ փոխադարձ կապեր կան առանձին գլուխների միջեւ:

ա) Սրբոց մասունքների, ս. խաչի, պատկերների յարգանքի եկեղեցական վարդապետութեան մասին ամենաակնյայտ ընդհանրութիւններ կան [Բ III, VIII, IX, XVII][1] ենթագլուխ-պարբերութիւնների, [Դ XIV 8-9, 12-13, 22] հատուածների եւ Գ գլխի միջեւ:

բ) [Բ XIII 3]-ում անկասկած խօսւում է Դ գլխի մասին, որը հաղորդութեան ժամանակ գինուն ջուր խառնելու եւ թթխմորով հաց գործածելու հարցերին շատ մանրամասնաբար է անդրադառնում. «Քանզի բազումք ի նոցանէ զՋուր եւ զխմոր զապականութեան տարացոյցս ի մեծ խորհուրդն վնաս եւ հերձուած ոչ համարին, յորոց աւտարանալ պարտ է՝ որպէս ի հրէից, քանզի եւ նոքա անապական եւ կենդանարար զՄարմին եւ զԱրիւնն Տեառն ոչ համարին, ընդ որս հաղորդել եւ սիրով անգամ անպատեհ է, որպէս եւ յայլում ցուցաք մատենի վասն նոցա եւ վասն խորամանկ խորհրդոցն նոցա առատգոյն»:

գ) Հետեւեալ երկու մէջբերումներում Սարկաւագը պատուիրում է լռութիւնը գերադասել տգէտ պատասխանից:

1. «Թէ իցէ ի քեզ բան, տո՛ւր պատասխանի, ապա թէ ոչ՝ ապ քո ի վերայ բերանոյ քոյ լիցի» [Բ XV 2]:

2. «Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՛ւր զպատասխանի, ապա թէ ոչ՝ ապ քո եղիցի ի վերայ բերանոյ քո» [Դ XI 27]:

դ) Սարկաւագը, անդրադառնալով քաղկեդոնականների մի դէմք եւ երկու բնութիւն բանաձեւմանը, նշում է, որ նրանք դրանով փորձում են ծածկել իրենց քողարկուած նեստորականութիւնը եւ խաբել պարզամիտ, անվարժ եւ անուսում մարդկանց: Այս միտքը տարբեր եղանակներով ներկայացուած է ժողովածուի զանազան թղթերում: Ահա դրանցից մի քանիսը.

1. «Կեղծաւորին ոմանք՝ մի ասել դէմ, եւ զնոյն բաժանեն յերկուս բնութիւնս՝ խաբելով զպարզամիտս...» [Ա VI 4]:

«Քանզի երկուս դէմս ասաց՝ հաղորդեալս ի միմեանց եւ զսուրբ Կոյսն՝ ոչ Աստուածածին, այլ՝

2. Քրիստոսածին՝ խորամանկեալ զողանալ զպարզամիտս եւ զանուամունս...» [Ա IX 4]:

3. «Ի դէպ ժամանակի տեսցուք զՆեստորին եւ զերկուց ասացողացն բնութիւնս՝ ընդ միմեանս դատելով, զի գիտասցես ամենեցունց նոցա զմի զդայռեալ հայհոյութիւն, թէպէտ հայթայթին սիղոբայիւքն զողանալ զթեթեւամիտսն եւ զանուամունս» [Ե V 8]:

4. «Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայուդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց» [Թ վերն.]:

5. «Ոչ դանդաղին հոմանուութիւն որդւոց երկուց ամենեքեան ի զանազան ժամանակս բուսեալք հերձուածք զՔրիստոսէ, ի ներքս մուծանեն եւ մի դէմն ստեղծաբանելով՝ զողանան զանվարժից միտսն» [Ժ I 3]:

6. «Տեսանե՞ս, զի երկու բնութիւնդ ասել տարբերս յետ միաւորութեանն ի Նեստորէ սերմանեցաւ, եւ որք այժմ, զնոյն ասելով, պատրուակաւ իմն այլազգաբար զողանան զմիտս անուամանց» [ԺԱ II 23]:

7. «Զի թէպէտ եւ բազում անգամ հնարիւք խաբէութեան մի դէմն ասելով՝ չանացեն պատրել զդիւրահաւան անձինս...» [ԺԱ IX 16]:

8. «Զի թէպէտ եւ խաբելով զպարզամիտս եւ զանուամունս...» [ԺԲ II 2]:

ե) Հետեւեալ երկու տեղերում Սարկաւագը խօսում է մարմնաւորման խորհրդի անճառելիութեան մասին.

1. «Սակայն զի մարմին եղեւ անփոփոխելին եւ անայլայլելի<ն>, Նմա ասին ամենայնք Իւրոյ մարմնոյն կիրք, քանզի եթէ Ինքն մարմնացաւ, եւ Նորա է մարմինն անճնաւոր եւ բանական, Նորա են եւ կիրք մարմնոյն, այսինքն՝ Բանին Աստուծոյ մարմնացելոյ. դժուարա-

[1] Բնագրային յղումներ կատարելիս մենք յղում ենք մեր կողմից արդէն հրատարակութեան պատրաստուած բնագրի վրայ, ուր իւրաքանչիւր գլուխ հոռոմէական թուերով բաժանուած է պարբերութիւնների, իսկ իւրաքանչիւր նախադասութիւն համարակալուած է ըստ պարբերութիւնների:

տես է եւ նուրբ ամենեւին բանդ է, նաեւ անհաս ոչ միայն մարդկային մտաց, այլեւ անմարմին զաւրութեանց» [Ա VIII 2]:

2. «Եւ է իրս յոյժ դժուարատես եւ նուրբ, մանաւանդ թէ անճառելի եւ առանց քննութեան, չարչարեալ ասել եւ անչարչարելի զնոյն եւ զերկոսեան առանց երկբայութեան, մի՛ յայսմիկ զմեզ բանբասիցէք. քանզի աստուածային է տեսչութեանս յեղանակ եւ ոչ մարդկան միայն, այլ եւ իմանալի մաքուր բնութեանն վերնոցն բանականաց անհաս» [Է II 14]:

զ) Զ եւ ԺԲ գլուխների հետեւեալ հատուածներում Քաղկեդոնը համեմատում է Ղրհեղեղի հետ:

1. «Եւ այսպէս Ղրհեղեղն երկրորդ ապականեաց զերկիր, եւ այլ ազգի հուրն եկեղ ոչ սակաւս քաղաքս եւ նուազս ազգս, այլ փոքր ինչ եւ զամենայն տիեզերս, թէպէտ եւ ապրեցան, որք էին դրեալ ի կեանս, ոմանք տապանակաւ եւ ոմանք ի լեառն փախստեամբ» [Զ I 17]:

2. «Սակայն պահեցաւ նշխար ի Ղրհեղեղէն հաւատոյ, յուսամ թերեւս յաճումն համազգի ժողովրդոց...» [ԺԱ XI 10]:

է) Տրամատել հազուագիւտ բառը, որ Խոսրովիկ Թարգմանիչը ընդամէնը մէկ անգամ է գործածում, իսկ Սանահնեցին՝ ամենեւին ոչ, Սարկաւագը գործածում է հետեւեալ երկու տեղիներում՝ [Ա XI 12] եւ [Ը II 1]:

ը) Դաւանական հանդուրժողականութեան մասին հետեւեալ արտայայտությունները վկայում են Դ եւ Ե գլուխների՝ մի հեղինակի կողմից գրուած լինելը:

1. «Այլեւ սիրեմք եւ բաղձամք զմիաւորութիւն Հոգւոյ, ոգբամք դառնութեամբ լցեալք զլծակցութեանն բաժանումն, արտասուաւք թացեալ լինիմք...» [Դ XVI 9]:

2. «Վասն զի ողբամք դառնապէս զ'առ ի միմեանց վաբառմանն պատճառս եւ զվա[ր]ատումն եւ աղաւթեմք ջերմապէս զհաւաքումն...» [Ե VII 2]:

թ) ԺԳ գլխի սկզբում ակնարկում է Ա եւ ԺԴ գլուխների մասին:

«Ցառաջնում քան զայս, զոր խնդրեցեր մատենի, ըստ կարողութեան արարի՝ ըստ քան բանին հաւատոյ, ըստ սրբոց հարցն աւան-

դութեան ժողովումն: Բայց զի վասն չարափառացն դժնէութեան զվկայութիւն Սրբոց Գրոց, որ յաղագս խաչելութեանն փրկական Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրամայեցեր սակաւուք տալ առ ի յանդիմանութիւն անհանճարութեան նոցա, առաքեցի ձեզ համառաստագոյն՝ մերձ եղեալ եւ զհարցն ուղղափառաց, որքան դիպողագոյն ժամուս եւ ձեր խնդրոյ էր բան: Բայց կարեւոր է նախ զկարծեաց նոցա յայտնել դարձեալ զամբարշտութիւն...» [ԺԳ I 1-3]:

Նախ եւ առաջ Ա գլուխը ամենաամբողջական դաւանական գլուխն է, որը նուիրուած է ոչ թէ մէկ մասնաւոր խնդրի (անապականութիւն, բնութիւնների միութիւն, պատկերայարգութիւն եւ այլն), այլ Նիկիոյ հանգանակի կամ Հաւատոյ նշանակի հանգամանալից վերլուծութեանը՝ ըստ սուրբ հայրերի աւանդութեան. «Արդ, ըստ Աստուածաշունչ Գրոց եւ ըստ հարցն աւանդութեան» [Ա I 1], «...զոր ի հարցն ընկալաւ Եկեղեցի» [Ա VII 6], «Դարձեալ, սրբոց հարցն հետեւելով...» [Ա IX 1]:

Ըստ երեւոյթին Ա, ԺԳ եւ ԺԴ գլուխները գրուած են միեւնոյն անձնաւորութեան խնդրանքով, որին Սարկաւագ վարդապետը դիմում է «պատուականդ քաջ արանց» [Ա VIII 1] ձեւով:

Այսպիսով, դժուար չէ նկատել. վերը նշուած փաստերի համադրութեամբ բոլոր թղթերը փոխադարձ շաղկապւում են, եւ ակնյայտ է դառնում, որ նրանց հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է:

Դ. Ժողովածուի աղբիւրները եւ ստեղծման դրդապատճառը

Հայ Եկեղեցու պատմութիւնը մշտապէս ուղեկցուել է դաւանական մտքի իւրօրինակ վերելքով: Ներքին եւ արտաքին հերձուածները արտորոշելու եւ հոգեւոր գիտակցութիւնն ամրացնելու անհրաժեշտութիւնը եղել է Հայ Եկեղեցու տեւական հոգածութեան առարկան. ահա թէ ինչու դաւանական խնդիրները լայն արծարծում են գտել հայ մատենագրութեան մէջ: Հայ մատենագրութեան մէջ թերեւս չի կարելի ցոյց տալ մի երկ, որը այս կամ այն կերպով առնչութիւն չունենայ դաւանական խնդիրների հետ:

Ե-ԺԲ դդ. ընթացքում հայ հայրերի եւ վարդապետների կողմից ստեղծւում է հսկայածաւալ դաւանական գրականութիւն, որը, յե-

նուած լինելով տիեզերական հայրերի՝ Աթանաս Մեծի, Յովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Աստուածաբանի, Կիւրեղ Աղեքսանդրացու եւ այլոց գրուածքների վրայ, ունի ինքնուրոյն դիմագիծ եւ զարգացման օրինաչափութիւններ: Հայ դաւանական մտքի զարգացումը մի իւրօրինակ եւ ըստ էութեան անկրկնելի բարձունքի հասաւ Ը դարում Խոսրովիկ Թարգմանչի եւ Յովհաննէս Օձնեցու աշխատանքների շնորհիւ: Իսկ 726 թ. Մանազկերտի ժողովը առանցքային իրադարձութիւն է ոչ միայն հայ դաւանական մտքի պատմութեան տեսանկիւնից: Սարկաւագի այս ժողովածուն, ինչպէս արդէն նշեցինք, զգալի ազդեցութիւններ է կրում Խոսրովիկից, իսկ Օձնեցու ազդեցութիւնների մասին կարելի է միայն խօսել ոչ ուղղակի իմաստով[1]:

Հայ դաւանական մտքի զարգացման որպէս երկրորդ կարեւոր փուլ պէտք է նկատել Ժ դ. երկրորդ կէսից մինչեւ ԺԲ դարի սկիզբ ընկած ժամանակաշրջանը, երբ դաւանական մտքի ասպարէզ են մտնում այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք են Անանիա Նարեկացին[2], Սամուէլ Կամրջաձորեցին, Անանիա Սանահնեցին, Պօղոս Տարօնացին[3], Յովհաննէս Սարկաւագը: Դաւանական մտքի այս աննախադէպ վերելքը պայմանաւորուած էր հայ-բիւզանդական եւ մասամբ հայ-վրացական դաւանական շփումների զգալի աշխուժացմամբ: Եթէ, օրինակ, Պօղոս Տարօնացու (որ Սարկաւագի ժամանակակիցն է) հակաճառական գրուածքները արդիւնք են հայ-բիւզանդական միջեկեղեցական փոխյարաբերութեան, ապա Սարկաւագի ժողովածուի ստեղծման դրդապատճառն ըստ երեւոյթին հայ-վրացական փոխյարաբերութիւններն են[1]: Պէտք է նաեւ նշել, որ փոխադարձ ազդեցութեան որեւէ հետք չի նշմարւում Պօղոս Տարօնացու եւ Յովհաննէս Սարկաւագի միջեւ:

Ինչպէս արդէն նշեցինք, Սարկաւագի դաւանական գրուածքները տարբեր ժամանակներում ստեղծուած եւ տարբեր անձանց հասցէագրուած թղթեր են: Օրինակ՝ եթէ Բ գլուխը գրուած է ոմն Գագիկ կրօնաւորի (վերնագիր), իսկ Ե գլուխը՝ եղբայրների [Ե VII 8] խնդրանքով, ապա Ա, ԺԳ եւ ԺԴ գլուխները ուղղուած են ինչ-որ իշխանական հեղինակութեան, որին նա դիմում է պատուականաց քաջ արանց [Ա VIII 1] ձեւով, որը ոչ միայն խնդրել է [ԺԳ I 1] նրանից այդ գրութիւնները, այլ նաեւ հրամայել է [ԺԳ I 2] գրել: Թ եւ ԺԲ գլուխներում նա դիմում է ոմն սիրելիի [Թ I 2, ԺԲ I 4, VIII 1]: Իսկ [ԺԲ VIII 1]-ում ակնարկում է ԺԴ գլխի մասին[2]. «Որպէս յառաջնում քան զայս թղթին ցուցաք, ուր եւ զԿիւրղի զերկոտասան գլուխսն յաղագս այդորիկ գրեալ առ Նեստոր կարգեցաք», որտեղից ակնյայտ է դառնում՝ այդ սիրելի անձնաւորութիւնը նոյն իշխանական հեղինակութիւնն է:

Վարդան Արեւելցու պատմութեան մէջ կայ մի ուշագրաւ վկայակոչութիւն. «Էին եւ կանայք թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ ի Քոբայրն, Խորասու եւ Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագն զգուշական խրատս»[3], որը կարող է որոշ լոյս սփռել Սարկաւագի հաղորդակցութեան շրջանակների վրայ: Սակայն մեզ թւում է, որ այստեղ խօսքը աւելի նրա ներանձնական-խրատական

1 Խոսրովիկ-Օձնեցի զուգահեռների մասին տե՛ս ԽԹ, էջ 86-98:

2 Անանիա Սանահնեցու անունով մեզ հասած Հակաճառութեան մեծ մասի հեղինակը Անանիա Նարեկացին է (տե՛ս Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացի, Երեւան, 1968, էջ 117-150): Յատկապէս այդ երկի առաջին գլուխը, որ աչքի է ընկնում առանձնայատուկ աստուածաբանական խորութեամբ, գրուած է Ա. Նարեկացու կողմից: Այն մեզ է հասել մի շարք գրչագրերով (վերջից մի փոքր հատուածի բացակայութեամբ): Տե՛ս, օրինակ, ՄՄ N 568, էջ 2ա-54ա:

3 Պօղոս Տարօնացու մասին սխալ կարծիք է տարածուած հայագիտութեան մէջ, թէ ծայրայեղ դաւանական հայեացքներ է ունեցել: Այս կարծիքի ձեւաւորման հիմնական պատճառը «Ընդդէմ Թէոփիստեայ» թուղթն (համառօտ տարբերակ) է, որն, ըստ մեզ, անվաւեր գրուածք է՝ լի յետագայ ընդմիջարկութիւններով: Պօղոս Տարօնացու «Ընդդէմ Թէոփիստեայ» ընդարձակ դաւանաբանական գրուածքի եւ «Ընդդէմ հերձուածողաց» երկի նոյնիսկ հպանցիկ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նա հայ դաւանական մտքի կարեւորագոյն դէմքերից մէկն է: Նշուած գործերի քննական բնագրերը պատրաստում են հրատարակութեան:

1 Այս ենթադրութեան պատճառը նախ եւ առաջ Հաղբատի վանքի դիրքն է, ուր ապրել եւ ստեղծագործել է Յովհաննէս Սարկաւագը: Նա մեծ հոչակ է վայելել վրացական միջավայրում, որի մասին վկայում են նաեւ վրացական աղբիւրները: Պահպանուել է նաեւ մէկ թուղթ հետեւեալ սկսուածքով. «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն...» (տե՛ս Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 302), որը վկայում է Սարկաւագի բացառիկ հեղինակութեան մասին Վրաց Եկեղեցու շրջանակներում:

2 Այստեղից ենթադրում ենք, որ այդ թուղթը չի պահպանուել իր ամբողջական տեսքով, քանի որ Կիւրեղի տասներկու նզովքներից ընդամենը մի քանիսն են առկայ ԺԴ գլխում:

3 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Ս. Ղազար, 1862, էջ 122

գրուածքների[1] մասին է, քան դաւանական թղթերի:

Ինչ վերաբերում է ժողովածուի աղբիւրներին, ապա նրանց մէջ պէտք է առանձնացնել Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը[2] եւ «Կնիք հաւատոյ»[3] ժողովածուն, որոնցից հիմնականում օգտւում է Սարկաւագը մէջբերումներ կատարելիս (յատկապէս ԺԳ եւ ԺԴ գլուխներում): Սարկաւագի վկայակոչումները Եկեղեցու հայրերից երբեմն խմբագրութիւններ են, որոնք որոշակի տարբերութիւններ ունեն սկզբնաղբիւրներից: Խոսրովիկի զգալի ազդեցութիւնների կողքին Սանահնեցու Հակաճառութեան որեւէ ազդեցութիւն չյայտնուեց բացայայտել: Ամենայն հաւանականութեամբ Սարկաւագը ծանօթ չի եղել այս Հակաճառութեանը[4]:

Ընդհանրապէս, նշուած ժամանակաշրջանի դաւանական բնագրերի ուսումնասիրութիւնը շատ կարեւոր է հայ քրիստոսաբանական մտքի առանձնայատկութիւնների բացայայտման տեսանկիւնից, որովհետեւ անմիջապէս յաջորդում է Կիլիկեան դարաշրջանը, որն ընդհանուր առմամբ մեծ անկում էր հայ դաւանական մտքի համար, երբ փոխզիջումների փնտրտուքի յորձանուտում գրեթէ մոռացութեան էին մատնուած Մայրագոմեցու, Խոսրովիկի, Օձնեցու, Անանիա Նարեկացու, Սարկաւագի փառայեղ աւանդները:

Ե. Լեզուաոճական առանձնայատկութիւնները

Սարկաւագի ժողովածուի լեզուի առաջին գնահատականը խիստ միակողմանիօրէն տրուած է «Նոր հայկազեան բառգրքի» հեղինակների կողմից. «...է գործ խառնակ, զի ընդ հանճարաւոր բանիս խառնեալ է ի յետնոց ոճ իմաստակութեան եւ խստութեան Խոսրովկայ եւ Սանահնեցւոյն, եւ այն՝ խուկեալ անհեթեթ բարդութեամբք բառից...»[1]: Հարկ է նկատել, որ որեւէ աստուածաբանական երկի լեզուաոճական առանձնայատկութիւնների մասին պատկերացում կազմելու համար նախ եւ առաջ պէտք է պարզել տուեալ երկի ժանրային բնոյթը եւ միայն տուեալ ժանրի ծիրի մէջ քննութեան առնել նրա ոճն ու լեզուն: Բարոյախրատական երկերի լեզուն խիստ տարբերւում է դաւանաբանական երկերի լեզուից, մեկնաբանական լեզուն այլ ոճ ունի, վարքագրականը՝ այլ... Նոյնիսկ միեւնոյն հեղինակի՝ տարբեր ժանրերի պատկանող գործերը կարող են այնպիսի լեզուաոճական տարբերութիւններ ունենալ, որ նոյնիսկ տարակուսելի թուայ նրանց՝ նոյն հեղինակի կողմից գրուած լինելը: Աւելի յստակ պատկերացնելու համար ասուածը՝ կարելի է համեմատել, օրինակ, Նարեկացու «Ողբերգութեան մատեանը» եւ «Երգ Երգոցի մեկնութիւնը», կամ Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» եւ «Ատենաբանութիւնը», կամ Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» եւ «Մատթէոսի մեկնութիւնը»: Եւ այստեղ տառացի համեմատութիւնները կարող են ոչ մի լոյս չսփռել նրանց հեղինակային պատկանելութեան խնդրի վրայ: Որեւէ աստուածաբանական երկ ստեղծելիս հեղինակը պէտք է հետեւէր որոշակի ձեւաւորուած ժանրային եզրերի եւ ոճի՝ հարազատ մնալու Եկեղեցու աստուածաբանական մտքի սրբազան աւանդութեանը:

Սարկաւագի այս երկը, լինելով դաւանական թղթերի ժողովածու, բնականաբար ունի ակնառու լեզուական եւ եզրաբանական ընդհանրութիւններ դաւանական բնոյթի երկերի հետ: Սակայն մեր խնդիրն այստեղ ոչ թէ այդ ընդհանրութիւնների քննութիւնն է (այս մասին աւելի կիսօսենք աստուածաբանական վերլուծութիւնների մէջ), այլ աւելի որոշ լեզուական առանձնայատկութիւնների վերհանումը:

Ինչպէս արդէն նշուեց, այս թղթերը գրուել են տարբեր ժամանակներում եւ տարբեր պատճառներով, ուստի եւ չունեն միօրինակ լեզու եւ ոճ: Թղթերին բնորոշ են լեզուական խրթնութիւնները, որոնք առաւել ակնառու են յատկապէս «Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ» եւ «Նորին Յովհաննու քահանա-

1 Տե՛ս Գրիգոր սարկաւագ (այժմ տ. Տրդատ քահանայ) Ուզունեան, Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագիտութիւնը եւ խրատական գործերը (աւարտական), Ս. Էջմիածին, 1995 (=Աւարտական):

2 Տե՛ս «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», Ս. Էջմիածին, 1908: Ի դէպ, Սարկաւագի վկայակոչուած քաղուածքներով լրացում-վերականգնում են Տիմոթէոսի Հակաճառութեան եղծուած մասերը:

3 Տե՛ս «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914:

4 Այս հանգամանքը փոքր-ինչ տարօրինակ է, քանի որ Սարկաւագը քաջածանօթ է եղել Սանահնեցու ժառանգութեանը եւ անգամ խմբագրել դրանք (տե՛ս Յակոբ Քեռոսէեան, Անանիա Սանահնեցու «Մատթէի մեկնութիւնը», «Գանձասար» Դ, Երեւան, 1993, էջ 216-217):

1 ՆԲՀԼ, էջ 18: Այստեղ նկատենք, որ ոչ պատահականօրէն նոյնպիսի որակման բախտին են արժանանում նաեւ Խոսրովիկի եւ Սանահնեցու Հակաճառութիւնները, որոնք գրուած են Քաղկեդոնի ժողովի դէմ:

յի առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն» վերտառութիւններով թղթերին: Սարկաւագը յաճախ վկայակոչում է Սուրբ Գիրքը եւ կատարում համեմատութիւններ նիւթական աշխարհի օրինակների հետ՝ դիմում այսպէս կոչուած բնախաւսութեան (յատկապէս Ը գլխում): Երբեմն Սարկաւագի լեզուի դաւանական կուռ կերտուածքի մէջ յուզական տարր է յայտնւում, երբ նա եղբայրական սիրով եւ մեծ հանդուրժողականութեամբ խօսում է Հայ Եկեղեցու ընդդիմախօսների մասին [տե՛ս Դ XVI 9-11, Դ XVII 3-7, Ե VII 2-8, ԺԲ I 1-4]: Մերթ ընդ մերթ հանդիպում են գեղեցիկ եւ բարձրարոճ արտայայտութիւններ, որոնք առանձնայատուկ երանգ են հաղորդում լեզուին. օրինակ՝ «...զճառս լուսոյ ստուերացուցանեն խաւարաւ» [Բ IX 1], «Յանտեղիսն ճարտարագոյնք եւ հանճարեղք յանբանութիւն...» [Գ I 1], «արուեստաւոր ճոռոմաբանութեամբ» [Դ III 5], «յամենազան եւ ի բիւրապատիկ ձիրս» [Դ XVI 5], «Ճարտարեն բանիւք պակասեալք յարդեանցն ազնուականութենէ...» [Ժ I 1], «ախորժելով զհոգեւոր թովչութեան զձայնս եւ զիմաստուն դեղատութիւնն» [ԺԱ I 3]:

Սարկաւագի լեզուի բնորոշիչ առանձնայատկութիւններից է նաեւ նախդիրների բարդութիւններ գործածելը, օրինակ՝ ընդ առ [Գ V 1], զ'ի [Ե III 5, Ե VIII 12, Ե X 7], զ'առ [Ե VII 2, Թ II 4, Ժ I 2], զ'ըստ [Ե VIII 12, ԺԱ X 6], զ'ընդ [Է II 1], յ'առ [ԺԲ I 24], առ եւ զ(...) [Դ VII 8], զ'առ ի [Ը II 1]: Առհասարակ նախդիրների բարդութիւնների խնդիրը գրաբարում լուրջ ուսումնասիրութեան կարիք է զգում:

*Սարկաւագի կողմից գործածւում են նաեւ որոշ բառեր, որոնք չկան «Նոր հայկազեան բառգրքում». օրինակ՝ **սկզբնահոդ** [Դ XIV 2], **բացասահմանեմ** [Դ VI 7], **նախահաւաք** [Ը I 2], **արտուղեալ** [ԺԲ VII 21]:*

Վերջապէս հարկ է անդրադառնալ մեզ հասած բնագրի խմբագրութեան աստիճանին, այսինքն՝ պարզել, թէ Երզնկացու ժողովածուով պահպանուած բնագիրը որքանով է հարազատ Սարկաւագի ինքնագրին: ՄՄ N 777 (ԺԲ դ.) գրչագրով մեզ է հասել մի հատուած «Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն» թղթից (1ա-51բ)՝ երկաթագիր գրչութեամբ, որը, ըստ գրչի յիշատակարանի, ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից: Ահա այդ մեծարժէք յիշատակարանը. «Այս բանք քերդողականք՝ ասացեալ մեծի պուետիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերա-

հռչակ ուխտին Հաղբատ, գտի ես՝ նուաստ ոմն ի մանկունս Եկեղեցւոյ: Արդ, մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց եւ յարուեստից: Զի եւ մեք ոչ իշխեցաք յաւելուլ եւ պակասեցուցանել զոր ինքնին իւրով ձեռամբն գրեալ էր, եւ ըստ այսմ աւրինակի էր կտակն, յորում էր սա՝ սկիզբն եւ կատարածն եղծեալ: Եթէ գտցես ուրեք զբովանդակն, գրեա՛: Եւ զմեզ յիշեա՛ ի Տէր»:

Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Երզնկացու ժողովածուով աւանդուած բնագիրը տեղ առ տեղ զգալի լեզուական (ո՛չ իմաստային) խմբագրութիւններ է կրել, որի պատճառը կա՛մ ձեռքի տակ եղած ընդօրինակութիւնների թերութիւններն են եղել, կա՛մ այդ ընդօրինակութիւններն արդէն իսկ փոփոխութիւններ էին կրել: Համեմատութեան արդիւնքներն, անշուշտ, շատ կարեւոր են բնագրի վերականգնման խնդրում, եւ մենք նկատի ենք ունեցել դրանք՝ մեր կողմից պատրաստուած բնագրի մէջ խմբագրական միջամտութիւններ կատարելիս[1]:

Զ. Յովհաննէս Սարկաւագի դաւանական հայեացքները

Սարկաւագի աստուածաբանական հայեացքների մասին լիակատար պատկերացում կազմելու համար անշուշտ պէտք է նկատի ունենալ ոչ միայն այս ժողովածուն, այլ նաեւ նրա աղօթքները եւ բարոյախրատական երկերը[2]: *Սակայն այստեղ մենք կսահմանափակուենք Սարկաւագի դաւանական հայեացքների դիտարկմամբ: Ուստի այս*

---

1 Տեղի սահմանափակութեան պատճառով այդ համեմատութեան արդիւնքները կներկայացնենք մեր կողմից պատրաստուող նոյնանուն աւելի ընդարձակ ուսումնասիրութեան մէջ, որին կից ներկայացուելու է նաեւ ժողովածուի գիտական բնագիրը:

2 Սարկաւագի աղօթքների մի մասը լոյս է տեսել «Սոփերք հայկականք» շարքով (ԺԷ, 1854): Այժմ ամբողջական հրատարակութեան է պատրաստւում տ. Տրդատ քահանայ Ուզունեանի կողմից, որը վերջերս, առաջին անգամ հայագիտութեան մէջ, ներկայացրեց Սարկաւագի բարոյախրատական երկերի բնագրերը՝ համապատասխան ուսումնասիրութեամբ (տե՛ս Աւարտաճառ): Մէկ ճառ հրատարակուել է «Սոփերք հայկականք» շարքով՝ «Յովհաննու Սարկաւագ վարդապետի Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին» (Գ, 1853), մէկ ճառ էլ հրատարակել է Աշոտ Աբրահամեանը՝ «Յովհաննու քահանայի Յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ» (տե՛ս «Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը», էջ 306-315): Վերջինիս վաւերականութեան հարցը կասկածի տակ է առել Ս. Արեւշատեանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1974, հտ. 11):

ժողովածուում արծարծուած ծիսական աստուածաբանութեան[1] *մի շարք կարեւոր հարցերի քննութիւնը թողնում ենք ապագային: Այս խնդիրներին մասամբ անդրադարձել է Յակոբ Քեոսէեանը իր «Յովհաննէս Սարկաւագի «Վասն պատկերաց» եւ «Վասն մասանց պատուոյ» աշխատութիւնները» յօդուածում*[2]:

Սարկաւագի ժողովածուն սկսում է երրորդաբանական խնդիրների ամփոփ ներկայացումով՝ Սուրբ Երրորդութեան աստուածաբանութեան այն բոլոր հիմնարար սկզբունքները, որոնք արդէն բիւրեղացել էին եկեղեցական վարդապետութեան մէջ:

«Մի բնութիւն եւ Երեք Անձեր» (μία οὐσία, τρεῖς ὑποστάσεις) *կապադովկիական եզրակերպումը դիտւում է ներաստուածային եւ տնօրինական մակարդակներում: Ներաստուածային խորհրդական կարգը բնորոշւում է համագոյութիւն* (ὁμοούσια) *կարեւոր եզրով, որը աստուածաբանական կիրառութեան մէջ մտաւ Նիկիոյ Ա տիեզերական ժողովով (325 թ.) եւ նշանաւորեց քրիստոնէութեան յաղթանակը հրէական*[3] *եւ միջին-պլատոնական*[4] *մտքի վրայ:*

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին զանազանւում են անձերով եւ նոյնանում բնութեամբ՝ համագոյակից են Միմեանց: Երրորդութեան Անձերի բնութենական նոյնութիւնը արտայայտելու համար Սարկաւագը գործածում է նաեւ այլ եզրեր՝ բնութենակից, էակից, փառակից, երկրպագակից, տիրակից, համազօր, նոյնապատիւ, հաւասարապատիւ, համապատիւ, համաբուն, նոյնագոյ: Համագոյութիւնը բացառում է որեւէ ժամանակային պատճառականութիւն Երրորդութեան Անձերի միջեւ: Հայրը անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդեամբ եւ Սուրբ Հոգու բխմամբ: Մնունդը եւ բխումը ներբնութենական ակտեր են եւ ոչ թէ աստուածային բնութիւնից դուրս ժամանակային առաջացումներ (ընդդէմ Արիոսի) կամ միեւնոյն Աստուածային Անձի տարակերպութիւններ (ընդդէմ Սաբելիոսի):

«Ոչ երեք աստուածներ՝ բնութեամբ օտար միմեանցից, եւ ոչ մէկ անձ՝ տկար առատութեան մէջ, այլ Մի Աստուած՝ ըստ բնութեան նոյնութեան, եւ Երեք Անձեր՝ ըստ ամէնառատութեան եւ անճառելի խորհրդի: Դարձեալ՝ ոչ երեք անսկիզբներ, քանզի միայն Հայրն է անսկիզբը՝ ոչ մէկից չծնուած, իսկ Որդին Նրա ծնունդն է, եւ Սուրբ Հոգին ելնում է Նրանից, բայց ըստ ժամանակի՝ անսկիզբ են Հօր պէս, եւ Երեքը սկիզբ չեն Միմեանց համար: Քանզի Հայրն է սկիզբը Որդու՝ ծննդեամբ եւ Հոգու՝ ելողութեամբ, ոչ մէկ անձ՝ երեք լինելով, եւ ոչ երեք աստուած՝ մի բնութեամբ, ուստի եւ անբաժանելի ենք խոստովանում: Եւ պէտք չէ կարծել մէկ անձ երեք անուններով, ինչպէս Սաբելիոսը, եւ ոչ՝ երեք տարբեր բնութիւններ, ինչպէս Արիոսը, այլ՝ մի բնութիւն եւ Երեք Անձեր»[1] *[Ա I 2-5]:*

*«Արդ, ոչ մի կերպ չեն զանազանւում Մնողի համագոյ Մնունդը, բայց միայն՝ որ Հայր չէ եւ չի աւում եւ չի զատւում Սուրբ Հոգուց, պատուակից է եւ կարողակից... Որի սկիզբը ոչ թէ ժամանակ է, այլ Իր Հայրը, Նրա հետ է անսկզբնաբար եւ Նրա մէջ կատարեալ ամէն ինչում որպէս Հօր նոյն զօրութիւն եւ իմաստութիւն, անվրէպ պատկեր, փառքի ծագում եւ Նրա էութեան նկարագիր, պատկեր, Միածին Որդի, Բան, Խորհուրդ... Եւ քանզի անբաժանելի է Հօրից, ասում է. «Ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ»**. *եւ դարձեալ՝ Իր սուրբ եւ փրկական աղօթքում ասում է. «Դու, Հա՛յր, Իմ մէջ ես, եւ Ես՝ Քո»***...*Բայց դու երբ լսում ես այս, մի՛ կարծիր, թէ Մէկը Միւսի մէջ է ընկղմւում, որ անմարմին եւ անճառելի էութիւն է եւ կատարելապէս առանց թանձրութեան եւ նիւթի, քանզի երկրպագելի եւ Ամենասուրբ Երրորդութիւնը զանազանւում է անձերով եւ դէմքերով: Այլ ըստ բնութեան նոյնութեան եւ անվրէպ նմանութեան իմացանք, որ Հայրը Որդու մէջ է, եւ Որդին՝ Հօր...» [Ա 4-19]:*

Երրորդութեան Անձերը ունեն Իրենց ներյատուկ արարչագործա-

1 *Ծիսական աստուածաբանութեամբ* (liturgic theology) այստեղ նկատի ունենք ոչ միայն եկեղեցական ծէսի եւ տօների հետ առնչուած աստուածաբանական հարցերը, այլ նաեւ *նշանական աստուածաբանութիւնը* (simbolic theology) այնքանով, որքանով խօսքը վերաբերում է եկեղեցական ծէսի եւ պաշտամունքի նշաններին կամ խորհրդանշաններին (օրինակ՝ պատկերներ, u. խաչ եւ այլն):

2 «Պատմա-բանասիրական հանդէս», 1979, N 4, էջ 127-134

3 **Մեսրոպ քահանայ Արամեան**, Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը, «Գանձասար» Ա, Երեւան, 1992, էջ 110

4 **Տե՛ս Aloys Grillmeier**, The Council of Chalcedon - an anaiysis of a conflict, "Five Vienna Consultations": Յօդուածը թարգմանաբար ներկայացուած է այս հատորում:

1 Այս եւ յետագայ բոլոր բնագրային մէջբերումները ներկայացնում ենք թարգմանաբար՝ շարադրանքը աւելի դիւրահաս դարձնելու համար:

* Յովհ. ԺԴ 11

** Յովհ. ԺԷ 21

կան եւ տնօրինական նիստերը, որոնք աւելի բացայայտում են քրիստոսաբանութեան եւ Սուրբ Հոգու աստուածաբանութեան մէջ: Սուրբ Հոգու աստուածաբանութեանն է յատկացուած Ա գլխի եզրափակիչ մասը: Սուրբգրային բազմաթիւ վկայակոչութիւններով հաստատւում է Սուրբ Հոգու համագոյութիւնը Հօր եւ Որդու հետ: Ուշագրաւ է Սարկաւագի ծաւալումն անճառելի արտայայտութիւնը Սուրբ Հոգու մասին [Ա XXII 2], որ «կատարելապէս ունի Աստուածութեան էութիւնը եւ պատիւը, ուստի, իշխանութեամբ գալով, յանդիմանեց աշխարհը մեղքի պատճառով» [Ա XIII 12]: Հոգեգալուստով սկսւում է Սուրբ Հոգու տնօրինական նախախնամութեան դարաշրջանը: Ով չի ընդունում Սուրբ Հոգուն, նա չի ընդունում Հօրը եւ Որդուն: Ուստի ճշմարիտ դաւանութեան եւ աստուածպաշտութեան հիմքը Սուրբ Հոգու ընդունելութիւնն է, որով մենք դառնում ենք Սուրբ Երրորդութեան տաճար: Որի համար Սուրբ Հոգու կենդանի ուսուցմամբ եւ մխիթարութեամբ պէտք է հեռանալ ամէն տեսակ աղանդաւորական եւ հերձուածողական ըմբռնումներից եւ կանգնել Բանի մարդեղութեամբ հաստատուած սրբազան աւանդութեան հիմքի վրայ [Ա XIII 1-6]:

Բնականաբար, քրիստոսաբանութիւնը սոյն ժողովածուի կենտրոնական թեման է: Սարկաւագը հետեւողականօրէն բացայայտում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը՝ սուր քննադատութեան ենթարկելով Քաղկեդոնի ժողովը եւ նախընթաց հերետիկոսական-հերձուածողական շարժումները (ապողինարիզմ, նեստորականութիւն, եւտիքէսականութիւն եւ այլն): Ժողովածուում առանձնայատուկ տեղ են գրաւում անապականութեան խնդիրները, ինչը մենք կդիտարկենք առանձին ենթագլխում: Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքները փրկաբանական ուղղորդուածութիւն ունեն: Բանն Աստուած մարդացաւ մեր մարդկային ընկած բնութիւնը փրկագործելու համար: Աստուած կատարելապէս մարդացաւ, այսինքն՝ միաւորուեց մարդկային բնութեան ամբողջականութեան հետ [Ա V 2, Ե VIII 5]: Եթէ Քրիստոսի մարդեղութիւնը կատարեալ կամ իրական չէ, ապա մեր փրկութիւնը իրական չէ. ահա թէ ինչու մերժելի են ապողինարիզմը եւ եւտիքէսականութիւնը. իւրաքանչիւր մարդաբանական թերացում կամ վերացարկում փլուզում է մեր փրկութեան իրականութիւնը (մարդաբանական մինիմալիզմ) [Ե VIII 1-2, Ե X 1-5]:

Հաւասարապէս պէտք է հեռու մնալ մարդաբանական չափազան-

ցումներից եւ աւելորդ շեշտադրումներից, որով գայթակղուած էր ողջ անտիոքեան դպրոցը՝ Թէոդորոս Մոպսուեստացուց եւ Դիոդորոս Տարսոնացուց մինչեւ Նեստոր: Սարկաւագը անընդհատ շեշտադրում է Աստուծոյ եւ մարդու գոյաբանական եւ էական (բնութենական) միութիւնը Քրիստոսի մէջ, առանց որի խախտում է մեր փրկաբանական իդեալը [Ա V 1-4]:

Սարկաւագը յատկապէս զգուշացնում է քաղկեդոնեան համակարգում քողարկուած վտանգներից, որոնք, ըստ նրա, «ծածկուած են պարզամիտներից եւ անուսումներից»: Քաղկեդոնեան համակարգում միանգամայն ակնյայտ է նոյն անտիոքեան թթխմորը, որը Նեստորականութեան անկման պատճառը հանդիսացաւ: Անտիոքեան այս անլուծելի երկուութիւնը Նեստորը փորձեց յաղթահարել միացութեան դէմք (πρόσωπον τῆς ἑνώσεος) արհեստական եզրով, սակայն արդիւնքում Քրիստոսի մէջ սկսեց միայն աստուածացած մարդ տեսնել: Քաղկեդոնի հետեւորդները փորձում էին այս անլուծելի երկուութիւնը յաղթահարել հիպոսթասիսի միութեամբ, որն աւելի ճիշտ կլինի անուանել հիպոսթատիկ սերտաճում, քանզի այդ համակարգում մարդկային բնութիւնն անանձ է եւ անձնաւորուած Բան-Աստուծոյ անձով: Աւելի ստոյգ այս համակարգը առաջադրուեց Քաղկեդոնի ժողովից շուրջ մէկ դար յետոյ Ղեւոնդէոս Բիւզանդացու կողմից եւ ընդհանրացաւ քաղկեդոնական վարդապետութեան մէջ: Այս արհեստական համակարգը սուր քննադատութեան ենթարկուեց Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Եւ երբ խօսւում է հակաքաղկեդոնական հակաճառութեան մասին, աւելի պէտք է նկատի ունենալ Ղեւոնդէոս Բիւզանդացու համակարգի մերժումը, քան թէ «մի բնութիւն» եւ «երկու բնութիւն» բանաձեւերի տառացի հակադրումը: Այս լուծումը փաստօրէն յիշեցնում է ապողինարեան-նեստորական մի սինթեզ:

Աստուծոյ եւ մարդու միութիւնը մեր հաւատքի եւ փրկութեան կիզակէտն է: Այն նախ եւ առաջ խորհուրդ է՝ անպատմելի բանի եւ անհասանելի մտաց [Ա V 4], դժուարատես եւ նուրբ [ԱVIII 2], վերագոյն մտաց եւ անճառելի բանի [Ա IX 2]: Երբ հաւատքի խորհուրդը վերածւում է մտաբմբռնելի մեխանիզմի, վտանգւում է մեր փրկութեան իսկութիւնը: Ուստի հաւատքի խորհրդական ճշմարտութիւնները պէտք է արտայայտել աւելի բացասումների, քան պնդումների միջոցով: Աս-

տուծոյ եւ մարդու միութիւնը Սարկաւագը բնորոշում է անշփոթ, առանց խառնակութեան [Ա VI 1], անխուփոխ, առանց յեղման, առանց այլայլութեան [Ա V 3] կարեւոր եզրերով, այսինքն՝ Աստուծոյ մարդացման տնտեսութեան մէջ չկայ որեւէ փոխակերպութիւն: Միաժամանակ Քրիստոսի մէջ աստուածամարդկային միութիւնը ոչ թէ բնութիւնների յարակցութիւն [Է I 2] կամ շարայարութիւն [Ժ II 2] կամ վերաբերութիւն [Է I 9] է, այլ էական, գոյաբանական եւ բնութենական միութիւն, որի մէջ հնարաւոր չէ ներմուծել որեւէ բաժանում կամ լուծարում: «Բայց երբ մեզ վրայ առատապէս հեղեց մարդասիրութեան անբաւութիւնը մարդանալ կամենալու միջոցով, որ ճշմարիտ Աստուած է ճշմարիտ Աստծուց, բնութեան զանազանութիւնները միացան անփոխադրապէս եւ առանց լուծարման, որպէսզի այն, ինչ մարդկային բնութեամբ է, աստուածային խոստովանենք՝ ըստ միաւորութեան, եւ նոյն [Իրեն]՝ Աստուած եւ մարդ միաժամանակ» [Ժ II 1]:

Է. Անապականութեան[1] վարդապետութիւն

Ինչպէս արդէն նշեցինք, անապականութեան խնդիրներն ամենայն արծարծումն են գտել սոյն ժողովածուում: Փաստօրէն այս ժողովածուն անապականութեան վարդապետութեանը նուիրուած մի հիմնարար եւ եզակի երկասիրութիւն է հայ դաւանական գրականութեան մէջ[2]: Պարզւում է, որ քրիստոսաբանութեան ներքին դինամիզմը կարելի է ընկալել միայն անապականութեան վարդապետութեան միջոցով, որը զարգացել է միայն Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների դաւանական համակարգում: Ահա թէ ինչու այսօր յարաճուն հետաքրքրութիւն է նկատւում այս խնդիրների նկատմամբ:

Անապականութեան վարդապետութիւնը արդիւնք է Եկեղեցու քրիստոսաբանական մտքի հետեւողական զարգացման: Եթէ մենք քրիստոսաբանութեանը մօտենում ենք փրկաբանական տեսանկիւնից, եթէ մենք խոստովանում ենք, որ կատարեալ Աստուած դարձաւ կատարեալ մարդ, որպէսզի փրկագործի եւ աստուածացնի մարդկային

1 Անապականութեան վարդապետութեան մասին աւելի մանրամասն տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ-Ը դդ.), «Գանձասար» Բ, Երեւան, 1992, էջ 106-121:

2 Ինչ որ իմաստով՝ նաեւ առհասարակ դաւանական գրականութեան մէջ:

ընկած բնութիւնը, ապա Բան-Աստուծոյ մարդեղութեան խորհուրդը դառնում է քրիստոսաբանութեան անխուսափելի մեկնակէտը: Եւ պատահական չէ, որ արիոսական հերձուածի յաղթահարումից յետոյ Եկեղեցու քրիստոսաբանական միտքն ըստ էութեան սեւեռուած է եղել մարդաբանական խնդիրների վրայ, այսինքն՝ ինչպէս պէտք է դաւանել Բան-Աստուծոյ ճշմարիտ մարդեղութեան խորհուրդը: Ի՞նչ է նշանակում, որ Հօր Միածին Որդին՝ նախայաւիտեան Բանը, դարձաւ ճշմարիտ եւ կատարեալ մարդ՝ *ամէն ինչում նման մեզ (այսինքն՝ համագոյակից է մեզ՝ ըստ մարդեղութեան),* բացի մեղքից: *Ինչպէ՞ս է Նա անցնում այսպէս կոչուած անմեղ կրքերի միջով (քուն, ծարաւ, յոգնութիւն...), որոնք մարդկային բնութեան մէջ են ներմուծուել մեղքի անկման հետեւանքով: Ինչպիսի՞ն է մարդկային բնութեան ազատութեան եւ ներգործականութեան աստիճանը Աստուած-մարդ փրկական տնտեսութեան մէջ: Ահա այս եւ մեր փրկաբանական իդեալի հետ աղերսուած մի շարք այլ կարեւոր հարցերի է պատասխանում անապականութեան վարդապետութիւնը:*

Անապականութեան խնդիրը ծագել է Սեւերիոս Անտիոքացու եւ Յուլիանոս Հալիկառնասցու նշանաւոր հակաճառութիւնից Տիրոջ մարմնի անապականութեան շուրջ[1]: Հարցն այն մասին էր, թէ որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային կրքերը (ἀνθρώπινα πάθη), *եթէ խոստովանում ենք, որ Քրիստոս ամէն ինչով նման է մեզ, բացի մեղքից: Ուրեմն Քրիստոսի մարմնի կիրընդունակութեան մասին խօսելիս պէտք է նկատի ունենալ բացառապէս* անմեղ կրքերը (πάθη ἀδίαβλητα)՝ *տխրութիւն, երկիւղ, սով, ծարաւ եւ այլն, որոնք դիտարկւում են որպէս մեղքի անկման հետեւանքային վիճակներ:*

Սեւերիոսը պնդում էր, որ Քրիստոս բոլոր մարմնական կրքերը կրում է հարկադրաբար (ակամայ, ստիպուած, անհրաժեշտօրէն)՝ սովորական մարդկանց պէս: Հակառակ դէպքում նրան թւում էր, թէ Քրիստոս իսկապէս մարդացած չէր լինի: Նա ասում էր, որ Քրիստոսի մարմինն ապականացու է բոլոր մարդկանց մարմինների պէս: Սեւերիոսի այս «ապականութեան» ուսմունքը կտրականապէս մերժուել

1 Պէտք է նկատի ունենալ, որ «ապականութիւն» (φθορά) եւ «անապականութիւն» (ἀφθαρσία) եզրերը այստեղ գործածւում են ոչ թէ քայքայման կամ ոչ քայքայման իմաստով, այլ Քրիստոսի մարդկային *կիրընդունակութեան* կամովի կամ ակամայ լինելու իմաստով:

է Հայ Եկեղեցու կողմից: Սակայն Տիրոջ մարմնի անապականութեան վարդապետութիւնը վերոյիշեալ հակաճառութեամբ ծագած մի նորաստեղծ երեւոյթ չէր աստուածաբանական մտքի պատմութեան մէջ, այլ Եկեղեցու տիեզերական հայրերի գրուածքներում բիւրեղացած մի դաւանական ուսմունք էր: Հայ հայրերը եւ վարդապետները սոսկ շարունակել եւ զարգացրել են այն, ինչ աւանդուած է եղել ս. Աթանաս Մեծի, ս. Եփրեմ Ասորու, ս. Բարսեղ Կեսարացու, ս. Գրիգոր Աստուածաբանի եւ միւս մեծ ուսուցիչների կողմից: Սրա լաւագոյն վկայութիւններից մէկը թերեւս «Կնիք հաւատոյ» նշանաւոր ժողովածուի ստեղծումն է, որի զգալի մասը նուիրուած է Տիրոջ մարմնի կիրընդունակութեան եւ անապականութեան խնդիրներին[1]*: Զ-Ը դդ. սուր պայքար է ծաւալւում «ապականութեան» վարդապետութեան հետեւորդների դէմ, որը եզրափակւում է 726 թ. Մանազկերտի նշանաւոր ժողովով: Այդ ժողովը եւ նրա կողմից ընդունուած նզովքները բացառիկ դեր են խաղացել քրիստոսաբանական մտքի պատմութեան մէջ*[2]*:*

Մեր Եկեղեցու հայրերը որքան որ խորշում էին Սեւերիոսի «ապականութեան» վարդապետութիւնից, նոյնքան էլ զգուշանում էին Յուլիանոսի «անապականութեան» մէջ քողարկուած երեւութականութիւնից (դոկետիզմ): Սակայն հայրերը վիճում էին ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղ հետեւորդների հետ: Յամենայն դէպս, Յուլիանոսի գրուածքներում[3] *չկայ այն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսում էին նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ-որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երեւութա-*

1 Տե՛ս «Կնիք հաւատոյ», Բան Գ-Թ, էջ 243-371:

2 Տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ-Ը դդ.), էջ 86-122: Այս խնդիրներին է նաեւ անդրադարձել Գարեգին Յովսէփեանը (տե՛ս Խթ, Նախաբան): Շատ արժէքաւոր, բայց խիստ միակողմանի եւ եզրայանգումների մէջ միանգամայն անընդունելի է Երուանդ Տէր-Մինասեանի «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնը ասորւոց Եկեղեցիներու հետ» ուսումնասիրութիւնը (Ս. Էջմիածին, 1908):

3 Հիմնական աշխատութիւնն այս մասին՝ **R. Draguet**, Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ, Louvain, 1924:

կաններ» անունը)[1]*:*

Տիրոջ մարմնի անապականութեան վարդապետութիւնը, ինչպէս արդէն ասուեց, առանձնայատուկ զարգացում է ապրել եւ բիւրեղացել է Հայ Եկեղեցու դաւանական համակարգում, որը զերծ է թէ՛ սեւերիոսեան, թէ՛ յուլիանոսեան ծայրայեղութիւններից: Մեր հայրերը Տիրոջ մարդեղութեան որեւէ դրուագի մօտեցել են միմիայն փրկաբանական տեսանկիւնից: Քրիստոսի երկրաւոր կեանքը փրկական տնտեսութիւն *է եւ զերծ է պատահականութիւններից: Հետեւաբար Քրիստոսի մարդկային կեանքի ամէն մի պահ, սկսած սուրբ Յղութիւնից մինչեւ Հրաշափառ Յարութիւն, ունի բարձրագոյն եւ փրկաբանական նշանակութիւն:*

Ինչպէս արդէն նշուեց, Քրիստոսին բնորոշ են այսպէս կոչուած անմեղ *կրքերը, որոնք Յովհաննէս Սարկաւագը անուանում է նաեւ* անպարսաւելի *[Ա VIII 8],* անընտգտանելի *[Է II 9],* անանգոսնելի *[ԺԱ III 2] կրքեր: Այս կրքերը, զերծ լինելով մեղքից, բնաւորուել են մարդկային բնութեան մէջ մեղքի անկումից յետոյ, այսինքն՝ յատուկ են մահկանացու եւ չարչարական մարդկային բնութեանը, ոչ թէ՝ ադամական նախաստեղծ բնութեանը: Ուստի Սարկաւագը կոչում է դրանք նաեւ միաժամանակ ե՛ւ* բնաւորական *[ԺԲ I 6], ե՛ւ* տրտմական *[Է II 3] կրքեր: Քրիստոս անցնում է մարդկային կրքերի միջով* կամաւորապէս *եւ ոչ ի հարկէ, առանց բնութեան բռնադատուածութեան [Ա VII 1-2, Ե I 11], հետեւաբար այդ կրքերը* կամաւոր *են [Ա VII 5]: Աստուած կատարելապէս մարդացաւ, այսինքն՝ վերցրեց մարդկային բնութեան ամբողջականութիւնը մեր փրկութեան համար. ուստի Տիրոջ մարդկային կրքերը* փրկական *են [ԺԲ I 5], ինչպէս նաեւ՝* տնօրինական *[Ա XI 10] կամ* տնտեսական *[ԺԱ II 12]:*

Քրիստոս փրկական տնօրինութեամբ կրում է բոլոր մարդկային տկարութիւնները, ազատօրէն անցնում մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մէջ մեղքի թթխմորը եւ ազատագրելով մեզ մեղքի դատապարտուածութիւնից: Հետեւաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստուածավայելուչ հրաշքները, այլ նաեւ մարդավայե-

1 Յուլիանոսի դաւանական հայեացքների համառօտ շարադրանքը տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ-Ը դդ.), էջ 110-112:

լուչ տկարութիւնները [Ա VII 7-25].

«...ինչպէս ծնուեց առանց բնութեան հարկադրուածութեան եւ բռնադատութեան, այնպէս էլ կրեց մարդկային կրքերը առանց մեղքի: Կամաւոր էր ծնունդը, կամաւոր էին նաեւ բոլոր կրքերը. ոչ ոք թող չհամարձակուի կամաւոր կրքերը ապականութիւն կոչել, քանզի ամէն ինչը տնօրինաբար էր կրում մեր փրկութեան համար, կարող էր չկրել, քանզի Աստուած էր եւ հանդերձ մարմնով, բայց [կրում էր], քանի որ առաչօք չէր մարդեղութիւնը, ինչպէս թուաց մանիքեցիներին եւ Եւտիքէս վանահօրը: Կրել հաճեց, հէնց դրա համար էլ մարդ եղաւ, որ ի սկզբանէ Աստուած էր, որպէսզի կրի մերը մեզ համար՝ մեզ հետ լինելով: «Աստուած առաքեց Իր Որդուն մեղքի մարմնի նմանութեամբ եւ մեղքի պատճառով եւ դատապարտեց մեղքը մարմնի մէջ»,- ասում է առաքեալը: Արդ, ինչպէս դատապարտեց մեղքը՝ չմեղանչելով, [այնպէս] էլ դատապարտեց ապականութիւնը՝ չկրելով այն, եւ որպէս փրկագնեց մեզ օրէնքի անէծքից՝ մեզ համար անէծքի մէջ մտնելով, որ հեռու էր անէծքից եւ բաշխիչ էր օրհնութեան, [այնպէս էլ] կամեցաւ փրկել մեզ ապականութիւնից դէպի յոյս՝ Իր անապականութիւնը որպէս առհաւատչեայ տալով մեզ» [ԺԲ III 10-14]:*

Սարկաւագը սոսկ չի համակարգում իրեն հասած դաւանական գրուածքները[1] անապականութեան խնդրի շուրջ, այլ վերջինս էապէս մի նոր աստիճանի վրայ է բարձրացնում՝ բացայայտելով մի շարք սկզբունքային ըմբռնումներ, որոնք չկան իր նախորդների մօտ: Տիրոջ մարմնի անապականութեան ըմբռնումը Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքներում վերածւում է մի ունիվերսալ սկզբունքի եւ փորձագրոյթի, որով կարելի է ներկայացնել Բանի մարդեղութեան ամենաամբողջական պատկերը եւ արտորոշել ամէն տեսակ հերձուածողական տեսութիւն: Ուշագրաւ է, որ Սարկաւագը անապականութեան վարդապետութեան տեսակէտից քննութեան է առնում այնպիսի հերձուածողական ուսմունքներ, որոնք աստուածաբանական մտքի պատմութեան մէջ ծագել են շատ աւելի վաղ, քան անապականութեան խնդիրը: Այսպէս օրինակ՝ նա մերժում է ապողինարիզմը ոչ այն դասական տեսանկիւնից, որ առաջադրուել է ս. Բարսեղ Կեսարացու «Ընդդէմ Ապողինարի» հանրայայտ երկով եւ ընդհանրացել եկեղեցական աստուածաբանութեան մէջ: Ըստ Սարկաւագի՝ եթէ Քրիստոսի մէջ մարդկային բնութիւնը բանական հոգի չունի, ինչպէս պնդում էր Ապողինարը, ապա դրանով չարչարականութիւն եւ կիրընդունակութիւն է ներմուծւում աստուածային անչարչար եւ անկրական բնութեան մէջ, քանի որ մարդու մէջ բանական հոգին հաւասարապէս հաղորդակից է մարմնական կրքերին: Մէջբերենք երկու յատկանշական հատուած այս մասին.

«Քանզի ոչ թէ ըստ Ապողինարի՝ Բանը անանձ մարմին միաւորեց Իրեն, քանզի այդպիսի խոստովանութիւնը չարչարանքների տակ է մտցնում անչարչարելի բնութիւնը, այլ՝ բանական անձ ունեցող մարմին, որպէսզի բանական անձի միջոցով զգայակից լինի մարմնի չարչարանքներին, ոչ թէ Բանը ըստ Իր [բնութեան], այլ Իր բանական անձով մարմնի միջոցով ստանայ: Ինչպէ՞ս է Ինքը չարչարւում, որը համառօտելով՝ ասում ենք, թէ նոյն Ինքը Բանն Աստուած՝ Անչարչարելին, ճշմարտապէս չարչարուեց Իր բանական անձ ունեցող մարմնով, եւ Անմահը մեռաւ Իր մարմնով, քանզի Աստուած էր ճշմարիտ, որ կրում էր ամէն ինչը մեր բնութեամբ, որպէսզի ազատի մեզ մեղքի ծառայութիւնից եւ ըստ շնորհի Իր Հօր որդիներ դարձնի եւ անուանի Իր եղբայրներ...» [Ա VIII 5-6]:

«...անանձ մարմինը ինչպէ՞ս կարող է զգալ չարչարանքները: Եւ եթէ Բանը անանձ մարմին ունէր, ինչպէս թւում է Ապողինարին, ապա Բանը, որ ամենեւին դուրս է չարչարանքներից, ընդունում էր ցաւերի զգայութիւնը, որը քաւ լիցի կարծել անգամ ճշմարտութեանը ծանօթութիւն ունեցողներին: Բայց երբ ասում ենք՝ Բանը անձնաւոր մարմին ունի, ինչպէս եւ է, այսպէս չի իմացւում, քանզի թէպէտեւ մարդկային անձը անհաղորդ է մարմնական չարչարանքներին եւ առանձին է ինքնին, սակայն, մարմնի մէջ լինելով, զգայակից է լինում բոլոր բնաւորական կրքերին եւ արտաքին պատահմունքներին, ուստի բոլորը նաեւ կոչւում են անձնաւորականներ: Այլեւ անձնական են կոչւում ախտակրութեան մասերից ոմանք՝ ցասումը, ցանկութիւնը... Ուստի այս ամենից հասկանում ենք, որ հոգին զգայակից է մարմնի բոլոր բնաւորական եւ արտաքին ախտերին, եւ ահա թէ ինչու խոստովանում ենք, որ Բանն Աստուած ոչ միայն մարմին, այլեւ մտաւոր անձ

* Հռոմ. Ը 3

1 Այստեղ պէտք է յատկապէս նկատի ունենալ Խորովիկ Թարգմանչի Հակաճառութիւնը, որը ամենաակնառու ազդեցութիւնն է թողել Սարկաւագի դաւանական հայեացքների ձեւաւորման վրայ:

առաւ Աստուածածին Կոյսից, այսինքն՝ մարդ եղաւ՝ ըստ Գրքի» [Ե VIII 1-5]:

Այսպիսով, Քրիստոսի մարմինը չարչարելի է եւ մահկանացու, սակայն ո՛չ ապականացու (ապականութիւնն այստեղ դիտւում է որպէս մեղքին (մեղանչման) զուգակցուած մարմնական վիճակ, որը հակաբնական է, քայքայում է բնութիւնը): Բանն Աստուած ոչ թէ առաւ Ադամի նախաստեղծ բնութիւնը, այլ մեր ապականացու բնութիւնը՝ ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին եւ միտքը, եւ, միաւորելով Իրեն, զատեց մեղքը հոգուց եւ ապականութիւնը՝ մարմնից: Տիրոջ մարմնի աճն ու զարգացումը վկայում են ոչ թէ ապականացու լինելը, այլ ընդհակառակը, քանզի սրանք կատարելագործում են մարմնի զգայական համակարգը, իսկ ապականութիւնը՝ քայքայում: Տէրը կրեց կամաւոր *եւ* անանգոսնեղի *կրքերը եւ ոչ թէ* ակամաները *եւ* անգոսնեղիները, *որոնք հարկադիր են, ծառայական եւ մեղանչական: Սրանով չի թուլանում Տիրոջ մարդեղութեան կատարելութիւնը եւ համագոյութիւնը մեզ հետ, քանզի բանական մարդը կամաւորներով եւ անմեղութեամբ է մարդ: Այն, ինչ ակամայ է եւ մեղանչական, գործում է ոչ թէ ըստ բնութեան, այլ հակառակ բնութեան, եւ բնութեան մէջ օտար եւ ներմուծուած բան է:*

Ը. Դաւանական հանդուրժողականութիւնը

Դաւանական հանդուրժողականութեան խնդիրը, որը վերջերս բարձրացրեց Պ. Մուրադեանը իր «Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դդ. Հայաստանում» վերնագիրը կրող յօդուածում[1]*, պարզւում է, որ հայ հակաճառական մտքի յատկորոշ կողմերից մէկն է: Այս առումով բացառութիւն չէ Սարկաւագը, որը նախորդում է Մխիթար Գոշին եւ Վարդան Այգեկցուն: Խօսելով դաւանական տարաձայնութիւնների եւ Եկեղեցիների հաղորդական պառակտման մասին՝ Սարկաւագը խոր ցաւով գրում է. «...սիրում եւ բաղձում ենք Հոգու միաւորութիւնը, դառնօրէն ողբում ենք լծակցութեան բաժանումը, արտասուքներով թրջւում՝ յիշելով երբեմնի լծակցութիւնը, նաեւ այժմ իսկ փարւում ենք որպէս հարազատ եղբայրների, որ հեռացել են [մեզանից], հեռուից ողջունում ենք համաշնչութիւնը, եւ, լսելով այսքան չափազանցութիւններ եւ բամբասանքներ մեր մասին, չենք ցանկանում նոյն կերպ պատասխանել նրանց՝ [ասելով]. «Տէ՛ր, սա նրանց մեղք մի՛ համարիր»» [Դ XVI 9]: Իսկ ընդդիմախօսները, ըստ Սարկաւագի, չունեն այդ զոհողութեան եւ հանդուրժողականութեան հոգին, այլ «զզւում են, երբ որեւէ տեղ հանդիպում են [մեզ], եւ հեռանալով՝ հայհոյում...» [Դ XVI 11]: Այսպիսի վերաբերմունքը կարող է նմանօրինակ հակազդեցութիւն յարուցել, ինչը խորթ է ճշմարիտ քրիստոնեայի պատկերին: Ուստի Սարկաւագ վարդապետը յորդորում է. «Սակայն մենք միայն համբերենք գոհութեամբ՝ որպէս անիրաւ նախատինքի եւ թշնամանքի արժանացածներ, այլեւ օրհնենք նրանց, քաղցած տեսնելով՝ կերակրենք, ծարաւած հանդիպելով՝ յագեցնենք, հագցնենք, երբ մերկ են. բարեգործ լինենք ատելիների նկատմամբ, ինչպէս Հեզի եւ Մարդասէրի աշակերտները, սոսկ անուամբ եւ ճշմարիտ դաւանութեամբ մեզ քրիստոնեայ ցոյց չտանք, այլ՝ այս պատուիրանների հնազանդութեամբ եւ կատարմամբ, քանզի ամէն ծառ իր պտղից է ճանաչւում» [Դ XVII 3]: Ե գլխում Սարկաւագը, նորից մեծ վշտով անդրադառնալով Եկեղեցիների բաժանութեան խնդրին, այս անգամ մի զարմանալի հոգեշունչ աղօթական հայցուածով դիմում է Տիրոջը՝ վերականգնելու Եկեղեցու երբեմնի միութիւնը [Ե VII 2-7]: Այս աղօթքը կամ մաղթանքը իրաւամբ կարելի համարել հայ աղօթական գրականութեան ամենագեղեցիկ նմուշներից մէկը:*

Ճշմարիտ քրիստոնեան, ըստ Սարկաւագի, կոչուած է այս աշխարհում խաղաղութիւն սերմանելու, որովհետեւ Քրիստոս խաղաղութեան Աստուած է: Հետեւաբար ոչինչ այնքան խորթ չէ քրիստոնեայի պատկերին, որքան դիւային խռովութիւնները եւ պառակտումները. եւ պէտք է խուսափել հոգեկործան վէճերից եւ հակառակութիւններից: «Պարտ եւ պատշաճ էր խաղաղութեան աշակերտներին պատերազմ չյարուցել նոյն խաղաղութեան համար, քանզի եթէ խաղաղութեան կանչուեցինք Նրանից, որ խաղաղութեան Աստուած է եւ ոչ խռովութեան, ուրեմն սիրում եւ գործում ենք ոչ այն, ինչ կամենում է, այլ այն, ինչ չի կամենում, երբ շատ անգամ անօգուտ վիճում ենք իր կործանում լսողների եւ մեր իսկ անձերի» [ԺԱ I 1]: Սակայն Սարկաւագը չի յորդորում կրաւորական անտարբերութեան, այլ երբ ստիպուած ես լինում պատասխան տալ յանուն ճշմարտութեան, պէտք է այդ անել ոչ թէ սրտի դառնութեամբ, այլ ներքին հանդարտութեամբ՝

1 Տե՛ս «Գանձասար» Դ, էջ 95-109

«Հաւաստի եւ փափուկ խօսքով վարդապետելով ճշմարիտը, որպէսզի լսեն՝ ախորժելով հոգեւոր թովչութեան ձայնը, եւ համաձայնեն ընդունել իմաստուն բժշկութիւնը»: Որովհետեւ այս կեանքի ժամանակն Աստծուց տրուած է հոգեւոր պտղաբերութեան համար, ուստի «պէտք է միշտ սպասել պտղին եւ ջանալ գործել կարելին եւ առաւել քան կարելին» [ԺԱ 12-4]:

***

Մենք խիստ ուրուագծօրէն ներկայացրինք Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Ցաղագս նշանակի նիկիական հաւատոյ ՅԺԸ-ից» նշանաւոր ժողովածուն՝ ստիպուած լինելով ամփոփուել յօդուածին պատշաճ սահմաններում: Մօտ ապագայում հրատարակութեան ենք պատրաստում աւելի ծաւալուն մի ուսումնասիրութիւն եւ ժողովածուի գիտական բնագիրը: «Բնագրեր եւ թարգմանութիւններ» բաժնում ներկայացնում ենք ժողովածուի առաջին գլուխը կամ թուղթը, որի վերտառութեամբ էլ անուանուած է սոյն ժողովածուն: Այս թղթի ընտրութիւնը պայմանաւորուած է նրա առաւել ընդգրկուն եւ մատչելի դաւանաբանական բովանդակութեամբ:

Անդրէա Բարբարա Շմիդտ

ՀԱՅՈՑ ԹԱՂՄԱՆ ԾԷՍԸ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԻՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ա

Մարդկային կեանքը բազմիցս ենթարկւում է խորքային փոփոխութիւնների: Բոլոր այլափոխութիւնների ընթացքում հաստատուն է մնում մի բացառիկ երեւոյթ. երբէք մարդը չի համակերպւում մահուան վախճանական բնոյթի հետ, այնուհանդերձ մահը կատարում է իր անփոփոխ վճիռը եւ տանում մարդկային կեանքը ծննդից մինչեւ վախճան: Մահը վրայ է հասնում անսպասելիօրէն եւ բացայայտում մարդկային իրականութեան սահմանափակութիւնը: Մարդը ենթարկւում է մահուանը՝ որպէս դրսից պարտադրուած բռնի ընդհատման, իբրեւ կեանքն ամենահիմնական իշխանութիւնից զրկողի: Անըմբռնելիութեամբ հանդերձ մահը թոյլ չի տալիս մարդուն երբեւէ անտարբեր լինել: Մահուան խորհուրդն ընդհատում է մինչ այդ մարդու կրած փորձութիւնների շարքը եւ հարկադրում ճանաչել կեանքի իմաստի եւ էութեան խնդիրը աւելի խորամիտ որոշակիութեան մէջ, քան այդ թոյլ են տալիս սիրոյ եւ ծննդեան երեւոյթները: Ամենից առաջ, անշուշտ, մահը ճանաչւում է ուրիշի վախճանով, թէեւ չկայ սեփական մահից աւելի անկասելի եւ անխուսափելի երեւոյթ:

Թաղման ծէսը կեանքի ընդհատման, վախճանականութեան յաղթահարման որոշակի վարուելակերպ է: Դա բոլոր մշակոյթների եւ կրօնների ընդհանուր ներդրումն է: Թաղումը երբէք չի ընկալւում սոսկ դիակից բաժանուելու միջոց: Միշտ էլ խայտառակութիւն է համարուել առանց արարողակարգի մահացածին հողին յանձնելը: Անօգնական վախճանուողին սատար կանգնելու եւ անշունչ դիակին յարգալից վերաբերուելու պահանջմունքի շնորհիւ տարբեր մշակոյթնե-

ում ստեղծում են յուղարկաւորութեան սովորոյթների աւանդոյթներ եւ թաղման կարգեր, որոնք խնամքով փոխանցւում են սերնդէսերունդ: Միսական ձեւի մէջ փնտրում է այդ երեւոյթի պատասխանը, որը յայտնի է, սակայն օտար է մնում, որը վանւում է, այնուամենայնիւ ամենադաժան ձեւով դիմացդ է կանգնում: Կեանքի փոխանցման իմաստով վճռորոշ կայաններ են նաեւ ծնունդն ու ամուսնութիւնը, որոնք նոյնպէս ենթարկւում են ծիսակարգման: Սակայն թաղման ծէսը նոյն տրամաբանութեամբ երբէք չի ընդունւում որպէս կեանքի վերջին կայան: Այն արտայայտում է ապրողի վերաբերմունքը մահացողի նկատմամբ, եւ նրանում արտացոլուած են մահուան եւ կեանքի մասին կուտակուած տեսակէտները: Ընդ որում, ծէսը կապուած է երկու սկզբունքային տեսակէտի հետ. մի կողմից՝ հանգուցեալի նկատմամբ առաջացած սիրոյ եւ յարգանքի զգացումները, յատկապէս՝ վշտի, որը խորհրդանշում է նրա հետ յարաբերութիւնը, իսկ միւս կողմից՝ մահուան՝ որպէս կեանքի դէմ ուղղուած կոպիտ ուժի անջնջելի գոյութիւնը եւ մահացողի հետ շփումից առաջացած գարշանքը:

Մահուան առեղծուածային գաղտնիքի պատասխանը տրուած է քրիստոնէութեան մէջ՝ Քրիստոսի փրկագործութեան եւ Յարութեան հաւատի միջոցով[1]: Քրիստոնեայի յարութեան յոյսը, ըստ որի՝ մահը վերջին հանգրուանը չէ, ամրապնդուած է Քրիստոսի կողմից մահուան յաղթահարման հաւատով: Քրիստոսի շնորհիւ ոչնչացւում է մահուան զօրութիւնը: Մահկանացուների աշխարհ Նրա գալստեամբ ընդհատուեց նաեւ մահուան տիրապետութիւնը քրիստոնեայի համար: Այդ ժամանակուանից ի վեր ամէն ինչ ձեւափոխուեց: Այն, ինչ մինչ այդ սարսափի առարկայ էր, վերածուեց սուրբ խորհրդի, որի մէջ քրիստոնեայի վախճանը մասնիկն է Քրիստոսի մահուան եւ յարութեան: Այլեւս մահը չի ընկալւում իբրեւ կեանքի անզօր ընդհատում, այլ՝ որպէս համբարձում եւ վերադարձ մի նոր, աւելի բազմախոստում կեանքի Աստուծոյ ներկայութեան մէջ: Հետեւաբար ինչի՞ց պէտք է տխրել, ինչի՞ց երկիւղել: Այդ պատճառով մահացածի վրայ քրիստոնեան չպէտք է հեթանոսի նման ողբայ, այլ պէտք է գոհութեամբ եւ օրհնութեամբ նրան գերեզման ուղարկի, որովհետեւ հանգուցեալը

1 Հմմտ. **P. Meinhold,** Leben und Tod im Urteil des Christentums, տե՛ս **G. Stephenson** (հրատարակիչ), Leben und Tod in den Religionen. Symbol und Wirklichkeit, Darmstadt, 1985, էջ 144-164:

սպասում է Աստուծոյ շնորհիւ կատարեալ նորացման: Այս գաղափարը վաղ քրիստոնէական եկեղեցին հակադրում է հեթանոսական սգին: Այն Գրիգոր Նիւսացին արտայայտում է լիայոյս սաղմոսերգութեամբ, որը հնչել է իր վախճանուած քրոջ՝ Մակրինայի մահուան մահճի մօտ[1]: Այդ պատճառով վաղ շրջանի Եկեղեցու քրիստոնեաները իրենց հանգուցեալներին հագցնում էին սպիտակ հագուստներ, ճակատին յաղթանակի պսակ դնում, ապա հանդիսաւոր արարողական թափօրով, անհամար ճրագներով եւ ներբողներով դէպի գերեզման ուղեկցում: Սպիտակ գոյնը, իբրեւ կեանքի եւ ուրախութեան խորհրդանիշ, վաղ քրիստոնէական թաղման ծէսի մէջ հակադրւում է հեթանոսական սգի կարմիր եւ սեւ հագուստին: Տիրապետում էր այն պատկերացումը, որ մահացողի հոգին յաւիտենական կեանքում ճամփորդելիս սպիտակ զգեստ է հագնում[2]: Սպիտակը համարւում է նաեւ խորհրդանիշը վախճանաբանական հարսանիքի, որը մահուան միջոցով հոգին կապում է Քրիստոսի հետ:

Քրիստոնէական գունային խորհրդապաշտութեան մէջ մէկ այլ գաղափար էր ներկայացնում հոգու ընծայումը մկրտութեան ժամանակ: Մկրտութեան աւազանից դուրս գալու ժամանակ սրբագործուած քրիստոնեան, իբրեւ նորածին եւ Սուրբ Հոգին ընդունած, հագնում էր սպիտակ զգեստ: Ինչպէս մի ժամանակ մկրտուածի մէջ բնակուող Սուրբ Հոգով է յարութիւն առել Քրիստոս, այդպէս էլ այժմ նոյն Հոգին կեանքի է կոչում մահացողին: Աւելի ուշ մկրտութեան հաւատի հաստատումը կարմիր թելի նման անցնում է հայկական թաղման ծէսում իբրեւ յարութեան գրաւական:

Թաղման արարողութեան ամբողջական կանոնները յայտնի չեն վաղ քրիստոնէութեան ժամանակներից: Գիտենք, որ թաղման ընթացքում շուտով սկսեցին գործածել յատուկ սաղմոսներ: Սաղմոսերգութեանը զուգահեռ կարեւորութիւն ստացաւ բարեխօսութեան աղօթքը, որով Եկեղեցին Աստծուն էր յանձնում մարմնին հրաժեշտ տուած հո-

1 PG 46, էջ 992D: Հայրաբանական գրականութեան մէջ ննջեցեալին նուիրուած սաղմոսերգութեան մասին տե՛ս **R. Kaczynski,** Die Psalmodie bei der Begräbnisfeier, H. Becker (հրատ.), Liturgie und Dichtung. Ein interdisziplinäres Kompendium, St. Ottilien, 1983, էջ 798-819; **A. C. Rush,** Christian Burial in Christian Antiquity, Washington, 1941, էջ 170-174:

2 **A. C. Rush,** նշ. աշխ., էջ 216-219

գին: Սրանով դրում էին քրիստոնէական թաղման ծէսի սկզբնաւորման ամենակարեւոր հիմքերը, որով ծէսը հետզհետէ հեռանում էր հանգուցեալի պաշտամունքի ուշ անտիկ շրջանի հզօր ժառանգութիւնից, եւ որի հիմնաշեշտը դրւում էր յարութեան հաւատի վրայ: Քրիստոնէական յուղարկաւորութեան սկզբնական շրջանից յայտնի են նաեւ տապանաքարերի վրայ արձանագրուած պատառիկային արտայայտութիւններ[1], ինչպէս նաեւ ննջեցեալի համար գրուած աղօթքներ Սերապիոն Թմուիսացու աղօթագրքում[2] եւ Առաքելական սահմանադրութեան մէջ[3]: Մօտաւորապէս Դ դարից յետոյ ծիսական արարողութեան մէջ վաղ քրիստոնէական այս աւանդութեան կողքին սովորական է դառնում աղօթքների յօրինումը եւ ազատ խօսքը: Ընդհանրապէս ԴԸ հարիւրամեակները համարւում են եկեղեցական ծէսի արարողական ձեւափոխութիւնների դարաշրջան: Այդ ժամանակաշրջանում դեռեւս չկային մէկընդմիշտ սահմանուած բնագրեր: Հաստատուն արարողական ձեւերը ծէսի եւ արարողակարգի մէջ դեռ նոր էին հիմնաւորւում: Քահանան հնարաւորութիւն ունէր սեփական հայեցողութեամբ ձեւաւորել արարողակարգը:

Թաղման ծէսի ամրագրուած արարողութեան հնագոյն աւանդոյթը պատկանում է Զ դարի վերջին՝ Դիոնեսիոս Արեոպագացուն, որն իր «Եկեղեցական նուիրապետութեան» ("Ecclesiastica Hierarchia") մէջ նկարագրում է անտիոքեան եկեղեցու ծէսը[4]: Հզօր ներուժով քրիստոնէական ոգեղինութեանը նուիրուած իր այս հիմնարար երկում, որը վաղ է մուտք գործել Հայկական եկեղեցի[5], Արեոպագացին բացատրում է եկեղեցու ծէսը որպէս բարձրագոյն գերբնական գաղտնիք[6] վերարտացոլող «խորհուրդներ»: Թաղման ծէսը, որը ղեկավա-

1 Հմմտ. **H. Leclerq,** Âme, "Dictionnaire d'Archéologie Chrétienne et de Liturgie", I (1907), էջ 1527-1535:

2 **F. X. Funk,** Didascalia et Constitutiones Apostolorum, II, Paderborn, 1905, էջ 192 եւ յետ.

3 "Apost. Konst.", VIII 8, 41 (**F. X. Funk,** նշ. աշխ., I, էջ 552 եւ յետ.)

4 PG 3, էջ 569-584

5 Հմմտ. **R. W. Thomson,** The Texte of the Armenian Version of Pseudo-Dionysius the Areopagite. տե՛ս «Միջազգային հայագիտական գիտաժողով», Երեւան, 1982, «Զեկուցումներ», Երեւան, 1984, էջ 307-315:

6 Հմմտ. **W. de Vries,** Sakramententheologie bei den syrischen Monophisiten, Rom, 1940, էջ 29-32:

րում է քրիստոնեայի՝ աշխարհիկ կեանքից Աստուծոյ աշխարհը ճշտորէն անցնելու կերպը, բացատրում է անդրշիրիմեան կեանքի աստուածային գաղտնիքը: Թէպէտ յուղարկաւորութիւնը աստուածաբանական իմաստով ընդգծուած խորհուրդ չէ, սակայն թաղումն ունի բաւական խոր հոգեւոր իմաստ, այնպէս որ Արեոպագացին «սուրբ ննջեցեալների արարողութիւնը» նոյնիսկ դնում է հաղորդութեան եւ մկրտութեան խորհուրդների հետ նոյն շարքում: Թէեւ Եկեղեցին մկրտութեան միջոցով Քրիստոսին հետեւելը որպէս սկիզբ դրեց այս երկրաւոր կեանքում, ուր հաղորդութեան խորհուրդն ամրացնում է քրիստոնեայի հաւատը, այնուամենայնիւ Եկեղեցին իր թաղման արարողութեան միջոցով անցում է կատարում դէպի անդրշիրիմեան աշխարհ՝ հաւատացեալի կատարեալ գոյութիւնը Աստուծոյ հետ: Մարդու մահը նուիրագործուած է. նա, որպէս Քրիստոսի հետեւորդ, մասնակցում է փրկագործ խորհրդին, ըստ որի՝ մարդը, զօրանալով Քրիստոսի Մարմնի հաղորդութեամբ, Նրա հետ անդունդ է իջնում՝ Նրա հետ անդունդը յաղթահարելու համար:

Ուշ անտիկ շրջանի հեթանոսական մռայլ եւ մելամաղձոտ պատկերացումներին քրիստոնէական հաւատը հակադրում էր մի այնպիսի մահուան գաղափար, որը լիակատար յոյս էր տալիս ապագայ յարութեան նկատմամբ: Մահուան անցողիկութեան մասին հաւատը ստանում է մխիթարական արտայայտութիւն, երբ հանգուցեալին սկսում են կոչել ննջեցեալ (ὁ κεκοιμημένος)[1] եւ ոչ թէ մեռեալ (ὁ νεκρός): Գերեզմանի հանգիստը մինչեւ յարութիւն ժամանակաւոր քուն (ἡ κοίμησις) էր, իսկ մահացողը՝ ննջեցեալ[2]: Գերեզմանի հետ է կապուած փրկաբանական այն գաղափարը, որ այն ինչ-որ ժամանակ յարութեան վայր է դառնալու: Յաւիտենական մահաքնի փոխարէն այն միայն ժամանակաւոր ապաստան էր դիակի համար: Այդ մասին է վկայում κοιμητήριον անուանումը՝ որպէս հանգուցեալի հանգստեան տեղ: Այդ բարեհունչ հասկացութիւնները յունալեզու քրիստոնեաների մօտ դաւանաբանօրէն սահմանազատւում էին գերեզմանի՝ մահացածի մշտական եւ անփոփոխ հանգրուանի հեթանոսական ըմբռնումից: Յոյն քրիստոնեաների բառագործածութեանը համանման Հայաս-

1 Հմմտ. Ա Թես. Դ 13:

2 Հայրաբանական վկայութիւնների համար հմմտ. **Lampe,** Patristic Greek Lexicon, Oxford, 1984, էջ 759-760:

տանում քրիստոնէութեան ներմուծումով կատարուեցին անուանումների փոփոխութիւններ: Հայկական Եկեղեցին գերեզմանի համար սկսում է օգտագործել հանգստարան, հանգիստ կամ հանգստակայեան քրիստոնէական հասկացութիւնները[1]: Մինչդեռ գերեզման կամ շիրիմ աւանդական անունը գործածւում է հեթանոսական գերեզմանաթմբի համար, ինչը համապատասխանում է յունական տարբերակմանը. κοιμητήριον-ի փոխարէն ասում են ταφή, μνημεῖον, μνῆμα[2]: Մինչքրիստոնէական թագաւորական դամբարանները Անիում կոչւում էին գերեզման[3]՝ ի հակադրութիւն սուրբերի եւ մարտիրոսների հանգստարանի: Գերեզմանը, որպէս նախնական հանգստարան, հանդիպում է Աւետարանի սկզբունքային վկայութեան մէջ. մահը վերջնական վախճան չէ քրիստոնեայի համար, որը հաւատում է մեռելների յարութեանը[4]: Այդ պատճառով Հայ Եկեղեցին թաղման ծէսի միջոցով լուսաբանում է յաւիտենական կեանքի հաւատը՝ քրիստոնէական աւանդութեան այդ էական կէտը: Ճշմարիտ հաւատի փոխանցումը մահուան խաբուսիկ էութեան միջոցով պարզաբանուած է հէնց թաղման կարգի անուանման մէջ, ինչով Հայ Եկեղեցին շատ վաղուց բնորոշել է իր թաղման ծէսը՝ «Կանոն զամենայն ննջեցեալս թաղմամբ ի Քրիստոս յուղարկելոյ»: Հին թաղման աղօթքներում ոչ մի տեղ չի գործածւում մեռած հասկացութիւնը: Բնագրերը թեմատիկօրէն կենտրոնացուած են հեռացած հոգու հանգստութեան եւ դէպի անդրշիրիմեան աշխարհ նրա ճանապարհի շուրջ, իսկ մարմինը յանձնւում է հողին, որից այն ստեղծուել է: Նրանք ներառում են նաեւ հոգու ընդունման համար բարեխօսութիւնն առ Աստուած: Սաղմոսներն արտայայտում են հաւատի վստահութիւնն Աստուծոյ նկատմամբ եւ Նրա փրկարար պահպանումը անդրշիրիմեան մահից: Թշուառութիւնը եւ մահուան անխուսափելիութիւնը թէեւ լուութեան չեն մատնւում, սակայն հիմնականում ողբը փոխւում է յոյսով:

1 Հմմտ. «Ագաթանգեղոս» (հրատ. R. W. Thomson, Albany, 1976), էջ 769, 841, 881, «Մովսէս Խորենացի» (հրատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Թիֆլիս, 1913), Գ 2, Գ 27, «Կորիւն» (Երեւան, 1941), էջ 26, «Փաւստոս» (հրատ. N. Garsoian, Delmar/New York, 1984), III 2:

2 Հմմտ. Մատթ. ԻԳ 27, ԻԷ 61-64, Մարկ. ԺԶ 2, 3, 5, Գործ. Բ 24 եւ այլն:

3 «Ագաթանգեղոս», էջ 785, «Փաւստոս», Դ 24

4 Այստեղ հաւանաբար նկատի ունի Ղազարոսի յարութեան դէպքը եւ Մարթայի խօսքերը [տե՛ս Յովհ. ԺԱ 20-44] (խմբ.):

Հայաստանում այդ ազատագրուած քրիստոնէական վերաբերմունքը մահուան նկատմամբ պէտք է բերէր հեթանոսական սովորոյթների արմատական փոփոխութիւն: Հէնց մահուան վրայ հասնելու պահին եւ մահացողի համար տեղի ունենալիք սպասաւորութեան ժամանակ կարող էր ազդու կերպով ծանուցուել հեթանոսական հաւատին օտար քրիստոնէական պատգամը Քրիստոսի վերադարձի եւ մեռելների յարութեան մասին: Այդ պատճառով Հայաստանում քրիստոնէութեան ընդունումից անմիջապէս յետոյ թաղման ծէսը Եկեղեցու կողմից արարողապէս ձեւաւորուեց եւ ձեւափոխուեց: Թէեւ հեթանոսութեան դարաշրջանում մահացածի յուղարկաւորութիւնը ամբողջովին մերձաւորի գործն էր, քրիստոնէութեան շրջանում կազմակերպումն անցաւ մասնաւոր ոլորտից Եկեղեցու եւ ողջ համայնքի ձեռքը եւ այսպիսով սկսեց ուղեկցուել արարողութեամբ:

Հայաստանում քրիստոնէական թաղման ծէսի ծագման սկզբնաղբիւրները մեզ չեն հասել: Նրանց ծիսական ակունքները գտնւում են մշուշի մէջ: Օրինակելի կապող օղակները բացակայում են հայ հին մատենագրութեան եւ ծէսի ցրուած, աղքատիկ նմուշներում, սակայն դրանք առաջին անգամ ներկայացուած են Ժ դարի հնագոյն ձեռագրերում: Աղքատիկ տեղեկութիւնները, որոնք պահել է հայ մատենագրութիւնը, կապուած են այնպիսի երեւելի անհատականութիւնների հետ, որոնց բաժին է ընկել յատկապէս հանդիսաւոր թաղում: Կորիւնը պատմում է կաթողիկոս Սահակի եւ իր հանճարեղ ուսուցիչ (Adlatus) Մեսրոպ Մաշտոցի մահուան եւ թաղման արարողութեան մասին[1]: Կաթողիկոսական գահի ժառանգորդ Վրթանէսի համար կազմակերպուած թաղման ճոխ թափորը դէպի Թորդան՝ բնութագրական ձեւով, առանց յատուկ մանրամասնութիւնների վկայակոչման նկարագրում է Փաւստոսը[2]: Սակայն լուութեան են մատնւում հասարակ քրիստոնեաների թաղումները: Հայկական պատմագրութիւնն, այսպիսով, թերի տեղեկութիւններ է պահպանել, որոնք Հայաստանի առաջին հինգ քրիստոնէական դարերի համար չեն կարող լրացուել թաղման ծէսի զարգացման տարբեր փուլերի մասին որեւէ կապակցուած շարադրանքով: Կարելի է միայն կռահել, որ Հայ Եկեղեցին քրիստո-

1 «Կորիւն», էջ 24, 26

2 «Փաւստոս», Գ 11

նէական ընկալումների մէջ ներմուծել էր հեթանոսական ժամանակների տարբեր սովորութիւններ, որոնք յայտնապէս չէին հակադրւում քրիստոնէական մահուան ըմբռնումներին: Սաղմոսերգութիւնն ու հիմներգութիւնը, բարեխօսական աղօթքը հանգուցեալի համար եւ գերեզմանի օրհնութիւնը, ինչպէս նաեւ հանգուցեալի յիշատակի տարեդարձը տարբական ծիսական արարողութիւններ էին, որոնք եկեղեցականների կողմից աւելացուել էին ժառանգուած աւանդոյթին: Զորկանների կողմից աւելացուել էին ժառանգուած աւանդոյթին: Զորրորդ դարում դրանք դնում էին քրիստոնէական թաղման ծէսի յետագայ զարգացման պատմական հիմքը Հայաստանում: Եռամաս ծէսի յետագայ ձեւաւորման առաջին քայլերը յստակօրէն ուրուագծւում են: Սկզբնական շրջանում արարողութեան (Exsequien) շեշտը դրւում էր ամենից առաջ գերեզման ուղեկցող թաղման թափօրի վրայ: Ըստ երեւոյթին Prothesis-ը[1], Virgil-ը[2] եւ պատարագը Եկեղեցում այս վաղ ժամանակներում դեռեւս չէին դարձել ծիսակարգի ձեւաւորման բաղադրամաս: Ընդհանրապէս աղօթքը կատարւում էր եկեղեցում, ուր միայն Ժ դարում պէտք է աւելանային եկեղեցու առջեւ կարճ դադարը եւ դրա հետ կապուած աղօթքի կանոնը, որը վաղ շրջանում որեւէ նշանակութիւն չունէր: Քրիստոնեաները ժառանգում էին հին բարքերը. ննջեցեալի դին հեռու էին պահում սուրբ վայրից եւ նրան եկեղեցի չէին տանում: Թաղման հին սովորոյթում բացառւում էր դիակը տաճար տանելը, քանի որ նրա ներկայութիւնը ապականում էր նուիրագործուած վայրը: Թաղման ծէսի ձեւաւորման հիմնական շեշտն ընկնում էր սգոյ թափօրի (Pompa funebra) վրայ, որը շարժւում էր դէպի բնակավայրերից դուրս տեղադրուած գերեզմանները: Թափօրի երթը գերեզմանատուն կազմել է անտիկ ժամանակաշրջանում վերջին տեղափոխութեան (Funus translaticum) արարողութեան կարեւորագոյն եւ ամենատեւական մասը: Քրիստոնեաները եւս մեծ նշանակութիւն են տուել մեռելատնից դէպի գերեզմաններն ընթացող թաղման

1 Լատիներէն այս բառը գալիս է յունարէն πρόθεσις բառից, որը հին յունարէնում տառացիօրէն նշանակել է նախադրութիւն, ցուցադրութիւն, համընդհանուր ծանուցում, յայտարարութիւն (մասնաւորաբար՝ մահացածի մասին): Քրիստոնէական շրջանում πρόθεσις-ը նշանակել է նաեւ աւանդատան այն սեղանը, որի վրայ պատրաստուել են ս. պատարագի ընծաները: Այստեղ նշանակում է հանգուցեալի դիակի լուացումը, զգեստաւորումը եւ զետեղումը սեղանի վրայ հանդիսաւոր հրաժեշտի համար (խմբ.):

2 Virgil - գիշերային հսկում

թափօրին, որը խորհրդանշանաբար պատկերացրել են իբրեւ տեղափոխութիւն առ Տէր (Migratio ad Dominum)[1]: Նրանց մօտ աւելի ուշ է յայտնւում հանգուցեալին յուղարկաւորումից առաջ հանդիսաւոր հոկման համար եկեղեցի բերելու սովորոյթը[2]: Հին սգոյ թափօրից է գալիս նաեւ արարողութեան ընթացքում մոմերի, ջահերի եւ խունկի առատ օգտագործումը: Հեթանոսական շրջանում հրավառութեան ապոթրոպիկ (դժբախտութիւն հեռացնող) նպատակը քրիստոնէութեան օրօք ստանում է նոր հոգեւոր երանգ՝ իբրեւ Քրիստոսի՝ աշխարհի յաւերժական Լոյսի (Lux perpetua) նշանակ[3]: Հայաստանում հին ժամանակներից եկած հանգուցեալների պաշտամունքային արարողութիւնից[4], որպէս առաջին քրիստոնէական վերափոխում, եկեղեցին հեռեւողականօրէն արգելում էր դիւրագրգիռ ողբերգերը, մահացածի վրայ լացուկոծին ուղեկցող արնաշաղախ հաշմացումները, թաղման թափօրն առաջնորդող պարողներին եւ երաժիշտներին[5]: Նման վարուելակերպը խոր արմատ էր նետել ժողովրդի մէջ՝ պահպանուելով որպէս հեթանոսական ժամանակների մահացածների պաշտամունքի կենդանի հետք: Եկեղեցու բազմաթիւ կանոնական որոշումները փորձում էին արգելել այդ սովորոյթները[6]: Հայկական Եկեղեցին սպառնում էր բանադրանքով եւ այլ պատժամիջոցներով: Սահմանափակումներն ուղղուած են եղել սուր վշտի ամէն տեսակ պոռթկումների

1 **A. C. Rush,** նշ. աշխ., էջ 193-196, 203-208, 231-235: Եկեղեցական թափօրների գործառական իմաստի մասին ընդհանրապէս հմմտ. **I. H. Dalmais,** Note sur la sociologie des processions, "Maison de Dieu", 1955, էջ 37-42:

2 **A. C. Rush,** նշ. աշխ., էջ 160-162

3 Յովհ. Ը 12

4 Հմմտ. Մովսէս Խորենացու մօտ Արտաշէս թագաւորի թաղման արարողութեան նկարագրութիւնը (Բ 60):

5 «Փաւստոս», Ե 31

6 Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», Ա, էջ 247, 385, 443 եւ յետ., Բ, էջ 96: Հմմտ. նաեւ **Յովհաննէս Մանդակունի,** Թուղթ մխիթարութեան վախճանելոց յաշխարհէս, «Մառք», Վենետիկ, 1860, էջ 175-176, 180 եւ յետ.: Յոյն եկեղեցական հայրերի քննադատութեան մասին հմմտ. **J. Quasten,** Musik und Gesang in den Kulturen der heidnischen Antike und christlichen Frühzeit, Münster, 1973, էջ 219-224; **A. C. Rush,** նշ. աշխ., էջ 176-184: Ասորիների շրջապատում արմատաւորուած՝ ննջեցեալի վրայ ողբի դէմ Ասորական Եկեղեցու որոշումների մասին հմմտ. **J. B. Chabot,** Synodicon Orientale ou Recueil des Synodes Nestoriens, Paris, 1902, էջ 117, 221 եւ յետ., 225, 489; **Bar Hebraeus,** "Nomokanon", VI, 2 (Ed. A. Mai, Scriptorum veterum nova collectio e Vaticanis codicibus edita, Rom, 1832-1838, X 2, 3-268):

դէմ, որոնք կարող էին հասցնել ընդհուպ մինչեւ ինքնախեղման եւ անձնասպանութեան[1]: Վերացնելով մահացածի վրայ ողբը՝ Եկեղեցին յետագայ թաղման արարողութեան մէջ մի խոր իմաստ դրեց: Ըստ քրիստոնէական յետմահու կեանքի հաւատի՝ յուղարկաւորութիւնը պէտք է ընթանար գոհութեամբ, գրեթէ հանդիսաւոր կերպով: Որպէս քրիստոնէական յարութեան գաղափարի արտայայտութեան աւելի չափաւոր ձեւ՝ սգոյ ողբին փոխարինում է սաղմոսերգութիւնը: Այն այլեւս որեւէ համեմատութեան եզր չունէր ինքնամոռացութեան հասցնող ողբի հետ: Թէ ինչպիսին պիտի լինէր կատարեալ քրիստոնէական յուղարկաւորութիւնը, գտնում ենք Փաւստոսի մօտ Ներսէս կաթողիկոսի մտայղացումների նկարագրութեան մէջ: Աշտիշատի ժողովի ընկերական բարեփոխումների շարքում նա փոփոխութիւններ է մտցնում նաեւ մահացածներին հրաժեշտ տալու վարուելակերպի մէջ. «Եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութեամբ արտաքոյ կարգի կանոնի Եկեղեցւոյ լալ զմեռեալն, եւ ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, եւ ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի, այլ լոկ արտասուաւք եւ ըստ արժանի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք զմեռեալսն յուղարկէին»[2]:

Սակայն տեսութիւնն ու գործը յաճախ հեռանում են միմեանցից: Չնայած համընդհանուր սուր պայքարին, Հայ Եկեղեցին չկարողացաւ ամբողջովին արմատախիլ անել հինաւուրց սովորութիւնները: Քրիստոնէութեան շրջանում մեռելատանը եւ թաղման արարողութեան ժամանակ ծիսական ողբը դեռ երկար պահպանեց իր աւանդական ուժը: Արգելքների յաճախակիութիւնը եւ շարունակ թարմացումը աներկիմաստօրէն ճնշող բնոյթ ունէին: Ողբերգերին փոխարինող սաղմոսներն ընդհանուր առմամբ առանձնայատուկ դեր խաղացին եկեղեցական աղօթքների գոյացման ճանապարհին եւ հնուց եկած աւանդոյթի հետ միասին կազմեցին հայկական թաղման ծէսի կանոնակարգը: Յուղարկաւորութեան ժամանակ առանձին սաղմոսների կիրառման կարգին կանդրադառնանք յետագայում: Սաղմոսերգութեան հետ միասին Հայաստանում կատարւում էր նաեւ մէկ այլ հին քրիստոնէական սովորութիւն՝ գերեզմանում խունկ ծխելը: Հանգուցեալին հողին յանձնելուց, քահանայի կողմից գերեզմանը խաչակնքելուց եւ համապատասխան աղօթքից յետոյ գերեզմանը համարւում էր կնքուած[1]: Այժմ էլ թաղման կարգը եզրափակւում է գերեզմանի կնքումով. նախ կնքւում է գերեզմանի արեւմտեան կողմը (գլխի կողմը), ապա՝ արեւելեան կողմը (ոտքերի կողմը), յետոյ՝ գերեզմանի սիրտը (մէջտեղից մի փոքր վերեւ՝ ննջեցեալի կրծքավանդակի տեղադրութեան վայրում)[2]՝ համապատասխանաբար հետեւեալ բանաձեւերով. «Օրհնեսցի եւ կնքեալ պահեսցի գերեզման եւ ոսկերք ծառայիս Աստուծոյ նշանաւ սուրբ խաչիս եւ բանիւ սուրբ Աւետարանիս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Օրհնեսցի եւ կնքեալ պահեսցի շիրիմ եւ ոսկերք...: Օրհնեսցի եւ կնքեալ պահեսցի դամբարան եւ ոսկերք...»: Վերջում քահանան ննջեցեալի գլխավերեւում ասում է հետեւեալ եզրափակիչ բանաձեւը[3]. «Անշարժ եղիցի կնիք տէրութեան ի վերայ գերեզմանի ծառայիս Աստուծոյ մինչեւ ի գալուստն Քրիստոսի, որ եկեալ միւսանգամ՝ նորոգեսցէ փառօք ի փառս Հօր եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»: Կնիք դնելու խորհրդանշանը ուշ անտիկ մշակոյթներում ունէր արտակարգ կրօնական նշանակութիւն: Անտիկ ժամանակներում գերեզմանի կնքման սովորութիւնը համընդհանուր բնոյթ է կրել, որ օգնում էր որոշել մահացածի պատկանելութիւնը եւ խուսափել օտարների անակնկալ յարձակումից: Յիսուսի գերեզմանը կնքուել էր Պիղատոսի կարգադրութեամբ, որպէսզի դիակը չգողանա[4]: Քրիստոնեաները խորհրդականօրէն կնքում էին մահացածների շիրիմները՝ այդպէս ապահովելով նրանց գերեզմանների հանգիստը դիւային ուժերի հնարքներից, ճանաչել տալով մահացածին որպէս Աստծուն ենթակայ[5]:

Կնիքի խորհրդանշանը մեծ կարեւորութիւն ունի նաեւ մկրտութեան ծէսի ժամանակ (կնունք): Ջրից նոր հանած նորածին քրիստո-

1 «Մովսէս Խորենացի», Բ 20, «Փաւստոս», Դ 4

2 «Փաւստոս», Ե 31

1 Հմմտ. «Կորիւն», էջ 24, «Ագաթանգեղոս», էջ 760:

2 **D. Dan,** Glaube und Gebrauch der Armenier bei Geburt, Hochzeit und Beerdigung, "Zeitschrift für österreichische Volkskunde", 10 (1904), էջ 106:

3 «Մաշտոց», Էջմիածին, 1894, էջ 537-539

4 Մատթ. ԻԷ 66

5 **F. J. Dölger,** Sphragis. Eine altchristliche Taufbezeichnung in ihren Beziehungen zur profanen und religiösen Kultur des Altertums, Paderborn, 1911

նեային օծում էին միւռոնով. դրանով «կնքում էին» նրան չար ուժերի դէմ[1]: Այս նախնական իմաստն է թաքնուած թաղման ամենահին կարգում գործածուող աղօթքի մէջ, որ մեզ է հասել Ժ դարի հայ հնագոյն Մաշտոց-ծիսարանի միջոցով: «Կնունք» վերնագիրը կրող այս եզրափակիչ աղօթքով քահանան հողին յանձնուած դիակի մօտ Աստծուն խնդրում է հոգեւոր կնիքներով ապահովել հանգուցեալի հանգիստը մինչեւ նրա յարութիւնը. «Եւ այժմ, Տէ՛ր Աստուած մեր, ձգեա՛ զպահպանական աջ Քո եւ աւրհնեա՛ եւ կնքեա՛ զտեղի հանգստեան սորա, եւ զի եղիցի ի զգուշութեան եւ ի պահպանութեան նշխարք ոսկերաց սորա՝ իբրեւ զգանձս պատուականս առաջի Աստուածութեանդ Քո. եւ մի՛ իշխեսցէ գրժել զսա թշնամի երեւելի կամ աներեւոյթ»[2]:

Յաջորդ օրն առաւօտեան գերեզմանատանը ննջեցեալի յիշատակման արարողութեան ժամանակ հնչում է նման, թէեւ մկրտութեան աստուածաբանութեամբ տոգորուած աղօթք. «Պահեա՛, ամենակարող եւ ամենազաւր Տէ՛ր, զհոգի սորա առ ամենայն սրբոց եւ սիրողաց անուան Քո. եւ զգերեզման ծառայիս Քո կնքեալ պահեսցես, որ փակես զխորս եւ կնքես ամենազաւր աջովդ Քո երկինք եւ երկնից երկինք, եւ ամենայն տարերք եւ երկիրս հաստատեալ կան բանիւդ Քո: Այսպէս անշարժ եղիցին կնիք Տէրութեանդ ի վերայ բնակութեան նորա ի պահարան ծառայիս Քո, եւ մի՛ իշխեսցէ մերձենալ ի սա պիղծ եւ անմաքուր դեւն որպէս ի մարմին եւ յոգի հեթանոսաց, որք ոչ ունին զծնունդ սուրբ աւազանին եւ զկնիք ահաւոր ի վերայ գերեզմանացն»[3]:

Վաղ քրիստոնէական շրջանի Հայաստանում մահացածի պաշտամունքի կայուն բաղադրամասն էր կազմում մահուան տարեդարձի յիշատակումը: Սահակի եւ Մեսրոպի գերեզմանների վրայ ամէն տարի տեղի էին ունենում յիշատակման հանդիսութիւններ[4]: Ամէն տարի տօնում էր նաեւ Գրիգոր Լուսաւորչի, Տրդատ թագաւորի եւ Հռիփսիմէ ու Գայիանէ նահատակների յիշատակը[1]: Հայ քրիստոնեաները մեռելայիշատակումով տուրք էին տալիս հին եկեղեցիներում տարածուած յարգալից սովորոյթին: Ուշ անտիկ շրջանից մահացածների ամէնամեայ յիշատակութիւնն ամէնուր եղել է ընդունուած պարտաւորութիւն: Բայց եկեղեցին ընդունել էր տարեդարձը մէկ էական տարբերութեամբ. նա նշում էր մահացածների ամէնամեայ յիշատակումը ոչ թէ ժամանակաշրջանի հեթանոսների նման մահացողի ծննդեան, այլ նրա մահուան օրը, քանի որ, ըստ իր ուսմունքի, մահուան օրը Աստուծոյ տիրապետութեան մէջ համարւում էր իսկական ծնունդ: Մահը դառնում էր ծննդեան օր (γενεσία) Քրիստոսի մօտ՝ նոր կեանքում[2]:

Ննջեցեալի յիշատակութեան հետ սերտօրէն առնչուած է բարեխօսութեան աղօթքը, որը հայկական ծէսում հաստատուել է Վրթանէս կաթողիկոսի կողմից: Վերջինս պատարագի մէջ է մտցրել ննջեցեալների համար աղօթքը ի յիշատակ պարսկական պատերազմների նահատակների[3]: 447 թ. Շահապիվանի ժողովը հաստատեց ննջեցեալի յիշատակումը պատարագի ժամանակ[4]: Մանդակունին պատգամում էր ննջեցեալների բարեխօսութեան աղօթքի անհրաժեշտութիւնը[5]: Բարեխօսութեան աղօթքին չափազանց մօտ են ծաւալուն քահանայական երկարաշունչ աղօթքները աւելի ուշ շրջանի թաղման կանոնակարգի ձեռագրերում: Այդ հին տեղեկութիւններից գրեթէ հնարաւոր չէ ամփոփիչ տուեալներ առանձնացնել ննջեցեալի համար բարեխօսական աղօթքի բնոյթի եւ իմաստի մասին: Եւ միայն Ժ դարում Խոսրով Անձեւացին իր պատարագի մեկնութեան մէջ աւելի մանրամասնօրէն է յիշատակում ննջեցեալի համար բարեխօսական աղօթքի կարեւորութեան եւ այն սփոփանքի մասին, որ շնորհւում է նրա միջոցով բոլոր

1 Հմմտ. G. Winkler, Zur frühchristlichen Tauftradition in Syrien und Armenien unter Eibeziehung der Taufe Jesu. "Ostkirchliche Studien", 27 (1978), էջ 281-306:

2 ՄՄ ձեռ. N 1001, էջ 151ա-151բ

3 Նոյն, էջ 157բ-158ա

4 «Ղազար Փարպեցի», Վենետիկ, 1933, էջ 112-113

1 Հմմտ. A. Renoux, Les premieres manifestation liturgiques du culte des saints en Arménie, տե՛ս A. M. Triacca/A. Pistoia (հրատ.), Saints et Sainteté dans la liturgie, Rome, 1987, էջ 292:

2 Հայաստանում յիշատակման այլ օրերի վերաբերեալ, որոնք մեծ մասամբ համընկնում են Արեւելքի Եկեղեցիներում ընդունուած օրերի հետ, ինչպէս նաեւ դրանց հիմնաւորումը Աստուածաշնչի ժամանակագրական սահմաններում, հմմտ. E. Freistedt, Altchristliche Totengedächtnistage und ihre Beziehung zum Jenseitsglauben und Totenkultus der Antike, Münster, 1928, էջ 2-9:

3 «Փաւստոս», Գ 11

4 «Կանոնագիրք Հայոց», Ա, էջ 443 եւ յետ.

5 Նոյն, էջ 177, 179

մահացած հոգիներին[1]: Նախաքրիստոնէական շրջանի հայկական մեռելապաշտամունքի մէջ գերիշխող՝ նախնիների հանդէպ յարգանքի տուրքն ընդօրինակուեց Եկեղեցու կողմից՝ փոխարինուելով հանգուցեալների յիշատակման օրերով: Այդ օրերին գերեզմանի մօտ տեղի էին ունենում ճաշկերոյթներ հանգուցեալի հոգու հանգստութեան համար: Դրանց հետ է կապուած նաեւ մատաղի հասկացութիւնը[2]: Մատաղի ակունքները գալիս են նախաքրիստոնէական շրջանից: Գրիգոր Լուսաւորիչը գիտակցօրէն այն կապեց քրիստոնէական կանոնակարգի հետ[3]: Հակառակ նրան, որ երկար ժամանակ յոյները այս սովորութիւնը կապում էին հրէականութեան հետ, Ներսէս Շնորհալին պաշտպանեց նրա քրիստոնէական ուղղափառութիւնը[4]: Հայերի հոգեհացի ծագումը կարելի է գտնել հին եկեղեցական ագապէի իրիկնահացի մէջ, որը քրիստոնեաները նշել են հաղորդութեան երրորդ օրը՝ շիրմի մօտ[5]: Իր հերթին, այն անմիջականօրէն կապուած է եղել հեթանոսական զոհաբերութիւնների հետ: Անտիկ շրջանում հոգեհացը տեղի էր ունենում գերեզմաններում՝ մահից յետոյ որոշակի օրերի եւ այնուհետեւ՝ մահուան տարեդարձի օրը, ընդ որում ենթադրւում էր հանգուցեալի ներկայութիւնը: Հոգեհացի ընթացքում կատարւում էր զոհաբերութիւն, որը պիտի բաւականութիւն պատճառէր հանգուցեալի հոգուն: Հեթանոսական հոգեհացի հիմքում ընկած էր այն գաղափարը, որ մահացածն իր գերեզմանի շրջակայքում վարում է թէեւ ստուերային, բայց նիւթականի եւ երկրայինի նմանուող կեանք: Հելլենիզմի ազդեցութեան տակ հոգեհացը վերաիմաստաւորւում է իբրեւ հանգուցեալի հոգեւոր յիշատակութիւն (memoria, ἀνάμνησις), որը համակեցութիւն-κοινωνία-ի տեսանկիւնից իրար էր կապում կենդանի եւ մեռած մարդկանց: Այստեղ արդէն նշմարւում է քրիստոնէական աստուածաբանութեան յոյժ կարեւոր գաղափարը ողջերի եւ մեռածների

1 «Մեկնութիւն աղօթից պատարագին», Վենետիկ, 1869, էջ 42-43

2 Հասկացութիւնը ծագում է Հին Կտակարանի νηπιος, νεος-ից. հմմտ. ԾՆ. ԼԳ 13, Բ Օր. Ա 39, Դ Թագ. Ե 14, Երր. ԺԱ 18 եւ այլն:

3 Հմմտ. **F. C. Conybeare,** The Survival of Animal Sacrifices in the Christian Church, "American Journal of Theology", 7 (1903), էջ 80; **A. Sharf,** Animal Sacrifice in the Armenian Church, տե՛ս REA n. s. 16 (1982), էջ 417-449:

4 **J. Cappelletti,** Sancti Nersetis Clayensis Armenorum Catholici Opera, Venedig, 1833, էջ 39, 269-271

5 Հմմտ. "Apost. konst.", VIII 44:

համակեցութեան մասին, որը մեղմացնում է հոգեհացի անցումը դէպի քրիստոնէական ծէսը: Հաղորդութեան ներմուծման եւ հոգեհացը հասարակական սիրոյ ընթրիքի վերափոխելու շնորհիւ նախկին հեթանոսական տոնակատարութիւնն ամբողջովին քրիստոնէական օրինականութիւն է ստանում[1]: Հայկական Եկեղեցում նախաքրիստոնէական սովորոյթներից եկող մատաղը ստացաւ քրիստոնէութեանը յարմարեցուած մեկնաբանութիւն՝ իբրեւ ագապէ: Այս ըմբռնումն է ընկած Մանդակունուն վերագրուող ճառի հիմքում, ուր նա կոչ է անում ընթրիքի հրաւիրել աղքատներին, ծերունիներին, այրի կանանց եւ օտարներին: Հոգեհացին հանգուցեալի մեղքերը քաւելու իմաստը կվերանար, եթէ նրան մասնակցէին միայն հարազատները եւ ընկերները[2]: Զոհաբերութեան բուն իմաստը գնում է յետին պլան: Եկեղեցին ցանկանում է ընծայումը վերափոխուած տեսնել թշուառներին ողորմութիւն տալու մէջ: Հայկական աւանդոյթներին հետեւող եւ մեկնաբանող Գրիգոր Տաթեւացին իր «Գիրք հարցմանցի» մէջ բացատրում է ննջեցեալների հոգեհացը իբրեւ աղքատների հանդէպ սիրոյ եւ գթասիրութեան խորհրդանիշ[3]: Թէ սկզբնական շրջանի մահացածների կարգում Հայկական Եկեղեցին որքան մեծ նշանակութիւն էր տալիս մատաղին եւ սիրոյ ընթրիքին, երեւում է այն խիստ արգելքից, որը հրահանգել էր Շահապիվանի ժողովը այն անձանց նկատմամբ, ովքեր չափից շատ կսկիծով էին ճանապարհում իրենց հանգուցեալներին: Նման դէպքերում մատաղն արգելւում էր[4]:

Բ

Վերը նշուած տեղեկութիւնները, որոնք քաղել ենք հայ հին մատենագրութիւնից, ընդամէնը ուրուագծում են Հայաստանում քրիստոնէութեան սկզբնաշրջանում կատարուող թաղման կարգի նախատիպի պատկերը: Եւ միայն Ժ դարից յետոյ, երբ ի յայտ են գալիս թաղման կանոնակարգի ձեռագրեր, կարող ենք բաւարար չափով ապա-

1 Հմմտ. **H. Leclerq,** Défunts, տե՛ս DACL IV, 1 (1921), էջ 441; **E. Freistedt,** նշ. աշխ., էջ 2:

2 **Յովհաննէս Մանդակունի,** Վասն պտղոց եւ պատարագաց եւ ողորմութեան, «Ճառք», Վենետիկ, 1860, էջ 59-61

3 **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, Թ, էջ 657

4 «Կանոնագիրք Հայոց», Ա, էջ 443 եւ յետ.

հովուած զգալ խոր արմատաւորուած թաղման աւանդոյթի ակունքների հարցում: Դրանցից ամենահինն են Վենետիկի մատենադարանի N 457 եւ ՄՄ N 1001 ձեռագրերը: Այստեղ ներկայացուած թաղման ծէսը կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու բարենորոգումներից յետոյ դարձաւ մէկ ընդհանուր արարողութիւն եւ ամբողջական տեսք ստացաւ: Այն ներկայացնում է ամփոփ, խորագրերով բաժանուած կանոնակարգ, ուր առանձին բանաձեւերով տարբերակուած է մահացողների կրօնական դրութիւնը: Դրանց կառուցուածքում արտացոլուած են խմբագիրների պարբերական միջամտումները ծիսական առանձին հատուածներում: Այդ ժամանակաշրջանում արդէն հայկական թաղման ծէսը, ինչպէս եւ դրացի Արեւելեան եկեղեցիներում, ծաւալուել էր բազմաթիւ բանաձեւերով: Սակայն, հակառակ Ասորական եւ Բիւզանդական եկեղեցիների եւ յատկապէս ղպտիների եւ եգիպտացիների բանաձեւերի բազմաքանակութեանը, դրանց թիւը Հայկական եկեղեցում ամենաքիչն էր, ինչն այդպէս էլ պահպանուեց: Հայկական եկեղեցու թաղման ծէսի տարբերակները վերաբերում են կղերին (քահանայ, եպիսկոպոս, կաթողիկոս), վանականներին եւ աշխարհականներին (կին եւ տղամարդ): ԺԳ դ. վերջի ծիսական ձեռագրերում աւելանում է չկնքուած երեխաների թաղման արարողակարգը: Սակայն պարզ չէ, թէ երբ են առաջացել դրանց յատուկ բանաձեւերը: Ամէն դէպքում Հայկական եկեղեցին այդ տարբերակումը կայացրել է բաւական վաղ՝ արդէն Ժ դարում: Գրեթէ հայերի հետ միաժամանակ, Թ դարից, արեւելեան եւ արեւմտեան ասորական ծիսական ձեռագրերը վկայակոչում են հոգեւորականի, վանականի, աշխարհականի եւ երեխաների թաղման տարբերակուած կարգ[1]: Թաղման ծէսի այս բազմազանութիւնը Արեւելեան եկեղեցին հաստատել է շատ աւելի վաղ, քան Բիւզանդականը, որտեղ համեմատաբար ուշ է զարգացել թաղման տարբերակուած կանոնակարգը: Մետրոպոլիտ Սիմէոն Թեսաղոնիկեցու (1429) վկայութեամբ, որը դեռեւս բոլոր ննջեցեալների համար միանման թաղման կարգ է նկարագրում, մինչեւ ԺԵ դարն ընդունուած արարողութիւնից դուրս գոյութիւն է ունեցել ընդամէնը մէկ

1 Հմմտ. **W. Wright,** Catalogue of Syriac Manuscripts in the British Museum, London, 1870-72, էջ 392-394; **H. Zotenberg,** Catalogue des manuscrits syriaques et sabéens de la bibliothéque nationale, Paris, 1874, էջ 40; **A. Baumstark,** Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, էջ 340:

բանաձեւ, որտեղ ըստ պահանջմունքի եւ մահացողի եկեղեցական դիրքի փոխւում էր աղօթքների հերթականութիւնը[1]: Որոշ ուշացումով հաստատուեց երեխաների, իսկ ԺԵ-ԺԶ դարերում՝ քահանայի եւ եպիսկոպոսի թաղման կանոնակարգը[2]: Թաղման կարգի տարբերակուած ձեւերը կապւում են Զ դ. վերջում Անտիոքի Եկեղեցում կիրառուող պատկառազդու արարողութեան հետ: Թաղման արարողութեան Արեոպագացու նկարագրութեան համաձայն՝ քահանայի կամ աշխարհականի յարաբերութիւնը եկեղեցու հանդէպ ճանաչւում էր նրանից, թէ եկեղեցում որտեղ է տեղադրւում դիակը հսկման համար. մահացած քահանային դնում էին բեմի վրայ՝ սեղանի առջեւ, մինչդեռ վանականին եւ աշխարհականին պահում էին խորանից դուրս: Սակայն թաղման արարողութեան բուն բովանդակութիւնը դեռեւս անփոփոխ էր մնում[3]: Սկսած Արեոպագացուց՝ Հայկական եկեղեցում հիմնաւորւում է կղերի եւ աշխարհականի թաղման կարգի տարբերակումը:

Վանականի կամ կրօնաւորի թաղման կանոնակարգն ընդհանուր առմամբ զարգացել է աշխարհականի թաղման կարգի հիման վրայ: Դրա անուղղակի վկայութիւնը պահպանուել է կաթողիկոս Եղիվարդեցու վարքում, ըստ որի՝ իր կողմից կատարուած ծիսական բարեփոխումները պէտք է վերաբերել միայն քահանայի եւ աշխարհականի թաղմանը[4]: Վանականի թաղման կարգն իր բովանդակային կառուցուածքի հիմնական գծերով նմանւում է աշխարհականի թաղման կարգին, որն էլ իր համակարգուած կառուցուածքով ներկայացնում է ծէսի նախատիպը: Երկուսն էլ ունեն ընդհանուր կառուցուածք, որի հիմքում սաղմոսների, ընթերցուածքների, քարոզների եւ աղօթքների որոշակի ամբողջականութիւնն է: Երկու ծէսերի լիակատար նմանութիւնը յատկապէս ի յայտ է գալիս յաջորդ օրը՝ ննջեցեալի յիշատակութեան ժամանակ: Երկու ծէսերն էլ ունեն միատեսակ կարգ: Վանականի եւ աշխարհականի թաղման ծէսի միակ աչքի ընկնող տարբերու-

1 "De sacro ordine sepulturae" (PG 155, էջ 669-696)

2 **V. Bruni,** I funerali di un sacerdote nel rito bizantino. Secundo gli eucologi manoscritti di lingua greca, Jerusalem, 1972, էջ 123-131

3 PG 3, էջ 556C

4 «Ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն եւ զթերին ինքն ելից յաստուածատուր շնորհաց իւրաց. եւ եդ ի միում տփի 7 զթաղմանն, զհոգեհանգիստն 7 եւ զքահանայաթաղն 7» (**Ց. Տաշեան,** Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1885, Ա, էջ 64. հմմտ. «Ցայսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 111):

Թիւնն այն է, որ Եկեղեցու կարգի ժամանակ վանականի դիակը դրւում է եկեղեցում (ոչ խորանում), մինչդեռ աշխարհականի դագաղը դրւում է եկեղեցու ճակատամուտքի առջեւ[1]: Հակառակ դրան՝ քահանայի թաղման բանաձեւն ունի առաջացման ուրոյն պատմութիւն: Այստեղ անմիջապէս աչքի է ընկնում ոչ միայն շատ աւելի մեծ ծաւալը, այլեւ ծիսական մասերի իմաստային տարբերութիւնը: Կառուցուածքի տեսանկիւնից այն ամենաճոխն է: Աստուածաշնչային ընթերցումները եւ սաղմոսները աւելի ընդարձակ եւ առատ են, քան աշխարհականի արարողութեան կարգում: Աչքի ընկնող առանձնայատկութիւններից է Հին Կտակարանից վերցուած ընթերցումների մեծ ընտրանին: Քահանայաթաղում յատուկ աղօթքներ ու մաղթանքներ են ներմուծուած: Ճոխ ընթերցուածքներից զատ, այս արարողութիւնն առանձնանում է նաեւ խորանի առջեւ դրուած դիակի մօտ կատարուող ծէսի երկարատեւութեամբ: Այն իր գագաթնակէտին է հասնում հանգուցեալին թանկարժէք միւռոնախիւղով օծելու պահին: Դիակի օծմանը հետեւում են խաղաղութեան համբոյրը եւ ննջեցեալի հանդիսաւոր հրաժեշտը Եկեղեցու եւ աշխարհի հետ, որը եղբայրակիցները կատարում են անհատապէս (Ex persona defuncti): Հրաժեշտի այդ հանդէսը խորապէս խորհրդանշական է: Սաղմոսների եւ աղօթքների ուղեկցութեամբ ննջեցեալին յաջորդաբար խոնարհում են խաչի եւ խորանի առջեւ, որտեղ եւ նրան վայր են դնում: Այստեղ օծում են ննջեցեալի ճակատը եւ ձեռքերը: Արարողութեանն առաջնորդում են քահանայի օծման աղօթքը եւ բովանդակութեամբ համապատասխանող սաղմոսը՝ «Օծեր իւղով զգլուխ իմ»[2]: Սրբազան արարողութեան վերջում քահանաները ի նշան հրաժեշտի համբուրում են հանգուցեալին[3]: Խաղաղութեան եւ հրաժեշտի համբոյրը խորհրդանշում է ի Քրիստոս ննջեցեալ եւ կենդանի մարդկանց մահից վեր կանգնած միութիւնը: Հակառակ հեթանոսների՝ դիակի նկատմամբ խուսափող վարմունքի, քրիստոնէական հաւատի համաձայն՝ ննջեցեալը, որը պիտի յարութիւն առնի՝ Աստուծոյ հետ միանալու համար, սուրբ է եւ

1 Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, էջ 672

2 Սաղմ. ԻԲ 6

3 «Եւ համբուրեն զսեղանն որպէս յերեսաց վախճանեղոյն եւ զվախճանեալն եւ զխորանն եւ զամենայն սրբութիւնս եւ զսուրբ աւետարանն, որ ի գիրկսն» (Վենետիկի մատենադարան (=ՎՄ), ձեռ. N 457, էջ 215բ):

մաքուր: Եւ նրանք գործում են հանգուցեալի փոխարէն ex persona defuncti, երբ հանգուցեալ քահանայի անունից Եկեղեցուն հրաժեշտ են տալիս ուխտագնացների սաղմոսով. «Ուրախ եղէ ես, ոյք ասէին ցիս՝ ի տուն Տեառն երթիցուք մեք»[1]: Սաղմոսերգութեան այդ մեղեդին պատկանում է հայկական ծէսի պահպանած հնագոյն մեղեդիների թուին[2]: Աչքի է զարնում նրա նմանութիւնը ասորական թաղման աւանդութեան հետ: Բար Եբրէոսը (1286) իր «Նոմոկանոնի» (Կանոնագրքի թարգմանութեան) վեցերորդ գլխում սաղմոսի գրեթէ նոյն հատուածն է նշում ասորիների թաղման ծէսից, որ կղերը երգում է մահացած քահանայի անունից[3]:

Խաղաղութեան համբոյրով եւ ննջեցեալի օծումով ուղեկցուող հրաժեշտի արարողութիւնը գալիս է հին համաքրիստոնէական աւանդութիւնից: Նախաքրիստոնէական շրջանում ննջեցեալին թանկարժէք քսուքներով օծելը նրա հանդէպ պատկառանքի եւ խնամքի արտայայտութիւնն էր: Միեւնոյն ժամանակ բալասանը Արեւելքի տաք երկրներում ծառայում էր դիակը արագ նեխումից պաշտպանելու նպատակին: Քրիստոնեաներն ընդօրինակեցին այդ սովորութիւնը՝ հաղորդելով նրան ծիսական սրբազան վեհութիւն: Արեւելեան Եկեղեցիներում հանգուցեալի օծումը դարձաւ թաղման ծիսակատարութեան հիմնաքարերից մէկը: Կանոնակարգով այն ետ է տանում դէպի այն արարողական աւանդութիւնը, որը վկայակոչուած է արդէն Դիոնեսիոս Արեոպագացու կողմից Եկեղեցու խորհուրդների իր մեկնութիւններում իբրեւ թաղման ծիսակարգի մշտական բաղադրամաս[4]: Հայկական Եկեղեցին իր թաղման կանոնակարգում յստակօրէն յղում է Դիոնեսիոս Արեոպագացու վրայ՝ որպէս ննջեցեալի օծման հարցում հեղինակաւոր ուսուցչի. «Եւ առնու քահանայն սուրբ միրոնն եւ հեղու

1 Սաղմ. ՃԻԱ 1

2 Ա. Ս. Արեւշատեան, Մաշտոց ժողովածուն որպէս հայ միջնադարեան երաժշտական մշակոյթի յուշարձան, Երեւան, 1991, էջ 40

3 "si fuerit episcopus aut sacerdos aut diaconus aut monachus in templum deducant eum... et postea introducant eum ad altare, et circumferant ter dicentes: "Mane in pace, altare sanctum. Mane in pace, ecclesia et clerus universus. In ecclesia, in qua ministravi, pas regnet in te" ("Nomokanon", VI, էջ 37).

4 PG 3, էջ 556D. հմմտ. H. Ühlein, Mysterion an den heiligen Entschlafenen. Das Begräbnisritual bei Dionysius Areopagita, տե՛ս H. Becker (հրատ.), Im Angesicht des Totes. Ein interdisziplinäres Kompendium, St. Ottilien 1987, II, էջ 1076-1081:

նախ ի ճակատն, որպէս եւ սուրբ Դիոնիսիոս Աթենացի պատուիրէ՝ աշակերտ սուրբ առաքելոյն Պաւղոսի. քանզի կարգաւ մեկնէ զխորհուրդն, զոր մի՛ ի յայսպիսի կարգ քրիստոնէութեան հեթանոսական պարսանաւք աղարտեսցէ, զի առաքելական է կանոնս»[1]:

Օծումը, որը հին ժամանակներում անխտիր կատարւում էր բոլոր հանգուցեալների համար, Արեւոպագացին մեկնում է մկրտութեան օծման հետ միեւնոյն աստուածաբանական ենթատեքստում: Մկրտուող երախան օծւում էր միւռոնի իւղով՝ որպէս քրիստոնէական կեանքի հետ հաղորդութեան խորհրդանիշ, որով քրիստոնեան յանուն հաւատի պիտի մտնէր «սուրբ պայքարի» մէջ: Եթէ մկրտութեան օծումը խորհրդանշում է կեանքի պայքարի մէջ մտնելու ունակութիւնը, ապա ննջեցեալին օծելը խորհրդանշում է նրա կեանքից հեռանալը: Ննջեցեալի կեանքն աւարտւում է «սուրբ պայքարից» յետոյ: Ննջեցեալի օծումով աւարտւում է մկրտութեան միւռոնով սկսուած քրիստոնեայի կեանքը: Ննջեցեալին օծելու համար Հայկական Եկեղեցին գործածում է միւռոնը՝ նոյն այն նիւթը, որով կատարւում է մկրտութեան օծումը: Նոյնն էր պահանջում Ասորական Եկեղեցին՝ որպէս «օծման իւղ» միւռոնը գործածելու համար[2]: Ննջեցեալի օծման նիւթի միջոցով, որը նոյն միւռոնով պատրաստուած մկրտութեան բալասանն է, անմիջականօրէն ստեղծւում է թէեւ նիւթական, բայց խորհրդաւոր հաղորդակցական յարաբերութիւն սուրբ մկրտութեան հետ:

Քրիստոնէական կեանքի սկիզբն ու վերջը առեղծուածօրէն շաղկապւում են միմեանց: Ըստ Ժ դարի թաղման կանոնակարգի՝ այլեւս չէր ընդունւում աշխարհականի օծումը: Այդ սովորութիւնը մոռացութեան մատնուեց եւ կիրառւում է միայն մահացած քահանայի համար: Ասորական Եկեղեցում, որն այս հարցում եւս հետեւում է Արեւոպագացուն, ննջեցեալի օծման արարողութիւնը գործածութիւնից դուրս է գալիս ԺԳ դարում՝ աւելի ուշ, քան Հայկական Եկեղեցում: Ասորիներն այն կատարում էին ոչ թէ եկեղեցում, այլ գերեզմանի վրայ: Բացի դրանից, այն ընթանում էր հայկական ծէսին հակառակ հերթականութեամբ. սկզբից տրւում էր խաղաղութեան համբոյրը, եւ յետոյ՝ օծումը, ինչպէս այն Անտիոքի Եկեղեցուն յանձնարարում էր Արեւ-

1 **R. W. Thomson,** նշ. աշխ.

2 **W. de Vries,** նշ. աշխ., էջ 212

պագացին: Բար Եբրէոսը նախատում էր, որ արդէն իր ժամանակ ասորական թաղման արարողութեան մէջ անտեսւում էր այդ սովորութիւնը: Օծման իւղի փոխարէն հող էին սփռում դիակի վրայ: Եւ նոյնիսկ օծման իւղն այլեւս անմիջականօրէն չէր դիպչում ննջեցեալ քահանային, այլ պարզապէս այն կաթեցնում էին տապանի վրայ[1]: Սիմէոն Թեսաղոնիկեցին (ԺԵ դ.) իր վերը նշուած մահուան կանոնակարգում նշում է Բիւզանդական Եկեղեցում ննջեցեալի օծման մասին: Դիոնեսիոսի ազդեցութեան տակ նա էլ է դնում մկրտութիւնը եւ ննջեցեալի օծումը միեւնոյն աստուածաբանական շարքում: Ինչպէս եւ ասորիների մօտ, այն կատարուել է գերեզմանատանը[2]: Վրացական ծէսում էլ է առկայ դիակի օծումը, որի ակունքները գալիս են Ժ դարից: Հակառակ հայկական սովորութեան՝ այն կատարւում էր ամբողջ մարմնի վրայ:

Ներածութեան մէջ ակնարկել ենք, որ հայկական թաղման ծէսի ձագումը, զարգացման փուլերը, տարբեր ձեւերն ու աւանդութիւնները ծածկուած են մշուշով: Մաշտոցի հարուստ ու բազմազան աղբիւրագիտական նիւթը, որն ընդհանրապէս վերաբերում է մահուան ծէսին, մինչեւ այժմ էլ ըստ արժանւոյն կարգաւորուած եւ գնահատուած չէ: Դեռեւս հրապարակում չկան Արեւելեան միւս Եկեղեցիների թաղման ծէսին վերաբերող բնագրերի քննական հրատարակութիւնները: Այդ է պատճառը, որ բոլորովին պարզաբանուած չէ դրանց կապը հայկական թաղման ծէսի հետ: Նոյն պատճառով հնարաւոր չի եղել որեւէ գործնական քայլ ձեռնարկել հայկական թաղման ծէսի արարողակարգի համեմատական ուսումնասիրութեան համար: Ինքնուրոյն աշխատանքային կարեւոր բնագաւառ է ներկայացնում նաեւ թաղման աղօթքների, սաղմոսների եւ հիմների թեմատիկ մոտիւների ընտրանին ըստ ասորական եւ բիւզանդական աւանդոյթների: Մեր ակնարկում մենք սոսկ նախնական քննութեան ենք առել եւ մատնանշել, որ քահանայի օծումը հին եւ համընդհանուր կենտրոնական գիծ է ներկայացնում բոլոր արեւելեան թաղման ծէսերում: Այդ արարողութեան արմատները գալիս են հին քրիստոնէական թաղման ծէսից, որն ըստ երեւոյթին ծագում է ուշ անտիկ շրջանի ննջեցեալնե-

1 "Nomokanon", VI, էջ 36-37. հմմտ. **W. de Vries,** նշ. աշխ., էջ 214; **W. de Vries,** Sakramententheologie bei den Nestorianern, Rom, 1947, էջ 251-252:

2 PG 155, էջ 687A. հմմտ. **V. Bruni,** նշ. աշխ., էջ 89, 139:

րի պաշտամունքի մաս կազմող դիախնամքի ձեւերից: Հայկական Եկեղեցին օծման կիրառումն ընդունել է Անտիոքի Ասորական Եկեղեցուց: Փոխանցման ժամկէտը հնարաւոր չէ ճշտել. հաւանաբար գալիս է շատ վաղ ժամանակներից: Այդ է վկայում Արեւելագրացու Թաղման կանոնակարգի յատակ յղումը:

Ամփոփելով՝ անդրադառնանք Ժ դարում աշխարհականի Թաղման ծէսին, որն իր բովանդակութեամբ ամենաուսումնասիրուածն ու համակարգուածն է: Այստեղ էլ կան համայն Արեւելքին բնորոշ դրուագներ, որոնք կամենում ենք առանձնացնել ծիսական հատուածների ամբողջութիւնից, քանի որ դրանք վկայում են աւելի հին ծագման մասին: Գործնական տեսակէտից օգտակար կլինէր սկզբից մի ընդհանուր հայեացք նետել ծէսի ողջ կառուցուածքի վրայ:

Թաղման ծէսը կազմուած է երեք փուլից: Մեռելատանը հարազատները յարդարում են դիակը (Prothesis): Նրանք լուանում եւ հագցնում են հանգուցեալին: Ցետոյ դիակը տեղադրում են դիապատգարակի վրայ: Տեղի է ունենում հսկումը դիակի շուրջը: Այս վերջին սպասաւորութիւններն ուղեկցւում են հանգուցեալի վրայ կատարուող սաղմոսներով, աղօթքներով եւ սուրբգրային ընթերցումներով: Այնուհետեւ հանգուցեալին հանդիսաւոր թափօրով տանում են եկեղեցի եւ դնում եկեղեցու դռան առջեւ: Կատարւում է Եկեղեցու կարգը, որից յետոյ թափօրն ուղղւում է դէպի գերեզմանատուն, որտեղ եւ կատարւում է բուն Թաղումը, եւ քահանան կնքում է գերեզմանը: Հոգեւորականը եւ հարազատները վերադառնում են մեռելատուն եւ աւարտում Թաղման արարողութիւնը սաղմոսերգութեամբ եւ աղօթքներով: Հանդիսութեան շարունակութիւնը մեռելատանը, ըստ Հայկական Եկեղեցու, ամիջականօրէն մտնում է Թաղման արարողակարգի ընթացքի մէջ: Որպէս սփոփանքի եզրափակող փուլ՝ այն լիովին ուղղուած է մերձաւոր ազգականների հոգեկան մխիթարութեանը եւ վերելքին: Արեւելեան Եկեղեցիներից միայն Հայկականն է, որ ճանաչում է արարողակարգի այս յաւելուածը: Քանի որ Եկեղեցին ուսուցանում է կենդանի եւ ննջեցեալ մարդկանց միասնութիւնը, ուստի այդ կապը պէտք է պահպանուած լինի արարողութեան ժամանակ: Դրանով իսկ Հայկական Եկեղեցին կենդանի մարդկանց ներառում է Թաղման կարգի մէջ՝ սգացող համայնքին յատուկ ծիսական մաս յատկացնելով: Դրանով հայկական Թաղման ծէսում ոչ միայն վերջին հոգեկան

պարտքն է տրւում հանգուցեալին, այլեւ հոգու մխիթարութեան խօսքով դիմում են մնացեալներին: Թաղման արարողութեան մէջ ընդգրկուած է նաեւ երկրորդ օրուայ առաւօտեան Թարմ գերեզմանի մօտ հանգուցեալի յիշատակութիւնը: Հին ձեռագրերում այս յիշատակումը կոչւում է «այգալացն»: Անկասկած, այս արտայայտութիւնն ակնարկում է Աւետարանի Յարութեան հատուածը, երբ կանայք այգաբացին գալիս են Քրիստոսի գերեզման՝ Նրան օծելու, եւ տեղը դատարկ են գտնում[1]: Այս իմաստով է Գրիգոր Տաթեւացին մեկնաբանում յաջորդ առաւօտուայ յիշատակումը. «Որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն եւ տեսին յարուցեալ զՔրիստոս, եւ ապա առաքեալքն, նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն եւ ապա՝ արանց, եւ հոգեւոր տեսութեամբ ուրախանալ»[2]: Շնորհիւ Աւետարանի վրայ հիմնուած այս նոր յիշատակման արարողութեան, Հայկական Եկեղեցին առանձնանում է միւս Արեւելեան Եկեղեցիներից: Վերջիններս ընդունում են միայն երրորդ օրուայ յիշատակումը, ինչն ընդհանրապէս պատկանում է քրիստոնէական հնագոյն աւանդոյթների թուին եւ հնում կապակցուել է գերեզմանի մօտ տեղի ունեցող ազապէ խնջոյքների եւ հաղորդութեան հետ[3]:

Ինչ վերաբերում է աշխարհականի Թաղման ծէսին, ապա այստեղ աչքի է ընկնում երեք սաղմոս: Ննջեցեալների յիշատակման քրիստոնէական կարեւորագոյն յատկանիշներից է առատ սաղմոսերգութիւնը: Իբրեւ Թաղման արարողութեան կարեւոր բաղադրամաս՝ սաղմոսները երգւում են նախ մահացածի մահճի մօտ. նրանցով է ուղեկցւում է նաեւ դիակը լողացնելը եւ դագաղ դնելը, այնուհետեւ՝ Թաղման Թափօրը եւ Թաղումը: Հայրաբանական գրականութիւնը մեծարում է սաղմոսերգութիւնը՝ նրա էական յատկանիշը համարելով քրիստոնէական Թաղման ծէսի անջատումը հեթանոսական վայնասունից: Քրիստոնէութեան տարածման վաղ ժամանակներից առանձնանում են որոշա-

---

1 Մարկ. ԺԶ 1-II

2 Ժ 680

3 ԺԳ դարից Հայկական Եկեղեցում ննջեցեալների յիշատակման այդ օրերը ծիսական ձեռագրերում նշուած են առանձին կանոններով: Դրանց հաստատման ժամկէտների կապակցումը ընդհանուր եկեղեցական աւանդոյթին եւ սուրբգրային հիմնաւորումներին տե՛ս իմ թեզում՝ "Kanon der Entschlafenen. Das Begräbnisritual der armenischen Kirche", Osnabrück, 1995:

կի սաղմոսներ՝ թաղման արարողութեանը համապատասխանող բնագրերով: Հնագոյն թաղման աւանդոյթին է պատկանում ՃԺԴ (ՃԺԶ) սաղմոսը: Հապիւ թէ գտնուի մէկ այլ սաղմոս, որն այդքան տարածուած լինի՝ թէ՛ Արեւմտեան, թէ՛ Արեւելեան Եկեղեցիներում: Նրա բովանդակային հարազատութիւնը յուղարկաւորութեան ծէսին անժխտելի է: Դ դարի վերջին այն կայուն տեղ է գրաւում Արեւմտեան եւ Արեւելեան Եկեղեցիների ննջեցեալների յիշատակման արարողութեան մէջ: Անտիոքի աթոռի շրջանակում ստեղծուած առաքելական կանոնները, որոնք հրահանգում են սաղմոսերգութիւնը դիակը գերեզմանատուն տանելու ժամանակ, նշում են այն որպէս մահուան սաղմոս եւ մէջբերում են այնտեղից 7 («Դա՛րձ, ա՜ն ձն իմ, ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ») եւ 15 («Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց Իւրոց»)[1] տները: ԻԲ եւ ԼԱ սաղմոսների հետ միասին այն դաստում է հին քրիստոնէական թաղման սաղմոսների շարքին, որոնց մասին Անտիոքում եւ Կոստանդնուպոլսում քարոզող Յովհան Ոսկեբերանը տեղեկացնում է, որ դրանք երգուել են Զատկի տօնին՝ Տիրոջ Յարութեան ուրախութիւնը թաղման ժամանակ արտայայտելու համար[2]: Սգոյ արարողութեան ժամանակ առաջնային է համարւում «Դա՛րձ, ա՜ն ձն իմ, ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ» տունը՝ իբրեւ ամենատարածուած փոխը սաղմոսերգութեան մէջ: Ըստ երեւոյթին մահուան տառապանքներից եւ սարսափից ազատութիւնը գովերգող սաղմոսը վաղ ժամանակներից է մուտք գործել հայկական թաղման ծէսի մէջ: Արդէն Ե դարում Յովհան Մանդակունին իր «Թուղթ մխիթարութեան վախճանելոց յաշխարհէս» ճառում վկայակոչում է այդ սաղմոսի 7-րդ տունը՝ ընդդէմ հեթանոսական ողբի եւ որպէս մահուան նկատմամբ քրիստոնէական ինքնատիրապետման արտայայտութիւն[3]:

Նոյն ժամանակաշրջանին է վերագրւում իշխան Ատոմ Գնունու եւ նրա հետեւորդների մարտիրոսութեան վարքագրութիւնը, որտեղ նկարագրւում է, թէ ինչպէս նրանք յանուն հաւատի զրկուեցին կեանքից պարսից թագաւոր Հազկերտ Բ-ի (438-457) իշխանութեան ժամանակ: Նաւասարդի 9-ին յիշատակւում է նրանց մարտիրոսութիւնը, որին

1 "Apost. konst.", VI 30, 2-3

2 Hom. de Ss. Mart. Bernicae, Prosdocae et Domina (PG 50, 634); Hom. in Epist. ad Hebr. 4, 5 (PG 63, 43)

3 Յովհաննէս Մանդակունի, Ճշ. աշխ., էջ 172

պատմականօրէն մեծ նշանակութիւն է տրւում[1]: Վարքում նկարագրւում է, թէ ինչպէս հաւատի հայ վկաները նահատակութիւնից առաջ երգում էին ՃԺԴ սաղմոսի սկիզբը: Քանի որ վարքագրական գրականութեան մէջ ընդունուած է ստերեոտիպային գրական ուրուագծի մէջ ներմուծել իրական կառուցուածքային դրուագներ, կարելի է ամենայն հաւանականութեամբ ենթադրել, որ սաղմոսը այս տեղում հին հայկական թաղման ծէսի ինչ-որ աւանդութեան արտացոլումն է: Այդպիսով, մենք կարող ենք պնդել, որ ՃԺԴ սաղմոսը Հայաստանում թաղման արարողութեան ամենահին կտորներից մէկն է: Վանականի եւ աշխարհականի թաղման արարողութիւնը սկսւում է դրանով՝ իբրեւ երախտագիտութեան սաղմոս[2]: Մէկ անգամ էլ այն հնչում է գերեզմանի կարգի ժամանակ: Քահանայի թաղման ժամանակ այն հնչում է հսկման ժամանակ[3]:

Արեւելքի եւ Արեւմուտքի Եկեղեցիների թաղման ծէսերում նոյնպիսի նշանաւոր տեղ է զբաղեցնում Սաղմոսագրքի ամենաերկար՝ ՃԺԸ (ՃԺԹ) սաղմոսը[4]: Այն երգւում է նաեւ հրէական թաղման արարողութեան ժամանակ: Հայ աշխարհականի թաղման կարգում այն ունի իր կայուն տեղը եւ կատարւում է դէպի գերեզմանատուն թաղման թափօրի ճանապարհին[5]: Վանականի թաղման դէպքում այն երգւում է հսկման ժամանակ: Այնուհետեւ այն յայտնւում է երեխաների թաղման կարգում[6]: ՃԺԸ սաղմոսը փառաբանում է Տիրոջ խօսքը, իմաստութիւնը, Նրա պատգամների նշանակութիւնը մարդու կեանքում: Հնչելով գերեզմանի ճանապարհին՝ այն խորհրդաւոր ուժ է ներշնչում թաղման թափօրին՝ դրսեւորելով մարդու կեանքի ուղին, որը նա անց-

1 L. H. Gray, Two Armenian Passions of Saints in the Sasanian Period. The Martyrdom of St. Atom and his Son and of Vars and of Nerseh and of Vardzawar, "Analecta Bollandiana", 67 (1949), էջ 362:

2 Հեղինակը հաւանաբար նկատի ունի զոյգ երկաթագիր Մաշտոցների (ՎՄ ձեռ. N 457, ՄՄ ձեռ. N 1001) արարողութիւնը: Հրատարակուած Մայր մաշտոցում (Կ. Պոլիս, 1807) ՃԺԴ սաղմոսը երգւում է միայն գերեզմանի կարգի ժամանակ (խմբ.):

3 Տե՛ս նախորդ դիտողութիւնը (խմբ.):

4 Հմմտ. R. Kaczynski, նշ. աշխ., էջ 812-819; D. H. Touliatos-Banker, The Byzantine Amonos Chant of the 14th and 15th Centuries, Thessalonike, 1984, էջ 109 եւ յետ.:

5 Մայր մաշտոցում ՃԺԸ սաղմոսով սկսում է Այգուցի կարգը (խմբ.):

6 Տե՛ս նախորդ դիտողութիւնը (խմբ.):

նում է Աստուծոյ օրէնքին հնազանդ՝ ի վերջոյ տեղափոխուելով երկրային աշխարհից երկնայինը: Հին Եկեղեցում այդ սաղմոսը պէտք է որ հասկացուէր իբրեւ Քրիստոսին ուղղուած հաւատարմութեան աղօթք Նրան ամէն ինչում հետեւողի կողմից: Քրիստոնեայի վարքագծին նուիրուած այս քարոզախրատական սաղմոսի աստուածաբանական եւ բարոյագիտական մեկնաբանութիւնը մեծ ազդեցութիւն է թողել Եկեղեցու վարդապետութեան վրայ: Հին Եկեղեցու հայրերի կողմից այն ենթարկուել է մանրակրկիտ մեկնողական պարզաբանումների եւ ծանօթագրութիւնների[1]: Բիւզանդական թաղման ծէսում եւս այս սաղմոսն ունեցել է նոյն կարեւորութիւնը, ինչ որ հայկականում: Այնտեղ նա կատարուել է եկեղեցում՝ երեք մասի բաժանուած: Ենթադրւում է, որ այն բիւզանդական թաղման ծէս է անցել Աւագ շաբաթի կանոնից[2]: Հաւանաբար Արեւպագացու ժամանակաշրջանում այն երգուել է մեռելատանը՝ հսկման ժամանակ: Հայկական թաղման արարողութիւնն ընդգրկում է նաեւ ՁԳ սաղմոսը, որը նոյնպէս հին քրիստոնէական թաղման սաղմոսներից մէկն է: Աստուծոյ հանդէպ կարօտի մոտիւով այս ուխտանուէր սաղմոսը եկեղեցում բացում է աշխարհականի թաղման կարգը: Քահանայի թաղման ժամանակ այն հնչում է երկար տեւողութիւն ունեցող հսկման ժամանակ[3]: Բիւզանդական հնագոյն թաղման արարողութեան հսկման ժամանակ այն երգւում էր որպէս փոխ ԻԲ եւ ԻԳ սաղմոսների[4]:

Թաղման արարողութեան անբաժանելի մասն են աղօթքները: Քարոզների հետ միասին դրանք սկզբից եւեթ պատկանում են քրիստոնէական թաղման ծէսի հիմնական տարրերին: Արդէն նշուեց, որ հայկական ծէսում սաղմոսների գործածութիւնն աւանդաբար սերտօրէն աղերսուած է Արեւելեան Եկեղեցիների ծէսում սաղմոսների կիրառութեան հետ[5]: Ակներեւաբար կարիք է առաջանում մոտիկից լուսաբանել թաղման կարգի աղօթքների առնչակցութեան խնդիրը տարբեր ե-

1 Հմմտ. **M. Harl/G. Dorival,** La chaine palestinienne sur le Psaume 118, Paris, 1972 (Sources Chrétiennes 189/190):

2 **V. Bruni,** նշ. աշխ., էջ 171 եւ յետ.

3 Մայր մաշտոցն այս մասին որեւէ ցուցում չի տալիս (խմբ.):

4 **V. Bruni,** նշ. աշխ., էջ 119, 173

5 Հմմտ. **B. Botte,** Les plus anciennes formules de prière pour les morts, "La maladie et la mort du chrétien dans la liturgie", Rom, 1975, էջ 83-99:

կեղեցիների աւանդութեան մէջ: Այս բազմաբնոյթ նիւթից պէտք է առանձնացնել մէկ աղօթք, որն ընդհանրացած է քրիստոնէական համընդհանուր աւանդութեան մէջ: Այդպիսին է «Աստուած հոգւոց եւ ամենայն մարմնոց» աղօթքը, որն, ըստ հայկական ծիսարանի, ասւում է տան կարգի ժամանակ: Դա քրիստոնէութեան աղօթական մշակոյթի եւ արեւելաքրիստոնէական թաղման կարգի ընդհանուր աւանդութեան հնագոյն նմուշներից է[1]: Հազիւ թէ գտնուի քրիստոնէական Արեւելքում աւելի հին կամ նման լայն տարածում ունեցող աղօթք: Այն առկայ է եթովպական[2], ղպտական[3], ասորական[4] եւ բիւզանդական[5] ծէսերում: Ննջեցեալների կարգի հին եկեղեցական ծիսական բնագրերում, մինչ այս աղօթքի վերջնական ձուլումը Արեւելեան Եկեղեցիների թաղման կանոնակարգի հետ, զգացւում են աղօթքի նախորինակից որոշ կառուցուածքային շեղումներ: Սերապիոն Թմուիսացու Աղօթագրքում, Առաքելական կանոններում եւ Արեւպագացու թաղման հրահանգներում այն դիտւում է որպէս աղօթքի համընդհանուր ձեւ: Բացի այդ, այս աղօթքի հետ վաղ ծանօթութեան մասին են վկայում Նուբիայի եւ Եգիպտոսի տարածքում գտնուած բազմաթիւ քրիստոնէական տապանագրերը: Դրանք թոյլ են տալիս այն տանել մինչեւ Գ դար[6]: Այս աղօթքը ծագումով պատկանում է ասորա-անտիոքեան ծէսին[7], բայց այն ննջեցեալների թաղման կարգի բիւզանդական աւանդութեան մասն է կազմում: Ը-Թ դարերից սկսած՝ այն շարունակ, գրեթէ առանց բնագրային փոփոխութեան փոխանցւում է բիւզանդական հսկման արարողութեանը[8]: Եւ այս աղօթքը հայկական ծէս է փո-

1 Հմմտ. **A. Baumstark,** Ein frühchristliches Totengebet des griechischen Ostens, "Hochland", 14 (1916), էջ 129-140:

2 **J. Guidi,** Due antiche preghiere nel rituale abissino dei defunti, "Oriens Christianus", 9 (1911), էջ 22-23

3 **O. H. E. Burmester,** The Egyptian or Coptic Church, Kairo, 1967, էջ 203

4 **Rowell,** նշ. աշխ., էջ 56

5 **V. Bruni,** նշ. աշխ., էջ 146 եւ յետ.

6 **H. Junker,** Die christlichen Grabsteine Nubiens, "Zeitschrift für ägiptische Sprache und Altertumskunde", 60 (1925), էջ 128-134, 139-143:

7 **V. Bruni,** նշ. աշխ., էջ 157

8 Աւելի ուշ է որոշուել նրա ճշգրիտ տեղը պաշտօնական թաղման կանոնակարգում (**M. Arranz,** Les prières presbyterales de la Pannychis de l'ancien Euchologe byzantin et la Panikhida des défunts, "Oriens Christianus Periodica", 41, 1 (1975), էջ 127, 138):

խանցուել հէնց բիւզանդական ծէսից: Այս աղօթքի ընտրութիւնը հայկական ծէսում բիւզանդական աւանդութիւնից պայմանաւորուած է նրա հնութեամբ եւ Արեւելքում ննջեցեալների համար կատարուող աղօթքների մէջ ունեցած արտօնեալ դիրքով: Դա է եղել թաղման կարգի ամենաճանաչուած աղօթքը գրեթէ ամէնուր, ուր իր ազդեցութիւնն է թողել բիւզանդական աւանդութիւնը: Այսպիսով, հայերը եւ բիւզանդացիները ընդգրկուած են միեւնոյն աւանդութեան ծիրի մէջ: Հայկական ծէսի մէջ այս աղօթքն առաջին անգամ հանդիպում է աշխարհականի թաղման կանոնակարգում: Այլ վկայութիւններ այս հին աղօթքի տարիքի, փոխառման կամ որեւէ այլ գործածման վերաբերեալ չունենք: Այսպիսով, հնարաւոր չէ որեւէ եզրակացութիւն անել թաղման ծիսակատարութեան մէջ նրա ներգրաւման ժամանակի մասին: Ստորեւ համեմատութեան համար բերում ենք աղօթքի ամենահին ու լիակատար յունարէն բնագիրը (Cod. Vat. Barber. gr. 336, Ը-Թ դդ.)[1] եւ նրա զուգահեռը ամենահին հայկական թաղման կանոնակարգից (Ժ դ.)[2].

«Աստուած հոգւոց եւ ամենայն մարմնոց, որ զմահ խափանեցեր եւ զսատանա[յ] կոխեցեր եւ աշխարհի կեանս պարգեւեցեր, հանգո՛ զհոգիս ծառայիս Քո ի տեղւոջ լուսոյ եւ ի տեղւոջ հանգստեան, ուստի ի բաց մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք: Եւ ամենայն մեղաց առ ի սմանէ գործելոց՝ եթէ բանիւ եւ կամ գործով եւ կամ մտածութեամբ, Դու, որպէս բարերար եւ ողորմած Աստուած, թողութի՛ւն շնորհեա սմա, վասն զի ով է մարդ, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ: Զի Դու միայն ես առանց մեղաց, եւ արքայութիւն յաւիտենից եւ բանք Քո ճշմարիտ են, զի Դու ես կեանք եւ յարութիւն ամենայն ննջեցելոց, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս [յաւիտենից. ամէն]»:

Ὁ θεὸς τῶν πνευμάτων καὶ πάσης σαρκὸς ὁ τὸν θάνατον καταργήσας καὶ τὸν διάβολον καταπατήσας καὶ ζωὴν τῷ κόσμῳ χαρισάμενος ἀνάπαυσον τὴν ψυχὴν τοῦ δούλου σου ἐν τόπῳ φωτεινῷ ἐν τόπῳ ἀναψύξεως ἔνθα ἀπέδρα ὀδύνη λύπη καὶ

1 Հմմտ. J. Goar, Euchologion sive Rituale Graecorum, Venedig, 1730 (Reprint Graz 1960), էջ 424:

2 ՎՄ ձեռ. N 457, էջ 88ա-88բ

στεναγμὸς πᾶν ἁμάρτημα παρ᾽αὐτοῦ πραχθὲν ἐν λόγῳ ἢ ἔργῳ ἢ κατὰ διάνοιαν ὡς ἀγαθὸς καὶ φιλάνθρωπος συγχώρησον ὅτι οὐκ ἔστι ἄνθρωπος ὃς ζήσεται καὶ οὐχ ἁμαρτήσει σὺ γὰρ μόνος πάσης ἁμαρτίας ἐκτὸς ὑπάρχεις καὶ ἡ δικαιοσύνη σου δικαιοσύνη εἰς τὸν αἰῶνα, κύριε καὶ ὁ λόγος σου ἀλήθεια ὅτι σὺ εἶ ἡ ζωὴ καὶ ἀνάστασις τῶν κεκοιμημένων καί σοῦ τὴν δόξαν.

Երկու եկեղեցիների թաղման ծէսերում նման սերտ ազգակցութիւնը գրեթէ բառացի ներդաշնակութեամբ՝ թերեւս բացառութիւն է: Կառուցուածքային եւ իմաստային տեսանկիւնից՝ նրանք հիմնովին տարբերւում են միմեանցից: Արդէն նշուած թաղման զանազան կանոնակարգերի առաջացման ժամանակագրական տարբերութիւնից բացի, ուշագրաւ է նաեւ, որ հայկական ծէսը շատ աւելի մեծ թուով ընթերցումներ եւ սաղմոսներ ունի, քան բիւզանդականը: Եւ որպէս ակնյայտ իւրայատկութիւն պէտք է նշել, որ հայկական թաղման ծէսը պարունակում է մահուան տարբեր աղօթքների մի ամբողջ շարք: Վկայակոչուած աղօթքն ընդամէնը շատերից մէկն է: Ընդհակառակը՝ բիւզանդական ծէսում այն գլխաւորում է մահուան աղօթքների կանոնը: Յաճախ աղօթքն ինն անգամ կրկնւում է ժամանակակից յունական թաղման արարողութեան ժամանակ:

Թաղման կարգն ուշագրաւ է նաեւ քննել սուրբգրային ընթերցուածքների տեսանկիւնից: Էական հրահանգներ է տալիս Պողոս առաքեալը մահուան եւ յարութեան վերաբերեալ[1]: Յովհաննու Աւետարանի Ե 24-30 գրուագի հետ միասին այն առանձին ընթերցուածք է կազմում թաղման կարգի մէջ: Մենք կամենում ենք մատնանշել այս ընթերցուածքը որպէս հին եկեղեցական աւանդութեան երրորդ տարր: Որքան հին են գրուագները, այնքան աւելի լայն տարածում են գտել ննջեցեալների կարգի մէջ: Դրանց ընտրութիւնը Հայկական Եկեղեցում կապուած է վաղ քրիստոնէական մի շարք եկեղեցիներում ընդունուած աւանդութեան հետ: Այս միասնական ընթերցուածքը, որը համընդհանուր տարածում է գտել ԺԲ դարին վերաբերող աշխարհականի թաղման հայկական կանոնում[2], մտնում է նաեւ Սիմէոն Թեսա-

1 Տե՛ս Ա Թես. Դ 13-18:

2 Հնագոյն ձեռագրերում յղում է Յովհ. Ե 19-30 աւետարանական հատուածը:

ղոնիկեցու բիւզանդական հսկման աւանդական ընթերցումների կարգի մէջ[1]: Միաժամանակ այն բիւզանդական ննջեցեալների կարգի հնագոյն ընթերցում-միաւորն է: Եւ թէպէտ բիւզանդական թաղման կանոնախմբերը առատ աստուածաշնչային ընթերցուածքներ են պարունակում, այն իր կայուն տեղն ունի[2]:

Երկու տեղիներն էլ պատկանում են ննջեցեալների արեւելաքրիստոնէական կարգի սկզբնապաշարին: Ը դարում Երուսաղէմը դրանցով էր յիշատակում իր ննջեցեալներին՝ պահքի սկզբին՝ շաբաթ օրը մսի արգելմամբ (τῆς τυροφάγου): Նման ընթերցումները, որպէս իրար կապակցուած միասնութիւն, կարդացուել են արդարների եւ մեղաւորների յիշատակման ժամանակ[3]: Այս ընթերցումները, սակայն, աւելի վաղ ժամանակներում եւս ծառայել են ննջեցեալների յիշատակմանը: Ե դ. սկզբների հայկական Ճաշոցը վկայում է ծիսական ընթերցումների գործածումը Երուսաղէմում: Հայերին ձգում էր քրիստոնէութեան Սրբազան քաղաքը, եւ այնտեղից էին վերցնում կարեւոր ծիսական ազդակները: Այսպէս՝ Թեսաղոնիկեցիների Թղթի ընթերցուածքը կարդացւում է Աւագ շաբաթին նախորդող վերջին շաբաթ օրը՝ Ղազարոսի յարութեան տօնին, երբ Ղազարոսի յարութեան նախօրինակի հետ միասին յիշատակւում են նաեւ ննջեցեալները[4]: Այս աւանդոյթն ընդունել է նաեւ վրացական թաղման ծէսը՝ ԺԱ դարից հետեւելով Երուսաղէմի թաղման կարգին: Հետեւաբար զարմանալի չէ, երբ ննջեցեալների յիշատակման այս հնագոյն եւ ծանրակշիռ աւանդութեանը հանդիպում ենք նաեւ ասորական եւ զպտական ծէսի մէջ:

Հայկական թաղման ծէսը ինքնածին ծիսական նորութիւն չէ: Մագումով այն կապուած է հնագոյն քրիստոնէական ծէսի հետ եւ բազմաշերտանոց մի աւանդութիւն է ներկայացնում: Նրա զարգացման պատմութեան մէջ իւրովի նշանակութիւն է ունեցել երկու գործօն՝ թաղման ծէսի տեղական ձեւերի շարունակութիւնը քրիստոնէական կրօնի մեկնաբանութեամբ եւ այնուհետեւ՝ եկեղեցական արարողութեան հանրապաշարից ժառանգուած ու Նոր Կտակարանի վրայ

1 PG 155, էջ 681-683

2 Հմմտ. V. Bruni, նշ. աշխ., էջ 119, 167 եւ յետ.:

3 M. Tarchnischvili, Le grande lectionnaire de l'église de Jerusalem (V-VIII siècle), Louvain, 1959, I, էջ 45, II, էջ 70

4 A. Renoux, Le Codex Arménien Jerusalem, 121, II, Turnhout, 1971, էջ 255

յենուող ննջեցեալների կարգի ընդունումը: Այդպիսով, բուն հայկական թաղման արարողութիւնը, իրեն բնորոշ ինքնատիպ գծերով շաղկապուելով դրացի քրիստոնեայ ժողովուրդների թաղման ծէսում ընդհանրացուած ձեւերի հետ, ստացել է իր վերջնական եւ անկրկնելի նկարագիրը:

Ծէսի պատմութեան ուսումնասիրութիւնն ամենից առաջ իր ուշադրութիւնը բեւեռել է հաղորդութեան խորհրդի ծիսակարգի վրայ: Սակայն հայկական ննջեցեալների կարգի հարուստ եւ բազմազան աւանդոյթը ցարդ մնացել է անտեսուած: Հոգեւոր բեկման արդի պատմաշրջանում, երբ աթէիստական ուսմունքին պարտադրուած իշխանութիւնները ետ են մղուած, հնարաւորութիւն է ստեղծուել եկեղեցական աւանդութեան նորովի ընկալման համար: Այսօրուայ մտաւոր եւ հոգեւոր շրջադարձի շնորհիւ աստուածաբանութեան մէջ իր տեղը գտաւ նաեւ հայկական հարուստ ծէսը, որից մենք ընդամէնը մի քանի դրուագ լուսաբանեցինք՝ փորձելով այն հանել մոռացութիւնից եւ խթանել նրա գործնական վերապրումը:

Գերմաներէնից թարգմանեցին
Ազատ Բոզոյեանը,
Ժասմեն Մեհրաբեանը

Արտակ աբեղայ Տիգրանեան

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄՈՒՏՔ

Սրբազան աւանդութիւնը Եկեղեցու գաղափարաբանական ու աստուածաբանական հիմքերից մէկն է: Այն բովանդակում է բազում դաւանաբանական դիրքորոշումներ ու վերջնական ձեւակերպումներ եւ, որպէս այդպիսին, ներկայ է Եկեղեցու կեանքում ինչպէս անցեալում, այնպէս էլ այժմ: Հնարաւոր չէ ընկալել Եկեղեցու ամբողջական նկարագիրը՝ առանց ճանաչելու նրա սրբազան աւանդութիւնները, քանզի նրանք իրենց մէջ պարունակում են այն պատմական հիմքերն ու ստորին շերտերը, որոնց վրայ է բարձրանում Եկեղեցու վերնաշէնքը:

Սրբազան աւանդութեան վրայ հիմնուած գլխաւոր ծիրերից մէկը եկեղեցական պաշտամունքն է, մասնաւորապէս՝ տօնագիտութիւնը: Եկեղեցում նուիրագործուած բազմաթիւ տօներ ունեն աւանդական հիմք, որոնց ետեւում թաքնուած պատմական յենքն անշուշտ չի կարելի անտեսել: Ըստ այդմ՝ մեծ կարեւորութիւն ու անհրաժեշտութիւն ունի, այս խնդրին այսօրուայ նորագոյն մօտեցումներով եւ նորովի մեկնաբանութիւններով մօտենալով հանդերձ, հիմնականում պահպանել այն կարեւորն ու աւանդականը, որը փոխանցուել է Եկեղեցու միջոցով եւ դիմացել դարերի փորձութիւններին: Հայ Եկեղեցուն բաժին ընկած ծանր ճակատագրի բերումով բազմաթիւ աստուածաբանական, ծիսագիտական, տօնագիտական շերտեր կրել են զգալի ձեւափոխումներ ու խեղումներ, ենթարկուել են անտեղի կրճատումների կամ չպատճառաբանուած ծանրաբեռնումների, որոնք զգալիօրէն ազդել են գաղափարների ճիշտ ընկալման եւ ընդունման վրայ: Եւ նման երեւոյթը միայն այս վերջին հարիւրամեակով չի պատճառաբանուած, այլ իր արմատներով հասնում է շատ աւելի վաղ դարաշրջանների, քանզի Հայ Եկեղեցին, իր գոյութեան ողջ ընթացքում կենաց-մահու կռիւ մղելով, ստիպուած էր դիմագրաւել զանազան բացայայտ ու թաքուն յարձակումներին, որոնք չէին կարող իրենց բացասական ազդեցութիւնը չթողնել:

Մենք այստեղ փորձելու ենք կատարել Հայ Եկեղեցու տաղաւար տօներից մէկի՝ Խաչվերացի աւանդական հիմքի քննական վերլուծութիւնը մատենագրական տուեալների ու բանասիրական հետազօտութիւնների հիման վրայ: Այս աշխատութեան գրութեան շարժառիթը եկեղեցականների շրջանում տօնի վերաբերեալ զանազան իրարամերժ կարծիքների առկայութիւնն է, որոնք երբեմն ընդունում են բացայայտ վիճաբանական կեցուածք: Իւրաքանչիւր կողմն իր տեսակէտը ձգտում է հաստատել այս կամ այն մատենագրի կամ եկեղեցական հեղինակութեան գրաւոր վկայութեամբ, որն առաւել եւս դժուարացնում է օբյեկտիւ մօտեցումը այս հարցին: Ուստի, եթէ որեւէ մէկը փորձում է ծանօթանալ Խաչվերացի պատմութեանն ու դրան վերաբերող տարբեր հեղինակների կարծիքներին, անպայմանօրէն շփոթութեան ու երկընտրանքի մէջ է ընկնում: Հարցը Խաչվերացի տօնի ծագման կամ այդ տօնի ետեւում թաքնուած պատմական անդրադարձն է, որի նկատմամբ միանշանակ կեցուածք չկայ ո՛չ ներկայումս, ո՛չ անցեալում, ո՛չ էլ անգամ Ընդհանրական Եկեղեցու միւս յարանուանութիւններում: Ուստի այստեղ մենք փորձելու ենք ցոյց տալ Խաչվերացի տօնի մասին հայ մատենագրութեան մէջ գոյութիւն ունեցող տարբեր աւանդութիւնները, ապա՝ քննական մօտեցման ձգտումով հանդէս գալ մի ընդհանուր եզրակացութեամբ, որը գուցէ շատերի համար ընդունելի չի լինի, սակայն, թւում է, օգտակար կլինի այս կամ այն կարծիքն ընդունելու կամ մերժելու խնդրում: Ըստ այդմ՝ մեր ընտրած նիւթը թերեւս չի կարող լայն էջեր ընդգրկել, սակայն մեր նպատակը ոչ թէ ծաւալուն նիւթ ներկայացնելն է, այլ փորձել այս հարցի վերաբերեալ սպառիչ ու վերջնական պատասխան տալ համապատասխան քննութեամբ ու վերլուծութեամբ: Առաւելագոյնս փորձել ենք խուսափել կրկնութիւններից ու այն փաստերի սոսկական մէջբերումներից, որոնք վաղուց անտի յայտնի են բանասիրութեանն ու եկեղեցագիտութեանը:

Մեր աշխատանքի ընթացքում ուսումնասիրել ենք այս հարցին վերաբերող աւանդութիւններ ու կարծիքներ պարունակող մեզ յայտնի բոլոր ձեռագիր ու տպագիր աշխատութիւնները, որոնց հիման վրայ էլ դասակարգել ենք աւանդութիւնների մի քանի շերտեր:

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենք մեր ուսումնասիրութեան ընթացքում հայկական ձեռագիր ու տպագիր աղբիւրներում խաչվերացի տօնակատարութեան մասին հանդիպեցինք ընդհանուր թուով չորս աւանդապատումների, որոնք թէեւ միմեանցից տարբերւում են իրենց պատմական հիմքով, սակայն մօտ են իրենց խորհրդական բովանդակութեամբ: Սոյն աւանդութիւնները ներկայացնում ենք ըստ ժամանակագրական յաջորդականութեան:

Ա. Պատրոնիկէ թագուհու եւ Յակոբոս Տեառնեղբօր հետ կապուած աւանդութիւնը

Հայ մատենագրական աղբիւրներում խաչվերացի տօնակատարութեան աւանդութեան մասին կայ հետեւեալ հետաքրքիր պատմութիւնը, որին չենք հանդիպում ո՛չ Օրթոդոքս, ո՛չ էլ Կաթոլիկ Եկեղեցու աւանդապատումների մէջ: Սոյն պատմութիւնը մի քանի ձեռագրերի համեմատութեամբ հրատարակել են Մխիթարեան հայրերը հետեւեալ վերտառութեամբ. «Սուրբ առաքելոյն Թադէոսի յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին, որ յաւուրս Յակոբու առաքելոյն ի ձեռն Թագուհւոյն Պատրոնիկէ, որ էր կին Կղաւդեայ կայսեր Հռովմայեցւոց»[1]: Մի շարք ձեռագրերի հիման վրայ լրացրել ենք նաեւ որոշ հատուածներ, որոնք բացակայում են Մխիթարեանների հրատարակած բնագրում: Աւանդութիւնը իր հիմնական գծերով հետեւեալն է:

Յիսուսի հրաշափառ Համբարձումից յետոյ Քրիստոսի կենարար խաչափայտը գտնւում էր Գողգոթայում՝ անխնամ, լքուած ու մոռացուած: Յակոբոս Տեառնեղբօր՝ Երուսաղէմի անդրանիկ եպիսկոպոսի օրօք, գարնանային մի օր, մանկական խաղի ժամանակ մի կաղ մանուկ պատահաբար դիպչում է Քրիստոսի խաչափայտին եւ բժշկւում: Պատահարի մասին շուտով իմանում է ողջ Երուսաղէմը, եւ ամէն կողմից կաղեր, կոյրեր ու բորոտներ են գալիս Գողգոթա եւ բժշկւում: Ապա Յակոբոս Տեառնեղբայրը իր խնամքի տակ է վերցնում խաչափայտերը, սակայն հրեաները յափշտակում են դրանք եւ տեղադրում տաճարի «Գեղեցիկ» կոչուած դռան մօտ: Այստեղ եւս շարունակւում

1 Տե՛ս «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց», Գ, «Անկանոն գիրք առաքելականք», Վենետիկ, 1904, էջ 453-461:

են բժշկութեան հրաշքները[2]*:*

Հրեաներից ոչ ոք չէր հասկանում, թէ խաչափայտերից որ մէկն է հրաշագործում: Գուցէ սա է դառնում պատճառը, որ նրանք երեք խաչերն էլ տանում եւ թաքցնում են Քրիստոսի յարութեան այրի մէջ, որտեղ «լոյս հրաշալի ելանէր ընդ ծերպ վիմին»[3]*: Ապա նոյն հրեաները Տիրոջ գերեզմանի մուտքի մօտ կանգնեցնում են Աֆրոդիտէի արձանը, որպէսզի պատահած բոլոր հրաշքները վերագրեն նրան:*

Այս ընթացքում Հռոմի կայսր Կլաւդիոսի կինը՝ Պատրոնիկէն, Հռոմում Պետրոս առաքեալի շնորհիւ քրիստոնեայ է դառնում՝ կռապաշտութիւնից հրաժարուելով եւ մկրտութիւն ընդունելով: Ապա Պետրոսի յորդորներով Հռոմից Երուսաղէմ է գալիս իր երեք որդիների եւ երկու դուստրերի հետ՝ երկրպագելու տէրունական վայրերին: Սուրբ քաղաքում Թագուհին հանդիպում է Յակոբոս Տեառնեղբօրը եւ մեծ ցնծութեամբ տէրունական վայրերը շրջելուց յետոյ մտահոգւում է խաչափայտի տեղով: Յակոբոսը Թագուհուն զեկուցում է բոլոր անցուդարձերի մասին՝ վկայելով հրեաների կողմից բացայայտ թշնամանքի մասին[4]*: Առաքեալի պատմութիւնից վշտացած՝ Թագուհին իր մօտ կանչել է տալիս հրեայ մեծամեծներին ու քահանաներին եւ պատուիրում. «Տո՛ւք ի ձեռս Յակովբայ եւ ընկերաց նորա զԳողգոթայն եւ զգերեզմանն եւ զխաչափայտ նորա, եւ մի՛ ոք իշխեսցէ արգելուլ զնոսա ըստ պաշտման սպասաւորել տեղեացն սրբութեան»*[5]*: Ապա Թագուհին իր ողջ շքախմբով գնում է դէպի Տիրոջ գերեզմանը, որտեղ հրեաները մաքրում ու բաց են անում շիրիմը եւ այնտեղ գտնում երեք խաչափայտերը: Եւ մինչ խորհում էին, թէ որ մէկը կարող է լինել Քրիստոսի խաչափայտը, Թագուհու դուստրերից մէկը յանկարծամահ է լինում: Եւ մինչ Թագուհին ծնկաչոք աղօթում էր իր մահացած դստեր համար, Թագուհու աւագ որդին այն միտքն է արտայայտում, թէ այս մահը աստուածային նախախնամութեամբ էր, որպէսզի յայտնի դառնայ Տիրոջ խաչափայտը:*

Արքայազնի խօսքերը հաճելի են թւում Թագուհուն ու Յակոբո-

2 «Ցայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706, էջ 305

3 ՄՄ ձեռ. N 5228, «Պատմութիւն վերացման խաչին»

4 ՄՄ ձեռ. N 4716, էջ 275բ

5 «Թանգարան...», էջ 455

սին, եւ մահացած արքայադստեր վրայ յաջորդաբար դնում են խաչափայտերն ու աղօթում: Առաջին խաչափայտը ոչ մի ազդեցութիւն չի թողնում[6]: Իսկ երկրորդ խաչափայտի դէպքում արքայադուստրը կենդանութեան նշաններ է սկսում ցոյց տալ, որով հասկանում են, որ սա աջակողմեան աւազակի խաչափայտն էր[7]: Այնուհետեւ արքայադստեր վրայ են դնում երրորդ խաչափայտը: Եւ մինչ կամենում էին աղօթել, խաչի յանկարծակի հպումից աղջիկը յարութիւն է առնում, որը տեսնելով՝ ամէնքը խոնարհւում ու երկրպագում են կենարար խաչափայտին: Ապա թագուհին խաչափայտը յանձնում է Յակոբոս Տեառնեղբօրը եւ պատուիրում եկեղեցիներ կառուցել Գողգոթայում, գերեզմանի վայրում եւ այլ տեղերում:

Հուսկ յետոյ թագուհին վերադառնում է Հռոմ՝ խաչափայտից մասունք տանելով իր հետ[8]: Իսկ Յակոբոս առաքեալը խաչափայտը տեղադրում է եկեղեցում եւ, Ծաղկազարդից սկսած մինչեւ սեպտեմբերի 14-ը, ամէն կիրակի առաւօտեան ու երեկոյեան այն համարձակօրէն դուրս էր հանում եւ բարձրացնում: Եւ այդ «վերացման» ժամանակ Յակոբոսն արտասանում էր «Խաչի Քո Քրիստոս...» փառաբանութիւնը, որն էլ յետագայում մտաւ ծէսի մէջ[9]: Դրանից յետոյ խաչափայտը դրւում է եկեղեցու սրբարանում մինչեւ յաջորդ Ծաղկազարդ:

Իսկ Քրիստոսի խաչելութիւնից 38 տարի յետոյ, երբ Կլաւդիոս կայսրն ու Պատրոնիկէ թագուհին մահացել էին, հրեաները, օգտուելով Ներոնի հալածանքներից, սպանում են Յակոբոսին, իսկ խաչափայտն էլ կրկին նետում են Գողգոթայի աղբերի մէջ եւ այդ տեղը վերածում աղբանոցի: «Եղեւ կատարումն սրբոյն Յակոբայն առաքելոյ եղբօր Տեառն յամի Տեառն 60՝ յերեսներորդ ամի եպիսկոպոսութեան իւրոյ»[10]: Փրկչի խաչափայտը մնում է աղբերի մէջ շուրջ 300 տարի, մինչեւ որ Կոստանդիանոս բարեպաշտ կայսեր օրօք վերստին

6 ՄՄ ձեռ. N 2756 ժողովածուի մէջ կայ մի երկարաշունչ աղօթք, որը բացակայում է միւս ձեռագրերում: Վերջինս հետաքրքիր է իր տեսակի մէջ:

7 ՄՄ ձեռ. N N 4716, 2756

8 ՄՄ ձեռ. N 5228

9 ՄՄ ձեռ. N 4716, էջ 276ա-277ա

10 «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», Վենետիկ, 1810 (=«Վարք սրբոց»), էջ 1006:

գտնում է այն:

Խաչվերացի տօնակատարութիւնն, ըստ այս աւանդութեան, հաստատուած է Յակոբոս Տեառնեղբօր կողմից եւ յետագայում միայն վերականգնուել է:

Բ. Կոստանդիանոս կայսեր տեսիլքը

Հռոմի Կոստանդիանոս կայսրը գոթերի դէմ պատերազմելու եւ Մաքսիմիանոսի բռնակալութեանը վերջ դնելու նպատակով զօրաժողով է գումարում: Կոստանդիանոսը, որ կիսում է իր հօր՝ Կոստասի բարեհաճութիւնը քրիստոնեաների նկատմամբ, ընդհանրապէս անտարբեր էր կրօնական հարցերի վերաբերեալ: Եւ մինչ երթի ընթացքում խորհում էր պատերազմի վախճանի ու ելքի մասին, յանկարծ մայրամուտից առաջ յայտնապէս երկնքում երեւում է խաչի լուսեղէն նշանը՝ «Սովաւ յաղթեսցես» մակագրութեամբ: Այս տեսիլքը երեւում է՝ ոչ միայն կայսրին, այլեւ ողջ զօրքին: Ըստ Եւսեբիոս Կեսարացու՝ այս դէպքը տեղի է ունեցել 312 թ. հոկտեմբերին[11]: Աւանդութեան համաձայն՝ նոյն գիշեր Քրիստոս երազում յայտնւում է կայսրին եւ պատուիրում նրան՝ ասելով. «Արա՛ զնմանութիւն տեսակ նշանիդ եւ ընդդէմ թշնամեացն կալ իբրեւ զդրօշ անպարտելի»[12]: Արթնանալով՝ Կոստանդիանոսն իր մօտ է հրաւիրում ոսկեգործ արհեստաւորների եւ բացատրում նրանց պատրաստուելիք դրօշի ձեւը, որն ամբողջովին պէտք է պատրաստուէր ոսկով ու թանկարժէք քարերով[13]: Ապա այդ դրօշի ներքոյ Կոստանդիանոսը պարտութեան է մատնում Մաքսենտիոսին, որից յետոյ «զքրիստոնէութիւնն յամենայնի վարէր քրիստոնէաբար»[14]:

Ըստ ոմանց՝ Խաչվերաց տօնի հիմքը Կոստանդիանոս կայսեր այս տեսիլքն է[15]:

11 «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 652-653

12 Սոկրատ Սքոլաստիկոս, Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897, էջ 4

13 «Վարք սրբոց», էջ 275

14 Սոկրատ Սքոլաստիկոս, նշ. աշխ., էջ

15 Գաբրիէլ Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 503

Գ. Հեղինէ թագուհու կողմից խաչի գիւտը եւ Ս. Յարութեան տաճարի կառուցումը

«Քանզի Շապուհ աղաչեաց զյաղթողն Կոստանդիանոս խնդրել զհաշտութիւն եւ հաստատել խաղաղութիւն մշտնջենաւոր, զոր արարեալ սրբոյն Կոստանդիանոսի՝ յետ այնորիկ առաքեաց զՀեղինէ զմայր իւր Երուսաղէմ ի խնդիր պատուական խաչին»[16]:

Ուրեմն, ըստ Խորենացու վկայութեան, Կոստանդիանոսը հաշտութիւնից յետոյ իր մօրն է ուղարկում՝ Քրիստոսի խաչափայտը գտնելու: Թագուհին սուրբ երկիր է մեկնում զօրքով ու մեծ փառքով: Նրա նպատակը, սակայն, ոչ միայն խաչափայտը գտնելն էր, այլեւ «շինել սուրբ տեղիսն», ինչը նրան յայտնուել էր տեսիլքի միջոցով: Երուսաղէմ հասնելուն պէս աստուածասէր թագուհին սկսում է խաչափայտի որոնումները: Այս առիթով իր շուրջն է հաւաքում մօտ հինգ հազար հրեաների եւ պատուիրում. «Արդ, ընտրեցէ՛ք ի ձէնջ, որ քաջ գիտեն զօրէնս»[17]: *Այդ անձնաւորութիւնը պէտք է ծանօթ լինէր պատմութեանը եւ կարողանար ցոյց տալ խաչերի թաղուած վայրը: Երկար փնտրտուքից յետոյ հրեաները գտնում են Յուդա անունով մէկին*[18], *որը բաւական ծանօթ էր պատմութիւններին, սակայն հրաժարւում էր տեղը ցոյց տալ, որպէսզի չդաւաճանի հայրենի աւանդութեանը: Հրեաները, սակայն, երկիւղելով թագուհուց, մատնանշում են Յուդային, որը սկզբում հրաժարւում է այն պատճառաբանութեամբ, թէ վայրի մասին չգիտէ, քանզի այդ ժամանակ ծնուած չի եղել: Այնուամենայնիւ վեց օր «անսուաղ» բանտարկութիւնից յետոյ նա թագուհուն առաջնորդում է Գողգոթա, որտեղ աղօթքով դիմում է Աստծուն, որպէսզի իրենց յայտնուի «թաքնուած գանձը»*[19]: *Աւանդութեան համաձայն՝ Յուդայի աղօթքի ժամանակ ցնցւում է երկիրը, եւ սկսում է խունկի անուշ հոտ բուրել, ի տես որի Յուդան բացականչում է. «Դո՛ւ ես Քրիստոս՝ Փրկիչ աշխարհի»:*

16 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1981, գիրք երկրորդ, էջ 288

17 ՄՄ ձեռ. N 4716, էջ 278բ

18 Ըստ գրաւոր աւանդութիւնների՝ Յուդան սերում էր Ստեփանոս Նախավկայի տոհմից (ՄՄ ձեռ. N 4716, էջ 275, N 2756, էջ 38, ինչպէս նաեւ՝ «Վարք սրբոց», էջ 198): Սակայն այստեղ ակնյայտ անախրոնիզմ գոյութիւն ունի, քանզի Յուդայի եւ Ստեփանոսի միջեւ ընդամէնը երեք սերունդ է տեղադրւում:

19 ՄՄ ձեռ. N 2756, էջ 100բ

Հրեաներին ոգեւորելու համար թագուհին հրամայում է ոսկեդրամներ նետել աղբի մէջ, որպէսզի դրանք հանելու հետ մէկտեղ մաքրուի նաեւ Գողգոթան երկար տարիների աղտեղութիւններից: «Իբրեւ թիզս քսան» (չորս մետր) փորելուց յետոյ ի յայտ են գալիս երեք խաչափայտեր, որոնք ծածկուած էին անուշահոտ ուհհան խոտով, որոնք բոլոր էին հողի տակ եւ պարուրել խաչափայտերը՝ վերջիններիս զերծ պահելով հողից, աղբից ու փտումից[20]: *Ուրախութեանը յաջորդում է տարակուսանքը, թէ որը կարող է լինել Տիրոջ խաչափայտը: Այդ ժամանակ մօտով յուղարկաւորութեան թափօր էր անցնում, որը տանում էր մեռեալ մի պատանու: Փրկչական խաչը գտնելու համար Յուդան խաչափայտերը հերթով դնում է պատանու վրայ: Առաջինի պարագային ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունենում, երկրորդի ժամանակ մեռեալը կենդանութեան նշաններ է սկսում ցոյց տալ, իսկ երրորդի դէպքում պատանին յարութիւն է առնում եւ ոտքի կանգնում*[21]:

Թագուհին հրամայում է Քրիստոսի խաչափայտը պատել ոսկով ու պատուական քարերով, ապա սկսում է տնօրինական տեղերում եկեղեցիներ կառուցել: Յուդան մկրտւում է եւ վերանուանւում Կիւրեղ կամ Կիրակոս, որից յետոյ քահանայ է ձեռնադրւում եւ ապա եպիսկոպոս դառնում Պաղեստինի վիճակներից մէկի վրայ[22]:

Քրիստոսի ս. գերեզմանը, Գողգոթան կ. միւս մերձակայ սրբավայրերն իր մէջ ընդգրկող Ս. Յարութեան մեծաշուք տաճարի կառուցումից յետոյ Հեղինէ թագուհին մեծաշուք հանդիսութեամբ տէրունական խաչափայտը բարձրացնում եւ տեղադրում է Գողգոթայի հատուածում եւ տօն է հաստատում սեպտեմբերի 14-ին[23]:

Դ. Խաչափայտի գերեվարութիւնը Պարսկաստան եւ վերադարձը Երուսաղէմ

Պարսից Սասանեան Որմիզդի սպանութիւնից յետոյ թագաւորու-

20 ՄՄ ձեռ. N 4716, էջ 280ա

21 Այստեղ ակնյայտ է նմանութիւնը առաջին աւանդապատումի հետ՝ Պատրոնիկէ թագուհու հետ կապուած:

22 Թորգոմ արքեպս. Գուշակեան, Սուրբք եւ տօնք, Անթիլիաս, 1981, էջ 39

23 Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741 (=«Ամառան»), էջ 535

թիւնը եւ գահը փոխանցում են նրա մանկահասակ որդուն՝ Խոսրովին:

Այս Խոսրով արքայի թագաւորութեան տասնչորսերորդ տարում[24] Թրակիայի կողմերի բիւզանդական զօրքը Փոկաս անունով մէկի գլխաւորութեամբ ապստամբում է եւ, առաջանալով դէպի Կոստանդնուպոլիս, սպանում է Մորիկ կայսրին իր թագաւորութեան քսաներորդ տարում[25]: Կայսերական ծիրանին հագնում է Փոկասը: Սպանուած Մորիկ կայսեր կնոջ՝ Զաֆիրանի միջոցով[26], որ Խոսրովի քոյրն էր, լուրը հասնում է պարսից արքային եւ ցնցում նրան: Խոսրովը վճռում է լուծել Մորիկ կայսեր վրէժը: Ցունաց երկիր է ուղարկում իր զօրավար Խորեանին մեծ զօրքով հանդերձ, որն էլ, հասնելով Կոստանդնուպոլիս, մեծ աւերածութիւններ է հասցնում քաղաքին: Ապա այդ նոյն զօրքով մօտենում է Երուսաղէմին, հիմքից փորում եւ կործանում է պարիսպները, տասնինն օրուայ ընթացքում գրաւում է քաղաքը եւ երեք օրում սրի քաշում բնակչութեան մեծ մասին:

Ըստ Թովմա Արծրունու՝ այս ամէնը տեղի է ունենում «մարգաց ամսի 19-ին», Խոսրով թագաւորի գահակալութեան քսանհինգերորդ տարում[27], այսինքն՝ խաչափայտի գերեվարութեան տարում, որն է 614 թ.[28]: Քաղաքը հիմնայատակ կործանելուց եւ բնակչութեանը սրի քաշելուց յետոյ գերութեան է քշում Պարսկաստան նաեւ հազարաւոր մարդկանց, որոնց մէջ են լինում բազում քահանաներ եւ ժամանակի Զաքարիա հայոց պատրիարքը: Եւ, ինչպէս պատմիչն է վկայում, «ի նախատինս Հերակլի» գերում է նաեւ Փրկչի խաչափայտը եւ տեղադրում մեհեանում[29]:

Եւ քանի որ Խոսրով արքան յունական մասում բազում աւերածութիւններ էր կատարում, կայսրութեան գահ բարձրացած Հերակլ բարեպաշտ կայսրը հաշտութիւն կնքելու համար խաղաղութեան պատգամաւորներ է ուղարկում Պարսից երկիր: Իսկ Խոսրով արքան Հերակլին պատասխանում է այսպէս. «Ոչ կարեմ հաշտութիւն առնել ընդ քեզ, եթէ ոչ թողցես զխաչարս քրիստոնէութեան»[30]: Խոսրովի վերաբերմունքից եւ նման պատասխանից զայրացած՝ Հերակլ կայսրը հրամայում է շուտափոյթ զօրք հաւաքել: Այդ զօրաժողովին իրենց մասնակցութիւնն են բերում նաեւ Հայաստանի յունական մասից շատ հայեր, որոնց զօրավար է նշանակւում Մժեժ Գնունին:

627-ի դեկտեմբերին Զաբ գետի հովտում եւ Նինուէ քաղաքի մօտակայքում ճակատամարտ է տեղի ունենում[31] Հերակլ կայսեր ղեկավարած բանակի ու պարսից զօրքի միջեւ, որտեղ էլ Հերակլը վերջնական պարտութեան է մատնում պարսից բանակին: Երբ Խոսրովին հասնում է իր բանակի պարտութեան լուրը, նա, անմիջապէս փախուստի դիմելով, անցնում է Դկաթ[32] գետով եւ հաստատւում Վեհկաւատում[33]: Ցունաց բանակը, պաշարելով պարսից մայրաքաղաքը, աւերում է այն եւ հրկիզում արքունի պալատը: Այդ ժամանակ Խոսրով արքայի որդին՝ Կաւատը, իր հօր թագաւորութեան երեսունութերորդ տարում սպանում է նրան եւ որպէս պարսից արքայ բազմում գահին[34], սակայն՝ ընդամէնը վեց ամիս: Սրա մահից յետոյ գահը ժառանգում է իր մանկահասակ որդին՝ Արտաշիրը[35]: Հերակլ կայսրը, տեղեկանալով պարսից արքունիքում տեղի ունեցած խառնաշփոթութիւնների մասին, պատգամաւորներ է ուղարկում Խորեան զօրավարի մօտ՝ առաջարկելով նրան պարսից գահը, հաշտութեան եւ գերութեան մէջ տասնչորս երկար տարիներ մնացած Քրիստոսի կենսատու խաչի վերադարձը: Համաձայնելով յունաց կայսեր առաջարկին՝ Խորեանը փնտրել է սկսում խաչափայտը եւ գտնելուն պէս անմիջապէս վստահելի մարդկանց միջոցով 628 թ. Պարսկաստանից Կարին քաղաքով ուղարկում է Կոստանդնուպոլիս[36]:

24 Թովմա Արծրունի, Պատմութիւն Արծրունեաց տան, Երեւան, 1985, էջ 141

25 Նոյն տեղում

26 ՄՄ ձեռ. N 4716, էջ 281ա

27 Թովմա Արծրունի, նշ. աշխ., էջ 143

28 Միքայէլ Չամչեան, Հայոց պատմութիւն, Վենետիկ, 1786, Գ, էջ 60, նաեւ՝ Թորգոմ արքեպս. Գուշակեան, նշ. աշխ., էջ 262

29 Միքայէլ Չամչեան, նշ. աշխ., Բ, էջ 324

30 Նոյն, էջ 325

31 Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, 1959, Ա, էջ 663

32 Տիգրիս գետի սեմական անունն է:

33 Կամ Վեհկաւատատ. քաղաք Բաղդադից մօտ 18 կմ հարաւ՝ Սասանեանների մայրաքաղաք Տիզբոնի դիմաց, Տիգրիս գետի հանդիպակաց աջ ափին. տե՛ս Թովմա Արծրունի, նշ. աշխ., էջ 519:

34 Միքայէլ Չամչեան, նշ. աշխ., Բ, էջ 326, նաեւ՝ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 664

35 Թովմա Արծրունի, նշ. աշխ., էջ 153, 519

36 Թորգոմ արքեպս. Գուշակեան, նշ. աշխ., էջ 262

Քրիստոսի կենսատու խաչափայտով թափորը, որը Պարսկաստանից դէպի Կոստանդնուպոլիս էր ուղեւորւում, դադար առնելու համար կանգ է առնում Արտազ գաւառում: Այդ միջոցին խաչափայտին երկրպագելու եւ ընծաներ մատուցելու նպատակով Արտազ է գալիս Սիւնեաց Բիւրեղ իշխանուհին: Հերակլ կայսրը, տեսնելով Սիւնեաց տիկնոջ հաւատն ու նուիրումը, ասում է. «Արդ, խնդրի՛ր ինձանից ինչ կկամենաս, եւ ես կհատուցեմ քեզ»: Իսկ Բիւրեղ տիկինը, որ Տիրոջ խաչափայտին երկրպագելու էր եկել, դիմելով արքային՝ ասում է. «Եւ արդ, ի՛մ արքայ, եթէ գտից զշնորհս առաջի քո, ի պարգեւացդ, զոր ունիս դու, տո՛ւր ինձ»[37]: Կայսրը դժուարանում է կատարել տիկնոջ խնդրանքը: Ըստ աւանդութեան՝ այդ ժամանակ այնտեղ էր գտնւում ճգնազգեաց եւ փիլիսոփայ Յովհան Մայրավանեցին, որը Հերակլից պատուով է ընդունւում: Յովհան վարդապետի հարցին, թէ՝ «զիա՞րդ ոչ կարացեր տալ տիկնոջն զհատուածս նորա»[38], կայսրը պատասխանում է, թէ՝ չհամարձակուեցի սուր մօտեցնել կենսակիր խաչին: Եւ Յովհան վարդապետի միջոցով է, որ Բիւրեղ տիկինը ստանում է իր ցանկալի խաչի մասունքը:

Եւ իշխանուհին, ուրախութեամբ վերցնելով մասունքը, վերադառնում է տուն: Սուրբ խաչի եւ կայսեր պատուին նա զոհաբերում է երեք հարիւր երինջ, հարիւր ոչխար ու հարիւր նոխազ եւ կայսրին օգնելու համար տալիս երեք հարիւր սպառազինուած ձիաւորներ:

Եւ մինչդեռ տիկինը Հացունեաց կոչուած դաշտով իր բնակավայր՝ Սիւնեաց աշխարհ էր գնում, մի հրաշք է տեղի ունենում, որով հասկանում են, որ խաչի մասունքը պէտք է ամփոփուի Հացունեաց դաշտում եւ տաճար կառուցուի: Ապա տիկինը, հասնելով Սիւնեաց աշխարհ, պատմում է աստուածային հրաշքների եւ սուրբ խաչի զօրութիւնների մասին: Եւ ամէն տարի ի պատիւ այս իրադարձութեան խաչի տօն է կատարում:

Հերակլը այդ թանկագին սրբութիւնն անվնաս ստանալուց եւ երեք տարի Պոլսում պահելուց յետոյ, «632 թուականին անձամբ, յաղթական կառքի մէջ ծնկաչոք բռնած, Երուսաղէմ բերաւ եւ սեփական ուսերի վերայ մեծ հանդիսիւ Գողգոթայի գլուխը բարձրացնելով

37 ՄՄ ձեռ. N 4716, էջ 283ա

38 Նոյն տեղում

կրկին դրաւ («վերացրեց») Ս. Յարութեան վերանորոգուած տաճարի մէջ ի տես բոլոր քրիստոնեաների»[39]: Այս ժամանակուանից սկսած՝ մեծ հանդիսութեամբ սկսուեց տօնուել խաչի վերացման յիշատակը ամէն տարի սեպտեմբերի 14-ին:

ՔՆՆԱԿԱՆ ՄՕՏԵՑՄԱՆ ՓՈՐՁ

Այժմ փորձենք քննել իւրաքանչիւր աւանդապատումն առանձին-առանձին:

1. Առաջին աւանդութիւնը, որը խարսխուած է Յակոբոս Տեառնեղբօր ու Պատրոնիկէ կայսրուհու անձերի վրայ, բացակայում է քոյր եկեղեցիների աւանդապատումների մէջ: Յամենայն դէպս, Խաչվերացի մասին մեզ հասանելի կաթոլիկ եւ օրթոդոքս հեղինակների ուսումնասիրութիւնների մէջ մենք չհանդիպեցինք այդ մասին որեւէ ակնարկութեան[40]: Սակայն, անշուշտ, հեռու ենք այս մասին վերջնական կարծիք յայտնելու յաւակնութիւնից:

Ինչ վերաբերում է Հայ Եկեղեցուն, արդէն իսկ տեսանք, որ այս աւանդութիւնն իր տիրական ներկայութիւնն է պահպանել դարերի ընթացքում եւ համարուել Խաչվերացի տօնակատարութեան հիմքը: Ս. Գրիգոր Տաթեւացին ինքը հակուած է ընդունելու այս աւանդութիւնը որպէս ամենաառաջնայինն ու հիմնականը Խաչի վերացման տօնի առնչութեամբ[41]: Մաղաքիա արքեպս. Օրմանեանը վերապահումով է յիշում այս աւանդութիւնը՝ աւելի հաւանական համարելով, որ թերեւս Յակոբոս Տեառնեղբայրը խաչի նմանութեամբ շինած քառաթեւով է կատարել օրհնութեան արարողութիւնը[42]: Թորգոմ արքեպս. Գուշակեանը թէեւ յիշում է այս աւանդութիւնը, սակայն թերահաւատութեամբ է մօտենում այս խնդրին, քանզի, իր կարծիքով, «հրէից կողմէ քրիստոնէից դէմ մղուած բուռն հալածանքներուն պատճառաւ հնար

39 «Արարատ», 1895, էջ 324

40 **Архиепископ Фадей Успенский,** В день Воздвижения Животворящего Креста Господня, "Журнал Московской Патриархии" (ЖМП), 1990, сентябрь; **В. Введенский,** Тайна Креста, "The Oxford Dictionary of the Christian Church", Oxford, 1978

41 «Ամառան», էջ 534

42 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան,** Միսակեան բառարան, Երեւան, 1992, էջ 23

չէր բուն խաչափայտը հանել Գողգոթայի աղբիւրներէն»[43]:

Սակայն նշուած վերապահումներն այնքան էլ իրական պատճառաբանութեամբ չեն արուած, քանի որ ոչ մի անհաւանական իրողութիւն չկայ այն փաստի մէջ, որ առաքեալները կարող էին տիրանալ Տիրոջ խաչափայտին, քանզի դժուար թէ այն հետաքրքրութիւն ներկայացնէր հրեաների համար: Հետեւաբար այս աւանդութեան վերաբերեալ թերահաւատութեան հիմքը այստեղ չէ, որ պէտք է փնտրել: Միւս կողմից՝ եթէ խաչափայտի որոնման աշխատանքները գլխաւորում էր Հռոմէական կայսրութեան տիրուհին, հրէական որեւէ ընդդիմութեան մասին խօսք անգամ լինել չի կարող:

Նախ քննենք աւանդութեան մէջ դեր խաղացող պատմական դէմքերին: Պատմագիտութեան մէջ յստակ է, որ Կլաւդիոս կայսրը Պատրոնիկէ անունով կին չի ունեցել: Կլաւդիոս կայսրը (41-54)[44] *յաջորդաբար ամուսնացել է երեք կանանց հետ, որոնցից ոչ մէկի անունը Պատրոնիկէ չի եղել: Այս կանանց անունները՝ Էլիա Պետինա, Վալերիա Մեսսալինա, Ագրիպպինա Կրտսեր, որեւէ ձեւով կապուած չեն կարող համարուել Պատրոնիկէ անուան հետ: Բացի այդ, այս երեք կանանցից միայն վերջինն է զաւակներ պարգեւել Կլաւդիոսին՝ երկու դուստր եւ մէկ որդի, եւ ոչ թէ՝ երեք որդի եւ երկու դուստր, ինչպէս տեսնում ենք աւանդութեան մէջ*[45]: *Ուստի Կլաւդիոս կայսրը Պատրոնիկէ անունով կին չի ունեցել, իսկ ունեցած կանայք էլ որեւէ ձեւով որեւէ տեղում չեն յիշւում որպէս քրիստոնէութեան յարած անձնաւորութիւններ, այլ ընդհակառակը՝ յայտնի են եղել իրենց անառակ վարքով: Ինքը Կլաւդիոսը նոյնպէս ոչ մի հակում չի ունեցել քրիստոնէութեան նկատմամբ:*

Այնուամենայնիւ, արդեո՞ք Պատրոնիկէ կայսրուհու անձի ետեւում թաքնուած է աւելի նուազ համբաւ ունեցող ժամանակակից իշխանուհիներից մէկը, թէ՞ այստեղ շփոթուած են Հեղինէ թագուհու հետ կապուած իրադարձութիւնները. դժուար է ասել: Սակայն խաչի գիւտի հետ կապուած որոշակի մանրամասնութիւնների (ինչպէս օրինակ՝ մեռեալի յարութեան հետ կապուած փոքրիկ դետալները) բացարձակ նմանութիւնը մեզ մղում է այն կարծիքին, որ, իրօք, այստեղ գործ ունենք երեք դար յետոյ կատարուած դէպքը Ա դարում՝ Յակոբոս Տեառնեղբօր օրօք տեղի ունեցած իրողութեան հետ շփոթելու հետ:

Սակայն այստեղ հնարաւոր չէ անտեսել Հայ Եկեղեցու սրբազան աւանդութեան մաս կազմող մէկ այլ պատում: Խօսքը վերաբերում է ս. Հռիփսիմեանց հետ կապուած աւանդութեանը: Սրբազան աւանդութեան միանշանակ տեղեկութեամբ՝ «սուրբ տիկնայքն Գայիանէ եւ Հռիփսիմէ ի գալն իւրեանց յերկիրն Հայոց ունէին մասն ինչ ի Քրիստոսի խաչափայտէն, զոր տարաւ Պատրոնիկէ տիկինն ի Հռոմ՝ կինն Կղոդեա կայսեր. եւ զի էր սուրբն Հռիփսիմէ թոռն նորա, կապեցին զայն ի պարանոց նորա՝ պահապան կուսին»[46]: *Ըստ այլ աղբիւրների՝ ս. Գայիանէն նոյնպէս «էր ի նոյն ցեղէ»*[47]:

Ս. Հռիփսիմէն ու ս. Գայիանէն Հայաստան են եկել նախքան Հեղինէի կողմից խաչի գիւտը: Ըստ այդմ՝ եթէ նախապէս խաչի գիւտ տեղի չէր ունեցել, ուրեմն ս. Հռիփսիմէն չէր կարող իր հետ խաչի մասունք ունենալ: Սակայն ս. Հռիփսիմէի բերած մասունքը այնքան տիրական ներկայութիւն ունի Հայ Եկեղեցու ծիսակարգի ու տօնացոյցի մէջ (չմոռանանք, որ Վարագայ Ս. Խաչի տօնը նուիրուած է այս մասունքի գիւտի յիշատակին), որ վերջինիս մերժումը կարող է հարցականի տակ դնել Եկեղեցու սրբագործած մի շարք աւանդութիւններ: Ուստի մենք հակուած ենք ենթադրելու, որ կա՛մ մինչեւ Հեղինէ կայսրուհին խաչի մասնաւոր գիւտ տեղի էր ունեցել, կա՛մ առաքեալներից ոմանք իրենց հետ մասունքներ էին վերցրել խաչափայտից, որոնցից մէկն էլ այս կամ այն ճանապարհով հասել էր Հռոմ: Երկու տեսակէտներն էլ բացարձակապէս մերժելի չեն, եւ երկուսն էլ հաւանական են:

Աւանդութեան մէջ ներկայ միւս պատմական դէմքը՝ Յակոբոս Տեառնեղբայր առաքեալը, ժամանակակիցն է Կլաւդիոս կայսեր: Նա նահատակուել է մօտ 61 թ. հրեայ ընդդիմադիրների կողմից[48], *որի ակնարկութեանը մենք հանդիպում ենք աւանդութեան մէջ: Ըստ*

43 Թորգոմ արքեպս. Գուշակեան, Ն. աշխ., էջ 260-261

44 Проф. В. В. Болотов, Лекции по истории древней церкви, СПб., 1907, էջ 46

45 Սուքտոնիոս, Տասներկու կեսարների կեանքը. Կլաւդիոս, Երեւան, 1986, էջ 175-202

46 «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, էջ 96

47 «Վարք սրբոց», էջ 223

48 Տե՛ս Newman, A Manual of Church History, Philadelphia, 1910, էջ110:

այդմ՝ աւանդութեան մէջ Յակոբոս Տեառնեղբօր առկայութիւնը հնարաւոր չէ անախրոնիզմ համարել: Այստեղ միայն կարելի է շփոթ նկատել ժամանակների ու անձերի միջեւ, որն էլ հաւանական է, քանզի Պատրոնիկէ-Հեղինէ զուգահեռի հետ նկատելի է նաեւ Յակոբոս-Մակարիոս (վերջինս պատրիարքն էր Հեղինէի ժամանակ եւ խաչի բարձրացման գլխաւոր գործող անձն էր) զուգահեռի բացարձակ նմանութիւնը:

Օրմանեանի կարծիքն այն մասին, թէ բացարձակապէս անհրաժեշտ չէ մտածել, որ Յակոբոսը վեր բարձրացրեց բուն խաչափայտը, այլ այն կարող էր լինել սոսկ խաչի նշան, բացատրութիւն գտնելու փորձերից մէկն է[49]: Հետեւաբար, եթէ մինչեւ իսկ խաչի գիւտի նկատմամբ մերժողական կեցուածք ընդունենք, միանշանակ կերպով չենք կարող մերժել այն հաւանականութիւնը, որ, իրօք, Յակոբոս Տեառնեղբայրը կատարած լինի մի որոշակի արարողութիւն՝ խաչի նշանի հետ կապուած, թէեւ ծիսական խորհրդանիշերի օգտագործումը Ա դարում այնքան էլ հաւանական չէ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ.

ա) Արժանահաւատ համարելով ս. Հռիփսիմեանց աւանդութիւնը՝ կարելի է եզրակացնել, որ նախքան Հեղինէի կողմից խաչի գիւտը մի մասնաւոր գիւտ է տեղի ունեցել, կամ էլ առաքեալների կողմից խաչից մասունքներ են վերցուել նախքան խաչի կորուստը:

բ) Յակոբոս Տեառնեղբօրը վերագրուող խաչափայտի վերացման աւանդութիւնը մերժման այլ հիմք չունի, բացի յետագայում կատարուած իրական վաւերական դէպքի հետ ունեցած նմանութիւնից: Այնուամենայնիւ բացառուած չէ, որ խաչի նշանի նման բարձրացում տեղի ունեցած լինի նախքան խաչի գիւտը:

գ) Խաչվերացի տօնի ընթացքում երգուող «Խաչի քո Քրիստոս» մաղթանքն ուղղակիօրէն ակնարկում է այն մասին, որ Խաչվերացի ծիսական հիմքում իրօք ներկայ է մի այսպիսի աւանդութիւն:

դ) Այնուամենայնիւ մինչեւ խաչի գիւտը ոչինչ չի կարելի ասել նման տօնակատարութեան գոյութեան մասին: Աւելին, կարելի է գրեթէ վստահութեամբ ասել, որ նման տօն միայն խաչի գիւտից յետոյ է

49 Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Միտական բառարան, էջ 23:

հաստատուած: Ուստի Խաչվերացի տօնը, առաջին դարին վերաբերող աւանդութեան հաւանական հիմքեր ունենալով հանդերձ, առաքելական շրջանին չի պատկանում:

2. Ակնարկութիւններ Կոստանդիանոսի կողմից խաչի տեսիլքի աւանդութեան մասին, որպէս Խաչվերացի տօնի հիմքի, բացակայում են: Այս մասին խօսում է միայն հ. Գաբրիէլ վրդ. Աւետիքեանը: Վերջինիս համաձայն՝ Խաչվերացի տօնը ոմանց կարծիքով հաստատուել է այս դէպքի յիշատակութեան նպատակով[50]: Այս մասին, սակայն, մատենագիրների մօտ ոչ մի ակնարկութիւն չկայ: Ոչ մի արտայայտութեան չենք հանդիպել նաեւ օտար հեղինակների մօտ: Ուստի միանշանակ կերպով կարող ենք ասել, որ Կոստանդիանոսի տեսիլքը որեւէ կապ չունի Խաչվերացի տօնի հաստատման հետ: Վերջինիս առնչութիւնը միայն այն է, որ այս դէպքը պատճառ դարձաւ, որպէսզի Հեղինէ կայսրուհին հետաքրքրութիւն ցուցաբերէր խաչափայտի նկատմամբ եւ մեկնէր Պաղեստին՝ գտնելու այն:

3. Հեղինէ թագուհու կողմից խաչափայտի գիւտի պատմական վաւերականութիւնը ոչ մի կասկած չի յարուցում: Այս մասին բազմաթիւ վկայութիւններ կան ժամանակակիցների մօտ: Խաչի գիւտի մասին վկայում են Սոկրատ[51] եւ Սոզոմէն[52] պատմիչները, Ռուփինոսը[53], ս. Կիւրեղ Երուսաղէմացին[54], ս. Յովհան Ոսկեբերանը[55] եւ ուրիշներ: Այն տեղի է ունեցել մօտ 325-326 թթ.՝ Երուսաղէմի Մակարիոս պատրիարքի օրօք:

Օտար աւանդութիւնները միանշանակ կերպով վկայում են, որ խաչի գիւտը տեղի է ունեցել մայիսի 3-ին: Երկրպագութեան շտապող բազմահազար ժողովրդի խնդրանքով Մակարիոս պատրիարքը բարձրացրել՝ «վերացրել» է խաչը, մինչ ժողովուրդը միաբերան «Տէր, ողորմեա» է բացականչել: Օրթոդոքս աղբիւրները վկայում են, որ Խաչվերացի տօնի հիմքն այստեղ է, եւ այս ժամանակ է հաստատուել

50 Գաբրիէլ Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 503

51 Սոկրատ Սքոլաստիկոս, Եկեղեցական պատմութիւն, Ա 17

52 Սոզոմէն, Եկեղեցական պատմութիւն, Բ 1

53 Ռուփինոս, Եկեղեցական պատմութիւն, Ժ 7-8

54 Կիւրեղ Երուսաղէմացի, Յանախապատում ճառք, Դ, Ժ, ԺԳ

55 Ս. Յովհան Ոսկեբերան, Եսայու գրքի մեկնութիւնը, տե՛ս "Творения", հտ. 6, էջ 169:

այն, որը տօնուել է մայիսի 3-ին[56]:

335 թ. սեպտեմբերի 13-ին կատարուել է Ս. Յարութեան տաճարի մեծաշուք օծման հանդէսը, որի Գողգոթայի բաժնում վեհաշունչ արարողութեամբ բարձրացուել ու տեղադրուել է Քրիստոսի խաչափայտը: Շուտով սեպտեմբերի 14-ը, որն ընդունուել է որպէս տօնական օր, դուրս է մղել մայիսի 3-ին, եւ այսուհետ Խաչվերացի տօնը սկսել է կատարուել սեպտեմբերի 14-ին[57]:

Ասուածից պարզ է դառնում, որ, ըստ Օրթոդոքս Եկեղեցու տեսակէտի, Խաչվերացի տօնը հաստատուել է Մակարիոս պատրիարքի կողմից՝ Հեղինէ թագուհու գիւտից անմիջապէս յետոյ: Մինչդեռ տօնի կատարման ժամանակը վերջնականապէս ճշտուել է այդ գիւտից մօտ տասը տարի անց:

Ինչպէս խաչի գիւտը, այնպէս էլ Ս. Յարութեան տաճարի կառուցումը պատմական անժխտելի իրողութիւններ են, ուստի այստեղ վերապահութիւն կարող է լինել սոսկ Խաչվերացի տօնի հաստատման վերաբերեալ:

Հայկական աղբիւրներն իրենց աւանդապատումների մէջ չեն շեշտում Մակարիոս պատրիարքի կողմից խաչի բարձրացումը կամ Ս. Յարութեան տաճարի կառուցումը, սակայն տօնի հիմքը խաչի գիւտի հետ կապելով՝ դա ինքնըստինքեան հասկացւում է:

Դաւիթ Անյաղթի «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր» Խաչի ճառը հնուց անտի ընդունւում է որպէս վաւերական վկայութիւններից մէկը այն մասին, որ Խաչվերացի տօնը հաստատուած էր Հայ Եկեղեցում արդէն իսկ Դ դարում[58]:

«Մանուէլի կանոնում», որի թուականը դժուար է որոշել, խօսւում է Կոստանդիանոսի օրօք Խաչի տօնը սեպտեմբերի 14-ին հաստատելու մասին[59]:

Ս. Գրիգոր Տաթեւացին յիշում է Հեղինէի կողմից խաչի գիւտի մասին, որից յետոյ «աստուածասէր դշխոյն հրամանաւ որդւոյն իւրոյ Կոստանդիանոսի մեծափառ տենչանօք շինէ ի սուրբ տեղիսն հրաշազան եկեղեցիս եւ կարգէ տօն նաւակատեաց խաչի եւ եկեղեցւոյ ի միասին ի սեպտեմբերի տասնեւչորս, զոր եւ տօնեմք, զոր եւ Խաչվերաց անուանեմք»[60]: Սակայն, ինչպէս արդէն նշեցինք, նա հակուած է Խաչվերացի տօնի հաստատումը հասցնել մինչեւ Յակոբոս Տեառնեղբայր[61]:

Գաբրիէլ վրդ. Աւետիքեանը նոյնպէս հպանցիկ յիշում է տաճարի կառուցման ու խաչի տեղադրման մասին՝ առանց քննական մօտեցման[62]:

Մաղաքիա արքեպս. Օրմանեանը խօսում է Ս. Յարութեան տաճարի կառուցումից յետոյ խաչի բարձրացման ու տեղադրման մասին, սակայն դարձեալ որեւէ քննական մօտեցում չի ցուցաբերում[63]: Նոյնը կարելի է ասել նաեւ Թորգոմ արքեպս. Գուշակեանի պարագային[64]:

Որպէս ամփոփում՝ կարելի է եզրակացնել, որ.

ա) Հաշուի առնելով օրթոդոքս աղբիւրների միաձայն վկայութիւնը՝ պէտք է ընդունել, որ խաչի գիւտից անմիջապէս յետոյ տեղի է ունեցել խաչի «վերացում»՝ ժողովրդին երկրպագելու հնարաւորութիւն տալու համար:

բ) Սա չի նշանակում, սակայն, որ այս ժամանակ խաչի գիւտի տօնից բացի մի առանձին տօն է հաստատուել՝ խաչի բարձրացմանը նուիրուած:

գ) Ս. Յարութեան տաճարի կառուցումից յետոյ Գողգոթայում խաչափայտի բարձրացումն ու տեղադրումը անվիճելի է:

---

56 **В. Введенский**, Праздник Воздвижения Креста Господня, ЖМП, 1958, т. 9, էջ 57

57 Այս մասին կարելի է տեսնել նաեւ **Диакон Владимир Ригин**, Всемирное Воздвижение Честного и Животворящего Креста Господня, ЖМП, 1978, т. 9, էջ 67, ինչպէս եւ՝ **Архиепископ Фадей Успенский**, նշ. աշխ., ЖМП, 1990, т. 9, էջ 56:

58 **«Վարք սրբոց»**, էջ 1089

59 **«Կանոնագիրք Հայոց»**, Երեւան, 1971, Բ, էջ 294

60 **«Ամառան»**, էջ 534

61 Նոյն, էջ 535

62 **Գաբրիէլ Աւետիքեան**, Բացատրութիւն շարականաց, էջ 503

63 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Միսկան բառարան, էջ 23

64 **Թորգոմ արքեպս. Գուշակեան**, նշ. աշխ., էջ 261

դ) Ս. Յարութեան տաճարի օծման ու Խաչվերացի տօնակատարութեան թուականների նոյնութիւնը աներկբայ կերպով վկայում է այն մասին, որ վերջինս եթէ չի հաստատուել աւելի վաղ, ապա անպայման հաստատուել է այս ժամանակ:

ե) Յետագայում Խաչվերացի տօնակատարութիւնը դուրս է մղել Ս. Յարութեան տաճարի օծման յիշատակը:

զ) Հայ Եկեղեցում Խաչվերացի թափօրի ժամանակ ս. խաչի նշանի զարդարումը ռեհանի թարմ տերեւներով խօսում է այն մասին, որ խաչի գիւտի յիշատակը ներկայ է Խաչվերացի տօնակատարութեան մէջ:

է) Շարականոցում Խաչվերացի տօնի կանոնում խաչի գիւտի բազմիցս յիշատակութիւնը, միւս կողմից՝ գերութեան ու դարձի մասին ակնարկութեան բացարձակ բացակայութիւնը հիմք են տալիս միանշանակ կերպով յայտարարելու, որ Հայ Եկեղեցում Խաչվերացի տօնը արմատաւորուել է է դարից շատ առաջ: Այս մասին է վկայում նաեւ Դաւիթ Անյաղթի ճառը:

ը) Խաչի գիւտի մէկ այլ առանձին տօնի գոյութիւնը՝ մի կողմից, Մակարիոս պատրիարքի անուան ու Ս. Յարութեան տաճարի կառուցման մոռացութիւնը՝ միւս կողմից, առիթ են հանդիսացել, որպէսզի Հեղինէի օրօք կատարուած դէպքերի արձագանքը կապուի առաքելական շրջանի հետ եւ հասցուի մինչեւ Յակոբոս Տեառնեղբայր:

4. Խաչի գերութիւնն ու վերադարձը պատմական վաւերական իրադարձութիւններ են: Խաչափայտի գերեդարձը պատմական մեծ իրադարձութիւն էր ոչ միայն կրօնական, այլեւ քաղաքական առումներով, քանզի Բիւզանդական կայսրութիւնը ջախջախիչ պարտութեան էր մատնում Պարսից հզօր պետութեանը: Բնականաբար, խաչի գերեդարձն ընկալւում էր որպէս ընդհանրապէս քրիստոնէութեան յաղթանակը անհաւատութեան դէմ եւ առհաւատչեայ այն իրողութեան, որ Աստուած չի լքել Իրեն հաւատացողներին:

Այս իրադարձութեան արձագանքն այնքան մեծ էր, որ այն մի շարք եկեղեցական աւանդութիւնների մէջ գրեթէ դուրս մղեց իրեն նախորդող աւանդապատումները: Ուստի այսօր մեծ մասամբ Խաչվերացի տօնակատարութեան ժամանակ յիշատակւում է գերութիւնից

դարձը[65]: Սա վերաբերում է ոչ միայն Կաթոլիկ եւ Օրթոդոքս Եկեղեցիներին, այլեւ Հայ Եկեղեցուն: Մամուլի ու հանդէսների էջերում սփռուած զանազան քարոզներում ու յօդուածներում մեծ մասամբ խաչի գերեդարձը նշւում է որպէս Խաչվերացի տօնակատարութեան առիթ ու պատճառ[66]: Միայն Գաբրիէլ վրդ. Աւետիքեանն[67] ու Թորգոմ արքեպս. Գուշակեանն[68] են, որ դժուարանում են որեւէ հաստատական պատասխան տալ այս մասին:

Անշուշտ, խաչի գերեդարձը աննշան դէպք չէր Հայ Եկեղեցու համար: Արդէն իսկ վերեւում յիշեցինք, թէ ինչպէս, աւանդութեան համաձայն, Սիւնեաց Բիւրեղ իշխանուհին դիմաւորեց խաչափայտը եւ մասունքներ վերցրեց: Անկախ այդ փաստից, կասկածից վեր է, որ խաչի վերադարձի ճանապարհն անցնում էր Հայաստանի տարածքով, ուստի եւ այս իրադարձութիւնը, աւելի, քան խաչի հետ կապուած որեւէ դէպք, յոյժ կարեւոր նշանակութիւն էր ձեռք բերում կրօնական տեսակէտից: Եղեգնաձորի Ս. Խաչ վանքը, որտեղ, աւանդութեան համաձայն, թաղուած է խաչափայտի մասունքներից մէկը, ընդամէնը մէկն է այդ արձագանքի խօսուն վկաներից:

Սակայն բոլոր հայ պատմիչները (Յովհան Մամիկոնեան[69], Կիրակոս Գանձակեցի[70], Թովմա Արծրունի[71], Սեբէոս[72], Մովսէս Կաղանկատուացի[73], Ստեփանոս Ասողիկ[74]), ովքեր խօսում են խաչի գերե-

65 Տե՛ս "The Oxford Dictionary of the Christian Church", էջ 489. Նոյնը կարելի է տեսնել նաեւ վերոյիշեալ ռուսական գրականութեան մէջ:

66 Տե՛ս «Խօսնակ Հայաստանեայց Եկեղեցւոյ», Կ. Պոլիս, 1888, էջ 325, «Արարատ», էջ 323, **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Ազգապատում, էջ 686, «Էջմիածին», 1972, Թ, էջ 14-15, «Էջմիածին», 1960, Թ, էջ 7:

67 **Գաբրիէլ Աւետիքեան**, Բացատրութիւն շարականաց, էջ 504

68 **Թորգոմ արքեպս. Գուշակեան**, նշ. աշխ., էջ 262

69 **Յովհան Մամիկոնեան**, Տարօնի պատմութիւն, Երեւան, 1989, էջ 109-111

70 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1982, էջ 51

71 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն Արծրունեաց տան, Երեւան, 1978, էջ 115

72 «Պատմութիւն Սեբէոսի», Երեւան, 1979, էջ 131

73 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1969, էջ 98, 143

74 **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 115-117

դարձի մասին, ոչինչ չեն ասում տօնի հաստատման մասին:

Նկատի ունենալով վերոյիշեալը՝ կարելի է եզրակացնել, որ.

ա) Խաչի գերեդաձը բացառիկ նշանակութիւն ունէր Հայ Եկեղեցու եւ Հայ ժողովրդի համար, քանզի տէրունական խաչափայտի հետ անմիջական շփման մէջ էին մտնում Հայ ժողովուրդն ու Հայաստանը:

բ) Բնական է, որ այս իրադարձութիւնը պէտք է պանծացուէր Հայ Եկեղեցում:

գ) Այնուամենայնիւ ոչ մի իրական փաստ գոյութիւն չունի, որը հաստատի, որ Խաչվերացի տօնը հաստատուել է այս դէպքից յետոյ:

դ) Ընդհակառակը՝ Խաչվերացի տօնի շարականների կանոնի հեղինակ համարուող Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը (677-703) ապրել է գերեդարձից յետոյ, սակայն նրա շարականներում գերեդարձի մասին որեւէ ակնարկութիւն չկայ:

ե) Ուստի Խաչվերացի տօնի հետ գերեդարձի յիշատակի առնչութիւնը աւելի ուշ շրջանի է վերաբերում եւ արդիւնք է արեւմտեան ազդեցութեան:

զ) Ամենայն հաւանականութեամբ, խաչի գերեդարձի խորհրդական յիշատակութեանն է նուիրուած Խաչվերացի երեկոյեան մեծաշուք թափորը, որը պանծացնում է տէրունական խաչը Հայաստան աշխարհով անցկացնելու յիշատակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. Խաչվերացի տօնը Հայ Եկեղեցում հաստատուել է Դ դ., ինչպէս եւ Ընդհանրական Եկեղեցում:

2. Սակայն, ի տարբերութիւն միւս Եկեղեցիների, Հայ Եկեղեցին իր ուշադրութիւնը աւելի շատ բեւեռել է խաչի գիւտի իրողութեան վրայ, քան Ս. Յարութեան տաճարում խաչափայտի բարձրացման:

3. Խաչվերացի տօնի առնչակցումը Յակոբոս Տեառնեղբօր հետ Եկեղեցու աւանդութեան մէջ մուտք է գործել աւելի ուշ՝ թերեւս Խաչվերացի տօնը առանձին գոյութիւն ունեցող Գիւտ խաչի տօնից զանազանելու ցանկութեամբ եւ որպէս արձագանք այն «վերացման» դէպքի, որը տեղի էր ունեցել Մակարիոսի կողմից:

4. Խաչվերացի տօնը գերեդարձի հետ կապելը առաջացել է այդ իրադարձութիւնից բաւական ժամանակ անց, ամենայն հաւանականութեամբ՝ կիլիկեան շրջանում, երբ Կաթոլիկ ու Օրթոդոքս Եկեղեցիների հետ յարաբերութեան աշխոյժ շրջան էր:

5. Խաչվերացի տօնի խորհրդական բովանդակութիւնն ու պատմական հիմքը ներկայացնելիս պէտք չէ նախապատուութիւն տալ այս կամ այն աւանդութեանը, այլ անհրաժեշտ է վերոյիշեալ երեքն էլ նկատի ունենալ, քանզի երեքն էլ կարեւոր պատմական ու կրօնական իրադարձութիւններ են Հայ Եկեղեցու կեանքում:

Ազատ Բոզոյեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒՄ

(Հռոմկլայի ժողովը եւ Անտիոքի պատրիարքական աթոռի հարցը ԺԲ դարի հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւններում)

Տիեզերական Եկեղեցու կառուցուածքի, պատրիարքական աթոռների եւ համաշխարհային եկեղեցական կազմակերպութիւնների հետ Հայ Եկեղեցու փոխյարաբերութիւնների ուսումնասիրութեան համար հնագոյն սկզբնաղբիւրներ է տրամադրում հայոց մատենագրութիւնը: Սակայն այդ բնագրերը շրջանառութեան մէջ են դրուել միմեանցից անկախ եւ գրականութեան մէջ չեն քննարկուել միասնական ժամանակագրական շրջանակի մէջ, քանի որ դրանցից մի քանիսն են միայն առանձին հարցերի կապակցութեամբ գրաւել մասնագէտների ուշադրութիւնը: Այս տեսանկիւնից մեզ հետաքրքրող սկզբնաղբիւրներին աւելի մասնագիտօրէն եւ յաճախ են անդրադարձել նրանք, ովքեր զբաղուել են Մխիթար Գոշի Դատաստանագրքի բնագրով եւ նրա սկզբնաղբիւրներով[1]: Այս սկզբնաղբիւրների մի այլ խումբ՝ Գրիգոր Լուսաւորչի տոհմի կաթողիկոսների գործունէութեանը նուիրուած Անանունի վարքագրական երկու յուշարձանները, թուագրել եւ, Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութեան համապատասխան հատուածի հետ համեմատելով, բանասիրական քննութեան է ենթարկել Աշոտ Սարգսեանը[2]: Հայկական սկզբնաղբիւրների՝ պատրիարքական աթոռների թուին եւ հերթականութեանը վերաբերող մատենագրական հատակոտորները հաւաքել եւ արեւելեան միւս սկզբնաղբիւրների հետ համեմատութեան մէջ է դրել Մ. Վան Էսբրոկը վերջերս լոյս տեսած իր հմտալի ուսումնասիրութեան մէջ[3]: Մեզ հետաքրքրող հարցերը քննարկուել են նաեւ եւրոպական միջնադարագէտների կողմից, որոնք ուսումնասիրութեան ելակէտ են ընդունել կա՛մ Հռոմի[4], կա՛մ էլ Կոստանդնուպոլսի[5] եկեղեցու դիրքորոշումը այս խնդրի կապակցութեամբ:

Եթէ հետեւենք մատենագրական երկերի ստեղծման ժամանակագրութեանը, յայտնի կդառնայ, որ ժամանակի ընթացքում փոփոխուել եւ սրբագրման են ենթարկուել պատկերացումները Տիեզերական Եկեղեցու կառուցուածքի, պատրիարքական աթոռների ու նրանց թուի եւ համաշխարհային եկեղեցական նուիրապետութեան սահմաններում Հայ Եկեղեցու տեղի ու դերի մասին: Նկատի ունենալով այս հիմնադրոյթային խնդիրների նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքի ու վերաբերմունքի փոփոխութիւնները եւ այս հարցի ուսումնասիրութիւնը աւելի

1 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց. իրաւաբանական հետազօտութիւնք՝ հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. վրդ. Բաստամեանց», Վաղարշապատ, 1880, էջ 246-259, ծնթ. 247-259

Աւելի մանրամասն տե՛ս նաեւ **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատ. Խոսրով Թորոսեանի, Երեւան, 1979, էջ 135-137, 398-400, 585-599, ծնթ. 145-149: Մխիթար Գոշի Դատաստանագրքի այս յօդուածի սկզբնաղբիւրը բիւզանդագէտ Հրաչ Բարթիկեանը ենթադրաբար համարում է ինչ-որ բիւզանդական գահնամակի (klhtorologion) թարգմանութիւն, որը պէտք է կատարած լինէր Ներսէս Լամբրոնացին (տե՛ս **Р. М. Бартикян**, О византийском клиторологии в Судебнике Мхитара Гоша и его армянском переводчике. "Историко-филологический журнал", 1989, 3, с. 197-204, հմմտ. նաեւ **Hratch Bartikian,** Βυζαντινό κλητορολόγιο στόν κώδικα τοῦ Ἀρμενίου νομικοῦ Μχηιτάρ Γόσ (†1213). in: Τό Βυζάντιο κατά τὸν 12ο αἰῶνα. Κανονικό Δίκαιο, κράτος καί κοινωνία (Ἑταιρεία βυζαντινῶν καί μεταβυζαντινῶν μελετῶν, 3), Ἀθήνα, 1991, p. 239-259):

2 **Ա. Բ. Սարգսեան**, Յովհաննէս Դրասխանակերտցու Հայոց պատմութիւնը եւ Մովսէս Խորենացին, Երեւան, 1991, էջ 117-136

3 Տե՛ս **Michel van Esbroeck**, Primauté, patriarcats, catholicossats, autocéphalies en Orient.-Il primato del vescovo di Roma nel primo Millennio: Ricerche e testimonienze (Ponyifico comitato di scienze storiche. Atti e documenti. 4), Città del Vaticano, 1991, p. 493-521: Նմանատիպ հարցերի մի այլ խմբի բեղգիացի ուսումնասիրողն անդրադարձել է նաեւ աւելի վաղ գրուած իր աշխատութիւններից մէկում. **Michel van Esbroeck**, Rome l'ancienne et Constantinople vues de l'Arménie. - La nozione di Romano tra civittadinanza e universalità [Atti del II seminario internazionale di studi storici "Da Roma alla terza Roma", 21-23 aprile, 1982, Documenti e Studi, studi II], p. 351-355:

4 Այդ ծովածաւալ գրականութեան մէջ նպատակայարմար եմ գտնում նշել միայն հետեւեալ աշխատութիւնը. **W. de Vries,** Orient et Occident: les structures ecclésiales vues dans l'histoire des sept premiers conciles œcuméniques, Paris, 1974:

5 Կոստանդնուպոլսի Եկեղեցու տեսանկիւնից այս հարցերի քննարկումը եւ հիմնական գրականութեան յիշատակումը տե՛ս **H. G. Beck,** Kirche und theologische Litteratur im byzantinischen Reich, München, 1959, p. 27-37:

նպատակաուղղուած դարձնելու միտումով՝ յարմար ենք նկատում հայոց մատենագրութեանը յայտնի սկզբնաղբիւրները բաժանել երեք ժամանակագրական խմբերի.

ա) Ե-Է դարերի մատենագրական յուշարձաններ. այս խմբի հայերէն սկզբնաղբիւրներին դեռեւս յայտնի չէ Տիեզերական Եկեղեցու այն կուռ, աստիճանական կառուցուածքը, որը Հռոմի եւ Կոստանդնուպոլսի աթոռների համար վերջնականապէս ձեւաւորուում է Քաղկեդոնի ժողովում եւ տեսական հիմնաւորում է ստանում արդէն յետագայ դարերում:

բ) Ը-ԺԱ դարերի մատենագրական յուշարձաններում արդէն փորձ է արւում ներկայացնել Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան կառոյցը՝ ելնելով Դիոնեսիոս Արեոպագացու «Ցաղագս երկնային քահանայապետութեան» երկում դասակարգուած ինը հրեշտակապետական աթոռներին վերաբերող տեսութիւնից:

գ) ԺԲ-ԺԳ դարերում, կապուած ԺԲ դարի 60-70-ական թթ. հայ-բիւզանդական եկեղեցաքաղաքական բանակցութիւնների հետ, Ներսէս Լամբրոնացին մի նոր երանգ է աւելացնում Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան շրջանակում Հայ Եկեղեցու տեղի ու դիրքի նոր ընկալմանը՝ ելնելով տարածաշրջանում քաղաքական եւ եկեղեցական ուժերի նոր վերաբաժանումից:

Ա. Ե-Է դարերի մատենագրական յուշարձանների աւանդոյթը

Նշուած ժամանակաշրջանի հայոց մատենագրական երկերին իհարկէ ծանօթ են Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան պաշտօնէութեան տարբեր աստիճաններում գործիչներ եւ բազմաթիւ եպիսկոպոսական թեմական աթոռներ, որոնք վճռորոշ դեր ունէին համաշխարհային եկեղեցական գործերում, սակայն դրանց փոխյարաբերութիւններում դեռեւս ամբողջովին չեն յստակուած նուիրապետական աստիճանները, դեռեւս բացակայում են նուիրապետութեան աստիճանները տեսականացնող երկեր[6]*:*

6 Այդ կառոյցը տեսականացնելու առաջին փորձերից մէկը Տիեզերական Եկեղեցու մէջ կատարուած է «Սահմանք եւ կանոնք, զոր եդին աշակերտքն Քրիստոսի Եկեղեցոյ սրբոյ յետ վերանալոյ Տեառն» երկում (հայերէն բնագիրը տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, Երեւան, 1964, էջ 18-66):

Ցայտնի է, որ Գ-Դ դարերում Տիեզերական Եկեղեցու նուիրապետական կառոյցը սերտ կապի մէջ էր Հռոմէական կայսրութեան վարչատարածքային բաժանման սկզբունքների հետ[7]*: Հիմնական եպիսկոպոսական աթոռները տեղաբաշխուած էին դիոցեզների եւ պրովինցիաների մայրաքաղաքներում: Պէտք է նկատի ունենալ նաեւ այն հանգամանքը, որ արդէն վաղ քրիստոնէութեան շրջանից առանձին եպիսկոպոսական աթոռներ են յիշատակւում նաեւ Սասանեան Պարսկաստանի տարածքում: Վաղ քրիստոնէութեան շրջանի եպիսկոպոսական աթոռների թուի եւ աշխարհագրական տեղաբաշխուածութեան համար հիմնական սկզբնաղբիւրներն են տիեզերական եւ տեղական եկեղեցական ժողովների արձանագրութիւնների տակ պահպանուած ստորագրութիւնները եւ եկեղեցական կազմակերպութեան կառուցուածքի հնագոյն ուղղակի եւ անուղղակի նկարագրութիւնները*[8]*: Արդէն իսկ տիեզերական ժողովների առաջին կանոններում փորձ է արւում կանոնաւորել նաեւ եկեղեցական կառոյցը: Այդ վաւերագրերը ժամանակին թարգմանուել են նաեւ հայերէն: Նիկիայի ժողովի Զ կանոնում Աղեքսանդրիայի, Հռոմի եւ Անտիոքի եպիսկոպոսական աթոռները նախադաս են համարւում, իսկ Է-ում Երուսաղէմի աթոռն իր պատուով հաւասարեցւում է մայրաքաղաքային աթոռներին*[9]*:*

7 **Hans Grotz S. J.**, Die Hauptkirchen des Ostens von Anfängen bis zum Konzil von Nikaia (325), Roma, 1964, p. 4-5 (Orientalia christiana analecta, 169)

8 Տե՛ս **B. G. Taubneri**, Georgii Cyprii Descriptio Orbis Romani Accedit Leonis imperatoris diatyposis genuina adhuc inedita edidit Praefatus est Comentario instruxit Henricus Gelzer. Adiectae sunt Quartuor Tabulae Geographicae, Lipsiae in Aedibus, 1890, Patrum Nicaenorum Nomina Latine, Graece, Coptice, Syriaece, Arabice, Armeniace. Sociata opera ediderunt Henricus Gelzer, Henricus Hilgenfeld, Otto Cuntz, Lipziae, Aedibus B. G. Taubneri, 1898:

Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին վերաբերող մինչեւ ԺԵ դարը բոլոր ցանկերի հրապարակումը, ինչպէս նաեւ ամենավերջին գրականութեան յղումները տե՛ս "Notitiae episcopatuum eclesiae Constantinopolitanae", texte critique, introduction et notes par Jean Darrouzès, Paris, 1981:

9 «Զ. Նախնեաց սովորութիւն կացցէ յԵգիպտոսի, զի Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի եւ հռոմայեցւոց եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս եւ անտիոքացւոց եւ այլ իշխանութիւն եւ պատիւ մեծութեան պահեսցի յԵկեղեցւոջ: Է. Վասն զի սովորութիւն կալաւ եւ կարգի նախնեաց, զի Երուսաղեմի եպիսկոպոսն պատուեսցի, ընկալցի ըստ կարգին զպատիւն, զի մայրաքաղաքացն ըստ արժանին պահեսցի պատիւն իւր» (հայերէն բնագրի վերջին հրատարակութիւնը տե՛ս

Ագաթանգեղոսի, Փաւստոս Բուզանդի, Մովսէս Խորենացու եւ միւս հեղինակների երկերում՝ մինչեւ Սեբէոս եւ վերջինիս ժամանակագրօրէն մօտ պատմական սկզբնաղբիւրներում, յաճախ են հանդիպում եպիսկոպոս, մետրոպոլիտ, կաթողիկոս, պատրիարք, հայրապետ եւ քորեպիսկոպոս տերմինները, սակայն դրանք չեն դրւում կուռ աստիճանական համակարգում[10]*: Եթէ այս տեսանկիւնից ենք դիտում խնդիրը, արձանագրման է արժանի այն փաստը, որ սկզբնաղբիւրներում մերթ ընդ մերթ առանձնանում է երկու մայրաքաղաքային աթոռների՝ սկզբում Հռոմի, ապա եւ Բիւզանդիոն-Կոստանդնուպոլսի թեմակալների նշանակութիւնը: Այս հարցում հայոց պատմագրական աւանդոյթը որոշակիօրէն մօտենում է բիւզանդականին (կամ արեւելահռոմէական), որը, սակայն, եկեղեցական նուիրապետութեան ամբողջական կառոյցը տեսնում է միայն Հռոմէական-Բիւզանդական կայսրութեան տարածքներում: Հայոց մատենագրական աւանդոյթը, ազդուելով բիւզանդականից, ժամանակ առ ժամանակ ամրագրում է այս աւանդոյթը, սակայն բաւական ընդգծուած է նաեւ բիւզանդականից հեռացող այն դրոյթը, ըստ որի՝ Հայ Եկեղեցին ամբողջական եկեղեցական կազմակերպութիւն է տեսնում նաեւ Սասանեան Պարսկաստանում*[11]*:*

Ի տարբերութիւն Տիեզերական Եկեղեցու մասին հայոց մատենագրութեան մէջ պահպանուած հատուկենտ վկայութիւնների, համեմատաբար կուռ են պատկերացումները Հայ Եկեղեցու նուիրապետութեան կառուցուածքի մասին: Ներառեալ մինչեւ Ներսէս Մեծը, բոլոր հայկական սկզբնաղբիւրները գրեթէ միաբերան պնդում են, որ հայոց կաթողիկոսները ձեռնադրուել են Կեսարիայի առաջնորդի կողմից, որը մեր սկզբնաղբիւրներում յաճախ անուանւում է նաեւ կաթողիկոս: Միւս կողմից, սկսած ս. Գրիգոր Լուսաւորչից, հայոց կաթողիկոսնե-

«Կանոնագիրք Հայոց». Ա, էջ 120-121): Մինչեւ Նիկիայի ժողովը Տիեզերական Եկեղեցում նախադաս աթոռների առանձնացման սկզբունքների մասին տե՛ս H. Grotz, Die Hauptkirchen..., p. 11-18:

10 Իմ կարծիքով՝ սա առանձին խնդիր է եւ պահանջում է առանձին եւ մանրակրկիտ մօտեցում:

11 Այդ տեսանկիւնից մեր պատկերացումները բաւական ընդարձակում են Ե դարի պատմական իրադարձութիւնները նկարագրող մեր երկու պատմիչները՝ Եղիշէն եւ Ղազար Փարպեցին:

րը ձեռնադրում են երկու հարեւան ժողովուրդների՝ վրացիների եւ աղուանների հոգեւոր առաջնորդներին, որոնք կրում են երբեմն կաթողիկոս, երբեմն եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս անուանումը:

Ինչպէս տեսնում ենք, ի տարբերութիւն հռոմէական, ապա եւ բիւզանդական պատկերացումների, ըստ որոնց՝ Եկեղեցու նուիրապետութեան սահմանները գրեթէ ամբողջութեամբ համընկնում են Հռոմէական (կամ Բիւզանդական) պետութեան սահմաններին, Հայաստանում Եկեղեցու նուիրապետութեան գաղափարը ազգայնանում էր, եւ դրա հետ կապուած՝ եկեղեցական կազմակերպութիւնը ինքնանկախ վիճակ էր ստանում: Այդ գործընթացի խորացմանը թափ հաղորդեց հայոց այբուբենի ստեղծումը, սակայն այն աւելի արմատական դարձաւ, երբ Հայաստանը 428 թ. ամբողջովին կորցրեց թագաւորական իշխանութիւնը: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ պետական կազմակերպութեանը յատուկ մի շարք բնորոշ յատկանիշներ ամբողջովին փոխանցուեցին Եկեղեցուն: Չնայած այս առանձնայատկութիւններին՝ Հայ Եկեղեցին շարունակում էր հաւատարիմ մնալ «Քրիստոս եւ Նրա Եկեղեցին միասնական են եւ պատկանում են բոլոր ազգերին» սկզբունքին, որը մէկընդմիշտ հաստատագրուած է Ագաթանգեղոսի Պատմութեան մէջ[12]*:*

Սկսած Զ դարից՝ Հայ Եկեղեցին, ինչպէս նաեւ Արեւելեան մի շարք ուրիշ Եկեղեցիներ իրենց համար պարտադիր համարեցին միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները: Երկար ժամանակ Հայաստանում եւ Արեւելքի ամենահզօր եկեղեցական թեմերում (Անտիոք, Աղեքսանդրիա եւ այլն) լուսնայն էր մերժւում Քաղկեդոնի ժողովը, որից անմիջապէս յետոյ պառակտման առիթ կանգնած Բիւզանդական կայսրութիւնը քայլեր ձեռնարկեց՝ մեղմելու համար այդ ժողովից արեւելեան թեմերի հիասթափութիւնը: Արեւելեան Եկեղեցիները ժողովի որոշումները դիտում էին իբրեւ նեստորականութեան վերածնում: Քաղկեդոնի ժողովի դաւանաբանական դրոյթներից էական նահանջ էր Ե դ. 80-ական թթ. Կոստանդնուպոլսում հրապարակուած Զենոնի հենոտիկոնը: Եկեղեցական կազմակերպութեան բնագաւառում Արեւելքի Եկեղեցիներին կատարուած նմանատիպ զիջումները

12 Այս միտքն ընդգծուած է ողջ վարդապետութեան մէջ (տե՛ս յատկապէս «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ս. Կանայեանցի, Տփղիս, 1909, էջ 312-313):

շարունակուեցին մինչեւ Հերակլ կայսեր իշխանութեան տարիները: Այս դարաշրջանում էր, որ Անտիոքի եւ Աղեքսանդրիայի օրթոդոքս-բիւզանդական (Մելկիտ) աթոռներին զուգահեռաբար սկսում են ձեւաւորուել ուղղափառ զպտական եւ ասորական պատրիարքական աթոռներ՝ իրենց կատարեալ նուիրապետական կառոյցով: Իհարկէ, դրանց հետ միասին սկսեց աստիճանական անկում ապրել նուիրապետական կառոյցը Սասանեան Պարսկաստանում:

Սակայն Քաղկեդոնի ժողովի նշանակութիւնը Բիւզանդական Եկեղեցու համար էական էր ոչ միայն դաւանաբանական հարցերի տեսանկիւնից: Այդ ժողովից յետոյ է յստակւում եւ ամբողջական դառնում Բիւզանդական Եկեղեցու նուիրապետական կառոյցը: Եթէ մինչ այդ Տիեզերական Եկեղեցու ժողովներում հաւասարների մէջ առաջին էին դիտում Հռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի թեմերը եւ ըստ պատուի նրանց էին հաւասարեցնում Կոստանդնուպոլսի եւ Երուսաղէմի աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովում (ԻԸ կանոն) աննախադէպ կերպով, կայսեր անմիջական միջամտութեամբ, ի հակակշիռ Հռոմի, բարձրացւում էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոսական աթոռի դերն ու հեղինակութիւնը, քանի որ այդ քաղաքում էին կենտրոնացւում կայսրութեան կառավարման լծակները: Դրանով «ձեռնոց էր նետում» կայսրութեան ներքին կեանքում իր նշանակութիւնը հետզհետէ կորցնող Հռոմին: Չնայած կայսրութեան հին մայրաքաղաքի Եկեղեցին Քաղկեդոնի ժողովում կարողացել էր անցկացնել Հռոմի Լեւոն Ա պապի դաւանաբանական դրոյթները, որոնք ստացել են «Լեւոնի տումար» անունը, սակայն եկեղեցական նուիրապետութեան շրջանակներում պարտութիւն էր կրել Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռից, որին առանց ձեւականութիւնների հովանաւորում էր Բիւզանդական կայսրութիւնը: Պէտք է նաեւ նշել, որ եթէ մինչ այդ եկեղեցական կազմակերպութեան շրջանակներում առաջնութեան համար պայքարին մասնակցում էին նաեւ Աղեքսանդրիայի եւ Անտիոքի եպիսկոպոսական աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովից յետոյ նրանց դերը սաստիկ նուազեց համաեկեղեցական կեանքում: Այդ պատրիարքութիւնների մելկիտեան թեւերը դարձան Կոստանդնուպոլսի Եկեղեցու կցորդը, իսկ Հռոմի Եկեղեցին իրեն ենթակայ նոյնանուն պատրիարքութիւններ ստեղծեց միայն ԺԲ դարի ընթացքում:

Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռի գերակայ դիրքը իր նո-

վելներում վերջնականապէս հաստատագրեց Յուստինիանոս Մեծը[13]: Սակայն Կոստանդնուպոլսի Եկեղեցում շարունակում էր կիրառուութեան մէջ մնալ չորս պատրիարքական աթոռների՝ Հռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի, Կոստանդնուպոլսի համազօրութեան եւ Երուսաղէմի աթոռի համապատուութեան մասին աւանդոյթը, որը լայն տարածում էր ստացել նաեւ Արեւելեան միւս Եկեղեցիներում: Այդ աւանդոյթի մէկ այլ տարբերակ էլ գործաւորում էր հայ մատենագրութեան մէջ Ը դարից յետոյ: Այդ առումով շահեկան է արեւելաքրիստոնէական մատենագրութիւնների գիտակ, պրոֆ. Միքայէլ Վան Էսբրոեկի վերջերս հրապարակած յօդուածը:

Բ. Ը-ԺԱ դարերի մատենագրական յուշարձաններ

Ինչո՞վ էր պայմանաւորուած Ը դարում հայ մատենագրութեան մէջ եկեղեցական նուիրապետութեան համակարգի տեսականացման ձգտումը:

Եկեղեցական նուիրապետութեան համակարգման ուսումնասիրութեան ճանապարհին սկզբունքային նշանակութիւն է ստանում Դիոնեսիոս Արեոպագացուն (Արիսպագացի՝ հայ մատենագրութեան մէջ) վերագրուած «Ցաղագս երկնային քահանայապետութեան» աշխատութիւնը: Բիւզանդական մատենագրութեան մէջ այս աշխատութեան ստեղծման հնարաւոր ժամանակ է համարւում Զ դարը, այսինքն՝ այն դարաշրջանը, երբ աւարտում էր Բիւզանդական կայսրութեան մէջ քրիստոնէական եկեղեցու նուիրապետական կառոյցի վերջնական ձեւաւորման դասական շրջանը, որն արդէն արձանագրուած է Յուստինիանոս Մեծի մի շարք նովելներում: Անշուշտ, հարց կտրուի, թէ ինչ կապ կայ երկնային քահանայապետութեան դասերի եւ եկեղեցու նուիրապետութեան աստիճանների համակարգի ձեւաւորման սկզբունքների մէջ: Դիոնեսիոս Արեոպագացուն վերագրուած վերոյիշեալ աշխատութեան մէջ, մի շարք աստուածաշնչային յղումների համադրմամբ, մէկ անգամ եւ ընդմիշտ երկնային քահանայապետութեան շրջանակներում առանձնացւում են ինը երկնային դասեր, որոնք

13 Corpus iuris civilis, volumen tertium: Novellae /recognovit Rudolfus Schoell, opus Schoelii morte interceptum absolvit Guilelmus Kroll, Berolini, 1959, nov. CXXIII, cap. III, p. 597

բաշխում են հաւասարապէս երեք որակական խմբերի մէջ. ա) աթոռք, քերովբէք, սերովբէք, բ) տէրութիւնք, զօրութիւնք, իշխանութիւնք, գ) պետութիւնք, հրեշտակապետք, հրեշտակք[14]:

Դիոնեսիոս Արեոպագացու այս երկը հայերէն թարգմանուել է Ը դարում մեր մատենագրութեան ամենաբեղուն թարգմանիչներից մէկի՝ Ստեփանոս Սիւնեցու ձեռքով[15]: Այս մատենագրական երկը չափազանց մեծ ազդեցութիւն է ունեցել հայ մատենագրութեան, յատկապէս ծիսադաւանաբանական երկերի ստեղծման վրայ եւ կարեւոր հիմք է հանդիսացել երկնային, երկրային եւ եկեղեցական նուիրապետութեան աստիճանները սահմանազատելու, բացատրելու եւ տեսական կառուցուածք ստեղծելու գործում:

Սկսած Թ դ.՝ արդէն յայտնի են հայերէն սկզբնաղբիւրներ, որոնք եկեղեցական նուիրապետութիւնը եւս բաժանում են ինն աստիճանների: Մեզ հասած բնագրերի մէջ առաջինը Մաշտոց Եղիվարդեցու թուղթն է՝ ուղղուած Գէորգ հայոց կաթողիկոսին, ուր եկեղեցական նուիրապետութեան դասերը համապատասխանեցուած են երկնային քահանայապետութեան դասերին եւ առանձնացուած են ինն աստիճաններում՝ պատրիարք, արքեպիսկոպոս, մետրոպոլիտ, եպիսկոպոս, քահանայք, սարկաւագունք, կէս սարկաւագունք, ընթերցողք եւ փսալտք (երգեցողք): Եկեղեցական նուիրապետութեան այս կառոյցի տեսականացումը Հայաստանում կապուած էր այն հանգամանքի հետ, որ Բիւզանդական Եկեղեցին հրաժարւում էր ընդունել հայոց եկեղեցական կազմակերպութեան նուիրապետութեան ամբողջականութիւնը՝ համարելով, որ այն չունի պատրիարքական աստիճան: Այդ իսկ պատճառով, ըստ օրթոդոքս-բիւզանդական հոգեւորականութեան, Հայ Եկեղեցին պարտաւոր է ենթարկուել պատրիարքական աթոռներից որեւէ մէկին: Թ դ. բիւզանդական եկեղեցական եւ մատենագրական գործիչ, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի՝ Զաքարիա հայոց կաթողիկոսին ուղարկած թղթից կարելի է ենթադրել, որ Հայ Եկեղեցու համար նման աթոռ էր դիտւում Կոստանդնուպոլսի պատրիարքութիւնը, որին այդ ժամանակ ենթարկւում էր նաեւ Կեսարիայի արքեպիսկոպոսական աթոռը:

14 "The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by R. W. Thomson, Lovanii, 1987 (Corpus scriptorum christianorum orientalium, vol. 488, Scriptores Armeniaci, t. 17), p. 19-32

15 Տե՛ս Գ. ծ. վրդ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Բէյրութ, 1858, էջ 30:

Թ-Ժ դարերում կաթողիկոսներ Մաշտոց Եղիվարդեցին եւ նրա աշակերտ Յովհաննէս Դրասխանակերտցին փորձում էին ապացուցել, որ արդէն Ներսէս Մեծի կաթողիկոսութեան տարիներից (Դ դ. երկրորդ կէս) հայոց կաթողիկոսական աթոռը հաւասարեցուել է պատրիարքական աթոռի աստիճանի[16]: Այդ իսկ պատճառով Հայ Եկեղեցու նուիրապետական կառոյցը ամբողջական է եւ լիակատար: Մաշտոց Եղիվարդեցու եւ Յովհաննէս Դրասխանակերտցու՝ հայոց եկեղեցական նուիրապետութեան համակարգումը գրեթէ անփոփոխ օգտագործում են Անանիա Մոկացին, Մովսէս Դասխուրանցին եւ ուրիշներ:

Տիեզերական Եկեղեցու կառուցուածքի համակարգուած կառոյցը վերստին շարադրուած է նաեւ ԺԲ դ. Ներսէս Լամբրոնացու «Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ» աշխատութեան մէջ, որը գրուել է 1176/7 թ.: Այնուհետեւ այդ բնագիրը որոշ էական տարբերութիւններով մուծուել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց կարգաց Եկեղեցւոյ եւ տան թագաւորի» յօդուածի մէջ, որը Ա եւ Գ խմբագրութիւններում ունի Միե, իսկ Բ խմբագրութիւնում՝ ՃԺԳ յօդուածահամարը: Այս տեսանկիւնից մեզ հետաքրքրող սկզբնաղբիւրներին աւելի մասնագիտօրէն եւ յաճախ են անդրադարձել նրանք, ովքեր զբաղուել են Մխիթար Գոշի Դատաստանագրքի բնագրով եւ նրա սկզբնաղբիւրներով: Ակնյայտ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքում մեզ հետաքրքրող սկզբնաղբիւրը Ներսէս Լամբրոնացու «Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ» աշխատութիւնն է: Այս տեսքով եւ որոշ էական փոփոխութիւններով, որոնք բխում են Յովհաննէս Դրասխանակերտցու պատմութեան բնագրից, յիշեալ բնագիրը յետագայում եւս օգտագործուել է հայ մատենագրութեան մէջ Մխիթար Սկեւռացու (կամ Տաշրացու), Ստեփանոս Օրբելեանի եւ ուրիշների կողմից:

Տարսոնի արքեպիսկոպոս Ներսէս Լամբրոնացու յիշատակուած աշխատութեան մէջ մեզ հետաքրքրող հատուածն ունի «Որոշումն ինն դասուց աստիճանաց Եկեղեցւոյ եւ յատկութիւն գործառնութեանց նոցա. եւ զգեստուցն, ընդ որս եւ ընդդիմադրութիւն այսոցիկ

16 Այդ մասին տե՛ս Ա. Բ. Սարգսեան, Յովհաննէս Դրասխանակերտցու Հայոց պատմութիւնը եւ Մովսէս Խորենացին, Երեւան, 1991, էջ 117-136:

խորհրդոց ունայնացուցանողաց» վերնագիրը: Այս բնագրի սկզբում հեղինակը, ելնելով երկնային քահանայապետութեան հրեշտակների եռեակ դասերի ինն աստիճաններից, հետեւեալ զուգահեռ աստիճաններն է տեսնում երկրային քահանայապետութեան կարգերի հետ.

ա) աթոռք, քերովբէք եւ սերովբէք դասին համատիպ է համարում արքեպիսկոպոս, եպիսկոպոս, քահանայ աստիճանները.

բ) տէրութիւնք, զօրութիւնք եւ իշխանութիւնք դասին՝ սարկաւագ, կէս սարկաւագ եւ սաղմոսերգու աստիճանները.

գ) պետութիւնք, հրեշտակապետք, հրեշտակք դասի պատճէնում է տեսնում կրօնաւոր, ժողովուրդ եւ երեխայք աստիճանների մէջ:

Այնուհետեւ հեղինակն անդրադառնում է մասնաւորապէս Եկեղեցու ինը նուիրապետական աստիճաններին, իսկ դրանից յետոյ՝ հաղուստների այն տեսակներին, որոնք կրում է Եկեղեցու պաշտօնեաներից իւրաքանչիւրը: Այս վերջին հատուածում Ներսէս Լամբրոնացու աշխատութիւնը չափազանց արժէքաւոր է յատկապէս նրանով, որ նկարագրում է նաեւ հարեւան (Օրթոդոքս-բիւզանդական, Կաթոլիկ-հռոմէական եւ Յակոբիկ-ասորական) Եկեղեցիներում իւրաքանչիւր պաշտօնեայի օգտագործման համար թոյլատրուող զգեստները: Հետեւաբար Ներսէս Լամբրոնացու «Խորհրդածութիւնք» աշխատութեան այս գլուխը կարելի է բաժանել երեք հատուածների, որոնց մէջ մեզ հատաքրքրում է Եկեղեցու նուիրապետութեան ինն աստիճաններին վերաբերող հատուածը:

Այստեղ Ներսէս Լամբրոնացին, հետեւելով մինչ այդ արդէն ձեւաւորուած աւանդոյթին, որը տիրապետում էր ե՛ւ Յունական, ե՛ւ Հայկական Եկեղեցիներում, կրկին արձանագրում է Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան ինն աստիճանները, որոնք են. ա) պատրիարք, բ) արքեպիսկոպոս, գ) մետրոպոլիտ, դ) եպիսկոպոս, ե) քահանայ եւ երիցունք, զ) սարկաւագ, է) կէս սարկաւագ, ը) ընթերցողք, թ) երգեցողք: Ըստ Ներսէս Լամբրոնացու՝ Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան այս սանդղակը լիովին համապատասխանում է Հայ Եկեղեցու պաշտօնէութեան աստիճանակարգին, որը, ինչպէս տեսանք, սկսած արդէն Թ-Ժ դարերից, համակարգուած ձեւով վկայուած է հայ մատենագրութեան մէջ եւ շրջանառութեան մէջ է մինչեւ այսօր:

Գ. ԺԲ դարում ձեւաւորուած նոր հայեցակէտ

Այժմ անդրադառնանք այս խնդրին ԺԲ դ. հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւնների տեսանկիւնից: 1165-1178 թթ. փոխյարաբերութիւնները շօշափում էին երկու եկեղեցական կազմակերպութիւնների թէ՛ ծիսական, թէ՛ դաւանաբանական եւ թէ՛ կառուցուածքային շահերը: Բիւզանդական կայսրութիւնը սելջուկեան եւ Մերձաւոր Արեւելքի միւս մուսուլմանական եւ քրիստոնէական համայնքների եւ տէրութիւնների հետ փոխյարաբերութիւններում մեծ նշանակութիւն էր տալիս այդ տարածքներում բնակուող հայ ազգաբնակչութեանը: Իսկ Բալկաններում ազգամիջեան եւ միջեկեղեցական փոխյարաբերութիւնները կառուցելիս յաճախ էր ստիպուած լինում հաշուի նստել Բալկանների եւ Փոքր Ասիայի Հայ Եկեղեցու պաշտօնէութեան եւ հայ ազգաբնակչութեան հետ: Այդ իսկ պատճառով Բիւզանդական կայսրութեան արտաքին քաղաքական ծրագրերում ԺԲ դ. 60-ական թթ. քաղաքական հրապարակի վրայ կրկին յայտնուեց Օրթոդոքս-բիւզանդական եւ Հայ Առաքելական Եկեղեցիների միջեւ միութիւն հաստատելու հինաւուրց ծրագիրը[17]*:*

Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունէր այդ փոխյարաբերութիւններից Հայ Եկեղեցին, եւ ինչպէ՞ս է այն արտացոլուել այդ ժամանակաշրջանի սկզբնաղբիւրներում:

Ամենայն հայոց հոգեւոր հովիւը թէեւ կաթողիկոսական աթոռը հաստատել էր Հռոմկլայում՝ բուն հայկական տարածքներից դուրս, սակայն աւանդոյթի բերումով շարունակում էր կոչուել եւ մնալ «Հայոց մեծաց կաթողիկոս» եւ հայրապետ, որին ենթարկւում էին Արեւելքում եւ Արեւմուտքում խարիսխ ձգած Հայոց ազգային Եկեղեցու գրեթէ բոլոր թեմերը եւ վանական կենտրոնները: Հայոց հոգեւոր իշխանութեան եկեղեցաքաղաքական շահերը եւս բազմաթիւ հարցերում խաչաձեււում էին բիւզանդականի հետ Կիլիկիայում, Հիւսիսային Ասորիքում, Փոքր Ասիայում եւ Բալկաններում: Հայ Եկեղեցին եւս բիւզանդական-օրթոդոքս եկեղեցական կազմակերպութեան հետ փոխյարաբերութիւններում փորձում էր հասնել իր համար առաջնակարգ

17 Այս բանակցութիւնների քաղաքական դրդապատճառների ուսումնասիրութեան համար տե՛ս Ա. Բոզոյեան, Բիւզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը եւ Կիլիկեան Հայաստանը ԺԲ դ. 30-70-ական թուականներին, Երեւան, 1988:

նշանակութիւն ունեցող եկեղեցաքաղաքական հետեւեալ խնդիրների լուծմանը.

ա) Բիւզանդական կայսրութեան տարածքում եւ նրա ազդեցութեան ոլորտում գտնուող երկրներում Հայ Եկեղեցու եւ նրա թեմերի համար ստեղծել գործունէութեան տանելի պայմաններ.

բ) Հայոց եկեղեցական կազմակերպութիւնը քոյր Եկեղեցու կարգավիճակով ընդունելի դարձնել Բիւզանդական Եկեղեցուն եւ կայսրութեանը որպէս ուղղափառ քրիստոնէական համայնք.

գ) օգտագործել Բիւզանդական կայսրութեան հեղինակութիւնը եւ արտաքին քաղաքական հնարաւորութիւնները Հայոց կաթողիկոսարանի դիրքերը միջազգային յարաբերութիւններում ամրապնդելու գործում, որն անուղղակիօրէն նպաստելու էր ազգային պետականութիւն ստեղծելու գործընթացին:

1165-1178 թթ. Հայ-բիւզանդական բանակցութիւններն անարդիւնք աւարտուեցին: Այնուամենայնիւ, հէնց այդ բանակցութիւնների վերջնական փուլ հանդիսացող Հռոմկլայի ժողովում (1178) Ներսէս Լամբրոնացին ներկայացրել է մի վաւերագիր, ուր առաջարկւում էր դիմել Բիւզանդական կայսրութեանը՝ փոխելու համար Հայ Եկեղեցու տեղը Տիեզերական Եկեղեցու նուիրապետական համակարգում[18]*:*

Դա մի ծրագրային փաստաթուղթ է, ուր Տարսոնի արքեպիսկոպոսը պատասխանում է Բիւզանդական Եկեղեցու ինը պահանջներին: «Գլխակարգութիւնք Հռոմոց» աշխատութեան մէջ Ներսէս Լամբրոնացին բիւզանդական կայսր Մանուէլ Ա Կոմնէնոսի (1143-1180) եւ պատրիարք Միքայէլ Գ Անքիալոսի (1170-1178) ուղարկած ինը պահանջներից վերջինին, ուր պնդւում է ընդունել «զառաջարկութիւն կաթողիկոսին միայն ի թագաւորէն Հռոմոց» կէտը, Տարսոնի արքեպիսկոպոսը գրում է, որ այս գլուխը թէպէտեւ վերջում է դրուել, ընդգրկում է վերոգրեալ բոլոր խնդիրները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայոց եւ Բիւզանդական Եկեղեցիները, սկսած է դ., բաւական հեռացել են միմեանցից, չնայած երկուստեք բազմաթիւ փորձեր են կատարուել հաշտեցնելու Տիեզերական Եկեղեցու այս երկու թեւերը, Ներսէս Լամբրոնացին խորհուրդ է տալիս Հռոմկլայի ժողովի մասնակիցներին հետեւեալ առաջարկով դիմել բիւզանդական կայսերը. «Եւ կալցէ զաթոռն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորա յարեւելս եւ յարեւմուտս, եւ նոյն յաջորդեսցէ հրամանաւ թագաւորիդ զՀայոց սեռն, այլ մինչեւ ի սպառ»[19]*:*

Ըստ այս վաւերագրի՝ միայն այս կերպ կարող է «անքակ պնդութեամբ զսէրն նուաճել, այսինքն՝ հարսնացուցանել զաթոռն Անտիոքայ հայրապետութեանս Հայոց, զի ի ձեռն ողջախոհ կուսին այնորիկ եւ անբիծ փեսային այսորիկ միաւորութեան հաւատամք լինել ի մէջ երկուց ազգացս անքակ սիրոյ խնամութիւն զամենայն եկեղեցիս Հայաստանեայց ընդ իշխանութեամբ թագաւորիդ Հռոմոց ածեալ կացուցէ եւ ի մեծ եկեղեցիդ խառնեսցէ»[20]*: Ելնելով այս դրոյթներից՝ Ներսէս Լամբրոնացին նաեւ արձանագրում է. «Այսպէս յորժամ լիցի կաթուղիկոսն Հայոց մի ի չորից աթոռոցդ, ընդ աջմէ թագաւորիդ Հռոմոց, պատրիարք աթոռոյն Անտիոքացւոց, ամենայն Հայաստանեայցս յոյս եւ հաւատ եւ միաբանութիւն նովաւ առ ձեզ խարսխի. եւ ամենայն լուծ, զոր դնէք ի վերայ պարանոցի մեր այսու յուսով՝ թեթեւ ունելով միշտ զմիջնորդն զառաջինն փոխել եւ թագաւորական ընտրութեամբդ կոչեցեալ: Ապա թէ ոչ, ծառայ գոլով այլ ազգաց ըստ մեղաց մեր եւ ընդ իշխանութեամբ նոցին բնակեալ, զիա՞րդ հնար է ձգտել առ թագաւոր Հռոմոց եւ առաջարկութիւն կաթողիկոսի պահանջել»*[21]*:*

Հռոմկլայի ժողովում քննարկուելիք այս դրոյթին ապացոյցներ գտնելու միտումով է թերեւս, որ Ներսէս Լամբրոնացին Կոստանդին Հերապոլսեցու հետ համատեղ թարգմանում է Տիեզերական Եկեղեցու նուիրապետութեան համակարգի մասին Նեղոս Դոքսապատրի եւ Եպիփան Կիպրացուն վերագրուող ու մի շարք անանուն հեղինակների երկերը[22]*: Գերմանացի հայագէտ Ֆ. Ն. Ֆինկի կատարած համեմատութիւնը ցոյց է տալիս, որ մեզ հասած յունարէն բնագրերը պակաս-*

18 Տե՛ս Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսոնի (կեանքն եւ գրական վաստակները՝ հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց), Վիեննա, 1956, էջ 198-199:

19 Պալճեան, էջ 265

20 Նոյն տեղում

21 Նոյն, էջ 265-266

22 Այդ թարգմանութիւնների մասին տե՛ս Ն. Ակինեան, նշ. աշխ., էջ 289-293:

ներ ունեն: Դրա հետ միաժամանակ կարելի է հաստատապէս պնդել՝ Նեղոս Դոքսապատուի եւ Եպիփան Կիպրացու աշխատութիւններում թարգմանիչներն աւելացրել են որոշ հատուածներ, որոնք, մեր կարծիքով, պէտք է բխէին Հռոմկլայի եկեղեցական ժողովի նախօրեակին Ներսէս Լամբրոնացու մշակած ծրագրից (որդեգրած սկզբունքից): Նման հատուածների թուին ենք դասում Եպիփան Կիպրացու երկում տեղ գտած «Իշխանութիւն Հայոց մեծաց» կտորը[23] եւ Նեղոս Դոքսապատուի երկում Անտիոքի պատրիարքական աթոռի եւ հայոց կաթողիկոսարանի կարգավիճակը բանաձեւող հատուածները[24]:

Եպիփան Կիպրացու երկ մուծուած «Իշխանութիւն Հայոց մեծաց» գլուխը համառօտ շարադրանքն է Նեղոս Դոքսապատուի հայերէն թարգմանուած երկի նոյն բովանդակութիւնն ունեցող հատուածի, ուր թարգմանիչները շեշտում են հայոց եկեղեցական թեմի ինքնուրոյնութիւնը: Ե՛ւ Եպիփան Կիպրացու, ե՛ւ Նեղոս Դոքսապատուի երկերի հայերէն թարգմանութեան մէջ հայոց կաթողիկոսարանի անկախ դիրքը համեմատուած է Կիպրոսի ինքնագլուխ աթոռի նոյնանման կարգավիճակի հետ՝ միայն այն տարբերութեամբ, որ Նեղոս Դոքսապատուի երկում վերոյիշեալ երկու ինքնագլուխ եկեղեցիների շարքում յիշատակւում է նաեւ Բուլղարիայի թեմը:

Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքութիւն վերանուանելու այս ծրագրային դրոյթը ԺԳ դ. եւս մի քանի անգամ վերարծարծուեց հայոց կաթողիկոսների կողմից, սակայն Կիլիկիայի հայկական պետութեան կործանումից յետոյ ամբողջովին դուրս մղուեց շրջանառութիւնից:

Ամփոփենք. մինչեւ Ը դարը հայ մատենագրութեանը յայտնի չէ որեւէ աշխատութիւն, որը համապարփակ պատկերացում տար Տիեզերական եկեղեցու նուիրապետական կառոյցի մասին: Թ դարից մեզ են հասել այդ նիւթին վերաբերող առաջին աշխատութիւնները, որոնք նպատակ ունէին Բիւզանդական կայսրութեանը ցոյց տալ Հայ եկեղեցու նուիրապետական կառոյցի ամբողջականութիւնը: Այս համակար-

23 Տե՛ս Եպիփան Կիպրացու "Ἔκθεσις πρωτοκλησίων πατριαρχῶν τε καὶ μητροπολιτῶν", հրատ. Ֆ. Ն. Ֆինկ, Թիֆլիս, 1902:

24 «Նեղոսի Դոքսապատուի կարգադրութիւն պատրիարքական աթոռոցն», հրատ. Ֆ. Ն. Ֆինկ, Վաղարշապատ, 1902, էջ 10

գը գրեթէ անխաթար աւանդուած է ողջ միջնադարի ընթացքում: ԺԲ դարում, կապուած եկեղեցական բանակցութիւնների նոր փուլի հետ, Ներսէս Լամբրոնացին եւ նրան համախոհ կիլիկեան հոգեւորականութիւնը փորձ են անում փոխել Հայ եկեղեցու տեղը Տիեզերական եկեղեցու կառուցուածքում: Նրանք պնդում էին Բիւզանդական կայսրութեանը՝ հայոց կաթողիկոսին տալ Անտիոքի պատրիարքի իրաւասութիւն՝ իհարկէ, նրա առաջադրման իրաւունքը վերապահելով բիւզանդական կայսրին:

Յակոբ Քեռսէեան

Ս. ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. Եպիփան Կիպրացին (310-403)[1] *պատկանում է Տիեզերական Եկեղեցու այն հայրերի շարքին, որոնց երկերը սկսել են հայերէն թարգմանուել Ե դարից ի վեր: Արդէն Մովսէս Խորենացին նրան յիշատակում է իբրեւ իրեն քաջ ծանօթ հեղինակութեան: Նա վկայակոչում է ս. Եպիփանի նշանաւոր «Յանդիմանութիւն հերձուածոց»*[2] *(յունարէն՝ «Դեղատուփ») աշխատութիւնը*[3]*, թերեւս՝ հայերէն թարգմանութեամբ*[4]*: Եպիփան Կիպրացու այս աշխատութիւնից լայնօրէն օգտուել է Եղնիկ Կողբացին՝ հայերէն թարգմանելով եւ իր երկասիրութեան մէջ զետեղելով իրեն անհրաժեշտ հատուածները*[5]*: Հայ թարգմանական մատենագրութիւնը մեզ է հասցրել այս մեծահամբաւ եկեղեցականի ճառերի եւ մեկնութիւնների բազմաթիւ թարգմանութիւնները*[6]*: Հրատարակուած է դրանց միայն աննշան մասը*[7]*: Բազմաթիւ ճառեր եւ մեկնութիւններ տակաւին սպասում են իրենց հետազօտողին ու հրատարակողին: Այդօրինակ միաւորներից է ս. Եպիփանի Աւետարանի ճառական մեկնութիւնը, որ մեզ յայտնի է վեց ընդօրինակութեամբ՝ ՄՄ NN 4750, 949, 2873, 5541, 7312, 7314 ձեռագրերով: Ի դէպ, առաջինից զատ, միւս բոլոր ձեռագրերը թիւրիմացաբար ներկայացուել են իբրեւ ս. Եպիփանի «Ճառք»*[8]*: Հեղինակի այս աշխատութեան յունարէն բնագիրը մեզ չի հասել*[9]*: Ուստի նրա հայերէն թարգմանութիւնն այսօր ունի բնագրի արժէք:*

Մեկնութեան առանձին հատուածները՝ Մարդու արարչագործումը (թ. 1-28), Մելքիսեդեկի մասին (թ. 56-84), Մարիամի այցելութիւնը Եղիսաբեթին (թ. 85-95), Սուրբ մկրտութեան մասին (թ. 106-119, 184-186), 1750 թ. ընդօրինակուած վենետիկեան մի ձեռագրից քաղել եւ անգլերէն է թարգմանել F. Conybeare-ը[10]*: Ելնելով հրէական աւանդազրոյցների առատ օգտագործման ու բաբբիական իմաստութեան իրազեկութեան փաստից՝ նա ենթադրում է, թէ խնդրոյ առարկայ երկի հեղինակն իրապէս ս. Եպիփան Կիպրացին է*[11]*, որ յայտնի էր իր եբրայերէնի եւ եբրայական մտքի քաջ իմացութեամբ: Լեզուի եւ ոճի դասական պարզութիւնը հիմք է տալիս մտածելու, որ երկը հայերէն է թարգմանուել Ե դարում: Թարգմանութեան վաղեմութեան մասին է վկայում եւ այն, որ նրանցից օգտուել է Մովսէս Խորենացին:*

Ինչպէս նկատեցինք, Պատմահայրը, վկայակոչելով Եպիփան Կիպրացու «Հերձուածոցն յանդիմանութիւն» աշխատութիւնը, բերում է Քամի հետնորդներից Քուշի որդի Ներբովթի՝ Սեմի որդիների հան-

1 Վարքը տե՛ս **Migne**, PG, t. 41, col. 115-152. «Ցայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, էջ 212-214 (աշխարհ. թարգմ.). «Գանձասար» Բ, 1992, էջ 291-301:

2 «Պատմութիւն», 1913, գիրք Ա, գլ. Զ, էջ 24-25

3 Adv. Haereses, գիրք Բ, մասն Բ, էջ 84. տե՛ս **Migne**, PG, t. 42:

4 **Հ. Յակովբոս վ. Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք. հետազօտութիւնք եւ բնագիրք, Վիեննա, 1895, մասն Ա, էջ 90

5 Տե՛ս «Բազմավէպ», 1889, էջ 315-317, 386:

6 Դրանց մատենագիտութիւնը տե՛ս **հ. Գարեգին վ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ դդ.), Վենետիկ, 1889, էջ 401-418. **M. Geerard**, Clavis Patrum Graecorum, Brepolis-Turnout, 1974, vol. II, թ. 324-341:

7 «Սրբոյն Եպիփանու ասացեալ զանունս վասն ականց պատուականաց», «Բազմավէպ», 1856, փետրուար. «Յաղագս սուրբ եւ նկարագրեալ տերունական պատկերին ի դաստառակի սրբոյ», «Արարատ», 1869, էջ 185-190, 214-220, 1870, էջ 241-243. «Գիրք հերձուածոց», հրատ. Գ. Տէր-Մկրտչեան, Վաղարշապատ, 1892 (որ իրականում այդ ընդարձակածաւալ գրքի գլուխների ցանկն է. տե՛ս **հ. Յ. Տաշեան**, նշ. աշխ., էջ 90). **F. N. Finck**, Des Epiphanios von Cypern armenisch und griechisch, Marburd, 1902. **M. Van Es Broeck**, Archéologie d'une homelie sur la Paque attribuée a Chrysostome ou Epiphane de Chypre, "Armenian and Biblical studies", ed. by M. E. Stone, Jerusalem, 1976, թ. 173-177:

8 Ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», կազմ. Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Երեւան, 1965, հտ. Ա, էջ 445, 893, 1278, 1971, հտ. Բ, էջ 129, 505: Մեկնութիւնն առկայ է նաեւ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի ձեռագրերում. տե՛ս **հ. Գ. Զարբհանալեան**, նշ. աշխ., էջ 402-413:

9 **Geerard**, նշ. աշխ., թ. 338 (N 3785)

10 Տե՛ս **F. Conybeare**, The Gospel Commentary of Epiphanius. "Zeitschrift für die neutestament liche Wissenchaft und die Kunde der alteren Kirch". t. 7, 1906, թ. 318-339, t. 8, 1907, թ. 221-225:

11 Նոյն, թ. 318

դէպ կատարած չարագործութիւնների, Պաղեստինից նրանց հալածական անելու վերաբերեալ աւանդազրոյցը[12], որ Եպիփանը բաւական մանրամասն պատմում է Աւետարանի մեկնութեան «Յաղագս Մելքիսեդեկի գալոյն» ճառի վերջում[13]: Խորենացու՝ Եպիփանի մատենագրական ժառանգութեանը իրազեկ լինելու այս իրողութիւնը, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Հ. Գ. Զարբհանալեանը, «պատկառելի հնութիւն մը տալ կը թուի»[14] մեծահամբաւ վարդապետի աշխատութիւնների հայերէն թարգմանութեանը: Այսօրինակ փաստերի առկայութիւնը մեզ կարելիութիւն է ընծայում ս. Եպիփանի Աւետարանի մեկնութեան հայերէն թարգմանութիւնը գոնէ վերապահօրէն կապել Մովսէս Խորենացու անուան հետ:

Մեկնութեան թարգմանութեան մէջ առկայ հայաշունչ տարրերի առատութիւնը թոյլ է տալիս հաստատել, որ այն բնագրի տեղայնացուած տարբերակն է: Տեղայնացումը դրսեւորւում է երկու կարգի իրողութեամբ՝ բովանդակութեամբ եւ սուրբգրային վկայութիւնների բառաքերականական առանձնայատկութեամբ: Թէպէտ յունարէն բնագրի բացակայութեան պատճառով դժուար է դատողութիւններ անել տեղայնացման չափ ու ծաւալի մասին, այսուհանդերձ ներքոբերեալ օրինակների ընդգծուած հատուածները ենթադրել են տալիս, որ դրանք բացակայել են բնագրում: Այս նշանակում է, որ այդ հատուածները կարելիի սահմաններում յստակեցնում են տուեալ երեւոյթի ընդհանուր պատկերը: Բերենք առաւել բնորոշ թուացող հետեւեալ օրինակները, որոնք վերաբերում են բովանդակութեանը.

«Յովհաննէս» «Աւրհնութիւն» ըստ հեբրայեցւոցն թարգմանի, նմանապէս եւ՝ ի բարբառ հայերէն»:

«Եւ ի պատճառ կնոջն յայրին բնակելոյ շինեցաւ քաղաք եւ եդաւ անուն նորայ ի մեծէն Յեսուայ «Տուն Եփրատայ», ուստի եւ ի հայերէն բարբառ դարձուցանելով՝ զԵփրատն «Պտղաբերութիւն» յորջորջի»:

«Աստանաւր թիւ Ողոմպիադին, զոր կարգեալ էր Եբրայեցւոցն, զոր իմաստունքն յունաց Բեստեքեստոն անուանեն, եւ Հայոց մեծաց

12 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 24-25

13 Հ. Գ. վ. Զարբհանալեան, նշ. աշխ., էջ 403-404

14 Նոյն, էջ 402

վարդապետքն Եկեղեցւոյ Նահանջ կոչեն»:

«Եւ նոյնժամայն երեւեցաւ Աստուած փառաւք մեծաւ հայելով քաղցրութեամբ ի Աբէլ եւ ի պատարագն նորա, եւ զի նա էր ընդունակ, եւ ի Կայէն եւ ի զոհ նորա ոչ նայեցաւ, որ նուազագոյն է քան զհայելն...»:

Եթէ նախորդ օրինակները ինքնին հասկանալի են, ապա այս վերջինը ներկայացնում է լեզուաբանական եւ խորհրդաբանական հայեցակէտ: Ընդգծուած հատուածը ցոյց է տալիս, որ «նայել» եւ «հայել» բայերի այսօրինակ տարբերակում կարող էր միայն հայ թարգմանիչը կատարել: Նրա ընկալումով՝ «նայել» բայն ունի նիւթական, իսկ «հայել»-ը՝ հոգեւոր իմաստ:

Տեղայնացման այլ սկզբունք է ներկայացնում յատուկ անունների բառախաղային ստուգաբանութիւնը, որ կարող էր կատարել միայն հայ թարգմանիչը: Այդպիսի տեղայնացման օրինակներ են.

«Եւ ասէ Սեդեկ՝ մինչեւ ո՞ւր, Սէմ: Եւ կոչեցաւ տեղւոյն այնորիկ Երուսաղէմ մինչեւ ցայսաւր»:

«Եւ հասանէին յերկիրն Պաղեստին, որ թարգմանի տեղի ասպարիսի, մարտի եւ պատերազմի»:

«Ուստի եւ Յորդանան ի մերս դարձուցանելով՝ «էջ նորա» թարգմանի»:

Բովանդակութեան հետ կապուած տեղայնացման մէկ այլ դրսեւորում է ազգային աւանդութեան ներհիւսումը թարգմանութեան հետ: Բերենք առաւել յատկանշական օրինակներից մի քանիսը:

Արարչագործումից յետոյ Աստուած Ադամին եւ Եւային շրջեցնում է Գողգոթայի չորս կողմը, ապա «ի յերկրորդում հինգշաբաթուն առաջնորդեալ հանէ զնոսա ի սուրբ լեառն Զիթենեաց եւ յերրորդ ժամէն մինչեւ ի վեցերորդ ժամն աստուածային զարմութեամբն անաշխատ հասուցանէր զնոսա յԱրարատեան գաւառն ի միջամուխ Հայաստանեաց աշխարհին յարեւելս կոյս ի լեառնն, յորում տապանն Նոյի այժմ հանգուցեալ կայ»:

Նոյի տապանը Այրարատեան նահանգի համանուն լեռան վրայ հանգչելու վերաբերեալ հնագոյն վկայութիւններից է նաեւ հետեւեալը.

«Յառաջնում ամսեանն, որ աւր մի էր, ըստ եբրայեցւոց լուսնաթիւ տոմարին, եւ նա կայր հաստատեալ ի վերայ լերինն Այրարատեան, որ է Մասիս»:

Նոյեան տապանի՝ Արարատ լեռան վրայ կանգնելու մասին վիպող վաղնջական այս աւանդութիւնը, որ տարբերւում է Աստուածաշնչի ասորերէն «Պեղիտտո» բնագրից, ուր յիշւում է Կարդու լեռը[15], համեմատւում է Աստուածաշնչի յունարէն «Եօթանասնից» բնագրի հայերէն թարգմանութեան հետ[16]: Աստուածաշնչում Հայաստանի վերաբերեալ առկայ բոլոր յիշատակումները մէկտեղուած են հետեւեալ աշխատութեան մէջ՝ V. Inglisian, Armenien in der Bille /Studien zur armenischen Gesch., VII/ Wien, 1935: Սակայն յատկանշականն այստեղ նոյն լեռան Արարատ=Մասիս անուանումի փաստն է, ինչն ինքնին դրսեւորում է ազգային այն գիտակցութիւնը[17], որ ձգտում էր սուրբգրային տեղանունները կապել Հայաստանի հետ՝ մի կողմից՝ Աստուածաշնչի սրբութեամբ նուիրագործելով ազգային աւանդութիւնը, եւ միւս կողմից՝ տեղայնացնելով Աստուածաշունչը: Ազգային արժանապատուութեան այդ զգացումով են ներթափանցուած հետեւեալ տողերը.

«Եւ զլեառն Այրարատ հաւասարեալ լերինն Սիովնի պատուելով աւրէնսդրութեամբ, ուստի եւ յանչափական սիրոյ, զոր ունի առ արարածս իւր, զամենայն բարկութիւն դարձուցանէ ի բարութիւն...»:

Աստուածաշնչի մէջ յիշուող նշանաւոր Բաղաամը[18] շրջել է բովանդակ Միջագետքը, Հայաստանը եւ Պարսկաստանը՝ աւելի քան 35 տարի շարունակ քարոզելով Միածնի աշխարհ գալու մասին[19]:

15 Vetus Testamentum Syriace. luxta Simplicem syrorum versionem. Pars I, Lugdun. Batavorum, 1977, թ. 13-14. Հ. Գ. Մելքոնեան, Հայ-ասորական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1970, էջ 76-78

16 ՄՍ. Ը 4

17 Հմմտ. Գ. Վ. Աբգարեան, Մասիսի անուանադրութիւններն ըստ Մովսէս Խորենացու եւ Անանունի, «Էջմիածին», 1971, N ԺԲ, էջ 28:

18 Թիւ. ԻԳ, ԻԴ

19 Բաղաամի այս առաքելութեան իմաստային բացատրութիւնն օգտագործուել է Ստեփանոս Սիւնեցու եւ Յովհան Օձնեցու եկեղեցաբանական աշխատութիւններում. «Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառօտ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ նորին Շառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ», աշխատ. Սահակ վրդ. Ամատունու, Ս. Էջմիածին, 1917, էջ 13-16. «Յաղագս կարգաց Եկեղեցւոյ», տե՛ս

Տեղայնացման բաւական ուշագրաւ օրինակ է երեք մոգերի եւ Աբգար Թագաւորի վերաբերեալ պատմող զրոյցը: Մեսիայի ծննդեան մասին աւետող աստղին հետամուտ երեք մոգերի ճանապարհն անցնում է Ասորիքի տարածքով: Արքայանիստ Եդեսիային նրանց մօտենալու մասին ականջալուր է լինում այն ժամանակ տակաւին երիտասարդ «Աբգար Թագաւոր Հայոց: Եւ նա ել ընդառաջ նոսա, եւ էր մանուկ տիւաք եւ այնմ ամի ընկալեալ եւս էր զթագ պատուի թագաւորութեանն Հայոց մեծաց եւ բերեալ զնոսա մեծաւ պատուով եւ եմոյծ ի քաղաքն Ուրհայ փառաւորապէս հանդիսիւ մեծաւ եւ բազում երգաւք արուեստականաւք առ ի զբաւանս լինելոյ: Եւ արար նոցա ընդունելութիւն մեծ եւ զիւրաքանչիւր ի թագաւորացն ընծայեաց, այլ եւ զնախարարս նոցա նմանապէս, եւ նոքա պարգեւս անգիւտ յականց պատուականաց շնորհեցին նմա, իսկապէս եւ նա կամէր արգելուլ զնոսա առ սրտին սիրոյ աւուրս բազումս եւ ոչ առին յանձն՝ շնորհ ունելով նմա, զի փութային գնալ եւ հասանել, որում ցանկային»:

Հայոց Աբգար Թագաւորի անունը բերւում է նաեւ մեկնութեան այն հատուածում, ուր ի շարս այլ արքաների, որոնց օրօք Օգոստոս կայսրն իրականացրեց Աւետարանից քաջ յայտնի առաջին մարդահամարը, յիշւում է նրա անունը եւս: Նորածին Մանկանը տեսնելու եկած մոգերը մարդահամարի կապակցութեամբ 18-րդ օրը թուղթ յղեցին Օգոստոս կայսերը՝ վերջինիս առաքելով նաեւ Աբգար Թագաւորի հրովարտակը, «զի ընդ այն ժամանակն հնազանդեալ եւս էին Հայք եւ Պարսիկք եւ Ասորեստանեայք ընդ ձեռամբ Աւգոստեա արքայի Հռոմայեցւոց...»:

Մեկնողական այս երկը մէկ անգամ եւս հաստատագրում է Թադէոսի՝ Հայաստանում առաքելագործելու, Ադդէի՝ նրան աշակերտելու մասին կենցաղավարող վաղնջական աւանդազրոյցը, որ, մեկնիչի ասելով, յիշատակւում է «ի գիրս Կանոնաց»:

Պակաս հետաքրքրական չէ եւ այն տեղեկութիւնը, ըստ որի՝ Աբրահամ նահապետի եղբօրորդու՝ Եմրանի սերնդից են պարսից եւ Հայոց Արշակունիները, ինչպէս նաեւ «սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց մեծաց, որ գերազանց քան զամենայն սուրբս եւ ազգն Կամսարական, որով զանց արարեալ մեր առ այժմ կարճելով զերկայնութիւն

«Յովհաննու Աձնեցւոյ Իմաստասիրի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833:

յաճախապատում տաւնին ի տաւնիս գալով ասպարէզ»:

Մեկնութեան մէջ յիշւում է նաեւ Ազքանազեան զօրքը, որ մասնակցում է Գոգի եւ Մոգի Թագաւորների՝ դէպի Խուժիստան եւ Հընդկաստան կատարած արշաւանքներին:

Մեկնութեան հայերէն թարգմանութեան մէջ պակաս ուշագրաւ երեւոյթ չէ դաւանաբանական տեղայնացումը: Այսպէս՝ Մարիամին աւետիս տուող Գաբրիէլ հրեշտակապետի շուրթերով արտայայտւում է Հայ Եկեղեցու որդեգրած քրիստոսաբանական յայտնի տեսակէտը: Խօսքը Մարիամին ուղղելով՝ հրեշտակապետն ասում է.

«Եւ որքան մեծաւ զաւրութեամբ ճգնեալ ի մանկութենէ եղեր սուրբ, եւ սրբութեան սիրով եւս առաւել մաքրէ եւ տաճարացուցեալ յաւրինէ զքեզ եւ արժանաւորէ զքեզ լինել մայր Աստուծոյ Բանին, որ է ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յառաջ քան զյաւիտեանս՝ ծնեալ ի Հաւրէ ի փառս Հաւր եւ Հոգւոյն, եւ այժմ ի քէն մարմնանայ բնութեանցն միաւորութեամբ, միութեամբ, անձնաւորութեամբ, էութեամբ եւ ոչ փոփոխմամբ, այլ խառնմամբ: Արդ, որ շաւշափեցաւ, նոյն Ինքն է Աստուած Բանն՝ ծնեալ ի Հաւրէ անմայր յառաջ քան ցյաւիտեանս եւ անժամանակ, եւ այսաւր ի սրբոյ Կուսէն՝ անհայր եւ ընդ ժամանակաւ»:

Դաւանաբանական նոյն այս տեսակէտն է ընկած նաեւ հետեւեալ տողերի հիմքում.

«Այլ եւ դաւանի եւս յամենեցուն ծնեալն ի նմանէ Յիսուս միաւորութեամբ Բանին մի Տէր եւ Արարիչ յետ անճառ միաւորութեանն խառնմամբ եւ ոչ փոփոխմամբ»:

Մեկնութեան հայերէն թարգմանութեան մէջ տեղ են գտել նաեւ Հայ Եկեղեցու մարեմաբանութեան հետազօտմանը նպաստամատոյց գաղափարներ: Ահա դրանցից մէկը. ծննդաբերելուց յետոյ Տիրամօր կոյս մնալու վերաբերեալ Հայ Եկեղեցու դաւանած տեսակէտի հնաւանդութեան մասին է վկայում հետեւեալ պարբերութիւնը.

«Եւ սուրբ եւ աստուածային քո յղութիւնդ առանց հեշտութեան եւ արտաքոյ բնութեանս: Աւն անդր եւ սուրբ ծնունդ քո հրաշափառ եւ գերիվերոյ անճառ եւ անհաս իմաստից հասանելոյ առ զաւրութիւն, վասն զի կուսութեամբ ծնցիս առանց երկանց եւ ցաւոց եւ մնաս կոյս՝ ունելով քո սեպհական զանապականութիւն հանդերձ կուսութեամբ...»:

Տեղայնացման այլ կարգի իրողութիւն է ներկայացնում սուրբգրային քաղուածքների վկայաբերումն ըստ Աստուածաշնչի հայերէն ընկալեալ թարգմանութեան: Ասուածը հաստատագրենք հետեւեալ օրինակներով.

«Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս, եւ ետես Աստուած զլոյսն, զի բարի է, եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին, եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զխաւարն կոչեաց գիշեր» [Մն. Ա 3-4]:

«...իջումն քրտանցն յաստուածային մարմնոյն ոլոռն» [Ղուկ. ԻԲ 44] (վերջին բառերը բացակայում են յունարէն բնագրում):

«Ասէ ցնոսա՝ բարձին զՏէրն իմ [ի գերեզմանէ աստի], եւ ոչ գիտեմ՝ ուր եդին զնա» [Յովհ. Ի 13] (փակագծում եղած բառերը բացակայում են յունարէն բնագրում):

«Եւ ասէ Պետրոս ցՅիսուս՝ Տէր, եւ Դու զամենայն իսկ գիտես եւ ամենայնն իսկ ճանաչես, եւ եթէ սիրեմ զՔեզ» [Յովհ. ԻԱ 17] (յունարէնն ունի այլ շարահիւսութիւն. «դու ճանաչես, եթէ...»):

«Ունիմք քահանայապետ զՅիսուս Քրիստոս, որ մի անգամ մտանելով ի սրբութիւնսն՝ յաւիտենական գտեալ զփրկութիւն» [Եբր. Թ 11-12] (յունարէնն ունի այլ շարահիւսութիւն. «յաւիտենական փրկութիւն գտեալ»):

Եպիփան Կիպրացու խնդրոյ առարկայ աշխատութեան հայերէն թարգմանութիւնը խիստ կարեւոր է որպէս հայոց լեզուի բառագանձի հետազօտման սկզբնաղբիւր: Նրանում առկայ հետեւեալ 43 բառամիաւորները բացակայում են Նոր հայկազեան բառարանում. այրեցագործ, զեն անբդելի, անկենդանաբնակ, անյատկաբար, ամաւթահեղ, առաջապատում, արտաւսրակոծ, բազմավայր, բանապահ աւանդութիւն, բանդակել, բանարկութիւն, բարէհեղ, .բարձագահ, բնաբուն, բնասուրբ, բնափոր, գրկապինդ, ելմուղպա Աբէլուհի, զաւիրանատես, իմաստահանճար, լաւուտ Կայենուհի, ընդել, լուսունակ, ծովապահ, կեղաստեա, կրծաբախ, հարցաւորել, հնաբուն, համանդով, մանկաբան յանդիմանութիւն, մարմնահանճարիմաց, մտակոծ, յայտարկութիւնք, ենգախեռ, շուրջանեալ, սեղանամուտ, տիրան, տիրանաց, վերագահ, ցայգաւթ, ուղղել, փորձաւոր, Քրիստոսեղէն:

Այս երկասիրութիւնը խիստ շահեկան սկզբնաղբիւր է սուրբգրային պարականոնների հետազօտման համար: Իրեն յատուկ քաջատեղեակութեամբ հեղինակը հին հրէական տարբեր աղբիւրներից հաւաքել եւ իր մեկնութեան մէջ զետեղել է զանազան աւանդազրոյցներ, որոնք իւրովի գալիս-լրացնում են աստուածաշնչական պատումի այս կամ այն դրուագը: Մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում Մննդոց գրքի հետ կապուած պարականոն զրոյցների այն շարքը, որ բերուած է առաջին ճառում: Յատկապէս ուշագրաւ է Աբէլի եւ Կայէնի պատմութեանն առնչակից զրոյցը, որ բացակայում է մեզ յայտնի հինկտակարանային պարականոններում[20]: Ըստ այդ զրոյցի՝ Աբէլն ու Կայէնը ծնւում են՝ իրենց զուգընկեր ունենալով Աբէլուհի եւ Կայէնուհի քոյրերին: Կայէնը ցանկանում է տիրել գեղեցկուհի Աբէլուհուն: Սակայն Աբէլը սաստելով արգելում է նրան: Սա պատճառ է դառնում այն խոր թշնամանքի, որ Կայէնը տածում է Աբէլի նկատմամբ: Աւանդազրոյցի այս տարբերակը պատմւում է նաեւ Midrasch-ի մէջ[21]:

Նորկտակարանային անվաւերներից ուշագրաւ է երեք մոգերի վերաբերեալ բերուած աւանդազրոյցը, որ բաւական տարբերւում է մեզ յայտնի սուրբգրային անվաւերներից[22]: Ըստ ս. Եպիփանի բերած տարբերակի՝ երեք մոգերը՝ Զահտունը, Աշթաւը եւ Արեւը (Նորկտակարանային անվաւերների մէջ դրանք յայտնի են Գասպար, Մելքոն, Բաղդասար անուններով), սերում են Աբրահամ նահապետի երկրորդ կնոջից՝ Քետուրայից[23]:

Նորկտակարանային անվաւերներից հետաքրքիր է նաեւ Մարկոս աւետարանչի մասին վիպող մանրադրուագը: Ըստ ս. Եպիփանի բերած պատմութեան՝ Յիսուսի ձերբակալութեան ժամանակ փախչողների մէջ երեւացող մերկանդամ երիտասարդը[24] Մարկոս աւետարանիչն է: Նա Մարկոսի հետ է նոյնացւում նաեւ առաքելական հայրերի երկերում[25]:

Եպիփան Կիպրացու Աւետարանի մեկնութիւնը շահեկան է նաեւ արեւելաքրիստոնէական ծէսի, մասնաւորաբար՝ սուրբ պատարագի եւ մկրտութեան վաղնջական փուլի հետազօտման համար: Այս տեսակէտից մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում յատկապէս մկրտութեան ծէսի հետեւեալ նկարագրութիւնը.

«Եւ ապա [Պետրոս] հրամայէր Տիրամարն դառնալ յարեւմուտս եւ երիցս հրաժարել ի սատանայէ՝ ոչ ինչպէս ունելով առ այս, այլ զի առաջին էր մկրտութիւնն, եւ հարկ էր այսպէս լինել, զի ամենայն ազգ մարդկան ուսանին այսպէս առել, եւ ապա հրամայէ դառնալ յարեւելս եւ հաւատալ երիցս անգամ յԱմենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ զՈրդի եւ Սուրբ Հոգի: Եւ արար այնպէս: Եւ հրամայեաց իւղաբերիցն առնուլ զնա առ իւրեանս եւ մերկացուցանել զնա: Եւ նոքա արարեալ՝ նախ արկին սփածանելի եւ ապա մերկացին զհանդերձն: Եւ ահա ոչ էր անդ պէտք սփածանելւոյ, զի լոյսն համագոյ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ պահեալ ծածկէր զնա որպէս զնախամայրն ի դրախտին, մանաւանդ թէ միաւորեալ ընդ նմա: Եւ Յովհաննէս առեալ զձեռանէ նորա՝ կացոյց մերձ յաւազանն: Եւ Պետրոս առ զջուրն, զոր պատրաստ ունէին, արկ յաւազանն: Եւ շարժեալ Հոգւոյն Սրբոյ երգէր եղանակաւ «Զայն Տեառն ի վերայ ջուրց»: Սոյնպէս եւ մեծասանքն միաբան երգէին եւ երիցս անգամ զսուրբ միւռոնն խաչանման անցուցեալ ի ջուրն՝ ասելով երիցս «Ալէլուիա»: Եւ առեալ Պետրոս զաջոյ ձեռանէ Տիրամարն եւ Յովհաննէս զձախոյն՝ եւ իջուցին յաւազանն: Եւ առեալ Պետրոս ի գրոցն՝ արկանէր երիցս անգամ ի վերայ գագաթանն՝ ասելով. «Յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»»:

Մեկնութիւնից իմանում ենք, որ Պետրոս առաքեալը «Հրամայեաց իննուցն (առաքեալներից իննին - Ց. Ք.) փոխարկելով զմիմեանս մկրտել զնորահաստատ երկու հազարսն յանուն Հաւր եւ Որդւոյ

20 Տե՛ս «Թանգարան հին եւ նոր Նախնեաց», Ա, «Անկանոն գիրք Հին Կտակարանաց», Վենետիկ, 1896, էջ 314-319:

21 Տե՛ս "Еврейская энциклопедия", т. 1, СПб., с. 208. "Мифы народов мира. Энциклопедия", т. 1, М., 1991, с. 608: Առհասարակ այդ զրոյցների հնաւանդութեան մասին է վկայում այն փաստը, որ դրանք ի յայտ են գալիս տակաւին «Եօթանասնից» թարգմանութեան մէջ. Եղ. ԻԲ 7, Ղեւ. ԻԳ 11, Բ Օր. ԻԵ 5. տե՛ս "Еврейская энциклопедия", т. 11, с. 31:

22 Տե՛ս «Թանգարան հին եւ նոր Նախնեաց», Բ, «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898:

23 Ծն. ԻԵ 1-6, Ա Մն. Ա, 32

24 Տե՛ս Մարկ. ԺԴ 51:

25 Տե՛ս Բիւզանդ Եղիայեան, Քննական պատմութիւն սուրբգրային ժամանակներու: Ներածութիւն Նոր Կտակարանային, Երուսաղէմ, 1972:

եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ աւժանդակէր Աստուածածինն եւ որ ընդ նմա, եւ ելթանասունքն մոմեղինաւք լուցելաւք կնքահայր կացուցանէին յերից հազարացն եւ երկրպագելով ողջունէին զսեղանն եւ զաւազանն եւ զգիրս Կանոնացն, զոր գրեաց Թովմաս...»:

Այս նշանակում է, որ ս. սեղանի եւ աւազանի օրհնութեան եւ մկրտութեան կանոնի նախասկզբնական տարբերակները գոնէ աւանդաբար կապւում են Թովմաս առաքեալի անուան հետ:

Մեկնութիւնը նուազ օգտակար չէ նաեւ միջնադարի քրիստոնէական կերպարուեստի մէջ գերիշխող թեմաների եւ յօրինուածքների ակունքների ուսումնասիրման առումով (Բեթղեհէմի մսուրը՝ Եւայի, իսկ Գողգոթան Ադամի գերեզմանն է): Սուրբ Մնդեան պատկերագրութեան հետազօտման համար օգտակար է թւում հետեւեալ գրուագը.

«Եւ յերրորդ պահու գիշերոյն ծնեալ Բանն Աստուած մարդ ի Կուսէն ի վերայ աստուածաշէն բազկաց նախամուրն Եւայի... Այլ մինչեւ ցայս վայր պահեալ կայր Մելքիսեդեկ կենդանի հրամանաւն Աստուծոյ եւ էր ընդ յայն ժամանակն ի լեառն Թաբոր... Եւ ի նմին ժամու բերեալ զնա հրեշտակացն կացուցին ի յայրն առաջի Բանին մարմնացելոյ, մինչդեռ եւս էր ի վերայ բազկացն Եւայի եւ ունէր ի ձեռին իւրում խնկանոց ոսկի եւ ծխանոց արծաթի եւ սուրբ եւ սպիտակ թաշկինակաւ երեք նկանակ հաց բաղարջեայս եւ պատուական բաժակաւ գինի անապական... Եւ ընծայեաց Ձեռնագրողին իւր եւ Արարողին զաստիճան քահանայութեան եւ զպատիւ թագաւորութեան...»:

Վկայաբերուած տողերից տեղեկանում ենք, որ Մնդեան պատկերագրութեան մէջ հրեշտակների կամ հրեշտակի առաջնորդութեամբ դէպի աստուածընկալ մսուր գնացող լուսապսակով մարդը հինկտակարանային Մելքիսեդեկն է, որ մարմնացած Բանին պէտք է պարգեւի Նրան իսկ պատկանող քահանայական եւ թագաւորական պաշտօնները[26], որոնք խորհրդանշւում են մոգերի ընծաներով եւ նիւթականացւում Քրիստոսի տնօրինական գործունէութեամբ:

Մասնաւորաբար Աստուածածնի եւ Մանկան պատկերագրութեան

26 Տե՛ս թէկուզ «Հայկական մանրանկարչութիւն», Երեւան, 1969, պատկեր N 25:

մէջ հաստատագրուած կանոնական յօրինուածքի ակունքների բացայայտման տեսակէտից հաշուառելի եւ խիստ հետաքրքիր է Եպիփան Կիպրացու բերած սուրբգրային այն անվաւերը, ուր պատմւում է Հերովդէսից հալածական սուրբ ընտանիքի՝ Եգիպտոսում անցկացրած օրերի մասին: Եգիպտացի մոգերն ու իմաստունները, Աստուծոյ ողորմութեամբ հաղորդակցուելով անհասանելի «եւ խորին խորհրդոց... փութանակի հրամայեցին ոսկեգործացն եւ արարին պատկեր ոսկի իբրեւ կանգնաւ միով երկայն եւ կիսով լայն ի դէմս Կուսին Մաւր եւ Մանուկ Տղայ ի գիրկս նորա: Եւ եդին փառաւորապէս ի վերայ կամարաց բարաւորին»:

Վկայաբերուած տողերով հաստատւում է ոչ միայն Աստուածածնի եւ Մանկան պատկերագրութեան հնաւանդ լինելը, այլեւ մատնանիշ արւում պատկերը բարաւորի մէջ զետեղելու կանոնական սովորոյթի վաղ քրիստոնէական ծագումը:

Ծաղկ Ռընու

ԱՍՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ* ՏՕՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ Դ ԵՒ Ե ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՈՑ ԳՐՔԻ**

Տօնական ծիսակարգի էութեան ճշմարիտ գնահատանքը սկսւում է ծիսական արարողութեան եւ նրա նախնական կառուցուածքի ստոյգ բնութագրումով, որոնք միշտ էլ ձեւաւորուած են եղել նպատակին համապատասխան: Ուստի Դ-Ե դարերում Երուսաղէմում Յայտնութեան տօնի խնդրոյ առարկան ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ ուսումնասիրել արարողութեան ընթացքում գործածուած ծիսակարգերը եւ տեքստերը: Փաստաթղթերը, որոնք պէտք է վկայակոչենք այդ ժամանակահատուածում տօնի ուսումնասիրման համար, երկուսն են՝ "Itinerarium Egeriae"[1] եւ հայկական հին Ճաշոցի[2] ներկայումս յայտնի ձեռագրերը: Այս տեքստերը, որոնք առանձնակի կարեւորութիւն ունեն Սուրբ քաղաքի ծիսակարգի պատմութեան համար, ընդգրկում են մի ժամանակաշրջան, որը սկսւում է 385-ին[3] եւ վերջանում մօտաւորապէս 440-ին[4]: Նշուած տեքստերն իրականում հանդիսանում են ամենաառաջին երկու վկայութիւնները, որոնց շնորհիւ մենք իրազեկ ենք այդ դարերի ծիսական կարգին՝ նախքան դեկտեմբերի 25-ը որպէս Ս. Մննդեան տօն ընդունելը: Այս տօնի ներմուծմանը յաջորդող ծէսերի եւ ծիսական տեքստերի ուսումնասիրութիւնը յաւակնում է մեզ տալ Երուսաղէմի մայր եկեղեցու յունուարի 6-ի ծիսական արարողութեան ճշմարիտ նախնական պատկերը[5]:

Ա. ՅՈՒՆՈՒԱՐԻ 6-Ի ՏՕՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յունուարի 6-ի ծիսական արարողութեան կառուցուածքի ամբողջական վերականգնումը, որից մենք զրկուած էինք "Itinerarium Egeriae"-ի ձեռագրի բացերի պատճառով, հնարաւոր դարձաւ շնորհիւ հայկական բազմաթիւ Ճաշոցների, որոնք Սուրբ քաղաքի յունարէն Տօնացոյցից արուած թարգմանութիւններ[6] են: Այդ երկու հին ձեռագրերի[7] օգնութեամբ մենք ծիսական արարողութիւնները ճանաչում ենք այնպէս, ինչպէս որ դրանք կատարուել են Ե դարի առաջին քա-

* Տօնը կոչւում է նաեւ Յայտնութիւն, որը հաւասարապէս վերաբերում է թէ՛ Տիրոջ Մննդեան եւ թէ՛ Մկրտութեան տօներին: Թարգմանութեան մէջ նախընտրել ենք «Յայտնութիւն» տարբերակը:

** Զեկուցում կարդացուած Փարիզի Ուղղափառ ինստիտուտի՝ պատարագի ուսումնասիրութիւններին նուիրուած 11-րդ սեմինարի ժամանակ (1964 յունիսի 30-յուլիսի 3):

1 "Itinerarium Egeriae", Editio critica, cura et studio **Aet. Franceschini-Weber,** Turhnhout, 1958

2 Փարիզի ձեռագրի համար տե՛ս BN Arm 44, **F. C. Conybeare,** Rituale Armenorum being the administration of Sacraments..., Oxford, 1905, էջ 507-527: Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի (=ՍՅՄ) ձեռագրի համար տե՛ս ձեռ. N 121, **A. Renoux,** Un manuscrit du Lectionnaire arménien de Jérusalem, "Le Muséon", LXXIV (1961), էջ 361-385, LXXV (1962), էջ 385-398:

3 "Itinerarium Egeriae"-ն Դ դարից աւելի ուշ գրուած համարելու բոլոր վարկածները պաշտպանութիւն չգտան: Աւելի մանրամասն տե՛ս **C. Kretschmar,** Die frühe Geschichte der Jerusalemer Liturgie, "Jahrbuch für Liturgik und Hymnologie", II (1956), էջ 34-36:

4 Հայերէն տարբերակով պահպանուած երուսաղէմեան Ճաշոցը պէտք է որ աւելի շուտ կազմուած լինի, քան Իւվենալ եպիսկոպոսի կողմից դեկտեմբերի 25-ը որպէս Ս. Մննդեան տօն ընդունելը եւ ս. Էտիենին նուիրուած մատոտի բացումը (439 թ. մայիսի 15): Բազմաթիւ փաստարկներ, որոնք պայքարում են յօգուտ այդ վարկածի, կներկայացուեն այլուր: Այստեղ բաւական է նշել, որ երուսաղէմեան ձեռագիրը, ըստ որի՝ Աւագ հինգշաբթի լոյս Աւագ ուրբաթ օրը *քահանայապետի սրահում* կատարուել է ծիսական արարողութիւն, վկայում է ի պաշտպանութիւն առաջարկուած ժամանակահատուածի: Բոլոր այն տեքստերը, որոնք գրուել են աւելի ուշ, քան քահանայապետի պալատի տարածքում 438-439 թթ. սկսուած եկեղեցու շինարարութիւնը, միշտ էլ յստակօրէն են խօսում *եկեղեցու* կամ *սրահի* մասին: Ճաշոցում գործածուած հայերէն *սրահ* բառը թարգմանում է յունարէն ἀυλή բառը, որն Աւետարաններում գործածուել է քահանայապետի պալատը [Մատթ. ԻՁ 58] նշելու համար: Կոստանդինի եւ Հեղինէի կեանքը պատմող յունարէն տեքստը, որը գրուել է Է դարում եւ որը սխալմամբ ս. Պետրոսի Ուրացութեան եկեղեցու կառուցումը վերագրում է Կոստանդինի մօրը, մեզ հաղորդում է, որ ս. Հեղինէն Կայիափայի սրահից (ἀυλή) ոմն սուրբի տաճար (ναός) կանգնեցրեց, որն արժանի է բարեբանութիւնների... (**F. Nau,** Les constructions palestiniennes, "Revue de l'Orient Chrétien", 1905, էջ 162-168):

5 Մենք չենք վկայակոչի վրացական Ճաշոցը, որն ընդգրկում է այդ երկու տօնախմբութիւնները:

6 Տե՛ս ծնթ. 4:

7 Տե՛ս ծնթ. 2:

ռասուն տարիների ընթացքում Երուսաղէմ քաղաքում: Բայց քանի որ դրանք ամբողջական չեն, անհրաժեշտ է աւելացնել նաեւ հայկական բազմաթիւ այլ, դեռեւս ձեռագիր վիճակում գտնուող Տօնացոյցներ[8], որոնք, աւելի ուշ ժամանակաշրջանի պատկանելով հանդերձ, պարունակում են երկու հին Ճաշոցների ծէսերին եւ կանգառներին վերաբերող էջեր:

Յունուարի 5-ը Բեթղեհէմում

Յայտնութեան տօնի ծիսական արարողութիւնները սկսւում են յունուարի 5-ին: Երուսաղէմի եւ Բեթղեհէմի հոգեւորականութիւնն ու հաւատացեալները շատ կարճ մի արարողութեան համար ցերեկը ժ. 16-ին հաւաքւում են Հովանոցն[9] կոչուած կայանում, որն, ըստ աւանդութեան, համարւում է հովիւների աւետման եւ «Փառք ի բարձունս»[10] երգի վայրը: Արարողութիւնը բացւում է ԻԲ սաղմոսի առաջին սկսուածքով, այնուհետեւ ալէլուիաներով հանդերձ երգւում է ՀԹ սաղմոսը, իսկ վերջում ընթերցւում է Ղուկասի Աւետարանի Բ 8-20 հատուածը[11]: Երուսաղէմեան ծիսական արարողութիւնները, շարունակելով հետեւել նորկտակարանեան իրադարձութիւնների ընթացքին, հոգեւորականութեանը եւ հաւատացեալներին առաջնորդում են Բեթղեհէմ՝ Ս. Մանդեան եկեղեցու քարայրը[12]: Տօնացոյցն այս կայանում ունի նոյն կառուցուածքը, ինչ նախորդի համար. Բ սաղմոսը՝ երգուող 7-րդ խօսքի սկսուածքով, եւս մէկ սաղմոս (ՃԹ)՝ ալէլուիայով, եւ աւարտին՝ Մատթէոսի Աւետարանի ընթերցումը Յիսուսի Մանդեան մասին, որին նախորդում է հրեշտակի յայտնութիւնը Յովսէփին[13]:

Այս երեկոյի ծիսական վերջին արարողութիւնը՝ ամենաերկարը, ընթանում էր անմիջապէս Ս. Մանդեան եկեղեցում, ուր բազմութիւնը մտնում էր քարայրից դուրս գալուց յետոյ[14]: Այդ ժամանակ սկսւում են երեկոյեան ժամերգութիւնը եւ հսկումը: Այն ըստ երեւոյթին բացւում էր ՃԼԱ սաղմոսով[15] եւ ներառում տասնմէկ ընթերցուածք: Այս հատուածից սկսած՝ հայկական Ճաշոցի ամենահին երկու ձեռագրերի տեքստն աղաւաղուած է (ընթանում է բացերով)[16]:

---

8 Երկու հին ձեռագրերից բացի, այստեղ կօգտագործուեն նաեւ հետեւեալ ձեռագրերը՝ ՍՑՄ ձեռ. NN 5 (1670), 12 (1379), 15 (1646), 122 (1369), 454 (1299), Փարիզի ձեռ. N 114 (1355), ՄՄ ձեռ. N 979 (1286). **Ն. Ադոնց**, Հայ Եկեղեցու տօները եւ սուրբերը (շարունակութիւն), "Revue de l'Orient Chrétien", 3ème série (1927-1928), էջ 225-278 (Ն. Ադոնցի օգտագործած ձեռագրերը, բացի BN 44-ից, գրուած են 1230-1670 թթ. միջեւ ընկած ժամանակահատուածում): Բազմաթիւ այլ ձեռագրեր, որոնք դեռեւս չենք կարողացել ուսումնասիրել, խօսում են երուսաղէմեան հին ծէսերի մասին: Մենք ուրախութեամբ ցանկանում ենք շնորհակալութիւն յայտնել «Գալուստ Գիւլբենկեան» հիմնադրամին, որի աջակցութեամբ մուտք ունեցանք դէպի բազմաթիւ ձեռագրեր եւ մատենագրական այլ աղբիւրներ, ինչպէս նաեւ՝ օրիորդ Տէր-Ներսիսեանին՝ ՄՄ N 979 ձեռագիրը մեզ տրամադրելու համար:

9 Հանդիսանում է յունարէն ποίμνιον բառի թարգմանութիւն: Սոյն կայեանի գոյութեան մասին տե՛ս **C. Kopp**, Die heiligen Stätten der Evangelien, Regensburg, 1959, էջ 55-56:

10 Ահա թէ ինչ են հաղորդում ձեռագրերը այս առաջին կանգառի մասին. «Յունուարի 5-ին հաւաքւում են *Հովանոցն* կոչուած վայրում տասներորդ ժամին եւ կատարում այսինչ կանոնը...» (Փարիզի BN 44, 144, ՍՑՄ ձեռ. NN 5, 12, 15, 122, 454, **Ն. Ադոնց**, նշ. աշխ.):

11 Կոնայբիոի ոչ ճիշտ ցուցումները եւ նշումները (տե՛ս **F. C. Conybeare**, նշ. աշխ., էջ 517) յունուարի 5-ի եւ 6-ի տեքստերի եւ ծէսերի կազմակերպման հարցում Բաումստարկին մոլորութեան մէջ գցեցին (**A. Baumstark**, Nocturna Laus, Typen frühchristlicher Vigilienfeier... Liturgiewissenschafliche Quellen und Forschungen, Heft 32, Münster, 1957, էջ 63-66): ՃԼԱ 10 եւ ՃԺԸ 176 սաղմոսները չեն մտնում *Հովանոցն* կոչուած վայրում կարդացուած տեքստերի մէջ: Դրանք Գ. Արշարունու ակնարկներն են ԻԲ սաղմոսի վերաբերեալ: Ինչ վերաբերում է Բ 7 սաղմոսին, Գ. Արշարունին յստակօրէն նշում է, որ դրանով է սկսւում այդ երեկոյի ընթացքում կատարուած երկրորդ կանգառի այն արարողութիւնը, որը տեղի է ունենում քարայրում (**Grigoris Archaruni**, Commentaire du Lectionnaire, Venise, 1964, ch. XI, էջ 105-110):

12 «Դրանից յետոյ *Հովանոցն* կոչուած վայրից բարձրանում են ս. Բեթղեհէմ, հաւաքւում են քարայրի ներսում եւ կատարում այսինչ կանոնը» (ՍՑՄ ձեռ. NN 5, 15, Փարիզի ձեռ. N 114, **Ն. Ադոնց**, նշ. աշխ., էջ 106):

13 Արդեօք սաղմոսների այս *ալէլուիան*, որը հնչում է երկու կանգառների ընթացքում բացման սաղմոսից յետոյ, չի՞ խաղում Աւետարանի ընթերցանութեանը նախապատրաստող դեր:

14 «Աւետարանի ընթերցումից յետոյ բոլորն այդտեղից բարձրանում են եկեղեցի, որտեղ սկսում է երեկոյեան ժամերգութիւնը: Այնուհետեւ սկսում է ճրագալոյցը, որի ընթացքում կարդացւում է 12 ընթերցուածք» (ՍՑՄ ձեռ. N 454): «Աւետարանի ընթերցումից յետոյ սկսւում է ճրագալոյցը՝ 12 ընթերցուածքներով» (ՍՑՄ ձեռ. N 122): Գ. Արշարունին իր մեկնութեան մէջ չի նշում ո՛չ հսկման, ո՛չ էլ նրա ընթերցուածքների մասին, այլ խօսում է միայն հայկական Ճաշոցի հին ձեռագրերում նշուող ճրագալոյցի 11 ընթերցուածքների մասին (BN 44 եւ ՍՑՄ ձեռ. N 121):

15 ՍՑՄ ձեռ. NN 5, 454, **Գ. Արշարունի**, նշ. աշխ., էջ 107

16 **A. Renoux**, նշ. աշխ., n° 1 (այսուհետեւ այս նշանը փոխարինում է հայկական Ճաշոցին): Նախորդ վերականգնումը, որն արուել է աւելի ուշ շրջանի հայկական ձեռագրերի հետ ընդհանրութիւններ ունենալու շնորհիւ, նեցուկ է գտնում վրացական

Ինչպէս եւ Յարութեան տօնի ժամանակ, գիշերային ժամերգութեանը յաջորդում է ս. պատարագը[17], որի աւարտից յետոյ Սուրբ քաղաքի համայնքը, բաժանուելով Բեթղեհէմի համայնքից[18], վերադառնում է Երուսաղէմ՝ երգելով «Օրհնեալ, որ եկիր...» երգը[19]:

Վերադարձ Երուսաղէմ

Յունուարի 6-ի ծիսական արարողութիւնների նկարագրումը "Itinerarium Egeriae"-ում, որը մինչեւ այդ հատուածը վնասուած էր, սկսւում է Երուսաղէմ վերադարձի եւ այն ուղեկցող «Օրհնեալ, որ եկիր...» երգի յիշատակմամբ: Հակառակ դրան՝ հայկական երկու հին Ճաշոցները լռում են Սուրբ քաղաք վերադառնալու, Յարութեան տօնի նմանութեամբ նախօրեակին պատարագ մատուցելու եւ մինչեւ առաւօտ օրհնութեան երգեր վերառաքելու մասին[20]: Պատճառն այն է, որ այս արարողութիւնները, որոնք, ըստ աւանդութեան, ներառել են նաեւ ս. պատարագը, չէին կարող մտցուած լինել մի Տօնացոյցի մէջ, որը նախատեսուած է միայն իւրաքանչիւր օրուայ կամ տօնի առանձին հատուածների համար: Ուստի հարկ չկայ զարմանալ հայկական ձեռագրերի այդ բացի համար եւ ոչ էլ՝ "Itinerarium Egeriae"-ում նոյն արարողակարգի նկարագրութիւնների համեմատութեամբ պակասութիւններ գտնելով, կասկածանքով վերաբերուել Դ-Ե դարերում ծիսակարգերը ներկայացնելու նրանց կարողութեանը:

Յունուարի 6-ը եւ նրա ութնօրեակը

Յայտնութեան տօնի արարողութիւնների վերջին հատուածը սկսւում է յունուարի 6-ի առաւօտեան՝ մատուցում[21] մատուցուող ս. պատարագով, որը թուով երկրորդն է տօնական ծիսակատարութիւն-

Ճաշոցի կողմից (**M. Tarchnichvili,** Le grand Lectionnaire de l'Eglise de Jérusalem, CSCO, 188-189, 204-205, Louvain, 1959-1960, n° 2 et ss):

17 n° 1

18 "Itinerarium Egeriae", նշ. աշխ., XXV, 12, էջ 72

19 Նոյն, XXV, 6, էջ 71: Խօսքն անկասկած վերաբերում է ՃԺԷ սաղմոսին, որը երգւում է սաղմոսի 26-րդ սկսուածքով: Այս սաղմոսը եւս երկու անգամ կուղեկցի Սուրբ քաղաք վերադարձը (n° 34, 41).

20 Նոյն, XXV, 7 , էջ 71

21 Նոյն, XXV, 9, էջ 71, n° 2

ների ընթացքում[22]:

Միսական արարողութիւնները տեւում են ութ օր՝ Երուսաղէմեան ամէն սրբավայրում ամէն օր պատարագ մատուցելով՝ կառուցուածքային, այսինքն՝ կանգառների եւ տեքստային ընդհանրութիւններ[23] ունենալով զատկական ծիսակարգի հետ: Յայտնութեան խորհուրդն արծարծւում է յունուարի 5-ի լոյս 6-ի գիշերուայ սրտում՝ Քրիստոսի Գալստեանը նախորդող սպասման մէջ եւ ճրագալոյցի ժամանակ, որի աւարտին ս. պատարագ է մատուցւում: Մինչդեռ դրան յաջորդող ութ օրերը, ներառեալ յունուարի 6-ը[24], որոնք բոլորն էլ կոչւում են տօնական, բացայայտում են գիշերուայ այդ մեծ խորհրդի ողջ հարստութիւնը, որտեղից էլ թէ՛ "Itinerarium Egeriae"-ում եւ թէ՛ հայկական Ճաշոցում դրանք միեւնոյն անուան տակ են հանդէս գալիս ("Le canon des assemblées de la st. Epiphanie")[25]:

Յայտնութեան տօնի ծիսական արարողութիւնների շարանի այս հիմառօտ ակնարկն արդէն ինքնին արժէքաւոր եւ նշանակալի է, քանի որ օգնում է ըմբռնել այն սկզբունքը, որից ելնելով՝ Երուսաղէմի համայնքը տեսել է փրկչական խորհուրդը ամբողջ տարուայ ընթացքում: Եթէ, հետեւելով Ղուկասի Աւետարանին, համայնքը գնում է բոլոր այն վայրերը, որոնք որեւէ առնչութիւն ունեն Քրիստոսի աշխարհ գալու հետ, ապա դա արւում է միայն Նրա ս. Մնունդը տօնելու համար, ինչպէս որ Աւագ հինգշաբթի լոյս Աւագ ուրբաթ օրուայ ըն-

22 Ս. պատարագը չի մատուցուել երեք անգամ: Այս խնդրի վերաբերեալ տե՛ս **O. Heiming,** Die Entwicklung der Feier des 6 Januars zu Jerusalem im 5 und 6 Jh., "Jahrbuch für Liturgiewissenschaft", IX (1929), էջ 144-148:

23 "Itinerarium Egeriae", նշ. աշխ., XXV, 10-11, էջ 71-72, n° 3-9: Ութնօրեակի կանգառներին առնչուող՝ "Itinerarium Egeriae"-ի եւ հայկական Ճաշոցի միջեւ եղած տարբերութիւնները պատճառ են ս. Էտիենի պաշտամունքի ներմուծման, որը հաւանաբար պատկանում է աւելի վաղ շրջանի, քան 415 թ. Նախավկայի մասունքների յայտնաբերումը, քանի որ 411 թ. "Martyrologium Syriacum"-ը արդէն յիշատակում է «առաջին վկայ Ստեփանոսին» (**B. Mariani,** Martyrologium Syriacum, "Rerum Ecclesiasticorum Documenta", Series Minor 3, Romae, 1956, էջ 27):

24 "Itinerarium Egeriae", նշ. աշխ., XXV, 12, էջ 72: "Quia episcopum necesse est hos dies semper in Jerusolima tenere" («Զի պարտ է եպիսկոպոսին ութ աւուր կալ յԵրուսաղէմ»): Տե՛ս **A. A. R. Bastiaensen,** Observations sur le vocabulaire liturgique dans l'Itinéraire d'Egérie, "Latinitas Christianorum Primaeva", 17, Nimègue, 1962, էջ 61-62:

25 n° 10

թացքում տարբեր եկեղեցիներում յաջորդաբար արուած կանգառները նպատակ ունէին յիշատակել փրկչական խորհրդի վերջին փուլերը այն վայրերում, ուր Տէրն ապրեց:

Ուրեմն պէտք է բացառել Դոմ Բոտտի աշխատութիւնից[26] *բխեցրած Կ. Հոլլի վարկածը, որը ցանկանում էր, որ "Itinerarium Egeriae"-ի այդ հատուածին վերաբերող պակաս էջը լինէր Յորդանան գետի ափին կատարուած ծիսական արարողութեան եւ ջրերի օրհնութեան ծէսի նկարագրութիւնը: Հայկական Ճաշոցները, որոնք թոյլ են տալիս վերականգնել Յայտնութեան տօնի ծէսերի ամբողջական պատկերը, հերքում են այդ վարկածը:*

Անհրաժեշտ է ժխտել նաեւ Կոնայբիրի այն կարծիքը, ըստ որի՝ հայկական Ճաշոցները, որոնք նշում են պատարագի ընթացքում ընթերցուած տեքստերը, ոչ մի տեղեկութիւն չեն տալիս Յորդանանի ափին կատարուող արարողութեան մասին[27]*: Շատ սխալ է պնդել, որ հայկական Ճաշոցները նշում են միայն պատարագի արարողութեանը ծառայող ընթերցուածքները. իրականում բաւական է կարդալ միայն Մեծ պահքի, Աւագ շաբաթի եւ զատկական շրջանի Տօնացոյցը, որպէսզի հասկանալի լինի, որ Peregrinatio-ում նկարագրուած ծէսերը՝ առնչուեն դրանք պատարագին, թէ ոչ, ներկայացուած են հայկական երկու հին Ճաշոցներում:*

Երուսաղէմեան համայնքի՝ Բեթղեհէմի յիշարժան վայրերն այցելելու նպատակն առնչւում է միայն Քրիստոսի Մնդեան խորհրդի յիշատակման հետ:

26 **B. Botte,** Les Origines de la Noël et de l'Epiphanie, "Etude Historique", Louvain, 1932, էջ 14-16: Անհրաժեշտ է նշել, որ Յովհ. Օձնեցի կաթողիկոսը (650-729), որը ցանկանում էր երուսաղէմեան արմատներից բխեցնել հայկական ծէսերը, չի ասում, թէ ջրերի օրհնութեան արարողակարգը Հայ Եկեղեցին փոխառել է Երուսաղէմից (**Domini Johannis Ozniensis,** Opera per **J. B. Aucher,** Venise, 1834, էջ 30-33): Դուինի ժողովի (719) 30-րդ կանոնը, որը նշում է ս. Մնդեան եւ Մկրտութեան խորհուրդներին վերաբերող աւետարանական ընթերցուածքների մասին (դրանք ընդգրկուած են ներկայիս պատարագի ծիսական արարողութեան մէջ. տե՛ս «Տօնացոյց», Երուսաղէմ, 1915, էջ 10-13), չի համապատասխանում երուսաղէմեան հին Ճաշոցի աւանդոյթին:

27 "Rituale Armenorum...", էջ 181

Բ. ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՏԵՔՍՏԵՐԸ

Յայտնութեան արարողութիւնների ընթացքում գործածուած տեքստերն առատօրէն ներկայացնում են ծէսերի ողջ շարքը: Քանի որ "Itinerarium Egeriae"-ի պատմութիւնը, բացառութեամբ մի դէպքի[28]*, լռում է յունուարի 5-ից 13-ն ընթերցուող տեքստերի եւ երգերի մասին, ուստի հայկական Ճաշոցները, որոնց շնորհիւ այսուհետեւ մենք ունենք սաղմոսների եւ ընթերցուածքների ամբողջական Տօնացոյցը, առանձնակի նշանակութիւն են ստանում: Նրանց օգնութեամբ Յայտնութեան տօնի եւ նրա ութնօրեակի ընթացքում կատարուած ծիսական արարողութիւնների վերականգնումն ի յայտ բերեց ընթերցուածքների երկու կատեգորիա, որոնք, տօնի էութիւնը բացայայտելուց բացի, մեզ են մատուցում նաեւ երուսաղէմեան Ճաշոցի կազմաւորման պատմութիւնը:*

1. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Ս. Մնդեան պատմութիւնները

Յիսուսի Մնդեան պատմութիւնների եւ այն շրջապատող իրադարձութիւնների ընթերցումը գտնում է երուսաղէմեան պատարագի հէնց սրտում:

Տօնը սկսող եւ այն բնութագրող երեք կանգառները[29]*, ի տարբերութիւն տօնին յաջորդող ութնօրեակի, իրականում ներառում են միայն ս. Մնդեան եւ նրան ուղղակիօրէն կապուած պատմութիւնների ընթերցումը: Շնորհիւ ստոյգ վայրի յիշատակման, Ղուկասի Աւետարանը մատուցում է Հովանոցն կոչուած կայեանի ընթերցուածքը. «Եւ այդտեղ հովիւներ կային, որ ապրում էին դաշտերում...»*[30]*. մինչդեռ Մատթէոսի Աւետարանի «Եւ Յիսուս Քրիստոսի ծնունդն այսպէս*

28 Դա «Օրհնեալ, որ եկիր անուամբ Տեառն...» երգն է, որն ուղեկցում է Երուսաղէմ վերադարձը: Տե՛ս "Itinerarium Egeriae", նշ. աշխ., XXV, 7, էջ 71:

29 Յայտնութեան օրուայ եւ նրա ութնօրեակի ընթացքում կատարուած կանգառների կազմակերպումն իրականում կառուցուած է զատկական արարողութիւնների ծիսակարգի վրայ:

30 Ղուկ. Բ 8-20

էր...»[31] Հատուածն ընթերցում է քարայրում արուած կանգառի ընթացքում. եւ վերջապէս՝ մոգերի այցելութեան հատուածով[32], շարունակելով վերջին ընթերցանութիւնը, ամբողջանում է Ս. Մննդեան եկեղեցում գիշերային ժամերգութեանը յաջորդող պատարագի աւետարանական ընթերցումը: Իսկ Երուսաղէմում առաւօտեան մատուցուող պատարագի ընթացքում ընթերցւում է Մատթէոսի Աւետարանի ս. Մննդեանը վերաբերող հատուածը[33]՝ միեւնոյն ընթերցուածքի այս կրկնութեամբ ցոյց տալով, որ արարողութիւնը բնութագրող իրադարձութիւնը ս. Մնունդն է:

Ցայտնութեան եւ նրա ութնօրեակի տեքստերը

Երբ Ցայտնութեան եւ նրա ութնօրեակի ընթացքում ընթերցուող տեքստերից մի կողմ դրուեցին այն հատուածները, որոնց ընտրութիւնը պայմանաւորուած է եղել կանգառներով[34], ապա մնացին երեք սաղմոսներ եւ Պօղոսի երեք թղթերը, որոնք էլ բոլորը միասին լուսաբանում են միայն մի իրադարձութիւն՝ Յիսուսի ս. Մնունդը: Բ, ՃԹ եւ ՀԱ սաղմոսների ընտրութիւնն ամբողջապէս ուղղուած է այդ խորհուրդը շեշտելուն, մի բան, որ Բ սաղմոսն անդադար յիշատակում է ողջ ութնօրեակի ընթացքում. «Տէրն ինձ ասաց. «Դու Իմ Որդին ես, եւ ես այսօր Քեզ ծնեցի»»[35]: Պօղոս առաքեալի թղթերից քաղուած երեք հատուածները եւ[36], ծառայելով իբրեւ առաջին ընթերցուածք, բոլորը միասին ազդարարում են Քրիստոսի՝ ժամանակի մէջ կատարուած Մննդեան մասին, Ով Իր մարդեղութեամբ բացայայտեց աստուածային շնորհը:

31 Մատթ. Ա 18-25

32 Մատթ. Բ 9-12

33 Մատթ. Ա 18-25

34 Այստեղ առկայ է երուսաղէմեան ծիսական արարողութիւններին բնորոշ մի առանձնայատկութիւն. յունուարի 5-ին *Հովանոցն* կոչուած վայրում ԻԲ եւ ՀԹ սաղմոսները Տիրոջն անուանում են Իսրայէլի *Հովիւ*: 2-7-րդ օրերի արարողութիւնները (այստեղ մի կողմ ենք թողնում 8-րդ օրուայ արարողութիւնը) կրկնում են բոլոր այն տեքստերը, որ գործածուած են հայկական Մաշտոցում, ամէն անգամ, երբ կանգառը կատարւում է նոյն վայրերում:

35 n° 1, 2, 4, 5

36 Տիտ. Բ 11-15, Եբր. Ա 1-12, Գաղ. Դ 1-7

Յունուարի 6-ի ճրագալոյցի ընթերցուածքները

Բեթղեհէմում յունուարի 5-ի լոյս 6-ի գիշերային ժամերգութեան ընթերցուածքները իրենց խրթինութեան պատճառով առանձին ուսումնասիրութիւն են պահանջում:

Ճրագալոյցի կառուցուածքային նմանութիւնները զատկական միեւնոյն արարողութեան հետ միշտ էլ ուշագրաւ են եղել[37]. բացումը կատարւում է, ինչպէս Զատկի ժամանակ, մի սաղմոսի[38] սկսուածքի երգեցողութեամբ: Դրան յաջորդում է պատարագի մատուցման արարողութեանը նախորդող ընթերցուածքների մի շարք, որոնցից ութը լուսաբանում են տօնական արարողութեան նպատակը, մինչդեռ մնացած երեքը, հանդիսանալով զատկական ճրագալոյցի ընթացքում ընթերցուող տեքստերի կրկնողութիւն, մատնանշում են, ինչպէս կտեսնենք, Ցայտնութեան տօնի մէջ Զատկի առկայութիւնը:

Նպատակը, որին համապատասխան կատարուել է ընթերցումների ընտրութիւնը, պարզորոշ կերպով բացայայտում է յունուարի 6-ի ծիսական արարողութիւնների էութիւնը: Տեքստերից եօթը վերցուած են Եսայու եւ Միքիայի մարգարէութիւններից՝ ընտրելով միայն այն հատուածները, որոնք ակնարկում են Մեսիայի Մննդեան եւ Նրա հիմնած արքայութեան մասին[39]:

Զատկական երեք ընթերցուածքները

Ցայտնութեան տօնի ճրագալոյցին ընթերցուող այն տեքստերը, որոնց առկայութիւնն այդ արարողութեան մէջ զարմանք է պատճառում, իրականում հանդիսանում են զատկական ընթերցուածքների կրկնութիւն. առաջինը աշխարհի արարման պատմութիւնն է[40], երրորդը՝ Կարմիր ծովում եգիպտացիների խեղդուելը եւ Իսրայէլի որդիներ-

37 **A. Rahlfs,** Die alttestamentlichen Lektionen der griechischen Kirche, Mitteilungen der Sepuaginta-Unternehmens, Heft 5, Berlin, 1915, էջ 74-75; **A. Baumstark,** Nocturna Laus, էջ 61-62; **G. Kunze,** Die gottesdienstliche Schriftlesung, Göttingen, 1947, էջ 91-92; **K. Onasch,** Das Weihnachtsfest im orthodoxen Kirchenjahr, Berlin, 1957, էջ 132-133

38 Երկու հին ձեռագրերը վնասուած են: ՍԳՄ N 454 ձեռագիրը նշում է ՃԼԱ սաղմոսը եւ նրա թիւ 1 սկսուածքը:

39 n° 1: Առակաց գրքի Ա 19 ընթերցուածքը, որը կարդացւում է նաեւ Աւագ երկուշաբթի (n° 35), ընտրուել է, քանզի Բանը անձնաւորուած Իմաստութիւնն է՝ ἀρχὴ σοφίας:

40 Ծն. Ա 1-Գ 20

րի յաղթական երգը[41], *եւ վերջապէս տասնմէկերորդը՝ Նաբուգոդոնոսոր արքայի ոսկէ արձանի կառուցումը եւ հնոցում գտնուող երեք մանուկների օրհնութեան երգը*[42]:

Ստուգապէս չենք կարող հասկանալ, թէ ինչու են զատկական ճրագալոյցի այս երեք տեքստերը մտցուել Յայտնութեան տօնի ընթերցուածքների մէջ: Սակայն այն կապը, որ "Itinerarium Egeriae"-ն բազմիցս հաստատում է Զատկի եւ Յայտնութեան տօների արարողակարգերի միջեւ[43], *ինչպէս նաեւ այդ երկու տօներին յաջորդող ուխտաբեակների գրեթէ միանման կառուցուածքը մեզ ցոյց են տալիս, որ այդ երեք ընթերցուածքների ընտրութիւնը այնուամենայնիւ ինքնանպատակ չէ: Զատիկը տօների տօնն է, եւ հէնց նրա ծիսակարգի հիման վրայ են ցանկացել կառուցել Յայտնութեան տօնի ծիսական արարողութիւնները: Այդ իսկ պատճառով էլ առանց երկիւղի վերցուել են զատկական ճրագալոյցին բնորոշ երեք ընթերցուածքները, որոնք պատմում են աշխարհի արարման*[44], *եգիպտացիների ձեռքից Իսրայէլի ազատման եւ վառուող հնոցի մասին:*

Քրիստոսի Մնունդը, որը փրկչական խորհուրդների սկիզբն է, արդեօ՞ք սերմը չէ Յարութեան ողջ խորհրդի[45]: *Անկասկած, այդ միակ պատճառով է պայմանաւորուած այդ երեք ընթերցուածքներից իւրաքանչիւրի կրկնումը: Իրականում չի կարելի հաստատել, թէ զատկական ճրագալոյցից Ելից գրքի, ինչպէս նաեւ Կարմիր ծովում եգիպտացիների խեղդուելու եւ նրան յաջորդող Մովսէսի երգի հատուածների փոխառութիւնը կատարուել է Դ-Ե դարերի երուսաղէմեան ծիսական արարողութիւններում յունուարի 6-ի տօնի մէջ մկրտութեան խորհրդի առկայութիւնը նշելու նպատակով*[46]:

Նման մեկնաբանութեանը բազմաթիւ փաստարկներ են հակադրւում: Նախ եւ առաջ՝ եթէ Ելից գրքի այդ հատուածի փոխառումը նպատակ ունի ընդգծել յունուարի 6-ի տօնական արարողութեան մէջ մկրտութեան խորհուրդը, ապա ինչո՞վ է բացատրւում այդ հատուածի հետ նաեւ Մննդոց գրքի Ա 1-Գ 20 եւ Դանիէլի մարգարէութեան Գ 1-90 հատուածների կրկնումը: Զատկական ճրագալոյցից փոխառուած այդ երեք տեքստերի ընթերցումը Յայտնութեան ճրագալոյցի ժամանակ նպատակ ունի բացայայտել Յայտնութեան եւ Զատկի տօների միջեւ եղած սերտ կապը: Բացի այդ, անհասկանալի կլինէր, եթէ Բեթղեհէմի Ս. Մննդեան եկեղեցում ընթացող ճրագալոյցին միայն այդ տեքստն ընտրուած լինէր մկրտութեան խորհուրդն արծարծելու համար:

Սակայն դրանք յատկապէս այն ակնարկներն են, որ է դ. հայկական հայրաբանական աւանդութիւնն անում է տօնի եւ Յայտնութեան օրը մատուցուող պատարագի առնչութեամբ՝ ցոյց տալով, որ այդ ընթերցուածքը, որպէս Քրիստոսի Մկրտութեան խորհուրդն ակնարկող տեքստ, ընդգրկուած չէր ծիսակարգի մէջ Հայոց եկեղեցու կողմից երուսաղէմեան Ճաշոցի ընդունումից դեռեւս երկու դար յետոյ: Գրիգոր Աշշարունի եպիսկոպոսի (695-730) «Մեկնութիւն ընթերցուածոց» գիրքը, անդրադառնալով Ելից գրքի նշուած հատուածին, խո-

41 Ել. ԺԴ 24-ԺԵ 21

42 Դան. Գ 1-90

43 "Itinerarium Egeriae", նշ. աշխ., XXXIX, I, XLIX, 3

44 Այնուամենայիւ զատկական ընթերցուածքը [Մն. Ա 1-Գ 24] Յայտնութեան տօնի ժամանակ աւարտւում է հետեւեալ հատուածով. «Եւ Ադամն իր կնոջը Եւա կոչեց, քանզի նա եղաւ բոլոր կենդանեաց մայրը» [Մն. Գ 20]: Այս վերջին չորս կէտերի լուծարմամբ անկասկած ցանկացել են Եւայի ձեռքով խորհրդաբանօրէն ցոյց տալ Տիրամօրը, որի մասին խօսում է դրան յաջորդող ընթերցուածքը Եսայու մարգարէութիւնից. «Եւ ահա Կոյսը կյղանայ եւ մի Որդի կծնի» [Ես. Է 10-17]: Այնուհետեւ ընթերցւում է Ելից գրքի ԺԴ 24-ԺԵ 21 հատուածը, որը թուով երրորդն է Յայտնութեան տօնի ժամանակ, մինչդեռ Զատկին այն հինգերորդն էր: Արդեօք այս հատուածի ընթերցումը չի՞ հետապնդում մկրտուածների համար Տիրամօր դերը առաւել եւս յիշատակելու կամ էլ Ահարոնի քոյր Մարիամի միջոցով Աստուածամօր մասին մարգարէանալու նպատակ:

45 Կարծում ենք, որ զատկական ճրագալոյցին ընթերցուած այս տեքստի օգտագործումը Յայտնութեան ճրագալոյցի ժամանակ պատճառաբանուած է միայն մէկ նպատակով. այն ժամանակ, երբ Երուսաղէմի Եկեղեցին սկսեց տօնել Փրկչի ս. Մնունդը, տարուայ ընթացքում առաջնային տեղ գրաւող զատկական տօնը պէտք է պարտադրէր, որ փրկչական խորհուրդը յիշատակող մասնատուած արարողութիւններն ընդգրկէին նաեւ այնպիսի տեքստեր, որոնք ընդգծէին, որ փրկչական խորհուրդը միշտ էլ յիշատակուել է իր ամբողջութեան մէջ (տե՛ս **R. Berger,** Ostern und Weihnachten, "Archiv für Liturgiewissenschaft", VIII/I (1963), էջ 1-22): Այլ օրինակներ՝ Ծաղկազարդի, Զատկի, Զատկին յաջորդող երկուշաբթի օրուայ եւ Համբարձման ութնօրեակի ընթերցուածքները ցոյց են տալիս, որ Դ եւ դեռեւս Ե դարերում երուսաղէմեան ծիսակարգի ուղիները եւ նպատակները հեռու են պատմական բնոյթ կրելուց:

46 **G. Kunze,** նշ. աշխ., էջ 92; **K. Onasch,** նշ. աշխ., էջ 133

սում է միայն մեր մկրտութեան մասին[47]: Եպիսկոպոսը խօսում է նաեւ տեքստի այն բնորոշ գծերի մասին, որ նա ունէր Զատկի համար, եւ որոնք չէին կարող անհետանալ Ցայտնութեան տօնին փոխանցուելիս: Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի (718-729) վկայութիւնը, որի խնդրանքով էլ Գ. Արշարունին գրել է իր մեկնութիւնը, պակաս ճեւական չէ. երուսաղէմեան այն Ճաշոցը, որը գործածութեան մէջ էր Հայ Եկեղեցում, Քրիստոսի Մկրտութեանը վերաբերող տեքստեր չի պարունակում: Այլ այդ իրադարձութիւնը յիշատակելու համար, որն աւանդաբար միաւորուած է եղել Ս. Մնդեան տօնի հետ, ընդունուած է յունուարի 6-ին եւ նրան յաջորդող ութնօրեակի ընթացքում Քրիստոսի ս. Մնունդն ազդարարող Աւետարանների ընթերցանութեանը աւելացնել նաեւ Մկրտութեան խորհրդին վերաբերող աւետարանական տեքստերը[48]: Քրիստոսի Մկրտութեան մասին պատմող այն ընթերցուածքները, որոնք այլեւս մտցուած են Ցայտնութեան տօնի եւ նրա ութնօրեակի Տօնացոյցի մէջ[49], ի զարմանս Հայ Եկեղեցու (որը, ինչպէս եւ մնացած բոլոր Եկեղեցիները, Քրիստոսի Մկրտութեան օրը տօնում է յունուարի 6-ին), բացակայում են Երուսաղէմի Ճաշոցի մէջ, այլ միայն յաւելուել են ըստ Սուրբ քաղաքի ծիսական աւանդութեան[50]:

Ելից, Մնդոց գրքերի, ինչպէս նաեւ Դանիէլի մարգարէութեան[51]

47 Ցայտնութեան նրագալոյցի ընթացքում ընթերցուած երկրորդ տեքստը [Ես. Է 10-17] մեկնաբանելուց յետոյ Գ. Արշարունին մեկնում է նաեւ Ելից գրքի ԺԴ 24-ԺԵ 21 հատուածը. «...եւ սկսուում է մկրտութեան ընթերցուածքը՝ դաժան փարաւոնի խորտակումը, որը խեղդում էր մանուկներին: Որպէսզի վերստին ծննդեամբ ուրախութիւն լինի մարդկանց որդիներին, եւ կանանց՝ երկունքի ցաւերի փոխարէն ուրախութիւն, որով հանդերձ Մարիամից յետոյ նրանք բարձրացան եւ երգում էին յաղթանակի երգը» (G. Archaruni, նշ. աշխ., էջ 97):

48 Domini Johannis Ozniensis, նշ. աշխ., էջ 30-33, 72-75

49 «Տօնացոյց», էջ 7-12

50 Ահա Խոսրովիկ Թարգմանչի (Է դ.) շատ արժէքաւոր մի տեքստ՝ թարգմանուած Ֆ. Կոնայբիոի կողմից ("Dialogus de Christi die natali", "Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft", V (1904), էջ 327-334). "Nos epiphaniam et baptismum una die celebramus, epiphaniam e scriptis, baptismum vero e traditione" («Ցայտնութիւնը եւ Մկրտութիւնը մենք միեւնոյն օրն ենք տօնում. Ցայտնութիւնը՝ ըստ *գրքի*, Մկրտութիւնը՝ ըստ *աւանդութեան*»): *Գրքին* ակնարկում են երուսաղէմեան Տօնացոյցը, որը Մկրտութեանը վերաբերող ընթերցուածք չէր պարունակում:

51 Երուսաղէմի հայկական հին Ճաշոցում Դանիէլի մարգարէութեան ընթերցուածքը ոչ

ընթերցուածքները Ցայտնութեան տօնի գիշերային ժամերգութեան ընթացքում, ինչպէս եւ կարելի է ենթադրել, միայն մէկ նպատակ ունեն. ցոյց տալ, ինչպէս եւ զատկական ճրագալոյցի ժամանակ, ի կատար ածուող փրկչական խորհրդի պատմութիւնը, նրա ընթացքը՝ հասնելով մինչեւ ս. Մնդեան ամենափրկիչ իրադարձութեանը: Այն ժամանակ, երբ տօների տարեկան պարբերաշրջանը իր պատարագներով եւ ժամերգութիւններով պատմական բնոյթ էր ստանում, Ցայտնութեան տօնի ծիսական արարողութիւններից գլխաւորի՝ ճրագալոյցի կառուցուածքը պարզորոշ կերպով ցոյց է տալիս, որ Տիրոջ երկրաւոր կեանքի որեւէ առանձին իրադարձութեան յիշատակումը չէր կարող զատուած լինել զատկական խորհրդից: Գ. Արշարունին, լաւ հասկանալով այն հարստութիւնը, որ իրենց հետ բերել էին Ցայտնութեան տօնի ճրագալոյցին ընթերցուող այդ երեք տեքստերը, տօնական ընթերցուածքների այդ միահիւսումը նկարագրում է այն բառերով, որոնք մեծ արժէք ունեն տուեալ խնդրին առնչուող աստուածաբանական ժամանակակից հետազօտութիւնների համար. «Քրիստոսի Եկեղեցին գերաշխարհիկ մի զուգակցութեամբ մեր փրկութեան խորհուրդը յիշատակում է երկու տօներով, որոնք են Քրիստոսի Ս. Մնունդը եւ Ցարութիւնը, եւ որպէս այս երկու տօների հիմք է ընդունում Մնդոց գրքի ընթերցանութիւնը, որտեղից իբրեւ աղբիւր առատօրէն քաղում է մարդու համար նախասահմանուած Աստուծոյ կատարեալ արարչագործութիւնը»[52]:

2. ԱՒԵՏՈՒՄԸ ԵՒ Ս. ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱՅՑԸ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

Մնում է միայն յիշատակել Ցայտնութեան տօնի երուսաղէմեան ծիսակարգի վերջին հատուածը:

Ութնօրեակի Աւետարանները

Ութնօրեակի 4-րդ եւ 5-րդ օրերի Տօնացոյցը, իբրեւ աւետարանական ընթերցուածքներ, ընդգրկում է Ղուկասի երկու պատմութիւնները՝

աստուածաշնչային իր կրկներգերով նոյնութեամբ կարդացւում էր Զատկի ժամանակ: Փարիզի ձեռագրի մէջ, ինչպէս կտեսնենք, զատկական կրկներգերը փոխարինուել են Ցայտնութեան տօնին աւելի բնորոշ տեքստերով:

52 G. Archaruni, նշ. աշխ., էջ 96

աւետումը[53]՝ 4-րդ օրուայ, եւ ս. Կոյս Մարիամի այցը Եղիսաբեթին[54]՝ 5-րդ օրուայ համար: Բայց եւ այնպէս, ո՛չ 4-րդ եւ ո՛չ էլ 5-րդ օրերի ծիսական արարողութիւններն ամբողջապէս կառուցուած չեն աւետման եւ այցի խորհուրդների յիշատակման նպատակով: Այդ երկու օրերից իւրաքանչիւրի ընթացքում այլ տեքստերի բովանդակութիւնը ցոյց է տալիս, որ ծիսակարգի գլխաւոր առարկան միշտ էլ Ցիսուսի ս. Մննդեան խորհրդի յիշատակումն է[55]: Երուսաղէմում, օգոստոսի 15-ի Աստուածածնի տօնից բացի, դեռեւս չկան ս. Կոյս Մարիամին նուիրուած այլ տօներ, որոնք յիշատակեն Աստուածամօր կեանքի այս կամ այն իրադարձութիւնը. ս. Աստուածածնի յիշատակը միաձուլուած է նրա Որդու ս. Մննդեան տօնահանդէսին, մի բան, որը նշւում էր նախքան Եփեսոսի ժողովը (431)[56]:

Քանի որ, ինչպէս ցոյց են տուել բազմաթիւ նոր ուսումնասիրութիւններ[57], Ցայտնութեան կամ դեկտեմբերի 25-ի տօնական արարողութիւնների մէջ աւետման եւ այցի իրադարձութիւններին վերաբերող ակնարկները տարբեր Եկեղեցիների կողմից մտցուել են միայն Եփեսոսի ժողովից յետոյ, ապա երուսաղէմեան հին Ճաշոցը պէտք է որ պարունակի Տիրամօրը նուիրուած տօների յետեփեսոսեան զարգացման հետքեր: Այդ դէպքում Ցայտնութեան տօնի ութնօրեակի ծիսակարգի կառուցուածքը, որը դեռեւս ընդհանուր շատ գծեր ունի զատկական ութնօրեակի հետ, աւետման եւ այցի իրադարձութիւնների առկայութեամբ եւ երուսաղէմեան պատարագի յետեփեսոսեան զարգացման նշաններով կարտայայտէր Աստուածամօրը նուիրուած պաշտա-

53 Ղուկ. Ա 26-39

54 Ղուկ. Ա 39-55

55 4-րդ օրը (n° 5) երգւում է ՃԹ սաղմոսը, սակայն արդէն՝ սաղմոսի 3բ սկսուածքով; Գաղատացիներին ուղղուած թղթի ընթերցուածքը [Գաղ. Դ 1-7] եւս մատուցում է ս. Մննդեան խորհուրդը: Ալէլուիայի եւ ՃԼԱ սաղմոսի ընտրութիւնն անկասկած պայմանաւորուած է կանգառի վայրով, որը ս. Սիոն լեռն է: 5-րդ օրուայ (n° 6) բոլոր տեքստերը, բացի Աւետարանից, ընտրուել են կանգառին համապատասխան: Այդ տեքստերը հանդիպում ենք զատկական Աւագ շաբաթուայ ընթացքում (n° 49):

56 **D. M. Montagna,** La Liturgia mariana primitiva, "Marianum", XXIV, 1962, էջ 84-124, 453-543

57 **A. Fletcher,** Three early Byzantine Hymns, "Byzantinische Zeitschrift", LI (1958), էջ 53-65, եւ նոյն հեղինակի՝ "Celebrations at Jerusalem on March 25th in the 6th Century", "Studia Patristica", V (Papers presented to the third international Conference...), Oxford, 1959, Part III, էջ 30-34

մունքի մի նոր փուլ՝ օգոստոսի 15-ն ընդունելով իբրեւ Տիրամօր յիշատակը նշանաւորող առաջին տօնը, որը բովանդակում է ս. Կոյս Մարիամին նուիրուած խորհուրդների ամբողջութիւնը[58]:

Աւետումը Ցայտնութեան ճրագալոյցի մէջ

Եփեսոսի ժողովին յաջորդող տարիների ընթացքում երուսաղէմեան ծիսակարգը էլ աւելի մեծ տեղ յատկացրեց աւետման խորհրդին[59]:

Փարիզեան հին Ճաշոցի միակ ձեռագրում Ցայտնութեան ճրագալոյցի վերջին ընթերցուածքի[60] 34 եւ 35 խօսքերի միջեւ ընթեռնելի է վնասուած ձեռագրի պատճառով ցաւօք թերի վիճակում գտնուող Ղուկասի Աւետարանի մի հատուած՝ գրուած երեք տողի վրայ.

... [Հրեշտակ] Գաբրիէլը եւ նրան ողջոյն տուեց

... [Մարիամին], եւ ասաց. «Ուրախ լե՛ր,

...Տէրը քեզ հետ»[61]:

Ղուկասի փոքր-ինչ ձեւափոխուած այս տեքստը, առանց նշելու, թէ այն ընթերցում էր, թէ երգւում, բացարձակապէս ոչ մի առնչութիւն չունի Դանիէլի մարգարէութեան Գ 34, 35 խօսքերի հետ: Հակառակ դրան՝ հայկական Ճաշոցի երուսաղէմեան հին ձեռագիրը նշուած հատուածում Ցայտնութեան ճրագալոյցի համար պահպանել է նոյն այն կրկներգը, որն ընթերցուելով Ցարութեան տօնի ժամանակ՝ յարմարեցուած էր վառուող հնոցի մէջ գցուած երեք մանուկների պատմութեան ընթերցանութեանը. «Տէրը ցող իջեցրեց՝ Իր ողորմութեան ցողը, որով Նա հանգցրեց բորբոքուած կրակը. քանզի մեայն Քեզ ենք Տէր ճանաչում»[62]:

58 **B. Botte,** Le Lectionnaire arménien et la fête de la Théotokos à Jérusalem au V siècle, "Sacris Erudiri", II (1949), էջ 111-112; **B. Capelle,** La fête de la Vierge Marie à Jérusalem au Ve siècle, "Le Muséon", LVI (1943), էջ 1-33: Ցիսիքիոսի (մահ. 451-ից յետոյ) երուսաղէմեան Ճառընտիրը, որը սկսւում է աւետման պատմութեան մեկնութեամբ, ըստ աւանդութեան՝ կարդացուել է օգոստոսի 15-ին (**Montagna,** նշ. աշխ., էջ 112):

59 **D. M. Montagna,** նշ. աշխ., էջ 105-109

60 Դան. Գ 1-90

61 Ղուկ. Ա 28

62 n° 1

Մինչդեռ փարիզեան ձեռագրում պահպանուած Տօնացոյցը փոքր-ինչ տարբերում է երուսաղէմեան ձեռագրում Դանիէլի մարգարէութեան ընթերցանութեան գատկական կառուցուածքից[63]՝ յոգուտ Աւետման խորհրդի, որը չի համապատասխանում այդ հատուածի ենթատեքստին:

Մենք, անկասկած, դեռեւս հեռու ենք կրկնուող χαιρετισμοί-ից, որոնք բնորոշ են Տիրամօրը նուիրուած յետեփեսոսեան օրհներգերին[64], սակայն աւետման խորհուրդը յիշատակող այդ հատուածի օգտագործումն օգնում է ըմբռնել այն շարժումը, որն առաջացաւ երուսաղէմեան ծիսակարգի մէջ Եփեսոսի ժողովից յետոյ Տիրամօրը նուիրուած խորհուրդների խնդրում: Այնուամենայնիւ ծիսակարգի զարգացումը, որն արտայայտուած է փարիզեան ձեռագրի վերոյիշեալ հատուածի ձեւափոխութեան մէջ Զատկից Ցայտնութեան տօնին անցնելու ժամանակ, ցոյց է տալիս, որ Եփեսոսի ժողովին անմիջապէս յաջորդող երուսաղէմեան ծիսակարգը առաջնորդուել է միայն մարդեղութեան խորհրդի յիշատակմամբ՝ դեռեւս չակնարկելով Քրիստոսի Մկրտութեան խորհուրդը:

Գ. ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՈՒՄ

Ցայտնի ամենահին տեքստերը, որոնք նկարագրում են Դ դ. վերջում եւ Ե դ. սկզբում Սուրբ քաղաքում յունուարի 6-ին տեղի ունեցող ծիսական արարողութիւնները, մեզ են մատուցում մի ծիսակարգ, որն ամբողջովին ուղղուած է Տիրոջ երկրաւոր Մնունդի խորհրդի յիշատակմանը: Այդ իրաւարձութիւնն են նշանաւորում աւետարանական ընթերցուածքները յունուարի 5-ի լոյս 6-ի ծիսակատարութիւնների ընթացքում թէ՛ Բեթղեհէմում եւ թէ՛ Երուսաղէմում:

Դեռեւս որեւէ բան չենք կարող ասել ուղղափառեկի աւետարանական երեք ընթերցուածքների բազմաթիւ եւ բազմապիսի թեմաների (աւետում, ս. Կոյս Մարիամի այցը Եղիսաբեթին եւ թլփատութիւն), ինչպէս նաեւ մոգերի երկրպագութեան եւ Եգիպտոս փախուստի

63 Քանի որ փարիզեան ձեռագիրն այս հատուածում վնասուած է, ուստի պարզ չէ, թէ արդեօք Ղուկասի Աւետարանի այլ հատուածներ եւս օգտագործուո՞ւել են Դանիէլի մարգարէութեան ընթերցուածքի ժամանակ:

64 **D. M. Montagna,** նշ. աշխ., էջ 105-109

պատմութիւնները յիշատակող տեքստերի մասին[65]: Այս ընթերցուածքները, որոնք կարող էին թերեւս առաջնորդուած լինել մէկ այլ՝ ոչ Տիրոջ ս. Մնունդեան խորհրդի յիշատակմամբ, անդադար միահիւսուած են սաղմոսների եւ Պօղոսի թղթերից քաղուած համապատասխան հատուածների ենթատեքստերին՝ երգելով կամ ազդարարելով Աստուածորդու աշխարհ գալը: Փրկչական խորհրդի հէնց այս աւետումով էլ աւարտում է 7-րդ օրուայ աւետարանական ընթերցուածքը[66]՝ կասկածի ոչ մի տեղիք չտալով ուղղափառեկի ծիսակարգի հետապնդած նպատակի վերաբերեալ. «Քանի դեռ նրանք այնտեղ էին (Բեթղեհէմում)... նա ծնեց իր անդրանիկ Որդուն, պատեց Նրան խանձարուրներով եւ պառկեցրեց մսուրի մէջ, քանզի իջեւանում նրանց համար տեղ չկար»:

Բացատրում է, որ հայկական Ճաշոցի կառուցուածքի օգնութեամբ բացայայտուած տօնի նպատակը հանդիսանայ Հայ Եկեղեցու կողմից արուած մի մշակում: Է-Ը դարերում Հայ Եկեղեցու բազմաթիւ վկայութիւնները ս. Մնունդեան եւ Քրիստոսի Մկրտութեան երկու խորհուրդները միաժամանակ տօնելը միշտ էլ բխեցնում են Հայ Եկեղեցու արմատներից[67]: Քրիստոսի Մնունդը, ինչպէս որ իրենք են խոստովանում, տօնում են ըստ գրերի, մինչդեռ Մկրտութեան խորհրդի յիշատակումը՝ ըստ աւանդութեան[68]:

Յովհ. Օձնեցի կաթողիկոսը եւս հաստատում է այն փաստը, որ կան այնպիսիները, որոնք յունուարի 6-ին ցանկանում են նշել միայն Ս. Մնունդեան տօնը՝ չյիշատակելով Ցայտնութեան խորհուրդը՝ ամբողջովին հիմնուելով Երուսաղէմում գործածուող ընթերցուածքների վրայ[69]: Այդ ժամանակաշրջանում Հայ Եկեղեցին կանգնած էր գրաւոր աւանդութեան[70] գործնական կիրարկման խնդրի առջեւ, որը վա-

65 n° 1, 4

66 Ղուկ. Բ 1-7

67 Տե՛ս Մովսէս Ցուրտաւեցու (Զ դ. վերջ) տեքստը՝ վկայակոչուած Ն. Ադոնցի կողմից. տե՛ս նշ. աշխ., էջ 265, **G. Archaruni,** նշ. աշխ., IX, էջ 98-100; **Domini Johannis Ozniensis,** նշ. աշխ., էջ 32-33

68 Տե՛ս Խոսրովիկ Թարգմանիչ, նշ. աշխ., էջ 43:

69 **Domini Johannis Ozniensis,** նշ. աշխ., էջ 30-33

70 Խօսքը վերաբերում է Ե դարում Սուրբ քաղաքից բերուած երուսաղէմեան Ճաշոցին, որի մէջ չկայ Քրիստոսի Մկրտութեանը վերաբերող ոչ մի յիշատակում:

ղուց ի վեր ընդհանուր էր Արեւելեան բոլոր Եկեղեցիների համար, այն է՝ այդ իրադարձութիւնը տօնել յունուարի 6-ին: Յովհ. Օձնեցի կաթողիկոսը պաշտպան եւ կողմնակից էր հէնց այս սովորոյթին՝ չվարանելով միջոցներ ձեռնարկել ժամանակի հետ համաքայլ ընթանալու համար, համատեղելով աւանդոյթը եւ զարգացումը[71]:

Ուրեմն յունուարի 6-ի ծիսական Տօնացոյցը Հայ Եկեղեցու պտուղը չէ. բաւական է միայն յիշատակել ս. Յերոնիմոսի յայտնի ճառերը, որոնք վերաբերում են Երուսաղէմի եւ Լատին Եկեղեցիների ընդունած Քրիստոսի Մանդեան ամսաթուի տարբերութիւններին, տեսնելու համար, որ հայկական Ճաշոցի բովանդակութիւնը համապատասխանում է Ե դ. սկզբին յունուարի 6-ի երուսաղէմեան ծիսակարգի բնոյթին[72]:

Այն ամէնը, ինչ մեզ մատուցում եւ բացայայտում է հայկական հին Ճաշոցը, մեծ արժէք ունի յունուարի 6-ի երուսաղէմեան տօնի պատմութեան լուսաբանման համար: Ուստի եւ նախքան եզրակացութեան յանգելը անհրաժեշտ է համեմատել Քրիստոսի ս. Մանդեան խորհրդական նշանակութիւնը, որը հանդիսանում է ծէսերի եւ տօնական ընթերցուածքների միակ նպատակը, եւ այն բառը, որի միջնորդութեամբ այն արտայայտուած է:

Երկու անգամ Ճաշոցը գործածում է յայտնութիւն *բառը[73], որը հայերէն Աստուածաշնչում յունարէն հետեւեալ չորս բառերի թարգմանութիւնն է՝* ἀποκαλύψις, φανέρωσις, παρρησία, ἐπιφάνεια: *Ակնյայտ է, որ հայերէն* յայտնութիւն *բառը փոխարինում է այս բառաշարքից վերջինին, քանզի յունուարի 6-ի տօնախմբութիւնը Յունական Եկեղեցու աւանդութեան մէջ երբէք չի արտայայտուել* ἀποκαλύψις, φανέρωσις, παρρησία *բառերով[74]: Երուսաղէմի յունարէն Ճաշոցը, որից արուել է հայերէն թարգմանութիւնը, ինչպէս եւ "Itinerarium Egeriae"-ը[75], յունուարի 6-ի տօնն անուանում էր* ἐπιφάνεια: *Այս բառի բովանդակութիւնը բացառիկ կերպով է արտա-*

71 **Domini Johannis Ozniensis,** Ց2. աշխ., էջ 72-75, 26 եւ 30 կանոններ

72 Տե՛ս **B. Botte,** Ց2. աշխ., էջ 16 եւ թիւ 3 Ճշումը:

73 **F. C. Conybeare,** Ց2. աշխ., էջ 517 (Epiphany) եւ n° 10 (Epiphanie)

74 Տե՛ս **B. Botte,** Ց2. աշխ., էջ 77-83:

75 "Itinerarium Egeriae", Ց2. աշխ., XXXIX, 1, XLIX, 3

յայտում տօնի սրտում գտնուող խորհուրդը՝ Քրիստոսի մարմնով երեւալը՝ բոլոր այն իրադարձութիւններով հանդերձ, որ աւետարանիչները մատուցում են այդ խորհրդի հետ միասին:

Սա՞ է արդեօք երուսաղէմեան տօնի սկզբնական պատկերը: Այս հարցին պատասխանել չենք կարող, որովհետեւ մեր տրամադրութեան տակ չունենք "Itinerarium Egeriae"-ից եւ հայկական Ճաշոցից աւելի հին տեքստեր: Այնուամենայնիւ այդ տօնի մէջ նշանակալի զարգացում է նկատւում: Ե դ. վերջում դեկտեմբերի 25-ը որպէս Ս. Մանդեան տօն ընդունուելուց յետոյ միայն երուսաղէմեան Ճաշոցը վրացերէն իր տարբերակում Քրիստոսի Մանդեան խորհրդի հետ միասին ընդգրկեց նաեւ Տիրոջ Մկրտութեան յիշատակումը, որին համապատասխան էլ այսուհետեւ ընտրուեց տեքստերի մեծ մասը[76]:

Յունուարի 6-ի տօնի այս փոխակերպումը, որը Երուսաղէմի Եկեղեցի մուտք գործեց Ե դ. վերջում, մեծ արժէք է ներկայացնում այլ Եկեղեցիներում Յայտնութեան տօնի արմատների ուսումնասիրման համար: Աճման օրէնքը, որն ակնյայտօրէն առկայ է պատարագի ծիսական արարողութիւնների, խորհուրդների եւ ժամերգութիւնների ընթացքում, մի՞թէ չի վերաբերում նաեւ տարեկան պարբերաշրջանի տօների բնագաւառին:

Մենք ուսումնասիրեցինք ծիսակարգին վերաբերող փաստեր, որոնց նշանակութիւնը չի կարող անտեսուել: Նրանց բովանդակութիւնն ու զարգացումը ցոյց են տալիս, որ Դ դ. վերջում եւ Ե դ. սկզբում Յայտնութեան տօնի գլխաւոր առարկան հարստացուել եւ զարգացում է ապրել՝ որպէս հիմք ունենալով միակ իրադարձութիւնը՝ Տիրոջ ս. Մնունդը:

Ֆրանսերէնից թարգմանեց
Գեւորգ Մելիքեանը

76 **M. Tarchnichvili,** Ց2. աշխ., էջ 188-189, 204-205, n° 83-116: Տե՛ս նաեւ Օ. Հայմինցի համապատասխան եզրակացութիւնները (տե՛ս ծնթ. 22):

Գլիա Բանատէանու

ՈՐՄՆԱՆԿԱՐԸ ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Արուեստաբանները մեծ վարպետութիւն եւ ինքնատիպութիւն են վերագրում հայկական արուեստի ճարտարապետական եւ մանրանկարչական բնագաւառներին: Սակայն ինչ վերաբերում է որմնանկարներին, ապա այդ նոյն արուեստաբանները, պատճառաբանելով Քաղկեդոնի ժողովի հանդէպ Հայ Եկեղեցու որդեգրած մերժողական դիրքը, գտնում են, որ որմնանկարի արուեստն այդ պայմաններում չէր կարող նոյն յաջողութեան հասնել, ինչի որ հասան հայկական մշակոյթի միւս բնագաւառները: Որմնանկարները նրանք համարում են սոսկ օտար ազդեցութիւնների արդիւնք: Թերեւս սրանով է բացատրւում հայ արուեստի պատմութեան ուսումնասիրութեան մէջ որմնանկարչութեան բնագաւառի կատարեալ անտեսումը՝ զբաղուելով գլխաւորապէս եկեղեցու ճարտարապետութեամբ եւ մանրանկարչութեամբ: Ուստի դա է պատճառը, որ վերջին քսան տարիների ընթացքում միայն մէկ աշխատութիւն է հրատարակուել, որը նուիրուած է որմնանկարին. դա Լ. Դուրնովոյի "Древние фрески Армении"[1] գիրքն է, ուր ուսումնասիրուած են Թալինի, Արուճի եւ Եղվարդի եկեղեցիների որմնանկարները:

Միւս պատճառն այն է, որ Հայաստանում յայտնագործուած ամենահին որմնանկարները պատկանում են Ե դարին, մինչդեռ փոքրասիական այլ երկրներում կան աւելի վաղ շրջանի որմնանկարներ: Կարեւորութիւնը, որ ունէր արուեստի այս բնագաւառը քրիստոնէութեան վաղ շրջանում, ամբողջացած է յատկապէս փոքրասիական կատակոմբների քրիստոնէական որմնանկարներում, որոնք թեմատիկ առումով կրել են ոչ թէ հռոմէական, այլ փոքրասիական երկրների արուեստի ազդեցութիւնը: Այդ երկրներին յաջողուեց նկարչութեան միջոցով արտայայտել քրիստոնէական նոր հաւատի ողջ վեհութիւնը: Եւ եթէ ընդունենք, որ կատակոմբների որմնանկարները կրել են փոքրասիական քրիստոնէական երկրների ազդեցութիւնը, ապա յաջողուած կարելի է համարել Անդրէ Գրաբարի գիտական այն աշխատութիւնը[2], ուր նա ընդունում է այդ ժամանակաշրջանում կապադովկիական եկեղեցիները զարդարող որմնանկարների գոյութեան փաստը: Այդ նոյն աշխատութեան մէջ կարելի է հանդիպել նաեւ տողեր, որոնք վերաբերում են սիրիական, Միջագետքի եւ կապադովկիական որմնանկարների ընդհանրութիւններին: Այստեղ պէտք է նշել, որ հէնց այդ երկրների անմիջական հարեւանութեամբ էր զարգանում Հայաստանի մշակոյթը՝ մի երկիր, որը քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունեց 301 թուին, եւ որի եպիսկոպոսները մինչեւ 374 թուականն օծւում էին Կապադովկիայում: Հետեւաբար հայկական որմնանկարին վերաբերող գիտական աշխատութիւնն արդարացուած է:

Այն ընդունուել է նաեւ խորհրդային գիտնականների կողմից, որոնց թուին է պատկանում նաեւ Լ. Դուրնովոն՝ գտնելով, որ դեռեւս վաղ ժամանակաշրջանից որմնանկարչական արուեստը զարգացման բարձր մակարդակի էր հասել յատկապէս քրիստոնեայ այն պետութիւններում, որոնք սահմանակից էին Հայաստանին՝ վերջինիս հետ լինելով տնտեսական եւ մշակութային սերտ յարաբերութիւնների մէջ: Սակայն խորհրդային գիտնականն այն կարծիքին է նաեւ, որ առաջին դարերում Հայաստանում եւս գոյութիւն են ունեցել արուեստի որմնանկարչական եւ, աւելի մասնագիտօրէն արտայայտուած, մոնումենտալ նկարչութեան բնագաւառները՝ թէեւ որոշ չափով հանդէս գալով իբրեւ փոխառուած արուեստ: Այնուամենայնիւ, մենք ստոյգ վկայութիւններ ունենք, որոնք հաստատում են հին եւ յատկապէս արդէն քրիստոնեայ Հայաստանում թէ՛ հոգեւոր եւ թէ՛ աշխարհիկ նկարչութեան գոյութեան փաստը: Այս ամէնը թոյլ է տալիս եզրակացնել, որ բոլոր այդ աւանդոյթները, այդ թւում եւ որմնանկարչութեան բնագաւառը, ձեւաւորուել են ժամանակի ընթացքում:

Հայաստանում սրբապատկերների գոյութեան մասին խօսում է Զ դարի կաթողիկոսական տեղապահ Վրթանէս Քերթողը իր Թղթերից

* Թարգմանութիւնը ֆրանսերէնից ներկայացւում է որոշ յապաւումներով՝ ըստ հետեւեալ հրատարակութեան. "Studia et acta orientalia", I, 1957, էջ 4963:

1 Տե՛ս "Очерки по истории искусства Армении", Москва, 1939:

2 Տե՛ս André Grabar, La peinture religieuse en Bulgarie, Paris, 1929:

մէկում: Նա յիշեցնում է, որ բազում եկեղեցիներում գոյութիւն են ունեցել ս. Գրիգոր Լուսաւորչին, ս. Գայիանէին, ս. Հռիփսիմէին ու նահատակուած այլ կոյսերին պատկերող նկարներ: Ս. Տէր-Ներսիսեանը, մէջբերելով այս հատուածը, աւելացնում է, որ եթէ Վրթանէսը յիշատակում է հայ սուրբերին, ապա խօսքը միայն ու միայն հայկական եկեղեցիների մասին է, ինչը որ այս գիտնականին թոյլ է տալիս եզրակացնել, որ մոնումենտալ նկարչութիւնը ամենեւին էլ անծանօթ չէր Հայ Եկեղեցուն[3]:

Միւս կողմից՝ եթէ վկայակոչենք Ե դարի հայ պատմիչ Եղիշէին, ապա կտեսնենք, որ նա իր «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին» գրքում խօսում է նախարարների կանանց մասին, որոնք ձեռքերում պահել էին պատերազմում զոհուած իրենց ամուսինների նկարները: Սրանով Եղիշէն հաստատում է Ե դարում Հայաստանում աշխարհիկ նկարչութեան գոյութեան փաստը: Իսկ ինչ վերաբերում է Վրթանէսի թղթերին, ապա դրանք էլ արձանագրում են Զ դարում Հայաստանում լայն զարգացում գտած հոգեւոր նկարչութեան առկայութեան փաստը:

Սակայն ի՞նչ նպատակ է հետապնդում հայկական որմնանկարին առնչուող խնդրի լուծման համար հին պատմիչներին վկայակոչելը: Պատճառն այն է, որ Հայաստանի քրիստոնէացմանը յաջորդող առաջին դարերում կառուցուած ամենահին եկեղեցիների մեծ մասն աւերուած է, եւ պահպանուել են միայն դրանց պատերը ծածկող որմնանկարների սակաւաթիւ պատառիկներ, որոնք էլ համարւում են հարեւան քրիստոնեայ երկրների ազդեցութիւնների արդիւնք: Իսկ յայտնի մի քանի այն եկեղեցիները, որտեղ լայնօրէն օգտագործուել են որմնանկարներ, պատկանում են արդէն միջնադարին: Հարուստ մշակոյթ ունեցող Հայաստանում որմնանկարչական արուեստի «անհրաժեշտ եւ յարատեւ» զարգացման բացակայութիւնը արուեստաբանները պատճառաբանում են Հայ Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքով, քանզի նա չընդունեց Քաղկեդոնի ժողովի (451 թ.) որոշումները:

Բայց եւ այնպէս, որոշ հեղինակներ էլ պնդում են, որ Հայ Եկեղեցին երբէք էլ թշնամաբար չի վերաբերուել նկարչութեանը, թէեւ ո՛չ Ե

3 Տե՛ս S. Der-Nersissian, Armenia and the Byzantine Empire, "Haruard University Press", 1947, էջ 110:

դարում, ո՛չ էլ մնացած դարերում երբեւէ չեն կիրառուել այդ ժողովի որոշումները: Նրանց այս հայեցակէտը հիմնուած է հայկական որմնանկարին առնչուող այն հին աւանդութեան վրայ, որը ձեւաւորուել է Վրթանէսի եւ Եղիշէի մեզ փոխանցած տեղեկութիւնների հիման վրայ: Սակայն կայ նաեւ մէկ այլ փաստարկ: Դուրնովոն ուսումնասիրել է Արուճի եկեղեցու որմնանկարների պահպանուած պատառիկները: Դրանք ականթի տերեւներ են, որոնք, թփերից բարձրանալով, կազմում են հիասքանչ մի զարդանկար: Դուրնովոն ուշագրաւ նմանութիւն է գտել այդ զարդանկարի եւ Գառնիի հեթանոսական յայտնի տաճարի քիւի միջեւ: Այս փաստը ցոյց է տալիս, որ Հայաստանում գոյութիւն է ունեցել որմնանկարի հին աւանդոյթ, որը սկզբնական շրջանում կրել է հելլէնական, ասորական, միջագետքեան կամ այլ ծագում ունեցող ազդեցութիւններ: Սակայն Դուրնովոն պնդում է, որ, Ե դարից սկսած, հայկական որմնանկարը ձեռք է բերում իր ինքնատիպութիւնը: Ս. Տէր-Ներսիսեանը նշում է, որ եկեղեցիները բոլոր ժամանակներում էլ զարդարուած են եղել որմնանկարներով, որոնք, սակայն, աւելի բազմաքանակ էին յունադաւան, քան հայադաւան եկեղեցիներում[4]: Իսկ ինչ վերաբերում է Ը-Թ դարերում որմնանկարների կատարեալ բացակայութեանը, ապա դա բացատրւում է արաբների զաւթողական քաղաքականութեամբ, որը խոչընդոտեց հայ ժողովրդի մշակոյթի զարգացմանը:

Մենք եւս գտնում ենք, որ Եկեղեցին բնաւ էլ չէր հակադրւում որմնանկարչական արուեստին. Եկեղեցու ազդեցութիւնը տարբեր ժամանակներում կրել է փոփոխական բնոյթ երբեմն էլ զիջելով արտաքին ուժերին:

Հայկական եկեղեցիների որմնանկարների «յարաբերական» աղքատութիւնը[5] բացատրւում է նրանով, որ ժողովրդի ստեղծագործական հանճարը փորձում էր դրսեւորուել յատկապէս զարդապատկերային նկարչութեան եւ դեկորացիայի մէջ, որոնցում հմտանալով՝ հայերը դառնում են իսկական վարպետներ՝ ոչնչով կախուած չլինելով Բիւզանդիայից, այլ ընդհակառակը՝ կրելով յատկապէս Արեւելքի ազ-

4 Տե՛ս S. Der-Nersissian, Manuscrits arméniens illustrés, Paris, 1937, էջ 168:

5 Ես գործածում եմ «յարաբերական» բառը, որովհետեւ մեզ յայտնի են միայն 30-ից աւելի եկեղեցիներ, որ զարդարուած են որմնանկարներով:

դեցութիւնը: Բայց եւ այնպէս, զարդապատկերային արուեստի մէջ հայերի վարպետութիւնը նրանց չխանգարեց մեզ թողնել նաեւ որմնանկարի հրաշալի յօրինուածքներ, որոնց մասին կխօսենք աւելի ուշ:

Ընդունուած է հայկական որմնանկարի բնագաւառը բաժանել զարգացման երեք շրջանների:

Առաջինը համընկնում է հայկական քրիստոնէական ճարտարապետութեան զարգացման առաջին շրջանի հետ (Ե-Է դարեր), այսինքն՝ նախքան արաբական տիրապետութիւնը: Նկարչութեան այդ շրջանի նմուշների մենք հանդիպում ենք Աշտարակի, Տեկորի եւ Երերոյքի Դ-Ե դարերի բազիլիկ եկեղեցիներում: Ց. Ստրժիգովսկին եւ Ս. Տէր-Ներսիսեանը նշում են, որ Տեկորի եկեղեցու պատերը պահպանել են որմնանկարների մի քանի պատառիկներ: Նման դժուար վերծանելի պատառիկներ կան նաեւ Երերոյքի եւ Աշտարակի եկեղեցիներում, որոնցից վերջինը աւելի շատ յայտնի է Միրանաւոր անունով:

1938 թ., երբ մաքրուեց Ե-Զ դարերում կառուցուած Երեւանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու պատերի վերին շերտը, երեւացին նոյն ժամանակաշրջանում արուած որմնանկարներ: Եթէ ուսումնասիրենք Է դարի եկեղեցիները, որմնանկարների կհանդիպենք նաեւ Արուճի, Թալինի, Արթիկի, Զուարթնոցի, Լմբատավանքի եւ Մրէնի եկեղեցիներում: Մինչդեռ որմնանկար չենք գտնի այն եկեղեցիներում, որոնք կառուցուել են Ը-Թ դարերում՝ մի շրջան, որը համարւում է հայկական արուեստի ամբողջական լճացման ժամանակահատուած:

Հայկական որմնանկարի զարգացման երկրորդ փուլը համընկնում է Բագրատունիների կողմից Անիի գրաւման ժամանակաշրջանի հետ (Ժ-ԺԱ դարեր): Այս շրջանից յիշատակման են արժանի նաեւ Աղթամար կղզում կառուցուած եկեղեցու եւ պալատի որմնանկարները, ինչպէս նաեւ Անիում Բագրատունիների պալատի ներքին յարդարանքը: Ակնյայտ է, որ եթէ հետազօտութիւններն այդ ուղղութեամբ առաւել արդիւնաւէտ դառնան, ապա ամենայն հաւանականութեամբ ի յայտ կգան այդ շրջանում արուած այլ որմնանկարներ:

ԺԱ դարի վերջից սկսած՝ հայկական եկեղեցիներում որմնանկարները սկսում են պակասել: Արդեօ՞ք պատճառը Հայոց Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման առաւել ամրապնդումն էր կամ էլ՝ սելջուկների տիրապետութիւնը, որոնք զաւթեցին հայերի երկիրը:

Հեշտ չէ պատասխանել այս հարցերին:

Որմնանկարներով հարուստ ԺԳ դարը մենք դիտում ենք իբրեւ որմնանկարի զարգացման երրորդ շրջան: Այդ դարում նկարազարդուած եկեղեցիների թուին են պատկանում Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարը, որի հիմնադիրն է Տիգրան Հոնենցը, Բախտաղեկի եկեղեցին, Աշտարակի Ս. Մարինէն, ինչպէս նաեւ Անիի ԺԱ դարի Ս. Փրկիչ եկեղեցին, որի որմնանկարները, սակայն, արուել են ԺԳ դարում: Յիշատակենք նաեւ Հաղպատի եւ Գեղարդի եկեղեցիները, որոնք թէեւ հին կառոյցներ են, սակայն, ինչպէս եւ նախորդը, ունեն ԺԳ դարին պատկանող որմնանկարներ: Բացառուած չէ նաեւ, որ լինեն այդ ժամանակ կառուցուած այլ եկեղեցիներ, որոնք պահպանել են իրենց որմնանկարները: Սակայն լիարժէք տեղեկութիւնների պակասի պատճառով մենք ի վիճակի չենք դրանք թուարկել:

Սահմանելով երեք տարբեր շրջաններ՝ այժմ կարող ենք անցնել այդ ժամանակահատուածներում արուած որմնանկարներին վերաբերող յարաբերական տուեալների ուսումնասիրմանը: Այս գործում անշուշտ կհանդիպենք որոշակի դժուարութիւնների, քանի որ մեր հաւաքած տեղեկութիւնները միշտ չէ, որ լիարժէք են, նոյնիսկ երբեմն էլ՝ անկատար: Պատճառն այն է, որ հեղինակները շատ յաճախ թուացիկ կերպով են անդրադառնում որմնանկարներին՝ առանց դրանք նկարագրելու եւ մանրամասնութիւնները յայտնելու: Այս նիւթի ուսումնասիրմանը խոչընդոտում է նաեւ գոյութիւն ունեցող որմնանկարների վերատպութիւնների պակասը: Կարծում ենք, որ ամենահինը Աշտարակի, Տեկորի եւ Երերոյքի եկեղեցիները զարդարող որմնանկարներն են: Աշտարակի Միրանաւոր, այսինքն՝ թագաւորական, բազիլիկ եկեղեցին կառուցուել է Ե դարում: Ինչպէս նշում է յայտնի ճարտարապետ Թ. Թորամանեանը, նրա որմնանկարները եւս արուել են Ե դարում[6]: Տեկորի բազիլիկը Հայաստանի ամենահին եկեղեցիներից մէկն է, որը կարելի է համեմատել Երերոյքի յայտնի բազիլիկի հետ, թէեւ վերջինս աւելի խոշոր կառոյց է: Վերոյիշեալ եկեղեցին կառուցուել է Ե դարի վերջին կամ Զ դարի սկզբին Սահակ Կամսարական իշխանի կողմից: Տեկորի որմնանկարների առիթով կարելի է վկայակոչել

6 Տե՛ս Թ. Թորամանեան, Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան, Երեւան, 1941-1948, I, էջ 112:

Ստրժիգովսկուն[7] եւ Ն. Մառին[8], որոնք այդ նկարների մասին խօսում են համառօտակի: Մառը յայտնում է, որ եկեղեցու աբսիդը ծածկուած է մնասուած որմնանկարների պատառիկներով, որոնք, ըստ երեւոյթին, իրենցից ներկայացնում են եկեղեցու մոդել, ինչը որ հանդիպում ենք նաեւ Զուարթնոցի տաճարում: Մինչդեռ Ստրժիգովսկին որմնանկարով արտայայտուած տուեալ թեման մեկնաբանում է որպէս Ուխտի տապանակը ներկայացնող պատկեր, որից վերեւ նկատելի են դէպի սպիտակ-կապոյտ երկինք վեր խոյացած վեցթեւեան քերովբէները: Նա գտնում է, որ այստեղ խօսքը գնում է սուրբ սեղանը խորհրդանշող պատկերի մասին:

Ինչ վերաբերում է Ե կամ Զ դարերում կառուցուած Երեւանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցուն, ապա նրա որմնանկարները ներկայացնում են ծաղկած թփերից կազմուած մի ֆրիզ, որը զբաղեցնում է սիւնաշարի վերին մասը: Ներքեւում մարդու հասակի չափով մէկ այլ ֆրիզ պատկերում է ծաղկած թփեր, արմաւենիներ, նոճիներ: Այս մոտիւները նմանութեան գծեր ունեն Երուսաղէմի հայկական խճանկարների թեմաների հետ, որոնք հաւանաբար արուել են Զ դարում: Մինչդեռ Դուրնովոն պնդում է, որ Երեւանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները մեզ են մատուցում յատկապէս Գառնիի տաճարի հետ ունեցած ոճական նմանութիւններ[9]:

Աշխարհիկ թեմաներով արուած ամենահին որմնանկարները յայտնաբերուել են Դուինի կաթողիկոսական պալատում 1937-1939 թթ. կատարուած պեղումների ժամանակ: Ըստ Կ. Ղաֆադարեանի՝ սոյն պալատը կառուցուել է 461-485 թթ.[10]: Մինչդեռ Եակոբսոնը պնդում է, որ նրա շինարարութիւնն աւարտուել է Զ դարում[11]: Կ. Ղաֆադարեանը վկայում է նաեւ մի քանի որմնանկարների գոյութեան մասին՝ դրանք համարելով Ե-Է դարերի աշխատանքներ[12]: Եակոբսոնը վերոյիշեալ իր գրքում յայտնում է մեզ, որ կաթողիկոսական

7 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, I, էջ 298:

8 Տե՛ս N. I. Marr, Memoires de la Soc. russe d'archéologie, XIX, 1909, էջ 15:

9 Տե՛ս Георг Гоиан, 2000 лет армянского театра, Москва, 1952, II, էջ 54:

10 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, Երեւան, 1952, էջ 269:

11 Տե՛ս А. Якобсон, Очерк зодчества Армении в VXIII в., Москва, 1950, էջ 49:

12 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, նշ. աշխ., էջ 274:

պալատի արեւելեան կողմում կառուցուած է մի աղօթատուն, որի պատերը եւս ծածկուած են եղել որմնանկարներով[13]: Մինչդեռ Վ. Յարութիւնեանը գտնում է, որ այդ աղօթատունը, որը վկայակոչում են հայ պատմաբանները, մի քանդուած բազիլիկ եկեղեցու մնացորդ է, որը, ըստ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսի վկայութեան, կառուցուել է 553-554 թթ.[14]:

Եթէ Զ դարը մեզ որմնանկարներ չի մատուցում, ապա, հակառակ դրան, կարելի է թուարկել որմնանկարներով հարուստ է դարի եկեղեցիները: Յիշատակենք նախ եւ առաջ 645-660 թթ. Ներսէս Գ Շինող կաթողիկոսի կառուցած Զուարթնոցի վեհաքանչ եկեղեցին, որի սուրբ սեղանը պարուրող կիսաշրջանաձեւ աբսիդը ծածկուած է որմնանկարներով: Վ. Յարութիւնեանը Զուարթնոցին նուիրուած իր գրքում զբաղւում է այդ տաճարի որմնանկարների ուսումնասիրութեամբ[15]:

Է դարում է կառուցուել նաեւ Արուճի եկեղեցին: Գրիգոր Մամիկոնեանը 662 թ. այս բնակավայրը դարձրեց իր աթոռանիստը՝ 667-668 թթ. սկսելով եկեղեցու շինարարութիւնը: Արուճի եկեղեցու աբսիդը ծածկուած է որմնանկարներով, որոնց մի մասը չի պահպանուել: Մինչդեռ չվնասուած հատուածները ներկայացնում են ականթի տերեւներից բաղկացած զարդանկարներ եւ մի քանի խամրած ֆիգուրներ[16]: Իրենց յստակութիւնը կորցրած այդ ֆիգուրները Ստրժիգովսկին մեկնաբանում է հետեւեալ կերպ. առաջին պլանում նկատելի է կապոյտ ֆոնի վրայ կերպարտրուած Քրիստոսի պատկերը, որի ոտքերի տակ գտնւում է հաւանաբար խոտ խորհրդանշող կանաչ տարածութիւն: Քրիստոս կրում է շագանակագոյն պատմուճան, վրան՝ սպիտակ քղամիդ: Ձեռքում Նա պահել է հայատառ մի մագաղաթագալար: Եկեղեցու հարաւային կողմում տեղադրուած լուսամուտի կողքին կարելի է նկատել 6 առաքեալների ֆիգուրներ՝ ձախ ձեռքում գրքեր պահած, իսկ աջով՝ օրհնելիս: Քրիստոսի պատկերը մեծ չափեր ունի՝

13 Տե՛ս А. Якобсон, նշ. աշխ., էջ 51:

14 Տե՛ս Վ. Յարութիւնեան, Դուինի 57-րդ դդ. ճարտարապետական յուշարձանները, Երեւան, 1950, էջ 113:

15 Տե՛ս Վ. Յարութիւնեան, Զուարթնոց, Երեւան, 1952:

16 Տե՛ս Վ. Յարութիւնեան, Արուճի եկեղեցու տարեթիւը, Երեւան, 1946:

մօտ 6մ բարձրութիւն[17]: Արուճի եկեղեցու ֆրիզը եւս չափազանց մեծ է՝ կենտրոնական պատի ներքեւի հատուածում գոյացնելով ականթի տերեւներ ներկայացնող գեղեցիկ մի զարդանկար, որի դրասանդը մերթ տարածւում է, մերթ սեղմւում: Լ. Դուրնովոն, ելնելով ականթի տերեւների այս մոտիւների եւ Գառնիի տաճարի զարդաքանդակների միջեւ եղած նմանութիւններից, եզրակացնում է, որ Հայաստանում մեծադիր որմնանկարները գոյութիւն են ունեցել սկսած առաջին իսկ դարերից՝ գտնելով, որ դրանք արուած են մեծ վարպետութեամբ, ինչպէս, օրինակ, Արուճի եկեղեցու որմնանկարները[18]: Նշենք նաեւ Արուճում մարմարէ, նկարազարդ մի ծեփածոյի գոյութեան փաստը:

Լաւ պահպանուած որմնանկարներ են յայտնաբերուել նաեւ Թալինի եկեղեցում՝ կառուցուած Ներսէս Կամսարականի կողմից 630-640 թթ.: Եկեղեցու պատերը, յատկապէս կենտրոնական խորանը ծածկուած են ս. Կոյսին եւ քրիստոնէական Եկեղեցու սուրբ եպիսկոպոսներին պատկերող որմնանկարներով: Նրանք բոլորն էլ նկարուած են շրջանաձեւ ֆոնի վրայ եւ աւելի լաւ են պահպանուել, քան որմնանկարներով ծածկուած միւս հատուածները: Պէտք է ասել, որ ականթի տերեւներ եւ բաղեղներ ներկայացնող զարդանկարների վրայ տակաւին նկատելի է ասորական ազդեցութիւնը: Եկեղեցու գլխաւոր խորանը ծածկող որմնանկարներից բացի, զանազանում ենք նաեւ պատուհանի ամբողջ երկայնքով ձգուող մարդկային 12 ֆիգուր. դրանք հաւանաբար 12 առաքեալներն են: Կենտրոնական խորանի պատին նկատելի է նաեւ երկնային հրեղէն զօրքերով շրջապատուած գահը՝ աւետարանիչների խորհրդանիշը, որը պատկերուած է մանդորլայի մէջ: Գահի վրայ դրուած են մի բարձ եւ մի գիրք: Խորանի եւ կողմնային պատի միջեւ նկատելի է մի սուրբ ճիւաղի պատկեր, որը հաւանաբար ներկայացնում է ս. Գեւորգին: Իսկ Նարտեքսի[19] պատը պահպանել է «Քրիստոսի մուտքը Երուսաղէմ» տեսարանը ներկայացնող որմնանկարի պատառիկները: Դիմացի պատին տեսանելի են թերեւս սուրբերին պատկանող բազմաթիւ գլուխներ: Այդ պատկերների մէջ Ն. Մարը վերծանել է ոմն Մովսէս նկարչի անունը[20]: Թալինի որմնանկարներ

17 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 192-193:

18 Տե՛ս "Древнеармянская миниатюра", Երեւան, 1952:

19 Նարտեքս եկեղեցու ներսի արեւմտեան պատը:

20 Տե՛ս N. I. Marr, Oriens Christianus, N. F. V., 1915, էջ 93:

ների առաւել մանրամասն արուած միակ նկարագրութիւնը կայ Յ. Ստրժիգովսկու մօտ[21] եւ հաւանաբար Լ. Դուրնովոյի արդէն յիշատակուած աշխատութեան մէջ:

Եղվարդի եկեղեցում, որը կառուցուել է Գրիգոր Մամիկոնեանի կողմից հաւանաբար նոյն ժամանակահատուածում, ինչ որ Արուճի եկեղեցին (660-670), հանդիպում են վերծանման տքնաջան աշխատանք պահանջող բազմաթիւ զարդանկարներ: Եկեղեցին ամբողջովին ծածկուած է որմնանկարներով, որոնցից պահպանուել են միայն ծաղիկներ պատկերող հատուածները: Նկատելի են նաեւ մի քանի ֆիգուրներ:

Մրէնի գլխաւոր եկեղեցու կենտրոնական աբսիդը եւս ծածկուած է որմնանկարներով, որոնց ներկայացրած թեմաները դժուարութեամբ են զանազանւում: Տաճարը կառուցուել է 639-640 թթ. հաւանաբար Կամսարական տոհմի կողմից: Աբսիդի եզրագծերի վրայ նկատելի են ձուաձեւ շրջանակներով պարուրուած մարդկային ֆիգուրներ, որոնց մէջտեղում պատկերուած է սուրբ սեղանը: Մինչդեռ լուսամուտի հատուածը ծածկուած է կանգնած սուրբեր կերպարանող որմնանկարներով[22]:

Արթիկի մօտ է գտնւում Լմբատավանքի եկեղեցին՝ կառուցուած հաւանաբար է դարում: Աբսիդի վրայ տեսնում ենք ամենակալ Քրիստոս ներկայացնող որմնանկարը: Նա պատկերուած է հրեղէն մանդորլայի մէջ: Քիչ հեռում նշմարւում են սպիտակ հագած քերովբէների որմնանկարները: Մինչդեռ սուրբերի նկարները եւ մի մեծ խաչ զարդարում են եկեղեցու արեւելեան պատերը[23]:

Արթիկի Ս. Մարիամ եկեղեցին եւս պատկանում է այս ժամանակահատուածին եւ հաւանաբար կառուցուել է 630 թ.: Նրա ձախ աբսիդի վրայ երեւում են մեծադիր մի որմնանկարի պատառիկները, որոնք, ըստ Յ. Ստրժիգովսկու, ներկայացնում են սուրբ կանանց ողբի տեսարանը: Կանայք վեցն են՝ նկարուած ձախ կողմում, սպիտակ ֆոնի վրայ: Մինչդեռ աջում պատկերուած է ս. Կոյս Մարիամը, որը պահում է Քրիստոսի գլուխը: Որմնանկարի միջին մասում եւ ներքե-

21 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 298:

22 Տե՛ս նոյն, I, էջ 184. Թ. Թորամանեան, Տեկոր, էջ 47:

23 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, II, էջ 499:

ւում կանգնած է լուսապսակով պարուրուած մի մարդկային ֆիգուր[24]:

Նիւթի սակաւութեան պատճառով, ցաւօք, սրանով էլ աւարտւում է այն ամէնը, ինչ կարելի է ասել Ե-Է դարերի որմնանկարների վերաբերեալ, որոնք ստեղծուեցին Հայաստանի քրիստոնէացմանը յաջորդող առաջին դարերում: Ուստի անհրաժեշտ է, որ մեր ունեցած տուեալների մի մասը վերանայուի եւ ստուգուի, որը կարուի միայն տեղում մանրակրկիտ ուսումնասիրութիւններ կատարելուց եւ ներկայումս դժուար վերծանելի որմնանկարների լուացումից յետոյ:

Ինչպէս արդէն նշեցինք, Ը-Թ դարերը բնութագրւում են որմնանկարների բացակայութեամբ, որի պատճառը աւելի շատ Հայաստանում արաբական տիրապետութեան հետեւանքով առաջացած մշակութային գործունէութեան լճացումն է, քան այլ հանգամանքներ: Մինչդեռ Ժ դարի սկզբում մենք վերստին ականատես ենք նոր որմնանկարների, այս անգամ արդէն՝ Աղթամարի Ս. Խաչ վեհաշուք եկեղեցում: Այս եկեղեցին կառուցուել է Գագիկ Արծրունի թագաւորի կողմից 915-921 թթ. եւ հարուստ է յատկապէս մոնումենտալ որմնանկարներով, որոնք կեանքի են կոչուած նոյն ոգով, ինչ որ նոյն այդ շրջանին պատկանող հայկական մանրանկարները: Մոնումենտալութիւնը յատուկ է այս եկեղեցու որմնանկարչական բոլոր յօրինուածքներին: Հայ վարպետները կենսական մեծ լիցք են հաղորդել այդ որմնանկարներին՝ անբռնազբաս կերպով օգտագործելով գունային հակադրութիւնները: Որմնանկարչական այդ յօրինուածքները ներկայացնում են յատկապէս նորկտակարանեան տեսարաններ: Այսպէս օրինակ՝ հարաւային աբսիդը ծածկուած է Աւետման եւ Յիսուսի Մանկեան տեսարաններով, իսկ Ղազարոսի յարութիւնը, Մուտքը Երուսաղէմ, Կանայի հարսանիքը, Քրիստոս Պիղատոսի առջեւ, Համբարձում եւ նորկտակարանեան այլ թեմաներ պատկերող որմնանկարները զարդարում են միւս խորանը: Սրանց մի քանիսի վերատպութիւնները զետեղուած են Յ. Ստրժիգովսկու արդէն յիշատակուած աշխատութեան մէջ[25]:

Այս նոյն շրջանին է պատկանում նաեւ Արծրունիների թագաւորական պալատը: Այն կառուցուել է Աղթամար կղզում եւ նկարագրուած է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» յայտնի գրքում[26]: Ըստ այս պատմիչի՝ պալատի հիւրասենեակների պատերը ծածկուած են հայ ժողովրդի կեանքից վերցուած թեմաներով ու ռազմի տեսարաններով: Ներկայումս պալատն ամբողջովին աւերուած է. կանգուն է միայն Ս. Խաչ եկեղեցին:

Ինչպէս արդէն նշեցինք, ԺԱ-ԺԲ դարերում կառուցուած եկեղեցիներում որմնանկարներ չկան: Մինչդեռ ԺԳ դարում նկատում ենք որմնանկարչական արուեստի նորօրինակ զարգացում եւ անսպասելի վերածնունդ, որը եւ հանդիսանում է հայկական որմնանկարչութեան կատարեալ ծաղկման ժամանակաշրջան: Այդ դարը յատկանշական է նրանով, որ եկեղեցիները վերստին զարդարուեցին որմնանկարներով:

Այս եկեղեցիներից առանձնացնենք յատկապէս Հաղպատինը, որը 957 թ. կառուցել է Աշոտ Գ-ի կին Խոսրովանուշը: Թէեւ եկեղեցու շինարարութիւնն աւարտուել է Ժ դարի վերջին, սակայն նրա որմնանկարները, որոնք ունեն պատմական եւ մշակութային մեծ նշանակութիւն, ստեղծուել են ԺԳ դարում: Այդ որմնանկարներից մէկի վերատպութիւնը, որը ներկայացնում է ոմն Խութլուբուղա ազնուականի, զետեղուած է Թ. Թորամանեանի արդէն յիշատակուած աշխատութեան մէջ:

ԺԳ դարում կառուցուած ճարտարապետական մէկ այլ կոթող է Աշտարակի Ս. Մարինէ եկեղեցին: Նրա արեւմտեան պատը ծածկուած է նոյն շրջանում արուած որմնանկարներով[27]:

Երրորդ եկեղեցին, որը հարուստ է ԺԳ դարում արուած որմնանկարներով, Անիի Ս. Փրկիչն է՝ կառուցուած 1036 թ. Ապլղարիպ Պահլաւունու պատուէրով: Դժբախտաբար, այդ եկեղեցու որմնանկարները չեն պահպանուել: Եակոբսոնը գտնում է, որ Ս. Փրկիչ եկեղեցու արտաքին յարդարանքը ոճական ընդհանրութիւններ ունի Բագրատունիների իշխանութեան օրօք կառուցուած շինութիւնների հետ՝ մի բան, որը հանդիպում ենք նաեւ Գագկաշէն եկեղեցու ճակատամասում[28]: Յ. Ստրժիգովսկին գտնում է, որ այդ եկեղեցու որմնանկարնե-

24 Տե՛ս նոյն, II, էջ 500:

25 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 299, II, էջ 538:

26 Տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, III, էջ 36:

27 Տե՛ս Թ. Թորամանեան, նշ. աշխ., 1942, I, էջ 290, 374:

28 Տե՛ս А. Якобсон, նշ. աշխ., էջ 70:

ը բիւզանդական ազդեցութեան արդիւնք են եւ պատկանում են աւելի ուշ ժամանակաշրջանի, քան ինքը եկեղեցին[29]*: Ինչ վերաբերում է որմնանկարների տարեթուին, մենք համամիտ ենք այս գիտնականի հետ՝ գտնելով, որ դրանք արուել են ԺԳ դարում, մինչդեռ եկեղեցին կառուցուել է ԺԱ դարում: Սակայն բիւզանդական ազդեցութեան հարցում համամիտ չենք Յ. Ստրժիգովսկու հետ:*

Ուսումնասիրենք նախ եւ առաջ Ս. Փրկիչ եկեղեցու դեռեւս չվնասուած որմնանկարները: Գմբէթի ութ աբսիդները ծածկուած են որմնանկարներով, որոնք գրեթէ ամբողջութեամբ աւերուած են: Եկեղեցու միւս զարդանկարները եւս վատ են պահպանուել: Աւագ խորանում տեսնում ենք Քրիստոսին՝ շրջապատուած հրեշտակներով: Ներքեւի մասում կանգնած են առաքեալները: Հարաւարեւելեան եւ հիւսիսարեւմտեան որմնախորշերը ծածկուած են Հոգեգալուստը պատկերող որմնանկարով, որից ներքեւ պատկերուած են Յիսուս Քրիստոսի Մնունդը եւ Խաչելութիւնը: Մէկ այլ որմնախորշ ներկայացնում է Վերջին ընթրիքի տեսարանը, իսկ այս որմնանկարի եւ Յովհաննէս ու Ղուկաս աւետարանիչների ֆիգուրների ներքեւում պատկերուած տեսարանները ջնջուած են: Լաւ է պահպանուել Մարկոս աւետարանչի պատկերը, որից ներքեւ ներկայացուած է Այլակերպութեան տեսարանը: Տեսանելի են նաեւ Մատթէոս աւետարանչի եւ նրա ներքեւում Յարութեան տեսարանը պատկերող որմնանկարները: Մատթէոս աւետարանչի առջեւ պատկերուած է ծնկած Սարգիս Պարշկան անունով ոմն նկարիչ, որը թողութիւն է հայցում իր մեղքերի համար:

Ըստ Թ. Թորամանեանի[30]*՝ ԺԳ դարում կառուցուած Գեղարդի եկեղեցու որմնանկարները եւս պատկանում են այդ ժամանակաշրջանին:*

Վերջապէս, անդրադառնալու ենք այն որմնանկարներին, որոնք զարդարում են Անիի երկու եկեղեցիները՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը (կառուցուած Տիգրան Հոնենցի կողմից), ինչպէս նաեւ սրանից աւելի փոքր մի եկեղեցի՝ կառուցուած նոյն շրջանում Բախտաղեկի տոհմի կողմից: Դրանցում Հին եւ Նոր Կտակարաններից փոխառուած թեմաներից եւ Թադէոս առաքեալի կեանքը ներկայացնող տեսարաններից

29 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 298:

30 Տե՛ս Թ. Թորամանեան, Ամբ. աշխ., 1942, I, էջ 346:

բացի, պատահում են նաեւ զուտ դեկորատիւ բնոյթի որմնանկարներ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մասին մեզ յայտնի է տարբեր նկարագրութիւններից եւ վերատպութիւններից: Այս նկարագրութիւններից մէկը զետեղուած է Ն. Մառի «Անի՝ աւերակների հայոց քաղաք» աշխատութեան մէջ[31]*: Իսկ վերատպութիւններ կարելի է տեսնել Յ. Ստրժիգովսկու, Թ. Թորամանեանի արդէն յիշատակուած աշխատութիւններում եւ Ա. Զոպանեանի «Հայաստանի վարդաստանները» գրքում*[32]*:*

Ե՛ւ Ա. Զոպանեանի, ե՛ւ Թ. Թորամանեանի վերատպութիւններում հանդիպում է շատ յայտնի մի որմնանկար. այնտեղ պատկերուած է հայոց արքայ Տրդատը, որը մկրտւում է իր արքունիքի հետ միասին ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից եւ այնուհետեւ յորդորում ժողովրդին ապաւինել քրիստոնէութեանը: Տրդատը պատկերուած է ձիու վրայ, որն, ընթանալով իբերացիների, աղուանների եւ աբխազների առջեւից, գնում է ս. Գրիգորին ընդառաջ: Հայոց արքան շրջապատուած է իշխաններով եւ նախարարներով, որոնք կրում են այդ ժամանակաշրջանին բնորոշ հագուստներ: Տրդատի ձին ոտնատակ է անում մի խոզի, որը խորհրդանշում է հեթանոսութիւնը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում շատ են յատկապէս հոգեւոր թեմաներով արուած որմնանկարները[33]*: Հաշուի առնելով դրանց մանրամասն նկարագրութիւնների պակասը՝ կարող ենք թուարկել մի քանիսը միայն:*

Գմբէթի հարաւարեւելեան կողմում նկատելի են չորս հրեշտակներ, որոնք դէպի վեր են խոյացած եւ պահում են Քրիստոսի մանդորլան: Նրա շուրջը հաւաքուած են 12 առաքեալները՝ կենտրոնից զատուելով ս. Կոյսի պատկերով: Այս տեսարաններից բացի, ներկայացուած են նաեւ 4 աւետարանիչները եւ մի քանի մարգարէներ: Աբսիդի լուսամուտի աջ եւ ձախ կողմերում պատկերուած են Մնդեան, իսկ վերին մասում՝ Աւետման տեսարանները: Իսկ ներքեւի հատուածում գտնւում է Քրիստոսի մուտքը Երուսաղէմ պատկերող որմնա-

31 Տե՛ս N. I. Marr, Ani, la ville arménienne en ruines, "Revue des Études arméniennes", Paris, 1921, էջ 403, 404:

32 Տե՛ս A. Tchobanian, La Roseraie d'Arménie, III, էջ 60:

33 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 299:

նկարը: Ամբողջ պատը բաժանուած է նկարազարդուած հատուածների, որոնք երեք շարքով դասաւորուած են միմեանց վրայ: Հիւսիսային պատը աւելի շատ է վնասուած, սակայն վերեւի հատուածում դեռեւս տեսանելի է Հոգեգալստեան տեսարանը, իսկ միջին մասում՝ Ղազարոսի յարութիւնը: Ներքեւի հատուածը վնասուած է ամբողջովին: Որմնանկարներով ծածկուած արեւմտեան պատի վերին հատուածում կարող ենք տեսնել «Երեք մանուկները հնոցի մէջ» թեման պատկերող որմնանկարը, իսկ միջին մասում՝ «Յիսուսը ջրհորի մօտ» տեսարանը: Աբսիդն իր մէջ առել է սուրբերով եւ քերովբէներով շրջապատուած Ամենափրկիչ Քրիստոսի պատկերը: Քրիստոսը նկարուած է սուրբ սեղանի պատուհանից վեր: Նա Իր աջ կողմում գտնուող 6 առաքեալներին ս. հաղորդութիւն է տալիս հացով, իսկ ձախ կողմում կանգնած միւս 6-ին՝ գինով: Այս տեսարանից ներքեւ կարելի է նկատել բազում հայրապետների պատկերներ: Աստուածաշնչեան տեսարաններ ներկայացնող այն որմնանկարները, որոնք ծածկում էին եկեղեցու արեւմտեան պատի վերին երկու շարքերը, ամբողջութեամբ վնասուած են, բացառութեամբ վերոյիշեալ մի քանի տեսարանների: Ներքեւի շարքը ծածկուած է ս. Գրիգոր Լուսաւորչի վարքը ներկայացնող որմնանկարներով, որոնց արդէն անդրադարձանք:

Խօսենք նաեւ այն մի քանի որմնանկարների մասին, որոնք զարդարում են գաւթի պատերը: Գաւիթը փլուելուց յետոյ պահպանուել են միայն մուտքի պատերը ծածկող մի քանի որմնանկարներ: Այդ մուտքի վերին մասում պատկերուած է Քրիստոսը՝ շրջապատուած հրեշտակներով: Քիչ աւելի վեր ներկայացուած է խաչից իջեցման տեսարանը: Ձախ կողմում գտնւում են Յովհաննէս աւետարանչի, իսկ աջում՝ Աբրահամի, Իսահակի եւ այլ սուրբերի պատկերները: Յ. Ստրժիգովսկին իր "Asiens bildende kunst" աշխատութեան մէջ[34] ուսումնասիրում է հետաքրքրաշարժ մի մոտիւ, որը նա հանդիպել է վերոյիշեալ եկեղեցու աջ աբսիդից դէպի զանգակատուն տանող դռան վերին մասում: Խօսքը վերաբերում է գորգաձեւ մոտիւներին, որոնք անմիջապէս գրաւում են դիտողի ուշադրութիւնը: Այդ որմնանկարները ներկայացնում են թանձր սեւ գոյնի շրջանակներով պատկերուած գորշ կարմրաւուն մի ֆոն, որի մէջ նկարուած են կանաչ թեւեր եւ սի-

34 Տե՛ս J. Strzygowski, Asiens bildende kunst, Wien, 1930, էջ 211:

րամարգի պոչեր ունեցող դեւեր: Այս պատկերներից վերեւ տեսնում ենք ծաղկէ մոտիւներով արուած որմնանկարներ: Յ. Ստրժիգովսկին այն կարծիքին է, որ այս մոտիւները հանդիսանում են աշխարհական հայերի պալատները զեղեցկացնող որմնանկարների նմանակում: Ըստ նրա՝ դրանք կրում են պարթեւական ազդեցութիւն եւ կարող էին գոյութիւն ունենալ նախքան Հայաստանի քրիստոնէացումը, երբ մեծատունների սենեակները ծածկւում էին մետաքսէ կտորներով: Յ. Ստրժիգովսկին իր այս կարծիքը փաստարկում է նրանով, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու այդ մոտիւների եւ մետաքսէ այդ կտորների զարդանկարների միջեւ կան որոշակի նմանութիւններ[35]:

Այժմ փորձենք պարզաբանել, թէ՝ իրաւացի՞ են արդեօք այն գիտնականները, որոնք պնդում են, թէ Հայաստանում որմնանկարչական արուեստը պատահական բնոյթ է կրել, ինչպէս նաեւ՝ արդեո՞ք ստեղծուել են նպաստաւոր բոլոր պայմանները որմնանկարի՝ որպէս ինքնատիպ արուեստի զարգացման համար:

Ամենից առաջ կարող ենք հաստատել այն փաստը, որ սկզբնական շրջանում, աւելի ստոյգ՝ Ե-Է դարերում, արդէն ինքնատիպ դարձած հայկական մշակոյթը հասել էր զարգացման շատ բարձր աստիճանի, որը Հայաստանը դասում է Մերձաւոր Արեւելքի հոգեւոր եւ նիւթական մշակութային բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում: Նախ եւ առաջ նկատի ունենք նրա հոգեւոր մշակոյթը՝ իր պատմիչներով, փիլիսոփաներով, մաթեմատիկոսներով, աստուածաբաններով, եւ ապա՝ նիւթականը, որն ամբողջացած է ճարտարապետութեան, պատկերաքանդակի, որմնանկարչութեան, մանրանկարչութեան մէջ: Արուեստի վերոյիշեալ բնագաւառները հասան զարգացման այնպիսի բարձրութեան, որ կարող էին հեշտութեամբ մեծ ծաղկում ապրել՝ թեւաւորուած լինելով հայկական հանճարի ոգով, որը, սակայն, նրանց չէր խանգարում կրել փոքրասիական քրիստոնեայ այլ երկրների արուեստի ազդեցութիւնը:

Ինչ վերաբերում է Յ. Ստրժիգովսկու առաջ քաշած հայկական որմնանկարի ինքնատիպութեան խնդրին, ապա համամիտ չենք նրա հետ: Մենք հաւատացած ենք, որ հայերը, վարպետներ դառնալով մանրանկարչութեան մէջ, նոյնպիսի հանճարներ են տուել նաեւ որմ-

35 Տե՛ս նոյն, էջ 211:

նանկարչական արուեստին, որը, սակայն, Հայաստանում նպաստաւոր պայմաններ չգտնելով, չկարողացաւ լայն զարգացում ապրել: Մինչդեռ ահա թէ ինչ է ասում Յ. Ստրժիգովսկին հայկական որմնանկարի վերաբերեալ. «Հայաստանում երբեւէ գոյութիւն չի ունեցել հոգեւոր նկարչութեան այն տարբերակը, որը յատուկ է եղել Բիւզանդիային»[36]: Ըստ նրա՝ քրիստոնէութեան առաջին դարերում կառուցուած եկեղեցիներում մենք չենք հանդիպում մարդկային ֆիգուր պատկերող որմնանկարների: Իսկ եթէ նոյնիսկ հանդիպում ենք, ապա, ըստ Յ. Ստրժիգովսկու, դրանք անկասկած Հայաստան են բերուել կա՛մ յոյների, կա՛մ էլ ասորիների կողմից: Նա գտնում է, որ արուեստի այս բնագաւառը չի կարող դիտուել իբրեւ ազգային, այսինքն՝ ինքնատիպ՝ պատճառաբանելով, թէ Հայոց Եկեղեցին թշնամական վերաբերմունք ունէր մարդկային ֆիգուր ներկայացնող նկարների հանդէպ[37]:

Ոչ ոք չի հերքի Յ. Ստրժիգովսկու ունեցած մեծ վաստակը: Նրան յաջողուել է գիտական աշխարհին մատուցել հայ վարպետների հանճարը: Նրա ուսումնասիրութիւնները լոյս սփռեցին հայկական արուեստներից գերագոյնի՝ ճարտարապետութեան վրայ՝ այն ճանաչել տալով Արեւմուտքին: Այս գիտնականի աշխատութիւնները նրան դարձրին հեղինակութիւն, որի կարծիքները երբէք չէին ենթարկւում քննարկման նոյնիսկ այն դէպքում, երբ նա կանգնած էր լինում սխալ ճանապարհի վրայ, ինչպէս, օրինակ, հայկական որմնանկարին վերաբերող խնդրում: Ոչ ոք չփորձեց հակադրուել Յ. Ստրժիգովսկուն, երբ վերջինս գտնում էր, որ Հայաստանում չէր կարող գոյութիւն ունենալ որմնանկարի ինքնատիպ արուեստ, եւ որ բոլոր այն որմնանկարները, որոնք հանդիպում են առաջին դարերում, ունեն կա՛մ յունական, կա՛մ էլ ասորական ծագում, իսկ ԺԳ դարի որմնանկարները կրում են վրացական դրոշմ: Հայկական որմնանկարի ինքնատիպ արուեստ իբրեւ թէ գոյութիւն չունենալու նրա տեսակէտի հետեւանքով գիտնականներից եւ ոչ մէկը այլեւս չզբաղուեց այդ խնդրով:

Տեղին է խօսել նաեւ Յ. Ստրժիգովսկու այն սխալի մասին, որը նա թոյլ է տալիս մանրանկարչութեան առնչութեամբ՝ պնդելով, թէ գիտնականներից ոչ ոք չպէտք է իրեն իրաւունք վերապահի խօսելու Ժ դարի հայկական ինքնատիպ արուեստի գոյութեան մասին[38]: Իսկ Մլքէ թագուհու Աւետարանը եւ այն ծաղկող հիասքանչ մանրանկարները նա համարում է ասորական օրինակի պատճէնում[39]: Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրելուց յետոյ միայն նա սթափուեց եւ ընդունեց հայկական ազգային մշակոյթի բարձր թռիչքը յատկապէս Ժ դարում[40], թէեւ մերժեց հայկական արուեստի ինքնատիպ լինելը: Առաջին արուեստաբանը, որն այդ հարցում խստօրէն հակադրուեց Յ. Ստրժիգովսկուն, Լ. Դուրնովոն է: Նա ապացուցեց, որ Հայաստանում որմնանկարչական արուեստը սկսել է զարգանալ Ե դարից սկսած:

Ինչ վերաբերում է հայկական որմնանկարի կրած ազդեցութիւնների խնդրին, ապա արուեստի այս բնագաւառի վրայ իրենց հետքն են թողել թէ՛ բիւզանդական եւ թէ՛ քրիստոնեայ Արեւելքի երկրների մշակոյթները (Կապադովկիա, Ասորեստան), որոնք, ըստ Ա. Գրաբարի, որոշակի ընդհանրութիւններ ունեն հայկական որմնանկարի հետ: Այսուհանդերձ, յատկապէս բիւզանդական ազդեցութեան հարցում Հ. Ֆոսիյոնը գտնում է, որ այն շատ աղօտ է արտայայտուել հայկական արուեստի մէջ: Յ. Բալտրուշայտիսի «Ուսումնասիրութիւններ միջնադարեան Վրաստանի եւ Հայաստանի արուեստի մասին» գրքի իր նախաբանում Հ. Ֆոսիյոնը ինքն իրեն հարց է տալիս. «Ի՞նչ է տուել Բիւզանդիան Հայաստանին», եւ անմիջապէս պատասխանում. «Ոչ թէ Բիւզանդիան է տուել Հայաստանին, այլ ընդհակառակը՝ Հայաստանը՝ Բիւզանդիային, նոյնիսկ՝ հռչակաւոր կայսրեր, եւ հայկական արուեստը հայ նկարիչների, ճարտարապետների եւ իրաւաբանների միջնորդութեամբ տարածուել է բիւզանդական ողջ կայսրութեան մէջ»[41]: Ըստ այս գիտնականի՝ քանի որ Բիւզանդիային է փոխանցուել նաեւ հայկական նկարչութիւնը, ապա այն պէտք է դիտել իբրեւ ինքնատիպ մի արուեստ, եւ անհրաժեշտ է, որ այսօր բոլորը հայկա-

36 Տե՛ս J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, I, էջ 455:

37 Տե՛ս Նոյն, I, էջ 302:

38 Տե՛ս "Das EtschmiadzinEvangeliar. Byzantinische denkmaler", Bd. I, Wien, 1891:

39 Տե՛ս "Byzantinische Zeitschrift", 1905, էջ 728:

40 Տե՛ս Kurt Weitzmann, Die armenische Buchmalerei des 10. und beginennden 11 Jhd. (Istambuler Forschungen, Bd. IV, էջ 3):

41 Տե՛ս J. Baltruchaitis, Etudes sur l'art médieval en Géorgie et en Arménie, Paris, 1929, էջ XI:

կան մանրանկարչութեան մէջ միահամուռ կերպով տեսնեն մեծ իւրօրինակութիւն ունեցող արուեստի մի բնագաւառի արտայայտութիւն:

Անժխտելի է այն փաստը, որ հայկական որմնանկարը եւս կրել է արտաքին ազդեցութիւններ: Դրանց թուին է պատկանում, ինչպէս արդէն ասացինք, բիւզանդական ազդեցութիւնը, որը, սակայն, չունեցաւ իշխող ներգործութիւն հայկական որմնանկարի վրայ: Իրենց կնիքն են թողել նաեւ ասորական եւ կապադովկիական մշակոյթները: Վրացական արուեստը եւս կարողացաւ որոշակի ազդեցութիւն թողնել այս բնագաւառի վրայ Հայաստանում:

Հայկական ճարտարապետութիւնը եւս որոշակի ազդեցութիւններ է կրել: Այսպէս օրինակ՝ Հաղպատի գլխաւոր եկեղեցու ճակատամասին հանդիպում ենք հնամենի շատ յօրինուածքներ, որոնք ներկայացնում են աքեմէնեան ճարտարապետութեանը բնորոշ առանձնայատկութիւններ[42]: Իսկ Գառնիի տաճարի ճարտարապետական ոճի իւրայատկութիւնները յիշեցնում են հին Ուրարտուն: Քրիստոնէական դարաշրջանում հայկական ճարտարապետութիւնը կրեց նաեւ ասորական եւ կապադովկիական ազդեցութիւններ, որոնք, սակայն, ամբողջովին լուծուեցին հայկական ճարտարապետական յօրինուածքների մէջ[43]: Ակնյայտ է նաեւ, որ որմնանկարչութիւնը եւս իր հերթին կրեց քրիստոնէադաւան մի շարք երկրների մշակոյթների ազդեցութիւններ, որոնք նոյնպէս, ինչպէս նախորդ դէպքում, շաղկապուեցին հայկական արուեստի ինքնատիպութեանը: Հայկական որմնանկարի այս բնագաւառն ունի միայն իրեն բնորոշ շատ առանձնայատկութիւններ, որոնք ինքնատիպ եւ տեսանելի կերպով իրենց արտայայտումն են գտել մեզ հասած բոլոր որմնանկարների մէջ: Այդ առանձնայատկութիւնների թուին են պատկանում արտայայտչութեան ուժը, հարուստ գոյների եւ գունային հակադրութիւնների վարպետօրէն օգտագործումը եւ վերջապէս՝ նկարչութեան մոնումենտալ եւ դեկորատիւ բնոյթը: Հայ նկարիչներն իրենց որմնանկարներին հաղորդում էին բնականի խոր զգացողութիւն, իրականի շունչ, կեանքի ընթացք: Եթէ նշէինք, թէ հայկական որմնանկարին բնորոշ է մոնումենտալ եւ դեկորատիւ իւրօրինակութիւն, ապա պէտք է հաստատել նաեւ այդ առանձնայատ-

42 Տե՛ս **А. Якобсон**, նշ. աշխ., էջ 50:

43 Տե՛ս նոյն, էջ 12-14:

կութեան բնածին լինելը, որը եւ առաջին իսկ հայեացքից ուղղակի աչքի է զարնում: Այն որմնանկարներում, որոնք ներկայացնում են շարժման մէջ գտնուող կեանքը, աշխարհը, նկատելի է այդ ընթացքին աւելի շատ կենդանութիւն հաղորդելու նկարիչների վարպետութիւնը: Հայ նկարիչները երբէք չեն կեղծում եւ ոչ էլ ձեւափոխում իրենց շրջապատող կեանքը, մինչդեռ Արեւելքին բնորոշ է սրա հակադիր պատկերը:

Հայ արուեստը բնորոշող այս յատկանիշները կարող են իրենց ամբողջացումը գտնել այն եզրակացութեան մէջ, որը ես փոխաբերաբար վերցնում եմ Ս. Տէր-Ներսիսեանից. «Հայկական նկարչութեան մէջ պարզորոշ կերպով նկատում է նրա երկակի բնոյթը, որը հանդիսանում է հնդեւրոպական մի ժողովրդի հանճարի արդիւնք: Հայկական արուեստը կրում է կրկնակի դրոշմ՝ հանդէս գալով իբրեւ երջանիկ մի միաձուլում, որն աւելի արեւելեան է, քան բիւզանդական արուեստը, եւ աւելի արեւմտեան, քան Արեւելքի մշակոյթը»[44]:

Ֆրանսերէնից թարգմանեց
Գեւորգ Մելիքեանը

44 Տե՛ս **S. Der-Nersissian**, Armenia and the Byzantine Empire, էջ 169:

ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՂԵՄԷՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

(շարունակութիւն)*

Գլուխ ԼԱ

Արդ, կապուեանք Նրա օրհնութեանը եւ տեսնենք, թէ որոնք են օրհնութեան ճանապարհները: Դարձեալ յիշենք սկզբից եղածները: Ինչի՞ շնորհիւ օրհնուեց մեր հայր Աբրահամը: Ո՞չ այն բանի համար, որ իր հաւատի համաձայն ճշմարտութիւն եւ արդարութիւն էր գործում[1]*: Իսահակը, վստահութեամբ ու կատարուելիքը լաւ իմանալով*[2]*, յօժարութեամբ տարուեց զոհաբերութեան*[3]*: Յակոբը խոնարհաբար լքեց իր երկիրը եղբօր պատճառով, գնաց Լաբանի մօտ ու ծառայեց. եւ նրան տրուեցին Իսրայէլի տասներկու գաւազանները*[4]*:*

Գլուխ ԼԲ

Եթէ մէկն ամէն ինչ անկեղծօրէն քննի, կճանաչի Նրա տուած պարգեւների ողջ մեծութիւնը: Քանզի Յակոբից են սերել բոլոր քահանաներն ու ղեւտացիները, ովքեր ծառայում էին Աստուծոյ սեղանին: Նրանից է մարմնով սերել Տէր Յիսուսը[5]*. նրանից են Յուդայի թագաւորները, իշխանները, առաջնորդները. եւ նրա միւս գաւազանները եւս պակաս փառք չունեն, քանզի Աստուած խոստացաւ. «Քո սերունդը կլինի երկնքի աստղերի նման»*[6]*: Արդ, նրանք բոլորը փառաւորուեցին ու մեծարուեցին՝ ո՛չ իրենք իրենց, ո՛չ իրենց կատարած*

---

* Սկիզբը տե՛ս «Գանձասար» Ե:

1 Հմմտ. Յակ. Բ 21:

2 Այսինքն՝ Իսահակը, իմանալով հանդերձ իրեն սպասուելիքը, կամաւոր յանձն առաւ զոհաբերուել:

3 Տե՛ս Ծն. ԻԲ:

4 Այստեղ գաւազանն օգտագործուած է ցեղի իմաստով [հմմտ. Գ Թագ. ԺԱ 31, 35], այսինքն՝ Յակոբը դարձաւ Իսրայէլի տասներկու ցեղերի հայրը:

5 Հմմտ. Հռոմ. Թ 5:

6 Հմմտ. Ծն. ԻԲ 17, ԻԸ 4:

գործերով, ո՛չ էլ իրենց գործողութիւնների արդարութեամբ, այլ Աստուծոյ կամքով: Ուստի եւ մենք, Նրա կամքով կոչուած լինելով ի Քրիստոս, արդարանում ենք ո՛չ ինքներս մեզանով, ո՛չ էլ մեր իմաստութեամբ կամ ողջախոհութեամբ կամ բարեպաշտութեամբ կամ մաքուր սրտով կատարած գործերով, այլ հաւատի միջոցով, որով ամենակալն Աստուած ի սկզբանէ ամենքին արդարացրել է: Նրան վայել է փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԼԳ

Ուրեմն ի՞նչ անենք, եղբայրնե՛ր: Ե՞տ կանգնենք բարեգործութիւնից եւ լքե՞նք սէրը: Աստուած մի՛ արասցէ, որ նման բան պատահի մեզ հետ. այլ ամբողջ եռանդով ու պատրաստակամութեամբ շտապենք կատարել ցանկացած բարի գործ: Քանզի Ինքը՝ ամէն ինչի Արարիչն ու Տէրը, ցնծում է Իր գործերով: Նա Իր գերազանց զօրութեամբ հաստատեց երկինքները եւ Իր անմեկնելի իմաստութեամբ զարդարեց դրանք. Նա երկիրն անջատեց իրեն շրջապատող ջրից եւ այն հաստատեց Իր իսկ կամքի անշարժ հիմքի վրայ եւ նրա վրայ շարժուող կենդանիներին հրամայեց ենթարկուել Իր կամքին: Նա նաեւ արարեց ծովն ու նրա մէջ եղող կենդանիներին եւ սահման դրեց Իր զօրութեամբ: Այս բոլորից վեր Նա Իր սուրբ ու անբիծ ձեռքերով արարեց գերազանցագոյնին ու մեծագոյնին՝ մարդուն, Իր իսկ պատկերով: Քանզի այսպէս ասաց Աստուած. «Ստեղծենք մարդուն Մեր պատկերով ու Մեր նմանութեամբ: Եւ արարեց Աստուած մարդուն. արու եւ էգ ստեղծեց նրանց»[1]: Այս ամէնը կատարելուց յետոյ Նա հաւանեց ու օրհնեց նրանց եւ ասաց. «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք»[2]: Տեսնում ենք, որ բոլոր արդարները զարդարուեցին բարի գործերով, եւ Ինքը Տէրը[3] եւս ուրախացաւ՝ բարի գործերով զարդարելով Իրեն: Արդ, նման օրինակ ունենալով, անձանձիր հետեւենք Նրա կամքին եւ ամբողջ ուժով ծառայենք արդարութեան գործին:

1 Տե՛ս Ծն. Ա 26-27:
2 Տե՛ս Ծն. Ա 28:
3 Այսինքն՝ Քրիստոս:

Գլուխ ԼԴ

Բարի աշխատաւորը համարձակ հաց է ստանում իր աշխատանքի դիմաց, իսկ ծոյլն ու անհոգը չի էլ համարձակւում նայել իր գործատիրոջ դէմքին: Ուրեմն մենք պէտք է պատրաստ լինենք բարեգործութեան, քանզի ամէն ինչ Նրանից է[1]: Քանզի [Գիրքը] նախազգուշացնում է մեզ. «Ահա Տէրը, եւ Նրա վարձն Իր առջեւ է, որպէսզի իւրաքանչիւրին հատուցի ըստ իր գործի»[2]: Այսպիսով, Նա մեզ թելադրում է ամբողջ սրտով վստահել Նրան[3] եւ որեւէ բարի գործի համար անհոգ ու ծոյլ չգտնուել: Նրանում թող լինի մեր փառաբանութիւնն ու յոյսը, հնազանդուենք Նրա կամքին: Մտածենք Իր հրեշտակների ողջ բազմութեան մասին, թէ ինչպէս նրանք, կանգնելով Նրա առջեւ, ծառայում են Նրա կամքին: Քանզի Գիրքն ասում է. «Բիւր բիւրերով կանգնած էին Նրա առջեւ եւ հազար հազարներով ծառայում էին Նրան[4] եւ գոչում էին՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Սաբաւովթ, ողջ տիեզերքը լի է Նրա փառքով»[5]: Այսպէս եւ մենք, միախորհուրդ հաւաքուելով, միահոգի, միաբերան անդադար աղաղակենք Նրան, որպէսզի մեզ եւս մասնակից դարձնի Իր մեծ ու փառաւոր խոստումներին: Քանզի ասում է [Գիրքը]. «Աչքը չի տեսել, եւ ականջը չի լսել, եւ մարդու սիրտը չի ընկել այն, ինչը Նա պատրաստեց Իրեն յուսացողներին»[6]:

Գլուխ ԼԵ

Ի՞նչ երանելի եւ սքանչելի են Աստուծոյ պարգեւները, սիրելինե՛ր: Կեանք՝ անմահութեան մէջ, պայծառութիւն՝ արդարութեան մէջ, ճշմարտութիւն՝ համոզմունքի[7] մէջ, հաւատ՝ վստահութեան մէջ, ժուժկալութիւն՝ սրբութեան մէջ. եւ այս ամէնը մատչելի է մեր իմացու-

1 Այսինքն՝ Աստծուց է բարիք գործելու կամքը:
2 Հմմտ. Ես. Խ 10, Յայտ. ԻԲ 12:
3 Այստեղ տեքստը կարծես աղաւաղուած է: Ոմանք թարգմանում են «Նա Իր ողջ սրտով զգուշացնում է մեզ այս մասին»:
4 Տե՛ս Դան. Է 10:
5 Տե՛ս Ես. Զ 3:
6 Հմմտ. Ա Կոր. Բ 9, Ես. ԿԴ 3-4:
7 Ոմանք թարգմանում են «կատարեալ վստահութիւն»:

թեանը: Եւ տակաւին ինչպիսի՜ պարգեւներ են պատրաստում սպասողներին: Յաւիտեանների Արարիչն ու Հայրը, Ամենասուրբը՝ Նա Ինքը միայն գիտէ դրանց թիւը եւ գեղեցկութիւնը: Արդ, ջանանք լինել Նրան ապաւինածների թւում, որպէսզի հաղորդակից լինենք խոստացուած պարգեւներին: Իսկ այդ ինչպէ՞ս է լինելու, սիրելինե՛ր: Եթէ մեր միտքը հաւատով հաստատուած լինի առ Աստուած, եթէ փնտրենք այն, ինչը հաճելի եւ ընդունելի է Իրեն, եթէ կատարենք այն, ինչը պատկանում է Իր սուրբ կամքին, եւ ընթանանք ճշմարտութեան ճանապարհով՝ մեզանից թօթափելով ամէն տեսակ անարդարութիւն եւ անօրէնութիւն, ընչաքաղցութիւն, խռովութիւն, չարաբարոյութիւն ու նենգութիւն, բամբասանք ու չարախօսութիւն, աստուածատեցութիւն, հպարտութիւն ու ամբարտաւանութիւն, սնափառութիւն ու անհիւրընկալութիւն[1]: Քանզի սրանք կատարողներն ատելի են Աստծուն, «եւ՝ ոչ միայն այդ անողները, այլեւ անողներին կամակից լինողները»[2]: Քանզի Գիրքն ասում է. «Ամբարշտին ասաց Աստուած. «Ինչո՞ւ ես դու Իմ պատուիրանների մասին պատմում եւ Իմ ուխտն ընդունում քո բերանով, մինչդեռ ատել ես խրատը եւ մերժել Իմ խօսքերը: Եթէ գող էիր տեսնում, գնում էիր նրա ետեւից եւ բաժին էիր ունենում շնացողի հետ: Քո բերանը լի էր չարութեամբ, եւ քո լեզուն ստութիւններ էր հիւսում: Նստելիս չարախօսում էիր քո եղբօրը եւ բամբասում էիր քո մօր որդուն: Դու արեցիր այս ամէնը, եւ Ես լռեցի: Դու, անօրէ՛ն, կարծեցիր, թէ Ես քեզ եմ նմանուելու: Սակայն յանդիմանելու եմ քեզ եւ քեզ կանգնեցնելու եմ քո առջեւ: Հասկացէ՛ք վերջապէս, Աստծո՛ւն մոռացողներ, որպէսզի չյաշոտուէք ինչպէս առիւծից[3], եւ ոչ ոք չի փրկի ձեզ: Գոհութեան պատարագը կփառաւորի Ինձ, եւ այնտեղ է ճանապարհը, որտեղ ցոյց կտամ նրան Աստուծոյ փրկութիւնը»»[4]:

Գլուխ ԼԶ

Սա է ճանապարհը, սիրելինե՛ր, որի մէջ գտել ենք մեր փրկութիւ-

1 Ընթերցումը կասկածելի է. ոմանք թարգմանում են «հիւրընկալ ոգու պակասութիւն»:

2 Հռոմ. Ա 32

3 «Ինչպէս առիւծից» արտայայտութիւնը չկայ ո՛չ Եօթանասնից, ո՛չ եբրայական տեքստում:

4 Սաղմ. Խթ 16-23

նը[1]՝ Յիսուս Քրիստոսին, մեր պատարագների Քահանայապետին[2], մեր տկարութեան մէջ մեր պահապանին ու օգնականին: Նրա միջոցով մենք նայում ենք երկինքների բարձրութեանը: Նրա միջոցով, ինչպէս հայելու մէջ, տեսնում ենք Աստուծոյ անբիծ ու լուսաւոր դէմքը: Նրա միջոցով բացուեցին մեր սրտի աչքերը: Նրա միջոցով մեր անխոհեմ ու մթագնած միտքը վերափթթում է Նրա լոյսի մէջ: Նրա միջոցով Տէրը կամեցաւ, որ մենք անմահ իմաստութիւն ճաշակենք: «Նա, լինելով Նրա փառքի լոյսը, այնքան է գերազանցում հրեշտակներին, որքան նրանցից աւելի փառաւոր անուն է ժառանգել»[3]: Քանզի այսպէս է գրուած. «Նա Իր հրեշտակներին հոգիներ դարձրեց եւ Իր պաշտօնեաներին՝ կրակի բոց»[4]: Իսկ Իր Որդու մասին[5] այսպէս ասաց. «Դու Իմ Որդին ես, Ես այսօր ծնեցի Քեզ. խնդրի՛ր Ինձանից, եւ հեթանոսներին Քեզ ժառանգութիւն կտամ եւ երկրի ծագերը՝ որպէս ստացուածք»[6]: Եւ դարձեալ ասում է Նրան. «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչեւ որ Քո թշնամիներին Քո ոտքերին պատուանդան դարձնեմ»[7]: Իսկ ովքե՞ր են թշնամիները. արատաւորները եւ Նրա կամքին հակառակուողները:

Գլուխ ԼԷ

Արդ, եղբայրնե՛ր, ողջ ուժով մարտնչենք Նրա սուրբ պատուիրանների ներքոյ: Պատկերացնենք մեր առաջնորդների ռազմիկներին. ինչպիսի՜ կարգապահութեամբ, ջանասիրութեամբ ու հնազանդութեամբ են նրանք կատարում հրամանները: Ոչ բոլորն են եպարքոսներ[8], ոչ բոլորն են հազարապետներ կամ հարիւրապետներ կամ յիսնապետներ եւ այլն, սակայն իւրաքանչիւրն իր աստիճանում կատարում է թագաւորի եւ առաջնորդների հրամանները: Ո՛չ մեծերն

1 Բառացի՝ «որը փրկում է մեզ»:

2 Հմմտ. Եբր. Դ 15:

3 Հմմտ. Եբր. Ա 3-4:

4 Հմմտ. Սաղմ. ՃԳ 4, Եբր. Ա 7:

5 Ոմանք թարգմանում են «Որդուն»:

6 Սաղմ. Բ 7-8, հմմտ. Եբր. Ա 5:

7 Սաղմ. ՃԹ 1, Եբր. Ա 13

8 Այսինքն՝ պրովինցիաների կառավարիչները, որոնք նաեւ ռազմական իշխանութիւն ունէին:

առանց փոքրերի, ո՛չ էլ փոքրերն առանց մեծերի գոյութիւն ունենալ չեն կարող: Նրանք բոլորը կարծես թէ միասին են կապուած, եւ դա օգտակար է: Վերցնենք մեր մարմինը[1]. գլուխն առանց ոտքերի ոչինչ է, նոյնպէս եւ՝ ոտքերն առանց գլխի, եւ մեր մարմնի փոքրագոյն անդամներն անհրաժեշտ եւ պիտանի են ամբողջ մարմնին: Նրանք բոլորը ներդաշնակ են եւ միակամութեամբ ծառայում են ողջ մարմնի առողջութեանը:

Գլուխ ԼԸ

Արդ, թող մեր ողջ մարմինն առողջ լինի Յիսուս Քրիստոսով, եւ իւրաքանչիւրը թող հնազանդուի իր մերձաւորին ըստ այն աստիճանի, որին նա նշանակուած է Նրա շնորհով[2]: Հզօրը թող հոգայ թոյլին, իսկ թոյլը թող յարգի հզօրին. հարուստը թող տայ աղքատին, իսկ աղքատը թող գոհանայ Աստծուց, որ Նա նրա միջոցով տուեց իրեն՝ իր կարիքը լրացնելու նպատակով: Իմաստունը[3] թող իր իմաստութիւնը դրսեւորի ոչ թէ խօսքերով, այլ բարի գործերով: Խոնարհը թող ինքն իր մասին չվկայի, այլ թոյլ տայ, որ ուրիշներն իր մասին վկայեն[4]: Մարմնով անարատը թող չհպարտանայ[5] ու չպարծենայ՝ գիտենալով, որ ուրիշ Մէկն է, որ իրեն ժուժկալութիւն է շնորհել: Ուստի մտածենք, եղբայրնե՛ր, թէ ինչ նիւթից ենք մենք ծագել եւ ինչպէս ենք աշխարհ եկել, թէ ինչպիսի գերեզմանից ու խաւարից[6] մեր Արարիչն ու Ստեղծիչը մեզ մտցրեց Իր աշխարհը՝ կանխապէս, նախքան մեր ծնունդը պատրաստելով Իր բարեգործութիւնները: Արդ, այս ամէնն ունենալով, մենք ամէն ինչի համար պարտաւոր ենք շնորհակալ լինել Նրան, Ում վայել է փառք յաւիտեան յաւիտենից. ամէն:

---

1 Հմմտ. Ա Կոր. ԺԲ 12 եւ այլն:

2 Ոմանք թարգմանում են «ըստ իր վրայ հեղուած յատուկ պարգեւի»:

3 Այս խօսքերը մէջբերւում են Կղեմէս Աղեքսանդրացու կողմից (Ցաճախապատում, Դ 17):

4 Հմմտ. Առակ. ԻԷ 2:

5 Այստեղ ձեռագիր բնագրում մէկ բառ պակասում է: Ոմանք այն լրացնում են «թող լոի» արտայայտութեամբ:

6 Հմմտ. Սաղմ. ՃԼԷ 15:

Գլուխ ԼԹ

Անմիտները, անխոհեմները, յիմարներն ու տգէտները ծաղրում ու ծանակում են մեզ՝ ցանկանալով իրենք իրենց բարձրացնել իրենց մտքում: Սակայն ի՞նչ կարող է անել մահկանացուն, կամ ի՞նչ զօրութիւն կայ հողածնի մէջ: Քանզի գրուած է. «Իմ աչքերի առջեւ կերպարանք չկար, այլ ես մեղմ սօսափիւն ու ձայն էի լսում: Արդ, մի՞թէ մահկանացուն կարող է մաքուր լինել Տիրոջ առջեւ կամ անարատ՝ իր գործերում, եթէ Նա Իր ծառաներին չի վստահում եւ Իր հրեշտակներին թերութիւններ է վերագրում[1]: Երկինքն անարատ չէ Նրա առջեւ[2], առաւել եւս՝ կաւէ բնակարաններում ապրողները, որից եւ ինքներս ենք՝ միեւնոյն կաւից: Ցեցն է կերել նրանց, եւ առաւօտից մինչեւ երեկոյ նրանք արդէն չկան. քանի որ չէին կարող օգնել իրենք իրենց, կործանուեցին: Փչեց նրանց վրայ, եւ ցամաքեցին, քանզի իմաստութիւն չունէին[3]: Արդ, կանչի՛ր. որեւէ մէկը կպատասխանի՞ քեզ արդեօք, կամ կտեսնե՞ս սուրբ հրեշտակներից մէկին: Ցիրաւի, անզգամին բարկութիւնն է սպանում, եւ մոլորեալին նախանձն է մեռցնում: Ես տեսել եմ արմատ գցած անզգամների, սակայն անմիջապէս բնաջնջուել են նրանց յարկերը: Նրանց որդիները հեռու կլինեն փրկութիւնից եւ կարհամարհուեն[4] աւելի նուազների դռների առջեւ, եւ ոչ ոք չի լինելու, որ փրկի նրանց: Քանզի այն, ինչ նրանք ժողովեցին, արդարներն են ուտելու, իսկ իրենք չարիքից չեն ազատուելու»[5]:

Գլուխ Խ

Այս ամենի մէջ համոզուած լինելով եւ թափանցելով աստուածային գիտութեան խորքերը՝ մենք պարտաւոր ենք կարգ ու կանոնով կատարել այն ամէնը, ինչ Տէրը հրամայել է կատարել սահմանուած ժամանակներում[6]: Նա հրամայել է զոհաբերութիւններն ու պատա-

---

1 Հմմտ. Յոբ Դ 16-18:

2 Հմմտ. Յոբ ԺԵ 15:

3 Հմմտ. Յոբ Դ 19-21:

4 Ոմանք թարգմանում են «թող կործանուեն»:

5 Հմմտ. Յոբ Ե 1-5:

6 Ոմանք «սահմանուած ժամանակներում» արտայայտութիւնը կապում են յաջորդ նախադասութեան հետ:

բագները մատուցել ոչ թէ պատահականօրէն ու առանց կարգի, այլ յատուկ ժամանակներում եւ որոշեալ ժամերի: Նաեւ՝ թէ որտեղ եւ ում կողմից պէտք է այն կատարուի, Ինքն է սահմանել Իր գերագոյն կամքով, որպէսզի ամէն ինչ տեղի ունենայ սրբութեամբ եւ ընդունելի ու հաճելի լինի Իր կամքին: Ուրեմն Նրա համար հաճելի ու երանելի են նրանք, ովքեր սահմանուած ժամանակներում են մատուցում իրենց զոհերը, քանզի, հետեւելով Տիրոջ պատուիրաններին, նրանք չեն մեղանչում: Քանզի քահանայապետին առանձին ծառայութիւն է տրուած, քահանաների համար սահմանուած է իրենց գործը[1]*, եւ ղեւտացիների վրայ են դրուած իրենց պարտականութիւնները, աշխարհական մարդը կապուած է ժողովրդի համար սահմանուած որոշումներով:*

Գլուխ ԽԱ

Մեզանից իւրաքանչիւրը, եղբայրնե՛ր, թող գոհութիւն յայտնի Աստծուն իր սեփական դիրքի համար՝ պահելով բարի խիղճը եւ երկիւղածութեամբ չխախտելով իր ծառայութեան որոշակի կանոնները: Եղբայրնե՛ր, ոչ ամէն տեղ են մատուցւում ամէնօրեայ պատարագներ կամ խաղաղութեան պատարագներ կամ [պատարագներ] մեղքերի թողութեան կամ զանցանքների համար, այլ միայն՝ Երուսաղէմում. եւ այնտեղ էլ ամէնուր չի կատարւում զոհաբերութիւնը, այլ տաճարի առջեւ՝ զոհասեղանին, այն բանից յետոյ, երբ զոհը քննւում է քահանայապետի եւ վերոյիշեալ սպասաւորների կողմից: Ուստի նրանք, ովքեր որեւէ բան են կատարում ի հեճուկս Նրա կամքի, ենթակայ են մահապատժի: Տեսնում էք[2]*, եղբայրնե՛ր, որքան մեծ գիտելիքի ենք արժանացել, այնքան մեծ վտանգի տակ ենք:*

Գլուխ ԽԲ

Առաքեալներն ուղարկուեցին աւետարանելու Տէր Յիսուս Քրիստոսի կողմից, իսկ Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ կողմից: Այսպէս Քրիստոս ուղարկուած էր Աստծուց, իսկ առաքեալները՝ Քրիստոսից: Այս երկուսն էլ կատարուեցին Աստուծոյ կամքի սահմանած կարգով: Արդ, հրաման ստանալով, առաքեալները, բացարձակապէս համոզուած մեր Տէր Յիսուս Քրիստոսի յարութեան մէջ եւ հաւատացած Աստուծոյ խօսքին, Սուրբ Հոգով հաստատուած, դուրս եկան աւետելու Աստուծոյ գալիք արքայութիւնը: Ուստի, քարոզելով տարբեր երկրներում ու քաղաքներում, նրանք առաջին հաւատացեալների միջից հոգեւոր փորձառութեամբ կարգեցին եպիսկոպոսներ[1] *ու սարկաւագներ ապագայ հաւատացեալների համար: Եւ սա նոր կարգ չէ, քանզի շատ ժամանակներ առաջ գրուել է եպիսկոպոսների եւ սարկաւագների մասին: Քանզի Գրքում ինչ-որ տեղ այսպէս է ասուած. «Կնշանակեմ նրանց եպիսկոպոսներին արդարութեամբ եւ սարկաւագներին՝ հաւատով»*[2]*:*

Գլուխ ԽԳ

Եւ ի՞նչ կայ զարմանալու, եթէ նրանք, որոնց Քրիստոսով այս գործն է յանձնաբարուել Աստծուց, կարգեցին վերոյիշեալներին: Նաեւ երանելի Մովսէսը՝ «Հաւատարիմ ծառան Աստուծոյ բովանդակ տան մէջ»[3]*, ողջ իրեն կարգադրուածը նշեց Սուրբ Գրքերի մէջ: Նրան հետեւեցին նաեւ միւս մարգարէները՝ իրենց վկայութիւններով հաստատելով նրա օրինադրութիւնները: Քանզի երբ վէճ ծագեց քահանայութեան շուրջ, եւ Իսրայէլի ցեղերը տարաձայնութիւն ունէին այն մասին, թէ իրենցից ով պէտք է զարդարուէր այդ փառաւոր անուամբ*[4]*, Մովսէսը ցեղերի տասներկու իշխաններին հրամայեց իր մօտ բերել գաւազաններ, որոնց վրայ գրուած էր իւրաքանչիւր ցեղի*

1 Բառացի՝ «տեղը»: Այս բառն օգտագործում է կոչումի կամ աստիճանի իմաստով՝ յատուկ ծառայութեան հետ կապուած: Տե՛ս գլ. ԽԱ. Իգնատիոս Անտիոքացի, Առ Պողիկարպոս, Ա. Առ Զմիւռնացիս, Զ. Պողիկարպոսի Առ Փիլիպեցիս, ԺԱ:

2 Այս գլուխը յաճախ մէջբերուել է՝ հաստատելու համար նամակի գրութեան աւելի վաղ թուականը: Սակայն Երուսաղէմի մասին ակնարկութիւնը կարող է սոսկ իդեալական ներկայի իմաստ ունենալ:

1 Այս անուան տակ Կղեմէսը նկատի ունի նաեւ երէցներին, ովքեր նշանակւում էին եպիսկոպոսների կողմից քահանայագործութեան եւ հովտութեան նպատակով: Աւելի յետոյ Կղեմէսը խօսում է նոյն հովիւների մասին՝ նրանց անուանելով երէցներ:

2 Տե՛ս Ես. Կ 17: Այստեղ, սակայն, Կղեմէսը փոխում է Եօթանասնից տեքստը իր մտքին համապատասխան: Եօթանասնիցի բնագիրն է. «Տաց զիշխանս քո ի խաղաղութիւն եւ զայցելուս քո՝ յարդարութիւն»:

3 Հմմտ. Թիւ. ԺԲ 7, Եբր. Գ 2, 5:

4 Շարադրելով այս դէպքը Թուոց ԺԷ գլխից՝ Կղեմէսն աւելացնում է որոշ մանրամասնութիւններ, որոնք չկան Սուրբ Գրքում, սակայն հաւանաբար վերցուած են հրէական աւանդութիւնից:

*անունը, եւ, վերցնելով դրանք, կապեց իրար, կնքեց ցեղերի իշխաններ-
րի մատանիներով ու դրեց վկայութեան խորանում՝ Տիրոջ սեղանին:
Եւ, փակելով խորանը, նմանապէս կնքեց բոլոր փականքները, ինչպէս
եւ գաւազանները եւ ասաց նրանց. «Եղբայրնե՛ր, որ ցեղի գաւազանը
որ ծաղկի, Աստուած նրան է ընտրել քահանայութեան եւ Իրեն սպա-
սաւորութեան»: Յաջորդ առաւօտեան նա հաւաքեց ողջ Իսրայէլին՝
վեց հարիւր հազար մարդու, կնիքները ցոյց տուեց ցեղերի իշխաննե-
րին եւ բացեց վկայութեան խորանն ու դուրս բերեց գաւազանները:
Եւ ահա Ահարոնի գաւազանը ոչ միայն ծաղկել, այլեւ պտղակալել
էր[1]: Ի՞նչ էք կարծում, սիրելինե՛ր, մի՞թէ Մովսէսը նախապէս չգի-
տէր, որ այդպէս է լինելու: Անշուշտ գիտէր, սակայն այդպէս
վարուեց, որպէսզի անկարգութիւն չծագի Իսրայէլի մէջ, եւ որպէսզի
փառաւորուի ճշմարիտ ու միակ Աստուծոյ[2] անունը: Նրան փա՛ռք յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:*

Գլուխ ԽԴ

*Մեր առաքեալները մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով նոյնպէս
գիտէին, որ տարաձայնութիւն է ծագելու եպիսկոպոսական կոչման
շուրջ: Նոյն այդ պատճառով նրանք, կատարեալ կանխատեսում ունե-
նալով, նշանակեցին վերոյիշեալներին[3] եւ ապա կարգ սահմանեցին[4],
որ երբ նրանք ննջեն, ուրիշ փորձուած այրեր ժառանգեն նրանց ծա-
ռայութիւնը: Ուստի մենք անարդար ենք համարում Աստուծոյ ծառա-
յութիւնից զրկելը նրանց, ովքեր նշանակուած են առաքեալների կող-*

1 Տե՛ս Թիւ. ԺԷ:

2 Հմմտ. Յովհ. ԺԷ 3:

3 Այսինքն՝ եպիսկոպոսներին (լայն առումով) եւ սարկաւագներին: Յատկանշական է, որ Կղեմէսը խօսում է առաքեալների մասին ընդհանրապէս եւ նրանց անուանում է «մեր»՝ ոչ մի յատուկ հեղինակութիւն կամ իշխանութիւն չհաղորդելով ս. Պետրոսին:

4 Այս հատուածի իմաստը բաւական տարաձայնութիւնների առիթ է եղել: Ոմանք թարգմանում են «թողեցին ուրիշ վստահելի անձերի ցանկը»: Ոմանք χεπινομ անտվոր բառը թարգմանում են «կտակարանեան ցուցում», մինչ ուրիշներ այդ բառի տակ հասկանում են «օրէնքի յաւելուած», այսինքն՝ առաքեալները հետակայ որոշում ընդունեցին, որպէսզի իրենց նշանակած եպիսկոպոսների եւ սարկաւագների մահից յետոյ նրանց պաշտօնը յանձնուի նման արժանաւորների: Հետեւաբար յաջորդ նախադասութեան մէջ «երբ նրանք ննջեն»-ը վերաբերում է ոչ թէ առաքեալներին, այլ նրանց յաջորդներին: Ըստ այդմ էլ՝ շատերն այն թարգմանում են «երբ սրանք ննջեն»:

*մից կամ էլ՝ իրենցից յետոյ ուրիշ մեծայարգ այրերի կողմից[1] ողջ
Եկեղեցու համաձայնութեամբ[2] եւ անբասիր ծառայել են Քրիստոսի
հօտին խոնարհութեամբ, համեստութեամբ ու ազնւութեամբ, եւ որը
երկար ժամանակ վկայութեամբ հաստատուել է բոլորի կողմից: Քան-
զի ոչ փոքր մեղք կլինի մեզ համար, եթէ ընծաները[3] անբասիր ու
սրբութեամբ մատուցողներին զրկենք եպիսկոպոսութիւնից: Երանելի
են մեզ նախորդող երէցները, ովքեր մարմնից բաժանուեցին բազմար-
դիւն ու կատարեալ կեանքից յետոյ. նրանք այժմ երկիւղ չունեն, թէ
որեւէ մէկը կարող է զրկել նրանց իրենց զբաղեցրած տեղից: Քանզի
մենք տեսնում ենք, որ դուք գովելի կեանք վարողներից ոմանց զրկել
էք իրենց կողմից կատարուող անբասիր ծառայութիւնից:*

Գլուխ ԽԵ

*Դուք, եղբայրնե՛ր, կուռարար ու նախանձախնդիր էք փրկութեան
վերաբերող հարցերում: Խորամո՛ւխ եղէք Սուրբ Գրքերի մէջ՝ Սուրբ
Հոգու այդ ճշմարիտ խօսքերին: Իմացէ՛ք, որ այնտեղ անարդար ու
կեղծ ոչինչ չի գրուած: Այնտեղ դուք չէք գտնի, որ արդարները հե-
ռացուած լինեն սուրբ մարդկանց կողմից: Արդարները հալածուել են,
սակայն՝ անօրէններից, զնդան են նետուել, սակայն՝ սրբապիղծներից,
քարկոծուել են չարագործներից, սպանուել են պիղծ ու անարդար նա-
խանձով լցուածներից: Այս բոլոր տառապանքները նրանք փառքով
կրեցին:*

Քանզի ի՞նչ ասենք, եղբայրնե՛ր: Մի՞թէ Դանիէլը աստուածա-

1 Օրինակ՝ Տիտոսի, Տիմոթէոսի եւ առաքեալների ուրիշ գործակիցների կողմից, որոնց յանձնարարուած էր նշանակել եպիսկոպոսներին, երէցներին ու սարկաւագներին:

2 Ժողովրդի մասնակցութիւնը եպիսկոպոսներ կամ այլ քահանայական սպասաւորներ նշանակելու մէջ, որը վերաբերում էր առաքեալներին եւ նրանց յաջորդներին, այստեղ արտայայտում է համաձայնութեամբ: Այս մասին տե՛ս նաեւ Կիպրիանոս, Թուղթ ԾԵ, ԿԸ. Որոգինէս, Մեկնութիւն Ղեւտացիս: Կիպրիանոսն ասում է՝ քահանան թող ընտրուի ի ներկայութիւն ժողովրդեան եւ ամենքի աչքի առաջ, եւ արժանանան թող ընտրուի ի ներկայութիւն ժողովրդեան եւ ամենքի աչքի առաջ, եւ արժանանան ու կարողը պէտք է հաւանութեան արժանանայ ընդհանրական կարծիքով ու վկայութեամբ, որպէսզի ժողովրդի ներկայութեամբ բացայայտ լինեն կա՛մ վատերի յանցանքները, կա՛մ բարեգործների ծառայութիւնները (Թուղթ ԿԸ):

3 Այսինքն՝ հաղորդութիւնը: Տե՛ս Իգնատիոս, Առ Զմիւռնացիս, Է. Առաքելական սահմանադրութիւններ, Ը 12:

վախների կողմից նետուեց առիւծների գուբը[1]: Մի՞թէ Անանիան, Ազարիան ու Միսայէլը Բարձրեալի մեծասքանչ ու փառաւոր կրօնը դաւանողների կողմից նետուեցին կրակի հնոցի մէջ[2]: Քա՛ւ լիցի: Ուրեմն ովքե՞ր են եղել այդ անողները: Զազրելի, ամէն տեսակ չարութեամբ լցուած մարդիկ հասան այնպիսի մոլեգնութեան, որ Աստծուն սուրբ եւ անբիծ նուիրուածութեամբ ծառայողներին ենթարկեցին տանջանքների՝ չիմանալով, որ Բարձրեալը պաշտպանն ու հովանաւորն է նրանց, ովքեր մաքուր խղճով պաշտում են Նրա ամենակատար անունը: Նրան փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն: Իսկ նրանք, համբերութեամբ դիմանալով այդ բոլոր տանջանքներին, փառք ու պատիւ ժառանգեցին, բարձրացուեցին եւ արձանագրուեցին Աստուծոյ մատեանում յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԽԶ

Ուստի, եղբայրնե՛ր, մենք նոյնպէս պէտք է նմանուենք նման տիպարներին, քանզի գրուած է. «Հաղորդակի՛ց եղէք սուրբերին, քանզի նրանց հաղորդուողները կսրբուեն»[3]: Եւ դարձեալ՝ մէկ այլ տեղում ասուած է. «Անբիծի հետ անբիծ կլինես, ընտրեալի հետ ընտրեալ կլինես, իսկ անառակի հետ անառակ կդառնաս»[4]: Ուստի միանանք անմեղներին եւ արդարներին, քանզի նրանք են Աստուծոյ ընտրեալները: Ինչո՞ւ են մեր մէջ խռովութիւնը, ղայրոյթը, տարաձայնութիւնները, հերձուածները, պատերազմը[5]: Մի՞թէ մենք Մի Աստուած եւ Մի Քրիստոս չունենք, եւ Մի Հոգու շնորհ չի հեղուել մեզ վրայ, եւ մէկ կոչում չունենք ի Քրիստոս[6]: Ինչո՞ւ ենք մասնատում ու բաժանում Քրիստոսի անդամները եւ ապստամբում Իր իսկ Մարմնի դէմ եւ այն աստիճան անմտութեան հասնում, որ մոռանում ենք, թէ մէկս միւսի անդամներն ենք[7]: Յիշեցէ՛ք մեր Տէր Յիսուսի խօսքերը, քանզի Նա ասաց. «Վա՛յ այն մարդուն, [որի միջոցով կգայ դայթակղութիւնը].

1 Հմմտ. Դան. Զ 16:
2 Հմմտ. Դան. Գ 20:
3 Այս խօսքերը չկան Աստուածաշնչում: Տե՛ս Յաճախապատում, Ե 8:
4 Տե՛ս Սաղմ. ԺԹ 26:
5 Հմմտ. Յակ. Դ 1:
6 Հմմտ. Եփես. Դ 4-6:
7 Հմմտ. Հռոմ. ԺԲ 5:

նրա համար աւելի լաւ կլինէր չծնուել, քան թէ գայթակղել Իմ ընտրեալներից մէկին: Աւելի լաւ կլինէր նրա համար, եթէ երկանաքար կապէր իրեն ու ծովը նետուէր, քան գայթակղէր Իմ ընտրեալներից մէկին»[1]: Ձեր հերձուածը շատերին է մոլորեցրել, շատերին նետել յուսահատութեան մէջ, շատերին երկմտանք ներշնչել, իսկ մեզ բոլորիս՝ տրտմեցրել, եւ ձեր խռովութիւնը դեռ շարունակւում է:

Գլուխ ԽԷ

Վերցրէք երանելի Պօղոս առաքեալի թուղթը[2]: Ինչի՞ մասին էր նա առաջին հերթին ձեզ գրել աւետարանման սկզբում[3]: Նա, Հոգուց ներշնչուած, ճշմարտապէս գրեց ձեզ ինչպէս իր, այնպէս էլ Կեփասի եւ Ապողոսի մասին[4], որովհետեւ նաեւ այն ժամանակ ձեր մէջ վէճեր էին ծագել: Սակայն այդ վէճերը ձեզ աւելի նուազ մեղք էին բերում, քանզի դուք խոնարհուեցիք հեղինակաւոր առաքեալների եւ իրենց կողմից փորձուած մարդու կողմը: Իսկ այժմ մտածեցէ՛ք, թէ ինչպիսի մարդիկ են մոլորեցրել ձեզ եւ նուազեցրել ձեր յայտնի եղբայրասիրութեան գեղեցկութիւնը: Ամօթալի, սիրելինե՛ր, չափազանց ամօթալի եւ քրիստոնէական կենցաղին ոչ արժանի վարմունքի մասին ենք լսում. կորնթացիների ամրագոյն ու հին Եկեղեցին մէկ կամ երկու մարդու պատճառով խռովութիւն է բարձրացրել իր երէցների դէմ: Եւ այս լուրը հասել է ոչ միայն մեզ, այլեւ մեզ մօտ եղած այլադաւաններին, այնպէս որ ձեր անմտութեան հետեւանքով Տիրոջ անունը հայհոյութեան է ենթարկւում[5], եւ ձեզ համար եւս վտանգ էք պատրաստում:

Գլուխ ԽԸ

Արդ, շտապենք վերջ տալ սրան եւ ընկնենք Տիրոջ ոտքերի առջեւ ու արտասուելով աղաչենք Նրան, որպէսզի Նա ողորմած լինի ու հաշտուի մեզ հետ եւ վերականգնի մեր մէջ եղբայրասիրութեան վրայ

1 Այստեղ Կղեմէսը Աւետարանների մի քանի մէջբերումներ միացրել է միմեանց՝ Մատթ. ԺԸ 6, ԻԶ 24, Մարկ. Թ 42, Ղուկ. ԺԷ 2:
2 Կորնթացիներին ուղղուած Ա նամակը:
3 Հմմտ. Փիլ. Դ 15:
4 Տե՛ս Ա Կոր. Գ 22, Դ 6:
5 Հմմտ. Հռոմ. Բ 24, Ա Տիմ. Զ 1. Իգնատիոս, Ան Թրալլացիս, Ը:

հիմնուած նախկին գեղեցիկ ու մաքուր վարքը: Քանզի դա է արդարութեան դուռը, որ բացուած է դէպի կեանք, ինչպէս որ գրուած է. «Բացէ՛ք ինձ արդարութեան դռները. ես կմտնեմ այնտեղ եւ կփառաբանեմ Տիրոջը: Սա Տիրոջ դուռն է, եւ արդարներն են մտնելու այնտեղ»[1]: Արդ, բազում բացուած դռներից արդարութեան դուռը Քրիստոսի դուռն է, եւ երանելի են բոլոր նրանք, ովքեր մտնում են այդ դռնով եւ իրենց ընթացքը շարունակում սրբութեամբ ու արդարութեամբ՝ ամէն ինչ անելով առանց հակառակութեան: Եթէ մէկն ամուր է հաւատի մէջ կամ հզօր՝ իր իմացութեամբ կամ իմաստուն՝ խօսքերի քննութեան մէջ կամ մաքուր՝ իր արարքներում, առաւել եւս պարտաւոր է աւելի խոնարհամիտ լինել, քան թէ աւելի մեծ երեւալ, եւ պարտաւոր է փնտրել ոչ թէ իր, այլ ընդհանուրի շահը:

Գլուխ ԽԹ

Ով ի Քրիստոս սէր ունի, նա պարտաւոր է կատարել Քրիստոսի պատուիրանները: Ո՞վ կարող է բացատրել Աստուծոյ սիրոյ միութիւնը: Ո՞վ կարող է, ինչպէս վայել է, արտայայտել նրա գեղեցկութեան վեհութիւնը: Անճառելի է այն բարձունքը, որի վրայ է բարձրացնում սէրը: Սէրը մեզ միացնում է Աստուծոյ հետ, սէրը ծածկում է մեղքերի բազմութիւնը[2], սէրն ամէն բանի դիմանում է, ամէն ինչի համբերում[3]: Սիրոյ մէջ ստոր ոչինչ չկայ, ոչինչ արհամարհական, սէրը թոյլ չի տալիս բաժանում, սէրը չի ըմբոստանում, սէրն ամէն ինչ կատարում է համերաշխութեամբ: Աստուծոյ բոլոր ընտրեալները սիրոյ շնորհիւ հասան կատարելութեան. առանց սիրոյ Աստծուն հաճելի ոչինչ չկայ: Սիրով մեզ ընդունեց Տէրը. յանուն մեր հանդէպ ունեցած սիրոյ մեր Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ կամքով Իր արիւնը տուեց մեզ համար եւ մարմինը՝ մեր մարմնի համար եւ հոգին՝ մեր հոգու համար[4]:

Գլուխ Ծ

Տեսնո՞ւմ էք, սիրելինե՛ր, թէ որքան վեհ ու հրաշալի է սէրը, եւ

1 Սաղմ. ՃԺԷ 19-20

2 Հմմտ. Յակ. Ե 20, Ա Պետ. Դ 8:

3 Հմմտ. Ա Կոր. ԺԳ 4:

4 Հմմտ. Իրենէոս, Ե 1, Թուղթ առ Դիոգնետոս, Թ:

անարտայայտելի՝ նրա կատարելութիւնը: Ո՞վ կարող է այն ունենալ, եթէ Աստուած նրան չարժանացնի: Ուստի խնդրենք Նրան եւ աղերսենք Նրա գթութիւնը, որպէսզի ապրենք սիրոյ մէջ անբծօրէն՝ առանց մարդկային հակումների: Մարդկային բոլոր սերունդները՝ Ադամից սկսած մինչեւ օրս, անցան-գնացին, սակայն Աստուծոյ շնորհով սիրոյ մէջ կատարեալները գտնւում են բարեպաշտների վայրում: Նրանք կյայտնուեն Քրիստոսի արքայութեան գալստեամբ, քանզի գրուած է. «Որոշ ժամանակով մտէ՛ք ձեր անձաւները, մինչեւ որ անցնի Իմ բարկութիւնն ու ցասումը, եւ կյիշեմ բարի օրուայ մասին եւ ձեզ յարութիւն կտամ ձեր գերեզմաններից»[1]: Երանի՜ մեզ, սիրելինե՛ր, եթէ Տիրոջ պատուիրանները կատարենք սիրոյ միաբանութեամբ, որպէսզի սիրոյ միջոցով թողութիւն լինի մեր մեղքերին, քանզի գրուած է. «Երանի՜ նրանց, ում անօրէնութիւնները ներուեցին, եւ մեղքերը ծածկուեցին: Երանելի է այն մարդը, ում Տէրը մեղքեր չի վերագրում, եւ որի բերանում նենգութիւն չկայ»[2]: Այս երանութիւնը վերաբերում է նրանց, ովքեր Աստուծոյ ընտրեալներն են դարձել մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով: Նրան փա՜ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԾԱ

Արդ, հակառակորդների ինչ-որ զրպարտութիւնների պատճառով մեր ունեցած բոլոր մեղանչումների համար մենք պարտաւոր ենք նեղում խնդրել: Եւ նրանք եւս, ովքեր երկպառակութեան ու խռովութեան առաջնորդներ եղան, պէտք է նկատի ունենան ընդհանուր յոյսը: Քանզի երկիւղով ու սիրով կենցաղավարողները գերադասում են, որ իրենք ընկնեն տառապանքների մէջ, քան թէ իրենց մերձաւորները. գերադասում են դատապարտութիւնն ընդունել իրենց, քան թէ մեզ աւանդուած բարի եւ արդար համերաշխութեան վրայ: Քանզի մարդու համար աւելի լաւ է խոստովանել իր մեղքերը, քան թէ խստացնել իր սիրտը, ինչպէս որ խստացաւ Աստուծոյ ծառայ Մովսէսի դէմ ըմբոստացածների սիրտը. նրանց դատաստանը տեղի ունեցաւ

1 Տե՛ս Ես. ԻԶ 20, հմմտ. Եզեկ. ԼԷ 12-13:

2 Սաղմ. ԼԱ 1-2

ի տես ամենքի, քանզի նրանք ողջ-ողջ իջան դժոխք[1], եւ «մահը նրանց հովիւն է»[2]: Փարաւոնը, նրա զօրքը, եգիպտական բոլոր իշխանները, նրանց կառքերն ու հեծեալները ուրիշ պատճառով չընկղմուեցին Կարմիր ծովում ու կորան[3], այլ՝ որովհետեւ խստացան նրանց անխոհեմ սրտերը այնքան նշաններից ու հրաշքներից յետոյ, որոնք Եգիպտոսում կատարել էր Աստուծոյ ծառայ Մովսէսը:

Գլուխ ԾԲ

Եղբայրնե՛ր, ամենակալ Տէրը ոչ մի բանի կարիք չունի, ոչ մէկից ոչինչ չի պահանջում, բացի Իրեն խոստովանելուց: Քանզի ասել է ընտրեալ Դաւիթը. «Կխոստովանեմ Տիրոջը, եւ այդ Նրան առաւել հաճելի կլինի, քան պարարտ զուարակը, որն ունի եղջիւրներ ու կճղակներ: Թող տեսնեն աղքատները եւ ուրախանան»[4]: Եւ դարձեալ ասում է. «Աստծուն գոհութեան պատարա՛գ մատուցիր եւ Բարձրեալին վճարի՛ր քո ուխտերը: Կանչի՛ր Ինձ քո նեղութեան օրերին, եւ կփրկեմ քեզ, եւ դու կփառաւորես Ինձ»[5]: Քանզի «Աստծուն ընդունելի պատարագը փշրուած հոգին է»[6]:

Գլուխ ԾԳ

Դուք գիտէք, սիրելինե՛ր, եւ լաւ գիտէք Սուրբ Գիրքը եւ խորամուխ էք եղել Աստուծոյ խօսքերի մէջ: Արդ, ձեզ յիշեցնելու համար ենք այս ամէնը գրում: Երբ Մովսէսը բարձրացաւ լեռը եւ քառասուն օր ու քառասուն գիշեր անցկացրեց ծոմապահութեան ու խոնարհութեան մէջ, Աստուած նրան ասաց. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս, շտապ իջի՛ր այստեղից, քանզի անօրինացաւ քո ժողովուրդը, որին դու հանեցիր Եգիպտոսից: Նրանք շատ շուտ խոտորուեցին այն ուղուց, որ ես նրանց պատուիրեցի, եւ իրենց համար կուռքեր կերտեցին»[7]: Եւ Տէրը

1 Տե՛ս Թիւ. ԺԶ:
2 Հմմտ. Սաղմ. ԽԸ 15:
3 Տե՛ս Ել. ԺԴ:
4 Տե՛ս Սաղմ. ԿԹ 32:
5 Տե՛ս Սաղմ. ԽԹ 14-15:
6 Տե՛ս Սաղմ. Ծ 19:
7 Հմմտ. Ել. ԼԲ 7-8, Բ Օր. Թ 12:

նրան ասաց. «Ես քեզ հետ խօսեցի մէկ եւ երկու անգամ՝ ասելով՝ Ես տեսայ այս ժողովրդին, եւ ահա նա խստապարանոց է. թո՛յլ տուր Ինձ ոչնչացնել նրանց, եւ կընջնջեմ նրանց անունը երկնքի տակից, իսկ քեզ սրանից առաւել մեծ ու զարմանահրաշ ազգ կդարձնեմ»[1]: Եւ Մովսէսն ասաց. «Ո՛չ, Տէ՛ր, ների՛ր այս ժողովրդի մեղքերը կամ ինձ նո՛յնպէս ջնջիր կենաց գրքից»[2]: Ո՛վ հզօր սէր... Ո՛վ անգերազանցելի կատարելութիւն... Ծառան համարձակօրէն խօսում է Տիրոջ հետ, թողութիւն է խնդրում ժողովրդի մեղքերի համար եւ կամ պահանջում է իրեն նոյնպէս ընջնջել նրանց հետ:

Գլուխ ԾԴ

Արդ, ձեզանից ո՞վ է ազնուական, ո՞վ է գթասիրտ, ո՞վ է սիրով առլեցուն: Թող նա ասի՝ եթէ իմ պատճառով է խռովութիւնը, վէճն ու հերձուածը, ես կհեռանամ ու կգնամ այնտեղ, ուր դուք կամենաք, եւ կկատարեմ ժողովրդի հրամանները[3], միայն թէ Քրիստոսի հօտը խաղաղութեան մէջ լինի՝ կարգուած երէցների հետ: Նա, ով այս կերպ կվարուի, մեծ փառք կունենայ ի Քրիստոս, եւ ամէն տեղ կընդունեն նրան, քանզի «Տիրոջն է երկիրը եւ նրա լիութիւնը»[4]: Այդպէս արել են ու կանեն բոլոր նրանք, ովքեր աստուածային գովելի կեանք են վարում:

Գլուխ ԾԵ

Օրինակներ բերենք նաեւ հեթանոսներից: Շատ թագաւորներ ու իշխաններ մահտարաժամի օրերին պատգամախօսի ներշնչումով իրենց անձը մահուան են մատնել, որպէսզի իրենց արեամբ փրկեն քաղաքացիներին: Շատերը հեռացել են իրենց քաղաքներից, որպէսզի վերջ տրուի խռովութեանը: Եւ նաեւ մեզանից շատերին գիտենք, ովքեր իրենց յանձնել են կապանքների՝ ուրիշներին փրկելու համար:

1 Հմմտ. Ել. ԼԲ 9-10:
2 Հմմտ. Ել. ԼԲ 32:
3 Կղեմէսն այս խօսքերն ուղղում է կորնթացի երէցներին: Այս խօսքերը, սակայն, երբեմն մէջբերուել են՝ հաստատելու համար այն ենթադրութիւնը, ըստ որի՝ Կղեմէսը խոնարհաբար հրաժարուել է եպիսկոպոսութիւնից յօգուտ Լինոսի եւ Կլետոսի:
4 Հմմտ. Սաղմ. ԻԳ 1, Ա Կոր. Ժ 26:

Շատերն իրենց անձը տուել են ստրկութեան եւ, իրենց գինը ստանալով[1], կերակրել են այլոց: Շատ կանայք, զօրացած Աստուծոյ շնորհով, բազում քաջագործութիւններ են կատարել: Երանելի Յուդիթը քաղաքի պաշարման ժամանակ աւագներից թոյլտուութիւն խնդրեց՝ գնալու այլազգիների բանակատեղին: Այսպիսով, նա գնաց՝ իրեն վտանգի ենթարկելով իր հայրենիքի եւ պաշարուած ժողովրդի հանդէպ ունեցած սիրուց, եւ Տէրը Յողոփեռնէսին մատնեց կնոջ ձեռքը[2]: Իր անձը ոչ պակաս վտանգի ենթարկեց նաեւ հաւատի մէջ կատարեալ Եսթերը՝ սպառնացող կործանումից Իսրայէլի տասներկու ցեղերին փրկելու համար: Պահեցողութեամբ ու խոնարհութեամբ նա աղաչեց ամենատես Տիրոջը՝ յաւիտեանների Աստուծուն, Ով, տեսնելով նրա հոգու խոնարհութիւնը, ազատեց ժողովրդին, յանուն որի նա իրեն վտանգի էր ենթարկել[3]:

Գլուխ ԾԶ

Արդ, եւ մենք աղօթենք նրանց համար, ովքեր գտնւում են մեղքի մէջ, որպէսզի նրանց հեզութիւն եւ խոնարհութիւն շնորհուի, որպէսզի նրանք հնազանդուեն ոչ թէ մեզ, այլ Աստուծոյ կամքին: Քանզի այդպիսով գթութեամբ առատ, արգասաւոր ու կատարեալ կլինի նրանց յիշատակը Աստուծոյ եւ սուրբերի առջեւ[4]: Ընդունենք յանդիմանութիւնը, որի համար ոչ ոք իրաւունք չունի դժգոհելու, սիրելինե՛ր: Միմեանց տուած փոխադարձ յորդորները լաւ են եւ միանգամայն օգտակար, քանզի դրանք մեզ միացնում են Աստուծոյ կամքին: Քանզի այսպէս է ասում սուրբ խօսքը. «Խրատելով խրատեց ինձ Տէրը, սակայն մահուան չմատնեց[1]: Ում որ սիրում է Տէրը, նրան յանդիմանում է. Նա տանջում է ամէն մի որդու, ում ընդունում է[2]: Արդարը թող խրատի ինձ եւ քննի,- ասում է,- սակայն մեղաւորների իւղը թող չօծի իմ գլուխը[3]»: Եւ դարձեալ ասում է. «Երանի՛ այն մարդուն, ում Տէրը խրատեց. եւ Ամենակալի խրատներից երես մի՛ դարձրու, քանզի Նա վիշտ է պատճառում եւ ապա դարձեալ հաստատում, հարուածում է, եւ Նրա ձեռքերը բժշկում են: Վեց անգամ կփրկի քեզ դժուարութիւններից, եւ եօթերորդ անգամ չարիքը քեզ չի դիպչի: Սովի ժամանակ կփրկի քեզ մահուանից, պատերազմի ժամանակ սրի ձեռքից կազատի, լեզուի խարազանից կպաշտպանի քեզ, եւ մի՛ երկնչիր գալիք չարիքներից: Դու կծիծաղես անիրաւների եւ անօրէնների վրայ ու չես վախենայ, քանզի Նա վայրի գազաններին կխաղաղեցնի քո առաջ: Ապա կիմանաս, որ քո տունը խաղաղութիւն է վայելելու, եւ քո վրանում պակասութիւն չի լինելու: Նաեւ կիմանաս, որ բազում է լինելու քո սերունդը, եւ քո որդիները՝ դաշտի խոտաբոյսերի պէս: Եւ գերեզման կիջնես, ինչպէս ժամանակին հնձուած հասուն ցորեն կամ ինչպէս կալում ժամանակին դիզուած խուրձ»[4]: Տեսնում էք, սիրելինե՛ր, որ Տիրոջ կողմից խրատուածներն Իր պաշտպանութեան տակ են, քանզի, իբրեւ բարի Հայր, Նա խրատում է մեզ, որպէսզի մենք Իր սուրբ խրատներով զգանք Իր ողորմածութիւնը:

Գլուխ ԾԷ

Արդ, դուք, որ խռովութեան սկիզբն էք դրել, հնազանդուեցէ՛ք երէցներին[5] եւ ապաշխարութեան խրա՛տ ընդունեցէք՝ խոնարհեցնելով ձեր սրտերի ծնկները: Սովորեցէ՛ք հնազանդուել՝ մի կողմ թողնելով լեզուի սնապարծ ու բարձրամիտ ինքնահաւանութիւնը, որովհետեւ ձեզ համար աւելի լաւ է Քրիստոսի հօտի մէջ փոքր ու յարգուած

1 Հմմտ. Հռոմ. ԺԶ 3-4, Փիլ. Բ 30:

2 Տե՛ս Յուդ. Ը 30-34:

3 Տե՛ս Եսթ. Է-Ը:

4 Այս գեղեցիկ եւ նաեւ դժուար տեղում «սուրբերի առջեւ» արտայայտութիւնը ոմանք վերագրում են Եկեղեցուն, սակայն այդ մեկնաբանութիւնը անհամատեղութիւն է առաջացնում, քանզի Եկեղեցին Կղեմէսի կողմից հրաւիրւում է աղօթական միջնորդութեան (մեղաւորների համար) Աստուծոյ եւ սուրբերի, այսինքն՝ Եկեղեցու առջեւ: Սակայն ուրիշներն աւելի տրամաբանական են համարում այստեղ սուրբերի վկայակոչումը, ովքեր փառաւորուեցին Աստուծոյ կողմից Նրա անուան խիզախ խոստովանութեամբ (տե՛ս գլ. ԽԵ, ԽԶ): Քանի որ սուրբերը դատելու են երկիրը [տե՛ս Ա Կոր. Զ 2, Յայտ. Ի 4], ուստի բնական է, որ քրիստոնեաները դիմեն սուրբերին, որպէսզի նրանք կանխեն կամ թեթեւացնեն մեղքի մէջ ընկած մարդկանց պատիժը:

1 Սաղմ. ՃԺԷ 18

2 Առակ.Գ 12, հմմտ. Եբր. ԺԲ 6:

3 Տե՛ս Սաղմ. ՃԽԱ 5:

4 Տե՛ս Յոբ Ե 17-26:

5 Այստեղ «երէցներ» անուան տակ հասկացւում են ընդհանրապէս Եկեղեցու իշխանաւորները՝ առանց աստիճանի տարբերակման, ինչպէս յաճախ հանդիպում է նաեւ Հերմասի «Հովտում»:

լինել, քան թէ, չափազանց բարձր երեւալով, զրկուել Նրա յոյսից[1]: Քանզի այսպէս է ասում ամենակատարեալ Իմաստութիւնը[2]. «Ահա ես Իմ Հոգու պատգամը կհեղեմ ձեզ վրայ եւ կուսուցանեմ ձեզ Իմ խօսքը: Որովհետեւ ես կանչում էի, եւ դուք չլսեցիք. ես երկարացնում էի խօսքերը, եւ դուք ուշադրութիւն չդարձրիք, այլ մերժեցիք Իմ խորհուրդները եւ չանսացիք Իմ խրատներին: Ուստի եւ Ես կծիծաղեմ ձեր կորստեան վրայ եւ կցնծամ, երբ ձեր կործանումը վրայ հասնի, եւ երբ ձեզ վրայ գայ յանկարծահաս շփոթութիւնը. իսկ կործանումը կայտնուի փոթորկի նման, կամ երբ ձեզ վրայ թափուեն ողբն ու սարսափը: Այն ժամանակ կկանչէք Ինձ, բայց Ես չեմ լսելու ձեզ. չարերն Ինձ փնտրելու են, բայց չեն գտնելու: Քանզի նրանք ատեցին իմաստութիւնը եւ չընդունեցին Տիրոջ երկիւղն ու չկամեցան անսալ Իմ խորհուրդներին, այլ ծաղրում էին Իմ յորդորները: Ուստի եւ նրանք ճաշակելու են իրենց ճանապարհների պտուղները եւ յագենալու են իրենց անպատուութեամբ[3]: Մանուկների հանդէպ կատարած անարդարութիւնների համար նրանք պիտի սպանուեն, եւ նրանց անհոգութիւնը պիտի կործանի իրենց, բայց Ինձ լսողն ապահով կբնակուի, եւ ամէն չարիքի նկատմամբ նա հանգիստ ու անվախ կլինի»[4]:

1 Ոմանք թարգմանում են «Իր ժողովրդի յոյսից», ոմանք էլ գտնում են, որ տեքստն աղաւաղուած է, եւ պէտք է լինի «Իր ժողովրդի փարախից»:

2 Ամենավաղ հեղինակների մօտ այս գիրքը յաճախ այսպէս է կոչւում:

3 Young-ը, որ ուսումնասիրել է ձեռագիրը նախքան նրա հրատարակուելն այժմեան տեսքով, վկայում է, որ այստեղ ամբողջ մի թերթ պակաս էր: Անկասկած, որոշ հատուածներ, որոնք ուրիշ հեղինակների կողմից մէջբերուել են որպէս կղեմէսեան նամակի հատուածներ, եւ որոնք այժմ չկան, գտնուել են այս կորած մասում: Այսպէս, Յուստինոսի գործերի ժողովածուի մէջ տեղ գտած մի աշխատութեան համաձայն («Հարց ու պատասխան ուղղափառների հետ», ՀԴ, հմմտ. Իրենէոս, Ընդդէմ հերձուածողաց, Դ 3, 3)՝ Կղեմէսը կորնթացիներին յիշեցրել է նաեւ Սիբիլլայի (հեթանոսական մարգարէական գրականութիւն) վկայութիւնը մեղաւորների հրէ պատժի մասին: Սիբիլլայի այսպիսի յիշատակութիւնը ներդաշնակ է Կղեմէսի նամակի բովանդակութեանը, քանզի հեղինակը չի խուսափում հեթանոսական դիցաբանութեանը դիմելուց (գլ. Զ): Կարծում է նաեւ, որ Բարսեղ Մեծի կողմից մէջբերուած («Սուրբ Հոգու մասին», ԻԹ) Կղեմէսի խօսքերը՝ «Կենդանի է Աստուած, եւ Տէր է Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Հոգին», վերաբերում են այս հատուածին: Շարունակուող հատուածը տրուած է ըստ 1056 թ. ձեռագրի:

4 Տե՛ս Առակ. Ա 23-33, հմմտ. Սիր. Դ 15:

Գլուխ ԾԸ

Արդ, հնազանդ լինենք Նրա ամենասուրբ եւ փառաւորեալ անուանը՝ խուսափելով Իմաստութեան միջոցով անհնազանդներին կանխագուշակուած սպառնալիքներից, որպէսզի «մեր վրանն ապահով խփենք Նրա մեծափառութեան ամենասուրբ անուան վրայ»[1]: Ընդունեցէ՛ք մեր խորհուրդները, եւ դուք չէք զղջայ: Քանզի կենդանի է Աստուած, եւ կենդանի է մեր Տէր Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Հոգին եւ ընտրեալների այն հաւատն ու յոյսը, թէ Աստուծոյ տուած պատուիրանները եւ հրամանները ջանադիր հեզութեամբ ու հաստատակամօրէն կատարող մարդը պիտի ընդգրկուի եւ համարուի Յիսուս Քրիստոսով փրկուածների թուի մէջ, որի համար Նրան վայել է փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԾԹ

Եթէ Իր ասածներին, որ տրուեց մեր միջոցով, ոմանք անհնազանդ լինեն, ապա թող լաւ իմանան, որ սխալ են գործում եւ իրենց անձը ենթարկում ոչ փոքր վտանգի: Իսկ մենք անմեղ կլինենք այդ մեղքերից եւ անխոնջ կերպով կաղօթենք՝ պաղատելով ու աղաչելով, որպէսզի ամենքի Արարիչը Իր ընտրեալների մէջ ընդգրկուածների թիւն ամբողջ աշխարհում հաստատուն պահի Իր սիրելի Որդու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով, Ում միջոցով Նա մեզ կոչեց խաւարից դէպի լոյս, անգիտութիւնից դէպի Իր փառաւորեալ անուան գիտութիւնը, որպէսզի ապաւինենք համայն աշխարհը ստեղծած Քո անուանը՝ բացելով մեր սրտի աչքերը: Որպէսզի միայն Քեզ ճանաչենք որպէս Բարձրեալը երկնքի բարձրութեան մէջ, Սուրբ՝ սուրբերի մէջ բնակուող, գոռոզների ամբարտաւանութիւնը ստորացնող, հեթանոսների խորհուրդները ոչնչացնող, ցածրերին բարձրացնող եւ բարձրերին ցածրացնող: Դո՛ւ, հարստացնող եւ աղքատացնող, մեռցնող եւ կեանք պարգեւող, միակ բարեգործը հոգիների եւ Աստուած բոլոր մարմինների: Դո՛ւ, որ տեսնում ես անդունդները, հսկում մարդկանց գործերը, օգնում վտանգի մէջ եղողներին, փրկում յուսահատներին: Դո՛ւ, որ Արարիչն ես եւ Հսկիչը բոլոր հոգիների, որ բազմացնում ես ազգերին երկրի վրայ եւ բոլորի միջից ընտրում Քեզ սիրողներին Քո

1 Հմմտ. Բ Օր. ԼԳ 12, 28:

սիրելի Որդի Յիսուս Քրիստոսի միջոցով, Ում միջոցով մեզ կրթեցիր, սրբացրիր եւ պատուի արժանացրիր:

Խնդրում ենք Քեզ, ո՛վ Տէր, եղի՛ր մեր օգնականն ու խնամակալը, փրկի՛ր մեզանից նրանց, ովքեր վշտի մէջ են, բարձրացրո՛ւ ընկածներին, յայտնուի՛ր կարիքաւորներին, բժշկի՛ր հիւանդներին, վերադարձրո՛ւ Քո ժողովրդի մոլորեալներին, ազատի՛ր մեր բանտարկեալներին, զօրացրո՛ւ տկարներին, քաջալերի՛ր վհատուածներին: Թող Քեզ ճանաչեն բոլոր ազգերը, թէ Դու ես միակ Աստուած, եւ Յիսուս Քրիստոս Քո Որդին է, եւ «մենք Քո ժողովուրդն ենք եւ Քո արօտի ոչխարները»[1]:

Գլուխ Կ

Քանզի Դու Քո գործերով յայտնի դարձրիր աշխարհի յաւերժական կարգը: Դու, Տէ՛ր, ստեղծեցիր աշխարհը, Դու հաւատարիմ ես բոլոր սերունդների ընթացքում, արդար՝ Քո դատաստանների մէջ, զարմանահրաշ՝ Քո զօրութեամբ ու մեծափառութեամբ, իմաստուն՝ կառուցելիս եւ ողջամիտ՝ եղածները հաստատելիս, բարի՝ երեւացողների մէջ եւ օգտակար՝ Քեզ ապաւինողների հանդէպ, ողորմած եւ գթասէր: Թո՛ղ մեզ մեր անօրէնութիւններն ու անարդարութիւնները, յանցանքներն ու զանցանքները: Մի՛ հաշուիր Քո ծառաների եւ աղախինների բոլոր մեղքերը, այլ մաքրի՛ր մեզ Քո ճշմարտութեան մաքրութեամբ. եւ ուղղի՛ր մեր քայլերը, որպէսզի ընթանանք սրտի մաքրութեամբ. ե՛ւ Քո առաջ, ե՛ւ մեր իշխանների առաջ կատարենք այն, ինչը բարի է եւ հաճելի:

Այո, Տէ՛ր, փայլեցրո՛ւ Քո երեսը մեզ վրայ խաղաղութեան մէջ՝ բարի գործերի համար, որպէսզի մենք ծածկուենք Քո հզօր ձեռքով եւ Քո բարձրեալ բազկով փրկուենք ամենայն մեղքից, եւ փրկի՛ր մեզ յանիրաւի մեզ ատողներից: Տո՛ւր մեզ եւ ամբողջ երկիրը բնակեցնողներին համերաշխութիւն ու խաղաղութիւն, ինչպէս տուել ես մեր հայրերին, որոնք մաքրութեամբ Քեզ են դիմել հաւատով եւ ճշմարտութեամբ՝ հնազանդ լինելով Քո ամենազօր եւ ամենասուրբ անունը, ինչպէս նաեւ երկրի վրայ՝ մեր իշխաններին ու առաջնորդներին:

1 Հմմտ. Սաղմ. ՀԸ 13:

Գլուխ ԿԱ

Դու, ո՛վ Տէր, թագաւորական իշխանութիւնը նրանց ես տուել Քո մեծասքանչ եւ անպատմելի զօրութեամբ, որպէսզի իմանանք Քո կողմից նրանց տրուած փառքն ու պատիւը՝ նրանց հնազանդուելու համար, երբէք չհակառակուելով Քո կամքին: Տո՛ւր նրանց, Տէ՛ր, առողջութիւն, խաղաղութիւն, համերաշխութիւն, կայունութիւն, որպէսզի նրանք կարողանան Քո կողմից իրենց տրուած իշխանութիւնը անարգել վարել: Քանզի Դու, երկնայի՛ն Տէր, յաւիտեանների՛ Թագաւոր, որ երկրի վրայ եղած մարդկանց որդիներին տուել ես փառք, պատիւ եւ իշխանութիւն, Դու, Տէ՛ր, ուղղի՛ր նրանց խորհուրդները դէպի այն ամէնը, ինչը Քո առաջ բարի է եւ հաճելի, որպէսզի խաղաղութեան մէջ բարեպաշտութեամբ ու հեզութեամբ գործադրեն այն իշխանութիւնը, որին Դու նրանց ողորմածաբար արժանացրել ես: Միայն Դու կարող ես այս ամէնը եւ այլ բարիքներ գործել մեզ համար: Քեզ ենք խոստովանում մեր Քահանայապետի ու մեր հոգիների պահապան Յիսուս Քրիստոսի միջոցով: Քեզ փա՛ռք եւ պատի՛ւ այժմ եւ սերնդէսերունդ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԿԲ

Եղբայրնե՛ր, իսկ մեր կրօնին վերաբերող հարցերի, ինչպէս նաեւ առաքինի, բարեպաշտ եւ արդարամիտ կեանք վարել ցանկացողների համար ամենապիտանի բաների մասին մենք բաւական գրեցինք ձեզ: Քանզի շօշափեցինք բոլոր կէտերը, որ վերաբերում են հաւատին, զղջմանը, անարատ սիրուն, ժուժկալութեանը, խելամտութեանն ու համբերութեանը: Մենք ձեզ յիշեցրել ենք, որ պէտք է հաճելի լինել ամենակալ Աստծուն արդարութեամբ, ճշմարտութեամբ եւ մեծահոգութեամբ, անյիշաչար կերպով, ջանադիր խոնարհութեամբ համերաշխ լինել սիրոյ եւ խաղաղութեան մէջ, ինչպէս եւ մեր վերոյիշեալ հայրերը, որոնք իրենց խոնարհութեամբ հաճելի եղան Հայր Աստծուն եւ Արարչին եւ բոլոր մարդկանց Ստեղծողին: Այս ամէնը ձեզ յիշեցրինք այսպիսի հաճոյքով, քանզի լաւ գիտենք, որ գրում ենք հաւատացեալ ու երեւելի այրերի, ովքեր խորամուխ են եղել Աստուծոյ ուսման խոսքերի մէջ:

Գլուխ ԿԳ

Ուրեմն արդար է, որ այսպիսի եւ այսքան օրինակներ բերելուց յետոյ մեր պարանոցը խոնարհեցնենք եւ գրաւենք հնազանդութեան տեղը, որպէսզի, վերջ տալով սին խռովութեանը, առանց որեւէ արատի յանգենք ճշմարտութեամբ մեր առջեւ կանգնած նպատակին: Քանզի մեզ ուրախութիւն եւ ցնծութիւն կպատճառէք, եթէ Սուրբ Հոգու միջոցով մեր կողմից գրուածներին դուք հնազանդուէք եւ վերջ տաք ձեր նախանձի անընդունելի զայրոյթին՝ այն խնդրանքի համաձայն, որ յայտնել ենք այս թղթում, յանուն խաղաղութեան եւ համերաշխութեան: Մենք ուղարկել ենք հաւատացեալ եւ ողջամիտ այրերի, որոնք մեզ մօտ երիտասարդ տարիքից մինչեւ ծերութիւն ապրել են անբիծ կեանքով, որոնք եւ վկաներ կլինեն մեր եւ ձեր միջեւ: Իսկ այդ արեցինք, որպէսզի իմանաք, որ մեր ամբողջ հոգսը եղել եւ մնում է այն, որ ձեզ մօտ շուտով խաղաղութիւն հաստատուի[1]*:*

Գլուխ ԿԴ

Ուրեմն ամենատես Աստուած եւ հոգիների Տիրակալը եւ բոլոր մարմինների Տէրը, Ով ընտրեց Յիսուս Քրիստոսին եւ Նրա միջոցով մեզ սեփական ժողովուրդ դարձրեց[2]*, թող Իր մեծափառ եւ սուրբ անունը կանչող հոգիներին շնորհի հաւատ, երկիւղ, խաղաղութիւն, համբերութիւն, ներողամտութիւն, ժուժկալութիւն, սրբութիւն եւ ողջախոհութիւն՝ Իր անուան հաճութեան համար, մեր Քահանայապետ ու պահապան Յիսուս Քրիստոսի միջոցով, Որով Նրան՝ փառք, մեծութիւն, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

1 Այս հատուածը (ՄԷ գլխի վերջից մինչեւ ԿԴ) թարգմանութիւնների մեծ մասում բաց է թողնուած, քանզի այն շատերի կողմից անվաւեր է համարւում: Սրա պատճառն այն է, որ Կաթոլիկ Եկեղեցին այս հատուածում, մասնաւորաբար՝ ՄԹ եւ ԿԳ գլուխներում, փորձում է Հռոմի աթոռի գերագահութեան յստակ ակնարկութիւն տեսնել: Ուստի հաւանական է, որ այս հատուածը ներմուծուել է յետագայում մեծ հերձուածի շրջանում Կաթոլիկ Եկեղեցուն հեղինակութիւն հաղորդելու միտումով:

2 Հմմտ. Տիտ. Բ 14:

Գլուխ ԿԵ

Իսկ մեր կողմից ուղարկուած Կլաւդիոս Եփեբոսին եւ Վաղերիոս Բիտոնին Փորտունատոսի հետ իսկոյն ե՛տ ուղարկէք մեզ մօտ խաղաղութեամբ ու ցնծութեամբ, որպէսզի նրանք շուտափոյթ մեզ հաղորդեն փափագելի եւ ցանկալի խաղաղութեան ու համերաշխութեան մասին, որպէսզի մենք եւս շուտով կարողանանք ուրախանալ ձեր գործերի բարեկարգութեամբ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը թող լինի ձեզ եւ բոլոր նրանց հետ, ովքեր ամէնուրեք Նրա միջոցով կոչուած են Աստծուց, եւ Ում միջոցով Նրան՝ փառք, պատիւ, իշխանութիւն եւ մեծութիւն, յաւերժական աթոռ[1] *յաւիտեանս եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը
Խմբագրեց եւ ծանօթագրեց
Միքայել ծ. վրդ. Աջապահեանը

1 Ոմանք թարգմանում են «իշխանութիւն»:

[Ա]ՆԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՒՐ ԴԻՈՍԿՈՐՈՍԻ, ՋՈՐ ՅԵՏՈՅ ԻՄ ԱՂԱՉԵԱԼ ՋԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՐ[ԴԱՊԵ]ՏՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԸՍՏ ՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒ[ՈՐԻՉ] ՀԱՅ ԱՋԳԻՆ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅՆ, ՋՈՐ ԷՐ ԱՌ ԻՄ ԱՆՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ, [Բ]ԱՋՈՒՄ ԲԱՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿՐԵԱՑ ՅԱՂԱԳՍ ԱՅՍՐ ՏԱՌԻՍ

(շարունակութիւն)*

Այսպէս եւ հրեայք յարբեցութենէ յանաւրէնութիւն ընկղմեցան: Վասն այսորիկ Նա պահեաց զնա աւր, զի զփրկութեան դեղն մեզ ցուցցէ: Եւ ոչ եւս յաւելու, զի մի՛ առաւելութիւն առնիցէ չհաւատալ զտնտեսութեան ճշմարտութիւնն, այլ որչափ Մովսէս եւ Եղիա կարացին երթալ ի կէտն՝ Աստուծոյ զաւրութեամբն ժոյժկալեալք: Եթէ յաւելեալ էր, հաւատայ ոք ոչ թէ ճշմարիտ մարդ եղեւ: Եւ զի յետ խ աւուր քաղցեաւ, զի պատճառս թշնամւոյն տացէ մերձենալ ի մարտ, զի ցուցցէ մեզ, թէ որպէս պարտիցէ կռուել մեզ եւ յաղթել: Սոյնպէս եւ աստ. յորժամ կամեցաւ ի դիմի հարկանել, եւ զքաղցն եւս յայտնեաց, եւ ի դիմի յարեալ՝ միանգամայն երկիցս եւ երիցս զգետնեաց՝ ըստ Իւրում պատշաճ զաւրութեանն: Եւ արդ, սկիզբն արարեալ յառաջին կարգէն ըստ միոջէ, բայցայայտեսցուք առ ի յաւգուտ ձեզ: Եւ զի մատուցեալ փորձիչն ասէ. «Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա՛ քարանցս, զի հաց լինիցին»[1], քանզի լուաւ ի վերուստ, թէ՝ «Դա է Որդի Իմ սիրելի»[2], եւ լուալ զայնչափ վկայութիւնս ի Յովհաննէ, որ ի վերայ Նորա: Եւ ապա ետես եւս քաղցեալ եւ ի վարանս մտեալ այնուհետեւ, զի ոչ

* Սկիզբը տե՛ս «Գանձասար» Դ-Ե:

1 Տե՛ս Մատթ. Դ 3, Ղուկ. Դ 3:

2 Մատթ. Գ 17 ,

մարդ լոկ հաւատայր վասն մեծամեծ վկայութեանցն ի վերայ Նորա, եւ ոչ Որդի Աստուծոյ յանձին ունէր վասն քաղցեալ տեսանելոյն զնա, եւ անհնարին վարանս մտեալ տարակուսանաց բարբառս արձակոյր, որպէս մատուցեալ առ Ադամ զառաջինն այլ ընդ այլոյ խաւսէր, զի ի նմանէ ստուգեցէ զիրսն: Նոյնպէս եւ աստ, զի չէր տեղեակ անճառ խորհրդոյն տնտեսութեան եւ ոչ գիտէր, թէ [ով] իցէ, [որ եկնն,] յայլ վարմս[1] մտաբերէր անկանել, զի մարթացէ ճանաչել զծած[կ]եալ խորհուրդն, որ չէր նմա յայտնի, ասէ. «Թէ Որդի ես Աստուծոյ, ասա՛, զի քարինքս հաց լինիցին»: Եւ չասաց, եթէ՝ քաղցեալ ես, այլ՝ «Թէ Որդի ես Աստուծոյ»: Կարծէր յարգանաւք զմիտսն գողանալ, վասն որոյ զքաղցն լռեաց, զի մի՛ թուիցի, թէ նախատանս նմա յառաջ բերիցէ, զի չէր տեղեակ մեծի տեսչութեանն: Եւ այնպէս հնարիւք զպատուոյն իմն ճառէր: Իսկ առ այս Քրիստոս զինչ առնիցէ. կարճէր զհպարտութիւն եւ յայտ առնէ, թէ չէր ինչ ամաւթոյ գործն եւ ոչ անարժան ինչ իմաստութեան Նորա: Եւ զոր նա մեղմեխանաւք ծածկէր, Սա զնոյն ի մէջ բերեալ յայտնէր. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»[2]: Եւ արդ, մի՛տ դիր խարդախութեան չար եւ խորամանդ դիւին եւ տե՛ս ուստի սկսանի կռիւ, եւ կամ զիարդ չմոռանայ զիւր արուեստն, զի որով զառաջին մարդն եհան ի դրախտէն եւ զայլս բազումս կործանեաց, ի պէսպէս չարիս անդի նիւթէ եւ աստ զնենգութիւնն առ ի յաւժարացուցանել ի կերակրոցն տենչանս, զի որպէս անդ յաճախեաց բարուրս, սոյնպէս եւ աստ նիւթէ վասն որովայնի, այլ Քրիստոս, զի յայտ արա[ս]ցէ, եթէ բռնաւորին ոչ կարէ հնազանդեցուցանել գործել զանպատշաճ իրս, այլ քաղցնուլ եւ հնազանդել կամացն Աստուծոյ: Եւ դարձեալ խրատէ եւս զմեզ, զի մի՛ իւիք հնազանդեսցուք հակառակորդին, քանզի առաջին մարդն այսպի[սի] իրաւք գտաւ հակառակ Աստուծոյ եւ անց զաւրինաւք Նորա: Եւ զի զմեզ առաւելագոյնս ասասցէ, թէպէտ եւ չիցէ զաւրինաւք անցանել, յորժամ ուտիցեմք, որ ինչ ի նմանէն է հրամայեալ, սակայն եւ այնպէս մի՛ հաւանիցիմք թշնամւոյն, եւ զինչ ասացից զաւրինաւքն անցանել, այլ թէպէտ եւ բարի ասիցեն դեւքն, մի՛ սակայն եւ այնպէս անասցուք նոցա, որպէս եւ ինքն իսկ ըմբերանէր զնոսա, որ քարոզէին Որդի Աստուծոյ գոլ: Եւ Պաւղոս սաստէր այսոցն, որ կոչէր զնա

1 *Ձեռագրում՝* վարանս:

2 Մատթ. Դ 4, Ղուկ. Դ 4

«ծառայ Աստուծոյ բարձրելոյ»[1], զի թէպէտ զոր ասէրն բարւոք ասէր, սակայն յաճախ խոտէր զնա Պաւղոս եւ պարսպեալ ամրացուցէր ի նորա նենգութենէն, զի թէպէտ եւ զփրկութեան կրաւնսն քարոզէր, այլ նա կարկէր զնոսա, վասն այնորիկ ոչինչ բանիւք պալտէր: Այլ զինչ ասէր Քրիստոս. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ», այսինքն՝ թէ կարող է Աստուած եւ բանիւք կերակրել զքաղցեալս: Բերեալ հին վկայութիւն ի Գրոց՝ խրատէ. զի թէպէտ եւ սովամահ լինիցիմք կամ այլ ինչ իրաւք չարչարիցիմք, սակայն ի Տեառնէ մի՛ հեռասցուք: Եւ զի առաջին մարդն մոռացաւ զպատուիրանն՝ զտուեալն յԱստուծոյ, եւ վասն այնորիկ ըմբռնեցաւ ի չարէն եւ կաղեցաւ մկղաւքն, սորին վասն Տէրն յիշէ զպատուիրանն եւ ընդդէմ պարսաքարեալ ընդճէ զնա, որպէս Դաւիթ այն՝ զԳողիադ[2]: Այլ զի չէր տեղեակ նա, թէ Որդի իցէ Աստուծոյ, ոչ զի հաւատայցէ, այլ զի ի թերահաւատութիւն ածցէ եւ յանդիմանեսցէ, ոչ որպէս զառաջին մարդն խաբեաց. եւ յորժամ թերահաւատեցին յԱստուծոյ, յանդիմանեաց եւ լի արար ամաւթով, զի այլ ընդ այլոյ խոստանայ, զի վրիպեալ արկցէ ի թերահաւատութիւն, եւ զոր ունիցին բարի, հանցէ ի նոցանէ: Այլ Քրիստոս ոչ նմա եւ ոչ հրէիցն, որ զխորհուրդս նորա ունէին, եցոյց նշանս, զի խրատե[ս]ցէ զմեզ, զի թէպէտ եւ նեղիցիմք առն ինչ, մի՛ վայրապար հաւանեալ չարախաւսին, առնիցեմք ինչ արտաքոյ հրամանացն Տեառն: Եւ տե՛ս զչար դեւն իբրեւ գիտաց, թէ չկարաց ոտն ունել Նմա, որով խաւսեցաւն ինչ, զի արդ հնարէր այլ իմն ոճիրս: Մինչդեռ քաղցն ի վերայ գայր, ձգեալ յայլ ոմն փորձութիւնս ածէր. «Եթէ Որդի ես Աստուծոյ, ա՛րկ զՔեզ վերուստ ի վայր, զի գրեալ է, եթէ՝ «Հրեշտակաց Իւրոց պատուիրեալ է վասն Քո, զի ի բազուկս իւրեանց բարձ[ց]են զՔեզ»[3]»: Եւ ընդէ՞ր յամենայն փորձութիւնսն զայն դնէ, թէ՝ «Որդի ես Աստուծոյ»: Այլ որպէս յառաջնումն ամաց, սոյնպէս եւ աստ. զի որպէս յայնժամ չարախաւսեաց զԱստուծոյ ասելովն, թէ՝ «Գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր, եւ լինիցիք իբրեւ զաստուածս»[4], եւ այսու կամէր ցուցանել, թէ խաբեալ իցեն յԱստուծոյ եւ ոչ ինչ ունին մասն յԱստուծոյ բարերարութենէն: Սոյնպէս եւ աստ ասէ ակնարկելով. թէ վայրապար կոչեաց զքեզ «Որդի» եւ խաբեաց այն անուամբ: Եւ թէ չիցէ այսպէս, ասէ, այլ ցո՛յց ինձ զհանդէս այն զաւրութեան եւ զի որոց խաւսեցաւ ընդ նմա: Եւ ի մարգարէէն եբեր զվկայութիւն: Եւ զիա՞րդ ոչ ցասեաւ նմա Քրիստոս կամ զայրացաւ, այլ մեծաւ հանդարտութեամբ միւսանգամ եւս ընդ նմա ի Գրոց վիճէր. «Մի՛ փորձե[ս]ցես զՏէր Աստուած քո»[1], զի այսու եւս տացէ մեզ միտս, եթէ սատանայի ոչ նշանաւք ինչ, այլ հանդարտութեամբ եւ համբերութեամբ պարտ է յաղթել եւ ոչ ի ցոյց ինչ կամի պատիւ անձին համարել զյաղթութիւնն: Եւ արդ, մի՛տ դիր, զի զվկայութիւնն զոր եբեր, անմտութեամբ եբեր, զի Քրիստոսի երկոքեան վկայութիւնքն ի դէպ էին, եւ նո[բայքն] վայրապար եւ յանդէպս եւ ոչ այնպէս ի [...][2] նոցին ի դէպ ինչ, զի ոչ եթէ, որ գրեալն է, թէ՝ «Հրեշտակաց եւ Իւրոյ պատուիրեալ է վասն Քո», միտս ինչ տայցէ ընկենուլ զանձն եւ քարավրէժ առնել, զի եւ չէ իսկ պարտի առնուլ զբանն, այլ զայս ինչ այժմ ոչ յանդիմանեաց, թէպէտ եւ թշնամանաւք ասաց զբանն եւ կարի իսկ ընդդէմ, զի ոչ եթէ Որդւոյ Աստուծոյ իցեն այսպիսի իրք, այլ սատանայի եւ դիւաց ընկենուլ զամէնս ի խոնարհ: Իսկ Որդւոյ Աստուծոյ եւ զանգեալսն յարեալ, թէպէտք ինչ չէին անդ զհանդէս զաւրութեանն ցուցանել, այլ ոչ զիւր անձն ընկենուլ եւ քարավէժ առնել պիտոյ էին, այլ զայլս յարուցանել եւ կեցուցանել, զի զանձինս քարավէժ ի խորխորատ ընկենուլ այնր բանաարկուի է, զի ի նոսա թագաւորեալ է մոլորութիւն: Առ Քրիստոս, թէպէտ զայս ամենայն լուաւ, ոչ ինչ յայտնեաց իմա զանձն, այլ իբրեւ զմարդ տայր պատասխանի, զի ասելովն, եթէ՝ «Ոչ միայն հացիւ կեց[ց]է մարդ» եւ միւսովն, եթէ՝ «Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո», ոչ ինչ յայտ առնէր զանձն, թէ Աստուած իցէ, այլ եթէ ոք ի բազմաց իցէ: Եւ ընդ այն մի՛ զարմանար, թէ զիարդ կայր ընդդէմ զաւրութեան նորա մի անգամ եւ երկիցս, այլ զոր աւրինակ, որ կամիցին սաստիկ տանջանաց ժուժկալ լինել, թէպէտ եւ ամենեւին յարիւն եւ յապաժոյժ կայցեն, սակայն ժուժկալեն՝ առ հեստել նոցա, նոյնպէս եւ նա. թէպէտ եւ յառաջին եւ յերկրորդ վիրացն խաւարեալ ցնորէր, սակայն եւ միւսումն անձինն տուեալ քաջալերս բարբառէր:

1 Գործ. ԺԶ 17
2 Տե՛ս Ա Թագ. ԺԷ 48-51:
3 Մատթ. Դ 6
4 Ծն. Գ 5

1 Մատթ. Դ 7, Ղուկ. Դ 12
2 1 բառ

«Եւ եհան զՆա ի լեառն մի բարձր, եցոյց Նմա զամենայն թագաւորութիւնս եւ ասէ՝ զայս Քեզ տաց, եթէ երկրպագեցես ինձ: Ասէր ցնա Յիսուս՝ ե՛րթ ի բաց, սատանա՛յ, զի գրեալ է. Տեառն Աստուծոյ քո երկիր պագցես»[1]:

Եւ արդ, այնուհետեւ ի Հայր մեղանչէր. զՆորայն ամենայն իւր առնէր եւ զիւր անձն փութայր ցուցանել արարիչ ամենայնի: Յայնժամ սաստեաց, այլ մեղմով ասէ. «Ե՛րթ ի բաց, սատանա՛յ», որ հրամանն էր մանաւանդ եւ ոչ սաստ: Եւ անդէն ընդ ասելն լինէր հալածական չարն եւ յայլ ոչ թէ յաւելոյր փորձութիւնս: Եւ ընդէ՞ր Ղուկաս[2] ասէ, թէ իբր «կատարեաց զամենայն փորձութիւնսն»[3]: Ինձ այսպէս թուի, եթէ զգլխաւորացն յայտ առնէ «ամենայն» ասելով, որպէսզի այլքն ամենայն ընդ սոքաւք իցեն փակեալ, զի յորժամ որովայնի ոք ծառայիցէ, կամ ի սնոտի ոք փառասիրութիւն անգանիցի կամ ընչից յղփութեամբ, զոր եւ պղծոյն իմացեալ, զզաւրաւորագոյն յետոյ դնէ, զոր ի սկզբանէ երկնէր գայր, զի զայն ծնանիցի յետոյ, զի եւ կռուոյ սովորութիւն է զսաստիկ ինչ մեքենայս յետոյ ածել ի վերայ, որպէս եւ Յովբայ զսաստիկ հարուածսն յետոյ ածէր ի վերայ: Սոյնպէս եւ աստի յայնցանէ, որք դիւրագոյն թուէին տկարք, սկսե[ա]լ գայր հասանէր ի զաւրաւորն: Եւ արդ, զիարդ պարտ է յաղթել նմա, որպէս եւ Քրիստոս խրատեաց յԱստուած ապաստան լինել, ոչ ի քաղցին նուաղիլ հաւատացելոյն պարտ է, զի կարող է եւ բանիւ կերակրել, եւ ոչ ի բարիս ինչ, զոր առնուցումք, փորձել զՏուիչն, այլ շատանալ վերին հաշուովն, եւ զմարդկան աւրինաց չունել ինչ փոյթ յանձին, եւ զամենայն աւելորդս պիտոյիցն արհամարհել, զի չիք ինչ այնպէս, որ ընդ սատանայի կործանէ, քան զշատիցն ցանգանալ եւ ագահութեան տենչալ, զի եւ այժմ ասեն ոմանք. զամենայն ինչ քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ: Որ մարդիկ են բնութեամբ եւ եղեն նորա գործիք, եւ ոչ այլ ինքն մի այլ եւ այլովք եւս ածէր ի սերունդս փորձութիւնսն: Զոր եւ Ղուկաս յայտ առնէ ասելովն, թէ՝ «Ի բաց եկաց ի Նմանէ առ ժամանակ մի»[4]: Եւ այսու ցուցանէ, եթէ յետ այսորիկ այլովք գործակցաւքն դիմեաց ի վերայ Նորա ի ժամ խաչին դպրաւք եւ

1 Մատթ. Դ 8-10
2 *Տողամիջում՝* աս:
3 Ղուկ. Դ 13
4 Նոյն տեղում

փարիսեցաւք: «Եւ ահաւասիկ,- ասէ,- եկին հրեշտակք եւ պաշտէին զՆա»[1]: Մինչդեռ ի պատերազմին էր, ոչ նոր թոյլ հրեշտակաց յայտնել, զի մի՛ իբրեւ նոցա յիս աւգնականութեամբն երեւեցի յաղթութիւնն, այլ զթշնամին հալածէր եւ ապա՛ յայտնէր զհրեշտակսն, զի եւ դու ուսանիցիս, թէ ի քում փորձութեանն հրեշտակք ընդունելոց են զքեզ եւ յարգեալ փառաւորեն, որպէս եւ զՂազար յետ հնոցի աղքատութեանն եւ սովամահն լինելոյ եւ պէսպէս նեղութեանցն տարան հրեշտակքն ի գոգն Աբրահամու: Եւ զի նախ ի կերակրոցն արար սկիզբն պատերազմի, զի սա է ախտ առաջին բնաւորեալ ի մեզ, զի քաղց ապականութիւն է, եւ ցանկութիւն՝ ախտ ոգւոց. զերկոսին յղացաւ Ադամ եւ սերմանեաց ի մեզ: Վասն որոյ եւ Տէր նախ զայս կրեաց կամաւորութեամբ, զի լուծցէ զկիրս կարեաց, որ հարկեն զմեզ բռնաբար եւ բնաւորապէս քարշիլ զկնի պի[տ]ոյից մարմնոյ, որով կորոյս սատանայ զազգս մարդկան: Եւ զայս կրեալ Տեառն՝ եկոյծ զբռնութիւն նորա եւ յետ յաղթութիւն ամենայն առաքինեաց, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեն, այլ հոգւով սպանցեն զգործ մարմնոյ: Եւ յորժամ յաղթէ ոք որկորատութեան, դարձեալ սկսանի ախտ հպարտութեան, զոր սերմանեաց յԱդամ, մինչեւ յաստուածային պատիւն ամբառնայ առ մահաբերեաց, զոր եւ ի վայր կործանեաց Տէրն խոնարհութեամբն: Եւ իբրեւ յայս երկուս ախտս ոչ կարէ դրդուել սատանայ, եւս ապա այնուհետեւ յընչասիրութիւն գրգռէ, զի արծաթասիրութիւն է մայր ամենայն չարեաց, զոր եւ կռապաշտութիւն կոչեաց առաքեալ[2], զի «ոչ ոք կարէ երկուս տերանց ծառայել»[3]: Յայնժամ զկսանի մեծարել ի թագաւորաց եւ պատուիլ ի մեծամեծաց եւ զփառս աշխարհի մատուցանէ ցանգալ[ե]ացն փառաց կենցաղոյս ընդ նմին պահանջէ զերկրպագութիւն գողանալ ոմանս նոցա պատրանաւք փառաց կենցաղոյս: Եւ եթէ յայսմ եւս անշարժ մնայցէ նահատակն յամաւթ լեալ թէեւ անագանիցէ լի ամաւթով, եւ ի հրեշտակաց ընկալցի եւ կատարի եւ յետ այնորիկ, իբր զնահատակ քաջ, մտցէ յառագաստն յուսոյ, որպէս Տէր ի հարսանիսն Կանայ գաղեղիացւոց՝ իբր յաղթող պսակեալ:

«Իբրեւ լուաւ Յիսուս, թէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս ետ եւ

1 Մատթ. Դ 11
2 Հմմտ. Կող. Գ 5:
3 Մատթ. Զ 24

գնաց ի կողմանս գաղիղեացւոց»[1]:

Եւ ընդէ՞ր ետ խոյս. զի այնու եւս ուսուցանէ զմեզ չխրոխտալ ընդդէմ փորձութեանց, այլ խորշել եւ տնդի տալ, զի այն ոչ վնասէ, յորժամ ոչ ոք յանդգնութեամբ տայցէ զա[ն]ձն ի նեղութիւնս, այլ յորժամ ըմբռնիցի եւ կայցէ հաստատուն ի վիշտսն: Եւ դարձեալ զհրէական նախանձն ցածուցանէ: Գնաց ի Կամփառնայումն, զի զմարգարէութիւնն եւս կատարիցէ եւ զվարդապետսն ամենայն աշխարհաց որսայցէ, զի անդ շրջէին: Զի թէպէտ ի հեթանոսս երթալոց էր, սակայն ի հրէիցն կամէր առնուլ պատճառս երթալոյն ի հեթանոսս, զի եւս աստ եւս նենգելով զվարդապետն եւ ի բանդ արկանելովն եւ զնա եւս մերժէին երթալ ի Գաղիղեայ հեթանոսաց: Եւ զի ոչ միայն զմանէ Յուդայեան, այլ զամենայն ցեղիցն արկնարկէ: Տե՛ս, զիարդ զատանէ զտեղին մարգարէն. «Երկիր Զաբուղոնի եւ Նեփթաղեմի, ճանապարհ ծովուն յայնկոյս Յորդանանու Գաղիղէէ հեթանոսաց ժողովուրդ, որ նստէր ընդ խաւարի, ետես զլոյս մեծ գիտութեան»[2]: *Իսկ խաւար՝ ոչ զերեւելի, այլ զմոլորութեանն կոչէ, զի ասէ ոք. «Նստէին յաշխարհի եւ ի ստուերս մահու. լոյս ծագեաց նոցա»*[3], *զի ուսցի, թէ լոյսն ոչ այս լոյս է, եւ ոչ խաւարն՝ երեւելի խաւար, զի ոչ պարզաբար լոյս ասէ, այլ թէ՝ «մեծ», որպէս այլուր, թէ՝ «Լոյսն ճշմարիտ»*[4]: *Եւ զխաւարն՝ ոչ դոյզն, այլ ստուեր [մահու], զի յայտ արասցէ, եթէ ոչ նոքա սիրեցին զնա եւ գտին, այլ Սա ի վերուստ եցոյց զԱնձն, Ինքն ծագեաց եւ լուսաւորեաց: Եւ ոչ նոքա ընթացան առ լոյսն, քանզի յանհնարին չարիս կէին, զի ոչ ասաց գնացին, այլ թէ «նստէին», որ էր նշանակ անյուսութեան, թէ՝ չէ ինձ հնար ազատանալ ի խաւարէն, զի այնչափ պաշարեալ էին խաւարաւն, զի ոչ գնալ անգամ գիտէին:*

«Յայնմհետէ սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել՝ ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից»[5]:

«Յայսմհետէ», յորմէ արկին զՅովհաննէս ի բանդ: Եւ ընդէ՞ր ոչ

1 Մատթ. Դ 12
2 Ես. Թ 1-2
3 Ես. Թ 2
4 Ա Յովհ. Բ 8
5 Մատթ. Դ 17

ի սկզբանն Ինքն քարոզէր, այլ կարաւտէր Յովհաննու վկայութեանն. զի վկայութիւն նշանացն բայցայայտ քարոզէր զՆմանէ: Այլ զի այսու եւս պատիւ Նորա յայտ լիցի, զի որպէս հայր, սոյնպէս եւ Սա ուսուցանէր զմարգարէսն, զոր եւ Զաքարիա եւ հրեշտակն գուշակէին[1], *թէ՝ «Դու մանուկ մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր»*[2], *զի մի՛ պատճառս ինչ տացէ անամաւթ ազգին հրէից, զոր եւ Ինքն իսկ ասէր, եթէ՝ «Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասէին՝ ահա կերող եւ արբեցող»*[3]: *Եւ այն եւս զհարկէր այլում նախ ճառել զՆմանէն եւ ապա Իւր վասն Իւր. զի եթէ յետ այնչափ զվկայութեանն Յովհաննու եւ մատամբն ցուցանելոյ ասէին, թէ՝ «Դու վկայես անձին Քո, վկայութիւն Քո ոչ է ճշմարիտ»*[4], *եթէ չէր այնչափ վկայեալ Յովհաննու, որչափ եւս ամբարշտագոյն խաւէին: Վասն այնորիկ ոչ քարոզեաց զյառաջ քան զնա եւ ոչ նշանաբար, մինչեւ մատնեցաւ նա ի բանդ, զի այնու բաժանեսցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ արար նշանս, զի առ Յիսուս պահեցին արուեստք նշանացն, քանզի զՅովհաննէս կարծէին, թէ Քրիստոս լցէ. եթէ նշանս ինչ արարեալ էր, որչափ եւս առաւել կարծիքն հաստատէին: Եւ վասն այնորիկ նշանակէ Մատթէոս, թէ՝*

«Յայսմհետէ սկսաւ քարոզել Յիսուս»[5]:

Եւ զայս ինչ քարոզէր, զոր Յովհաննէս ուսուցանէր, եւ ոչ ինչ վասն Իւր ճառէր ի քարոզելն: Եւ այնպէս սիրելի առնէր զքարոզութիւնն, զի ոչ ինչ պատշաճ զՆմանէ իմանային: Վասն որոյ ոչ ինչ տաղտկալի առնէր զքարոզութիւնն որպէս զՅովհաննէս, եթէ՝ «Ահաւասիկ տապար առ արմին դնի»[6]. *եւ՝ «Որ ոչ առնէ պտուղ, հատանի»*[7]. *եւ՝ «Որոյ հեծանոցն ի ձեռին է»*[8], *որ էր յիշատակ պատժոց եւ գեհենի, այլ ախորժելի առնէ զքարոզութիւնն, զի եւ զերկնից արքայութենէն ճառէ եւ զպարգեւաց աւետիս տայ, որք լսեն նմա:*

1 Ձեռագրում՝ գովեա ասէին, յետոյ ուղղուած՝ գուշակէին:
2 Ղուկ. Ա 76
3 Մատթ. ԺԱ 18
4 Յովհ. Ը 13
5 Մատթ. Դ 17
6 Մատթ. Գ 10, Ղուկ. Գ 9
7 Մատթ. Գ 10
8 Մատթ. Գ 12

«Եւ մինչդեռ անցանէր Յիսուս առ ծովեզերբն գաղիղեացւոց, ետես երկուս եղբարս՝ զ Պետրոս եւ զ Անդրէաս, եւ կոչեաց զնոսա»[1]:

Բայց Յովհաննէս այլ ազգ իմն ասէ զկոչումն նոցա, ուստի յայտ էր, թէ երկրորդ կոչումն էր այս, եթէ կամիցի ոք իմանալ, յայտնի, զի անդ ասէ. թէ՝ «Զեւ եւս էր արկեալ զ[Յ]ովհաննէս ի բանդ, յորժամ կոչեաց զնոսա, եւ եկին»[2]: Եւ անդ ասէ՝ յետ մատնելոյն կոչեաց. անդ Անդրէաս կոչէ զ Պետրոս, իսկ աստ զերկոսեանն՝ Յիսուս: Արդ, ասէ. «Իբրեւ ետես Յիսուս զՍիմովն, զի գայր, ասէ զնա՝ դու ես Սիմովն, որդի Յովնանու. դու կոչեսջիր Կեփաս, որ թարգմանի վէմ»[3]: Իսկ ասէ, թէ ի վաղուց կոչեալ էր զանուն. իբրեւ «ետես զՍիմովն, որ անուանեալն Պետրոս»[4]: Նաեւ ի տեղւոջէն եւ յայլ բազում իրաց յայտ է եւ մանաւանդ յարագ յանձ առնելոյն, զի ամենայն ինչ վաղվաղակի թողին, զի ի վաղուց հետէ էին խրատեալք: Արդ, ասէ, թէ ի տուն իսկ չոգաւ [առ Յիսուս Անդրէաս] եւ [անդ] բազում ինչ լուաւ: Իսկ աստ լոկով բանիւ հաւանեցան երթալ զկնի: Եւ յայտ է, զի յառաջին գալոյն մեկնեցան, իբրեւ տեսին զՅովհաննէս ի բանդ մտեալ, եւ սորա խոյս տուեալ՝ գնացին միւս անգամ յիւրեանց արուեստն: Եւ ապա անդ գտանէր զնոսա Յիսուս, զի որսային ձուկն, զի յորժամ մեկնիլն կամեցան ի Նմանէն, զառաջինն չարգել, բայց ոչ բնաւ եթող, այլ անսայր եւ այնմ, եւ դարձեալ միւս անգամ գայր եւ առնոյր եւ առնէր Իւր, որ եւ այս իսկ մեծի որսորդութեանն էր աւրինակ եւ մեծի հնազանդութեան նշանակ. թողուլ զգործն եւ զհայրն իւրեանց եւ երթեալ զհետ Նորա, որպէս Եղիսէ զկնի Եղիայի[5]:

Եւ զի լուան աշակերտքն Յովհաննու, մինչդեռ խաւսէրն նա Տեառն մերոյ, եւ թողին զվարդապետն իւրեանց եւ գնացին զկնի Տեառն մերոյ, զի ոչ կարէր Զայնն առ ինքն ունել զաշակերտսն: Եւ վասն այնորիկ առ Բանն առաքեաց զնոսա. պարտ իսկ է յերեւել լուսոյ արեգականն՝ անցանել լուսոյ ճրագին: Նաեւ վասն այնորիկ իսկ կաց մնաց Յովհաննէս, զի սահմանեսցէ զմկրտութիւնսն իւր մկրտութեան Տեառն մերոյ: Եւ մեռաւ, եւ ապա զի ի մեռեալ անդ, նա եղեւ

1 Մատթ. Դ 18
2 Յովհ. Գ 24
3 Յովհ. Ա 42
4 Մատթ. Դ 18
5 Տե՛ս Դ Թագ. Բ-Թ, ԺԳ 14-21:

առաքինի եւ քարոզ, որպէս եւ յորովայնն մաւրն իւրոյ՝ նշան դժոխոց: Եկին որսորդք ձկանցն եւ եղեն որսորդք մարդկան, որպէս եւ դրեալ է. «Ահաւասիկ առաքեմ զորսորդս եւ որսայցեն զնոսա յամենայն լերանց եւ յամենայն բարձանց»[1]: Զի եթէ իմաստունս առաքեալ էր, կամ հաւանեցուցին եւ կալան, կամ խաբեցին եւ ըմբռնեցին. եւ եթէ մեծատունս դարձեալ առաքէր, կամ պարտեցին կերակրեցին, կամ կաշառեցին եւ տիրացուցին. եւ հզաւրս՝ դարձեալ նոյնպէս՝ կամ զարմացուցին զաւրութեամբ իւրեանց, կամ բռնադատեցին բռնութեամբք իւրեանց: Այլ առաքեալքն եւ ոչ մի յայսցանէ ունէին: Շմաւոնիւ լուսոյ ամենեցունց, զի տագնապեալ էր, զի ի ձայնէ աղախնոյ միոյ երկեաւ, աղքատ էր, զի եւ զհարկն անգամ ընդ անձին իւրոյ ոչ եղեւ բաւական տալ զկէս սատերին: «Եւ ոչ ոսկի,- ասէ,- եւ ոչ արծաթ իմ չգոյ»[2]: Եւ տգէտ էր, զի ոչ իբր ուրացաւն, գիտաց խորամանկութեամբ փախչել: Արդ, ելին որսորդքն եւ յաղթեցին հզաւրաց եւ մեծատանց եւ իմաստնոց: Զարմանք մեծ. զի իբրեւ զհզաւրս ձգէին յուսումն վարդապետութեան եւ ոչ բռնութեամբ. եւ իբրեւ աղքատք զմեծատունս ուսուցանէին. եւ իբրեւ տգէտք զիմաստունս եւ զխորագէտս աշակերտէին: Տեղի ետ իմաստութիւն աշխարհիս այնմ իմաստութեան, զի Նա Ինքն է Իմաստութիւն իմաստութեանց:

«Եւ տեսեալ Յիսուսի ժողովուրդ բազում՝ ել ի լեառն»[3]:

Նախ սկիզբն արար մարմնոյ բժշկութեան, զի ի ձեռն երեւելի բժշկութեանն, զոր աչաւք տեսանէին, բաց[ց]ին աչք ոգւոց կուրացելոցն, հաւատայցեն եւ ոգւոցն բժշկութեան, զի յետ յանցանացն նախ ցաւք մարմնոյ մտին յանիծիցն ցաւովք եւ դառն հեծութեամբ ծնանել եւ ի քիրտն երեսաց եւ ի մահ դատապարտել: Վասն որոյ Նա ի մարմնոյն սկսանի բժշկութիւնն, եւ ապա գայ եւ ցաւոց բժշկութիւն: Եւ նախ Ինքն շրջէր ընդ գաւառս եւ ընդ գեւղս եւ բժշկէր զցաւս եւ զվէրս մարմ[ն]ոց, եւ ոչ պահանջէր հաւատս: Եւ իբրեւ լցան հաւատովք, եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք, յայնժամ հանէ ի լեառն եւ յանապատ տեղիս, զի յամենայն կողմանց յապահովացեալք մտադիրութեամբ՝ ուշ դիցեն ընդունել եւ զոգւոցն բժշկութիւն, որպէս ի

1 Երեմ. ԺԶ 16
2 Գործ. Գ 6
3 Մատթ. Ե 1

սկզբանն արար. մինչ եհան յԵգիպտոսէ, յանապատին տայր նոցա զկենաց պատգամսն, որպէս որ զմանկտի ուսուցանեն, յանապատ տեղիս տանին, զի յամենայնս բազմաց ժողովեալ՝ զմիտս դիւրաւ ուսցին զոգւոցն փրկութիւն: Անդ ի լեառն հանեալ զնոսա խաւսէր այսու սաստկութեամբ ի խաւարէ եւ ի միգոյ, ըստ արժանի նոցա ստահակութեանն եւ կուրութեան: Իսկ աստ ի մարմնոյ անտի խաւսէր քաղցրութեամբ եւ վճիտ լուսով մաքրէր զմիտս նոցա եւ բժշկէր զոգիս ժողովելոցն: Եւ նստեալ բազմեցաւ նուսխայաւրէն[1] առ ի բաշխել զկենաց կերակուրն ոգւոց՝ ըստ այնմ թէ՝ «Բանս կենաց յաւիտենականաց ունիս»[2] ընդդէմ մահաբեր երկանցն, զոր կրեաց ի բերանոյ աւաւին՝ ի ձեռն ականջաց ունկնդրութեամբ խորամանգ չարին»: Եւ բացեալ զբերանն՝ բղխէր աղբիւրաբար զկենացն ջուր, զի խցցէ զբերան մահաշունչ աւաւին: Եւ յայտ առնէր, թէ մինչ լուն կայր, գործաւք ուսուցանէր, մինչ բանայր բանիւ: Եւ սկիզբն առնէր յերանութեանցն, որ է պարտութիւն ամենայն բարեաց, եւ ոչ պատուէր տայր ի հրաժարականացն հեռանալ, որպէս Ադամ եւ ապերախտիցն Իսրաէղի, զի սոքա կատարեալք էին եւ հրաժարեալք ի կրից կենցաղոյս, երանականաւքն յորդորէր զնոսա եւ յուսովք արդարութեանն հաստատէր ի գործս բարիս: Եւ, իբր ի դիտանոցէ, մատամբն ցուցանէր զերանական կեանսն անմահական դրախտին: Եւ մինչ մարմնոցն բժշկութեան էր սահման, Ինքն շրջէր եւ բժշկէր, եւ մինչ բազում եղեն ժողովք, ի միում տեղւոջ նստէր եւ կենարար բանիւն զոգիսն բժշկէր: Եւ զայն՝ ոչ ի շէնս, այլ անապատ տեղիս, զի մարդահաճութիւն մեծարգութեան ի բաց մաքրեսցէ ի մէնջ եւ յայտ արասցէ, թէ Նա է Արարիչ մարմնոց եւ հոգւոց, զի երկոցունցն տանէր խնամս բժշկութեան. եւ ոչ ընդ ժողովրդեանն խաւսէր, այլ՝ ընդ աշակերտսն, զի մի՛ ծանր թուեսցի աշխարհասիրացն աղքատութեան աւրէնս, այլ զաշակերտսն երանէ, որք հրաժարեալ էին յամենայն յ[ը]նչից եւ աղքատութեամբ շրջէին, եւ նոքաւք յորդորէր զամենեսին ընդունել զաղքատութեան երանութիւնն: Որպէս եւ Դաւիթ յերանութենէն սկսանի զսաղմոսերգութիւնն[3]՝ առ ի յորդորել զլսողն յաւժարութեամբ զհետ երթալ երանականացն գործոց: Վասն որոյ եւ Տէրն հանէ զժողովուրդն ի լեառն

1 Ձեռագրում՝ Նուսխայաերէն:
2 Յովհ. Զ 69
3 Տե՛ս Սաղմ. Ա 1:

բարձր՝ առ ի յորդորել զնոսա զհետ երթալ երանութեանցն եւ նախ սկիզբն առնել նշանացն, զի լինիցին մատաւորքն ականատեսք: Եւ զայն հաստատէ Յովհաննէս, ասէ. «Մտանէր ստէպ ի ժողովուրդս եւ ուսուցանէր եւ առնէր նշանս»[1], զի եւ ի ժողովուրդսն ստէպ մտանելով ուսուցանէ, եթէ ոչ Աստուած ոք հակառակ Աստուծոյ է կամ մոլորեցուցիչ, այլ՝ հաւան եւ միաբան Հաւր. եւ ստէպ նշանք յառաջնումն յայն սակս լինէին, քանզի յորժամ ինչ մի նոր եւ չքնաղ կամ առաքինութեանս ինչ աւրէնս կամիցի Աստուած յաշխարհի ցուցանել, նշանս սովոր է առնել, զի լինիցին առ հաւատչեայ Իւրոյ զաւրութեանն առ այնոսիկ, որք ընդունելոցն իցեն զաւրէնսն: Այսպէս եւ ի ժամանակի, յորժամ զմարդ առաջին առնելոց էր, նախ զաշխարհս ամենայն հաստատեաց, եւ ապա ետ նմա զաւրէնսն ի դրախտին: Եւ յորժամ Նոյի ետ տալոց աւրէնս, եւ անդ նախ մեծամեծ սքանչելիս եցոյց, զի վերստին իմն դղորդէին եւ նորոգէին արարածք: Եւ ահագին համատարած ծփեալ ծովն ունէր զտարի մի ողջոյն զաշխարհ: Եւ այսպէս մեծազքանչ նշանաւք ապրեցուցանէր ի ցուրտ ձմեռն ձմերայնոյն զարդարն: Եւ Աբրահամաւ բազում նշանս ցուցանէր. զյաղթութիւն, զոր յաղթեաց թագաւորացն ի պատերազմի, զհարուածսն, որ ած վասն նորա ի վերայ փարաւովնի, զի բազում անգամ ի բազում վշտաց փրկեաց զնոսա: Եւ հրէիցն, յորժամ տալոց էր զաւրէնսն, մեծամեծ նշանս եւ զքանչելիս եցոյց եւ ապա ետ զաւրէնսն: Նոյնպէս եւ աստ, քանզի բարձրագոյն առաքինութիւնս մուծանէր յաշխարհ, զոր ոչ երբէք ուրեք լուեալ էր, պիտոյ էր եւ նշանացն ընծայութիւն, զի զոր ինչ բանիւքն ասիցէ, զնոյն եւ նշանաւքն հաստատեսցէ, քանզի զարքայութիւն երկնից քարոզէր, որ ոչ ուրեք երեւէր, վասն այնորիկ երեւելի նշանաւքն զաներեւոյթսն հաստատէր: Եւ տե՛ս զաւետարանիչն, զիարդ ոչ զի մի նշանացն ուրոյն պատմէ, այլ սակաւ բանիւք զամենայն միանգամայն նշանակէ:

«Մատուցանէին,- ասէ,- առ Նա զամենայն ախտաժէտք, որք ի պէսպէս ցաւս եւ հարուածս ընդեալ էին, եւ դիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս, եւ վաղվաղակի բժշկեաց զնոսա»[2]:

Այլ զոր ինչ խնդրելն պարտ է, այս է, թէ ընդէ՞ր ոչ պահանջեաց

1 Յովհ. Զ 14
2 Մատթ. Դ 24

ի նոցանէ հաւատս, որպէս եւ յետոյ ասէր ցայլսն, ասէ. «Հաւատա՞յք, եթէ կարող եմ ես առնել զայս ձեզ»[1], քանզի չեն յայնժամ զիւրոյ զաւրութեանն ցուցեալ զհանդէս: Եւ այլազգ եւս, զի եւ գալն իսկ եւ մերձենալ ոչ սակաւ ինչ հաւատոյ ցուցանէր զնշանակ: Քանզի ի բացարձակ տեղեաց բերէին զհիւանդս, զի եթէ ոչ մեծամեծս իմանային զՆմանէ, զի՞րդ ի հեռաւոր տեղեաց գային եւ բերէին առ Նա, եթէ ոչ մեծամեծս ինչ հաստատեալ էին զՆմանէ: Վասն որոյ տանի զնոսա անապատ տեղիս եւ ի յորդոր ականացն սկսանի՝ ասելով այսպէս.

«Երանի աղքատաց հոգւով»[2]:

Աստ զխոնարհսն կոչէ «աղքատ», զի ոչ պարզաբար ասաց «աղքատս», այլ յաւելուածովն, թէ՝ «հոգւով». յայտ առնէ զխոնարհսն սրտիւ: Եւ ոչ վայրապար խոնարհ, այլ հոգւով եւ շնչով. զի են խոնարհք, որ ոչ կամաւ, այլ ի բռնութենէ: Թողեալ զայնպիսիսն, որ կամաւ եւ յաւժարութեամբ խոնարհին՝ երանէ: Եւ ընդէ՞ր ոչ խոնարհ ասէ, այլ՝ աղքատս. զի այս քան զնայն յոլովագոյն էր, եւ աստ աղքատս, որ ի հրամանացն Աստուծոյ երկնչին, կոչէ, զոր եւ Եսայիաս յայտ առնէ, թէ՝ «Յո՞ հայեցայց, թէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որք դողան ի բանից Իմոց»[3]: Եւ ոչ զվայրապար զցածութիւն մտացն խնդրէ, այլ զյոլովագոյն բեկումն սրտին: Վասն որոյ ասէ Դաւիթ, թէ՝ «Պատարագ Աստուծոյ՝ հոգի բեկեալ»[4]: Եւ երեք մանգունքն ասէին. «Այլ անձամբք բեկելաւք եւ հոգւովք խոնարհութեան[5] ընդունելի լիցուք»[6]: Զայնպիսիս Քրիստոս երանէ այժմ, քանզի յաճախութիւն չարեաց, որ զաշխարհս ապականեցին, յամբարհաւաճութենէ մտին: Վասն զի սկիզբն չարին ամբառնալն էր, եւ վասն նորին բանսարկու կոչեցաւ, որ յառաջն չէր այսպիսի, զոր եւ Պաւղոս բայցայայտէ մեզ, թէ՝ «Հպարտացեալ ի դատաստան սատանայի անկցի»[7]: Քանզի առաջին մարդն ուսուցեալ սնոտի յուսովքն թշնամւոյն պատրանաւք՝

1 Մատթ. Թ 28
2 Մատթ. Ե 3
3 Ես. ԿԶ 2
4 Տե՛ս Սաղմ. Ծ 19:
5 Ձեռագրում՝ ակոտապանովք փխ խոնարհութեան:
6 Տե՛ս Դան. Գ 39, Ա Տիմ. Գ 6:
7 Ա Տիմ. Գ 6

հպարտացեալ լինէր, մահկանացու կարծէր լինել Աստուած, եւ որ ունէրն, կորոյս, զոր եւ Աստուծոյ դրսովեալ զանմտութիւնն ասէր հենգնելով. «Ահաւադիկ Ադամ եղեւ իբրեւ զմի ի Մէնջ»[1]: Եւ յետ այնորիկ, որք ամբարտաւանութիւն մտաբերեցին՝ կործանեցան, որք զուգական Աստուծոյ տենչացան լինել, զի այս է արմատն եւ բղխումն ամենայն չարեաց, վասն որոյ [եւ ըստ] իւրաքանչիւր ախտիցն զդեղս կազմէ, զի իբրեւ հիմն ինչ հաստատուն զայս նախ աւրինագրէ: Զի յորժամ սա հաստատուն եւ զգուշութեամբ ի մէջ կայցէ, ապա եւ զայն ամենայն անխէթ ի վերայ դնէ շինողն: Իսկ եթէ սա ի միջոյ բառնայցէ, թէպէտ եւ մինչեւ յերկինս բարձրանայցէ առաքինութիւն, ամենայն դիւրաւ քակուի եւ անկցի. թէպէտ պահք իցեն կամ աղաւթք եւ սրբութիւնք եւ ամենայն առաքինութիւնք, առանց սորա խարխաքեալ կորնչին: Որպէս փարիսեցոյն դիպեցաւ, զի յետ հասանելոյն նորա, ամենայն գլուխ առաքինութեանցն կորուսեալ, զամենայն իջանէր յատակս չարութեանցն, զի որպէս աղբիւր ամենայն չարեաց ամբարտաւանութիւն է, նոյնպէս խոնարհութիւն սկիզբն եւ աղբիւր ամենայն բարութեանցն է: Վասն որոյ անտի սկիզբն առնէ արմատաքի խլել զամբարտաւանութիւն ի մտաց լսողացն: Եւ զի աշակերտքն թէպէտ եւ յայնժամ ոչ ունէին պատճառք հպարտութեան, զի աղքատք էին, այլ ի դէպ էր յետոյ, յորժամ զմեծամեծ նշանս գործէին, հպարտանալ. եւ նոքաւք զայլս եւս խրատէր. որք ի Նայն հաւատալոցն էին, նաեւ բազմութիւն ժողով՝ այն, որ շուրջ վարդապետաւ էին, ածէր զնոսա ի մեծամտութիւն: Եւ յետ այս, յորժամ յամենայն աշխարհէ զպատիւ ընդունելոց էին: Վասն որոյ վաղվաղակի խլեց այսպիսի որոմն ի մտաց նոցա եւ ոչ ի կարգի խրատուց եւ հրամանաց ճառէ, այլ՝ զերանութեանցն, զի անտ աղտ սկզբանն առնիցէ եւ ամենեցուն հորդէ ճանապարհ, զի ոչ ասէ, թէ այս անուն կամ այն, այլ թէ՝ ամենեքեան. եւ որ առնիցեն զայս, երանելիք են: Այնուհետեւ առաջ մատուցեալ ի միւս եւս պատուիրանն, որ իբր հակառակ իմն թուէր վճիռն համարէին ամենայն տիեզերաց, որք զուրախալիցսն երանելիս համարէին, եւ զայնոսիկ, որ ի տրտմութեան եւ յաղքատութեան եւ ի սուգ իցեն հեք եւ թշուառականս: Իսկ նա աւանիկ սոցա փոխանակ երանէ զսգաւորս.

1 Ծն. Գ 22

«Երանի,- ասէ,- սգաւորաց»[1]:

Թէպէտ եւ ամենեքեան եղկելիս համարին, այլ նոքա երանելիք են: Եւ վասն այնորիկ յառաջն բազում նշանս արար, զի յորժամ այսպիսի աւրէնք առդնիցէ, հաւատալի լիցի: Եւ ոչ վայրապար սգաւորքն երանէ, յայլ՝ որ վասն մեղացն իցեն ի սուգ. զի աշխարհի սուգ՝ Պաւղոս գործող մահու ասաց, իսկ ըստ Աստուծոյ տրտմութիւնն՝ ի փրկութիւն անզղջանալի ասաց[2]: *Եւ սա այսպիսեացս տայ երանի, որք ոչ վայրապար, այլ յոյժ իցեն ի տրտմութեան եւ ի սուգ, զի այսպիսի պատուիրան զգաստութեան է վարդապետ: Եւ զփոխարէնսն յաւելու, թէ «նոքա մխիթարեսցին» ե՛ւ աստ իսկ, ե՛ւ անդ: Եւ զի տաղտուկ եւ ծանրագոյն պատուիրանն, որ կարողն էր թեթեւագոյնս առնել, զայն խոստանայր տալ, զի թէ մխիթարիլ կամիս, ի սուգ մտանիջիր, զի զոր Աստուած մխիթարէ, ամենայն տրտմութիւնք հալածեալ լինին յոգւոցն, զի յոյժ առաւելութեամբ քան զվաստակս տայ զփոխարէնն Աստուած. զի որք վասն մեղացն ի սուգ իցեն, ոչ միայն զմեղսն թողու, այլ եւ երանելիս եւս առնէ եւ բազում մխիթարութեանց է արժանիս, եւ սգալ ոչ միայն վասն իւր մեղացն հրամայէ, այլ եւ վասն այլոց մեղաց, որպէս առաջին սրբոցն էր սովորութիւն:*

«Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր»[3]:

Ոմանք իմանալի իմն «երկիր» ասեն. այլ չէ այնպէս, զի ոչ գտանի ի Գիրս իմանալի ասել «զերկիր», այլ ըստ բանին հատուցումն երեւելի՝ ըստ այնմ թէ՝ «Պատուեա՛ զհայր քո եւ մայր, զի քեզ լինիցի եւ երկայնակեաց իցես»[4]. *եւ Տէրն, թէ՝ «Այսաւր ընդ Իս իցես ի դրախտին»*[5]: *Զի ոչ միայն հանդերձելաւքն, այլ եւ մաւտաւորաւքն յորդորէ զԹանձրամիտսն, զի որպէս որ յանդուգն իցեն, աստէն տանջին եւ անդէն, սոյնպէս եւ հեզքն աստէն պատուին եւ անդէն, ըստ Տեառն բանի զհարիւրապատիկն աստէն առնուն եւ բիւրապատիկն՝ անդէն:*

1 Մատթ. Ե 4
2 Տե՛ս Բ Կոր. Է 10:
3 Մատթ. Ե 5
4 Ել. Ի 12
5 Ղուկ. ԻԳ 43

«Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան»[1]:

Աստ կամ զամենայն առաքինութեանցն ասէ, կամ զմիոյ մասնէ, որ ընդդէմ ագահութեանն իցէ, զի վասն ողորմութեան պատուիրելոց էր, ցուցանէ, եթէ որպէս ողորմել պատշաճիցէ, ոչ յապշտակութենէ կամ յագահութենէ, այլ երանէ զայնոսիկ, ոյք արդարութեան փափագեալ իցեն, եւ. ոչ վայրապար ինչ յաւժարել, այլ զի եւ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեանն, զի ագահք ոչ այնչափ կերակրոց եւ ըմբելեաց ցանկան, որպէս ընչից եւ երեւելի հանդերձից: Արդ, զայսպիսի տենչանս ի բաց հրամայէ թաւթափել: Դարձեալ երեւելի հատուցմունս ասէ. «Զի նոքա յագեսցին»: Զայս վասն կարծեաց բազմաց ասեն, որք կարծեն, թէ ագահելն ընչաւէտս առնէ: Սա զնորին հակառակս դնէ, թէ արդարութիւն է, որ առնէ զայն: Եւ արդ, մի՛, յորժամ զարդարութիւնն գործիցես, յաղքատութենէ երկնչիս, զի յապշտակողն է, որ յամենայնի անկանիցի: Եւ որ արդարութեան ցանկայ, այն է, որ զամենայն ինչ ունիցի զգուշութեամբ:

«Երանի,- ասէ,- ողորմածաց»[2]:

Ինձ այնպէս թուի, թէ ոչ միայն, որ ընչիւքն ողորման [ասիցէ], այլ եւ որք իրաւք ինչ աւգնական լինին, զի բազմադիմի են ողորմութեանն աւրինակք, եւ ընդարձակ է պատուիրանս այս: Զի՞նչ է հատուցումն, ասէ. «Զի նոքա ողորմութիւն գտցեն»: Եւ թուի, թէ հասարակաց իցէ առաքինութեանն հատուցումն, բայց առաւել յոյժ մեծ է քան զուղղութիւնն, զի նոքա ողորմութիւն իբրեւ զմարդիկ առնեն, եւ ինքեանք ողորմութիւն գտանեն յամենեցունցն Աստուծոյ, որ անհամեմատ է մարդկային ողորմութեան, զի աստուածական է:

«Երանի ոյք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»[3]:

Ահա դարձեալ հոգեւոր հատուցումն. «սուրբ» զայն կոչէ, որ զամենայն առաքինութիւնս կատարեն եւ ոչ ինչ գիտիցեն խնդճ զանձնէ եւ որ ցածութեամբ եւ զգաստութեամբ վարիցին, զի չիք ինչ քան զայն պատշաճագոյն առ ի զԱստուած տեսանելոյ, իբր զայս առաքինութիւն: Որպէս Պաւղոս ասէ. «Զխաղաղութեան զհետ երթայք եւ

1 Մատթ. Ե 6
2 Մատթ. Ե 7
3 Մատթ. Ե 8

զսրբութեան, զի առանց այսր ոչ ոք տեսանէ զԱստուած»[1]: Իսկ երեսս աստ զմարդկեղէն կերպարանաց Նորա ասէ, զի ոչ ոք Աստուածութեանն կարէ տեսանել: Եւ զի բազումք ողորմութիւն առնեն եւ չզրկեն զոք եւ չյապշտակեն, բայց պոռնկին եւ պղծին, զի ցուցցէ, թէ չէ բաւական առաջինն միայն, յաւելու եւ զայն եւս, որպէս Պաւղոս մակեդոնացւոցն վկայէր, թէ ոչ միայն ողորմութեամբն առատանան, «այլ եւ զանձինս եւս ետուն նախ Տեառն եւ ապա՝ մեզ»[2]:

«Երանի խաղաղարարաց»[3]:

Աստ ոչ միայն զկռուելն արգելու, այլ զի եւ զայլս եւս, որք կռուեցին, ածել ի հաշտութիւն: Դարձեալ եւ աստ եւս տրիտուր խոստանայ. «Զի նոքա,- ասէ,- որդիք Աստուծոյ կոչեսցին»: Նաեւ Միածին իսկ Որդւոյն Աստուծոյ սոյն գործ եղեւ, զի ժողովեսցէ զցրուեալսն եւ ածցէ ի հաշտութիւն զպատերազմողն: Եւ զի մի՛ կարծիցես, թէ ամենայն ուրեք խաղաղութիւնն բարեւաք իցէ, յարէ նոյն, թէ՝

«Երանի ոյք հալածեալ իցեն վասն արդարութեան»[4]:

Այն իսկ է, յորժամ վասն առաքինութեան կամ վասն այլոց վերակացութեան կամ վասն աստուածպաշտութեան ոք ճգնիցի, քանզի արդարութիւն միշտ զամենայն առաքինութիւնս ուղղոցն սովոր են կոչել Գիրք: Եւ աստ եւս հոգեւոր հատուցումն դնէ. «Զի նոցա է,- ասէ,- արքայութիւնն երկնից»: Ի ժամանակի իբրեւ տայր Տէր մեր զերանութիւնս ընդ աշակերտսն հայէր.

«Բարձ,- ասէ,- Յիսուս զաչս Իւր առ նոսա եւ սկսաւ ասել. երանի աղքատաց յոգիս իւրեանց»[5]:

Աղքատք, որք թարթափեցան յ[ը]նչից իւրեանց եւ գանձեցին յոգիս իւրեանց: Իսկ սոքա միմեանց հակառակեն՝ ըստ առաքելոյ սահմանի, թէ յղփանայ մարմին ընչիւք, լնու զոգիսն ամենայն չարեաւք[6]: Իսկ յորժամ յաղթահարէ հոգի զմարմին եւ թափուր առնէ յամենայն

1 Եբր. ԺԲ 14
2 Բ Կոր. Ը 5
3 Մատթ. Ե 9
4 Մատթ. Ե 10
5 Մատթ. Ե 2
6 Հմմտ. Հռոմ. Ը 6, ԺԳ 14, Գաղ. Ե 17:

յեշտութեանց եւ ի մարմնական զբաղմանց, աղքատանայ ինքն ի չար արգասեաց եւ փարթամանայ հոգեւոր գանձիւք: Արդ, զայսպիսի աղքատս երանէ Տէրն, որոց ոգիքն են աղքատք յամենայն չարեաց եւ լի ամենայն արդարութեամբ, զի մարմնոյ փարթամութիւն ծանրացեալ ի վայր քարշէ յանդունդս կորստեան, որպէս կապար ի ջուրս սաստիկս, իսկ փարթամութիւն ոգւոցն ի վեր թռուցանէ իբր զամպս եւ իբրեւ զձագս աղաւնեաց: Վասն որոյ ոչ պարզաբար երանեաց զաղքատս, այլ յաւել՝ «զհոգւովն», որոց ոգիքն աղքատ ի չարեաց են եւ փարթամք արդարութեամբ: Եւ զի մի՛ միայն միով առաքինութեամբ բարձրասցին, յաւել եւ զմիւսն եւս.

«Երանի,- ասէ,- հեզոց»[1]:

«Հեզ էր Մովսէս քան զամենայն որդիս ազգին իւրոյ»[2]: Եւ՝ «Յո՞յ հայեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս սրտիւ»[3]. եւ՝ «Յիշեա՛, Տէ՛ր, զԴաւիթ եւ զհեզութիւն նորա»[4]. եւ՝ «Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց»[5]: Զի բարկութիւն ախտ է բնական եւ ընդդոյին, որ իբր վառի, հրդեհեալ ապականէ զամենայն բնութիւն՝ ամբոխեալ զաւրէն մրրկի, որ խռովէ զծով: Որ ոք հեզութեամբ շիջուցանէ զնա, պսակի ընդ երից մանկանցն, որ շիջուցին զբաբեղովնական հնոցն[6]: Եւ հատուցումն, ասէ, ժառանգել զերկիր. աստէն զգուշացեալ կենաւք խաղաղականաւք կեց[ց]են երանեալք յամենեցուն, եւ զերկիրն կենդանեաց յերկրորդումն ժառանգեսցեն[7]:

«Երանի որ սգայցեն այժմ»[8]:

Զի բոլոր աշխարհս անոգաբար ոչ գիտեն զինչ գործեն եւ յորպիսի յիմարութիւն ըմբռնեցան: Արդ, որ սգան[9] զկնանս իւրեանց եւ զմտաւ ածեն, թէ յորպիսի բարձրութենէ խոնարհեցան եւ ապշեցան,

1 Մատթ. Ե 5
2 Թիւ. ԺԲ 3
3 Ես. ԿԶ 2
4 Սաղմ. ՃԼԱ 1
5 Մատթ. ԺԱ 29
6 Տե՛ս Դան. Գ 20-51:
7 Հմմտ. Սաղմ. ԼԶ 11:
8 Մատթ. Ե 4
9 Ձեռագրում՝ զգան:

նոքա միշտ ի սուգ տխրութեան կան, եւ կատարի այն՝ «Թէ ընդ Նմին չարչարիմք, ընդ Նմին եւ փառաւորիմք»[1], զի չարք անզգաբար կեան այժմուս զաւրէն անասնոց ըստ Դաւթայ, թէ՝ «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անզգայից»[2], իսկ իմաստունք զգացեալք ընդունին զերանութիւն ի Տեառնէ:

«Երանի,- ասէ,- որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան»[3]:

Իբրեւ զայն, զի ասէ. ոչ քաղցեալ հացի եւ ծարաւի ջրոյ, այլ՝ բանից Տեառն: Որպէս որք յոյժ սովեալ իցեն, մոռանան զոսկի եւ արծաթ եւ զամենայն փառս աշխարհի եւ բաղձան միայն լնուլ զպէտս քաղցին, սոյնպէս քաղցեալք արդարութեան պատուիրանին արհամարհեն զամենայն կեանս աշխարհի եւ ոչ երբէք յադին բարեպաշտութեամբ կենաւք, մինչ են յաշխարհի, այլ յորժամ հասցեն ի կէտն եւ ընգալցին զերանութիւն ի Տեառնէ, թէ՝ «Նոքա յագեսցին»:

«Երանի ողորմածաց»[4]:

Զի չիք այլ ինչ յառաքինութեանց, որ ի նմանս Աստուծոյ առնէ զմեզ, որպէս ողորմածութիւն, որ ի սրտէ լինի եւ ոչ յերեւելիս՝ ըստ Տեառն հրամանի, թէ՝ «Եղերո՛ւք նմանողք Հաւրն ձերոյ, որ հասարակաբար եւ ոչ խրատանաւք ծագէ զարեգակն եւ ածէ անձրեւ չարաց եւ բարեաց, արդարոց եւ մեղաւորաց»[5]: Եւ յայսմիկ եղերո՛ւք դուք կատարեալք, որպէս Հայրն ձեր երկնաւոր, եւ գտջիք հատուցումն ողորմութեան հանդիպեալ, զի Նմա նման լինիցիմք, որպէս ասաց Յովհաննէս:

«Երանի որ սուրբ իցեն սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»[6]:

Այն իսկ է, զոր խնդրեաց Դաւիթ. «Սիրտ սուրբ հաստ[ատ]եա՛ յիս, Աստուա՛ծ»[7]: Արդ, որոց սիրտ իւրեանց սուրբ է, եւ նոքա զԱստուած տեսանեն, որպէս Մովսէս, զի սիրտն անդամ ոգւոյն է եւ ոչ դադարէ ի խլրտելոյ եւ ի կենաց: Եւ եթէ սուրբ իցէ, առաքէ զսրբութիւն իւր ամենայն անդամոց: «Ի սրտէ,- ասէ,- ելանեն ամենայն չարութիւնք խորհրդոց»[1]: Եւ Տէրն ասէ զարատ հայեցողացն, թէ շնացաւ ոչ զգայարանաւքն, այլ՝ ի սրտին գործարանի[2], զի նա շտեմարան ընդունող ամենայն չարեաց արտաքուստ ի ձեռն տեսարանաց եւ աղբիւրաբար բղխէ զչարիսն, զոր ընկալաւ արտաքուստ: Եւ նոյն լինի աղբիւր կենաց՝ ընդունելով ի պատուիրանացն Աստուծոյ զշնորհս Հոգւոյն, եւ լինի խաղաղասէր առ ամենեսեան: Վասն որոյ յարէ ի նոյն, թէ՝ «Երանի խաղաղարարաց»[3], զի նմանեն Որդւոյն Աստուծոյ, զի Նա արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի ոչ դոյզն[4] սգաբար, այլ՝ արեամբ խաչին Իւրոյ, որպէս երգէին հրեշտակք. «Փա՛ռք ի բարձունս երկնաւորաց եւ խաղաղութիւն մարդկան յԱստուծոյ»[5]: Եւ պատուէր տայր աշակերտացն. «Յոր տուն մտանիցէք, ասասջիք նախ, թէ՝ ողջո՛յն տանս այսմիկ»[6]: Արդ, խաղաղասէրք որդիք Աստուծոյ են, որպէս ռազմասէրք[7]՝ որդիք սատանայի, զի նա արկ զխռովութիւն ի մէջ մարդկան եւ բանսարկու անուանեցաւ: Եւ խռովասէրք որդիք սատանայի են եւ կատարիչք կամաց հաւրն իւրեանց, որպէս որդիք Աստուծոյ կատարիչք են կամաց Հաւրն երկնաւորի՝ ըստ այնմ եթէ՝ «Որք Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ»[8]: Եւ զի մի՛ կարծիցես, եթէ ամենայն ուրեք խաղաղասէրն լինել բարի իցէ, վասն որոյ յարէ ի սոյն, թէ՝

«Երանի իցէ, ոյք հալածեալ իցեն վասն արդարութեան»[9]:

Իբր զայն, զի ասէ. «Հալածիցեն զձեզ եւ մատնիսցեն»[10]: Եւ ոյք կամիցին կեալ աստուածպաշտութեամբն Յիսուսի Քրիստոսի, եւ նոքա ի հալածանս կայցեն: Վասն որոյ եւ առաքեալքն իբրեւ անարգեցան, ուրախ եղեն, ասէ, զի արժանի եղեն, ասէ, անարգանս կրել վասն

1 Հռոմ. Ը 17
2 Սաղմ. ԽԸ 13
3 Մատթ. Ե 6
4 Մատթ. Ե 7
5 Մատթ. Ե 45
6 Մատթ. Ե 8
7 Սաղմ. Ծ 12

1 Մարկ. Է 21
2 Մատթ. Ե 28
3 Մատթ. Ե 9
4 Ձեռագրում՝ գուզն փխ դոյզն:
5 Ղուկ. Բ 14
6 Մատթ. Ժ 12, Ղուկ. Ժ 5
7 Ձեռագրում՝ խազմասէրք փխ ռազմասէրք:
8 Հռոմ. Ը 14
9 Մատթ. Ե 10
10 Մատթ. Ե 11

անուան Նորա: Որպէս պատուիրեաց նոցա, ասէ. «Ցնծացէ՛ք եւ ուրա՛խ լերուք յայնմ աւր, զի վասն Իմ անարգեցայք եւ ընդ Իս փառաւորիջիք»[1]:

«Վա՛ռ[յ] ձեզ մեծատանցդ»[2],- ասէ, եւ ոչ եկաց յայսմիկ, զի մի՛ մնասցէ նա առ ամենայն մեծատունս, զոր աւրինակ իբրեւ ասաց. «Երանի աղքատաց»[3], յաւել, թէ՝ «յոգիս իւրեանց», զի մի՛ ձգեսցի նա ի վերայ ամենայն աղքատաց: Սոյնպէս եւ յասելն. «Վա՛յ ձեզ մեծատանցդ», այս[ինքն]՝ որոց այս եւեթ իցեն խնդրուածք իւրեանց եւ միտք իւրեանց թաղեալ իցեն ի սմա: Արդ, ոչ եթէ անուամբք բարեաց եղեն խոստացեալ երանութիւնքն, այլ՝ առնելեաց երանութեանցն զանուանս ամենայն ոք կարէ ստանալ, որովք պատճառանաւք եւ իցէ, այլ գործ անուան առ այն մերձ է, որ ինչ կամի, եթէ իցէ ի վերայ նորա անուն առաւելութեան կարծեաւք միայն եւ ոչ արդեամբք: Արդ, խոստացաւ Նա միմիայն երանութիւն միոյ միոյ գործոց առնլոյ վարձ՝ աշխատութեամբ հանդերձ, եւ հատուցումն՝ գործաւք հանդերձ, եւ ցասումն՝ պակասութեամբ հանդերձ, եւ պատիժս՝ յանցանաւք հանդերձ:

«Երանի իցէ ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն Իմ»[4]:

Կամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ ժանդագործս կամ այլ ինչ չարութիւն. երանի իցեն ձեզ: Զինչ կայցէ այլ ինչ այնպիսի նորընծայ հրամանք, յորժամ որ սոսկալի իցէ, զայն տենչալի վարկանել. աղքատանալ, ի սուգ մտանել, հալածական լինել, անարգանս ընդունել: Բայց սակայն ասաց եւ հաւանեցոյց ոչ զսակաւսն, այլ՝ զամենայն տիեզերս, զի լսեն զծանրատաղտուկսն եւ զհակառակս սովորութեան կենցաղոյս եւ խնդութեամբ ընդունին: Որպէս եւ յայնժամ եւ զի զարմանային եւս ընդ վարդապետութիւն Նորա, զի բազում էր զաւրութիւն Ասողին, զի մի՛ կարծիցես, եթէ վայրապար չարաց բանից լսելոյ տացէ երանութիւն, երկուս կէտս դնեմք. յորժամ վասն Նորա իցէ, եւ միւս եւս՝ յորժամ սուտ իցեն բանքն: Ապա եթէ որ այսպէս

1 Մատթ. Ե 12
2 Ղուկ. Զ 24
3 Մատթ. Ե 3
4 Մատթ. Ե 11

իցէ, եղկելի է քան ամենեսեան: Եւ ասէ զտրիտուրն.

«Վարձք ձեր,- ասէ,- բազում են յերկինս»[1]:

Զի թէպէտ եւ այլ եւ այլ են զանազանեալ ի միմեանց պարգեւքն, այլ զամենայն յարքայութեանն ընդունին որպէս ի միում երկնի են լուսաւորք, այլ ոչ միով պայծառութեամբ. այլ յամեն զանազանեալք ի միմեանց՝ ըստ առաքելոյ ցուցման: Այսպէս եւ արդարքն, որք մի մի ընկալան զերանութիւն ըստ իւրաքանչիւր գործոց: Ածէ զսովիմբ եւ զմխիթարութիւն եւս.

«Զի այսպէս,- ասէ,- հալածէին զմարգարէսն, որ յառաջ քան զձեզ էին»[2]:

Եւ զի արքայութիւնն առյապա էր, եւ յուսով ակն ունել ի հասարակաց վշտակից լինելոյն, ընդ մարգարէս տայ նոցա զմխիթարութիւնն: Մի՛ ինչ կարծիցէք, ասէ, թէ հակառակս ինչ Աստուծոյ խաւսիցիք եւ աւտարոտի պատուիրանս դնիցէք եւ վասն այնորիկ չարչարիցիք եւ չարաց կրաւնից իցէք վարդապետք եւ վասն այնորիկ հալածիցիք ի հրէից, քանզի ոչ եթէ ի չարութենէ բանից ասողացն, այլ ի լսողացն չարութենէ գան ի վերայ ձեր նենգութիւնք եւ վիշք: Վա[սն] որոյ ոչ զձեզ, այլ զնոսա, որ զչարչարանսն ածիցեն, ի վերայ ձեր դատապարտիցին: Եւ վկայեն այդմ առաջին ժամանակքն, զի ոչ եթէ զանաւրէն կրաւնս կամ Աստուած ընդ Աստուծոյ փոխանակ մուծանէին եւ վասն այնորիկ բամբասէին, զի ոմանս հալածէին եւ զայլս քարկոծ առնէին եւ այլ բազում չարչարանաւք չարչարէին: Եւ արդ, մի՛ ինչ զձեզ խռովեցուցցէ, զի նովին մտաւք եւ այժմ զձեզ հալածեն: Տե՛ս ուր տարաւ կացոյց՝ մատ առ Մովսէսի եւ Եղիայի: Որպէս Պաւղոս Թեսաղոնիկեցոյցն ասէր, թէ՝ «Դուք չարչարեցայք ի ձերոցդ, որպէս հրեայքն յիւրեանց ազգէն, որք եւ Տէր Յիսուս սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ հալածեցին եւ ամենայն մարդկան հակառակ կան, զի մի՛ ապրեսցին»[3], զոր եւ աստ իսկ յաւրինեաց Քրիստոս, զի յայլ երանութիւնսն հասարակաբար երանեաց, թէ որք եւ իցէ աղքատ կամ ողոր[մ]ած, երանէ: Իսկ աստ յատկաբար առ աշակերտսն շրջէ զբանն եւ ասէ.

1 Մատթ. Ե 12
2 Նույն տեղում
3 Ա Թես. Բ 14-15

«Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն եւ ասիցեն բան չար զձէնջ»[1]:

Եւ այս առ նոսա առաւել [իմն էր այն եւ առ], այլ [առ] ամենայն վարդապետս սեպհական: Եւ զի[ւր իսկ] պա[տիւն] եւս ակնարկէ ընդ ծնողին զհանգիտապատիւ զուգականութիւնն: Զի որպէս մարգարէքն՝ վասն Հաւր, նոյնպէս եւ դուք վասն Իմ չարչարիցիք: Եւ յասելն, թէ՝

«Մարգարէքն, որ յառաջ քան զձեզն էին»[2],

եցոյց, թէեւ նոքա անդէն մարգարէք եղեն, եւ յայտնէր, թէ այս իսկ առաւել երանելի առնէ զձեզ: Ոչ ասաց, եթէ չստախաւսեսցեն եւ հալածիցեն, եւ Ես արգելից չլսել ձեզ անարգանս, այլ ի լսելոյ զանարգանս եւ առաքինութեամբ տանելոյ գործի լաւութիւն, զի ոչ չարչարելն միայն, այլ չարչարելն եւ ոչ լքանելն մեծի քաջութեան: Եւ ոչ միայն զբամբասելսն վասն Աստուծոյ երանէ, այլ եւ զգովեալսն յամենեցունց եղկելի համարի եւ վայ տայ: Նաեւ զառաքեալսն գովէին, այլ ոչ ամենեքեան, զի ոչ ասաց պարզաբար, թէ՝ «Եւ յորժամ բարի ասացեն ձեզ», այլ յաւել, թէ՝ «ամենայն մարդիկ»[3], *զի չէ հնար առաքինեացն ամենայն մարդկան եւ գովեստ ընդունել: Եւ դարձեալ ասէ, թէ՝*

«Յորժամ հանիցեն զձէնջ անուն չար, ցնծասջի՛ք»[4],

զի ոչ միայն վասն ճգանցն, այլ եւ վասն բա[մ]բասանացն առնուցուք վարձս: Զի ոչ ասաց, թէ յորժամ հալածիցեն եւ սպանցեն զձեզ, այլ թէ՝ «Յորժամ նախատիցեն եւ ասիցեն զամենայն բան չար սուտ զձէնջ», զի քան զտանջանսն չար բամբասանքն են[5], *զի ի ճգունսն բազում ինչ է, որ մխիթարէ. բազմացն խրախոյս տալ, մաւտակացացն՝ յարգանք, պսակացն յոյսն*[6], *անուանի զքարոզելն, իսկ չարախաւսութեանն չիք ինչ մխիթարութիւն եւ չերեւի, թէ մեծ ինչ ուղղութիւն իցէ, եւ առաւել քան ճգունսն զկծեցուցանէ զպատերազմողն, զի եւ*

1 Մատթ. Ե 11
2 Մատթ. Ե 12
3 Մատթ. Ե 11
4 Նոյն տեղում
5 *Տողամիջում՝* Ն:
6 *Տեղին ակնյայտորէն աղաւաղուած է. Ոսկեբերանի մօտ՝* պսակս ճմա մատուցանել (էջ 220):

բազումք առ չժուժալ նախատանացն ի խեղդ [...][1] *մտաբերեսցեն, զի եւ զՅուդայ այնպիսի քար[ուականք] ամաւթն սխալանացն հանդիպեցոյց: Եւ Յովբ, որ աղամանդեայն էր, եւ զամենայն*[2] *զարմ եւ զկարասի [...]*[3] *արհամարհեաց եւ զցաւս անձինն ի նախատել բարեկամացն զչարէր եւ զայրանայր նահատակն: Եւ Դաւթայ թողեալ զամենայն վիշտսն ընդ բա[մ]բասանացն վրէժխնդիր կոչէր զԱստուած. «Թո՛յլ տուր,- ասէ,- դմա անիծանել, զի Տէր այնպէս հրամայեաց դմա, զի տեսցէ զվիշտս իմ եւ հատուցէ ինձ բարի փոխանակ անիծից դորա այսր աւուր»*[4]: *Եւ Պաւղոս ոչ միայն զճգնեալսն, այլ եւ զբա[մ]բասեալսն յարգէ. «Յիշեցէք,- ասէ,- զաւուրսն առաջին, յորս բազում ճգանց համբերեցիք հալածանաց եւ նախատանաց»*[5]: *Վասն այսորիկ եւ Քրիստոս մեզ վարձս խոստացաւ ընդ նախատանացն: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ աստ վրէժ ոչ խնդրեաց, զիարդ անգիտայցէ վարձս, զնէ զմարգարէսն ի միջի. թէ և՛ոչ զնոցա վրէժ խնդրեաց Աստուած, զի թէ ուրանաւր առ ոտս խնդրէին վրէժք յաւրինացն, ի հանդերձեալսն կրթէր Աստուած զմարգարէսն՝ որչափ եւս առաւել աստ, յորժամ լուսաւորագոյն եւ մեծ եղեւ յոյսն, առաւել զգաստութիւն պահանջէ ի մէնջ: Եւ տե՛ս որչափ պատուիրան ետ յառաջ եւ ապա գայ յետոյ յայս, զի ցուցցէ, եթէ ոչ նախ կրթեսցի, այսու ամենայնիւ չէ հնար յայլ եւս նահատակութիւնս*[6] *ելանել: Վասն այնորիկ յառէ մեն*[7] *յայլս հորդէ ճանապարհ պատուիրանաց իբրեւ շատ ոսկի տողեալ զպատուիրանսն: Զի յորժամ խոնարհ ոք իցէ, յայտ է, թէ ի սուղ իցէ վասն մեղացն, իսկ որ սգաւոր իցէ եւ հեզ, յայտ է, եթէ արդար է եւ ողորմած: Իսկ ողորմածն եւ արդարն յայտ է, թէ մտախորհ*[8] *եւ սուրբ իցէ սրտիւ: Իսկ այնպիսին պատշաճ է, եթէ խաղաղարար իցէ, իսկ որ զամենայն ուղղութիւնսն յանձին ցուցանիցէ, այնպիսին եւ առ ճգունս պատրաստագոյնս գտանիցի եւ ոչինչ խռովի, յորժամ բամբա-*

1 1 բառ
2 *Վերին լուսանցքում՝* աղն:
3 1 բառ
4 Ի Թագ. ԺԶ 11-12
5 Եբր. Ժ 32
6 *Ձեռագրում՝* նախնատակութիւնս:
7 *Ձեռագրում՝* այսպէս:
8 *Տողամիջում՝* ր:

սանաց լուիցէ: Եւ ոչ ի բիւր չարչարանաց ինչ դանգատի: Եւ յորժամ կրթեաց պատշաճ խրատուքն, դարձեալ մխիթարէ զնոսա յարգանացն դովութեամբ: Եւ զի բարձրագոյն հրամանք էին եւ մեծամեծ քան յառաջնոցն, եւ զի խռովեսցեն ինչ եւ ասիցեն, թէ՝ զիա՞րդ կարիցեմք զայսպիսի ուղղութիւնս յանձին ցուցանել, լո՛ւր զինչ ասէ.

«Դուք էք,- ասէ,- աղ երկրի»[1]:

Եւ զայսպիսի հրամանս տայ ստէպ, զի ոչ միայն վասն անձին ինչ կենաց, այլ եւ վասն ամենայն աշխարհաց լինիցիք պիտանիք, զի ոչ մի ազգ կամ ի սակաւ քաղաքս առաքեմ զձեզ որպէս զմարգարէսն, այլ՝ ընդ ծով եւ ընդ ցամաք մինչեւ յոլորտս աշխարհաց, որք յար ի յարմարի եւ ի չարիս եւեթ կայցեն: Նաեւ ասելովն, թէ՝ «Դուք էք աղ երկրի», յայտ առնէ, թէ անհամեալ էր ամենեւին ամենայն բնութիւն մարդկան եւ փտեալ հարեալ էր ի մեղացն հարուածոց: Վասն այսորիկ զայսպիսի առաքինութիւնս ի ձէնջ պահանջեմ, որ մանաւանդ առ ի դարման կարող իցեն լինել պիտանացուք բազմաց: Զի յորժամ հեզ եւ խոնարհ եւ ողորմած լինիցի, ոչ յիւր անձն միայն կորզիցէ զուղղութիւնսն, այլ առ ի բազմացն աւգուտ, զի գեղեցիկ զայսպիսի աղրիւրս պեղէր բղխել ջուր յստակ, զի յորժամ սուրբ եւ հալածեալ իցէ, եւ առ հասարակաց շահսն ուղղիցէ զիւր կեանսն: Մի՛ այնուհետեւ ի սակաւ ճգունս ձգեալ զձեզ համարիցիք եւ մի՛ վասն դոյզն ինչ իրաց կարծիցէք, զոր պահանջեմք ի ձէնջ: Այլ «դուք էք աղ երկրի», ո՛չ զի զնախութիւն աստէնից համեմիցէք, զի չէ հնար նեխեալ ի մէջ աղի սա դնել, այլ որ ինչ նախ նոր աղիցէ: Եւ ի չար հոտոյն [սրբեցաւ] եւ աւանդիցի ձեզ, զայն յաղեալ ունիցէք, պինդ եւ պահիցէք, զի նորոգել ի փոութենէ մեղացն՝ Իմոյ զաւրութեան եւ ուղղութեան է գործ, եւ անդէն չդառնալ յապականութիւն մեղացն՝ ձերոյ փութոյ եւ տառապանաց է գործ, զի այսու ցուցանէ զնոսա ազնուականագոյնս քան զմարգարէսն, զի ոչ միայն Պաղեստինայ, այլ ամենայն աշխարհաց էին վարդապետք՝ ոչ վայրապար, այլ ահագինք: Եւ զարմանք այն էին, զի ոչ ողոքէին զոք: Եւ ոչ հպատակէին ումեք, այլ եւ կսկծեցուցանէին եւս իբրեւ զաղ: Եւ նոյնպէս ցանկալի ամենեցուն լինէին: Եւ ընդ այն մի՛ զարմանայք, ասէ, զի զայլս թողեալ ընդ ձեզ եւեթ խաւսիմ եւ ի մեծամեծ ճգունս հանեալ տանիմ: Այլ ընդ այն զարմացա-

1 Մատթ. Ե 13

ցուք, թէ որչափ քաղաքաց եւ ազգաց առաքելոց եմ զձեզ վերակացուս եւ ոչ զայն կամիմ, թէ դուք միայն եւեթ իցէք իմաստունք, այլ զի եւ զայլս եւս բազումս իմաստագոյնս առնիցէք, զի զայնպիսեացն պարտ է յոյժ իմաստունս լինել, զորոց փրկութիւն այլոցն կայցէ կախեալ: Եւ այնպիսեացն յաճախագոյն պիտոյ է ունել յանձին զառաքինութիւն, զի յայլսն եւս փոփոխիցէ զշահսն, զի թէ այնպիսիք ոչ լինիցիք, եւ ոչ անձանց իսկ կարիցէք աւգուտ գործել: Արդ, մի՛ դժուարիցիք, թէ թախանձելիք իցեն բանքս, զի այլոց անհամելոց մարթի գալ ձեւք ի համաստութիւն: Բայց թէ դուք այնպիսիք չլինիցիք, ընդ ձեզ եւ զայլս կորուսանէք, զի որչափ մեծ ինչ յանձն առնոյք, նոյնչափ փոյթ պարտիք յանձին ցուցանել: Վասն որոյ ի վերայ բերէ.

«Թէ աղն անհամիցի, ի՞ւ յաղեսցի»[1]:

Զի ոչ իմիք այնուհետեւ յաղթիցէ, բայց եթէ՝ ընկենուլ արտաքս եւ կոխան լինել ի մարդկանէ: Զի այլս թէպէտ եւ բիւր անգամ անկանիցին, կարեն հասանել ներելոյ թողութեան: Իսկ վարդապետ ոք, որ զնոյն ախտ ախտանայցէ, յամենայն պատասխանոյ զրկեալ գտանիցի եւ զվերջին պատժոցն տուժեալ տայցէ տակոսիս: Զի յորժամ լսիցեն, թէ իբրեւ նախատիցեն եւ հալածիցեն եւ ասիցեն բան չար զձէնջ, մի՛ զանգիտիցէք ինչ ի մէջ առեալ, ասէ, զի եթէ ոչ առ այս ամենայն պատրաստական գտանիցիք, ի զուր է ընտրութիւնն ձեր: Զի ոչ ի բամբասանաց ասաց պարտ է երկնչել, այլ զկեղծաւորակիցսն գովելոյ, այն է՝ կասկածանաց: Եւ յայնժամ անհամիցիք, ասէ, եւ լինիցիք կոխան, ապա եթէ կայցէք հաստատուն առ ի կսկծեցուցանել իբրեւ զաղ: Յորժամ բանս չարս լսիցէք, ուրա՛խ լերուք, զի այն իսկ է գործ աղի՝ կսկծեցուցանել զլոյծսն[2], որում հարկ իսկ է ստէպ զհետ գալ բամբասանացն, որ ոչ ինչ կարեն ստնանել ձեզ, այլ եւ վկայիցեն իսկ հաստատութեան ձերոյ: Ապա թէ երկուցեալ ի ձեռս տայցէք զպատճառս առաքինութեան ձերոյ, եւս ահագին կրիցէք անարգանս, զի եւ բամբասիցիք եւ արհամարհեալք յամենեցունց լինիցիք, զի այն իսկ է կոխան լինել ի մարդկանէ: Ապա յայլ եւս բարձրագոյն աւրինակս հանեալ՝ ասէ.

1 Նոյն տեղում

2 Ձեռագրում՝ զլոյծսն:

«Դուք էք լոյս աշխարհի»[1]:

Ոչ միում ազգի ասէ, այլ՝ ամենայն տիեզերաց լոյս իմանալի էք եւ առաւել պայծառագոյն քան արեգական ճառագայթս: Եւ զոր աւրինակ աղն հոգեւոր, նոյնպէս եւ լոյսն հոգեւոր. եւ նախ՝ աղ, եւ ապա՝ լոյս, զի ուսանիցիս, թէ որչափ լաւ իցէ բանիցն կսկծելեաց է աւգուտ ի լուսաւոր վարդապետութենէն, զի եւ պնդէ եւ չտայ ժողխել եւ լուսաւորէ եւ յառաքինութիւնս առաջնորդէ:

Վասն որոյ ասէ. «Դուք էք լոյս աշխարհի»: Եւ զոր աւրինակ հաղորդութեամբ ականն արեգական երեւի ամենայն, որ ի մէջ երկնի եւ երկրի իցէ, այսպէս եւ Կենարարն Լոյս է կենդանեաց: Եւ յորժամ հաղորդի Նա ընդ միտս մեր, վերացուցանէ զնա ի բարձունս եւ ցուցանէ նմա զծածկեալսն եւ իջուցանէ զնա խորս եւ յայտնէ նմա զգաղտնիս: Եւ վասն այսորիկ ասէ՝ լոյս էք դուք աշխարհի եւ աղ էք դուք երկրի փոխանակ Ադամայ, որ եղեւ խաւար հաղորդութեամբ ամբարձեցելոյ խաւարին: Եւ աղ էք դուք երկրի փոխանակ նախաստեղծ մարդոյն, որ եղեւ հող՝ կերակուր աւձին՝ իւրոյ պատրողին: Արդ, արար Տէր մեր աղ զաշակերտսն Իւր կուրացուցիչ աւձին եւ մահացուցիչ ի ճաշակս նորա, զի եղեն նոքա ի նմանութիւն աղի ի վերայ պղծոց եւ ի նմանութիւն լուսոյ առ ի զսուրբս լուսաւորել:

«Ոչ կարէ,- ասէ,- քաղաք թաքչել, որ ի վերայ լերին կայցէ: եւ ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ»[2]:

Դարձեալ եւ այսուիկ առաջնորդէ նոցա ի վարուցն հաստատութիւն եւ խրատէ կասկած կալ, որպէս թէ առաջի աչաց ամենեցուն կայցէ եւ ի մէջ ամենայն տիեզերաց կամ թատերաց պատերազմելք, մի՛ յայս եւեթ հայիցիք, զի այժմ աստ նստիմք ի միում անկեան աշխարհի, զի այնպէս լինելոց էք երանելիք, որպէս քաղաք, որ ի վերայ լերին կայցէ, եւ իբրեւ ճրագ ի վերայ աշտանակի յայտնի: Տես [...][3] յիւրեանց աշխարհին չէին ումեք ծանաւթ. ընդ ամենայն երկիր եկ բարբառ նոցա[4] *եւ ոչ միայն բարբառք, այլ եւ զաւրութիւնք շնորհաց նոցա. եւ ոչ թէ բարբառքն առնէին զնոսա յայտնիս, այլ գործոցն*

1 Մատթ. Ե 14
2 Մատթ. Ե 14-15
3 1 բառ
4 Հռոմ. Ժ 18

հանդէսք առաւել քան զարեգական ճառագայթս ընթացեալ՝ ընդ ամենայն տիեզերս սերմանէին զաստուածպաշտութեան լոյս, բայց եւ ի համարձակութիւն իսկ կրթէ զնոսա այսուիկ՝ ասելովն, եթէ՝ «ոչ կարէ քաղաք թաքչել»: Եւ այսու զիւր զաւրութիւնն յայտ առնէ, զի որպէս քաղաքի անմարթ է թաքչել, սոյնպէս եւ քարոզութեանն անհնար է լռել: Քանզի ասաց բամբասանս եւ հալածանս, զի մի՛ կարծիցեն, եթէ այն ինչ կասեցուցանել կարիցէ զնոսա: Քաջալերէ զնոսա եւ ասէ, թէ՝ ոչ միայն ոչ թաքչիցիք, այլ հասեալ ժամանիցէք ընդ ամենայն տիեզերս. եւ այսու զիւր զաւրութիւնն յայտ առնէ, իսկ յաջորդաւն զնոցա համարձակութիւնն պահանջէ: Ասէ. «Ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ՝ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն, որ ի տանն իցեն»: Այսպէս լուսաւորեսցէ լոյս ձեր: Ես լուցի, ասէ, զճրագն, այլ պահել անշէջ՝ ձերում փութոյ գործ լիցի՝ ոչ վասն ձեր միայն, այլ եւ վասն այլոց, որ վայելելոց իցեն դովին լուսաւորութեամբ եւ առաջնորդելոց ի ճշմարտութիւն: Զի ոչ կարիցեն բամբասանք ծածկել զձեր լուսաւորութիւնն, թէ դուք իցէք ի ճշմարիտ վարս եւ այնպէս կարող լինիցիք դարձուցանել զտիեզերս, յորժամ արժանի շնորհացն ցուցանիցէք վարս, զի որպէս նա ընդհանուր քարոզիցէ, նոյնպէս ընդ նմին համերասանակ ընթայցէ քարոզութիւնն ձեր: Ապա եւ այլ իմն շահ դնէ ի միջի. հան[դ]երձ այլոց փրկութեամբն արկանէ կասկած ի միտս նոցա եւ յորդորէ ամենեւին ի փոյթ, զի ոչ միայն, ասէ, զտիեզերս ուղղիցէք ձերով լաւ կարգաւքն, այլ եւ Աստուծոյ փառաւորութեանն լինիցիք պատճառք: Որպէս յորժամ հակառակագործ իցէք, և՛ զմարդիկ կորուսանէք, և՛ Աստուծոյ անուանն լինիք հայհոյիչք: Ոչ զի [այդպէս] առնիցէք՝ զայս ասեմ, այլ յորժամ յաճախիցէ հուրն եւ անչափ վառիցէ, այս ձերոյ գործոցն չէ հնար թաքչել, թէպէտ եւ բիւր անգամ կամիցի ծածկիլ. որ առնեն զնա անարատ, ցուցցին վարք, զի մի՛ յիմիք գտցեն պատճառք բամբասանաց, եւ բարեաւք իսկ կոչեաց լոյս, զի ոչ ինչ կարէ այնպէս նշանաւոր առնել զմարդ, որպէս առաքինութեանն հանդէս, թէպէտ եւ ծածկել ջանայցէ. որպէս զճառագայթս զգեցեալ, այնպէս անթաքչելի է, զի ոչ յերկիր ծագէ, այլ եւ քան զերկինս ի վեր տարածանէ զճառագայթս, զի թէպէտ ի բազմաց բամբասիցիք, այլ եւ ի բիւրոց փառաւորեաց ի Հայ[ր]ն ձեր եւ յերկոցունց պսակիցիք փառաւորելովն զՀայրն ձեր եւ բամբասելովն ձերով վասն Նորա: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ վայրապար

բամբասելն վարձք ինչ իցեն, երկուս խտրոցս ի միջի դնէ. մի՛ զի սուտ իցէ բամբասանքն, եւ միւս եւս՝ զի վասն Նորա իցեն, զի ոչ իսկ կարողն են բամբասանք չարացն կուրացուցանել զտեսողսն առ ի չտեսանելոյ զձեր լոյսն, զի յորժամ անհամիցիք, յայնժամ կոխեն զձեզ, եւ ոչ յորժամ ուղղութիւնս ինչ գործիցէք, կարեն աղարտել զձեզ. այլ «զՀայրն ձեր փառաւորեն»[1], եւ ոչ ասաց, թէ զԱստուածն այսու հանդերձեալ ազնուականութիւնն անդրէն սերմանեսցէ ի սիրտս նոցա եւ զիւր հանգիտապատիւ զուգականութիւնն ընդ Հաւր ցուցանիցէ: Վերագոյնն ասաց, թէ՝ մի՛ տրտմիք, յորժամ վասն Իմ նախատիցիք, իսկ ասա զՀայր դնէ, զի այսու զիւր զուգականութիւնն ընդ Հաւր ցուցցէ. եւ զի Նորա եղեալ աւրէնսն եկն կատարել առ ի դպիրսն եւ փարիսացիսն, որք խնդրէին պատճառս գտանել, ասէ.

«Ես ոչ եկի առ ի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս, այլ՝ ի լնուլ»[2]

եւ զստուերսն հանել ի ճշմարտութիւն ամենայն. որ ինչ մի անգամ աւրինակքն էին, կատարէ ցանժամանակք ազգէ յազգ. եւ բովանդակեցան առաջինն յԱդամայ ի Նոյ ուխտիւն. զոր հաստատեցին տունս Սեթայ, զի զատեալ որոշեալ էին ի տանէն Կայենի: Եւ միւս եւս ի տանէ Նոյի Աբրահամ, զի մի՛ կերիցեն արիւն: «Ետու ձեզ,- ասէ,- զամենայն իբրեւ բանջար վայրի, բայց միայն զարիւն շնչոյ եւ հեղձուցից մի՛ ուտիցէք»[3]: Եւ յԱբրահամէ ի Մովսէս թլփատութեամբ՝ առանց աւրինաց, եւ ի Մովսեսէ մինչեւ ի ծագել Նորա՝ աւրինաւք: Եւ կատարեցան ամենայն, զի չիք այլ ոք, որ փոխէ եւ զանցուցանէ զայս: Ասի դարձեալ, թէ ժամանակք առաջին զպատարագ կամացն Աբելի մինչ ի Նոյ մխիթարեսցէ, ասէ, զմեզ պատարագաւք իւրովք: Եւ միւս եւս՝ ի Նոյի սեղանոյն, որ շինեցաւ ի լերինն Կորդուաց, եւ միւս եւս՝ Աբրահամուն, որ շինեցաւ ի լերինն Ամուրհացւոց, եւ միւս եւս՝ Յակոբայն՝ ի Բեթէլ, եւ միւս եւս՝ Յեսուայն՝ յանցս Յորդանան գետոյն, եւ միւս եւս՝ ի Սեղովամ խորանն, որ բնակեալն [...][4], եւ միւս եւս՝ Սողոմովնին՝ յետ խորանին վկայութեան՝ յԵրուսաղեմէ, եւ

1 Մատթ. Ե 16
2 Մատթ. Ե 17
3 Ծն. Գ 18, Ղեւ. Է 26
4 1 բառ

այս՝ Քրիստոսի[1], որ ուղղեաց յԵկեղեցւոջ Իւրում մինչ ի վախճան կատարած, զի այլ ոչ եւս փոխի: Վասն այսորիկ կատարեալ են ժամանակք, եւ յայսմհետէ արքայութիւնն աւետարանի կամ կատարեալ են առաջինք ժամանակք Իսրայէղի: Արդ, մի՛ համարիք, եթէ եկի եւս լուծանել զառաջին զնշմարանսն, այլ՝ լնուլ: Որպէս զպատկեր թագաւորի զծրագրեալսն կապարաւ ի տախտակի, յորժամ ծիրանափառ զարդարիցեն կայսերակերպ շքեղազարդ յաւրինեալ, ոչ առ առաջին ծրագրութիւնն ի բաց բառնի, այլ ընկղմի ի պայծառութեան զարդուն, եւ լինի կատարեալ պատկեր թագաւորի, այսպէս եւ նա՝ լնուլ[2] զթերութիւն տխրատեսիլ ստուերին ի պայծառակշիռ զարդ կատարելութեան: Եւ վասն այսորիկ ասէ. «Ոչ եկի Ես լուծանել զաւրէնս, այլ՝ լնուլ»: Եւ զայս յառաջագոյն հորդէ ճանապարհ բանից Իւրոց, զի մի՛ յորժամ ասիցէ, թէ՝ լուարուք, զի ասացաւ առաջնոցն այս ինչ եւ այս, այլ՝ Ես ասեմ ձեզ, կարծիցեն, թէ լուծանէ զառաջինսն եւ հաստատէ զիւրսն հակառակ առաջնոցն: Արդ, ասէ՝ ոչ իմքս լուծիչ առաջնոցն, այլ՝ կատարիչ եւ լրումն ամենայն թերութեանց նոցա. զի աղքատն լինել, եւ հեզ, եւ ի սուգ մտանել, եւ կարաւտ արդարանալոյ, եւ ողորմած, սուրբ՝ սրտիւ, եւ խաղաղարար՝ նման Որդւոյն Աստուծոյ, եւ հալածեալ վասն աստուածպաշտութեան՝ որչափ բարձրագոյն եւ կատարելագոյն է քան առաջինն: Եւ զի մի՛ այս աւելորդ եւ աւտար թուեսցի, տանի յարէ յառաջինսն, թէ՝ լրումն է այս ամենայն առաջնոցն: Եւ նա ի սմա՝ ծածկեալ, եւ սա ի նմա՝ նկարագրեալ, զի ի նոյն եւ ի մի կատարումն ածեն զմարդն:

«Եւ արդ, լուարուք դուք, զի ասացաւ, թէ մի՛ սպանաներ, այլ Ես ասեմ ձեզ՝ մի՛ բարկանայք»[3]:

Եւ այսու զաստուածային եւ երկնաւոր առաքինութեան հորդէ ճանապարհ: Եւ զի մի՛ նորն ինչ խռովեցուցէ զոգիս լսողացն, զի թէպէտ ոչ կատարէին զաւրէնսն, այլ խնամիսն ունէին, եւ զոր միշտ լուծանէին, զնորին նշանագիրսն անշարժ կամէին պահել, այլ եւ յաւելուածով աւանդութեամբ ծերոցն լուծէին զպատուիրան պատուոյ ծնողացն եւ զայլ բազում ինչ լուծանէին իւրեանց վայրապար ճոխու-

1 Ձեռագրում՝ Քրիստոսիիս:
2 Ձեռագրում՝ պլնուլ:
3 Մատթ. Ե 21-22

թեամբն: Իսկ Քրիստոս, զի չէր ի քահանայական ցեղէն եւ զոր ուսուցանէր, բարձրագոյն էր քան զաւրէնսն, եւ այս երկոքեան խռովեցուցանէին զնոսա, հանէ ի միջոյ զայն, որ զնոցա միտսն խաւարէր, զի կարծէին, թէ զոր ասէին այնուիկ զաւրէնս ի միջոյ բառնալոց է, եւ զի զնա Աստուած հակառակ Աստուծոյ կարծէին, զի զշաբաթն լուծանէր: Եւ արդ, զի բարձցէ զայսպիսի կարծիս, դնէ բազում պատասխանիս ի միջի զկէսն, որ Իւր իսկ պատշաճէին, յորժամ ասիցէ. «Հայր Իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ Ես գործեմ»[1], եւ զկէսն՝ վասն բազում զիջանելոյ ընդ նոսա, յորժամ զոչխար լուծեալ ի կապոյ ի շաբաթու ի մէջ բերիցէ եւ հանեալ ի խորխորատէ[2]: Եւ Նորա փրկութեամբն ցուցանէ զաւրէնսն լուծեալ եւ զթլփատութիւնն յիշէ զնոյն գործեալ: Վասն որոյ խոնարհագոյն բանս խաւսի, զի կարծիս Աստուած հակառակ Աստուծոյ ի բաց բարձցէ: Վասն որոյ բազում մեռեալս բանիւ միայն յարոյց, եւ յորժամ զՂազար կոչէր եւ աղաւթս եւս առնէր, եւ զի միայնու նուազագոյն քան զծնողն կարծիցի, յարէ ի նոյն, թէ՝ «Զայս վասն ժողովրդեանս առնեմ, զի հաւատայցեն, թէ Դու առաքեցեր զիս»[3]: Եւ այսպէս ոչ ամենայն ուրեք իշխանութեամբ գործէ, զի զնոցա տկարութիւնն ուղղեսցէ: Եւ ոչ ամենայն ուրեք աղաւթէ, զի մի՛ չար պատճառս վերջնոցս թողուցու տկար գոլ զնա կարծել: Այլ խառնէ ընդ միմեանս զբարձ[ր]ագոյնսն ընդ նուաստիցն, զի զմեծամեծն իշխանութեամբ գործէր, եւ վասն նուաստագունիցն ընդ երկինս հայէր զմեղս թողուլ, զծածկեալսն յայտնել, զդրախտն բանալ եւ զդեւս հալածել, զծով սանձել, զմեռեալս յարուցանել: Եւ բազում այլ ինչ այսպիսին հրամանս միայն կատարէր, իսկ յորժամ զկարի փոքունս գործէր ի սակաւ հացէ աճել եւ զիւրս կերակրել, ընդ երկինս հայէր, զի ցուցցէ, թէ որ մեծամեծս իշխանութեամբ գործէր, [զիա՞րդ] փոքունս կարաւտանայր աղաւթից: Այլ զի զնոցա յանդգնութիւնն [ըմբերա]նիցէ, առնէր զայն: Զայն եւ բանիւքն ցուցանէր, զի զբազում բանից եւ գործոց այսպիսեաց այս են պատճառք, զի մի՛ աւտար կարծիցի Աստուծոյ, եւ մեզ զխոնարհութիւն ուսուցանէ: Եւ զի մարմին էր զգեցեալ, եւ չէր մարթ զամենայն ինչ հրէիցն ասել, եւ զի ուսուցէ մի՛ ինչ զանձնէ կարծել, վասն այսուիկ Ինքն բազում բանս խոնարհագոյնս զանձնէ խաւսէր: Իսկ յորժամ ընդ հրեայսն խաւսէր՝ «Յառաջ քան զԱբրահամու լինելն եմ Ես»[1]: Իսկ յորժամ աշակերտն զնմանէ ճառէր. «Ի սկզբանէ էր,- ասէ,- Բանն եւ Աստուած էր Բանն»[2]: Եւ դարձեալ թէ՝ զերկինս եւ զերկիր եւ որ ի սմա են, Նորա է արարեալ[3], զոր Ինքն յայտնապէս ոչ ճառեաց, իսկ աշակերտն մեծաւ համարձակութեամբ ճառէր. այլ յաճախ ասէր, թէ՝ «Ամենայն Նովաւ եղեւ»[4], իսկ Ինքն բանիւք ոչ յայտնէր, այլ արդեամբք ցուցանէր: Եւ զի զմարդն Իւր արարեալ էր կուրիւն, որ կաւովն ելից զպակասութիւնն աչացն, յայտ արար: Իսկ զմարդոյն յայտնապէս ոչ ասաց, թէ՝ «Ես արարի», այլ՝ «որ արարն»[5]: Ասէ. «Ի սկզբանէ արու եւ էգ արար»[6], եւ զի զաշխարհսն, որ արարեալ էր ձկամբն եւ գիւնովն, որ ի ջրոյն, եւ հացիւն, զոր բազմացոյց, եւ ալեաւք ծովուն, զոր կարկեացն, եւ ճառագայթիւքն արեգականն, զոր շիջոյց ի խաչին: Եւ բազում այսպիսի իրաւք յայտ արար, թէ Արարիչ է ամենայնի, իսկ բանիւքս ցուցին ինչ ոչ ճառեաց զինքենէ: Այլ աշակերտք համարձակ բարբառէին այսպիսի ինչ, զի եթէ աշակերտքն, որ այնչափ զաւրութիւնս տեսին եւ յանուն Նորա զդեւս հալածէին եւ զմեռեալս յարուցանէին եւ յետ այնչափ զգաստութեան ոչ կարէին ամենայնի հասու լինել, իսկ հրեայքն, որ յամենայն իմաստութենէ կուրացեալ էին, զիա՞րդ ոչ զնա յամենեցունցն Աստուծոյ աւտար համարէին, եթէ ոչ այնչափ ընդ նոսա զիջեալ էր նա եւ զշաբաթն լուծանելն պէսպէս եւ նա պատասխանիս յաւդէր: Իսկ եթէ զմի պատուիրան լուծանէր բազում անտնտեսութեան[7] ի կիր արկանէր, զի մի՛ գայթ[ակ]ղեցուսցէ զլսողսն: Որչափ եւս առաւել, յորժամ ամենայն աւրէնսն յաւելոյր կատարեալ աւրէնսդրութիւն, պարտ էր ազգի ազգի հնարս հնարել առողջելոյ, զի մի՛ խռովեցուսցէ զլսողսն: Վասն այսորիկ եւ ոչ վասն Աստուածութեանն Իւրոյ ճառեաց ինչ, զի թէ աւրինացն յաւելուածն խռովէր զնոսա, որչափ եւս՝ թէ Աստուած զինքն էր քարոզեալ: Վասն

1 Յովհ. Ը 17
2 Տե՛ս Մատթ. ԺԲ 11:
3 Յովհ. ԺԱ 42

1 Յովհ. Ը 58
2 Յովհ. Ա 1
3 Հմմտ. Գործ. Դ 24:
4 Յովհ. Ա 3
5 Տե՛ս Յովհ. Թ 1-8:
6 Ծն. Ե 2
7 *Ձեռագրում՝* անստնտեսութեան:

որոյ բազում խոնարհագոյն բանս ճառէ զԻւրոյ աստուածական պատուոյն: Եւ զի յաւրինացն յաւելուած մերձ էր առնել բազում ինչ, յառաջագոյն հորդէ ճանապարհ, զի ոչ մի անգամ ասաց, թէ՝ «Ոչ եկի լուծանել զաւրէնսն», այլ երկրորդէ զնոյն եւ ասէ. «Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զաւրէնս, այլ՝ լնուլ»: Եւ այսու ոչ միայն զհրէիցն խնու զբերանս, այլ եւ հերձուածողացն, որք ի սատանայէ համարին զՀին Կտակարանսն: Զի եթէ զսատանայ ի բռնութիւն եկն քակել Քրիստոս, զիա՞րդ ոչ լուծանէր զաւրէնս նորա, այլ եւ լնոյր եւս, զի ոչ ասաց՝ լուծանել, այլ՝ լնուլ, որ ցուցանէ զյոյժ միաբանութիւնն: Եւ թէ զիարդ ելից զմարգարէսն, ասեմք, որ վասն Նորա ասացեալ էին, եւ Նա հաստատեաց զայն արդեամբք, զի եւ Աւետարանագիրքն ասէին, եթէ զի կատարեսցի բան մարգարէին, զծնունդն եւ զկոտորել մանկտոյն, զաղաղակիլն ի տաճարին եւ զնստելն յէջ եւ այլաւք բազմաւք, զորս կատարեաց գալստեամբն, զի թէ չէր եկեալ, բոլորն անկատար մնայր: Իսկ զաւրէնսն ոչ միով, այլ երկու եւ երեք աւրինաւք կատարէր: Մի՛ զի ոչ իւիք անց զաւրինաւքն, որպէս ասէր զՅովհաննէս. «Այսպէս պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս աւրինացն»[1]: Եւ ցհրեայսն ասէր. «Ո՞վ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց»[2]: Եւ ցաշակերտսն ասէ. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ»[3], եւ մարգարէն ի վաղուց հետէ աղաղակէ, թէ՝ մեզս ոչ արար, զի այսպէս ի կերպարանաւք Ինքն կատարեաց եւ մեւք դարձեալ զնոյն առնէ, որպէս Պաւղոս ասէ, թէ՝ «Կատարումն աւրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց»[4], եւ՝ «Զմեզս դատապարտեաց ի մարմնի, զի արդարութիւն աւրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք»[5]: Եւ դարձեալ ասէ, թէ՝ «Զաւրէնս ինչ խափանե՞մք հաւատովք. քաւ լիցի, այլ հաստատեմք»[6], զի եւ աւրէնքն իսկ ի նոյնս խոկան արդարս առնել զմեզ: Իսկ եթէ Ինքն եկն եւ ընծայեցոյց զարդարութիւն հաւատովք, յայտ, եթէ հաստատեաց զկամս աւրինացն. զի զորն այն գրովս չկարաց ուղ-

1 Մատթ. Գ 15
2 Յովհ. Ը 46
3 Յովհ. ԺԴ 30
4 Հռոմ. Ժ 4
5 Հռոմ. Ը 3-4
6 Հռոմ. Գ 31

ղել, սա զայն հաւատովքն վճարեաց: Եւ վասն այնորիկ ասէ. «Ոչ եկի լուծանել զաւրէնսն, այլ՝ լնուլ»: Եւ եթէ հաւաստեաւ քննեսցես երրորդ, զնոյն գտցես զհանդերձեալ աւրէնսդրութիւնն՝ ոչ խափանիչ, այլ «լրումն», նոյնպէս եւ այլոցն ամենեցուն: Վասն որոյ յառաջագոյն ցանէ զսերմն, յորժամ յայտնագոյն ընդ միմեանս հարկանելոց էր զառաջինս եւ զվերջինս: Եւ որ ինչ հակառակն թուէր, յառաջագոյն բառնայ զկարծիսն, զի թէպէտ առակ աւրինակաց էին, սակայն յառաջագոյն ընծայեցուցանէ զԻւրսն, զի ասելն թէ՝ «Երանի՛ աղքատաց հոգւով»՝ նոյն եւ չբարկանալն, զի խոնարհք հոգւով ոչ երբէք դրդին ի բարկութիւն. եւ հեզն լինել հանգոյն է այնմիկ, թէ՝ «Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխին քում»[1] վաղագոյն. եւ զգալ եւ հալածական լինել հանգոյն է այնմիկ, թէ՝ «Մտէ՛ք ընդ նեղ դուռն»[2]. եւ՝ «Քաղցնուլ եւ ծարաւիլ արդարութեան»[3] ոչ այլ ինչ է, եթէ ոչ ասելն. «Զոր ինչ կամիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէ՛ք եւ դուք նոցա»[4]. եւ «երանեալ զողորմածսն»[5] հանգոյն է այնմիկ, թէ՝ «Գանձէք ձեզ գանձս յերկիր»[6]. եւ «սուրբ լինել սրտիւ»[7] այն իսկ է՝ «Զհայել արատ ի կին մարդ»[8]. եւ «խաղաղարարն»[9] լինել նոյն է, թէ՝ «Թո՛ղ զպատարագն եւ երթ նախ հաշտեա՛ց ընդ եղբաւրն քում»[10], եւ յառաջագոյն հաշտել ընդ ոսոխին: Եւ անդ զհատուցմունս ուղղութեանցն խոստացաւ, իսկ աստ զպատիժս չառնել բացն սպառնայ: Զի անդ ասէ «Հեզքն ժառանգեսցեն զերկիր»[11], եւ աստ ի մորոսն կոչելոյ զեղբայրն ի գեհենն առաքէ[12]: Անդ ասէ զԱստուած տեսցեն սուրբքն սրտիւ[13], եւ աստ, շնացող կատարելս կոչեաց զարատ հայե-

1 Մատթ. Ե 25
2 Մատթ. Է 13
3 Մատթ. Ե 6
4 Մատթ. Է 12
5 Մատթ. Ե 7
6 Մատթ. Զ 19
7 Մատթ. Ե 8
8 Մատթ. Ե 28
9 Մատթ. Ե 9
10 Մատթ. Ե 24
11 Մատթ. Ե 5
12 Մատթ. Ե 22
13 Մատթ. Ե 8

ցողն: Անդ զխաղաղասէրն որդի Աստուծոյ կոչեաց եւ ասաց, թէ՝ «Գուցէ մատնեսցէ զքեզ դատաւորին եւ դահճին, եւ արկանիցիս ի բանդ»[1]:

Եւ այսպէս զսգաւորսն, զհալածեալսն երանէ, իսկ ասա կորուստ սպառնայ, որք ոչ ընդ նոյն ճանապարհս գնայցեն, այլ՝ ընդ արձակն, եւ վրիպեցան ի կենաց:

«Եւ ոչ կարէք դուք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի»[2]:

Ընդդէմ ողորմածացն եւ քաղցելոցն արդարութեան: Եւ որ վերագոյնն ասացի, թէ յայտնագոյնս է ճառելոց, եւ քան զնոսա առաւելագոյնս, զի ոչ ողորմութիւնն միայն խնդրէ, այլ եւ ի պարեգաւտացն եւս մերկանալ[3]: Եւ ոչ հեզս միայն լինել, այլ եւ զծնաւտս եւս մատուցանել հարողացն[4], զի որ ինչ ընդդէմ որու էր, այսու կամի զպատճառսն ի միջոյ բառնալ, զի ոչ միանգամ ասաց, այլ եւ երկրորդէ եւս զնոյնն. «Ոչ եկի,- ասէ,- լուծանել զաւրէնս, այլ՝ լնուլ: Ամէն ասեմ ձեզ. մինչեւ անցեն երկինք եւ երկիր, յաւդ մի՛ գրախեցի ոչ անցցէ յաւրինաց եւ ի մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի»[5], այսինքն՝ անհնար է, թէ անկատար մնայցէ, այլ եւ որ փոքրն[6] իցէ, պարտ է եւ այնմ կատարել, զի եւ Ինքն հաւաստեաւ կատարեաց: Եւ ասի մեզ իմն առակէ, թէեւ աշխարհս ամենայն կերպարանափոխ լինելոց է, եւ այլ իմն առաքինութիւն կատարեալ պահանջէ ի մէնջ, զի եւ արարածք ամենայն նորոգելոց են եւ ի բարձրագոյն պատիւ փոխելոց, պարտ է եւ նորընծայ վարս փոխել: Եւ եթէ ոք լուծցէ, ի փորձ պատուիրանաց սաստի եւ այնպէս ուսու[ս]ցէ զմարդիկ փոքր կոչեսցի յարքայութիւնն: Յորժամ զանձն ազատեաց ի չար կարծեաց եւ զհակառակորդսն ըմբերանեաց, ապա այնուհետեւ մեծամեծ սպառ[ն]ալիս [դնէ] վասն հանդերձեալ աւրէնսդրութեանն, զի ոչ զհնոց աւրինացն ասէ լուծանել, այլ զհանդերձեալսն, զոր Ինքն դնելոց էր, զի յաջորդաւքն յայտ առնէ՝ ասելով.

1 Մատթ. Ե 25
2 Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13
3 Ղուկ. Զ 29
4 Մատթ. Ե 39, Ղուկ. Զ 29
5 Մատթ. Ե 18
6 *Ձեռագրում՝* փորքն:

«Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր քան զդպրացն»[1]:

Եթէ զհին աւրինացն ասէր ոչ յաւելոյր ասել, թէ՝ ոչ առաւել իցէք, զի թէ զայնցանէ ասէր, չէր ինչ յորդորելոյ պէտք, զի առաւելն չբարկանալն է եւ չհայել յարատ: Եւ ընդէր փոքունս կոչէ զբարձրագոյնսն, այլ զինքն տալոց էր աւրէնսդրութեանցն: Եւ յորժամ ասէ, թէ՝ «փոքր կոչեսցի»[2], մի՛ այլ ինչ կարծիցես, այլ զգեհենէն ակնարկել, զի արքայութիւն ոչ զփառսն զոր առնլոցն՝ կոչէ, այլ եւ չարուքեան ժամանակն եւ զահագին գալուստն, ապա եթէ՝ զիա՞րդ որ մորոսն կոչէ, ի գեհենս երթայ, եւ որ լուծանէ զպատուիրանն եւ զայլսն ի նոյնն դրդիցէ, յարքայութիւնն մտիցէ: Եւ արդ, ոչ ասաց, թէ յարքայութիւնն մտանիցէ, այլ եթէ ի ժամուն յայնմիկ փոքր, տարագիր եւ յետին գտանիցի եւ որդի գեհենին: Եւ քանզի գիտէր ի կանուխ գիտութեան Իւրում, թէ բազումք ծոյլայցեն յետոյ եւ ասիցեն, թէ վասն մորոս կոչելոյ եւ յարատն հայելոյ ի գեհենն երթիցեն, ո՞ կարիցէ ապրել, յառաջագոյն բառնայ զվհատութիւնն եւ մեծամեծ սպառնալիս դնէ երկոցունց կողմանցն, որք յանցանիցեն եւ զայլս եւս ի նոյնն դրդիցեն:

«Եւ որ արասցէ,- ասէ,- եւ ուսու[ս]ցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն»[3]:

Զի ոչ միայն զանձինս, այլ եւ զայլս պարտիմք ածել յուղղութիւն: Զի որպէս որ ուսուցանէ առանց գործով, դատապարտէ զանձն, սոյնպէս եւ՝ որ այլոց ոչ առաջնորդէ, կորուսանէ զվարձսն: Եւ արդ, պարտ է յերկոցունց կողմանցն կատարեալ լինել, զի եւ Ինքն իսկ նախ զառնելն քան զուսուցանելն դնէր, զի մի՛ լուիցէ, թէ՝ «Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո»[4]:

Իսկ որ յերկոսին կողմանսն կատարեալ իցէ, «նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից: Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ առաւել իցիք, քան զդպիրսն արդարութեամբ, ոչ մտանէք յարքայութիւնն»[5]:

Արդարութիւնն ասա զամենայն առաքինութիւնս կոչէ, որպէս

1 Մատթ. Ե 20
2 Մատթ. Ե 19
3 Նոյն տեղում
4 Ղուկ. Դ 23
5 Մատթ. Ե 19-20

զՅոբ Արդար կոչեն Գիրք: Եւ Պաւղոս այնպիսեացն ասէ, թէ՝ «Ի վերայ արդարոց աւրէնք ոչ կան»[1]: Եւ դու մի՛ւ դիր, զի զնոր աշակերտսն քան զհին վարդապետսն կամի կատարեալ առնել, զի դպիրս եւ փարիսացիս ոչ զվայրապար ոք, այլ զպիտանիսն կոչէ եւ ոչ զոչեսն ընդ էրն համեմատէ: Եւ տե՛ս, զիարդ զմիմեանս համեմատէ զհինն եւ զնորն. զի ցուցցէ, եթէ համացեղք եւ ազգականք միմեանց են: Եւ արդ, այնպիսի արդարութիւն չտանիցի՞ յարքայութիւնն. այժմ չտանի, յետ Քրիստոսի գալստեանս, որք ըստ աւրինացն կամին պատերազմել: Զի որք յայնչափ շնորհս վայելեցին, պարտին բազում ճգնութիւնս ցուցանել: Բայց զնոսա եւ զսոսա իբրեւ մախոխս[2] ի նոյն յանձանձիչ գոգն տանի զամենեսեան՝ ըստ այնմ թէ՝ «Բազում յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցեն ընդ Աբրահամու»[3], որպէս եւ Ղազար ի գոգն Աբրահամու կայր[4]: Եւ եթէ զՀին Կտակարանքն չէին կատարեալք եւ ի գալ Նորա խափանեցան, եւ վասն այնր զՆա չար կոչեն, ապա եւ նորս զնոյն կրելոց են ի հանդերձեալ գալըստեանն: Յորժամ եկեսցէ, ասէ, կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի, որպէս ի կատարեալ այրացելոյ տղայութիւնն խափանի: Սակայն մեծ պարգեւք են եւ յորդ զաւրութիւն Հոգւոյն շնորհաց, զոր ընկալաք, յիրաւի եւ մեծագոյն վարք պահանջին ի մէնջ, զի ոչ երկիր կաթին բղխիչ եւ մեղու եւ ոչ որդւոց յաճախութիւնն եւ ոչ ծերութեան պարարտութիւն եւ ոչ խաշանց բազմութիւնք խոստացան մեզ, այլ՝ երկնից բարութիւնք եւ որդեգրութիւն եւ որ այլ եւ ասէն. իսկ աւրէնք հոգւոյն կենաց ազատեցին զմեզ յաւրինաց մահու եւ մեղաց: Եւ արդ, իբրեւ սպառնացաւ յանցաւորաց եւ մեծամեծ պարգեւս խոստացաւ առաքինեացն եւ եցոյց, եթէ յիրաւի յոլովագոյն պահանջէ ի մէնջ ուղղութիւնս քան առաջնոցն է եւ սկիզբն առնէ այնուհետեւ աւրէնդրութեանն, եւ ոչ վայրապար ինչ, այլ ըստ համեմատութեան հնոյ աւրինացն. եւ երկուս իրս ցուցանէ ասէ, մի՝ զի ոչ հակառակ, այլ յոյժ միաբան ընդ առաջին աւրէնսն, եւ միւս եւս՝ զի ի դէպ ժամանակի զերկրորդսն յաւելոյր յառաջինսն: Եւ արդ, լո՛ւր ինչ ասէ.

1 Ա Տիմ. Ա 9

2 *Ձեռագրում՝* զամոխախս:

3 Մատթ. Ը 11

4 Տե՛ս Ղուկ. ԺԶ 23:

«Լուարուք, զի ասացաւ առաջնոցն, թէ՝ մի՛ սպանաներ»[1]:

Զի թէպէտ եւ Ինքն էր աւրինադիրն, այլ ոչ յայտնէ զդէմսն ոչ զիւրն եւ ոչ զՀաւր, զի թէ ասացեալ էր՝ լուարուք, զի ասացի դժուարընկալ եւ անախորժելի լինէր լսողացն: Եւ թէ ասացեալ էր. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն»՝ ի Հաւրէ, եւ ի նոյն յարեալ ասէր՝ «բայց Ես ասեմ ձեզ», առաւել ճոխութեան թուէր: Վասն որոյ խառնիխուռն ճառէ եւ ցուցանէ, թէ ի ժամանակի եկն պատշաճսն ուսուցանել, զի ասելն, թէ՝ «Ասացաւ առաքելոց», ցուցանէ, թէ բազում ժամանակք են, յորմէ հետէ այն պատուիրանք տուան, եւ ոչ եկիք ի լուութիւն: Եւ այսու պատկառեցուցանէ զլսողսն, որք դանդաղիցին ելանել ի բարձրագոյն հրամանսն: Որպէս վարդապետ ոք, որ մեղադրիցէ աշակերտացն, թէ որչափ ժամանակս ծախեցեր ի նշանագիրսդ, սոյնպէս եւ սա մեղադիր լինի՝ եւ մինչեւ յե՞րբ ոչ առնոյք ի միտ զմեծամեծս հրամանացն շատ է ձեզ ժամանակքն, զորս յայդմ ծախեցէք, պարտիք այսուհետեւ ի բարձրագոյնսն փութալ: Եւ արդ, տե՛ս, զի ոչ խարխարէ զկարգ պատուիրանացն, այլ յառաջմէն առնէ զսկիզբն, յորմէ եւ աւրէնքն սկսան, զի եւ այս ցուցումն միաբանութեան է:

«Բայց Ես ասեմ ձեզ, թէ որ բարկանայ եղբաւր իւրում, պարտաւոր լիցի գեհենին»[2]:

Տեսեր զկատարեալ իշխանութիւնն. ո՞ ոք ի մարգարէից կամ յարդարոցն այնպէս բարբառեցաւ (այլ ասէին, թէ՝ այսպէս ասէ Աստուած), բայց միայն Որդին: Նոքա զտերունիսն պատմէին, եւ սա՝ զհայրենական կամ թէ զիւրսն իսկ եւս. Ես՝ զլրումն առաջնոցն: Զի որ ի ցասումն չգայցէ, որչափ եւս ի սպանանելոյն խորշիցի. զի արմատ ի ցասումն է, որ զարմատ հատանէ առաւել եւս զոստն կոճոպիցէ, զի եւ բուսոյն սկիզբն ոչ տայ առնուլ: Բայց ոչ ամենեւին ի միջոյ բառնայ զբարկութիւնն, զի չէ հնար մարդոյ ի կարեաց ազա[տա]նալ, բայց կարճել մարթի. զի եւ յաւգուտ[3] իսկ է ցասումն, եթէ ի պատշաճսն ոք վարիցէ եւ ի դէպ ժամանակի: Տե՛ս, որպիսի ինչ բարութիւնս գործեաց Պաւղոս ի բարկանալն Կորնթացւոցն, զի զնոսա ի չարեացն ազատեսցէ եւ զԳաղատացիսն նոյն կանգնեաց: Յորժամ

1 Մատթ. Ե 21

2 Մատթ. Ե 22

3 *Ձեռագրում՝* յաղգուտ:

ոչ զանձանց վրէժ խնդրիցեմք, այլ զստահակս խրատիցեմք. բարեաւք է ցասումն՝ ըստ այնմ թէ՝ «Մի՛ զանձանց վրէժ խնդրիցէք, այլ տո՛ւք տեղի բարկութեան»[1]: Այլ մեք յորժամ զրկիմք, գազանիմք եւ յայլոց զրկանս հանդարտեմք. եւ երկոքեան հակառակ են աւետարանական հրամանացն: Եւ արդ, ոչ եթէ բարկա[նա]լն չար իցէ, այլ՝ յանդէպ ժամանակի: Վասն որոյ ասէ մարգարէն. «Բարկանայք, բայց մի՛ մեղանչէք»[2]:

«Որ ոք բարկանայ,- ասէ,- պարտաւոր լիցի ժողովրդեանն»[3]:

Ժողովուրդ ասէ զհեբրայեցւոց ատելոն կոչէ, զի մի՛ աւտարոտի վարդապետութիւն կարծիցի: Իսկ ռակա՝ ասէ իմն թշնամանք հեբրայեցերէն է եւ արհամարհանաց, եւ որք զասորի լեզուն գիտեն, փոխանակ ընդ «այ դու» ասելոյն՝ ի սանգաստականաց[4] տեղի զռակայն ասեն: Այլ մարդասէրն Աստուած եւս զմանունսն կարճեաց եւ սոքաւք զմեծամեծսն խափանեաց. «Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի գեհենին»: Ոմանց աւելորդ իմն թուի ասացեալն՝ իբր ահ ինչ արկանելոյ սակս: Եւ արդ երկնչիմ. գուցէ աստ խաբիցիմք եւ անդ արդեանցն հանդիպեցիմք: Ոչ ապաքէն բա[մ]բասանք եւ հայհոյութիւնք ի բանից են, զի ի ժամ ցասմանն եւ փոքրն մեծ թուի եւ բորբոքէ զբոց ցասմանն: Զի որպէս սպանութեան արմատ ցասումն է, սոյնպէս եւ բարկութեանն պատճառք եւ արմատ թշնամանքն են, զի որ զցասումն ոչ կարճէ, ի սպանութենէ ոչ ապրի, եւ որ թշնամանսն ոչ խափանէ, ի բարկութենէ ոչ սրբի: Եւ զոր աւրինակ ի հաշտութեան ժամուն եւ ծանունքն փոքր թուին, սոյնպէս ի բարկութեանն եւ փոքունքն մեծ հուր բորբոքեն եւ հրդեհեն զազգն եւ զքաղաքս. եւ որպէս զհուր սաստկացեալ ոչ միայն ցողուն, այլ եւ ջուր ցանեալ բորբոքէ զբոցն, սոյնպէս եւ դոյզն բանք ի ժամ ցասմանն վառէ զբոց բարկութեանն: Վասն որոյ եւ զբնաւն կամի ցածուցանել Քրիստոս զպատճառս բարկութեանն սպառնալով գեհենին: Վասն այսորիկ ասէ՝ եւ վայրացասումն պարտաւոր լիցի գեհենին: Եւ զի նախ զարքայութենէն բազում ինչ ճառեաց, եւ ապա զգեհենէն յուշ առնէ, զի յայտ

1 Հռոմ. ԺԲ 19
2 Սաղմ. Դ 5
3 Մատթ. Ե 22
4 *Ձեռագրում՝* սանգակաստանաց, *Ծնորհալու մօտ՝* սանգաստանաց. ընթերցումն՝ ըստ Ոսկեբերանի (էջ 254):

արասցէ, թէ արքայութիւնն ի Նորա մարդասիրութենէն պատրաստեցաւ, իսկ գեհենն՝ ի մերմէ ծուլութենէ եւ ի չարեաց: Եւ տե՛ս, զի աղերսիւ յայտ առնէ, թէ Նա ոչ կամի այսպիսի ինչ սպառնալ, բայց մեք մեզէն ձգեմք ի մեզ զայսպիսի պատուհաս: Եւ արդ, միտ դիր. նախ ասէ, թէ՝ «Որ ասիցէ ռակայ, պարտաւոր է ատենի»: Իբրու այսու ոչ խրատեցաւ, ասէ. «Պարտաւոր ես դատաստանի ժողովրդեանն»: Եւ թէ զայս եւս արհամարհեցեր եւ ոչ խրատեցար, ապա անհնարին պատիժ գեհենին մտանելոց ես, զի գոնեայ ի սպանանելն եւս ոչ մտաբերեցես, զի չիք ինչ այնպէս անհնարին, որպէս թշնամանք զմարդկան միտս զայն ցուցանեն: Իսկ յորժամ թշնամանքն եւս կսկծելիք իցեն, անհնարին խարոյկ վառեն: Եւ մի՛ փոքր զմորոսն վարկանիցիս, զի որով ընդհատ յանասնոց եմք եւ իմաստութեամբ եմք մարդիկ, եւ յայնմանէ զրկիցես զեղբայրն, զի եւ Պաւղոս ընդ շունս եւ զբամբասողն տարագրէ յարքայութենէն[1]: Եւ յիրաւի իսկ, զի թշնամանողն զսիրոյն աւրէնս որ մեծագոյնն է՝ լուծանէ, եւս պէսպէս ոճիրս[2] գրգռէ եւ միշտ ատելութիւն գործէ եւ զՔրիստոսի անդամսն քակտէ եւ զԱստուծոյ զցանկալի խաղաղութիւնն հալածական առնէ, եւ բազում տեղի եւ մորոս տայ սատանայ ի թշնամանողն եւ եւս հզաւրագոյն առնէ զհակառակորդն: Վասն որոյ եւ Քրիստոս, զի զչիւղս զաւրութեան նորա հատցէ, յայն սակս տայ այնպիսի պատուիրան, եւ բազում իմն զսիրոյն պատուիրէ, զի մայր ամենայն բարութեան [է] եւ աշակերտացն ծանաւթ, եւ որ զմեր կեանս հաստատուն ունիցի նա է, եւ զարմատ թշնամութեանն ապականէ: Եւ արդ, մի՛ ընդ վայր զբանսն համարիցիս, այլ ի միտ առցես ուղղութիւնսն եւ զարմանայցես ընդ աւրէնս Նորա մեղմականս, զի ոչ այնպէս Աստուծոյ հաճոյ ինչ է, որպէս միաբանել մեզ ընդ միմեանս: Վասն այնորիկ եւ անձամբ եւ աշակերտաւքն ի նորումս եւ ի հնումն զմանէ ճառէ եւ յաճախս վրէժխնդիր լինի այնոցիկ, որ արհամարհեն զայսպիսի աւրէնս: Վասն որոյ ասէ, թէ՝ «Ի բազմանալ անաւրէնութեանն ցամաքեսցի սէր բազմաց»[3]. որպէս Կայէն եղբայրասպան գտաւ[4] եւ Եսաւ՝ եղբայրա-

1 Տե՛ս Ա Կոր. Զ 9-10:
2 *Ձեռագրում՝* առնիրս:
3 Մատթ. ԻԴ 12
4 Տե՛ս Ծն. Դ 8:

տեաց[1], նոյնպէս եւ՝ եղբարքն Յովսեփու[2]: Վասն որոյ եւ Տէրն զապականիչս սիրոյն յամենայն կողմանց ի միջոյ բառնայ, եւ յամենայն կողմանց փութացուցանէ ի նոյն. զի յետ սպառնալոյն, թէ պարտաւոր է այնպիսին ժողովրդեանն եւ դատաստանի եւ գեհենին, յարէ դարձեալ յառաջինսն եւ այլ եւս սոցին միաբան եւ ասէ.

«Եթէ հանիցես զպատարագն ի սեղանն եւ յիշեսցես, թէ եղբայր քո ունի ինչ զքէն, թո՛ղ զպատարագն եւ երթ հաշտեա՛ ընդ եղբայր քում»[3]:

Ո՛վ մարդասիրութեան առաւելութիւն. զիւր պատիւն արհամարհեալ տայ առ զընկերն սիրելոյ, զի յայտ արասցէ, թէ զառաջինն, զոր սպառնացաւ, ոչ առ ատելութեան է եւ ոչ զի տանջիցէ, այլ զառաւելութիւն խնամոցն յայտ առնէ. խափանեսցի, ասէ ի պաշտաւնն, զի քո սէրն հաստատեսցի, քանզի եւ հաշտելն ընդ եղբաւրն պատարագ Աստուծոյ է: Վասն որոյ ոչ ասաց, թէ յետ մատուցանելոյն կամ յառաջ քան զմատուցանելն, այլ մինչդեռ առաջի կայցէ պատարագն եւ յսկիզբն ընծային իցէ, առաջէ հաշտիլ ընդ եղբաւրն: Եւ վասն է՞ր արդեաւք. մի՛ զի զաւրէնսն պատուիցէ եւ լաւ եւս քան զպատարագն համարեալ: Եւ եթէ առանց սորա, եւ նա չէ ընդունելի: Եւ միւս եւս՝ յորժամ հարկն ի վերայ կայցէ, անհնար է չհաճել: Զի յորժամ չհրամայիցէ մատուցանել նախքան զհաճիլն, ի հարկէ ճեպի ածել ի հաշտութիւն տրտմելոյն եւ լուծանել զթշնամութիւնն: Եւ ասելովն, թէ «առաջի սեղանոյն», զի եւ տեղոյն արկցէ նմա արհաւիրի: Եւ երթ, նախ հաշտեա՛, ասէ, եւ ապա մատուաջիր զպատարագն, զի յայտ արասցէ, թէ ամենեւին իսկ չընդունի սեղանն զայնպիսին, որ ընկերին խեթ ինչ ունիցի: Լուիցեն զայս միջամուխք խորհրդոյն, որ թշնամութիւն ընդ ընկերին ունիցին, թէ յորպիսի սեղան մատչելոց է. լուիցեն եւ ժողովրդականք, զի եւ նոքա հաղորդութիւն ունին ընդ բանին, զի եւ նոքա մատուցանեն պատարագ զաղաւթս եւ զողորմութիւնս, զի եւ այն եւս պատարագ է: Լո՛ւր մարգարէին, որ ասէ իբրեւ յերեսաց Աստուծոյ, թէ՝ «Պատարագ աւրհնութեան փառաւոր արասցէ զիս»[4]: Եւ

1 Տե՛ս Ծն. ԻԵ. ԻԷ:
2 Տե՛ս Ծն. ԼԷ 18-30:
3 Մատթ. Ե 23-24
4 Սաղմ. ԽԹ 23

դարձեալ թէ՝ «Մատո՛ Աստուծոյ պատարագ աւ[ր]հնութեան»[1], եւ թէ՝ «Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկորի»[2], զի թէ աղաւթս մատուցանես, լաւ է նախ թողուլ զաղաւթսն եւ երթալ հաճել զեղբայրն եւ ապա աղաւթել: Վասն այսորիկ ամենայն ինչ եղեւ, յայն սակս եւ Աստուած մարդ եղեւ եւ զամենայն հնարս հնարեցաւ, զի զմեզ ժողովեսցէ ի միաբանութիւն սիրոյ: Եւ աստ զվնասակարն առ վնասեալն առաքէ, իսկ յաղաւթսն՝ զզրկեալն առ զրկիչն: Անդ ասէ. «Թողէ՛ք մարդկան զյանցանս նոցա»[3], եւ աստ ասէ. «Թէ ունիցի ինչ ընդ քեզ խեղճ եղբայրն, ե՛րթ առ նա»: Զի եթէ սիրով, ասէ, ընդ ընկերին հաշտիցիս, ապա եւ զիս ընդ քեզ հաշտ առնես եւ մեծաւ համարձակութեամբ կարիցես մատուցանել զպատարագն. ապա եթէ դրդիցիս ի բարկութիւն, իմասջի՛ր, թէ եւս առաւել ես արհամարհեմ, զի ես ախորժելով հրամայեցի զիմն արհամարհել դրդիւք միմեանց սիրելիք լինիցիք եւ զայն իսկ բաւական համարիցիք ի մխիթարութիւն ձեզ: Եւ ոչ ասաց, եթէ՝ յորժամ կարի մեծ ինչ վնաս գործեալ իցէ, հաշտեսջիք, այլ թէ՝ դոյզն ինչ խեղճ ունիցի ընդ քեզ, եւ զայն ինչ յաւել, թէ յիրաւի իցէ կամ յանիրաւի, այլ թէ՝ զինչ եւ ունիցի խեղճ, թէպէտ եւ յիրաւի իցէ, սակայն ոչ է պարտ թշնամութիւն ունել, զի Քրիստոս յիրաւի ցասուցեալ էր մեզ, բայց սակայն ետ զԱնձն փոխանակ մեր ի սպանումն: Եւ չհամարեցաւ ինչ զայն ամենայն յանցանս մեր: Նաեւ Պաւղոս այլով աւրինակաւ ածէ ի հաշտութիւն՝ ասելով, թէ՝ «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ»[4]: Զի որպէս Քրիստոս ի պատճառս պատարագին ածի հաշտութիւն, նոյնպէս եւ նա տուրն ՝ չեամբն յորդորէ ի նոյն, զի ամենեւին ինչ պատճառս դատապարտութեան դատնիցէ թշնամին առ ի բորբոքել զհնոց բարկութեան: Նոյնպէս եւ Քրիստոս ոչ սակաւ ինչ թոյլ տայ յապաղել, զի մի՛ մինչ պատարագն կատարիցի, ի վհատութիւն անկեալ ժամ ի ժամ արարեալ յապաղիցէ, քանզի գիտէ, թէ բազում երագութիւն պիտոյ է առ այնպիսի սխալ: Արդ, արգելլովն կոչէ մորոս՝ յառաջին թշնամութենէն արգելու, եւ հրամայելովն հաշտել զայն, որ յետոյ թշնամութիւն մտանելոց իցէ՝ խափանէ: Եւ տե՛ս, զիարդ զերկոսին սաստկութեամբ բարբառի: Զի

1 Սաղմ. ԽԹ 14
2 Սաղմ. ՃԼՍ 2
3 Մատթ. Զ 14
4 Եփես. Դ 26

անդ գեհենն սպառնաց եւ աստ զպա[տ]արա[գ]աւք իսկ[1] չընդունի, զի ցուցցէ, թէ որչափ ինչ չար իցէ ախտ բարկութեանն, եւ այսու ամենայնիւ զարմատն եւ զպտուղն կամի ջնջել: Վասն այսորիկ եւ զդատաստանէ ճառէ եւ ի ժողովրդեանն եւ ի գեհենին պատժապարտս առնէ, եւ զպատարագն ի սեղանն ապախտ առնէ յառաջ քան զհաշտելն: Ապա յաւելու ի նոյնն եւ զմիւսն, եթէ՝ յառաջագոյն հաշտեսջի՛ր ընդ ոսոխին քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ մահ ճանապարհի, զի մի՛ ասիցես, թէ ընդէ՞ր զրկիցիմ եւ յապշտակութիւն մատնիցիմ: Եւ զայն եւս պատճառս ի միջոյ բառնաս, եւ հրամայէ այնպէս մի՛ թշնամութիւն ընդ ումեք ունել: Եւ այս մեծ հրաման է, եւ ի մերձաւորացս տայ խրատ, զի զթանձրամիտսն այլ աւելի քան զհանդերձեալսն սովոր է գրաւել: Եւ արդ, զի՞ ասիցես, թէ բուռն քան զիս է եւ եւս չար յաղթահարէ: Եթէ ոչ յառաջագոյն պաշտիցիս, եւ [հ]արկ իցէ քեզ ատեան մտանել, զի յառաջ քան զատեան մտանելն թէպէտ եւ յ[ը]նչիցս անկանիցիս, սակայն անձին տէր ես: Իսկ յորժամ ի ձեռս դատաւորի մատնիցիս, ե՛ւ ի կապանս եւս մտանես, ե՛ւ զյետին պատիժս կրիցես: Վասն այնորիկ յառաջագոյն ստիպէ հաշտել ընդ ոսոխին եւ յարէ ի նոյն, թէ վաղագոյն եւ թէ մինչդեռ ի ճանապարհի իցես, եւ այսու ամենայնիւ ստիպէ փութագոյն լինել ի սէրն, զի ոչ այնչափ եղծանէ զմեր ոճս, իբրեւ զծուլութիւն ի գործս պատուիրանաց: Վասն որոյ եւ Պաւղոս յառաջ քան զմտանելն արեգականն խրատէ քակել զթշնամութիւնն: Եւ Տէրն յառաջ քան զմատուցանել պատարագին հրամայէ հաշտել, նոյնպէս եւ աստ. մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի եւ մինչ չեւ մտեալ իցես յատեան, տէրն ես ամենայնի: Իսկ յորժամ ընդ հարկաւ մտանիցես, ոչ որպէս դուն կամիցիս, այլ որպէս բռնութիւնն հրամայիցէ, ա՛յն լինի: Եւ արդ, զինչ իցէ բարի միտս ունել ընդ աւսոխին, կամ այն իսկ է բնաւ յանձին. ունել զվնասն կամ այնպէս տալ իրաւունս, որպէս թէ ընդ դատաւորաւն իսկ մտեալ իցէ եւ զարդարակշիռն կորուսցէ, զի մի՛ անձնսիրութեամբն զիրաւունս կորուսցէ: Այլ որպէս զիւրն, նոյնպէս եւ զընկերին իրս վճարիցէ, եւ եթէ մեծ ինչ թուիցի այս ընդ այն, մի՛ զարմանար, զի վասն այնր եւս զայս ամենայն երանութիւնս՝ առ ի յորդորել եւ յերիւրել զմիտս լսողացն, զի պիտանացու լիցի առ յ[ը]նդունել զայս ամենայն աւրէնսդրութիւնս: Իսկ ոմանք ասեն, եթէ զատանայէ արկնար-

1 Ձեռագրում՝ յիսկ:

կէ ոսոխին անուամբ եւ հրամայէ ոչինչ ունել ի նորայոցն, զի այն է բարեմիտն լինել՝ հրաժարելն ի նմանէ, յորժամ աստի երթեալ ոչինչ գտանիցի նորա մասն ի սմա: Ապա եթէ ոչ այնպէս իցէ, անհրաժեշտ լինիցի տանջանքն: Բայց ինձ այս թուի, եթէ զայնմ դատաւորաց եւ զատենէ եւ զբանդէ ասէ, որպէս Պաւղոս մերթ հանդերձելովքն եւ մերթ մաւտաւորաւքս յորդորէ զլսողսն: Վասն որոյ հարկէ հնազանդ լինել իշխանացն, զի Աստուծոյ պաշտաւնեայք են ի նոյն կարգեալք: Սոյ[նպէս] եւ Քրիստոս ոչ միայն գեհենիւն, այլ եւ ատենիւ եւ բանդիւ որ աստ դիպիցին՝ սպառնայ, զի այսու ամենայնիւ զարմատ սպառնութեանն կոտորիցէ, զի որ ոչ բամբասիցէ եւ ոչ թշնամութիւն ընդ ումեք ունիցի, զիա՞րդ իցէ, զի սպանանել ժտիցի: Զի այսու յայտ լիցի, եթէ որ ընկերին յաւգուտ է, եւ մեզ աւգուտ գործէ[1], զի որ ընդ ոսոխին բարեաւք միտս ունիցի, որչափ եւս առաւել իւր շահ առնիցէ, զի յատենից եւ ի բանդից եւ յամենայն տառապանաց զանձն ազատիցէ եւ զպատուիրանս Նորա կատարիցէ եւ մեծութեան փառացն Նորա հասանիցէ:

«Լուարուք, զի ասաց առաջնոցն, եթէ մի շնայցես, այլ Ես[2] ասեմ ձեզ, թէ ամենայն մարդ, որ հայի ի կին մարդ առ ի ցանկալ, անդէն շնացաւ ի սրտի իւրում»[3]:

Յորժամ կատարեաց զառաջին պատուիրանն եւ ի գլուխ առաքինութեան տարաւ հասոյց, ապա իբրեւ յուղի անկեալ գայ հասանէ յերկրորդ պատուիրանն, զի գոնեայ այնու հաւանիցին մարդիկ աւրինացն, զոր չէ պարտ երկրորդ պատուիրան կոչել, այլ եր[ր]որդ, զի առաջին ոչ այն է, թէ՝ «Մի՛ սպանաներ», այլ այն է, թէ՝ «Տէր Աստուած քո Տէր մի է»[4]: Զոր եւ պարտ իսկ է խնդրել, եթէ ընդէր ոչ անդի արար սկիզբն, ուստի սկիզբն պարտ էր առնել եւ զնոյն աճեցուցանել եւ զիւր անձն ծանուցանել, այլ քանզի չէր ժամանակ զիւր անձն յայտնել, զի դեռ ի խրատականն կրթել կամէր եւ նշանաւքն հաւանեցուցանել, թէ արդարեւ Որդի Աստուծոյ է, զի թէ վաղվաղակի ասացեալ էր, թէ լուարուք, զի ասացաւ, թէ՝ «Ես եմ Տէր Աստուած

1 Ձեռագրում՝ գործէի:

2 Ձեռագրում՝ մի շնայցես, այլ ես ասեմ ձեզ, թէ՝ Մի շնայցես այլ ես փխ եթէ՝ մի շնայցես, այլ ես:

3 Մատթ. Ե 27-28

4 Բ Օր. Զ 4

քո»[1], եւ անդէն ասէր, թէ՝ «Եւ Ինձ եւս երկրպագէ՛ք»[2], զամենեսեան խրատուցանէր իբր ի մոլեկան հայել ի Նա: Զի թէ յետ անչափ վարդապետութեանց եւ նշանաց եւ մինչ չեւ այնպիսի ինչ յայտնեալ էր, դիւահալ կոչէին զՆա, եթէ յառաջ այդպիսի ինչ յայտնեալ էր, զինչ ինչ ոչ կոչէին զՆա: Իսկ ի դէպ ժամանակ պահելով՝ զայսպիսի ինչ վարդապետութիւն[ս] դիւրընկալ առնէր բազմաց զկրաւնսն: Վասն որոյ առ ժամանակ մի զանցուցանէր զայնու եւ զառաւել վարդապետութիւնն յետոյ յայտ առնէր բանիւք, բայց նախ նշանացն հանդիսիւք եւ վարդապետութեանն աւրինակաւ առ սակաւ մեղմով ընդ նմին խառնեալ յայտնէր, զի իշխանութեամբ այնպիսի աւրէնս դնել եւ կարգել ուղղութիւնս զգուշականս[3] մտադիւրս առ սակաւ մեղմով ի կրաւնս իսկ ածեալ ձգէր, քանզի ասէ իսկ, եթէ զարմանային ընդ վարդապետութիւն Նորա, զի ոչ իբրեւ զդպիրսն ուսուցանէր: Եւ սկսել յընդոյծին ախտից մերոց ի ցասմանէն եւ ցանկութենէն, քանզի եւ նոքա իսկ բռնաւորագոյնք իմն են ի մեզ եւ քան զայլս առաւել բնակաւորք են ի մեզ, վասն որոյ բազում իշխանութեամբ ածէ զայսպիսի[4] ախտս յուղղութիւն եւ ամենայն հաստատութեամբ խափանեալ արգելոյր, զի ոչ ասաց, եթէ շնացողն միայն իցէ տանջելոց, այլ եւ զարատ հայեցողսն ի տանջանս հրաւիրէ, զի իմասցիս, եթէ յաճախագոյն քան զդպրացն ճառէ: Վասն որոյ ասէ, թէ՝

«Որ հայի ի կին մարդ ցանկութեամբ, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտին»[5]:

Այսինքն՝ որ յայն հարեալ զայն եւեթ գործ առնիցէ իւր՝ զգեղեցիկ մարմինն նշմարելով հանապազ եւ զմիտսն կրթեալ յապուշ որսայցէ անհնարին ցանկութիւն ապականիչ զննելով աչացն: Քանզի ոչ եթէ զմարմինս եւեթ եկն զերծուցանել ի չարեաց, այլ եւ զոգիս նախ: Եւ քանզի ի սիրտն զշնորհս Հոգւոյն ընդունիմք վնաս, նախ սրբէ: Բայց ասա ոչ վայրապար զցանկութիւնն ի միջոյ բառնայ, այլ որ ի գեղեցիկ երեսաց գրգռութիւն ցանկութեան լինի: Վասն որոյ չասաց,

1 Մա. ԺԵ 7, Եղ. Ի 2, 5
2 Եղ. ԺԱ 8
3 *Ձեռագրում՝* զգաղշականս:
4 *Տողամիջում՝* սի:
5 Մատթ. Ե 28

եթէ՝ որ ցանկայցէ՝ շնայ, այլ՝ «Որ հայիցի ցանկութեամբ»: Եւ որպէս ի բարկութեանն խտրոց ի միջի դնէ ասելովն, թէ՝ «Որ ի տարապարտուց եւ զուր բարկանայ»[1], սոյնպէս եւ աստ խտրոց ի միջի դնէ, եթէ՝ «Որ ցանկութեամբ հայիցի»: Եւ ոչ պարզաբար ասաց, եթէ՝ որ ոք ցանկայցէ. զի որք ի լերինսն նստիցին, չեն առանց ցանկութեան, քանզի երկոքեան ընդաբոյսք եւ ի բարի պէտս հաստատեալ են ի մեզ ցասումն եւ ցանկութիւն, զի միովն չարսն խրատեմք եւ զստահական յուղղութիւն ածեմք եւ միւսովն որդիս ծնանիմք եւ պայազատ ժառանգ յետ մեզ թողումք: Վասն այսորիկ սրբէ յամենայն ախտից զայս երկու բոյս բարեաց, զոր հաստատեաց ի մեզ ի գործս բարեաց: Իսկ աւելորդ ցանկութիւնն ոչ եթէ ի բնութենէ ինչ լինիցի, այլ ի քումմէ ծուլութենէ, զոր եւ հինն իսկ պատուիրէ անդուստ ի վերուստ, եթէ՝ մի՛ պշնուցուս ընդ գեղ աւտար[2], զի որ մի անգամ զբոց ցանկութեան բորբոքէ, այնպիսին կանգնէ ի միտսն կուռս իրացն աղտեղութեան եւ բազում մուտ եւ ընդարձակ տեղիս տայ սատանայի: Եւ այնուհետեւ ոչ կարիցես մերժել զնա ի բաց, յորժամ ի ներքս ի խորհուրդն ընդունիցիս: Վասն որոյ ասէ իսկ, թէ՝ մի՛ շնայցես աչաւքդ, զի մի՛ եւ մտաւքդ եւս շնայցես:

Նաեւ ոչ վասն այն իսկ ետ քեզ Աստուած աչս, զի նոքաւք շնայցես, այլ զի տեսանիցես զարարածս եւ փառաւորիցես զԱրարիչն, եւ ոչ զի զննիցես զգեղ լկտի կանանց, որք պաճուճեալ գեղով՝ մատուցանեն զբաժակ մահու, թէպէտ եւ ոչ ոք իցէ, որ ըմբիցէ, այլ ոչ ասեն, թէ առ կանայս ինչ իցէ աւրէնսդրութիւնն, այլ ես ցուցանեմ առ հասարակ առ արս եւ կանայս կարգեաց զաւրէնս, թէպէտ ընդ արս խաւսի գլխովն, առ ամենայն իսկ մարմինն կարգէ զխրատն, զի զայր եւ զկին մի ինչ երես դիտէ կոչել եւ ոչ ուրեք որոշէ ազգս ազգաց աւրէնսդրութեանն: Ապա թէ առանձինն կամիցիս զնոցա պատուհասն լսել, լո՛ւր Եսայեայ, որ յաճախ յերգ արկեալ հեգնէ [...][3] զնոցա կերպարանս եւ զհայեցուածս եւ զքարշել ստորոտոցն այլովքն հանդերձ[4]: Եւ Պաւղոս յանդիմանէ եւ բազում աւրէնսդրութիւն կարգէ նոցա: Նաեւ Քրիստոս յաջորդաւքն իբրեւ առակաւ իմն զնոյն ճառէ, յոր-

1 Մատթ. Ե 22
2 Հմմտ. Սիր. ԻԵ 28, ԽԱ 26:
3 1 բառ
4 Հմմտ. Ես. Գ 16:

ժամ ասիցէ՝ խլեա՛, ի բա՛ց ընկեա զմոլորեցուցիչն, ի նոսա իմն հայեցեալ ասէ զնոյն սաստիւ, քանզի յարէ ի նոյն.

«Թէ ակն քո աջ գայթակղեսցէ զքեզ, խլեա՛ զնա եւ ընկեա՛ ի բաց»[1]:

Ոչ զանդամոցն ինչ ասէ, քաւ լիցի, այլ ամենայն իրաւք զչար բանն բամբասէ, զի ոչ աչքն եւեթ տեսանեն, այլ միտքն են, որ տան աչացն տեսանել: Զի յորժամ միտքն զբաւսեալ իցեն, աչքն ոչ տեսանեն զմերձաւորն, զի յայտ լիցի, եթէ ոչ ամենայն ինչ՝ աչացն ազդմանէ, այլ մտացն: Ապ[ա] եթէ ոչ, զիա՞րդ զաջ ակն միայն տայ խլել, զի եւ ձախն զնոյն գործէ. զի յայտ լիցի, թէ ոչ վասն անդամոց ինչ իցեն բանքն, այլ վասն այնոցիկ, որ կարի ինչ ընտանութիւն ունիցին ընդ մեզ: Զի եթէ այնպէս զոք սիրիցես իբրեւ զաջոյ ակն, եւ կամ թէ այնպէս պիտանի ոք իցէ քեզ իբրեւ զաջ ձեռդ, եւ ոգւոյդ վնաս ինչ առնիցէ, հա՛ռ եւ ի բա՛ց ընկեա: Եւ տե՛ս, զիարդ ոչ ասաց, եթէ մերժեաց ի նմանէ, այլ բազում որոշումն յայտ առնէ. խլեա՛, ասէ, եւ ի բա՛ց ընկեա: Եւ զի համառաւտ իմն եւ ահագին ետ զհրամանն, ցուցանէ ի միւմէ կողմանէն զշահն ի բարութեանցն եւ զչարեացն զվնասն եւ յամէ յայլասացիկ յորջորջմանն.

«Լաւ իցէ քեզ,- ասէ,- թէ մի յանդամոց քոց կորիցէ, քան թէ ամենայն մարմինդ անկանիցի ի գեհենն»[2]:

Յորժամ ինքն ոչ ապրիցի, եւ զքեզ եւս կորուսանիցէ: Եւ եթէ երկոքեան ընկղմիցին, զի՞նչ շահ ի միաբանութենէ սիրոյն լինիցի: Վասն որոյ ոչ միայն ասէ, թէ՝ «խլեա» եւեթ, այլ թէ՝ «եւ ի բաց ընկեա». զի մի միւս անգամ անդրէն դարձցիս, այնպէս զնա խակ ի բազում պատուհասից փրկեսցես եւ զքեզ ազատ ի կորստենէ առնիցես, զի թէ հարկ ինչ լինէր զմի յանդամոցդ հատանել եւ զայլ ապրեցուցանել կամ թէ զբոլորն կորուսանել, ոչ ապաքէն ախորժէր զհատումն միոյ անդամոյն, քան զկորուստ բոլորին: Տեսանես, որչափ զգաւնութեամբ եւ խնամով լի են Նորա պատուիրանքն: Եւ որ կարծէրն բազմաց սաստիկ գոլ, զոր [...][3] անդի երեւի Նորա առաւել մարդասիրութիւնն, զի յամէն կողմանց զքո աւգուտ խնդրէ: Վասն որոյ ասէ. «Ոչ

1 Մատթ. Ե 29
2 Նոյն տեղում
3 1 բան

եկի ես լուծանել զաւրէնս եւ զմարգարէս, այլ՝ կատարել»[1]. եւ կատարումն թերութեան լինի պիտոյ, եւ թէ զինչ է կատարումն մարգարէից, յայտ առնէ. «Ահաւասիկ,- ասէ,- ելանեմք յԵրուսաղէմ եւ կատարի ամենայն ինչ, որ մի անգամ գրեալ է վասն Իմ»[2]: Եւ վասն նոցին թերութեան ասաց, թէ՝ անցեալ են առաջինքն, այլ զայս, որ մկրտին ի կատարումն եւ ընկղմեցան ի յաւելուածն եւ նորոգեցան առաւելութեամբն: Ասէ. «Դիւրագոյն է երկնի եւ երկրի անցանել, քան յաւրինաց անտի միւմ նշանի անկանել»[3], եւ ամենայն, որ լուծանիցէ, ասէ, ինչ մի ի պատուիրանաց Նորոց Կտակարանաց:

«Որ հարկանէ զծնաւտ քո, մատո՛ դու նմա զմիւս կողմն»[4]:

Եւ հաստատէ զայն, զի ասէ ապտակ ընդ ապտակի թերի է այն, որ հաստատեաց կացոյց ստուգութիւնն ի ժամանակ շնորհացն: «Եթէ ոչ,- ասէ,- առաւել գտանիցի արդարութիւն ձեր քան զդպրացն եւ փարիսեցւոցն, ոչ կարէք մտանել արքայութիւնն երկնից»[5]: Արդ, նոցա ասացաւ ոչ սպանանել, եւ ձեզ՝ ոչ բարկանալ, նոցա՝ ոչ շնալ, եւ ձեզ՝ ոչ ցանկալ, նոցա՝ ապտակ ընդ ապտակի, այլ աստ. «Որ հարկանէ զծնաւտ քո, մատո՛ դու նմա զմիւս եւս կողմն»: Եւ ուսուցանէ այլ կերպս. «Եթէ յորժամ մատուցեալ իցէ քո,- ասէ,- պատարագ ի վերայ սեղանոյ, թո՛ղ զպատարագն քո եւ ե՛րթ հաշտեաց»[6]. զի մի՛ կարծիս դիցէ ի վերայ ստուգութեանն, եթէ վասն պատարագին անփոյթ արար, եւ ոչ պահանջես զյանցաւորն. «Եթէ ոչ,- ասէ,- առաւել գտցի արդարութիւն ձեր քան զդպրացն եւ փարիսեցւոցն»: Քանզի հրամայեն աւրէնքն, ասէ. «Մի՛ լինիր հակաքաղ զկնի հնձողացն յանդի քում»[7], եւ՝ «Մի՛ առներ ճռաքաղ զայգին քո, այլ աղքատ այս ասէ եղիցի այն»[8]: Եւ այն այնոցիկ, որ ընդ աւրինաւքն են: Իսկ արդ, այնոցիկ, որ քրիստոնեայք են, զինչ եւս ասասցէ, որոց Տէրն մեր ասաց. «Եթէ ոչ առաւել գտցի արդարութիւն ձեր աւելի քան դպրացն եւ փա-

1 Մատթ. Ե 17
2 Հմմտ. Մատթ. Ի 18, Մարկ. Ժ 33, Ղուկ. ԺԸ 31:
3 Մատթ. Ե 18
4 Մատթ. Ե 39
5 Մատթ. Ե 20
6 Մատթ. Ե 23
7 Բ Օր. ԻԴ 20
8 Ղեւ. ԺԹ 10

բիսեցւոցն, ոչ կարէք մտանել յարքայութիւնն երկնից»: «Զա՛յս լուարուք,- ասէ,- զի ասացաւ՝ մի՛ սպանանէք, զի որ սպանանէ, դատապարտէ. այլ Ես ասեմ ձեզ՝ որ կարդայ եղբաւր իւրում յիմար»[1]: Եւ զի եւ այս եւս փոքրկութեամբ գայթակղեցուցանէ զմարդկութիւն. տգէտ զգնացս ժամու ճանաչէ, իսկ իմաստունն՝ զգնացս խորհրդոց: Արդ, կատարեալս ի մէջ կատարելոց կամեցաւ մուծանել, այսինքն՝ կատարեալս ի մէջ հրեշտակաց: Առ Տէր մեր արդարք պարտաւոր են, սոյնպէս նոքա՝ յաչս միմեանց: Եւ ազատութիւն մարդոյն լինել նմանողս Աստուծոյ, զի կամաւք ստացի զայն, ինչ զոր Աստուած բնութեամբ Իւրով ունի: Եւ հայեա՛ց դու, զի եւ Նա իսկ թէպէտ եւ բնութեամբ ունէր, սակայն իբրեւ ազատութեամբ շրջեցաւ:

«Լուարուք,- ասէ,- զի ասացաւ, թէ՝ մի՛ շնար. այլ Ես ասեմ ձեզ, թէ ամենայն, որ հայի եւ ցանկայ, շնացաւ»[2],

քանզի էին, որ սիրէին զստացուածս եւ զփափկութիւնս գրգանաց եւ զբան չարութեան, ասէ Տէր մեր, զի եթէ ձեռն քո կամ ոտն քո, զի թէ մինչ յանդամս անգամ ասացի քեզ, զիա՞րդ անխայեսս դու ի վերայ ստացուածոց կամ ի վերայ փափկութեան գրգանաց. զի եթէ դադարեցուցանես ի քեզ անդամաւն հատանելով զանէծս եւ զհայհոյութիւն եւ թշնամանս, ընդէ՞ր ոչ հատանես դու զլեզու քո, զի ի հարկէ միոյ անդամէ անտի հանգիստ ամենայն ցաւոց լինի, կամ թէ չարաչար գործեցեր, զի ոչ հատեր, կամ թէ բարեաւք ոչ լուար, կամ թէ չար հատեր զանդամն կամ անմտութեամբ լուար զպատուիրանն, զի այնու, որ ոչ հատեր զանձն քո, յանդիմանեցար, թէ չար գործեցեր, զի ոչ հատեր, զի ի չարչարանաց երկեար դու եւ կամեցար լուծանել զպատուիրանն, զի մի՛ ապականեսցես զանդամն:

Բայց արդ, աղէ, տեսցուք, եթէ դադարե՞ն հա[յ]հոյութիւնք ի հատանել[3] լեզուին. չարաչար գործեն այնոքիկ, որ ոչ հատանեն, ապա եթէ ոչ դադարեն, չարաչար լուան այնոքիկ, որ հատին: Կամ Ինքն Տէր մեր զիա՞րդ հրամայէր հատանել զանդամն այն, որ ի հատանել նոցա մարմինն ապականի, եւ կնճիռն ոչ խլի: Արդ, ոչ եթէ զանդամս գեղեցիկս, զոր յաւդեաց Աստուածութիւնն, արժան է հատանել, այլ զխորհուրդս չարս, զոր [յաւդէ ազա]տութիւն: Եւ զայս դարձեալ եցոյց Տէր մեր, թէ մինչեւ յոր վայր պարտ է մեզ մարտնչել, զի մի՛ իցեմք յաղթահարեալ ի չարէն. իբրեւ զայն, զի ասէ՝ մի՛ պատուէք զհանդերձս, այլ՝ զսիրտս. զի մեծատանն մեծութիւն իւր աջ ձեռն էր: Եւ գայթակղեցոյց զնա, զի ոչ հատ ընկեաց զնա: Եւ Հերովդի[1] աջ ակն էր Հերովդիադա, եւ փոխանակ խլելոյ ընկնլոյ զակն պիղծ, հատ ընկեաց զսուրբ կառափն Յովհանու: Շմաւովն զամենայն անդամն հին մարդոյն հատ ընկեաց, զի մի՛ գայթակղեցուցէ զնա, ահաւասիկ ասէ. «Մեք թողաք զամենայն»[2]:

(շարունակելի)

1 Մատթ. Ե 21-22

2 Մատթ. Ե 27

3 *Ձեռագրում՝* Հատատանել:

1 *Ձեռագրում՝* Հերովդի:

2 Մատթ. ԺԹ 27

թեանն, զիշխանութիւնն, զփառս, զմեծութիւնն, զարքայութիւնն, զպատիւ, զճոխութիւն հասարակ երրորդութեանն անճառելոյ խոստովանիմք: 8 Իսկ զՀայրն եւ զՈրդի եւ զՍուրբ զՀոգին շրթամբք խոստովանելով եւ սրտիւ հաւատալովն՝ առանձինն գոլ հաւատամք իւրաքանչիւր Ումեք, զի յայսոսիկ հաւասարութիւն տալ Երիցն ոչ ընդունի Եկեղեցի, այլ մի Հայր՝ պատճառ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ մի Որդի՝ ծնունդ էութեան Նորա, եւ մի Հոգի Սուրբ՝ ելող ի Հայրէ: 9 Դարձեալ եւ յանուանցդ գտանեմք ի Գիրս՝ ոչ ինչ խտրելով ասել Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 10 Նախ՝ Ինքն ասէ Փրկիչն յաղագս Հայրն. «Հոգի է Աստուած»*, եւ ապա† Երեմիա մարգարէն վասն Որդւոյ. «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս»‡: 11 Այլ եւ լոյս եւ կեանք եւ ճշմարտութիւն, բարութիւն ամենայն, սէր, գթութիւն՝ հանդերձ երկայնամտութեամբ եւ անոխակալութեամբ եւ պարգեւասիրութեամբ եւ որ ինչ նման է այսոցիկ, ասել հասարակաբար Սրբոյ Երրորդութեանն Գիրք ոչ արգ/201ա/ելուն, եւ խոստովանեալ է յամենեցունց նոյն Ինքն՝ անայլայլելի եւ անփոփոխելի, ժամանակի արտաքոյ, ամենեւին եւ՝ հասման: 12 Զի այսոքիկ եւ որք նման սոցին՝ արարեալք առ ի Նմանէ եւ ոչ համագոյք Նորա եւ համեմատք, պատճառ ամենայնի եւ պատճառաց երիցագոյն, հաստիչ բնութեան եւ գոյացութեան, որ զամենայն բովանդակէ, եւ յիմիքէ Ինքն ոչ բովանդակի, միայն ճշմարիտ՝ վասն ոչ ի սկսմանէ զէութիւնն ասնելոյ եւ ոչ կատարածի ի ներքոյ անկեալ: 13 Քանզի այլքն ամենայն էութեան վիճակեալք վախճանի եւ սկսմամբ պարունակին, եւ ոմանք՝ ոչ երկուքումք ի նոցանէ, զի են յաթարածոց անմահ՝ որպէս մարդկային ոգի եւ հրեշտակք: 14 Սակայն առանց սկսման եւ ոչ մի ոք, թէպէտ եւ արտաքոյ իմաստութեանն աշակերտքն ասասցեն յաւետակից Աստուծոյ զնիւթն կամ զԱստուած կարաւտ նիւթոյ, եւ ոմանք՝ բնութեամբ գոլ զամենայն եւ առանց Արարչի կամ ինքնամատուցիկ որպէս ասասցին, զի զմանիքեցւոցն եւ զվաղենտինոսացն թողցուք զերեսուն յաւիտեանսն եւ զխաւար եւ զանդունդս:

* Ցովհ. Դ 24
† Գրչագիրը լաւ չի ընթերցւում:
‡ Ողբ. Դ 20

<Ա>

/200ա/ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱԿ<Ի> ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆՆ ՅԺԸ-ԻՑՆ*

I. 1 Արդ, ըստ Աստուածաշունչ Գրոց եւ ըստ հարցն աւանդութեան՝ «Մեզ մի է Աստուած Հայր, յՈրմէ ամենայն, եւ մեք ի Նա, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն, եւ մեք Նովաւ»†. յայտ է, թէ եւ մի Հոգի Սուրբ Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ: 2 Ո՛չ երեք աստուածք՝ ըստ բնութեան աւտարք ի միմեանց, եւ ո՛չ մի անձն՝ տկար յառատութիւն, այլ Մի Աստուած՝ յաղագս նոյնութեան բնութեանն, եւ Անձինք Երեք՝ վասն ամէնառատութեանն եւ անճառելին խորհրդոյ: 3 Դարձեալ, ո՛չ երեք անսկզբունք, քանզի Հայր միայն է անսկիզբն, ո՛չ յումեքէ ծնեալ, իսկ Որդի՝ ծնունդ Նորա, եւ Հոգին Սուրբ յառաջ եկեալ ի Նմանէ, բայց ըստ ժամանակի՝ անսկզբունք իբրեւ զՀայր, եւ ոչ Երեքեան սկզբունք Միմեանց: 4 Վասն զի Հայր է սկիզբն Որդւոյ ծննդեամբ եւ Հոգւոյ՝ արտաքս առաքմամբ, ո՛չ մի անձն՝ վասն երեք գոլոյն, եւ ո՛չ երեք աստուածք՝ վասն միոյն բնութեան, վասն որոյ եւ անբարժանելի խոստովանիմք: 5 Եւ ոչ է կարծել մի գոլ անձն երեք անուամբք, վասն զի Սաբելի է այս, եւ ոչ երիս այլս ըստ բնութեան, քանզի արիոսր/200բ/եան է այս, այլ մի գոլ բնութեան զերիս Առանձնաւորութիւնսն: 6 Է ինչ, զոր հասարակաբար խոստովանիմք Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ է ինչ, զոր առանձնապէս: 7 ԶԱստուածն անուն եւ զզաւրութիւն Աստուածու-

* Բնագիրը ներկայացնում է ըստ Ս. Ղազար N 504 գրչագրի՝ անշան ուղղագրական միջամտութիւններով. օրինակ՝ վերականգնուած են բաց թողնուած յ-երը եւ ւ-երը՝ քահանաի-քահանայի, հոգոյ-հոգւոյ եւ այլն, ուղղուած են տառասխալները՝ ելատելող, հոգիոյ-հոգւոյ, տեղիոջ-տեղւոջ, սղալ-սխալ, զքանչելի-սքանչելի եւ այլն:
† Ա Կոր. Ը 6

II. 1 Արդ, պարզից եւ խառնեցելոց մարմնոց եւ իմանալւոյ էութեանն Ինքն է Արար/201բ/իչ՝ միայն անյաւդական եւ պարզ գոլով, ըստ բնութեան՝ անորակ, անքանակ, ոչ ի տեղւոջ, քանզի սոքա ի նիւթոյ եւ ի տեսակէ հաստատելոց յարմարեալ տուան, իսկ ամենասուրբ բնութիւն Երրորդութեանն գեր ի վերոյ ամենայնի է, վասն որոյ միտք ամենայն եւ բան տկարանան իմանալ ինչ կամ ասել յաղագս Նորա ստուգութեամբ: 2 Բայց զի մի՛ ի կատարեալ եւ ի միայն էապէս բարւոյ անտի զրկեսցի մարդկային բնութիւնս, չափաւորապէս եւ ըստ զիջանելոյ խաւսեցաւ առաքելովք եւ մարգարէիւք ընդ մեզ, որոց եւ երեւեցաւ, որք անկար էին տեսանել, զի «ոչ ոք է,- ասէ,- որ տեսանէ զերեսս Իմ եւ ապրէ»: 3 Եւ մեծն Աբրահամ, յորժամ ընդ կերպարանեցելումն ի տեսիլ մարդոյ խաւսէր ընդ Տեառն վասն սոդոմացւոցն, ծանուցեալ զեղականի բնութեանս տկարութիւն եւ զՆորա պատուոյն գերազանցութիւնն՝ ասէր. «Որովհետեւ սկսայ խաւսել ընդ Տեառն, բայց ես հող եմ եւ մոխիր»†: 4 Իսկ Դաւիթ առաւելութեամբ ասէ. «Ո՞ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն»‡. զի եթէ վասն զաւրութեան Նորա ոչ ոք է բաւական ըստ արժանի խաւսել ինչ, վասն նորուն Ինքեան, Որոյ զաւրութիւնն է, զի՞նչ ասասցուք: /202ա/ 5 Հիանայ եւ ամէնիմաստն Պաւղոս ոչ ընդ անհասութիւն բնութեանն, քանզի ոչ համարձակէր, այլ ընդ մուտն հեթանոսաց եւ ընդ տարագրութիւնն Իսրայիղի. «Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ, որպէ՛ս առանց քննելոյ են դատաստանք Նորա, եւ առանց զննելոյ՝ ճանապարհք Նորա»§: 6 Առնու եւ զմարգարէն ձայնակցել. «Ո՞ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞ խորհրդակից եղեւ Նմա, կամ ընդ ո՞սմ խորհեցաւ գտանել ի Նմանէ հանճարոյ խելամտութիւն, կամ ո՞ ետ Նմա փոխ եւ հատուցանիցէ Նմա»**: 7 Եւ զի ոչ զաւրէր սուրբն կատարելապէս իմաստասիրել վասն իրացն յԱստուծոյ մատակարարելոյ, կնքէ փաւաւորութեամբ զբանն, զի «ի Նմանէ,- ասէ,- եւ Նովաւ եւ ի նոյն ամենայնի††, Նմա փառք յաւիտեանս, ամէն»:*

* Տե՛ս Ել. Լգ 20:
† Տե՛ս Ծն. ԺԸ 27:
‡ Սաղմ. ՃԵ 2
§ Հռոմ. ԺԱ 33
** Տե՛ս Ես. Խ 13:
†† Տե՛ս Բ Տիմ. Դ 18, Եբր. ԺԳ 21, Գաղ. Ա 4, Հռոմ. ԺԶ 26:

Յաղագս Որդւոյ

III. 1 Որ ինչ ի վեր է քան զմեզ, հրամայեցաւ եւ ոչ քննել: 2 Դարձեալ, ընկալաք պատուէր՝ քննել զԳիրս: 3 Որպէս զի ի ձեռն առաջնոյն ուսցուք մի՛ մտացածին բանիւք յանդգնել յաղագս Աստուծոյ ինչ իմաստասիրել՝ աւելի քան զգրեալսն իմանալ կարծելով, իսկ ի ձեռն երկրորդին զծուլութիւն հեղգութեան եւ զդանդաղանաց ի բաց ընկ/202բ/ենուլ եւ գործասիրաբար զաշխատասիրութենէ բուռն հարկանել եւ կրթութեամբ Գրոց իմաստնանալ եւ երկիւղիւ մեծաւ զքննութիւնն յաղագս Աստուծոյ մատչել առնել:*

*IV. 1 Արդ, թէպէտ եւ զՀայր գիտեմք պատճառ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այլ զժամանակի միջնորդութիւն ոչ ընդունիմք ասել եւ ոչ երիցութիւն եւ կրտսերութիւն ի սուրբ խորհուրդ խոստովանութեան Երրորդութեանն իշխեմք մուծանել, վասն զի յաստուածաբանելն Յովհաննու լուաք ասել յաղագս Որդւոյ. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն»†: 2 Զյանդուգն լրբութիւն մոլեգնեցելոյն Արիոսի ըմբերանելով՝ զարարածն ասող Բանին Աստուծոյ, քանզի «Էրն ի սկզբանէն» ոչ պատշաճի արարածոց, եւ դարձեալ՝ «Նա էր ի սկզբանէ, եւ ամենայն ինչ Նովաւ եղեւ»‡: 3 Եւ զիա՞րդ Արարիչն ամենայնի արարած իցէ: 4 Ո՛վ շտեմարան չարութեան եւ ամենայն պղծութեան աղբեւր, զի թէ Արարիչն արարած իցէ, ոչ ինչ արդելու եւ զՀայր հայհոյել քեզ, որ ասացն ցԱրարչակիցն. «Արասցուք մարդ ըստ պատկերի Իւրում եւ ըստ նմանութեան»§: 5 Եւ ի մի պատկեր Աստուածութեանն հաստատեաց զմարդն, վասն զի չեն ի Միմեանց ըստ բնութեան բաժանեալ Մնողն եւ Մնունդն, /203ա/ այլ ամենայնիւ նոյնք եւ նմանք: 6 «Ես եւ Հայր Իմ մի եմք, եւ որ ետեսն զԻս, ետես զՀայր»**, եւ դարձեալ՝ «Ես ի Հայր, եւ Հայր՝ յԻս»††, այսինքն՝ զնոյն յԵրկոսին տեսանել, բայց՝ յառանձ-*

* Տե՛ս Ցովհ. Ե 39:
† Ցովհ. Ա 1
‡ Տե՛ս Ցովհ. Ա 2, 3:
§ Ծն. Ա 26
** Ցովհ. ԺԴ 9
†† Տե՛ս Ցովհ. Ժ 38:

նաւորութեանցն: 7 Արդ, ոչ իւիք զանազանին Մնողին Մնունդն համագոյ, բայց միայն, զի Հայր չէ՛ եւ ո՛չ ասի եւ ո՛չ զատանի ի Հոգւոյն Սրբոյ, պատուակից եւ կարողակից: 8 Որով ամենայն ինչ եղեւ՝ ըստ մեծին Պաւղոսի, որ ասէ, թէ՝ «Ամենայն ինչ Նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛ պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք»*: 9 Որոյ սկիզբն ոչ ժամանակ, այլ Հայր Իւր, ընդ Նմա անսկզբնաբար եւ ի Նմա կատարեալ† յամենայնի՝ իբրեւ զնոյն զաւրութիւն Հաւր եւ իմաստութիւն, պատկեր անվրէպ, ծագումն փառաց եւ նկարագիր էութեան Նորա, կերպարան, Միածին Որդի, Բան, խորհուրդ: 10 Անուանի եւ կեանք՝ ըստ ճշմարտութեան, լոյս, ճանապարհ, ճշմարտութիւն եւ ամենայն, որ ինչ գերազանցեալ բարութեան է նշանակիչ: 11 Այլ դու, եթէ կամիցիս զճշմարտութիւն Որդւոյ առ Հայր տեսանել, մի՛ հեղգասցիս մտանել ի դպրոցն աստուածային, ուր լուիցես նախ ի նոյն Ինքն Միածնէ Որդւոյն Աստուծոյ. «Հայր Իմ մինչեւ /203բ/ ցայժմ գործէ, եւ Ես գործեմ»‡: 12 Տեսանե՞ս զանսխալապէս գործակցութիւնն: 13 Եւ դարձեալ, որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի, զորս կամի, կենդանի առնէ եւ չասէ՝ ըստ մասին գոլ Հաւր գործակից զինքն կամ երկրորդ ի տալն կեանս, այլ ամենեւին ըստ Նմին եւ նոյնպէս: 14 Եւ զի անբաժանելի է ի Հաւրէ, ասէ. «Ես ի Հայր, եւ Հայր՝ յիս»§. եւ դարձեալ, ի սուրբ եւ փրկական յաղաւթսն Իւր. «Դու՝ Հա՛յր, յիս, եւ Ես ի Քեզ»**: 15 Ոչ ինչ նեղեալ յընդունելն զՀայր, քանզի չէ նուաստ քան զՆա, եւ ոչ ունայն ինչ եւ դատարկ՝ ի Հայր թողեալ մասն յինքենէ, քանզի ոչ մեծ է, քան զՈրդի, Հայր: 16 Բայց յորժամ լսես զայս, մի՛ կարծեր ընկղմել Միոյն ի Միւսն զանմարմին եւ զանճառելի էութիւնն եւ ամենեւին արտաքոյ թանձրութեան եւ նիւթոյ, զի ըստ դիմաց եւ ըստ առանձնաւորութեանց զանազանի երկրպագելի եւ Ամենասուրբ Երրորդութիւնն: 17 Այլ ըստ նոյնութեան բնութեանն ուսաք զՀայր յՈրդի գոլ, եւ զՈրդի՝ ի Հայր, եւ վասն անվրէպ նմանութեանն, եւ զի աստուածային եւ անպատմելի

* Տե՛ս Կող. Ա 16:

† Ըստ ձեռ. N 6453-ի: Բնագրում կատարեալ:

‡ Յովհ. Ե 17

§ Յովհ. ԺԴ 11

** Յովհ. ԺԷ 21

բնութեանն տեղի տանելոյ ոչ այլ ինչ է, բայց Ինքն միայն: 18 Արդ, նախ քան զմարմնանալ Բանին ոչ ան/204ա/ուանի Նորին մերկ Աստուածութիւնն Յիսուս եւ Քրիստոս, այլ Աստուած եւ Բան եւ Որդի Միածին եւ որ ինչ վայելուչ է եւ յարմարական աստուածայնոյ եւ անմարմին էութեան Բանին: 19 Իսկ յորժամ գթացեալ ի մեզ՝ հաճեցաւ մարմնանալ, կոչեցաւ հրեշտակին յայտնութեամբ այսոքիւք անուամբք, քանզի ասէ ցՄարիամ. «Մնցիս Որդի եւ կոչեսցես զանուն Նորա Յիսուս»*, եւ ցՀովիւան. «Մնաւ ձեզ այսաւր Փրկիչ, որ է Քրիստոս»†:

V. 1 Եւ արդ, որքան է տկարութիւն մեր, սակաւուք եւ վասն ընդ մարմնոյ խառնման Բանին ասասցուք: 2 Խոստովանիմք զՈրդին Աստուծոյ ճշմարտապէս մարդ եղեալ, զբովանդակ բնութիւն մարդոյ միացուցեալ ընդ Ինքեան՝ զհոգի եւ զմարմին եւ զմիտս: 3 Ո՛չ նախ ստեղծեալ մարդոյն եւ ապա բնակեալ Բանին, այլ Ինքեան Բանին եղեալ մարմին՝ ըստ Յովհաննու ձայնին, սակայն անփոփոխելի եւ առանց յեղման եւ այլայլութեան կացեալ մնացեալ ըստ Իւրում բնութեանն, որպէս նախ քան զմարմնանալն, զայլայլելի եւ զմահկանացու բնութիւնն ընդ անմահին եւ անայլայլելւոյ յորովայնի ամենամաքուր Կուսին խառնեալ յարմարի: 4 Եւ ըստ բնութեան աւտարացեալսն Իւրով անճառելի իմաստութեամբն խառնեալ /204բ/ միացոյց, վասն զի անհնարինքն առ ի մարդկանէ հնարաւորք են Աստուծոյ, իսկ զոր Նայն առնէ, անհասանելի է մտաց մարդկան եւ հրեշտակաց եւ անպատմելի բանի, մանաւանդ ըստ մարմնոյ տնաւրէնութեանն իրագործութիւն՝ Աստուծոյ զծնունդն եւ զեղելութիւնն, խոստովանիմք եւ ո՛չ լոկ մարդոյ, որպէս չարափառն Նեստորիոս եւ որք ըստ նմա: 5 Հաւանիմ վարդապետին՝ անսալով ամէնիմաստին Պաւղոսի, որ ասէ. «Իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին Իւր, որ եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք»‡: 6 Այսպէս զստեղծանելի մարմնոյն եղելութիւնն անեղ բնութեանն գիտէ, ոչ եթէ զանսկզբնական էութիւնն այլայլեալ փոխադրեաց ինչ Բանն ի զգենուլ մարմին,

* Ղուկ. Ա 31

† Ղուկ. Բ 11

‡ Գաղ. Դ 4

այլ վասն զի աներկբայապէս մարդ եղեւ Որդին Աստուծոյ, Նմա դնէ զեղելութիւնն, զի մի՛ երկու դէմս ոք կարծեսցէ, կամ առանց միանալոյ երկուս բնութիւնս: 7 Զսոյն եւ այլուր ասէ. «Մեզ մի է Աստուած Հայր, յՈրմէ ամենայն, եւ մեք ի Նա, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն, եւ մեք Նովաւ»*: 8 Զի եթէ ոչ Բանն Ինքն մարմնով ծնաւ, այլ՝ պատկերն ծառայի, որպէս ասեն հերձուածողք, ապա ոչ է աստուածածին սուրբ Կոյսն՝ ըստ նոցա, /205ա/ եւ երկուք ոմանք կատարեալք առանց միութեան, եւ ոչ այնուհետեւ ըստ նոցայն հայհոյութեան՝ ամենակատար Երրորդութեանն ի նմին մնացեալ՝ զէորրորդին յաւելուած ընդունելով, եւ խառնակ խոստովանութիւնն Եկեղեցւոյ եւ պաշտաւնն յԱրարիչ եւ յարարած, ի Տէր եւ ի ծառայ:

VI. 1 Բայց մեք հաւատամք զՈրդին Աստուծոյ բնութեամբ եւ ճշմարտապէս մարդ լինել, ո՛չ ի մարդ բնակեալ՝ որպէս ի սուրբս, այլ Ինքեան իսկ լինել կատարեալ մարդ՝ անշփոթ եւ առանց խառնակութեան մնալով, ո՛չ Աստուածութեանն ի մարմնոյ յեղեալ բնութիւն եւ ո՛չ մարմնոյն լուծեալ յանմարմնութիւն, այլ ի վեր քան զբան միացեալ ընդ մարմնոյ Բանին: 2 Վասն որոյ ոչ յերկուս բաժանեալ յետ միանալոյն իշխեմք զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին խոստովանիմք, թէպէտ եւ մարմին առ: 3 Եւ որպէս զմարդ եւ ոչ ոք ասէ այլ եւ այլ բնութիւնս, թէպէտ եւ յոգւոյ եւ ի մարմնոյ զգոյացութիւնն ունի, նոյնպէս եւ ի վերայ Տեառն մերոյ ոչ երկակս պարտիմք իմանալ, զի Իւր եւ ոչ եթէ այլոյ ուրուք է մարմինն անձնաւոր եւ բանական, զնոյն Ինքն՝ Աստուած կատարեալ եւ զնոյն Ինքն՝ մարդ ճշմարիտ, համագոյ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ՝ ըստ Աստուածութեանն, եւ համագոյ մեզ՝ ըստ մարդ/205բ/կայնոյն բնութեան, սակայն ոչ այլ եւ այլ, այլ մի՝ ըստ Գրոց Սրբոց: 4 Կեղծաւորին ոմանք՝ մի ասել դէմ եւ զնոյն բաժանեն յերկուս բնութիւնս՝ խաբելով զպարզամիտս, եւ որ ինչ խոնարհագոյնք թուին գրեալք յԱւետարանն, մարդկութեանն տան, այսինքն լոկ մարդոյ՝ զքաղցն, զծարաւն, զաշխատութիւնն, զզանգիտելն, զննջելն, զմահն, զթաղումն, իսկ զմեծամեծսն եւ զհրաշափառագոյն<ս>ն Աստուծոյ միայնոյ որոշեն՝ զբժշկութիւն ախտիցն եւ զաճեցուցանել հացիցն, ի վերայ ծովուն

* Ա Կոր. Ը 6

գնալն, զաստուածավայելուչ հրամանսն եւ խոստմունսն եւ զյարութիւնն, եւ չիմանան, թէ ի լոկ անուանէ միութեանն շահ ինչ ոչ է, յորժամ իրաւք յերկուս բաժանիցեն: 5 Զխաբէութիւն երկուութեանն իւրեանց թաքուցանեն ընդ մեզ՝ մի դէմն ասելով եւ յայտնեն՝ յերկուս բնութիւնսն անջատելով եւ յերկուս կամս եւ ներգործութիւնս եւ զայն հարկաւորաբար զԱրարիչն հարկի եւ բնութեան ընդ հարկաւ առնել ոչ ամաչեն: 6 Քանզի կարողութիւն էր Նմա եւ հնար՝ ոչ բնաւ ի նուաստագունիցն կրել ինչ, եթէ էր կամեցեալ, եւ վաղվաղակի ընդ ծնանելն ի Կուսէն յառն կատարելոյ գալ հասակ եւ ոչ՝ աճմամբ եւ զարգանալով, /206ա/ բայց անվայելուչ էր չափոյ մարդկութեանն առանց կարգի, եւ անկարգս ինչ կամ անվայելուչս եւ առանց յարմարութեան լինել Աստուծոյ՝ ամբարշտութիւն է կարծելն: 7 Եւ ոչ ի նուաստագունիցն կրել ինչ Նմա ամենեւին դիւրին էր, վասն զի Աստուած էր մարմնացեալ, այսինքն՝ կատարեալ մարդ եղեալ, բայց ըստ որում ասացաւն վայելչականաւն մերոյս եւ բնաւորականաւն վրի<ւ>ր ի փրկութիւն մեզ: 8 Եւ վասն այնորիկ մարդ եղեւ, զի զայն ամենայն յանձն առցէ վասն մարդկան, ապա թէ ոչ, զի՞նչ հարկ ի վերայ կայր Նմա լինիլ մարդ, եւ զի մի՛ ոք յանդգնեսցի առ աչաւք ասել զճշմարիտն մարդեղութիւն Բանին Աստուծոյ, որպէս մանիք եւ այլ բազումք, եւ զփրկութիւնն մեր ապախտ առնել:

VII. 1 Արդ, Ինքն, որ մարմնացաւն՝ Աստուած, յորժամ կամէր եւ ոչ եթէ ի հարկէ ինչ կրէր զմարդավայելուչսն, որպէս եւ սուրբ Աւետարանն ուսուցանէ, թէ՝ «Ի կատարել աւուրցն քառասնից՝ ապա քաղցեաւ»*: 2 Զի եթէ ի հարկէ բնութենէ լինէր բռնադատեալ, որպէս զմեզ, ոչ լնլոյ քառասնիցն, այլ կանխաւ քան զայն քաղցնոյր: 3 Յեղիաս եւ Մովսէս թէպէտ եւ պահեցին զուգաթիւ աւուրս ըստ Տեառն, ոչ եթէ առանց քաղցնլոյ մնացին, վասն զի մա/206բ/ղրիկ էին, թէպէտ եւ աստուածազգեացք էին: 4 Իսկ Փրկիչն մեր յորժամ կամեցաւ, յայնժամ քաղցեաւ, քանզի Աստուած էր ճշմարիտ ի մարմնի միացեալ: 5 Եւ այսպէս եւ ըստ այսմ՝ մեք յերկուս ոչ բաժանեմք զմիոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կամաւորապէս կիրսն եւ զաստուածավայելուչ սքանչելիսն: 6 Վասն զի որք բաժանենն՝ է ինչ, զոր Աստուծոյ

* Տե՛ս Ղուկ. Դ 2:

տան, եւ է ինչ, զոր՝ մարդոյ, առանց երկբայութեան երկուս դէմս եւ երկուս որդիս ի ներքս մուծանեն՝ հակառակ ուղիղ վարդապետութեանն եւ առաքելական աւանդութեանն, զոր ի հարցն ընկալաւ Եկեղեցի: 7 Եւ է այսպէս՝ Աստուածն Բանն յաւիտենական, որ ոչն քաղցնու եւ ոչ երբէք ծարաւէ, որպէս ասէ մարգարէն Եսայի*, Իւրով մարմնովն քաղցնոյր եւ ծարաւէր, եւ նոյն Ինքն, որ ոչ ննջէ եւ ի քուն երթայ, ննջէր մարմնով Իւրով, անաշխատն եւ անվաստակն մարմնովն ի ճանապարհորդութեանն նստէր առ աղբերն վաստակեալ, բարձիչն արտասուաց արտասուէր ըստ մարմնոյն, քաջալերիչն ամենեցուն զերկիւղ յանձն առնոյր մարմնովն, անչարչարելին չարչարէր, եւ անմահն մեռանէր, զի ազատեսցէ զմահուն երկիւղիւ վտարանդեալսն ի ծառայութիւն: 8 Որպէս եղեւ որ ան/207ա/եղն էր եւ առանց սկզբան, մարդ եղեւ Աստուածն, եւ բովանդակիլ յանձն էառ անբովանդակելին՝ անփոփոխ մնալով յԻւրումն առանց կարեաց, նոյնպէս եւ զամենայնն կրեաց անպարսաւելի կիրս եւ սքանչելագործէր աստուածային մարմնովն, զոր առ ի Կուսէն: «Հայր Իմ,- ասէ,- մինչեւ ցայժմ գործէ, եւ Ես գործեմ»†: 9 Թքով բերանոյն կաւ արարեալ՝ զնոյն աչս ի ծնէ կուրին ստեղծանէր եւ ծանր մարմնովն գնայր ի վերայ ծովուն Թեթեւապէս‡: 10 Այլ եւ <զ>Պետրոս վեր ածէր սուրբ ձեռամբն՝ հանդերձեալ ընկղմիլ§, նովին ձեռամբ եւ զոքանչին Պետրոսի՝ ի մահաբեր ջերմանն**, ապա բժշկութիւն եւ կարողութիւն սպասաւորել ինքեան եւ որոց ընդ նմայն, շնորհէր: 11 Զհամերն լեզուոյ, բուռն հարեալ աստուածայնոյ մարմնոյն մատամբք, պարզախաւս քան զքաջալեզուան վաղվաղակի առնէր եւ լսելոյ զաւրութիւն ի խլեսն եւ յականջսն դնէր խլին՝ արկեալ անդ զմատունսն: 12 Զժողովրդապետին դուստրն ձեռն տուեալ՝ ի մեռելութենէ յարուցանէր իբրեւ ի քնոյ եւ զբորոտն պիղծ ըստ աւրինացն մերձաւորութեամբ ձեռինն մաքրէր: 13 Եւ ոչ միայն աստուածարեալ մարմնովն սքանչելագործէր, այլ եւ հանդեր/207բ/ձիւ մարմնոյն, որով տեառատեսն քաջահաւատ կինն բժշկեցաւ, եւ բիւրք են լուեալք եւ ասացեալք սքանչելեացն, որք ի

* Հմմտ. Ես. ԽԹ 10:
† Յովհ. Ե 17
‡ Հմմտ. Յովհ. Թ 6, Մատթ. ԺԴ 26:
§ Հմմտ. Նոյն:
** Մատթ. Ը 14, Մարկ. Ա 30, Ղուկ. Դ 39

ձեռն մարմնոյն, զի զբաժանասէրսն ըմբերանեսցէ եւ ցուցանէ յայտնապէս, թէ չիք անջրպետութիւն ինչ միացեալ բնութեանն: 14 Արդ, եւ զորս բանիւ միայն բժշկէր, մի՞թէ ոչ եւ այնոքիկ մարմնովն լինէին կատարեալք, որով եւ ամենայն հրաշագործութիւնքն: 15 Քանզի ոչ եթէ իմանալի ձայնքն եւ անմարմնապէս լինէին, որպէս ի տաճարին եւ առ մարգարէիւքն, այլ մարմնական շրթամբք եւ լեզուաւ եւ շնչերակաւք եւ այլովք ձայնական գործարանաւք Իւրով մարմնոյն Բանն Աստուած բարբառէր: 16 <8>Թագաւորազինն ասէր, եթէ՝ «Ե՛րթ, որդին քո կենդանի է»*, եւ կնոջն քանանացւոյ՝ «Ով կի՛ն դու,- ասէ,- մեծ են հաւատք քո, ե՛րթ եւ որպէս հաւատացերդ, եղիցի՛ քեզ»†, անդամալուծին՝ «Արի՛, ա՛ռ զմահիճս քո եւ շրջեա՛ց»‡, եւ բորոտացն տասանց՝ «Երթա՛յք, ցուցէ՛ք զանձինս քահանային»§, եւ ցորդի այրոյն, որ ի վերայ դագաղացն, այն, ինչ մեռեալ՝ «Պատանի՛ դու, քեզ ասեմ, արի՛»**. եւ աղաղակաւ մեծաւ ցՂազար ասէր. «Արի՛, ե՛կ արտաքս»††: 17 Զի ուացուք Աստուծոյ աղաղակել մարմնովն, բայց տես/208ա/ցուք եւ զհոգեւոր պարգեւացն բաշխմունս, թէ իցէ ըստ միութեան եւ ոչ՝ ըստ մասին, որպէս հերձուածողքն ասեն: 18 Ո՞չ ապաքէն անմեղ մանկտիոյն ձեռն եդ եւ աւրհնեաց եւ զոմն ի գիրկս ընկալաւ, զոմանց ասաց. «Թո՛յլ տուք մանկտիոյդ գալ առ Իս, զի այդպիսեացդ է արքայութիւնն Աստուծոյ»‡‡: 19 Եւ առաքելոցն բանիւք բերանոյ Իւրոյ ետ իշխանութիւն թողուլ զմեղս եւ ունել իշխանութիւն արձակել եւ կապել, կոխել զաւազ եւ զկարիճս եւ զամենայն զաւրութիւն թշնամւոյն: Եւ պոռնիկն, յոտսն մերձեցեալ, թողութեան մեղաց պարգեւ ընդունէր§§: 20 Եւ ցանդամալոյծն ասէր. «Թողեալ լիցին քեզ մեղք քո»***, եւ որոց գայթակղեցանն, ասէր. «Զի գիտասջի՛ք,

* Յովհ. Դ 50
† Մատթ. ԺԵ 28
‡ Տե՛ս Ղուկ. Ե 24:
§ Ղուկ. ԺԷ 14
** Ղուկ. Է 14
†† Յովհ. ԺԱ 43
‡‡ Մարկ. Ժ 14
§§ Հմմտ.Ղուկ. Է 47:
*** Մարկ. Բ 8

թէ իշխանութիւն ունի Որդի Մարդոյ յերկրի թողուլ զմեղս»*: 21 Եւ այնմ ի վկայութիւն հաստատութեան ասէր. «Արի՛, ա՛ռ զմահիճս քո եւ ե՛րթ ի տուն քո»†: 22 Եւ այլն ամենայն եղեալք եւ ասացեալք ի Տեառնէ եւ ոչ մի ըստ մասին եւ առանձնակի բնութեան միոյ ուրուք, այսինքն՝ Աստուծոյ առանձինն կամ մարդոյ յատուկ երեւին ներգործութիւնք եւ բանք, քանզի նոյն է Աստուած եւ նոյն Ինքն մարդ, եւ ո՛չ ոմն մարդ եւ ոմն Աստուած, զի մի՛ մարդապաշտք, այլ աստուածապա՛շ/208բ/տք գտցուք եւ երրորդութեանն երկրպագուք: 23 Այսու պատճառաւ միոյ եւ նորին Բանին Աստուծոյ մարմնացելոյ զամենայն խոստովանիմք զաստուածավայելուչսն եւ զմարդավայելուչս<ն>, զոր ասեն ներգործութիւնս եւ կիրս: 24 Վասն որոյ եւ Աստուծոյ զծնունդն ի Կուսէն, զաճելն ըստ մարմնոյ, զշնորհաւորիչն, զիմաստնանալն, զքաղցնուլն, զծարաւելն, զխաչն, զթաղումն, զէջն ի դժոխս եւ զյարութիւնն: 25 Որպէս զի մի՛ ըստ Նեստորի եւ Թէոդորիտեայ եւ Ղեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի՝ շնորհաւք աստուածացեալ զՔրիստոս եւ պատուակից Բանին, զոր ի զաւակէն Դաւթի եւ իշխանակից՝ ըստ նոցա, որպէս ոմն ուրումն, այլ Բանն Աստուծոյ մարմին եղեալ, այսինքն՝ մարդ ճշմարիտ եւ կատարեալ խոստովանեսցուք՝ առանց շփոթութեան եւ խառնակութեան, զբնութիւնսն պահելով եւ անապական եւ զբաժանումն անջատման ի միաւորութեանն ոչ ընդունելով:

VIII. 1 Բայց զգուշացի՛ր, պատուակա՛նդ քաջ արանց, քանզի Բանն, որ եւ Միածին եւ նկարագիր էութեան Հաւր եւ պատկեր, զաւրութիւն եւ իմաստութիւն, անընդունակ կրից եւ չարչար/209ա/անաց է, վասն զի Աստուած է յաւիտենական: 2 Սակայն զի մարմին եղեւ անփոփոխելին եւ անայլայլելի<ն>, Նմա ասին ամենայնք Իւրոյ մարմնոյն կիրք, քանզի եթէ Ինքն մարմնացաւ, եւ Նորա է մարմինն անձնաւոր եւ բանական, Նորա են եւ կիրք մարմնոյն, այսինքն՝ Բանին Աստուծոյ մարմնացելոյ. դժուարատես է եւ նուրբ ամենեւին բանդ է, նաեւ անհաս ոչ միայն մարդկային մտաց, այլ եւ անմարմին զաւրութեանց: 3 Բայց որոց ճշմարտութիւնն բաղձալի է եւ աշխատու-

* Տե՛ս Մատթ. Թ 6:

† Մատթ. Թ 6, Մարկ. Բ 9

թիւնն սիրելի, բարեպաշտ, ուղիղ խորհրդով, ոչ թաքուցանէ ի նոցանէ, որ ասացն, թէ. «Ոչ զՀայր ոք ճանաչէ, թէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել»*: 4 Արդ, ոչ եթէ բնութիւն աստուածային գիտակ չարչարանացն ընդունէր յինքն եւ սգայր զչարչարանսն, վասն զի գերազանց է եւ կարի յոյժ քան զչարչարելի բնութիւնն, բայց յաղագս ճշմարտապէս միանալոյն շարականիս բնութեան եւ մի լինելոյն նովաւ Նորա չարչարանքն եւ են եւ ասին: 5 Քանզի ոչ եթէ ըստ Ապողինարի անանձն մարմին ընդ Ինքեան միաւորեաց Բանն, զի այսպէս խոստովանել ընդ չար/209բ/չարանաւք արկանէ զանչարչարելի բնութիւնն, այլ մարմին բանական՝ անձն ունող, որպէս զի ի ձեռն անձին բանականի, լինիցի զգայակից չարչարանաց մարմնոյ, ոչ Բանն ըստ Ինքեան, այլ Իւրով անձամբն բանականաւ ի ձեռն մարմնոյն ստացի: 6 Ի՞ւ եղիցի չարչարեալ Ինքն, զոր համառաւտելով ասացուք, թէ նոյն Ինքն Բանն Աստուած՝ անչարչարելին ճշմարտապէս չարչարեցաւ Իւրովն մարմնով՝ բանական անձն ունողաւ, եւ անմահն մեռեալ Իւրով մարմնովն, քանզի Աստուած էր ճշմարիտ, որ կրէր զամենայն մերով բնութեամբս, զի ազատեսցէ զմեզ ի մեղացն ծառայութենէ եւ արասցէ որդիս ըստ շնորհի Հաւր Իւրում եւ անուանեսցէ եղբայրս Իւր եւ ծանուցցէ զճշմարտութիւնն, որ է նոյն Ինքն Քրիստոս Աստուած մեր, Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

IX. 1 Դարձեալ, սրբոց հայրցն հետեւելով՝ ըստ որում խոստովանիմք մի Որդի Աստուծոյ զմարմնացեալ Բանն Աստուած եւ Տէր եւ Քրիստոս, զնոյն Ինքն եւ Աստուած ճշմարիտ, աստուածային եւ զնորա մարմնաւոր ծնունդն, քանզի Աստուած է Մնեալն ի սրբոյ Կուսէ եւ ոչ որպէս Նեստորի թուեցաւ՝ մարդ սոսկ /210ա/ եւ ապա եղեալ ընդունող Բանին, քանզի այսպէս կարծել եւ ասել ամբարշտութիւն է: 2 Վասն այնորիկ եւ ասեմք, եթէ ոչ ի մարդ բնակեաց Բանն Աստուած, այլ մարդ եղեւ, եւ ոչ որպէս նոքայն ասեն՝ աստուածազգեաց մարդ էր Քրիստոս, որպէս նոքայն ասեն, այլ Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ, ոչ յարակցութիւն մարդոյ առ Աստուած Բանն եւ իշխանութիւն կամ պատուոյ հաւասարութիւն, որպէս Նեստորն ասաց, զսուրբ եւ զաստուածային տնաւրէնութիւնն ասեմք, այլ միաւորու-

* Տե՛ս Ղուկ. Դ 23:

թիւն ըստ ճշմարտութեան աննման բնութեանցն, եւ զխառնումն զայն վերագոյն մտաց եւ անճառելի բանի՝ Աստուծոյ միայն հնարաւոր եւ վայելուչ եւ Ինքեան եւեթ հասանելի: 3 Բայց որք միաւորութեանն զկնի դարձեալ յերկուս քակտեն զբնութիւնս եւ զանազանութիւն ներգործութեանց եւ կրից եւ կամաց եւս ի վերայ բերեն՝ ըստ ժողովոյն Քաղկեդոնի, այլովք բառիւք եւ նոյն իմացուածովք զՆեստորի հայհոյութիւնն անրջանան: 4 Քանզի երկուս դէմս ասաց՝ հաղորդեալս ի միմեանց եւ զսուրբ Կոյսն՝ ոչ Աստուածածին, այլ Քրիստոսածին՝ խորամանկեալ գողանալ զպարզամիտս եւ զանուսմունս, եւ երկուց քրիստոսաց ժողովո/210բ/ման առնէ անաւրէնն՝ բաղին անուանելով զայն, որ ի զաւակէն Դաւթի եւ բնակիչ զԲանն Աստուած: 5 Եւ սոքա երկու անջատելով յետ միութեանն զբնութիւնսն՝ մի դէմ ընդ մեզ ասեն նովին նենգութեամբ եւ բաժանեն զաւետարանական եւ զառաքելական ձայնս, զաստուածավայելուչ բանս եւ զգործս միայն Աստուածութեան Նորա տան եւ զմարդավայելուչ տնաւրինաբար կիրս եւ ձայնս մարդկութեան Նորա առանձնապէս որոշեն:

X. 1 Արդ, ի՞ւ իւիք տարաձայնեն միմեանց, կամ որո՞վք զատանին յիրերաց մտածութեամբք, քանզի երկոքին կողմանքն՝ զնուաստագոյնսն մարդկութեանն յարմարեն եւ զբարձրագոյնսն՝ Աստուածութեանն: 2 Բաժանելով յերկուս զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ զի՞նչ աւելի, քան զՆեստորին, իմանան սոքա կամ ասեն, քանզի չէ ինչ աւգուտ ասել զԲանն Աստուած ի Կուսէն ծնեալ եւ մի դէմ զՔրիստոս եւ ապա՝ անդրէն դառնալ եւ բաժանել յերկուս: 3 Նաեւ քան զՆեստորի աղճատանս դժնդակագոյն ունին զչարութիւնն այսպիսի պատրուակեալ բանք, զի նա յետ միաւորութեանն, զոր ինքն ասէ, կարծիս տայ ոչ բաժանել: 4 Բայց սոքա յայտնապէս որոշեն եւ /211ա/ զդէմն, զոր մի ասացին՝ զձայնս Գրոց Սրբոց բաժանելովն եւ վասն այսորիկ դառնագոյն զսոցայն, քան զՆեստորին, ասացի ունել, վասն զի նորայն հայհոյութիւն առանց ծածկութեան* եւ յայտնի է, զի Բանն Աստուծոյ ոչ ասէ մարմին եղեալ, այսինքն՝ մարդ կատարեալ, այլ ի մարգում բնակեալ, եւ յայնպիսի ամբարշտութենէ դիւրին է զգուշանալ եւ պարզամտաց անգամ:

* Բնագրում՝ ծածկութիւն:

XI. 1 Իսկ նոքա պատրուակեալ ունին զիւրեանցսն եւ ոչ ամենեցուն յայտնի, բայց՝ հմտագունից արանց, քանզի զծնունդն ըստ մարմնոյ ի Կուսէն՝ զՈրդոյն Աստուծոյ խոստովանել ասեն եւ մի դէմ մարմնացելոյ Բանին, որպէս եւ մեք, կարծիս տան գոլ եւ ոչ յայտնապէս, ըստ Նեստորի, յերկուս դէմս բաժանեն զՔրիստոս: 2 Բայց երկուս կամսն ասելով եւ յերկուս ներգործութիւնն ի միում դիմին՝ զնոյն նշանակեն զՆեստորին, զի առանձնաւորութիւն երկաքանչիւրոցդ՝ ներգործութեան եւ կամաց, եւ զնուաստագոյնս, այսինքն՝ զմարդկայինսն, մարդոյ առանձինն որոշել եւ զհրաշափառագոյն գործսն՝ առանձինն Աստուածն Բանի տալ զի՞նչ այլ ցուցանէ, եթէ ոչ տա/211բ/բերութիւն երկուց դիմաց: 3 Թէպէտ եւ նենգութեամբ կեղծաւորեալ՝ ուրեք ուրեք զճշմարտութիւնն խառնեն, ոչ այլ իրիք աղագաւ, այլ զի ստութիւնն հաւանելի գոլ թուեսցի, բայց մեք ե՛ւ զծնունդն, ե՛ւ զչարչարանսն, ե՛ւ զամենայն խոնարհութեան կիրսն Աստուծոյ Բանին մարմնացելոյ խոստովանիմք, քանզի Իւր Ինքեան՝ Բանին էր մարմինն եւ ոչ եթէ այլոյ ուրուք: 4 Ցայտ ուրեմն, եթէ եւ Իւրոյ մարմնոյն կիրքն Նորա են, եւ վասն այնորիկ ասեմք զԱստուած խաչեալ եւ չարչարեալ կամաւորապէս վասն մեր: 5 Զանչարչարութիւնն, որ է ըստ բնութեան Աստուծոյ, ամբողջ պահելով՝ որպէս վերագոյնդ ասացաւ սակաւուք եւ ըստ որում կրիցն մարդկայնոց եւ մարհուն զԱստուածն Բան ասեմք կամաւ հնազանդել Իւրով մարմնովն, նոյնպէս եւ զաստուածավայելուչսն հաւատամք կատարեալ զգործսն: 6 Զի ճշմարտապէս եւ անանջատաբար խառնեաց Բանն ընդ Ինքեանն զԻւրն մարմին անճառոր եւ բանական, այսինքն՝ մտաւոր, եւ ամենայն, որ ինչ կատարեցաւ առ ի Նմանէ յաշխարհի ի ծննդենէն ըստ մարմնոյ ի սուրբ եւ յԱստուածածին Կուսէն մինչեւ ի յ/212ա/արութիւնն եւ զոր ինչ այլ եւս հանդերձեալն է կատարել զվայելուչս Իւրոյ անճառելի զաւրութեանն եւ իմաստութեանն, միոյ եւ Նորին խոստովանելի է ճշմարտապէս Բանին Աստուծոյ մարմնացելոյ: 7 Նա նոյն Ինքն՝ Որդի Աստուծոյ, եւ նոյն Ինքն՝ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ: 8 Նա՝ յառաջ քան զյաւիտեանս, ի Հաւրէ ծնեալ անճառաբար, եւ նոյն Ինքն՝ ի լրման ժամանակաց ի Կուսէ աստուածավայելչաբար մարմին զգեցեալ, այսինքն՝ ամենայնիւ, որ ինչ մարդ յերկրի երեւեալ, բայց ի մեղաց, ճշմարտապէս եւ առանց կարծեաց չարչարեալ, նոյն Ինքն՝ մարմնացեալ Բանն, որ է Աստուած ճշմարիտ: 9 Մի՛ ամաչեսցուք զհերձուածողացն ընդդէմ բերեալ աստուածաչարչարութիւն

լսելով, այլ իմաստութեամբ զՍուրբ Գիրս ի մէջ բերեալ՝ պատասխանի տացուք նոցա: 10 Միոյ եւ Նորին գոլ զամենայն՝ Աստուծոյ մարմնացելոյ եւ մարդացելոյ, զաստուածավայելուչն եւ որ ինչ ըստ տնաւրէնութեանն վասն մեր կիրք, եւ մի՛ հաւանակիցք եղեալք նոցա՝ բաժանեսցուք զՔրիստոսն եւ որ ինչ վասն Նորա զասացեալսն յառաքելոց եւ ի մարգարէից եւ յաւետարանչաց՝ Աստուծոյ առանձինն եւ մարդոյ՝ ըստ /212բ/ յատկութեան: 11 Վասն զի մի ուսուցին մեզ հարքն բնութիւն Բանին Աստուծոյ, թէ եւ մարմին առ, եւ բազում ունի անտեղութիւնս յերկուս բաժանել բնութիւնս յետ միաւորութեանն զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ըստ իւրաքանչիւրոցն՝ զձայնս Գրոց Սրբոց: 12 Եւ զ՝առ ի Տեառնէն եղեալս եւ կատարեալ գործս եւ բանս ըստ տնաւրէնութեանն՝ զտնաւրինականսն եւ զոր ինչ Աստուծոյ միայն վայելուչս եւ կարելիս, նմանապէս տրամատել:

Յաղագս Հոգւոյն Սրբոյ

XII. 1 Մի յերրորդութենէն գոլ, ըստ որում եւ էն իսկ, խոստովանիլ ուսաք եւ խոստովանիմք զՀոգին Սուրբ՝ փառակից եւ երկրպագակից Հաւր եւ Որդւոյ, բնութեամբ նոյն, իսկ անձամբ՝ այլ, կատարեալ ամենայնիւ՝ իբրեւ զՀայր եւ զՈրդի, համազաւր եւ նոյնապատիւ, ոչ իւիք բնաւ նուազեալ, արարչակից Որոց, նոյնագոյ եւ հաւասար: 2 Վասն բնութիւն զնոյն ունելոյ՝ ամենայնի պատճառ էիցս ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ, անեղ, Տէր Աստուած, թագաւոր, յաւիտենական, մշտնջենաւոր, լոյս, ճշմարիտ, ամենայնի լուսաւորիչ, բաւական բնութեան, ելող ի Հաւրէ եւ ոչ արարած, ճշմարտ/213ա/ութեան Հոգի, Մխիթարիչ, ոչ Որդի եղեալ կամ ասացեալ, այլ ծաւալումն անճառելի, ըստ որում ասաց Փրկիչն. «Հոգին ճշմարտութեան, որ ի Հաւրէ ելանէ»: 3 Ճշմարտութեան Հոգի ասելով՝ վասն զի Իւր Հոգի եւ է եւ ասի, եւ ի Հաւրէ ելող, վասն զի ի Նմանէ ստուգապէս յառաջ գայ, զորմէ ասաց նոյն Ինքն Փրկիչն. «Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնու եւ պատմեսցէ ձեզ»†: 4 Տեսանե՞ս, զի եւ Որդւոյ Հոգի ասի՝ որպէս եւ Հաւր՝ Հոգին Սուրբ: 5 Ըստ որում եւ մեծն գրէ Պաւղոս. «Դուք*

* Յովհ. ԺԵ 26

† Յովհ. ԺԶ 14

ոչ էք մարմնով, այլ՝ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ, իսկ եթէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ Նորա, ապա եթէ Քրիստոս ի ձեզ է, մարմին մեռեալ է վասն մեղաց, եւ հոգին կենդանի է վասն արդարութեան»: 6 Մի՛ զիր, ասաց՝ Հոգի Աստուծոյ, ասաց եւ՝ Հոգի Քրիստոսի. զնոյն դարձեալ եւ Քրիստոս անուանէ զՀոգին՝ ոչ զանձնաւորութիւնն խառնակելով եւ շփոթելով, որպէս եւ Սաբելիոսն այն, այլ յայտ առնելով ի Փրկչին էութենէ գոլ զՆա եւ ի Միոջէ Աստուածութենէն ոչ աւտար: 7 Վասն այնորիկ Հոգի Աստուծոյ ասացեալ՝ անդէն եւ Հոգի Քրիստոսի կոչէ զՆա՝ ճշգրտապէս յայտ առնելով, թէ ամենայն, որ ինչ /213բ/ Հաւրէ, անցանէ եւ յՈրդի՝ ի բնաւորապէսն Իւր Մնունդ: 8 Իսկ ասելովն, թէ Քրիստոս ի ձեզ է վասն Հոգւոյն, ցուցանէ բնութենակից Բանին զՀոգին Սուրբ գոլ: Թէպէտ եւ այլ է առանձնաւորութեամբ, բայց զի է յՈրդւոջ, եւ Որդի ի Նմա: 9 Այդպէս ասաց երանելին. «Սա խաւսեցաւ յաւրէնսն եւ ի մարգարէսն»†, եւ զի է Տէր, ասէին մարգարէքն յաճախ. «Այսպէս ասէ Տէր»‡, եւ թէ՝ «Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի»§: 10 Որում եւ աստուածայինն վկայէ Պաւղոս՝ ասելով. «Տէր Հոգին է»**, վասն որոյ իշխանութիւն ունի ընդ Որդւոյ եւ իբրեւ զնոյն զծառայս բնութեամբ ազատ առնել, քանզի «ուր Հոգին Տեառն է, անդ ազատութիւն է»††, վասն որոյ եւ Փրկիչն վասն Իւր ասէր ցհրեայսն, զորս յորդորէր ի հաւատս, եթէ՝ «Որդին զձեզ ազատս արասցէ»‡‡: 11 Արդ, եթէ որ առնէ զմեղս, ծառայէ մեղաց եւ ո՛չ մնայ ի տան Աստուծոյ, ո՛չ յեկեղեցւոջ եւ ո՛չ յերկնի, իսկ Հոգին Սուրբ ի ձեռն վերստին ծննդեան աւազանին Ինքեամբ ճշմարտութեամբ յազատութիւն ածեալ որդեգրութեան§§ Աստուծոյ արժանաւորէ: 12 Ուրեմն զնոյն ունի բնութիւն եւ զաւրութիւն զՈրդւոյ, յայտ է, թէ՝ եւ զՀաւր, վասն որոյ եւ Իւր որդիս առնէ, որպէս՝ Հայր, /214ա/ եւ՝ զԻւր անունն, որպէս եւ Քրիստոս ի*

* Հռոմ. Ը 9-10

† Հմմտ. Հաւատոյ Հանգանակ:

‡ Տե՛ս Երեմ. Բ 17, 19, Ե 18, Ա Թագ. Բ 27, Բ Թագ. ԺԲ 7:

§ Տե՛ս Ել. Զ 10, ԺԳ 1, ԺԴ 1, ԺԶ 11, ԻԵ 1, Լ 12, 17, ԼԱ 12, ԼԲ 7:

** Բ Կոր. Դ 17

†† Նոյն տեղում

‡‡ Հմմտ. Յովհ. Ը 36:

§§ Բնագրում որդեգրոյութեան:

վերայ կնքաւորացն կոչէ. «Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է,- ասէ Տէր,- եւ ծնեալն ի Հոգւոյն՝ հոգի»: 13 Եւ դարձեալ. «Հողմն ուր կամի, շնչէ, այլ ոչ գիտես՝ ուստի՞ գայ կամ յո՞ երթայ, սոյնպէս եւ՝ ամենայն ծնեալն ի Հոգւոյն», եւ՝ «Որ ոչն ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյն, ոչ տեսցէ զարքայութիւն Աստուծոյ»†: 14 Եւ զիա՞րդ իշխէ հոգեմարտն եւ աստուածամարտն զազատարարն եւ որդեգրող ծառայ անուանել, որ եւ անբովանդակելին է բնութեամբ որպէս Աստուած եւ լնուլ բաւական զամենայն:*

*XIII. 1 Գրեալ է վասն Հաւր. «Ո՞չ զերկինս եւ զերկիր ես լնում»‡, ասէ Տէր իսկ վասն Հոգւոյն. «Հոգի Տեառն ելից զտիեզերս»§: 2 Առաքէ Հայր. «Եկ առաքեցից զձեզ առ փարաւոն»**, եւ՝ զո՞ առաքեցից, կամ ո՞ երթայցէ առ այն ժողովուրդ: 3 Առաքէ եւ Որդի. «Երթա՛յք,- ասէ,- աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս»††, եւ ընտրեաց յաշակերտացն, զորս եւ առաքեալս անուանեաց: 4 Առաքէ եւ Հոգին Սուրբ, նոքա՝ առաքեալք ի Հոգւոյն Սրբոյ, որովք ուսանիմք մի գոլ եւ ազատ զբնութիւն Երրորդութեանն Սրբոյ: 5 Զոր կամեցեալ յայտ առնել առաքելոյն Պաւղոսի՝ զկարգ դասաւորութեանն անդրէն դարձուցանէ նա՝ /214բ/ զՀոգին Սուրբ անուանելով, ապա՝ զՈրդի, ապա՝ զՀայր, ոչ անգիտացել պատճառ զՀայր գոլ Որդւոյ եւ զՀոգւոյն Սրբոյ, այլ զի ցուցցէ զՀոգին Սուրբ հաւասար ըստ ամենայնի Որդւոյ եւ Հաւր, քանզի բազումք յոլովակի գայթակղին յանուսումնութենէ՝ ի գիրն եւեթ հայելով եւ զզաւրութիւն անգիտանալով իրին եւ ճշմարտութեան: 6 Վասն զի մեծ է, ասեն, Հայր, վասն այնորիկ ամենայն ուրեք առաջին ի գիրս լինի կարգեալ եւ անուանեալ, զորոյ կարծիս բժշկելով՝ ասէ այսպէս. «Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է. եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի»*: 7 Եւ ոչ աստ միայն, այլ եւ ի բազում տեղիս սոյնպէս ցուցանէ երանելին զՀոգւոյն Սրբոյ հաւասարապատուութիւնն առ Հայր եւ Որդի, եւ չէ ծածկեալ յուսումնասիրաց եւ իմաստուն ընթերցողաց: 8 Արդ, զամենայն ունի զՀաւր եւ զՈրդւոյ Հոգին Սուրբ, բայց միայն զի Հայր ոչ է եւ ոչ ասի, այլ եւ՝ ոչ Որդի, սակայն՝ Որդւոյ, ըստ որում ասէ Պաւղոս. «Եւ զի եմք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն Իւրոյ ի սիրտս մեր, Որով ա/215ա/ղաղակեմք՝ Աբբա՛ Հայր»†: 9 Եւ մեծն Պետրոս զմարգարէիցն առ հաւատացեալսն գրելով՝ ասէր. «Որք վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհք՝ մարգարէանային, յորում եւ յորպիսի ժամանակի գուշակէր ի նոսա Հոգին Քրիստոսի»‡, զոր եւ Ինքն Տէր աւետիս անուանէ եւ Հաւր: 10 «Նստարո՛ւք,- ասէ ցաշակերտսն,- մինչեւ զգենուցուք զաւրութիւն ի բարձանց»§, զորմէ զաւրութենէ ասաց նախ, թէ՝ «Ես ա<հա>ւասիկ առաքեմ զաւետիս Հաւր Իմոյ ի ձեզ»**: 11 Արդ, եթէ զաւրութիւն է, որպէս եւ Քրիստոս՝ Աստուծոյ, եւ աւետիք Նորա եւ Հոգի Որդւոյ, ոչ երկբայութիւն ինչ ունի՝ նորին բնութեան գոլ Հաւր եւ Որդւոյ զՀոգին Սուրբ: 12 Եւ եթէ այս, ապա ուրեմն կատարելապէս ունի զԱստուածութեանն էութիւն եւ զպատիւ, վասն որոյ իշխանութեամբ եկեալ՝ յանդիմանեաց զաշխարհ վասն մեղաց եւ վասն արդարութեան եւ վասն դատաստանի: 13 Որով ձայնիւ եւ Փրկիչն վարի ի դատաստան, ասէ. «Եկի յաշխարհս յայս, զի որք ոչ տեսանեն, տեսցեն, եւ որք տեսանենն, կուրացին»††, եւ այսպիսի ձայնք զհամապատուութիւն եւ զտիրակցութիւն մեզ ուսուցանեն զՈրդւոյ եւ զՀոգւոյն: 14 Սադուկեցիք ուրանան զՀոգին Սուրբ՝ ամենեւին ոչ գոլ կարծելով, /215բ/ իսկ արիանոսք եւ մակեդոնիտք նուաստեցուցանեն <քան> զՀայր եւ զՈրդի՝ ի միմեանց բաժանելք հերձուածովք եւ միաբանելք հայհոյութեամբ, վասն զի որ զՄի Ոք յԵրրորդութենէն ուրանայ կամ նուաստ ասէ, աստուածապաշտ ոչ է, ըստ որում եւ Ինքն վկայէ Փրկիչն՝ ասելով. «Որ զիս ընդունի, զԱռաքիչն Իմ ըն-*

---

* Յովհ. Գ 6
† Տե՛ս Յովհ. Գ 3:
‡ Տե՛ս Երեմ. ԻԳ 24:
§ Իմաստ. Ա 7
** Ել. Գ 10
†† Մատթ. ԻԸ 19

* Ա Կոր. ԺԲ 4
† Հռոմ. Ը 15
‡ Ա Պետ. Ա 10
§ Տե՛ս Ղուկ. ԻԴ 49:
** Ղուկ. ԻԴ 49
†† Տե՛ս Յովհ. Թ 39:

դունի», իսկ որ ոչ հաւատայ Որդւոյ, բարկութիւնն Աստուծոյ կացցէ ի վերայ նորա:*

XIV. 1 Ուրեմն, որ զՀոգին Սուրբ ընդունի, զԱռաքիչն Նորա ընդունի. յայտ է, թէ՝ զՀայր եւ զՈրդի: 2 «Եթէ ես ոչ երթայց,- ասէ,- Մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ, ապա թէ երթամ, առաքեցից զՆա առ ձեզ»†, եւ դարձեալ. «Հոգին Սուրբ, զՈր առաքեսցէ Հայր յանուն Իմ»‡, եւ որ ոք ոչ ընկալցի զՀոգին Սուրբ, ի բաց կացցէ՝ հրաժարեալ ի Հաւրէ եւ յՈրդւոյ՝ պարսկական աղաղոյն հետեւեալ եւ հրէականին: 3 Այլ մեք, որ ուղիղս փառաւորել ուսաք, ամբողջ զերկրպագութիւնն եւ զպատիւն պահել ուսաք Սրբոյ Հոգւոյն եւ զԱստուածութեանն խոստովանութիւն ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ, որպէս զի ի ձեռն այսպիսի ճշմարիտ խոստովանութեան եւ հաւատոյ ի Հոգին Սուրբ տաճար զմեզ առնիցեմք Սրբոյ Երրորդութեանն: 4 Քանզի որ թերի /216ա/ զխոստովանութիւնն առնիցէ ի Հոգին Սուրբ եւ անկատար, ի բաց պարսպէ զանձն ի բովանդակ Աստուածութենէն Սրբոյ Երրորդութեանն, եւ ոչ միայն տաճար նորա ոչ է աւթեվան, այլ եւ առանց թողութեան շեղջակուտ է, եւս ինքեան՝ զհայհոյութեանն դատապարտութիւն, քանզի «որ զՀոգին Սուրբ հայհոյեսցէ, մի՛ թողցի նմա՝ մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն»§: 5 Եւ զի՞նչ այլ իցէ հայհոյութիւն մեծագոյն, քան զոչ խոստովանելն կատարեալ ամենայնիւ ընդ որում Հայր եւ Որդի եւ զՀոգին Սուրբ: Վասն որոյ հրաժարեալք յամենայն աղանդոյ եւ հերձուածոց՝ զճշմարիտն, զոր ուսաք ի նոյն Ինքն՝ ի Հոգւոյն Սրբոյ, եւ ուղիղ եւ հաստատուն պահեսցուք զխոստովանութիւն հաւատոյ, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, եւ համարձակութեամբ աղաղակեսցուք միոյ բնութեան գոլ զԱմենասուրբ Երրորդութիւնն՝ անբաժանելի, անփոփոխելի, անայլայլելի, անապական, անժամանակ, անեղանելի, անվախճան, անսահմանելի, անիմանալի, ամենայնի արարիչ՝ զգալեաց եւ իմանալեաց, անճառելի բանի եւ ի մտաց անհասանելի, որոյ տէրութիւն եւ թագաւորութիւն

* Մատթ. Ժ 40, Ղուկ. Թ 48

† Յովհ. ԺԶ 7

‡ Յովհ. ԺԴ 26

§ Տե՛ս Մատթ. ԺԲ 31, Մարկ. Գ 28:

/216բ/ նոյն, զաւրութիւն, պատիւ, կարողութիւն, Աստուածութիւն, իմաստութիւն, ճոխութիւն եւ ամենայն գեղեցիկ եւ իմանալի պայծառութիւն, վայելչական Ինքեան, Որում միայնոյ վայել է երկրպագութիւն եւ մշտնջենաւոր աւրհնաբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բնագիրը պատրաստեց
Մեսրոպ քահանայ Արամեանը

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ

Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ մեծագոյն դէմքերէն մէկն է Յովհաննէս Սարկաւագ վարդապետը, որ Ներսէս Լամբրոնացիի կողմէ անուանուած է Երկրորդ Ոսկեբերան[1]:

Յովհաննէս Սարկաւագի կեանքի եւ գործունէութեան մասին հասած են բաւական սուղ եւ կցկտուր տեղեկութիւններ, որոնք կատարեալ պատկերացում մը կազմելու կարելիութիւնը չեն ընծայեր: Մինչեւ իսկ իր կենսագրութեան մէջ[2], բաւական տեղեկութիւններ գտնուելով հանդերձ, դեռեւս շատ բաներ ենթադրութեան մակարդակի վրայ կը մնան: Այն վկայութիւնները, որոնք հաղորդուած են նշանաւոր պատմագիրներու երկերու եւ քանի մը ձեռագրերու յիշատակարաններու մէջ, ուսումնասիրողներու կողմէ ենթարկուած են մանրակրկիտ քննութեան: Ջանազան պարագաներու պատճառով եղած են տարաձայնութիւններ մինչեւ իսկ ամենաստոյգ կարծուած նիւթերու մէջ, ինչպիսին են Սարկաւագի ծննդեան թիւը, վայրը եւայլն: Նպատակ չունենալով քննուած տեղեկութիւնները նորէն քննելը՝ բաւարար կը համարենք համառօտ ներկայացնել Սարկաւագի կենսագրութեան առաւել հաւանական տուեալները:

Յովհաննէս Սարկաւագ՝ որդի քահանայի[3], ծնած է Գանձակի Փարիսոս գաւառը[4]: Եղած են ենթադրութիւններ, որ ան ծնած է Անի

1 Տե՛ս Զմմառի Մայր ձեռագրացուցակ, էջ 345:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. N 2686, էջ 579ա-581բ, **Ա. Աբրահամեան**, էջ 119-124:

3 Մ. Աբեղեան կը մերժէ Սարկաւագի հօր քահանայ ըլլալը (**Մ. Աբեղեան**, էջ 48)՝ անբաւարար համարելով Վարդան Արեւելցիի «ի քահանայական ազգէ» տեղեկութիւնը (Արեւելցի-1861, էջ 159): Ա. Աբրահամեան, Սարկաւագի կենսագրութեան մէջ գտնուող «Սա... նուիրեալ Աստուծոյ եւ կուսութեան՝ յարենէ եւ յարգանդէ քահանայից» (ՄՄ ձեռ. N 2680, էջ 579ա, **Ա. Աբրահամեան**, էջ 119) յիշատակման վրայ հիմնուելով, կը պնդէ, թէ Սարկաւագի ոչ միայն հայրը, այլ մօր կողմէն մեծ հայրերն ալ քահանայ եղած են (**Ա. Աբրահամեան**, էջ 21): Նոյն տեսակէտը նաեւ կը գտնենք Չամչեանի պատմութեան մէջ, որ Սարկաւագը կ'անուանէ «Որդի երիցու» (**Մ. Չամչեան**, էջ 40):

4 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 116, Արեւելցի-1861, էջ 159, **Ա. Աբրահամեան**, էջ 190, ՄՄ ձեռ. N 1680, էջ 579բ, «Ցուշիկք», էջ 279, **Հ. Ոսկեան**, էջ 28: Բանասէրներու մէջ անհամաձայնութիւն տեղի ունեցած է Փարիսոս գաւառի Գանձակի ամիրայութեան պատկանելու մասին: Մ. Աբեղեան Սարկաւագի ծննդավայրը ցոյց կու տայ

մայրաքաղաքի մէջ, որը շատ հաւանական չէ[1]: Իր ծննդեան թուականին մասին ոչ մէկ տեղեկութիւն հասած է: Նկատի ունենալով տարբեր հանգամանքներ՝ կ'ենթադրուի, թէ Սարկաւագը ծնած է 1040-1050-ական թուականներուն[2]:

Իր առաջին ուսումը կը ստանայ այդ ժամանակաշրջանի նշանաւոր վանքերէն Հաղբատի վանքը՝ իր մօրեղբօր խնամքին տակ: Բայց երբ յայտնի կ'ըլլան իր ունակութիւնները, իր մօրեղբօր կողմէ կը տարուի Ուռճայեցի վարդապետի մօտ[3]: Թէեւ ան առաջին շրջաններուն կը սկսի ուսանիլ երաժշտութիւն, բայց, ինչպէս կ'ըսէ ս. Աւետարանը, «ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ» [Մատթ. Ե 15], այնպէս ալ Յովհաննէսի զանազան շնորհները չեն

Փարիսոսը եւ կը մերժէ գանձակեցի ըլլալը (տե՛ս **Մ. Աբեղեան**, էջ 48): Անհամաձայնութիւնը կը պարզէ Ա. Աբրահամեան՝ ըսելով, թէ Փարիսոսը այդ ժամանակաշրջանին կը պատկանէր Արցախին եւ մաս կը կազմէր Գանձակի ամիրայութեան (**Ա. Աբրահամեան**, էջ 20-21):

1 Սարկաւագի ծննդավայրի մասին բանասէրներու մեծ մասը կը միաբանին (տե՛ս նախ. ծնթ.): Միակ տարաձայնութիւնը կու գայ Ա. Աբրահամեանէն: Ան, Սարկաւագի կենսագրութեան մէջ գտնուող «Ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի...» (ՄՄ ձեռ. N 2680, էջ 579ա, **Ա. Աբրահամեան**, էջ 119) յիշատակումին վրայ հիմնաւորուելով, Սարկաւագի ծննդեան վայրը ցոյց կու տայ Անի քաղաքը (**Ա. Աբրահամեան**, էջ 120): Նոյն կասկածը յայտնած է Մ. Աբեղեան, բայց չ'պնդեր, այլ միայն կը թողու ենթադրութեան մակարդակի վրայ (**Մ. Աբեղեան**, էջ 533): Ապա անմիջապէս յետոյ հակառակուելով ինքն իրեն՝ Սարկաւագի ծննդավայր կ'անուանէ Փարիսոս գաւառը (**Ա. Աբրահամեան**, էջ 121): Մենք վերոյիշեալ յիշատակութիւնը անբաւարար կը համարենք՝ Սարկաւագի ծննդավայրը տեղափոխելու Փարիսոսէն Անի:

2 Բոլորը կը համաձայնին այս թուականին վրայ՝ հինգ տարի ուշ կամ կանուխ (**Ա. Աբրահամեան**, էջ 22, **Կ. Միրումեան**, էջ 284 եւայլն)՝ հիմնուելով Չամչեանի «հասեալ ի բարւոք ծերութիւն» վկայութեան (**Մ. Չամչեան**, էջ 40) եւ 1084 թուականին վրայ, երբ Յովհաննէս Սարկաւագ կազմեց անշարժ տոմարը («Ազգապատում», 1307): Անոնք կ'ենթադրեն, թէ Սարկաւագ վարդապետ այն ժամանակ առնուազն 30-40 տարեկան ըլլալու էր:

3 Ուռճայեցի վարդապետի ինքնութեան մասին ալ տարաձայնութիւններ տեղի ունեցած են: Ա. Աբրահամեան իր աշխատութեան մէջ Ուռճայեցի վարդապետը կը նոյնացնէ Սարկաւագի քեռիին հետ (**Ա. Աբրահամեան**, էջ 20): Այս տեսակէտին հակասած են Կ. Մելիք-Օհանջանեան (**Կ. Գանձակեցի**, «Առաջաբան», էջ Զ) եւ Կ. Միրումեան (**Կ. Միրումեան**, էջ 284), որոնք կը բաժնեն Յովհաննէս Սարկաւագի քեռին եւ Ուռճայեցի վարդապետը: Յետագային Աբրահամեան ալ հրաժարած է իր այս տեսակէտէն՝ կրկնելով միւս բանասէրներու կարծիքը (Աբր. Յով., էջ 235): Նաեւ Կ. Մելիք-Օհանջանեան Ուռճայեցի վարդապետը կը նոյնացնէ Գէորգ վարդապետ Ուռճայեցիի հետ, որ շատ հաւանական է (**Կ. Գանձակեցի**, էջ Զ):

ուշանար իրենք զիրենք ցոյց տալ: Առաջին օրերէն իսկ ան ինքզինք յայտնի կ'ընէ իր ուսումնասիրութեամբ, կարդալու եւ սորվելու մեծ ծարաւով եւ կատարեալ հնազանդութեամբ: Իր տարեկիցներուն մանկական խաղերէն միշտ հեռու մնալով՝ ինքզինք կը նուիրէ ուսման: Իր ուսման տենչի մասին կը պատմուի, թէ երբ ուրիշ վանականներու հետ միասին օր մը կ'երթայ վանքին գիրքերու պահեստը, գաղտնի կերպով ներսը կը մնայ: Վանականները, կարծելով, թէ ան աւելի առաջ դուրս ելած է, կը փակեն դուռը եւ կը վերադառնան վանք: Օրեր յետոյ (երբեմն աղբիւրներու մէջ՝ 8 օր), երբ դարձեալ կը մտնեն պահեստ, Յովհաննէսը կը գտնեն· ինքնամոռաց կերպով գիրք կարդալու տրուած: Երբ բոլորը զարմացած կը հարցնեն, թէ այդչափ օր ինչ կերած եւ խմած է, ան, ցոյց տալով պահեստին մէջ կարդացած գիրքերը, հետեւեալ կերպով կը պատասխանէ. «Ահա՛-ւասիկ, եղբա՛ր, ուտելիք եւ ըմպելիք իմ»[1]:

Կ'ենթադրուի, որ շատ երիտասարդ տարիքէն սարկաւագ ձեռնադրուած է, որը ապագային կը դառնայ իր մականունը, մինչեւ իսկ իր քահանայ եւ վարդապետ դառնալէն յետոյ:

Երբ կ'աւարտէ իր ուսումը, կը ձեռնադրուի քահանայ: Ոչ մէկ յիշատակում կը գտնենք, թէ կուսակրօն եւ կամ ամուսնացեալ քահանայ եղած է: Բայց, նկատի ունենալով իր կենսագրութեան մէջ նշուած «Սա ի մանկական տիոց եւ ի խանձարրոց, ըստ սրբոյն Սամուէլի, նուիրեալ Աստուծոյ եւ կուսութեան...»[2] վկայութիւնը, կ'ենթադրենք, որ ան պէտք է կուսակրօն քահանայ ձեռնադրուած ըլլայ:

Քահանայ ձեռնադրուելէ յետոյ կ'երթայ Անի մայրաքաղաքը, ուր կը հիմնէ դպրոց մը: Իր դասաւանդութեան մէջ տեղ կ'ունենան հին մեծ փիլիսոփաներու եւ աստուածաբաններու գիրքերը, որոնց զգալի մէկ մասը խմբագրուած էր Սարկաւագի կողմէ[3]: Թահմիզեա-

1 **Կ. Գանձակեցի,** էջ 116, ՄՄ ձեռ. N 2680, էջ 579ա, **Ա. Աբրահամեան,** էջ 119

2 ՄՄ ձեռ. N 2680, էջ 579ա, **Ա. Աբրահամեան,** էջ 120

3 Այս գրքերն էին հետեւեալները՝ Դաւթի «Սահմանքը» եւ «Էակաց գիրքը», Պրոկղի «Լուծմունքը», Հերմէսի փիլիսոփայական աշխատութիւնը, Արիստոտելի «Տասը ստորոգութիւնքը», «Պերի արմենիասը», «Առաքինութեանցնը», «Աշխարհացնը», «Վերլուծութեանցնը», Մովսէսի «Պիտոյից» գիրքը, Փիլոնի 9, Դիոնիսիոսի 5, Նիւսացիի 7, Նազիանզացիի 4, Բարսեղի 4 եւ Եւագրի 2 գիրքերը, Եպիփանի, Եփրեմի, Կիւրեղ Աղեքսանդրացիի, Ոսկեբերանի զանազան գրուածքները եւայլն («Ցուշիկք», էջ 287-288, **Ա. Աբրահամեան,** էջ 112, «Մխիթար»):

նի կարծիքով՝ Սարկաւագ կը հետեւի Գրիգոր Մագիստրոսի ուսման ծրագրին եւ կը կատարելագործէ զայն[1]:

Այս շրջանի մէջ է, որ ինք կը հասցնէ բազում աշակերտներ: Այս աշակերտներուն մէջ կարելի է մասնաւոր կերպով առանձնացնել Երեմիա Անձրեւիկը, որ մասնաւոր յիշատակման կ'արժանանայ Սարկաւագի կենսագրին կողմէ՝ իր հնազանդութեան պատճառով[2]: Միւս աշակերտներու թուին մէջ կարելի է յիշել Սամուէլ քահանայ Անեցին[3], Սարգիսը[4], Խաչատուր Անեցին, Գրիգոր Անեցին, Յովհաննէս Անեցին[5], Ստեփաննոս Զոմզոմա քահանան եւ Բարսեղը[6]:

Յովհաննէս Սարկաւագ ոչ միայն Անիի մէջ դպրոց մը հիմնելով կը բաւարարուի ուսուցողական գործունէութեամբ, այլ նաեւ, ըլլալով Անիի Մայր տաճարի աւագերէցը, կը լծուի հովուական գործին: Մեծ հաւանականութեամբ այս շրջանին տեղի կ'ունենայ հետաքրքիր դէպք մը: Ան եկեղեցիէն դուրս վտարելով կը պատժէ քահանայ[7] մը վերջինիս անկարգութիւններուն պատճառով: Քահանան ոխակալու-

1 Աւելի մանրամասն տե՛ս **Ն. Թահմիզեան,** էջ 337, **Ա. Մովսիսեան,** էջ 410-414:

2 Բացի Յովհաննէս Սարկաւագի կենսագիրէն, անոր մասին կը խօսի նաեւ Վարդան Արեւելցի (Արեւելցի-1861, էջ 160): Կենսագիրը կը յիշէ, թէ երբ Սարկաւագ օր մը Երեմիան կը յանդիմանէ՝ պարզապէս «լուռ լեր» ըսելով, ան ճիշտ երեք տարի անխօս կը մնայ: Նաեւ կեանքին 30 տարին ան կ'անցնէ չորաբեկ հացով եւ բանջարով (**Ա. Աբրահամեան,** էջ 121, ՄՄ ձեռ. N 2680, էջ 580ա):

3 Նշանաւոր ժամանակագիր, որուն՝ Սարկաւագի աշակերտն ըլլալու մասին կը յիշուի Վարդանայ պատմութեան մէջ (տե՛ս Արեւելցի-1861, էջ 160):

4 Սարգիսին՝ Սարկաւագի աշակերտն ըլլալու մասին տեղեկութիւն մը կը գտնուի յիշատակարանի մը մէջ, որը մէջբերած է հ. Ղ. Ալիշան («Հայապատում», էջ 371): Զարբհանալեանը Սարգիսը կը նոյնացնէ Սարգիս Կունդ վարդապետի հետ, որ շարադրած է Ղուկասի եւ Յովհաննու Աւետարաններու մեկնութիւնները: Ըստ Զարբհանալեանի՝ Սարգիս մասնաւոր յիշատակարանով կը յիշէ Սարկաւագ վարդապետին անունը այլ մեծ մեկնիչներու հետ, որոնց գործերէն օգտուած է (**Գ. Զարբհանալեան,** էջ 616): Մեծ հաւանականութեամբ Սարկաւագ իր «Առ Սարգիս վասն տաղիցն» (**Ա. Աբրահամեան,** էջ 327) եւ ամիսներու անշարժութեան մասին «Նորին առ Սարգիս» գործերը (ՄՄ ձեռ. N 1971, **Ա. Աբրահամեան,** էջ 261-264, «Լիակ. մատ.») ուղղած էր իր այս աշակերտին:

5 Այս երեքին մասին տե՛ս «Սամուէլ», էջ 128, **Գ. Զարբհանալեան,** էջ 615:

6 Աբրահամեան այս վերջին երկուքին մասին, հիմնուելով այն հանգամանքի վրայ, որ կենսագրի եւ Գանձակեցիի մէջ այս անձերու հետ կատարուած դէպքերը բոլորովին նոյնն են, բացի անուններէն, «Արդեօ՞ք նոյն անձերը չեն» (**Ա. Աբրահամեան,** էջ 124) կ'ըսէ: Մենք ալ կ'ենթադրենք, որ այդ երկուքը նոյն անձերն են:

7 Այս է Սարկաւագի այն աշակերտը, որուն մասին գրեցինք վերեւ (տե՛ս նախ. ծնթ.):

թեամբ անապատ տեղ մը կը յարձակի Յովհաննէս Սարկաւագի վրայ եւ կ'ուզէ սպաննել զայն: Յովհաննէս Սարկաւագ իր մեծ իմաստութեամբ կ'ազատի անոր ձեռքէն եւ նաեւ զայն կը պատժէ աւելի խիստ կերպով[1]:

Սարկաւագ նաեւ 1084 թուին եւ հաւանաբար երբ Անի կը գտնուէր, բարեկարգելով հայոց շարժական տոմարը, զայն կը վերածէ անշարժի[2]: Ապա շարունակելով իր աշխատութիւնները՝ կը հաստատէ տօներու օրերը եւ հայոց տոմարը, որ կ'անուանուի «Սարկաւագադիր կարգ»[3]: Հայոց Յայսմաւուրքները կը հետեւին այս կարգին:[4]

Յովհաննէս Սարկաւագի համբաւը տարածուած էր նաեւ Հայաստանէն դուրս: Վրաց Դաւիթ թագաւոր մեծ յարգանք եւ սէր ունեցած է անոր նկատմամբ: Կը յիշուի, թէ ան երբ կը տեսնէր, թէ Յովհաննէս Սարկաւագ իր մօտ կու գայ, իջնելով գահէն՝ կը խոնարհէր գլուխը եւ անկէ օրհնութիւն կը խնդրէր: Իսկ Սարկաւագ, իր ձեռքը դնելով անոր գլխուն վրայ, կ'աղօթէր ու կ'ըսէր. «Գտի զ Դաւիթ ծառայ Իմ եւ իւղով սրբով Իմով օծի զնա: Ձեռն Իմ ընկալցի զնա եւ բազուկ Իմ զօրացուսցէ զնա: Մի՛ նեղիցէ նմա թշնամի եւ որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա» [Սաղմ. ՁԸ 21-23][5]:

Սարկաւագի մեծագոյն գործերէն մէկը եղած է սաղմոսարանի սրբագրութիւնը եւ բազմացումը: Ան խորապէս կը տրտմի սաղմոսարանի աղաւաղման համար, որ տեղի ունեցած էր դարեր շարունակ՝ բերանացի արտասանութեան եւ գրչական սխալներու պատճառով: Օր մը կը գտնէ Թարգմանչաց վարդապետներու ձեռամբ գրուած սաղմոսարան մը: Անոր հիման վրայ կը սրբագրէ միւս սաղմոսարանները: Նաեւ բազմացնել տալով զայն՝ կ'ուղարկէ Հայաստանի ուրիշ վայրեր[6]: Կ'ենթադրուի, թէ Սարկաւագ ոչ միայն սաղմոսարանը, այլ նաեւ բոլոր Սուրբ Գիրքը ստուգելով սրբագրած է[1]:

Իր վերջին տարիներու մասին ոչ մէկ տեղեկութիւն պահպանուած է: Բայց մեծ հաւանականութեամբ իր վերջին տարիները ան անցուցած պէտք է ըլլայ Հաղբատի վանքին մէջ որպէս սրբակեաց ճգնաւոր: Կարծիք կայ, թէ ան եղած է նաեւ Հաղբատի վանահայրը[2]: Հաւանաբար այս ժամանակաշրջանի մէջ է, որ իր մասին կը յիշուի, թէ եկեղեցւոյ մէջ աղօթքի պահուն իրմէ, իսկ գիշերուայ առանձնական աղօթքի պահուն՝ իր սենեակէն, լոյսի շողեր կ'ելլէին[3]:

Մեծ հաւանականութեամբ այս ժամանակներուն պատահած ուրիշ երկու դէպք ալ կը վկայեն Սարկաւագի խորը հոգեւոր տեսողութեան մասին: Առաջինը այն է, թէ ս. Ստեփաննոս Նախավկայի օրը, երբ ինք առանձինն կ'աղօթէ եկեղեցւոյ մէջ, տեսիլքի մէջ իրեն կ'երեւի ս. Ստեփաննոս եւ կը խօսի իր հետ[4]: Իսկ ուրիշ օր մը կը տեսնէ կրօնաւոր մը, որ խոստովանութեան նպատակով դիմած էր անապատ. իր հոգեւոր տեսողութեամբ եւ աղօթքներով կ'ազատէ կրօնաւորը իր մոլութենէն[5]:

Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, այսպէս սրբութեամբ ապրելով, իր հոգին կ'աւանդէ առ Աստուած 1129 թուին[6]: Կը թաղուի

1 Հմմտ. **Կ. Գանձակեցի**, էջ 114, «Հայապատում», էջ 359, **Ա. Աբրահամեան**, էջ 122, ՄՄ ձեռ. N 2680, էջ 580բ:

2 «Ցուշիկք», էջ 290, «Ծնորհալի», էջ 135, «Ազգապատում», 1308-1309:

3 «Ցուշիկք», էջ 290

4 «Ծնորհալի», էջ 134-135

5 **Կ. Գանձակեցի**, էջ 114

6 Այս դէպքը աւելի իր վերջին տարիներու գործունէութիւն պէտք է ըլլայ: Քանի որ յիշատակարաններուն մէջ (ՄՄ ձեռ. N 7777, էջ 236ա, N 10182, էջ 243բ-244ա) եւ

բանասէրներու մօտ («Ցուշիկք», էջ 289) կը յիշուի, թէ վանքի պահեստին մէջ գտած է թարգմանչացագիր սաղմոսարանը: Այսինքն՝ այն շրջանին, որ ինք արդէն քաշուած էր վանք: Նաեւ իր՝ Անիի մէջ գտնուած շրջանին, ինչպէս վերեւը յիշեցինք, միւս գիրքերու սրբագրութեան եւ տոմարի բարեկարգութեան գործին հետ զբաղած էր: Սարկաւագի նման մէկը հաւանաբար չէր կրնար այսպիսի մեծ ու պատասխանատու գործի մը ձեռնարկել առանց մասնաւոր ժամանակ յատկացնելու:

1 Տե՛ս «Հայապատում», էջ 359, «Մատեն. քնն.», էջ 36: Այս տեսակէտը Կ. Գանձակեցիի «Գրեաց եւ օրինակս ստոյգ գրոց» (**Կ. Գանձակեցի**, էջ 114) եւ Մխիթար Այրիվանեցիի «Կարգադրութիւնք Գրոց Սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետէն եւ գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէն պատմագրէն ի միւս տուի» («Մխիթար», էջ 582) յիշատակումներու հիման վրայ կը հաստատէ Ն. Թահմիզեան (**Ն. Թահմիզեան**, էջ 339):

2 «Դպր.», էջ 591

3 ՄՄ ձեռ. N 2680, էջ 581բ (հրատ. **Ա. Աբրահամեան**, էջ 124)

4 ՄՄ ձեռ. N 724, էջ 107ա-107բ

5 **Ա. Աբրահամեան**, էջ 123, ՄՄ ձեռ. N 2680, էջ 581ա

6 Յովհաննէս Սարկաւագի մահուան թուականին մասին ալ եղած են մեծ տարաձայնութիւններ: Կիրակոս Գանձակեցին (**Կ. Գանձակեցի**, էջ 115), Սամուէլ Երէցը («Սամուէլ», էջ 128), Ստեփաննոս Օրբելեանը (**Ս. Օրբելեան**, էջ 17) կը նշեն ՇՀԸ

իրեն արժանի վայր մը՝ Հաղբատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ զանգակատան տակ: Իր տապանաքարին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «ԱՐՔԱՆՍ ԱՅՍ ՍԵՄԱԿԱՆ Է ՍՈՓԵՍՏԵՍԻ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ Ո»[1]:

***

Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագրական ժառանգութիւնը բազմաբովանդակ է: Ան հեղինակ է բազմաթիւ աղօթքներու, շարականներու, տաղերու, ներբողներու, ինչպէս նաեւ հակաճառական, պատմական, տոմարական, փիլիսոփայական եւ բարոյախրատական երկերու[2]: Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագրական ժառանգութեան մէջ լայն տեղ կը գրաւեն իր բարոյախրատական գործերը, որոնց գերակշռող մասը ցարդ անյայտ մնացած է հայագիտութեան համար[3]: Ստորեւ կը ներկայացուի այս գործերու ցանկը.

Ա. Նորին յաղագս որոց կուսութեամբ հաճոյանան Աստուծոյ

Բ. Նորին խրատք մանկանց

(1129) թուականը: Վարդան Արեւելցիի երկու հրատարակութիւններու մէջ յիշատակուած են երկու տարբեր թուականներ: Մոսկուայի հրատարակութեան մէջ թուականը յիշուած է ՇԿԸ (1119) (Արեւելցի-1861, էջ 159), իսկ Վենետիկի հրատարակութեան մէջ «հինգ հարիւր ութսունութ (1139)» յիշուած է: Բայց տողատակի մէջ կայ հետեւեալ նշումը. «Հին Օ. ՇԿԸ, որ է հինգ հարիւր վաթսուն եւ ութ (1119): Այլ ժամանակագիրք ՇՀԸ ասեն, որ է հինգ հարիւր եօթանասուն եւ ութ (1129), որ ուղղագոյն թուի» (Արեւելցի-1862): Հ. Ղ. Ալիշանը Սարկաւագի մահուան թուականը թէ՛ իր գործին մէջ («Հայապատում», էջ 359) եւ թէ՛ Կիրակոս Գանձակեցիի Վենետիկի տպագրութեան մէջ («Կիր. վարդ.», էջ 66) կը դնէ ՇՀԸ (1129)-ին: Մ. Աբեղեան համոզիչ փաստերով կը հաստատէ ՇՀԸ թուականը («Գրակ. պատմ.», էջ 531)՝ ժխտելով Սարկաւագի մահուան թուականը ՇՁԸ (1139) թիւը համարող Կ. Կոստանեանի տեսակէտը (Կ. Կոստանեան, էջ 105) եւ Վարդան Արեւելցիի մոսկովեան տպագրութեան մէջ յիշուած ՇԿԸ թիւը: Նաեւ ապագային Ա. Աբրահամեան կ'ամբողջացնէ փաստերու շարքը՝ այս նիւթի մէջ բոլորովին համաձայնելով Մ. Աբեղեանի հետ (Ա. Աբրահամեան, էջ 31-32):

1 Կ. Ղաֆադարեան, էջ 135: Վիմագրութեան վերջը գրուած ո տառը մեզի եզրակացնել կու տայ, թէ այս արձանագրութիւնը շարունակութիւն ունէր, բայց դժուար է գիտնալ, թէ ինչ էր:

2 Տե՛ս «Վիակ. մատ.»:

3 Մեր կողմից պատրաստուած անտիպ բարոյախրատական երկերի բնագրերը տե՛ս «Աւարտաճառ»:

Գ. Նորին Յովհաննու խաւսք սակաւաք

Դ. Նորին առ եղբարս վասն անձին յետ կենաց

Ե. Յովհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին[1]

Զ. Բանք խրատու սուրբ վարդապետին Սարկաւագին

Է. Յովհաննու քահանայի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ[2]

Ը. 4 հարցմունք, պատասխանիք

Թ. Եւագրէն ի բանից սուրբ վարդապետին, [որ] Սարկաւագ կոչեցեալ

Ժ. Լուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւագին[3]:

Սարկաւագի բարոյախրատական երկերը, ծնունդը ըլլալով վանական կեանքի, կ'անդրադառնան հոգեւոր կեանքի զանազան կարեւոր խնդիրներու՝ առաքինութիւններու, մեղքերու, դաւանական մաքրութեան եւայլն: Անոնք այսօր ալ կրնան ուղեցոյց ըլլալ անոնց, որ կը ձգտին իրենց կեանքին մէջ արգասաւորել հոգեւոր ճշմարտութիւնները եւ կատարելութեան հասնիլ: Ստորեւ կը ներկայացնենք հինգ երկերու բնագրեր՝ յուսալով, որ անոնք որոշ չափով հաղորդակից պիտի ընեն մեզ Սարկաւագի ժառանգութեան լուսաւոր աւանդներուն:

Գրականութիւն

Աբեղեան Մանուկ, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Բ գիրք, 10-15 դդ., Երեւան, 1970 (=**Մ. Աբեղեան**)

Աբեղեան Մանուկ, Հայոց հին գրականութեան պատմութիւնը, Գիրք երկրորդ, Առաջին յաւելուած, «Սարկաւագ վարդապետի կենսագրութիւնը», 1946 (=«Գրակ. պատմ.»)

Աբրահամեան Աշոտ, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրու-

1 Հրատ. Սոփ. Գ, էջ 7-78:

2 Սեն Արեւշատեան այս գործը կը վերագրէ Գրիգոր Մագիստրոսի (Ս. Արեւշատեան, էջ 33-45), որուն կը ձայնակցի նաեւ Կ. Միրումեան (Կ. Միրումեան, էջ 280):

3 Վերջին երկու գործերու մասին լայն ուսումնասիրութիւն մը կատարած է Կ. Միրումեան («Իմաստ. գրա.»):

թիւնը, Երեւան, 1956 (=**Ա. Աբրահամեան**)

Աբրահամեան Աշոտ, Հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ. V-XIII դդ., «Յովհաննէս Իմաստասէր», Երեւան, 1976 (=Աբր. Յով.)

Ալիշան Ղեւոնդ վրդ., Սոփերք հայկականք, «Յովհաննու Սարկաւագ վարդապետի Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին», Վենետիկ, 1853, հտ. Գ (=Սոփ. Գ)

Ալիշան Ղեւոնդ վրդ., Հայապատում պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901 (=«Հայապատում»)

Ալիշան Ղեւոնդ վրդ., Յուշիկք հայրենեաց Հայոց, Վենետիկ, 1870, հտ. Բ (=«Յուշիկք»)

Ալիշան Ղեւոնդ վրդ., Ծնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873 (=«Ծնորհալի»)

Արեւշատեան Սեն, «Յաղագս խրատու մանկանց» գրուածքը եւ նրա հեղինակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», Երեւան, 1974, հտ. 11 (=**Ս. Արեւշատեան**)

Զարբհանալեան Գարեգին վրդ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897 (=**Գ. Զարբհանալեան**)

Թահմիզեան Նիկողոս, Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, «Բազմավէպ», 1978, հ. 3-4 (=**Ն. Թահմիզեան**)

Կոստանեան Կ., Դաւիթ Ալաւկայ որդի, «Ազգագրական հանդէս», 1906, ԺԲ (=**Կ. Կոստանեան**)

Ղաֆադարեան Կարօ, Հաղբատ. ճարտարապետական կառուցուածքներ եւ վիմական արձանագրութիւններ, Երեւան, 1963 (=**Կ. Ղաֆադարեան**)

Միրումեան Կ. Ա., Յովհաննէս Իմաստասէրի աշխարհայեացքը, Երեւան, 1984 (=**Կ. Միրումեան**)

Միրումեան Կ. Ա., Յովհաննէս Սարկաւագի երկու իմաստասիրական գրուածքները եւ նրանց արժէքները, «Պատմա-բանասիրական հանդէս», 1979, հ. 2 (=«Իմաստ. գրւ.»)

Մովսիսեան Ա., Հայագիր դպրոցի ծագումը եւ նրա յետագայ վիճակը, «Երեւանի պետական համալսարանի գիտական աշխատութիւններ», հ. XIII (=**Ա. Մովսիսեան**)

Յովսէփեան Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, հտ. Ա (=«Ցիշատակարանք»)

Ոսկեան Համազասպ վրդ., Յովհաննէս Սարկաւագի կեանքը, «Հանդէս ամսօրեայ», 1925 (=**Հ. Ոսկեան**)

Ոսկեան Համազասպ վրդ., Մատենագիտական քննութիւններ, Վիեննա, 1926 (=«Մատեն. քնն.»)

Զամչեան Միքայէլ վրդ., Հայոց պատմութիւն, Երեւան, 1984, հտ. Գ (=**Մ. Զամչեան**)

Օրմանեան Մաղաքիա, Ազգապատում, Պէյրութ, 1959 (=«Ազգապատում»)

Օրբելեան Ստեփաննոս, Ժամանակագրութիւնք, Երեւան, 1942 (=**Ս. Օրբելեան**)

«Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկուա, 1861 (=Արեւելցի-1861)

Վարդան վրդ. Մեծն, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862 (=Արեւելցի-1862)

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961 (=**Կ. Գանձակեցի**)

«Կիրակոս վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ», Վենետիկ, 1865 (=«Կիր. վարդ.»)

«Պատմութիւն հայ դպրութեան», Վենետիկ (=«Դպր.»)

«Մխիթար Անեցւոց Պատմութիւն», ՄՄ ձեռ. N 582 (=«Մխիթար»)

«Սամուէլ քահանայի Անեցւոց Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց մինչեւ ի ներկայս», Վաղարշապատ, 1893 (=«Սամուէլ»)

Գրիգոր տրկ. Ուզունեան, Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագիտութիւնը եւ բարոյախրատական գործերը («Աւարտաճառ»), «Յովհաննէս Սարկաւագ վարդապետի լիակատար մատենագիտութիւնը» (=«Լիակ. մատ.»)

Տրդատ քահանայ Ուզունեան

/101ա/ Հարցումն առ Սարկաւագ վարդապետն.*

Ջիա՞րդ պարտիմք իմանալ զ՚առ ի Տեառնէ հրամանսն, յորս ասէ. «Որ ոք գայթակղեցուցէ զմի ի փոքրկանացս յայսցանէ, լաւ էր նմա, եթէ կախէր երկան իշոյ ընդ պարանոց նորա եւ անկանէր ի խորս ծովու» [Մարկ. Թ 41]: Եւ ի միւսում՝ «...եթէ գայթակղեցուցանէ զքեզ աչ ակն քո կամ աջ ձեռն եւ ոտն, բա՛ռնդ ի քէն եւ ընկեա՛ ի բաց» [Մատթ. Ե 29-30, Մարկ. Թ 42]: Եւ՝ «...վա՛յ աշխարհի գայթակղութեանց» [Մատթ. ԺԸ 7]: Եւ որո՞վ զանազանին սոքա ի միմեանց, կամ ո՞րպէս զգայթակղեցուցիչսն կտրեսցուք զանդամս:

Պատասխանի.

Նախ պարտ է զտեսակս կամ զմասունս գայթակղութեան որոշել եւ ապա վասն իւրաքանչիւր ուրուք նոցա խնդրել զարժանաւոր տեսութիւնս: Գայթակղութիւն սեռականապէս ասի, որովք իրաւք կամ բանիւք տկարանան կամ անկանին միտքն յարժանաւոր եւ յառաքինի խորհրդոց, զկնի որոյ գործք հետեւեսցին կամ բանք չարութեան եւ /101բ/ անզգամութեան: Իսկ պատճառ սոցա՝ որ ոք եւ նախաձեռն եղեալ անբժշկելի զմեղանացն ունի զդժնդակութիւն, որպէս ցուցանէ հրամանն ճշմարիտ եւ անշուշտ: Արդ, ըստ որում մարմին կենդանի է, կամ այլով իւիք առ ոտս պատահեցելով ի գլորումն գթէ կամ տկարանայ, կամ այլ ինչ եթէ կրեսցէ վնաս, գայթակղեալ ասի: Այսպէս եւ ի վերայ հոգւոյ առն[ե]լի է, եւ այս երկակի է ինչ, որ ըստ հաւատոյն բանի, եւ է ինչ, որ ըստ գործոց: Եւ երկաքանչիւր ոք ի սոցանէ յերկուս բաժանի՝ կամ յումեքէ զայն կրեալ ի պատճառէ իբր թէ բռնութեամբ կամ լռութեամբ առանց բռնութեան, եւ կամ իւր ինքեանք ի յայն կամաւ հակամտութիւն կալեալ: Արդ, որք բռնադատեցանն եւ կրեցին զգլորումն, ըստ որում մասին եւ իցէ, ոչ են անպարտք եւ առանց վտանգի, թէպէտ եւ յաղագս իրացն առ ժամանակ մի՛ կրեցին ինչ վիշտս: Քանզի պարտ էր մինչեւ ի մահ հակառակել եւ արեամբ չափ տալ պատերազմն [Հմմտ. Եբր. ԺԲ 4]: Իսկ որք նեղեցին, անզերծ ունին զդատաստանէն արդարութեամբ եղեալ վճիռ, /102ա/ այլ եթէ

* Բնագրերը կը ներկայացուին անշշան ուղղագրական միջամտութիւններով. տե՛ս «Աւարտաճառ»: Այս եւ յաջորդ բնագիրը կը ներկայացուին ըստ ՄՄ ձեռ. N 5528:

իշխանութիւն է նոցա հեռանալ, յորոց գայթակղեցուցանեն, եւ ապրել առանց գլորման, եւ ոչ կամեսցին ինքեանք, եւ ոչ եթէ այլ ոք իցեն այսպիսեաց պատճառ վնասու:

Մարմնոյ սիրողք եւ որ ինչ զհետ նորա երթայ՝ կոչեցեալ լինի աշխարհ: Բայց ոչ այնքան եղկելիք են յաղագս անձանց կորստեան, որքան զայլս գայթակղեցուցանելով: Զի ոչ ասաց բանն, եթէ՝ «Վա՛յ, որ մեղանչեն յանձինս», եւ ոչ ըստ մասին որոշմամբ ընդհանուր եւ ըստ բոլորումն եւ որոց զայլս գայթակղեցուցանեն: Զի թէպէտ եւ ըստ մասինքն եւ իւրաքանչիւրքն գործին անիծիւքն լինել, եւ կամ որք ըստ ինքեանսն եւեթ զմեղանսն ունիցին, սակայն որք լինինն պատճառ համանգամայն եւ հանրականապէս զգայթակղութեանց, աւաղեցան եւ անիծուն (անիծին՞) ան[ո]ւանեալ աշխարհ: Իսկ առաջին բանն փոքունս անուանէ զհաւատացեալսն յինքն՝ ըստ որում թէ՝ «Մի՛ երկնչիր, հա՛ւտ փոքրիկ» [Ղուկ. ԺԲ 32], եւ որքան այսպիսիք՝ անմեղադիր լինել, զի անդէտ է ի բանիդ, թէ որչափ էր: /102բ/ Եւ այլ դատաստան է գայթակղութիւն դնողին միում անձին, եւ այլ՝ զբազումս գայթակղեցուցանողաց [Հմմտ. Մատթ. Թ-ԺԸ 6, Մարկ. Թ 41], եւ այլ դարձեալ՝ բազումք զմի եւ այլ՝ բազմաւք զյոլովս կամ զբազումս: Եւ իւրաքանչիւր չափ եւ կշիռ արդարապէս պատրաստեալ է եւ պատրաստի յԱստուծոյ ըստ արժանաւորութեան գործոց չարեաց՝ որպէս բարեացն գործողաց:

Արդ, մեզ որ ինչ հաւատոյն բանի ի դէպ պատուհասք են հակառակորդացն, այժմ ոչ է ասել: Բայց զգործոցն նշանակելի է սակաւաւք վերստին բարժանելով, որպէս զի յայտնի հաւաստեաւ պատասխանի եղիցի խնդրողոյդ: Առն հաւատացելոյ ըստ ճշմարտութեան ուղիղ եւ անսայթաք ճանապարհ է անձուկն եւ նեղ, որ տանի ի կեանս [Հմմտ. Մատթ. Է 14], այսինքն՝ ըստ Աւետարանին վարք, յորմէ խրատէ պատուիրանն՝ ոչ յաջ խոտորել եւ ոչ յահեակ: Իսկ խոտորմանն ըստ արտուղղութեան ունի զանազան յեղանակ եւ պատճառս, որք կոչին գայթակղութիւնք, այլ եւ՝ գայթակղեցուցիչք:

Առաջին՝ յանձնէ եւ այլ ըստ այլ եւ այլ փաստ/103ա/ից եւ պատահմանց կամ տկարութեան աղագաւ ի նմա բնութեան հասարակական, որ ոչ է ակամայ, քանզի կարողութիւն է բժշկել, կամ ի կամաց յաւժարութենէ կամ ի մոլորութենէ արբեցութեան է, եւ սա՝ կամաւոր:

Երկրորդ՝ յարտաքուստ ոմանց պատճառաց, եւ պատճառն այն

ունի երկուս զանազանութիւն. զոմն՝ որպէս զնիւթ ենթակայ արուեստին, որ է այժմ աստ գործոյ, իսկ զոմն՝ որպէս ներգործող չարութեան: Կոչի եւ սա պատճառ, քանզի որ բռնադ[ատ]եացն իշխանութեամբ՝ պատճառ գործոյն է, իսկ բռնադատեալն՝ նիւթ իմն: Եւ փոխադրին յայսմ վայրի, զոր աւրինակ իմն նորաձեւեալք պատճառն երբեմն նիւթ եղեալ, եւ նիւթն նոյն ինքն երբեմն եւ պատճառ, որում յարմարի դատաստան ոչ գայթակղեցելոյն, այլ գայթակղեցուցչի:

Արդ, երկուցելոց վերագոյն գլխոյ՝ ձգողաց ի գայթակղութիւն, որում բռնութեան իշխանութեամբ սակայն եւ ոչ ողոքանաւք գորովու, իսկ երկրորդն՝ նազանաւք ողոքանաց, բայց որ ի բռնութենէ: Ոչ /103բ/ անկեալ է մերոյ կամակորութեան առ հաստուցումն կտրելոյ եւ ընկենլոյ ի բաց, բայց ի տանջանս տայ զանձն եւ համբերել վշտաց յաղագս անհնազանդ չար հրամանացն լինելոյ: Այս մերոց կամաց եւ իշխանութենէ է: Իսկ երկուցն առաւել եւս, քանզի ոչ բռնաւորական գոռոզութեամբ եւ ճոխութեամբ, առ որս վնասելն կամին վարիլ, եւ այն երկուց սաստկագոյն է ոչ նուազ ինչ, այլ եւ կարի յոյժ, որպէս ինձ թուի, քան զբռնադատել, որ խանդաղատանացն է ատելի գթով: Իսկ որ լռութեամբ են պատրանք առ հեշտ ցանկութեան, քան զնա դիւրազերծագոյն ոչ է հաճոյ ինձ ասել, թէեւ՝ քան զառաջինն: Վասն զի անդ թէպէտ եւ բռնաւորութիւն կեղէ, կամք եւ յաւժարութիւն ոչ ախորժեն եւ անսան, բայց աստ ախորժակաց եւ կամաց են առ երկուսին խոնարհել՝ կարթեալք յորոգայթից բանի եւ լռութեան, ուր առաւելագունի քան զբան պէտք են ճգնութիւն եւ մարտի: Վասն որոյ ական աջոյ եւ ձեռին եւ ոտից՝ ըստ սիրոյ /104ա/ եւ պատուականութեան զանազանութեան համեմատեալ ի Տեառնէ լինել, եւ զի ցաւագին է անջատման յեղանակ խլելոյ ական եւ հատման ձեռին եւ ոտին, աջոյ նմանեցոյց, որպէս զի մի՛ եւ յառաւել պիտանին երեւելոյ եւ աւգտակար ըստ մարմնոյ՝ պարտեալ խաբիցիմք: Արդ, ոչ արժան է պատճառս տալ այնպիսեացն սկիզբն լինելով եւ ոչ հետ երթալ պատճառացն չարահաւանութեան առ ի նոցանէ սկիզբն, որպէս եւ հրամայէ Տէր, եթէ՝ «Որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում [Մատթ. Ե 28]»: Քանզի ոչ «նայէ», ասէ, այլ դու նախ սկսար անաւրինել յարձակմամբ աչաց, որ է առաջին շնութիւն, ոչ՝ զհայելն, այլ զցանկութեամբ հայելն պատուիրեաց: Իսկ զհետ երթալ պատճառին է, զոր Սո-

ղոմոնն զեկուցանէ. կամ ի պատուհանից տանն՝ կարկառեալ առան միտս ի մանկաց եւ պակասամիտս յերիտասարդաց զխաւսն առնելով զաղտեղութեան եւ կամ յանկիւնս քաղաքի եւ ի հրապարակս շրջելով փողոցացն պոռնկական դիմաւք յաչաց զաւշոտելոց պատրանս եւ լրբեն ի երեսաւք պատահեցելումն: Գրկաւք ընդ/104բ/խառնեալ եւ փաղաքուշ բանիւք որսացեալ՝ զ[յ]իմարագոյն յերիտասարդաց՝ առնու տանի իբրեւ զշուն տոռամբ ձգեալ կամ իբրեւ զեղջիւր, ո[ր] հարեալ ի նետից, ուր կորնչին երկրածինք [Հմմտ. Առակ. Է 6-23], վասն զի զերկին ոչ ծանեաւ գաւառ եւ ոչ զոր յերկին Հայր: Իսկ զորոց մեղմեղանաւքն եւ աղու[ա]բանիւք արկանէ յոգի եւ ի մարմին, եւ լուծանեն զջիլս պնդութեան մտաց, եւ զիմաստութիւն սրբասէր անձին՝ բաղում անգամ քայքայեալ ցրուեն յաղագս այնպիսեացն: Ո՞ դիւրաւ կարասցէ պատմել ստուգութեամբ, եթէ զիա՞րդ սրտին խմաստք բազմազան յեղանակաւք եւ հնարիմացութեամբ սփռեալ տարածանին: Եւ մի անդր դարձեալ առ վայր, մի եւեթ մինչեւ ի լրումն կամաց գումարմամբ փոփոխին եւ արտաքին դիմացն եւ մարմնոյ շաքաթանաւք (շաղակրատանաւք՞) եւ յոլովիւք փոխաձեւութեամբք զչար արուեստ խաբէութեան պատրանաց այլայլին ըստ գետնառիւծուն եւ բաց ի պարկեշտ եւ զգաստական կերպարանաց յեղափոխին յամենայն ամենայնիւ: Քանզի եւ նա առանց սպիտակութեան ցուցանէ յինքեան զամենայն գունոց նմանութիւնք, չեն ինչ ընդհատ յայս/105ա/ ամենեցունց կերպագործութե[ա]նց արտաքուստ եւ ներքնուստ: Ամենայնաթշուառք ոմանք պատանիք եւ արք կնամարդիք, այլ, որպէս թուի ինձ, եւ ճշմարիտ կարծեմ, զանցանեն յոյժ մեծապէս զնոցայաւք լկտի բարուք վասն համարձակագոյն բնութենէն, քանզի նոքա թերեւս երբէք զընտանի բնութեան զպատկառանացն ցուցանել ձեւանան ծագիկ: Իսկ սոքա եւ բնաւ երբէք զչար սովորութեամբ ստացելոյ բնութեան երկրորդի սիրեն մոռանալ ինչ զհայթայթանաց մասն մի, որոց եւ կրելն յոյժ, քան զգործելն կարծեցեալ երեւի տենչալի: Յաղագս որոց չիք խնայութիւն եւ արգել ոչ միայն յարտաքոյսն, այլ եւ ի մարմին եւս. զի թէ զինքեանս վաճառեցին անբնական եւ աւտար հեշտութեան կամ զարդարն ասել, վիշապին չարի ի ծառայութիւն դժնդակ, զիա՞րդ յայլոցն խնայեսցեն կամ յիրերացսն:

Արդ, սոքա ամենեքին թէեւ հարկաւորագոյնք քան զմասունս մարմնոյ ումեք թուիցին, յորժամ գայթակղեցուցեալ եւ գլե[ա]լ յիւ-

րեանցն կործանման գուբ կամեսցին, ասելովք նենգական պատրանացն տարբերութեամբ հատցին եւ ի բաց ընկեսցին այնու սրով, զոր եկն արկանել Տէր, որով քակեց/105բ/աւ որդի ի հաւրէ, եւ դուստր ի մաւրէ, եւ հարսն ի կեսրէ [հմմտ. Մատթ. Ժ 35, Ղուկ. ԺԲ 53], որով գործեցաւ թշնամութիւն յայր եւ յընտանիս իւր, քանզի՝ «Որ սիրէ զհայր կամ զմայր, զուստր կամ զդուստր եւ զլստ միոջէն ամենայն, չէ Ինձ արժանի» [Մատթ. Ժ 37]: Զի թէ քան զկարեւորագոյնս ի մարմնի ի մասունս եւ ի պատուականս հանդիպեալքն պիտանութեամբ սիրելիք, որպէս ահա կարծին, հրամայեցան ոչ միայն զի հատցին, այլ զի եւ ի բաց քան զաղբ եւս գարշելի ընկեսցին գայթակղութեան գոլոյ աղագաւ պատճառ [հմմտ. Մատթ. Ե 29-30, Մարկ. Թ 42, 44, 46], զի՞նչ ոչ ի դժնդակագոյն անարգանաց եւ ատելութենէ կրելից է պատշաճ եւ արժան, որոց եւ ի մի գործ կենցաղական ոչ են պիտանիք ի նոցանէն: Բայց է եւ այլ գայթակղութեան, որ մերձենայ, եւ յորս հեռին են եւ աւտար յայնպիսեացս յիմարութեան ախորժակաց, որ յակամայ կամս պատանդէ զոգիսն յոլովակի զգաստիցն եւ քաջաբարոյից եւ, զբարւոք սիրոյն կամս խոտորեցուցեալ, յանարժան հեշտամտութիւն տրտմեցուցանէ զոգւոյն մարդասիրութեան ընդարձակութիւն, յորմէ պարտ է ոչ փոքր ինչ զգաստութեամբ ստանալ աւտարութիւն բարւոք եւ վայելչական ածելոցն ի բարեպաշտիկ իմաստասիր/106ա/ութեան հրահանգս:

Միանգամայն եւ ըստ բոլորում ի քրիստոնէութեան ասեմ դպրոց, սակայն առաւելապէս՝ որոց շատն աւանդեցաւ աստուածայնոյ շահավաճառութեան՝ ի հողոյ իրաց աշխարհիս եւթնպատիկ զտեալ եւ մաքրեալ ի բովս հրամանացն Քրիստոսի արծաթ: Քանզի ոչ եթէ զաւանդեալն եւ առանց պակասութեան իրիք մասն կան, եւ լիով պահանջիմք հատուցանել եւ տալ, այլ եւ շահս կրկնապատիկս եւ բազմապատիկս: Գող է եւ խրոխտ բազում անգամ ազատ ինքնակամութիւն, եթէ ոչ դանդաւանադաւ բանին եւ տերունական հրամ[ա]նաւք ընկրկեսցի եւ արթնութեամբն հսկմամբ պահպանեսցի ի գլորմանէ գայթակղութեան, ապրել ոչ կարասցէ եւ ոչ յառն[է] յետ անկման, յորմէ փրկեսցէ Աստուած, որ ոչ կամի ընդ ուրուք կորնչել [հմմտ. Բ Պետ. Գ 9]: Տեսանելի է եւ այս երիտասարդական ցանկութիւն, յորմէ փախչել Տիմոթեայ խրատ տալ Պաւղոս՝ ոչ նմանապէս յամենեսին ունի զ[ը]ղձիցն տարփաւորութիւն [հմմտ. Բ Տիմ. Բ 22]: Քանզի եւ ի կրելն

ըստ վերագոյն ասացելումդ հիւանդանան ոմանք յոյժ չարաչար, թէպէտ ոչ զրկեսցեն յիմեքէ արգելեալք հարկաւորագոյն պատճառաց կամ աստուածային շնորհացն անճառելի հոգ/106բ/աբարձութեամբ, սակայն գայթակղեալ հոգւով, եւ գայթակղեցուցանել ոչ ակամայ եւ առանց յաւժարութեան, այլ եւ խնամով եւս եւ ջանիւ ոչ դադարեն: Վասն որոյ եւ ձեւանան բազում անգամ զանսուրբ եւ զգռեհիկ, անամաւթ եւ ժանդաբարոյ, կանացն ձգողական պատրանաց կերպարանս յաչս եւ ի դէմս երբեմն եւ յայլսն ամենայն լրբութեամբ անդամոցն մասունս, զոր ընդ դատաստանաւ շնացելոցն արկանել ոչ վայրապար համարելի է: Տայցեն եւ, յաղագս որոց յանպատկառութենէ աներկիւղութեան նոցա գթեցին զարկուցեալք սրտիւ, դատ պատուհասի [ահ]աւորութեան ոչ դողնաքեայ ինչ, քան ընդ անձանց վնասուն լկտութեան, մանաւանդ թէ եւս սաստկագոյն, քանզի թէ՝ հայելն ցանկութեամբ պարտաւոր դատաստանի շնութեան կացուցանէ [հմմտ. Մատթ. Ե 28], զորոց բռնադատեն կերպարանաւք այպանելի եւ նշաւակեալ դիմացն եւ մարմնոյն՝ զայլս ի գլորումն ոգւոց, զի՞նչ մտաւ քէն լաւագոյն էր նմա ծանրութեամբ քարի զպարանոցէ կախելով ընկղմիլ ի խորս ծովու: Ընդ որո՞մ ի դժ/107ա/նդակագունից չարեաց համեմատեսցի արդեաւք այնպիսի ձաղանաց նմանութիւն արտաքուստ, եւ ախորժականացն անտեղութիւն մտաց չամաչե՞ն գոնեայ ի չափաւոր մարդկանէ ի ստէպ ստէպ բանալ եւ խփանել: «Աչք քո ուղիղ նայեսցին,- ասէ,- եւ արտեւանունք քո արդար ակնարկեսցեն» [Առակ. Դ 25]: Իսկ նոքա գերեալք յաւրինաց մեղաց եւ զբնութեան կորուսեալ զաւրէնս՝ հրձիգ առնեն զոգիս բազմաց, թէպէտ եւ կամք ոչ իցեն: Լուիցուք Ժողովողին զասելն՝ գնա՛ց դու ի ճանապարհ քո ամբիծ եւ ի տեսիլ աչաց քոց. եւ եթէ՝ անցո՛ զչարութիւն ի մտաց քոց. եւ դարձեալ՝ ծանի՛ր, եթէ վասն այսր ամենայնի ածցէ զքեզ Աստուած ի դատաստան [հմմտ. Ժող. ԺԱ 9]: Քանզի անպահպանաբար յածումն աչաց ունի հետեւումն իւր զբովանդակ մարմնոյ չարութիւն: Զի թէ ոստիկան սրտից մերոց ճշմարտապէս է Աստուած, ապա թէ ոչ զգործոցն միայն համարի մէջ, այլ եւ զսրտին խորհրդոց բիծս եւ արատս, եթէ ոչ խոստովանե[ա]լ ստուգութեամբ ապաշխարիցեմք ըստ կարողութեան արժանապէս:

Մի՛ ըմբռնեսցուք աչաւք մերովք եւ մի՛ յափշտակեալ արտեւա-

նամբք մերովք եւ մի՛ այլոց դիցուք որոգայթ պատրուակեալ եւ յայտնի գայթակղութեան, այլ ամենայնիւ /107բ/ ի շինութիւն միմեանց գնասցուք՝ առանց գայթակղութիւն դնելոյ հրէից, եւ հեթանոսաց եւ Եկեղեցւոյ Աստուծոյ լիցուք: Ի կոչման մերում մնասցուք, սիրեսցուք զմիմեանս ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց, մարտիցուք ըստ աւրինին, զի պսակեսցուք [հմմտ. Բ Տիմ. Դ 8], տղայասցուք ի չարեաց եւ բարեաւք կատարեալք լիցուք: Մի՛ յղասցին սիրտք մեր սնուցանել զցանկութիւն չար, յորմէ ծնանի մեղք մահաբերք: Արի՛ գնասցուք աստի, զի չիք մեզ աստ հանգիստ [հմմտ. Միք. Բ 10]: Ելցուք ի Բաբելոնէ՝ ի խառնակ կենացս չարութենէ, ուր քակտումն եւ բաժանումն է բնաւորական միութեան կապոյ առ Աստուած եւ առ միմեանս: Փախիցուք յԵգիպտոսէ, ազատեսցուք ի ծառայութենէ մարմնոյ եւ ախտից: Սերմանեսցուք ի ժամանակի, զի հնձեմք, յորժամ այնորիկ իցէ ժամանակ, սգասցուք, զի մխիթարիցիմք [հմմտ. Մատթ. Ե 3], լացցուք, զի խնդայցեմք, մաքրեսցուք զսիրտս, զի զԱստուած տեսանել արժանի լիցուք [հմմտ. Մատթ. Ե 8]. դարձցուք, հեծեծեսցուք, զի կեցցուք, խոստովան լիցուք զմեղս մեր, զ[ի] արդարասցուք: Հեզք եւ խոնարհք եղիցուք, զի ժառանգեմք զերկիրն բարութեան եւ կենդ/108ա/անեաց, խաղաղութիւն ընդ միմեանս կալցուք եւ ունել ուսցուք, զի որդիք Աստուծոյ կոչեցիմք, ողորմածք լիցուք, զի ողորմութիւն գտանիցեմք [հմմտ. Մատթ. Ե 7]: Մի՛ դատեսցուք, զի մի՛ դատիցիմք [հմմտ. Մատթ. Է 1]: Մի՛ տացուք զսրբութիւնս մեր շանց եւ մի՛ զմարգարիտս մեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխեալ ապաշաւանք մեզ ի վերայ ածիցեն [հմմտ. Մատթ. Է 6]: Մինչդեռ մեք ի ճանապարհի ընդ ոսոխին, տացուք զհաշիւն արդարանալ, զի մի՛ յանելանելին անկանիցիմք բանդ [հմմտ. Մատթ. Ե 25, Ղուկ. ԺԲ 58]: Սիրեսցուք մի՛ զսիրելիս միայն, այլ եւ՝ զթշնամին եւ զհալածիչս, որպէս զի բարերարութեան Աստուծոյ հաղորդք գտանիցիմք [հմմտ. Մատթ. Ե 44-46]: Զախտս հոգւոց սպանցուք, զնուազելն ի հեղգութենէ առաքինութեան ջանասցուք ստանալ վերստին: Կցորդ լիցուք չարչարանացն Քրիստոսի, զի եւ փառացն հաղորդ լինիցիմք [հմմտ. Հռոմ. Ը 17]: Երթիցուք ընդ նեղ եւ ընդ անձուկ ճանապարհն [հմմտ. Մատթ. Է 14], զի վայելեսցուք զկեանս երանական ի Քրիստոս Յիսուս՝ Տէր մեր, Որում փառք յաւիտեանս. ամէն:

/110ա/ Հարցումն.

Ո՞րպէս կարասցէ հանապազ առաջի աչաց ունել զմեղս իւր եւ դատապարտել զանձն, նմանապէս եւ զաւր մահուն եւ զդատաստանն հանդերձեալ ցանկ յոգւոջ նկար[ա]գրել, որպէս զի կակղասցի սրտին խստութիւն, այլ եւ մի՛ գտցէ ժամանակ պարապոյ դատել զոք յեղբարց բանիւք բամբասանացք:

Պատասխանի.

Կատարելագոյն եւ իմաստասէր /110բ/ մտաց արդարեւ գործս այս է՝ հրաժարելոց ամենայն խափանողական բարոյ զբաւսանաց եւ բուռն հարելոյ միայն զգեղեցիկ դիտաւորութենէ հաճոյիցն Աստուծոյ՝ թողեալ ի խոնարհ զամենայն կարծիս զանձնէ: Թէեւ ի գլուխ իսկ պատուիրանաց իցէ ժամանեալ եւ զբովանդակն ճշմարիտ եւ կատարեալ, խորհեսցի ծառայ անպիտան զինքն գոլ [հմմտ. Ղուկ. ԺԷ 10]: Եւ զ՝առ ի յետոյսն զամենայն մոռացեալ՝ յառաջադէմսն փութով ձգտիցի: Եւ հասեալ զինքն երբէք ոչ բնաւ համարեսցի, այլ զառաջնոցն սխալանաց գայթակղութիւնսն յիշելով՝ հանապազաւր դատապարտ զանձն վարկանիցի, եւ զապականացու կենացս այսոցիկ պատաղմունս ի բաց լքեալ՝ մահուն յիշատակաւ հաշեսցի զցայգ եւ զցերեկ, ոչ զի մեռանելոց է, քանզի անմտութիւն է այս եւ հեշտասէր ախորժակաց, այլ զի ընդ ամենայնի համարս տալոց եմք, զոր ինչ գծեցաք կամ խորհեցաք եւ խաւսեցաք զանարժանս: Եւ կատարեսցուք[1] ստանալ զայսոսիկ, թէ զմարմնոյ զհետ բաց ի հարկաւորագունից ոչ երթիցուք, այլ ճգնելով հնազանդեցուցուք զսա եւ զսրբոցն վարս իբրեւ զհայելի յամենայն ժամ եւ յիրս ամենայն յանդիման մեզ ունիցիմք՝ առ ի ճանաչել զգեղոյ երեսաց մերոյ քաջավայելչութիւնս կամ զտգեղութեան /111ա/ վատթարութիւնս: Առաջնոցն վկայութիւն ընկալեալ՝ հոգասցուք զԱստուծոյ, եւ եթէ երկրորդն իցէ՝ ջանասցուք փոփոխել ի գեղեցկութիւն: Եւ սպնդով պատուիրանացն թացելով յարտասուս՝ զաղտն ի բաց ջնջեսցուք յոգւոց: Եւ զհրամանաց Փրկչին մերոյ ճշգրտութիւն մի՛ եւ մի՛ իւիք այլայլեսցուք զբաղմամբ կամ մոռասցուք անհոգւութեամբ եւ կամ արհամարհանաւք անփոյթ արասցուք, քանզի յայսցանէ մտանեն ի վարս մեր ամենայն ընդդիմութիւնք կամացն Աստուծոյ: «Որ սիրէ զԻս,- ասէ,- պատուիրանս Իմ պահեսցէ»

1 կատարեսցիք

[Յովհ. ԺԴ 21]: Եւ դարձեալ, թէ՝ «Զպատուիրանս Իմ պահեսջիք, կացցիք ի սէր Իմ, որպէս Ես զպատուիրանս Հաւր Իմոյ պահեցի եւ մնամ ի սէր Նորա» [Յովհ. ԺԴ 15]: Եւ է մի ի պատուիրանաց Նորա. «Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք. քանզի որով դատաստանաւ դատիք, դատելոց էք, եւ որով չափով չափէք, չափեսցի ձեզ» [Մատթ. Է 1-2]: Զի եւ մեք ոչ յումեքէ յեղբարց կաւ յաւարաց (կամ յաւտարաց՞) կամիմք զբամբասանացն զրպարտութիւնս եւ նախատինս, մինչ զի եւ բանք արդարք զայրացուցանեն զմեզ թշնամութեամբ ասացեալք, թէպէտ եւ համբերել իրաւացի էր: Յաղագս այսորիկ, «որպէս կամիք, թէ արասցեն ձեզ /111բ/ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա, զի այն իսկ են աւրէնք եւ մարգարէք» [Մատթ. Է 12]: Իսկ զ'առ ի չարաց ոմանց եկեալ ի վերայ մեր հայհոյութիւնս՝ ուրախութեամբ համբերեսցուք ի փառս Աստուծոյ եւ մի՛ յաղթահարեալք լիցուք զ[...][1]ոյգսն դարձուցանելով նոցա, այլ յաղթեսցուք բարեաւն չարին [հմմտ. Հռոմ. ԺԲ 21]: Երախտիս եւ հպատակութիւնս ըստ մերոց աւրինաց եւ աւանդութեանց հատուցանելով, որպէս զի համարձակ լիցի մեզ մատչիլ առաջք աթոռոյ շնորհացն Աստուծոյ եւ գտանել ողորմութիւն ի դէպ ժամանակի աւգնականութեան: Քանզի՝ «Ոչ որ ասիցէ ցիս՝ Տէ՛ր, Տէ՛ր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ արասցէ զկամս Հաւր Իմոյ» [Մատթ. Է 21]: Թողցուք միմեանց զ[յ]անցանս ի սրտից մերոց, զի թողցին եւ մեզ յանցանք մեր ի Հաւրէն մերմէ, որ յերկինս է [հմմտ. Մատթ. Զ 12]: Այսպէսովք դեղովք բժշկին սրտից խստութիւնք եւ կակղանան անդամանդեայ բարք ոգւոց: Յայնժամ եւ իւրոցն միայն հոգ տանիցի մեղաց անձն, յորժամ քանոնով պատուիրանացն Քրիստոսի չափիցէ զինքն եւ զամենայն գործս իւր՝ հանդերձ բանիւ եւ մտածութեամբք: Քանզի որպէս զպայման կենդանագրութեան կամ այլոյ ձեռակերտիկ արուեստի եւնթ է մակացութեան իրիք հնար ոչ է հակառակ գործով արուեստին ուսանել կամ զուա/112ա/եալն յարդարել պատշաճութեամբ անվթարապէս, այսպէս անընդունելի է առաքինութեան բարեձեւութիւն ոչ գնացելումն հաւասարապէս ըստ խնդրոյ աւետարանական վարդապետութեան համանգամայն: Զի այնր իսկ աղագաւ Որդին Աստուծոյ յայնքան իջանելիս խոնարհութիւն[2] ոչ անարժան համարեցաւ, զի մեզ գործով եւ բանիւ զբարւոքն ուսուցանէ կենաց պատճառ եւ [ճ]անապարհ եւ զկործանելն ի մեզ կանգնեսցէ բնաւորական աւրինաց առաքինի շի-

1 Մէկ տառ բաց թողուած է, բայց ձեռագրին մէջ բացթողում է, թէ սրբուած՝ յայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ բառը զոյգսն է:

2 խոնարհութիւն

նուածոց, յայլ եւ զոչ արժանաւոր եւ զամենավատթար ի տկարութենէ կամ ի նախայաւժար մարմնական կամաց գործս ծանուցէ ատել եւ դարշելի վարկանիլ: Զթերութիւն անձին արդարադատ մտաւք, ճանաչել եւ խոնարհել եւ մի՛ հպարտ եւ ուռուցեալ խորհրդով անհանճարաբար դատիլ բանիւ զեղբարս: Զի եթէ զ[յ]անդիմանութեան բանս դէմ յանդիման, յորմէ շահ եւ աւգուտ բարեմտագունին գտանի յանդիմանացելումն, ոչ յամբայր եւ ոչ ամենայն ումեք էր ամայեաց ինքն, այլ մեծաւ իմաստութեամբ: Եւ որոց քաջատես են աչք եւ համարձակահայեաց, զինչ բան ի լեզուագարութենէ շատխաւսութեան եւ գերանով խաւարեցելոյ: Ի դէպ զոչ մերձաւորն դատելոյ զեղբայր բազում անգ/112բ/ամ եւ զլուր սուտ եւ ի թշնամեաց զյաւդուած զրպարտական բանից պարարտացուցանեն երկայն ճառիւք, ոչ զի նմա շահ ինչ գործեսցեն կամ որոց պատմենն, այլ զի զանձինս յափտնական տանջանացն եւ հրոյ գեհենին պատրաստեցան կերակուր: Եթէ զանմեղս եւ զարդարս հրաժարեցուցանէ բանն թշնամանել կամ բամբասել յանաւգուտս զոք ի մեղանչականաց, զի մի՛ ընդ նոսին կորիցեն, զի՞նչ ապա համար ունիցեն տալ Աստուծոյ, որք անճառելի եւ զանազան պղծութեամբք զոգի եւ զմարմին շաղախեալ ունիցին եւ անամաթ դիմաւքս ցանկ եւ անդադար զանարգելութեան զազրութիւն ոչ շիկնեն գործել եւ նստեալ բամբասեն ազգի ազգի կարկարուն բանիւք զարս սուրբս եւ երկիւղածս յԱստուծոյ, որ ոք չիք մեղացն քաւութիւն, վասն զի ոչ կամին: Եթէ տեսանիցէ, ասէ, զեղբայր իւր մեղուցեալ մեղս, ոչ [առ] ի մահ խնդրեսցէ յԱստուծոյ եւ տացէ կեանս մեղուցելոյն:

«Ոչ առ մահ ամենայն անաւրէնութիւնք մեղք են, եւ են մեղք, որ մահու չափ են» [Ա Յովհ. Ե 16-17]: Ոչ վասն այնորիկ ասեմ, եթէ խնդրեսցես. զի եթէ որ խնդրենն, ոչ առնուն, վասն զչարաչար խնդրեն [հմմտ. Յակ. Դ 3], յաղագս այնպիսեացն զի՞նչ ասասցուք, որք ոչ միայն ոչ խնդրեն, այլ եւ զայլոց խնդրուածս համարձակութիւն առ Աստուած...[1]

1 Այստեղ կը վերջանայ ձեռագրի ընդօրինակութիւնը: Այս գործը մեզի յայտնի չէ ուրիշ ոչ մէկ ձեռագրի մէջ. ուստի կարելի չեղաւ ամբողջացնել:

/107ա/ Նորին խրատք մանկանց:*

Յետ զճշմարիտն ընդունելոյ զ'առ ի հաւատ խոստովանութեանն, որ ի Հայր եւ ի յՈրդի եւ ի Հոգի Սուրբ աշխատասիրաբար եւ զվարուց ուսանէ պարտ է բուռն հարկանել, քանզի ոչ դոյզն ինչ եւ վարկպարագի է ուսումն քրիստոնէութեան, եթէ թեթեւութեամբ եւ հեղգապէս ձեռնարկութեամբ եկեսցէ ի ստացումն, այլ գերաշխարհիկ եւ աստուածային[1] եւ ի վեր քան զամենայն բան: Վասն որոյ[2] յամենայնէ, որ ըստ կենցաղոյս[3] խափանիչք աշակերտութեան Աւետարանին հոգք եւ իրք իցեն, հրաժարեցոյց Տէրն[4] եւ զխաչ յատուկ միայն առնուլ եւ երթալ զհետ Նորա [հմմտ. Մատթ. ԺԶ 24, Մարկ. Ը 34, Ղուկ. Թ 23]: Եւ ապա յետ այնորիկ ոչ եւ միում իմիք յանդրէն ձգողաց յետս հաւանել[5], որոյ /107բ/ ձեռն զմահով ուսման Աւետարանին իցէ արկեալ [հմմտ. Ղուկ. Թ 62], առ մոռանալ միանգամայն զ'առ յետոյսն եւ յառաջադէմսն նկրտիլ մտաւք համայն եւ մարմնով ընթանալ ի կէտ կոչմանն Աստուծոյ, որ ի[6] Քրիստոս Յիսուս. «Եւ ի նմին յարամնալ ըստ խորհրդակցութեան ասողին, թէ արժանի գնալ ձեզ կոչմանն, յոր կոչեցարուք» [հմմտ. Եփես. Դ 1]: Եւ եթէ իւրաքանչիւր ոք, յոր կոչումն կոչեցաւ, ի նմին մնասցէ՝ միանգամայն զանընդհատաբար զընթացսն եւ զտեղի ունելն աւրինադրելով, ըստ որում յԵփեսացւոց թղթին գրէ: Որ եւ յամենայն կողմանց իսկ հոգեւոր զինու զգեցմամբ ամրանալ համարել՝ զբոլոր արդարութիւնն զրահս անուանելով[7], իսկ զկատարել[8] եւ զճշմարիտ[9] հաւատն՝ վահան, սաղաւարտ՝ զյոյսն իշխանականին, որ ի մեզ է: Սուսեր հոգւոյն թուի

* Այս եւ յաջորդ բնագիրը կը ներկայացուին ըստ ՄՄ ձեռ. NN 8 (=A), 7 (=B), 6049 (=C):

1 B անընթեռնելի 2 տառ
2 B անընթեռնելի 1 տառ
3 B անընթեռնելի 2 տառ
4 BC Տեառն
5 C հաւանեալ
6 BC որդի
7 B անընթեռնելի 2 տառ
8 A զկատալել
9 B անընթեռնելի 1 տառ

/108ա/ ինձ զսէրն նշանակեալ[1], որով կոտորին արմատք ամենայն չարութեան եւ նոյն ինքն չարն [հմմտ. Եփես. Զ 10-18], զի թէ սէր է Աստուած, ի հարկէ սատակեալ լինի բանսարկուն տիրապէսն ատելութեամբ: Այլ եւ գաւտի՝ զճշմարտութիւնն՝ հեղձուցիչ ցանկականին՝ սատակողի զգեղեցկութիւն Աւետարանին: Այլ ինքն զ'ըստ նմայն վարս՝ կաւշիկս, յորմէ սպաս եկին չարութիւնն, յաղթահարեալ անգործ լինին կամ ոչ բնաւ սկիզբն առնելով կամ զյարկուածսն յառաջագոյն բժշկելով զթիւնիցն: Գոյ ուսանել եւ զգայարանացն պահպանութիւն. «Աչք քո ուղիղ նայեսցին,- ասէ,- եւ արտեւանունք քո արդար ակնարկեսցին[2] [Առակ. Դ 25], եւ թէ՝ «Մի՛ ըմբռնեսցիս աչաւք քովք եւ մի՛ յափշտակեսցիս արտեւանաւք նորա» [Առակ. Զ 25]. ըստ որում եւ ի Տեառնէ իսկ հրամայի, թէ՝ «Որ հայի ի կին մարդ, անդէն շնացաւ /108բ/ ի սրտի իւրում» [Մատթ. Ե 28], որոյ յոլովք են վկայութիւնք ի Գիրս Սուրբս:

Այսպէս եւ զլսելիս խրատել՝ չանալ, չլսել, որոց զանաւրէնս հրամայեն. մանաւանդ կափուցանել եւ խնուլ բովանդակ ի չարաբանութենէ, ի բամբասանաց, ի հայհոյութենէ, [յ]ընդվայրաբանութենէ, ի կատակերգութենէ, ի քսութենէ եւ յորոց այսց ազգ իցեն: Եւ եթէ լսել զայսպիսիսս[3]՝ անարժան եւ վնասակար է, ո՞րչափ եւս առաւել խաւսել: Լո՛ւր ուգտակարագունի խրատուն, որ ասէ՝ «Արդ, արա՛ դուռն եւ նիգ բերանոյ քո» [Սիր. ԻԸ 29]: Ընդ Դաւթայ աղաւթեա՛ դնել պահապան բերանոյ եւ դուռն ամուր շրթանց [հմմտ. Սաղմ. ՃԺ 3], որպէս զի մի՛ եւ սիրտն խոտորեսցի բանիւք չարութեան: Զբարիսն միշտ խաւսեսցուք, իսկ զանաւգուտսն եւ զհրաժարելիսն՝ բնաւ եւ ոչ երբէք: Քանզի մարդ բարի ի բարի գանձուց սր/109ա/տի իւրոյ բղխէ զբարիս, եւ մարդ չար ի չար գանձարանէ սրտի իւրոյ հանէ զչարիս [հմմտ. Մատթ. ԺԲ 35, Ղուկ. Զ 45]: Ասէ եւ միւս եւս գիր. «Եթէ ոք բանիւք ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարողն է սանձահարել զամենայն մարմինն իւր» [Յակ. Գ 2]: Բայց եթէ ի շատխաւսութենէ ոչ զգուշացուք, չէ հնար ոչ յանցանել լեզուաւ, որպէս ասէն[4]

1 A նշանակել
2 A ակնեսցին
3 B անընթեռնելի 2 տառ
4 B անընթեռնելի 2 բառ

առակքն, եթէ՝ ի շատխաւսութենէ[1] ոչ ապրիս ի մեղաց: Եւ մի՛ կարծեսցուք զ'առ ի բանիցն սխալանս թեթեւագոյն ինչ եւ փոքր գոլ: Զանսուտ վճիռն լուիցուք ի ճշմարտութենէն. «Ի բանից քոց արդարասցիս,- ասէ,- եւ ի բանից քոց պարտաւորեսցիս» [Մատթ. ԺԲ 37]: Ո՞րչափ եւ քանի՞ք իցեն պարտութիւնք ի լեզուոյ, զոր թուեալ մի ըստ միոջէ ոչ դիւրին ումեքէ՝ զստութեան եւ զերդմնահարութեան կամ զզրաբանութեան եւ զխեղկատակութեան, զչար/109բ/խաւսութեան, զհայհոյութեան, զնենգութեան, զշոգմոգութեան, զկռուոյ, զաղաղակի, զթշնամանաց, զմեծաբանութեան: Եւ սոքին այսոքիկ հանդերձ ազգակցաւք իւրեանց ունին զանազան տեսակս եւ մասունս, նաեւ մասանց մասունս:

Սոյնպէս եւ որկորաժէտութեան եւ անկարգ ծաղու չարապէս սպասաւորէ բերան անխրատ: Իսկ շաւշափելեացն վնասաբերութիւնք, որով մարդիկ թուլանան, յաշխարհի բամբասին, եւ[2] ոչ ի հետ ցանկութեանց եւեթ կատարմունս, այլ եւ ի հպաւորութեան[3] անգամ առ ի ցանկութենէ դոյզն մի: Այսպէս եւ ի զուտղութենէ ի զրկանս, ի գողութենէ եւ ի կծծութենէ. եւ որպէս ի չարն առնել, նոյնպէս եւ ի չգործելն բարի՝ դատապարտեսցի՝ չտալով տուրս եւ չառնելով ողորմութիւն կա/110ա/մ չտարածանել մաքրապէս յաղաւթս յամենայն[4] ժամ եւ ոչ ի սպասաւորութիւն կալ վշտացելոց[5]: Լինի երբեմն եւ հոտոտելաւք մեղանչել[6], մեղկիլ ի գոլորշոյ անուշ կարծելոցն հոտոց, զոր աւելորդ քեզ գրել[7] վարկուցեալ զբաւանս[8] վասն կարի հեռի յիրացն գոլոյ նշանակեցի միայն:

Արդ, այլոց կենդանեաց զգայարանք առ ի պէտս կելոյ միայն կազմեցան, իսկ մարդուն առ այսուիկ ի բարւոք կելոյ պէտս եւ ի[9] բարի կեանս, ասեմ, ըստ առաքինութեանն, ոչ միայն զի ոչ մեղիցուք

1 B անընթեռնելի 1 տառ
2 B անընթեռնելի 1 բառ
3 A հպատութիւն
4 BC ամենայն
5 B անընթեռնելի 2 տառ
6 B անընթեռնելի 1 տառ
7 BC գրեալ
8 ABC զբուսանս
9 BC չիք

նոքաւք, այլ զի գործիս բարեաց ունիցիմք զնոսա եւ իւրաքանչիւրովքն զգայութեամբքն գեղեցկապէս վարիցիմք: Վասն զի առ հաճութիւն Աստուծոյ եւ փրկութեան ոգւոց մերոց ոչ բաւական է խոտորելն միայն ի չարեաց, այլ եւ զբարիս գործել. որոց գործա/110բ/բանք զգայութիւնքս յուղիղ եւ յառաքինի մտաց կարգաւորեալք եւ յարմարեալք, որպէս զի նոքաւք եւ ինքն իմաստասիրեսցէ, զբնութեան ամբողջ յինքեան պահելով կամ ուղղելով՝ վերստին[1] տացէ եւ յաղագս ամենայնին:

Եւ արդ, աչաց առաքինութիւն:

Առաջին՝ հայելն իմաստութեամբ ի գործս Աստուծոյ, աւրհնել սրտիւ եւ բերանով զԱրարիչն ամենայնի եւ գոհանալ ճշմարտութեամբ վասն գեղեցկակարգութեան եւ կենցաղաւգտութեան Նորա զարուեստաւոր բանէն. եւս առաւել իմաստասիրելն բնախաւսութեամբ յաղագս նոցա:

Երկրորդ՝ գթութեամբ աստուածայնով եւ ջերմ[2] սիրով առ ամենայն մարդիկ եւ մանաւանդ առ կարաւտս եւ վշտացեալս նայել եւ լինել վշտակից ի բանդի եւ ի հիւանդութեան ոչ անտես առնել:

Երրորդ՝ զներկուածս մեղացն արտա/111ա/սուաք լուանալ, որպէս Դաւիթն եւ Մանասէ եւ մեծն Պետրոս, կամ որում շատն թողու վասն առաւել սիրոյն կինն: Սովին այսուիկ եւ զպաղատանսն, թէպէտ եւ ոչ մեղս ինչ ունել կարծիցի, որ է անհնարին,[3] որպէս եւ Եզեկիայն: Քանզի ո՞ պարծեսցի[4] սիրտ սուրբ ունել, կամ ո՞ հաւանեսցի,[5] եթէ անարատ իցէ ի մեղաց:

Չորրորդ[6]՝ անյագ եւ առանց ճանձրանալոյ ի Գրոց Սրբոց ընթերցմունս՝ զնա խոկալ, սովորեցուցանել եւ ականջաց զնոյն սէր եւ կրթութիւն աստուածայնոյ հրամանացն ունկնդրութեան, շնորհել հանդերձ աղքատաց եւ զրկելոց եւ որոց պէտս ինչ ունիցին՝ առ լրումն կարաւտութեանն մատուցանելով զլսելիս:

1 B անընթեռնելի 1 տառ
2 A ջերմն
3 B անընթեռնելի 1 տառ
4 B անընթեռնելի 2 տառ
5 B անընթեռնելի 1 տառ
6 B անընթեռնելի 2 տառ

Իսկ բերանոյն՝ յամենայնի գոհանալ, անդադար աղաւթս առնել, սաղմոսել, ընթեռնուլ, խաւսել զշահաւորսն, լռել յան/111բ/աւգտակարացն, ճանաչել զժամանակ խաւսից եւ լռութեան, քաղցրութեամբ տալ[1] պատասխանի ամենեցուն, եթէ իցէ հնար: Մխիթարել զվշտացեալս, քաջալերել զլքեալս, յորդորել զկարճամիտսն, զտգէտս ուսուցանել, յիմաստնոց խրատիլ զբան:

Այլ ձեռաց՝ զի՞նչ քան զ'առ կարաւտեալս եւ աղքատս լի տրաւք կարկառուլն իցէ բարեգործութիւն, կամ զիւրաքանչիւրոցն լնուլ զպէտս, որոց ի կարաւտութեան: Եւ ըստ զաւրութեան գործել զցայդ եւ զցերեկ ի դարմանս այնպիսեացն եւ զիւր հաց ուտել եւ չծանրանալ ումեք եւ ոչ ի ձեռս հայել այլոց. եւ յամենայն տեղիս ամբառնալ առ Աստուած եւ յամենայն ժամանակի սրբութեամբ պարկեշտացեալ:

Իսկ ունգաց՝ առ վերագոյն արացելովք եւ զիմանալին իմանալոյն նուիրել: /112ա/ Զգալ զթափեցելւոյն իւղոյ հոտ եւ լինել, որոց ախորժեն հոտ անոյշ Քրիստոսի առ Աստուած [հմմտ. Բ Կոր. Բ 15], որպէս զի կարիցէ վստահութեամբ ասել. «Իւղ թափեալ է անուն Քո», քանզի որ ոչն զգայ զինչ, զիա՞րդ ճանաչէ, ո՞րպէս յաղագս նորա խաւսեսցի: Եւ որ ոչ լինիցի բոլորովին անուշահոտութիւն, ոչ եւ զազգակցութիւն ծանիցէ, քանզի ինքեամբ եւ նմանեաւն իմանի. «Աքանչելի եղեւ գիտութիւն Քո յինէն, որ է յիս» [Սաղմ. ՃԼԸ 6]:

Արդ, որ հրաժարելիք են զգայութեանց եւ որք ընտրելիք, համառաւտիւք բաւականապէս ասացաւ:

Իսկ վասն երից մասանցն անձին, առաքինութեանցն չորից, ընդդէմ չորից ախտից ասել ի դէպ է: Այսպէս՝ բանականին, որ ի մեզ կատարումն եւ առաքինութեան՝ խոհականութիւն: Զի եթէ ոչ իմաստնայցեմք ուսմամբք, զիա՞րդ կարգն ըստ բնութեան ամբ/112բ/ողջ մնասցէ, եւ կամ ո՞րպէս յարմարումն լինիցի անձնականաց իրաց, զի այսպէս ասացից, քանզի առանց գիտութեան եւ խորհրդոյ յառաջն անասնականքն՝ երբեմն ցասումն, երբեմն ցանկութիւն, որք մանաւանդ յարձակողագոյնք ի սկզբանն են եւ դժուար արգելիք, բայց ոչ անհնազանդք բանի: Քանզի սորա մեծացելոյ կրթութեամբք բաւական լիցի ընկրկել եւ նահանջել զախտս, եւ զտիրական իշխանութիւն ունել սեպհականապէս եւ հարազատաբար զաթոռ եւ ծառայեցուցանել զբո-

1 Ա տալոյ

վանդակ մարմինն: Վասն զի սա ցասման մատչեցելոյ յինքենէ հրամայէ իշխել ցանկութեան եւ ճնշել զնա ուժգնապէս, զի մի՛ առցէ անիշխան ինքն յինքենէ իշխեցելոցն եւ իշխան իշխանաց եւ նոցա զանց իւր անիրաւ/113ա/ապէս ընձեռեսցէ: Իսկ այսորիկ եղելոյ ըստ կարգի, որ ի ցասմանէ իշխանութեան, որ ի վերայ ցանկականին, անուանի արութիւն: Երկուց ախտիցն, որ ըստ առաւելազանցութեան եւ նուազութեան միջին գոլով յանդգնութեան եւ երկիւղի, զի սոքա հակառակամարտք իմն են նորա՝ յանդգնութիւն անամաւթ եւ յահուր[1] գոլով եւ երեսանակ[2]: Իսկ երկիւղ՝ վատ եւ խենէշ[3] եւ դժուարաշարժ յաւգտակարն: Եւ են երկոքին չարութիւնք սրտմտականին: Իսկ չափելն եւ կանոնելն արիութիւն կոչեցաւ, քանզի գերազանցութիւն յանդգնութեան[4] ի ներքս գոլով եւ քան զնուաստութիւն երկիւղի գեր ի վերոյ. ուստի պարտ է իմանալ, թէ ամենայն ուրեք չափաւորն է ընտրելի եւ սահմանելի:

Այլ ամփոփումն եւ հեղձումն ցանկութեան ողջախոհութիւն ասի՝ զեկուցա/113բ/նելով, եթէ առողջն մտաւք ոչ ըմբռնի ի նմանէ, իսկ ընդ նովաւ ստորանկեալն միտք հիւանդութեամբ մեծաւ վարակեալ է:

Արդ, այսպիսի կարգաւորութիւն եւ ունակութիւն արդարութիւն է ճշմարտապէս՝ ոչ տալ թոյլ սոցա զրկել կամ զրկիլ իւրաքանչիւրոց ի միմեանց կամ թէ յախտից[5]: Եւ երկայնաբանել յաղագս նոցա այժմ ոչ է ժամանակ մանաւանդ առ պարզամիտս, բայց առանձին վասն չորից ախտից երկրորդել սուղ ինչ ի դէպ կարծեմ, որք են ցասումն եւ ցանկութիւն, երկիւղ եւ տրտմութիւն:

Այլ վասն ցասման եւ ցանկութեան շատ է այժմ ասացեալդ: Իսկ զտրտմութիւն սահմանեն վրիպումն ի ցանկութենէ, եւ զերկիւղ՝ ակընկալութիւն չարի իրիք: Ապա ուրեմն, որ ոչ է գերեալ ի մարմնական ցանկութենէ ինչ կարծեաց եւ /114ա/ ախտից, ոչ տրտմի ընդ վրիպանս նոցա, եւ որ սիրէ ճշմարտապէս զԱստուած, ոչ երկնչի յերկիւղէ մահու. եւ վասն այլոց, զինչ պարտ է ասել:

1 Ցաճուր - խառնակ, անկարգ
2 Երեսանակ - լկամ
3 Խենէշ - թուլամորթ
4 Յանդգնութիւն
5 AB յաղթից

Արդ, որ առաքինանայ ասացելովքդ եւ որովք ի դոցանէն բուսանին, կատարէ զառաքելական խորհրդակցութիւնն, թէ[1]՝ «Աղաչեմ զձեզ գթութեամբն Աստուծոյ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ» [Հռոմ. ԺԲ 7], եւ լինել բոլորապտուղ նուէր կատարեալ, խաչել յաշխարհի եւ աւտարանալ ի մարմնոյ, փութալ յանդերանութիւնն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որում փառք յաւիտեա[նս. ամէն]:

1 C եթէ

/90բ/ Նորին յաղագս որոց կուսութեամբ հաճոյանան Աստուծոյ:

Ոչ ինչ պէտք էին յաղագս խնդրոյս այսորիկ առնել բան, քանզի յոլովք յարանց բնախաւսաց ետուն հաստատութեամբ ի ձեռն գրոյ զմեծի առաքինութեանս այսորիկ հրաշափառութիւն եւ եթէ որպիսի մրցանակաւք պատուելոց են ի Տեառնէ: Բայց զի մի՛ ապախտ[1] առնել թուիցիմք դանդաղութեամբ զհրամանս սիրոյ, խուն մի որչա/91ա/փ զձեւ եւ զնշանակութիւն մակադրութեան հատուցուք: Է արդար եւ զարմանալի մարտն ընդ բնութեան բոցոյ եւ կարաւտ աստուածային աւգնականութեան եւ զանազան հնարիւք երկնաւորաւք հազիւ պահելի, յոր հայելով Տեառն սահմանէ ոչ բաւական լինել ամենեցուն այնմ հանդիսի, սակայն «որ կարողն է տանել, տարցի» [Մատթ. ԺԹ 12], ասէ: Որ եդն աւրէնս մեծաւ պնդութեամբ չերկնչել ի մահուանէ, ոչ համարձակեաց[2] ամենեցուն ձեռնարկել[3] ի նա: Արդ, որչափ դժուարք ըմբերելին է ծանրագոյն, այնչափ առաւել ունի առնուլ յԱստուծոյ[4] զհատուցումն մեծութեան, զի ոչ հեռի ինչ է յարեամբ վկայութենէ, այնչափ ժամանակս տալ պատերազմ ընդ ընտանի բռնաւորին եւ ընդ անձեռն ընդելագոյն գազանին: Որ ցանկ[5] եւ անխնայաբար[6] խածատէ ներքուստ ի ներքս եւ անզարմապէս[7] կեղեքեալ՝ /91բ/ գիշատէ զիշխանական հոգւոյն բարետոհմութիւն: Բայց թէպէտ եւ սաստիկ ջանիւ ոք աշխատեալ պահիցէ զսրբութիւն հոգւոյ եւ մարմնոյ ըստ առաքելական խրատուն[8], եթէ զամենայն պատուիրանս[9] Տեառն լծակիցս այնմ ոչ արասցէ[10], անաւգուտ զվաստակս քրտանցն ունի եւ անշահ զդժնդակ երկանցն համբերութիւն: Հաւանեցուսցէ զմեզ առակն տե-

1 Ապախտ - անպիտան
2 A համարձաեաց
3 C ձեռն արկանել
4 C Աստուծոյ
5 C ցանկան
6 C խնայաբար
7 Անզարմապէս - ուժգով, վայրենի, անգութ կերպով
8 A խրատու
9 A պատուիրան
10 A չարասցէ

բունական յաղագս յիմար կուսանացն, որոց երեւի ոչ ինչ ըստգտանելեաց[1] գործեցեալ, մանաւանդ եթէ զբաւանդակ զկատարեալ[2] զպատուիրանսն եւ միում միայն թերի գտեալ[3]՝ զամենայն կորուսին [հմմտ. Մատթ. Ի6], յորս աշխատն եղեն: Եւ այն զի ոչ ամենեւին[4] անողորմ դատել, այլ զի ոչ ըստ բաւականի եւ ոչ որքան կարողութիւն էր, եղեն կարաւտելոցն բարերարք, քանզի զայս լապտերացն մերձ ի շիջումն գոլն, այլ /92ա/ ոչ շիջուցեալ զեկուցանէ [հմմտ. Մատթ. Ի6 8]: Յայսմանէ խրատեցաւ առաքեալ ասել. «Որ սերմանէ ճշդելով, ճշդելով եւ հնձեսցէ, իսկ որ առատութեամբն՝ հակառակ նմին ժողովէ» [հմմտ. Բ Կոր. Թ 6], վասն զի զտուրս զուարթառատս եւ զողորմելն[5] լրջմտութեամբ սիրէ Աստուած: Ի վերայ այսոցիկ եւ յաչաւք շնութենէ, այլ եւ ի ջեռնելոյ ամենայն զգուշութեամբ պահել զանձն, որովք ամենեքումք եւ լռեցելովքն հասանէ մտանել ընդ յիմաստունսն յառագաստն այն, յոր Փեսային յինքենէ ասի մտանել [հմմտ. Մատթ. Ի6]: Բայց զիս ի բերանոյ իմմէ դատելոց է, եւ ոչ զիտեմ զինչ գործեցից: Աւա՜ղ կորստեանն մեծի եւ անգտանելոյ, քանզի զոր ասեմն[6], ոչ առնեմ: Ճարտար եմ յաղագս բժշկութեան եւ այտուցեալ ջրգողութեամբ[7] ի վերայ մահճաց ինքնասիրութեան եւ դատարկութեան բարւոյ:

1 Ըստգտանելի - մեղադրելի
2 B անընթեռնելի
3 C ուտեալ
4 A ամենին
5 A զողորմել
6 B եմն թէրի է
7 C ճրգողութեամբ

/113բ/ Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ[1]:[2]

Եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի ինչ զեղբարս կենակիցս եւ երթալ յանապատս[3], քանզի ոչ կամիլ[4] հրամայեցաք առանձինն եւ միայն /114ա/ նստել, այլ ընդ որս զնոյն բաղձանս վարուց առաքինութեան յանձինս բերելով՝ ճգնիցին վաստակաւք ի փառս Աստուծոյ:

Պատասխանի.

Եթէ ունէաք ճշմարտութեամբ զսովորականութիւն[5] ուղղագործութեան հարցն մերոց զառաջնոցն[6] եւ զհամաշնչութիւն միաբանութեան[7] եղբարցն նորընծայ հաւատացելոցն[8], որոց սիրտ եւ անձն մի եւ որոց[9] ոչ ինչ նոցա[10] առանձինն ի գոյիցն էր[11] համարեալ իւր [հմմտ. Գործ. Բ 44, Դ 32-37][12], եւ ժողո/114բ/վեալք հանապազ ի շինութիւն միմեանց շնորհաւք հոգեւորականաւք [հմմտ. Հռոմ. ԺԴ 19]՝ ըստ առաքելոյ բանին, եթէ՝ այդպէս կեայք առ իրեարս[13], եւ ոչ դոյզն մի թերեւս էր դիպողագոյն[14] մեկուսանալ յիրերաց: Բայց վասն[15] զի շրջեալ փոխեցաք զամենայն տեսակս[16] բարեգործութեան[17]՝ ի հակա-

1 B Հարցումն սուրբ վարդապետին մականուն Սարկաւագ:
2 Այս բնագիրը կը ներկայացուի ըստ ՄՄ ձեռ. NN 777 (=A), 5453 (=B):
3 B յանապատ
4 B չիք
5 B զսովորութիւն
6 B չիք
7 B զմիաբանութիւն համաշնչութեան
8 B առաջնոցն փխ. նորընծայ հաւատացելոցն
9 A չիք որոց
10 B յատուկ
11 B չիք էր
12 B իւրեանց
13 B չիք եթէ այդպէս կեայք առ իրեարս
14 B դիպողագոյն էր
15 A վասնք
16 B տեսակ
17 B բարեձեռութեան

ռակատիպ իմն եւ յաւտարացեղ[1] այլայլութիւնս եւ փոխանակ շինութեան զհամախմբութիւն[2], ի վնաս հոգւոյ, սակս այսր յոլով պատճառաց /115ա/ վնասու, ի համաբնակցութենէն[3] տեղի առ ժամանակ մի տալի է ի հանդարտութիւն մտաց առանձնութեամբ եւ[4] ոչ եթէ[5] զվայրենութիւն՝ միայնութեանն[6] որպէս զլաւ ինչ գովելով եւ կամ[7] ընտանեգոյն վարուց քրիստոնէութեան[8] առանց դարձի յանձն առնուլ: Այլ առ վայր մի հագուցանել զխռովեալ վասն[9] յամբոխական վրդովմանց, զհոգին եւ զգայութիւնսն ի հարկաւորապէս անարգելութենէն արգելուլ եւ հան/115բ/գուցանել, ոյժ տալ մտացն ի տկարութենէն[10], յոր անկեալն՝ յաղթահարեալ ի զգայարանացն[11]: Եւ անդ, որպէս ի դպրոցի, ժամանակ մի կրթել զանձն եւ իմաստնանալ, որպէս զի մի՛ դիւրաւ միւսանգամ հաւանեսցի կրել յընդունումն ի վերայ անդ անկելոցն պատահմանց ակամայից: Այլուստ այլ երբեմն, իսկ եթէ գոյին[12] ոմանք անդ զնոյն խորհողք եւ նորին աղագաւ փախուցեալք ընդ նոսա, /116ա/ իսկ ցանկորդիլ եւ բնակել[13] առ նոսա արժան է, եւ ընդ նոսա ամբողջ ըստ վարդապետութեան Քրիստոսի ունել եւ պահել վարս: Վասն զի զաւուրս քառասուն մի յանապատի յետ մկրտութեանն շրջեցաւ Տէր[14] [հմմտ. Ղուկ. Դ 2] եւ յետ այնորիկ ոչ ցանկ ընդ բազումս շրջէր[15], այլ երբեմն, եւ միայն սիրէր աստուածապէս իմաստասիրել եւ զմարդկութեան Իւրոյ խոնարհութիւն յուսումն եւ ի

1 B աւտարացեղ
2 A համրախմբութիւն
3 B չիք սակս այսր յոլով պատճառաց վնասու. ի համաբնակցութենէն
4 B չիք
5 B չիք
6 B միայնութեան
7 B չիք
8 A քրիստովնէութեան
9 B չիք
10 B տկարութենէ
11 B զսգայութեանցն
12 B գային
13 B բնակիլ եւ ցանկորդել
14 B չիք
15 B չիք

վարդապետութիւն մեզ յայտնապէս ցուցանէր[1]: Քանզի իբրեւ /116բ/ արձակեաց զժողովուրդն, եկ ի լեառն՝ կալ յաղաւթս առանձինն [հմմտ. Մարկ. Զ 46, Ղուկ. Թ 28]: Իսկ այլ եւս երբեմն զպատուականագոյնսն եւ զգլխաւորսն[2] աշակերտացն առեալ ընդ իւր[3] զերիսն միայն եւ զանխուլ ուրեմն գալիլեացւոց գաւառին՝ ելանէր ի լեառն[4] պատճառաւ[5] աղաւթիցն, ուր եւ զԱստուածութեանն Իւրոյ աղաւտաբար, ըստ բաւելոյ աչաց նոցա, ցուցանէր պայծառութիւն [հմմտ. Մատթ. ԺԷ]: Եւ դարձեալ բազում անգամ խոյս տայր յամբոխէն յանապատ տեղիս /117ա/ եւ կայր յաղաւթս [հմմտ. Մատթ. ԺԴ 23, Մարկ. Զ 46, Ղուկ. Զ 16 եւ այլն]: Իսկ Յովաննէս՝ եւ յառաջին իսկ հասակէն գրեալ է, թէ յանապատին էր մինչեւ յաւր[6] երեւելոյ նորա Իսրայելի [հմմտ. Ղուկ. Ա 80]: Եւ Հեղիաս՝ մերթ ի գլուխ լերինն Կարմեղա[7] [հմմտ. Գ Թագ. ԺԸ 42] եւ մերթ ի հեղեղատին Քոռաթու [հմմտ. Գ Թագ. ԺԷ 3-5] խաղաղանալ մտացն եւ[8] խաւսել ընդ Աստուծոյ անպղտորապէս ախորժէր: Իսկ այլ երբեմն, նախանձակից Մեծին եղեալ, Մովսիսի պահոցն հաւասարեալ[9] միամտութեամբ[10] եւ ի նոյն փութացեալ անապատ ի Քորէբ՝ տեսլեան եւ խորհրդակցու/117բ/թեան արժանի լինէր Աստուծոյ [հմմտ. Գ Թագ. ԺԹ 9-18]: Իսկ Դաւիթ ջերմ յաւժարութեամբ սրտին բաղձացեալ՝ ի քաղաքին խռովութեանց հեռանալ եւ ի մրրկաց արտաքոյ լինել եւ զայրացման եւ կարճմտութեան, որք անդն պղտորեն զյստակութիւնն մաքրութեան հոգւոյն աչաց: Եւ այսոքիկ յուսոյ ակնկալութեամբ առ Աստուած թեւս աղաւնոյ ըղձանայր առնուլ[11]: Եւ Երեմիաս նոյնպէս. «Ո՞ տայր ինձ դոյզն աւթեվան յանապատի[12]»

1 B ցուցանել
2 B զգլխաւոր
3 B չիք ընդ իւր
4 B լեառնն
5 B պատճառանաւ
6 B յաւուր
7 A Կարմեղեա
8 A եւ է
9 B հաւասարութեամբ
10 B չիք
11 B ըղձանայր աղաւնոյ տտանալ
12 B չիք յանապատի

[Երեմ. Թ 2], ասէ. եւ պատ/118ա/ճառն՝ տրտմութեամբ եւ խռովութեամբ լնուլ անձինն, յարտաքուստ ի ներքս անկելոց զանազանից աղմկագործ իրաց եւ բանից ի բազմութեան անհաւատարիմ եւ հակառակող ժողովոց: Այլ եւ բազումք յեկեղեցւոյ վարդապետաց[1], թէպէտ եւ յայն ընտրեալ կոչեցան յԱստուծոյ ուսուցանել հանապազ զհաւատացեալսն[2] նոցա՛ հաւտ եւ մխիթարել բանիւ վարդապետութեան առանց հեղգանալոյ[3], ոչ անպատեհ[4] համարէին ի դի/118բ/պող ժամանակի մեկնել եւ[5] երթալ առ անապատուորս եւ յանապատս, որպէս զի յամփոփման զգայութեանցն առնուլ պարապումն[6] եւ ժամանակ մտացն ի բարձրագոյնսն[7] եւ յառաւել տեսութիւն, ընդ Աստուծոյ միայն լինել եւ խաւսել ընդ Նմա աղաւթիցն[8] յարաձգութեամբ, քան զոր ոչինչ փափաքելի եւ քաղցր համարէին: Այլ եւ ի պտղոյ անտի շահիցն յոքնապատկացն, զոր ի հանդարտութենէն[9] շահեալ[10] ստացան, /119ա/ ի ծագմանէ Հոգւոյն Սրբոյ ճառագայթից բերեալ՝ մատուցանէին որդւոց իւրեանց ըստ Աւետարանին ի Քրիստոս Յիսուս:

Արդ, յայնմ ժամանակի եւ քաղաքք[11] բարեպաշտիցն ոչ ժամու[12] բաժանեալ ինչ էին յաղագս գեղեցկայարդար եւ քաջաւրէն կարգաւորութեան յանապատի բնակչացն լուսաւոր կրաւնիցն[13]: Եւ դուն ուրեք թերեւս ունէին զանազանութիւն առ միմեանս, որքան երեւի յասելոյն Պաւղոսի, եւ է այս՝ կա/119բ/նամբեացն հոգալ, թէ զիարդ հաճոյանայցեն կանանց իւրեանց, իսկ կուսանացն՝ զԱստուծոյ եւթթ հաճոյանալոյն հոգալ [հմմտ. Ա Կոր. Է. 34]: Եւ չեն ինչ պէտք բանից երկրորդութեան եւ[1] կամ տարացուցից, թէ հնարաւոր է եւ կարելի եւ աւգտակար[2]՝ ըստ կամս Աստուծոյ եւ աւրհնութեամբ ամուսնութեան հաղորդաց քաղաքավարիլ: Քանզի զանցանեն ըստ բնութեան թուոյ յարացուցիչ[3] իրաց[4] բազմութիւնք աշակերտք Աւետարանին եւ որք յառա/120ա/ջին ժամանակսն սուրբք նմանապէս կենցաղավարութեամբ[5] հաճոյացեալք: Բայց առ մեզ[6]՝ սակաւք եւ յոյժ նուազունք եւ յանուանեալ կուսաստանսն կամ յեղբայրանոցսն[7] գտանին կամացն[8] Տեառն խնդրողք՝ միայն ճշմարտապէս[9] եւ զաշխարհիս ոչ հոգացողք: Քանզի առաւել մանաւանդ ի մեզ շահից եւ փափկութեան, վասն եւ մարմնաբոյծ լինելոյ գոն փուշք եւ հեղձուցիչք բանին եւ պտղակո/120բ/ղոյսք, քան ի կապեալսն ամուսնութեամբ[10]: Իսկ նախանձ առն՝ ի մերձաւորէ իւրմէ, եւ զիա՞րդ կարասցէ ոք ի սատակիչ նախանձէն[11] յայնմանէ ոչ ըմբռնիլ, զի զայլսն լուռ լինիցիմք[12]՝ ոչ խաւսելով յանհակառակ վայրսն լուսաւորութեան մտացն:

Աւշ եթէ ոչ լինէին անպատեհագոյնքն՝ ըստ բազմութեան միայն բնակելով, մշտնջենաւորապէս լուեալ եւ իմացեալ կամ ոչ բարւոքն[13], /121ա/ եւ էր յայնժամ բարի եւ վայելուչ եղբարց ի միասին բնակութիւն: Քանզի առատապէս ի միասնական եւ ամենամաքուր կենակցութեան՝ եկելոց յերկնից շնորհացն լինէր ընդունելութիւն ամենեցուն: Եւ զուարթացուցիչ այնու իւղոմն[14], որ սկսաւն[15] ի մերմէ գլխոյն,

1 B վերակացուաց
2 B զհաւատացեալն
3 B հեղգալոյ
4 B անարժան
5 B չիք
6 B պարապ
7 B բարձրագոյն
8 B աղաւթից
9 B հանդարտութեանն
10 A շահեալ
11 B քաղաք
12 B չիք
13 B կրաւնից

1 B չիք
2 B չիք եւ աւգտակար
3 B յարացուցից
4 B իրացս
5 B կենցաղով
6 B մեաք
7 B յեղբայրանոցս
8 B կամաց
9 B ճշմարտապէս խնդրողք միայն
10 B քան ի կապեալսն ամուսնութեամբ, գոն փուշք հեղձուցիչք բանին եւ պտղակորոյսք:
11 AB նախանձու են
12 B լիցուք
13 B բարիքն
14 B եղով
15 B սկսաւ

առաջինք[1] յետ նորա եւ երկրորդք գումարելոցն յանուն նորա աւծեալք լինէին: Եւ առաւել քան ցաւղով, լերինք եւ դաշտք դալարացեալ /121բ/ եւ ծաղկեալ, վայելչանային յաչս երկնաւորաց եւ երկրաւորաց բանականաց[2], զՀայր մեր, որ յերկինս [Հմմտ. Մատթ. Զ 9] փառաւորէաց[3]: Բայց, արդ, հակառակն ամենայնիւ եւ յամենայն իրս հանդիպի՝ ոչ ի բանս եւ ոչ ի գործս[4] շահեցուցանել զոք եւ կամ շահել յումեքէ գոյ կարողութիւն: Բամբասեմք եւ բամբասիմք ճառք աղճատանաց եւ շատխաւութեան[5] ի բերանս ամենեցուն մեր՝ դատիմք զմիմեանս եւ դատապարտ/122ա/տեալք յիրերաց լինիմք, մանաւանդ թէ[6] որովք դատիմք զընկերն, զմեզ ինքեանս դատապարտեմք [Հմմտ. Մատթ. Է 1]: Քսութեան եւ շոգմոգութեան[7] աւրինակ միմեանց լինիմք. կատակաբանութեան եւ ծաղու անխտրութիւն է ի մեզ, որպէս ի հաց: Կատականս[8] եւ ի սիրողս նոցունց՝ սիրոյ եւ ողորմութեան պակասութիւնն. եւ յաճախութիւնն ատելութեան եւ անգթութեան, բարեկամութեան[9]՝ ստեղծական եւ անհաւատարիմ: /122բ/ Գովեստ բերանոյ յանդիման երեսաց քարոզական եւ պարարտ եւ առաջի այլոց լի պարսաւանաւք եւ հայհոյութեամբ: Սիրտք մեր հանճարեղք եւ խորինք՝ առ նենգաւորութիւն միմեանց, իսկ առ իրս եղբայրութեան վայելչականս եւ գովելիս[10]՝ ի ճշմարիտ կամաց յիմարութեամբ եւ ապուշ անզգամութեամբ խաւարեալք: Ո՛չ վշտակցութիւն, ո՛չ հաղորդութիւն ի խնդութեան եւ ի փառաւորութեան անդամոց /123ա/ մերոց, կամ ի տրտմութեան գտանի երբէք ի մեզ, այլ հակառակողքն խնդամք եւ տրտմիմք, բարկանամք եւ մեղանչեմք [Հմմտ. Սաղմ. Դ 5], եւ արեգականն մտանելն ոչ լուծանէ զբարկութիւն մեր [Հմմտ.

1 Բ առաջինքն
2 Բ բանակաց
3 Բ փառաւորչաց
4 Բ գործն
5 Բ շատխաւութիւն
6 Բ եթէ
7 Ա շոգմոգքութեան
8 Բ կատակս
9 Բ բարեկամութիւն
10 Բ չիք եւ գովելիս

Եփես. Դ 26]: Ստեմք միմեանց, որպէս թէ ոչ իցեմք անդամք իրերաց[1] [Հմմտ. Հռոմ. ԺԲ 5] եւ կամ մարմին Յիսուսի [Հմմտ. Ա Կոր. Զ 15] եւ անդամք յանդամոց Նորա [Հմմտ. Ա Կոր. ԺԲ 27]: Հեռ եւ նախանձ եմոյծ ի մեզ զանկարգութիւն եւ զամենայն իրս չարս, իւրաքանչիւր ոք ի մէնջ զանձին խնդրէ եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի [Հմմտ. Ա Կոր. Ժ 24], /123բ/ եւ անձին հաճոյ լինի եւ ոչ ընկերին ի բարիս [Հմմտ. Հռոմ. ԺԵ 1]: Զմիմեանս գայթակղեցուցանեմք եւ զհաւասարն ի միմեանց կրեմք եւ փոխանակ խորշելոյ յանառակ եղբարց՝ յարիմք ի նոսա սիրով եւ մերձեցուցանեմք ի մեզ զնոսա[2]. իսկ յորոց ունին աւրինաւոր կարգս եւ ուղղութիւնս[3], խորշիմք եւ հեռանամք, այլ եւ ատեմք իսկ[4] եւս: Զիք ոք կարող, որ բառնայ զտկարութիւն տկարաց, քանզի փոքր ինչ նուազ եւ ամենեքեան իսկ տկարաց/124ա/աք: Արտաքուստ երեւիմք գեղեցիկք, այլ ոչ ի ներքոյ: Այնպիսի[5] ինչ, յորում մանաւանդ երեւի գեղեցկութեան իսկ նմանութիւն՝ այնմ[6], որ ստեղծ զմեզ եւ առնու ի միտ զգործս մեր եւ զանգործսն տեսանէ հաւասարապէս: Մարդահաճութիւն ի ժառանգութենէ[7], ի ծառայութենէ Քրիստոսի մերժեաց զմեզ, եւ նոքա ոչ գովեն զմեզ սրտիւ, եթէ ոչ առականէ:

Մախք կերակրոց եւ ըմպելեաց մերոց եւ ընչից, եթէ գուցէ երթան յորովայնս /124բ/ անպարկեշտից, եւ Քրիստոս մերկ եւ անվերարկու եւ սովեալ շրջի: Եւ զի՞նչ տացուք պատասխանի, յորժամ լիցի[8] ամենեցուն[9] այցելութիւն ամենայնի այսորիկ: Արդ[10], այս է[11] շահ եւ բարեմասնութիւն մերոյ ժողովասիրութեանս եւ քաղաքակցութեանս:

1 Բ միմեանց անդամք
2 Բ չիք
3 Բ ուղեղ
4 Բ չիք
5 Բ այնպէս
6 Բ չիք
7 Բ չիք ի ժառանգութենէ
8 Բ լինիցի
9 Բ չիք
10 Բ չիք
11 Բ չիք

Զի՞նչ ասասցուք եւ վասն միւսոյն եւս, որ[1] յաւտարաց եւ ի մերոց, նաեւ յանձանց իսկ ոչ սակաւ ինչ կրեցաք եւ կրեմք պարսաւանս ամաւթոյ արժանաւորս, այլ եւ պա/125ա/տերազմ յոլովիւք[2] պատճառանաւք, որպէս բերէ այս բնութիւնս[3] մեր[4] ծնանելի եւ ապականացու: Եւ[5] ունի զիշխանութիւնս[6] եւ զպետութիւնս եւ զաշխարհակալ խաւարն[7], զչարութեան այսս, որ ի ներքոյ երկնից, մարզիչս ի նոյն եւ գրգռիչս: Զի եթէ ուր ոչ են կանայք, ոչ դադարէ սաստկութիւն մարտին կռուոյ: Ուր այսքան իցեն համեստք[8], քանզի արտաքոյ կայցեն նոքա բանիս ամբաստանութեան, այլ լկ/125բ/տիքն[9] եւ չարաբարոյքն[10]: Ո՞ համարձակեսցի ասել յայտնապէս զքանիաւնութիւն[11] ատելի եւ արտաւնեն[12] իմացմանց[13] եւ գործոց թերեւս: Վասն զի չիք խտրութիւն տարաժամ ժամանակաց, պատահմանց[14] եւ խաւսակցութեան համանմանիցն: Բազում անգամ եւ յարակցութեան եւ յարատ աչաց[15] արձակութեան ամաչեմ ճշմարտապէս ընդ բանիցս արկանել ի պարկեշտից լսելիս[16], բայց զի մի՛ /126ա/ վայրապար եւ անհաստատ մտաց տհաճ, եւս տայ[17] աւդական փախուստ եւ հրաժարման բանքն թուիցին: Խրատու վասն[18] հարկ եղեւ ասել, սակայն թողաք ասել[19]

1 B որով
2 B յաղլովիք
3 B բնութիւն
4 B չիք
5 B չիք
6 B զիշխանութիւնսն
7 B խաւարին
8 A համեսք
9 B լկտիք
10 B չարաբարոյք
11 Քանիաւնութիւն - որչափութիւն, չափ
12 B անընթեռնելի
13 B իմացմանցն
14 B պատահմանց տարաժամանակաց
15 B աչ
16 B ի լսելիս պարկեշտից
17 B տոյ
18 B չիք
19 B չիք

զյոլովագոյնսն[1], որպէս գիտողաց զամենայն եւ իմաստնոց գրելով: Արդ, եթէ ոչ զգուշասցուք ամենայն սրտիւ եւ զաւրութեամբ գտանել մերձաւորս իմաստունս եւ լաւաբարոյս եւ տեղի անքոյթ[2] եւ յապահովս ի խռովութեանց ալեաց վնասակարաց /126բ/ հոգւոց ըստ գրեցելոցդ, անհնար է թեթեւանալ ի տանջիչ բեռանցն ծան[ր]ութենէ կամ ապրել ի ծովու աշխարհիս կորստենէ: Ոչ եթէ զի ոչ իցէ կամողութիւնն ի մէջ այնպիսեացն առաքինանալ եւ հաճոյ լինել Տեառ[ն]՝ ասեմ զայս: Քանզի Դանիէլ եւ Անանիանքն եւ Յովսէփ եւ ամենայն իսկ սուրբքն ոչ ընդ ոք յանաւրինացն նախանձեցան, յորոց միջի բնակեալ էին, այլ եւ բազմաց եւս ի նոցանէ աւգնեցին մեծապէս յիրս /127ա/ բարեպաշտութեան: Իսկ առաքեալքն Փրկչին մերոյ եւ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի զբնաւ իսկ տիեզերս արժանի արարին ճանաչել զկեանս իւրեանց եւ տեսանել զճշմարիտ լոյսն, զկնի որոց եւ այլք՝ ոչ սակաւք նոցին աշակերտք եւ հետեւողք: Բայց այս ոչ ամենեցուն տուեալ է: Փա՛ռք Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս:

1 B զյաղլովագոյնսն
2 Անքոյթ - անվտանգ, ապահով

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ՝ ՎՐԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԴԱՒԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Մ. Գոշի «Թուղթն» ունեցել է մէկ հրատարակութիւն («Արարատ», 1900, էջ 497-504, 562-568. 1901, էջ 55-61, 121-127): Հրատարակիչն է հայագէտ Կ. Տէր-Մկրտչեանը[a], որի ձեռքի տակ եղել է Էջմիածնի մատենադարանի երեք ձեռագիր (այժմ ՄՄ ձեռ. NN 631, 2966, 3062): Իբրեւ բնագիր անփոփոխ ներկայացուած է N 631 ձեռագրի բովանդակածը, իսկ միւս երկուսը Ա եւ Բ ցուցիչներով տրուած են որպէս տարընթերցում:

Երկրորդելով Մեսրոպ արքեպս. Գրիգորեանին՝ այստեղ եւս պիտի կրկնել, թէ՝ «Զարմանալիօրէն բազմահմուտ Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան չէ անդրադարձեր ձեռագրական այս խաթարումներուն»[b]: Եւ յիրաւի, հրատարակչի նախընտրած ձեռագիրը, բազում անընթեռնելի տեղիներից բացի, ունի ոճական, իմաստային ու ուղղագրական ոչ քիչ խաթարումներ, որոնք որեւէ ուշադրութեան չեն առնուած, հ. Համազասպ Ոսկեանի արդարացի դիտողութեամբ՝ հրատարակութեան «ինչ-ինչ տեղեր անկապ են եւ խառնաշփոթ. հրատարակուած բնագիրը շատ խեղճ է»[c]: Նոր հրատարակութիւն կատարելու անհրաժեշտութիւնը ամենից առաջ թելադրուած է այդ «անկապ ու խառնաշփոթ» տեղիներից ազատուելու եւ Մ. Գոշի կարեւոր վաստակներից մէկը իր բնիկ տեսքին վերադարձնելու պարտաւորութեամբ:

Սոյն հրատարակութիւնը պատրաստելիս Մաշտոցեան Մատենադարանի հաւաքածոյում երեւան եկաւ «Թղթի» եւս երկու ընդօրինակութիւն (մէկը՝ հատուածական)՝ դիւրացնելով առանց այդ էլ նախորդ ձեռագրերով լիովին հասու բնագրի քննական հրատարակու-

a Տե՛ս ««Արարատ» հանդէսի բնագրական հրատարակութիւնների մատենագիտութիւն (1868-1919 թթ.)», կազմ. Կ. Դ. Աւետեան, Երեւան, 1989, էջ 117 (N 344):

b Դոկտ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորեան, Անձնանունների աղաւաղումներ դաւանաբանական գրութեանց մէջ, 1970, ՀԱ, էջ 330

c Դոկտ. հ. Համազասպ Ոսկեան, Մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 191

թիւնը:

Այսպիսով, ներկայացուող բնագիրը կազմուած է ըստ հետեւեալ ընդօրինակութիւնների.

Ա - ձեռ. N 631, թ. 17r-45v: ԺԵ դար, ժողովածոյ, գրիչ՝ Գրիգոր Սամսոնեցի, ստացող՝ Մկրտիչ քահանայ, 277 թերթ, միասիւն, բոլորգիր[a]:

Բ - ձեռ. N 2966, թ. 63r-80v: ԺԷ դար, Կ. Պոլիս, ժողովածոյ, գրիչ՝ Ղուկաս երէց, 180 թերթ, երկսիւն, նօտրգիր[b]:

Գ - ձեռ. N 3062, թ. 165r-176v: 1765-1767 թթ., Էջմիածին, ժողովածոյ, գրիչ՝ Խաչատուր Կ. Պոլսեցի, ստացող՝ Աբրահամ վրդ. Աստապատցի, 298 թերթ, երկսիւն, նօտրգիր[c]:

Դ - ձեռ. N 9622, էջ 773-828: 1858 թ., Երուսաղէմ, ժողովածոյ, գրիչ՝ Յակոբոս Զիլինգերեան, 474 թերթ, միասիւն, շղագիր[d]:

Ե - ձեռ. N 2678, թ. 378r-383v: 1426-1476 թթ., դաւանական նիւթերի յոյժ կարեւոր ժողովածոյ, գրիչ՝ Մատթէոս, ստացող՝ Իգնատիոս կրօնաւոր, Եսայի վրդ., Ուսիկ աշակերտ, Արիստակէս, 387 թերթ, միասիւն, երկսիւն, բոլորգիր, նօտրգիր[e]: Գոշի թուղթը հատուածական ընդօրինակութիւն է: Աւելորդ չծանրաբեռնելու համար տարընթերցումները չենք նշում:

Ձեռագրերում ի մասնաւորի Մ. Գոշի «Թղթին» վերաբերող կարեւոր լրացուցիչ հաղորդումներ գրեթէ չկան: Ա-ն աւարտւում է գրչի այս կարճառօտ յիշատակարանով. «Գրեցաւ սակաւ սատարս այս ձեռամբ յխմարի միոյ, զոր Գրիգոր ճանաչի մականուն Սամսոնեցի, հրամանաւ Մկրտչի: Աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս» (թ. 45v): Գ-ն լուսանցներում ունի բնագրում վկայակոչուած սուրբգրային տեղիների յղումներ, ընդ որում՝ ոչ միշտ ստոյգ (նրանք նոյնութեամբ կիրառուած են «Արարատի» հրատարակութեան մէջ): Դ-ն բնագրին վերաբերող երկու ծանօթութիւն ունի. Նիկիոյ ժողովի ընդունած կանոնների «ԺԱ գլուխ» թուի առիթով գրիչ Յակոբոս Զիլինգերեանը

a Նկարագրութիւնը տե՛ս «Յուցակ ձեռագրաց», կազմ. Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, ներած. Օ. Եգանեանի, խմբ. Լ. Խաչիկեան, Ա. Մնացականեան, Երեւան, 1965, էջ 638:

b Նկարագրութիւնը՝ նոյն տեղում, էջ 912:

c Նոյն տեղում, էջ 920-931

d «Յուցակ ձեռագրաց», Երեւան, 1970, Բ, էջ 962-963

e «Յուցակ ձեռագրաց», Ա, էջ 851-852

նկատել է. «Նիկիայ կանոնք Ի գլուխ է» (էջ 783), իսկ էջ 829-ում ծանօթագրել. «Մեր օրինակն ազդ առնէ, թէ յայս վայր աւարտէր իւր օրինակն: Ցայտ է՝ զմնացեալն յայլմէ օրինակէ առեալ գոլ»: Կարող ենք միայն արձանագրել, թէ Ց. Զիլինգերեանի ընդօրինակութեան եւ նրա նախօրինակի հիմքում ընկած ձեռագրերը չեն նոյնանում այստեղ ներկայացուողների հետ: Թերեւս Դ-ի նախօրինակից է գալիս խորագրին առընթեր այս ծանօթութիւնը. «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան (կարդա՛ Հայաստանեայց - Պ. Մ.) Եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Թամար եւ առ այլ մեծամեծ դէդէփալքս (կարդա՛ դիդէբուլքս - Պ. Մ.) եւ առ կաթողիկոսն եւ այլ առաջնորդք Եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանն եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ սպասալարն Զաքարէ եւ Իւանէ աթաբակն հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ լայն թուղթ պատասխանւոյ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհալոյս վարդապետն Մխիթար եւ մականուն Գոշ կոչեցաւ, ի Գետիկ» (էջ 773): Գրիչը, ինչպէս տեսնում ենք, խորամուխ է «Թղթի» բովանդակութեան՝ այն դիտելով իբրեւ «ի դիմաց Հայաստան Եկեղեցւոյ» գրուած «Թուղթ հաւատոյ ընդհանրական»:

Քանի որ Մ. Գոշը «Թղթում» քննարկուող հարցերը ներկայացնում է որոշակի խմբաւորումով եւ, ինչպէս արդէն ծանօթ է[a], պատասխանում հայերի դաւանութեանը վերագրուող ամբաստանութիւններին, անհրաժեշտ նկատեցինք կիրառել համապատասխան համարակալում, այլ կերպ՝ բնագիրը տրոհել դրուագների՝ առանձնացնելով նաեւ նախադրութիւնն ու ամփոփումը: Վերջիններս յստակօրէն տարբերակւում են ե՛ւ նիւթով, ե՛ւ շարադրանքի եղանակով: Ջանացել ենք ազատուել ընդօրինակութիւնների ժամանակ երեւան եկած այլագրութիւններից (Հոովմ-Հոոմ, Հրեայ-Հրէայ, Տաջիկ-Տաճիկ, ձայթ-ձէթ, կաթուղիկոս-կաթողիկոս եւ այլն), ինչպէս նաեւ՝ զանց առել կիսաձայն յ-ի անտեղի գործածութիւնը, աւ երկբարբառի օ պարզեցումը եւ նման այլ՝ բնագրական առումով ոչ կարեւոր իրողութիւններ: Այլագրութիւններ կան եւ անձնանունների շարքում (Յովհաննէս-Յովաննէս-Յոհան, Սոկրատէս-Սոկրատ), երբեմն նոյնիսկ՝ աղաւաղում-շփոթումներ (Թէոդորիտոս-Թէոդորոս): Նման պարագաներում սրբագրումները կատարել ենք առկայ տարընթերցումների շրջանակներում, իսկ լրացուցիչ միջամտութիւններն առել

[a] Տե՛ս «Գանձասար» Դ, Երեւան, 1993, էջ 108. ՊԲՀ, 1995, N 2, էջ 187-194:

անկիւնաւոր փակագծերի մէջ: Թերեւս կարելի էր այլ ուղղումներ եւս մուծել բնագիր, բայց համոզուած չենք, թէ Գոշի ձեռքի տակից դուրս եկած տեքստը ստոյգ պիտի համապատասխանէր այսօրուայ քննական հայեացքով ճշգրտուող իրողութիւններին, ուստի յաճախ գերադասել ենք թողնել անփոփոխ[a]: Այսպէս օրինակ՝ ըստ Գոշի՝ «ի Քրիստոսէ մինչ ի չար ժողովն Քաղկեդոնի ՆՀԴ ամք են» (Է), ասել է թէ՝ այն տեղի է ունեցել 474 թուականին, որ իրական 451-ից տարբերւում է 23 տարով: Անկարելի ենք նկատում ՆՀԴ-ի սրբագրում ՆՄԱ, որովհետեւ գրերի նման շփոթ սպասելի չէ (մէկ այլ դրուագում (Գ) գրեթէ ճիշտ է թուագրում՝ Մարկիանոսի երկրորդ տարում, որ, 450-ից հաշուած, ընկնում է 451-ին): Կամ՝ հայոց դարձը թուագրում է ՅԵ (305), որ չի համերաշխւում ո՛չ աւանդական 301-ին, ո՛չ էլ քննական 314-ին:

Այս կարգի ինքնատիպութիւնները, բնականաբար, անփոփոխ պիտի մնային տեքստում: Առանձին դէպքերում տարընթերցումները կարող են յուշել, թէ նախապէս ինչ հնարաւոր տարբերակ կարող էր լինել: Անշուշտ, որոշ խաթարումներ սպասելի են նաեւ այլազան ցեղանունների եւ դաւանական խմբանունների գրութեան մէջ (Ջ):

Համեմատուող բոլոր ձեռագրերում **Հայք** երկրանուան հայցականը (ի Հայս. զՀայս) նոյնական է ուղղականին (**Հայք**): Նման դէպքերում սրբագրումն անխուսափելի էր, թէեւ այդպիսի փոխարինութեան օրինակներ ծանօթ են այլ մատենագիրների երկերից եւս (օրինակ՝ Մխիթար Հերացի «Ջերմանց մխիթարութեան» նախաբանում. «Եւ ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն եւ զիմաստ նախագիտութեան, այլ զստածումն միայն...»)[b]:

Պարոյր Մուրադեան

[a] Նորայր եպս. Պողարեանի փորձառու դիտողութեամբ՝ Մ. Գոշի «հայերէն շարադրութիւնը, սակայն, պէտք եղածին չափ խնամուած չ՝երեւիր» («Հայ գրողներ», Երուսաղէմ, 1971, էջ 261):

[b] Առաջիկայում կհրատարակենք սոյն «Թղթի» աղբիւրագիտական քննութիւնը:

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՇ

Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ

[Նախադրութիւն]

Զայս[1] գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեաւք եդաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ[2] վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց[3]:

Եւ արդ, զի նախ առ ձեզ է[4] նախադրութիւն բանիս, ո՛վ աստուածասէր[5] եւ բարեպաշտ[6] իշխանք իշխանաց Զաքարէ եւ Իվանէ, ծնունդք սիրոյ Աստուծոյ ի բարեզարդ ծնողաց[7], զի ես՝ յամենայն նուաստ Մխիթար, ի բանս եւ ի գործս սպասաւորաց Բանին[8], որ յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց[9] ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի[10] հոգի[11], մանաւանդ զի[12] հաւանելի թուելով ձեզ[13] ասացեալքն առ[14] ի նոցանէ, յայսոսիկ[15] եկի ի[16] միտս[17]՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ: Եւ զոր ամբաստանիմք, թէ[18] ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս՝ ցուցանել փութացաք զանհնարութիւն: Նաեւ զայն յայտ արարաք, թէ[19] զո՞ր արժան է մկրտել[20] ի կարծելոց հերձուածողաց. զի կարի յանդգնութիւն է մկրտել զՀայ կամ զՅոյն եւ զՎրացի: Վասն այնորիկ[21] եւ զաղաւթսն գրեցաք ի թղթի[22] աստ, զոր արարեալ է հարցն առաջնոց՝ փոխանակ մկրտելոյ ընթեռնուլ ի վերայ դարձելոցն[23] ի ժողովոյն[24] Քաղկեդոնի, որ եւ[25] զնոյն չափ ունի յայլոց ազգաց, զոր անգիտացեալ Յոյնք եւ Վիրք՝ պատրեալսն[26] ի նոցանէ, զՀայ ոք[27] մկրտեն[28], եւ Հայ ոք[29]՝ զնոսա, զի յոյժ հայհոյութիւն է առ Աստուած եւ ոչ լուսաւորութիւն:

Միանգամայն[30] եւ զայն ծանուցաք, թէ զի՞նչ[31] այժմ հնարաւոր է լինել ազգաց, զոր թէ[32] ձեզ հաճոյ կարծի՝ թարգմանեալ[33] ընթեռնոյք[34] նոցա: Եւ թէ[35] անշահ համարիք դուք զկարծիսն[36], զոր ունիք ի մեզ անգայթակղելի[37] իրս, իբր զփոշի[38] ի տեսանելեաց ձերոց[39] ի

բաց թափեցէք: Յաղագս այնորիկ[40] եւ[41] յառաջնորդս նոցա զսակաւդ գրեցաք թղթոյ աւրինակ եւ ապա եկաք ի բանս աւանդութեանց մեր[ոց] եւ կարգաց: Եւ դուք բաւական էք զսաստկացեալ[43] պատերազմդ հայհոյութեան[44] շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանելի բանիւ[45], թէպէտ[46] եւ անհնար ցուցաք զժողովն լինել[47] եւ զմիաբանութիւն:

[Ա] Փոքր ինչ եւ թղթոյ աւրինակդ[1]

Աստուածարեալ եւ հոգեւոր տեառնդ՝ քրիստոսապսակ[2] կաթողիկոսիդ, հաւատացելոցդ ի Քրիստոս Վրաց եւ աստուածապատիւ եպիսկոպոսաց եւ հարց հոգեւորաց[3], եղբայրանոցաց եւ կուսաստանաց, եւ խաչակրաւն միանձանց, եւ հասարակ եկեղեցական կարգաց[4], նուաստս ի Քրիստոս եւ սպասաւոր Բանի Աստուծոյ[5], գծողս այսմ[6] մատենի[7] աղաչանաւք ծանուցանեմ[8]: Քանզի ընդ միտ[9] ածի զոր սատանայ սերմանեաց ի մէջ հաւատացելոց զնախանձ եւ զատելութիւն[10] եւ վասն այն համարձակեցաք եւ զսակաւդ գրեցաք զթուղթդ[11]՝ ոչ հակառակելով[12] եւ կամ զոք պարսաւելով յազգաց[13], այլ զարժանն[14] եւ զիրաւն[15] իբր[16] դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս[17] յայտ արարաք, եւ զճշմարիտ խոստովանութիւնն[18] ցուցաք զմերոցս ազգաց[19], եւ զխոտելի իրսն[20] ոչ թաքուցաք[21] զմերոյ[22] ազգի[23], եւ զիւրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք, եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն:

Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրաւն լինէր, բայց տեսաք, որ սատանայ եւ ամբարտաւանութիւնն[24] մեր[25] զայդ չտայ[26] առնել՝ լաւ[27] համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք[28], զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ[29] անարգանք: Եւ զոր գրեմք[30] ի թղթի[31] վասն Հայոց[32] խոստովանութեան[33]՝ ճշմարտութեամբ այդպէս[34] է, եւ դատիմ ի Տեառնէ[35], թէ վասն Հայոց[36] երեսաց ես սուտ ինչ գրեալ[37] եմ: Բայց կամ եւ[38] խղճամ ընդ ձեր, զի անգիտութեամբ, որ չէ ոք զձեզ հասկացուցեալ՝ կայք եւ[39] զՔրիստոս զայրացուցանէք, եւ զձեր ժողովուրդդ ի գայթակղեցուցանէք[40], ասելով[41], թէ՝ Տաճիկն[41]ա եւ Ջհուտն[42] լաւ է քան զՀայն[43]: Եւ զայդ ի Հոռոմէն էք[44] լսել, եւ Հոռոմն ի սուտ քրիստոնէէն՝ ի յարեւորդւոյն, զինչ գրեալ եմք[45] ի

թղթիդ[46] զպատճառն[47]: Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսողք[48] լինիք[49] թշնամեաց[50] մերոց, զի չկայ[51] ի Հայս հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունին[52]՝ յամենայն ազգ այլ շատ եկամուտ տեսանեմք[53], եւ այն չէ հերձուած այնոց[54], որ մկրտելոյ հրաման կայ[55] ի Գրոց՝ որպէս գրեալ եմք[56] ի թղթիդ, թէ զոր պիտի մկրտել եւ կամ[57] զոր՝ ոչ: Վասն այն եւ զաղաւթն գրեցաք ի թղթիդ[58], զոր արարեալ են առաջին հարքն, որ ոչ մկրտէին[59], այլ աղաւթիւք սրբէին զայնչափ հերձուածն, որ յայս ժամանակիս երեւի: Զի որ[60] զմկրտութիւնդ առնեն[61]՝ թէ Վրացի զՀայ մկրտէ[62] եւ կամ թէ Հայ զՎրացի, զո՞ր Քրիստոս տայ[63] թողուլ եւ կամ[64] զո՞ր խոստովանիլ[65], զի մի է Քրիստոս եւ ոչ երկու, զի մի հաւատ եւ[66] մի մկրտութիւն քարոզի ի Գրոց[a]:

Արդ, մի՛ լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան[67], այլ առաւել շինութեան[68] եւ խաղաղութեան, որպէս զի համարձակ լիցուք[69] ասել[70]՝ Ահաւասիկ[71] ես եւ[72] մանկունք իմ[b], եւ ընդունիցիք զանթառամ պսակն ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ[73] յաւիտեան[74]:

Թէ հաճոյ ձեզ առնէ Աստուած զսակաւ պատճառ[75] ի բանս թղթիդ[76], դուք աննախանձ կամաւք աստուածասէր թագաւորացդ[77] յայտնեցէք, զի եւ նոքա[78] նախանձորդք են[79] խաղաղութեան եւ սիրոյ առ ի[80] միմեանս հաւատացելոց: Գիտեմք[81] եւ զձեզ վշտակից կամաւք հոգալ, թէեւ ոչ է[82] միաբանելոյ հնար, այլ հնար է զհայհոյութիւնդ[83] բառնալ եւ խափանել[84] զմկրտութիւնդ, որ յոյժ[85] անհաճոյ է[86] Քրիստոսի եւ ամենայն սրբոց[87] Նորա[88], ապա թէ ոչ՝ թողութիւն առնէք մեզ, զի ոչ յանդգնութեամբ, այլ վշտանալով գրեցաք:

Եւ արդ՝ սկսեսցուք[89] ի բանս առաջիկայ թղթիս[90]:

[Բ] Բազմաց փոյթ եղեւ ըստ պատահմանց[1] ժամանակաց[2] եւ ըստ հարկի գրել ինչ յաղագս բամբասանաց զմինչ՝ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ: Նմանապէս եւ այժմ մեզ պատահեաց՝ ոչ իբր իմաստուն կատարեալ[3] ձեռնամուխ եղաք, այլ սակաւ ըստ կարի նման լինել՝ որ զանկեալ[4] զհասկ առնու[5] եւ կամ[6] զմնացեալն զճիտ յայդ-

a Եփես. Դ 5

b Եւ. Ը 18

ւոջ[7a]: Այլ զայս նախ[8] դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է[9] միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւտս արար պէտս ունել միմեանց, եւ յաղագս այնոցիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք: Ընդդէմ այսմ է[10] եւ կամք չարին՝ բաժանիչն[11] մարդկան ատելութեամբ, զի այսու գիւրաւ զչարն գործիցէ, որպէս[12] սիրով զբարին Աստուած, զի Հին եւ Նոր կտակարանք[13] զսերն տան աստուածապաշտութեան եւ աշակերտութեան Քրիստոսի նշանակ: Եւ թէ Աստուած զմի լեզուն ի բազումս[14] բաժանեաց՝ զչարն խափանելոյ աղագաւ, եւ ի հարկէ յայտ անտի[15] է, զի[16] ի վերայ բարի[17] սիրոյ սերման[18] զատելութիւնն սերմանեաց չարն, զոր ասաց Տէրն՝ Այր թշնամի արար զայնb, եւ յայնմանէ բուսան հերձուածք եւ նա[եւ][19] յամբարտաւանութենէ: Յաղագս այնորիկ[20] Քրիստոս սկիզբն[21] բարեաց հաստատելոց զխոնարհութիւնն ետ երանութեամբ եւ Աւետարանաւն արար մի հաւատ եւ մի հովիւ՝ զցրուեալ[22] զորդիսն Աստուծոյ ժողովելով[23] ի մի եկեղեցի, զոր տեսեալ բարիատեացն սատանայ զմայրն[24] ամենայն[25] ուղղութեանց[26]՝ նախանձու շարժեաց զոմանս ի մարդկանէ զամբարտաւանս՝ սերմանել զանազան աղանդս: Եւ[27] որպէս յաւուրս ճշմարիտ մարգարէից[28], զսուտն յարոյց զմարգարէսն[29] եւ զսուտ առաքեալսն յաւուրս ճշմարիտ առաքելոցն, նոյնպէս եւ[30] յաւուրս ուղղափառ հայրապետաց[31]՝ զչարափառ հայրապետսն: Եւ որ չարն է քան զամենայն՝ զի չետ իմանալ զվնասն. բարւոյ[32] պատճառաւ զչարն ետ խաւսել հակառակ ի[33] միմեանց: Եւ[34] որպէս արար Ադամ առ[35] աստուածանալոյ[36] պատճառաւ՝ եւ զոր[37] ունէրն զպատիւն, զայն կորոյս, այսպէս եւ այժմ[38] լինել տեսանեմք առ ամենայն ազգս քրիստոնէից:

Զի ախտիւք ամբարտաւանութեան[39] փքացեալք, անհաւանք միմեանց[40] լինելով, զՔրիստոս Աստուած[41] հայհոյեն եւ զԱստուած Հայր[42] զայրացուցանեն. եւ զոր ոչ գիտեն՝ ձեւանան գիտել[43], եւ զսակաւն[44], զոր լուեալ են[45] յիմաստնոցն[46]՝ զայն կատարեալ գիտութիւն կարծեն: Զի թէ Պաւղոս, որ զՔրիստոս յինքն[47] ունէր եւ յերրորդ[48] յերկինս յափշտակեցաւ եւ զանճառելիսն լուեալ[49]՝ ասէր. Փոքր ի շատէ գիտեմք[c 50], եւ առ կարծողսն գիտելոյ ասացեալ է[51]՝

a Հմմտ. Ղեւ. ԺԹ 10:

b Մատթ. ԺԳ 28

c Ա Կոր. ԺԳ 9

Զեւ եւս գիտաց որպէս արժանն[52] էր[a]: Զի՞նչ գիտեն եւ որ ի ցնորս աշխարհիս զբաղեալ[53] են եւ պաշտաւնեայք[54] եկեղեց[ւ]ոյ՝ ուտելոյ եւ ըմպելոյ միայն պարապեալք[55] եւ ըմբռնեալք ի զանազան ախտս: Եւ որ կարի[55ա] զարմանալին է, խաբեալք ի չարէն, չշատանան իւրեանց մնասիւն[56], այլ փութան զայնոսիկ, որ յուղիղն[57] գնան ճանապարհ[58], եւ զնոսա մոլորեցուցանեն[59], թողեալ[60] զերից սուրբ ժողովոց[61] զհաւատս[62] ուղիղս[63]:

[Գ]b Առաջինն[1], որ եղեւ ըստ հրամանի բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի վասն Արիոսի, որ արարած ասէր զՈրդին Աստուծոյ: Եւ ժողովեալ[2] ի Նիկիա Մակարիոս[3] Երուսաղեմի, Ռստակէս ի[4] Հայաստանէ, Յուլիոս ի[5] Հռոմայ եւ այլք ՅԺԸ, որոց յայտնի են անուանք, այլ զի մի՛ լիցուք երկարաբանք՝ եւ վասն ձեր մանաւանդ, որ[6] անպարապ էք ընթերցմանց:

Երկրորդ ժողովն առ մեծիւն Թէոդոսիւ եղեւ ի Բիւզանդիա[7] վասն հոգեմարտին Մակեդոնի, որ նուազ ասէր զՀոգին Սուրբ, քան զՀայր եւ զՈրդի, եւ էր[8] մեռեալ նախ քան գումարել[9] ժողովոյն: Եւ գլխաւորք ժողովոյն[10] էին Կիւրղոս Երուսաղեմի, Տիմոթէոս Աղեքսանդրի[11], Մեղիտոս Անտիոքայ[12], Գրիգոր Նիւսացի[13], Դամասոս ի Հռոմայ, Գրիգոր Աստուածաբան[14], Ներսէս ի Հայաստանէ եւ այլք՝ ՃՄ հարք հոգեւորք, որք[15] խոստովանեցին զՀոգին Սուրբ՝ Հայր եւ Որդւոյ հաւասար եւ փառակից, եւ նզովեցին ի մեռեալս ընդ ամենայն հերձուածողս[16] զՄակեդոն:

Եւ երրորդ ժողով եղեւ յաւուրս Թէոդոսի[17] Փոքու վասն աղանդին[18] Նեստորի Անտիոքացւոյ[19], որ էր[20] ի Բիւզանդիոն[21] եպիսկոպոս[22] եւ սկսաւ զխոտոր վարդապետութիւնն[23] ուսուցանել զՊաւղոսէ Սամոստացւոյ[24], զոր եառ[25] Թէոդորոս Մամուեստացի[26] եւ ի նմանէ Նեստորիոս, զի ոչ խոստովանէին զԲանն մարմին եղեալ, այլ ի մարմին բնակեալ, եւ շնորհաւք Որդի ասէր զ'ի Մարիամայ ծնեալն[27]: Զոր գիտացեալ Կիւրղի Աղեքսանդրացւոյ[28] եպիսկոպոսապետի[29]՝ գրէ երից անգամ ի բաց[30] դառնալ ի հայհոյութեանցն եւ միաբանիլ[31] ի[32] կաթողիկէ եկեղեցի[33]: Իսկ Նեստոր զընդդէմն առնէ[34]

a Ա Կոր. Ը 2

b Ե-Ն սկսում է այստեղից, սակայն՝ նկատելի կրճատումներով:

պատասխանի, վասն որոյ հարկաւորի Կիւրեղ գրել առ թագաւորն՝ հրաման տալ ժողովոյ: Եւ հրամայէ[35] ժողով լինել[36] յԵփեսոս: Եւ ժողովեցան Մէ եպիսկոպոսք[37] յիւրաքանչիւր գաւառէ. Յոբնաղ Երուսաղեմի, Կիւրեղ Աղեքսանդրացի[38], Մոմնոս[39] Եփեսոսի[40] եւ Սահակ Հայաստանի միաբանի գրով ընդ նոսա, Կեղեստիանոս ի Հռոմայ[41], զոր նզովեալ[42] զՆեստոր՝ հալածական [առան] զնա[43] ի կողմանս Մծբնայ, եւ անդի վարեցաւ ի Խուժաստան: Զկնի[44] այսորիկ կալաւ զաթոռն Բիւզանդիոյ[45] Մաքսիմիանոս եւ ապա՝ Պրոկղոս[46], յետ որոյ՝ Փլաբիանոս[47] եւ սկսաւ ուսուցանել զՆեստորի մոլորութիւնն[48]:

Իսկ Եւտիքէս[49] ոմն, որ էր վանական ի կղզւոջն, առադրէր[50] ընդդէմ Փլաբիանոսի[51] եւ ոչ[52] խոստովանէր ճշտութեամբ[53] առնուլ մարմին ի Մարիամայ, այլ նմանաւորութեամբ[54] մարմնոյ, զի կերպարանաւք գտաւ իբրեւ զմարդ: Եւ զայս գիտացեալ թագաւորին՝ հրամայէ[55] դարձեալ ժողով լինել[56] յԵփեսոս: Եւ ժողովեցան եպիսկոպոսունք Մէ[57]. Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղեքսանդրի[58], եւ նզովեցին զԵւտիքէս: Եւ նա զղջացեալ ստութեամբ՝ խոստովանի առնուլ մարմին ճշտութեամբ[59] եւ յետոյ ի նոյն դառնոյ յաղանդ[60]:

Իսկ հաւանեալքն Փլաբիանոսի՝ հաստատել կամելով զԲ բնութիւնն[61] [...]a, ոչ հաւանի Դիոսկորոս, այլ նզովէ զՓլաբիանոս[62], որ յետ է աւուր սատակեալ լինի[63] ի բարկութենէ Աստուծոյ: Եւ սահմանեն այսպէս. Որ ոք ոչ խոստովանի զԲրիստոս մի բնութիւն մարմնոյն եւ Բանին[64] վասն անճառ միութեանն[65]՝ նզովեալ լիցի[66]: Զի զերկաքանչիւրսն[67] նզովեցին զաղանդ[68] եւ ըստ ցուցելոյ պատճառիդ լինի ժողով չորրորդ:

Իսկ զկնի Թէոդոսի թագաւորէ Մարկիանոս, եւ յերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ հրամայէ ժողով լինել ի Քաղկեդոն, ի մայրաքաղաքին[69] Բիւթանացւոց՝ քինախնդիր[70] լեալ լուծմանն Նեստորի եւ նորին համախոհ[71] եպիսկոպոսացն, զի[72] էր ինքն նորին աղանդովն եւ շարժեալ լինէր[73] ի Պողերայ[74] զուգակցէ իւրմէ, որ էր քոյր թագաւորին Թէոդոսի եւ սիրելի Փլաբիանոսի, առաւել յորդորէր[75] ժողով գումարել յաղանդակցացն[76] Նեստորի եւ դարձուցանել զՆեստոր, զի տակաւին կենդանի էր ի Խուժաստանի:

a Այստեղ բնագրական տողի կորուստ է ենթադրելի:

Եւ ի գալն Նեստորի հասանի բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նորա[77], եւ եղեալ որդնալից՝ սատակեցաւ: Իսկ գումարեալքն ի Քաղկեդոն ՈԼԶ[78] եպիսկոպոսք, զի կրկին առնէ[79] զթիւ եպիսկոպոսացն, քան զոր արարն[80] Կոստանդիանոս, փառասիրութեան ախտիւ, եւ էին գլխաւորք Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղեքսանդրի, Լեւոն Հռոմայ[81], զի թէպէտ ինքն ոչ եկն[82] ի ժողովն, այլ[83] ետ տանել զԴԺանհերորդ[84] գլխոցն զառաջագոյն[85] առ Փլաբիանոս զգրեալն[86], զի այնու հաւանեսցին[87] ժողովեալքն ի Քաղկեդոն[88], զոր խոտեալ[89] էր երանելին Դիոսկորոս յերկրորդ ժողովոյն Եփեսոսի: Եւ առեալ զգրեալսն Լեւոնի, թագաւորն ընկալաւ եւ ետ զատուցանել ի միաբանութենէ եկեղեցւոյն զերանելին Դիոսկորոս[90]: Եւ խնդրեաց ի ժողովոյն դնել[91] սահման հաւատոյ ըստ գրեցելոյն Լեւոնի հայհոյութեանցն:

Իսկ ուղղափառ իշխանքն, որ էին ի ժողովին[92], ասացին առ եպիսկոպոսունսն. Այս է ժամանակ ճգնութեան ձերոյ[93] ի վերայ սուրբ հաւատոյս, զի հաստատուն[94] ունիցիք զաւանդութիւն[95] հարցն խոստովանութեան: Իսկ եպիսկոպոսունքն միաբանեցան ասել. Ոչ ումեք է իշխանութիւն[96] ըստ հրամանի կանոնաց դնել սահման հաւատոյ, զի բաւական են մեզ եղեալ սահմանքն[97] ի Նիկիա եւ ի Բիւզանդիա[98] եւ [յ]Եփեսոս: Յայնժամ հրամայեաց թագաւորն տալ ի պահեստի[99] զեպիսկոպոսունսն հանդերձ իշխանաւքն[100] եւ գումարեաց[101] ի վերայ նոցա զինագզեաց զաւրականս, զի թէ ոչ հնազանդեսցին կամաց թագաւորին՝ եղիցին պատուհասեալք[102]: Եւ մեծաւ երկիւղիւ էին ի տարակուսանս, թէ զիա՞րդ հնար լիցի զերծանել ի պատժոցն[103]: Յայնժամ Յոբնաղ Երուսաղեմի եպիսկոպոսն[104] հրամայեաց[105] Ասկղիպիադայ[106] սարկաւագի[107] Կոստանդնուպաւլսի[108] առնել սահման հաւատոյ[109] եւ դնել ի նմա[110] յԲ բնութեանց զմիոնն[111] խոստովանել, որում առ երկիւղի[112] հաւանեալ[113] եպիսկոպոսացն, զի թերեւս հնար լիցի այնու[114] զերծանել, եւ ետուն զգրեալսն առ թագաւորն:

Իսկ թագաւորն ոչ ընկալաւ, այլ ետ տանել զգիրս հայհոյութեան գլխոյն[115] Լեւոնի, զոր ընթերցեալ մասն ինչ ի գլխոցն[116]՝ միաբան ասացին եպիսկոպոսքն[117]. Ոչ հաւանիմք[118], զի Պաւղոսի Սամոստացւոյ[119] հայհոյութիւնն[120] է. այսպէս եւ ոչ Նեստոր յանդգնեցաւ ի հայհոյութիւն: Յայնժամ թագաւորն հանդերձ կնաւն իւրով եկն առ

ժողովն եւ, որպէս ասի[121], եղեւ առ նոսա աւուրս երիս: Իսկ ժողովեալքն ի Քաղկեդոն՝ ոմանք յերկիւղէ[122] եւ ոմանք ակնառութեամբ ազատեղի կնոջ[123] նորա եղեն հաւանեալք[124] նորաձայնութեան պիղծ[125] հայհոյութեան թղթոյն[126] Լեւոնի, զոր նզովեցին յառաջագոյն եւ[127] եղեն ընդ ինքեանց[128] նզովիւք[129]: Եւ[130] ընկալան զլուծեալն Թէոդորիտոս[131]՝ զաշակերտն[132] Նեստորի, զորմէ ասի գլխակալ ժողովոյն, եւ զԻբաս Եդեսացի[133]՝ զհամախոհն Նեստորի[134], զոր եւ գրեցին սահման հաւատոյ ըստ Լեւոնի եւ Թէոդորիտայ մոլորութեան[135], որ հաւասարին[136] Նեստորի պղծոյ եւ Թէոդորոսի[137] եւ Դիոդորի[138] եւ Պաւղոսի, եւ Արտեմոնի կատարեալ հայհոյութեանն[139], յորում կայ յետ սակաւուց[140] այսպէս. Խոստովանիմք ամենեքեանն[141] միաբան զՏէր մեր Յիսուս Քրիստոս ըստ Աստուածութեանն[142] ի Հաւրէ եւ ըստ մարդկութեանն[143] ի կուսէ[144] միածին, յերկուց բնութեանց[145]՝ մի դէմ եւ մի անձն միաւորելով: Եւ զի մի իւրեանց ամբարշտութիւնն[146] յայտնի երեւեսցի՝ զՆեստոր պատճառանաւք նզովեցին:

Իսկ բազումք[147] ի գլխաւորաց[148] քաղաքին Կոստանդնուպոլսի, որք[149] Նեստորի հաւանեալք էին եւ կարծեցին, թէ ճշմարտութեամբ նզովեցաւ Նեստոր[150], զարմացեալք ասացին առաջի[151] թագաւորին, որպէս ի նոցունց[152] Քաղկեդոնացւոց պատմութեանց[153] ցուցանի՝ ասեն. Սուրբքն[154] զի՞ նզովին. զի թէ հաւատ[155] Նեստորին սահմանեցին՝ զնա զի՞ նզովեցին:

Իսկ թագաւորն բարկացեալ սաստեաց[156] նոցա[157] զի լռեսցեն: Այսպէս[158] ի նոցունց իսկ[159] յայտնեալ՝ կեղծաւորութիւն[160] նոցա ծանուցաւ ամենեցուն[161], որ եւս առաւելագունաւք յայտնի է ուրացութիւն նոցա՝ զի որք ի Քաղկեդոն ժողովեալ էին եպիսկոպոսունք՝ նոյնքն[162] յԵփեսոսի ժողովն էին[163] եւ գրով սահմանեալ ասացին. Որ ոք ասասցէ[164] զՔրիստոս երկու բնութիւն՝ նզովեալ լիցի[165], եւ լուծան[166] ի պատուոյ[167] Նեստոր եւ նմանիք նորա: Իսկ ի[168] Քաղկեդոն կործանեալք ի յերկեղէն[169] եւ որք ձեռնարկաւ[170] ուրացեալք[171] Քրիստոս՝ ասացին. Որ ոչ ասէ զՔրիստոս երկու բնութիւն՝ նզովեալ լիցի, եւ ընկալան ի պատիւ զհաւանեալսն Նեստորի եւ զաշակերտեալսն[172] իւր:

Իսկ որք[173] ոչ հաւանեցան կործանական հայհոյութեան ժողովոյն եւ[174] անաւրէն սահմանադրութեանն՝ զնոսա աքսորեցին՝ զԹեո-

րոս Անտիոքացին[175] եւ[176] զՏիմոթէոս, եւ զԱնատոլիոս[177] զնորին եղբայր[178], եւ զԴիոսկորոս Աղեքսանդրի[179] եպիսկոպոսն նախ ի Կիզիկոն[180] եւ ապա յԱրակլիա՝ բարի խոստովանութեամբ եւ վկայութեամբ ի Քրիստոս կատարեալ[181] սուրբն Դիոսկորոս:

[Դ] Եւ էր խռովութիւն ի սուրբ եկեղեցի Աստուծոյ զամենայն աւուրս Մարկիանոսի[1] եւ Լեւոնի[2] իբրեւ ամս[3] Ի Դ: Եւ[4] ըստ ասացելոյ[5] պատճառիդ Ե-երորդ ժողով եղեւ ի Քաղկեդոն, յաղագս որոյ եւ բարեպաշտ թագաւորքն[6] Ցունաց[7] Անաստաս եւ Զենոն յաւուրս[8] իւրեանց բարձին զաւանդ խոստովանութեան ժողովոյն Քաղկեդոնի՝ նզովիւք:

Նոյնպէս եւ հարքն մեր ոչ ընկալան եւ ոչ գնացին յայն ժողով[9]: Եւ թէպէտ Ցուստիանոս ի թագաւորելն[10] իւրում կամեցաւ[11] զտունս տերունականս, զոր եղեալ էր Ցակոբայ առաքելոյ ընթերցուածաւք[12] յԵրուսաղէմ[13], փոխել եւ զտեառնընդառաջն[14] ըստ ծննդեանն առնել եւ ոչ ըստ մկրտութեան[15], զոր սովոր էին ի միասին առնել[16], որպէս եւ առնեն[17] Հայք, ոչ կարացաւ[18] եւ ոչ ըստ աղանդոյն[19] Քաղկեդոնի ժողովոյն[20] հաստատել զտաւնն, այլ բազում նշանաւք[21] յանդիմանեալ լինի, որպէս ունի Պատմութիւնն:

Իսկ երկրորդն[22] Ցուստիանոս իբրեւ թագաւորեաց, եւ նա ընկալաւ զժողովն[23] Քաղկեդոնի, քանզի[24] պատրէին զնա, թէ մեծ ճգնաւորն եւ սիւնակեացն[25] Սիմէոն ընկալեալ է զժողովն Քաղկեդոնի, եւ ահա գիր խոստովանութեան նորա եղեալ է ի տապանի Եփիմէի[26] ի Քաղկեդոնի: Եւ այլ ոմն նզովիւք հաստատէր, թէ ոչ է, զի իբրեւ հաստատեաց[27] Մարկիանոս[28] զժողովն, առաքեաց[29] զսահման ժողովոյն Քաղկեդոնի[30] առ Սիմէոն: Եւ ծանեաւ[31] հոգւով երանելին եւ ետ սպասաւորին հուր վառել[32] եւ հրամայէր[33] ձգել ի հուրն[34], ասելով՝ Նզովեալ[35] Մարկիանոս եւ ժողովն Քաղկեդոնի: Եւ զայս լուեալ Ցուստիանոս եւ կամեցեալ ճշգրտել՝ գնացեալ սակաւուք եւ ետ բանալ զտապան[36] սրբոյն եւ հրամայէր սպասաւորին զնշխարսն հանել ի քզամիդն[37] իւր, զոր տարածեաց: Եւ իբրեւ սպառեցաւ՝ հարցանէր[38], թէ այլ ի՞նչ կայ, եւ ինքն հայցեալ ի տապանն՝ ոչ ինչ ետես եւ սկսաւ յոգւոց հանել[39] եւ ծեծելով զերեսն աւաղէր[40]՝ Ո՛հ, ապաշաւելով զհալածանսն եւ զսպանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի յԱղեքսանդր[41] եւ յԵրուսաղէմ: Եւ կամեցեալ նորա[42] բառնալ զաղանդ ժողովոյն Քաղ-

կեդոնի[43]՝ հասանէ նմա մահ դաւով:

Նոյնպէս Պարսամու[44] ոչ ընկալաւ զժողովն Քաղկեդոնի. եւ նա չարաչար նզովիւք նզովէր եւս[45], զի ամենայն ազգաց քրիստոնէից չարի պատճառ[46] ժողովն եղեւ Քաղկեդոնի: Եւ թէպէտ[47] այլ ժողով բազում եղեւ ի[48] Ցոյնս եւ ի Հռոմ՝ ըստ զանազան պատճառի եւ ժամանակի[49], այլ ասոքիկ էին գլխաւորագոյն ժողովք:

[Ե] Կարգեցից եւ զժողովսն, որ եղեն ի Հայս[1]՝ թէ որպիսի պատճառաւ եղեն, զի եւ վասն այդոցիկ ամբաստանիմք ի Ցունաց եւ ի Վրաց:

Առաջին[1]ա ժողով արար Գրիգոր ի Ի ամի[2] կաթողիկոսութեանն[3] իւրում եւ[4] Լ ամի թագաւորութեանն[5] Տրդատայ ի թագաւորական քաղաքն, յորժամ եկն Ռստակէս[6] ի Նիկեայ[7] ժողովոյն[8]՝ ընդ ինքեան ունելով զգիրս կանոնաց գլուխս Աժ[9]:

Երկրորդ ժողով արար տէր[10] Ներսէս՝ յորժամ եկն ի Կոստանդնուպոլսէ:

Երրորդ ժողով արար սուրբն Սահակ[11] Մեսրոպիւ[12] յԱշտիշատ, յորժամ եկն եհաս թուղթն ի Կիւրղէ եւ ի Պրոկղէ[13] եւ որք յԵփեսոս Մ[14]-քն[15] ժողովեալ[16] էին, յորժամ զՓառս ի բարձունս[17] կարգեցին՝ յաւելեալ ի բանս հովուացն, որպէս ի Նիկիա[18] զՀաւատամսն կարգեցին՝ ըստ նմին եւ ի Բիւզանդիա[19]: Նաեւ զԹաչեցաքն յաւելին[20] ընդդէմ Նեստորի:

Չորրորդ ժողով արար Յովսէփ՝ աշակերտ Մաշտոցի եւ սրբոյն Սահակայ ի ԻԶ ամի[21] Ցազկերտի վասն կարգաւորութեան եկեղեցւոյ, ուր ժողովեցան եպիսկոպոսունք քառասուն, կանոնաւորեցին սահմանե[ա]լ բանս Ի:

Հինգերորդ ժողով արար Բաբկէն[22] ի Քաղաքիդաշտի, ի ԺԸ ամի կաւատայ[23] արքայի՝ յաղագս չար հերձուածոյն Ակակայ եւ Բարդուծանայ, որք[24] զՆեստորին ունէին, վասն որոյ գիր արարեալ, սահմանս կարգելով ասեն[25]. Մեք՝ Հայք եւ Հոռոմք եւ Վիրք մի խոստովանութեամբ հաստատեալ եմք, զոր աւանդեցին Գ ժողովն:

Ի[26] սկզբան թվականութեանս[27] Հայոց արարեալ ժողով վեցերորդ տէրն Ներսէս[28] ի[29] Դուին, [ի] Դ ամի կաթողիկոսութեան[30] իւրում[31]

եւ ի ԺԴ ամի Յուստինոսի[32] կայսեր: Եւ նախ զծննդեանն եւ զմկրտութեանն միաւորութիւն[33] հաստատեցին, եւ զսան երկուց[34] բնութեանցն զմիաւորութիւնն ունելով՝ սրբեցին[35] դարձեալ զխաչեցարն [յ]երիս սրբասացութիւնս[35]ա ընդդէմ բաժանմանցն նեցա[36]:

Իսկ առ[37] թագաւորութեամբ[38] իւր Հերակլէս արար ժողով ի Կարնոյ[39] քաղաք իմաստասիրաւքն Յունաց եւ կոչեաց զբազումս ի հայրապետացն Հայոց: Եւ հաւանեալք[40] երկաբնակ խոստովանութեան[41] նոցա՝ եւ զԵզր[42] կաթողիկոս հաստատեցին եւ զսուրբ ժողով Դունայ[43] ի բաց մերժեցին եւ զմիաւորութիւն ծննդեան[44] եւ զմկրտութեանն եւ զխաչեցարն յերից սրբասացութեանցն ի բաց հանին եւ հաւանեցան Եզրի կաթողիկոսին[45]: Եւ ոչ ընդունէին զաւանդեալն ի[46] սուրբ ժողովոյն Դունայ[47] եւ Ներսիսի[48] եւ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր ընկալեալ էին հայրապետքն[49] սուրբ յառաջ քան զնոսա էին յաշխարհեալ զաթոռ սրբոյն[50] Գրիգորի. առաջին՝ տէր Ներսէս ամս Թ, առ որով եւ[51] ժողով[52] եղեւ, տէր Յովհաննէս[53] ամս ԵԺ, տէր Մովսէս ամս Լ, տէր Աբրահամ ամս ԻԳ, առ որով Վիրք ի բաց կացին ի միաբանութենէ[54] Հայոց[55], տէր Կամիտաս ամս Ը, տէր Քրիստափոր[56] ամս Բ:

Այսոքիկ էին կաթողիկոսք խոստովանութեամբ ժողովոյն[57] Դունայ[58], կացեալք մինչեւ ցԵզր[59] կաթողիկոս[60]: Եւ զկնի նորա կացին կաթողիկոսք Զ մինչեւ ցՆերսիս[61], որ էր[62] աւանդութեամբ նոցա, զոր ոչ ընդունի սուրբ եկեղեցի:

Արդ, զկնի Եղիայի[63] շնորհեցաւ ի Հոգւոյն Սրբոյ տէր Յովհաննէս յԱճառնայ[64], որ[65] արար[65]ա ժողով ի Մանազկերտ գեղ ի գաւառապլուխն Հարքայ[66] եւ զժողովն Քաղկեդոնի ի[67] [բաց] ընկեցին եւ հաստատեցին զուղղափառ հաւատս[68], որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

Գլխաւորք[69] ժողովք ի Հայս[69]ա այսոքիկ են[70], որ[71] զապանդ մերժեցին զչար եւ ոչ ընկալան:

[Զ] Եւ ոչ միայն ոչ ընկալան[1] Հայք, այլ եւ բազում ազգ[ք] եւ գաւառք զժողովն Քաղկեդոնի ոչ ընկալան, որպէս եւ այժմ կարգեմք զանուանսն. նախ Հոռոմ[2] թագաւորանիստ տեղին, որ նկովեն զժողովն[3]

եւ զՄարկիանոս[4], որ սատակեցաւ ի հրշտակէ Աստուծոյ, եւ որ զՂուրն եւ զիմորն[5] ի սուրբ խորհուրդն խառնեն[6], եւ բոլոր ամենայն Իտալիա եւ Դալմատիա[7] եւ Սարդոնիկէ մեծ կղզի, եւ Սիկիլիա, եւ Սպանիա ի մուտս արեւու, եւ մեծն Եւրոպիա[8], եւ Գերմանիա, եւ Աստիկէ, եւ Եւլադա եւ այլք[9] բազումք, որ[10] ի մտից Մակեդոնիոյ[11]: Իսկ ի կողմանս հարաւոյ[12], յայսկոյս Յունական ծովուն՝ Եգիպտոս[13], յորում են գաւառք ԽԱ, եւ Ալեքսանդրիա[14]՝ ընկալեալք[15] յերից սուրբ ժողովոց[16] զուղիղ[17] գաւանութիւն[18] հաւատոյ, ընդ մեզ ի նոյն կանոնի կան հաստատուն, չընկալեալք[19] զժողովն Քաղկեդոնի: Եւ Ափրիկէ, որ ունի գաւառս ԽԱ, յորում է[20] մայրաքաղաքն Կարկեդոն[21], եւ Մաւրիտանիա[22] մինչեւ ի մուտս արեւու[23] հանդերձ բազում գաւառաւքն[24], որ ունի զմայրաքաղաքն Տիգանիա[25]: Եւ սոքա ի նոյն հաստատ[26] հաւատս՝ ոչ միաբանին ընդ Յոյն[27] եւ ընդ Վիրս: Եւ Վերին[28] Թեբայիդ[29] զնոյն ունին հաւատ[30]: Էթիոպիա[31] Մեծ եւ Փոքր մինչեւ ի ծովն Հնդկաց, եւ Արաբիա[32] ի մէջ երկճեղ կարմիր ծովուն, եւ Ապառամն[33] Արաբիա՝ այս ամենայն ընդ մեզ[34] զերից[35] սուրբ ժողովոցն[36] ունին զաւանդութիւն, որոշեալք ի Յունաց եւ ի Վրաց:

[Է] Եւ այլ վասն Վրաց բաժանելոյն զի՞նչ ասացից, զի ի Քրիստոսէ մինչ[1] ի չար[2] ժողովն Քաղկեդոնի ՆՀԴ ամք են, եւ ընկալաւ ամենայն եկեղեցի[3] յաւանդելոցն զմի դաւանութիւն հաւատոյ անբաժանելի[4], եւ յետ ՅԵ[5] ամի ընկալան հայաստանեայք[6] զքարոզութիւն[7] ի սրբոյն Գրիգորէ, եւ Վրաց ազգն ընդ մեզ նզովեցին զժողովն Քաղկեդոնի զամս հարիւր, մինչեւ ի ժողովն Հայոց ի Դուին[8] եւ ի Մանազկերտ, ուր որոշեցին զեղեալ[9] հաւատն ի Քաղկեդոնի[10] եւ հաստատեցին զերից[11] սուրբ ժողովոցն, եւ Գաբրիէլ Մծխիթայի[12] եպիսկոպոսն[13] ընդ մեզ, որ էր Խախուցի[14], եւ յետոյ բաժանեցան[15] ի մէջ:

Մեռաւ Գաբրիէլ, եւ եկաց ի տեղին[16] Կիւրիոն[17], որ ունէր ի ծածուկ զապանդ Քաղկեդոնի, եւ նախանձեալ ընդ պատուոյ[18] աթոռոյն Սիւնեաց եւ Աղուանից քան զիւրն՝ որոշեցաւ ի մէջ յաւուրս Աբրահամու Հայոց կաթողիկոսի եւ այլ եւ այլ կոչեցաւ, եւ ոչ հնազանդեցաւ: Ապա Աբրահամ կաթողիկոս[19] առաքէ զդրան Պետրոս եպիսկոպոս[20] իւր, զի թէ[21] ոչ հնազանդեսցի՝ լուծցէ զնա:

Իսկ նա կամաւք զզգեստն[22] մերկացեալ տայ ցնա եւ[23] ապա ի գաղտի[24] զկնի առաքեալ[25]՝ զի մախայր[26] սպանանել զնա[27] քարամբք[28], եւ ինքն երթայ ի հաղորդութիւն առ աղանդն Քաղկեդոնի՝ չար մտաց[29] հաղորդեալ[30] ի կամս չարին: Եւ քարկոծի Պետրոս ի լեառն Կանգուար[31] հանդերձ երկու կրաւնաւորաւք[32]:

Եւ զայս կարճաբանելով ասացաք եւ առաւել[33] վասն Յունաց[34] եւ Վրաց, որք[35] ամբաստանեն զմէնջ, թէ հայաստանեայք[36] միայն ոչ[37] ընդունին[38] զժողովն Քաղկեդոնի: Ահա ցուցաք, զի բազում ազգ[ք] ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի[39]: Զի աւելորդ[40] էր զկնի Գ-ից սուրբ ժողովոցն[41] եւ այն ժողով[42], զի զիւրաքանչիւր[43] ազգ[44] ցուցանէ սատանայ[45] պատրողն՝ ճշմարիտ լինել, եւ ամենեքեան խորհին[46] զայլսն[47] յինքեանս դարձուցանել, այլ ոչ զընտրութիւն ճշմարտութեան կամին եւ զմիաբանութիւն հաճութեամբ[48]: Եւ այս ախտ ամբաստանութեան է, զի Յոյնն[49] զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հոռոմն[50]՝ զինքն[51], նմանապէս եւ ազգ ամենայն[52], առ որ ասելի[53] է. Արդ՝ եղիցի Աստուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ[a]: Թէ այնպիսի ունէաք կամք, որ զբարին յամենայն[54] ազգաց ժողովէաք եւ զիստանն ի բաց ընկենուաք[55], Աստուած գործակից լինէր եւ ի բարին[56] ուղղէր կարգ եկեղեցւոյ. զի չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան:

[Ը] Առաջինն[1] զայս առնէաք[2], որ վկայութեամբ[3] Գրոց եւ կանոնաց հաստատէաք զիստովանութիւնն՝ Ամենասուրբ[4] Երրորդութիւնն եւ ի տնաւրինութիւնն[5] Քրիստոսի եւ ապա զկարգս տաւնից եւ զտովորական աւանդութիւնս, զի ամենայն ազգ[6] խմորով վարին[7] եւ ջրով, որք ընկալան զժողովն Քաղկեդոնի, ի հաց պատարագին եւ ի[8] բաժակին: Բայց Հայք եւ Հոռոմայեցիք[9] եւ այլ ազգ, որք ոչ ընկալան զժողովն Քաղկեդոնի՝ բաղարջիւ[10]: Յոյնք եւ Վիրք ազիւ վարին, եւ Ասորիք ձէթ[11] եւս յաւելուն: Նմանապէս յայլ[12] կարգս եւ ի տաւնս եւ ի պահս[13] բաժանին. Ասորիք հրէաբար[14] մինչեւ ցերեկոյ[15] պահեն եւ լուծանեն զչորեքշաբաթ եւ զուրբաթ: Վիրք զբովանդակ ամն[16] զչորեքշաբաթ[17] եւ զուրբաթ[18] լուծանեն եւ զոր տէր հրաման եւ[19] զկնի[20] յարութեանն[21] ուտել՝ զայն պահեն: Յոյնք զկրճատեալն[22] եւ

a Հռոմ. Գ 4

զմալեալն[23] քահանայ ձեռնադրեն[24] եւ զմեղուցեալն քահանայ նոքա եւ այլք չհանեն[25] ի պատարագէն[26], այլ Հայք ոչ ընդունին եւ ոչ ի սակաւ[27] սխալանս[28] զգիտելին: Հռոմայեցիք[29] բազմաւրեայ ժամանակաւ[30] նշխարիւ[31] պատարագեն, զոր[32] ոչ ընդունին կանոնք:

Յոյնք պատարագք[33] եւ կիսապատարագք[34] անուանեն:

Հռոմայեցիք[35] անկին քահանայիւք վարին եւ անխտիր շնութեամբ: Վիրք յամենայն տեղիս անզգուշաբար պատարագ մատուցանեն, ի պահս բազում[36] զանազանութիւն առնեն[37]. զձուկն[38] եւ զձէթ[39] եւ զգինի՝ պահոց քարոզեն, եւ Հայք ոչ եւս:

Զխաչ եւ զեկեղեցի Յոյնք եւ Վիրք ոչ աւրհնեն եւ աւրհնեալ խաչի եւ[40] եկեղեցւոյ Հայոց[41] երկիր ոչ պագանեն[42]: Ի ձէթ[43] մեռոնին այլ եւ այլ յաւելուածս[44] խնկոց խառնեն, որ ոչ է ի կանոնաց եւ զիւղն[45] աւծութեան[46] զպարզաբար զաւրհնեալն Հայոց[47] ոչ ընդունին[48]: Յոյնք եւ Վիրք կենդանւոցն[49] պատարագ մատուցանեն, եւ Հայք[50]՝ ոչ: Հռոմայեցիք[51] յանուն միոյ մեռելոյ բնաւ պատարագ ոչ առնեն, իսկ Յոյնք եւ Վիրք եւ Հայք[52]՝ բազմաց եւ միոյ: Հռոմայեցիք[53] բազում կանայս առնեն՝ որքան եւ[54] մեռանին[55], իսկ այլ ազգ ոչ եւս: Հռոմայեցիք[56] եւ այլ ազգ զկերակուրս ոչ խորեն զպղծեալս[57], իսկ Հայք ոչ ճաշակեն: Հայոց կրաւնաւորք բամբասին ոչ առնել ծնունդ եւ ուտել միս[58] եւ ոչ աւետեաց տաւնել[59] եւ ոչ սարկաւագաւք[60] եւ դպրաւք. եւ հանդերձիւ եւ բացաւ գլխով առնել պատարագ, անզգուշաբար հաղորդին[61] եւ աշխատրհականաւք[62]՝ փոխանակ քահանայից:

[Թ] Ամենայն ազգք[1] ՀԲ լեզու է, ԿԸ ազգն[2] քրիստոնեայ[3] է, Դ ազգ միայն չէ[4] քրիստոնեայ՝ Տաճիկն եւ Պարսիկն[5], Հրեայն[6] եւ Սկիւթացին, որ ասին[7] Թուրք: Եւ ամենայն ազգ զանազան կրաւնս ունի, որ ոչ է գիտելի վասն հեռաւորութեան[8], որպէս Հնդիկն եւ Հապաշն[9], Նուբին[10] եւ Զանգին, եւ Խպտին[11] եւ այլք բնակիչք հարաւոյ[12]:

Այսպէս եւ[13] ազգք[14] հիւսիսականք՝ Ռուզն եւ Ալան-Աւան[15], եւ Քազանկն, Զարքազն[16], Խունձք, որ են Սրոյրք, եւ այլք բազումք խոստովանողք ի Քրիստոս որք եւ յարեւելս[17]՝ որպէս Մոգք[18] եւ Ճենք[19] եւ այլք: Եւ յարեւմուտս՝ Բուլխարք[20] եւ Փռանկք[21]՝ ԼԶ լեզուք[22],

Ամանն եւ այլք:

[Ժ] Սոքա ամենեքեան ունին զանազան[1] սովորութիւնս եւ կարգս. Յոյնք եւ Վիրք զպատկերագրութիւն[2] առաւել պատուեն, եւ Հայք՝ զխաչ[3]: Յոյնք եւ Վիրք բամբասեն զՀայս[4] վասն տաւնի[5] սրբոյն Սարգսի եւ առաջաւորացն պահոց, զոր[6] եւ Ասորիք տաւնեն: Ի տաւնս առնել[7] մատաղ՝ ամբաստանին[8] Հայք հրէաբար առնել եւ զանդակ[9] ունել[10] ի բուրուառս[11]: Քահանայք Հայոց եւ Ասուրոց[12] փիլոնով վարին[13],.իսկ այլ ազգք[14]՝ ոչ[15] եւ վեղարով կրաւնաւորք: Յասոր[ւ]ոց են, որ թլպատութիւն ունին[16], որ են[17] նեստորականքն[18], եւ են, որ խոստովանութիւն յանցանաց ոչ ունին: Յոյնք բազում մկրտութիւն ունին: Է եւ այլ ինչ բազում, զոր թուել ոչ կարեմք՝ զՊելեսկի[19] եւ զՍուրիանի եւ զայլոց[20] աւանդութեանց[21], զՅակոբկի[22], զՄելքեկի, զԳրիգորկի[23]:

Զայս ամենայն բաժանմունս տեսաք. է որ յամբարտաւութենէ[24] եղեւ եւ ի սատանայէ[25], է եւ[26] յանգիտութենէ[27], է եւ յանձեռնհասութենէ, բայց ամենայնն[28] յանձնիշխանութենէ, զոր եւ առ արտաքին իմաստասէրսն[29] տեսաք, զի բանք նոցա եւ[30] իմաստութիւն[31] հակառակ միմեանց են, որպէս Պղատոնին եւ Արիստոտէլին[32], Որփեւսին եւ Ամոնին, Զենոնին եւ Հոմերոնին: Այլ զի մի յաճախեցից՝ չառաք[33] զԱնաքսագորոս եւ զԴիմոկրատոս[34], եւ զի անթիւք[35] են, եւ[36] բանք նոցա՝ հակառակ միմեանց[37], որ ինչ վասն տարերց եւ վասն հոգ[ւ]ոց եւ մարմնոց, որք ի դասս-դասս[38] բաժանեցան եւ յանուն, որպէս՝ փիլիսոփայքն եւ ճարտասանքն[39], քերականք եւ քերթողք[40], ճեմականք եւ շնականք եւ այլք[41] այսպիսիք:

Ըստ որում եւ[42] առ մահմետականսն է տեսանել բաժանեալք այսպիսիք[43], որպէս Մուշաբահին[44] եւ[45] Ալարին[46] եւ Ռաֆաթին[47] եւ այլք: Նոյն է եւ առ Հրեայսն[48], որպէս Փարիսեցիք եւ Սադուկեցիք[49], Սամարացիք եւ այլք Մելքիսեդեկեանք, որ ասին Մլհուդ[50]: Նաեւ ի հեթանոսս բազմաստուածութեանն[51] նոյն բան է[52]:

Եւ թէպէտ եւ Քրիստոս արար զհաւատացեալս[53] մի հաւատ, այլ զանձնիշխանութիւնն ոչ եբարձ եւ զաշակերտութիւնն ի կամսն[54]. ապաստան արար, ասելով՝ Որ ոք կամի իմ աշակերտ լինել[a], եւ որ

a Հմմտ. Մատթ. ԺԶ 24, Մարկ. Ը 34, Ղուկ. Թ 23:

կամի աղաւթել, եւ որ կամի ողորմութիւն առնել եւ այլն: Ուստի յայտ է, թէ մեր կամաւք[55] խնդրէ զպաշտաւնն[56] եւ զառաքինութիւնն: Եւ այդ եղեւ պատճառ անձնիշխանութեամբ առնել զկամս անձանց, զոր անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն[57] վասն հնացեալ սովորութեանցն եւ[58] յաղագս[59] խափանելոյ բազմաժամանակեայ տիեզերական ժողովոյ: Եւ զոր գրեալ է ի կանոնս՝ երկիցս եւ երիցս[60] ժողով լինել յամի[61], արդ ցուցից[62], թէ որպէ՞ս հնար է միաբանիլ եւ կամ որո՞ց ազգաց եւ զի՞նչ է, որոց ոչ լինի միաբանութիւն[63], եւ թէ ոչ լինի՝ զի՞նչ առնելի է: Նաեւ զայն ցուցից, թէ աւանդութիւնք որպիսի՛ պատճառաւք[64] եղեն:

[ԺԱ] Եւ սկսցուք արդ[1] ի[2] խոստովանութիւն Երրորդութեանն. հաւատամք ի Հաւր Աստուածութիւնն, որպէս սահմանեցին սուրբքն[3] ի Նիկիա[4] եւ յայլ սուրբ ժողովսն[5], որպէս[6] եւ ուսեալ եմք ի Հին եւ ի Նոր կտակարանաց[7]՝ անսկիզբն[8] եւ անվախճան[9] է Աստուածութիւնն[9a] եւ բարի[10] բնութեամբ[11], եւ նա է[12] պատճառ ծնելութեան Որդւոյ անժամանակաբար: Այլ ծնունդ եւ որդի ասել՝ զնոյնութիւն բնութեանն[13] ցուցանէ մերով[14] բնութեամբ եւ անուամբ հնարաւոր ի[15] Գիրք յայտնեալ[16] զանճառ բնութիւնն[17] Աստուծոյ, զի զնոյնութիւն[18] ունի զՀաւր զամենայն[19] ինչ: Սակաւ[20] տամք զնշանակ[21], զի մի յերկարութիւն լիցի ճառիս[22]:

Եւ Հոգին սուրբ ելող[23] ասի ի Հաւրէ եւ ոչ ծնունդ, զի մի կարծիցի Բ որդի՝ եւ եղբայր Որդւոյ, եւ թէ Որդի ի Հաւր բնութենէ է[24] եւ Հոգի, ապա հասակակից է Որդւոյ Հոգին[25]՝ մի Աստուածութիւն[26] եւ մի զաւրութիւն, եւ մի արարչութիւն[27], եւ մի երկրպագութիւն յամենայն հաւատացելոց[28]: Այլ ի լրման[29] ժամանակի եկն Որդին[30] եւ առ մարմին ի Մարիամայ[31] կուսէ[a 32] եւ ի[33] ճշմարտել[34], թէ[35] ոչ նախանձեցաւ Աստուած[36] ընդ Ադամայ[37], զոր ասաց սատանայ, թէ՝ Գիտէր Աստուած, թէ յորժամ[38] ուտես ի ծառոյ անտի[39] աստուածանաս[b], եւ վասն այնորիկ[40] արար զորդիսն Ադամայ[41] աստուած՝ մարմնանալովն:

Եւ դարձեալ[42], զի ցանկացան արդարքն տեսանել զԱստուած, եւ

a Գաղ. Դ 4

b Հմմտ. ԾԾ. Գ 5-6:

զի անտեսանելի է Աստուած, որպէս ասաց Մովսեսի՝ Ոչ ոք տեսանէ զերեսս Իմ[43] եւ կարիցէ ապրի[a 44], վասն այնորիկ[45] եառ[46] մարմին տեսանելի, ըստ որում երանեաց[47] զառաքեալսն Քրիստոս[b]: Եւ այլ ազգ՝ զի զպարտսն Ադամայ[48] հատուցէ Աստուածոյ[49] Հաւր, որում հնազանդ եղեւ Աստուծոյ Հաւր մահու չափ եւ մահու խաչի՝ ըստ առաքելոյ[c 50]: Եւ զի՞նչ էր այսմ խորհրդոյ գործարան՝ Կոյսն, որպէս ասէ մեծն Բասիլիոս[51] ի ճառի Մննդեան[52]: Եւ զի՞նչ աւրինակաւ Աստուած ի մարմնի՝ որպէս հուր յերկաթ[53], զի երկաթ սեաւ[54] է[55] եւ ցուրտ, եւ հուր ջերմ է[56] եւ լուսաւոր. եւ որպէս ջերմութիւնն[57] եւ զցրտութիւն[58] բառնայ եւ լուսաւորութիւն[59]՝ զսեւութիւնն, սոյնպէս[60] եւ[61] զմարդկային[62] մարմնոյն զտկարութիւն[63] եւ զտգեղութիւն[64] Աստուածութիւնն[65] գեղեցկացոյց եւ զաւրացոյց: Թէպէտ երկաթ զբնութիւնն ոչ փոխեաց, այլ գոյն[66] դարձաւ հրոյն եւ ծածկեցաւ, սոյնպէս[67] արար աստուածութիւնն[68]՝ զբնութիւն մարմնոյն ոչ կորոյս, այլ[69] յիւրն միացոյց: Եւ հուր[70] զայրեցող բնութիւնն ոչ փոխեաց երկաթ, այլ զնա լուսաւորեաց[71], եւ երեւի երկաթ ի հուր: Այսպէս՝ Աստուածութիւնն[72] ի մարմնոյ տկարութիւն ոչ դարձաւ, այլ զնա աստուածացոյց:

Ըստ այսմ աւրինակի երկու բնութիւնքն[73] միացան, եւ որպէս լուսաւորի աւդ յարեգակնէ[74]՝ աւդ կապուտակ է եւ լուսաւորի, աւդ ոչ լուծանի, այլ առնու ի լուսոյ. տկարն յաղթի ի հզաւրէ[75], եւ հզաւրն ոչ ի տկարէ, եւ որպէս ասր ներկեալ ծիրանեաւ ծածկի[76] սպիտակն եւ եղեւ մի ծիրանի: Ոչ Բանն մարմին եղեւ[77] որպէս ջուր սառուցեալ, զի այս Եւտիքեայն է, այլ Բանն մարմին եղեւ, զի եառ[78] զինչ ի մարդ, բաց[79] ի մեղաց՝ ըստ աւետարանչին, զի բուռն եհար զզաւակէն Դաւթի[80], վասն որոյ եւ որդի Դաւթի կոչեցաւ[d 81]: Եւ որպէս հարքն ի Նիկիա խոստովանեցին[82]՝ զի եառ[83] մարմին եւ հոգի[84] եւ միտք, եւ ոչ որպէս ասաց Ապողինար[85], թէ ի[86] տեղի հոգւոյն[87] Աստուածութիւնն[88] էր. զի[89] թէպէտ երկու էր բնութիւնն, մի Որդի խոստովանին վասն անճառ միութեանն[90], ասելով՝ Հաւատամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս: Նմանապէս եւ[91], յԱստուծոյ Հաւրէ

a Եղ. ԼԳ 20
b Մատթ. ԺԳ 16
c Փիլ. Բ 8
d Երր. Բ 16

ասացաւ. Դա[92] է Որդի Իմ սիրելի[a] եւ ոչ՝ դոքա, զի նոր խառնումն ասացաւ ըստ Աստուածաբանի[93]: Զի՞արդ երկուս[94], զի որ յերկուս բաժանէ յետ անճառ միաւորութեանն՝ զՆեստորին խորհէ[95] երկուս ասել[96] որդիս, զի այնպիսի խոստովանութեամբ[97] երրորդութիւն[98] ոչ լինի[99] ուղիղ[100] խոստովանեալ[101]: Երկու է մարդ՝ հոգի եւ մարմին, այլ մի ասի վասն անքակ միութեանն. զի բազում բնութիւնքն որ ի մարդ՝ հող եւ ջուր, աւդ եւ հուր, ի մի մարմին եկեալ՝ մի կոչի մարմին[102]: Այսպէս Աստուած եւ մարդ՝ մի ասի[103] Աստուած Որդի:

Արդ, զայս ասելով՝ զմարդկութիւնն ոչ ուրանամք, այլ խոստովանիմք զմարմինն[104] Աստուած, եւ թէ մարմինն Աստուած էր, զի՞արդ[105] դարձեալ մարդ եւ ոչ Աստուած: Եւ եթէ[106] Աստուած՝ կամքն Աստուծոյ եւ գործն Աստուծոյ՝ եւ ոչ մարդոյ: Եւ եթէ զքաղց եւ զծարաւ, եւ զվաստակ, եւ զերկիւղ[107], եւ[108] զչարչարանս[109], եւ մահ ասել Աստուծոյ զարհուրիս[110], ընկա՛լ զասացեալսն ի հարցն[111], զի կամաւ եւ թոյլ տալով կրեաց զայդ ամենայն կիրս եւ ոչ հարկեալ[112] ի կրից: Վասն այն զկնի խ[113] աւուրց քաղցեաւ[b 114], յորժամ թոյլ ետ:

Զայդ աւրինակաւք[115] մարմնոյն կրեալ[116] ասէ Աստուածաբանն եւ յաւելու, թէ[117]՝ Իբրեւ զաստուած, զմարմինն[118] կոչէ Աստուած: Նաեւ զնշանսն զոր առնէր՝ ի հայր վերաբերէր[119] զնա պատուելով եւ ոչ տկարանալով. զի զայդ[120] ամենայն միութիւն[121] տնաւրինութեանն[122] տան սուրբքն: Տարակուսիս ի չարչարանսն[123] եւ ի մահն մարմնո՞յն[124] միայն լինել, մի՛ մոռանար զմարմինն[125] Աստուած, եւ Աստուծոյ մահն՝ ո՛չ Բանին, այլ միութեան[126] տնաւրինութեանն[127], զի ի մահ բաժանելն[128] կամ ի չարչարանսն՝ այդ Նեստորի է, որ[129] յետ յարութեանն տայ[130] Տեառն զփառս[131], այդ եւ սրբոցն լինելոց է[132] յետ յարութեանն:

Ի չարչարանս[133] առաւե՞լ տարակուսիս, զի մի՛ Աստուածութեանն տացի. հարկանի երկաթ հրացեալ, այլ հուրն[134] ոչ չարչարի: Տանջեա՛ զտեղի, ուր լոյս արեգականն[135] է՝ գանի երկիրն[136] եւ ոչ լոյսն: Տանջի եւ մերս մարմին, այլ հոգին անմահ մնայ[137]: Թէպէտ[138] ինքն է, որ տայ[139] զգալ[140] ցաւոց մարմնոյ[141], այլ ըստ բնութեանն[142] անչարչարելի է: Թէ արարածն[143] այդպէս[144], Արարիչն որչա՛փ[145]:

a Մատթ. Գ 17
b Մատթ. Դ 2

Սիմէոն զքառասունաւրեայն տէր մահու եւ կենաց խոստովանի[a], եւ Եսայիաս[146] ի ծննդեանն ընդ մեզ Աստուած քարոզէ[b], եւ Նեստոր եւ համախոհք նորին[147]՝ յետ յարութեանն: Զի որպէս Աստուծոյ ծնունդն ի Կուսէ՝ Աստուծոյ էր, նմանապէս եւ՝ մահն, զի Աստուած էր մարմինն. զի ինքնակամ աւանդէր զհոգին, զի [ի] մարդոյ[148] մահն[149] արեգակն ոչ խաւարի, եւ ոչ յառնեն մեռեալք, եւ ոչ այլ եղեալ[150] նշանքն, զի այդ ամենայն[151] Աստուած քարոզէր զխաչեալն[152]: Նաեւ ի նշանս առնելն[153] զԱստուածութիւն[154] յայտնէր եւ զմարդկութիւնն[155] ցուցանէր. զի Թուքն մարմնոյ[156] էր[157], բայց[158] զ'ի ծնէ[159] կոյրն լուսաւորել[160]՝ Բանին միացելոյ, զի ոչ յատուկ Թուքն[161] մարմնոյ[162] առնէր[163], այլ որպէս ամենայն նորայքն աստուածայինք[164] նշանքն՝ նոյնպէս եւ այս:

Եւ թէ յետ յարութեանն աստուծացաւ՝ զիա՞րդ աստուծաբար կանխաւ գնշանն[165] առնէր, որ է միութիւն[166] տնաւրինութեանն[167]: Ի մարգարէից[168], յառաքելոց եւ ի հայրապետաց յաճախէ զվկայութիւնսն[169] առնուլ, նաեւ յաւրինակաց գրելոց[170] կանխաւ: Վասն այնորիկ զպարզ եւ զգիտելիդ[171] ամենեցուն[172] յիշատակեցաք, եւ այլ գնոյն յաւելումք. Աստուածաբանն[173] Աստուած խաչեցեալ[174] ասէ եւ այլն: Ոչ Բանն ասէ խաչեալ[175], այլ զմարմինն[176] անուանէ Աստուած: Եւ թէ Աստուած է մարմինն[177], որպէս եւ է իսկ[178], ընդէ՞ր տաս մարմնոյն որպէս մարդոյ[179] կամ զկամս կամ զկիրս, կամ գներգործութիւնս[180], զի այդ ամենայն առ Քրիստոս իբր[181] Աստուծոյ եւ ոչ[182] որպէս մարդոյ է, զի ժողովն[183] Քաղկեդոնի եւ տոմարն[184] Լեւոնի[185] երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս խոստովանի: Զի թէ այդպէս է զիա՞րդ բոլորն[186] Աստուած. զի կամք մարդոյ[187] հակառակ է կամացն Աստուծոյ, եւ լինի[188] Քրիստոս Աստուածութեամբն կամակից Հաւր եւ[189] Ինքեան եւ մարդկութեամբն՝ հակառակ Ինքեան եւ Հաւր: Զի[190] եւ գործ մարմնոյ յոյժ աւտար է ի գործոց Աստուծոյ, զի գործ Աստուծոյ ամենայն բարի է, եւ սակաւուց է բարի գործ մարդոյ[191], զի մարդ բարի ի բարի գանձուց սրտի[192] բղխէ[193] զբարի, եւ մարդ չար՝ զչարն:

a Հմմտ. Ղուկ. Բ 29-35:

b Հմմտ. Ես. Ը 9-10:

c Մատթ. ԺԲ 35

Եւ եթէ ոչ խափանեաց Քրիստոս ի մարմնոյ զկամս[194] եւ գներգործութիւնս[195]՝ գտանի եւ առ նա[196] կամք չար, եւ գործք[197] չար, եւ զիա՞րդ ասէ մարգարէն[198]. Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան Նորա: Եւ զիա՞րդ ինքնին[199] վկայէ Տէր[200]՝ Գայ[201] իշխան աշխարհիս[202] եւ յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն[b]: Վասն այդ[203] եւ Ապողինար մոլորեցաւ[204] ասել Քրիստոսի միտս չունել[205], զի անհնար տեսաւ մտաց չմեղանչել, այլ զի զկամս եւ ներգործութիւնս[206] յիւրն դարձոյց կամս[207], վասն այն եւ մի Քրիստոս եւ[207a] Որդի քարոզի ի սրբոց հարց. մի Տէր Յիսուս Քրիստոս ի Նիկիա[208] քարոզի՝ չարչարեալ, խաչեալ, թաղեալ եւ[209] յարուցեալ զմի եւ զնոյն ասեն եւ ոչ յերկուս բաժանեն[210]:

Եւ թէ Յոյնք պատճառեն[211] զԵւտիքեայ[212] առ աչաւք ասելն[213] զերկու բնութիւնն՝ զաւանդութիւն[214] ընդէ՞ր զՆեստորին հաստատեն՝ բաւական էր հարցն ասելն[215] չարչարեալ, խաչեալ, զի առ աչաւքն չարչարիլ եւ խաչիլ[216] ոչ կարէ:

[ԺԲ] Եւ մի՛ ոք կարծիցէ զՀայս մի բնութիւնն[1] խոստովանիլ[2]՝ ուրանալով[3] զմինն՝ կամ զԱստուածութիւնն եւ[4] կամ զմարդկութիւնն, այլ յետ միաւորութեանն[5] ոչ բաժանեն յերկուս, որպէս ամենայն սուրբք: Եւ որ ոք ընդունի զժողովն Քաղկեդոնի՝ յայտնապէս Նեստորի կոչի աշակերտ մարդապաշտի: Այլ[6] մեք զհարցն զաստուածազգեստիցն[7] ունիմք[8] խոստովանութիւն, զոր սակաւուք յիշատակեցաք: Եւ դարձեալ յաւելումք, զի սուրբն Աթանաս մի բնութիւն ասէ մարմնացելոյ Բանին Աստուծոյ[9] ի Թղթին[10], որ առ Ապողինար[11]: Նմանապէս[12] եւ Կիւրղոս ասէ մի բնութիւն ի Թղթին, յորժամ եհարց զնա Սեկունդոս[13] եպիսկոպոս[14] Կեսարու:

Դարձեալ գրէ սուրբն Կիւրեղ առ Էգէոս[15] քահանայ. Արդ ասեմք, ասէ, մի բնութիւն եւ միաւորութիւն[16] խոստովանիմք[17], զի ոչ մեկուսին ի միմեանց միաւորեալքն, այլ է մի Որդի այնուհետեւ եւ մի բնութիւն Նորա: Դարձեալ գրէ առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս. Թէպէտ ի զանազանից, ասէ, եւ յաննմանից եկեալ առ միմեանս[18] բնութիւնքն՝ մի Քրիստոս եւ մի Որդի եւ մի բնութիւն խոստովանելի

a Հմմտ. Ես. ԾԳ 9:

b Յովհ. ԺԴ 30

է՝ հանդերձ ասեցելովն[19]: Դարձեալ գրէ առ Ակակ եպիսկոպոսն Մելիտինոյ[20]. Երկու բնութիւնս միաւորեալ ասեմք, իսկ յետ միաւորութեանն[21]՝ մի:

Իսկ արդ, զի մի է բնութիւնն եւ մի է[22] ներգործութիւնն[23], վկայէ երանելին Աթանաս ի չորրորդ ճառին որ առ Արիոս[24], եւ Բանն, ասէ, զմարմնոյն[25] բարձեալ ունէր զտկարութիւն[26], զի Նորա էր մարմինն, եւ մարմինն[27] գործակից Աստուածութեանն գործոյ, զի Նովաւ լինէր, զի Աստուծոյ մարմին էր:

Եւ Գրիգոր Նիւսայ[28] գրէ ի[29] յերկրորդ ճառին որ ընդդէմ Եւնոմիոսի[30]. Քանզի ներգործէ, ասէ, որպէս ճշմարիտ Աստուած ի ձեռն իւրոյ մարմնոյն զամենեցունց[31] փրկութիւն՝ որպէս ձայնին կամ գործոյն մարդկաւրէն եկեալ յառաջ, իսկ ի ներքս ծածկեալն Աստուած[32] իմանի զԱստուածութիւն[33] ցուցանել[34]: Գրէ եւ Յուլիոս եպիսկոպոսապետն Հռոմայ, ասէ՝ Եւ ոչ մի ինչ անջատումն Բանին եւ մարմնոյ[35] Նորա բերի յԱստուածային[36] Գիրս, այլ է մի անձնաւորութիւն[37], մի ներգործութիւն, մի դէմ[38]՝ բոլորովին Աստուած եւ բոլորովին մարդ[39]՝ Ինքն Յիսուս Քրիստոս:

Եւ Յովհան[40] Ոսկեբերան[41] ասէ. Միով զաւրութեամբ եւ միով ներգործութեամբ[42] բազմատեսակ սիրտս բժշկեաց: Եւ վասն կամացն ասէ Աթանասիոս[43]. Մնաւ ի կնոջէ, զի զառաջին ստեղծուած[44] զմարդկային[45] կերպարանին ինքեամբ հաստատեալ ցուցմամբ մարմնոյ, առանց մարմնական[46] կամաց եւ խորհրդոց[47] մարդկայնոց, ի պատկեր[48] նորոգութեան[49] ի կամս Աստուածութեանն միայնոյ:

Եւ Մնորիոս եպիսկոպոսապետն Հռոմայ գրէ՝ Զի թէ[50] էր ծանուցեալ՝ ոչ արդեաք[51] զՏէր[52] փառաց ի խաչ հանէին[a]: Եւ յայտ է, թէ Աստուածութեանն ի խաչ ելանել անհնար է եւ ոչ զչարչարանաց մարդկայնոց[53] զփորձ առնուլ: Թէեւ զայսոսիկ կրէր, այլ[54]՝ վասն անճառելի[55] միաւորութեան[56] մարմնոյն եւ աստուածայնոյ բնութեանն: Վասն այսորիկ եւ[57] Աստուած ասի չարչարելի, ուստի եւ մի կամս խոստովանիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի կամք այլ եւ այլ ոչ եղեն Փրկչին մերոյ, վասն զի ի վեր[58] քան զաւրէնս բնութեան մարգկայնոցս[59] ծնաւ: Թէեւ գրեալ է. Ոչ՝ եկի առնել զկամս

a Ա Կոր. Բ 8

Իմ, այլ զկամս Առաքչին զիս[60] Հայր[a] եւ՝ Ո՛չ որպէս ես[61] կամիմ, այլ որպէս Դու կամիս[62], Հայր[b], ոչ են այս այլ եւ այլ[63] կամաց, այլ ըստ ասեցելոցն[64] մարդկայնոյն եւ ըստ տնաւրէնութեանն[65]:

Այսոքիկ վասն Տեառն ասացան, զոր ետ աւրինակ բարի Վարդապետն[66] մեր, զի զհետ շաւղաց Նորա հետեւեսցուք[67] եւ ոչ ընդ իւրն իւրաքանչիւր[68] ոք, այլ յամենայնի յաւետ Տեառն նախապատրաստե[ս]ցին կամք:

Այլ յաղագս անճառ միութեանն բազմաց սրբոց յաճախեն բանք՝ Կիւրղի, Աթանասի, Բարսղի, Աստուածաբանի[69], Նիւսացւոյ[70], Եփրեմի, եւ վասն համառաւտելոյ չառաք[71] այժմ: Ցիշեմք միայն[72] զԳաբրիելի զասեալն[73] առ Կոյսն՝ Որ ծնանելոցն է ի քէն, սուրբ է[74] եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի[c]: Ո՛չ[75] բնութիւնն որ ի Նմա[76], այլ թէ՝ Որ ծնանելոցն[77] է ի քէն[78], եւ՝ Նա փրկեսցէ զժողովուրդ[79] Իւր ի մեղաց իւրեանց[d]: Եւ առ հովիւն ասէ՝ Մնաւ ձեզ այսաւր Փրկիչ[e]. ոչ եթէ բնութիւնն ի ծնիցելումն[80], այլ՝ որ ծնաւն: Եւ Մկրտիչն աղաղակէ՝ Ահա[81] Գառն Աստուծոյ, որ բառնայ[82] զմեղս աշխարհի[f]: Ո՛չ բնութիւնն որ ի Նմա[83], այլ զոր տեսանէք[84]: Եւ Պետրոս պատասխանի առնէ՝ Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ[g]: Ո՛չ եթէ բնութիւնդ որ ի Քեզ, այլ եթէ՝ Դու ես Որդի Աստուծոյ, առ որ[85] ասաց. Հայր Իմ յայտնեաց քեզ զայդ, եւ երանեաց զնա[h]:

Պաւղոս ըստ մարմնոյ Աստուած ասէ[87], ի վերա[յ] ամենայնի աւրհնեալ[88] յաւիտեան[i] 89: Յովհաննէս[90] աւետարանիչն գրէ՝ Զեռք մեր շաւշափեցին զԲանն կենաց[j]: Ո՛չ առանց մարմնոյ զԲանն ասէ: Թովմաս[91] զկողն[92] շաւշափէր[93] եւ զտեղի[94] բեւեռացն, եւ Տէր Աս-

a Յովհ. Ե 30
b Մարկ. ԺԴ 36
c Ղուկ. Ա 35
d Մատթ. Ա 21
e Ղուկ. Բ 11
f Յովհ. Ա 29
g Մատթ. ԺԶ 16
h Մատթ. ԺԶ 17
i Հռոմ. Թ 5
j Ա Յովհ. Ա 1

տուած խոստովանէր եւ[95] քարոզէր[a]: Եւ առ Փիլիպպոս ասաց Տէր՝ Որ
ետես զիս, ետես զՀայր[b]: Ոչ զմարմինն միայն ասաց, այլ զմիութիւն
տնաւրինութեանն[96]: Եւ Հայր ի[97] Յորդանան վկայեաց[98]. Դա[99] է
Որդի Իմ սիրելի[c]: Ո՛չ[100] բնութիւնդ որ ի Դմա: Զնոյն ձայնէ եւ[101] ի
Թաբաւր[d] [102]: Զիա՞րդ եւ[103] ի պարզ բնութիւն[104] երրորդութեանն
զշարադրելին յաւելուն[105]՝ առնելով չորրորդութիւն, եւ ոչ զարհուրելին[106]: Եւ զի[107] մարդ հոգի է[108] եւ մարմին, եւ խոստովանիք զկատարեալն առնուլ, զի մի՛ զԱպաւղինարին[109] ախտանայցէք[110], եւ զի այլ է բնութիւն[111] մարմնոյ եւ այլ[112]՝ բնութիւն հոգւոյ[113], զո՞րն արդեաւք[114] եառ[115] եւ զո՞րն[116] եթող, զի մի՛ երեք բնութիւն լիցի: Այլ[117] ոչ[118] առ իմաստունս[119] յիմար բանին, եւ այսպէս է ուղիղ բանին[120]. երկու բնութեանցն միութիւն՝ իբր[121] ճառագայթ ճրագի արեգականն հասանելոյ[122] պայծառութեան[123] առանց ի բաց բարձելոյ ոչ ուրեք մնայ[124] իւր առանձնաւորութիւնն[125], այլ հզաւրագունին յաղթեալ յինքն փոխարկէ զաղաւտագունի[126] զլոյսն, եւ ոչ ինչ ընտրութիւն եւ[127] կամ միջոց, կամ տեսութիւն ճառագայթից[128] մնայ: Այսպէս՝ ոչ մարմնական բնութեան[129] կամ կամաց, կամ ներգործութեանց թիւ[130] մնայ[131] ի մարմնացեալ Բանին Աստուծոյ, քանզի բոլորն Աստուած եւ Աստուծոյ կամք. եւ ներգործութիւն ասի, զի մնայ[132] Երրորդութիւնն պարզ եւ անզանազան[133], անխառն ի նիւթականաց[134]:

[ԺԳ] Իսկ զտաւնս[1] Մնդեան Քրիստոսի տաւնեմք, որպէս գրե[ա]լ[2] է յԱւետարանին Ղուկայ[3] եւ ի Կանոնս առաքելոց[4] յունվարի ի[5] Զ՝ տաւն Մնդեանն[6] եւ Յայտնութեան[7]: Ե՛ւ Յակոբոս[8], ե՛ւ Կիւրեղ[9] այնպէս կարգեալ են, եւ Ռստակէս[10] ի ժողովոյն[11] Նիկիա[12] ի հայրապետէն Երուսաղեմի այնպէս ընկալաւ զեղեալ ընթերցուածն յառաքելոցն եւ երեր ի Հայս[12ա]: Նոյնպէս եւ այլ հայրապետք ազգաց: Ըստ այսմ աւրինակի եւ աւետիքն պատահի[13] ի Զ[14] ապրիլի եւ ծնունդն՝ յունվարի[15] Զ: Եւ զկնի Լ ամի մկրտութիւնն[16] դարձեալ ի յունվարի[17] Զ պատահեաց, վասն այն միասին կարգեաց[18] զերկուս

a Հմմտ. Յովհ. Ի 27:

b Յովհ. ԺԴ 9

c Ղուկ. Թ 35

d Մատթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 35

տաւնս տաւնել սուրբ առաքեալն Յակոբոս, զի նոյն էր քանիք[19]
ամսոյն, թէպէտ եւ ոչ նոյն[20] պատկեր աւուրն, զի ծնունդն յուրբաթու
էր եւ մկրտութիւնն ի կիրակէի:

Եւ դարձեալ, զի մի էր խորհուրդ անախտ ծննդեանն եւ մկրտութեանն, վասն այն[21] ի միասին եդին առաքեալքն: Նոյնպէս[22] Կիւրղոս[23] կարգեաց[24] յընթերցուածին[25] զԱւետարան[26] ծննդեանն, որ ըստ Ղուկայ[27]՝ Եւ հովիւք[28] էին ի տեղւոջն[a] [29], եւ զՄատթէոսի[30]՝ Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդ[31] էր այսպէս[b], եւ Աւետարան չէ[32] եդեալ մկրտութեան յընթերցուածին առ ի հաստատել[33], զի միասին տաւնս[34] տաւնել[35], զի եւ յայտնի է Աւետարան աւուրն, բայց առաքեալ միեւնոյն է[36] երեկոյին եւ ի վաղուեանն[37] եւ սաղմոս՝ Տէր ասաց ցիս՝ Որդի Իմ ես Դու[c] [38] եւ առաքեալ: Քանզի երեւեցան[39] շնորհքն Աստուծոյ առ ի պատիւ տաւնից[40]՝ զմի ունել խորհուրդ. զի որպէս ծնունդն էր Հոգւով[41], նոյնպէս եւ մկրտութիւն Հոգւովն[42], եւ աւետիքն Հոգւով[43], եւ աւրն[43ա] չորեքշաբաթ:

Յաւետեացն մինչ ի[44] ծնունդն Թ ամիս է եւ Ե աւր[45] ըստ աւրինակի անդրանկի[46], այլ Յոյնք եւ Վիրք, որ յայսմանէ բաժանին, ի պապանձմանէն[47] Զաքարիայի թուեն եւ ոչ ի կատարմանէն[48] տաւնին՝ ի Ժ-երորդէ[49] Թշրին ամսոյ եւ ոչ ԻԲ-է[50] նոյն ամսոյ, զի ըստ նոցա ի մարտի ԻԵ[51] աւետիքն է եւ ի դեկտեմբերի[52] ԻԵ ծնունդն[53]:

Արդ, թէպէտ եւ պատճառեն վասն սուրբ տեղեացն[54] յԵրուսաղեմի[55] յիւրաքանչիւր տեղիսն կատարել զտաւնսն[56]՝ զծնունդն ի[57] Բեդղահէմ եւ զմկրտութիւնն ի Յորդանան, այլ Կիւրղոս[58] ցուցանէ ի Դաւթի եւ Յակոբայ տաւնն ասելով: Զոր այլ քաղաքս ծնունդ առնեն՝ ուստի յայտ է, թէ յառաջ եղեւ բաժանումն տաւնիցն յաղանդոյն Արտեմոնի, եւ[58ա] վասն այսորիկ ժողով լինի, գրեալ է ի կանոնս[59]: Զնոյն հաստատէ եւ ժողովն Քաղկեդոնի: Եւ տաւնիցն բաժանումն[60] ցուցանէ աբբայ[61] Եփրեմ[62]՝ հարցեալ յաշակերտացն, այսպէս ասելով, թէ՝ Սովոր էին Յոյնք ի դեկտեմբերի ԻԵ տաւն առնել[63] արեգական[64], յորժամ առնոյր տիւն ի գիշերէն[65], զոր հարսանիս արեգական[66] անուանէին: Կարգեցին զտաւնսն[67] Մնդեան[68] յայնմ տեղւոջ՝ առ ի

a Ղուկ. Բ 8

b Մատթ. Ա 18

c Սաղմ. Բ 7

խափանել զայն սովորութիւն[69]:

Եւ զի թէպէտ բամբասեն զմեզ չտաւնել զաւետիսն, այնպէս[70] իմասցին[71], թէ[72] զաւետիսն չտաւնեմք, զիա՞րդ եւ զծնունդն: Այլ զի ոչ ընդ Յոյնս[73] եւ ընդ Վիրս տաւնեմք՝ յայտնի է պատճառն[74]. Յակոբոս եւ Կիւրեղ[75] այնպէս կարգեցին, զի ընդ տաւնի Ծննդեանն եւ Յայտնութեանն եղին, զի չէր յայտնի աւետիքն մինչ[76] ի կատարումն ծննդեանն, եւ Կուսին միայն եւ զաւետիսն հրեշտակն, եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ Յոսէփ[77] երկմտեցաւ[78]: Արդ, իբրեւ խորհուրդ աւետեացն կատարեցաւ, ապա տաւնեցաւ՝ ի չորրորդ աւուրն խորհրդաբար. զի աւետիքն ի չորեքշաբթի[79] էր:

Եւ դարձեալ, մեր Լուսաւորիչն[80] Գրիգորիոս զաւետեաց տաւնն, առ ի խափանել զմոլորութիւն Հայոց[81] զոր[82] տաւնէին Անահիտ տիկնոջն, անդ եղ[83] ի նաւասարդի[84] ԺԵ, որ է Լ[85] ապրիլի ըստ Թուոյ աւուրց եւ ոչ ի[86] մարտի ԻԵ, որպէս կարդեալ է[87] Արտեմոնի եւ հաստատեալ Յոբնաղայ: Երրորդ անգամ տաւնեմք ի տաւնի փոխման Մարիամու Աստուածածնի[88] յերկրորդ աւուրն: Բայց գիտեմք զի ասէք, թէ որովհետեւ ի է[89] ապրիլի՝ անդ ընդէ՞ր ոչ տաւնէք: Յուցաք զպատճառն՝ զի այնպէս կարգեցաւ ի սրբոյն[90] Յակոբայ[91] եւ ի Կիւրղէ[92] ընդ ծննդեանն, եւ զի որպէս[93] Յոյնք առ ի խափանել[94] զտաւն[95] հարսանեաց արեգականն զծնունդն անդ փոխեցին, նոյն բան է եւ վասն աւետեացն: Եւ թէ հարկաւոր կարծեն[96] զԲԺ աւուրն[97] ի մէջ ծննդեան եւ մկրտութեանն՝ արժան էր[98] զկնի Լ ամի տաւնել մկրտութիւնն[99]: Եւ թէ զայն եւս պատճառեն, թէ նախ թլպատութիւնն[100] էր եւ ապա մկրտութիւնն[101], այլ զայս գիտասցեն, զի մի է[102] խորհուրդ մկրտութեանն եւ թլպատութեանն: Վասն այն եւ Յեսու Նաւեայ[103] նախ[104] անցուցեալ[105] ընդ Յորդանան զժողովուրդն ի խորհուրդ մկրտութեան[106] եւ ապա թլպատէր[107] ի Գաղգաղայ[108], եւ նախ Մովսէս յամսն եւ ի ծովի[109] մկրտէր[110]:

[ԺԴ] Այլեւ[1] զհաց պատարագին բաղարջ[2] հրամայեցին[3] առաքեալքն, վասն զի Քրիստոս զբաղարջ եառ[4] եւ ասաց[5]. Այս է մարմին Իմ. զայս արարէ՛ք առ Իմոյ[6] յիշատակի[a] 6ա, եւ աւր բաղարջակերաց էր: Եւ արդ, որք[7] խմորով վարեն՝ լուծիչ են կտակին Տեառն,

a Ղուկ. ԻԲ 19, Ա Կոր. ԺԱ 24

զի բաղարջն աւրինակ է[8] անապական մարմնոյն Քրիստոսի: Զի խմոր թէպէտ եւ[9] ի նոյն բնութենէ հացին է, սակայն բազմաւրեայ լինելով քացախեալ[10]՝ նշանակ ապականութեան է, զի մարմինն[11] Քրիստոսի բնութեամբ մեր է, բայց ծննդեամբ անախտ է եւ անապական: Բաւական են[12] վասն խմորոյն[13] ասացեալքն յառաքելոյն[14] եւ յԱստուածաբանէ[15]: Եւ ի Պետրոսէ յառաքելոյ[16] հռոմայեցւոցն[17] բաղարջիւ աւանդեցաւ պատարագել[18], եւ Լուսաւորիչն մեր Գրիգորիոս ի հռոմայեցւոցն[19] առեալ աւանդեաց ի Հայս: ԼՋ ազգ[20] հռոմայեցւոց[21] եւ[22] ազգն Ճենաց բաղարջիւ պատարագեն:

Ուսանիմք եւ ի Կեղեստիանոսէ եւ ի Բարսումայ[23] հակաճառութենէ զիրս խմորոյն: Եւ Յոբնաղ թէպէտ եւ[24] երկու բնութեան[25] դաւանող է ըստ ժողովոյն Քաղկեդոնի, սակայն յիւր Պարապումն յեւթներորդ ճառին գրեալ է[26], թէ Զէ պարտ խմոր եւ աղ դնել ի հաց պատարագին, բայց զԼեւոնին[27] հաստատէ[27ա] ժողովն Քաղկեդոնի[28], զոր ասէ, թէ՝ Պարտ է դնել խմոր, զի մանուկն աճէր եւ զաւրանայր[29]: Ասէ[30] աւետարանիչն. Որք անգիտանան, զի Աստուած էր Բանն[31], որ եառ[32] մարմին[33] եւ ամենայն ինչ նմա հնարաւոր է, զի որպէս առանց սերման էր յղանալն, եւ անապական էր[34] աճումն[35]: Իսկ ջուրն պատճառ ունի ընդ արեան[36] ելանելն ի կողէն տեառն, զոր ի բաժակին[37] խառնեն Յոյնք եւ այլք: Բայց[38] գիտելի է, զի տէր[39] զջուր կողին ի[40] մկրտութիւն[41] անուանեաց, ասելով որդւոցն Զեբեդեայ[42]. Կարէք ըմպել զբաժակն Իմ եւ զմկրտութիւնն Իմ մկրտել[a], զոր հարքն[43] ամենայն եւ Եփրեմ ի խորհուրդ[44] առնուն մկրտութեանն[45], թէպէտ եւ ջուրն զմահն[46] ցուցանէր եւ արիւն՝ զԱստուածութիւնն զկենդանի[47]:

Ահա յայտ է[48] երկու բնութիւնն միութեամբ, զի թէ ոչ էր միացեալ Աստուածութիւնն՝ միայն ջուր[49] ելանէր եւ ոչ արիւնն ընդ նմա[50], որպէս ի նաւին ի քուն լինելն[51] մարմնոյն էր, եւ խռովեալ[52] ծովն[53] խաղաղացուցանելն[b] [54] միացեալ[54ա] Աստուածութեանն:

Արդ[55], ցոյցք եւ որ ինչ նման դոցին երկու բնութեանն է, բայց հանդերձ Բանին միութեամբ, ըստ որում ասաց՝ Եւ ոչ ոք ել յերկինս,

a Մատթ. Ի 22, Մարկ. Դ 39

b Հմմտ. Մարկ. Դ 38-39:

եթէ ոչ որ էջն[56] յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս[a]: Արդ, ոչ զմարմնոյն[57] ասէ յերկնից բերեալ, թէպէտ եւ[58] ի մարմնի էր՝ ասաց զնոյն[59] լինել յերկինս եւ ի մարմնի[60], զի ոչ ի Հաւրէ բաժանեցաւ ի մարմին լինելով[61] եւ ոչ ի մարմնոյ՝ յերկինս գնալով. ամենայն ուստեք զմիութիւնն[62] տեսանեմք եւ ոչ զշարայարութիւն[63] ըստ[64] տոմարին Լեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի: Յովհաննէս[65] աւետարանիչ գրէ. Արիւն Որդ[ւ]ոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն մեղաց մերոց[b] 66, զի թէ[67] բաժանես զԱստուածութիւնն ի մարմնոյն՝ արիւն մարդոյ սրբել ոչ կարէ: Աստուածաբանն ասէ. Արիւն եւ չարչարանք լսելով մի՛ ի վայր անկցիս անաստուածաբար. անաստուածութիւն ասէ զարիւնն լոկ մարդոյ համարեալ[68]:

Արդ, տուաւ մեզ ջուրն ի մկրտութիւն եւ արիւնն ի հաղորդութիւն, զոր եւ Քրիստոս ի բերոյ որթոյ ասաց ըմպել[c] 69, եւ որթն, որպէս մեկնէ Յոհան[70] Ոսկեբերանն[71], գինի եւ ոչ ջուր[72] բերէ եւ յանդիմանէ, ասելով՝ Ո՞ւր են որ[73] ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր առնուն: Թէպէտ եւ Յոյնք[74] լոկ ջրամատուցած ասեն[75], բայց ի կիր առնուլն զխառնուածն ցուցանեն[76]:

Ահա, յայտ է, թէ յաւուրս նորա չէր կարգ ջրոյն՝ որպէս ոչ տաւնելն[77] ի դեկտեմբերի, այլ ըստ կանոնացն[78] ի Զ-ն[79] յունվարի, զոր եւ գրէ[80] Սոկրատէս զմերժելն[81] Յովհաննու յԵկեղեցւոյն մինչ տաւներ ընդ[82] յայտնութեանն[83] եւ զծնունդն, որպէս Աստուածաբան[84] ի Մննդեան ճառին զծնունդն եւ[85] Յայտնութիւն անուանէ, ասելով[86]՝ Բայց[87] այժմ Աստուծոյ յայտնութեանս տաւն է, զի երեւեցաւ Աստուած մարդ[88] ծննդեամբ ի Կուսէ: Զնոյն եւ[89] Բարսեղ անուանէ ի Մննդեան ճառին, ասելով՝ Անուն դիցուք տաւնիս Աստուծոյ Յայտնութիւն[90], եւ մարմնոյն Աստուածութեանն[91] միանալոյն է[92] յայտնութիւն[93]:

[ԺԵ] Այլ[1] այնոքիկ, որ աղ եւ ձէթ[2] յաւելուն՝ զՀոգւոյն տալ զաւրինակ եւ զԱստուածութեանն[3], եւ[4] խմորոյն[5]՝ զաճման[6] մարմնոյն, եւ այս[7] բաժանման[8] տալ կարծիս յատուկ ունել յԱստուածութենէն[9]՝

a Յովհ. Գ 13

b Տե՛ս Ա Յովհ. Ա 7:

c Ղուկ. ԻԲ 18

այլ ասել զԱստուածութիւնն[10] եւ այլ զմարդկութիւնն[11]: Այլ զի պարզ Աստուածութեանն[12] միացաւ՝ բիծ եւ արատ ոչ ունելով, եւ հաց պարզ լինել խմորեալն ոչ կարէ, այլ ունի փքացումն նշանակ ամբարտաւանութեան[13], իսկ աղն եւ ձէթն[14] համեմելոյ[15] է աւրինակ, եւ մարդկային[16] հնարիցն ոչ էր[17] կարաւտ տերունական մարմինն[18]. զի աղն Բանի Աւետարանին է[19] աւրինակ եւ ձէթն[20]՝ խորհուրդ մկրտութեան[21]:

Ի պատարագն[22] ոչինչ յարի, զի զաճելն[23] մարմնոյն տան միայն, Աստուածութեանն[24] անհնար[25] ասեն զաճելն, այլ ճշմարիտ միութեանն տան, զի եւ առ մեզ մարմինն աճէ: Սակայն Հոգւոյն[26] ներգործութեամբ աճէր մարմինն Տեառն[27]՝ բաւական[28] անապականութեամբ աճելն[29] ըստ աւրինակի մանանային:

[ԺԶ] Իսկ Վիրք զողջոյն ամի[1] լուծանեն զչորեքշաբաթ[2] եւ զուրբաթ եւ զկնի յարութեանն[3] պահեն, պատճառելով, թէ[4] Ծ աւր պահել եւ Ծ աւր[5] ուտել՝ այդ աստէն հատուցանել է: Ոչ յիշեն զասելն տեառն՝ Յորժամ վերասցի փեսայն՝ ապա պահեսցեն[a] 6: Զայն պահեն, որ ոչ է[7] ըստ կանոնաց[8]: Որպէս Ասորիք զսկիզբն[9] աւուր[10] յերկոյն դնեն[11] եւ զչորեքշաբաթն եւ զուրբաթն[12] լուծանեն՝ հրէաբար թուելով, մոռացեալ[13] զգրեալսն[14] ի Մովսիսէ[15]. Եղիցի լոյս[b]՝ սկիզբն աւուրն[16]:

Զկրճատեալ[17] զանասունն աւրէնքն ի պատարագ[18] ոչ ընդունէր, զիա՞րդ[19] ի քահանայութիւն ընդունելի իցէ ըստ սովորութեանն Յունաց. եւ զի[20] ոչ ըստ բնութեան պատահեալսն աւրէնքն ընկալաւ, զիա՞րդ ի[21] մարդկանէ զեղեալսն ընկալցուք: Զի Որոգինէս ժպիրհ անուանեցաւ եւ Արարչին հակառակ լինել ցուցաւ, զի հարկաւ առաքինութիւնն եւ բռնադատելն[22] անընդունելի է: Զի ըստ բնութեանն եւ բազում կենդանիք ողջախոհք են, որպէս տատրակք[23] եւ արագիլք[24] եւ այլք. թէ խոտան լինել ըստ աւրինացն կարծէ ոք՝ ցուցցէ ըստ Աւետարանիս, թէ ոչ ընկալաւ ի սրբոց կամ ի ժողովոց, զի ի բազում ժողովս նզով[25] եղեալ է[26], եւ որք արարին առաքինութիւն կարծելով՝ որոշեցան, որպէս այնոքիկ, որ[27] յԱղեքսանդրիայն արարին:

a Մարկ. Բ 20

b Ծն. Ա 3

[ԺԷ] Տես որքա՜ն է մասնաւոր[1] բաժանիլս[2] ի Տէր հաւատացելոց, զի Հռոմայեցիք[3] բազմաւրեայ նշխարաւ[4] պատարագ[5] մատուցանեն[6] մտացածին պատճառաւ[7]. Կանոնք առաքելոցն ջերմն[8] հրամայէ[9] զհաց պատարագին հանել ի սեղանն: Նաեւ աւրէնքն[10] զհաց երեսացն յաւրն հրամայէր[11] դնել եւ առնուլ, որ էր[12] նշանակ Քրիստոսի միում աւուր պատարագելոյն ի վերայ[13] խաչին[14]:

Այլ Հռոմայեցւոցն[15] անկին լինել քահանայ աշխարհի՝ ընդդէմ է Առաքելական կանոնաց եւ բազում ունի վնասու պատճառս[16], զի անխտիր վարին[17] շնութեամբ եւ չար խառնակութեամբ, զոր եւ մերժէ կանոնք Եկեղեցւոյ[18] սրբոյ, զի քաւիչ թարգմանի քահանայն. զի թէ ինքն մեղուցեալ է[19՝ զիա՞րդ[19ա] քաւէ զմեղս բազմաց, զի[20] ոչ միայն չէ քահանայ, նաեւ[21] ոչ հաղորդի արժանի է ընդ աշխարհականս[22]: Զի թէպէտ եւ զմարդասիրութիւն[23] պատճառէ եւ համարձակի[24] զիա՞րդ եւ զիրաւունս մոռանայ եւ ընդէ՞ր ոչ լսէ զքարոզ պատարագին՝ Մի՛ ոք[25] յապաշխարողաց եւ[26] թէ աշխարհականաց ոչ տա[յ] թոյլ հաղորդիլ[27], որոց պետք են[28] ապաշխարութեան, որպէ՞ս անարժան քահանայ քահանայել[29] իշխէ[30], քանզի կանոնք ցուցեալ է[31], թէ զորս արժան է կոչել ի քահանայութիւն[32] եւ զորս[33] ոչ: Եւ որ զշնացեալն քահանայ ընդունի եւ զպատարագ նոցա՝ զԱստուած բարկացուցանէ[34] աշխարհի[35], քան թէ հաշտեցուցանէ:

Եւ ոչ ետ կանոնք մկրտել սարկաւագի[36] եւ ոչ[37] պատարագ մատուցանել[38], զիա՞րդ լոկ աշխարհականի արժան է հաղորդեցուցանել զհիւանդ[39], որպէս առնեն բազումք յազգաց. զի յոր կոչումն կոչեցեալ[40] է՝ արժան է նմին[41] կալ ըստ առաքելոցն[a 42]:

Կանոնք[43] ի հասարակաց տան ոչ հրամայեն[44] պատարագել, բայց միայն ըստ վտանգի, զիա՞րդ ի փողոցս եւ հրապարակս[45], ուր ոչ է կանգնեալ[46] սեղան ըստ կանոնաց եւ ոչ խնկարկութիւն, եւ ոչ լուսաւորութիւն, եւ անպատրաստ, եւ անարժան հաղորդին[47]: Զի որպէս արհամարհանաւք շինեցաւ եկեղեցին՝ իբր տղայոց[48] խաղ, նոյնպէս եւ[49] հաղորդին քամահանաւք:

Զվրան[50] վասն զաւրաց թոյլ ետ կանոնք[51], այլ զաւրէն բազորսաց[52] առնել խուճակ խուզ[53], մանաւանդ ուր հնար գոյ եկեղեցի լինել[54՝ յո՞ր կանոնաց է: Ցայտ է[55՝ [յ]արհամարհութենէ լինել, թէպէտ եւ այլ ազգ[56] ինչ պատճառեն:

Նոյնպէս եւ[57] զպահս ունին հեշտութեամբ եւ արհամարհանաւք. զձուկն[58] եւ զձէթ[59] եւ գինի պահոց անուանեն: Կանոնք առաքելոցն ի շաբաթու[60] եւ ի կիւրակէի[61] հրամայէ[62] լուծանել զպահս, յորում[63] եւ պատարագելն է[64], այլ չեն յայտ արարեալ[65] զպահոց եւ զտաւնից[66] կերակրոց[67]: Ցայտ է, զի[68] զմիս միայն արգելու[69] ուտել[70], զի զատկին հրամայէ[71] զենուլ գառն[72]: Ապա եւ[73] թան, եւ պանիր, եւ իւղ, եւ ձուկն, եւ ձէթ[74], եւ գինի ըստ հրամանի նոցա տաւնի է, զոր բազում ազգ[ք] պահոց արարին: Այլ յամենայն աւուր[75] չէ պարտ ուտել[76] ի Գրոց, եւ թէ ոք պատճառէ զկանոնք, թէ ըստ կարի պահք հրամայեցաւ[77], որպէս պատմէ Սոկրատ՝ զկամաւոր պահոց ասէ, ոչ ի[78] կարգելոց ի կանոնս[79]: Զի ի Կանոնաց առաքելոց չորեքշաբաթ եւ ուրբաթ ի պահս գրեալ[80] է: Թէ[81] յամենայն աւր[82] ուտէ[83] ոք եւ ըմպէ՝ ցուցցէ, թէ զո՞ր պահէ, զի զատ ի մսոյ Գիրք վկայութեամբ զամէն մի ասեն[84] յուտել եւ յըմպել եւ ի[85] պահել: Առաքեալ մարմին ասէ, եւ Վիրք՝ ջուր:

Զխաչ եւ զեկեղեցի[86] ոչ աւրհնեն Վիրք, զի կանոնք զսեղան[87] միայն յիշեն[88] աւրհնել, բայց արդ տեսանեմք, զի յայլ խաչէ մասն դնեն, եւ այն նոյն է, զի եւ ոչ այն է աւրհնեալ[89]: Զի թէ այդպէս էր[90՝ քահանայ զի ածեալ է՝ զորդին չէ արժան ածանել, եւ հայրն մկրտեալ է[91՝ զորդին չէ պարտ մկրտել[92]: Արդ, կամ չէ ի դէպ դնել եւ[93] կամ՝ յաւրհնելոյ[94] դնել, կամ[95] աւրհնել եւ ածանել[96], զոր կանոնք յիշեն զածանելն[97]: Եւ թէ վասն այն չաւրհնեն, թէ[98] Քրիստոսիւ աւրհնեցաւ[99], եւ ջուրն Յորդանանու Քրիստոսիւ աւրհնեցաւ՝ ընդէ՞ր զջուրն աւրհնեն[100] մեռոնիւ[101], որ ոչ երկրպագի, եւ զխաչ զերկրպագելի ոչ աւրհնեն եւ ոչ ածանեն. զի այդ այնոցիկ է, որ ոչ խոստովանին[102] ի խաչին զԱստուածութիւնն[102ա]: Եւ թէ զեկեղեցի վասն այն չածանեն[103], զի իբրեւ[104] ի տուն ժողովին յաղաւթս, բայց եկեղեցի հաւատացելոց է աւրինակ, եւ ածանին քրիստոնեայք, զոր եւ[105] արժան է ածանել զեկեղեցի, որպէս Հայք, եւ պատուել վասն ածմանն եւ չառնել աւթեւան ի նմա[106]:

Այլ հաւատացելոց[107] ի Քրիստոս երկիր ոչ պագանել միմեանց խաչի եւ եկեղեցւոյ՝ յոյժ[108] հակառակ է Աստուծոյ, զի յանուն Քրիս-

a Հմմտ. Ա Կոր. Է 20, Եփես. Դ 1:

տոսի կանգնեն ամենայն ազգք[109], զՔրիստոս անպատուէ[110]՝ որ զխաչ եւ զկենդեցի անպատուէ[111]՝ իբրեւ զանհաւատ դատապարտի[112]: Զի որ[113] պատճառէ զմեռոն Հայոց անկատար լինել եւ[114] վասն այն անպատուէ՝ յոյժ ստուիթիւն ունի[115]. եւ զինքեանց զմեռոնն[116] պատուեն յոյժ՝ թէ պալասանի ձէթ եւ այլ անուշահոտ ի[117] խունկ խառնեալ[118] է՝ եւ կանոնք[119] տա[ն] խառնուած առնել ի մեռոն[120], որպէս ի հաց սուրբ[121] պատարագին զխմոր[122] եւ ի բաժակին՝ ջուր[123]: Եւ ոչ է գրեալ[124], թէ հարկաւոր է ի[125] ձիթապտղոյ ձէթ աւրհնել[126]՝ ըստ գաւառաց զինչ պատահի[127] ձէթ ընդունելի է եւ թէ շուշմայի[128], եւ թէ այլ ազգ: Եւ թէ Մովսիսի[129] հրամայեաց[130] Աստուած զձիթապտուղ խակակուի[130a] զըստ[131] պատահելոյ[132] գաւառին էր[133] եւ այն. այլ որպէս զհաց պատարագին աւրհնութիւն[134] առնէ մարմին[134a] Քրիստոսի, նոյնպէս զձէթն[135] աւրհնութիւնն[136] առնէ նշանակ Հոգ[ւ]ոյն[137], զի Հոգին Սուրբ է, որ կատարէ զաւրհնութիւնն, եւ յայտ անուշահոտ լինելոյն[138] է թէ պատարագն եւ թէ մեռոնն:

Եւ թէ զաւրինացն[139] ասիցէ[140] ոք, զի չորք խունկք[141] անուշահոտ խառնեցան[142] ի յիւղն[143] աւծութեան, զի աւրինակին այն վայելէր[144], բայց ճշմարտութեանս[145] չեն[146] ինչ խառնուածքն պէտք, զի ամենայն ինչ անդր մարմնաւոր է[147] եւ աստ հոգեւոր:

Իսկ կենդանւոյն[148] առնել ժամ՝ գիտեմք զի Քրիստոս կենդանեաց է քաւիչ եւ մեռելոց, զի վասն այնորիկ մեռաւ եւ յարեաւ, զի կենդանեաց եւ մեռելոց տիրեսցէ՝ ընկալեալ եղեւ այդ[149] յԵկեղեցի: Այլ զի պատճառ եղեւ[150] ծուլութեան[151] եւ յաճախելոյ ի հեշտութիւնս, եւ վասն այն անընդունելի եղեւ ի Հայոց[152]: Եւ Տէր Յիսուս զպատարագն Իւր[153] յիշատակ անուանեաց[154], եւ յիշատակ յետ[155] մահու լինի եւ անուանի: Եւ առաքեալն Փիլիպպոս[156] յետ մահուն[157] պատուիրէր Բարթուղիմէոսի[158] մատուցանել պատարագ[159], զի մի՛ զոր շինէ ոք՝ զնոյն եւ քակէ: Բարի[160] է յետ մահուն լինել պատարագին, զի ազատելոյ[161] պատճառ է քահանայից եւ վաճառաշահելոյ[162], եւ[163] յայն ապաստանեալ[164] ոչ հատանի ի մեղաց: Ահա՝ թէ սիրէ ոք կենդանւոյն ժամ առնել՝ զգուշանալ պարտի[165] ի մեղաց, իբրեւ զմեռեալ[165a], եւ զի հասարակ փրկագործութիւն եղեւ՝ հասարակ պարտ է[166] պատարագին լինել: Բայց զի ըստ գոյին զանազանի ընծայոգացն[167] շատ[168] համարելն[169] եւ սակաւն[170], զի մի՛ քահանայք

հեղգասցին[171]՝ աւուրքք թուեցաւ: Եւ զի կանոնք առաքելոյն[172] Փիլիպպոսի[173] զքառասունսն[174] հրամայէ՝ արժան է եւ թուելին[175] լինել եւ հասարակն[b] ըստ ասացելոյ պատճառին:

[ԺԸ] Իսկ Հռոմայեցիք[1] զի բազում կանայս առնեն՝ որքան մեռանի[2], մոլորեալք յառաքելոյ[3] բանն, զոր ի Քրիստոս ասէ եւ յաւրէնսն, նոքա առին[4] կարծեաւք[5] յայր եւ ի կին զասելն. Ապա թէ մեռանի այրն՝ չհամարել[6] շնութիւն[6a] եթէ լինիցի առն այլուսի[b]. այլ ինչ պատճառաւ[7] ոչ թողուն: Այլ Կանոնք առաքելոցն[8] ոչ ընդունի՝ յասելն երրորդին եւ չորրորդին աւրէնքն չեն դատաւոր[9], այսինքն՝ ձեռնտու զինքեանց կանոնս աւրէնս անուանէ: Եւ Պաւղոս երկրորդին հազիւ տայ թոյլ, ասելով՝ Ապա թէ չունի[10] ժոյժ՝ ամուսնասցի[c]: Եւ զերկրորդ ամուսնութիւնն ապաշխարութեամբ սահմանէ կանոնք:

[ԺԹ] Այլ զկերակուր[1] աւրհնե[ա]լ եւ կամ պղծեալ ցուցեալ է[2] կանոնք[3], զՔրիստոս ոչ պղծեն վասն անհնարութեան, բայց զայլ[4] ինչ պղծեն եւ ագահութիւն համարին, բայց հաւատովք սրբի ըստ առաքելոյ, որ վասն խոզեն[ւ]ոյն ասացեալ է[d]: Այլ կրաւնաւորք Հայոց զի ուտեն միս, եւ Հռոմայեցիք[5]՝ զմիս խոզենի[6] եւս՝ կանոնական է եւ այն, զի զուտելն ընդունի եւ զչուտելն, բայց պատճառ ունի կանոնք զոմանց պիղծ համարել զմիս[7], զոր նզովէ եւ հրամայէ[8] [չ]ուտել եւ բանադրէ որ զմսոտ բանջար խոտէ[9]: Բայց այնքան խորշին Ցոյնք եւ Վիրք, որ զտեառն ուտելն ի Վերնատան[10] ձուկն նկարագրեն[11]:

Արդ, որպէս խոտելի է ուտելն, խոտելի է եւ նոյնքան[12] չուտելն խղճիւ գովելի է չուտելն, զի անդէպ է կրաւնաւորին[13], բայց պարսաւի խղճիւ եւ պիղծ[14] կարծեաւք[15] ուտելն[e]: Իսկ յիւրաքանչիւր[16] աւուր ուտել[17] ձուկն եւ ըմպել գինի՝ ամբաստանի[18] յաւրինաց եւ ի կանոնաց, զի եւ ոչ մի աւր պահոց առ նոսա գտանի[19]: Նաեւ ի բազմաց սակաւ գտանի ի Հայոց կրաւնաւորաց[20] մսոյ[21] կերող՝ համարձակեալ ի կանոնաց:

---

a Ե-ն պատեղ ընդհատում է:

b Հռոմ. Է 2

c Ա Կոր. Է 9

d Հմմտ. Հռոմ. ԺԴ 20:

e Հռոմ. ԺԴ 20-23

[Ի] Այլ ոչ առնել սարկաւագ եւ դպիր եւ ոչ բացաւ գլխով[1] եւ հանդերձիւ[2] պատարագել յեկեղեցւոյ[3]՝ այդոցիկ խափանումն չէ յաղանդոյ[4], այլ յաւերմանէ եկեղեցեաց, եւ ուր կարն է շուրջառաւք[5] եւ հանդերձիւք պատարագեն եւ ի քահանայից[6] կարգեն սարկաւագ եւ դպիր, զի ի խակ մանկունսն[7] չհամարձակին[8] զահագին խորհուրդն պատարագի[9]:

Այլ զի կրաւնաւորք հերս ոչ ունին՝ եւ վասն այնորիկ[10] ոչ բանան զգլուխս[11], եւ աշխարհի քահանայք բացաւ գլխով պատարագեն եւ աղաւթեն:

[ԻԱ] Իսկ ամբաստանելն, թէ զպատկերս սրբոցն[1] ոչ ընդունին[2] Հայք, եւ կարի առաւել ընդունիմք, զի առաջին պարգեւ[3] ի Քրիստոսէ իւրն[4] տուաւ պատկեր Հայոց թագաւորին Աբգարու, եւ զառաքելոցն ունէր զպատկեր[5] սուրբն Սեղբեստրոս, եւ ամենայն սուրբք ընկալան: Բայց եղեւ երբեմն եւ[6] հակառակութիւն ի Յոյնս, թէ նմանութիւն է կռոց[7], եւ ոչ ընկալան ոմանք[8] ի թագաւորաց, այլ այրէին[9] եւս՝ մինչեւ[10] նշանք եղեն[11], եւ[12] Աստուածածնին[13] պատկերն, որ[14] ի հրոյն[15] արտաքս անկաւ, եւ դարձեալ տեսիլ ցուցաւ[16], եւ ապա ընկալան[17]: Նաեւ Յուլիանոս ամբարիշտն[18] ընդ իւր պատկերին եւ զաստանայի[19] նկարեաց եւ ի Հայս առաքեաց՝ դնել յարքունական յեկեղեցին, զոր առեալ Յուսկանն[20] եւ կամ[21] Դանիէլ[22] քահանայի[23] կոխեաց եւ վասն այն սպանաւ ի Տիրանայ: Բայց զի կարի բազմացուցին՝ եւ անարգեցան[23ա] սրբոց[24] պատկերքն ընդ այլսն[25]: Զի որպէս Հայք զխաչ[26] անարգեցին՝ արհամարհանաւք[27] յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս եւ[28] Յոյնք եւ Վիրք զպատկերս: Զի զոր գիտեմք՝ ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցիչ է՝ որպէս պատմութիւն[29] վարուց սրբոցն[30], բայց զի արք տգէտք զպաշտելի[31] կարծեն՝ վասն այն եւ ոչ փութան առնել Հայք. այլ իմաստունք զսրբոցն[32] զարարեալ[ս]ն[33] ոչ անպատուեն:

[ԻԲ] Եւ վասն առաջաւորաց[1] պահոցն[2] առաւել գայթակղին Յոյնք եւ Վիրք ի մեզ, եւ զի[3] յիշատակ տաւնի սրբոյն Սարգսի[4] անդ պատահեաց[5], եւ կարծի[6] զայն[7] պահք նմա լինել: Եւ անգիտանան զի

պատմութիւն նորա յԱսորւոց է, զի ի Պարսս[8] նա վկայեաց[9], եւ անտեղեակ են պատմութեանն[10]: Եւ այն առաջին[11] պահք է[12], զոր[13] կարգեաց սուրբն Գրիգոր ի[15] բժշկել զՏրդատ թագաւոր, որպէս պատմէ[16] Ագաթանգեղ[17]՝ այր Հռոմայեցի եւ ոչ Հայ: Եւ Զենոբ Ասորի եպիսկոպոս[18], աշակերտ սրբոյն Գրիգորի զնոյն գրէ յիւրում պատմութեանն[19] եւ յաւելու ի պատմել[20], թէ եւ Ե աւր պահք Մեծին Կոստանդիանոսի կարգեցաւ ի Սեղբեստրոսէ[21] ի բժշկել[22] զնա, եւ վասն այն առաջաւոր անուանի, զի առաջին պահք այն եղաւ[23] ի Հայս[23ա]. եւ թէ[24] զայլ պահս[25] յիշեմք՝ վասն աւրինակի միայն՝ զՆինուէացւոցն[26] եւ զայլոց[27]:

Բայց Մանիքեցիք թէպէտ եւ ազգաւ չեն ի Հայոց, այլ զի ի Հայս[27ա] բնակեալ[28] են եւ զՀայոց ունին զլեզու[29] եւ վասն շահի երթան ի Յոյնս[30] եւ ասեն զիքեանս[31] Հայ[32] լինել եւ մկրտին վասն ընչից եւ զաղանդն իւրեանց ասեն նոցա: Եւ նոքա, զի սիրողք չարի են[33], ճշմարիտ կարծեն լինել, թէ Սարգիս ոմն արուեստիւ[34] հալաճ[35], աղանդիւ[36] կախարդ, ազգաւ Հայ[37], շուն ունէր եւ ուր[38] երթալն կամէր[39]՝ շունն յառաջէր[40]: Եւ այս[41] է նոցա առաջաւորաց պահքն[42], զոր ընդ շունս եւ ընդ գայլս[43] եղիցի բաժին ասողացն: Այլ Սարգիս զաւրավարն[44] յաւուրս Կոստանդիանոսի էր[45] եւ ի[46] Յուլիանոսէ հալածեալ[47] ի Կապադիկիէ[48] եկն ի Հայս առ Տիրան թագաւորն[49] Հայոց: Եւ նա առ իւր ունել զանգիտեաց ի Յուլիանոսէ՝ գնաց ի Պարսս առ արքայն[50] Պարսից, եւ նա պատուեաց եւ զաւրավար կարգեաց ընդդէմ Տաճկաց՝ հանդերձ որդովն իւրով, զոր[51] գերի վարեցաւ ի նոցանէ եւ աղաւթիւք հաւրն՝ նշանաւք եւ տեսլեամբ դարձաւ ի նոցանէ. որ եւ այս շնորհ եղեւ տուեալ[52] սրբոյն, զի տակաւին աղաւթիւք նորա[53] ազատին գերիք: Եւ զի զաւրաւոր[54] եւ յաղթող ցուցաւ ի պատերազմունս եւ յայտնի եղեւ քրիստոնէութիւն նորա, եւ սորին աղագաւ[55] կոչէր[56] Շապուհ եւ ստիպէր զոհել կռոց: Եւ նորա չառեալ[57] յանձն՝ վկայեաց[58] որդովն, որ անուանեալ կոչիւր[59] Մարտիրոս, յամսեանն յունվարի որ աւր ԼԱ էր[60]: Եւ ոչ կայ ի պատմութեանն[61] Յունաց, այլ Ասորւոց[62], եւ վասն այն նոցա անհաւատալի թուի[63] եւ թէ կամին եւ թարգմանեն՝ արդարեւ պատուեն եւ նոքա տանի[64]: Պահքն առաջաւորաց[65] է եւ տաւնն Սարգսի զաւրավարի եւ վասն այն պահք[66] Սարգսի կարծեն[67], որպէս յառաջին շաբաթն[68] յաղահուցսն անուանեալ պահքն շաբաթ աւրն

Թէոդորոսի տաւն է[69], եւ շաբաթն նորա անուանի պահք: Յառաջագոյն յայն շաբաթն Թագաւորացն տաւնէին՝ Կոստանդիանոսի եւ Տրդատայ, վասն Ե-աւրեայ նոցա պահոցն, եւ յետոյ Սարգսի՝ վասն անդ պատահելոյն անուանեցաւ[70]:

[ԻԳ] Այլ պանրուտէքն այսպէս կարգեցաւ. Թագաւորն Յունաց Զենոն մասէր էր եւ բազմակեր եւ յաւուրս բարեկենդանին[1] բազմաճաշակ եղեալ ի միս եւ տաղտկացեալ՝ ի վաղիւն խղճիւ աւրէնս կարգեաց յայն[2] շաբաթ ոչ ուտել[3] միս, եւ այդ սովորութիւն կալաւ:

Այլ մատաղ առնել ի տաւնի Հայոց[4] ոչ է հրէաբար[5], այլ՝ որպէս գրեալ[6] է ի կանոնս, զի Հրեայք[7] ընդ բաղարջս[8] եւ ընդ եղեգն ուտեն, եւ հաւատացեալք պարզաբար, զի չէ ինչ նման հաւատացելոց եւ Հրէից տաւնելն[9]:

Եւ ոչ զանկակ ունել ի բուրուառն[10] եւ կամ[11] չունելն հերձուած է, այլ որպէս[12] ի քշոցն է՝ ազդ առնել միայն խորհրդական աղաւթիցն եւ ահաւոր առնել զժամ պատարագին[13] ի լսելիս: Եւ զի խորհուրդ սերոբէից սրբասացութիւնն[14] է՝ այլ քահանայք եւ կրաւնաւորք զինուոր են Քրիստոսի, եւ զփիլոն[15] եւ զվեղար[16], որ ասի քուսիթայ[17], որ է կուսից[18] պսակ՝ որպէս զէն զանձամբ ունին, եւ չէ պարտ անզէն լինել:

Իսկ Յոյնք եւ Վիրք զի[19] այպանեն[20] զբեւեռ խաչի՝ յոյժ անգիտաբար ամբաստանեն[21], զի ասեն թէ[22] զԱստուածութիւնն խաչեալ[23] ասեն Հայք, եւ վասն այն է բեւեռն: ԶԱստուած ասեմք խաչեալ[24]՝ ոչ զԲանն[25], այլ զմարմինն[26] աստուածացեալ Բանիւն, զի ոչ էր բաժանեալ Բանն ի մարմնոյն[27], որպէս ասաց Նեստոր, զի ուր մարդկաւրէն[28] ասի՝ ոչ առանց Բանին, եւ ուր Բանն[28ա]՝ ոչ առանց մարմնոյն: Այլ բեւեռ խաչի խորհրդական[29] է, որպէս եւ[30] գրեալ է ի կանոնս եւ որպէս առաքեալն Պետրոս մեկնէ՝ ուղիղ[31] փայտն Աստուածութեան[31ա] Քրիստոսի է աւրինակ, եւ խոտորնակն՝ բնութեան մարդոյն[32], իսկ բեւեռն՝ դարձն եւ ապաշխարհութիւնն[33]:

Իսկ խաչեցար[34] ասելդ ոչ ի հարց[35] միայն է, այլ ի մարգարէից[36] գուշակեալ[37] եւ յաւրինաց նկարագրեալ[38] եւ յառաքելոց եղեալ եւ ի[39] հրեշտակաց վկայեալ[40] եւ, որպէս պատմէ Նեքտառիոս հայրապետն Հռոմայ, եթէ ոչ եղեւ հնար Յովսեփայ[41] իջուցանել

զմարմինն ի խաչէն, զի փայլատակունք հրատանէին ի փորուածէ բեւեռացն, եւ ոչ կարէր հանդարտել: Ապա զձեռսն տարածեաց եւ[42] աղաւթեաց[43] այսպէս ասելով. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: Եւ երիցս զայս ասելով՝ իջոյց ի խաչէն[44] եւ պատեաց եւ թաղեաց[45]: Իսկ առաքելոցն յաւուրս[46] ուրբաթի[46ա] եւ[47] չորեքշաբաթի նախ զայս[48] ասէին կցուրդիւ[49] եւ ապա Գիրս ընթերցեալ[50]՝ պատարագ մատուցանէին, բայց աւրէնս ոչ եդին, այլ ըստ աւուրց հանդիպմանց[51] փոխել, որպէս ի յարութեանն զՅարեաւն[52] ասել եւ յայլ[53] տնաւրինականն, ուստի յայտ է, թէ Որդւոյ ասի եւ ոչ Երրորդութեանն:

Եւ ի փոխիլն[54] Աստուածամաւրն եւ զկնի երից[55] աւուրց բացեալ[56] զգերեզմանն[57] ոչ գտին զմարմինն[58]: Ապա Հոգին[59] Սուրբ ազդեալ[60] զփոխիլն առաքելոցն՝ Թովմաս[61] առաքեալն ազաւթեաց. Փառաւորեալ միշտ սուրբ Կոյսդ[62] Աստուածածին Մարիամ, մատո՛ զաղաչանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ[63] մերոյ[64], զոր եւ այլ[65] առաքեալքն առեալ եդին զկնի աղաւթիցն Յովսէփայ[66], որ է Սուրբ Աստուածն: Եւ այսոքիք[67] կայ ի գիրս[68] Նեքտառեայ[69] Հռոմայեցւոյ, որ Կանոնաց լրմունք կոչին: Վասն յիշատակի Եկեղեցւոյ Քրիստոսի զայս բանս դրոշմէ եւ գրէ ի Գիրս զատկաց, զոր ընթերցեալ Յոհաննու[70] Ոսկեբերանի՝ կարգեաց յիւր[71] ժամանակի, զոր արգելուին Թէոփիլեանքն[72], թէ զՈրոգինին[73] խորհի[74], եւ առ ժամանակ ինչ դադարէին բանքն:

Եւ ապա Կիւրեղ ընդդէմ Նեստորի կարգեաց ի ժողովն Եփեսոսի, եւ ասացին ամենայնքն[75] Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ զՍուրբ[76] Աստուածն խաչեցարիւն հանդերձ, զոր բարձին ի ժողովն Քաղկեդիոնի՝ որպէս գրէ Պետրոս Անտիոքացին[77] զամենայն եղեալսն ի Հայս[78], գրէ եւ Կիւրղոս[79], գրէ եւ Տիմոթէոս բազում ինչ ի Հայս[80]: Զայսոսիկ լուեալ մերն Իսահակ հայրապետ[81] այնպէս[82] հաստատեաց ասել խաչեցար, թէպէտ[83] ի Լուսաւորչէն կարգեալ էր: Եւ յետոյ հարքն մեր վասն Նեստորի աղանդին ժողովեալ ի Դուին եւ ի Մանազկերտ եւ եդին սահման՝ Եթէ[84] ոք ոչ ասէ զխաչեցարն՝ յամենայն սրբոց զգովեալն, եղիցի նզովեալ, զի զերախտիսն Քրիստոսի յիշեմք եւ ոչ թշնամանեմք, զի հրեշտակք եւ առաքեալն[85] Պաւղոս նովաւ պարծին:

[ԻԴ] Իսկ վասն առաջաւորացն[1] պահոց այսպէս գտաք գրեալ. զի յորժամ գնաց[ին][2] Տրդատ եւ սուրբն Գրիգոր ի Հռոմ եւ միաբանութեան[3] դաշն[4] եդին, վասն զԼուսաւորիչն եւ զՏրդատ պատուելոյ զառաջաւոր[5] պահն[6] յիւրեանց[7] ամիսն եդին՝ պահեալ[8] ի Կոստանդիանոսի պահոցն տեղիս, եւ մեք զՍեղբեստրոս եւ զԿոստանդիանոս պատուեցաք եւ ի կատարումն[9] առաջաւորացն Տրդատայ եւ Կոստանդիանոսի[10]՝ տաւնէաք ընդ նոսա, եւ նոքա ընդ մեզ, զոր եբարձ Մարկիանոս ի ժողովն Քաղկեդոնի[11]: Եւ իբրեւ եբարձ զպահն[12]՝ խափանեցաւ եւ տաւնելն[13], իսկ մեք զմեր Լուսաւորչին զկարգեալն հաստատուն[14] պահեցաք:

[ԻԵ] Արդ[1], զի ի[2] բաժանմունսն են[3] որ ի սատանայէ[4] է, որպէս Մանքեցիքն[5] եւ այլքն[6] նմանք նոցա[7], եւ է որ[8] ի փառասիրութենէ[9], որպէս ժողովն Քաղկեդոնի, եւ է[10] յանկարութենէ, որպէս կարգաց Հայոց[11] Եկեղեցւոց, եւ յանձնիշխանութենէ, որպէս կարծելն յիւրաքանչիւր[12] յազգաց որք[13] լաւ լինել, եւ է[14] յանգիտութենէ եւ յանուսումնութենէ, որպէս [յ]իւրաքանչիւր յազգս[15] տեսանեմք արտաքոյ Գրոց վկայութեանն[16] հակառակիլ[17]: Եւ վասն այն[18] անհնարին[19] տեսանեմք զգալն ի միաբանութիւն, զի ամբարտաւանեալ ոչ հնազանդին միմեանց, եւ բարձան բարեպաշտ թագաւորքն Յունաց եւ Հռոմոց[20], զի նոքաւք լինէր տիեզերական ժողովն: Եւ զի չորք էին ազգ[ք] հիմն ժողովոյ՝ ըստ չորից աւետարանչացն[21]. Յոյնք եւ Հռոմք, Հայք եւ Ասորիք, զի չորից[22] ազգաց հայրապետք էին ի[23] մեծամեծ ժողովն ի Նիկիա եւ ի Բի[ւ]զանդիա[24] եւ յԵփեսոս: Եւ թէ իւրաքանչիւր ոք[25] զիւրն թողոյր զխոտելին եւ առնոյր զգովելին[26]՝ լինէր միաբանութիւն ազգաց[26ա]: Եւ թէ չորք[27] ազգդ[28] միաբանէին՝ ամենայն ազգ[ք] ընդ նոսա միաբանէին, զի Վիրք զՅունացն[29] ունին[30] եւ նոքա միաբանէին ընդ նոսա[31]: Եւ արդ այսպէս լինէր, թէ զգլխաւոր[32] իրսն[33] ուղղէին, մանրագունիցն չլինէր հակառակութիւն[34], եւ այս են գլխաւորքն. զժողովն Քաղկեդոնի նզովէին եւ զերից սուրբ ժողովոց[35] զաւանդեալսն[36] հաստատէին զհաւատս եւ զտաւնս[37], եւ զխմոր եւ զլուր խափանէին[38], եւ ամենեքեան Գրոց վկայութեամբ միմեանց հնազանդէին, զԱստուածն[39] ուրախ առնէին:

[ԻԶ] Այլ զի զթերին[1] ասացաք ամենայն[2] ազգաց, այժմ եւ[3]

զգովելին ասացից. Յոյնք իմաստունք են եւ ողորմածք, ուսեալք ի Յոհանէ[4] Ոսկեբերանէ, Հռոմք զգաստք[5] են աղաւթից եւ հնազանդք[6] առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնողք, Հայք պահողք են եւ ողորմած[7] դերելոց եւ եկեղեցականաց, սրբութեանց[8] սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից[9] մեծարողք եւ անբամբասք[10] առաջնորդաց[11]: Բայց մի՞թէ խափանի էր նախանձն[12] սատանայի, որ զչարն տեսանել տայ եւ բարին՝ ոչ[13], բայց կարծի[14], թէ[15] չտայ մեղք աշխարհին[15ա] զբարին[16] առնել: Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ[17] զթշնամութիւն[18] բառնէաք[19] ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չհայհոյէաք: Զի եւ[20] Աստուած կարող էր[21] զամենայն ազգ մի առնել, այլ բռնադատեաց[22] զմեզ եւ զամենայն ազգացն[23] ընկալաւ զպաշտաւնն[24] եւ զկարգ[25]՝ մինչ ի ժամանակ դատաստանին թոյլ տալով: Զի Ե ազգացդ[26] չտեսանեմք այնքան պատճառս[27], որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ[28] կամ զտաւն[29], եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն[30]: Այլ զԱրիանոսացն չընդունի[31] եւ ոչինչ ի կարգաց[32], զի արարած ասեն զՈրդի, նոյնպէս եւ[33] զհոգեմարտից եւ զԵւնոմիանոսաց[34], զՆեստորականաց եւ զԵւտիքիանոսաց[35] եւ զՆաւատիանոսաց եւ զսոցին նմանեաց:

Այլ թէ ասացեալ հինգ ազգացդ[36] ոչ կարեն միաբանիլ[37], բայց կարող են թշնամիք միմեանց[38] չլինել, զխաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ, բայց այնքան սատանայ էարկ[39] զատելութիւն[40], զի զխաչ[41] եւ զեկեղեցի միմեանց անարգեն եւ նախատեն[42], որով եւ[43] Քրիստոս հայհոյի: Զի որպէս հարկաւոր ընկալաւ Աստուած զբաժանումն լեզուացն[44], մի՞թէ եւ զայս ընկալաւ՝ զբաժանումն կրաւնից[45], զի ի[46] միմեանց նախանձով զբարին գործիցեն[47] եւ ոչ չար:

Արդ, բարիատեացն սատանայ զբարին խափանէ[48] եւ զչարն յորդորէ առնել. զի Յոյնք[49] եւ Վիրք այնքան բամբասողք են Հայոց, զի զեկեղեցի աւրհնեալ[50] քակեն եւ զսեղանն[51], յորոյ[52] վերայ պատարագեալ է Քրիստոս, արտաքս ձգեն եւ ասեն շուն զենուլ[53] յեկեղեցի[54] Հայոց եւ այնպէս զաւրհնութիւն հանել[55] զՀայոց[56]: Զայդ միայն Յուլիանոս արար ուրացողն Քրիստոսի՝ զմկրտութիւնն[57] իւր շան արեամբ կամեցաւ լուծանել:

[Իէ] եւ արդ՝ Յոյնք եւ Վիրք եւ Հայք[1] զմկրտութիւն միմեանց կամին լուծանել՝ կրկին մկրտելով զմիմեանս, զոր ընդդէմ կանոնաց գործեն. զի մի է Քրիստոս եւ մի մկրտութիւն[a]: Եւ յաղագս այնորիկ[2] հարկ է ցուցանել[3], թէ զո՞ր արժան է մկրտել յազգաց եւ զոր՝ ոչ, յորժամ գան ի կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատս[3ա] զո՞րս կնքաւորել կամ զո՞րս[4] սուրբ իւղովն աւծանել, կամ զորո՞ց[5] միայն աղաւթս առնել, կամ զիա՞րդ զՀրեայս[6] եւ զհեթանոսս մկրտել եւ լուսաւորել սուրբ աւազանաւն, կամ զզաւակ[7] քրիստոնէի զիա՞րդ[8] մկրտել: Զի որք կամիցին Աստուծոյ երկիւղիւն[9] զհետ լինել առանց ծուլութեան՝ զհաճոյսն Աստուծոյ կատարիցեն, ապա թէ ոք ծուլասցի եւ կամ արհամարհեսցէ[10] եւ թերակատար առնիցէ[11] յաստուածային կարգացն[12]՝ մեք զարծաթն արկցուք ի սեղանաւորս, իսկ տէրն եկեալ զիւրն պահանջէ[13] տոկոսիւք, եւ մեք անպարտ գտցուք:

Եւ արդ՝ այսպէս[13ա] պարտ է ընդունել զհերձուածողսն[14] յԵկեղեցի Աստուծոյ՝ զԱրիանոս[ս][15], զԿաթարոսս[16], զՄակեդոնիանոսս[17], զՍամբատիանոսս[18], զՆաւատիանոսս[19], զչորեքտասանեայս[20] եւ որք զչորրորդութիւն խոստովանին եւ զԱպաւղինարիոս[21]: Սոքա[22] ամենեքեան նզովեսցեն նախ[23] զհերձուածս[24], յորում[25] մոլորեալ էին, եւ ապա զամենայն հերձուածս, որ[26] հակառակ է ողջամիտ վարդապետութեանն Քրիստոսի Եկեղեցւոյ[27], եւ յետ այսորիկ ուսցին զճշմարիտ հաւատս Եկեղեցւոյ, եւ ապա կնքէ քահանայն[28] զճակատն եւ սիրտսն եւ զամենայն զգայարանս[29] սուրբ մեռոնաւն՝ որպէս թէ այժմ լուսաւորեալք եկին ի հաղորդութիւն[30] ի փրկական եւ ճշմարիտ արեանն[31] Քրիստոսի: Իսկ մկրտութեան վերստին չեն պէտք լուացումն[32] ջրոյն, այլեւ[33] արասցէ այսպէս. արժան է պահել աւուրս եԺ եւ պարապել[34] աղաւթից առաւաւտուն[35] եւ երեկոյին[36] եւ աշակերտել[37] զմերս եւ ապա կացուցանէ[38] զնոսա քահանայն[39] առաջի սուրբ աւազանին[40] եւ ասել տայ այսպէս. Նզովեալ (այս անուն) հերձուած, յորում մերն[41] էր եւ հաւանակիցք նորին[42] եւ խորհողք[43] զնորայսն, քանզի հրաժարիմք ի նմանէ եւ յամենայն հերձուածական[44] աղանդոյն[45] եւ հաւատամք ի մի[46] Տէր, ի[47] միանական Սուրբ[48] Երրորդութիւն[49] ըստ աւանդութեան սուրբ հարցն ուղիղ դաւանել զԲանն ճշմարտութեան: Եւ ասել տայ[50] զմի մի[51] զբան[52], եւ ասէ ցնա

a Եփես. Դ 5

քահանայն երիցս՝ Հաւատա՞ս[53] ի միանական Սուրբ Երրորդութիւնն, եւ նա պատասխանի տայ[54]՝ Հաւատամ: Իսկ թէ չգիտիցէ խաւիլ[55]՝ թարգման կալցի[56], եւ խոնարհեցուցանելով զնորադարձն, եւ ունի քահանայն զձեռն ի վերա[յ] գլխոյն եւ ասէ զաղաւթս զայս. Աստուա՛ծ, Փրկի՛չ մեր, որ կամիս զամենայն մարդկան զկեալ եւ ի գիտութիւն ճշմարտութեան[57] գալ[a], ընկա՛լ զծառայս Քո (զայս անուն), զհազիւ[58] կարացեալս մաքրել ի մոլորութենէ եւ ցանկացեալ գալ ի գիտութիւն Քոյոյ[59] ճշմարտութեանդ[60], քանզի Դու ասացեր՝ Նաեւ այլ եւս[61] ոչխարք են Իմ, որք[62] ոչ են յայսմ[63] գաւթէ, եւ զայն եւս պարտ է Ինձ ածել[64] այսր[65], եւ եղիցին մի հաւտ եւ մի Հովիւ[b]: Հովուեա՛ զսա[66] առ ի Քէն գիտութեամբ ճշմարտել զլաւն[67] ներգործութեամբ սրբոց Քոց եւ[68] փառաւորեալ առաքելոց Քոց[69] եւ արժանաւորեա՛ զսա[70] կնքոյ Քո աստուածային մեռոնիդ եւ Սրբոյ Հոգւոյդ[71] տնկարկութեանդ[72] եւ հաղորդութեան[73] պատուական մարմնոյ եւ արեան Քրիստոսի Քո եւ վերայայտեա՛[74] զսա կատարեալ ծառայ Քո, զի ընդ հաւտի[75] Քո զուգաթուեսցի[76] եւ սա[77]՝ ի փառս եւ ի գովութիւն[78] մեծութեան Քո[79], զի Քո է զաւրութիւն եւ փառք այժմ եւ յաւիտեանս[80] յաւիտենից, ամեն[81]:

Եւ որպէս[82] յառաջն ասացաւ[83], աւծանէ զնա որպէս նորակնիք[84] եւ դարձեալ աղաւթէ զայս. Տէր Աստուած մեր, որ արժանի արարեր վերայայտեալ[85] կատարել[86] ծառայի Քո (զայս անուն) ի ձեռն որ ի Քեզ[87] ուղղափառ հաւատով[88] եւ կնքոյ սուրբ մեռոնի, Դու, Տէ՛ր ամենայնի[89], զառ ի Քէն ճշմարիտ հաւատ ի սմա հաստատեա՛[90] եւ[91] զարդացո՛[92] զսա արդարութեամբ[93] եւ ամենայն շնորհաւք զարդարեա՛, քանզի աւրհնի եւ փառաւորի ամենապատիւ եւ մեծավայելուչ[94] անունդ Հաւր եւ Որդւոյ եւ Սրբոյ[95] Հոգւոյդ այժմ եւ միշտ[96] եւ յաւիտեանս յաւիտենից[97], ամէն:

Ապա հաղորդի ի մարմին եւ յարիւն Քրիստոսի[98]:

Իսկ Նեստորիանոսաց[99] եւ Եւտիքիանոսաց եւ այլ նոյնպիսի հերձուածողաց տալ ի[100] խոստովանութիւն եւ նզովել[101] զհերձուածն[102], յորում են եւ զամենայն հերձուածս, իսկ[103] աւծման չեն պէտք, բայց ասեն[104] աղաւթս այս ի վերայ[105]. Տէր Աստուած զաւրութեանց, Ա-

a Ա Տիմ. Բ 4

b Յովհ. Ժ 16

տուած ապաշխարողաց, որ զամենայն մարդիկ կամիս զի կեցցեն եւ ի[106] գիտութիւն ճշմարտութեան[107] եկեսցեն[108], որ զպատրեալս[109], ի մտախաբ վարդապետութենէ[110] դարձուցանես ի փրկութիւն, Դու, Տէ՛ր[111] ամենակալ, ընկա՛լ զծառայս[112], որ զերծաւ յորոգայթից սատանայի[113] եւ ընթացաւ ի սուրբ Եկեղեցի Քո, վասն որոյ պաղատիմք եւ աղաչեմք զՔեզ, արա՛ զսա[114] լինել ի համար ընդ[115] այնոսիկ[116], որ արեամբ Քո փրկեցան եւ պահեա՛ զսա ի մահաբեր նետից թշնամ[ւ]ոյն. զի մեռեալ էր եւ եկեաց[117], կորուսեալ էր եւ գտաւ[a]: Եւ արդ[118], տո՛ւր սմա անբիծ[119] եւ անարատ խոստովանել զՔեզ եւ ճշմարտութեամբ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյ[120] այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից[121]:

Իսկ զՍիմոնացիս եւ զմիւս Սիմոնացին եւ զկեղեդացին[122] եւ զԵնոմիանոսս[123], որք միոյ հակառակ երկու մկրտին, եւ զՄոնտանոսս եւ զԱրտեմոնացիս եւ զՍաբելացիս[124] եւ զՓռիւգացիս, որք զորդեհայրութիւն[125] ուսուցանեն եւ որք ի Պաւղոսէ Սամոստացւոյ[126] են խաբեալք, զՄանիքեցիս եւ զՄանիներեցիս[127], զՄարկիոնացիս, զՎաղենտիանոսս[128], զՊեպուզացիս[129], զՓիարտիանոսս[130], զՈնոտացիս[131], զԱպաւղինարոսս[132], զԿերինթիանոսս[133], զԵրդինացիսս[134], զՄենանդրացիսս[135] եւ որ այլ այսպիսի հերձուածող[136] իցէ, պարտ է իբրեւ զհեթանոսս եւ իբրեւ զՀրեայս[137] մկրտել[138]: Եւ թէ զի՞նչ են աղանդ[ք] նոցա[139] եւ որպէ՞ս ի դէպ[140] է մկրտել եւ յո՞ր աւուրս, զի մի լիցի երկարութիւն[141] ճառի՝ չառաք ի մէջ:

Արդ, այս սահմանք հայրապետացն է[142] առաջնոց, զոր շնորհաւք Սուրբ[143] Հոգւոյն[144] արարեալ[145] քննութիւն՝ այդպէս[146] կարգեցին: Արդ[147], զԱրիանոսաց եւ զՀոգեմարտից ցուցին եւ զսոցին[148] նմանեաց ոչ ի ջուր մկրտել[149], այլ խոստովանել զուղիղ[150] հաւատն եւ նզովել զհերձուածսն[151] եւ աւծանել[152] միայն եւ աղաւթել ի վերայ նոցա[153], իսկ զաղանդաւորսն[154] իբրեւ զհեթանոսս եւ զՀրեայս[155] մկրտել, զի բազումք ի նոցանէ անաստուածք[156] եւ դիւապաշտք եւ կախարդք են, զոր[ս] պարտ է ամենայնիւ մկրտելն[157]:

Իսկ զՆեստորիանոսս[158] եւ զԵւտիքիանոսս[159] ոչ մկրտել եւ ոչ աւծանել, այլ ուղիղ խոստովանել եւ աղաւթիւք սրբել:

Արդ բարձեալ են աղանդաւորք շնորհաւքն Քրիստոսի[160]՝ եւ

a Ղուկ. ԺԵ 32

Արիանոսքն եւ նոցին նմանիքն[161]:

[ԻԸ] Արդ, յայտ է, զի Յոյնք եւ Վիրք[1] եւ Հայք յոյժ մեղանչեն զմիմեանս մկրտելով եւ աւծանելով, զի Հայք ամբաստանեն[2] զՅոյնս եւ զՎիրս[3] վասն երկու բնութիւն[4] ասելոյն[5] անմիաւոր՝ զՆեստորին ունել, եւ նոքա զՀայս[6] բամբասեն զԵւտիքէին[7] ունել վասն մի բնութիւն[8] ասելոյն: Եւ ահա յայտ է[9] եւ գիտելի է, զի մի բնութիւն ասեմք՝ ոչ զմարդկութիւնն ուրանամք որպէս Եւտիքէս[10], այլ վասն անճառելի միութեանն[11] մի ասեմք, եւ նոքա[12] անգիտաբար գայթակղին: Այլ թէ նոցայն այսպէս[13] մեզ կարծի[14] զՆեստորին ունել, զի երկու բնութիւն է[15] ճշմարտիւ, բայց թէ յատկութիւն[16] տան՝ այլ ասել զմարդն եւ այլ[17] զԲանն եւ անագան գալ[18] յաստուածանալ[19] մարմնոյն, զայդ[20] անգիտութեամբ, զի այդ[21] Նեստորի է: Բայց առ ի քննել զՅոյնս այսպէս ծանեաք, եթէ յաղագս Եւտիքեայ[22] ասեն զյատկութիւնն[23] միշտ մարմնոյ[24] եւ վասն այդ[25] ի Նեստորին կարծի քարշիլ[26]: Սակայն ի ճշմարտիցն[26ա] ուսաք ի հարցն առաջնոց[27], թէ ծածկութեամբ[28] Նեստորի[29] է ժողովոյն Քաղկեդոնի խոստովանութիւնն, զոր ընդունին Յոյնք եւ Վիրք նոցա աշակերտեալք[30], զի եւ այդ ի ժողովն[31] Քաղկեդոնի ասացաւ, թէ յորմէ հետէ զՆեստորին եդիք[32] սահման՝ զՆեստոր ընդէ՞ր նզովէք[33], վասն այսորիկ[34] զվճիռ[35] հատանել ոչ կարեմք: Եւ թէպէտ ասացեալ[36] եղեւ զի ոչ ճշմարտութեամբ[37] զմահ խաչին խոստովանին, զդարձեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի արժան է մկրտել, զի առաքեալ ի մահն Տեառն ասէ մկրտիլ[a 38]: Զի թէ Աստուածութիւնն ոչ էր ի ժամ մահու[39] ընդ Նմա, եւ մարդ մեռաւ՝ ոչ փրկեցաք ի մահուանէ, զի մարդ փրկել ոչ կարէ:

Եւ արդ, թէպէտ եւ[40] Յոյնք եւ Վիրք[41] եւ Հայք[42] այնպէս էին, որպէս[43] կարծին միմեանց՝ ոչ է հրաման մկրտել, որպէս ցուցաք:

[ԻԹ] Արդ, չիք ինչ պատճառ մկրտելոյ զմիմեանս, քան զանգիտութիւն եւ զամբարտաւանութիւն[1], եւ որք յանդգնին զայդ առնել՝ ցուցցեն, թէ զո՞ր Քրիստոս թողուն եւ կամ զո՞րն[2] խոստովանին[3]: Եւ[4] ահա ցուցին հարքն, զի ոչ զՆեստորիանոս[5] եւ ոչ զԵւտիքիանոս[6]

a Հմմտ. Ա Կոր. ԺԵ 29:

արժան է մկրտել եւ կամ[7] աւծանել, այլ միայն խոստովանութեամբ եւ աղօթիւք սրբել: Նաեւ[8] Եւսեբիոս[9] ցուցանէ[10] վասն այդոցիկ եւ պատահմունք, որք ընկալան զժողովն Քաղկեդոնի եւ զզՋացան, թէ որպէս հարքն առաջին[11] ուղղափառք[12] ապաշխարութեամբ ի նոյն կարգ հաստատեցին, որպէս արար Պետրոս ծանրախաւան[13] զԱկակ զԲիւզանդիոյ[14] զհայրապետն՝ յորժամ դարձաւ յաղանդէ ժողովոյն[15] Քաղկեդոնի:

Արդ, յայտնի է, թէ[16] որք ի Հայոց ի Ցոյնս կամ ի Վիրս[17] դառնան՝ վասն փառաց աշխարհի է[18] եւ վասն[19] հեշտութեան մարմնոյն, թողեալ զփառս[20] Աստուծոյ՝ զաշխարհի եւ զմարդկան առնուն, որպէս ասաց Տէրն[a] [21]: Դատին այնպիսիքն իբր[22] զուրացող ճշմարտութեան[23]:

Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ[24] ոչ տեսանեմք, բայց եթէ[25] զմիմեանս[26] հաւանիլն եւ կալ[27] յիւրաքանչիւր կարգի ամենայն ազգաց[28] մինչ այց առնէ Աստուած եւ յարուցանէ թագաւոր[29] ազգաց, որ կարող լինի տիեզերական ժողով առնել:

Այլ արդ տեսանեմք, զի Հայք եւ Ցոյնք եւ Վիրք[30], Ասորիք եւ Հոռոմք[31] ճշմարիտ Սուրբ[32] զԵրրորդութիւնն[33] խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ[34] Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի[35] տնաւրէնութիւնն[36] այլայլին[37], եւ զՄարիամ՝ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զխաչն[38]՝ Աստուծոյ խաչ. առ Հայս[39] այդ առաւել ճշմարիտ[40] է: Այլ ինչ սակաւ բաժանումն տանի[41] կամ պահոց, կամ կերակրոց՝ չէ հաւատոյ բաժանումն: Հայք ճշմարիտ խոստովանողք[42] են Քրիստոսի տնաւրէնութեանն եւ Քրիստոսի Աստուածութեանն եւ Ամենասուրբ Երրորդութեանն[43], եւ Աստուածածնին, եւ խաչի[44], եւ Եկեղեցւոյ եւ նզովեն զԵւտիքէ[45], որ առ աչաւք ասաց զՔրիստոսի տնաւրէնութիւնն, եւ զամենայն հերձուածողն[46], եւ զոր ուսեալ են ի սրբոյն Գրիգորէ[47] շնորհաւքն Քրիստոսի[48]՝ զայն ճշմարտութեամբ ունին: Այլ զոր զրպարտեն, թէ ի Դուինայ[49] ժողովոյն հրաժարեցան ի սրբոյն Գրիգորի դաւանութենէն՝ ոչ հրաժարեցան[50], այլ կանոնեցին ոչ պատրիլ[51] ի խուժկաց Նեստորականաց: Նոյնպէս եւ յայլ ժողովսն[52], զոր արարեալ[53] են, ոչ են պակասեցուցեալ, այլ հաստատեալ:

a Ցովհ. Ե 44

[Լ] Այլ զխոստովանութիւն[1] Հայոց ընդ ամենայն ուղղափառ ազգաց գտաք, բայց զի մի կարծիցէք[2] ակնառութեամբ[3] ասել՝ զխոտելին եւս ասացից. ամենայն ազգ[ք] ի ձեռնադրելն չառնուն[4] ինչ, բայց յետ ձեռնադրութեանն տան եւ առնուն, այլ հայրապետք Հայոց ժամանակիս, եւ ոչ անցելոց[5] ժամանակաց, յառաջ առնուն եւ ապա ձեռնադրեն՝ պատճառելով զհարկ այլազգեաց: Եւ այդ չէ հաճոյ Աստուծոյ եւ ոչ ի կանոնաց, այլ այդ յաղքատութենէ ազգիս եմուտ:

Եւ վասն զպահսն չլուծանելոյ զյիշատակ սրբոց վկայիցն[6] ոչ տաւնեն, եւ կարծեաւք[7] բարւոյ[8]՝ չար է, զի ամենայն սուրբք տաւնելի[9] են պահոց եւ յաւուրս յարութեան, որպէս ի Նաւակատեաց ճառին յիշէ Աստուածաբան[9ա] զտաւն Մամասայ վկային[10] եւ վասն Աքանչելագործին գրեալ է Գրիգորի[11], եւ յիշէ Եփրեմ[12] յիւր կանոնն, թէ ի չորեքշաբթու եւ յուրբաթու ոչ տաւնէր[13], բայց ի յարութեան աւուրսն[14] տաւնէր սրբոց[15]: Զերկուցն տեսանեմք խոտան՝ զՀայոց չտաւնելն եւ զՎրաց[16] ի պատճառս տաւնին լուծանել զպահսն:

Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայր[17]՝ գովելի[18] է, թէպէտ եւ ոչ է[18ա] կանոնական, եւ զի՞ բամբասեն զՀայս[19], թէ զազգականն[20] առնեն կնքահայր. ահա Աստուածաբանն[21] Գրիգոր իւր հաւրն հոգեւոր հայր եղեւ: Եւ[22] քահանայք հոգեւոր հարք[23] են աշխարհի[24] եւ խնամութիւն առնեն նոցա, պարտ է զգուշանալ ըստ արժանւոյն[25]:

Առաջնորդաց անհնազանդք[26] են Հայք, բայց սրբութիւն կրաւնաւորաց[27] առաւել գտանի եւ արժանաւոր պատարագ, քան յայլ[28] ազգ: Այլ թէ իմաստուն էաք[29]՝ զայսպիսի ընտրութիւնս[30] ի Քրիստոս թողեալ՝ բարի գործոց պարապէաք, որպէս ասաց Ինքն[31] Տէր՝ Ոչ ամենայն[32] որ ասէ ցիս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն[33] երկնից[34], այլ որ արասցէ զկամս Հաւր Իմոյ, որ յերկինս է[a]: Եւ յաւր յարութեան մերոյ[35] չասէ[36]. Եկայք այս անուն ազգ[37], այլ զբարեգործսն[38] կոչէ եւ աւրհնէ[39] յամենայն[40] ազգաց, եւ զայն զիա՞րդ ստեմք[41]: Եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ բազմեսցին[42] ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակոբայ[b] [43]: Մի՞թէ յամենայն[44] աշխարհ Հայ միայն է[45] կամ Վրացի եւ[46] կամ Հոռոմ[47]: Քրիստոս չէ նախան-

a Մատթ. Է 21

b Մատթ. Ը 11

ձոտ. նա[48] զամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուրկանի[49] նմանեցոյց, յոր[50] ամենայն[51] ազգ ձկանց ըմբռին[a] 52: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՋհուտն[53] լաւ ասէ քան զՀայն. այնպիսի ասացողքն չունին թողութիւն ոչ աստ եւ ոչ ի հանդերձելումն[54]՝ թէ ոչ ապաշխարին[55]՝ թէ Վրացւոյ[56] ասէ զի[60] ամենայն քրիստոնեայք եղբարք են, եւ Քրիստոս հրամայեաց[61]՝ Որ ասէ ցեղբայր[62] իւր մորոս՝ պարտաւոր լիցի գեհենի հրոյն[b] 63:

[Ամփոփումն]

Ահա[1] այդ չափաւոր[2] գրեցաւ եւ ընտրութեամբ եւ գրոց վկայութեամբ[3] զի մի՛ տաղտկալի լիցի յերկարութեամբ: Եւ արդ, թէպէտ եւ[4] բարեպաշտ[5] թագաւորքդ[6] մեր չեն բաւական՝ Թամար[7] եւ Դաւիթ[8], տիեզերական[9] ժողով առնել[10] ամենայն ազգաց վասն հեռաւորութեան Յունաց եւ Հռոմայեցւոց[11] եւ այլոց ազգաց, այլ Աստուծոյ շնորհաւքն[12] կարող են զՀայոց եւ զՎրաց թշնամութիւնն[13] բառնալ, որ զՔրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է ատելութիւն եւ թշնամութիւն[14], որ զխաչ եւ զխատ[15] եւ զեկեղեցի միմեանց հայհոյեն եւ նախատեն[16]:

Եւ որպէս ցուցաք յառաջագոյն[17], այն էր Աստուծոյ հաճոյ եւ Քրիստոսի կամք[18], զի ամենայն ազգ քրիստոնէից[19] միակրաւն[20] էին լեալ[21], բայց չէ հնար, որպէս գրեցաք, այլ զկարելին չէ արժանի[22] խափանել: Զի դուք իշխանք[23] էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ[24] արքայական իշխանութեամբ ասատ դնեն, որ[25] զեկեղեցի Հայոց[26] չքակեն եւ զխաչ չայրեն[27] եւ այսմ ժամանակեայ[28] իշխանութեամբս[29] զյաւիտենական[30] թագաւորութիւնն[31] առնուն ընդ[32] բարեպաշտ թագաւորացն՝ ընդ[33] Կոստանդիանոսի[34], Թէոդոսի[35] եւ[36] Տրդատայ եւ ընդ նախնի թագաւորացն ինքեանց[37] աստուածասիրացն[38] Բագրատունեաց եւ պակիցին[39] ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, եւ հաստատուն ունիցին[40] զթագաւորութիւնն ինքեանց[41] բարի շառաւեղեաւն եւ[42] գեղեցիկ աթոռակալաւն[43]՝ խաղաղական կեանաւք եւ յաղթութեամբ[44] պատերազմաց եւ բարեպաշտութեամբ[45] կեալ յաշխարհի հանդերձ քրիստոսասէր իշխանաւքդ[46] եւ իրաւամբք[47] դատաստանի եւ առողջութեամբ հոգւոյ եւ մարմնոյ[48], բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ եւ ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ. զի եւ մեք[49] վայելեցուք ի կեանս դոցա եւ անթառամ եւ նորատունկ գաւազանի[50] ի կեանս[51] նորա ուրախացեալք եւ պայծառացեալք[52] Քրիստոսի երկրպագութեամբ[53], որ է աւրհնեալ եւ փառաւորեալ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ[54] այժմ եւ միշտ եւ[55] յաւիտեանս յաւիտենից[56], ամէն[57]:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

*Խորագիր. Ա-ն չունի, «Թուղթ (թուխտ Բ, ի թխտոյն Ե) Մխիթար վարդապետին (վարդապետի Ե), որ Գոշն կոչիւր» ԲԳԵ, «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Թամար եւ առ այլ մեծամեծ դէդէփալքս (sic) եւ առ կաթողիկոսն եւ այլ առաջնորդք եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանս եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ սպասալարն Զաքարէ եւ Իւանէ աթաբակն հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ լայն թուղթ պատասխանւոյ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհալոյս վարդապետն Մխիթար, եւ մականուն Գօշ կոչեցաւ, ի Գետիկ» Դ:

1 + սակաւ Դ 2 թշնամութիւն Ա 3 վարին... Ցունաց] ընդ մեզ վարին քան զՑոյնս, աշակերտելով նոցայ ԱԲԳ 4 են Ա 5 աստուածասէրք Դ 6 բարեպաշտք Դ 7 ի բարեզարդ (բարէզարդ Ա) ծնողաց] Դ 8 բանին] Գ 9 Վրաց] Դ 10 լինէի] Դ 11 յոգի ԱԲ 12 զի] Դ 13 ձեզ թուելով Դ 14 առ] Դ 15 այսորիկ Գ 16 ի] Ա 17 + ձեր Բ, միտ ձեր Գ 18 թէ] որ Ա 19 արասցուք, եթէ Դ 20 մկրտել] ԱԴ 21 այն ԱԲԳ 22 թխտի Բ 23 վերադարձելոցն Ա 24 ժողովու Ա 25 եւ որ ԱԴ 26 զպատրեալսն Դ 27 զՀայք Դ 28 մկրտեն] Գ 29 Հայք Դ 30 միանգամայն Ա 31 զինչ] Դ 32 եթէ Դ 33 թարգմանել ԱԲԳ 34 ընթեռնուք Դ 35 եթէ Դ 36 զկարծիքն Դ 37 գայթակղելի ԱԲԳ 38 փոշի Ա 39 ձեր ԱԴ 40 այնոցիկ ԱԲ 41 եւ] ԱԲԳ 42 թղթոր Ա, թուխտոյ Բ, գրեցաք զսակաւ թուղթ Դ 43 զսաստկաց ԲԳ 44 հայհոյութեան] Դ 45 բանիւք Դ 46 թէպետ Ա, թէեւ Դ 47 լինել] Դ

[Ա] 1 աւրինակս ԱԴ 2 քրիստոսապսակեալ Դ 3 + եւ Դ 4 եկեղեցական կարգաց] եկեղեցականաց Դ 5 Աստուծոյ] նորա Ա,Դ 6 գծողացս ԲԳ 7 գծողս այսմ մատենի] Դ 8 ծանուցանեմք ԲԳ 9 միտ] մէջ Դ 10 + ի նախա-

a Մատթ. ԺԳ 47

b Մատթ. Ե 22

տութիւնս ազգաց Դ 11 զթուխտդ Բ 12 հակառելով Ա 13 եւ վասն այն... յազգաց] Դ 14 զարժան Ա 15 զիրաւունս ԱԴ 16 իբրեւ Դ 17 ժամանակին ԲԳ 18 խոստովանութիւն ԱԳԴ 19 զմերոց ազգացս ԲԳ զմերոցս ազգաց] զհարցն 20 իրն Ա 21 չթագուցաք ԲԳԴ 22 զմեր ԱԲԳ 23 ազգիս ԱԲԳ 24 ամբարտաւանութիւն Ա 25 մեր] ԲԳ 26 չտայ զայդ Դ 27 լաւ] շատ Դ 28 չանարգենք Բ 29 եւ Աստուծոյ] ԱԲԳ 30 գրեմ] գրել են Ա, գրեալ ենք ԲԳ 31 թղթիւտ Ա, թխթիդ Բ 32 Հայոց] հաւատոց Բ 33 խոստովանութեան Դ 34 այսպէս ԳԴ 35 եւ դատիմ ի տեառնէ] եւ թող դատէ զիս Աստուած Դ 36 Հայոց] Դ 37 գրել ԱԲ 38 եւ] ու Դ 39 կայք եւ] դուք Դ 40 գայթագղեցանել էք Ա, գայթակղեցանել էք Բ, գայթակղեցնել էք Գ, գայթակղեցուցանել էք Դ 41 ասելով] ԱԲԳ 41ա Տաջիկն ԱԲԳԴ 42 ջահուտն Ա 43 զՀայն] զնոսա Դ 44 էք] ենք Բ. էնք Գ 45 գրել ենք ԱԲԳԴ 46 թղթիտ Ա, թխտիդ Բ 47 զինչ գրեալ ... զպատճառն] Դ 48 լսող Ա, լսօղք ԲԳ 49 Մի ... լսողք լինիք] մի լինիք լսող Դ 50 թշնամեացն ԲԳ 51 ոչ կայ Դ 52 ունի Դ 53 եկամուտ տեսանեմք] կան եւ տեսանենք ԱԲԳ 54 այնոց] Հայոց ԱԲԳ 55 կա ԱԲ 56 գրել ենք Ա 57 կամ] ԱԴ 58 թղթիտ Ա, թխտիդ Բ 59 ոչ մկրտէին] չմկրտէին ԱԲԳ 60 զոր Գ 61 առնեն] ունի Դ 62 մկրտեն Ա 63 տա Բ 64 կամ] Դ 65 խոստովանել Դ 66 եւ] Գ 67 գայթագղութիւն Ա 68 շինութիւն Ա 69 լինիք Դ 70 ասելով Դ 71 աճա ԱԲԳ 72 եւ] Դ 73 աւրհնել Ա 74 յաւիտեան] ԲԳ եւ ընդունիցիք ... յաւիտեան] Դ 75 պատճառդ ԱԴ 76 ի բանս թղթիդ] իմաստութեան եւ Դ 77 թագաւորի Դ 78 նոքա] դոքա ԱԲԳ 79 նախանձաւոր են ԱԲ, նախանձաւորք են Գ, նախանձորդ են Դ 80 ի] Դ 81 գիտեմ Դ 82 թէեւ ոչ է] թէ եւս չէ Բ 83 զհայհոյութիւնն Ա, զհայհոյութիւն Դ 84 խափանելոյ Դ 85 յոյժ] այժմ Դ 86 է] Ա, հաճոյ է Դ 87 սրբոցն Դ 88 նորա ԲԳԴ 89 սկսցուք ԱԲԳ 90 թխտոյս Բ, թղթոյս Գ

[Բ] 1 պատահման ԱԲԳ 2 ժամանց Ա, ժամանակաց] Դ 3 կատարել Ա 4 զանգել ԲԳ 5 զանկեալն առնու զհասկ Դ 6 կամ] ԱԲԳ 7 այգոչ Բ, այգոչ Գ, յայգուոջ զճիո Դ 8 նախ զայս ԲԳ 9 է] Գ 10 է] ԲԳԴ 11 բաժանելն Դ 12 որպէս] այսպէս ԲԳ 13 կտակարունքս Բ 14 բազում Ա 15 անդի ԱԲԳ 16 + եւ Դ 17 բարոյ ԱԲ, բարւոյ Գ 18 սերման սիրոյն Դ 19 նա ԱԲԳԴ 20 այսորիկ ԳԴ 21 սկիսքն Ա 22 զցրուել Ա, զցրուեալսն Դ 23 ժողովէ Ա 24 զմայր Ա 25 ամենայն] ԱԲԳ 26 ուղղութեանցն ԲԳ 27 եւ] Ա 28 մարգարէիցն ԱԴ 29 մարգարէս Դ 30 նոյնպէս եւ] նմանապէս ԱԲԳ 31 հայրապետացն ԱԴ. հայրապետաց] վարդապետացն եւ հայրապետացն ԲԳ 32 բարոյ ԱԲԳ 33 ի] ԱԴ 34 եւ] Դ 35 առ] ԱԲԳ 36 աստուածանալ Ա 37 զորն Գ 38 այժմ եւ այնպէս Գ 39 ամբարտաւանութեամբ Ա 40 միմեանց] Դ 41 Աստուած] Դ 42 հայր] Դ 43 ձեւանալն գիտեն Ա 44 սակաւն Դ 45 եան Ա 46 յիմաստանոց ԱԲԳ 47 յինքեան ԲԳ 48 երրորդ Բ 49 լուել Ա, լուաւ ԲԴ 50 + եւ այլն ԲԳ 51 ասացել Ա 52 արժան Ա 53 գիտեն ... զբաղեալ] գիտէ նորից նորս աշխարհի զբաղեալ ԲԳ, որ զբաղեալ են ի ցնորս աշխարհէ Դ 54 պաշտաւնայք Ա

55 միայն պարապեալք ուտելոյ, ըմպելոյ Ա 55ա որ զկարի ԲԳ 56 վնասուն ԲԳ 57 ուղեղն Ա, ուղիղն ԲԳ 58 ճանարհ Ա 59 մոլորեցուցանել ԲԳԴ 60 + եւ Դ 61 ժողովին Ա, ժողովոյն ԲԳ, ժողով Դ 62 հաւատս Գ 63 ուղեղս ԱԲ

[Գ] 1 առաջին ԲԳ 2 ժողեալ Ա 3 Մակար ԲԳ 4 ի] Ա 5 ի] ԱԴ 6 որ] զի ԱԲԳ 7 Բիզանդիա Ա, Բուզանդիա Գ 8 եր Ա, + նա Բ 9 գումարեալ Բ 10 ժողովին Ա 11 Աղէկսանդրի Ա, Աղէքսանդրի Դ 12 Մելիտոս Անտիոքու ԲԴ 13 Նիւսեալ Դ 14 Աստուածութեանն Դ 15 որք] Ա 16 հերձուածողսն Ա 17 Թէոդոսու ԱԲԳ 18 աղանդոյն ԲԳ 19 Անդիոքացո Ա 20 էր] ԱԴ 21 Բիզանդիայ ԱԲ, Բուզանդիա Գ 22 + էր Դ 23 զխոտորել վարդապետութիւն Ա 24 զՊաւղոսի Սամաստացւոյ ԱԲ 25 էաո Ա, առ ԲԳԴ 26 Մամուեստացի] Տարսոնացի ԱԲ, + եւ ի նմանէ Թէոդորոս Մամեստացի ԱԲԴ, Դիոդորոս Գ 27 ծնեալ Գ, ծնեալի Դ 28 Աղեքսանդի Ա, Աղէքսանդրացի Գ 29 եպիսկոպոսի Դ 30 ի բաց] առ նա ԲԳԴ 31 միաբանել Ա 32 ի] ԱԴ 33 եկեղեցւոյ Գ, եկեղեցին Դ 34 առնէր ԱԲԴ, + եկեղեցի Բ, եկեղեցին Դ 35 հրամաէ Ա 36 ժողով լինել] ժողովել Ա 37 ՄԼ] Մ Ա, ՄԼ] ամենայն Դ, եպիսկոպոսք] եպիսկոպոս Ա 38 Աղէկսանդրիայ Ա, Աղեքսանդրի ԲԳ 39 Մեմնոն Դ 40 եփեսացոց Ա 41 Հռովմայ ԱԲԴ, Կելեստիանոս ի Հռոմայ Գ 42 նզովել Ա 43 զնա] ԱԴ 44 զկնի] իսկ զկնի ԲԳԴ 45 Բուզանդիա Ա, Բիւզանդիա ԲԴ, Բուզանդիոյ Գ 46 Պրոկղիոս 47 Փլաբիանոսի 48 մոլորութիւն Գ 49 Եւտիքէ Ա 50 առագրեաց Դ 51 Փլիբանոսի Ա 52 ոչ] որ Գ 53 ճշմարտութեամբ ԱԴ 54 նմանութիւն ԲԳ, նմանութեամբ Դ 55 հրամաէ Ա, հրամայէր ԲԳԴ 56 դարձեալ ժողով լինել] դարձել Ա 57 ՄԼ] Լ Դ 58 Աղէքսանդրացի Դ 59 ճշմարտութեամբ ԱԳԴ 60 աղանդ ԱԲԳ 61 բնութիւն ԱԴ 62 Փլաբիանոսի ԱԲԳ 63 սատակեալ լինի] սատակել լինի Ա, լինի] ԲԳ 64 բանին եւ մարմնոյն ԲԳ 65 միութեան Դ 66 եղիցի Դ 67 զերկանչիւրսն Բ 68 աղանդ ԱԲԳ 69 մայրաքաղաքն Բ. մայր քաղաքն Գ 70 քենախնդիր Դ 71 համախոհից Բ, համախոհակից Գ 72 զի] զոր ԲԳ 73 շարժէր Դ 74 + ի Դ 75 յորդորէ Դ 76 աղանդակցացն ԱԲԳ 77 ի վերայ նորա] Ա 78 ՈԼՋ] զՇԼՋ Բ 79 առնէ] արասցէ Դ 80 արար Դ 81 Հռոմայ Ա, Հռովմայ Դ 82 եկն] երեկ Դ 83 այլ] ԱԴ 84 զԴԺ-աներորդ] զԴԺ երրորդ Ա, զչորեքտասաներորդաց Գ, զերեքտասաներորդաց Դ 85 զյառաջագոյն ԲԳԴ 86 զգրեալսն ԲԴ, գրեալսն Գ 87 հաւանեցին Գ 88 ի Քաղկեդոնիա] Քաղկեդոնեայ Ա, Քաղկեդոնիայ Բ, Քաղկեդոնիայ ԳԴ 89 էր խոտեալ ԱԲԳ 90 յերկրորդ ժողովոյն ... Դիոսկորոս] ԱԲԳ 91 դնեալ Ա 92 ժողովն ԱԲԳ 93 այս է ճգնութեան ձերոյ ժամանակ Գ 94 զհաստատունն ԲԳ 95 զաւանդութեան Ա 96 իշխանութեան Ա 97 եղեալ սահմանքն] եղեալքն Դ 98 Բիւզանդիայ ԱԲԴ, Բուզանդիա Գ 99 պահեստ Գ 100 իշխանք հանդերձ ԲԳ 101 գումարեալ Դ 102 եղիցին պատուհասեալք] պատուհասեսցին Դ 103 ի պատժոցն զերծանել Ա 104 եպիսկոպոսն] Հայրապետն Դ 105 հրամաեաց Ա 106 Ասկղեպիադայ Դ 107 սարկաւագին Ա 108 Կոստանդինուպալսի Ա 109 հաւատոյ] հաւանեալ Դ 110 ի նմա] ԱԴ 111 զմին ԱԴ 112 երկեղի ԱԴ 113 հաւանել ԱԴ

114 այսու Դ 115 գլխոյ Դ 116 գլխոյն ԲԳ 117 + Այսոցիկ Ա, + թէ այսոցիկ Դ 118 հաւանիմք] հաւատամք Դ 119 Սամաստացոյ Ա, Սամոստացոյ Բ 120 հայհոյութիւն ԱԴ 121 ասէ Դ 122 յերկեղէ ԱԴ 123 կնոջն Ա 124 հաւանեալ ԲԳ, հաւանել Դ 125 պեղծ Ա 126 թխտոյն ԲԳ 127 եւ] ԱԲԳ 128 իւրեանց Դ 129 նզովիւքն ԱԲԳ 130 եւ] ԱԲԳ 131 Դիոդորիտոս Բ, Դիոտորիտոս Գ 132 զաշակերտսն Ա 133 զեղեսացի ԲԳ 134 զորմէ ասի ... Նեստորի] Ա 135 մոլութեանն ԲԳ, մոլորութեանն Դ 136 հաւասար է ԱԲԳ 137 Թէոդորիտոսի Դ 138 Թեւդորի Դ 139 հայհոյութեանց Դ 140 սակաւուց] սակաւ աւուրց Ա 141 ամենայնքս Գ, ամենեքեանն] Դ 142 աստուածութեան Դ 143 մարդկութեան Դ 144 կուսէն Դ 145 + ոչ ինչ բառնալով զատկութիւնսն իւրաքանչիւր բնութեանցն եւ Ա 146 անբարշտութիւն Դ 147 բազում Ա 148 գըլխաւորաց] պաշտօնաւորաց Դ 149 որ Դ 150 նզովեցին զՆեստոր ԲԳ 151 առաջի] Դ 152 + ի Դ 153 պատմութիւն ԱԲԳ 154 սուրբն Բ, սուրբքն] Գ 155 հաւատք Դ 156 սաստեաց] Դ 157 նոցայ ԱԴ 158 այսպէս] որպէս Գ 159 իսկ] Ա 160 զկեղծաւորութիւն Գ 161 ամեցուն Ա 162 նոյն Ա 163 ժողովէին ԲԳ 164 ասէ Դ 165 լինի Ա, եղիցի Դ 166 լուծաւ ԱԲԳԴ 167 պատուոյն Դ 168 ի] ԲԳ 169 յերկիւղէ ԱԲԳ 170 ձեռնարկաւ] ձերկեղէն Դ 171 եւ որ ձեռնարկաւ ուրացեալք] ձեռնարկաւորացեալք Ա, որք] որ ԱԲԳ 172 զաշակերտս Դ 173 որ Դ 174 եւ] Ա 175 Անդիոքացին Ա 176 եւ] Դ 177 զԱնատոլիոս Ա, զԱնատոլիս Գ 178 եղբայրն Դ 179 զԱղեկսանդրի Ա, զԱղէքսանդրի ԲԳ 180 Կիղիկոն 181 բարի վկայութեամբ եւ խոստովանութեամբ ի Քրիստոս Ա

[Դ] 1 Մարկիանոսի] Դ 2 Ղեւոնի Ա 3 զամս Դ 4 եւ] Դ 5 ասացելոյ] ցուցանելոյ Դ 6 թագաւորն ԱԴ 7 Ցունաց] ԲԳ 8 յաւուր Գ 9 ժողովն Դ 10 թագաւորեալն ԱԲԳ 11 կամեցաւ] Դ 12 ընթերցուածք Դ 13 + կամեցաւ Դ 14 զտեառնընդառաջի Դ 15 մկրտութեան ԲԳ 16 առնել միասին Դ 17 + աղմ Դ 18 կարացաւն Ա, կարաց առնել ԲԳ 19 աղանդին Դ 20 ժողովոյն] Դ 21 նշաւք Ա 22 երկրորդ Դ 23 ժողովն Բ 24 քանզի] եւ Ա 25 Սինիականն Ա, Սիւնականն ԲԳ 26 Էփրիմէ Ա, Եւփիմիայի Դ 27 հաստատեաց] առաքեաց Դ 28 Մարկիոն Դ 29 զժողովն առաքեաց] Դ 30 Քաղկեդոնի] ԱԲԳ 31 ծանեւ Ա 32 վառեալ ԱԲԳ 33 հրամաեր Ա 34 հրամայէր ձգել ի հուրն] ետ ընկենուլ ի հուրն Դ 35 նզովել Ա 36 զտապանսն Ա 37 քղամիթն Ա 38 հարցանէ Դ 39 հանել] ելանել ԱԲԳ 40 աւաղէր] ասէր ԱԴ 41 յԱղէքսանդր ԲԳ, Աղեքսանդր Գ 42 նմա Դ 43 Քաղկեդոն ԱԴ 44 Պարսամու] սուրբն Պարսամ Դ 45 եւս] եւ 46 պատճառ չարի Դ 47 թէպէտ եւ ԲԳ 48 ի] Ա 49 ժամանակաց Դ

[Ե] 1 Հայք ԱԲԳԴ 1ա առաջի Ա 2 ամ Բ 3 կաթողիկոսութեանն Ա 4 եւ] Ա 5 թագաւորութիւնն Բ 6 Ռստակես Ա, Ռըստակէս ԲԳ 7 Նիկիա ԱԲ, Նիկիայի Գ 8 ի ժողովոյն եւ Բ 9 ԺԱ գլուխ Դ 10 տէրն Ա 11 + աշակերտաւ

իւրով Դ 12 Մեսրոբաւ Ա 13 Պրոկլէ ԲԳ 14 Մ] ԲԽ-ին 15-քն] ԱԴ 16 ժողովեալք Բ 17 բարձուն Ա, բարձունսն Դ 18 Նիկիա ԱԴ 19 ի Բիզանդիայ ԲԳ 20 յաւելին] կարգեցին ԲԳ 21 ամին Դ 22 Բարգէն Ա, Բաբկէն ԲԳ 23 Կաւատկայ Ա 24 որ Դ 25 ասելով Դ 26 ի] ԲԳ 27 թուականութեան Ա, թուականութեանն ԲԳ 28 տեառն Ներսէսի Բ 29 ի] Ա 30 կաթողիկոսութեանն ԱԲԳ 31 իւրոյ Դ 32 Յուստիանոս Բ 33 միաւորութիւնն ԲԳ, զմիաւորութիւնն Դ 34 երկու Դ 35 սրբեցին] կարգեցին Դ 35ա սրբասացութեամբ ԱԲԳԴ 36 բաժանմանց նոցա ԲԳԴ 37 առ] ԲԳ 38 թագաւորութեամբն ԲԳ 39 Կարնո Ա 40 հաւանեալ Դ 41 խոստովանութեանց Դ 42 զեզրի ԲԳ 43 Դունա Ա, Դվնա ԲԳ 44 ծննդեանն ԲԳԴ 45 կաթողիկոսի Դ 46 ի] Ա 47 Դունա Ա, Դվնա Գ 48 Ներսէսի ԲԳԴ 49 հայրապետք Դ 50 սրբին Ա 51 եւ] ԲԳԴ 52 ժողովն ԳԴ 53 Յովհաննէս Ա, Յոհաննէս ԲԳ 54 միաբանէ Ա 55 Հաոց Ա 56 Քրիստայփոր Ա 57 ժողոյն Ա, սուրբ ժողովին Գ 58 Դվնա ԲԳ 59 յեզր ԲԳ 60 կաթողիկոսք ԱԲԴ 61 մինչեւ ցեղիա կաթուղիկոսք Զ Դ 62 որ էր] Եզր, Ներսէս, Անաստաս, Իսրայել, Սահակ, Եղիա: Այս Զ կաթողիկոսք երկաբնակ են Դ 63 Եղիայի Ա 64 Յուձնայ] ԱԲԳ 65 զոր ԱԲԳ 65ա + Է-երորդ Դ 66 Հարքնայ Ա, Հարքնա ԲԳ 67 ի] Ա 68 հաւատսն ԱԲԳ 69 գլխաւորք Դ 69ա Հայք ԱԲԳԴ 70 են] եղեն 71 որ] զի ԱԲԳ

[Զ] 1 եւ ոչ միայն ... ընկալան] Դ 2 Հոռոմ ԱԲ 3 + Քաղկեդոնի ԱԲԳ 4 Մարկիանոս ԳԴ 5 զջուր եւ զխմոր ԱԲԳ 6 խառնեն ի սուրբ խորհուրդն Աստուծոյ Դ 7 Դաղմատիայ Ա, Դաղմատիա] Դ 8 Եւրոպիա] Ռոպիա ԱԲԳ 9 այլ ԲԳԴ 10 որ] ԱԲԳ 11 Մակեդոնիայ Ա, Մակեդոնիա ԲԳ 12 հարաւու Ա, + որ Դ 13 յԵգիպտոսք ԲԳ 14 Աղեկսանդրիա Ա, Աղէքսանդրիա ԲԳԴ 15 ընկալեալ ԱԲԳ 16 յերեք ժողովոյն սրբոյ ԱԲԳ 17 զուղեղ Ա, զուղիղ] Դ 18 դաւանութիւնն Ա, զդաւանութիւն Դ 19 չընկալեալ Դ 20 յորմէ ԲԳ 21 Կարգեդոն Ա, Կարքեդոն Դ 22 Մորիտանիա ԲԳ, Մարտիանիլիա Դ 23 արեւուն Դ 24 գաւառօք ԲԳԴ 25 Տիգանիա ԲԳ, Տիքանիա Դ 26 հաստատել ԱԴ 27 Ցոյնսն Ա, Ցոյն ԲԳ 28 վերին Գ 29 Թեբայիդ ԲԳԴ 30 զնոյն ունին հաւատ] մինչեւ ի լեառն Լուսին (?Լափն?) եւ ներքին Թեբայիդ զնոյն հաւատս Դ 31 Թէոպիա ԲԳ 32 Արաբիայ Ա 33 ապառնաժ Բ 34 ընդ մեզ] Դ 35 զերիցս ԱԴ 36 ժողովոյն ԱԲԳ

[Է] 1 մինչեւ Գ 2 չար] Դ 3 եկեղեցիք ամենայն Դ 4 հաւատոյ անբաժանելի Դ 5 Ց եւ Ե Գ 6 Հայաստանայք Ա, Հայք Դ 7 քարոզութիւն ԱԴ 8 Դվին ԲԳ 9 զեղել Ա 10 Ք ... Ա, Քաղկեդոն Գ 11 զերիցս Ա 12 Մցխիթի այի Ա, Մխիթացի ԲԳ 13 եպիսկոպոս ԲԳ 14 Խախացի ԲԳ 15 բաժանի Դ 16 տեղին] տեղի նորա ԱԲԳ 17 Կիրիոն Բ 18 պատուո Ա 19 Աբրահամ կաթողիկոս] ԱԲԳ 20 զՊետրոս զդրան եպիսկոպոսն ԱԲԳ 21 զի թէ] եթէ Գ 22 զզգեստն] սգեստն Ա, զսգեստն ԲԳ 23 եւ] ԱԴ 24 գաղտնի ԲԴ, գաղտն Գ 25 առաքել ԱԴ 26 մախեր Ա 27 սպանանէ ԲԳ, եւ սպանանէ Դ 28 քարամք

Ա 29 մտօք Դ 30 հաղորդել ԲԳ 31 կանկուրար Ա, կանկուար ԲԳ 32 կրաւորաւք ԱԲ, կրօնաւորօք ԳԴ 33 առաւել ԱԲ 34 ունաց Ա 35 որ ԱԲԴ 36 հաստատանայք Ա, Հայք 37 ոչ միայն Դ 38 ընդունեն Բ 39 Քաղկեդի Ա 40 յաւելորդ Գ 41 ժողովոյն ԱԲԳ 42 + եւ ԲԴ 43 իւրաքանչիւր ԳԴ 44 + գործել Դ 45 սատանա Ա 46 խորհէին ԲԳ 47 զայլս ԱԲ, զայլսն] Գ 48 միաբանութեամբ զհաճոյն առնել Դ 49 Ցոյն Ա 50 Հոռոմն ԳԴ 51 զինքն] զիւրն Դ 52 ամենայն ազգ Դ 53 որս ԱԲԳ 54 ամենայն Գ 55 ընկուաք Ա 56 ի բարին] ԱԲԳ

[Ը] 1 առաջին ԲԳ 2 զայս առնէաք] Դ 3 վկայութեամբ Ա 4 յամենայնսուրբ Ա, յամենասուրբ ԲԴ 5 եւ ի տնաւրինութիւնն] Ա 6 ազգ] Դ 7 վարի Ա 8 ի] ԲԳԴ 9 Հոռոմաեցիք Ա, Հոռոմայացիք Բ 10 բաղարճիւ Ա 11 ձայթ Ա, ձեթ Դ 12 այլ Ա 13 եւ ի պահս, եւ ի տոնս Դ 14 հրէէրէն Դ 15 ցլերեկոյ Ա 16 զամի Ա, ամն] Դ 17 չորեքշաբաթ Դ 18 + զտարուոյն Դ 19 հրամայեաց Դ 20 զկնի] յետ Դ 21 յարութեան Դ 22 կրճատեալ ԱԲԳ 23 զմալեալն] զմայլեալն ԲԳ 24 ձեռնադրեն] առնեն Դ 25 չհանեն] ոչ հանեն ԲԳ 26 պատարագէ ԲԳԴ 27 զսակաւ Դ 28 սղալանս Գ 29 Հոռվմաեցիք Ա 30 ժամանակաւ] ԱԴ 31 նշխարաւ ԱԴ 32 որ Ա 33 պատարագ ԱԲԳ 34 կիսապատարագ ԱԲԳ 35 Հոռվմաեցիք Ա 36 բազումս ԱԲԳ 37 զանազանին ԱԲԳ 38 զձուկն ԱԲ 39 զձայթ Ա 40 խաչոյ Դ 41 Հայոյ Ա 42 ոչ երկիր պագանեն Գ 43 ձէթն Դ 44 յաւելուած ԱԲԴ 45 զեղն Ա 46 աւծութեան] աւրհնութեան Ա, օծութեան ԲԳԴ 47 Հայոյ Ա, զՀայոց ԲԳ 48 + եւ ԱԴ 49 կենդանին Ա, կենդանոցն Գ 50 Հայքդ Դ 51 Հոռոմաեցիք Ա 52 Հայք եւ Վիրք Դ 53 Հոռոմաեցիք Ա 54 եւ] ԱԲԳ 55 մեռանեն ԲԴ 56 Հոռոմաեցիք Ա 57 պղծեալ ԱԲԳ 58 ուտել միս եւ ոչ առնել ծնունդ Դ 59 աւետեաց տօն Դ 60 սարկաւաք Ա, սարկաւագօք ԲԳԴ 61 + ամենայն ազգ ԱԲԳ 62 աշխարհականք Դ

[Թ] 1 Ամենայն ազգ] ԱԲԳ 2 ազգ ԱԲԳ 3 քրիստոնա Ա 4 չէ] ոչ է Դ 5 Տաճիկն եւ Պարսիկքն Դ 6 Հրայն Ա, Հրէայն ԲԳ 7 ասեն Ա, որք ասին ԲԳ, ասին] են Դ 8 հեռաւորութեանն ԲԳ 9 Հաբաշին ԱԴ 10 Նուբին ԱԲԴ 11 Խբտին ԱԴ 12 հարաւու ԱԲԳ 13 եւ] ԱԲԴ 14 ազգ Ա 15 Աւսն] Ա, Ալանն եւ Օսն ԲԳ 16 Քաշակն Ա, Զարքազն] ԱԲԳ 17 յարեւելս Ա 18 մոգքն Դ 19 Մենքն Դ 20 Բուլղարքն Դ 21 Փոանկ Ա, Ֆոանգք ԲԳ 22 լեզուք] Դ

[Ժ] 1 զզանազան Դ 2 զպատկերագրութիւնս ԱԲԳ 3 զխաչն 4 զՀայք ԱԲԳ, զՀայք բամբասեն Դ 5 տանցի] Դ 6 որ ԲԳ, զորն Դ 7 + եւ Դ 3 ամբանին 9 զանկակ ԲԳԴ 10 ունել] Դ 11 բուրվառս ԲԳ, բուրվառն Դ 12 Ասորիք ԲԳ 13 վարեն Դ 14 ազգ ԱԲԳ 15 ոչ] Ա 16 ունին] առնուն Դ 17 որ են] որպէս ԱԲԳ 18 Նեստորականք Դ 19 զպէլէսկի ԲԳ 20 այլոց Գ 21 աւանդութիւնն Դ 22 զԱկոբկի Ա 23 զԳրիգորի ԲԳ 24 յամբարտաւութենէն է Ա 25

սատանաէ Ա 26 եւ] որ Դ 27 անգիտութենէ ԲԳ 28 ամենեքեան Դ 29 իմաստասէրն ԱԲԴ 30 եւ] է Բ, եւ] Գ 31 իմաստութեան Ա 32 Արիստոտելին Ա 33 չառաք] զառաք ԲԳ 34 զԴիմոկուատոս ԲԳ 35 անթիւ ԱԲ 36 եւ] Ա 37 որպէս Պղատոնին ... հակառակ միմեանց] Դ 38 դասս] ԱԲԳ 39 ճարտասանք ԱԴ 40 քերդողք Դ 41 այլ Դ 42 եւ] ԱԲԳ 43 տեսանել ... այսպիսիք] տեսանեմք բաժանմունք Դ 44 մուշաբանին Ա, մաշաբային Դ 45 եւ] Գ 46 աշաթին Բ, աշարին Գ 47 ռափատին ԱԴ, + եւ հայդարին, եւ ալային Դ 48 հրայսն Ա, Հրէայսն ԲԴ 49 + եւ ԱԲԴ 50 մլհուտ ԲԳ, որ ասին մլհուդ] ասին, որ է մլհուդք Դ 51 բազմաստուածութեան ԱԴ 52 նոյն է բան Դ 53 զհաւանութիւն ամենեցուն Դ 58 եւ] ԱԴ 59 յաղագս] վասն Դ 60 երից Գ 61 յամի] ի մի ամի Դ 62 ցուցին ԲԳ, ցուցից արդ Դ 63 ոչ լինի միաբանութիւն] զինչ ի միաբանութիւն Գ 64 պատճառք ԱԲԳ

[ԺԱ] 1 արդ սկսցուք Դ 2 ի] Դ 3 սահմանեցին սուրբքն] խոստովանեցին (խոստովանեցան Գ) ժողովելքն ԱԲԳ 4 Նիկիայ Ա 5 ժողովն Ա, յայլ սուրբ ժողովսն] յայլսն Դ 6 եւ որպէս ԱԲ 7 կտակարանացն Ա 8 անսկիսքն ԱԴ 9 անվաղճան ԱԲԳ 9ա աստուածութիւն Ա 10 + է Բ 11 բարեբնութեամբ Ա 12 է] ի Ա 13 բնութեան Դ 14 բնութեան ցուցանէ մերով] Գ 15 հնարաւոր ի] հնարաւորութիւն ԲԳ 16 յայտնել ԱԴ 17 բնութիւն ԱԴ 18 զնոյնութիւնն Դ 19 ամենայն Ա 20 սակաւ] սովաւ Դ 21 զնշանակ] զպատճառ Դ 22 ճառի ԱԲԳ 23 ելօր ԲԳ 24 որդի բնութենէ Հայր է Ա 25 հոգի Դ 26 աստուածութեան Ա 27 եւ մի արարչութիւն] Դ 28 հաւատացելոց] եւ մի արարչութիւն Դ 29 լրումն ԲԳ 30 որդի ԱԴ 31 Մարիամա Բ 32 կուսէն Դ 33 ի] ԱԲԳ 34 ճշմարտեալ Ա 35 թէ] զի ԱԲԳ 36 Աստուածն Բ 37 Ադամա Ա 38 յորժամ] Ա 39 անդի Ա 40 ենորիկ Ա 41 Ադամա Ա 42 դարձել Ա 43 զե[ռեսս իմ] Ա 44 ապրել ԱԲԳ 45 այն Ա 46 առ ԱԴ էառ ԲԳ 47 էրանեաց Դ 48 Ադամա Ա 49 Աստուծոյ] Դ 50 առաքելոց Գ 51 Բասիլիոս ԲԳԴ 52 ծննդեանն ԱԲԳ 53 երկաթ Գ 54 սեւ Ա 55 է] Գ 56 է] Դ 57 ջերմութիւն Դ 58 զցրտութիւնն ԱԲԳ 59 լուսաւորութիւնն Ա 60 այսպէս Դ 61 եւ] Ա 62 զմարդկային Ա 63 զտկարութիւնն ԱԲԳ 64 զտգեղութիւնն ԱԲԳ 65 աստուածութեամբն Դ 66 գոյնն Ա 67 սոյնպէս] այսպէս Դ 68 աստուածութիւն ԱԴ 69 ընդ] ԱԲԳ 70 հուրն 71 լուսաւորեց Ա 72 աստուածութիւն Դ 73 բնութիւնք Ա 74 յարեգակնէն Ա 75 հզաւրէն Ա 76 ծաղկի Ա, ծիրանի ծաձկէ Գ 77 եղեալ Ա 78 էառ ԲԳԴ 79 բայց ԲԳ 80 Դաւթայ Դ 81 կոչեցաւ Դաւթի Դ 82 խոստովանին Դ 83 էառ ԱԲԳԴ 84 հոգի, մարմին Դ 85 Ապօղինար Բ 86 ի] ԱԲԴ 87 հոգոյ Բ 88 աստուածութիւն Ա, աստուածութեանն Բ 89 զի] ԱԲԳ 90 միութեան Ա 91 եւ] ԱԲԳ 92 դայ Բ 93 Աստուածաբանին Դ 94 երկու ԱԲԳ 95 խորհեն Ա, խորհին ԲԳ 96 ասելով Ա 97 խոստովանութեամբն Ա 98 երրորդութիւն Ա 99 լինի] մնա ԱԲ, մնայ Գ 100 ուղեղ Ա 101 խոստովանել Ա 102 մարմին կոչի ԲԳ 103 աս ԱԲԴ 104 զմարմին Ա, եւ զմարմինն Դ 105 արդ] Ա 106 թէ

ԱԴ 107 երկեղ Ա 108 եւ] Բ 109 չարչարանս Ա 110 զարհուրեա Ա 111 + ճշմարտից Դ 112 հարկել Ա 113 Խ] Ի Ա 114 քաղցեւ Ա 115 օրինօք ԲԳ 116 կրել Ա 117 յաւելու, թէ] յաւելութիւն Ա 118 զմարմին Ա 119 վերայքերէր Ա 120 այդ Ա 121 միութեան ԱԴ 122 տնօրենութեանն Ա 123 չարչարանս Ա 124 մարմնոյ Ա 125 զմարմին Ա 126 միութեանն ԱԲԳ 127 տնաւրենութեանն Ա, տնօրէնութեան ԲԳ 128 բաժանեալն Ա, բաժանելի Դ 129 որ] զի Դ 130 տա ԱԲ 131 փառս ԱԲԳ 132 + եւ Գ 133 չարչարանսն Դ 134 հուր Ա 135 արեգական Ա 136 գան ի յերկիրն Գ, գանի] տանջի Դ 137 մնա Բ 138 + որ ԲԳ 139 տա Բ 140 սգալ ԱԲԳ 141 մարմնոյն Դ 142 բնութեան Գ 143 արարածս Ա 144 այդչափ Դ 145 արարիչն որչափ] որպէս եւ արարիչն Դ 146 Եսայիաս] Եսայի ասի Դ 147 նմին Դ 148 մարդո Ա 149 մահ ԱԲ, մահ մարդոյ Դ 150 այլ եղեալ] այլայլեալ Դ 151 ամենայն այդ Դ 152 զխաչ ելեալն Դ 153 առնեալն Ա 154 աստուածութեան Ա, զաստուածութիւնն Դ 155 զմարդկութիւն Ա 156 մարմնո Ա, մարմնոյն ԳԴ 156 էր] է Բ էր] ԳԴ 158 բայց] էբաց Ա 159 զի ծնեալ Ա զի ծնէ] Դ 160 լուսաւորելոյ ԲԳ 161 թուք Դ 162 մարմնո Ա 163 առնէր] առ նա (նայ Ա) էր ԱԲԳ 164 աստուածային ԲԳԴ 165 զնշնաս ԲԳ, զնշանսն կանխաւ Դ 166 միութեան Ա 167 տնօրէնութեան Դ 168 + եւ ԱԲԳ, մարգարէսն Դ 169 զվկաութիւնսն Ա 170 գրոց ԱԳ 171 զգիտելիտ Ա 172 ամենայնցն Գ 173 Աստուածաբան ԲԳ 174 խաչել Ա 175 խաչել Ա 176 մարմինն ԱԴ 177 մարմին Ա 178 իսկ] Ա 179 մարդո Ա 180 ներգործութիւնս Ա, զներգործութիւն Գ 181 իբր] որպէս եւ Դ 182 ոչ] Ա 183 ժողովք Ա 184 տումարն Գ 185 + եւ ԱԲԴ 186 բոլոր Գ 187 մարդո Ա 188 + առ ԱԴ 189 եւ] Ա 190 զի] Դ 191 մարդո Ա 192 սրտէ Ա, սրտի] Դ 193 բխէ Ա 194 զկամ Գ, + մարմնոյ ԱԲԳԴ 195 զներգործութեանս Բ + մարմնոյ Դ 196 նա] նոցա Բ, առանց Գ 197 գործ Գ 198 մարգարէ Գ 199 ինքն իսկ Դ 200 տէրն Գ, տէր] վասն իւր Դ 201 գա ԱԲ 202 + այսորիկ Ա 203 վասն այդ] զի արդ Դ 204 մոլեցաւ] մոլորեցաւ ԱԳ 205 ոչ ունել 206 զներգործութիւն Դ 207 կամք Գ 207ա + մի ԱԲԳ 208 Նիկիայ 209 եւ] Գ 210 մի տէր ... յերկուս բաժանեն] եւ մի տաճար Յիսուս Քրիստոս եւ ոչ յերկուս բաժանեն, զի միայն չարչարեալ, թաղեալ եւ յարուցեալ զմի եւ նոյն ասեն Դ 211 + վասն Դ 212 Եւտիքեայ ԱԳԴ 213 առ աչաւք ասելն] բնութիւն ասելով Դ 214 զդաւանութիւնն Ա, դաւանութիւն] Դ 215 ասել Գ 216 խաչիլ եւ չարչարիլ ԲԳ

[ԺԲ] 1 բնութիւն Դ 2 խոստովանի Գ 3 ուրանալ ԱԲԳ 4 եւ] ԱԲԳ 5 միաւորուն Գ 6 + զի ԱԴ 7 աստուածազգեստիցն Ա, աստուածազգեստից Դ 8 ունիմք] Գ 9 բանին Աստուծոյ մարմնացելոյ Դ 10 թխտին Բ 11 Ազօղինար Բ 12 նոյնպէս Դ 13 Սիւնկունդաս Ա 14 եպիսկոպոսն Ա 15 Լեգէոս ԱԴ 16 միութիւն Դ 17 խոստովանեմք Ա, + ասէ Բ 18 միմեանց Գ 19 առեցելովն Ա 20 եպիսկոպոս Մելտինոյ (Մելտինու Դ) Գ 21 միաւորութիւնն Ա 22 է] եւ ԱԴ 23 ներգործութիւն Դ 24 Արիուս Գ 25 զմարմնոյ Գ 26 զտկարութիւնն Ա 27 մարմինն ԱԴ 28 Նիւսիայ ԱԲԴ 29 գրէ ի] ԱԲԳ 30 Եւնոմինոսի Գ 31 ամենեցուն Դ 32 Աստուած] ԱԲԳ 33 զաստուածութիւնն ԱԲԳ 34 ցուցանեալ ԱԲ 35 մարմնո Ա 36 յաստուածային Ա 37 անձնաւորութիւնն Դ 38 դէմս Դ 39 մարդոյն Ա 40 Յովհաննէս Ա 41 Ոսկեբերանն Ա 42 միով ներգործութեամբ եւ միով (մի Դ) զօրութեամբ Ա 43 Աթանասիոս Դ 44 ստեղծուածն Դ 45 մարդկային Դ 46 մարմնականաց ԱԲԳ 47 խորհրդոյ ԲԳ 48 աստուածութեան մերկայնոյ Բ 49 նորոգութիւն Ա 50 թէ] Ա 51 արդեւօք Ա, արդեւօք ԲԳԴ 52 զտէր Ա 53 զմարդկայնոց ԱԲ 54 + եւ Ա 55 անճառ Դ 56 միաւորութեաննն Ա 57 եւ ԱԲԴ 58 ի] Ա, վասն զի] քանզի Դ 59 մարդկայնոցս] մարդկային յոյս Գ 60 զիս] ԱԲԳ 61 ես] ԲԳ 62 կամիս] Դ 63 եւ այլ եւ Բ 64 առեցելոյն ԱԳ, ասեցելոյ Դ 65 տնօրէնութեան Դ 66 վարդապետ Դ 67 հետեւեսցուք] գնասցուք Ա 68 իւրաքանչիւրն Բ 69 Աստուածաբանին Ա 70 Նիւսացո Ա, Նիւսացոյ Դ, Նիւսեայ Դ 71 ոչ առաք Դ 72 միայնակ Դ 73 զասելն Դ 74 + ասէ Դ 75 եթէ Դ 76 նմանէ Ա 77 ծնանելոց Դ 78 + սուրբ է Դ 79 զծողովուրդս Ա 80 ծնեցելումն Ա, ծնիցելոյն Դ 81 + Քրիստոս ԱԴ 82 բառնա ԱԲ 83 նմայ Ա 84 որ ի նմա ... տեսանեքդ] ի ծնեցելումն, այլ որ ծնաւն, որ ի նմա, այլ զոք տեսանեքս Բ, տեսանեաք զՔրիստոս Դ 85 ոչ եթէ բնութիւնդ ... որդի Աստուծոյ] Բ, ոչ եթէ բնութիւնդ, որ ի քեզ, այլ եթէ] Գ 86 որս Ա 87 + զոր ԱԲԳ 88 աւրհնել Ա 89 յաւիտեան Դ 90 Յոհաննէս Գ 91 Թոմաս ԱԳԴ, Թովմաս Բ 92 զկողն Դ 93 շաւշափէր ԱԴ, շօշափեաց ԲԳ 94 զտեղի Դ 95 խոստովանէր եւ] ԱԲԳ 96 տնօրէնութեան ԲԳ 97 ի] ԱԲԳ 98 վկաեց Ա, վկայէր Դ 99 դայ ԲԳ 100 ոչ] Ա 101 եւ] որ Բ 102 Թաբոր Բ, Թափաւր Գ, Թաբորն Դ 103 եւ] Դ 104 բնութենէ Դ 105 յաւելուն] համարի Դ 106 զարհուրի Դ 107 զի] Գ 108 հոգի է] Ա 109 Ապօղինարին Գ 110 ախտանեցէք Ա 111 բնութիւն է Դ 112 + է Բ 113 հոգո Ա, հոգոյ Բ 114 արդե Ա, արդեօք ԲԳԴ 115 եառ] Ա, էառ ԲԳ 116 զոր Դ 117 այլ] ԱԴ 118 ոչ] ով ԱԴ 119 իմաստունսն Ա 120 եւ այսպէս ... բանի] որպէս (այնպէս Դ) է (է] Բ) ըստ ուղեղ բանին Ա 121 իբրեւ Դ 122 հասելոյ ԱԲԴ 123 պայծառութիւն Ա + եւ ԱԲԳ 124 մնա Ա, մնալ Գ 125 առանձնաւորութիւն Ա, անձնաւորութիւնն Գ, առանձնաւորութեան Դ 126 զաղօտագունին ԲԳԴ 127 եւ] Դ 128 ճառագայթիցն Դ 129 բնութիւնն Ա, բնութեան Դ 130 թիւ] Դ 131 մնաց Բ 132 մնաց ԱԲԳ 133 անզանազանապէս ԱԲ 134 նիւթականացս ԲԴ

[ԺԳ] 1 զտօն ԲԳԴ 2 գրել ԱԲԳԴ 3 յաւետարանն Ղուկաս ԲԳԴ 4 առաքելոցն ԱԴ 5 ի] ԲԴ 6 ծննդեանն Ա 7 յայտնութեանն ԱԴ 8 Յակովբոս Բ, + Տեառնեղբայրն Գ 9 Կերեղ Ա 10 Արիստակէս Դ 11 ժողովի Դ 12 Նիկիայ ԱԳԴ 12ա Հայք ԱԲԳԴ 13 պատահէ ԱԲԳ 14 ի Զ] Է Բ, եօթն Բ, ի] Դ 15 + ի ԲԳԴ 16 մկրտութիւն Դ 17 + ի Ա 18 + զայն Դ 19 քանի Ա 20 + էր Դ 21 վասն այն] Դ 22 սոյնպէս ԱԴ 23 Կիրղոս ԱԴ 24 կարգեալ է Դ 25 լընթերձուածին Ա 26 զաւետարանն ԱԴ 27 Ղուկա ԱԳ 28 հովի Ա 29 տեղիոջն Ա, տեղոջն ԲԳ, ի տեղոջն] Դ 30 զՄաթէոսին ԱԲԴ 31 ծնունդ ԱԳԴ 32 աւե-

տարանչէ Գ 33 հաստատեալ Ա 34 տաւնսն Ա 35 եւ աւետարան չէ ... տաւնել] Դ 36 մի է նոյնպէս եւ Դ 37 ի վաղուեանն] վաղուին Գ 38 որդ իմ ես դու] Դ 39 երեւեցաւ ԲԳԴ 40 տօնիցն Դ 41 հոգովն Ա, հոգով Բ 42 հոգովն Ա, հոգով ԲԳԴ 43 հոգով Բ, ի հոգւոյ Դ 43ա աւրն] այն ԲԳ 44 մինչեւ Գ 45 ամիս եւ Ե օր է Դ 46 անդրանգի Ա, անդրնակի Գ 47 պապանծմանէն Գ 48 կատարմանէ ԱԴ 49 + ի Ա ԱԲԳ 50 -է] ԱԲԳ 51 + ի ԱԲԳ 52 + ի ԱԳ 53 ծնունդ Դ 54 տեղեաց ԱԲԴ 55 Երուսաղեմի Գ 56 զտօնն Դ 57 ի] ԱԴ 58 կիրողս Ա 58ա եւ] Ա 59 գրեալ է ի կանոնս] Դ 60 բաժանում Ա 61 աբբա ԲԳ 62 Եփրեմի Ա, Եփրեմն Դ 63 տաւ առնել] տօնել ԲԳ 64 արեգականն Ա 65 գիշերէ Գ 66 արեգակ Ա 67 զտօն ԲԳ 68 ծննդեանն ԲԴ 69 սովորութիւնն Ա 70 այսպէս Դ 71 զի] Ա 72 եթէ Դ 73 Ցոյն] յոյս Ա 74 + զի Ա 75 Կիրեղ Ա, Կիւրղոս Դ 76 մինչեւ Դ 77 Ցուսեփ Ա 78 տրտմեցաւ Դ 79 չորեքշաբաթու ԱԲԴ 80 Լուսաւորիչն] Լուսաւորիչ կարգեալ է Դ 81 Հայոց] ԱԲԳ 82 որ Դ 83 ետ ԲԳԴ 84 + ի Բ 85 որ է Է] զայն ի Զ Ա 86 ի] Դ 87 կարգեալ է] եդեալ Դ 88 Աստուածածնին ԲԴ 89 յորմէ հետէ ... Ա, որովհետեւ] յորմէ ԲԳ 90 ի սրբոյն] Ա 91 Ցակոբա Ա 92 Կիրղէ Ա 93 եւ զի որպէս] Ա 94 խափանեալ Ա 95 զտաւնն Ա, զտօն ԲԳԴ 96 հարկաւոր կարծեն] Ա 97 ԲԺ] ԲԺան Բ, օր Դ 98 էր] է Բ 99 մկրտութեանն Ա, արժան էր ... մկրտութիւնն] Գ, + օր ընդ տարւոյ Դ 100 թլփատութիւն Ա 101 մկրտութիւն Ա 102 է] էր ԱԲԳ 103 Նաւեան Գ, Նաւեայ] Դ 104 նաեւ Բ, նախ] Գ 105 անցուցել Ա 106 մկրտութեանն Ա 107 + զժողովուրդն Գ 108 Գաղգաղիա Ա, Գաղգաղայ Գ 109 ծովն ԱԳ 110 մկրտել էր Ա, մկրտեալ Դ

[ԺԴ] 1 Այլ եւ զհաց] Ու այլ ԱԴ 2 բաղարջն Ա 3 հրամանեցին Ա 4 առ ԲԳԴ, էառ Գ 5 ասէ Դ 6 իմ ԱԴ 6ա յիշատակ Ա, յիշատակիս Դ 7 որ ԱԳ 8 է] էր Դ 9 թէպէտ եւ խմոր Դ 10 քացախել Ա 11 մարմին Գ 12 են] է ԱԳ 13 խմորոյ Դ 14 յառաքելոյ ԳԴ 15 Աստուածաբանէ Գ 16 առաքելոյ Ա 17 Հոոմանեցոցն Ա, Հրօմայեցոցն Գ 18 պատարագ Դ 19 Հոոմանեցոցն Ա, Հոոմայեցոցն Բ 20 ազգն ԱԲԳ 21 Հոոմայեցոցն Ա 22 եւ] ԱԴ 23 ի Բարսումայ] Ա, ի Պարսումայ ԲԳ 24 թէպէտ եւ] Ա, թէպէտ Դ 25 բնութեանն Բ բնութիւնն Գ, բնութիւն Դ 26 գրել ԱԴ 27 Լեւոնին ԱԲԳ 27ա հաստատել Ա, հաստատեն ԲԳ 28 Քաղկեդոնին Գ 29 եւ զաւրանայր] ԱԲԳ 30 ասէր Գ 31 բանն] մարմինն ԲԳ 32 առ ԱԲ, էառ ԳԴ 33 + ի կուսէն Դ 34 էր] Ա 35 աճումն Գ 36 արեանն ԱԴ 37 ի բաժակին] բաժանեն Ա 38 բայց] այլ Դ 39 տէրն ԲԳ 40 կողին ի] Ա 41 մկրտութեան ԱԲ 42 Զեբեթեա ԱԲ, Զեբեթեայ Գ 43 հարքն] Հայք Բ 44 ի խորհուրդ] Գ 45 մկրտութեան ԱԴ 46 զմահն Գ 47 զկենդանի աստուածութիւնն Դ 48 յայտնէ Ա, յայտնի է Դ 49 ջուրն ԲԳԴ 50 նմին ԱԴ 51 ...-ին ի քուն լինելն] Ա 52 խոռվել ԲԳ 53 զծովն եւ ԲԳ 54 խաղաղացուցանելն] դադարեցուցանելն Դ 54ա միացել ԱԴ 55 Արդ] Այդ ԱԴ 56 եթէ ոչ որ էջն] Ա 57 ըստ մարմնոյն Գ 58 թէպէտ եւ] Ա 59 զնոյն ասաց Դ 60 եւ ի մարմնի] Ա 61 ի մարմին (մարմնի Դ) լինելով] Դ 62 զմիութիւն ԱԴ 63 ըստ շարայարութեան Բ, շարայարութիւն Դ 64 ըստ] Ա 65 Ցոհանէս ԲԳ 66 մերոց] ԱԲԳ 67 եթէ Դ 68 համարեայ ԲԳ, համարել Դ 69 չընկալ Ա 70 Ցոհան ԱԲԳ 71 Ոսկեբերանն] Դ 72 եւ ոչ ջուր] եւ ոչ բերէ Բ 73 որ] Բ 74 եւ Ցոյնք] Ցոյն Ա 75 ջրամատուցուցեն Ա 76 ցուցանէ ԱԲԳ 77 տօնել Դ 78 կանոնաց ԱԴ 79 -ն] Ա 80 գրել է Ա 81 զմերժեալն Ա 82 ըստ] ԱԲԳ 83 զյայտնութիւնն ԱԲԳ 84 Աստուածաբանն ԲԳ 85 եւ] ԱԲԴ 86 անուանէ, ասելով] անուանելով ԲԳ 87 բայց] Ա 88 Աստուած մարդ] Ա 89 եւ] ԱԲԳ 90 յայտնութեան Ա 91 աստուածութեամբն ԱԲԳ 92 միանալութիւն Գ 93 յայտնութիւնն ԱԴ

[ԺԵ] 1 այլ] Դ 2 ձայթ Ա 3 զաստուածութեան ԱԴ, զաստուածութիւնն Բ 4 եւ] Դ 5 խմորին Դ 6 զաճմանն Ա 7 այդ Դ 8 բաժանման] Ա 9 առնել (ունել Գ) յաստուածութենէն] ունել ... Ա, առնել աստուածութենէն Բ 10 զաստուածութիւնն ասել Դ 11 մարդկութիւնն Գ 12 աստուածութիւնն ԱԲԴ 13 ամպարտաւանութեանն ԱԴ 14 ձայթն Ա, ձեթն Գ, ձէթ Դ 15 համեմելոց Գ 16 մարդկաին Ա, ի մարդկային Գ, ի մարդկան Դ 17 ոչ էր] զի չէր Դ 18 մարմին Դ 19 է] Դ 20 ձայթն Ա, զձէթն Գ, ձէթն ի Դ 21 մկրտութեանն Ա 22 պատարագ Դ 23 զաճեալն Ա, զաճեալ Դ 24 աստուածութեան Ա 25 + է ԲԳ 26 հոգոյն ԱԲԴ 27 աճէր ... տեառն] ԲԳ 28 բաւական] բանին ներգործութեամբ անապական Ա 29 աճել ԱԲԳ

[ԺԶ] 1 ամին Դ 2 զչորեքշաբաթի Ա, զչորեքշաբաթն Դ 2ա զուրբաթն Դ 3 յարութեան Դ 4 թէ] Դ 5 պահել եւ Ծ աւր] Գ 6 պահիցեն Ա 7 է] Դ 8 + է Դ 9 զսկիսբն ԱԴ 10 աւուրն ԱԲԳ 11 դնելով Դ 12 զչորեքշաբաթն եւ զուրբաթն Ա 13 մոռացեալ] Գ 14 զգրեալն Ա 15 + ասաց Աստուած ԱԲԳ 16 աւուր Ա 17 զկրճտատեալ Ա 18 պատարագն ԱԲԴ 19 զիա՞րդ] ընդէ՞ր Դ 20 զ'ի] Ա 21 զ'ի Դ 22 բռնադատեալն ԱԴ 23 տատրակ ԱԲԳ 24 արագիլ ԱԲԳ 25 նզովս ԱԴ 26 եդեալ է] եդին յաղագս այսր Դ 27 որք ԱԴ

[ԺԷ] 1 մասնաւոր] մարմնաւոր Ա 2 բաժանելս ԱԳ 3 Հոոմայեցիք Ա, Հոովմայեցիք ԳԴ 4 նշխարով Ա 5 պատարագին Դ 6 մատուցանեն] Դ 7 + զի ԱԲԳ 8 ջերմ Ա 9 հրամաէ Ա 10 աւրէնք ԱԴ, օրէնքն ԲԳ 11 հրայէ Ա, հրամայէ Դ 12 էր] են ԱԴ 13 վերա Գ 14 + Ցունաց կիսապատարագն զորունի խորհուրդ, զի յեկեղեցի անխորհուրդ ոչինչ է, եւ Քրիստոս կատարեալ պատարագաւ ի վերայ խաչին Դ 15 Հոովմայեցւոյն Ա, Հոոմայեցիք ԲԳ, Հոովմայեցւոց Դ 16 վնասս պատճառ Գ 17 վարեն Ա 18 եկեղեցոյ ԱԲԴ 19 մեղուցել ԱԴ 19ա + կարէ Դ 20 զի] եւ Դ 21 նաեւ] եւ Դ 22 աշխարհականսն Դ 23 զմարդասիրութիւնն ԱԴ, + Աստուծոյ Դ 24 համբարձակի ԱԴ 25 մի՛ ոք] թէ մի Ա 26 եւ] Ա 27 հաղորդել Ա 28 էն ԱԳԴ 29 քահանել Ա 30 իշխեսցէ 31 ցուցեալ է] Ա 32 կոչելոյ քահանայութեան Ա 33 զոր Ա 34

բարկացանէ Ա 35 աշխարհի, քան թէ հաշտեցուցանէ] Դ 36 սարկաւագի] ԱԳԴ 37 + սարկաւագի Ա 38 մատուցանել պատարագ Դ 39 զհիւանդս Դ 40 կոչեցել ԱԲ 41 է նմին] էին ԲԳ, + ինձ Դ 42 առաքելոյն ԲԳ, առաքելոց Դ 43 կանոնքն Դ 44 հրամանն Ա 45 ի հրապարակս] յառապարս Դ 46 կանգնել ԱԲԳ 47 հաղորդեն Ա 48 տղաց Ա 49 եւ] ԱԲԳ 50 զվրանս Ա, զվրանն Դ 51 կանոնքն ԱԴ 52 բազորսդ Դ 53 խուղ] ԱԲԳ 54 լինել] շինել Դ 55 է] ԱԲԳ 56 ազգ] Դ 57 + ազգ Ա 58 զձունկն Ա 59 զձայթ Ա 60 շաբաթս Գ 61 կիւրակէի Դ 62 հրամաէ Ա 63 որում Ա 64 պատարագեալն Ա 65 արարել ԱԲԴ 66 տօնից ԲԳ 67 կերակուր Դ 68 + եւ Ա 69 արգու Ա, արգելուն Դ 70 չուտել ԲԳԴ 71 հրամաէ Ա 72 գաղ Ա, գաղն Դ 73 եւ ապա Դ 74 ձայթ Ա, եւ ձէթ] Դ 75 ամենայն ազգ Ա 76 չէ պարտ ուտել] ուտել չիք Դ 77 հրամաեցաւ Ա 78 ի] ըստ Ա, ի] Դ 79 ի կանոնս] ի պահս (զպահս Գ) ըստ կանոնաց ԱԲ 80 գրել Ա 81 եթէ ԱԴ 82 աւուր ԱԴ, օր ԲԳ 83 ուտիցէ Դ 84 միասին Ա, մի ասեն զամենայն Դ 85 ի] Դ 86 եկեղեցի ԱԳԴ 87 զսեղանն ԱԴ 88 յիշէ ԱԲԴ, յիշել Գ 89 աւրհնել ԱԲ 90 է Ա 91 մկրտել Ա 92 զի թէ ... մկրտել] Դ 93 եւ] ԱԲԳ 94 աւրհնելոյ ԱԳԴ 95 կամ ... կամ] Դ 96 աւծել ԱԴ 97 զօծելն Ա 98 զի Դ 99 եւ ջուրն ... աւրհնեցաւ] ԲԳ 100 + եւ Ա 101 մեռոնաւ ԲԳ 102 խոստովանի ԱԲԳ 102ա զաստուածութիւնն ի խաչին Դ 103 ոչ օծանեն Գ 104 իբր Ա 105 եւ] Դ 106 աւթեւաւն ի նմա] Ա, ի նմա օթեւանս Դ 107 հաւատացել Ա 108 յոյժ] յորժամ Ա 109 ազգ ԱԲԳ 110 այն պատուէ Բ, այն պատուէր Գ 111 + եւ ԱԳԴ 112 դատապարտէ Ա 113 որ] Դ 114 եւ] Գ 115 ունին ԲԳ 116 մեռոն ԱԴ 117 անուշայոտ Ա, ի] ԱԴ 118 խառն Ա 119 կանոն Գ 120 ի մեռոն] մեռոնի Ա, ի մեռոնն Դ 121 սուրբ] ԱԲ 122 զխմոր] ԱԲԳ 123 բաժակն ԱԲԳ, ջուր Ա 124 գրել ԱԲ 125 ի] ԱԲԴ 126 ձայթ Ա, աւրհնել ձէթ ԲԳԴ 127 ինչ թէ պատահին Դ 128 շուշմանի Ա 129 Մովսէսի ԱԲԳ 130 հրամաեաց Ա 130ա խակակութն Դ 131 ըստ ԱԴ 132 պատահելոց Ա 133 էր] ԲԳ 134 աւրհնութիւն Ա 134ա մարմինն Ա 135 ձեթն Ա 136 աւրհնութիւն Ա 137 հոգոյն նշանակ ԱԴ 138 լինելին Ա 139 զաւրինացն] Գ 140 ասէ Դ 141 խունկ ԲԳ 142 խառնուածք անուշահոտ խնկոց Դ 143 յեղն Ա, յեօղն Բ 144 վաղէր Ա 145 ճշտութեան Գ 146 չէ ԱԲԳ 147 անդր մարմնաւոր է] անմարմնաւոր էր Ա 148 կենդանոյն ԱԲ 149 այդ] Ա 150 պատճառ եղեւ] պատճառել եւ Ա 151 ծուլութիւն Ա 152 Հաց Ա 153 իւր] Ա 154 յիւր յիշատակ զպատարագն Դ 155 ետ Ա 156 Փիլիպոս Ա 157 մահու Դ 158 Բարդուղիմոսի ԲԳ 159 + արդ Դ 160 բարիոք Դ 161 ագելոյ ԲԳ 162 վաճառաշահոյ Ա 163 եւ] զի ԱԲԳ 164 ապաստանել Ա, ապաստան ԲԳ 165 զգոյշ պարտի կալ Դ 165ա զմեռել Ա 166 պարտի Ա, փրկագործութիւն ... պարտ է] Դ 167 ընձաղղացն Ա, ընձայողացն Դ 168 շատն Բ 169 համարեալն ԱԲ 170 + եւ] ԳԴ 171 հեղգասցեն Ա 172 առաքելոցն ԲԳ 173 Փիլիպոսի Ա 174 զքառասունն Ա 175 թուելի Դ

[ԺԸ] 1 Հռոմաեցիք Ա 2 մեռանի] ի Ա 3 յառաքելոց Ա 4 առին] ասին

ԳԴ 5 կարծեաք ԱԴ, կարծեօք ԲԳ 6 չհամարեալ Ա 6ա շուն ԲԳԴ 7 պատճառ ԱԲԴ, + առ Ա 8 առաքելոց ԱԴ առաքելոյն ԲԳ 9 դատաւոր] դաստուր ԱԲԳ 10 չունին ԱԴ

[ԺԹ] 1 զկերակուրս Ա, կերակուր ԲԳ 2 պղծեալ ցուցեալ է] պղծել է Ա 3 կանոնքն Դ 4 + իմն Գ 5 Հռոմաեցիքն Ա 6 խոզի ԲԳ 7 միս Ա 8 հրամաէ Ա 9 զմսոտ բանջար խոտէ] զբանճար մսոտ խոտէ Ա 10 + ըստ աւրինացն զգառն Ա 11 նկարագրեն] կարգեն Դ 12 այնքան ԱԲԳ 13 գովելի է (գովի Դ) չուտելն, զի անդէպ է կրաւնաւորի] ԲԳ 14 պեղծ Ա 15 կարծիւք ԱԳԴ, կարծեօք Բ 16 իւրաքանչիւր ԲԴ 17 ուտելն Ա 18 ամպաստանի Ա 19 + երբէք Դ 20 կրաւորաց Ա, կրօնաւոր Դ 21 մսի ԱԴ

[Ի] 1 բացագլխով Գ 2 հանդերձիւ] հանդիսիւ Դ 3 եկեղեցոյ պատարագել ԱԲԳ 4 յաղանդոյն Գ 5 շրջառաւք Ա, շուրջառիւք Դ 6 քահանից ԱԴ 7 մանկունս Ա 8 չհամարձակեն Ա 9 խորհուրդ պատարագին ԲԳ 10 այն ԱԲԳ 11 զգլուխն Ա, գլուխս ԲԳ, զգլուխ Դ

[ԻԱ] 1 սրբոց ԱԴ 2 ընդունինք ԲԳ 3 առաջի պարգեւս (պարգեւ Գ) Ա 4 իւր Գ 5 զպատկերն Ա, զպատկեր] Դ 6 եւ] ԱԲԳ 7 կոոց է Դ 8 ընկալան ոմանք] ընկան Ա 9 այրէին] ներէին ԲԳ 10 մինչ ԱԲԳ 11 եղեւ ԱԲԳ 12 եւ] ԱԲԳ 13 յԱստուածածնին Բ, յԱստուածածնի Գ 14 որ] ԱԳԴ 15 հրոյն] հորոյն Գ 16 եւ դարձեալ տեսիլ ցուցաւ] ԲԳ 17 ընկան ԱԲԴ 18 ամպարիշտն Ա 19 զսատանային ԱԴ 20 'սկանն ԲԳ 21 կամ] ԱԲԳ 22 Դանիէլի Ա, Դանիլ Գ 23 քահանա Ա, քահանայ ԲԳԴ 23ա անարգեցաւ ԱԲԳԴ 24 սրբոցն ԱԲԳ 25 ընդ այլսն] ընկալան ԲԳ 26 զխաչն Դ 27 արհամարհանաւք] Դ 28 եւ] ԱԲԳ 29 պատմութիւնն ԱԲԳ 30 սրբոցն վարուց Դ 31 զպաշտելին Ա 32 զսրբոցն] ԱԲԳ 33 զոր արարեալ են Դ

[ԻԲ] 1 առաջաւորացն ԲԳ 2 պահոց Դ 3 զի] Ա 4 + զօրավարին Դ 5 պատահեալ է Դ 6 կարծեն Դ 7 այն ԱԲԳ 8 Պարս Գ 9 վկաեց Ա, վկայեց Գ 10 պատմութեան Գ 11 առաջի ԲԳ 12 է] եղեւ ԲԳ 13 որ Գ 14 կարգեալ է Ա 15 ի] Գ 16 պատմեաց Դ 17 Ագաթանկեղ Ա 18 եպիսկոպոս ասորի Դ 19 պատմութեան Դ 20 պատմեալ Ա 21 ի Սեղբեստրոսէ] Ա 22 բժշկեալ Ա 23 եղաւ Գ 23ա Հայք ԱԲԳԴ 24 թէ] ԲԳ, եթէ Դ 25 պահքն Ա, պահք ԲԳԴ 26 զՆինուեցիոցն Ա, զՆինուացւոցն Գ 27 զայլոցն Դ 27ա Հայք ԱԲԳԴ 28 բնակել ԱԳ 29 լեզու Բ 30 Ցոյնք ԱԲԳ 31 զինքեանց Դ 32 հա Ա 33 + զմեզ Դ 34 արեստիւ Ա 35 հալաջ Ա 36 աղանդ ԱԲԳ, + եւ ԲԳ 37 հայ] Գ 38 յուր Ա 39 կամէր] Գ 40 յառաջէր շունն Դ 41 եւ այս] այն Դ 42 պահն Ա, պահք Դ 43 գայլսն ԱԴ 44 զօրավար Դ 45 է Գ 46 ի] ԲԳ 47 հալածել ԱԲԳ 48 + է Ա 49

թագաւոր Դ 50 արքայն] թագաւորն ԱԲԳ 51 որ Դ 52 շնորհք տուեալ եղեւ Դ 53 սրբոյն Դ 54 զաւրավար Դ 55 սորին աղագաւ] վասն սորին Դ 56 կոչէ ԲԳ 57 չառել ԱԳ 58 վկաեաց Ա 59 կոչէր ԱԲԳ 60 էր] Ա, + ամսոյն Դ 61 պատմութիւնն Ա 62 յասորոց ԱԲԳ 63 թվի Գ 64 պատուելոց են տոնիւ Գ, եւ նոքա պատուեն տոնիւ Դ 65 առաջաւորացն Ա 66 պահքն ԱԲԳ 67 կարծի ԱԲԴ 68 շաբաթ Դ 69 տաւնի ԱԲԳ 70 անուանեցաւ] տաւնեցաւ ԱԴ

[ԻԳ] 1 բարեկեանդանին Ա 2 յայնմ Ա 3 + ի Գ 4 Հայոց] ԱԴ 5 հրաբար ԱԳԴ, հրէաբար Բ 6 գրեալն Ա 7 Հրէքն Ա 8 բաղարջի Ա, բաղարջն Դ 9 տաւնեալն ԱԳ 10 բուրուաւ Ա, բուրվառսն Բ, բուրվառն ԳԴ 11 կամ] Բ, եւ կամ] Գ, եւ] Դ 12 որպէս] ԲԳ 13 պատարագի ԱԴ 14 սերոբէիցն սրբասացութեան ԲԳ 15 զփիլոնն ԱԴ 16 զվեղարն ԱԲԴ 17 քուսիթա ԱԴ 18 կուսի ԱԴ 19 զի] ԱԲ 20 այպանեան ԱԴ, այպնեն Բ 21 ամբաստանեն] ապստամպեն Ա 22 եթէ ԲԳ 23 խաչիլ ԱԲԳ 24 խաչել ԱԳԴ 25 զԲանն] զբնութիւնն Դ 26 զմարմին Ա 27 մարմն Ա, մարմնոյ Բ 28 մարդկօրէն Դ 28ա ոչ առանց Բանին եւ ուր Բանն] Գ 29 խորհրդաբար Դ 30 եւ] ԱԲԳ 31 ուղեղ ԱԲ 31ա աստուածութեանն ԲԴ, աստուածութիւնն Գ 32 մարդոյ Դ 33 ապաշխարութիւն Ա 34 խաչեցարն Գ 35 հարց] Հայոց Դ 36 մարգարից Ա, մարգարէիցն Դ 37 գուշակելով Գ 38 եւ յաւրինաց նկարագրեալ] Դ 39 ի] Ա 40 վկաել Ա, + քարոզեալ Դ 41 Ցուսիփայ Ա 42 զձեռն տարածելով Ա, տարածեալ Բ, եւ] ԱԲԳ 43 աղօթից Դ 44 ի խաչէն] Ա 45 եւ թաղեաց] Ա 46 յաւուրսն Ա 46ա ուրբաթու Դ 47 + ի ԱԴ 48 + իսկ Դ 49 կցորդիւ ԱԲԳ 50 ընթերցեալ Գիրս Գ 51 հանդիպման ԲԳ 52 զյարեաւն] զարերն Ա, զյարեարն ԲԳ 53 յել Ա 54 փոխել Ա, փոխելն Բ, փոխիլն Գ 55 երից] ԲԳ 56 բացին Դ 57 զգերեզման Ա 58 եւ մարմինն ոչ գտին Դ 59 Հոգի Ա 60 ազդել ԲԳ 61 Թոմաս Ա 62 կոյս Ա, կոյսսն Դ 63 Աստուծոյդ ԲԳ 64 Աստուածածին ... մերոյ] Դ 65 ա,լ] ԲԳ 66 Ցուսեփայ Ա, Ցովսեփայ Գ 67 այսոք Ա 68 գիրսն ԱԳ 69 Նեկտառեա ԲԳ 70 Ցովհաննու Ա 71 յիւր Ա, իւրում Գ 72 Թոփիլեանքն Ա 73 զՈրոյգինին Բ 74 խորհին Ա 75 ամենայնքն] երկու հարիւրքն Գ, երկերիւքն Դ 76 սուրբ ԲԳ 77 Անդոքացին Ա, Անտիոքացին] Դ 78 Հայք ԱԲԳ, Հայս] Դ 79 Կիրղոս ԱԳ 80 բազում ինչ ի Հայս] ԱԲԳ 81 հայրապետն ԳԴ 82 այնպէս] այնուհետեւ ԱԲԳ 83 + եւ ԲԳ, թէպէտ] թէեւ Դ 84 թէ Դ 85 առաքեալ Ա, առաքեալքն Գ

[ԻԴ] 1 առաջաւորաց ԲԳ 2 գնաց ԱԲ, գնար Գ, գնայ Դ 3 միաբանութեամբ ԱԴ 4 դաշինն ԱԲԳ 5 զյառաջաւոր ԲԴ 6 պահքն ԱԲԴ 7 իւրեանց Գ 8 պահել ԲԳԴ 9 կատարման ԱԳԴ 10 Կոստանդիանոսի եւ Տրդատայ Դ 11 + զառաջաւորաց պահքն Դ 12 զպահսն] Գ 13 տաւնեալն Ա, տօնելն ԲԳԴ 14 հաստատեալ կարգն Ա

[ԻԵ] 1 Արդ] եւ Դ 2 ի] ԲԳ 3 են] է Դ 4 սատանաէ Ա 5 Մանիքեացիք Բ,

Մանիքեցիք Գ 6 այլք ԲԳ, այլ Դ 7 նոցայ ԱԳԴ 8 է որ] ԱԲԳ 9 + է Դ 10 է] ԱԲԳ 11 Հայոց կարգաց ԱԴ 12 իւրաքանչիւր ԱԳԴ 13 որք] որք Ա, որք] Դ 14 է] են Դ 15 ազգս ԱԴ 16 վկայութեան ԱԲԳ 17 հակառակել ԲԳ 18 եւ վասն այն] վասնԱ, եւ վասն այնորիկ Դ 19 անհնար Դ 20 Հոռոմոց եւ Ցունաց ԲԳ 21 աւետարանչաց Դ 22 չորք Դ 23 ի] ԱԴ 24 Բիւզանդիայ Ա, Բիւզանդիոն Դ 25 որք] ԱԴ 26 + զիւրաքանչիւր Դ 26ա ազգաց լինէր միաբանութիւն Դ 27 չորս Դ 28 ազգ ԱԲԳ 29 զունաց Ա, զյուրանցն Բ 30 ունէին Գ 31 նոսայ ԱԴ 32 զգլխաւորս Գ 33 իրս ԱԲԳ 34 չէր հնար հակառակութեան Դ 35 ժողովոյ Ա, ժողովոյն ԲԳ 36 զաւանդեալն ԱԲԳ 37 տօնից Դ 38 խափանեցին Բ 39 զԱստուած Դ

[ԻԶ] 1 թերին ԱԳԴ 2 զամենայն ԱԲԳ 3 եւ այժմ ԱԲԳ 4 Ցովհաննէ ԲԳԴ 5 սգաստ Ա 6 հնազանդ Ա 7 ողորմած ԱԴ 8 սրբութեան ԱԲԳ 9 վանօրէից Բ 10 անբամբաս ԱԲԳ 11 առաջնորդացն Դ 12 նախանձ Գ 13 ոչ] չտա Բ 14 կարծիլ Դ 15 թէ] Դ 15ա աշխարհի ԲԳ 16 զբարին] Ա 17 որ] զի Գ 18 զթշնամութիւնն Դ 19 բառնայաք Դ 20 եւ] ԱԲԳ 21 + եւ ԱԲԳ 22 չբռնադատեաց ԲԳ 23 ազգի] ԱԲԳ 24 զպաշտօն ԲԳԴ 25 եւ զկարգ] Դ 26 ազգաց Ա 27 պատճառք Ա 28 զհաւատ] ԲԳ 29 զտաւնն Ա, զտօն ԲԳԴ 30 արժանաւորութիւն Դ 31 չընդունի] չընկալաւ Դ 32 կարգացն Դ 33 եւ] ԱԲԳ 34 զեւնեմիանոսաց ԱԴ 35 զՆեստորականաց եւ զեւտիքիանոսաց] ԲԳ 36 ազգդ Ա, ազգդ հինգ Դ 37 միաբանել ԱԲԳ 38 միմեանց թշնամիք ԲԳ 39 էարկ սատանայ Դ 40 զատելութիւնն ԲԳ 41 խաչ ԲԳ 42 ատեն եւ անարգեն ԲԳ, նախատեն եւ անարգեն Դ 43 եւ] Դ 44 զլեզուաց բաժանումն ԲԳ 45 կրօնիցն Դ 46 ի] ԱԲԳ 47 գործեսցեն Դ 48 խափանէր Ա 49 Ցոյն Բ 50 զաւրհնեալ 51 զսեղան ԱԲԳ 52 յորոց Ա 53 զենող Բ, զենօղ Գ 54 յեկեղեցիս Դ 55 հանել զօրհնութիւն Դ 56 Հայոց Դ 57 զմկրտութիւն ԱԴ

[ԻԷ] 1 եւ Հայք, եւ Վիրք ԲԳ 2 այնոցիկ Ա 3 հարկեցուցանել ԲԳ 3ա հաւատ Դ 4 զոր ԲԳ 5 որոցԱ, որոյ ԲԳ 6 զՀայս Ա, զՀրէայս ԲԳ 7 զաւակ ԱԴ 8 զիա՞րդ] որպէ՞ս ԱԲԳ 9 երկեղին Ա 10 արհամարհիցէ ԱԲԳ 11 առնիցէ] արասցէ Դ 12 կարգէն ԱԲԳ 13 պահանջիցէ Ա 13ա այսպէս] Գ 14 զհերձուածօղս ԲԳԴ 15 զԱրիոս Ա 16 զկաթարոս ԲԳ, զկաթարոսսն Դ 17 զմակեդոնիանոսսն Դ, + եւ Բ 18 զՍմբատիանոս Գ, զՍամբատիանոսսն Դ 19 զՆաւատիանոսն Դ 20 զչորեքտասանեակս ԱԲ, զչորեքտասեակս Գ, զչորեքտասանեայքսն Դ 21 զապօղինարիոսն Դ 22 սոքայ ԱԳ 23 նախ] Դ 24 զհերձուածսն Դ 25 որում Ա 26 որ] յորում Ա 27 վարդապետութեան եկեղեցոյ Բ, Քրիստոսի] ԱԲԳ 28 քահանեն Ա 29 զգաարանս Ա, զգայարանօքն Դ 30 ի հաղորդութիւն] Դ 31 արեան ԱԴ 32 լուացման ԱԲԴ 33 այլեւ] եւ ԱԲԳ 34 պարապեալ Ա 35 առաւօտին ԲԳԴ 36 երեկոյն ԱԲԳ 37 աշակերտեալ Ա 38 կացուցանել ԲԳ 39 քահանայն] Ա 40 աւազանին] սեղանին Ա 41 մերն] իւրն Ա, մերն էր] էրն Դ 42 նորա Ա ԳԴ 43 խորողք Ա, խոր-

հողքն Դ 44 + նորա ԱԲԳ 45 յաղանդոյն Ա 46 մի] Դ 47 ի] եւ ԱԳ 48 + աստուածութիւն Դ 49 երրորդութեանն ԲԳԴ 50 տա Բ 51 մի մի Ա 52 զբանն Դ 53 երից հաւատս Գ 54 տա Բ, + թէ ԱԲԳ 55 խաւսել ԱԲԴ, խօսիլ Գ 56 կալցէ Ա 57 ճշմարտութիւն Ա 58 որ հազիւ Դ 59 քոյ Ա, քոոյ Բ, քո Դ 60 ճշմարտութիւնդ Ա 61 եւս] Դ 62 որ ԱԲԳ 63 այսմ Ա 64 ածել ինձ Բ 65 + եւ ձայնի իմում լուիցեն Դ 66 զսայ ԱԳ 67 լաւ ԱԲԳ 68 եւ] ի Դ 69 եւ փառաւորեալ (փառաւորել Բ) առաքելոց քոց] Ա 70 սայ Ա 71 հոգոդ Ա, հոգոյդ Բ 72 տնկարութեանդ Գ, տնկարկութեանդ] անկարկութեամբ Դ 73 հաղորդութեամբ Դ 74 վերայայտեայ ԱԲ, վերաստեղծեա Դ 75 հոտիդ Դ 76 զուգաթեւեսցի Գ 77 եւ սա] Դ 78 գովութեան ԱԲ 79 մեծութիւն գովութեան քոյ Դ 80 յաւիտեան Բ 81 յաւիտենից, ամէն] Բ 82 որպէս] Գ 83 ասացի Ա 84 նորկնիք Ա 85 վերայ յայտել Ա 86 կատարեալ ԳԴ 87 որ ի քեզ] Դ 88 հաւատովք ԲԳ, հաւատոյ ի քեզ Դ 89 ամենայն Գ 90 հաստատեա] հաւատաց ԲԳ 91 եւ] ԱԲԳ 92 զարգացոյ ԱԲԳ 93 յարդարութիւն Դ 94 եւ] ԲԳ, վաելուչ Ա, մեծ վայելուչ Դ 95 սրբոց սուրբ ԱԲԳ 96 եւ միշտ] Դ 97 յաւիտենից, ամէն] ԲԳ 98 Ապա ... Քրիստոսի] ԱԲԳ 99 + եւ ԲԴ 100 ի] ԲԳԴ 101 նզովեալ Ա 102 զհերձուածս ԱԲԳ 103 են եւ զամենայն ... իսկ] ամենայն հերձուածք ԱԲԳ 104 ասին ԱԲԳԴ 105 վերա ԲԳԴ 106 կեցցեն եւ ի] Գ 107 ճշմարտութիւն Ա 108 զի կեցցեն ... եկեսցեն] զի ամենայն մարդիկ գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն Բ 109 զպատրեալս Բ, զպարտեալսն Դ 110 վարդապետութենէն Դ 111 + ամենայնի Դ 112 + քո զայս Դ 113 սատանայի] հակառակողին Դ 114 զսա] ԱԲԳ 115 ընդ] Դ 116 այնոցիկ Դ 117 եկաց ԱԲԳ 118 արդ] Ա 119 ամբիծ ԲԳ 120 հոգոյդ սրբոյ ԱԴ, հոգոյ սրբոյ Բ, սուրբ հոգւոյ] Գ 121 այժմ ... յաւիտենից] Բ 122 զկեղեւտացին Դ 123 զեւմիանոսս Ա, զԵւմիանոսս Գ 124 զՍաբէլացիս] ԲԴ, եւ զսաբէլացիո] 125 զորդ է հայրութիւն ԳԴ 126 Սամուստացոյ Ա, Սամոստացոյ Բ 127 զմանինացիս եւ Դ, + եւ Գ 128 զՎաղենտիոսս Ա, զՎաղենտիոս ԲԳ 129 զՊեպուզացին Դ 130 զՓոտիանոսս ԱԲԳ 131 զանոտացիս ԱԲԴ 132 զԱպօղինարոս Գ 133 զկերիթիանոսս Ա, զկերիթոսս ԲԳ 134 զԵրդինացիս ԲԳ, զԵրգինացիս Դ 135 զՄէնանդրացիսս Ա, զՄենանդրացիս ԲԳԴ 136 հերձուածողք Ա 137 զՀրայս Ա, իբրեւ] Դ 138 մկրտեալ ԱԳԴ 139 նոցայ ԱԲ, սոցայ Դ 140 դեպ ԱԳ 141 յերկարութիւն ԱԲ 142 է հայրապետացն ԲԳ 143 սուրբ] ԲԳ 144 հոգոյն Ա 145 արարել ԱԲԳ 146 այսպէս Դ 147 + զի] ԱԴ 148 սոցին ԱԲԴ 149 եւ զսոցին ... մկրտել] ցոցին ի ջուր չմկրտել եւ զնոցին նմանեացն Դ 150 զուղեղ Ա 151 զհերձուածն ԱԲԳ 152 օծանեալ Բ 153 նոցայ] նորայ Ա, նոցա] Դ 154 զաղանդաւորս Ա 155 զՀրայսս Ա, զհեթանոսս եւ զհրէայս] զՀրեայ եւ իբրեւ հեթանոս Դ 156 + են Դ 157 մկրտել ԱԲ 158 զՆեստորիոս ԲԳ 159 զԵւտիքիոսս ԱԲԳ 160 Շնորհոքն Քրիստոսի բարձեալ են աղանդաւորքն ԲԳ 161 նմանիք Ա

[ԻԸ] 1 Վիրք եւ Ցոյնք Դ 2 ամբաստեն Ա, բամբասեն Դ 3 զՑոյնք եւ

զՎիրք Դ 4 բնութեան Ա 5 ասելոյ Դ 6 զՀայք ԱԲԳ, բամբասեն զՀայք Դ 7 զԵւտիքին Դ 8 միաբանութիւն ԱԴ 9 յայտ է եւ] Դ 10 իբրեւ զԵւտիքէս ԲԳԴ 11 անճառ միութեան Ա, անճառելի] անքակ Դ 12 նոքայ Ա 13 այնպէս Դ 14 կարծին Գ 15 է] ԲԳ 16 յատկութեան Ա 17 + ասել ԲԳ 18 գալ] Ա 19 աստուածանալ Դ 20 զայտ Ա 21 անգիտանամք, զի այդ] Գ 22 Եւտիքեա ԲԳ 23 զատկութիւն Ա, զյատկութիւն Դ 24 մարմնոյ Ա 25 այդ] այն ԲԳ, այնորիկ Դ 26 քարշել Դ 26ա ճշմարտից Ա 27 առաջնոցն Դ 28 ծածկութիւն ԱԲԳ 29 Նեստորին ԲԳ 30 աշակերտեալք նոցա Դ 31 ժողովոյն Ա 32 եդաք ԲԳ 32ա զսահման Դ 33 նզովէք] ժողովէք Բ 34 այսորիկ] որոյ այսոցիկ Ա, յայսոցիկ Բ, այդոցիկ Գ 35 վճիռ ԱԴ 36 ասացել ԱԴ 37 ճշտութեամբ Գ 38 զի առաքեալ ... մկրտիլ] ԲԳ 39 մաւնուն Դ 40 եւ] ԱԳԴ 41 Վիրք եւ Ցոյնք Դ 42 եւ Հայք] ԲԳ 43 որպէս] որ Ա

[ԻԹ] 1 + եւ զաղթասիրութիւն Ա, զյաղթասիրութիւն Դ 2 զոր Բ 3 Քրիստոս խոստովանին (խոստանին) Ա, զորն թողուն Գ 4 եւ] Ա 5 զՆեստորիոս Ա, զՆեստորիոսս ԲԳ 6 զԵւտիքիանոս եւ ոչ զՆեստորիանոս Դ 7 կամ] Գ 8 նաեւ] նա Բ 9 Սեբիոս Գ 10 + եւ ԱԲԳ 11 առաջինքն] ԱԲԳ 12 ուղղափառ ԱԲԳ 13 ծանրախաւս Ա, ծանրախաւսն] ծանրագոյն Գ 14 զԱկակ զԲիւզանդիայ ԱԲ, զանկակ զԲիւզանդիա Գ 15 ժողովոյն] Դ 16 թէ] զի ԱԲԳ 17 Ցոյնք եւ ի Վիրք Դ 18 է] Դ 19 վասն] Դ 20 զփառսն Դ 21 տէր Ա 22 իբր] որպէս Դ 23 ճշմարտութեանն ԲԳ 24 զայդպիսի հակառակութեան ԲԳ 25 թէ ԱԴ 26 միմեանց ԱԴ, զմիմեանց ԲԳ 27 եւ կալ] Գ 28 ազգ ԱԲԳ 29 թագաւորք ԱԲԳ 30 + եւ ԲԳ 31 Հայք եւ Վիրք եւ Ասորիք եւ Ցոյնք եւ Հոռոմք ԲԳ, Ցոյնք եւ Հայք եւ Վիրք եւ Ասորիք Դ 32 սուրբ] ԱԲԳ 33 զերրորդութիւն Ա 34 + եւ Դ 35 ի] Դ 36 տնաւրութիւնն ԱԲ 37 այլայլին] այլոց լինին Դ 38 զխաչ ԱԴ 39 Հայս] այս ԲԳ 40 ճշգրիտ Ա, ճիշտ Գ 41 տաւնի] ունի Դ 42 խոստովանողք Ա 43 Քրիստոսի ... երրորդութեանն] սուրբ երրորդութեան եւ Քրիստոսի աստուածութեանն եւ տնօրէնութեանն Դ 44 խաչին Դ 45 զԵւտիքոս Դ 46 հերձուածողս ԲԳ 47 Գրիգորոյ Ա 48 շնորհաւքն Քրիստոսի] Դ 49 ի Դունայ] Դունա, ի Դունայ ԲԳ 50 հրաժարեցին ԱԲ 51 պատրիլ] պարտին Ա, չպատրիլ Դ 52 ժողովն Դ 53 արարել ԱԲԳ

[Լ] 1 զխոստովանութիւնն Ա 2 կարծիցիք ԱԲԳ 3 ակառութեամբ Գ 4 չառնու ԲԳԴ 5 անցելոցն ԱԴ 6 վկայից Ա, վկայից սրբոց Դ 7 կարծիւք ԱԴ, կարծեօք ԲԳ 8 բարո Ա, բարոյ ԲԳ 9 տաւնել ԱԲԴ 9ա Աստուածաբանն ԱԴ 10 վկաին Ա, վկային Մամասայ Դ 11 Գրիգորի գրեալ է Դ 12 + երանել Ա, երանելի Բ երանելին Գ 13 թէ ի ... ոչ տաւնէր] ոչ տոնէր ի չորեքշաբաթու եւ յուրբաթու Գ 14 յարութեանն յաւուրսն ԲԳ, յաւուրսն յարութեանն Դ 15 սրբոց] ԱԲԳ 16 Վրաց ԱԴ 17 զկնքահայրսն Ա, զկնքահարսն Դ 18 անգովելի ԲԳ 18ա ոչ է] չիք Դ 19 զՀայք ԱԴ, Հայք ԲԳ 20 զազգականս Ա 21 Աս-

տուածաբան Ա 22 եւ] Ա 23 հայր ԱԲԳ 24 աշխարհի ԱԲԳ 25 արժանին Ա, արժանոյն Բ 26 անհնազանդ ԱԲԴ 27 + Հայք ԱԲԴ 28 զայլ Ա 29 եաք Ա 30 ընտրութեան Դ 31 ինքն] Դ 32 ամենայն] Դ 33 յարքայութիւնն Բ 34 երկնից] Դ 35 մեր ԱԲԳ 36 + թէ Դ 37 + կամ այն ԱԲԳ 38 զբարեգործն Դ 39 եւ աւրհնէ] Դ 40 + օրհնէ Դ 41 ստեղք ԱԲԳ 42 բազմեսցեն Ա 43 եւ բազմեսցին ... Յակոբայ] Դ 44 յամենայն] ընդ ամենայն Ա, ամենայն Դ 45 + եւ ԱԲԳ 46 եւ] ԲԳ 47 Յոյն կամ Վրացի Դ 48 նա] Դ 49 ուղկանի ԲԳԴ 50 որ Դ 51 յամենայն 52 ըմբին Ա, ըմբռնեն ԲԳԴ 53 զՋաճուտն Ա 54 հանդերձեալքն Ա 55 չապաշխարեն ԱԲԳ 56 Վրացիոյ Ա, Վրացիոյ ԲԳ 57 եւ կամ] կամ ԲԳ, եւ թէ Դ 58 եւ] Դ 59 քրիստոնեա ԱԲ 60 զի ... հրամայեաց] ամենայն պատրաստ լիցի գեհենի Քրիստոս հրամայեաց Դ 61 հրամանեց Ա, հրամայեց Բ 62 ցեղբեր Ա, զեղբայր Գ 63 գեհեն հրոյ Բ, գեհեան հրոյ Գ, որ ասէ ... հրոյն] Դ

Ամփոփումն 1 Աճա ԱԳԴ 2 չափ Դ 3 եւ գրոց վկայութեամբ] Ա 4 թեպէտեւ Ա, թէպէտ ԲԳ 5 բարէպաշտ Ա 6 թագաւորք Ա, թագաւորքն ԲԳ 7 Թամարդ ԲԳԴ 8 Թամարդ եւ Դաւիթ չեն բաւական Դ 9 տիեզերական] Դ 10 + տիեզերական Դ 11 Հոռոմայեցւոց Ա 12 շնորհօքն Աստուծոյ Դ 13 թշնամութիւն ԱԴ 14 եւ թշնամութիւն] ԱԴ 15 զխատ] զհաւատ Գ 16 որ զխաչ ... նախատեն] որ զմիմեանց խաչ եւ եկեղեցի անարգեն Դ 17 յառաջագոյն] վերագոյն Դ 18 կամք] Գ, Աստուծոյ ... կամք] Քրիստոսի հաճոյ Դ 19 քրիստոնեից Ա 20 միայկրաւն Ա, միակրօն ԲԳ 21 էին լեալ] լինէր Դ 22 արժանի] հնար ԱԴ 23 իշխան Դ 24 որք Դ 25 + ոչ Ա 26 Հայոց] Աստուծոյ Ա 27 այրեն ԱԲԳ 28 ժամանակեա ԲԳ, ժամանակի Դ 29 + եւ Ա 30 յաւիտենական ԱԴ 31 թագաւորութիւն Դ 32 + եւ Ա 33 ընդ] Դ 34 Կոստանդիանոսին Ա, + ընդ Ա 35 Թէոդոս Գ 36 + ընդ ԱԲ 37 իքեանց Ա 38 աստուածասիրաց Դ 39 պսակին ԱԴ 40 ունիցին] առնին Դ 41 զիւրեանց թագաւորութիւնն Դ 42 եւ] ԱԲԳ 43 + եւ Ա 44 յաղթող Դ 45 բարէպաշտութեամբ Ա 46 իշխանօք Դ, + քաղցր կամաւք ԱԲԳ 47 իրաւամբ ԱԲԳ 48 + եւ ԱԲԴ 49 մենք ԱԲԳ 50 գաւազի Ա, + արքայութեանն ԱԲԳ 51 կենս Ա 52 եւ պայծառացեալք] Ա 53 երկրպագութեամբն ԲԳ 54 ամենասուրբ Հոգոյն Ա 55 ընդ Հաւր ... միշտ եւ] Դ 56 յաւիտենից] Գ 57 եւ միշտ ... ամեն] Բ

ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՍԿԵՒՌԱՑՈՒ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

ՊԱՏԱՍԽԱՆ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԷ ՏԱՍՆՄԷԿ [ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ] ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԱՒԵԼԻ ՓՈՔՐ Է, ՔԱՆ ՊԵՏՐՈՍԻՆԸ, ԿԱՄ ՊԱՏՐԻԱՐՔՆ ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ Է, ՔԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ [ԳՐՈՒԱԾ] ՀԱՅՈՑ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԵՒ ԿԱՍՏԱՂՈՆԻ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅՈՐԴՈՐՈՎ

(շարունակութիւն)*

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Քրիստոս միայն Պետրոսին ասաց, թէ՝ «Քեզ կտամ երկնային արքայութեան բանալիները, եւ ինչ որ մի անգամ կապես երկրի վրայ, կապուած կլինի երկնքում, եւ ինչ որ արձակես երկրի վրայ, արձակուած կլինի նաեւ երկնքում»[1]»:

Պատասխան տուեցի եւ ասացի. «Այստեղ Քրիստոս խոստացաւ միայն եւ իշխանութիւն չտուեց, քանի որ չասաց, թէ՝ վերցրո՛ւ, կամ ընդունի՛ր, այլ թէ՝ կտամ քեզ: Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս է ապագային թողնում տալը:

Իսկ եթէ տուել է նոյն պահին, ասացէ՛ք, թէ ինչ է տրուածը, որով պարծենում էք մեզ վրայ: Քանզի այստեղ միայն բանալիներն է յիշում, թէ խոստացաւ, իսկ տալու եւ ամենակարեւորը՝ բացելու մասին չի խօսում: Ո՞րն է Պետրոսի փառքը. սոսկ բանալի՞ն՝ առանց բացելու [կարողութեան]: Մի տեղում Փրկիչն ասաց, թէ փարիսեցիներն էլ ունեն նոյնը. «Վա՛յ ձեզ,- ասում է,- փարիսեցիներիդ եւ դպիրներիդ, որ փակում էք երկնքի արքայութեան [դռները]. ինքներդ չէք մտնում եւ

---

* Սկիզբը տե՛ս «Գանձասար» Ե:

1 Տե՛ս Մատթ. ԺԶ 19:

մտնողներին արգելում էք»[1]:

Եւ այս խօսքն է սոսկ, որ միայն Պետրոսին է ասում, եւ որով կարծում էիք բարձրացնել [նրան], նուաստացրիք: Իսկ եթէ նկատի ունէք կապելն ու արձակելը, որը ճշմարիտ եւ բարձրագոյն իշխանութիւն է, ապա այդ խոստացաւ ոչ միայն Պետրոսին, այլ նաեւ տասնմէկին, երբ պատուիրում էր նրանց. «Եթէ քո եղբայրը մեղանչի քո դէմ, գնա՛ եւ առանձին յանդիմանի՛ր նրան, իսկ եթէ չլսի ու նորից կրկնի, ասա՛ հաւատացեալների ժողովում. եւ եթէ նրանց էլ չլսի, թող լինի քեզ համար ինչպէս հեթանոսները: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած կլինի երկնքում, եւ ինչ որ արձակէք երկրի վրայ, արձակուած կլինի երկնքում»[2]: *Ահա նաեւ այստեղ հաւասար դուրս եկան տասներկուսը. եւ ինչպէս այնտեղ Հայրը չկամեցաւ զրկել Պետրոսին դաւանութեան մէջ, այնպէս էլ այստեղ Որդին չկամեցաւ զրկել տասնմէկին [նոյն] խոստումից: Եւ թէ խոստում է այն, որ [ասուեց] միայն Պետրոսին, եւ այս, որ հաւասարապէս [ասուեց] տասներկուսին, յայտնում է նոյն ինքը Պետրոսը՝ հարցնելով Քրիստոսին. «Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի, պէտք է ներեմ նրան»*[3]: *Տեսնո՞ւմ էք, որ դեռեւս իշխանութիւն չէին ստացել, ուստի հարցնում է, ինչպէս իշխանութեան չափին անծանօթը»:*

Լիկաթն ասաց. «Եթէ սրանք սոսկ խոստումներ են, ապա ո՞ւր են պարգեւները. մի՞թէ ստում է Քրիստոս»:

Ես պատասխանեցի. «Ճշմարտութիւնը՝ [այսինքն՝ Քրիստոս,] չի ստում, այլ Ցարութիւնից յետոյ, երբ առաքում էր նրանց, Սուրբ Հոգով բոլորին հաւասարապէս կատարեալ իշխանութիւն տուեց: «Կիրակի երեկոյեան, Յիսուս փակ դռների միջով մտնելով այնտեղ, ուր հաւաքուել էին աշակերտները, կանգնեց նրանց մէջ եւ ասաց. «Ողջո՛յն ձեզ»: Եւ, կրկնելով ողջոյնը, ասաց նրանց. «Ինչպէս Հայրն առաքեց Ինձ, Ես էլ առաքում եմ ձեզ»: Եւ երբ այս ասաց, փչեց նրանց վրայ եւ ասաց. «Առէ՛ք Սուրբ Հոգին. եթէ մէկի մեղքերը թողնէք, թող-

1 Տե՛ս Մատթ. ԻԳ 13:

2 Տե՛ս Մատթ. ԺԸ 15-18:

3 Մատթ. ԺԸ 21

նուած կլինի, եւ եթէ մէկին բռնէք, բռնուած կլինի»[1]:

Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս են տարբերւում խոստումները պարգեւներից, քանի որ այնտեղ ասում է՝ ում կապէք, իսկ այստեղ՝ ում թողնէք եւ բռնէք»:

Այլ պատասխան.

«Վերադառնանք սերմնացանի առակից յետոյ աշակերտների՝ Տիրոջը տրուած հարցին. «Ինչո՞ւ ես նրանց հետ առակներով խօսում»: Պատասխանում է նրանց. «Ձեզ է տրուած իմանալ երկնքի արքայութեան խորհուրդները»[2]: *Իսկ Ղուկասն ասում է, թէ՝ «Իր աչքերը բարձրացրեց աշակերտների վրայ ու ասաց. «Երանի՛ հոգով աղքատներիդ, քանի որ ձերն է երկնքի արքայութիւնը»»*[3]: *Արդ, եթէ իշխանութիւն տուեց՝ իմանալու անճառելի եւ նուիրական խորհուրդները, որ միայն Իրենն են եւ իւրայիններինը՝ ըստ գրուածի, թէ՝ «Իմ խորհուրդը՝ Ինձ եւ իւրայիններիս»*[4], *ապա ինչո՞ւ չպէտք է կամենար տասնմէկին տալ դրսինը եւ դռան հետ կապուածը: Եւ դարձեալ, եթէ արքայութեան ողջ իշխանութիւնը տուեց տասներկուսին, ինչո՞ւ պիտի դռան աւելի փոքր իշխանութիւնը չվստահէր նրանց. եւ եթէ իրենցն է, ինչպէս որ տուեց, ինչպէ՞ս չունեն իշխանութիւն իրենց տէրութեան մէջ: Ահա աւելի մեծով ցոյց տրուեց, որ ունեն նաեւ աւելի փոքրը:*

Իսկ այժմ տեսնենք, թէ ինչ է երկնքի արքայութեան բանալին, եւ կամ թէ ում տուեց, որպէսզի մենք էլ չվրիպենք խօսքի ստուգութիւնից, [եւ] ուրիշ ազգերի պէս ընդունայն չլինի նաեւ մեր պարծանքը:

Արդ, ինչպէս Քրիստոսից աւանդուեց մեզ, առաջին բանալին մկրտութիւնն է, ինչպէս ասում է Յիսուս Նիկոդեմոսին. «Եթէ մէկը վերստին չծնուի ջրից եւ Հոգուց, չի կարող մտնել երկնքի արքայու-

1 Տե՛ս Յովհ. Ի 19-23: Այս սուրբգրային վկայակոչութիւնը թարգմանելիս որոշակի բառային հարազատութիւն է պահպանուած գրաբար բնագրի նկատմամբ, ինչը պայմանաւորուած է յաջորդող նախադասութեան մէջ այդ բառերի շեշտադրմամբ: Յաջորդ նախադասութեան մէջ այդ բառերը ներկայացուած են շեղատառ: Թողնել կամ բռնել այստեղ նշանակում է մեղքերին արձակում տալ կամ չտալ (խմբ.):

2 Տե՛ս Մատթ. ԺԳ 10-11:

3 Տե՛ս Ղուկ. Զ 20:

4 Ես. ԻԴ 16

թիւն»[1], որի համար նաեւ իշխանութիւն տուեց: Իսկ երկրորդը Հօր կամքի կատարումն է, ինչպէս դարձեալ ասում է Տէրը, թէ՝ «Ոչ ամէն ոք, որ ասում է Ինձ՝ Տէ՛ր, Տէ՛ր, կմտնի երկնքի արքայութիւն, այլ՝ նա, ով կկատարի Իմ Հօր կամքը, որ երկնքում է»[2]:

Իսկ թէ ինչն է Հօր կամքը, նոյն Ինքը Որդին ուսուցանում է եւ ասում. «Իմ Հօր կամքը չէ, որ նրանցից որեւէ մէկը կորստեան մատնուի»[3]՝ ըստ այն մէկ գտնուած ոչխարի օրինակի, որ մոլորուել էր հարիւրի միջից: Եւ նրանց իշխանութիւն է տալիս. «Եթէ մեղանչի,- ասում է,- քո եղբայրը, գնա՛ եւ յանդիմանի՛ր նրա մեղքերը, երբ դու [եւ նա] մենակ էք, եւ եթէ լսի քեզ եւ խոստովանելով ապաշխարի, շահեցիր եղբօրդ: Ժամանակի ընթացքում արձակի՛ր ապաշխարութեան կապանքները, թո՛յլ տուր նրան [հաղորդակից լինել] Եկեղեցուն եւ կենարար խորհրդին, որը երկնքի արքայութեան առհաւատչեան է: Իսկ եթէ յամառելով հրաժարւում է, երկրորդ եւ երրորդ յանդիմանութիւնից յետոյ թող քեզ համար լինի ինչպէս հեթանոսը. կապի՛ր նրան եկեղեցական խորհուրդներից դուրս»[4]: Որը նաեւ երկնքում ունի նոյն կապանքը՝ ըստ Տիրոջ անսուտ խօսքի:

Արդ, տասներկու առաքեալներն այս կատարեալ իշխանութիւնը ստացան Քրիստոսից եւ ոչ թէ Պետրոսից. եւ, գնալով իրենց վիճակները, աթոռներ հաստատեցին իրենց, որոնք անսասանելի են դժոխքի դռների համար՝ համաձայն Տիրոջ խօսքի: Եւ այս իշխանութիւնը ձրիօրէն տուեցին իրենց աշակերտներին, ինչպէս եւ ստացան՝ Քրիստոսի խօսքի համաձայն: Եւ սա երեւում է նրանից, որ այժմ էլ Եկեղեցում կատարւում է Քրիստոսից աղբիւրացած մկրտութեան խորհուրդը, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ մաքրութիւնը, [որը] ոչ թէ Պետրոսի միջոցով է [տրուել] տասնմէկին եւ ապա նրանցով՝ մեզ, այլ Քրիստոսից՝ բոլոր տասներկուսին, իսկ նրանցից՝ իւրաքանչիւր վիճակին: Դրա համար էլ Հռոմի Եկեղեցու կարիքը չունենք, քանզի մեր աթոռի վրայ նստողը առաքեալ է Տիրոջից՝ համապատիւ ձերինին: Արդ, ո՞ւր մնաց ձեր պարծանքը, որ Պետրոսի կամքով չէ»:

1 Տե՛ս Յովհ. Գ 5:
2 Տե՛ս Մատթ. Է 21:
3 Տե՛ս Մատթ. ԺԸ 14:
4 Հմմտ. Մատթ. ԺԸ 15-19:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Մի՞թէ Տէրը չասաց. «Սիմո՛ն, [Ես աղօթեցի քեզ համար, որպէսզի քո հաւատքը չպակասի, եւ] դու, երբ վերադառնաս, հաստատես քո եղբայրներին»[1]: Ի՞նչն է աւելի բարձր իշխանութիւն, քան այս»:

Պատասխան. «Նախ՝ հաստատել մէկին՝ առաւելապէս չի [նշանակում հաստատել] ինչ-որ անկումից յետոյ: Եւ նախ հարցնում եմ ձեզ, թէ ինչի մէջ ընկան տասնմէկը Սուրբ Հոգին ընդունելուց յետոյ, որ Պետրոսը հաստատեց նրանց: Ցո՛յց տուէք առաքելական մատեաններում, եւ ես կհամաձայնեմ ձեզ հետ: Իսկ այժմ մեզ, որ նրանց սահմանած կարգի մէջ ենք, դարձեալ հարկադրում էք անզգամ լինել, բայց անզգամ չեմ լինի, քանի որ ճշմարտութիւնն եմ ասում: Գիտենք, որ միայն Պետրոսն էր գայթակղուել Տիրոջ Յարութիւնից յետոյ: [Եւ] ինչպէս ասում է Պօղոսը Գաղատացիների [թղթում]. «Անխտիր ուտում էր բոլոր հեթանոսների հետ: Իսկ երբ եկան ոմանք Յակոբոսի շրջանակներից, վախենալով առանձնացաւ, մինչեւ որ նրա հետ կեղծաւորութիւն արեցին նաեւ ուրիշները, եւ անգամ՝ Բառնաբասը: Եւ երբ տեսայ,- ասում է,- որ ուղիղ չեն ընթանում Աւետարանի ճշմարտութեամբ, բոլորի առաջ ասացի Կեփասին...»[2]: Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս Պետրոսը գայթակղուեց եւ հաստատուեց Պօղոսի կողմից, եւ ոչ թէ միւսները՝ նրա, [այսինքն՝ Պետրոսի] կողմից:

Ո՛վ եղբայրներ, հաստատելը բազմաթիւ իմաստներ ունի, սակայն մենք հետեւեալ երեքին անդրադառնալով՝ տեսնենք, թէ ինչ իմաստով է Պետրոսը հաստատում տասնմէկին՝ ըստ Տիրոջ խօսքի: Արդ, ուրիշներին հաստատելը կա՛մ ընդհանուր է, կա՛մ մասնաւոր, որը իշխանական է, կա՛մ անձամբ օրինակ լինել՝ առանց իշխելու, ինչպէս Պետրոսի [դէպքում] է: Եւ որպէսզի խօսքս հաւաստի լինի, ցոյց տանք Գրքից:

Եւ արդ, ընդհանուր հաստատումը հետեւում է ընդհանուր գայթակղութեանն ու հաւատքից թերանալուն, ինչպէս եւ գրում է Պօղոսը բոլոր կորնթացիներին. «Այսուհետեւ, եղբայրնե՛ր իմ սիրելի, հաստատո՛ւն եղէք, անշա՛րժ մնացէք, [ամէն ժամ] աւելի՛ն եղէք Տիրոջ գոր-

1 Տե՛ս Ղուկ. ԻԲ 32:
2 Տե՛ս Գաղ. Բ 12-14:

ծերի մէջ»[1]. եւ դարձեալ՝ «Արթո՛ւն կացէք, հաստատո՛ւն մնացէք հաւատքի մէջ»[2]: Իսկ մասնաւորն [այն է], երբ մէկն է մեղանչում, ինչպէս մեղանչած կորնթացու դէպքում, որին հաստատում է ջերմեռանդ ապաշխարութիւնից յետոյ՝ գրելով նրան. «Շատ է,- ասում է,- այդպիսինին այդ պատիժը: Աղաչում եմ ձեզ՝ այսուհետեւ նրա նկատմամբ հաստատել սէրը»[3]: Կամ այն, որ [գրում է] գաղատացիներին. «Եթէ մէկը բռնուի ինչ-որ յանցանքի մէջ, դուք, որ հոգեւոր էք, հաստատեցէ՛ք նրան հեզութեան հոգով»[4]: Արդ, այս երկու իմաստով (որ իշխանականն է) որեւէ տեղ չի ասւում, թէ Պետրոսը հաստատեց տասնմէկին, եւ դուք չէք կարող ցոյց տալ: Քանզի Սուրբ Հոգին ընդունելուց յետոյ եւ ոչ մի յանցանք չկայ՝ յիշատակուած նրանց մասին՝ լինի ընդհանուր, թէ մասնաւոր:

Ապա խօսենք երրորդ իմաստի մասին, որ օրինակով է եւ ոչ իշխանութեամբ, ինչպէս դարձեալ ասում է գաղատացիներին, թէ՝ «Սակայն ինչ վերաբերում է ներս սպրդած սուտ եղբայրներին, որոնք ներս սպրդեցին՝ մտնելու տեսնելու մեր ազատութիւնը, որ ունենք ի Քրիստոս Յիսուս, որպէսզի մեզ ծառայ դարձնեն, երբէք չանսացինք հնազանդուել նրանց, որպէսզի Աւետարանի ճշմարտութիւնը հաստատուի ձեր մէջ»[5]: Որը սակայն արեց Պետրոսը ներս սպրդած սուտ եղբայրների [առաջ], որոնք ասացին այն գիշերը, երբ Տիրոջը ատեան բերեցին, թէ՝ դո՞ւ էլ ես նրանցից: Նա ուրանալով՝ [ասաց], թէ՝ ոչ[6]: Եւ որովհետեւ կամեցան բոլորովին ծառայեցնել ուրացութեանը, երկրորդեցին եւ երրորդեցին [հարցումը], եւ իսկոյն կանչեց աքաղաղը: Եւ, յիշելով Տիրոջ խօսքը, այլեւս չենթարկուեց ուրացութեանը եւ, դուրս ելնելով, դառնապէս լաց եղաւ: Եւ հաստատեց նրանց, [այսինքն՝ տասնմէկին], Աւետարանի այն խօսքով, որ ասաց Տէրը, թէ՝ «Սիմո՛ն, Սիմո՛ն, սատանան փորձեց մաղել ձեզ ցորենի նման, բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հաւատքը չպակասի»[7]»:

1 Ա Կոր. ԺԵ 58
2 Ա Կոր. ԺԶ 13
3 Տե՛ս Բ Կոր. Բ 6-8:
4 Տե՛ս Գաղ. Զ 1:
5 Գաղ. Բ 4
6 Տե՛ս Յովհ. ԺԸ 25:
7 Ղուկ. ԻԲ 31-32

Այլ պատասխան.

«Տէրն ասաց տասներկուսին, թէ՝ դուք ամէնքդ այս գիշեր դայթակղուելու էք Իմ պատճառով: Իսկ Պետրոսը ուրացաւ եւ ասաց. «Թէպէտեւ բոլորը դայթակղուեն, սակայն ես չեմ [դայթակղուի]»: Եւ Նա, [այսինքն՝ Քրիստոս], ասաց. «Հէնց դու երեք անգամ կուրանաս Ինձ»[1], ինչպէս եւ եղաւ: Իսկ երբ տասնմէկը տեսան, որ Պետրոսը դարձի եկաւ, եւ Տէրն ընդունեց նրան, որ առաւել մեծ յանցանքի մէջ ընկաւ, հաստատուեցին հաւատքի մէջ, թէ կընդունի նաեւ իրենց՝ ներելով նաեւ իրենց դայթակղութիւնը: Ո՛վ եղբայրներ, այս է Պետրոսի կողմից եղբայրների հաստատումը, ինչ որ ասաց Տէրը, ու ոչ թէ այնպէս, ինչպէս դուք էք կարծում, [այսինքն՝] իշխանութեամբ:

Ասում է Տէրը. «...Դու, [երբ] վերադառնաս, հաստատեա՛ քո եղբայրներին»[2]: Նրա, [այսինքն՝ Պետրոսի] մարմնաւոր եղբայրներ է անուանում իսրայէլացիներին, որոնց հաստատեց Աւետարանի քարոզութեան խօսքով: Այդ վկայում է, որ Քրիստոսի անունից էր խօսում. «Նա, որ յաջողեցրեց Պետրոսին հրեաների առաքելութեան մէջ, ինձ էլ յաջողեցրեց հեթանոսների մէջ»[3]»:

Այլ պատասխան.

«Հաստատում է նաեւ [նրանց, ովքեր] ըստ աւազանի են եղբայրներ կոչւում, եւ այս՝ երկու կերպով. նախ՝ ապաշխարութեան օրինակով, որպէսզի մենք էլ հաստատուած լինենք հաւատքի մէջ, թէ նրա պէս մենք էլ մեղքերի թողութիւն ենք ստանում ապաշխարութեամբ. երկրորդ՝ Ընդհանրական թղթերի վարդապետութեան միջոցով»:

Այլ պատասխան.

««Որպէսզի դու,- ասում է Տէրը,- վերադառնաս եւ հաստատեա՛ քո եղբայրներին»[4], որը ցոյց տուեցինք. եւ չասաց, թէ՝ հաստատեա՛ սուրբերին[5] հաստատողներին, քանի որ տասնմէկը նոյնպէս հաստատողներ են Պետրոսի պէս, ինչպէս վկայում է Պողոսը, որ եփեսացիներին ասում էր Քրիստոսով, թէ՝ «Նա դրեց ոմանց որպէս մարգարէներ եւ

1 Տե՛ս Մատթ. ԻԶ 31-34:
2 Ղուկ. ԻԲ 32
3 Գաղ. Բ 8
4 Տե՛ս Ղուկ. ԻԲ 31:
5 Այսպէս էին կոչում առաքեալները առաջին քրիստոնեաներին:

աւետարանիչներ՝ հաստատելու սուրբերին պաշտամունքի մէջ Քրիստոսի Մարմնի շինութեան համար»[1]:

Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս ամէն ինչում բոլոր տասներկուսին էլ հաւասարապէս զուրկ չի պահել իշխանութիւնից, ուստի որեւէ այլ հաստատողի կարիք չունենք, քանի որ ունենք մեր Հաստատողը»:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Պետրոսի մասին աւետարանիչն ասում է. «Յիսուսը, նայելով նրան, ասաց. «Դու կկոչուես Կեփաս»[2]: Եւ Յովհաննէսը, յունարէն գրելով Աւետարանը, կեփալ ասաց, որ նշանակում է գլուխ, իսկ նախախնամութիւնը թոյլ չտուեց թարգմանել այս բառը այլ լեզուով, այլ նոյն բառով պահեց մինչեւ հիմա, որպէսզի դրանով ցոյց տրուի, որ Պետրոսը գլուխ է: Եւ Կեփասը, որ Պետրոս է թարգմանւում, չէր յիշատակում»:

Պատասխան. «Եւ արդ, ո՛վ դուք, այդ պարծանքն անկասկած յոյժ անօգուտ է: Նախ, ըստ գրուածի, Նա ասաց. «Դու կկոչուես Կեփաս»[3], եւ թարգմանեց այն Պետրոս: Յոյների Աւետարաններում մինչեւ այսօր էլ այդպէս է գրուած, քանի որ այդպէս իմացանք ընթերցելով, նաեւ՝ հարցնելով հմտագոյն մարդկանց, [որոնք] այդպէս ասացին, ինչպէս որ գրուած էր»:

Այլ պատասխան.

«Եւ արդ, քանի որ այսպէս է գրուած, ասացէ՛ք՝ ի՞նչ կարիք կար ասել, թէ Կեփալը թարգմանւում է Պետրոս. Պետրոս բառը յունարէն է, եւ դրա կարիքն ամենեւին չկար: Իսկ եթէ ասէք, թէ կեփալը կեփալով ասաց թարգմանել, սա էլ է անմտութիւն. [նշանակում է] միեւնոյն լեզուի մէջ գլուխը գլխով թարգմանել, ինչը եւ պարտաւոր էինք մենք անել, որ [Աւետարանը] թարգմանեցինք մեր լեզուով:

Եւ դարձեալ, եթէ Յովհաննէսը Տիրոջից գլուխ լսեց եւ քար թարգմանեց, դա ոչ միայն յիմարութիւն, այլեւ ստութիւն եւ թերութիւն է ներմուծում Աւետարանի մէջ եւ այն անստոյգ ցոյց տալիս ամ-

1 Տե՛ս Եփես. Դ 11-12:

2 Տե՛ս Յովհ. Ա 42:

3 Տե՛ս Յովհ. Ա 42:

բողջութեամբ, որը քաւ լիցի: Իսկ եթէ եբրայերէն Կեփաս է լսել եւ ասել, թէ այն յունարէն Պետրոս է թարգմանւում, ինչպէս որ գրուած է նրանց, ձեր եւ բոլոր ժողովուրդների Աւետարաններում, [ապա] ինչո՞ւ էք մեզանից ճշմարտութեան դէմ եւ ասում, թէ նախախնամութեամբ է պահուել բառը: Արդեօք ի՞նչ առաւելութիւն ունի յունարէն կեփալ բառը հայերէն գլուխ բառի նկատմամբ. մի՞թէ նոյն նշանակութիւնը չունեն: Ահաւասի՛կ դատարկ մտածութիւն:

Իսկ թէպէտեւ համաձայնենք ձեր ասածին, թէ գլուխ է ասել, ասացէ՛ք՝ ում գլուխն է. քանի որ ամէն մի գլուխ [որոշակի] անձնաւորութեան գլուխ է: Եւ ձեր տարբերակով ասուածը անձնաւորութիւնը չի ցոյց տալիս, ինչպէս նաեւ՝ ասելը՝ արածեցրո՛ւ ոչխարներին: Եւ եթէ չկայ անձնաւորութիւն, ապա չկայ նաեւ գլուխ, ինչպէս ձեզ է թւում: Եւ ինչո՞ւ էք ստուերի հետ մարտնչում [եւ], օդին հարուածելով, կարծում, թէ յաղթեցիք նրան, ում չէք տեսել»:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Տէրը միայն Պետրոսին ասաց. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին»[1], եւ սա, կարելի է ասել, իշխանութեան անբեկանելի նշան է»:

Պատասխան. «Նախ տեսնենք, թէ արդեօք սրան համազօր խօսք կա՞յ Աւետարաններում, թէ՞ ոչ. եւ թէ՝ աշակերտ դարձնելուց աւելի ի՞նչ այլ նշանակութիւն ունի արածեցնելը: Եւ որ ուրիշ ոչինչ չի նշանակում, վկայում է Եզեկիէլը Աստուծոյ անունից (թէպէտեւ [բառիս] ժխտական ձեւի [գործածմամբ]). «Այսպէս է ասում Տէրը. «Ո՛վ Իսրայէլի հովիւներ, մի՞թէ հովիւներն իրենք իրենց են արածեցնում: Մի՞թէ հովիւները չեն արածեցնում ոչխարներին: Ահա պարարտներին մորթում էք, բուրդը հագնում եւ կաթը ուտում, իսկ Իմ հօտերը չէք արածեցնում»»[2]. ինչպէս եւ այժմ է, եւ չկայ մէկը, որ յանդիմանի:

Ուրեմն, եթէ յայտնի դարձաւ, որ արածեցնելը եւ աշակերտ դարձնելը նոյն [իմաստն] ունեն, ապա մենք ուշադրութիւն չենք դարձնում միայն բառերի տարբերութեան վրայ, այլ՝ մտքի նշանակութեան վրայ, քանի որ Փրկիչը սովորաբար միեւնոյն իմաստը բազմա-

1 Յովհ. ԻԱ 16-17

2 Տե՛ս Եզեկ. ԼԴ 2-3:

զան բառերով է արտայայտում, ինչպէս երկնքի արքայութիւնը՝ ուռկանով, գանձով եւ մանանեխով, այդպէս էլ՝ Աւետարանի քարոզութիւնը, որի մասին այստեղ ասաց՝ արածեցրո՛ւ ոչխարներին. մէկ այլ տեղ հունձք անուանեց եւ հարսանիքի պատրաստութեան նմանեցրեց: Եւ ասաց, որ Հօր եւ Իր կողմից են հանւում եւ առաքւում մշակներն ու ծառաները. եւ ոչ թէ՝ մէկ մշակ եւ ծառայ, ինչպէս ձեզ է թւում, այլ՝ բոլոր տասներկուսը, որպէսզի հաւաքեն ցորենի խուրձը եւ իսկական լոյսից [զրկուած] կոյրերին հրապարակներից բերեն դէպի ճշմարտութեան ճանաչման լոյսը, որի համար էլ կոչւում էին աշխարհի լոյս»:

Այլ պատասխան.

«Այժմ տեսնենք, թէ ինչ է արօտը, որպէսզի այն նիւթական չհամարենք եւ արածեցնելը՝ զգայական. եւ թէ՝ մէկ ուրի՞շը կայ այս արօտում արածեցնող, թէ՞ միայն Պետրոսն է: Եւ արդ, արօտն ինքնըստինքեան կերակուր է եւ եթէ կերակուր է, ուրեմն տարբեր է ըստ ուտողների. ինչպէս անբանների համար [կերակուր] է զգալի խոտը, այնպէս էլ բանաւորներիս համար՝ Աստուծոյ խօսքն ու իմաստութիւնը: Ինչպէս ասում է սուրբ Դաւիթը եօթանասունեօթներորդ սաղմոսում. «Հովւում էր Իսրայէլին, արածեցնում էր նրանց սրտի իմաստութեամբ եւ ձեռքերի անմեղութեամբ առաջնորդում էր նրանց»[1]: Եւ Տէրն [ասում է], թէ՝ «Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ Աստուծոյ ամէն խօսքով»[2]: Արդ, Բանն Աստուած Իր խօսքը ոչ միայն Պետրոսին տուեց, այլ նաեւ նրա բոլոր ընկերներին Գալիլեայում, ուր ժամադրուել էր հանդիպել նրանց: Ինչպէս եւ գրուած է, երբ տեսաւ նրանց, ասաց. «Գնացէ՛ք այսուհետեւ աշակե՛րտ դարձրէք բոլոր հեթանոսներին, ուսուցանեցէ՛ք նրանց Իմ բոլոր խօսքերը, որ պատուիրեցի ձեզ»[3], եւ թէ՝ «Երբ Սուրբ Հոգին գայ, կուսուցանի եւ կյիշեցնի ձեզ Իմ խօսքերը»[4]. եւ իմաստութիւն տուեց [նրանց]: Եւ ասում է հրեաներին. «Կուղարկեմ ձեզ մօտ իմաստուններ, որոնց կսպանէք»[5]: Իսկ Պողոսն աւելացնում է. «Մենք քարոզում ենք խաչուած Քրիստոսին՝ որ-

1 Տե՛ս Սաղմ. ՀԷ 71-72:
2 Տե՛ս Մատթ. Դ 4:
3 Տե՛ս Մատթ. ԻԸ 19-20:
4 Տե՛ս Ղուկ. ԺԲ 12:
5 Տե՛ս Մատթ. ԻԳ 34:

պէս գայթակղութիւն հրեաների համար, [բայց] նրանց համար, որ կանչուած են՝ որպէս Քրիստոս Աստուծոյ զօրութիւն ու Աստուծոյ իմաստութիւն»[1]: Եւ որ քարոզութիւնն արօտ է [նշանակում], ցոյց է տալիս նոյն ինքը՝ Պողոսը. «Մանկաբարոներին,- ասում է,- կաթով կերակրեցի, իսկ պինդ կերակուրը հասուն բերան ունեցողների համար է»[2]:

Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս է ցոյց տալիս, որ հաւասար են արածեցնողները. քանզի այնտեղ Քրիստոս արօտ անուանեց Աւետարանը, [իսկ] Քրիստոսով խօսողը, [այսինքն՝ Պողոսը], այն կոչեց կաթ եւ կերակուր»:

Այլ պատասխան.

«Ո՛վ տեարք, ահա նաեւ այս բանի մէջ չզրկեց տասնմէկին, որովհետեւ ասաց՝ արածեցրո՛ւ ոչխարներին[3], եւ ոչ թէ՝ հովիւներին: Քանի որ հովիւներ են նաեւ նրան համապատիւ միւս աշակերտները ու նրա նման արածեցնող, [ինչը] վկայում է Պողոսը եփեսացիներին ուղղուած [թղթում]՝ ասելով. «Նա դրեց ոմանց որպէս աւետարանիչներ, ոմանց՝ որպէս հովիւներ եւ վարդապետներ»[4]:

Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս է ապացուցում, որ հովուելը եւ արածեցնելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ վարդապետելը, եւ տասներկուսին համահաւասար ցոյց տալիս ինչպէս ամէն ինչում, այնպէս էլ՝ այս բանում: Իսկ ո՞ր արօտում է, ըստ ձեզ, Պետրոսն արածեցնում Քրիստոսի բանաւոր ոչխարներին. ցո՛յց տուէք աւելի բարձրը, քան տասնմէկի [արօտը], որով պարծենում էք: Իսկ եթէ չէք կարող ցոյց տալ ուրիշը, քանի որ չկայ ուրիշ Աւետարան, դուք ինքներդ վկայում էք, որ նրանք մի եւ նոյն իշխանութիւնն ունեն: Աստուծոյ Որդին Հօր միջոցով անխախտելիօրէն հաստատում է նրանց իշխանութեան միութիւնը՝ ասելով. «Հա՛յր, թող սրանք մի լինեն, ինչպէս Մենք մի ենք»[5]: Եւ եթէ, ըստ Տիրոջ խօսքի, տասներկուսը հաւասար իշխանութիւն ունեն՝ Հօրից եւ Որդուց [հաստատուած], մեծ յանդգնութիւն է նրանց մէջ

1 Տե՛ս Ա Կոր. Ա 23-24:
2 Տե՛ս Ա Կոր. Գ 2, Եբր. Ե 13-14:
3 Տե՛ս Յովհ. ԻԱ 16, 17:
4 Տե՛ս Եփես. Դ 11:
5 Տե՛ս Յովհ. ԺԷ 11:

առաւելութիւն եւ նուազութիւն ներմուծելը, քանի որ դա վերաբերում է Հօրը եւ Որդուն, եւ այդպէս խորհողները ծածկաբար ախտանում են Արիոսի մոլութեամբ»:

Այլ պատասխան.

«Ու ինչո՞ւ ասաց՝ արածեցրո՛ւ Իմ ոչխարներին: Վստահեց Պետրոսին հրեաների յատուկ առաքելութեանը՝ Իրենը կոչելով ոչխարները՝ ըստ այնմ, թէ՝ «Այլ տեղ չեմ առաքուած, եթէ ոչ՝ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների մօտ»[1]. եւ թէ՝ «Իւրայինների մօտ եկաւ»[2], ինչպէս Պօղոսն է վկայում այս առաքելութեան մասին գաղատացիներին ուղղուած [թղթում]. «Երբ երեւելի մարդիկ տեսան, թէ ինձ է վստահուած հեթանոսների աւետարանը, ինչպէս Պետրոսին՝ հրեաների աւետարանը»[3]: Եւ արդ, ինչի՞ մէջ վստահուեց, եթէ ոչ՝ այս բանում, ցո՛յց տուէք, քանզի չի ստում ճշմարիտ վկան:

Իսկ թէ ասէք, որ հեթանոսները Քրիստոսի ոչխարները չեն. եթէ այդպէս լինի, ապա ո՞ւմ էին արածեցնում մնացած տասնմէկը: Մենք ասում ենք՝ այո՛, նաեւ հեթանոսները, քանի որ նրա՞նց կանչեց՝ ասելով. «Ունեմ նաեւ այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն, եւ նրանց էլ պէտք է բերեմ այստեղ: Եւ կլինեն մի հօտ եւ մի Հովիւ»[4]: Իսկ Պօղոսը վկայում է, թէ՝ «Խտրութիւն չկայ ո՛չ հրեայի, ո՛չ էլ հեթանոսի, քանի որ դուք ամէնքդ մի էք ի Քրիստոս Յիսուս»[5]:

Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս ըստ ոչխարների միութեան ցոյց տրուեց արածեցնողների մէկ իշխանութիւնը»:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Մի՞թէ նրա մեծութիւնը նաեւ նրանում չէ, որ Քրիստոս յայտնեց նրա մահը՝ ասելով. «Երբ կծերանաս, ձեռքերդ վեր կբարձրացնես, եւ ուրիշները քեզ գօտի կկապեն եւ կտանեն քեզ [այնտեղ], ուր չես կամենայ»[6]. խորհրդանշում է, թէ ինչ մահով է

1 Մատթ. ԺԵ 24
2 Յովհ. Ա 11
3 Տե՛ս Գաղ. Բ 7:
4 Տե՛ս Յովհ. Ժ 16:
5 Տե՛ս Գաղ. Գ 27-28:
6 Յովհ. ԻԱ 18

փառաւորելու Աստծուն»:

Պատասխան. «Նախ մեր այս խնդիրը տասներկուսի իշխանութեան անզանազանութեան մասին է եւ ոչ թէ մահուան որպիսութեան, որովհետեւ մահը ոչ թէ տէրութեան հաստատումն է, այլ կեանքի եւ իշխանութեան վախճանը, քանի որ մահուանից յետոյ [այլեւս] ոչ մէկի վրայ չեն իշխում: Եւ իմաստ չունի այս [քննել] մեր խօսքի մէջ»:

Այլ պատասխան.

«Իսկ եթէ [այդ] առաւելութիւն է թւում ձեզ, ապա այս բանի մէջ մնացած տասնմէկ առաքեալներն էլ ոչնչով նուազ չեն, որովհետեւ նոյն կերպով [Քրիստոս] յայտնեց նաեւ նրանց մահը՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Ահա ես առաքում եմ ձեզ իբրեւ ոչխարներ գայլերի մէջ»[1]. եւ թէ՝ «Կմատնեն ձեզ ատեանների եւ կտանջեն ժողովարաններում եւ խաչ կբարձրացնեն ձեզ ու կսպանեն»[2]. եւ թէ՝ «Ովքեր սպանեն ձեզ, կհամարեն, թէ պաշտամունք են մատուցել Աստծուն»[3]. եւ թէ՝ «Մի՛ վախեցէք նրանցից, ովքեր մարմինն են սպանում»[4]: Եւ արդ, ի՞նչ կասէք, մի՞թէ սրանք մահուան նշանակներ չեն: Եւ չի ասում նրանց տանջանքների զանազանութեան մասին, որով փառաւորելու էին Աստծուն, քանի որ բոլորն էլ միեւնոյն վախճանն ունեն՝ միայն մարմնի մեռնելը, ինչպէս ասաց Տէրը: Այլ բան է մահուան կերպը, որը ելք է [այս աշխարհից], քանի որ երկու տեսակ է լինում մարդու մահը՝ չար եւ պատուական: Ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն երեսունեւրեքերորդ սաղմոսում, մեղաւորի մահը չար է[5], եւ՝ հարիւր տասնհինգերորդ սաղմոսում, թէ՝ պատուական է Տիրոջ առաջ Իր սուրբերի մահը[6]: Ուստի նրանից, [այսինքն՝ Պետրոսից,] հանում է չար մահուան երկիւղը եւ ասում պատուաւոր մահով մեռնել, որով փառաւորւում է Աստուած: Եւ Պետրոսին մասնաւոր է ասում, որպէսզի հաստատի նրան դիւրափոփոխ բարք ունենալու պատճառով, ինչպէս մատնութեան գիշերն [ասաց], թէ՝ սատանայի փորձութեան պատճառով ես

1 Մատթ. Ժ 16
2 Տե՛ս Մատթ. Ժ 17:
3 Տե՛ս Յովհ. ԺԶ 2:
4 Մատթ. Ժ 28
5 Տե՛ս Սաղմ. ԼԳ 22:
6 Սաղմ. ՃԺԵ 15

աղաչեցի քեզ համար[1]: Եւ ոչ ոք չի յանդգնի ասել, թէ տասնմէկը իրենց մահուամբ չեն փառաւորել Աստծուն: Եւ քանի որ միանման է նրանց ելքն [այս աշխարհից], միապէս էլ պարգեւն է, որ Տէրը խոստացաւ նրանց. «Դուք,- ասում է,- որ եկաք Իմ ետեւից, երկրորդ Գալստեանը, երբ կնստեմ Իմ փառքի աթոռին, դուք էլ կնստէք տասներկու աթոռներին՝ դատելու Իսրայէլը»[2]: Այս խօսքը ապացոյցն է նրանց կատարման[3] անզանազանութեան: Ինչպէս այնտեղ է [լինելու], ըստ այնմ այստեղ է, եւ եթէ այնտեղ չկայ, չկայ նաեւ այստեղ: Եւ [ահա] բոլորովին վերանում է ձեր ճշմարտութիւնը կեղծող իշխանութիւնը»:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԵՕԹԵՐՈՐԴ

Լիկաթն ասաց. «Մի՞թէ մեծ իշխանութեան ապացոյց չէ այն, որ պատմւում է Գործք առաքելոցում, թէ՝ «Այն օրերին Պետրոսը, կանգնելով իր եղբայրների մէջ, ասաց. «Ո՛վ եղբայրներ, պէտք է կատարուէր այն, ինչ գրուած էր Յուդայի մասին, որին վիճակուած էր մեր սպասաւորութիւնը. սա ուրէլով պատուեց: Արդ, մեզ հետ եղողներից [մէկը] պէտք է Քրիստոսի Յարութեանը վկայ լինի մեզ հետ»[4]»:

Պատասխան. «Աւա՜ղ ձեր իմաստութեանը, քանզի կատարելապէս հաւասարութեան յայտնելը չէք տեսնում՝ խրատ տալը իբրեւ նրա մեծութիւն յիշելով, եւ չէք խորհում այն մասին, որ համապատասխան պատճառով չէր կարող որեւէ մէկին ձեռնադրել տասներկու առաքեալների աստիճանին: Քանի որ հետեւեալն է իշխանի [իրաւունքը]՝ ընտրել նրանց միջից, որոնք Տիրոջից տրուած են նրա իշխանութեան տակ, եւ ապա իշխել իրեն վիճակուածների վրայ: Այսպիսի [իշխանութիւն] չի ստացել [Պետրոսը] տասնմէկի վրայ, ինչպէս ինքն է ցոյց տալիս՝ Աստծունը համարելով իրենց ընտրութիւնը [եւ] Տիրոջից եւ Սուրբ Հոգով՝ ընդունելութեան զօրութիւնը: Չէք կարող նաեւ ասել,

1 Հմմտ. Ղուկ. ԻԲ 31-32:

2 Տե՛ս Մատթ. ԺԹ 28:

3 «Կատարում» բառը գրաբարում ունի զանազան իմաստային մօտ երանգներ՝ վախճան, մահ, նահատակութիւն, եզրափակում, աւարտ: Այստեղ գործածուած է առաքելական իշխանութեան եզրափակման կամ ամփոփման իմաստով, որ լինելու է վախճանաբանական ապագայում (խմբ.):

4 Տե՛ս Գործ. Ա 15-22:

որ ձեռնադրութեան իշխանութիւն չունէր, քանզի եթէ ոչ՝ Պետրոսը, ապա ո՞ր մէկ ուրիշը: Սակայն առաքեալներին տրուած է [այդ իշխանութիւնը], որ հիմա ունէք: Իսկ եթէ ասէք՝ անկատար էր (թէպէտ Յարութիւնից յետոյ էր)՝ դեռեւս Սուրբ Հոգին ընդունած չլինելու պատճառով, ապա ինչո՞ւ էք պարծենում անկատարներով՝ իբրեւ կատարեալներով: Իսկ եթէ կատարեալ է, ինչպէս եւ էր, ինչո՞ւ չէք խոստովանում հաւասարութիւնը»:

Այլ պատասխան.

«Դարձեալ հարցնում եմ խրատի մասին. ասացէ՛ք, թէ [այն] ինչ իշխանութեան նշան է, որ նաեւ առաւել նուաստներից բարձրագոյններին է տրւում, ինչպէս եւ ունենք սրա վկայութիւնը Ելից գրքից: Արդ. «Երբ Յոթորը՝ Մովսէսի անները, վերջինիս մօտ եկաւ եւ տեսաւ նրա տառապանքները ամբոխից պատճառած բազում հոգսերի հետեւանքով, ասաց Մովսէսին. «Ճիշտ չէ արածդ. անտանելի տանջանք է քեզ եւ ժողովրդիդ համար: [Այդ] միայնակ անել չես կարող: Ես խրատ կտամ քեզ. եղի՛ր դու ժողովրդիդ [ներկայացուցիչը] Աստուծոյ մօտ եւ նրանց խօսքը հաղորդի՛ր Աստծուն: Եւ կվկայես նրանց Աստուծոյ հրամանները եւ պատուիրանները: Ընտրի՛ր աստուածապաշտ այրերի, որոնք հեռու լինեն ամբարտաւանութիւնից, եւ կարգի՛ր [նրանց]՝ սկսած հազարապետներից մինչեւ տասնապետներ, եւ կթեւեցնես քեզ նաեւ բազում այլ [հոգսերից]»: Եւ լսեց Մովսէսն իր աներոջը եւ արեց այնպէս, ինչպէս ասաց իրեն»[1]: Ուրեմն, Յոթորին աւելի մե՞ծ պիտի անուանես, քան Տիրոջ կողմից ընտրուած աստուածային Մովսէսին, որի հրամանին հնազանդւում էր նաեւ տարերքը: Եւ ի՞նչ է այս խրատը ծայրագոյն իմաստութիւն ունեցողին, ինչպէս որ եղել է:

Թուերի գրքից.

«Ասաց Տէրը Մովսէսին. «Մինչեւ ե՞րբ պիտի բարկացնի Ինձ ժողովուրդդ: Թո՛յլ տուր Ինձ հարուածեմ դրանց մահուամբ»: Եւ Մովսէսն ասաց. «Տէ՛ր, իսկ այժմ, երբ եգիպտացիները եւ այս երկրի ողջ ժողովուրդը իմանան, թէ Դու, Տէ՛ր, [որ] այս ժողովրդի մէջ ես եւ ամպի սիւնով ընթանում ես դրանց առջեւից ցերեկը եւ հրէ սիւնով՝ գիշերը եւ մի մարդու պէս պիտի ոչնչացնես այս ժողովրդին, կբամբասեն

1 Տե՛ս Եղ. ԺԸ 17-24:

ազգերը՝ [այդպիսի բան] լսելով Քո մասին, եւ կասեն՝ որովհետեւ Տէրը չէր կարող տանել ժողովրդին այն երկիրը, որի մասին երդուեց նրանց անապատում»: Եւ ասաց Մովսէսը. «Արդ, թող բարձրանայ Քո ձեռքը, Տէ՛ր, ների՛ր սրանց մեղքերը Քո մեծ ողորմութեամբ, ինչպէս ներեցիր դրանց Եգիպտոսից մինչեւ այժմ»: Եւ ասաց Տէրը Մովսէսին՝ կներեմ դրանց քո խօսքի համաձայն»[1]: Իսկ հիմա ի՞նչ կասէք սրա մասին. մի՞թէ Մովսէսն Աստծուց աւելի մեծ մէկն է, քանի որ Տիրոջը տուեց այս խրատը, որը բաւական համառօտեցի երկարութեան պատճառով: Ահա երկու անգամ անվաւեր ցոյց տրուեց [ձեր կարծիքը]՝ ե՛ւ այստեղ, ե՛ւ այնտեղ:

Համառօտ պատասխան այն եօթ խօսքերից չորսին, որոնք Տէրն առանձին ասաց Պետրոսին, որոնք հռոմէացիները կարծում են, թէ [ապացոյց] են նրա մեծութեան եւ նրանով՝ իրենց. քանի որ դրանցից երեքը նրանց կարծիքը չեն հիմնաւորում, թէպէտ՝ այս [չորսը] նոյնպէս: Եւ համեմատութիւն ընդդէմ սրանց՝ [Պետրոսի մասին] նուաստացուցիչ ասուածների [տեսանկիւնից].

«Իսկ եթէ հռոմէացիներն ասեն. «Եթէ Քրիստոս Պետրոսին կրկնակի իշխանութիւն չի տուել, ապա ինչո՞ւ է նրա ընկերներից առանձին ասում նրան այս մեծամեծ խօսքերը», որին նախ կպատասխանենք, թէ որեւէ նոր պարգեւ չտուեց նրան, այլ կրկնեց նրան այն, ինչ որ տուել էր բոլորին: Եւ սրանք խելամիտների համար ապացոյցներն են նրա նուաստութեան ու անհաստատ լինելու եւ ոչ թէ՝ կրկնակի իշխանութեան եւ տասնմէկից աւելի բարձր լինելու, որպէսզի անխախտ մնայ Տիրոջից առաքեալներին տրուած իշխանութեան մէջ:

Իսկ դուք բարձրացնող խօսքերով էք պարծենում, իսկ նուաստացնողները՝ զանց առնում: Եւ որ ասաց, թէ՝ «Դու վէմ ես»[2], եւ այլ խօսքերը յիշատակում էք, իսկ որ ասաց, թէ՝ «[Ետե՛ւ գնա], սատանա՛յ, [դու գայթակղութիւն] ես Ինձ համար»[3], եւ նման խօսքերը՝ մոռանում: Քանզի Ով ասաց, թէ՝ «Դու վէմ ես, եւ գրա վրայ կշինեմ Իմ Եկեղեցին»[4], Նա [նաեւ] ասաց, թէ՝ «Սատանայ եւ գայթակղութիւն

1 Տե՛ս Թիւ. ԺԴ 11-20:
2 Մատթ. ԺԶ 18
3 Տե՛ս Մատթ. ԺԶ 23:
4 Տե՛ս Մատթ. ԺԶ 18:

ես Ինձ համար»[1]: Եւ Ով հրամայեց, թէ՝ «Քեզ կտամ երկնքի արքայութեան բանալիները»[2], նոյն Ինքը բարբառեց, թէ՝ «Ձեզ խորհում ասուածայինների մասին»[3], այսինքն՝ երկնայինների մասին: Եւ Ով ասաց նրան, թէ՝ «...[երբ] վերադառնաս, հաստատեա՛ քո եղբայրներին»[4], Նա [նաեւ] կոչեց նրան «թերահաւատ եւ երկմիտ»[5]: Եւ Ով երեք անգամ կրկնեց, թէ՝ «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին»[6], Նա [նաեւ] նախայայտնեց նրա մասին, թէ՝ «Երեք անգամ կուրանաս Ինձ»[7]:

Տեսա՞ք, թէ ինչպէս համեմատուեցին իրար հետ երկու կողմերը, եւ սրանք ասուեցին Աստուծոյ նախախնամութեամբ: Որովհետեւ մեծամեծ [խօսքերը] դեռեւս վերստին հաստատման եւ նուաստացնող [խօսքերի] նորոգութեան համար են, նաեւ՝ երկու մեծ ախտերից՝ ամբարտաւանութիւնից եւ գայթակղութիւնից զերծ պահելու համար: Որպէսզի դուք չհպարտանաք մեծերով, ինչպէս էք ձեր մէջ, ոչ էլ ուրիշները հակառակներով գայթակղուեն եւ Պետրոսին ընկերներից աւելի ցածր համարեն:

Եւ եթէ ասէք, թէ Աստուած անփոփոխ է պարգեւների մէջ եւ անյիշաչար. երբ զղջում են մեղքերի համար, հաստատում ենք նաեւ մենք, քանի որ ով չի հաւատում սրան, կզրկուի աստուածային զօրութիւնից: Իսկ եթէ արժանի չէր այստեղ յիշատակել աւելի նուաստ [խօսքերը], ապա պէտք չէ նաեւ ընթերցել Աւետարանները:

Հետեւաբար ձեզ պէտք է կա՛մ այս [նուաստացուցիչ] խօսքերն առանձնացնել, չընթերցել Եկեղեցում եւ մեղադրել Սուրբ Հոգուն, որ ասաց դրանք, եւ կա՛մ դուրս հանել Գրքից: Իսկ եթէ դա հնարաւոր չէ, որովհետեւ Սուրբ Հոգին մշտնջենաւոր յարակայութեամբ արձանագրել տուեց, ապա պէտք չէ անտեսել ինչպէս մեծամեծները, այնպէս էլ փոքրերը, որոնք գրուած են հաւասարապէս:

Իսկ եթէ փոքրերը պատճառ չեն նուաստութեան, ոչ էլ մեծամեծ-

1 Տե՛ս Մատթ. ԺԶ 23:
2 Մատթ. ԺԶ 19
3 Մատթ. ԺԶ 23
4 Ղուկ. ԻԲ 32
5 Տե՛ս Մատթ. ԺԴ 31:
6 Յովհ. ԻԱ 17
7 Մարկ. ԺԴ 30

ները՝ ամբարտաւանութեան, եւ եթէ՝ ո՛չ մէկը, ո՛չ էլ միւսը, ապա հարկ է մեզ հրաժարուել երկու նշուած ախտերից եւ անխոտոր ընթանալ միջին ճանապարհով եւ միայն տասներկուսին տրուած իշխանութեամբ պատուել Պետրոսին: Քանի որ այս իսկ է երանելիների դասի կամքը, որ ամէն ինչում [Տիրոջ] հաւասար աշակերտներ եղան՝ ըստ այնմ, թէ՝ «Դուք բոլորդ եղբայրներ էք»[1], եւ թէ՝ «Հա՛յր, թող սրանք էլ մի լինեն, ինչպէս եւ Մենք մի ենք»[2]: Եւ [ասելով], թէ՝ «Ինչի մէջ կոչուած էք, նրա՛ մէջ մնացէք»[3], եւ թէ՝ «...[ասում եմ] ձեզանից իւրաքանչիւրին. մի՛ խորհէք [ձեր մասին] աւելի, քան արժանին, այլ խորհէ՛ք զգաստանալու համար»[4], նոյնը ուսուցանեցին մեզ եւ բոլոր հաւատացեալներին, [որ հաստատուած է] մեր Քրիստոս Աստծուց, Որին Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Գրաբարից փոխադրեց
Ազատ Բոզոյեանը

1 Մատթ. ԻԳ 8
2 Տե՛ս Յովհ. ԺԷ 11:
3 Տե՛ս Ա Կոր. Է 24:
4 Տե՛ս Հռոմ. ԺԲ 3:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ-ՊԼՈՒԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յովհաննէս Երզնկացի-Պլուզը[1] հայ միջնադարի գիտական ու գրական մտքի բարձր մակարդակը նշանաւորող մեծ մատենագիր է, հանրագիտակ մտածող՝ իմաստասէր, աստուածաբան, կանոնագիր, մեկնիչ, թարգմանիչ, ճարտասան, բնագէտ, տիեզերագէտ, գրականագէտ, արուեստաբան, գեղագէտ, երաժշտագէտ, քերական, մանկավարժ, շարականագիր, տաղերգու, ինչպէս նաեւ հասարակական եւ եկեղեցական գործիչ: Դեռեւս իր կենդանութեան օրօք նա մեծ համբաւ է ունեցել, մեծարուել իր ժամանակակիցների կողմից:

Յովհ. Երզնկացին ծնուել է մօտ 1220-1230-ական թուականներին Մեծ Հայքի Եկեղեաց գաւառում, հաւանաբար Երզնկայում, վախճանուել 1293 թ. Կիլիկիայում (Ակների վանքում): Նրա նշխարները յետագայում փոխադրուել են Երզնկա. շիրիմը գտնւում է Ս. Նշան եկեղեցու առաջնորդական աթոռի տակ:

Մեծ վարդապետը սերել է Եկեղեաց գաւառի հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդների վաղուց ի վեր յայտնի իշխանական տոհմից, սովորել Երզնկայի դպրատներում (մասնաւորապէս՝ Ս. Մինասի անապատում), աշակերտել իր ժամանակի նշանաւոր վարդապետ Վարդան Արեւելցուն: 1268 թ. ստացել է վարդապետական աստիճան, այդ տարիներից սկսած մեծ համբաւ է վայելել ողջ Հայաստանում ու Կիլիկիայում, գործնական խրատներ ուղղել երկրի թէ՛ հոգեւոր եւ թէ՛ աշխարհիկ առաջնորդներին՝ միշտ արթուն պահելու Կիլիկեան թագաւորութիւնն ու պահպանելու երկրի գոնէ կիսանկախ վիճակը, լինել «ազատ» ու «անծառայելի», իմաստութեամբ, իրաւամբ ու արդարութեամբ վարելու իշխանութիւնը, գործով եւ ոչ անուամբ միայն լինելու իմաստուն եւ արդար: Այդ նպատակով նա

1 Հարիւրամեակներ շարունակ Երզնկացին նոյնացուել է իր կրտսեր ժամանակակից Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցու հետ: Նրանց վերջնականապէս սահմանազատել է Ա. Սրապեանը: Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958 (ծնթ. հրատ.):

պարբերաբար ուղեւորութիւններ է կատարել դէպի Կիլիկիա՝ Սիս, Դրազարկ, Անարզաբա, Հռոմկլա, դէպի Երուսաղէմ, Կարին (Թէոդոպոլիս), Տփխիս եւ այլ վայրեր ու քաղաքներ, վանքեր ու անապատներ, արքունիք եւ կաթողիկոսարան: Նա այցելել է Լեւոն Գ թագաւորին, թագաժառանգներին, Յակոբ Կլայեցի եւ Ստեփաննոս (Երզնկացի) Կլայեցի կաթողիկոսներին, յատուկ խորհուրդներ ու խրատներ տուել Ռուբինեան գահակալ իշխաններին, Հեթում եւ Թորոս գահաժառանգներին եւ այլ արքայազունների ու իշխանաւորների: Երզնկացին աստուածաբանական, գիտական ու խրատական ճառեր է կարդացել, կաթողիկոսի խնդրանքով դասաւանդել աշակերտներին, քերականութեան մեծարժէք աշխատութիւն պատրաստել, որ արդէն իսկ ձեռնարկել էր Երզնկայի մեծանուն իշխան Յովհաննէսի խնդրանքով ու գործնական աջակցութեամբ: Երզնկացին գրել ու կարդացել է նաեւ տիեզերագիտական ճառեր, Ապլոց իշխանի պատուէրով ու խնդրանքով երկնային մարմինների մասին չափածոյ տրակտատ ոգել, իր այդ գիտական գործի թեմաներով Տփխիսի Ումեկ իշխանի որդու՝ Վախթանգի, եւ Դոփի Թոռն մեծազգի ու ազնուազարդ Յոհան եպիսկոպոսի թախանձանքներով քաղաքի Կաթողիկէ եկեղեցում տիեզերագիտական մեծ քարոզ կարդացել, Ստեփաննոս Կուռիկոսցի վարդապետի խնդրանքով եկեղեցուն նուիրուած յորդորակ ասել եւ այսպէս շարունակ:

Երզնկացին խորհուրդներ է տուել նաեւ աշխատաւորական շերտերին, «Սահման եւ կանոնք», «Կրկին կանոնք եւ խրատք» եւ այլ խրատականներ գրել արհեստաւորների եւ առեւտրականների, նրանցից բաղկացած եւ իր ղեկավարութեամբ գործող «Եղբայրութեան» անդամների ու ղեկավարների համար, այլեւ «Խրատք եւ կանոնք»՝ բնակչութեանն ուղղուած առհասարակ, անմիջական ու գործուն մասնակցութիւն ունեցել դրանց կիրարկմանը, գործին տուել յատուկ նպատակասլացութիւն: Առանձնապէս ուշագրաւ է «Խրատ հասարակացը», ուր բազմաթիւ գործնական կանոններ է հրահանգել՝ ժողովրդին բարեկրթելու եւ լուսաւորելու նպատակով: Մասնաւորապէս յիշենք անչափահասների դաստիարակութեան, միայն փոխադարձ համաձայնութեան հիման վրայ հաստատուող ամուսնութեան, տարիքային մեծ տարբերութիւնների արգելման, դրանցից ծնուող արատների վերացման, ընտանիքի ամրութեան, ծնող-զաւակ

փոխյարաբերութեան, մեռելաթաղի ու նրա հետ կապուած ծէսերի չափաւորութեան, հասարակութեան համար չարիք ծնող արատների՝ գողութեան, գինեմոլութեան, որկրամոլութեան, վաշխառութեան ու այլ մոլութիւնների, հոգեւորականութեան վարք ու բարքի հետ կապուող արատների եւ տգիտութեան վերացման մասին խրատները: Երզնկացին բանականութեան, ուսման ու իմաստութեան է մղել՝ յաճախակի վկայակոչելով նաեւ մեր անցեալի մեծերին:

Մեծ մտածողը Հայ Եկեղեցու սոսկ քարոզիչը չէր, այլեւ նրա խրատների եւ կանոնների ժողովողն ու մանաւանդ նորերի հեղինակողը, անձամբ կամ գրաւոր տարածողը: Սրա վկայութիւնն են նրա բազում կրօնադաւանաբանական եւ կանոնախրատական գործերը՝ նուիրուած Հայ Եկեղեցու տօներին ու ծէսերին, ծննդեան, մկրտութեան, խաչելութեան խորհրդին, առաքեալներին, Գրիգոր Լուսաւորչին ու Ներսէս Մեծին, Հայ Եկեղեցու այլ սուրբ հայրերին եւ այլն: Բոլոր ճանապարհներով նա հաստատել է «առաքելոց եւ սրբոց հայրապետաց եւ վարդապետաց» եւ «ի սուրբ Լուսաւորչին» եւ «ի կաթողիկոսացն հայոց» կանոնների ճշմարտութիւնը, գրել ընդդէմ թոնդրակեցիների ու այլ աղանդների[1]: Նա մեղադրել է միարարներին ու քաղկեդոնականներին, մերժել նրանց առաջարկած ըստ էութեան քաղաքական, նուաճողական նպատակներ հետապնդող դաւանաբանական, ծիսական զիջումները Հռոմէական Եկեղեցուն՝ յանուն հայկական պետութեան եւ Հայ Եկեղեցու անկախութեան: Այս նպատակով Երզնկացին խրատներ էր սահմանում եւ ուղղում ոչ միայն ժողովրդին, այլեւ հոգեւորականութեանը, որպէսզի նրանք «ուսանիցին եւ ժողովրդոց իւրեանց քարոզեսցին»:

Իր ազգապահպան հայեացքները Երզնկացին նոյն խորութեամբ ու հետեւողականութեամբ արտայայտել է գրեթէ բոլոր գործերում, նոյնիսկ «Քերականութեան մեկնութեան» մէջ եւ չափածոյում: Այս ամենի հետ մէկտեղ նա սեփական միջոցներ է տրամադրել՝ ծաւալելու եւ բարձրացնելու հայրենի գաւառի կրթական գործը, շինութիւն-

1 Այս աղանդների մէջ յատկանշական է եւ «Գորգեցւոց» կամ «Գորգիոսի» կոչուածը, որ տարածուած է եղել Կիլիկիայում եւ մասնաւորապէս Երզնկայում: Ե. Տէր-Մինասեանի «Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնից» մասնագիտական հետազօտութեան մէջ (1968 թ.) այն չի նշում: Աղանդի մասին հայագիտութեան մէջ առաջին խօսքն ասել է Ա. Երզնկացի-Սրապեանը (տե՛ս «Յովհաննէս Երզնկացի-Պլուզ. կեանքը եւ գործը», Երեւան, 1993):

ներ արել վանքերում ու անապատներում, զբաղուել դպրոցների ու գրադարանների կառուցմամբ, գրականութեան բազմացմամբ, անձամբ կրկնօրինակել ձեռագրեր, կազմել ժողովածուներ:

Իր իմացութիւնների նորութեամբ, ընդգրկումով ու արուեստով Երզնկացին հաւասարւում է Վերածնութեան մեծերին, շատ հարցերում կանխում նրանց՝ Կոպեռնիկոս, Բեկոն, Գալիլեյ, Ռուսսո, Սպինոզա եւ ուրիշներ:

Երզնկացին մեծարուել է «առաքելաշնորհ», «գերիմաստ», «խստալոյս իմաստասէր», «սուրբ եւ իմաստուն», «անյաղթ», «բանիբուն եւ աշխարհալոյս վարդապետ», «մեծ», «առաւել իմաստուն բաբունապետ», «յոգնիմաստ հոետոր», «քաղցրիկ» եւ այլ բարձրապատիւ մակդիրներով, սրբացուել եւ պատկերուել լուսապսակով: Նրա անուան հետ են կապւում մեծ հրաշագործութիւններ. այսպէս՝ նա աղօթքներով կենդանացրել է մեռած երիտասարդի, իսկ ըստ Մխիթար Ապարանեցու՝ սքանչելիքներ են կապուած նրա գերեզմանատեղի հետ՝ իբրեւ սրբավայրի:

***

Ցովհ. Երզնկացի-Պլուզն առաջին անգամ հրատարակուել է 1664 թ., ապա նաեւ՝ 1665 թ. Ամստերդամում, Ծարակնոց ժողովածուներում: 1792 թ. Նոր Նախիջեւանում տպագրւում են նրա արձակ եւ չափածոյ տիեզերագիտական աշխատութիւնները, 1824 թ. Պոլսում՝ «Ցաճախապատում» ժողովածուի մէջ, 1853 թ. Վենետիկում՝ «Սոփերքի» Ե եւ Է հատորներում՝ Գրիգոր Լուսաւորչին եւ Ներսէս Մեծ կաթողիկոսին ձօնուած ներբողները: Առաջին անգամ ամբողջական ուսումնասիրութեան է ենթարկուել եւ լայն ճանաչում գտել 1950-ական թուականներին որպէս մեծ մտածող եւ բանաստեղծ՝ Ա. Սրապեանի մենագրութեամբ, ուր տեղ են գտել հեղինակի անունով յայտնի գրեթէ բոլոր չափածոյ գործերը: Այստեղ վերջնականապէս ճշտուել են նրա ապրած ժամանակն ու ստեղծագործութիւնները, հիմնովին սահմանազատուել երկու նշանաւոր Երզնկացիները՝ Պլուզ եւ Ծործորեցի մականուններով: Սրան հետեւել են Ա. Սրապեանի, ինչպէս եւ այլ մասնագէտների գործեր՝ նուիրուած Երզնկացու փիլիսոփայական, գրականագիտական, գեղագիտական, արուեստաբանական, երաժշտագիտական, ազգագրական,

խրատական, քերականական աշխատութիւններին՝ հիմնականում յօդուածների շրջանակներում: 1986 թ. առանձին հրատարակութեամբ լոյս է ընծայուել չափածոն՝ լրացուած հնատիպ հրատարակութիւններով եւ ձեռագրական նորայայտ քերթուածներով: Այստեղ առաջին անգամ տողատուել եւ չափածոյ տպագրուել են նաեւ Գրիգոր Լուսաւորչին եւ Ներսէս Մեծին նուիրուած պատմական ներբողները[1]: 1993 թ. լոյս ընծայուեց մի նոր մենագրութիւն եւս[2], որ համընկաւ նրա մահուան 700-ամեակին: Այժմ հրատարակութեան են ներկայացուած մեծ մտածողի ճառերն ու քարոզները համեմատական բնագրերով: Սրանք ունեն թէ՛ գրական, թէ՛ իմացական եւ թէ՛ կրօնաբարոյական մեծ արժէք: Նրանց հիմքը աստուածաբանական է, նպատակը՝ ազգի հոգեւոր, բարոյաքաղաքական մակարդակի բարձրացումը, Հայ Եկեղեցու ազգային անկախութեան հաստատումը, հայկական իշխանական տների ինքնուրոյնութեան ու Կիլիկեան հայկական պետականութեան պահպանումը: Այդ գործերի թւում են Քրիստոսի Ծննդեան ու Մկրտութեան տօնի առթիւ կարդացած ճառերը եւս, որոնցից մէկը ներկայացնում ենք ստորեւ՝ ըստ N 2178 ձեռագրի (ԺԴ դ., էջ 92ա-104բ): Ճառը պահպանուել է նաեւ N 1147 ժողովածուի մէջ (1793 թ., էջ 472ա): Ստորեւ ներկայացւում է ճառի համեմատական բնագիրը[3] (ձեռ. N 2178=A, ձեռ. N 1147=B):

Արմէնուհի Երզնկացի-Սրապեան

1 Տե՛ս Ա. Երզնկացի-Սրապեան, Ցովհ. Երզնկացի, Բանք չափաւ, Երեւան, 1986:

2 Տե՛ս Ա. Երզնկացի-Սրապեան, Ցովհ. Երզնկացի-Պլուզ. կեանքը եւ գործը:

3 Հիմնականում քիչ բացառութեամբ ներկայացւում են իմաստային արժէք ունեցող տարբերութիւնները, ընդ որում ցոյց չեն տրւում բացայայտ սխալները եւ այն տարբերութիւնները, որոնք զուտ ուղղագրական են. հինգ-հինկ, ճշտապէս-ճշտայպէս, նանայ, ընդհանրական-ընթանրական, մարդիկ-մարդիք, որդովն-որդտովն, սկիզբ-սկիսբ եւ այլն:

ՅՈՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ԵԿԵՂԵԱՑ ԳԱՒԱՌԻ ՅԵՋՆԿԱՅ ՔԱՂԱՔԷ՝ ԱՍԱՑՈՒԱԾ ՅԱՒՈՒՐ՝ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՑՆ, Ի ՍՐԲՈՅՆ ԺՈՂՈՎԵԱԼ ԲԱՆԻՑ Ի ՄԻ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ

Յաղագս Աստուծոյ եւ աստուածային իրագործութեան խօսել բաղձալի է բնաւից բանականաց, բայց ախորժողացն այս կարի պէտք են իմանալ զչափ եւ զկշիռ բնութեանն, մանաւանդ քննել՝ զորմէ՞ն եւ առ ո՞վ եւ յաղագս որո՞յ պատճառի: Այսինքն՝ յորմէ՞ արտադրութիւն բանին եւ առ ո՞վ դիտաւորութիւն իմաստիցն եւ վասն որո՞յ քննութիւն իրին: Ըստ որում եւ զայս զմտաւ ածելով՝ չեմք անտեղեակ տկար եւ վայրաքարշ բնութեանս մերոյ բնաւորեալ՝ միշտ ի հոսման եւ ի ծորման գոլով ծովածուփ կենցաղոյս, մարմնական կրիւք կեղեքեալ եւ ախտաւոր ցանկութեանցն մտիւք՝ ի դրունս զգայարանացս գերեալք եւ զհոգւոյն ազնուականութիւն եւ զբարեհոմութիւն եւ զլուսանշոյլ մտացն արփիւռոր տեսութիւն, իբր թանձրապատ օդով ծածկեալ: Յաղագս որոյ անկարացեալ անքթիթ ակամբ եւ անընդհատ նկատմամբ զսկզբնատպին գեղեցկութիւն ի պատկերիս նսեմի նկարել, յորմէ կարելի էր բաշխել զբանին բաժանումն եւ տալ իւրաքանչիւր ումեք բանին զկերակրին չափն եւ յօրինել ի դատաստանի զճշմարտութիւն մերոցս աւանդութեանցն: Եւ յօրինի բանին պայծառութիւն ի կատարելաթիւ մասանցս այսոցիկ շարահիւսմանէ. ի բնութենէ, ի վարդապետութենէ եւ ի վարժից կրթութենէ ունել զիմաստութիւն: Զի կամ ի բնութենէ շնորհալի գոլով եւ ծննդական մտօք, եւ կամ ուսեալ ի վարդապետաց հաւատարմութենէ եւ հաւատարիմ գտեալ յայսոսիկ, եւ կամ աշխատութեամբ անձին ստացեալ զիմաստութիւն ի վարժից կրթութենէ: Եւ լինի յայսցանէ գեղեցկութիւն բանին, յորմէ բանն է: Իսկ առ ո՞վ բանն. առ բանասիրաց եւ աստուածասիրաց հանդէսդ եւ տօնակիցքդ հրանութիւց խմբից՝ երկնայնոց դասուցն, առ որս կարի դժուարին է յաղագս այսպիսեացս ընդ բազմահաւաք գումարս ընդ

այսոսիկ խօսել, ի յազգի ազգեայց ի միասին խմբելոց՝ հասարակաց եւ բնութեանց եւ աստիճանաց, որպէս քնարաւ ինչ բազմապատկաւ՝ ազգի ազգեաց կարօտացելոց եւ զհնչմանց գտանել ինչ, որով զամենեսեան յարմարեալ կարիցէ բանն, եւ պայծառացուցեալ լուսով գիտութեանն: Վասն որոյ դժուարին ասացի՝ ոչ միայն, զի յերիսս յայսոսիկ վտանգիւն սասանին մտօք եւ բանիւ եւ լսելեօք, զի հարկաւոր է ի մի ինչ յայսցանէ, թէպէտ եւ ոչ յամենեսեան սխալել, վասն զի կա՛մ ոչ պայծառացան միտքն, կա՛մ բանն տկարացաւ, եւ կա՛մ ոչ տարան լսելիք, ո՛չ մաքրեալք եւ կամ ո՛չ վարժեալք, ի միոջէ յայսցանէ վրիպել եւ յամենեցունց կաղալ հարկաւոր լինի ճշմարտութեանն: Այլեւ յաղագս հոգեւորական հասակաց եւ բնութեանց բարուց եւ աստիճանաց պատուոյ: Վասն զի ոմանք կարօտին կաթամբ կերակրիլ՝ անարատք հաստատուն եւ կատարեալ կերակրոյն, յաղագս պարզամտութեանն: Եւ ոմանք զհաստատունն հայցեն կերակուր, քննութեամբ եւ տեսութեամբ հմուտք աստուածաբանական հանճարոյն: Ոմանց համառօտն է սիրելի, միանգամայն եւ համեղագոյն յարմարութեամբն, որպէսզի մի՛ երկարութիւնն զձանձրութիւնն արասցէ եւ անյարմարութեամբն տաղտկալի լիցի ախորժակաց բանին: Իսկ այլքն՝ զընդարձակն եւ զմանրամասն քննութիւն բանին, որպէսզի մի՛ զանխլաւսցի ծածկելոց իմաստիցն շահաւորութիւն: Իսկ որ գերազանցքն են ոչ միայն տեսութեամբք, այլեւ աստիճանին փառաւորութեամբ, ընդ պարտս բանին միանգամայն եւ զպատուոյն խնդրեն զարժանաւոր ընծայաբերութիւն: Ըստ որում եւ նիւթականս ամենայն զգեղեցկագոյնսն, նոյնպէս եւ ի բանս, զնորագիւտսն եւ զանկարելին տկարաց:

Այսոքիկ՝ առ որս բանն հասարակաւ եւ բնութեամբ զանազանեցելոց: Իսկ յաղագս որո՞յ բանս: Յաղագս Աստուծոյ եւ աստուածային փրկագործ տնօրէնութեանն, չափ միաւորութեանն եւ պատկերին բարեաց վերստին փառօք հրաշագործութեանն: Այլ զի թէպէտ եւ գիտեմք, եթէ յաղագս Աստուծոյ ճառելն անկարելի է, թէպէտ եւ ճոխագոյն ոք իցէ եւ հզօրեղագոյն յիմաստս եւ ի ճառելն յօժարամիտ, անհասանելի է: Բայց մշտափափագ տենչմամբ հնարիմք մերձենալ բանիւ յանմերձենալին բնութիւն բանի եւ մտաց: Վասն զի բնութեամբ էակացեալ է ի մեզ գիտութիւն ճշմարիտ էին՝ այնմ, որ գերագոյ է եւ յամենայն էութենէ գոյից արտաքս որոշեալ, պատճառ ամենայնի եւ

լցուցիչ բոլորից եւ մասանց սահմանիչ, ամենայն պակասութեանց եւ տեսակաց գերակատար լիութիւն եւ տեսակարար, էիցս չափ եւ յաւիտեանց եւ գերագոյն եւ նախքան զյաւիտեանս: Լի ի կարօտսն, գերալիր ի լիսն: Ի ճառից անճառելի եւ ի բանից անբարբառելի, քան զմիտս գերազանցեալ՝ միտ անիմանալի, եւ քան զկենդանութիւն գերասերտեալ՝ կենդանութիւն անթարգմանելի, ի բնութեանց բանաւորաց՝ անհատ բնութիւն անսահմանելի, այսոքիւք ամենայնիւ սահմանեալ եւ յամենայնէ անհաս մնացեալ: Ըստ որում ասէ ոմն ի սրբոցն. Ցամենայնի ճանաչի Աստուած եւ առանց ամենայնի, եւ ի ձեռն գիտութեան ճանաչի, եւ ի ձեռն անգիտութեան, եւ է նորա իմաստ, եւ բան, եւ հանճար, եւ շօշափումն, եւ զգայութիւն, եւ փառք, եւ երեւոյթ, եւ անուն, եւ այլն ամենայն. եւ ոչ իմանի, եւ ոչ ասի, եւ ոչ անուանի, եւ ո՛չ ինչ է յէիցս, եւ ոչ իմիք յէիցս ճանաչի, եւ յամենայնի՝ ամենայնէ, եւ ոչ յիմիք ոչինչ, եւ յամենեցունց ամենեցուն ճանաչելի: Եւ յոչնչէ՝ ոչ ումէք: Եւ զայս ուղղակի ասեմք յաղագս Աստուծոյ:

Եւ դարձեալ, աստուածային գիտութիւնն ի ձեռն անգիտութեան ճանաչի: Ըստ գերագոյն քան զմիտս միաւորութեանն, յորժամ միտք յէիցս ամենայնէ ի բաց կացեալ եւ ապա եւ զինքն թողեալ միաւորեաց ի գերաճաճանչ ճառագայթիցն, անդուստ եւ անդ անքննելի խորութեամբ իմաստութեանն լուսաւորեալ այնքան, որքան եւ ծագէ, եւ զթռիչս բանին յօրինեալ, որքան եւ շարժէ զգործարան բանին: Եւ ապա, զի բանիւ բովանդակել անկար է, անդրէն յետս դարձեալ ի Ներգործողէն առ գործն եւ ի Պատճառէն առ պատճառաւորս: Ըստ որում օրէն է սպասաւորաց բանին երկոքումք այսոքիւք վարիլ կամ ի գերագոյն գոյութենէն բուռն հարկանել եւ իջանել ընդ արարածս (օրինակ իմն ընդ աստիճանս յանհատ տեսակս, զի ցուցցէ ի նմանէ գոյացեալս) եւ կամ աստի դարձեալ գերիվերոյ ելանել, զի յայտ արասցէ նովաւ կառավարել: Եւ այս են պատճառ, զի յորժամ զաստուածային իրագործութեանց ճառեմք, նախ աստուածաբանութեամբ առ Աստուած ելանեմք եւ ապա ձեռնարկեմք յառաջիկայ իրին գործառնութիւն, եւ կամ ձեռն ի գործ արկեալ եւ ապա յաւարտման բանին նովաւ ի կատարումն ածեմք:

Իսկ եթէ է՞ր վասն արար զինքն մեզ անհասանելիս, եւ կամ վասն է՞ր փափագիմք մեք հասանել Անհասանելոյն, եւ կամ այս կիրք բնա-

տրեալ է ի մեզ անհասիցն ցանկութեամբ միշտ փութալ յինքնասիրութիւն, մանաւանդ պատճառին ամենայն բարեաց. այսոցիկ ոչ է մեզ ժամանակ՝ բանից երկարութեամբ շնորհել զժամանակս ծախելոյ: Այլ զտոնիս իրս մեզ բանեղէն բազկօք առաջի կայ կազմել սեղան հոգեւոր մեծահաւաք հանդիսի2 եւ3 աստուածագումար ատենիս՝ շնորհաշուք եւ պատկառեալ պատկերաւ կերպարան վեհին վայելչացելոցդ:

Բայց նախ՝ քննեսցուք, եթէ զի՞նչ է անուանադրութիւն տօնիս՝ շնորհաբաշխիս եւ մեծախորհուրդ աւուրս:

Երկրորդ՝ ի քանի՞ս բաժանի անուանցն զանազանութիւն, եւ կամ ո՞րպէս միաւորի խորհրդոյն զօրութեամբ եւ ներգործութեամբ:

Երրորդ՝ ընդէ՞ր Ինքն Աստուած իջանէր յերկնից եւ մարմնոյ զգեցմամբ տնօրինէր զմերն փրկութիւն:

Զորրորդ՝ զի՞նչ խորհուրդ ցուցանեն իւրաքանչիւր կոչմունք անուանցն, զոր յանձն էառ վասն մեր կատարել Որդին Աստուծոյ ի պատճառս փրկութեան որդոցս Ադամայ:

Հինգերորդ՝ յորո՞ւմ ժամանակի եւ կամ յորո՞ց ոմանց հաստատեցաւ միեղինութիւն տօնիս, եւ կամ յորո՞ց ոմանց բաժանեցաւ, եւ ո՞ր-պիսի յեղանակաւ գտին պատճառս բաժանման, որք բաժանելն կամեցան:

Վեցերորդ՝ զի՞նչ պատճառաւ կամ ո՞րպիսի եւ որքանեա՞ց վկայական հաստատութեամբ Հայաստանեայցս միայն Եկեղեցի ի միասին տօնէ զտօն Մնդեան եւ Մկրտութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Եօթներորդ՝ զայսոսիկ քննելով ձեռնտութեամբ քննողին խորոցն Աստուծոյ Ամենասուրբ Հոգւոյն, որ է Աստուած ճշմարիտ, եւ զառաջի եդեալ բանիս զմիտս եւ զօրութիւն ծածկեալ՝ յայտնեսցուք տօնասիրաց եւ աստուածասիրաց անձանց:

Եւ այժմ ասասցուք յաղագս անուանադրութեան տօնիս, վասն զի ասի սեռականաբար եւ միայն պարզապէս անուամբ տօն՝ ի հասարակաց անուանակոչութենէ եւ բաժանի ի զանազանութիւնս անուանց չորս: Քանզի կոչի տօն Մնդեան եւ տօն Մկրտութեան եւ տօն Յայտնութեան եւ տօն լուսաւորութեան: Եւ այսոցիկ անուանցս բազում խորհուրդք յայտնի են. յիրէն եւ ի ձայնէն եւ ի գործոյն, յորոց անուանցն է բնաւորեալ ստուգաբանութիւն: Եւ թարգմանի անունդ տօնի ուրախութիւն, որպէս եւ է իսկ ոչ միայն երկրաւորաց, այլեւ

երկնաւորաց, զոր եւ իմանալի է անմարմնոց դասուցն իւրաքան-
չիւրսն զայս տօն տօնել, զի որպէս ի մարմնի ի ստորինս երեւեալ հո-
գեղէն դասուցն ծնիցելոյն յերկրի Աստուծոյ փառս առաքեալ ի բար-
ձունս, ցնծութիւն մեզ աւետարանելով, զոր երանելին Գրիգորիոս
ճոխն աստուածաբանութեամբ զսոյն միտս ցուցանէ ի Տօնականին իւ-
րում, որ ի նմին ասացեալ աւուրս համարի: Եւ քանզի գլուխ տօնիս
Աստուած է, զԱստուած, ասէ, յիշեսցուք եւ տօնակիցք հոգեւորաց եւ
աստուածասիրաց անճանցն լիցուք: Քանզի եւ որ անդն տօնեն
հնչումն, ուր զուարճացելոցն ամենեցուն է բնակութիւն4, ոչինչ այլ
նոցա կարծեմ ասել կամ առնել, բայց միայն զԱստուած օրհնել, այնո-
ցիկ քաղաքականութեանցն արժանի եղելոց: Զսոյն եւ Աղեքսանդրա-
ցի մեծանուն երանելին Կիւրեղ յիւրում Տօնականին, որ վասն սորին
աւուր Փրկչին ծննդեան ասէ: Տօնէ այսօր ընդ մեզ բազմութիւն երկ-
նաւոր անմարմին զօրացն, այսպէս ըստ նոցին թուոյ դասուց երկնա-
յին քաղաքականութեանցն, տօնէ յերկրի եկեղեցի տպաւորել զճշմար-
տութիւնն: Արդ, ուրախանան երկնային զօրքն ընդ նորահրաշ մերս
փրկութիւն: Ըստ տերունական բանի ի գիւտ ոչխարին մոլորելոյ եւ կո-
րուսեալ դրամին եւ ի դարձի անառակ որդւոյն կր[ա]սերոյ, զի թէ
ուրախութիւն է յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ, ո՞ր-
քան յաղագս բոլոր մարդկային բնութեանս: Զի որպէս հաղորդք են
արարչութեամբ երկնայինքն երկրաւորացս, յանկանելն մեր ի փա-
ռացն սգակից եղեն, եւ յառնելն յառաջին փառսն սեփական ուրախա-
ցան: Եղեւ ուրախութիւն երկրաւորացս, զի մինչ թշնամիքն էաք Ա-
ստուծոյ, էին ընդ մեզ թշնամութեամբ եւ հրեշտակք սպասաւորք երկ-
նաւոր Թագաւորին, զի մեղօք ապստամբք էաք յԱստուծոյ: Իսկ յոր-
ժամ տեսին զխորհուրդ[դ] տնօրէնութեանն Քրիստոսի, հիացեալ ուրա-
խացան եւ սպասաւորք եղեն խորհրդոյն, եւ եղեւ հասարակաց տօն
երկնաւորաց եւ երկրաւորաց:

Արդ, քննեսցուք եւ զանազանութիւն անուանցս: Տօն ծննդեան
ասի, զի յայսմ աւուր ծնաւ Քրիստոս ի Կուսէն մարմնով, եւ Արարիչն
ամենայնի քաղցրութեամբ եւ ողորմութեամբն Իւրով ամենայնիւ
նմանեալ մեզ՝ մարդ եղեւ հաւասար մեզ զամենայն առեալ, բաց ի մե-
ղաց, եւ միաւորեցաւ ընդ բնութիւնս մեր: Եւ եթէ ոք տարակուսեալ
ասասցէ. Բանիւ կարող էր փրկել Աստուած5, ըստ որում եւ արարն,
զի՞րդ Արարիչն խոնարհէր յայնքան բարձրութենէ փառացն ի մեր

նուաստութիւնս. եւ կամ թէ՝ ո՞չ կարող էր ի ձեռն հրեշտակի փրկել
զազգս մարդկան ի ձեռաց բանսարկուին: Առ որս ասեմք. նախ առա-
ջին, թէ որպէս յառաջինն6 արարչութեանն արար յոչէից վասն անչափ
բարերարութեանն, առնէ եւ զեր[կ]րորդս վասն ողորմութեան՝ նորո-
գել վերստին զպատկեր Իւրոյ բարերարութեանն: Եւ թէ յայս նախա-
տի սակս խոնարհութեան, առաւել եւս յայն, զի կաւն ստեղծանէր: Զի
թէ ոչ էր խոնարհեալ Աստուած Բանն՝ բնակելով յարգանդ Կուսին, ոչ
էր բարձրացեալ մարմին յաստուածայինն փառաց աթոռ: Եւ թէ Ա-
ստուծոյ թշնամանք էր յարգանդ բնակել, եւ հրեշտակաց թշնամանք էր
մարդոյ սպասաւորել, նմին իրի եւ յորժամ հանդերձեալ է Աստուած
իրս մեծ եւ անհաւատալիս գործել ի մարդիկ, յառաջագոյն ժամանէ
եւ զստուերն նորա կենդանագրէ, զի յորժամ եկեսցէ ճշմարտութիւնն,
մի՛ տարակուսեալ ցնորեսցին յաղագս նորա, եւ զի օրինակաւն յառա-
ջելով մի՛ անհաւանեսցին, որպէս եւ զխորհուրդ գալստեանն Իւրոյ եւ
մարդանալոյն եւ զչարչարանս, որ վասն մերոյ փրկութեան, յառաջա-
գոյն տպաւորեաց բազմամասն եւ բազմօրինակ կերպարանօք՝ ըստ
առաքելոյ բանին, բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ
խօսեցաւ ընդ հարս: Իսկ ի վախճան խօսեցաւ Որդովն: Եւ զի Ինքն
Աստուած Բանն էր իջանելոց ի փրկութիւն, եւ զի մի՛ անհաւատալի
թուեսցին, վասն այսորիկ եւ Ինքն Աստուած իջանէր ի մորենին եւ
ասէր. Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան, որ յԵգիպտոս, եւ
իջի փրկել զնոսա[1]: Մի՞թէ ոչ կարէր այլ ազգ փրկել ի ձեռաց փարա-
ւոնի, բայց միայն՝ Իւրով իջմամբն, այլ կանխաւ նկարեաց զխորհուրդ
իջմանն Իւրոյ Բանն Աստուած ի փրկութիւն մարդկան ազգի: Նմին
իրի եւ Ինքն իսկ իջանէր առ Ադամ՝ ոտնաձայն առնելով, եւ սակս
պատուիրանազանցութեանն կոչել յապաշխարութիւն: Ապաքէն առ
բոլոր մարդկային բնութիւնս իջանել Ստեղծչին պատկանաւոր էր,
քան առ մին, եւ զբազմաց յանդիմանել զմեզս, քան թէ զմիոյն, որ
ասաց. Ի ծառոյն, յորմէ պատուիրեցի քեզ անտի՛ միայն չուտել[2], եւ
կերար:

Արդ, եւ այն՝ ճաշակումն պտղոյ միայն, իսկ աստ՝ զի փոխանակ
Արարչին՝ երկրպագեցին արարածոց: Այսոքիկ վայելչագոյնք երեւին
քան զառաջինն, թէպէտ երկաքանչիւրքն՝ մարդասիրութեան նշանակ,

1 Տե՛ս Ել. Գ 8:
2 Տե՛ս Ծն. Գ 11:

սակս այսորիկ, զոր եւ կանուխ ժամանակաւ խորհրդեամբ ունէր զմեր փրկութիւն, զնոյն եւ բանիւք մարգարէիցն յայտնեաց: Եւ զառ ի նոցանէ պատմելն՝ զնոյն եւ գործով կատարեաց. բնութիւն իրացն եւ ըստ կարգի ներգործեալ: Զի նախ խորհելն է, եւ ապա խօսելն, եւ ապա գործով կատարելն: Արդ, զխորհրդեամբ եւ օրինօք տպաւորեալսն, զմարգարէիցն բանիւք վկայեալսն՝ յայսմ աւուր կատարեաց Աստուած Բանն անապական եւ սուրբ ծննդեամբն ի սրբոյ Կուսէն, որոյ եղանակն անհաս յեղականացն եւ անթարգմանելի ի բանականացս, վասն զի միանգամայն եղեն երիս իրս հրաշափառս եւ վեհագոյն քան զբնութիւն: Առումն եւ յէութիւն գալն եւ աստուածանալ մարմնոյն ի Բանէն: Եւ յայսցանէ իմանի Աստուածածին սուրբ Կոյսն Մարիամ: Ո՛չ միայն յաղագս բնութեամբ Աստուածն գոլ Բանին բնակելոյ ի նմա, այլ եւ վասն աստուածանալոյ մարդկութեանն ի նմա, որոց վաղվաղակի յղութիւն եւ էութիւն եւ աստուածութիւն սքանչելագործ ի յղութիւն Բանին Աստուծոյ: Իսկ մարմնոյն ի նոյն անձն Բանին էութիւն եւ աստուածութիւն, ի մօրէն Աստուծոյ ի վեր քան զբնութիւնս՝ շնորհելով զստեղծումն Ստեղծողին եւ զմարդանալ Աստուծոյ եւ Արարչին արարածոց:

Արդ, դարձեալ հիանաս ընդ խորհրդոյս զօրութիւնս եւ քննես զարդեանցն շահաւորութիւն, եթէ վասն է՞ր Աստուած ի մարմնի: Եւ որքան կարող եմք, հետեւիմք, եւ հեշտամտեալ՝ զուարթասցին անձինք ուսումնասիրաց ընդ լուր ախորժելի բանից:

Եւ ասեմք, առաջին՝ վասն այսորիկ Աստուած ի մարմնի, վասն զի ետ մեզ զիւրում պատկերին նմանութիւն, զանձն եւ զմիտս իւրովք առաքինութեամբ, եւ ոչ պահեցաք, առնու Ինքն զաղքատ եւ զտկար բնութիւնս մեր, զի զկերպարանս սրբեալ պահեսցէ եւ անապական գործեալ՝ հաղորդ Իւրոյ աստուածութեանն ցուցցէ դարձեալ: Զերկրորդ հաղորդութիւնն հաղորդի յոյժ հրաշափառագոյն, քան զառաջինն. որքան յայն ի վեհագունէն ետ, այժմ առնու ի վատթարագունէս. այս քան զառաջինն՝ հրաշափառագոյն, եւ որք միտս ունին՝ բարձրագոյն:

Երկրորդ՝ զի նախաստեղծն Ադամ պատուեալ փառաւք յԱրարչէն՝ եդաւ ի դրախտն շքեղացեալ, աստուածային պատկերին նմանութեանն կերպարանաւ: Իսկ անկեալն ի փառաց, նախանձաբեկ եղեալ բանս էարկ յԱրարչէն առ արարածն, եթէ վասն այն արգելի պտղոյն,

զի մի՛ կերեալ՝ աստուածք լինիցիք[1]: Իսկ Բարերարն, որ միայն վասն բարոյ արար զմարդն, որպէս եւ ասէ ճոխն աստուածաբանութեամբ սուրբ հայրն Գրիգորիոս, եթէ էր կացեալ մնացեալ, որպէս էաքն, եւ զպատուիրանն էր պահեալ, ոչ լինէաք, որպէս եմքս: Այլ զի՞նչ լինէաք յետ փայտին գիտութեան. ի փայտէն կենաց ճաշակէաք, աստուածացեալք եւ յԱստուած մերձենէաք: Վասն որոյ եկն եւ էառ մարմին եւ միացուցեալ ընդ Բանին՝ աստուածացոյց եւ յամօթ արար զբանսարկուն, որ պատրեաց զնախաստեղծսն, եւ թէ վասն այն արգել ի պտղոյն, զի մի՛ կերեալ՝ աստուածք լինիցիք:

Երրորդ՝ զի յորմէ հետէ զրկեցան առաջնաստեղծքն յաստուածային տեսոյն, ի ծննդոց նոցա արդարքն ամենայն ցանկային տեսանել զՆա, որպէս Տէրն յայտնեաց. Բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել եւ ոչ տեսին[2], վասն զի անհնար էր մարմնականաց տեսանել զԱնմարմինն, որպէս Մովսէսի ասաց. Ոչ ոք տեսանէ զերեսս Իմ ի վերայ երկրի եւ ապրել կարասցէ[3]: Վասն այնորիկ եկն Ցանկալին արարածոց եւ [է]առ մարմին, որով կարասցուք տեսանել: Զոր օրինակ, որք ոչ կարեն զբոլորակութիւն արեգական յանդիման տեսանել, ընդ ջուր յստակ կամ ընդ հայելի զճառագայթս նորա տեսանեն, այսպէս Բանն Աստուած՝ ըստ Իւրում բնութեանն անտեսանելի, եղեւ ըստ մարմնոյ տեսանելի եւ զցանկութիւն արդարոցն ելից:

Չորրորդ՝ զի մարդիկ ի խնդիր ելեալ Աստուծոյ՝ զարարածս աստուած կարծեալ պաշտեցին, իսկ զի Տէր Աստուած՝ Աստուած նախանձոտ է[4], զփառս Իւր այլում ոչ կամի, եկն եւ խառնեաց զաստուածային բնութիւնն ընդ մարդկայնոյս եւ եցոյց Ինքեամբ զանմոլար ճանապարհն՝ ասելով. Ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ Ինեւ[5], եւ ետ մեզ սիրով զհաւատ եւ զյոյս, զի բուռն հարցուք, իբրեւ զարրից լուսեղինաց ձգելոց զերկնից, եւ այլ մի՛ եւս մոլորեսցուք՝ զհետ գնալով Առաջնորդին եւ զճշմարիտն Աստուածայայտնողին:

Հինգերորդ՝ զիւրական ասացեալսն եկն եւ կատարեաց, եթէ

1 Տե՛ս Ծն. Գ 5:
2 Մատթ. ԺԳ 17
3 Տե՛ս Ել. ԼԳ 20:
4 Ել. ԼԴ 14
5 Յովհ. ԺԴ 6

Ադամ եղեւ իբրեւ զմի ի Մէնջ[1], հենգնել աննախանձ եւ բարի Բնութեանն ոչ յարմարի ասել եւ անկատար մնալ, աստուածային Բանին ոչ էր արժան: Եւ, զի հազար ամ յաչս Տեառն իբրեւ զմի օր է, զոր իբրեւ զեղեալ ասաց, եկն եւ իբրեւ զլինելոյ կատարեաց՝ առեալ զմեր բնութիւնս՝ մարմին, հոգի, միտք, եւ միացուցեալ ընդ անճառ աստուածութեան Իւրոյ, որոյ յեղանակն գիտել Ինքեան միայնոյ է, եւ նստեալն ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս՝ եղեւ առեալ բնութիւն Ադամայ ընդ առողին Բանին, Մի Երրորդութենէն, ոչ յաւելուած Անձին կամ բնութեան յԵրրորդութիւնն եղեալ, այլ յաւելուած Ադամային բնութեանս եղեալ Բանին առ միաւորութեան, մահկանացուն եղեալ անմահ, շնչաւորն գոլով՝ հոգեւոր, յերկրէ եղեալ ընդ երկնային ել դրունս: Իսկ արդ, Երրորդութիւնն եւս առնելով Բանին զմարմինն ի Մարիամայ՝ է Երրորդութիւն, ե՛ւ Երրորդութեանն Միաստուածութիւն ճանաչի, զոր եւ տեսեալ՝ նախավկայն ասէ. Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի Մարդոյ, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ[2]. եւ Պողոս՝ Նստաւ ընդ աջմէ Մեծութեանն ի բարձունս[3]. եւ Դաւիթ՝ Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եդից...[4]: Ահա կատարեցաւ այն, թէ՝ Ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի Մէնջ[5]:

Վեցերորդ՝ արասցուք մարդ ըստ պատկերի Մերում եւ ըստ նմանութեանն[6]. առ Երրորդութեանն խորհուրդ առեալ լինի. եղեւ յինչ յիսկզբանն եւ յառաջին ստեղծմանն սկզբնատպին բարեաց պատկերն ըստ այսքան յեղանակի՝ ըստ բանականութեան, ըստ մտաւորութեան, ըստ անձնիշխանութեան, ըստ ծննդեան մտաց զբանն, ըստ եղելութեան հոգւոյն, ըստ անծնելութեանն Ադամայ, ըստ ծնելութեան Սեթայ եւ ըստ եղելութեանն Եւայի, եւ ըստ բնական իշխան գոլոյ, զի բնութեամբ ծառայ ունի հոգի զմարմինն եւ իշխէ նմա, որով եւ առաւել պատկեր կոչեցաւ եւ է մարդ: Արար եւ վախճան աւուրցս յայտնի տեսակաւ, վասն զի Որդին Աստուծոյ Որդի Մարդոյ եղեւ, ոչ որ ինչ էր՝ փոխեցաւ, վասն զի անփոփոխելի է, այլ [որ] ոչն էր՝ էառ, քանզի

1 ՄԱ. Գ 22
2 Գործ. Է 55
3 Եբր. Ա 3
4 Սաղմ. ՃԹ 1
5 ՄԱ. Գ 22
6 ՄԱ. Ա 26

մարդասէր է, զի տարեալ լիցի անտանելին միջնորդաւ մարմնովն մերձեալ առ մեզ վարագուրաւ: Եւ զի մաքուր զՆորա Աստուածութիւն բերել ոչ էր հնար, որ ի լինելութիւնն եւ յապականութեանն է բնութիւնս, վասն այնորիկ զանխառնելին խառնէ ընդ անեղի բնութեանն զեղելութիւն. ընդ մարմնի՝ միտքն, ընդ ժամանակ՝ էիս անժամանակն, ընդ չափով՝ անբովանդակելին: Եւ ոչ միայն այս, այլեւ ընդ կուսութեանն՝ զծնունդն, ընդ անպատուութեանն, որ քան զամենայն պատիւ[7] բարձրագոյն, այսինքն՝ ընդ չարչարանս՝ անչարչարելին, ընդ ապականացուիս՝ զանմահն, ընդ խաւարի մարմնոյս՝ անեղանական լոյսն, որպէսզի լուցմամբ ճրագի Իւրոյ մարմնոյն զթաղեալն յաղբ աղտեղից դարձեալ գտցէ, եւ զառաջին գեղեցկութիւն պատկերին զեղծեալն վերստին նորոգեսցէ, եւ զպատկերին անվրէպ նմանութիւնն[8] ստուգութեամբ ցուցցէ: Առնէ եւ ի հանդերձելումն լի եւ անթերի կատարմամբ՝ ըստ Յոհաննու ճշմարիտ սերելոյն, թէ՝ Յորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լինելոց եմք[1]:

Եօթներորդ՝ վասն այնորիկ մարմին զգենու, զի զպարտս անհնազանդութեանն Ադամայ հատուցէ հնազանդութեամբն Իւրով, զի պարտ էր՝ որ մարմնով մեղաւ, մարմնով արդարանալ: Ոչ ոք ընտրէր որդոց Ադամայ բոլորովին արդար մնալ ի մարմնի:

Եկն Ստեղծողն Ադամայ, եղեւ որդի նորա եւ զեօթնեկի յանցանս նորա Իւրով արդարութեամբն եբարձ: Նա[խ]՝ զի էանց զպատուիրանաւն, Տէրն եբարձ զայն՝ ասելով. Զամենայն զոր ինչ պատուիրեաց Ինձ Հայր, այնպէս առնեմ[2]:

Երկրորդ՝ զի ճաշակեաց Ադամ ի պտղոյն[3], Տէրն ճաշակմամբ ի լեղոյն[4] բժշկեաց:

Երրորդ՝ զի թագեաւ ի մէջ ծառոց դրախտին[5], կարծէր փախչել զԱմենատեսակէն, Տէրն սպանողացն ասէր. Թէ զՅիսուս խնդրէք, Ես եմ[6]:

1 Ա Յովհ. Գ 2
2 Տե՛ս Յովհ. ԺԴ 31:
3 Տե՛ս ՄԱ. Գ 7:
4 Տե՛ս Մատթ. ԻԷ 34, Յովհ. ԺԹ 30:
5 Տե՛ս ՄԱ. Գ 8:
6 Տե՛ս Յովհ. ԺԸ 4-5:

Զորրորդ՝ զի նա յԱստուած եհան զպատճառն. Կինս, զոր ետուր ինձ, սա ետ ի պտղոյն, եւ կերայ[1], Տէրն զբանսարկուն եցոյց պատճառ. ի սկզբանէ սատանայ մարդասպան է եւ մեղանչէ եւ ի ճշտութեանն ոչ եկաց[2]:

Հինգերորդ՝ զի օտարին եւ թշնամոյն խրատու լսեաց, վասն որոյ Փրկիչն յետ մկրտութեանն փորձողին ոչ ետ տեղի բանից:

Վեցերորդ՝ զի անզեղջ մնաց յետ մեղացն, Տէրն զդէմս նորա առեալ՝ ասէր. Աստուա՛ծ, Աստուա՛ծ Իմ, ընդէ՞ր թողեր զի՞ս[3] վասն բազում յանցանաց Իմոց:

Եօթներորդ՝ զի նիւթական մարմնոյն բնութեամբ աստուածանալ կամեցաւ, վասն որոյ անճառելի եւ աննիւթ բնութիւնն՝ Աստուած Բանն, մարդ եղեւ եւ զնորա պարտսն հատոյց եւ զփափաք ցանկութեանն ելից:

Ութերորդ՝ զի նախաստեղծք ի ծննդեանն մոլորեցան, զոր անճառելի իմն եղանակաւ աճելոց էին ի դրախտին, յայնմանէ մոլորեալ՝ անկան յախտաւոր ծնունդս ըստ հաւասարութեան անասնոց: Վասն որոյ հարկ եղեւ, որ զառաջինն ոչ գոչեցաւ ի կաւոյ ստեղծանել, վասն բարերարութեանն, յերկրորդումս ոչ գոչի, վասն ողորմութեանն: Ուստի մոլորեալ էին, յայնմանէ սկսաւ ուղղել յառաջին փառսն եւ սրբութեան ծնունդն: Զոր օրինակ, իմաստուն բժիշկք զպատճառս հիւանդարար ցաւոց գտանեն եւ ապա դեղս բժշկական կազմեն. եւ ճարտարք յորսորդաց զկաղաղս չար գազանաց եւ զորջս թունաւոր զեռնոցն աւերեն. եւ տէր գանձու, յորժամ տեսցէ զգանձս իւր գողացեալ, նախ ի տեղին գնայ եւ զպակասութիւն գանձուն գիտացեալ՝ զհետ մտցէ հետոցն, մինչեւ գտեալ՝ անդրէն դարձուցցէ եւ զգողն սպանցէ: Այսպէս եւ Տէրն, սկսեալ ի ծննդենէ, ճանապարհորդեաց9 ընդ յամենայն հասակս մարդկային կենցաղոյս առանց մեղաց եւ սպան զմահ, զի ուր մարմինն է, անդ է մահ: Եւ արմատ մահու՝ արգանդ, զի անդ առնու զսկիզբն ստեղծանելոյ, եւ անդէն սկսանի մահ ապականել զնա՝ սկսեալ յարգանդէ, եւ կատարէ10 ի դժոխս: Վասն այնորիկ Որսորդն մահու սկսանի յարգանդէ եւ զհետ եմուտ

1 Տե՛ս Ծն. Գ 12:

2 Տե՛ս Յովհ. Ը 44:

3 Մատթ. ԻԷ 46, Մարկ. ԺԵ 34

մինչ ի կատարած դժոխոց արգելարանի նորա: Եղեւ Նա յղութեամբ յարգանդի, եւ ոչ կարաց վնասել զՆա մահ. եւ՝ մանուկ, եւ ի ծննդեանն Նորա ոչ ամաչեցոյց զՆա. եղեւ տղայ, եւ ի յուսման անդ ոչ կարաց յողդողդել զՆա. եւ՝ երիտասարդ, եւ ցանկութեամբ ոչ կարաց գայթակղեցուցանել զՆա. եւ՝ գիտուն, եւ խորամանկութեամբն իւր ոչ կարաց յաղթել. եւ՝ վարդապետ, եւ ի ճշտութեան ոչ կարաց յանդիմանել զՆա. եւ՝ զգուշացեալ, եւ պատուիրանօք Նորա ոչ կարաց խորացուցանել11. եւ՝ պնդակազմ, եւ ոչ կարաց սպանանել. եւ՝ մեռեալ, եւ ի զգուշացուցանել գերեզմանին ոչ կարաց պահել զՆա: Ո՛չ հիւանդացաւ, զի բժիշկ էր, ո՛չ մոլորեցաւ, զի հովիւ էր, ո՛չ յանցեաւ, զի ուսուցիչ էր, ո՛չ գայթակղեցաւ, զի լոյս էր:

Իններորդ՝ Բանն եղեւ մարմին[1]՝ ըստ Յոհաննու ձայնին, զի զոր դատապարտութեամբ միոյ մարմնոյն Ադամայ ամենայն մարմինք մեռան եւ մեռանին, նոյնպէս եւ յաղթութեամբ միոյ մարմնոյն Քրիստոսի ամենայն մարմինք12 կեցցեն եւ կեան: Եւ զոր օրինակ, ինքեանք մարմինք մեղան եւ ինքեանք մեռանին, եւ երկիր՝ մայր նոցա, անիծաւ, նոյնպէս վասն այսր մարմնոյ, որ է Եկեղեցի, որ ոչ ապականի, օրհնեցաւ երկիր՝ մայր անապական ծննդեանն՝ սրբուհին Մարիամ, զի եւ հրեշտակն, որ եկն սերմանել զնա ի լսելիս նորա ի ձեռն յստակ ձայնին, այսպէս արար զսկիզբն սերմանն. Ողջո՛յն ընդ քեզ, օրհնեա՛լ դու ի կանայս[2]: Զնոյն եւ՝ Եղիսաբեթ, որպէսզի յայտ լիցի, թէ վասն առաջին մօրն անիծաւ, վասն երկրորդի մօրս օրհնեալ լիցի:

Տասներորդ՝ միացաւ Աստուած ի մարմնի, զի զանէծսն որ ի նա՝ սրբեսցէ, եւ զորջացեալն մահ սպանցէ, եւ զօտարացեալն ընտանացուցցէ, եւ զանկեալն ի դրախտէն յերկինս դարձեալ հանցէ: Զոր օրինակ, ներքոյն խաւար ի տան՝ վերածութեամբ լուսոյ լուծանի, նոյնպէս փշաբեր անէծք դառնութեանն՝ յարակայութեամբ աստուածութեան աներեւոյթ եղեւ: Եւ զոր օրինակ ի ջուրն առն որքան գիշեր է՝ պնդէ զխոնաւութիւնն, իսկ ջեռեալ արեգական՝ հալի ի ջերմութենէն. նոյնպէս թագաւորեալ մահ յԱդամայ մինչեւ ի գալուստն Քրիստոսի, եւ ի ծագել Արեգականն արդարութեան՝ ընկղմեցաւ:

Մետասաներորդ՝ զի բանսարկուն զմարմին օձին զգեցաւ եւ

1 Յովհ. Ա 14

2 Տե՛ս Ղուկ. Ա 28, 42:

պատրեաց զնախաստեղծն, իսկ Տէրն զօձաձեւ մարմինս մարդ զգեցաւ, եւ որովք հնարիւք յաղթեցաւ մարդ, նոյն հնարիւք եւ յաղթեալ մարմնով՝ յաղթեաց Տէրն յաղթողին, եւ զի անպարտելի կարծէր զինքն չարն՝ աստուածութեանն յուսով պատրեալ զմիզ, մարմնոյ զգեցմամբ խաբի, զի իբրեւ ընդ Ադամայ մատուցեալ ընդ Աստուծոյ՝ կործանեսցի: Եւ այս նոր Ադամս զհինն վերստին ողջացուցէ, եւ լուծցի դատապարտութիւն մարմնոյն մահու մեռելոյն: Եւ զի իբրեւ զգործի ինչ առեալ՝ զմարդկութիւնս զէն ընդդէմ մեր կրէր, որպէս ասէ Պօղոս. Տեսանեմ այլ օրէնս յանդամս զինեալ հակառակամարտ[1], արդ, որով զինու սատանայ ընդդէմ մեր մարտնչէր, նորին զինու ի գալստեան Տէրն մեր առ ի մէնջ զնմանութիւնս մեր, զի մեք Նորա նմանութեամբն կեցցուք, եւ զպակասութեանն մեր տացէ շնորհս նմանութեամբն Իւրով, զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել լիցին շնորհքն[2]: Եւ յանկանել բնութեանս ի խոնարհ՝ անկաւ ընդ նմա՝ խոնարհելով Այն, որ յարուցանելոց էր զնա: Եւ զի տկարացաւ առողջ բնութիւնն Ադամայ, վասն որոյ զնոյն բնութիւն, որ զառողջութիւնն իւր կորոյս, զգեցաւ Տէր մեր, զի նովաւ դոցէ զառողջութիւն առաջին բնութեան նորա: Եւ զի պարտ էր գալ եւ վասն մեր չարչարիլ Տեառն մերոյ, եւ ոչ իշխէր մերձենալ սատանայ, ըստ այնմ՝ թէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին[3]: Խաչ մահու եղեւ մարմինս, զի որսացեալ կլցէ13 զվիշապն եւ զկլեալսն փոխեսցէ:

Երկուտասաներորդ՝ ծնաւ մարմնով ի վերջ քան զսահման բնութեան մարմնոյ՝ անապական ծննդեամբն ի Կուսէն, զի խափանեսցին մեղք, եւ ծնեալք լիցուք հոգեւորապէս, եւ լուծցին դատակնիք երկանց նախամօրն ծննդեան, եւ մահու մայրն կենաց մայր լիցի: Փոխանակ օձին պատրանաց՝ Գաբրիէլ աւետարանեսցէ, եւ փոխանակ ձեռագործ մարդակերպ պատկերի՝ ճշմարիտ Աստուած մարդացեալ երկրպագեսցի, եւ ստութեան կարծիսն լուծցի, այլեւ գիտութիւն մեր լուսաւորեսցի ի մեծ հրաշագործսն Աստուծոյ: Եւ իմաստութեամբ հայեցուք առ էական Մնունդն, որ ի Հօրէ, եւ յայսմանէ իմանալ, թէ որպէս ծնաւ ըստ մարմնոյ ի մօրէ միայն, առանց հաղորդութեան արեան, զոր բնութեանս ոչ է սովորութիւն: Այսպէս14 եւս առաւել

1 Տե՛ս Հռոմ. Է 23:
2 Տե՛ս Հռոմ. Ե 20:
3 Ա Կոր. Բ 8

հաւատարիմ է, որ ծնաւ ի Հօրէ էական եւ ինքնական Մնունդ անմայր:

Եւ այսոքիկ՝ յաղագս ծննդեանս վայելչապէս տօնելոյ: Ասասցուք եւ յաղագս մկրտութեանն: Բայց նախ ըստ իմաստասիրացն բացորոշութենէ հետեւեսցուք, որ զհոմանունութիւն ընդ երիւք այսոքիկ արկանեն սահմանօք: Նախ՝ թէ քանի՞ նշանակութիւնք են սեռի. երկրորդ՝ յաղագս որո՞յ նշանակութեան է բանն. երրորդ՝ ստորագրել եւ կամ սահմանել զայն, յաղագս որոյ բանն է: Արդ, ըստ յայս յեղանակի տեսցուք, թէ քանի՞ մկրտութիւնք են:

Եւ է առաջին մկրտութիւն ջրհեղեղն[1], որ եբարձ զմեղս աշխարհի:

Երկրորդ՝ յամպն[2] եւ ի ծովն[3] առ Մովսիսիւ, որ օրինակ էր ճշտութեանս. ծովն՝ ջրոյ աւազանին, ամպն՝ Հոգւոյն, գաւազանն՝ խաչին խորհրդոյ:

Երրորդ՝ օրինակսն, զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբէր ողողելով զհանդերձ մտանել ի բանակն[4]:

Չորրորդ՝ մկրտութիւն Յովհաննուն ջրով յապաշխարութիւն[5]:

Հինգերորդ՝ մկրտութիւն, զոր Տէրն մկրտեցաւ:

Վեցերորդ՝ մկրտութիւն հրով, որով մկրտեաց Քրիստոս հրեղէն լեզուօք զառաքեալսն ի Վերնատունն[6]:

Եւթներորդ՝ ապաշխարութեան մկրտութիւն, որ յարտասուաց է, որով մեղքն ի բաց լուացեալ լինի:

Ութերորդ՝ արեամբ մկրտութիւն, որ վկայիցն է, զոր եւ Քրիստոս մկրտեցաւ, որ ոչ շաղախի յերկրորդ աղտեղութեամբ:

Իններորդ՝ մկրտութիւն, որ ի կատարածին է, զի ամենայն ինչ ի հուր անցանելոց է:

Եւ յայսցանէ ստուգապէս յեղանակք մկրտութեան երեք են յԱստուծոյ աւանդեալ. Մովսիսի, որ զամենայն սրբութիւնս ջրով կատա-

1 Տե՛ս ՍՍ. Է 17-20:
2 Տե՛ս Ել. ԺԳ 21-22:
3 Տե՛ս Ել. ԺԴ 21-22:
4 Տե՛ս Բ Օր. ԻԳ 10-11:
5 Տե՛ս Մատթ. Գ 11, Մարկ. Ա 4, Ղուկ. Գ 3:
6 Տե՛ս Գործ. Բ 2-4:

րէին. երկրորդ՝ Յովհաննու, որ ոչ ջուր միայն, այլեւ ապաշխարութիւն. իսկ երրորդն, որ ի Քրիստոսէ շնորհեցաւ գերագոյն քան զայսոսիկ, զի թողութիւն պարգեւէ մեղաց՝ հրաւիրելով յորդեգրութիւն Հօրն երկնաւորի:

Արդ, յայսցանէ տեսցուք, թէ զո՞ր մկրտութիւն յանձն էառ մկրտիլ Քրիստոս: Եւ յայտ է ի մկրտելոյն Յովհաննէ15, զի զՄովսէսին ոչ մկրտեցաւ, զի նա նորոյս քարոզ քարոզէր եւ ո՛չ հնոյն: Այլեւ ո՛չ Յովհաննուն, զի այն ապաշխարութիւն միայն էր, որ ոչինչ օգնէր բնութեանս: Իսկ Նա, որ վասն մեր մարմնացաւ, զի զկատարեալն զմեզ շնորհեսցէ զբժշկութիւն, զերրորդս16 մկրտեցաւ, որ է թողութիւն մեղաց եւ որդեգրութիւն Հօրն երկնաւորի եւ ընդունելութիւն Հոգւոյն Սրբոյ, պատճառ եւ առիթ, իբր ոչ եթէ Ինքն կարօտ էր այսոցիկ թողութեան մեղաց (Այն, որ ոչ արար մեղս, այլ Գառն էր՝ բարձող զմեղս աշխարհի)[1], եւ կամ կարօտ էր որդեգրութեան (բնութեամբ Որդին Հօր եւ էակից եւ պատուակից Նմին), կամ ընդունելութեան Հոգւոյն Սրբոյ (որ առ Իւր միշտ ունէր եւ Իւր էր, որպէս Հօր եւ փառակից Նմին), այլ որպէս զամենայն տնօրէնութիւն՝ ո՛չ վասն Իւր Ինքեան կատարեաց, այլ վասն մեր:

Որպիսի ինչ. ծնաւ, զի զդատակնիք ծննդեան մերոյ լուծցէ: Ընծայեցաւ ի տաճարն, զի զմեզ Աստուծոյ ընծայեսցէ: Խաչեցաւ, զի զմեղս մեր սպանցէ ի խաչին: Յարեաւ, զի մեզ տացէ յոյս յարութեան: Համբարձաւ մարմնով, զի զհողեղէն բնութիւնս մեր աթոռակից արասցէ աստուածութեանն Իւրոյ Աստուծոյ Հօր:

Այսպէս եւ մկրտեցաւ:

Առաջին՝ զի զբնութիւնս մեր նորոգեսցէ եւ զմեղս մեր թաղեսցէ ի ջուրն եւ Որդիս Աստուծոյ Հօր վերագրեսցէ զօտարացեալս:

Երկրորդ՝ մկրտի, զի զառաջին օրինակն անախտ աճմանն ի մեզ դարձուցէ եւ շնորհեսցէ մեզ ծնունդ հոգեւոր. եւ զի ոչ էր այլազգ հնար անախտ ծնանիլ. մկրտեալ սրբեաց զջուրն եւ ետ մեզ ծնող հոգեւոր:

Երրորդ՝ մկրտեալ սրբեաց զջուրն, որպէսզի օդոց առեալ սրբեսցին եւ ցօղելով յերկիր բոյսք որ ի սմա՝ զուարթասցին, եւ երկիր յա-

1 Տե՛ս Յովհ. Ա 29:

ռաջին անիծիցն օրհնեսցի:

Զորրորդ՝ մկրտութիւն, զի զփակեալ դրունս երկնից բացցէ եւ զարգելեալ բարբառն որ յԱդամայ՝ աշխարհ լուիցէ: Զի յորմէ յետէ ելին նախաստեղծքն ի դրախտէն, այլ ոչ խօսեցաւ Աստուած Հայր ընդ մարդկան, մինչեւ ի նորն Ադամայ մկրտութիւնն հաճեալ՝ բանայ զառաջին գութն արարչական առ արարածս եւ ասէ. Դա՛ է Որդի Իմ սիրելի, Որով հաճեցայ[1] ընդ փրկութիւն աշխարհի:

Հինգերորդ՝ մկրտութիւն, զի զմերկութիւն Ադամայ, որ ի լուսոյն եւ ի շնորհացն, վերստին ծածկեսցէ, եւ զՀոգին, զոր ի սկզբան կորուսաք վասն մարմին լինելոյն, Իւրով աստուածացեալ մարմնովն որպէս զԳլուխ մեր ճշտապէս յինքն ընդունելով՝ ի մեզ հեղեալ անցուցէ, որք արժանացաք անդամ լինել Գլխոյն եւ Անդրանկանն17 ամենայն եկեղեցւոյ[2]:

Եւ եթէ է՞ր վասն երեսնամեայ մկրտեցաւ:

Առաջին՝ զի ի նոյն հասակն մեղաւ Ադամ, Երկրորդն Ադամ նովին հասակաւն եւ անմեղութեան լուանայ զմեղս առաջնոյն Ադամայ:

Երկրորդ՝ զի յամօթ արասցէ զայնոսիկ, որք առաչօք ասեն զերեւումն Նորա յաշխարհի: Վասն որոյ երեսնամեայ եղեալ գայ ի մկրտութիւն:

Երրորդ՝ զի երեսունն՝ վեց հինգ է եւ հինգ վեց. զհինգ զգայութիւնս եւ զվեց շարժումն մարմնոյ մաքրեաց մկրտութեամբն՝ յաստուածայինսն ուղղեալ զընթացս նոցա:

Զորրորդ՝ զի զվարդապետութեան սկիզբն յետ մկրտութեանն առնելոց էր, յորժամ առնոյր զՀոգին, թէպէտ միշտ ընդ Նմա էր, եւ զի կատարեալ հասակն էր ժամանակ վարդապետութեան, զի մի՛ վասն թերութեան ժամանակին խոտեսցի վարդապետութիւնն:

Հինգերորդ՝ երեսնամեայ մկրտի, զի եւ ոչ մի ինչ տագնապէր Նմա փութալ ի մկրտութիւն, վասն զի Ինքն եւ չարչարանա՛ցն էր Ինքեամբ շտեմարանապետ՝ որպէս ծննդեանն: Բայց մեզ՝ եւ մահն ոչ փոքր ինչ վտանգ է, եթէ երթիցեմք միայն ապականութեամբ ծնեալ՝ ո՛չ եւս զանապականութիւն զգեցեալ, վասն որոյ մարդիկ երկնչին ի

1 Մատթ. Գ 17

2 Տե՛ս Կող. Ա 18:

մահուանէ, զի յամենայն ժամանակի պատրաստ է: Եւ Տէրն գիտէր զօրն սահմանեալ զկատարեալ մահուանն, վասն այն կայր մնայր մինչեւ յերեսուն ամն եւ ապա մկրտի:

Վեցերորդ՝ զի հանդերձեալ էր Քրիստոս յետ մկրտութեանն լնուլ զօրէնսն եւ դարձեալ լուծանել, վասն այնորիկ անսայր մինչեւ յերեսուն ամն, որ եւ կարող է բնութիւնս յայնմ հասակի զամենայն իրս մեղացն կատարել: Կայր մնայր Քրիստոս մինչեւ յայս հասակ զամենայն օրէնսն կատարել, զի մի՛ ոք ասիցէ, թէ վասն զի չէր կարող կատարել՝ յա՛յն սակս ելոյծ: Քանզի ոչ յամենայն հասակս մեր հաւասար տիրեն բնութեանս կիրք, այլ յաւուր մանկութեան՝ անմտութիւն եւ անհամբերութիւն, եւ յաւուրս երիտասարդութեան՝ սրտմտութիւն եւ յանդգնութիւն, եւ յաւուրս ծերութեան՝ ագահութիւն եւ փառասիրութիւն: Եւ արդ, եկաց մնաց Քրիստոս եւ անց ընդ ամենայն անարատապէս, եւ պահեալ զօրէնսն՝ ապա եկն ի մկրտութիւն՝ լուծանել զհինն. նորոյս սկիզբն արար:

Եօթներորդ՝ երեսնամեայ մկրտելովն կամեցաւ ցուցանել մեզ, թէ որպէս յերեսունամեան կատարեալ է հասակաւ, նոյնպէս եւ վերստին ծնունդն մկրտութեամբ՝ այր կատարեալ առնէ իմանալի հասակաւ: Արդ, կամեցաւ Քրիստոս զերկոսեան հասակսն լրութեամբ ընդունել՝ ըստ մարմնոյ եւ հոգով, եւ ապա՝ յետ մկրտութեամբն Իւրով զկեանս կատարեալ որդւոց մարդկան:

Ութերորդ՝ զի ոչ նախքան զերեսուն ամն եցոյց յայտնապէս՝ Ո՞յ ոք էր18, զի անփորձից բարոյն էր ախտն՝ իբրեւ կատարեալ քննութիւն առաքինութեանն, եւ վարդապետելոյ ժամանակ զնոյնն ունէր զհասակն: Եւ վասն զի զչարչարանն պարտ եւ արժան էր ընդունել՝ զաշխարհի փրկութիւնն՝ զխաչն, ամենեցուն ի միասին պարտ էր ընթանալ չարչարանացն: Եւ որք միանգամ չարչարանացն էին իրք, յայտնութեանն, մկրտութեանն, ի վերուստ վկայութեանն, քարոզութեանն, ի միասին բազմութեանն ընթանալ սքանչելեացն եւ որպէս մի19 մարմին լեալ՝ ո՛չ օգտեալ եւ ո՛չ աղարտեալ հեռաւորութեամբքն: Քանզի ի մկրտութենէն եւ ի քարոզութենէն եւ ի միասին ընթացելոցն շարժումն եւ նշանացոյցք եւ սքանչելիք աւետարանին յառաջ մատուցեալ՝ եւ յայնցանէ՛ չար նախանձն, եւ յայնմանէ՛ ատելութիւնն, եւ ի նմանէ՛ զդաւաճանութիւնն, եւ յայնմանէ՛ խաչն, եւ որով ապրեցաքն: Արդ, վասն այսմ ամենայնի խորհրդոց մեծագունի՝ երեսունամեայ Քրիստոս մկրտի եւ տայ մեզ զՋուրն սրբարար եւ զհոգին կենդանարար:

Եւ զի կրկին է մարդ, կրկին ետ մաքրութիւն՝ ի Ջրոյ եւ ի Հոգւոյ: Որպէսզի Հոգին՝ զհոգի20, որ պատկեր է Աստուծոյ եւ նման, նորոգեսցէ: Եւ Ջուրն, շնորհաւ Սուրբ Հոգւոյն, զմարմինսն ի մեղաց մաքրեսցէ եւ յապականութենէ ազատեսցի21. եւ զի զմահուն կերպարան Ջուրն կատարեսցէ, զի ի մահ Քրիստոսի մկրտիմք, եւ զառհաւատչեայն կենաց Հոգին պարգեւեսցէ: Եւ որպէս յայլսն ամենայն, զի նախ օրինակքն տպաւորեցան խորհրդեամբ եւ զմիտս մարդկան վարժեալ կրթեցին, եւ ապա եկն Ճշմարտութիւնն ներգործական կատարմամբ. նոյնպէս եւ՝ մկրտութեանս խորհուրդ: Զի բազում մաքրութիւնք եղեալ էին ի Ջուրն Յորդանանու, վասն զի ընդ նա անցանելով՝ Իսրայէլ մաքրեցաւ յամենայն եգիպտական ախտից եւ արժանի եղեւ ժառանգութեան Երկրին աւետեաց: Ի նմա եւ մաքուրն Եղիա մաքրեալ անցանելով վերանայր յերկինս[1]: Ի սա եօթիցս մկրտելով՝ Նէեման ասորի սրբեցաւ[2]: Ի սոյն Ջուր եւ Քրիստոս մկրտելով՝ ետ մեզ զՀոգւոյն շնորհս, որով մաքրիմք յամենայն եգիպտականս եւ22 ի խաւարային ախտից: Եւ ի սմանէ թեւաքուսեալ՝ վերանամք յերկնային խորանացն բարձրութիւն եւ սովաւ սրբիմք յամենայն ախտից եւ լինիմք եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունակք: Եւ այսոքիկ՝ ի խորհուրդ մկրտութեանս:

Իսկ տօնն Յայտնութեան կոչի: Այլ ըստ տեսանելոյ արարածոցս զԱրարիչն ասի, որ մարմնանալով ի սուրբ Կուսէն Աստուածածնէ եւ ծնանելով ի Բեթղեհէմ ի յայրին՝ Քրիստոսի Աստուծոյ Փրկչին մերոյ անմարմին հրեշտակացն զօրք յերկնից յերկիր եղեն քարոզք՝ խաղաղութիւն Առնողին յերկրի Փա՛ռք ի բարձունս[3] ասելով: Եւ երկինք լուսաւոր աստեղք մոգս ի հեռաստանէ պատարագ ոգեկոչեցին23 յերկրպագութիւն: Երկիր պանծալով այրին մսրովն՝ երկինք եղեն: Ցնծալով անբանքն՝ իւրոց24 հոմանուշակի անբանիւքն խայտացին, որ եւ հոմատոհմեայ ի25 մարդկան՝ պատուեցան ի հրեշտակաց՝ իբրեւ ամենայն ազգակցօք առնլով աւետիս՝ ի տեսանել զծնեալ Փրկիչն աշ-

1 Տե՛ս Դ Թագ. Բ 11:
2 Տե՛ս Դ Թագ. Ե 27:
3 Ղուկ. Բ 14

խարհի: Որ եւ զսորին աւուրս մարգարէն մեզ ակնարկեաց. գրէ թէ յառաջ քան զհազար ամ խօսեցաւ Հոգւովն, յայտնի է ի Հրէաստանի Աստուած: Հրէաստան՝ Յուդայեան եւ Բենիամենի ցեղին ասէ, եւ յայտնելն ի մոգուցն գալն եւ յայտնի առնելն Երուսաղէմի եւ ամենայն Հրէաստանի զծնունդ Փրկչին Աստուծոյ, եւ յԻսրայէլ ի տասն ցեղսն հնչեաց անուն մեծութեան Նորա: Արքայ ծնեալ ի հրէից ասէ զսոյն անուանակոչութիւն աւուրս, եւ սուրբ առաքեալն Պօղոս յընթերցումն աւուրս ուսուցանէ, քանզի երեւեցաւ շնորհքն Աստուծոյ՝ Փրկիչ ամենայն մարդկան: Եւ երեւելդ յայտնել է ստուգապէս: Զսոյն վարդապետք Եկեղեցւոյ ուսուցանեն, որպէս եւ Աստուածաբանն Գրիգորիոս ասէ. Այժմ աստուածայայտնութեան է կացուրդս, թէպէտ ծնելութիւն, քանզի յայտնեցաւ Աստուած մարդ ծննդեամբ:

Եւ երանելին Թէոդորոս Անկիւրա ասէ. Եւ կոյս մնաց Կոյսն եւ մայր եղեւ:

Եւ Անփիլիքոս յԻկոնացւոց ասէ. Ճշմարտութիւնն ծանուցաւ, շնորհն եկն, կեանքն յայտնեցան Աստուծոյ՝ ունելով Որդի յԱստուծոյ Հօրէ, այժմ ի կնոջէ ծնանի, զի ստորինքս՝ ծնեալքս յԱստուծոյ, ի վերուստ ծնանիցին. այս է՝ ի ջրոյ եւ ի Հոգւոյ մկրտութեամբն:

Եւ զի ճշտապէս այսօր յայտնեցաւ ծածկեալ խորհուրդ Երրորդական Աստուածութեանն ի ծննդեան եւ ի մկրտութեան աւուր Փրկչին. Որդի՝ մկրտելովն, Հայր՝ ձայնիւ ի բարձանց վկայելով, Հոգին Սուրբ՝ աղաւնակերպ իջմամբ՝ զյայտնեալն Հօր ցուցանելով, վասն որոյ եւ կոչեմք տօն լուսաւորութեան: Զի թէ անգիտութիւն եւ անհաւատութիւն եւ մեղք խաւար են եւ անուանին, գիտութիւն Երրորդութեանն եւ հաւատք ճշմարիտ եւ վարք աստուածային եղիցի լոյս եւ հոգւոյ լուսաւորութիւն, որ պարգեւեցան մեզ ծննդեամբ եւ յայտնութեամբ Որդւոյն Աստուծոյ եւ փրկագործ խորհրդեամբ տնօրէնութեան Բանին Աստուծոյ:

Իսկ ո՞յք ոմանք եւ յորո՞ց ժամանակաց սահմանեցաւ ի միասին տօնել զտօն Ծննդեան եւ Մկրտութեանն Քրիստոսի: Արդ, վասն զի առաջին յԵրուսաղէմ եկաց Յակովբոս եղբայրն Տեառն միաբանութեամբ եւ կամօք առաքելոցն, եւ նմա հարկ եղեւ հոգալ վասն տօնից եւ կարգաց Եկեղեցւոյ. եւ որպէս գիտաց ճշտութեամբ, զնոյնն եւ հաստատեաց, վասն զի եղբայրական ընտանութեամբ միշտ ընդ Քրիստոսի շրջէր: Եւ ի Յովսեփայ նմա յանձնեցաւ Կոյսն յետ մահուանն

իւրոյ, եւ ի նմանէ կարգեացն ծննդեանն ընթացուածք26 խորհրդականք երկոտասան եւ նոյնքան՝ Զատկին եւ աղուհացիցն չորեքշաբթուն27 եւ ուրբաթուն, որպէս քաջ գիտելով զամենայն ինչ եւ զժամանակ ծննդեանն՝ գրեաց ի յունուարի ի վեց: Եւ մեծն Կիւրեղ, որ ելից զթերին յընթերցուածէն, ի վերայ նորայն հիման զնոյն հաստատեաց զառաքելական ճշմարտութիւնն՝ ի յունուարի ի վեց լինել զծնունդն: Եւ ինքն ի քսանհինգ դեկտեմբերի՝ Դաւթի եւ Յակոբայ կարգէ զտօնն:

Եւ այսպէս, ամենայն եկեղեցիք, սկսեալ յառաքելոցն, նոյնպէս կատարէին: Եւ յետոյ ոմանք բաժանեցին ըստ այլեւայլ կարծեաց. ոմանք՝ պատճառանօք եւ այլ հերձուածողական ամբարշտութեամբ, եւ ոմանք՝ տգիտական անուսումնութեամբ: Ոմանք պատճառանօք բաժանեցին՝ վասն Բեթղեհէմի եւ Յորդանանու, քանզի ոչ կարէին ուխտն ի միում աւուր կատարել զտօնսն՝ հեռի գոլով ի միմեանց, եւ փոքր աճմամբ ընկալան այլ եկեղեցիք: Եւ այժմ ի դրական պատճառէ իմեքէ եղեւ սովորական, եւ սովորութիւնն յերկարեալ՝ եղեւ բնական: Եւ այս՝ յեղափոխեալ զգիրս ընթերցուածոցն ի քսանհինգ մարտի զԱւետիսն՝ իւրով կանոնաւ, եւ ի վեց յունուարի զօր Մկրտութեանն՝ իւրով կանոնաւ:

Եւ արդ, որք բաժանեն զաստուածային տօնսն ի միմեանց, որպէս թէ զծնունդն՝ մարդկային եւ զմկրտութիւնն աստուածային համարելով, վասն զի կարծեն յառաջադիմութեամբ եւ շնորհօք գալ Նմա յորդիութիւն եւ յաստուածութիւն, զոր օտար եւ սուտ ընդհանրական Եկեղեցւոյ պարտ է համարել զնոսա: Իսկ այլք ոմանք տգիտաբար անջատեցին ի միմեանց ԲԺ (երկոտասան) միջոցեալ աւուրքք զերկոսեան տօնսն աստուածային, որք խորհրդական իրագործութեամբ ամէնիմաստ տեսութեամբն ի միում աւուրս հանդիպեցան: Իսկ նոքա ի թշրին ամսոյ ի Ժ (10) եւ սեպտեմբեր ի ԻԷ (27), որ է առաջին օր տօնին եւ պապանձումն Զաքարիայի, ի նմին ասեն զյղութիւնն Եղիսաբեթի: Եւ անտի համարեն ամիսս վեց մինչ ի մարտի ԻԵ (25) եւ անդ ասեն զաւետիս Կուսին եւ ըստ ա՛յն կարգի Ծնունդն առնեն ի դեկտեմբերի ԻԵ (25): Եւ յունուար ի վեց զՄկրտութիւնն կատարեն, որում ոչ է պարտ ընդունել զտգիտական բաժանումն:

Իսկ մեք, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ունիմք զաւանդութիւնս սրբոց առաքելոցն եւ զմեծի զերիցս երանեալ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի եւ ըստ տրւչութեան նոցա մեզ, ի միում աւուր

կատարեմք զտօնախմբութիւն աստուածային իրագործութեանն ի մեզ եւ վասն մեր եղելոյ: Ճշմարիտ Աստուած խոստովանիմք զնա միաւնոյն ծննդեամբն եւ մկրտութեամբն՝ ո՛չ նուազեալ ի ծննդեանն եւ ո՛չ առաւելեալ մկրտութեամբն: Ըստ այնմ, թէ՝ Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեան[1]*: Եւ դարձեալ, թէ՝ Ես նոյն եմ*[2] *եւ ոչ փոփոխիմ: Այլ քանզի մարմնանալն Քրիստոսի եւ մկրտիլն ի միաւնոյն հայի խորհուրդ փրկութեան մերոյ, ըստ այնմ օրինակի լինելոյ նորա՝ ընդ մեզ լինել, եւ մեզ՝ ընդ նմա ճշտութեամբ: Յաղագս այնորիկ պատշաճապէս վայել էր Աստուծոյ՝ յայնմ աւուր, յորում ծնաւ ի Կուսէն եւ կոչեցաւ մարդ եւ Որդի Մարդոյ, ի նոյն աւուր իրաւաբար կատարել զխորհուրդ մկրտութեանն՝ իջանելովն Իւրով ի Ջուր եւ պտղաւէտեալ զարգանդ սուրբ աւազանին, զի վերստին ծնեալք մեք ի նմանէ ի ձեռն Հոգւոյն, կոչեսցուք աստուած եւ որդիք Աստուծոյ շնորհօք:*

Եւ արդ, որք բաժանեն զաստուածային իրագործութիւն տօնիցն ի միմեանց, յայտ է, թէ ա՛յլ ումեք եւ ո՛չ ծնիցելոյն ի Կուսէն կամին տալ զշնորհս մկրտութեանն: Իսկ եթէ ամբարշտութիւն է զՅիսուս խորհել, քանզի Մնեալն ի Կուսէն ետ մեզ զպարգեւս մկրտութեանն, ամբարշտութիւն ուրեմն՝ եւ բաժանել զաստուածային իրագործութեանց զխորհուրդ ի միմեանց եւ յայլ եւ այլ աւուրս կատարել: Զի թէպէտ երեսնամեայ ժամանակաւ միջոց եղեւ աստուածային իրագործութեանն, սակայն ի լնուլն երեսուն ամին, ըստ Ղուվասու աւետարանութեանն, զՅիսուս երեսունամեայ ասաց գալ ի մկրտութիւն[3]*: Եւ ի նոյն աւուր հանդիպեցաւ գալ ի մկրտութիւն խորհրդաբար, յորում աւուր ծնաւ ի Կուսէն, որ է յունուարի ամսոյ ի վեց՝ ըստ հռոմայեցոց նահանգին, եւ տբեթ՝ ի ԻԱ (21)՝ ըստ եբրայականին: Զի Այն, որ զօրացոյցն զբնութիւն զԿուսին ծնանել զինքն ըստ մարմնոյ յաղագս մեր, նոյն Ինքն զօրացոյց զբնութիւնս Ջուրցն՝ յերեսնամեայ հասակին իջանելով ի նա եւ սրբելով ի նմին աւուր եւ ժամու, յորում ծնաւ ի Կուսէն, որ է վեցն յունուարի եւ ԻԱ (21) տբեթի, զի կարողացին Ջուրքն ծնանելով մեզ ըստ Հոգւոյ՝ յորդեգրութիւն Աստուծոյ: Վասն որոյ եւ ձայնն ի վերայ Յորդանանու վկայեաց յանդիման այնոցիկ, որք տեսին զնա յառաջագոյն յայնմ աւուր ծնեալ ի Կուսէն, եւ մարդ*

1 Եբր. ԺԳ 8
2 Ղուկ. ԻԴ 39
3 Տե՛ս Ղուկ. Գ 23:

եւ որդի մարդոյ զնա միայն կարծեցին. ասէ՝ Դա՛ է Որդի Իմ սիրելի[1]*, որ յայսմ աւուր մկրտեցաւ յանդիման ձեր:*

Եւ արդ, եթէ ձայն Հօր, որ նախ Դաւթաւ ասացաւ՝ Որդի Իմ ես Դու, եւ Ես այսօր ծնայ զՔեզ[2]*, եւ ապա Ինքեամբ ի վերայ Յորդանանու ասաց՝ Դու ես Որդի Իմ սիրելի*[3]*, եւ ոմանք կարծեն ո՛չ յայնմ աւուր, յորում եւ ծնաւ, այլ յայլում աւուր հանդիպիլ, յայտ է, թէ ոչ կամին Մնիցելոյն ի Կուսէն պատշաճեցուցանել զվկայութիւնն Հօր, այլ սուտ կամին առնել զնա, ըստ որում ասացն Յոհաննէս: Բայց ինքեանք ստին եւ որոշին յԱստուծոյ հաստատապէս, որք զայնոսն խորհին: Եւ վկայութիւնն Հօր ճշմարտէ վասն Որդոյ Իւրոյ՝ ի վերայ Յորդանանու վկայեալ: Զի Մնեալն ի Կուսէն՝ յայնմ աւուր դաւանեաց Որդի մշտնջենաւոր Մնունդ էութեան Նորա, որում վկայութեան եւ մեք հաւատացեալ ճշտութեամբ28՝ տօնախմբեմք ի միասին զերկոսեան իրագործութիւնսն Աստուծոյ, որպէս վերագոյն ասացաք, ի միում աւուր խորհրդաբար լեալ:*

Եւ տօնեսցո՛ւք միշտ շնորհօքն Աստուծոյ աւետարանական եւ առաքելական վկայութեամբ եւ սրբոց հարցն ուղղափառ վարդապետութեամբ: Իսկ որք տգիտաբար երկոտասան աւուրք յառաջ են եւ յառաջին աւուր Քաւութեան տօնին ասեն զյղութիւն Եղիսաբեթի եւ անդի՛ համարեն զաւետիս Կուսին, ոչ վկայէ սոցա Աւետարանն Ղուկասու, այլ մեզ, որք ի միում աւուր տօնեմք զերկոսեանն, քանզի պատմէ ի տօնի Քաւութեան, որ է թշրին ի Ժ (10) եւ սեպտեմբեր ի ԻԷ (27), քահանայապետին Զաքարիա մտանել ի տաճարն եւ արկանել խունկ եւ տեսանել զտեսիլ հրեշտակին եւ լսել զաւետիս յղութեան ամլոյն եւ կրել պապանձումն լեզուին յոչ հաւատալն[4]*: Եւ ապա ասէ՝ Իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տուն իւր*[5]*: Եւ տուն նորա ո՛չ յԵրուսաղէմ էր, այլ ի լեառնակողմն Հրէաստանի, ուր զողջոյն ետ Մարիամ Եղիսաբեթի: Եւ աւուրք պաշտաման նորա էին. Ե (5) օր Քաւութեան տօնէին եւ Է (7) օր Տաղաւարահարացն, որ լինի ԺԲ (12) օր:*

1 Մատթ. Գ 17
2 Սաղմ. Բ 7
3 Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22
4 Տե՛ս Ղուկ. Ա 8-20:
5 Ղուկ. Ա 23

Արդ, զերկուս զտօնս զայսոսիկ կոչէ աւետարանիչս աւուրքք պաշտաման քահանայութեան Զաքարիա, զորս ի միասին տօնէին ըստ օրինացն: Որք իբրեւ կատարեցան, գնաց, ասէ, ի տուն իւր եւ Թշրին ի ԻԲ (22)՝ հոկտեմբեր ի Ժ, եղեւ յղութիւն Եղիսաբեթի: Արդ, որք ի ԻԵ (25)-ն մարտի կատարեն զօր աւետեաց Կուսին, զյղութիւնն Եղիսաբեթի յառաջնում աւուր պապանձմանն Զաքարիայի ասեն, որ է Թշրին ի Ժ (10):

Եւ զիա՞րդ մարթ էր օրինապահ քահանային ի քաւութեան աւուրսն29 ի կին իւր մերձենալ: Քանզի Մովսէս, յորժամ ի լերինն խորհրդածէր զԻսրայէլ, զերիս աւուրս հրամայէր սուրբ լինել ի կանանց, եւ այն հասարակաբար վասն խառնից մարդկան էր պատուիրանն: Եւ դարձեալ, զի ամենայն Իսրայէլ յամենայն քաղաքաց եւ ի սահմանաց Հրէաստանի եւ Գալիլեայ վասն գլխաւոր տօնից Քաւութեան եւ Տաղաւարահարացն անդր ժողովեալ էին նուիրօք եւ պատարագօք, եւ ինքն Զաքարիայ՝ նուիրիչ եւ պատարագիչ, զիա՞րդ զայս ամենայն թողեալ՝ ի տուն իւր երթայր: Զի թէ որդիքն Հեղեայ ի պղերգութեան պաշտամանն իւրեանց օթագացեալ՝ առնէին զուխտաւոր կանայսն Իսրայելի, զանբուժելի դատաստանն ընկալան[1]: Զիա՞րդ ի քաւութեան աւուրսն, յորում մի անգամ մտանէր ի տարւոջն քահանայապետն ի սրբութիւն սրբութեանցն՝ յօրինակ մի անգամ պատարագին Քրիստոսի եւ քաւելոյ զմեղս աշխարհի, Զաքարիայ ի կին իւր գնալ համարձակէր. եւ կամ՝ զեօթնօրեայ տաղաւարահարացն զպատարագսն եւ զնուէրսն՝ յօրինակ եօթնօրեայ աշխարհիս տաղաւարահարաց եւ դաղթից, թողուլ եւ ի տուն իւր գնալ:

Եւ դարձեալ զարմանալ արժան է, զի զսկիզբն ամսոց թողուն եւ զնախագոյութիւնն զվեցն յունուարի զխորհրդական թիւն, զի ի վեցերորդ աւուր ստեղծաւ Ադամ, եւ ի վեցերորդ դարուն ի վեցերորդ աւուր յառաջին ամսոյն նոր Ադամ ծնաւ՝ նորոգող հնոյն. թողեալ30 զայս՝ ի ԻԵ (25) դեկտեմբերի, որ է վերջին ամիս, Ծնունդ կատարեն, որք որպէս գլխոյն փոխան զոտսն ամբառնան, որում վկայէ սուրբ վարդապետն Եկեղեցւոյ Եփրեմ, թէ յայսմ ամսեան, յորում թագաւորքն որ տան հրաման, ծնաւ Փրկիչն, զյունուարի ասէ նոր ամիս՝ ըստ Հոռոմոց:

1 Տե՛ս Ա Թագ. Բ 12-17, Դ 11:

Եւ դարձեալ երկրորդ վկայութիւնն՝ ըստ նորին աւետարանչի պատմութեան, այն զի՞ ասէ. Յիսուս էր ամաց երեսնից՝ սկսեալ ի ծննդենէն մինչեւ զմկրտութիւնն, եւ հարկ լինի, ըստ իմաստուն ուղիղ մտաց, ի նոյն թիւ ամսոց, յորում ծնունդն ի վեցն յունուարի, հանդիպել եւ մկրտութեանն աւուրն31 յետ երեսուն ամաց, թէեւ պատկեր աւուրն՝ ո՛չ նմանապէս: Զոր բազումք ի վարդապետաց Եկեղեցւոյ քննեցին ըստ տոմարական արուեստից, որ Գ (3) ժամօք ԻԴ (24) ամն օր կատարի զյեղանակն յառաջ խաղացուցանել, ըստ չորից ամաց եւ յերեսուն ամի մկրտութեանն Քրիստոսի զծննդեանն օր ի նոյնքանիս ամսոյս հանդիպեցուցանեն, վասն զի հարկանելով զթիւ ամացն երեսնից ընդ թիւ աւուրցն տարւոյն ըստ համարողացն արուեստի՝ լինին աւուրք բիւր մի եւ ՋՇ (950). յաւելցես է (7), զնահանջ ԻԸ (28)-ից ամացն եւ թիւ մի այլ, զի երկրորդ ամն նահանջ էր յետ ծննդեանն, Գ (3) երթ, զի ԻԵ (25) շաբաթի էր ծնունդն ի գիշերին, յորում ուրբաթ լուսանայր: Եւ զայլն երթ է (եօթ), գտանես յունուարի ի Զ (6)-ն զմկրտութիւնն եւ օրն կիրակի: Վասն որոյ եւ մեք ճշմարիտն տօնեմք զերկոսեան ի միում աւուր լեալ, եւ մեզ նոյնպէս տօնել: Իսկ արդ, ըստ այսմ օրինակի հարկ լինի, որք ի ԻԵ (25) դեկտեմբերի ասեն զծնունդն, ի նմին եւ զմկրտութիւնն տօնել:

Եւ թէ ո՞րպէս տօնեն: Ճիշտ32 է ի Զ (6) յունուարի զմկրտութիւնն, ապա ինքեանք իսկ վկայեն, զի ոչ է ծնունդ Փրկչին ի ԻԵ (25) դեկտեմբերի, այլ՝ ի Զ (6) յունուարի: Եւ թէ ասեն յետոյ եղեւ, եւ դրական է տօնն, ոչ պարտին ունայն պանծալ ընդդէմ ունողացս զճշմարտութիւնն: Ապա թէ ո՞րպէս ասեն ոմանք՝ ոչ պաշտէին ինքեանք զայն Քրիստոս ծնեալ ի Զ (6) յունուարի, այլ զԾնեալն ի դեկտեմբերի ԻԵ (25). զոր եւ ախորժեսցեն, զնոյն եւ կրեսցեն բաւական պատուհաս տգիտութեան հպարտացելոցն: Այլ մեք զմերս հաստատեսցուք արձան ճշմարտութեան, բազմամբն վկայիցն հաստատութեամբ՝ ի միում աւուր լինել ծննդեանն եւ մկրտութեանն, որպէս Հիպոլիտոս եպիսկոպոս ասէ. Իննամսեայ ծնաւ Տէրն եւ երեսնամեայ մկրտեցաւ՝ ի նմին աւուր. ըստ Ղուկայ՝ Եւ Յիսուս էր ամաց երեսնից[1], եւ յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ: Զի աննման էր յայլում աւուր ծնանիլ Փրկչին եւ յայլում աւուր մկրտիլ, եւ թերահաւատութիւն ի

1 Ղուկ. Գ 23

մէջ արկանել. զի զայլ ծնեալ եւ զայլ մկրտեալ ասացին, եւ երկու բնութիւնս եւ երկու որդիս խոստովանեցին, որք անհնազանդքն էին: Իսկ Եկեղեցի հաւատացելոց ի միում աւուր տօնէն զտօն Մննդեանն եւ զՄկրտութեանն:

Զնոյն եւ Անթիպատրոս Բոստրացի ասէ, թէ յետ երեսուն ամի նոյն օր յայտնութեանն մկրտեցաւ Տէրն, զի մի էր երկոցունց խորհուրդ[1]: Եւ քանզի ծննդեանն եւ մկրտութեանն մի ծնունդ գիտեմ ասացեալ ի Գիրս, զոր եւ վկայէ մեծն Գրիգորիոս ճոխն Աստուածաբան ի վարդապետութեան երախայիցն, յորում ասէ. Երիս ծնունդս գիտէ մեզ Բանս՝ ի մարմնոյ եւ ի մկրտութենէ եւ ի յարութենէ: Զայսոսիկ զամենեսեան զծնունդս պատուեալ ինքեամբ՝ իմ Յիսուս երեւի. զմինն՝ փչմամբն առաջնով եւ կենդանականաւ եւ զմիւսն՝ մարմնանալովն եւ մկրտութեամբն, որով Ինքն սկսաւ իսկ միւսն՝ յարութեամբն անդրանիկ յարարածս եւ ի բազում եղբարս անդրանիկ եւ ի մեռեալս:

Առաջին ծնունդ Քրիստոսի՝ յորովայնի Կուսին եւ ի Հոգւոյն Սրբոյ, որ է փչումն առաջին եւ կենդանական: Ըստ ասելոյն Գաբրիէլի, եթէ՝ Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ33[2], առ որ33 Բանն յառաջեաց, շարառեաց մարմին յորովայնի Կուսին առ ի գոլ մարմին, քանզի ոչ ըստ բնութեան մարդկան եւ ըստ առաջանալոյ աւուրց առ սակաւ սակաւ ստեղծագործիւր մարմինն տերունեան, այլ իսկ եւ իսկ միանգամայն: Վկայէ եւ Աստուածաբան ի Աւետարանն Մատթէոսի, եւ ինքն հրեշտակն, որ ասաց, թէ՝ Յովսէ՛փ, որդի՛ Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ, զի որ ի նմայն Մնեալն է՝ ի Հոգւոյն Սրբոյ է[3]. ծնեա՛լ, ասաց, եւ ո՛չ ստեղծեալ: Զնոյն եւ սուրբն Բարսեղ ի Ճառին ծննդեանն ասէ. Ահա՛ յայտ եղեւ առաջին ծնունդն Քրիստոսի:

Իսկ երկրորդ ծնունդն՝ առանց բաժանման զմարմնանալն, այսինքն՝ զառաջ գալն ի Կուսէն եւ զմկրտութիւնն ասէ:

Եւ արդ, այսքան ճշմարիտ34 եւ լուսաւոր խորհրդոցս ոչ տեսանեն բաժանողքն յերկուս: Կամ զիա՞րդ ասեն, բայց ի Մկրտութեանն, եւ զայն կոչէ օր Յայտնութեան: Բայց ի Մննդեանն է՞ր թագեաւ, ո՛վ բաժանողդ, զի ի ծննդեանն յայտնեցաւ երկնաւորաց եւ երկրաւորաց.

1 Տե՛ս «Գանձասար» Ա, Երեւան, 1992, էջ 26-33:

2 Ղուկ. Ա 35

3 Տե՛ս Մատթ. Ա 20:

յերկինս՝ հրեշտակաց, ի հրեշտակացն՝ հովուացն յայտնեցաւ, յաստեղէն՝ մոգուցն, եւ անբանիցն՝ յայրին եւ ի մսրին յայտնեցաւ: Եւ այս է տօն Մննդեանն եւ Յայտնութեանն ի միում աւուր լինել:

Ըստ բարձրաձայնութեան մեծին Գրիգորի Աստուածաբանի ի Մննդեանն ճառի՝ այժմ Աստուծոյ յայտնութեան տօն է, քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ, եւ վերագրէ զճառն ի յայտնութիւնն Քրիստոսի եւ սկսանի ի ծնունդն, թէ Քրիստոս ծնեալ լինի. եւ ի միւսում աւուրն ասէ ի Մկրտութեան ճառին, թէ մկրտութեան օրս եւ պարտ է վաստակել, եւ ոչ ասէ յայտնութեան, թէպէտ եւ է՛, զի եւ զծնունդն գիւտ է յայտնութեան:

Զնոյն եւ սուրբն Բարսեղի Քրիստոսի իւրական յայտնագոյն ասէ ի կատարման ճառին, թէ անուն դիցուք տօնիս Աստուածայայտնութիւն՝ տօն փրկութեան աշխարհի՝ ծննդեան մարդանալոյն Տեառն:

Դարձեալ՝ է եւ այլ խորագոյն խորհուրդ ի Զ (6)-ն յունուարի տօնել զՄնունդն եւ զՄկրտութիւնն: Զի ըստ առաջին աւուրն պատկերի արարչութեան, որ է ԺԷ (17) մարտի ամսոյ, ունի զպատկեր իւր ըստ ամենայն ամի շրջագայութեան, որպէս Անդրէաս յերրորդ կանոնին երկերիւրեկին դրոշմէ, զի յամենայն35 ամին ԺԷ (17) մարտի՝ առաջին արարչութեան, եւ է (7) ապրիլի՝ օր Աւետեաց, եւ ի Զ (6) յունուարի՝ օր Մննդեանն եւ Մկրտութեան, մի պատկեր հանդիպին: Վասն զի մի եւ զնոյն ունել խորհուրդ, զի յառաջին աւուրն արարչութեանն ասաց. Եղիցի՛ լոյս, եւ եղեւ[1]. եւ աստ ի Նորումս՝ Լոյս նոր ընդ Հօր ի Կուսէն ծագեցաւ, եւ Բանն մարմին եղեալ՝ յայտնեցաւ: Անդ խաւարն քայքայեցաւ, եւ աստ խաւար մեղաց եւ անգիտութեանն36 հալածեցաւ: Եւ անդ՝ Հոգի Աստուծոյ ի վերայ ջուրց, եւ աստ՝ աղաւնակերպ ի վերայ Յորդանանու: Անդ՝ վասն ստեղծագործելոյ, որ ի ջուրսն, աստ՝ վասն վերաստեղծելոյ զհոգեւոր ծնունդս աւազանին:

Վասն այնորիկ ի միում աւուր տօնեմք զՄնունդն եւ զՄկրտութիւնն, զի ի Կուսէն ծնաւ Աստուած՝ մարդացեալ աւետեաց Հոգւոյն Սրբոյ: Եւ որք [ծնանին] յաւազանէն՝ ի Հոգւոյն զօրութենէ՝ յայտ առնելով զՀոգին որ ի Յորդանանէ, զՈր Քրիստոս վասն մեր ընկալաւ, թէ մեք ընդունիցիմք ի մկրտութեան մերում: Զոր եւ սուրբն Աթանասիոս զխորհրդոյս զօրութիւն գեղեցիկ այսպէս ճառէ. Վասն այսո-

1 Ծն. Ա 3-4

րիկ Որդին Աստուծոյ Որդի Մարդոյ եղեւ, որպէսզի որդիք մարդոյն, այսինքն է՝ Ադամայ որդիք, այլ լիցին, զի Մնեալն ի վերուստ ի Հօրէ Բանն՝ անճառն, անհասն, անպատումն, մշտնջենաւորն, որ եւ նոյն Ինքն ընդ ժամանակաւ ծնաւ ի սրբուհի Կուսէն Մարիամայ, զի ոյք ի խոնարհ յառաջագոյն ծնեալքս՝ ի վերուստ ծնցին երկրորդ անգամ, այս է՝ յԱստուծոյ: Նա ապա մայր միայն ունի ի վերայ երկրի, իսկ մեք հայր միայն ունիմք յերկինս:

Եւ վասն այնորիկ զԻնքն Որդի Մարդոյ կոչեաց, վասն զի եւ մարդիկ ուսցին զԱստուած Հայր կոչել՝ ասելով. Հա՛յր մեր, որ յերկինս: Որպէս եւ մեք՝ ծառայք Աստուծոյ, որդիք Աստուծոյ կոչեցայք, սոյնպէս եւ Տէրն երկնից՝ որդի Իւրոյ ծառային կոչեցաւ, այս է՝ Ադամայ: Վասն զի առաւել զմարդկան զմահկանացուն հայր՝ ետ մեզ զԻւրն զանմահ Հայր՝ ըստ ասացելոյն. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել[1]: Ուստի եւ զմահն ըստ մարմնոյ ճաշակեաց Որդին Աստուծոյ՝ սակս մարմնաւոր Նորա հօր, որպէսզի եւ որդիք մարդոյն՝ կենաց Նորա հաղորդեալք լիցին՝ սակս որ ըստ հոգւոյ Հօր նոցա Աստուծոյ:

Նա ապա ըստ բնութեան է Որդի, իսկ մեք՝ ըստ շնորհի: Եւ Նա դարձեալ ըստ տնտեսութեանն յաղագս մերոյ շնորհի եղեւ Որդի Ադամայ, ուստի եւ ասէ իսկ. Ելանեմ ես առ Հայր Իմ եւ առ Հայր ձեր[2]: Քանզի Հայր Նորա է Աստուած, որպէս կանխաւ ասացի, իսկ մեր՝ ըստ շնորհի: Եւ Աստուած Նորա եղեւ ըստ տնօրէնութեան, վասն զի եղեւ մարդ, իսկ մեր՝ բնութեամբ է Տէր եւ Աստուած: Եւ վասն այնորիկ Բանն եւ Որդին Հօր միաւորեալ ընդ մարմնոյ՝ եղեւ մարմին, որպէսզի եւ մարդիկ միաւորեալք ընդ Հոգւոյն՝ եղիցին հոգի: Եւ Նա գոյ ապա Աստուած, մարմնանայ զգեստ, իսկ մեք մարդիկ՝ հոգեզգեցք, քանզի առեալ զառհաւատչեայ՝ այն ի մարդկան բնութենէ է, այս է՝ ի զաւակէ Աբրահամու, որ է կերպարան ծառայի ըստ նմանութեան մարդկան եղեալ՝ ետ մեզ զառ ի բնութենէն Հօր զառհաւատչեայ Հոգւոյն Սրբոյ, զի եղիցուք ամենեքեան յորդիս Աստուծոյ ըստ նմանութեան Որդւոյն Աստուծոյ: Նոյն Ինքն ապա՝ Ճշմարտութեան Որդին Աստուծոյ, զբոլորս զմեզ զգեցաւ, զի մեք ամենեքեան զՄին

1 Յովհ. Ա 12

2 Յովհ. Ի 17

միայն զգեցուք զԱստուած, վասն զի ի մեզ պտուղ առաջին առհաւատչեայ՝ աստուածութիւն Հոգւոյն բնակէ, իսկ ի Քրիստոս՝ բոլոր լրութեանն: Եւ մի՛ ոք կարծեսցէ, թէ ոչ ունելով ընկալաւ զՆա, վասն զի Ինքն իսկ զՆա ի վերուստ առաքէր որպէս զԱստուած: Եւ նոյն Ինքն զՆա ի խոնարհ ընդունէր որպէս մարդ, ի Նմանէ ի Նոյն իջանէր, այս է՝ յԱստուածութենէ37 Նորա՝ ի մարդկութիւնն:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 A կերակրել: 2 B հանդիսիւ: 3 B եւ չիք: 4 B բնակացութիւն: 5 B զԱստուած: 6 B թէ որպէս յառաջին չիք: 7 A սրտիւս փխ պատիւս: 8 B նորոգութիւնն եւ նմանութիւնն վերստին նորոգեսցէ՛ եւ: 9 B ճանապարհեաց: 10 B կտրէ: 11 B խոտորեցուցանել: 12 B մարմինք մեր: 13 B գտցէ: 14 B սոյնպէս: 15 B Յովհաննու: 16 B զի երրորդս: 17 A անդրականն: 18 B ո՞յրք էր: 19 B մի չիք: 20 B զհոգեւոր փխ զհոգի: 21 B ազատեսցէ: 22 B եգիպտական սեռ: 23 B պատարագօք կոչեցին: 24 B իւրեանց: 25 B հոմատոհմեայք, ի չիք: 26 B ընթերցուածք: 27 B չորեքշաբթին: 28 B ճշմարտութեամբ: 29 B աւուրն: 30 B թողլով այս: 31 A աւուր: 32 B ճշմարիտ է: 33 B եւ զօրութիւն բարձր առ որ: 34 B ճիշտ: 35 B յամենայն չիք: 36 B եւ գիտութեան: 37 B յաստուածութեանն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԼՈՒՋ-ԵՐԶՆԿԱՑՈՒ «ՅԱՂԱԳՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ» ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

Յովհաննէս Պլուզ-Երզնկացին մեզ հասած իր հարիւրից աւելի աշխատութիւններով, ինչպէս եւ իր անձի շուրջ դեռեւս կենդանութեան օրօք եւ յետոյ հիւսուած իրական ու աւանդապատում զրոյցներով նշանակալից հետք է թողել հայ մատենագրութեան մէջ: Բաւական է յիշել, որ նրա երկերը պարունակող ձեռագրերը հարիւրների են հասնում, իսկ առանձին ստեղծագործութիւններ, ինչպէս «Խրատ հասարակաց...»[1]-ը, թերեւս Սուրբ Գրքից ու Նարեկից յետոյ հայ ձեռագրական աշխարհում ամենից շատ սիրուած եւ ընդօրինակուած գործերից մէկն է:

Բնականաբար, հայագիտութիւնը նման հեղինակի նկատմամբ իր սկզբնաւորումից իսկ անտարբեր չի եղել, թէեւ նրա շատ գործեր այսօր էլ մնում են անտիպ, Երզնկացին գնահատուել ու մեծարուել է ըստ արժանւոյն: Ասուածի լաւագոյն վկայութիւնն են ականաւոր հայագէտներ հայր Ղ. Ալիշանի եւ Գ. վարդապետ Սրուանձտեանի բնորոշումները, ուր Երզնկացին համեմատուած է ոչ միայն միջնադարի մեր միւս մեծերի՝ Յովհաննէս Սարկաւագի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Մխիթար Գոշի հետ[2], այլեւ «Որ Սեպուհն Գերազանց նուագեր էր եւ Հայաստանեաց Եկեղեցին քան զարեւն ի վեր բարձրացուցեր եւ փայլեցուցեր էր...»[3]:

Իրօք, լինելով ընդհանրապէս հայ Եկեղեցու ամենաականաւոր հայրերից ու տեսաբաններից մէկը, նա յատուկ եռանդ է գործադրել Երզնկայի, մասնաւորապէս՝ Սեպուհ լեռան Գրիգոր Լուսաւորչի անուան հետ կապուած սրբատեղերին համաքրիստոնէական հնչեղութիւն հաղորդելու գործում, իր գրած երկու չքնաղ ներբողներում՝

1 «Նուաստ վարդապետի Յոհաննիսի Երզնկայեցոյ խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից եւ ժողովրդոց, ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց եւ հայրապետաց եւ վարդապետաց եւ սուրբ հարն մերոյ Վարդան վարդապետի, իւր յամենայնէ ժողովեցի եւ գրեցի» (տե՛ս Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 143-203):

2 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, հտ. Ա, էջ 119

3 Գ. Սրուանձտեան, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1883, մասն Բ, էջ 50

նուիրուած Լուսաւորչին եւ նրա տան ժառանգներին:

Նոյն մտահոգութիւնն առկայ է նաեւ հոգեւոր եղբայրութեանն ուղղուած խրատները գրելիս՝ մասնաւորապէս նշելով, որ նրանք եւս մեծապէս պայծառացնում են Երզնկայի եւ Լուսաւորչի լեռների հոչակը[1]:

Սակայն երզնկացիագիտութեան բուն վերելքը վերապահուած էր 20-րդ դ. երկրորդ կէսին եւ մեծապէս կապւում է բազմաշխատ բանասէր Արմէնուհի Երզնկացի-Սրապեանի հետ, որը յիսնական թուականներից ի վեր անդուլ կերպով նուիրուած է Յովհաննէս Պլուզի ժառանգութեան ուսումնասիրութեանը՝ հրապարակ հանելով նրան նուիրուած երեք մենագրութիւններ[2]:

Յատկապէս պէտք է կարեւորել Սրապեանի առաջին ուսումնասիրութիւնը, որը խթան հանդիսացաւ Պլուզի ժառանգութեանն ու գործունէութեանը նուիրուած նորանոր աշխատութիւնների երեւան գալուն:

Սակայն ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ հայագիտութիւնը դեռեւս լուրջ անելիքներ ունի այս բնագաւառում, քանզի եթէ բաւարար կարելի է համարել Երզնկացու չափածոյ գործերի հրատարակութիւնը, ապա նրա արձակը, որը կազմում է Երզնկացու ստեղծագործութեան գերակշիռ մասը, դեռեւս հիմնականում մնում է անտիպ:

Վերոյիշեալ խնդրի լուծմանն է միտուած Յովհաննէս Պլուզ-Երզնկացու «Յաղագս եղբայրութեան խրատք...»-ի հրատարակումը եւս:

Ներկայացուող հակիրճ նախաբանում հնարաւորութիւն չունենա-

1 Այդ մասին առաւել հանգամանալից խօսքը թողնելով համապատասխան բնագրերի հրատարակութեան ադիթին՝ ասենք միայն, որ Երզնկացին նշում է, թէ Լուսաւորչի ներբողեանը գրելու հիմնական դրդապատճառը նրա բազմաթիւ չարչարանքները չեն, «Մանաւանդ զի՝ ի սուրբ հարցն պատմութիւնս եւ ներբողական ճառսն գեղեցկապէս յիշատակեալ են: Այլ մերս դիտաւորութիւն յաղագս սրբութիւն լերինս է, որ տեղի եղեւ երեսնամեայ ճգնութիւն սրբոյն...» (տե՛ս «Սոփերք հայկականք», Վենետիկ, 1853, հտ. Ե, էջ 123):

2 Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Երեւան, 1958:

Յողերիս հեղինակը, որ երկար տարիներ զբաղուել է Երզնկայի պատմութեան եւ յատկապէս Յովհաննէս Պլուզին առնչուող խնդիրներով ու հրապարակել է Երզնկացու գրչին պատկանող մի շարք արձակ գործեր, յոյս ունի Ա. Սրապեանի եւ այլ հեղինակների հետ համագործակցութեամբ հնարաւորն անել Երզնկացու արձակի ամբողջական հրատարակութիւնը աւարտի բերելու համար:

լով մանրամասն քննութեան առնել հրատարակուող բնագիրը՝ նշենք, սակայն, որ այն որոշակի արժէք է ներկայացնում ինչպէս Հայ Եկեղեցու պատմութեան, դաւանանքի, վանական կեանքի ուսումնասիրութեան, այնպէս էլ Երզնկացու՝ իբրեւ ականաւոր վարդապետի գործունէութիւնն ամբողջացնելու տեսակէտից:

«Ցաղագս միաբանութեան խրատք...»-ը բազմաթիւ կողմերով համահունչ է Երզնկացու խրատական այլ գործերի հետ, որոնց հիմնական նպատակը եղել է ճշմարիտ հաւատի ամրապնդումը, ընդհանրապէս Հայ Եկեղեցու եւ Եկեղեաց գաւառի հոգեւոր կենտրոնների ու սրբարանների հեղինակութեան բարձրացումը՝ լուսաւորութեան ու կրթութեան մասսայականացման միջոցով սէրը առ Հայաստանեաց Եկեղեցին եւ առ հայրենիքն առաւել գիտակցուած, գործնական եւ մարտնչող դարձնելու համար:

Բնագրում առկայ առանձին արտայայտութիւններ թոյլ են տալիս պատկերացում կազմել եղբայրութեան կառուցուածքի, հետապնդած նպատակների, երկի ստեղծման մօտաւոր ժամանակի, ինչպէս եւ եղբայրութեան մէջ մտնող տարբեր տարիքի ու տարասեռ մարդկանց գործունէութեան մասին:

Թէեւ քանիցս կրկնւում է, որ միաբանութեան անդամները «Աստուծոյ ազատ որդիներ» եւ «հաւասար եղբայրներ» են, սակայն այն հանգամանքը, որ նոյն եղբայրութեան անդամներ են եղել երկսեռ երիտասարդներ, ծերեր ու մանուկներ, ինչպէս նաեւ այն փաստը, որ եղբայրութիւնն ունեցել է իր վերատեսուչները, սպասաւորները եւ մեծ ու փոքր բարերարները, հասկանալի է, որ «հաւասար եղբայրներ» արտայայտութիւնը վերաբերում է առ Աստուած եւ առ հաւատը նրանց ունեցած իրաւունքներին[1]:

Յովհաննէս Երզնկացին, որ չափազանց անաչառ էր իր գնահատականներում, դիմելով եղբայրութեան անդամներին, շատ բարձր է գնահատում նրանց մաքրակենցաղութիւնն ու խոր գիտելիքները. «Խորհել ինձ զարժանն խաւսելոյ ի լսիս ձեր: Եւ շարադրա-

1 Կասկածից վեր է, որ եղբայրութեան անդամներ եղել են ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ անձեր, ինչպէս եւ այն, որ եղբայրութեան մէջ ընդգրկուածները իրենց տարիքին, սեռին, ընդունակութիւններին համապատասխան տարբեր աստիճանի կրթութիւն են ստացել: Այս առումով շատ ուշագրաւ է միջնադարի տաղանդաւոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացու օրինակը, որը, ինչպէս ինքն է վկայում, պատանի հասակում ուսանել է վանքում, սակայն իր որոշ ժամանակակիցների կողմից մեղադրուել է վարդապետի աշակերտած չլինելու համար, որ պէտք է հասկանալ ներքին գիտութիւնների մէջ խորամուխ չլինելու իմաստով:

կան բանիւ ի կիր արկանեմ զաւգտակար բանս, ոչ որպէս կաթնափափուկ տղայական հասակի ջամբեմ ձեզ, այլ իբրեւ արանց հանճարեղազարդ իմաստնոց, հաստատուն կերակուր պատրաստ կացուցանեմ, որք ժողովեալ էք ի մի հաւատս եւ ի մի սէր, որ առ Աստուած եւ հաստատուն բոլորովին բարձրեալ ունիք գործականութեամբ եւ հետեւիք վառեալք սիրովք եւ ցանկայք զհետ երթեալ զհովուին Յիսուսի...»: Եւ ապա. «Ոչ կարեմք ընդ բիւրուց զմինն ցուցանել զպատիւ մեծութեան ձերոյ, զհիմն սկսման եւ զաւարտ լրման ըստ առաքելոյն, որք եկեալ ժողովիք ի միաբանութիւն հաւատոյ եւ աստուածաբնակ երեւեցուցանէք զտեղիքս զայս, զոր Տէրն ասէ. «Ուր երկու եւ երեք ժողովին յանուն Իմ, անդ եմ Ես ի մէջ նոցա»[1]»:

Թէեւ, ինչպէս ասուեց, եղբայրութիւնը տարասեռ է եղել, սակայն նրա անդամներին տրուած այսչափ բարձր գնահատականը աներկբայ է դարձնում, որ եղբայրութեան գլուխ կանգնած աւագ անդամները եղել են ժամանակի ամենասրբակեաց եւ ամենագիտուն անձնաւորութիւններից[2]:

Թէեւ հնարաւոր չէ որոշել «Ցաղագս միաբանութեան խրատք...»-ի գրութեան ստոյգ ժամանակը, այնուամենայնիւ կարծում ենք, որ այն պէտք է գրուած լինի ԺԳ դ. ութսունական թուականների սկզբներին, երբ Երզնկացին գրում էր իր «Սահման եւ կանոնք...»-ը, «Կրկին կանոնքը»-ը եւ նման բովանդակութեան այլ գործեր[3]:

Ինչ վերաբերում է եղբայրութեան ստեղծման ժամանակին, ապա, դատելով Երզնկացու հետեւեալ տողերից. «Ողորմեսցի բարեգութն Աստուած այնոցիկ, որք զհիմն եւ զսկիզբն միաբանութեանս են արկել, որք հրաժարեալք են եւ որք կան...», պէտք է ենթադրել, որ այն երկու-երեք տասնամեակների պատմութիւն է ունեցել, քանի որ նրա հիմնադիրների մի մասը վախճանուած, սակայն շատերն էլ

1 Մատթ. ԺԸ 20

2 Երզնկացու այսպիսի բարձր գնահատականը կարեւոր է՝ հասկանալու համար հոգեւոր եւ գիտամշակութային այն լուրջ առաջընթացը, որ արձանագրուեց Եկեղեաց գաւառում ԺԳ-ԺԴ դարերի ընթացքում, որ Եկեղեցուն ու մշակոյթին տուեց Մովսէս, Յովհաննէս Ծործորեցի, Կիրակոս, Կոստանդին Երզնկացիներ, Գրիգոր Խարբերդցի-Երզնկացի եւ այլոց, որոնց մէջ իր աւագութեամբ եւ հոգեւոր, գիտական ու քաղաքական փայլուն գործունէութեամբ ամենից աւելի հռչակաւոր եղաւ հէնց ինքը՝ Յովհաննէս Պլուզ-Երզնկացին:

3 Տե՛ս Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 25:

տակաւին կենդանի են եղել:

Այս ենթադրութիւնը հաւանական է նաեւ այն պատճառով, որ հէնց դարի 50-60-ական թուականներին է, որ Երզնկայում Սարգիս արքեպիսկոպոսի եւ նրա որդի Յովհաննէս իշխանի կառավարման շրջանում Երզնկայի եւ քաղաքական ու հոգեւոր գծի մշակութային կեանքում լուրջ զարգացումներ են արձանագրւում:

Ի տարբերութիւն Երզնկացու շատ այլ գործերի, որոնք մեզ են հասել բազմաթիւ ընդօրինակութիւններով, «Ցաղագս եղբայրութեան խրատք...»-ը պահպանուել է միայն 1621 թ. Շատախում (գիւղ Գանձակ) ընդօրինակուած մէկ ձեռագրում: Հետաքրքիր է, որ բնագրի բոլոր էջերի տողատակերում նշւում է Յովհաննէս Պլուզի հեղինակ լինելը, որից պէտք է ենթադրել, թէ եթէ ոչ Երզնկայում (քանզի Գրիգոր Կամախեցին հէնց այդ ժամանակ պարզ տարբերակում էր Պլուզ եւ Յովհաննէս Երզնկացիներին[1]), ապա Հայաստանի այլ վայրերում արդէն սկսուել էին Պլուզի եւ Ծործորեցու շուրջ շփոթութիւնները:

Բնագրի միակ օրինակի հանգամանքով է թելադրուած մեր վերաբերմունքը հրատարակութեան հարցում: Այն ներկայացուած է «ի պատկերի յիւրումն», բացառութեամբ ակնյայտ սխալների, բացթողումների եւ վրիպակների: Բացուած են նաեւ բոլոր յապաւումները: Միայն մի քանի դէպքերում, երբ սխալներն ու վրիպակները իմաստային տարբերութիւններ են պարունակում կամ կարող են այդպիսիք լինել, բնագրային ձեւը ներկայացւում է տողատակում աստղանիշերով:

Էդուարդ Բաղդասարեան

1 «Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցւոյն», Երուսաղէմ, 1915, էջ 398

ՅԱՂԱԳՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ ԲԱՆՔ ՍԱԿԱՒՔ ԵՒ ՊԻՏԱՆԻՔ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ ԳՐՈՑ ՍՐԲՈՑ, ՋՈՐՄԷ ԹՈՒՂԹ ԳՐԻՑԻ ՍԻՐՈՎ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ՅԱՆԿԱՆ ՓԱՓԱԳԱՆԱՒՔ ԲԱՆԻՑ ԻՄԱՍՏՈՒԹԱՆՆ[1]

Յաստուածային ամենազաւր Տէրութենէն, յանհաս եւ անիմանալի նախախնամութենէն մեծարեալք պատիւ ճոխութեան եւ շքեղացեալք ի փառս բարձրութեան, բոլոր մասամբք առաքինութեան զարդարեալք եւ երկիր աւրհնեալք, աճեցուցիչք արդիւնական պտղոյն եկեղեցւոյ, մաւր զուարդարար որդիք եւ ի հիմն հաստատութեան հաւատոյ ոսկի ընդ արծաթս պատուական քարինքն շարայարեալք, որով բաշխեալ ի վերուստ զաստուածային առատաբուղխ հոսմունք Սուրբ Հոգւոյն միաւորեալք սիրով արժանաւորիք այնմ պարգեւացն, որով առնէ զձեզ գարուն զուարթալի յաշնանային դարուս եւ վերաբուսուցէ ձեզ ծաղիկս գեղեցիկ լի պտտովովք: Եւ որպէս արեգակն եռազարդ ձեզ յարփոյն ծագեալ, հոգւով ջերմացեալք ի սէր Անմահին եւ միաւորեալք ի յՈրէն ճշմարիտ, կենդանացեալք եւ ուռճացեալք յիմաստս անհասիցն բերելով ձեզ ողկոյզս քաղցրահամս, զոր ի Նմանէ իջցէ բաժակ, որպէսզի արբեալ զմայ[լ]ջիք յուրախութիւն սիրտից: Եւ ջահանման վառեալք սիրով բորբոքեալք ի սիրտի ս[ր]բեալ մաքրիք տաճար Հոգւոյն Սրբոյ եւ աւթեվանք Միածնին Որդւոյն Աստուծոյ եւ հետեւեալք զհետ ճշմարիտ եւ քաջ Հովուին հաւտք բանաւորք Փրկչին մերոյ: Յիսուսի Քրիստոսի ժառա[ն]գակիցք եւ ժառանգաւորք յաւիտեն[ակ]ան կենացն՝ սպասաւորք եւ վերատեսուչք սուրբ եղբարց միաբանութեանս, սրբազանեալ քահանայք եւ միակրաւն անձինք: Յարժանաւորք առագաստին Քրիստոսի երիտասարդք եւ կուսանք, ծերք եւ տղայք, որք յարդարեալ սիրով եկեալ ժողովիք ի միաբանութիւն հաւատոյ, որպէսզի ընկալջիք պարգեւս ի բարերարէն Աստուծոյ եւ լինիջիք ազատ որդիք ճշմարիտ հարն, որպէս եւ գրէ Պաւ-*

1 ՄՄ ձեռ. N 728, էջ 59բ-84ա, Ժողովածու, Շատախ (գիւղ Գանձակ), 1621

* ուռ աճացեալք

ղոս, «որ Հոգւովն Աստուծոյ վարին. նոքա են որդիք Աստուծոյ»[1]. ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի: Եւ իբ[ր]եւ այսպիսի պատուոյս արժանաւորք երեւիք, եւ այսմ պարգեւացս պար[գ]եւ ընկալայք. եւ մեք հոգւոյ ակամք հայեցեալք յելս ճանապարհաց ձերոց, որ վերինն խորհիք ըստ առաքելոյն, վերնոյն փափաքիք, յերկնայնոցն ցանկայք: Եւ ես ջերմացեալ սիրով եւ ցանկութեամբ սրտի՝ գոհութիւն վերառաքեմ ի խորոց սրտէ առ ամենախնամ եւ բարիգութ մարդասէր Փրկչին, զ[ի] հաստատուն պահեսցէ զսէր ձեր, աւր ըստ աւրէ յաճումն, հոգւոյ պիտոյից յաւելուլ ի զաւրութիւնէ ի զաւրութիւն եւ հաստատուն կալ մնալ ի շնորհս Աստուծոյն:*

Եւ արդ, պարտ է աւգտութեան բանս խաւսիլ, ըստ չափոյ պարգեւացն Շնորհողին մեզ, ի լսելիս այնոցիկ, որք փափաքին բանից ասացելոցն ի պետս սրբութեան:

Զոր եւ աղաչեմ զհաւասար եղբայրքդ ունկն դնել բանից իմոց: Եւ ես պատմ[եմ] ձեզ ըստ կարի իմում փոքր ի շատէ, զոր արժանաւորիմ հասու լինել եւ հայցեմ յամէնառատ Պարգեւողին բարեաց:

Խորհել ինձ զարժանն խաւսելոյ ի լսիս ձեր: Եւ շարադրական բանիւ ի կիր արկանեմ զաւգտակար բանս, ոչ որպէս կաթնափափուկ տղայական հասակի ջամբեմ ձեզ, այլ իբրեւ արանց հանճարեղազարդ իմաստնոց, հաստատուն կերակուր պատրաստ կացուցանեմ, որք ժողովեալ էք ի մի հաւատս եւ ի մի սէր, որ առ Աստուած եւ հաստատուն բոլորովին բարձրեալ ունիք գործականութեամբ եւ հետեւիք վառեալք սիրովք եւ ցանկայք զհետ երթեալ զհովուին Յիսուսի: Եւ Ինքն Նաւապետն Քրիստոս շնորհեսցէ ձեզ նաւահանգիստ, եւ Հովիւն քաջ առաջնորդեսցէ ձեզ ի կեանս յաւիտենից, զի որպէս ծառ ի գնացս ջուրց տալ ի ժամոյ զպտուղս, պատու[ո]յ արժանաւորիք: Զի հանապազաւր ի դուռն խրատու հասեալ էք եւ ցանկայք հոգով եւ խոկումն մտաց վարժից եւ իմաստութեան: Եւ մեր տեսեալ զջանս ձեր սիրով զարդարեալս կամ եղեւ եւ ինձ փափաքանաւք խաւսել առ ձեզ: Աստուած զինքն տայ ինձ բան՝ ի բանալ բերանոյ իմոյ: Զոր եւ սկիզբն առնեմ եւ քաղեմ իբրեւ զծաղիկս գեղեցիկս, զշուշան ի հովտաց կամ իբրեւ զվարդս վառեալ ի դաշտաց, որք են գեղեցկատեսք եւ անուշա-

1 Հռոմ. Ը 14

* ընգալայք

հոտք եւ տարածանեմք ի բուրաստանս սրտից՝ ոչ է թէ մտացածին բանիւք, այլ մարգարէական վկայիւք զբանքս Աստուածաշունչ գրոց:

Եւ իբրեւ զոսկի մարգարտիւ յեռեալ գեղեցկայարմար շարակարգեմ զբանս հոգեվարժս՝ այնոցիկ, որ տենչան բանից իմաստութեան: Թէ ո՞րպէս եւ ես պատմեմ ըստ կարողութեան իմոյ, որ տուեալ են ինձ առաւել քան զարժանն իմ, փոքր ինչ յաղագս միաբանութեան ձերոց եւ կարգոց առաքինութեան: Թէ որպէս է գործ սրբութեան եւ արդարութեան եւ որով առաքի, եւ կամ առ ոյ երթեալ հանգիստ գտանէ:*

Ամենայնի սկիզբն եւ հիմն հաստատութեան իմաստութիւնն, որով Աստուած ի սկիզբն արարչութեանն յառաջ ստացաւ զիմաստութիւն, որպէս իմաստութիւն ի Սող[ո]մոնէ. «Տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց Իւրոց, ի գործս Իւր յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս»[1]: Եւ՝ «Երանեալ է այր, որ լուիցէ, եւ մարդ, որ զիմ ճանապարհս պահիցէ. զի ելք Իմ են ելք կենաց եւ պատրաստին կամք Իմ ի Տեառնէ»[2]: Վասն այսորիկ պարտ է յառաջ ամենայն գործոյ զիմաստութիւնն ստացեալ եւ հիմն շինուածոյ բարոյ զիմաստութիւն արկանել, զի կարողք լինիցին զկատարումն գործոցն վայելել եւ անշարժ կալ մնալ ի շնորհսն, յորս կոչեցեալ են: Եւ որք խնդրեն զիմաստութիւնն, նախ պարտ է զսկիզբն իմաստութիւն ուսանին եւ ապա յառաջ մատիցեն ի քննել: Զոր իմաստուն Սողոմոն դարձեալ ցուցմունէ. «Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն»[3], եւ Դաւիթ զնոյն պատմէ. «Երկերո՛ւք ի Տեառնէ, ամենայն սո՛ւրբք Նորա, զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց Նորա»[4]: Վասն որոյ պարտ է յառաջ ամենայն գործոյ սկիզբն զերկիւղն առաջ աչաց տեսանել եւ զգուշութեամբ ծառայել Տեառն եւ անարատ պահ[ել] զանձն յազգի ազգի չարեաց: Իսկ պտուղ յերկիւղածութեանն՝ ճշմարտութիւնն եւ ուղղութիւնն: Եւ ի ճշմարտութենէն յաջողի ամենայն գործք բարութեան եւ աստուածապաշտութեան: Որպէս իմաստուն ճարտարապետ հիմն հաստատութեան արկեալ՝ շինէ ի վերայ հիմանն զինչ եւ կամի, եւ կշռեալ եղեալ եւ լարիւք չափեալ՝ յարմարէ զքարինս ընդ միմեանսքք ընդ գլուխ ան-

* ստագի

1 Առակ. Ը 22

2 Առակ. Ը 34-35

3 Առակ. Ա 7, Թ 10, ԻԲ 4

4 Սաղմ. ԼԳ 10

կեան վիմին՝ վասն միանալոյ եւ անխախտ լինելոյ, մինչեւ բարձրասցի շինուածն եւ հասնէ յաւարտումն, նոյնպէս որք ի հիմն հաւատոյ եւ միաբանութեան ժողովեալ էք, պարտ է ձեզ իմաստութեան կշեռք եւ ուղղութեան լար եւ յարմարութեան սէր եղբայրութեան, որ ընդ միմեամբ շարակարգեալք սիրով շինիք տաճար գեղեցկայա[ր]մար ի բնակութիւն ճշմարիտ Սուրբ Հոգւոյն:

Արդ, որք զինեալ կայք ի սպասու պատերազմեաց եւ յաղթողք ի մարտի արութեան, դուք որդիք լուսոյ էք, զ[խ]աւարն ի բա՛ց հալածեցէք ի ձէնջ եւ զամենայն գործս խաւարինս եւ զամենայն արմատս չարութեան: Հանէ՛ք ի միջոյ ձերմէ զարմատս անհաւատութեան եւ պղծութեան, որ ա[պ]ականեն զհոգիս մարդկան՝ զպոռնկութիւն, զգիջութիւն, զորովայն[ա]մոլութիւն, զփառասիրութիւն, զգողութիւն, զբամբասանս, զատելութիւն, զստութիւն, զնախանձ, զոխակալութիւն, զդատարկաբանութիւն, զծաղրութիւն, զսրտմտութիւն, զբարկութիւն, զծուլութիւն, զյիշոցք, զհայհոյութիւն, զհերձուած չարաբանութիւն: Եւ ստացարուք հաւատով գործել զամենայն տեսակս առաքինութեան եւ սրբութեան՝ զսէրն, զհամբերութիւն, զերկայնամտութիւն, զեղբարսիրութիւն, զհեզութիւն, զխոնարհութիւն, զգութ, զողորմութիւն: Եւ ամենայն սրբափայլ առաքինութեամբ զանազան եւ գեղեցկազարդք եղերուք եւ կատարեալք անթերի ի պատուիրանս Աստուծոյ: Զի որ պղծէ զմարմինն պոռնկութեամբ եւ գիջութեամբ, ոչ հաւատայ Գրոց, եթէ՝ «Դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ. եթէ ոք տաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած»[1]: Եւ որ որովայնամոլն է եւ աստուածացնէ զորովայնն, ոչ գիտէ, զինչ ասէ Գիր. «Լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց աստուած որովայն իւրեանց է, եւ փառքն՝ ամաւթ իւրեանց»[2]: Եւ որ անբա[ր]տաւանն է եւ փառասէր, ոչ գիտէ, զի՝ «Որ բարձր է առաջի մարդկան, պիղծ է առաջի Աստուծոյ»[3], եւ՝ «Տէր ամբարտաւանից հակառակ կայ»[4]: Եւ որ գողանայ եւ բամ[բ]ասէ եւ տրտնջէ, ոչ երկնչի եւ սարսի ի բանից ասացելոց, թէ՝ «Ո՛չ գողք եւ ո՛չ տրտնջողք եւ ո՛չ բամ[բ]ասողք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժա-

1 Ա Կոր. Գ 17
2 Փիլ. Գ 18-19
3 Ղուկ. ԺԶ 15
4 Ցակ. Դ 6

ռանգեն»[1]: Եւ որ ատէ զեղբարն իւր եւ ոխս ունիցէ ընդ ընկերի իւրում, եւ չիցէ ընթերցեալ նորա ի Գիրս, թէ՝ «Որ ատէ զեղբայրն իւր, մարդասպան է»[2] իբրեւ զԿայէն եւ կցորդ է նորա դատապարտութեանն:

Եւ որ սուտ խաւսի եւ սուտ վկայէ զումեքէ ի չարութիւն, եւ ոչ լսէ զփոխարէն ստութեանն, որ ասէ. «Որ խաւսէ սուտ, յիւրոց անտի խաւսի սուտ, զի սուտ է, եւ հայր նորա՝ սատանայ»[3]:

Եւ Դաւիթ զնոյն ցուցմունք. «Կորուսանէ Տէր զայնոսիկ, ոյք խաւսէին սուտ»[4]:

Եւ որ դատարկաբանն է եւ ծաղրածուն եւ կատակերգակն եւ ծաղրասէրն, ոչ գիտէ, թէ ընդ ամենայն դատարկաբանից համարս տալոց եմք՝ ըստ առաքելոցն բանն. «Զի ի բանից քոց արդարասցիս եւ ի բանից քոց պարտաւորեսցիս»[5]. Եւ Տէրն ասէ. «Վա՛յ ձեզ, որ ծիծաղիք»[6]: Ըստ որում Սող[ո]մոն վկայէ. «Հուր ի ներքոյ կորուսէ այն եւ ծաղր անմտի»[7]:

Եւ որ ոչ պատուէ զհայր կամ մայր, ոչ լսէ յաւրինացն. «Պատուեա՛ զհայր քո եւ [զ]մայր. եւ որ չարախաւսեսցէ զհաւրէ կամ զմաւրէ, մահու վախճանիցի»[8]:

Եւ որ սրտմտողն է եւ բարկացողն, ոչ հաւատայ Աստուծոյ պատուիրանացն. «Որ բարկանայ եղբաւրն ի տարապարտոցն, պարտաւոր լիցի ի գեհենին»[9]: Եւ՝ «Բարկանայք եւ մի՛ մեղանչէք»[10]: Եւ՝ «Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»[11], եւ

1 Ա Կոր. Զ 10
2 Ա Յովհ. Գ 15
3 Յովհ. Ը 44
4 Սաղմ. Ե 7
5 Մատթ. ԺԲ 37
6 Ղուկ. Զ 25
7 Ժող. Է 7. բնագրային աղաւաղում:
8 Մատթ. Է 10
* հաւատէ
9 Մատթ. Ե 22
10 Եփես. Դ 26
11 Ցակ. Ա 20

սրտմտութիւն ն[ո]րա՝ ըստ նմանութիւն աւձին: Եւ որ ոչ սիրէ զեղբարն իւր, ոչ հաւ[ան]ի յառակս իմաստնոյն, թէ՝ «Որ հաստատի ի ստութիւնս, նա զհողմս արածէ»[1]: Զի լեզու սուտ ատէ զճշմարտութիւն: Լեզու սուտ մահ բերէ պտուղ: Լեզու սուտ անդադար գործէ խռովութիւն: Լեզու սուտ ատէ զանձ իւր: Լեզու սուտ հեռանել տայ զանձն Աստուծոյ: Լեզու սուտ՝ դիւաց բնակարան: Լեզու սուտ՝ սուրս երկայրի: Լեզու սուտ՝ խայթոցք մահաբերք: Լեզու սուտ բարկացուցանէ զԱրարիչն: Լեզու սուտ խռովացուցանէ զհրեշտակս: Լեզու սուտ՝ գործակից սատանայի: Լեզու սուտ՝ քակումն սիրոյ եւ միաբանութեան: Լեզու սուտ՝ խռովութիւն եղբարց: Լեզու սուտ՝ նուազութիւն հաւատոց: Լեզու սուտ՝ բեկում հոգւոց: Եւ այլ սոցա նման ի ձեռս լեզուին գործէ: Եւ յաղագս ստութեան եւ ի սմանէ. յառաջին՝ իշոցք*, հայոյութիւնք, բամբասանք, սուտ երդումք եւ ամենայն չարեաց արմատք: Իսկ լեզու արդար ծած[կ]է զթշնամութիւն: Լեզու ճշմարիտ զլռութիւն սիրէ: Լեզու ճշմարիտ յեղբարսիրութիւն յաջողէ: Լեզու ճշմարիտ զսատանայ նետիւ խոցէ: Լեզու ճշմարիտ զխաղաղութիւն համբաւի: Լեզու ճշմարիտ զհակառակութիւնն ի բայց հերքէ: Լեզու ճշմարիտ զանձն տաճար Աստուծոյ գործէ: Լեզու ճշմարիտ հանգուցանէ զՀոգին Սուրբ յանձն իւր: Լեզու ճշմարիտ՝ կշեռք արդարութեան: Լեզու ճշմարիտ՝ հիմն հաստատութեան: Եւ ի սմանէ յառաջին բազում արմատք բարեգործութեան՝ ըստ բանին Սողոմոնի, թէ՝ «Մահ եւ կեանք ի ձեռս լեզուին»[2]: Սա՝ ի սկզբանն արարչութեան պատմող: Սա՝ տառից մարգարտականաց երգող: Սա՝ Աւետարանին Քրիստոսի քարոզող: Սա՝ Աստուածաշունչ գրոց ընթերցող: Աբրահամու աստուածատեսութեան արժանաւոր: Սա՝ ընդ Մովսիսի ի Սինայի յԱստուած բարբառող: Սովաւ Տէրն ձայնէ զՂազար: Սովաւ բժշկի անդամալուծն: Սովաւ թզենին առժամոյն չորացեալ: Սովաւ սարսեալ դիւաց սարսէին: Սովաւ փախստական լինի սատա[նա]յի ի փորձելն: Եւ բազում ազգի ազգի սքանչելիք եւ զարմանա[լ]իք ի ձեռս լեզուին գործի: Վասն այնր պատճառի գրէ Յակոբոս. «Լեզու փոքր ինչ անդամ է եւ զմեծամեծս բարբառի»[3]: Իսկ սա այսպէս փոքր անդամ այս-

1 Առակ. Թ 12
* իշոնք
2 Առակ. ԺԸ 21
3 Յակ. Գ 5

պիսեաց մեծութեանս արժանաւորի եւ ըստ հակառակին բազում մեծամեծ գործս չարութեան* գործէ: Եւ թէ զի այսպէս է, ապա պարտ է ամենայն մարդոյ զգուշութեան: Սանձել եւ փակել զդուռն սորա եւ արդար կշեռս պատրաստ կացուցանել զբանն խորհուրդակրութեամբ՝ իբրեւ աղիւ համեմեալ, եւ ապա [յ]այտնել ի լսելիս մարդկան: Եւ մի՛ [յ]անկարծակի սրաթռիչ եղեալ բանիւք չարութեան, այլ ոչ կարէ դարձուցանել, զի թռեաւ:

Այլ մեզ ունկնդիր լինել պարտ է Պաւղոսայն խրատոյն, թէ ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ, եւ Սողոմոն ուսուցանէ. «Որ սիրէ զկեանս, խնայէ ի բերան իւր»[1], զի ձեռս լեզուին ի վերայ միմեանց յառնեն մարդիկ ի նախանձ եւ յայդութեան եւ ի բամբասանս ի դատել զմիմեանս եւ ի հակառակել: Աստուածային աւրէնքն հրաման է՝ սիրել զ[ը]նկերն եւ ցաւակից լինել միմեանց, «լալ ընդ լացողս, խնդալ ընդ խնդացողս»[2], իսկ նա բամբասանաւք զաւրէնսն դատի, ապա ոչ առնելի են յաւրինացն այնոքիկ, այլ՝ դատաւոր, որ ի հարկանելն եւ ի բեկանելն են պատրաստ եւ ոչ ի բժշկելն եւ յառողջացուցանելն: Այսորիկ աղագաւ ասաց. «Մէկ Աւրէնսդիր եւ Դատաւոր, որ կարող է կեցուցանել եւ կորուսանել»[3]: Է թէ մեղաւոր եւ վերաւոր է, զոր դատեսն, պարտ է քեզ կարեկից լինել նմա եւ ցաւակից եւ կանգնող անկելոյն, զի բազումս ի զուրս* բամ[բ]ասեն: Եթէ յիրաւի բամբասէ մարդ զումեքէ անիրաւ լեզուէ եւ նա, որպէս Տէրն ասէ. «Զի՞ տեսանես զշի[ւ]ղ յականէ եղբաւր քո եւ ի քում ականդ զգերանդ ոչ նշմարես»[4]: Եւ կեղծաւորս անուանէ զնոս[ա]: Եւ ահա ձեզ յայտնի փարիսեցւոյն է. ի դատապարտել զմաքսաւորն նորին աղաղաւ առ նաւահանգիստն բիւրաւոր բեռամբքն բեկեցաւ: Վասն այն ասէ, թէ՝ «Որչափ ջանաս ծածկել զ[յ]անցանս քո ի մարդկանէ, եւս առաւել զեղբա՛ւրն ջանա ծածկել եւ նմանեա՛ ի մասինս յասմիկ Աստուծոյ»: Արար Աստուած Ադամայ եւ կնոջ նորա հանդերձս մարդկեղէնս՝ ծածկել զամաւթալի մերկութիւն նոցա փոխանակ պատառատու տերե-

* չորութեան
1 Առակ. ԺԶ 17
2 Հռոմ. ԺԲ 15
3 Յակ. Դ 12
* իզաւրս
4 Մատթ. Է 3, Ղուկ. Զ 41

ւոյն:

Տեսէ՛ք, եղբա՛յ[ր]ք, թէ որպիսի տրիտուրս առնուցուք՝ կարեկից եղբարն լինելով եւ զցաւն ի միջոյ բառնալով, զի մի փոքր մի խմոր զանգուածն* խմորէ: Իսկ որ անկարգաբար բուռն խաբկանեն զյանդիմանութինէն եւ զբամբասանացն, մեծի մեղադրութեան արժանաւորք են այնոքիկ: Զի է, թէ՝ «Հայր ոչ զոք դատի, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ Իւրոյ»[1], իսկ որ դատեն զը[ն]կեր, անարգեն զՈ[ր]դի: Եւ ահ[ա] այսոքիկ՝ անբերելի չարիք եւ անտանելի անմտութիւնք, հակառակ կալ Քրիստոսի, բանիւ դատել եւ գործով զդատաստանն հատուցանել:

Արդ, զայսոսիկ գիտելով, եղբա՛յրք, դադարեսցուք ի դատելոյ զմիմեանս, լռեցուսցուք ի բամբասանաց զլեզուս եւ մի՛ տեսցուք զայլոց շի[ւ]ղ. զգերանս մեր սրբեսցուք: Զմեղս մեր դատեսցուք, ի մեզ յի[ն]քեանս հայեսցուք եւ խոնարհ սիրտիւք կացցուք ի գործ սրբութեան հաւատով եւ սիրով եւ միաբանութեամբ՝ գործել եւ պահել զպատուիրանս Աստուծոյ:

Եւ եթէ զամենայն աւրէն կատարես անթերի եւ սէր ոչ ունիցիս՝ զճրագն ամենայն իմաստութեան, ոչ աւգտիս յամենայն առաքինութեան, զի առանց սիրու անկատար է: Զի սէրն է ամենայն յիրաց առաջնորդ, ամենայնի յաջողէ, անխափան գործէ եւ ոչ երբէք անգանէ: Եւ ամենեւին գործք սրբութեան եւ արդարութեան առանց սիրոյ ոչ եղեն, զի յառաջ քան զամենայն աւրէնք՝ սիրել զՏէր Աստուած յամենայն սիրտի եւ [յ]ամենայն անձնէ եւ յամենայն զաւրութիւնէ եւ [յ]ամենայն մտաց:

Եւ սիրել զ[ը]նկերն իբրեւ զանձն: Զի սէր ընկերին չար ոչ առնի: Սէր ընկերին զԱստուծոյ սէրն պայծառացուցանէ: Սէր ընկերին զամենայն տեսակս առաքինութեան ծաղկազարդէ: Սէրն ընկերին բարձրաթռիչ թեւաւք առ Աստուած մերձեցուցանէ զմարդն: Սէրն ընկ[եր]ին զԱստուած առ ինքն հա[ն]գուցանէ: Սէրն [ընկ]երին ցանկալի հրեշտակաց զինքն երեւեցուցանէ: Սէր ընկերին նմանեցուցանէ զմարդն Աստուծոյ, որպէս Յովհաննէս գրէ. «Աստուածասէրն է, եւ որ

* զաման գուածն

1 Յովհ. Ե 22

կայ ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»[1]:

Եւ ոչ է թէ աղքատին անփոյթ ինչ առնել եւ ոչ սիրել եւ զմեծատունս սիրել, պատուել եւ յարգել եւ աչառութեան ունիցիք՝ զսէրն ոչ ի սէր կատարեալ ի ձեզ, զի զանձն եւս պարտ է մատնել վասն եղբարն, որպէս Յակոբոս ասէ. «Սէր կատա[ր]եալ ի բաց մերժէ զերկեղ եւ սէր ծածկէ զբա[զ]մութիւն մեղաց»[2]: Որչափ սէր՝ ա[յ]նչափ Աստուած: Սէրն է լրումն աւրինաց: Սէրն դուռն է առ Աստուած մտից: Սէրն սանդուխտ է հաս[տ]ատեալ յերկնից յերկիր, եւ որք զհետ սիրուն հետեւին, ելանեն մեծապանծ յուսով յերկնային քաղաքն՝ ի Վերին յԵրուսաղէմ՝ լինել երկնաքաղաքացիք եւ խառնել ի դասս հրեշտականաց եւ յերամս արդարոց:

Եւ այժմ փոքր ինչ զհեզութենէն եւ զխոնարհութենէն գրեմք: Եւ զողորմութիւնն խառնեալ ընդ խոնարհութեանն եւ ընդ այլ առաքինութի[ն]սն՝ առաւել գեղեցկագոյնս եւ պայծառս երեւեցուցանեմք:

Զոր այժմ առաջի դնեմ զխոնարհութեան: Որ խոնարհն է եւ հեզն եւ կամաւոր խոնարհ եւ ճշմարիտ, աղբիւր կոչի շնորհաց եւ առնէ այն է հոգի մարգարէութեան: Ճշմարիտ խոնարհն այն է, որ ո՛չ ի նախատինս տրտմի եւ ո՛չ ի գովութիւնսն ուրախանայ եւ ո՛չ փառս սիրէ, որպէս խրատէ Պաւղոս. «Մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք»[3]: Եւ Տէրն զհիմն երանութեան զխոնարհութիւնն եդ եւ նոցա խոստացաւ յաղթանակ տալ զերկնից արքայութեանն: Եւ մարգարէն ասէ. «Հայեցար ի խոնարհութիւնն իմ եւ փրկեցեր ի վշտաց զանձն իմ»[4]: Եւ Տէր զխոնարհս հոգւով կեցուցանէ:

Եւ որպէս Սող[ո]մոն ցուցանէ, ամենայն գործք խոնարհին յայտնի առաջի Աստուծոյ: Եւ Տէրն դարձեալ զինքն կեցուցանէ. «Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սիրտիւ»[5]: Հեզ էր եւ Մովսէս, վասն այն տեսլեանն Աստուծոյ արժանի եղեւ: Հեզ էր եւ Դաւիթ, վասն որոյ ասէ. «Ցիշեա՛, Տէ՛ր, զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նո-

1 Ա Յովհ. Դ 16
2 Յակ. Ե 20
3 Հռոմ. ԺԲ 16
4 Սաղմ. Լ 8
5 Մատթ. ԺԱ 29

բա»[1]: Եւ զորաւրինակ, ամենացանկալի եւ գեղեցիկ սերմանք եւ ծաղիկք եւ պտուղք քաղցրահամք ի խոնարհ տեղիս եւ ի դիւրինս սերմանի եւ բուսանի բազմերանգ ծաղկաւք ծառք ազգի ազգի եւ պտուղք ախորժելի վասն ջերմացեալ տապոյ արեգականն ընթացից առ ի սնուցանել զամենայն ըստ իւր բնութեանն, եւ բարձունք՝ սառնամանեաց տեղիք եւ անպտղութեան. եւ որպէս ջուր միշտ զառիվայրսն սիրէ գնալ եւ ի հովիտս ժողովի եւ ծովանայ, իսկ զառիվերսն դժուարի, նոյնպէս Հոգին Սուրբ՝ աղբիւրն ամենայն շնորհաց, իբրեւ զգետ յորդառատ բղխեալ ի հեզն եւ ի դիւրահաւանն յաւժարի եւ գնայ եւ բնակի ի նմա եւ ծովանայ եւ գետաւրէն յառաջ խաղայ եւ զբազումս արբուցանէ: Իսկ այնոքիկ, որ ամբարտաւանութեամբ բերին, ոչ բնակէ, այլ դժուարին է եւ ի բայց դառնայ: Եւ որպէս ոսկի ընդ մարգարիտս յեռեալ՝ առաւել եւս գեղեցկանայ, նոյնպէս եւ այլ առաքինութիւնք խոնարհութեան խառնեալ ընդ ողորմութիւնն՝ եւս առաւել գեղեցկանան: Որպէս գրէ [Յ]ակոբոս. «Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնն առ Դատաստանաւն»[2], եւ Տէրն յերանութեան արկէ զայնպիսիսն, թէ՝ «Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»[3]: Փոխանակ երկրաւորացս՝ զերկնային ուրախութիւնն, եւ փոխանակ անցաւորիս՝ զանանց բարութիւնն: Եւ զսոյն ուսուցանէ մարգարէն Դանիէլ. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, եւ զանաւրէնութիւնս քո՝ գթով տնանկաց»[4]: Եւ իմաստունն պարտական զՏէրն կացուցանէ. «Որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ»[5]: Բայց են այսպիսի մարդիկ, որ զանծախ առաքինութիւնս լիով կատարեն՝ պահաւք եւ աղաւթիւք, եւ աղքատին ամենեւին ողորմութեան ոչ առնեն: Նման են նոքա յիմար կուսիցն, որք զողորմութիւնն ոչ ունէին զեղն զպատճառք լուսաւորութեան ճրագուցն, ի խաւարի մնային եւ առագաստին Փեսային ոչ եղեն պատրաստք: Նոյնպէս մարդիկ, ամենայն առաքինութեամբ զարդարեալք, զողորմութիւն ոչ ունիցին խառնեալ ընդ այլ մասունս առաքինութեան, ոչինչ աւգտին ի ճգնութեանցն:

Արդ, եղբա՛յրք իմ, մի՛ դիք բանից ասացելոց ի Տեառնէ,

1 Սաղմ. ՃԼԱ 1
2 Յակ. Բ 13
3 Մատթ. Ե 7
4 Դան. Դ 24
5 Սիր. ԻԹ 1

[աջակ]ից լերուք միմեանց աւգնականութեամբ եւ աղաւթիւք, քանզի գրեալ է, թէ՝ «Յոյժ զաւրաւոր են աղաւթք արդ[ար]ոց յաւգնականութիւն»[1]: Եւ որք ի տկարութիւնս եւ ի կարճմտութիւնս երկմտութեամբ ծփիք, խնդրեցէ՛ք աւգնականութիւն յԱստուծոյ աղաւթիւք եւ խնդրուածովք: Զի արժանի լինիջիք արդարութեան պտղոյն առ ի յ[ը]նդունել ձեզ զսերմն հոգեւոր եւ բուսուցանել զհարիւրաւորն թիւ: Մի՛ ապառաժուտ վայր եւ մի՛ փշաբեր երկիր կորուսիչ սերմանց, այլ երկիր արգաւանդ աճեցուցիչ պտղոյ եւ այգի Տեառն պտղազարդեալք քաղ[ց]րահամութեամբ, եւ մի՛ փշաբերք եւ խոպանացեալ: Կրկնաշահ քանքարովք երեւեալք ի պահանջել Տեառն, եւ մի՛ վատնողք եւ քանքար թագոյցք, յառագաստն ընդ Փեսային Քրիստոսի պատրաստք եւ յիմարութեամբ ոչ ժամանեալք աջակողմեան դասին արժանաւորք, եւ մի՛ ընդ այծիսն տրտմեալք: «Եկա՛յք, աւրհնեա՛լք»[2] կոչելոյն լսողք, եւ մի՛ «Երթա՛յք...»[3] անիծելոյն ունկն դնողք: Անմահ կենացն ժառանգաւորք, եւ մի՛ սատանայի կամացն պատրաստողք: Ի վայելչական դրախտին անմահական կենացն վայելողք, եւ մի՛ խաւարին եւ պատրաստեալ տանջանացն արժանաւորք: Ի գոգն Աբրահամայ հանգչիլ, եւ մի՛ ընդ թեւով Բելիարայ ըմբռնիլ: Յաւիտեան ուրախութեան փութալ, եւ մի՛ կրճել ատամամբ ի ողբալ: Աստ՝ բարեսէր, եւ անդ բարեաց պատահես: Աստ՝ խոնարհ եւ հեզ, եւ անդ անչափ մեծութիւն ժառանգես: Աստ՝ աշխատաւոր, եւ անդ հանգիստ յաւիտենական գտցես: Աստ՝ տրտմեալք, եւ անդ՝ զանազան փառաւք ճախացեալք: Աստ՝ քաղցեալք, եւ անդ՝ երկնաւոր կերակրովքն յագեալք: Աստ՝ առաւրեայ աղքատ, եւ անդ՝ վերին մեծութեամբն փարթամացեալք: Աստ՝ զրկեալք, եւ անդ՝ ընդ միոյն տասն պահանջեալք: Աստ՝ հալածեալք, եւ անդ՝ թագաւորեալք: Աստ՝ չարչարեալք, եւ անդ՝ պսակեալք: Աստ՝ աղաւթս ժուժկալք, եւ անդ՝ կատա[ր]եալ պար[գ]եւաց արժանացեալք: Աստ՝ զմարմնոյ ցանկութիւնս հատեալք, եւ անդ՝ զհոգին ընդ Աստուծոյ կցորդեալք: Աստ՝ յիմարք երեւեալք, եւ անդ՝ վերին իմաստութեամբն լցեալք: Աստ ոչինչ ունիցիք, եւ անդ ամենեցոյն տիրիցիք: Աստ անուրեք գտանիք, եւ անդ երկնաքաղաքացիք լինիջիք: Աստ՝ սրբասէր, եւ անդ՝ ընդ Քրիստոսի եւ ընդ սրբոցն:

1 Յակ. Ե 16
2 Մատթ. ԻԵ 34
3 Մատթ. ԻԵ 41

Աստ՝ ընդ իշխանութեամբ եւ ընդ լծով, եւ անդ՝ ազատորդիք Վերին Սիոնի: Աստ՝ նեղեալք, եւ անդ՝ ընդարձակութեամբ սիրտի զուարճացեալք: Աստ՝ քաջամարտք, եւ անդ՝ պարգեւընկալք: Աստ՝ ի բազում ճգնութեանս ժուժկալք, եւ անդ՝ սրաթռիչ թեւաւք ի դասս լուսերամիցն կարգեալք: Աստ՝ վաճառեալ զապականացուս, եւ անդ՝ գնեալք զանապականն: Աստ՝ ի փախստականք, եւ անդ՝ հանգուցեալք: Եւ զոր պատիւ մեծութեան՝ կամիմ պատմել ձեզ եւ բերել յա[յ]տնութեամբ բանի: Զանբաւելի մեծութիւն, զանանց ճոխութիւնն, զանիմանալի փառքն, զանմահական հանգիստն, զանհաս բարձրութիւն: Ոչ կարեմք ընդ բիւրուց զմինն ցուցանել զպատիւ մեծութեան ձերոյ, զհիմն սկսման եւ զաւարտ լրման ըստ առաքելոյն, որք եկեալ ժողովիք ի միաբանութիւն հաւատոյ եւ աստուածաբնակ երեւեցուցանէք զտեղիքս զայս, զոր Տէրն ասէ. «Ուր երկու եւ երեք ժողովին յանուն Իմ, անդ եմ Ես՝ ի մէջ նոցա»[1]:

Արդ*, ընդ երկրո[ր]դին ժողովք սրբոց եւ ընդ երրորդին դասք առաքինաց՝ ազգի ազգի բարեգործութեամբք լցեալք: Քահանայք՝ ի սպասաւորութիւն սուրբ յԵկեղեցւոյ եւ ի բաշխումն Մարմնոյ եւ Արեանն Տեառն կանխեալք եւ քաւութիւն ժողովրդեանն: Սարկաւագունք՝ յերգս աւրհնութեան եւ ի քարոզս խնդրուածովք զխաղաղութիւն հայցել պաղատանաւք եւ բացաւ գլխով եւ ձեռն կարկառելով առ բարեգութ Աստուած: Դպիրք՝ ի սաղմոսաձայնութիւնս եւ ի յընթերցումն Աստուածաշունչ գրոց եւ ի պաշտամունս երաժշտականս: Մերք՝ ի ծառայել Տեառն եւ յաղաւթս կալ եւ խնդրել զթողութիւն յանցանաց: Երիտասարդք՝ յուղղեցնացութիւնս՝ հրաժարեալ ի ցանկութեանց աշխարհիս եւ արիագոյն երեւեալ ի մարտս պատրողին: Մանկունք՝ յունկնդրութիւն Գրոց Սրբոց եւ վարդապետաց, հնազա[նդ] կեալ** խոնարհութեամբ ամենայն խրատոց հարց եւ իրաւագոյն եղբարց: Եւ Հոգի Աստուծոյ հանգու[ց]եալ է ի վերայ ձեր ամենեցուն: Զոր եւ հայցեմք ամենախնամ Բարերարէն Աստուծոյ խաղաղութիւն եւ զհաստատութիւն ձեզ եւ ամենայն աշխարհի, զի բարձրացէ եղջեւր Եկեղեցւոյ սրբոյ՝ բառնալ զցասումն եւ զպատուհաս յաշխարհէ, որ վասն մեղաց մերոց խրատիմք ի Տեառնէ, եւ Ինքն Բարեխնամն յամենայնի Հայր երկնաւոր հաստատուն պահեսցէ զաթոռ հայրապետութեան մերոց տեառն Գրիգորի եւ ամրածածուկ աջովն Իւրով առաջնորդեսցէ ըստ կամաց Իւրոց ուղղիչ դաւանութեամբ՝ դիտել եւ վարդապետել, կեալ ամենեցուն հաճոյսն Աստուծոյ: Տացէ Տէր Աստուած եպիսկոպոսաց եւ քահանայից ա[ն]բիծ եւ անարատ բաշխումն շնորհաց՝ սրբութեամբ կեալ եւ զսրբութիւն ուսուցանել եւ տեսուչս պատրաստս եւ հովիւս սգաստս, զի մի՛ գտանիցէ ի քուն շրջողն գիշերի, այլ ճշմարտութեամբ սուսերաւ բանին հերքեսցէ զգալի հաւտէ խաշանց:

Տացէ Տէր Աստուած սարկաւագաց պարկեշտութիւն, սրբութեանց լինել պաշտաւնեայ եւ արժանի լինել հասանել ի կոչումն շնորհաց: Լինել տեսուչս եւ քահանայս ի սպասաւորութիւն սուրբ Եկեղեցւոյ:

Տացէ Տէր Աստուած առաջնորդաց եւ վարդապետաց մերոց զտնտեսականն տնաւրինել եւ պատրաստ կացուցանել կատարմամբ դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ մաքրութիւն, սրբութիւն եւ արդարութիւն:

Տացէ Բաշխողն շնորհաց ընթերցողացդ իմաստութիւն, սաղմոսողացդ՝ մտավարժութիւն:

Հզաւրն յամենայնի տացէ թագաւորաց զա[ւ]րութիւն: Ի մարտս պատերազմաց յաղթող լինել ընդ[դէ]մ թշնամեաց իւրոց եւ հերքել զհոյլս ամբարշտութեան: Եւ իշխանաց իւրոց՝ քա[ջ]ութիւն՝ իշխել հակառակացն ճշմարտութեան: Եւ զաւրականացն՝ ի մարտի ար[ի]ութիւն եւ պահպանութիւն խաչիւն եւ ամենայն Սուրբ Հոգւովն: Ինքն միայնն՝ Աստուած տացէ միանձնացելոց յաղթութիւն ընդ[դէ]մ սատանայական փորձութեանց, ճգնաւորաց՝ քաջութիւն եւ ժո[ւ]ժկալութիւն: Երկայնամտել յուսով եւ հաստատուն կալ ի պաշտաւնն, յորս կոչեցեալն է: Եւ ամենայն հաւատացելոց՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, առհասարակ ամենայնի ըստ իւր չափոյ հասակին զարժանն ընդունելոյ ի պէտս սրբութեան: Շնորհեսցէ Ողորմածն յամենայնի մեղուցելոց թողութիւն եւ յառաջիկայ չարէն փրկեսցէ զմեզ:

Տացէ Տէր Աստուած ամ[ենայն] բարութեանց լիութիւն, եւ զպտղաբերութիւնս բուսոց եւ տնկոց անսխալ պահեսցէ: Պահպանեսցէ Տէր Աստուած ամրածածուկ աջովն եւ խաչիւն զգաւառս մեր քաղաքականաւք եւ վանականաւք եւ գեղերանաւք աշխա[տ]ասէր արամբք:

---

1 Մատթ. ԺԸ 20

* արտ

** հնազակեալ

Առաքեսցէ զաւդս բարեշունչս եւ զամպս անձրեւաթափ առ ի լցումն ամենայն բարութեան երկրի: Աղբիւրաց՝ առատ գնացութիւն, բուսոց եւ տնկոց՝ անսխալ պտղաբերութիւն:

Քրիստոս՝ Յոյսն կենդանեաց եւ մեռելոց, տացէ քաւութիւն եւ թողութիւն ննջեցելոց մերոց, որք ի մէջ հրաժարեալք են: Հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեսցէ եւ արութեան յոյսոյն արժանի արասցէ: Եւ զմեզ զարդարեսցէ ի սէր սրբութեան եւ պահպանեսցէ ի պատուիրանս եւ զվերատեսուչս եւ զսպասաւորս ձեր մեծի վարձոյց արժան[աւ]որս արասցէ, որք սրբութեանց հետեւին եւ զսրբութիւն ուսուցանեն: Ողորմեսցի բարեգութն Աստուած այնոցիկ, որք զհիմն եւ զսկիզբն միաբանութեանս են արկեալ, որք հրաժարեալք են, եւ որք կան: Զի նոյնք Աստուծոյ մեծ աւրհնութեան եւ աղաւթից, ո[ր]ք աստ կատարին խնդրուածովք մեծ մասին արժանաւորք են այնոքիկ եւ որք աւգնական լինին շինուածքովք ի սպաս եկեղեցւոյ զարդու եւ ի լապ[տ]երաց պէտս լուցանելոյ: Եւ որք ողորմութիւն առնեն աղքատաց նեղելոց, մեծի վար[ձ]ուց հատուցումն ի Քրիստոսէ ընկալցին: Ընդ նմին եւ ան[ձ]իս հայցելով ի Տեառնէ թողութիւն յանցանաց:

Եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս. ամէն:

[ԱՄԱՆՈՐԵԱՅ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԱՌ ԲՆԱԿԻՉՍՆ ԵԿԵՂԵԱՅ ԳԱՒԱՌԻ][1]

Աստուած ճշմարիտ, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ, անեղ, անմահ իսկ յերուսաղեմէն, յեռանձնեայ եւ միասնական Աստուածութենէն, յարարչագործ եւ ի հզաւր կամացն ակնարկութենէն՝ հաստահեղոյս կառուցեալ, յամենասքանչ ներգործականն բազկէ եւ ի վիմարդեան մահարձանաւք պատսպապար, ի յահեղահրաշ խարսխեալ աջէն, բրգնայարմար եւ ճոխաձեւ հիացական, ի դէտ զարմանալի տեսականէն, քաղաք հոյակապ եւ հռչակաւոր, արքայանիստ եւ տիեզերաւոր, յորջորջեալ Եկեղեաց եւ ժողով հաւատացելոց, մարդիկք, տաճարք բազմահոյլք եւ խորանք յոգնաթիւք մատրունք Քրիստոսի եւ սենեակք Հոգւոյն Սրբոյ, մանաւանդ թէ եւ զաւրութեամբ Հաւր բարձրելոյն հովանաւորեալ: Նաեւ երկամբք բազմաչարչար սուրբ նահատակին՝ հաւրն մերոյ սուրբ Լուսաւորչին, վերստին աւազանաւն ի լոյս ծնեալք: Ի վայրի դալարաւոյ սնեալք, աւետարանական վարդապետութեամբ եւ առ ջուրս հանգստեան մարգարէական եւ առաքելական վարդապետութեամբն ոռոգեալք[2]: Վասն որոյ եւ ես՝ նուաստ ծառայ

---

1 ՄՄ ձեռ. N 610, Ժողովածու, ԺԴ դ., էջ 112ա: Հրատարակուող նիւթն անտիպ է եւ մինչեւ 1970-ական թթ. ընդհանրապէս չի նկատուել: Թէպէտ ձեռագիրն ունի տարբեր ժամանակների գրչութիւններ, այն մեզ է հասել ԺԴ դ. գրչութեամբ: Բնագիրն անվերնագիր է, այն տրուած է մեր կողմից՝ ելնելով բովանդակութիւնից:

Պէտք է ենթադրել, որ Երզնկացին այս Օրհնութիւնը գրել է ԺԳ դ. 80-ական թթ. վերջին, երբ նա մասամբ ծերութիւնից, իսկ առաւել՝ առողջական վիճակի թելադրանքով թողնում է ակտիւ քարոզչական գործունէութիւնը, քաշւում է վանք եւ զբաղւում գիտամանկավարժական գործունէութեամբ: Ցայտնի է, որ 1287 թ. եւ մինչեւ Կիլիկիա գնալը նա եղել է Երզնկայի նշանաւոր Ս. Մինաս վանքի վանահայրը (տե՛ս **Է. Բաղդասարեան**, Ցովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 27, 34. **Արմէնուհի Երզնկացի-Սրապեան**, Ցովհաննէս Երզնկացի-Պլուզ, Երեւան, 1993, էջ 43):

2 Շատ կան քաղաքներ, որոնք մարդկութեան պատմութեան ընթացքում գովերգուել են ամենապայծառ գոյներով, սակայն նրանցից քչերին է, անշուշտ, բախտ վիճակուել երկնային արարչագործութեան արգասիք համարուել, բայց այն, ինչ Ցովհաննէս Երզնկացին վերագրում է իր հայրենի քաղաքին, պէտք չէ վերագրել տեղային փառասիրութեան: Առաւել եւս մեր մեծագոյն տուրբ վարդապետներից մէկին անկարելի է սրբապղծութեան մէջ մեղադրել, եթէ նկատի ունենանք այն դերը, որ մինչ այդ հազարամեակների պատմութեան ընթացքում խաղացել եւ շարունակում էր խաղալ Երզնկան եւ Եկեղեաց գաւառը հայ իրականութեան մէջ եւ հեթանոսական դարերում,

ծառայիցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Յովհաննէս վարդապետ, հանդերձ աշակերտեալ կրաւնաւորական դասաւք, դեգերեալ առ ոտս դամբարանի սուրբ Լուսաւորչիս եւ քաջ հովուի, արտասուաթոր հառաչմամբ եւ լալագին պաղատանաւք, ըղձմամբ հայցեմ եւ խնդրեմ միջնորդ եւ բարեխաւս ունելով զսուրբ Լուսաւորիչս ընդհանուր ամենայն սրբովք՝ առ ապենիազն Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց եւ աննախանձ ի պարգեւս, անքէն եւ անոխն ի չարիս եւ բնաւին իսկ ներող ի զղջացեալս, զի քաղցր ակամբ հայեաց ի յիւրականի բարձրութենէն, ի գոգեալ եւ ի յովտացեալ անձինս մեր եւ զուղիս փափկութեան եռանդնաշարժ աւրհնութեան եւ ամենալիր բարութեան. հելցէ, զեղցէ եւ սփռեսցէ ի վերայ ձեր՝ որպէս անձրեւ ի վերայ սիզոյ եւ որպէս տարափ ի վերայ խոտոյ: Նաեւ բարձցէ զամենայն փորձութիւն եւ զյաստուն ի ձէնջ եւ ի շուրջակայ դաւառաց ձերոց՝ զհիւանդութիւն եւ զմահ, զսուր եւ զսով, զտուգանս եւ զաղքատութիւն, զարշաւանս թշնամանց եւ զվտարումն: Նաեւ յանդաստանաց ձերոց բարձցէ զխոյշակ եւ զտաւթ: Նաեւ զխիս[տն] [տ]ղմուտ եւ զանաւգուտն անձրեւ: Այլ եւ բարձցէ զթրթուր եւ զմարուխ, զջորեակն եւ զդալուկ եւ զամենայն պատահար չար:

Այլ եւ դարձեալ աղաչեմ եւ աղաւթեմ ի վերայ ձեր եւ ընդ մեզ կցորդակից զամենայն սուրբս, զի ամենազաւր բազկաւն եւ ամենախնամ աջովն Իւրով պարսպեալ պահեսցէ զձեզ տամբ եւ զաւակաւք եւ ամենայն գոյիւք անսասան կենաւք ի զարդ եկեղեցւոյ եւ ի գեղ վայելչութեանս սուրբ անունն Իւրոյ:

Հիւանդաց ձերոց առողջութիւն պարգեւեսցէ, գլորելոցն կանգ[ն]ումն տացէ, մոլորելոցն դարձ տացէ, վշտացելոցն մխիթարութիւն ընծայեսցէ, ննջեցելոցն հանդիստ եւ ողորմութիւն արասցէ, իսկ կենդանեացդ՝ կեանք անցաւագին եւ ժամանակ անվրդովք: Հաւատք կենդանացեալ գործովք եւ գործք վերտառացեալ հաւատովք: Արդանդ ձեզ բազմածինք եւ զաւակք շնորհընկալք, հայրասէրք եւ աստուածասէրք: Կանայք՝ համեստք եւ [աղ]աւթասէրք, այրասէրք եւ որդեսէրք, աստուածասէրք, երկիւղածք, աղքատա[սէրք] եւ տնարարք:

Ծառայք՝ հնազանդք եւ մտերիմք, աշխատասէրք եւ անտրտունջք:

Առաջնորդք ձեր՝ խնամո[ղ]ք եւ հոգացողք, անագահք եւ անկա[շ]առք, արդարադատք եւ զուգակշիռք:

Վաճառականք ձեր՝ անպատիր ի փողոցս եւ ի կրպակս, ի չափ եւ ի կշիռս անխաբ եւ անզրկողք:

Քահանայք ձեր՝ անբիծք եւ անարատք, աղաւթասէրք եւ հոգեսէրք, ժողովրդասէրք եւ աստուածասէրք, այսինքն՝ առնողք եւ ուսուցանողք:

Արդ, ի յաւարտս իսկ աւրինութեան,
Ի զրաւ բանիցն աղաւթական՝
Դարձեալ խրատ իսկ շահեկան,
Զի Նոր տարիս հասեալ է ձեզ բարութեան,
Ամիսս եկեալ պարառութեան
Քառասնաւրեայ պահքս անսուաղ իսկ տերունական,
Ցառաքելոյն աղուհաց սա մեզ կարգեաւ.
Ինքն է աւազան մեզ մաքրութեան եւ քաւ[արա]ն
Բոլոր տարւոյն աղտեղութեան,
Զնջիլ յաղտոց մերոյ անմաքրութեան,
Է՛ր սա փորձ ըստ աւրինակի պատուիրանին պահպանութեան,
Որ ի դրախտ յաւանդեցաւ մեզ փափկութեան:
Անժոյժ նախնին ագահութեամբ,
Որկրամոլն ցանկութեամբ,
Ըստ անկանեալ պատուիրանին անմահութեան,
Ծառայ եղեւ մահու հրաւէր որկրամոլ թշուառական ստրկութեան,
Փակեաց զազգս ի յանէծս համակ բոլոր,
Որով եղեալ առիթ մեզ ծնողական կցորդութեան:

առաւել եւս՝ քրիստոնէութեան ընդունումից յետոյ իբրեւ համազգային սրբատեղի եւ այն էլ՝ օրհնուած մեր մեծագոյն սուրբի՝ Գրիգոր Լուսաւորչի կողմից. «Զոր օրհնեալ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն աջաւն Յովհաննէս Կարապետին» (ՄՄ ձեռ. N 3439, էջ 108ա. հմմտ. նաեւ Լ. Բաղդասարեան, նշ. աշխ., Երեւան, 1977, էջ 79):

Ինչ վերաբերում է Երզնկայի բնակիչների բարեմասնութիւնների գովերգմանը, ապա հարկ է նշել, որ նոյնը տարբեր ժամանակներում արել են ամենատարբեր կրօնների եւ դաւանանքների պատկանող այլազգիներ եւս:

Արդ, ծաներո՛ւք, եղբա՛յրք իմ սիրելիք եւ որդի՛ք իմ ցանկալիք, զի պատուիրանք բազումք են եւ հոլովք: Աստուածային Գիրն զամէն պահել մեզ հրամայէ, զայս ընդ նմին իսկ աւանդէ, թէ որ աւրինաւք միով գթէ, պարտապան եղեւ ամենայն գրելոցն ի յիմ անձնէ:

Իսկ այժմ պարտիմք զարթչիլ յայսմ բանէ, զգուշանալ համակ բոլոր պատուիրանացն, որ ի Սուրբ Գիրս գրեալ է:

Բայց այժմ պահանջէ ի ձէնջ Քրիստոս շրթամբք մերովք՝ ի սուրբ աղուհացս այս զվեց բանս զայս անվեհեր եւ անսղալ պահե[լ]:

Նախ՝ խոստովանել իւրաքանչիւր զ[յանցանս] ձեր եւ սուրբ սրտիւ եւ մաքուր խորհրդով աղաւթել առ Աստուած, զի լսելի լիցի աղաւթք ձեր ի յու[ն]կն Աստուծոյ, զի ասէ մարգարէն. «Մեղս թէ տեսանէ ի սրտի իմում, ոչ լսէ ինձ Տէր»[3]:

Երկրորդ՝ աղաւթից ստէպ կենալ, զի գրէ առաքեալն, թէ՝ «Մոյլք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն»[4]:

Երրորդ՝ պահել ի ձկնէ, զի գրեալ է ի հայրապետական կանոնս, թէ որ ի պահքս աղուհացից ձկամբ համարձակի լուծանել, զաղուհացսն ընդ խաչահանունսն դասեսցի:

Չորրորդ՝ պահել ի գինւոյ, զի գրէ առաքեալ, թէ արբեցողք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն:

Հինգերորդ՝ պահել ի ձիթոյ, զի գրեաց Աստուած ի յԱւրէնսն Մովսեսի, թէ ուխտաւորքն պահեսցեն ի գինւոյ եւ յիւղոյ՝ ասելով թէ՝ այս եղիցի ձեզ աւրէնս յաւիտենական, զի ուխտաւորքն ի ձէնջ գինի եւ աւղի մի՛ արբցեն:

Վեցերորդ՝ սուրբ կալ յանկողնուց, զի աւուրք ապաշխարութեան են, եւ պահքս աւրինակ է դրախտին կուսութեան, որպէս եւ ահա կոյս կալով ի դրախտին՝ այսպէս եւ ամուսնացեալք եւ ոչ ամուսնացեալք եւ որք ոչ կոյս՝ պարտին կոյս լինել ի պահքս այս, զի գրեալ է ի կանոնքս. «Եթէ որք ի ժամանակս ապաշխարութեան մեղանչեն, ընդ անհաւատսն դասեսցին»:

Եւթներորդ կանոն՝ եւ ես՝ նուաստ ծառայ Քրիստոսի, պատուիրեմ ձեզ, զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի ժամ ճաշոյ աղքատ մի բաժին հոգ-

3 Սաղմ. ԿԵ 18

4 Հմմտ. Ցայտ. ԻԱ 8:

ւոց ձերոց ի սեղան ձեր բացմեցուսջիք եւ ընդ ձեզ կերակրեսջիք, զի եւ դուք ի սեղան Հաւրն երկնաւորի բազմեսջիք եւ ընդ Քրիստոսի ճաշակեսջիք:

Եթէ ունկնդիր իսկ լինիջիք կանոնական աւրինադրութեանս, որպէս հրամայէ իսկ աստուածայինն խոստմունք. «Թէ զպատուիրանս Իմ պահեսջիք, զբարութիւնս երկրի կերիջիք»[5] եւ «զաւրութեամբ սքանչելի լինջիք»[6], զի հաւատացեալ աւրինապահոցն վէմն աղբերացաւ[7], մանանայիւ յագեցան եւ լորամարգիւ կերակրեցան[8], գետն Յորդան[ան]իս նոցա յետս դարձաւ[9], արեգակն եւ լուսին ոտնակալ եղեն[10]:

Այսոքիկ եւ եւս բազում քան զսոյն բարութիւնք նախնեացն առաջնոցն ի ձեռն հաւատոց, աղաւթից եւ աւրինաց պահպանութեան պարգեւեցան: Եթէ ի բազմապատիկսն պահիցէք զպատուէր, եւս առաւել վայելիցէք գեր ի շնորհս:

Եթէ ոչ զամենայնսն, սակայն զէթ գոնեայ զեւթն զայս կատարեսջիք, երաշխաւոր եմ համարձակապէս, զի պահպանութեամբ պատուիրանացս այսոցիկ բարձցէ Աստուած ի ձէնջ զամենայն նախնի գրեալ ցասմունք: Զի ասէ Գիրն Աստուածային, թէ գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ: Եւ զկնի այսորիկ եկեսցէ, զետեղեսցի, զեղցի որպէս զգետ աւրհնութիւնք՝ լի ամբարութեամբք, զոր աղաւթեցաք ի վերայ ձեր, քանզի ասէ Գիրն, թէ՝ «Հաւատացելոյն ամենայն աշխարհ լի է ընչիւք, իսկ անհաւատին՝ եւ ոչ դանգ մի»[11]:

Ո՛ղջ լերուք ի կամս հզաւրին Աստուծոյն իմոյ Յիսուսի:

Բնագիրը պատրաստեց
Էդուարդ Բաղդասարեանը

5 Ես. Բ 19

6 Տե՛ս Ես. ԿԱ 6:

7 Տե՛ս Ել. ԺԷ 6:

8 Տե՛ս Ել. ԺԶ 13-33:

9 Տե՛ս Յես. Գ 16:

10 Տե՛ս Յես. Ժ 12:

11 Առակ. ԺԷ 4

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ «ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՆՆՋՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Ներսէս Լամբրոնացու գրաւոր ժառանգութիւնը ծանրակշիռ տեղ է գրաւում մեր Եկեղեցու վարդապետութեան մէջ: Այն կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ ըստ իր կենսագրութեան երկու շրջանների, որոնցից առաջինին բնորոշ է վանական-ճգնաւորական ներամփոփ կեանքը, իսկ երկրորդին՝ հովուապետական-հասարակական բուռն գործունէութիւնը[1]: Առաջին շրջանում ստեղծած նրա գրքերից անդրանիկն է «Պատարագի մեկնութիւնը», որին յաջորդում են Աստուածաշունչ գրքերի մեկնութիւնները: Դրանցից մեզ հասել են Արարածոց, Առակաց, Ժողովողի, Իմաստութեան, Երգ երգոցի, ԺԲ մարգարէից, Դանիէլի, Սաղմոսաց, Մատթէոսի (քաղուածոց), Առաքելական թղթերի, ինչպէս նաեւ սուրբ Յովհաննէս աւետարանչի ննջման պարականոն պատմութեան մեկնութիւնը[2], որն այժմ ընթերցողին է ներկայացւում աշխարհաբար թարգմանութեամբ:

Լամբրոնացու բոլոր մեկնութիւնները, ստեղծուած լինելով անապատական կեանքի խորհրդական հանդարտութեան մէջ, յագեցած են ոչ միայն աստուածաբանական նրբին լուսաբանումներով, այլեւ ներանձնական աստուածպաշտական սկզբունքներով: Եկեղեցու վարդապետութեան ուղղափառ մեկնողական աւանդութիւնը համակարգելուց եւ մի աստիճանով զարգացնելուց բացի, նրանք ամփոփում են բազմաշերտ խրատական աղերսներ՝ հիմնուած կենդանի ճգնաւորական փորձառութեան վրայ:

Երկրորդ շրջանի նրա գրուածքները (հոչակաւոր «Ատենաբանութիւնը», տօնախօսական եւ այլ ճառեր, Լեւոն թագաւորին ուղղուած ինքնաջատագովական թուղթը) լի են Տիեզերական Եկեղեցին միաբանուած տեսնելու տեսական եւ գործնական գաղափարներով, ինչպէս նաեւ յախուռն ընդդիմախօսութեամբ՝ իր ժամանակ Հայ Եկեղեցում տեղ գտած այն նեղմիտ մտայնութիւնների դէմ, որոնցում գերիշխում էր ոչ այնքան մաքուր աստուածաբանութեան եւ առողջ եկեղեցաբանութեան ձգտումը, որքան ազգային-կրօնական ինքնուրոյնութիւնը չկորցնելու մարդկային մտավախութիւնը:

Ինչ վերաբերում է Յովհաննէս աւետարանչի ննջման պատմութեան մեկնութեանը, ապա կարելի է ասել, որ այն բացառիկ հոգեւոր-գրական արժէք է ներկայացնում՝ եզակի երեւոյթ լինելով ողջ Տիեզերական Եկեղեցու մեկնողական ժառանգութեան մէջ: Քանզի այս պատմութիւնը (որի յունարէն բնագիրը փաստօրէն չի պահպանուել) տեղ է գտել միայն Հայ Եկեղեցու լիակատար Աստուածաշունչ մատեաններում[1]: Այն նաեւ լայն գործածութիւն է ունեցել Հայ Եկեղեցու ծիսական-աստուածպաշտական համակարգում՝ տեղ գտնելով Ճաշոցներում եւ Ճառընտիրներում: Եկեղեցում ցայսօր Զեբեդեան որդիների տօնին, պատարագից առաջ, Ննջման պատմութիւնն ընթերցւում է ամբողջապէս, իսկ նրա որոշ հատուածներ զետեղուած են եկեղեցական երգարանում, անգամ՝ պատարագի տեքստում[2]:

Քրիստոսի **սիրելի աշակերտի** վախճանին վերաբերող այս խորհրդաւոր պատումը թէեւ համարւում է պարականոն, սակայն իր մէջ պարունակուող՝ ս. աւետարանչի ներանձնական սրբագործութեան վկայութեամբ յոյժ կարեւոր աստուածաբանական արժէք ունի: Այդ վկայութիւնը խիստ թանկ ու հարազատ է իւրաքանչիւր ճշմարիտ քրիստոնեայի համար, քանզի այն անմիջական օրինակ է եւ յորդոր՝ սեփական անձը նրա պէս անմնացորդ նուիրելու Աստուա-

1 Ներսէս Լամբրոնացու վարքը աշխարհաբար թարգմանութեամբ տե՛ս «Գանձասար» Բ, Երեւան, 1992, էջ 302:

2 Տե՛ս «Տեսութիւն աղօթից պատմութեան բանից ննջման Աստուածաբան աւետարանչին Յովհաննու՝ արարեալ Ներսեսի Լամբրոնացւոյ», Կ. Պոլիս, 1736:

1 Ինչպէս նշում է Յովսէփ վարդապետ Գաթրճեանը իր պատրաստած Պատմութեան քննական բնագրին նախորդող մատենագիտական ուսումնասիրութեան մէջ, շատ ձեռագրերում այն զետեղուած է Սուրբ Գրքի ամենավերջում՝ Յովհաննու Յայտնութիւնից անմիջապէս յետոյ, եւ կամ Յովհաննու Աւետարանի վերջաւորութեանը՝ Գործք առաքելոցից առաջ: Տե՛ս Յովսէփ վարդապետ Գաթրճեան, Հանգիստ երանելոյն Յովհաննու՝ ստուգեալ իբրեւ վաւերական, հանդերձ ծանօթութեամբք, Վիեննա, 1877: Մինչեւ քննական բնագրի այս հրատարակումը Պատմութիւնը տպագիր լոյս է տեսել Կոնստանդնուպոլսի (1805) եւ Վենետիկի (1859, 1860) Աստուածաշունչների վերջնամասում:

2 Տե՛ս Յովսէփ վարդապետ Գաթրճեան, նշ. աշխ., էջ 7:

ծութեանը: Մանաւանդ որ այդ նուիրումի պտուղը՝ իր բոլոր ճգնաւորական խստամբերութիւններով ու վշտերով հանդերձ, աննկարագրելի երանութեամբ լի կեանք է՝ **մեծ ուրախութիւն ի Տէր**: Եւ մի՞թէ ճշմարտապէս **արքայութիւն եւ արդարութիւն փնտրող** քրիստոնեան կարող է անտարբեր մնալ այս պատումի հանդէպ, որն իր խորքում ոչ թէ միայն աստուածաբան Յովհաննէսի, այլեւ առհասարակ ճշմարիտ քրիստոնէական կեանքի իւրայատուկ վերջաբան-վերջերգն է, աստուածամերձ եւ աստուածահաճ կեանքի յաղթական ամփոփումը:

Լամբրոնացին մեծ ակնածութեամբ է յանձն առել գրելու այս վկայութեան մեկնութիւնը՝ գիտակցելով նրանում անթեղուած խորհրդական ծալքերի գործնական նշանակութիւնը: Նրա այս մեկնութիւնը աչքի է ընկնում «ներքին մարդու» սրբագործութեան ընթացքը բացայայտող վարդապետական խորութեամբ: Եւ **աստուածային իմաստներին** վերաբերող իր մեկնողական հանճարը նա զուգակցում է ճշմարիտ հովուի մտահոգութեան հետ՝ խօսքն ուղղելով դէպի ընթերցողի սիրտը՝ այն իմաստութեամբ եւ աստուածպաշտական գիտութեամբ յագեցնելու հայրական բաղձանքով: Իր մեկնութեամբ Լամբրոնացին ամենից առաջ նպատակ է ունեցել ընթերցողին ոչ թէ սոսկ տեսական իմացութիւններ մատուցել, այլ նրա առջեւ բացայայտել այս պատումի մէջ նշանական եւ սեղմ խօսքերով «ծածկագրուած» ներքին աստուածպաշտական կեանքի խորհուրդները եւ մեր սրտում տպաւորել աստուածմերձեցման վերընթացն ապահովող հիմնորոշ սկզբունքները:

***

Ստորեւ ներկայացուող մեկնութեան աշխարհաբար թարգմանութիւնից առաջ զետեղուած է Յովհաննու ննջման պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնն ամբողջապէս՝ հրատարակուած Աստուածաշնչերում տրուած վերտառութեամբ («Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի»): Թարգմանութեան համար ուսումնասիրուել է նաեւ Ց. վրդ. Գաթրճեանի նշուած աշխատութեան մէջ ներկայացուած «Հանգիստ երանելւոյն Յովհաննու» վերնագիրը կրող քննական բնագիրը: Սակայն հիմնականում այն համապատասխանեցուած է Լամբրոնացու մեկնութեան հիմք հանդի-

սացած տարբերակին: Ինչ վերաբերում է մեկնութեան թարգմանութեանը, ապա այն հիմնականում կատարուել է նշուած հրատարակութեան հիման վրայ եւ միայն մի քանի կասկած յարուցող բառերի առիթով ստիպել անդրադառնալ ձեռագրային տարբերակներին: Վերջիններիս թռուցիկ դիտարկումը ցոյց տուեց, որ կան ոչ միայն առանձին բառերի, այլեւ ամբողջական պարբերութիւնների տարընթերցումներ, որոնց նախընտրութիւնը երկարատեւ մատենագիտական եւ աղբիւրագիտական աշխատանք է պահանջում: Այնուհանդերձ նպատակայարմար գտանք չյապաղել եւ օր առաջ ընթերցողին ներկայացնել այս սքանչելի մեկնութիւնը Սեդա Ստամբոլցեանի աշխարհաբար թարգմանութեամբ՝ երկի վերախմբագրումը կամ նորովի թարգմանումը (հիմնուած քննական բնագրի վրայ) թողնելով ապագային:

Տիգրան Խաչատրեան

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՆՆՋՈՒՄԸ

Ա

Երանելի Յովհաննէսը եղբայրների հետ էր մեծ ուրախութեամբ ի Տէր: Եւ մի օր, որ կիրակի էր, եւ եղբայրները ժողովուել էին, սկսեց նրանց հետ այսպէս խօսել.

«Եղբայրնե՛ր եւ ծառայակիցնե՛ր եւ Տիրոջ արքայութեանը հաղորդակիցնե՛ր: Գիտէք, թէ Աստուած քանի՛ զօրութիւններ տուեց ձեզ իմ միջոցով, քանի՛ նշաններ, քանի՛ շնորհներ, որպիսի՛ վարդապետութիւն, վերակացութիւն, հանգիստ, սպասաւորութիւն, փառք, հաւատ, միաբանութիւն, ձիրք, պարգեւ: Ձեզ պարգեւուած որքա՜ն շնորհներ տեսաք ձեր աչքերով, որոնք այս աչքերին՝ տեսանելի եւ այս ականջներին լսելի չեն:

Բ

Արդ, հաստատուեցէ՛ք Նրա մէջ՝ յիշելով Նրան ձեր բոլոր գործերում: Գիտէք, թէ Տէրն ինչ պատճառով մարդկանց կարգեց մատակարարութեան խորհուրդը: Ինքը Տէրն է ձեզ աղաչում իմ միջոցով՝ կամենալով, որ մնաք առանց թշնամանքի, առանց նենգութեան, առանց անառակութեան: Քանզի գիտէ ե՛ւ ձեր թշնամանքը, գիտէ ե՛ւ անարդարութիւնը, գիտէ ե՛ւ նենգութիւնը, գիտէ ե՛ւ անառակութիւնը՝ Իր պատուիրանները ձեր անգոսնելու պատճառով: Արդ, թող ձեր պատճառով չտրտմի Բարերարը, Գթածը, Ողորմածը, Սուրբը, Ցստակը, Անարատը, Անապականը, Միակը, Մին, Անփոփոխը, Ստոյգը, Աննենգը, Անցաւումը: Ով բոլոր ճառելի եւ իմանալի անուններից վեր է՝ իմ Յիսուս Աստուած: Թող ուրախ լինի ձեր բարւոք կրօնաւորութեամբ: Թող խնդայ ձեր սուրբ կեանքով: Թող հանգստանայ ձեր պարկեշտ վարքով: Թող անհոգ լինի ձեր ժուժկալութեամբ: Թող հիանայ ձեր միաբանութեամբ: Թող ուրախանայ ձեր զգաստութեամբ: Թող բերկրի Իր հանդէպ ձեր սիրով:

Գ

Այս եմ այժմ ասում ձեզ, եղբայրնե՛ր. փութացէ՛ք դէպի ձեր առաջիկայ գործը՝ Տիրոջ մէջ արդէն իսկ կատարուած: Քանզի այլեւս ի՞նչ ունեմ ձեզ ասելու. Աստծուց ունէք ձեր գրաւականը: Ստացել էք Նրա բարերարութեան տուրքերը, ակնկալում էք Նրա անխուսափելի Գալուստը: Որովհետեւ եթէ այլեւս չմեղանչէք, անգիտութեան մէջ գործածները կների ձեզ: Իսկ եթէ, Նրան գիտենալով եւ Նրանից ողորմութիւն ստանալով, նոյն կերպ ապրէք, [ձեր] նախկին [մեղքերը] եւս չի ների ձեզ, եւ ողորմութիւն չէք ընդունի Նրանից»:

Դ

Եւ, այս ասելով, սկսեց աղօթել այսպէս.

«Ո՛վ [Դու], որ այս պսակը հիւսեցիր Քո հիւսամբ, Յիսո՛ւս: Ո՛վ [Դու], որ այս բազում ծաղիկները միացրիր Քո անթառամելի ծաղկին: Ո՛վ [Դու], որ սերմանեցիր Քո այս կենարար խօսքերը: Ո՛վ [Դու], որ Քո ծառաների միակ խնամակալն ու բժիշկն ես, որ ձրի ես բժշկում: Ո՛վ [Դու], որ միակդ ես բարերար եւ անամբարտաւան: Ո՛վ [Դու], որ միակդ ես ողորմած եւ մարդասէր: Ո՛վ [Դու], որ միակդ ես փրկիչ եւ արդար: Ո՛վ [Դու], որ միշտ ես, ամենքի մէջ եւ ամէնուր մերձ ես, Աստուա՛ծ իմ Յիսուս: Դու Քո պարգեւներով պարուրում ես բոլոր նրանց, ովքեր Քեզ են յուսացել: Ո՛վ [Դու], որ գիտես մեր չարախօսի ամէնուրեք [արուող] մեքենայութիւններն ու բռնութիւնը»:

Ե

Եւ ապա, հաց խնդրելով, գոհացաւ այսպէս.

«Ինչպիսի՞ օրհնութիւն, ինչպիսի՞ գոհութիւն կամ ինչպիսի՞ պատարագ անուանենք այս հացը բեկանելիս, եթէ ոչ՝ միայն Քեզ, Յիսո՛ւս: Փառաւորում ենք, Տէ՛ր, Քո յայտնած Հօրդ անունը: Փառաւորում ենք Քո դուռն մուտքը: Փառաւորում ենք Քո Յարութիւնը, որ Քեզանով ցոյց տրուեց մեզ: Փառաւորում ենք Քո ճանապարհը: Փառաւորում ենք Քո սերմը, խօսքը, շնորհները, հաւատը, աղը, անխոս մարգարիտը, գանձը, արօրը, ուռկանը, մեծութիւնը, որ մե՛զ համար կոչուեցիր մարդու Որդի. ճշմարտութիւնը, հանգիստը, գիտութիւնը, զօրութիւնը, պատուիրանը, համարձակութիւնը, ազատութիւնը, դէպի

Քեզ փախուստը: Որովհետեւ Դու ես, Տէ՛ր, անմահութեան արմատը, անապականութեան աղբիւրը եւ յաւիտեանների հիմքը: Որ այս ամէնը կոչուեցիր մեզ համար, որպէսզի մենք, սրանցով կոչելով Քեզ, ճանաչենք Քո մեծութիւնը, որն անտեսանելի է այս ժամանակում եւ տեսանելի է միայն սուրբերին, եւ միայն Քո մէջ է մարգը կերպարանուած»:

Զ

Եւ, հացը բեկանելով, պարզեց նրանց՝ իւրաքանչիւր եղբօր վրայ աղօթք անելով, որ արժանի լինեն շնորհներին եւ սուրբ գոհութեանը: Ինքը նոյնպէս ճաշակեց եւ ասաց, թէ՝ ինձ եւս թող մաս լինի ձեզ հետ, ի՛մ սիրելիներ, եւ Տիրոջ խաղաղութիւնը թող ձեզ հետ լինի: Եւ ասում է Բիւռոսին. «Քեզ հետ վերցրու եղբայրներիցդ երկուսին երկու որթերով ու բրիչներով հանդերձ եւ ե՛կ իմ ետեւից»: Եւ Բիւռոսը առանց յապաղելու արեց այն, ինչ հրամայեց նրան Աստուծոյ ծառայ Յովհաննէսը:

Եւ երանելի Յովհաննէսը, ելնելով տանից, գնում էր՝ դռան առջեւ [ժողովուած] բազմութեանը հրամայելով մեկուսանալ իրենից: Եւ, հասնելով մի եղբօր շիրմի, ասաց պատանիներին. «Բրեցէ՛ք, որդեակնե՛ր», եւ նրանք բրում էին: Իսկ նա շտապեցնում էր նրանց ու ասում. «Ձեր բրածը թող աւելի խոր լինի»: Եւ մինչ բրում էին, Կեանքի խօսքն էր ասում նրանց եւ յորդորում տանից իր հետ եկածներին՝ նրանց շինելով ու հաստատելով Տիրոջ մեծութեան մէջ եւ աղօթք անելով իւրաքանչիւրի վրայ: Իսկ մենք բնաւ ոչինչ չէինք հասկանում:

Է

Եւ երբ պատանիներն աւարտեցին շուրջանակի բրելը, ինչպէս եւ կամենում էր, երանելին մերկացաւ հանդերձներից, որ հագել էր, եւ ընկողմանեց խորափիտում՝ իբրեւ անկողնու մէջ՝ մնալով միայն նափորտով: Եւ, իր ձեռքերը բարձրացնելով դէպի վեր, աղօթեց այսպէս.

«Ո՛վ [Դու], որ ընտրեցիր մեզ՝ հեթանոսներին առաքելու: Ո՛վ [Դու], որ առաքեցիր մեզ աշխարհ, Աստուա՛ծ: Ո՛վ [Դու], որ Քեզ ցոյց տուեցիր Քո մարգարէների միջոցով: Ո՛վ [Դու], որ երբէք դադար չտուեցիր, այլ միշտ ապրեցնում ես հզօրներին: Ո՛վ [Դու], որ

Քեզ ճանաչեցրիր բոլոր բնութիւնների միջոցով: Ո՛վ [Դու], որ անգամ անասուններին քարոզուեցիր: Ո՛վ [Դու], որ անապատացած ու վայրի հոգին դարձրիր զգօն եւ հանդարտ: Ո՛վ [Դու], որ այն ծարաւածին Քո խօսքով Քեզ իսկ տուեցիր: Ո՛վ [Դու], որ այն մեռեալին արագ յայտնուեցիր: Ո՛վ [Դու], որ արագօրէն ցոյց տրուեցիր անօրինութեան մէջ ընկղմուածին: Ո՛վ [Դու], որ սատանայի կողմից բոլորովին այն վտարուածին ճանաչել տուեցիր [Քեզ՝] Փրկչիդ: Ո՛վ [Դու], որ յաղթեցիր Քեզ ապաւինածների հակառակորդին: Ո՛վ [Դու], որ տուեցիր նրան Քո ձեռքը եւ բարձրացրիր դժոխական իրերից: Ո՛վ [Դու], որ չթողեցիր նրան կենցաղավարել մարմնի մէջ: Ո՛վ [Դու], որ ցոյց տուեցիր նրան իր թշնամուն: Ո՛վ [Դու], որ սրբեցիր Քո գիտութիւնը, Աստուա՛ծ իմ Յիսուս: Ո՛վ [Դու], որ երկնքից վեր [բնակուող] սուրբերի Հայրն ես եւ երկնաւորների Աստուածը, եթերականների օրէնքդ ես եւ օդականների ընթացքը, երկնաւորների պահապանը եւ սանդարամետականների երկիւղը: Ընդունի՛ր Քո Յովհաննէսի՝ թերեւս Քո կողմից արժանացածի հոգին:

Ը

Ո՛վ [Դու], որ մինչեւ այժմ ինձ եւս կանանց հետ խառնակութիւնից զերծ պահեցիր: Ո՛վ [Դու], որ կնոջը նայելը ծանր համարել տուեցիր ինձ: Ո՛վ [Դու], որ առժամանակեայ կեանքից փրկեցիր ինձ եւ առաջնորդեցիր դէպի մշտնջենաւորները: Ո՛վ [Դու], որ մարմնաւոր աղտեղութիւնից հեռացրիր ինձ: Ո՛վ [Դու], որ ինձ ազատեցիր դառը մահուանից եւ հաստատեցիր միայն Քո մէջ: Ո՛վ [Դու], որ սանձեցիր իմ հոգու ծածուկ ախտերը եւ նրա յայտնի գործերը խափանեցիր: Ո՛վ [Դու], որ նեղեցիր եւ հալածեցիր իմ մէջ [եղող] խռովարարին: Ո՛վ [Դու], որ հաստատեցիր Քեզ մօտ [բերող] իմ անբիծ ճանապարհը: Ո՛վ [Դու], որ անսայթաք պահեցիր դէպի Քեզ [տանող] իմ շաւիղը: Ո՛վ [Դու], որ աներկմիտ պահեցիր Քո հանդէպ իմ հաւատը: Ո՛վ [Դու], որ սահմանեցիր ինձ Քո սուրբ գիտութիւնը: Ո՛վ [Դու], որ իւրաքանչիւր գործի արժանի վարձը հատուցեցիր: Ո՛վ [Դու], որ իմ հոգում դրեցիր Քեզանից առաւել պատուական չհամարել որեւէ ստացուածք:

Թ

Եւ արդ, Տէ՛ր իմ Յիսուս, [այն] մատակարարութիւնը, որ ընդունեցի Քեզանից, աւարտին հասցրի: Արժանի՛ արա ինձ Քո հանգստեանը՝ շնորհելով ինձ Քո ողորմութիւնը, որն անփախուստ եւ անճառ փրկութիւն է: Եւ արդ, Քեզ մօտ իմ գալու ժամանակ թող հուրն ընկերկի, խաւարը վանուի, վիհը տկարանայ, հնոցը խամրանայ, գեհենը շիջանի, չարի հրեշտակներն ամօթահար լինեն, դեւերը երկնչեն, իշխաններն անզօր դառնան, զօրութիւններն ընկճուեն, աջակողմեաններըը կենան, ձախակողմեանները չմնան, բանսարկուն պապանձուի, սատանան զարհուրի, Նրա սրտմտութիւնը տոչորուի, նրա մոլորութիւնը սուզուի. նրա տանջանարաններն ամաչեն, նրա յարձակումը դադարի, նրա մանուկները չարչարուեն, եւ նրա բոլոր արմատները դողդողան: Եւ տո՛ւր ինձ դէպի Քեզ [տանող] իմ այս ճանապարհը անբասիր եւ անբռնադատ աւարտել՝ ստանալու այն, ինչ խոստացար նրանց, ովքեր սրբութեամբ ապրեցին եւ պարկեշտութեամբ սիրեցին Քեզ»:

Ժ

Եւ ապա, խաչակնքելով իրեն եւ ասելով՝ Դո՛ւ եղիր ինձ հետ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, ընկողմանեց խորափիտում, ուր եւ տարածեց իր հանդերձը: Եւ, ասելով մեզ՝ խաղաղութի՛ւն ձեզ հետ, եղբայրնե՛ր, եւ մինչդեռ մենք ուրախ էինք ու լալիս էինք, իր հոգին աւանդեց Տիրոջ ձեռքը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՆՆՋՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔԻ ԽՕՍՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ՝ ԳՐՈՒԱԾ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՏԱՐՍՈՆ [ՔԱՂԱՔԻ] ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՅԱԿՈՎԿԱՑՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Պատուականութեանդ գիրը երկու անգամ հասաւ ինձ՝ Յովհաննէս Աստուածաբան առաքեալի աղօթքի քննութեան խնդրանքով: Եւ ես հնազանդութեամբ աշխատելը հեղգութեամբ լռելուց նախապատիւ համարեցի՝ հաւատալով, որ աստուածային իմաստներին [վերաբերող] խօսքը մարդկային արուեստի վաստակ չէ, եւ ո՛չ նրա պերճութիւնն է գովեստի արժանի, ո՛չ էլ նուազութիւնը՝ պարսաւի: Այլ իւրաքանչիւր ոք այն ունի ըստ իր հաւատի չափի՝ Նրանից, Ով զանազան շնորհներ է բաժանում մարդկանց, Ում գովութիւն է ընծայւում լսողներից: Եւ մենք, այս երկիւղի պատճառով խուսափելով, չծածկենք Նրա պարգեւը եւ ոչ էլ, նոյն նպատակով աստուածային [խորհուրդներից] յայտնելով, սեղանակապուտ եւ յափշտակող լինենք: Այլ ջանանք միշտ մնալ մարդկային նուաստութեան մէջ եւ Աստծունը վերագրենք Իրեն՝ խոնարհութեամբ պաշտպանուած՝ մատակարարելով Նրա փառքի համար:

Արդ, քանզի այս Յովհաննէսը մեր Փրկչի այն սիրելի աշակերտն է, որին եւ յանձնեց Աստուածածին Կոյսին, նախ այն արժան է գիտենալ, թէ նա ինչպէս կամ երբ հասաւ Եփեսոս իբրեւ ասիացիների լուսաւորիչ: Այլեւ նախ իմանալ, թէ ինչու միայն նա անուանուեց [Տիրոջ] սիրելի աշակերտ[1]*, ինչն այսպէս ենք կարծում:*

Յովհաննէսը եւ Յակոբոսը Փրկչի հայր անուանուած Յովսէփի դստեր որդիներն էին, եւ Յակոբոսը Յովհաննէսից տարիքով մեծ էր: Իսկ Յովհաննէսի մանուկ լինելը հաստատում է Քրիստոսի առընթե-

1 Տե՛ս Յովհ. ԺԴ 23, ԺԹ 26, Ի 2, ԻԱ 7, 20:

ղությամբ նկարուած պատկերների ձեւը, որով իմանում ենք, որ Յակոբոսը Քրիստոսից տարիքով մեծ էր կամ համահասակ էր [Նրան], իսկ Յովհաննէսը՝ մանուկ եւ երեխայ:

Եւ քանի որ Յովսէփի դուստրը ստնդեայ մանկան հետ եկել էր նրա տուն, ուր եւ Քրիստոս էր ապրում, հնարաւոր է, որ Յովհաննէսը Քրիստոսի ձեռքով է սնուել ու Նրա կողմից դաստիարակուել. եւ սիրելի է եղել ըստ նորածին մանկանց հանդէպ [տածուող] բնական սիրոյ: Այլեւ սիրուել է սրբուհի Աստուածածնի կողմից: Ուստի եւ նրանց (Յակոբոսի եւ Յովհաննէսի)՝ աշակերտ ընտրուած ժամանակ ամենքին յայտնի էր, որ [Յովհաննէսը] նախ Քրիստոսի մօտ է մեծացել, երբ [Քրիստոս] դեռ յայտնի չէր դարձել նշաններով: Դրա համար էլ նրան անուանում էին Վարդապետի սիրելի աշակերտ եւ որդեակ: Այս վստահութեամբ էր, որ [նրա] մայրն արքայութեան մէջ գահերէցութիւն էր համարձակ խնդրում [իր որդիների համար][1], որովհետեւ [իր] որդին [Տիրոջ] ձեռքով էր մեծացել: Իսկ այն, որ այսուհանդերձ սրանք նոյնպէս կանչուելով եկան աշակերտութեան[2], հակառակ չէ սաածներիս, քանզի մինչ այդ ո՛չ Քրիստոս էր յայտնել Իր Անձը, եւ ո՛չ էլ սրանք էին առանձնացել Նրա մօտ. այլ, Նրա կողմից դաստիարակուելով, մնացին իրենց հայր Զեբեդեոսի հետ, իսկ Քրիստոս՝ Յովսէփի: [Իր] Մկրտութիւնից յետոյ Տէրը լքեց Յովսէփի տունը եւ նրանց [էլ] հրամայեց լքել իրենց հօրն ու հետեւել Իրեն: Այնուհետեւ [Իր] բոլոր խորհուրդները [կատարելիս] աշակերտներից միայն երեքին էր առանձին վերցնում Իր հետ, այսինքն՝ նրանց եւ Պետրոսին: Այս եւս չպէտք է թողնել առանց քննութեան, որովհետեւ բարիքների եւ իմաստութեան Աղբիւրի կողմից ինչպէ՞ս կարող էին առանց խորհրդի կամ մարդկային աչառանքով գործեր կատարուել: Իսկ եթէ մէկն ասում է, [թէ այդպէս էր վարւում,] որովհետեւ նրանք աւելի շատ էին սիրում Իրեն, կամ՝ [որովհետեւ] Յուդայից էր խորշում, [ապա] սրանով հարցը չի լուծւում: Որովհետեւ անկարելի էր, որ միայն [Իրեն] սիրողին սիրէր Նա, Ով այսպէս չօրինադրեց, կամ՝ որ Իր խորհուրդները թաքցնէր [Յուդայից] եւ ատելութեան նիւթ ընձեռէր նրան: Այլ քանի որ երկնքից էր եւ նրա դասերը սահմանողը, կամեցաւ երկնաւորների՝ Իր պատուին [կատարուող] պաշտամունքի կարգը

1 Տե՛ս Մատթ. Ի 20-22:

2 Տե՛ս Մատթ. Դ 21-22:

երկրի վրայ եւս աղօտ կերպով օրինակել: Քանզի սովորել ենք, որ այնտեղ դասերից մէկի երեք կարգերը ամենից առաւել մօտ են [Աստուածութեանը]՝ Նրան ծառայելու համար, որոնք կոչւում են աթոռներ, քերովբէներ եւ սերովբէներ: Եւ Աստուածութիւնից [ճառագող] լուսափայլ գիտութիւնը նրանց միջնորդութեամբ է այնտեղից հեղւում ստորին դասերի վրայ: Իբրեւ դրանց ապացոյց կամ, աւելի ճիշտ, [դրանց] համահաւասար՝ ընտրեց երեքին՝ միշտ, անընդմիջաբար հաղորդուելու Իր խորհուրդներին: Ինչի համար էլ Նրա աստուածային էութեան բնութեան մասին Հոգին թոյլ չտուեց ճառել այլ մէկի, բացի միայն Յովհաննէսից, որն ընդունեց այն վերինների անընդմիջաբար ծառայութեան հաւասարութիւնը եւ գիտութիւնը շնորհեց մեզ՝ ըստ մարդկանց՝ [այն] տանելու կարողութեան. այն գիտութիւնը, որն ինքն իր մէջ անչափ ծովացած ունէր՝ առաւել, քան աշխարհը կարող է տանել, ինչպէս եւ [ինքն] ասաց: Այսպէս է նաեւ վերինների օրէնքը. քանի որ այն, ինչին իրենք մեծ առատութեամբ հաղորդ են լինում, տալիս են ստորիններին, որքան որ կարող են տանել:

Իսկ որ Աստուածածինը Քրիստոսի կողմից յանձնուեց իրեն, ինքն է պատմում[1], ինչպէս նաեւ այն, որ սուրբ Կոյսին իր մօտ պահեց եւ չթողեց նրան սպասաւորելու պաշտօնը մինչեւ նրա վերափոխումը: Եւ սա յայտնի է Պօղոսի ասածից, որ գրում է գաղատացիներին. «Տասնչորս տարի յետոյ,- ասում է,- ելայ Երուսաղէմ տեսնելու Յակոբոսին, Կեփասին եւ Յովհաննէսին»[2]: Իսկ նախքան այդ [Պօղոսը] Բառնաբասի հետ աւետարանելու էր գնացել Ասիա՝ ըստ Գործք առաքելոցի պատմութեան[3], որից յետոյ էլ [աւետարանելու գնաց] Տիմոթէոսի հետ: Եւ Տիմոթէոսին կարգեց եփեսացիների Եկեղեցում, որին [Տիմոթէոս] առաքեալն ուսուցանեց նախքան Յովհաննէսի այնտեղ գնալը: Իսկ Յովհաննէսը Տիրամօր վերափոխումից յետոյ եկաւ Եփեսոս եւ Ադրիանոս արքայի կողմից աքսորուեց Պատմոս կղզի, [որտեղից] վերստին Եփեսոս ուղարկուեց Տրայիանոսի կողմից: Այս ժամանակ էլ Աստուած կամեցաւ նրա երկարատեւ [կեանքի] ընթացքը աշխարհից փոխադրել երկինք: Եւ [մենք] նախքան վերափոխումը ընդունեցինք իր կողմից մատուցուած այս աղօթքը:

1 Տե՛ս Յովհ. ԺԹ 26-27:

2 Տե՛ս Գաղ. Բ:

3 Տե՛ս Գործ. ԺԱ-ԺԵ:

Սակայն այս խօսքը, ինչպէս եւ միւս առաքեալների վկայական նահատակութիւնների ճառումը, ո՛չ սկիզբ ունի եւ ո՛չ առաջին վարքերի պատմութեան կերպը, որ յատուկ է պատմագիրներին: Եւ այս մասին ճշգրիտ ոչինչ ասել չենք կարող, բացի միայն՝ որ ամբողջական պատմութիւնից հատուած է մեզ հասել, ինչպէս որ Թովմայինն է: Որովհետեւ այս պատմութեան սկիզբը ուշ ժամանակներում գտնուեց, կամ թէ առաքեալների ժամանակ [նրանք], ովքեր իբրեւ ուսուցիչ ունէին Հոգին եւ [գիտէին] ամբողջական պատմութիւնը, չեն հոգացել գրով յիշատակ [թողնել], ինչպէս երկնային խորհուրդների մէջ յարակայողների սովորութիւնն է: Այլ նրանցից իւրաքանչիւրը նկարագրեց միայն վախճանի կերպը, որն այսպիսին է:

Ա

Երանելի Յովհաննէսը եղբայրների հետ էր մեծ ուրախութեամբ ի Տէր:

Ասում է «էր» եւ չի նշում, թէ որտեղ կամ որ քաղաքում, սակայն գիտենք, որ Եփեսոսում էր, որովհետեւ Եւսեբիոսը նրա ննջելը այնտեղ է վկայում եւ [ննջման] տեղը յայտնում, որ այսօր մեծ փառքով պատուվում է: Որովհետեւ, ինչպէս ասուեց, [Յովհաննէսն] այնտեղ էր Պատմոս կղզուց վերադառնալուց յետոյ՝ բազում տարիներով ծերացած: Քանզի թագաւորների ժամանակագրութիւնը սրանում է հաստատում մեզ, որովհետեւ նա տեսաւ ե՛ւ Տիտոսի կողմից Երուսաղէմի աւերումը, ե՛ւ աւետարանիչների Աւետարանները: Եւ բազում օրեր եղբայրների հետ անցկացրեց՝ Քրիստոսի կողմից [իբրեւ] նշխար-շնորհ թողնուելով աշխարհին: **Մեծ ուրախութեամբ ի Տէր.** «Ի Տէր» է ասում ուրախ լինելը եւ ո՛չ ըստ մարմնի, որովհետեւ աստուածային եւ մարդկային ուրախութիւնները հակառակ են [միմեանց]: Քանզի ով Աստուծով է ուրախ, յոյսով ցնծացած է եւ մարմնով՝ չարչարուած: Իսկ ով [ուրախ է] աշխարհով, մարմնով հեշտացած է եւ յոյսով՝ վշտացած: Նա եւ իւրայիններն ուրախ էին Քրիստոսի հանդէպ յոյսով՝ ուրախութեան մէջ, որն անզգջանալի է եւ առանց ընդդիմութիւնների: Որովհետեւ մարմնին հակառակ բոլոր իրողութիւնները [այդ ուրախութիւնն] աճեցնողներն են եւ ոչ թէ նուազեցնողները՝ ըստ այս խօսքի. «Ինչպէս որ Քրիստոսի չարչարանքները շատացան մեր մէջ, նոյնպէս եւ

Քրիստոսի միջոցով առաւել կլինի մխիթարութիւնը»[1]: Եւ Ինքը Քրիստոս ասաց. «Ուրա՛խ եղէք, երբ ձեզ նախատեն»,[2] եւ ոչ թէ՝ երբ չեն չարչարի: Երանելի առաքեալը եղբայրների հետ ուրախ էր ըստ ա՛յս խօսքի, այսինքն՝ [ուրախ էր] Քրիստոսի չարչարակցութեամբ:

Եւ մի օր, որ կիրակի էր, եւ եղբայրները ժողովուել էին, սկսեց նրանց հետ այսպէս խօսել:

Կիրակին մեր լեզուով թարգմանւում է տէրունական, եւ որովհետեւ հրեաները սովորութիւն ունէին շաբաթ օրը թողնել ամէն գործ, միասին ժողովուել եւ կրթուել Օրէնքի ունկնդրութեամբ, առաքեալները շաբաթ օրուայ այս պատիւը փոխադրեցին Քրիստոսի լուսաւոր Յարութեան միաշաբաթին եւ այդ օրն էին ժողովւում ըստ հրէական սովորութեան: Այս խորհրդով էլ հեռաւոր վայրում գտնուող եղբայրները ժողովուել էին առաքեալի մօտ՝ միմեանց հետ հաղորդակցութեամբ պատուելու միաշաբաթը: Եւ նրա վերափոխման մասին, որը յայտնեց, ոչ ոք չգիտէր, իսկ նա, նախքան խորհրդական հացի բեկանելը, ըստ սովորութեան սկսեց վարդապետել նրանց:

Եղբայրնե՛ր եւ ծառայակիցնե՛ր եւ Տիրոջ արքայութեանը հաղորդակիցնե՛ր:

Ինչպէս որ մի արիւնից ծնուածները եղբայրներ են կոչւում ըստ մարմնի, այդպէս էլ Քրիստոսի մէջ մի Հոգուց ծնուածներս եղբայրներ ենք կոչւում ըստ հոգու: Իսկ ով չի նորոգուել այս ծննդեան մէջ, հեռու եւ օտար է եղբայր կոչուելուց, ինչպէս առաքեալն է ասում: Բայց քանի որ նրանք ամէնքն էլ այսպիսին էին, ուստի եւ եղբայրներ է անուանում: Իսկ աւելացնելով «եւ ծառայակիցնե՛ր»՝ բացատրում է ժառանգաւորութեան աստիճանին վիճակուելը: Քանզի բոլոր պաշտօնեաներն էլ, ըստ ձեռնադրութեան իւրաքանչիւր կարգի, քահանայ թէ սարկաւագ, համագործ են միմեանց եւ մի ծառայութեան մէջ են: Սրանք ամէնքն էլ՝ եղբայրներն ու ծառայակիցները, նաեւ հաղորդակիցներ են Տիրոջ արքայութեանը՝ ըստ տրուած անուան խոստման. «Միայն սրանց համար չէ, որ աղաչում եմ, այլեւ՝ սրանց խօսքով բոլոր Ինձ հաւատացողների, որպէսզի մի լինեն, ինչպէս Դու, Հա՛յր, Իմ

1 Տե՛ս Բ Կոր. Ա 5:

2 Տե՛ս Մատթ. Ե 11-12:

մէջ ես, եւ Ես՝ Քո մէջ»[1]: Տեսնո՞ւմ ես ամենքի ճշմարիտ հաղորդութիւնը անվախճան արքայութեան փառքին:

Գիտէք, թէ Աստուած քանի՛ զօրութիւններ տուեց ձեզ իմ միջոցով, քանի՛ նշաններ, քանի՛ շնորհներ...

«Գիտէք» ասելով՝ արթնացնում է նրանց՝ վերստին յիշելու նախապէս սովորած արուեստները[2], որպէսզի, դրանք մտաբերելով, նորից [իրենց] ներսը՝ սրտի մէջ առնեն այժմ ասած խօսքերի վկայութիւնը: Գիտէք, թէ Աստուած քանի՛ զօրութիւններ տուեց ձեզ իմ միջոցով. սրանով խօսքին անբաւութեան իմաստ է տալիս. քանի որ այնքա՞ն գիտէին, որ չէին կարող չափել կամ թուել, այլ որոշ բաներ մոռանում էին: Սակայն այս, ասում է, Աստծուց էր տրուած եւ իմը չէր. ես գործիք էի, իսկ Նա՝ գործը կատարողը: Քանի՛ նշաններ, քանի՛ շնորհներ. այս՝ զօրութեան եւ նշանների շնորհը մարմնական արուեստ է եւ զգալի՛ աչքերի հաւատ, որն առաքեալները տալիս էին աշակերտողներին՝ իբրեւ վկայութիւն իմանալիների մասին [ասուած] խօսքերի: Ուստի նախ զգալին ու երեւելին է ասում եւ ապա աւելացնում այն, ինչի համար եղաւ այս:

...որպիսի՛ վարդապետութիւն, վերակացութիւն, հանդիստ, սպասաւորութիւն...

Նշաններից յետոյ յիշեցնում է նաեւ վարդապետութիւնը, որը հոգո՛ւ մխիթարութիւն եւ ուրախութիւն է: Եւ թէ սա որքան պատշաճ եղաւ, յանձնում է նրանց հաւատի գիտութեանը, որովհետեւ երբ լսողը ճշմարտութեան վկայ է լինում, ասողը այլ վկայութիւնների կարիք չի ունենում հաստատելու համար: Վերակացութիւն, հանդիստ, սպասաւորութիւն. զանազան կերպերով պէտք է իմանալ, թէ վարդապետութեան պտուղը այս է՝ աշակերտներին վերակացու լինելը եւ նրանց բոլոր թերութիւններն ուղղելը: Առում է՝ արեցի այս: Իսկ հանդիստն [այն] է, որ վարդապետը խափանում է [աշակերտների]՝ տարակուսական կարծիքների մէջ ծփացող խորհուրդները եւ ազատում խռովութիւնից: Սպասաւորութիւն. այսինքն՝ ուսուցանելով ծառայել, դաստիարակել եւ կատարեալ իմաստութեան հասակի չափին հասցնել:

...փառք, հաւատ, միաբանութիւն, ձիրք, պարգեւ:

1 Յովհ. ԺԷ 20-21

2 Այսինքն՝ նշաններ գործելը:

Սրանք աշակերտների՝ [իրենց] վարդապետի սպասաւորութեան սերմից տուած պտուղներն են. փառք՝ որովհետեւ նրա խօսքով սովորեցին հանդերձեալ փառքի խոստման մասին. հաւատ՝ որովհետեւ ոչ թէ սոսկ լսեցին այն, ինչպէս մարդկանցից շատերը, այլ վերակացութեամբ հաստատուեցին ասուած խօսքերի հաւատի մէջ. միաբանութիւն՝ որովհետեւ չյանդիմանուեցին, ինչպէս մի ժամանակ կորնթացիները՝ փառքի հաւատի գիտութեան մէջ տարակարծիք լինելու համար[1], այլ բոլորը մի խօսքի եւ մի շնչի մէջ մնացին. ձիրք՝ որովհետեւ այս հաւատից յետոյ իրենք նոյնպէս, ինչպէս առաքեալները, ձիրք ստացան՝ Աստուծոյ շնորհները՝ նշաններ գործելու եւ վարդապետելու. պարգեւ՝ որովհետեւ այս բոլոր չարչարանքների փոխարէն նրանց համար պատրաստուած է հանդերձեալ փառքի հաստուցումը, քանի որ այստեղինը ձիրք է եւ շնորհ, իսկ այնտեղինը՝ պարգեւ եւ հաստուցում: Բայց դու տե՛ս այս խօսքերի կարգի վայելչութիւնը. նախ՝ նշանների զօրութիւն, որով ընդունեցին վարդապետութիւնը. ապա՝ վարդապետութիւն, որը սովորեցին. սրանից յետոյ՝ նրանց բարեպաշտութեան պտուղը խօսքից. եւ պտղի հաստուցման պարգեւը Աստծուց, որ տալիս է այստեղ ճգնողների միջոցով:

Ձեզ պարգեւուած որքա՛ն շնորհներ տեսաք ձեր աչքերով, որոնք այս աչքերին՝ տեսանելի եւ այս ականջներին լսելի չեն:

Դարձեալ նրանց է թողնում բաշխուած շնորհներին վկայ լինելը, որովհետեւ՝ դուք տեսաք, ասում է, թէ որքան են, եւ գիտէք, որ անչափ են իմ միջնորդութեամբ ու վերակացութեամբ Աստծուց ձեզ տրուած [շնորհները]: Բայց ասելով, թէ այս աչքերին տեսանելի եւ ականջներին լսելի չեն՝ ոչ թէ իր [գործած] նշանների եւ վարդապետութեան մասին է խօսում, այլ դրանց միջոցով Աստծուց նրանց տրուած գիտութեան, որը տեսանելի է իմացական եւ ոչ՝ զգալի աչքերին: Սրա՞նք կարող են ծայրագոյն իմացմամբ լսել անդրանցական փառքի մասին եւ իմաստասիրել, քանզի այս զգայարանները զգալի իրերի միջնորդ եւ ուսուցիչ են եւ մեզ հասցնում են դրա՞նց գիտութեանը, իսկ Աստուած եւ Իր փառքն ու պարգեւները ոչ թէ զգալի են, այլ իմանալի: Ապա ուրեմն այնտեղինին հպւում են իմանալի աչքերն ու ականջները եւ ոչ՝ զգալի: Եւ սրանց՝ այնտեղ եւ այն գիտութեան

1 Տե՛ս Ա Կոր. Ա 11-14, Գ 1-11, Ը 2-9:

մէջ մտնելուն առաջնորդում են Աստուծոյ հանդէպ հաւատը եւ նրանից բխող յոյսն ու սէրը, որից յետոյ ձերբազատւում են զգայարանների հեշտութիւնից եւ պարապում միայն իմացականի գործառութեամբ: Երբ սա տեղի է ունենում, երեւում է այն լոյսն ու գիտութիւնը, որին չի կարող հպուել զգալի աչքը, եւ ընկալել՝ զգալի ականջը: Իսկ որ նրանք, ում ասում էր այս, հասել էին այսչափ գիտութեան, յայտնի է թղթից, որտեղ ասում է. «Գրում եմ ձեզ, հայրե՛ր, որովհետեւ դուք ճանաչեցիք Նրան, Ով սկզբից է»[1]: Բայց որովհետեւ մեր ժամանակներում իմանալիի տեսութիւնը յոյժ աղօտ է ու մոռացութեան մատնուած, չենք կարողանում հաւատալ նրա խօսքերին՝ անփորձ եւ անընտել լինելու պատճառով: Եւ օրինակ բերենք, որպէսզի թերեւս կարողանանք հաստատել այս սուրբի խօսքը, թէ կան այլ աչքեր եւ այլ ականջներ եւ նրանց այլ տեսութիւն, քան զգալիներինը:

Մարմնի ննջման ժամանակ սովորաբար ներքին մարդը երազ է տեսնում: Եւ [երազի մէջ] տեսածները նոյնութեամբ կան արթուն ժամանակ. եթէ [երազում] մարդ սիրելի կամ բարեկամ է տեսնում կամ իրեն՝ ուտելիս կամ ըմպելիս, դա ճշգրիտ ու հաւաստի տեսողութիւն է՝ առանց զգալի աչքերի, եւ լուրն էլ լսում է ոչ զգալի ականջներով: Եւ այսպէս, պէտք է ձերբազատուել զգայարանների հեշտութիւնից (ինչպէս նա, ով քնած է) եւ միտքը հաստատել Աստուծոյ գիտութեան եւ Նրա խոստման մէջ, որպէսզի այն աչքը, որի [տեսած] երազը հաւաստի եղաւ, նոյն հաւաստի տեսութեամբ տեսնի նաեւ Աստծուն եւ Նրա խոստացած փառքը: Որպէսզի երբ իր միտքը հարցնի, թէ՝ տեսա՞ր Աստծուն, վկայի նրան՝ տեսայ, ինչպէս որ երազի մասին է վկայում: Այսպիսի աչքերի տեսողութիւն են ունեցել բոլոր սուրբերը եւ այդպէս մերձեցել Աստծուն: Եւ [կամեցողը] կարող է պարապել ու սովորել այն դրա մասին գրուածների ընթերցմամբ:

Բայց որպէսզի ասածս ճշգրիտ լինի, [նշենք, որ] մտքի ձերբազատուելը զգայարաններից նշանակում է ոչ թէ աչքերով չնայելը, ականջներով չլսելը եւ կամ լեզուով չխօսելը, այլ այն, որ դրանցով խոկումը չցրուի: Այսինքն՝ չխոկալ, թէ՝ այս եմ խօսում կամ այն տեսնում, այլ իմացականը նրանց համախոհութիւնից ամբողջովին դուրս կորզել եւ միեղինութեամբ ուղղել իմանալի Աստծուն, Ով ոչ թէ զգալի

1 Տե՛ս Ա Յովհ. Բ 14:

աչքերին, այլ ա՛յն աչքերին է տեսանելի՝ ըստ այս երանելիի: Եւ սա իրագործւում է վերին շնորհով եւ մեր ջանքով, քանզի ոչ ոք առանց Սուրբ Հոգու չի կարող ասել «Տէր Յիսուս»[1]:

Բ

Արդ, հաստատուեցէ՛ք Նրա մէջ՝ յիշելով Նրան ձեր բոլոր գործերում:

Նրա մէջ հաստատուելը [վերաբերում է] յիշեալ իմացական աչքերին: Եւ Քրիստոս այսպէս ասաց. «Մնացէ՛ք Իմ մէջ, եւ Ես՝ ձեր մէջ»: Քանի որ Աստուած Հոգի է եւ ոչ մարմին, Նրա մէջ Հոգին է հաստատւում՝ այն ժամանակ, երբ ազատւում է մարմնի եւ զգայարանների կամքից: Այսպէս է խնդրում հաստատուածներին. «Յիշելով Նրան ձեր բոլոր գործերում»: Որովհետեւ երբ Աստուծոյ յիշատակը չի աղօտանում մտքում, դժուար չի լինում եւ կամքով լեզուին հպուելը[2] հրաժարելի խորհուրդների մէջ. այնուհետեւ արդէն կամքի ետեւից է գնում նաեւ մարմինը: Այսպէս ենք լինում Աստուծոյ տաճար, երբ մեր իմացականութիւնը լինում է Նրա յիշատակի մէջ:

Գիտէք, թէ Տէրն ինչ պատճառով մարգկանց կարգեց մատակարարութեան[3] խորհուրդը:

Եթէ քննում ենք այս եւ փորձում նրա ասածներն արտայայտել խօսքով, այն անցնում է սահմանը եւ չի հասնում խորհրդի լրմանը: Ուստի համառօտ ասենք:

Աստուած արդար է եւ մարդուն ստեղծեց բարին ու չարը ճանաչող եւ անձնիշխան: Իսկ նա, ինքնակամօրէն թողնելով բարին, հետեւեց չարի պատրանքներին: Այս պատճառով դատապարտուեց ըստ Աստուծոյ արդարութեան: Սրանից յետոյ մարդու ծնունդներից ոչ ոք այնպէս արդար չեղաւ, ինչպէս Աստուած էր նրան ստեղծել, այլ մանաւանդ զարգացան չարագործութիւնների մէջ: Եւ նրանց մէջ գործում էր սատանայի չարութիւնը եւ ոչ թէ [մարդկային] բնութիւնը, որն Աստուած անմեղ ստեղծեց: Այլ, ինքնակամօրէն թողնելով բարին,

1 Տե՛ս Ա Կոր. ԺԲ 3:

2 Այսինքն՝ աղօթելը:

3 Մատակարարութիւն - տնօրինութիւն, բաշխում, խնամածութիւն, ծառայութիւն

ձգտում էին դէպի մեղքերը: Եւ այդ կամքի յորդորիչը թշնամին էր ու նրանց մասին չարախօսում էր Աստուծոյ առաջ, թէ նրանց կամքն ու բնութիւնն են մեղանչական: Իսկ մարդկանցից ոչ ոք չկար, որ բացայայտէր նրա սուտը, որովհետեւ բոլո՛րը մեղանչեցին:

Աստուած առաքեց Իր Որդուն, որ գալով՝ այս մարմինը փրկելու համար ծառայ եւ սպասաւոր եղաւ նրան եւ ջատագով՝ այն արդար ստեղծող Աստծուն: Ուստի առաւ մարմին ու հոգի եւ, ինչպէս ամէն մարդ, մարմնով կրեց մարմնի կրքերը, իսկ հոգով՝ հոգունը: Եւ կրելիս չմեղանչեց, որովհետեւ Աստուածութեան լոյսը միացած էր այս խաւար բնութեանը: Եւ երբ սատանան մարտնչում էր՝ որպէս թէ խաւար [ստեղծուած] բնութիւնը գայթակղելու համար, Լոյսը տեսնում էր պատրանքը եւ տեղի չէր տալիս՝ ըստ [այն] խօսքի. «Լոյսը լուսաւորում էր խաւարի մէջ (այսինքն՝ այս մարմնի), եւ խաւարը (այսինքն՝ սատանան) նրան հասու չեղաւ»[1]: Երկուսին էլ հասու չեղաւ. որովհետեւ չկարողացաւ ո՛չ մարմնին հասու լինել մեղքերով եւ ո՛չ Աստուածութեանը, որ մարմնին էր միացած՝ տեղեակ լինել: Քանզի «այս աշխարհի իշխաններից ոչ ոք,- ասում է,- չճանաչեց Նրան»[2]. որովհետեւ եթէ ճանաչէին, փառքի Տիրոջը խաչ չէին բարձրացնի եւ երկմտանքով Նրան Աստուծոյ Որդի ասի:

Արդ, երբ աւարտին հասցրեց մարմնի անմեղութիւնն ապացուցելու սպասաւորութեան խորհուրդը եւ մեղքերին թոյլ չտուեց խառնուել նրա բնական կրքերին, այլ մարմնով ու հոգով մնաց անմեղ եւ ամբողջական, այդ անմեղ մարմինը Իր կամքով պատարագեց Հայր Աստծուն բոլորի մեղքերի [թողութեան] համար: Եւ այդ մարմնի մէջ ընդունեց մեղքերի պատուհասն ու անէծքը՝ մահը, որ [Իրեն] մերձենալու իշխանութիւն չունէր, եւ անէծք անուանուեց մեզ համար: Եւ մեղքերից ու այն անէծքից, որը սատանան դրեց առաջին Ադամի մէջ, Երկրորդ Ադամը սրբեց մեզ եւ արդարութեամբ դատապարտեց մեր մեղքերի պարտական պատճառին ու դաւաճանին: Քանզի այն մէկ մարմինը ցոյց տուեց, որ բոլոր մարմիններն իրենց կրքերով անմեղ կլինէին, եթէ դու, [մա՛րդ], չպատրուէիր:

1 Յովհ. Ա 5

2 Տե՛ս Ա Կոր. Բ 8:

Եւ Հայրը դատաւոր եղաւ այս բանին եւ իրաւունքով արդարացրեց Որդու մատակարարութիւնը: Նրանով պատուեց մեր յանցանքների [գիրը]. Նրա մահուամբ ներուեցին ամենքի մեղքերը, սատանան մնաց մեր մեղքերի դատապարտութեան տակ, եւ մենք արդարացանք Քրիստոսով: Որովհետեւ ինչպէս որ «մի մարդով,- ըստ առաքեալի,- ամէնքը դատապարտուեցին, այսպէս եւ Մէկի արդարութեամբ ամէնքն արդարացուեցին կեանքի համար»[1]: Սակայն կեանքը լինում է Ադամի պարտքերը հատուցելուց յետոյ, ինչպէս որ Քրիստոս արեց. որովհետեւ նախ մեռաւ եւ ապա կենդանացաւ: Այսպէս եւ մենք, որ նախ ըստ մարմնի ծնուեցինք Ադամից եւ դրանից յետոյ հոգով՝ Քրիստոսից, պէտք է հին հօր բնութեամբ մեռնենք եւ ապա յառնենք նոր Հօր [բնութեամբ]: Եւ որովհետեւ երկրորդ կեանքի այս յոյսը հաստատուեց Նրա կողմից, մեր կամքով մեռանք Աւազանի ջրում այս աշխարհի կեանքի ու նրա հեշտութիւնների համար, ինչպէս որ Նա արեց, եւ այն կեանքի յոյսն ունենք ու կամքով այս աշխարհից չենք:

Արդ, ասում է, պէտք է գիտենաք այս ամէնը եւ սրա հետ կապուած բաները: Եւ որովհետեւ Քրիստոս մեր բնութիւնը անմեղ ցոյց տուեց, պէտք է միշտ անմեղութեամբ ջանալ Քրիստոսի եւ Նրա արդարութեան ջատագովը լինել եւ ոչ թէ մեղանչելով՝ սատանայի:

Ինքը Տէրն է ձեզ ազատում իմ միջոցով՝ կամենալով, որ մնաք առանց թշնամանքի, առանց նենգութեան, առանց անառակութեան:

Քրիստոսի հանդէպ թշնամանք եւ նենգութիւն է անուանում մեր մեղանչելը: Եւ թէ այս ինչպէս է, օրինակով սովորենք: Եթէ մի զօրավար իր զօրքերով դատաստանի գայ թագաւորի մօտ թշնամիների անիրաւութեան պատճառով, իսկ զօրքերն էլ, որ ուխտեցին նրան ծառայել, արքայի առաջ թշնամիներին պաշտպանեն, արդեօք նենգութիւն եւ թշնամանք գործած չե՞ն լինի [իրենց] զօրավարի հանդէպ: Այսպէս եւ մենք, Քրիստոսի հետ մկրտուելով, մեռանք այս աշխարհի ցանկութեան համար եւ մեր յոյսը դրեցինք երկնքում, եւ Նա վկայեց Հօր առաջ, թէ՝ այս աշխարհից չեն: Եւ Քրիստոս միշտ Հօր առաջ ամբաստանում է սատանային ու դատապարտում Իր մարմնով: Եւ կամենում է մեր այս անմեղութեամբ այս [մարտում] օգնական լինել մեզ, որ Իր զօրքն ենք: Իսկ եթէ թողնում ենք այս շաւիղը, կամակոր հեշ-

1 Տե՛ս Հռոմ. Ե 18:

տութեամբ թաւալւում մեղքերի մէջ ու պաշտպան լինում սատանայի կամքին, [ապա սա] թշնամանք է Քրիստոսի եւ նենգութիւն՝ Նրա հետ մեռելութեան դաշինքի հանդէպ: Բայց մեղանչել ասում ենք անզեղջ կամքով խոտորուելը եւ ոչ թէ ակամայ սայթաքելն ու դարձեալ զղջալը: Տէրն իմ միջոցով, ասում է, ձեզ աղաչում է չանել այս: Եւ տե՛ս, որ աղաչում է եւ ոչ հրամայում. եղբայրաբար եւ ո՛չ տիրաբար:

Քանզի գիտէ ե՛ւ ձեր թշնամանքը, գիտէ ե՛ւ անարդարութիւնը, գիտէ ե՛ւ նենգութիւնը, գիտէ ե՛ւ անառակութիւնը՝ Իր պատուիրանները ձեր անգոսնելու պատճառով:

[Սրանով] յայտնում է ծածկաբար ասածները, այսինքն՝ մեր կողմից Աստուծոյ անուան եւ փառքի այս բոլոր անպատուութիւնները լինում են Նրա պատուիրանը մեր անգոսնելու պատճառով: Որովհետեւ ով պահում է պատուիրանը, փառաւորում է Նրան, իսկ ով չի պահում, թշնամանում է: Եւ ո՞րն է պատուիրանը. Աստուծոյ եւ միմեանց հանդէպ սէրը, եւ սա է բոլոր բարիքների աղբիւրը: Ահա սա օտար չէ մեր բնութեան կրքերին, այլ ախորժելի է ամենքին էլ: Իսկ եթէ հեռանում ենք մեր բնութիւնից, անգոսնում նրա կրքերն ու օրէնքները, որոնցով [Տէրը] սահմանեց ըստ մեր բնութեան ընթանալը, նենգում ենք մեր անձերի եւ Օրինադրի դէմ: Բայց անգոսնելը իմացիր արհամարհութեամբ ու կամակոր մտքով մեղանչելը եւ ոչ թէ սայթաքելը, որովհետեւ ահա ինքն իսկ (Յովհաննէսը) ասում է. «Եթէ ասում ենք՝ մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք»[1]*: Ապա ուրեմն անգոսնողը նա է, ով մեղանչելն օրէնք է համարում: Թէ՛ փոքր, թէ՛ մեծ յանցանքով այսպէս վարուողը անգոսնում է պատուիրանը:*

Արդ, թող ձեր պատճառով չտրտմի Բարերարը, Գթածը, Ողորմածը...

Սրանից առաւել ուրիշ ի՞նչ տրտմութիւն [կարող ենք պատճառել] Նրան, Ով ուղիղը ցոյց տուեց, իսկ մենք խոտոր ենք ընթանում. Ինքը ցոյց տուեց մեր բնութեան անմեղութիւնը, իսկ մենք մեղքով պղծում ենք այն. ցոյց տուեց հարկաւոր կարիքները, իսկ մենք աւելորդն ենք ցանկանում: Ասում է՝ անիրաւութիւն մի՛ գործէք Նրա հանդէպ՝ ուղիղ օրէնքն ընդոտնելով, եւ մի՛ տրտմեցրէք:

1 Ա Յովհ. Ա 8

Բարերարը. *որովհետեւ բարերարութիւնն է Աստուծոյ բնութիւնը, որով կառավարում է երկինքն ու երկիրն ըստ իւրաքանչիւրի օգտի եւ Իր բարութեանը հաղորդ դարձնում ամենքին:* ***Գթածը.*** *գթութիւնը բարութեան պտուղն է: Արդ, բարի էր մեր հանդէպ եւ [իբրեւ] պտուղ տուեց գթութիւնը, որովհետեւ մարդացաւ՝ ստիպուելով գթալ բարերարութեան առատութիւնից:* ***Ողորմածը.*** *իսկ ողորմածութիւն է վշտակցութիւնը, քանզի եղաւ մեզ չարչարակից,* ***Ատծուն բարեխօս*** *եւ քաւութեան միջնորդ:* ***Սուրբը.*** *քանզի գութ կայ, որ սուրբ չէ, այսինքն՝ [այն գութը,] որ մարդկային է: Իսկ Նա, այս անելով, սուրբ է, որովհետեւ խոնարհութիւնը կրեց միայն մեր օգտի համար եւ ոչ թէ՝ Իր:* ***Ցստակը.*** *որովհետեւ կամքին կամ բնութեանը խառնուած շամանդաղ չունի՝ երեւալով մի կերպ եւ այլ կերպ լինելով [իրականում], այլ յստակ է. ինչպէս որ քաղցր ու սուրբ է երեւում, այդպէս էլ կայ [իրականում]:* ***Անարատը.*** *որովհետեւ մարմնանալով՝ մարդկային արատներից ոչինչ չկրեց Իր կամքի մտածութեան խորհուրդներում:* ***Անապականը.*** *որովհետեւ մարմնական ախտերի ապականութիւնը մարմնում եւս չընդունեց, քանի որ սուրբ էր մտքով եւ մարմնով, ինչն անհնար է մեզ համար: Քանզի թէպէտեւ ոմանք մարմինը սրբեցին, սակայն չսրբեցին նաեւ դիւրաշարժ միտքը:* ***Միակը.*** *որովհետեւ մարդկանցից միայն Նա եղաւ սրանցով զարդարուած: Մին. քանզի մի է [Նա] Աստուածութեան եւ մարմնի անճառ միութիւնից յետոյ:* ***Անփոփոխը.*** *որովհետեւ [Ինքը] չփոփոխուեց միութեան մէջ, եւ անճառ խառնումը չփոփոխեց բնութիւնները: Նա, Ով մարդ էր երեւում բնութեամբ, նոյն Ինքը նաեւ Աստուած էր իմացւում ճշմարտութեամբ:* ***Ստոյգը.*** *որովհետեւ, իբրեւ մարդ պատրանքով, չերեւաց, խաբէութեամբ չշրջեց մարդկանց մէջ կամ հակասական չխօսեց:* ***Անենգը.*** *որովհետեւ Տէրութեան արդարութիւնը չենթարկեց ողորմութեամբ [արուած] փրկագործութեան մէջ:* ***Անցաւոտը.*** *որովհետեւ չկիրառեց [Իր] իշխանութիւնն ու պատժողական զօրութիւնը, ինչպէս անապատում՝ Իսրայէլի հանդէպ, այլ ամէն ինչ կատարեց մարդկանց հանդէպ ողորմութեամբ եւ քաղցրութեամբ: Եւ թէպէտ կարող էր պատուհասել, սակայն չկամեցաւ, [այլ Իր] զօրութիւնը ցոյց տուեց անբան թզենու տունկի վրայ:*

Ով բոլոր ճառելի եւ իմանալի անուններից վեր է՝ իմ Յիսուս Աստուած:

Քանզի Աստուած իմանալի էր եւ եղաւ զգալի մարդ: Եւ նոյն Ինքը, որ իմանալի Աստուած է, տեսանելի Յիսուսն է: Բայց [սա] ո՛չ իմացական սուրբ հրեշտակներին է հասանելի՝ ըստ իմանալիի, եւ ո՛չ մեր՝ զգալի մարդկանց լեզուով է ճառելի՝ ըստ զգալիի: Սա յայտնի է սերովբէների՝ դէմքը թեւերով ծածկելուց՝ Անհասին հասու չլինելու պատճառով: Մարդիկ նոյնպէս բնաւ չեն կարող նոյնին հասնել: Որովհետեւ [Տիրոջ] ննջելը գիտեն, իսկ թէ ննջածը ինչպէս էր ծովը խռովեցնում, տկարանում են [ըմբռնել]: Որովհետեւ քայլելը գիտեն, բայց թէ ինչպէս էր [Նա քայլում] հոսանուտ կոհակների վրայով, չեն կարողանում գիտենալ: Այսպէս անհաս է Յիսուսի անունը երկնաւորների եւ երկրաւորների համար: Բայց ո՞րն է բնութեան անունը. քանզի անունը բնութեան էութիւնն է սահմանում, ինչպէս որ մարդը կենդանի, բանական եւ մտաւոր էակ է [սահմանում]: Իսկ Նրա բնութեան սահմանումը արարածները չգիտեն, այլ անուանում են Նրան Իր ցոյց տուած գործերի ճանապարհով՝ բարի, ողորմած... [Սակայն] այս ամէնը սահմանում է կամքի գործերը եւ չի յայտնում բնութիւնը:

Թող ուրախ լինի ձեր բարուք կրօնաւորութեամբ:

Մեղքերից (որոնցով է [Տէրը] թշնամանում) հրաժարուելուց եւ զգուշանալուց յետոյ յորդորում է դէպի բարեգործութիւնները, որոնցով ուրախացնում ենք Նրան: Որովհետեւ կատարեալ լինելու համար բաւական չէ սոսկ հրաժարուել չարից, այլ նրա փոխարէն պէտք է ներընդունել բարին՝ ըստ այս խօսքի. «Խոտորուի՛ր չարից եւ բարի՛ն արա»[1]:

Իսկ ո՞րն է մեր բարութիւնն ու Նրա ուրախութիւնը. մարմնի եւ մտքի կրքերը արդարութեամբ կրելը, քանզի սա է այս խօսքի ստուգաբանութիւնը: Որպէսզի շնչի ցանկութիւնը գլուխ չբարձրացնի իմանալիի վրայ եւ այն ծառայեցնի իրեն ու ախտերին, այլ միտքը լինի իբրեւ կառավարիչ, եւ մեր շունչն ու մարմինը նրանով դաստիարակուեն: Իսկ մտքի դաստիարակիչը Աստուծոյ օրէնքն է: Երբ կրքերն այսպէս ենք շարժում, ուրախանում է մեր Փրկիչը՝ փրկուածներիս տեսնելով Իր շաւիղներով փութալիս:

1 Սաղմ. ԼԳ 15

Թող խնդայ ձեր սուրբ կեանքով:

Մեր կեանքը սուրբ է լինում, երբ չի շաղախւում պղծիչ ախտերի հետ. ո՛չ հոգին՝ խորհրդով, եւ ո՛չ մարմինը՝ գործով: Եւ սա խնդութիւն է Նրա համար, որովհետեւ [դրանով] մեր անձում նկարում ենք Իր եւ ոչ թէ օտարի պատկերը:

Թող հանգստանայ ձեր պարկեշտ վարքով:

Որովհետեւ եթէ Պողոսը, որ, Աստուածութեան առատ սիրոյ միայն համն առնելով, ասում էր. «Ո՞վ է հիւանդանում, եւ ես չեմ հիւանդանում: Ո՞վ է գայթակղւում, եւ ես չեմ այրւում»[1], ապա Քրիստոս, որ ոչ թէ Իր, այլ մեզ համար մարդացաւ ու մեռաւ, երբ մեզ տեսնում է անառակ վարքով [ընթանալիս] եւ այնքան շնորհները ժխտելիս, վշտակցութեան ի՜նչ կրակով է այրւում... Իսկ երբ մնում ենք պարկեշտութեան մէջ եւ ապրում՝ չվայելելով աշխարհը, այլ միայն ընթանալով նրանում եւ դէպի Ինքը փութալով, հանգստանում է Նա՝ մեզ այսպիսին տեսնելով:

Թող անհոգ լինի ձեր ժուժկալութեամբ:

Անժուժկալութիւնն է բոլոր ախտերի առիթն ու պատճառը, ինչպէս որ համբերութիւնը՝ բարիքների: Նա մեզ վշտակցելու հոգս չի ունենում, երբ զարդարւում ենք ժուժկալութեամբ, այսինքն՝ ոչ մի ախտից չենք խռովւում եւ չենք խոտորւում ու ընկրկում:

Թող հիանայ ձեր միաբանութեամբ:

Սուրբ Գիրքը բոլոր տեղերում մեզ յորդորում է միաբան լինել, որը թէ ինչպէս է լինում, կարիք ունի բացատրութեան: Այն մարմնապէս սիրելը կամ միայն ըստ մարմնի իրար մերձ լինելը չէ. այլ բան է: Ամէն մարդ չէ, որ կարող է այս խորհուրդներին հասու լինել, այլ այս շնորհը [տրւում է] քչերին, որոնց էլ ընտրում եւ իրենց առաջնորդ են կարգում՝ համաձայն նրա խօսքի եւ կամքի: Աստուած կամենում է, որ ամէնքը մի միտք ունենան եւ ոչնչով չհակառակուեն նրան կամ բաժանման ցանկութեամբ հօտի միեղինութեան մէջ հերձուած չմտցնեն, այլ մնան հաւանութեամբ եւ նրա բոլոր խօսքերն ընդունեն իբրեւ Աստծունը: Եւ այս է, որ մեզ հաճելի է դարձնում Աստծուն՝ հնազանդութիւնը, որից առաւել վեհ առաքինութիւն չկայ:

1 Տե՛ս Բ Կոր. ԺԱ 29:

Թող ուրախանայ ձեր զգաստութեամբ:

Սովորեցնում է մաքուր սիրոյ կերպը, այսինքն՝ հայրականը եւ ոչ տիրականը: Քանզի հայրն ուրախանում է որդու զգաստութեամբ, որովհետեւ ներքին մարդու գութն է շարժում անձին: Այսպէս եւ Քրիստոս, հաղորդ լինելով մեր բոլոր կրքերին, բացի մեղքերից, եւ փորձով չարչարակցուելով, ոչ միայն մեր տրտմութեանը յատուկ կրքերն ապրեց, այլեւ ուրախութեանը: Եւ ահա [Նրա] ամենահայեաց աչքերի առջեւ է մեր ընթացքը. ինչպէս որ տրտմում է անպատշաճի համար, այդպէս եւ պատշաճի համար՝ ուրախանում: Արդ, այս է զգաստութիւնը. քանի որ միացած ենք խաւար մարմնին, եւ մեզ համար դիւրին է դրժելը, երբ, առաջնորդուելով գիտութեան լոյսով, զգաստ ենք լինում, որպէսզի ճանաչենք որսացողի[1] դաւաճանիչ ծուղակները, Նա ուրախանում է մեր արթնութեան եւ Իր լուսաւորութեանը նմանուելու համար:

Թող բերկրի Իր հանդէպ ձեր սիրով:

Այս է ամէն ինչի վախճանն ու լրումը, քանզի սրա համար են հիւսւում առաքինութեան բոլոր տեսակները, որպէսզի նրանցով ճանապարհ հարթենք դէպի Աստուծոյ սէրը: Իսկ սէրը եզր կամ սահման չունի, ինչպէս որ ժուժկալութեան համար մարմնի կարողութիւնն է [սահմանը], կամ միաբանութեան համար՝ [սեփական] կամքն ուրանալը: Մինչդեռ սրանցից ծնուածը՝ Աստուծոյ հանդէպ սէրը, անեզր է եւ անվախճան: Եւ որքան մարդ ձգտում է [դէպի այն], այնքան աճում է գորովագին կարօտը: Իսկ ով իրեն համարում է սիրոյ եզրին հասած, այն պատճառով է [այդպէս] կարծում, որ չի սիրում: Այլապէս իւրաքանչիւր սիրողի համար սիրոյ վախճանը սիրելիին տեսնելն է: Եւ քանի որ մեր Սիրելիին փափագողներս այժմ անկարող ենք տեսնել, ուստի անվախճան փափագը աճում է շարունակ, մինչեւ հասնում է Նրան: Էլ չեմ ասում, որ մանաւանդ այնժամ եւս չի դադարում՝ ըստ առաքեալի. «...սրանք երեքն են [մնում],- ասում է,- եւ սրանցից մեծը անեզր սէրն է»[2]:

Բայց այս խօսքերի վերջում վարդապետութեան պարկեշտութիւնը տես ու սքանչացի՛ր, քանզի խրատական մասում, ինչպէս այլ

1 Այսինքն՝ սատանայի:

2 Տե՛ս Ա Կոր. Գ 13:

գրքերի սովորութիւնն է, չասաց. «Մի՛ բարկացրէք Աստծուն», կամ՝ «Մի՛ խռովեցրէք», այլ թէ՝ «Մի՛ թշնամանէք եւ մի՛ նեղէք»: Իսկ ապա, անցնելով յորդորականին, չի ասում, թէ՝ «Սրբուեցէ՛ք եւ արդարացէ՛ք խոստացուած փառքի կամ պսակների համար», այլ թէ՝ «Թող Քրիստոս ուրախանայ եւ բերկրի ձեր սրբութեամբ»: Եւ ի՞նչ ենք սովորում այս սուրբ խօսքերից, եթէ ոչ՝ սիրոյ մաքուր ու բնական կերպը, որում յանցաւորը պահւում է ոչ թէ երկիւղից, այլ ամօթից, որն աւելի մեծ է, քան երկիւղը: Իսկ պահողին շարժում է բնութիւնը եւ ոչ թէ արտաքին երեւոյթները: Այս խօսքերի ուսումը մեր ներսում է. ով քննում է, իւրովի է գտնում:

Գ

Այս եմ այժմ ասում ձեզ, եղբայրնե՛ր. փութացէ՛ք դէպի ձեր առաջիկայ գործը՝ Տիրոջ մէջ արդէն իսկ կատարուած:

Բոլոր գործերը կատարւում են նրա համար, որպէսզի պտուղ տան ապագայում՝ շատը քչի փոխարէն, ինչպէս որ երկրագործն է յոյս ունենում սերմանելիս: Իսկ ձեր պտուղը, ասում է, պտուղ տալու կեղակարծ յոյսով չէ, այլ գործի պտուղը կատարուած է, քանզի Քրիստոս ձեր գլուխն ու պսակիչն է Հօր աջ կողմում: Իսկ ես խօսում եմ, որպէսզի փութեռանդ ու անվեհեր լինէք նոյնի մէջ: Որպէսզի այն շնորհը, որ Նա վերցրեց Հօրից ձեզ համար Իր աշխատութեամբ եւ խաչով, դուք չկորցնէք հեղգութեան պատճառով: Քանզի ձեր գործի պտուղը կատարուած է՝ ոչ թէ ձեզանով, այլ Քրիստոսով, որովհետեւ Նա ձեզ դարձրեց Աստուծոյ որդիներ: Միայն թէ դուք ձեր գործերով դէպի Նրա շնո՛րհը փութացէք եւ ոչ թէ արդարանալու համար վստահացէք ձեր առաքինութեան վրայ, քանզի դա անկարելի է, ինչպէս առաքեալն է ասում. «Թէպէտ ճնշւում եւ չարչարւում եմ, բայց ոչ թէ իմ արդարութիւնն ունեմ, այլ Քրիստոսի հաւատից եղածը»[1]:

Քանզի այլեւս ի՞նչ ունեմ ձեզ ասելու. Աստծուց ունէք ձեր գրաւականը:

Այսինքն՝ Քրիստոսի Մարմինը, քանզի Նա է մեր փրկութեան եւ կեանքի առհաւատչեան: Արդ, եթէ այն չունենայիք, պէտք է իմ այս վարդապետութիւնը երկարէր: Իսկ որովհետեւ ամէնքդ հաւատացել

1 Տե՛ս Ա Կոր. Թ 27, Փիլ. Գ 9:

էք ու գիտէք, որ Աստուծոյ Որդին ձեզ համար մարմին առաւ եւ [այն] նստեցրեց Հօր աջ կողմը, Կեանքի յոյսն ու Աստծուն որդեգրուելը ձեզ համար իբրեւ առհաւատչեայ առաւ, եւ [որովհետեւ] հոգով միշտ ծամում ու ճաշակում էք այս շնորհները, ինչի համար եւ ուրախ էք, [այդ պատճառով էլ] իբրեւ ամրութիւն՝ խօսքի այլ նեցուկ չունեմ տալու [ձեզ՝] հաստատուն խարսխի վրայ ամրացածներիդ:

Ստացել էք Նրա բարերարութեան տուրքերը:

Այսինքն՝ Սուրբ Հոգու շնորհները. քանզի Աստուծոյ եւ մարդկանց միջնորդ Յիսուս մեր գրաւորականը Հօրը տանելուց յետոյ Նրանից առաւ այն տուրքերը իբրեւ առհաւատչեայ եւ սփռեց մեզանում, եւ խաղաղութիւնը հաստատեց ոչ թէ վայրապար[1], այլ առհաւատչեայի հաստատութեամբ: Որովհետեւ երբ Որդու մարմինը միացաւ Աստուածութեանը, եւ Հոգու Աստուածութիւնը բնակուեց մարդկանց մէջ, մի եղան անքակ պնդութեամբ, եւ այնժամ Հոգին յայտնապէս էր գործում նրանցում: Ուստի ինչպէս որ հաւատում էին Քրիստոսի՝ երկնքում լինելուն, այնպէս եւ հաւատում էին Հոգու՝ երկրում [լինելուն]:

Ակնկալում էք Նրա անխուսափելի Գալուստը:

Քանզի այնժամ ո՛չ մարդիկ եւ ո՛չ էլ դեւերը չեն կարող որեւէ տեղ փախչել Նրանից: Եւ դարձեալ՝ որովհետեւ անստգիտ[2] հաստատութեամբ գալու է արդար Դատաստանով՝ պակելու արդարներին եւ տանջելու մեղաւորներին, [ապա,] ասում է, ձեզ համար բաւարար զգուշութիւն է այն ահեղ եւ սոսկալի Օրը յիշելը:

Արդ, երեք բան կարգեց, որոնք երեք խորհուրդ են ուղղում մեզանում. գրաւականը՝ [որ] սէրն ու միտքը միշտ պահում է Իր մօտ. երկնքում՝ Հոգու շնորհները, [որ] զօրութիւն են ընձեռում եւ պարըսպում պատրանքներից. [եւ] Գալստեան յիշատակը՝ [որ] յորդորում է դէպի [Աստուծոյ] փառքը եւ զարհուրեցնում [Նրա] երկիւղով:

Երբ այսպէս ներգործում են սրանք հոգու պարզութեան մէջ, [այդժամ] այդպիսին չի ունենում հաղորդութիւն այս աշխարհի հետ կամ դաւաճանութիւն պատրանքներից:

1 Վայրապար - զուր, անտեղի

2 Անստգիտ - անպարսաւ, անկասկած, անյանդիմանելի

Որովհետեւ եթէ այլեւս չմեղանչէք, անգիտութեան մէջ գործածները կների ձեզ: Իսկ եթէ, Նրան գիտենալով եւ Նրանից ողորմութիւն ստանալով, նոյն կերպ ապրէք, [ձեր] նախկին [մեղքերը] եւս չի ների ձեզ, եւ ողորմութիւն չէք ընդունի Նրանից:

Այս լսելով՝ թող ոչ ոք փոքր չհամարի այս խօսքի սահմանում ցոյց տրուած Աստուծոյ ողորմութիւնը: Այլ քննենք [այս խօսքի] ճշգրիտ իմաստը:

Արդ, նրանց՝ Քրիստոսին գիտենալը այն չենք համարում, որ, ինչպէս այժմ տեսնում է աշխարհում, բերանով աղաղակում են, թէ՝ քրիստոնեայ ենք, ովքեր այս առհասարակ գիտեն, սակայն թէ քրիստոնէութիւնը կամ իրենց կոչման յոյսն ինչն է, բնաւ չեն կարողանում դաւանել սրտի վկայութեամբ, այլ թերահաւատութեան երկբայութեան մէջ են, ինչպէս եւ [իրենց] գործն է ցոյց տալիս: Սակայն նրանց (Յովհաննէսի աշակերտների) մեղքը հեթանոսութիւնն էր: Իսկ երբ ճանաչեցին Քրիստոսին, հէնց այնպէս չճանաչեցին, այլ ողորմութիւն ստացան Հոգու շնորհը, որը [նրանց] սրտերում յայտնապէս վկայում էր, թէ Աստուծոյ որդիներ են, եւ զանազան նշաններ էր կատարում նրանց միջոցով, ինչպէս առաքեալն է յայտնում գաղատացիներին եւ կորնթացիներին[1]: Եւ նրանց գիտութեան եւ իմաստութեան շնորհը, որ ստանում էին Հոգուց, աւելի մեծ էր, քան նշաններ գործելու [դէպքում] էր, որովհետեւ իւրաքանչիւրի ներքին մարդն անստգիտ հաւատով տեսնում էր հանդերձեալ փառքը, Քրիստոսին եւ Նրա [տնօրինութեան] գործերը: Այսպիսի ողորմութիւն ստանալով, ասում է, եթէ դարձեալ ապրէք հեթանոսական անխտրութեամբ՝ վայր ընկնելով ոչ թէ հաւատի երկբայութեան, այլ միայն՝ մարմնի հեշտախութեան պատճառով, ողորմութիւն չէք ընդունի Տիրոջից: Իսկ այսօր հաւատն աղօտացել է աշխարհում, քանզի իւրաքանչիւրս փութում ենք ըստ կարողութեան գործ կատարել, սակայն թէ ո՛ր հաւատի վրայ ենք այն շինում, չգիտենք բնաւ: Հաւատ եմ ասում ոչ թէ Աստուածութեան մասին գիտենալը, այլ Քրիստոսի խորհուրդների շնորհների՛ գիտութիւնը:

Արդ, թէպէտ մէկը մկրտուել է եւ մկրտութիւնից յետոյ ծերացել, սակայն տգէտ է այս հաւատի գիտութեան մէջ, լինի կրօնաւոր թէ աշ-

1 Տե՛ս Գաղ. Բ 9, Բ Կոր. ԺԲ 12:

խարհական, երբ դարձի է գալիս եւ որոշում ուսանել այս ու ճանաչում է Քրիստոսի՝ մեր հանդէպ ողորմութեան մեծութիւնը, նրա սիրտը վկայում է, թէ՝ մինչ այժմ ինչ մեղք որ գործեցի, տգիտութեամբ էր, եւ Աստուած ներում է ինձ. սակայն եթէ նորից սայթաքեմ, իմ ապաշխարութիւնը ծանր կլինի, ոչ այսպէս թեթեւ ինչպէս որ երանելին է վախեցնում նմաններին, թէ ողորմութիւն չեն ընդունի:

Սակայն նախ գիտենալն ու ողորմութիւն ստանալն է, եւ ապա՝ այս: Այսօր ոչ բոլորս գիտենք, եւ քչերն ունեն գիտենալու շնորհը: Եւ ոչ միայն մկրտուողները, այլեւ մկրտողներից շատերը բնաւ չգիտեն ըստ ներքին մարդու հաւատի խորհրդի զօրութիւնը: Այդպիսիների համար, մինչեւ որ շնորհներով ճանաչեն Արդարութիւնը, երբ էլ կամենան, բաց է Աստուծոյ ողորմութեան դուռը: Իսկ եթէ տգիտութիւնը ախորժելի են համարում եւ չեն ջանում հասնել աստուածճանաչողութեան, [ապա] իրենք իրենց մատնում են անաչառ Ատեանին:

Դ

Եւ, այս ասելով, սկսեց աղօթել այսպէս:

Աշակերտներին ուղղուած վարդապետութիւնը կամեցաւ ամրապնդել այս աղօթքով, ինչպէս առաքինի երկրագործը, որ իր սերմերը անդաստանում ցանելուց յետոյ ոռոգում է, որպէսզի շուտով բուսնեն:

Ո՛վ [Դու], որ այս պսակը հիւսեցիր Քո հիւսմամբ, Յիսո՛ւս:

«Ո՛վ [Դու]» ասելը խօսքի սկզբում երկու նշանակութիւն ունի. մէկը՝ անհասութեանը խառնուած սքանչացում, եւ միւսը՝ դարձեալ սքանչացում՝ հարցական հակառակութեան հետ: [Պօղոս] առաքեալը սրանք ցոյց է տալիս միատեղ. «Ո՛վ Աստուծոյ մեծութեան եւ իմաստութեան խորութեանը»[1]. սա հիացումն է, որ վեր է հասու լինելուց: Այնուհետեւ աւելացնում է. «Ո՞վ իմացաւ Տիրոջ միտքը»[2]. սա անհասութեան միաւորումն է հարցման հետ: Իսկ Դաւիթ [մարգարէի] սովորութիւնն է մե՛րթ հակառակելով ասել. «Ո՞վ կկարի Տիրոջ զօրութեան մասին»[3], մե՛րթ՝ «Ո՛վ հրեշտակներին Իր համար հոգիներ ստեղծեց»[4],

1 Տե՛ս Հռոմ. ԺԱ 33:
2 Տե՛ս Հռոմ. ԺԱ 34:
3 Սաղմ. ՃԵ 2
4 Սաղմ. ՃԳ 4

«Ո՛վ հաստատեց երկիրը»[1]. այս խօսքերը զարմացում են [արտայայտում]: Այսպէս եւ՞ այժմ այս երանելին է [իր] մաքրագոյն աչքերի վերհայեցողութիւնը հպում իր սիրելի Լոյսին եւ, լոյսը խառնելով Լոյսի հետ, յաղթահարում է Վեհագոյնի անհասութիւնից եւ միայն յանձնում սքանչելի հիացմանը: Եւ իւրաքանչիւր խօսքի սկզբում նոյն բառն է դնում, որով ցոյց է տալիս իւրաքանչիւր խօսքի՝ ըստ բնութեան զարմանալի լինելը:

Ո՛վ [Դու], որ այս պսակը հիւսեցիր Քո հիւսմամբ, Յիսո՛ւս: *Պսակ է անուանում առաքինութիւնները, որոնք նախքան այս, ըստ կարգի, սովորեցրեց աշակերտներին: Այս, ասում է, Դու հիւսեցիր, Յիսո՛ւս: Ինչպէ՞ս. քանզի նախ Իր հոգում եւ մարմնում կրեց բարութիւնների բոլոր տեսակները, եւ Ինքը, միահիւսելով առաքինութիւնները, դրանցով պսակեց Իր մարմինը եւ ապա սովորեցրեց հիւսել նոյն պսակը եւ հաղորդակից լինել նոյն փառքին:*

Եւ թէ որն էր պսակը, որ Յիսուսը, առաքինութիւնների հիւսերը միահիւսելով, կապեց Իր գլխին, ասում է առաքեալը. «Մահուան չափ հնազանդ եղաւ եւ խաչի՛ մահուան»[2]: Արդ, երբ Նա հնազանդում էր, Հայրը հիւսում էր պսակը: Իսկ երբ մահուամբ աւարտին հասցրեց հնազանդութիւնը, հիւսուած պսակը կապեց Նրա գլխին, այսինքն՝ Նրան շնորհեց բոլոր անուններից էլ վեր անուն[3], եւ ամէնքը խոնարհում են Ադամի Պատկերին, Ով անշփոթ խառնմամբ միացաւ Հօր կերպարանքին:

Ո՛վ [Դու], որ այս բազում ծաղիկները միացրիր Քո անթառամելի ծաղկին:

Անթառամ ծաղիկը փառքի եւ Աստուածութեան էութեան մէջ ծաղկած Նրա մարմինն է: Իսկ բազում ծաղիկները զանազան առաքինութիւններով դէպի Նա փութացած մարդիկ են. մէկը՝ վկայութեան որակութեամբ, միւսը՝ ճգնութեան գոյնով. մէկը՝ կուսութեամբ, եւ միւսը՝ ամուսնութեան պարկեշտութեամբ. մէկը՝ աղքատութեամբ, եւ միւսը՝ ողորմածութեամբ. մէկը՝ օրինադրութեամբ, եւ միւսը՝ հնազանդութեամբ: Սրանք բոլորը (ինչպէս զանազան անդամները՝ գլխին) Քրիս-

1 Սաղմ. ՃԳ 5
2 Տե՛ս Փիլ. Բ 8:
3 Տե՛ս Փիլ. Բ 9:

տոս խառնեց Իր մարմնին եւ հաղորդ դարձրեց Իր փառքին: «Որովհետեւ ես կենդանի եմ,- ասում է,- դուք եւս կենդանի էք լինելու»[1]; «Ես Հօր մէջ եմ, դուք՝ Իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ»[2]: Եւ առաքեալն ասում է. «Մինչեւ [որ] ամէնքս կատարեալ այր դառնանք՝ Քրիստոսի կատարելութեան հասակի չափով»[3]:

Ո՛վ [Դու], որ սերմանեցիր Քո այս կենարար խօսքերը:

Կենարար խօսք պէտք է հասկանալ պատուիրանները, քանզի Նրա պատուիրանները յաւիտենական կեանք են, [ինչպէս որ] ասաց[4]: Եւ թէ ինչ իշխանութեամբ մահկանացուն կարող է անմահութիւն ստանալ, Քրիստոս աշխարհում սերմանեց մէկ այլ կեանքի գոյութեան յոյսը՝ նախ Իր մարմնում այն հաստատելով եւ ապա վարդապետելով մեզ նոյնը ստանալ:

Ո՛վ [Դու], որ Քո ծառաների միակ խնամակալն ու բժիշկն ես, որ ձրի ես բժշկում:

Բաղձանքը ծնում է խօսքեր, որոնց հասու լինել չի կարող անգամ զօրաւոր մեկնիչը: Քանզի ո՞վ կարող է չափել Յովհաննէսի սէրը Քրիստոսի հանդէպ: Որտեղի՞ց էին ծնւում այս խօսքերը [Տիրոջ հետ] խօսելիս: Արդ, տե՛ս, թէ ինչ է ասում. միայն Դու եղար մարդկանց խնամակալն ու բժիշկը: Խնամքի չափն [այն է], որ Իր արդարութիւնը տուեց մեզ, մեր մեղքերն ընդունեց Իր վրայ եւ մեռաւ մեր փոխարէն: Նոյն Ինքը նաեւ ձրի բժշկութիւնն է, որովհետեւ Հոգու պարգեւները շնորհներով տուեց աշխարհին եւ ոչ թէ՝ ըստ մեր գործերի: Եւ Նա, գալով, ամենայն անգիտութիւնից [մեզ հանելով], մխիթարեց ու բժշկեց [մեր] ցաւերը, որովհետեւ ուսուցանեց, որ քանի դեռ մարմնի մէջ ենք, միշտ քաւվում ենք Քրիստոսի շնորհներով. «Յիսուսի Արիւնը,- ասում է,- մեզ սրբում է մեր բոլոր մեղքերից»[5]: Երբ խորհրդի զօրութիւնն իբրեւ կերակուր լինում է մարմնի եւ հոգու հետ, [այնժամ] ճանաչում ես, որ միշտ ձրի է բժշկում:

Ո՛վ [Դու], որ միակդ ես բարերար եւ անամբարտաւան:

1 Յովհ. ԺԴ 19
2 Յովհ. ԺԴ 20
3 Տե՛ս Եփես. Դ 13:
4 Տե՛ս Մատթ. ԺԹ 17:
5 Տե՛ս Ա Յովհ. Ա 7:

Մենք սատանայի երկու կիրք ճանաչեցինք՝ չարութիւն եւ ամբարտաւանութիւն, որովհետեւ եթէ ամբարտաւան չլինէր, կզղջար [գործած] չարիքների համար: Սա նաեւ աղբիւրն է մարդկային բոլոր մեղքերի: Չարութիւնից ծնւում են մարմնի գիճութիւնն ու հեշտախտութիւնը, իսկ ամբարտաւանութիւնից՝ մեղքերի հոգեկան եւ շնչաւոր տեսակները, որոնցից՝ ե՛ւ մեծերից, ե՛ւ փոքրերից, միայն Տէրը մարմնով անփորձ գտնուեց: Իսկ [մենք]՝ դրանցով փորձուածներս, արդարանալով [Քրիստոսով], սրբուեցինք:

Ո՛վ [Դու], որ միակդ ես ողորմած եւ մարդասէր:

Ողորմութիւնը կարեկցութիւն է. երբ մարդ ստիպւում է գթութիւնից եւ ձեռք է մեկնում ընկածին: Այս ճանաչել տուեց Նա՝ [Իր] մարդանալով եւ [մեր] ընկած բնութիւնը կանգնեցնելով: Իսկ մարդասիրութիւն [է ասում], որովհետեւ Իր կանգուն եւ սուրբ մարմինը պարգեւեց մարդկանց մեղանչական ազգի փոխարէն՝ պատարագելով եւ քաւելով [մեր մեղքերը]: Ոչ ոք, ասում է, այսպիսի սէր ցոյց չտուեց՝ անձը դնել բարեկամների համար, ինչպէս որ Ես եմ դնում թշնամիների համար[1]:

Ո՛վ [Դու], որ միակդ ես փրկիչ եւ արդար:

[Տէրն] արդարութիւն է գործում փրկութեան հետ: Քանզի շատերը կան, որ փրկում են ոչ թէ արդարութեամբ, այլ զօրութեան ուժը գործադրելով: Իսկ նա ոչ թէ այդպէս [արեց], այլ՝ արդարութեամբ, որովհետեւ վերցրեց այս մարմինը եւ, նրա կրքերով ընթանալով, [Իր] անմեղութեամբ ամաչեցրեց չարախօս թշնամուն: Եւ ապա անարդարներիս համար Արդարին փրկանք տուեց Հայր Աստծուն՝ ըստ Պետրոսի[2], եւ մեզ ազատեց Ադամի դատակնիքի ծառայութիւնից, որովհետեւ ինչպէս որ մեռանք հին [Ադամի] մեղքերով, [նոյնպէս եւ] այս Նորի արդարութեամբ կենդանացանք:

Ո՛վ [Դու], որ միշտ ես, ամենքի մէջ եւ ամէնուր մերձ ես, Աստուա՛ծ իմ Յիսուս: Դու Քո պարգեւներով պարուրում ես բոլոր նրանց, ովքեր Քեզ են յուսացել:

1 Տե՛ս Յովհ. ԺԵ 13:
2 Տե՛ս Ա Պետ. Գ 18:

[Տիրոջ] մշտնջենաւորութիւնը ինքը [Յովհաննէսը] յայտնեց Աւետարանում՝ ասելով. «Սկզբից էր Բանը»[1]: Իսկ թէ [Տէրն] ինչպէս է ամենքի մէջ եւ ամէն տեղ մերձ, բացատրութեան կարիք ունի: Երբ ասում է. «Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում»[2], եւ՝ «Դուք Իմ մէ՛ջ մնացէք, եւ Ես՝ ձեր մէջ»[3], սա հասկանում ենք ոչ թէ ըստ [Իր] բնութեան, այլ ըստ մեր՝ Իրեն ճանաչելու եւ ըստ Իր նախախնամութեան: Քանզի ինչպէս որ [բուն] արեգակը երկնքում է, իսկ [նրանից] ամէնուր սփռուած լոյսը մարմնապէս մերձ է ամէն ինչին, այսպէս էլ ջանում ենք հասկանալ Աստուածութիւնը, որ այդ օրինակից վեր է: Եւ ասում ենք, որ Նա բոլոր նրանց մէջ է, ովքեր գիտեն Նրան: Որովհետեւ ինչպէս որ մարմնի հպումը մարմնին՝ մերձաւորութիւն է, այդպէս էլ անստգիտ հաւատով հոգու մերձենալը Աստծուն հաղորդութիւն է ասւում: Եւ այս հոգին է Նրա տաճարը, որովհետեւ [թէպէտեւ] Նա զօրութեամբ եւ Իր տեսութեամբ մերձ է ամենքին, սակայն ամէնքը չէ, որ մերձ են Նրան: Ինչպէս օրինակ՝ արեգակը մերձ է ինձ, սակայն երբ փակում եմ աչքերս, մերձ չեմ նրան, իսկ երբ բացում եմ, հաղորդ ենք լինում միմեանց: Այսպէս եւ Աստուծոյ իմանալի լոյսն ազդում է մինչեւ շնչի եւ հոգու զատորոշումը, սակայն որքան [ժամանակ որ] փակ է հոգու աչքը, չի կարող տեսնել Նրան, Ով մերձ է, իսկ երբ բացում է, տեսնում է: Այն փակում են անհաւատութիւնը եւ յուսահատութիւնը, [այն,] որ Նրան մարմնով չտեսնելու պատճառով չենք հաւատում [Սուրբ] Գրքին, որը վկայում է Նրա մերձ լինելու մասին. ուստի եւ յոյս չենք տածում եւ օգնութիւն չենք խնդրում՝ կարծելով, թէ հեռու է մեզանից օգի անջրպետութեամբ: Այս պատճառով չասաց, թէ՝ պարուրում ես ամենքին, այլ խորութիւն դրեց, թէ՝ ովքեր Քեզ են յուսացել: Այսինքն՝ ովքեր տեսնում են Քո լոյսը, խնամում ես նրանց, քանզի չյուսացողը չի կարող աղօթել: Ինչպէս որ եթէ արեգակին ասես. «Ծագի՛ր փակուած աչքերին», նա կպատասխանի. «Ես ծագել եմ. ով կամենում է, թող ինքը աչքերը բանայ լոյսիս առաջ եւ վայելի», այսպէս էլ Աստուած ամենքին մերձ լոյս է, սակայն ոչ ամենքի իմանալի աչքերն է պարուրում կամ ծագելով՝ նրանց միանում, այլ

1 Յովհ. Ա 1
2 Մատթ. ԻԸ 20
3 Տե՛ս Յովհ. ԺԵ 4:

միայն՝ [նրանց], ովքեր յոյսով ու հաւատով բացում են միտքը եւ իրենց մերձ փայլատակող լոյսն ընդունում իրենց մէջ:

Ո՛վ [Դու], որ գիտես մեր չարախօսի ամէնուրեք [արուող] մեքենայութիւններն ու բռնութիւնը:

Այս չարախօսի մասին Դաւիթը բազմիցս խօսում է սուրբ սաղմոսներում, եւ ով մտքով հայում է [նրանց], ուսանում է [չարի] բռնութեան ու չարախօսութեան մասին: [Նրա մասին է խօսում], երբ ասում է. «Քանզի իշխանները նստեցին ու չարախօսում էին ինձանից»[1], եւ՝ «Իրենց բերանները բացեցին ինձ վրայ եւ ասացին՝ այո՛, այո՛, մեր աչքերը տեսան»[2], ինչպէս նաեւ այլ բազում բաներ:

Սակայն քննենք, թէ չարախօսութիւնն ինչպիսին է: Այդ իմանում ենք Յոբից, որովհետեւ Աստուած հարցրեց երանելու առաքինութեան մասին, եւ սատանան չարախօսեց[3]: Բոլոր մարդկանց մասին նա այսպէս ամբաստանում է Աստուծոյ առաջ: Սակայն առանց մեր կամքի նա չի կարող մեզ դցել խորհուրդների մէջ, այլ վտանգ է բերում այս արտաքին մարմնին, ինչպէս Յոբին ու վկաներին, որոնց նոյնիսկ այդպէս չկարողացաւ տիրել: Իսկ մեզ տիրում է բազում անգամ: Քանզի, մեր մէջ տեսնելով մեղքերի ախորժումը խորհրդով, դրան է խառնում ամբոխական խորհուրդներով յորդորելը եւ ստիպում մեղք գործել՝ այն քաղցր ցոյց տալով այս մարմնի յօժարութեան համար: Եւ երբ մարտում չենք կարողանում յաղթել, այլ խորհուրդը կատարում ենք գործով, չարախօսում է Աստուծոյ առաջ, թէ իբր՝ «[Մեղանչողները] ինքնակամօրէն ու բնութեան հարկադրանքով թաւալուեցին դրա մէջ եւ ոչ [իմ] մեքենայութիւնների, դաւաճանութեան եւ բռնութեան պատճառով: Ուստի մարդիկ ինձ պէս կամակոր են եւ ողորմութեան անարժան»: Եւ սա, ասում է [Յովհաննէսը] Քրիստոսին, գիտես Դու, քանզի մարմին առար, եւ [թշնամին] չկարողացաւ Քեզ հալածել: Փորձուեցիր՝ օգնելու համար վտանգուածներիս, եւ [մեզ] վշտակից Քահանայապետ ես:

Արդ, այնպէս համարենք, թէ Թագաւորը գալով՝ հաղորդ եղաւ մեր աղքատութեանը, մեր ամբողջ թշուառութեան փորձն առաւ եւ ա-

1 Սաղմ. ՃԺԸ 23
2 Սաղմ. ԼԴ 21
3 Տե՛ս Յոբ Ա 8-11:

պա գնաց Հօր մօտ: Եւ եթէ մէկ ուրիշը մեր մասին չարախօսելու մտնի Նրա առաջ, իսկոյն, Որդու ոտքերից բռնուելով, ապաւինենք Նրան՝ ասելով. «Քեզ ենք ապաւինում. Դու տեսար եւ իմացար, Դու ստոյգ գիտես՝ դա սո՞ւտ է ասում, թէ՞ ճշմարիտ»: Եւ Նա, վկայելով Հօր առջեւ, ամաչեցնում է մեր չարախօսին: Այսպէս Քրիստոս, միշտ մեզ համար քահանայագործելով, Իր մարմնով վշտակցութեան փորձն առած, ամաչեցնում է սատանային չարախօսութեան համար եւ Նրան, որ դաւաճանիչն է, դատապարտում է դաւաճանուածներիս փոխարէն՝ Հօր առաջ ցոյց տալով Իր՝ բնական կրքերով անմեղ մարմինը, որ այնպէս բարձր մնաց մեղքերից եւ արդարացրեց աներեւոյթ որսացողի պատրանքներով ու բռնութեամբ խարդաւանուած մարդկային ցեղը:

Ե

Եւ ապա, հաց խնդրելով, գոհացաւ այսպէս:

Մինչեւ այստեղ [ասուած խօսքերը] ո՛չ գոհութիւն էին եւ ո՛չ էլ իր համար աղօթք, ինչպէս որ պատրաստում է [այժմ] անել, այլ աշակերտների փրկութեան համար էին, որոնց եւ ասաց [դրանք]: Իսկ սրանից յետոյ կամեցաւ տէրունական Մարմնի յիշատակը կատարել ըստ իրենց սովորութեան, [որի մասին] գիտենք Գործք առաքելոցի պատմութիւնից: Մի տեղ ասում է, թէ հաղորդ էին լինում հացի բեկմանն ու աղօթքին[1], մէկ այլ տեղ, թէ՝ Պօղոսը, վարդապետութիւնը երկարացնելուց յետոյ, բեկանուած հացը տուեց նրանց[2]: Քանզի Քրիստոսից ընդունեցին հրամանն ու նոր ուխտը՝ այս միշտ կատարելու ի յիշատակ Իր խորհուրդների. այսինքն՝ այս զգալի հացի հետ հոգով եւ հաւատով ուտում ենք Քո Մարմինը եւ նրանից եղած փրկութիւնը: Ուստի եւ նա (Յովհաննէս Աւետարանիչը) աղօթքից յետոյ հաց խնդրեց՝ կատարելու այս խորհուրդը, որպէսզի, օրհնութիւնների գոհութեամբ հացը վերածելով Տիրոջ Մարմնի, աշակերտներին հոգով ու մարմնով հաղորդ դարձնի Քրիստոսին:

Ինչպիսի՞ օրհնութիւն, ինչպիսի՞ գոհութիւն կամ ինչպիսի՞ պատարագ անուանենք այս հացը բեկանելիս, եթէ ոչ՝ միայն Քեզ, Յիսո՛ւս:

1 Տե՛ս Գործ. Բ 42:

2 Տե՛ս Գործ. Ի 7, 11:

Փառատրութիւնը կարճում է՝ ակնարկելով [Աստուածորդու] անբաւութեան անճառելիութիւնը, այսինքն՝ օրհնելուց եւ գոհութեամբ հատուցելուց էլ վեր առատացաւ շնորհդ մեզանում, եւ չկայ [այլ] օրհնութիւն կամ բանական պատարագ, որ կարող ենք մեր կողմից տալ Քո Հօրը նրա փոխարէն, որ Քեզ շնորհեց մեզ, բացի միայն Քեզանից, Յիսո՛ւս: Այսինքն՝ միայն Քեզ ենք մեր կողմից նուէր եւ ընծաների պատարագ տալիս Նրան: Քանզի նուիրողի ամէն պատարագ Աստուծոյ հետ հաշտութեան կաշառք է, որպէսզի, ընդունելով այն, թողնի [մեր] յանցանքների պատճառով [եղած] բարկութիւնը: Արդ, իսրայէլացիները դրա համար Նրան էին տալիս անբան [կենդանիների] հոյլեր, իսկ Նա նախատեց. «Ես միս չեմ ուտում: Ինձ օրհնութեան բանական նուէ՛րը բեր, որպէսզի միտքդ նրանով հպուի Ինձ, որ անմարմին եմ»[1]: Բայց որովհետեւ այդ կերպ եւս չկարողացանք հաշտեցնել, ուստի եւ Որդին եկաւ եւ մեր կողմից Հօրը [տրուող] նուէր եղաւ: Եւ ամէն ինչի փոխարէն Նրան ենք տալիս սիրելի Յիսուսին, այսինքն՝ մեզ համար [Նրա] կրած չարչարանքների խորհուրդը: Սրա համար է [Յովհաննէս Աւետարանիչն] ասում՝ միայն Քեզ, Յիսո՛ւս. այսինքն՝ այս հացն առնելով՝ Քո այդ խորհրդով ենք կնքում եւ մեր Աստծուն ու Քո Հօրը նուէր ընծայում:

Փառաւորում ենք, Տէ՛ր, Քո յայտնած Հօրդ անունը:

Քանի դեռ Յիսուս չէր յայտնուել, ոչ ոք Աստուածութեանը Հայր կամ Որդի անուանել չգիտէր, այլ միայն փառաւորում էին Նրան իբրեւ Աստուծոյ, Որն [Իր մէջ] պարունակում էր երեք Անձեր. քանզի բոլոր Գրքերը երեք են ցոյց տալիս Աստծուն ու Տիրոջը: Իսկ ապա Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, մարմնով դալով, յայտնեց մեզ Հօր անունը եւ Անձերի յատկութիւնները: Այստեղից էլ սովորեցինք Հայր եւ Որդի եւ Հոգի անուանել Երրորդութիւն Մի Աստուածութեանը: Այդ ենք, ասում է, փառաւորում՝ Հօր Անձը՝ [Նրա] հետ եղած Որդի Անձիդ միջոցով:

Փառաւորում ենք Քո դռան մուտքը:

Դռան մուտք պէտք է հասկանալ կա՛մ [Յիսուսի]՝ նրանց երեւալը միաշաբաթի երեկոյեան, ինչպէս պատմում է[2], կա՛մ մարմնանալը: Ո-

1 Տե՛ս Սաղմ. ԽԹ 13-14:

2 Տե՛ս Յովհ. Ի 26:

որովհետեւ [Նրա] մարմինը եղաւ իբրեւ դուռ, եւ Աստուածութիւնը նրանով մտաւ այս աշխարհ, որը փառաւորում ենք, այսինքն՝ նուիրում Հօրը: Եւ դրա առաջ վերաձայնում ենք, թէ՝ Քո կամքով այս ընդունեցինք իբրեւ շնորհ՝ Քո Միածնի միջոցով:

Փառաւորում ենք Քո Ցարութիւնը, որ Քեզանով ցոյց տրուեց մեզ:

Որովհետեւ Նա եղաւ անդրանիկը մարմնով մեռածներից, որ յարութիւն առաւ մշտնջենապէս: Եւ ցոյց տուեց ամենքին, որ մարմին ունեցողներին հնարաւոր է յառնել մեռնելուց յետոյ եւ մնալ անապականութեան մէջ: Եւ այս, ասում է, Քեզանից ընդունած շնորհը[1], նուիրում ենք Հօրը իբրեւ բարեխօս մեզ համար:

Փառաւորում ենք Քո ճանապարհը:

Այսինքն՝ մարմնով [անցած] ճանապարհը, որ [Տէրը] հարթեց երկնքում մեռելներից յարութիւն առնելուց յետոյ եւ նստեց Հօր աջ կողմում՝ մշտնջենաւորների մէջ՝ իբրեւ մեզ սրբող եւ քահանայապետ:

Փառաւորում ենք Քո սերմը...

Սերմ են կոչւում Քրիստոսի՝ մարմնով յայտնուելուց յետոյ [իրագործած] զանազան տնօրինութիւնները: Եւ դրանք սերմանեց մեր մէջ եւ բուսցրեց Իր կողմից [տրուած] շնորհները, հաւատը եւ խոստովանութիւնը, որոնք սահմանեց ըստ կարգի. նախ՝ աշխարհ մտնելը, ապա՝ յառնելը, այնուհետեւ, դէպի երկինք [տանող] ճանապարհով [ելնելով], Հօր աջ կողմում նստելը: Եւ ապա՛ սերմը: Որովհետեւ Նրա գիտութեան սերմը այնժամ բուսաւ մեր մէջ, երբ Նա, մտնելով երկինք, Հոգու ցողը հեղեց այս աշխարհի վրայ:

Եւ Նա գալով՝ ի՞նչ բուսցրեց մեզ համար. խօսքը, շնորհը, հաւատը՝ սրանք սերմանեց Քրիստոս: Բայց քանի դեռ Ինքը երկրում էր, որեւէ մէկի սրտում չբուսաւ սրանց հաւատը, այլ աշակերտները յարութիւնից յետոյ էլ մանուկներ կոչուեցին՝ մանկաբար [կատարուող] գործում: Իսկ երբ Հոգին եկաւ, ծաղկեցրեց այն, ինչի մասին ասում է, [այսինքն՝ սերմը]: Եւ սակաւ ու փոքր խօսքերով մեծամեծերն է թուարկում:

1 Այսինքն՝ Քրիստոսի Ցարութիւնը:

Խօսքը. *որովհետեւ Հոգու [գալուստից] յետոյ իմացանք, թէ Նա, Ով սկզբում յայտնուեց մեզ, Հօր Խօսքն էր: **Շնորհները.*** *եւ Նոյն Ինքը շնորհներով իջաւ երկնքից եւ մարմնանալով՝ բնակուեց մեր բնութեան մէջ: **Հաւատը.*** *եւ ո՞րն է սրա պատճառը. Բանի շնորհները, [որովհետեւ Տէրն] ըստ [մեր] արժանիքների չիջաւ [երկիր, այլ]՝ որպէսզի մեզ համար հաւատ լինի, այսինքն՝ [Իր] սքանչելիքներով մեզանում հաստատի Աստուածութեան գիտութիւնը եւ անչափ գթութեամբ՝ մարդկանց փրկութիւնը: **Աղը.*** *որովհետեւ ինչպէս աղն է համեմում եւ ճաշակելի դարձնում կերակուրը, այնպէս էլ Նա, Իր՝ մեզ յայտնուելով, համեմեց մեր մարդկային անհամութիւնը եւ ճաշակելի դարձրեց Հայր Աստծուն. այսինքն՝ Աստուածութիւնը խառնեց այս մարմնին եւ այս մարմինն անուշացրեց աստուածեղէն աղով: **Անխօս մարգարիտը.*** *երբ ասում է, թէ Աստուծոյ միութիւնը աղ է այս մարմնի համար, աւելացնում է՝ անխօս մարգարիտը՝ սրանով հաստատելով խօսքից վեր անճառ միութիւնը: Քանզի «անխօս» է ասում, որովհետեւ խօսքը կամ խօսքով [արուած] պատմութիւնը չի կարող հասու լինել Նրան եւ ցոյց տալ Աստուծոյ՝ մարմնի հետ միաւորուելու եղանակը. որովհետեւ խառնումը եւ ոչ շփոթումը, բնութեամբ միութիւնը եւ էութիւնների [տարբեր] յատկութիւնները երեւում են նոյն Մէկի մէջ: Միացման պատճառով բնութիւնները չփոփոխուեցին, ինչպէս տեսնում է այլ միաւորութիւններում, եւ ոչ էլ անշփոթ միութիւնը յարակցութիւն եղաւ, ինչպէս որ մեզանում գտնում ենք իրերի անփոփոխելի հպաւորութիւնները: Այլ [այս] միութեան մէջ երեւում են [առանձին] յատկութիւնները, իսկ դրանց մէջ էլ՝ միութիւնը, որն անհասանելի է մարդկային խօսքին եւ անճառելի՝ նրա մտքի ու լեզուի համար: **Գանձը.*** *Քրիստոս Աւետարանում Իրեն անուանեց գանձ եւ մարգարիտ[1], եւ գանձը երկրորդում է այն անուններին: Գանձ է [կոչւում], որովհետեւ Նա ամենայն հոգեւոր հարստութեան պատճառն է ստացողի համար: Իսկ ագարակում է, որովհետեւ պարունակուեց մարմնի մէջ եւ հասանելի ու փափագելի չէ ամենքին, այլ միայն՝ գիտեցողներին, ովքեր եւ վաճառում են այս կեանքի բոլոր զբաղմունքները եւ, սիրոյ գնով սեփականացնելով, [իրենց] սրտի մէջ Նրան են ստանում: **Արքը.*** *քանզի Նա՝ աշխարհին տրուած Գանձը, որ մարդացաւ շնորհով եւ անճառելիօրէն միացաւ մեզ, չսպասեց, մինչեւ որ մենք փութայինք*

1 Տե՛ս Մատթ. ԺԳ 44:

դէպի Նա, եւ կարօտեալներս գրկախառնուէինք շնորհին, այլ Ինքը արօր եղաւ վարդապետութեան խօսքով ու նշանագործութեամբ եւ հերկելով սերմանեց մեզանում մեր փրկութեան գիտութիւնը: **Ուռկանը.** նոյն Ինքը Բանն է, որ, գցուելով այս աշխարհ, մարդկանց որսաց մեղքերի ծովից [նրանց] փրկութեան համար: **Մեծութիւնը.** որովհետեւ ոչ թէ որսաց մահուան համար, այլ ուռկանով ժողովուածներին բարձրացրեց դէպի անվախճան թագաւորութեան մեծութիւնը:

Որ մե՛զ համար կոչուեցիր մարդու Որդի...

Ծածկաբար ասածները [այսուհետեւ] սկսում է մեկնաբանել՝ երկրորդելով այլ եղանակով: Քանզի Դու, ասում է, որ [Աստուծոյ] Բանն էիր, ոչ այլ բանի, այլ մեզ համար շնորհով յանձն առար լինել եւ կոչուել մարդու Որդի:

Ճշմարտութիւնը. ինչը վերեւում կոչեց հաւատ, այստեղ անուանում է ճշմարտութիւն, որովհետեւ մարդկութեանը [տրուած] այս շնորհը մեզ համար, ասում է, եղաւ Քո կողմից փրկութիւն ճշմարտապէս եւ ոչ թէ կարծեցեալ պատրանքով: **Հանգիստը.** արդարեւ հանգիստ, որից առաւել հանգիստ եւ ուրախութիւն չկայ վրդովուած հոգու համար: Այսինքն՝ եթէ [մէկը] պոռնիկ է, [Աւետարանի] պոռնիկին հանգստացած է գտնում Նրա մօտ. թէ [մէկն] աւազակ է, Տիրոջը տեսնում է աւազակին ողորմելիս. թէ մաքսաւոր՝ մաքսաւորների հետ սեղան նստած եւ մինչեւ ամենայետինները խոնարհուած, որպէսզի բոլոր յուսահատուածները, դիմելով դէպի Նրա յոյսը, հանգիստ գտնեն՝ [ազատուելով] իրենց խռովութիւնից: **Գիտութիւնը.** Քրիստոսի տնօրինութեան գիտութիւնն է, թէ ինչու [այն] եղաւ, կամ Նրա կողմից որչափ զօրութիւն ընձեռուեց մեզ. քանզի խորհրդաբար է եւ ոչ յայտնի, ինչի մասին եւ այս աղօթքն էր անում առաքեալը եփեսացիների համար. «Աղօթում եմ, որ գիտենաք, թէ ինչ է Նրա կոչման յոյսը, եւ ինչ է Նրա զօրութեան առաւելութիւնը մեզանում»[1]: **Զօրութիւնը.** արդ, Պօղոսը ցոյց է տալիս, թէ ինչ է զօրութիւնը. «Որովհետեւ,- ասում է,- փրկուած էք Նրա շնորհներով՝ հաւատի՛ միջոցով եւ ոչ գործերի»[2]: **Պատուիրանը.** հաւատից յետոյ կարգում է նաեւ պատուիրանը, որն ընդունեցինք, քանզի այս երկուսով ենք կատարեալ

1 Տե՛ս Եփես. Ա 18-19:

2 Տե՛ս Եփես. Բ 8-9:

լինում: **Համարձակութիւնը.** երբ հաւատով զօրանում ենք եւ պարբսպւում պատուիրանով, Իր հանդէպ համարձակութիւն է տալիս մեզ՝ ասելով. «Եթէ Իմ մէջ մնաք, եւ Իմ խօսքերը՝ ձեր մէջ, ինչ որ խնդրէք Իմ անունով, կլինի ձեզ»[1]: Եւ [նրանք,] ովքեր մնացին [Նրա մէջ] եւ պահեցին [Նրա պատուիրանները], գիտենք, որ համարձակօրէն խնդրեցին եւ ստացան: **Ազատութիւնը.** քանզի գերեալներիս ազատեց Իր շնորհներով: Այսինքն՝ ամէն մարդ ճշմարիտ էր կարծում այս աշխարհի կեանքը եւ սրան էր ծառայում, որքան կարողանում էր. իսկ Նա գալով՝ այլ կեանք քարոզեց՝ ամենքի միտքն ու ցանկութիւնը ազատելով մեղքերի ժամանակաւոր գերութիւնից: **Դէպի Քեզ փախուստը.** որովհետեւ երբ մէկն ազատւում է, միանգամից չի զերծ մնում այս աշխարհից, այլ աշխարհը, ընթանալով [նրա] ետեւից, գայթակղում է փառքով, զբաղմունքներով կամ հեշտութեամբ, որպէսզի թերեւս հասնի ու կործանի: Իսկ ազատուածը փախչելու այլ ապաստան չունի, բացի Քրիստոսից, Ում մէջ հաստատւում է աղօթքով եւ հաւատով՝ իր [մտքի] աչքի առաջ նկարելով Նրա խոստումներն ու չարչարանքները եւ օրըստօրէ, փութով, արագացնում [Իր] ընթացքը դէպի մարտի Զօրագլուխը:

Որովհետեւ Դու ես, Տէ՛ր, անմահութեան արմատը, անապականութեան աղբիւրը եւ յաւիտեանների հիմքը:

Ամբողջացնում է կարգաւ ասածները. այսինքն՝ դէպի Քեզ են փախչում այն պատճառով, որ միայն Քեզ ճանաչեցին իբրեւ անմահութեան արմատի: Եւ Նրան անմահութեան արմատ է կոչում ոչ ըստ Աստուածութեան, այլ ըստ մարմնի. քանզի Նա եղաւ մարմնի անմահ լինելու սկիզբն ու արմատը, եւ մահից անմահութեան փոխուած այլ մարմին չեղաւ Նրանից առաջ: **Անապականութեան աղբիւրը եւ յաւիտեանների հիմքը.** դարձեալ նոյնն է, քանզի Քրիստոսից բխեց մահկանացուներիս անապական լինելու յոյսն ու գիտութիւնը: Եւ ովքեր ունեն այն յաւիտենական կեանքի յոյսը, իրենց հաւատի եւ յոյսի շինուածքը Նրա վրայ են կառուցում՝ որպէս հիմքի, ինչպէս որ առաքեալն է գրում. «Որն իբրեւ անշարժ խարիսխ ունենք մեր անձերի համար՝ վարագոյրի ներսի կողմում»[2]:

1 Տե՛ս Յովհ. ԺԵ 7:

2 Տե՛ս Եբր. Զ 19-20:

Որ այս ամէնը կոչուեցիր մեզ համար, որպէսզի մենք, սրանցով կոչելով Քեզ, ճանաչենք Քո մեծութիւնը:

Տե՛ս ինչ է ասում. քանզի այս բոլոր անունները, ասում է, ոչ թէ յայտնում են Քո Աստուածութեան բնութեան էութիւնը, այլ ցոյց են տալիս մարդասիրութիւնդ, որովհետեւ ա՛յն դարձրեց Քեզ աղ, մարգարիտ, արօր եւ ուռկան: Եւ մեծութիւնդ սահմանուում է գործերիդ անուանադրութեամբ, ոչ թէ՝ Քո բնութեան սահմանումով, որովհետեւ դա անհասանելի է:

Որն անտեսանելի է այս ժամանակում եւ տեսանելի է միայն սուրբերին, եւ միայն Քո մէջ է մարդը կերպարանուած:

Թող ոչ ոք չկարծի, թէ Աստուածութեան մասին է ասում՝ այժմ անտեսանելի է աշխարհի համար եւ հասանելի՝ սուրբերին, որովհետեւ Նա անհաս է մնում նաեւ սուրբերի համար, ինչպէս որ ինքը Յովհաննէսը գրեց թղթի մէջ. «Սիրելինե՛ր, այժմ Աստուծոյ որդիներ ենք, եւ տակաւին յայտնի չէ, թէ ինչ է լինելու: Գիտենք, որ երբ Նա յայտնուի, Նրա նման ենք լինելու, քանզի տեսնելու ենք Նրան, ինչպէս որ կայ: Եւ ամէն ոք, ով այս յոյսն ունի իր մէջ, սրբում է իրեն, ինչպէս որ Նա է սուրբ»[1]:

Արդ, սովորեցինք, որ Աստուածութիւնն այժմ անհասանելի է եւ տեսանելի կլինի հանդերձեալում: Իսկ այժմ անտես է ասում մարդանալու խորհուրդը, որը եւ անուանեց զանազան անուններով, քանզի այն անտեսանելի է շատերին եւ յայտնի՝ միայն սուրբերին, ովքեր գործադրում են իմաստութիւնն ու սրբութիւնը: Այսինքն՝ Քրիստոս մարդանալով՝ ոչ թէ տարրը կամ բնութիւնները փոխեց, որովհետեւ Իր գործը յայտնի էր լինում ամենքին ակամայ կամքով, այլ, խորհրդաբար մարդ դառնալով, վերստին բարձրացաւ:

Ով կամենում է, տեսնում է Նրան եւ Իր խորհուրդները: Իսկ ովքեր չկամեցան, չտեսան ու չեն տեսնում Նրան: Իսկ ի՞նչն են տեսնում. սուրբերը հաւատի աչքերով [տեսնում են] Նրա ներմարդութեան այս խորհուրդը, ինչի մասին [իր] թղթում ասաց. «Այժմ Աստուծոյ որդիներ ենք», բայց՝ յոյսով եւ ոչ արդիւնքով, խորհրդաբար եւ ոչ յայտնապէս, որովհետեւ դեռ յայտնի չէ, թէ ինչ ենք: Մինչդեռ սուրբերը հաւատով տեսնում են, որ երբ Նա յայտնուի, Նրա նման կլի-

1 Ա Յովհ. Գ 2-4

նենք [եւ մենք], որ ծնուեցինք մեր Ցեղապետի՝ Նոր Ադամի հոգեւոր զանգուածից: Այս յոյսի համար են սրբում իրենց անձերը այս աշխարհի պատրանքից: Եւ որքան [աւելի] են սրբում, այնքան առաւել են տեսնում շնորհների մեծութեան պատկերը, ինչպէս որ ասում է. «Միայն Քո մէջ է մարդը կերպարանուած»: Այսինքն՝ ով Քո մարդն է լինում եւ Քո անդամը լինելը անարատ պահում, այս շնորհի մեծութիւնը նրա իմացական աչքերում է կերպարանւում եւ ոչ թէ՝ ամենքի: Որովհետեւ [նա] է Քրիստոսի մարդ եւ Նրա տաճարը, ով հագել է Նրան: Այդպիսի մարդու մէջ այն կերպարանւում է հաւատի մատակարարութեամբ, մտքի գիտութեամբ եւ մարմնի սրբութեամբ: Ուստի եւ առաքեալը, Նրա մարդը լինելով, իր մէջ ցոյց էր տալիս պատկերը. «Այժմ,- ասում է,- տեսնում ենք օրինակով՝ իբրեւ հայելիով»[1]:

Բայց տե՛ս այս խօսքի ստուգութիւնը. ասում է՝ կերպարանուած, ոչ թէ՝ ճշմարտուած. քանզի ինչպէս որ նկարուած պատկերն իրենով [ներկայացնում է] կենդանի [նախատիպի] էութիւնն ու ձեւը, բայց ոչ՝ զօրութիւնը, այդպէս էլ սուրբերն իրենց մտքի մաքրութեան մէջ կարողանում են կերպարանել ու տեսնել հանդերձեալ մեծութիւնը, բայց զօրութիւնն ու փառքը այժմ վայելում են ոչ թէ արդիւնքով, այլ միայն յոյսով, իսկ գործնականում չարչարանքներ եւ մարմնի նեղութիւններ են կրում: Իսկ ով Քրիստոսի մարդն ու տաճարը չէ, սուրբ չէ եւ ոչ էլ՝ նման սուրբերին. ո՛չ այժմ կարող է հանդերձեալ փառքի նմանութիւնն ու կերպարանքը հաւատով եւ յոյսով տեսնել իր մէջ կամ գծագրել մտքում, ո՛չ էլ հանդերձեալում վայելել նրա արդիւնքը, ինչպէս Քրիստոս ասաց. «Հա՛յր, Ես աղաչում եմ սրանց համար եւ ոչ՝ աշխարհի»[2]:

Այսպէս աւարտին հասցրեց Հօր հետ խորհրդածութիւնը եւ, Նրան այսպէս պատարագելով [Աստուածորդու] տնօրինութեան շնորհների վերաբերեալ իր անուանադրութիւններով, խորհուրդը հասցրեց վախճանի. քանզի կարիք չունէր խօսքերի երկարութեամբ հաշտութեան բերելու կամ գթալ տալու, որ անճառ խաղաղութեամբ իր մէջ բնակուած ունէր Նոյն Իրեն՝ Հաշտարարին:

1 Տե՛ս Ա Կոր. ԺԳ 12:

2 Տե՛ս Յովհ. ԺԷ 9:

Զ

Եւ, հացը բեկանելով, պարզեց նրանց՝ իւրաքանչիւր եղբօր վրայ աղօթք անելով, որ արժանի լինեն շնորհներին եւ սուրբ գոհութեանը:

Հացի հետ նրանց պարզեց նաեւ շնորհները: Ո՞ր շնորհը, եթէ ոչ՝ այն, որի մասին ինքն ասաց. «Յիսուսի Արիւնը մեզ սրբում է բոլոր մեղքերից»[1]: Ուստի եւ բաշխելիս աղօթում էր, որ արժանի լինեն Տիրոջից տրուող պարգեւներին: Քանզի չկայ այլ արժանաւորութիւն, բացի միայն հաւատից եւ գիտութիւնից. հաւատալ, թէ ինչպէս որ Ադամի այս մարմինը դատապարտում է ինձ, թէպէտեւ չմեղանչեցի նրա հետ, այսպէս էլ Քրիստոսի Մարմինը սրբում է ինձ, թէպէտեւ Նրա պէս սուրբ չեմ, երբ [այդ] հացի հետ Նրա Մարմին լինելու խորհուրդն ու շնորհը ճանաչում եմ հոգով եւ ուտում:

Ինքը նոյնպէս ճաշակեց եւ ասաց, թէ՝ ինձ եւս թող մաս լինի ձեզ հետ, ի՛մ սիրելիներ, եւ Տիրոջ խաղաղութիւնը թող ձեզ հետ լինի:

Քանզի ինչպէս որ ամէնքս հոգով մի ենք Քրիստոսի մէջ, այնպէս էլ Նրա Մարմնի հաղորդութեան խորհրդի մէջ պիտի մի լիննենք: Ուստի եւ ինքն էլ ճաշակեց եղբայրների հետ՝ իր անձը կցորդելով նրանց փրկութեանն ու խաղաղութեանը, որ շնորհուեցին Քրիստոսի Մարմնի բաշխմամբ:

Եւ ասում է Բիւռոսին. «Քեզ հետ վերցրու եղբայրներիցդ երկուսին երկու որթերով ու բրիչներով հանդերձ եւ ե՛կ իմ ետեւից»:

Եղբայրները ժողովուել էին նրա մօտ (կա՛մ տանը, կա՛մ եկեղեցում), ուր եւ [այս] խօսքը ասաց նրանց եւ բաշխեց հաղորդութիւնը: Այնուհետեւ գաղտնաբար կատարում էր իր մահուան ծածուկ խորհուրդը, որպէսզի չխռովուեն որեւէ բանով: Քանզի կամովի էր եւ ոչ բռնութեամբ, իսկ աշակերտները գիտենալու դէպքում կարող էին հրաժարեցնել, ինչպէս որ Պօղոսը Ագաբոսի մարգարէութիւնից յետոյ ասում էր Երուսաղէմում. «Ինչո՞ւ էք լալիս ու ճմլում իմ սիրտը»[2]: Արդ, որպէսզի չճաշակի այս [ամէնը], խորհուրդը չյայտնեց, այլ միայն թաղման գործի սկիզբն արեց՝ աշակերտին հրամայելով վերցնել

1 Ա Յովհ. Ա 7

2 Գործ. ԻԱ 13

եղբայրներին, բրիչներ ու որթեր, [այսինքն՝] տապանի համար անհրաժեշտ իրերը:

Եւ Բիւռոսը առանց յապաղելու արեց այն, ինչ հրամայեց նրան Աստուծոյ ծառայ Յովհաննէսը:

Այս Բիւռոսը թերեւս Պրոքորոնն է՝ եօթից մէկը, որ Յովհաննէսի պատմութեան հեղինակն է՝ ըստ ոմանց կարծիքի:

Եւ երանելի Յովհաննէսը, ելնելով տանից, գնում էր՝ դռան առջեւ [ժողովուած] բազմութեանը հրամայելով մեկուսանալ իրենից:

Քանզի երբ նա ելաւ, ամէնքը նրա հետ դուրս եկան, իսկ նա հրամանով արգելեց նրանց եւ տեսաւ, որ բազում էր ժողովուրդը, ում եւ ասաց [այս] խօսքերը: Քանզի ոչ ոք [այնպէս] ընդհանրաբար ու միամտօրէն չընդունեց Քրիստոսի հաւատը եւ չպահեց [այնպիսի] անխոտոր առաջադիմութեամբ, ինչպէս եփեսացիների քաղաքը, որը յայտնի է Պօղոսի՝ նրանց ուղղուած թղթից[1]:

Եւ, հասնելով մի եղբօր շիրմի, ասաց պատանիներին. «Բրեցէ՛ք, որդեակնե՛ր», եւ նրանք բրում էին: Իսկ նա շտապեցնում էր նրանց ու ասում. «Ձեր բրածը թող աւելի խոր լինի»:

Ինչպէս իմացանք ականատեսներից, [նա] կամեցաւ, որ գերեզմանը լինի Եփեսոս քաղաքից դուրս եւ բարձրադիր վայրում: Իսկ, հասնելով [եղբայրներից մէկի] շիրմին, այնտեղ [փորել տուեց], որպէսզի գործով եւ ոչ խօսքով հասկացնի խորհուրդը, թէ՝ ինձ էլ է սպասում այս եղբօր ճանապարհը: Սակայն [եղբայրները] չէին համարձակւում հարցնել, քանզի նրանց մէջ չկար յանդգնութիւն ծնող աւելորդ խօսք: Այլ համբերում, լռում եւ նախապատրաստում էին սուրբին, ինչպէս որ [առաքեալները] Քրիստոսի հանդէպ էին անում, որովհետեւ տեսան Նրան եւ չէին համարձակւում հարցնել[2]:

Եւ մինչ բրում էին, կեանքի խօսքն էր ասում նրանց եւ յորդորում տանից իր հետ եկածներին՝ նրանց շինելով ու հաստատելով Տիրոջ մեծութեան մէջ եւ աղօթք անելով իւրաքանչիւրի վրայ:

Թւում է, թէ բազմութիւնը մեկուսացաւ, բայց բոլոր աշակերտները եկան նրա հետ, որոնց եւ հաստատուելու խօսքն էր ասում եւ ա-

1 Տե՛ս Եփես. Ա 15-17:

2 Տե՛ս Յովհ. ԻԱ 12:

ղօթք անում՝ սովորած լինելով Քրիստոսից, որովհետեւ Նա եւս այսպէս արեց մատնութեան գիշերը. նախ խօսեց նրանց հետ եւ ապա, Հօրն աղօթելով, խնդրեց նրանց համար[1]:

Իսկ մենք բնաւ ոչինչ չէինք հասկանում:

Մահուան նախակարապետը ցաւն ու հիւանդութիւնն են կամ բռնութեամբ սպանութիւնը, իսկ նա զերծ էր սրանցից: Եւ [աշակերտներն] ինչպէ՞ս կարող էին առանց բացատրելու հասկանալ անընտել իրողութիւնը: Դարձեալ՝ որովհետեւ ամէնքը նաեւ լսել էին Քրիստոսի խօսքը, թէ՝ «Ես կամենում եմ, որ դա մնայ, մինչեւ Ես գամ»[2]*, եւ յոյս ունէին, թէ երանելին [իր] օրերի երկարութեամբ անմահութիւն ունի, ինչում համոզուած լինելով՝ չէին կարողանում հասկանալ այս յանկարծադէպ մահը:*

Է

Եւ երբ պատանիներն աւարտեցին շուրջանակի բրելը, ինչպէս եւ կամենում էր, երանելին մերկացաւ հանդերձներից, որ հագել էր, եւ ընկողմանեց խորափիտում[3]*՝ իբրեւ անկողնու մէջ՝ մնալով միայն նափորտով*[4]:

Սրանով ցոյց տուեց գալիք իրողութեան խորհուրդը, թէ՝ ինչպէս որ հանդերձներից [եմ մերկանում], այդպէս էլ այժմ մերկանալու եմ այս մարմնից, որ տարածւում է գերեզմանի վիհի մէջ առանց այն հագնողի, այսինքն՝ իմ հոգու: Իսկ [հոգին] բարձրանում է Աստուծոյ մօտ, Ում եւ կարօտել է:

Եւ, իր ձեռքերը բարձրացնելով դէպի վեր, աղօթեց այսպէս:

Հարկ է մեզ գիտենալ, որ խօսքի մեկնողն անկարող է յայտնի դարձնել աղօթքի զօրութիւնը. որովհետեւ աղօթքը խօսքի մարմնի հետ խառնուած ունի նաեւ աղօթքն Ընդունողի հանդէպ տուփանք, իղձ ու տենչանք, եւ սա ներքին մարդու հոգու կիրքն է եւ ոչ՝ ճառելի խօսքի:

1 Տե՛ս Յովհ. ԺԳ-ԺԷ:

2 Յովհ. ԻԱ 22

3 Խորափիտ - խոր փոս

4 Նափորտ - շորտշառ, փիլոն

Արդ, ինչպէս որ երեւելի մարմինն ունի աներեւոյթ հոգի եւ նրանով է շարժւում ու կենդանի ասւում, իսկ երբ հոգին ելնում է այս մարմնի նիւթից, թերի չի դառնում, սակայն զրկւում է կեանքից, այնպէս էլ այս սուրբի աղօթքը նրա խօսելու պահին կենդանի էր, որովհետեւ իր հետ խառնուած ունէր սիրոյ եւ բաղձանքի հոգին, որ բուրում էր ի հաճութիւն Աստուծոյ: Իսկ մեզ մօտ մնաց այս խօսքի մարմինը եւ ոչ կեանքը՝ աներեւոյթ բաղձանքն ու սէրը, որով էր սա շարժւում եւ գործում: Եւ խօսքի նիւթն անպակաս ունենք մարմնի պէս, սակայն բաղձանքի հոգին, որով էր նա կենդանի, մնաց Յովհաննէսի մօտ, նաեւ՝ նրանց, ովքեր, նրա փափագն այս խօսքին խառնելով, դարձեալ կենդանացնում են [այն] եւ նուիրում Աստծուն: Ուստի եւ աղօթքի մեկնութեան մէջ անվայելչութիւն է տիրում, երբ հնարաւոր չէ նրա հետ ցոյց տալ եւ բաղձանքը: Բայց գրածներիս հետ դու առանց գրի իմացի՛ր մտքիդ մաքրութեամբ՝ քո անբարբառելի փափագմամբ, թէ որտեղից բուսան այս խօսքերի բողբոջները, քանզի Յովհաննէսի խօսքն է՝ [ուղղուած] Յիսուսին, սիրեցեալ աշակերտինը՝ սիրող Վարդապետին, Աստուածածնի որդեակինը՝ անդրանիկ Եղբօրը, լանջին ողջագուրուողի պաղատանքը՝ Ողջագուրուածին:

Ո՛վ [Դու], որ ընտրեցիր մեզ՝ հեթանոսներին առաքելու:

«Ո՛վ [Դու]»-ն լսելով՝ [Աստուածութեան] անհասութի՛ւնն իմացիր, դէպի որը նայելով [իր] սրատես իմանալի բիբերով՝ [Յովհաննէսը] տեսնում էր եւ զգալի խօսքով չէր կարողանում նոյնը պատմել. քանզի չի ասում՝ «Յիսուս» կամ «Տէր», այլ՝ «ո՛վ [Դու]»: Այսինքն՝ անուամբ կանչելը ցոյց է տալիս խօսակցի հեռու լինելը, ում կանչում են անուամբ եւ ապա խօսում. իսկ քանի որ Նա հեռու չէ, այլ՝ մերձ եւ հուպ, բաւական է համարում միայն «Ո՛վ [Դու]» ասելը: Ընտրեցիր մեզ՝ հեթանոսներին առաքելու եւ ե՞րբ էր ընտրութիւնը. նախքան աշխարհի լինելը՝ ըստ Պօղոսի[1]*: Իսկ հեթանոսներին առաքել նշանակում է, որ նախ հրեաների մօտ առաքելուց յետոյ, երբ նրանք ժխտեցին շնորհը, [Տէրն] ասաց [աշակերտներին]. «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակե՛րտ դարձրէք բոլոր հեթանոսներին»*[2]:

Ո՛վ [Դու], որ առաքեցիր մեզ աշխարհ, Աստուա՛ծ:

1 Տե՛ս Եփես. Ա 4:

2 Մատթ. ԻԸ 19

Ում ընտրեց նախքան աշխարհի [լինելը], երբ կամեցաւ, [նրանց] առաքեց աշխարհ իբրեւ փրկութեան քարոզիչներ եւ երկնքի արքայութեան աւետաւորներ:

Ո՛վ [Դու], որ Քեզ ցոյց տուեցիր Քո մարգարէների միջոցով:

Ասում է՝ այս շնորհների հիմքը գցեցիր մարգարէների մօտ եւ ապա աւարտեցիր մեզանով, որպէսզի շնորհը չլինի վայրապար կամ հարեւանցի: Իսկ թէ նրանք ինչպէս իմացան ու յայտնեցին, յայտնի է ամենքին, ինչպէս որ նրանցից մէկն է ասում. «Տէր Սաբաւովթը ոչինչ չի գործում՝ առանց յայտնելու իր ծառայ մարգարէներին»[1]:

Ո՛վ [Դու], որ երբէք դադար չտուեցիր, այլ միշտ ապրեցնում ես հզօրներին[2]:

Տե՛ս, թէ ինչ է ասում. Դու միշտ ապրեցնում ես, ասում է, եւ կամենում ես այդ, բայց ապրում են ոչ ամէնքը, այլ կարողները, եւ սա՝ բոլոր դարերում: Որովհետեւ Ենովքը իր [ապրած] դարի յանդիմանիչն է, քանզի ովքեր կամեցել էին, նրա հետ ապրել էին. Նոյը՝ իր [դարի], մարգարէները՝ Իսրայէլի, իսկ առաքեալներն ու սուրբերը՝ հեթանոսների: Ով որ կառչեց փրկութիւնից, երբ էլ կամեցաւ՝ հաստատուեց: Այս է ցոյց տալիս Նրա մշտապէս խնամելը եւ չփրկուածների՝ մարմնական ախտերով [լի] անկատարութիւնը:

Ո՛վ [Դու], որ Քեզ ճանաչեցրիր բոլոր բնութիւնների միջոցով:

Այսինքն՝ «Նրա աներեւոյթ գործերը այս արարածներով են իմացուելով տեսնւում»[3], քանզի սրանք աննիւթների ուրուական-պատկերն են: Այս է ցոյց տալիս խորանը, որ կանգնեցրեց Մովսէսն ըստ այն օրինակի, որ տեսաւ լեռան վրայ, եւ պաշտօնեաները՝ նրա մէջ, ովքեր, ըստ առաքեալի, ծառայում էին երկնաւորների նմանութեամբ եւ օրինակով: Եւ սա հաստատում է, որ բոլոր զգալիները Աստուծոյ կողմից ստեղծուեցին իբրեւ իմանալիների յարացոյց, ինչը չյապաղե-

1 Տե՛ս Զաք. Է 12:

2 Բնագրում զկարողսն, այլ տարբերակներում զկարօտեալսն: Այս երկու տարբերակներն իրականում չեն հակասում միմեանց, եթէ կարող=հզօր բառն ընկալենք ըստ Եսայու.մարգարէութեան մէջ ասուածի. «Հզօրներին կբաշխի աւարը» [Ես. ԾԳ 12]: Հզօրը այստեղ, ըստ սուրբ հայրերի մեկնութեան, նա է, ով մեծ մարտ է մղում սեփական եսի դէմ, ով հեզ է ու խոնարհ եւ ճանաչում է իր ողորմելի, կարօտեալ վիճակը:

3 Հռոմ. Ա 20

ցին ասել նաեւ հեթանոսների իմաստասէրները, քանզի այն իմանալին անուանեցին գոյ եւ որակ, իսկ այս նիւթը՝ գոյի պատկեր եւ անգոյ՝ փոփոխական ու ապականացու [լինելու] պատճառով: Եւ քանի որ որակն ու գոյերը անմարմին են, պարզ է, որ նոյնն են եւ ձեւերը. որովհետեւ աննիւթաբար են տեսնւում մտածութիւններում: Այսպիսով, էների բնութիւնը ճանաչեցնում է [մեզ] Աստծուն եւ Նրա՝ Իր արարած ձեռակերտներից վեր [լինելը]:

Ո՛վ [Դու], որ անգամ անասուններին քարոզուեցիր:

Ինչպէ՞ս հասկանանք այս խօսքը. գուցէ շնչաւոր անասունների՞ն է ասում: Ո՛չ երբէք: Քանզի թէպէտ նրանցից մի քանիսը եկան Անտոնի մօտ՝ ցոյց տալով, որ ճանաչեցին Քրիստոսի շնորհներն ու հնազանդուեցին Նրա անուանը եւ զգօնացան Նրա վկաների առջեւ, սակայն մենք պէտք է ըստ փոխաբերութեան նայենք այս խօսքին՝ սովորելով Դաւթից. «Քո արդարութիւնը որպէս լեռներ է, Աստուա՛ծ, եւ Քո իրաւունքը՝ որպէս խորքեր: [Դու] ապրեցնում ես մարդկանց եւ անասուններին»[1]: Քանզի անասուն է նա, ով չունի իմացականի գործառութիւնը, թէպէտեւ մարդ է: Իսկ ճշմարիտ մարդ է նա, ով [իր] շունչն ու մարմինը դաստիարակում է [իմացականով]: Արդ, Աստուած կամեցաւ, որ մարդիկ իմացութեամբ պաշտեն Իր իմանալի փառքը: Մինչդեռ նրանք չկարողացան եւ տկարաբար միշտ անասունի պէս քարշ էին գալիս հողի վրայով: Այս պատճառով Քրիստոս, գալով եւ իմանալի Աստուածութեանը զգալի մարմին խառնելով, մեր անասնէղէն աչքերին զգայապէս ճանաչեցրեց Իրեն եւ զգալի գիտութեան հետ բարձրացրեց դէպի Իր իմանալի փառքի իմաստը:

Ո՛վ [Դու], որ անապատացած ու վայրի հոգին դարձրիր զգօն եւ հանդարտ:

Տե՛ս, որ ճշմարտապէս ասածներիս կարգը այսպէս է հետեւում. որովհետեւ երբ Նա եկաւ, մարդիկ անապատ էին եւ իմանալի գիտութեան մէջ՝ վայրի: Զգիտէին, թէ այլ կեանք կայ, կամ այլ Աստուած՝ այս երկրից վեր: Այլ իրենց աստուածսիրութեան փափագը նուիրում էին ոսկուն, արծաթին ու մարդակերպ ուրուականներին: Իսկ Նա տես ինչ մեղմութեամբ զգաստացրեց. մարդապաշտներին տուեց Իրեն իբրեւ մարդ, պատկերասէրներին Իր պատկերը շնորհեց՝ երկրպագելու,

1 Սաղմ. ԼԵ 7

եւ այսպէս զգաստացրեց նրանց զգայութիւնը եւ հանդարտեցրեց: Որովհետեւ երբ հեթանոսներին ասում էին, թէ Աստուած անտես է, անհաս, աննիւթ, նիւթասիրութեանը շաղախուածները չէին հաւանում եւ չէին զգօնանում: Իսկ երբ ասում էին, թէ [Նա] մարդ է, մեզ համար խաչուեց, մեզ սիրեց, մեզ հետ կերաւ ու խմեց եւ մեր աչքի առաջ համբարձուեց երկինք, տեղի էին տալիս [այս] հաւանելի խօսքերին: Եւ այդպէս, Քրիստոսի մարմնի միջոցով զգօնանալով, նուաճուեցին դէպի անհաս Աստուածութեան հաւատը:

Ո՛վ [Դու], որ այն ծարաւածին Քո խօսքով Քեզ իսկ տուեցիր:

Ի դէմս մի մարդու ցոյց է տալիս բոլոր հեթանոսներին՝ մի շաւղով նրանց ընթանալու պատճառով: Եւ ի՞նչն էր նրանց ծարաւը. աստուածպաշտութիւնը, որովհետեւ, ըստ բնաբոյս բարքի, ամէնքը փափագմամբ ծարաւեցին աստուածպաշտութեան: Եւ որովհետեւ [իրենց] մարդկեղէն իմաստութեամբ չկարողացան հասնել Անհասին, դէպի տարերքները դարձան ու սկսեցին դրանք պաշտել: Տե՛ս, թէ այս մասին ինչպէս է վկայում Պօղոսը. «Աթէնացի՛ այրեր,- ասում է,- ըստ ամենայնի հաւատասէր եմ տեսնում ձեզ»[1]: Քրիստոս եւս ասում է անառակ որդու մասին, թէ՝ «Իր մտքում ասաց՝ ելնեմ գնամ իմ հօր մօտ»[2]: Գնալն այն է, որ հեթանոսները փափագում էին Աստծուն եւ փնտրում ունենալ Նրան: Սակայն փնտրելիս ու գնալիս հեռու էին Աստծուց, որովհետեւ մինչեւ այդտեղ կարողացան հասնել: Իսկ Հայրը, հեռուից տեսնելով նրանց այդ փափագը, գթաց ու եկաւ նրանց ընդառաջ: Այսինքն՝ Միածինը եկաւ, մարմնացաւ եւ, փարուելով մեր բնութեանը, Համբուրեց մեզ, այնուհետեւ Ինքը մեր կողմից Հօրը հաշտեցրեց ուժգին արտասուքով եւ աղօթքով:

Արդ, այս ծարաւն է ասում եւ սա տալը, որը սովորեցինք Տիրոջ առակից: Որովհետեւ մարդիկ ծարաւ էին աստուածպաշտութեան, եւ Նա եկաւ ու Իրենով զովացրեց նրանց: Իրեն չտուեց նրանց սոսկ իբրեւ իմանալի Աստուած, որ չէին կարող տանել, այլ՝ իմանալիի հետ [տուեց] նաեւ զգալին՝ Աստուածութեան հետ նաեւ Մարմինն իբրեւ կերակուր, անմարմնութեան հետ նաեւ Արիւնն իբրեւ ըմպելիք: Այսպիսով, Աստուծոյ գիտութիւնը քաղցրացրեց նրանց քիմքում եւ յա-

1 Տե՛ս Գործ. ԺԷ 22:

2 Ղուկ. ԺԵ 18

գեցրեց նրանց ծարաւը: Որովհետեւ իրենց մէջ միշտ կրում են Աստծուն, մտքով ճաշակում Մարմինը եւ իմաստութեամբ ըմպում Արիւնը, որոնց շնորհիւ հաւատում են, որ իրենք սրբւում են վշտակից Քահանայապետի միջոցով եւ մտնում [այն] Կեանքը, ուր Նա եղաւ մարմնով առաջնորդ:

Ո՛վ [Դու], որ այն մեռեալին արագ յայտնուեցիր:

Տգիտութեան խաւարը մահ կոչելը [Սուրբ] Գրքի սովորութիւնն է: Ինչպէս առաքեալն է ասում, «մինչդեռ մեռած էինք մեր մեղքերի մէջ, Քրիստոս կենդանացրեց մեզ»[1]: Քանզի մարդիկ մեռեալի պէս ընկած էին միայն երկրային ու ապականացու ցանկութիւնների մէջ եւ ամենեւին չգիտէին պատրաստուած պատուհասի մասին՝ այն Օրը, երբ Աստուած դատելու է մարդկանց գաղտնի [արարքները]: Ուստի եւ Քրիստոս յայտնուեց արդարութեամբ եւ սովորեցրեց նրանց: Որովհետեւ եթէ կամովի էին խոտորուել, ինչպէս սատանան, նրանց փրկելը ճշմարիտ չէր լինի, իսկ եթէ՝ ակամայ, հարկաւոր էր իմաստնացնել [նրանց]: Ուստի եւ յայտնուեց ու նրանց արթնացրեց մեռելութիւնից: Իսկ նրանք, յօժարութեամբ վեր կենալով, կանգնեցին եւ փութացին հետեւել Նրան:

Ո՛վ [Դու], որ արագօրէն ցոյց տրուեցիր անօրինութեան մէջ ընկղմուածին:

Մեռել էին հաւատի հանդէպ, մոլորուել ու ընկղմուել՝ գործերի հանդէպ: Որովհետեւ չգիտէին ո՛չ հանդերձեալ եւ ո՛չ էլ այս կեանքի բարեգործութեան սահմանը: Ուստի Քրիստոս երկու բան արեց. հաւատով կենդանացրեց՝ վեր հանելով անօրինութեան ծովից, եւ դաստիարակեց օրէնքով: Օրէնքը ոչ միայն խօսքով տուեց, այլեւ գործով, [քանզի] Իր Անձը [զոհեց]: Որովհետեւ «Ես սիրեցի,- ասում է,- եւ դո՛ւք սիրեցէք, Ես խոնարհուեցի, եւ դո՛ւք խոնարհուէք ու խոնա՛րհ եղէք: Ես մարմնով թողեցի աշխարհն ու ընտրեցի մահը, եւ դո՛ւք այս արէք»: «Ով գտնում է իր անձը,- ասում է,- կկորցնի այն, եւ ով կկորցնի Ինձ պէս, կգտնի Ինձ հաւասար»[2]: Այս օրէնքը սոսկ խօսք չէր, այլ խօսքերի վկայ եւ ապացոյց ունէր [Նրան], Ով կարող եղաւ

1 Տե՛ս Կող. Բ 13:

2 Տե՛ս Մատթ. Ժ 39:

անօրինութեան ծովից վեր հանել ամենքին եւ նուաճել հաւատարիմ օրէնքի ներքոյ:

Ո՛վ [Դու], որ սատանայի կողմից բոլորովին այն վտարուածին ճանաչել տուեցիր [Քեզ՝] Փրկչիդ:

Որտեղի՞ց էր սատանան բոլորովին վտարել նրանց. յայտնի է, որ՝ Աստուծոյ գիտութիւնից եւ անմահութեան լոյսից: Եւ այս երկուսի հանդէպ յուսահատեցնելով՝ նրանց համար քաղցրացրեց [մարդու] բնութեանը օտար հեշտախտութիւնները: Սակայն նրանք չէին մխիթարւում դրանով, այլ բռնուած էին մահուան երկիւղով: Մանաւանդ որ գտան բնական առաքինութիւնների սահմանը եւ քաղաքներն օրէնքով դաստիարակեցին: Ինչպէս առաքեալն է ասում, «հեթանոսները, որ օրէնքը չգիտէին, բնութեամբ գործեցին օրէնքի [գործերը]»[1]: Եւ Քրիստոս, տեսնելով, որ, սատանայի ծառայութեան տակ լինելով, բնական յօժարութեամբ ապստամբում են նրա դէմ եւ կամենում հետեւել աստուածային կամքին, որպէս բարերար եւ արդար՝ Իրեն ճանաչել տուեց իբրեւ բռնակալից փրկող եւ ազատող:

Ո՛վ [Դու], որ յաղթեցիր Քեզ ապաւինածների հակառակորդին:

Ասում է՝ մարդիկ անգիտութեամբ Քեզ էին ապաւինում՝ բնութեամբ գործելով Քո օրէնքի [գործերը], եւ Քեզ մատնելու փոխարէն, իբրեւ ապաւէնի, սատանայից էին կառչել: Դու յաղթեցիր նրան ու Քեզ ապաւինածներին ժողովեցիր Քեզ մօտ: Սակայն պարզաբանութեան կարիք ունի, թէ [Քրիստոս] ինչպէս յաղթեց: Այսինքն՝ Ադամի դատակնիքը նրանց վրայ էր, եւ Աստուծոյ արդարութեան պատճառով նրանց չէր տրւում Հոգին, Որով նուաճուելով՝ հասնէին աստուածգիտութեան: Իսկ Քրիստոս, առնելով մարմին, նրա կրքերով անմեղ ընթացաւ եւ հին Ադամի անհնազանդութեան փոխարէն մահու չափ հնազանդ եղաւ Հօրը: Անպարտ մարմինը, որ չմեղանչեց, իբրեւ պարտական, մահուամբ պատարագեց Հօրը, եւ Անմեղի մահը Աստծուն հաշտեցրեց մեղանչածներիս հետ եւ մեր փոխարէն սատանային դատապարտեց:

Եւ Հայրը Որդու մահուան փոխարէն մարդկանց տուեց Հոգին, որ գալով՝ սփռուեց տիեզերքով մէկ, ամենքին հաստատեց Աստուծոյ եւ Նրա հանդէպ ապաւինութեան մէջ եւ նրանց առջեւ խայտառակեց

1 Հռոմ. Բ 14

սատանայի հնարները: Քանզի «ոչ ոք չի կարող ասել՝ Տէ՛ր Յիսուս, եթէ ոչ՝ Սուրբ Հոգով»[1]:

Ո՛վ [Դու], որ տուեցիր նրան Քո ձեռքը եւ բարձրացրիր դժոխական իրերից:

Քրիստոսի ձեռք են կոչում Նրա գործերը, ինչպէս որ [Սուրբ] Գրքի սովորութիւնն է. օրինակ՝ «Տիրոջ աջը զօրութիւն գործեց եւ բարձրացրեց ինձ»[2]: Եւ ուրիշ ի՞նչ ենք հասկանում՝ մարդկանց բարձրացնող գործ [ասելով], եթէ ոչ՝ խաչը, որովհետեւ դա էր, որ մեզ փրկութիւն պարգեւեց, ինչպէս որ ցոյց տրուեց: Քանզի, ըստ առաքեալի, [Տէրը] նրա վրայ բեւեռեց մեր հակառակորդին, այսինքն՝ մեղքը[3]: Եւ երբ անմեղ Քրիստոս մեղք անուանուեց եւ որպէս մեղք մեռաւ, մենք արդարացանք Նրա շնորհներով: Իսկ երբ արդարացանք, արժանացանք նաեւ Հոգին ընդունելու: Հոգին ստանալով՝ ելանք դժոխական իրերի՝ այս մարմնի պատրանքների միջից եւ սկսեցինք իմաստասիրել վերին փառքը՝ ջանալով հասնել նրան: Այսպէս կանգնեցինք Քրիստոսի ձեռքով: Որովհետեւ եթէ Նա Երուսաղէմում բազում տարիներ չկարողացաւ որեւէ մէկի դէպի Ինքը դարձնել, քանի որ չէին արդարացել ու արժանացել Հոգուն, [ապա Տիրոջ՝] մեր մեղքերը խաչով վերացնելուց յետոյ Պետրոսը մէկ օրում մէկ խօսքով աշակերտ դարձրեց երեք հազարի: Քանզի խօսքի հետ միասին Քրիստոսի ձեռքից ընդունած Հոգին էր գցում նրանց մէջ ու կանգնեցնում նրանց:

Ո՛վ [Դու], որ չթողեցիր նրան կենցաղավարել մարմնի մէջ:

Այս խօսքը պարզ է, քանզի Քրիստոս [մեզ՝] մարմնաւորներիս, ուզեցանեց ստել մարմնի կենցաղավարութիւնը եւ հասնել անմարմինների կայանին: Քանզի Նրանից առաջ այս յոյսը չկար, որովհետեւ Մովսէսը Օրէնքը պահելու դիմաց խոստանում էր այգիներ ու ձիթենիներ, գիրգ ու փափուկ կեանք ունենալ, մինչդեռ մեր Տէրը հանեց մեզ այս կեանքից՝ քարոզելով ուրանալ [սեփական] անձը եւ ինչքերը: Որպէսզի, կամովի ստելով այս առժամանակեան, գտնենք մշտնջենաւորը, ինչպէս որ ասում է: Մարդկային ցեղը հետեւեց

1 Տե՛ս Ա Կոր. ԺԲ 3:
2 Սաղմ. ՃԺԷ 16
3 Տե՛ս Հռոմ. Զ 6:

սրան, եւ մարդկանց քիմքում առաւել քաղցրացաւ անմահութեան այս յոյսը, որը ստանում էին չարչարանքներով, քան մարմնի փափկութեան կենցաղավարութիւնը, որին վախճանն է հետեւում:

Ո՛վ [Դու], որ ցոյց տուեցիր նրան իր Թշնամուն:

Տեսնո՞ւմ ես, թէ ինչ է ասում. «Ցոյց տուեցիր նրան իր Թշնամուն»: Որովհետեւ մինչեւ Քրիստոս մարդիկ յայտնապէս չգիտէին սատանային, նաեւ՝ այն, որ մեղքերի այս բաղձանքը նրա ներգործութեամբ ենք կրում մեզանում՝ [այդ] վերագրելով [մարդկային] բնութեանը: Քանզի թէպէտեւ Գործք առաքելոցի պատմութիւնն ասում է, թէ սադուկեցիները չէին ընդունում հրեշտակ, դեւ ու յարութիւն[1], սակայն ինչպէս որ յարութիւնն էր կասկածելի եւ հաստատուեց Քրիստոսով, այնպէս էլ՝ սատանայի եւ նրա գործունէութեան մասին եղած գիտելիքը:

Եւ ինչպէ՞ս ցոյց տուեց Թշնամուն: Նրանով, որ Ինքն անմեղ ընթացաւ մարմնի կրքերով, ցոյց տուեց մարդկանց, թէ՝ ձեր մեղանչելը ձեր բնութիւնից կամ միայն ձեր անձնիշխան կամքի յօժարութիւնից չէ, այլ՝ Թշնամուց, որ իր թոյներն է խառնում ձեր մտքի պարզութեանը եւ մեղանչել տալիս: Արդ, եթէ մէկը Ինձ պէս բնական կրքերում ընտրողաբար զգուշանում է Թշնամու արկածներից, ապա ուտում է, ինչպէս ես կերայ, եւ չի մեղանչում. ննջում է, ինչպէս ես ննջեցի, եւ յանցանք չի գործում. աշխատում ու երկնչում է, ինչպէս եւ ես, եւ չի պարտաւորւում: Բոլորն այսպէս սովորեցին եւ Թշնամուն խայտառակուած տեսան իրենց առջեւ:

Իսկ թէ որն է մերը, կամ որը՝ Թշնամունը, յայտնի է ամենքին, որ աւելորդը նրանն է, իսկ բնականն ու կարեւորը՝ մեր կամքինը: [Այն] բաները, որոնց համար դատապարտւում ենք մտքի ստգտանքով[2], նրանն են, իսկ անստգիւտը՝ մերը: Եւ իմացի՛ր, որ երբ մարդիկ ստուգապէս ճանաչեցին Թշնամուն, ինչպէ՛ս աւարտին հասցրին ըմբշամարտութիւնը, մինչեւ որ, աներեւոյթ ներգործութիւնից տկարացած, [սատանան] նրանց դէմ մարմնապէս էր զինւում:

Ո՛վ [Դու], որ սրբեցիր Քո գիտութիւնը, Աստուա՛ծ իմ Յիսուս:

1 Տե՛ս Գործ. ԻԳ 8:

2 Ստգտանք - պարսաւանք, յանդիմանութիւն

Վայելչագո՛յն խօսքեր... Բայց մի՛ կարծիր, թէ հաստատում է աստուածճանաչողութեան գիտութիւնը (քանզի սա ի՞նչ կարիք ունէր սրբութեան): Այլ մեր մտքի գիտակցութիւնը, որ շարունակ շաղախուած ու պղծուած էր սատանայական խորհուրդներով, այս սրբեց Յիսուս՝ նրանով, որ օրէնքը կնիք ու սահման դրեց խորհուրդներին եւ ոչ թէ [արտաքին] գործերին՝ ասելով. «Մովսէսն ասաց՝ մի՛ շնացիր, իսկ Ես ասում եմ՝ մի՛ ցանկացիր»[1]:

Արդ, երբ չար ցանկութիւնը հատեց խօսքի սրով, մեր մտքի գիտակցութիւնը սրբուեց եւ զարդարուեց իր բնաբոյս վայելչութեամբ: Քանզի սատանան այս էր պղծում, եւ երբ հաւանեցնում էր իր կամքին, մեր մարմինը, իբրեւ արբանեակ, կատարում էր [պղծուած] մտքի կամքը: Եւ մարդիկ չէին կարողանում սրբուել նրանով, որովհետեւ չունէին մտքի օրէնքը: Իսկ Քրիստոս սովորեցրեց խորհուրդների պատերազմը՝ ասելով. «Մարմնի ճրագը աչքն է», այսինքն՝ միտքը. «Եթէ քո աչքը սուրբ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կլինի, իսկ եթէ չար է, մարմինդ եւս խաւար է»[2]. եւ՝ «Բարի մարդը [իր] սրտի բարի գանձերից բարին է բխեցնում»[3]. նաեւ ասաց, որ [պէտք է] մեր մտքի մարտում յաղթել Թշնամուն եւ այդպէս սա միշտ մաքրել ու Աստուածութեան վայելուչ տաճար ունենալ: Մարդիկ, սրան աշակերտելով, դիւրաւ առաքինացան, որովհետեւ իմացական ասպարէզում մարտնչեցին օտար խորհուրդների դէմ եւ շուտով սրբուեցին:

Ո՛վ [Դու], որ երկնքից վեր [բնակուող] սուրբերի Հայրն ես եւ երկնաւորների Աստուածը, եթերականների օրէնքդ ես եւ օդականների ընթացքը, երկնաւորների պահապանը եւ անդաստամեականների երկիւղը:

Քրիստոսի խորհուրդները քահանայագործող Պօղոսն ասում է. «Ունենք երկինքներով անցած մի մեծ Քահանայապետ՝ Յիսուսին՝ Աստուծոյ Որդուն»[4]: Եւ Ինքը Քրիստոս աղօթեց իւրայինների համար. «Հա՛յր, կամենում եմ, որ ուր Ես եմ, նրանք էլ Ինձ հետ լինեն»[5]:

1 Տե՛ս Մատթ. Ե 27-28:

2 Տե՛ս Ղուկ. ԺԱ 33-34:

3 Ղուկ. Զ 45

4 Տե՛ս Եբր. Դ 14:

5 Յովհ. ԺԷ 24

Արդ, եթէ Քրիստոս անցաւ երկնքով եւ կամեցաւ [նաեւ] Իր սուրբերի անցնելը, երկնքից վեր գտնուող ուրիշ ո՞ւմ հայրն է Նա՝ ըստ Յովհաննէսի, եթէ ոչ՝ նրանց, որոնց [էլ] առաքեալը կամեցաւ ցոյց տալ Քրիստոսի շնորհի առաւելութիւնը: Դարձեալ համարձակ գրում է. «Թող Տէրը լուսաւորի ձեր սրտերի աչքերը, որ գիտենաք, թէ ինչ է Նրա կոչման յոյսը»: Իսկ թէ ինչ է, աւելացնում է՝ ասելով. «Աստուած մեռելներից յարութիւն տուեց Քրիստոսին եւ նստեցրեց Իր աջ կողմում՝ երկնաւորների մէջ՝ ամէն իշխանութեան եւ պետութեան եւ զօրութեան եւ ամէն անուանուած անուան վրայ: Եւ Նրան, Ում նստեցրեց նրանցից վեր, կարգեց Եկեղեցու Գլուխ»[1]: Արդ, ինչը Պօղոսն ասում է Գլուխ, այս Աստուածաբանը Հայր է կոչում, Որի անդամներն ու որդիները նշանակում են Իր Եկեղեցին, որոնց Քրիստոս կամեցաւ բնակեցնել Իր մօտ՝ երկնքից վեր՝ ասելով. «Կամենում եմ, որ ուր ես եմ, նրանք էլ Ինձ հետ լինեն»: Նրա սիրոյ այս լայնութիւնն ու երկայնութիւնը, որ իրենք հաստատուն գիտէին, մեզ մաղթում էին ուսանել հաւատով: Հետեւաբար երկնքով անցած Գլուխը՝ Քրիստոս, Հայրն է Իր՝ երկնքից վեր [գտնուող] անդամների եւ Գլխին պատկանող մարմնի: Եւ Հայր է կոչւում, որովհետեւ խօսքի սերմով երկրի վրայ, Եկեղեցու արգանդից ծնեց երկնքում գրուած անդրանիկների Եկեղեցին, ովքեր այստեղ Նրան Հայր ունեն յոյսով, իսկ այնտեղ՝ գործով:

Իսկ թէ սուրբերի հոգիներն ինչպէս են Նրա մօտ եւ [ինչպէս են] ժողովւում, Յովհաննէսը ցոյց է տալիս այս աղօթքի աւարտին: [Պօղոս] առաքեալն ասում է. «Մօտեցել էք կենդանի Աստուծոյ քաղաքին՝ Երկնային Երուսաղէմին, եւ կատարեալ արդարների հոգիներին»[2]: Հոգիների ելքը երկինք սուրբերից շատերը տեսան եւ գրեցին, ինչպէս որ Անտոնը [գրեց] իրենը եւ Ամոնինը: Քրիստոս նրանց Հայրն է, եւ երկնքից վեր նրանք են, ովքեր չարչարելի մարմնով վանեցին անմարմին մարտը եւ նպատակադրուած փութացին իրենց Հօր մօտ:

1 Տե՛ս Եփես. Ա 18-23:

2 Տե՛ս Եբր. ԺԲ 22-23:

Եւ երկնաւորների Աստուածը. *[Նա] հրեշտակների արարիչն է, շնորհի լուսափայլութեամբ մշտապէս կերակրողը, անյեղլի[1] անապականութեան նախախնամութեամբ եւ մշտնջենաւոր բնութեամբ նրանց պահողը, քանզի այս ամէնը Արարիչ Աստծուց տնօրինուեց եւ տնօրինւում է նրանց համար:*

Եթերականների օրէնքդ ես եւ օդականների ընթացքը. *տե՛ս այս Աստուածաբանի մտքի մաքրութիւնն ու իմանալի բիբերի կորովը: Որովհետեւ, երկրում լինելով, ոչ թէ ընթանում է ստորիններից դէպի վեր, այլ վերեւից է վար իջնում: Քանզի նախ մտել էր Նրա մօտ, Ով վեր է երկնքից, եւ Նրա հետ խօսել առաջին խօսքերը: Եւ ապա վարագոյրի ներքին կողմից միտքը քաշում է դէպի դուրս, ճանապարհ ընկնում դէպի ներքեւ եւ, Քրիստոսի մօտից գալով որդիներին, որոնց Հայրն է Քրիստոս, եւ [որոնք] երկնքից վեր են, [իջնում է] դէպի երկինք՝ դէպի հրեշտակները, ում Աստուածն է [Քրիստոս], եւ [որոնք] աւելի ցածր են, քան [որդիները]: Այնտեղից խոնարհւում է դէպի եթեր, այսինքն՝ դէպի արփին, որն արտաքին [իմաստասէրներից] ոմանք կոչեցին հինգերորդ տարր, իսկ ոմանք էլ՝ այս երկիրը մշտաշարժ եւ գնդաձեւ պարուրող: Ասում է՝ Դու եթերի՛ օրէնքն ես նախախնամութեամբ, որովհետեւ [եթերը] միշտ շարժւում է ու չի փոփոխւում: Իսկ որտեղի՞ց նրան անփոփոխ շարժումը, որ ուրիշ ոչ ոքի տեսանելի չէ, եթէ ոչ՝ Աստուծոյ օրէնքի սահմանադրութիւնից, որ կառավարում է այն: Բայց որովհետեւ յոգնակի թուով է դնում՝ եթերականների՛ օրէնքդ ես (յայտնի է, որ եթերը Մովսէսի անուանած հաստատութիւնն է[2], որն իր մէջ պարունակում է հուրը, եւ հուրը՝ օդը, օդը՝ ջուրը, եւ ջուրը՝ հողը), արդ, ասում է՝ եթերականների, այսինքն՝ լուսատուների, որովհետեւ [նրանք] Քեզանով ունեն ընթացք եւ շարժում: Եւ Դու, որ նրանց օրինադիրն ես, երբ կամեցար, արգելեցիր արեգակի ընթացքը Յեսուի առջեւ[3] ու ետ դարձրիր Եզեկիայի մօտից[4]: Այսպէս կառավարում ես Քո օրէնքով նաեւ այլ տարրերը, որոնք նրա ներքոյ են: Օդը ստեղծեցիր [իբրեւ] թռչունների ընթացարան եւ ջուրը՝ ձկներին հանգստարան, երկիրը՝ կենդանիների բնակա-*

1 Անյեղլի - անփոփոխ, հաստատուն

2 Տե՛ս ԾՆ. Ա 7:

3 Տե՛ս Յեսու. Ժ 12-13:

4 Տե՛ս Դ Թագ. Ի 10-11:

րան եւ սանդարամետը՝ դեւերի կայեան, ինչպէս սատանան ասաց Աստծուն. «Եկել եմ՝ յածելով երկրում եւ շրջելով երկնքի ներքոյ»[1]: Նրանց երկիւղն ես, ասում է [Յովհաննէսը], եւ դրանով նրանց կարգում ես ներքեւում՝ մարդկանց հանդէպ մախանքի[2] պատճառով:

Երկնաւորների պահապան է ասում, քանզի Ով երկնաւոր հրեշտակներին պահում է աստուածային խնամքով եւ խնամում ու կերակրում գիտութեամբ, տարածում է Իր իմանալի զօրութիւնը եւ դեւերի վրայ, որ սանդարամետում են, [նրանց եւս բերելով] գիտութեան՝ ոչ քաղցրութեամբ, այլ երկիւղով ու սաստով: Որպէսզի նրանց մէջ պանդուխտ եղածներիս՝ մարդկային ցեղիս դժրիչները[3] անիրաւաբար, ըստ [իրենց] անհաշտ թշնամութեան չգործեն ոչինչ: Եւ սա սովորում ենք Յոբից, քանզի չարի դառը թոյներից նրան ծածկում էր Աստուծոյ խնամքն ու երկիւղը:

Եւ նրանք (դեւերը) չեն բռնանում մարդկանց վրայ, եթէ մէկը կամովի չի ցանկանում չարը: Ըստ այսմ «Ծառայ էք, ում որ հնազանդութեան էք պատրաստում ձեր անձերը եւ ում հնազանդւում էք»[4]: Սա իրականացնում է նրանց վրայ եղող [Աստուծոյ] երկիւղը: Բազում տեղերում այս է ասում նաեւ Դաւիթ [մարգարէն]. ինչպէս օրինակ՝ «Տէրը որոտաց երկնքից, եւ Բարձրեալն Իր ձայնը տուեց կարկտին եւ հրէ կայծակներին»[5]: Տեսնո՞ւմ ես, թէ նրանց չարութեան որպիսի՛ սաստկութիւնն է մեղմում Աստուծոյ երկիւղը: Որովհետեւ, եթէ դրանով արգելուելով, չկասեցուէին, շուտով [իրենց] անյագ ատելութեամբ մարդկանց յիշատակը կջնջէին երկրից:

Ընդունի՛ր Քո Յովհաննէսի՝ թերեւս Քո կողմից արժանացածի հոգին:

Ո՛վ մաքրագոյն հոգի, ի՜նչ քաղցրութեամբ է դէպի իր Քաղցրութիւնը բարբառում... Սակայն մեզ ո՞վ կտայ այս խօսքերի մարմնի հոգին, այսինքն՝ սէրն ու փափագը, որ, շարժելով ու ներգործելով, առաջ էր բերում այս խօսքը. «Քո,- ասում է,- Յովհաննէսի [հոգին]», այսինքն՝ Քո սիրեցեալ աշակերտի, որին Քո սիրով բարգաւաճեցրիր, ում հոգին [էլ] այժմ վերցրո՛ւ Քեզ մօտ եւ սէրը Սիրո՛ւդ խառնիր պատշաճ ժամի: Թերեւս Քո կողմից արժանացածի. եւ եթէ նա չէ [արժանացած], ուրիշ էլ ո՞վ: Բայց [ինքն էլ] այս մարդկային սահմանի մէջ է մնում՝ գիտենալով, որ ոչ ոք չի արդարացուել [իր] գործերով, այլ միայն՝ Յիսուս: Եւ մենք էլ [արդարացւում ենք] Նրա շնորհներով, ինչպէս որ գրում էր իր թղթերում. «Եթէ ասում ենք, թէ մեղք չունենք, ստում ենք, եւ ճշմարտութիւն չկայ մեզանում»[1]: Արդ, ըստ իմ գործի, ասում է, թերի եմ՝ կարծելու համար, թէ [արժանի եմ] ընդունուել Քո կողմից, որովհետեւ անպիտան ծառայ եմ բոլոր [գործերովս հանդերձ], սակայն Քո շնորհով արժանի եմ եւ համարձակութիւն [ունեմ]:

Ը

Ո՛վ [Դու], որ մինչեւ այժմ ինձ եւս կանանց հետ խառնակութիւնից զերծ պահեցիր:

Տե՛ս այս աղօթքի կարգը: Նախ օրհնում է այն շնորհը, որ Քրիստոս տուեց բովանդակ աշխարհին, եւ ապա, դառնալով սեփական անձին, իր բոլոր առաքինութիւնները վերագրում է Նրան ու Նրա զօրութեանը եւ ոչ թէ՝ իր. «Ո՛չ ես, այլ Աստուծոյ շնորհները, որ ինձ հետ են»[2]: Սոյնպէս եւ՝ սա. Դու, ասում է, մինչեւ այժմ [ինձ] պահեցիր [մարմնական] ցանկութեան շարժումից. եւ ոչ թէ իմ մարդկային միտքը, որ հաստատուած է չարի խնամքի մէջ, այլ Քո զօրութիւնը, խառնուելով սրան, չարից հրաժարեցրեց եւ բարուն, այսինքն՝ հրեշտակական կուսութեանը, գրկախառնուել տուեց:

Ո՛վ [Դու], որ կնոջը նայելը ծանր համարել տուեցիր ինձ:

Թէպէտեւ Աւետարանի գրածն ու օրէնքն է ասում, բայց յատկապէս նկատի ունի իր մտքի մաքրութեան կատարելութիւնը, որ ոչ թէ [սոսկ] մարմնի խառնակութիւնից պահուեց, այլեւ մտքի, քանզի կնոջը ցանկութեամբ նայելը, ասում է, ծանր ու աւելորդ եղաւ ներքին մարդուն: Արդ, առաջինը շատերը ձեռք բերեցին, բայց երկրորդ սահմանը քչերին հասանելի եղաւ, մանաւանդ որ՝ նրանից բացի ուրիշ ոչ

1 Տե՛ս Յոբ Ա 6:
2 Մախանք - չար նախանձ
3 Դժրիչ - ցեղգիչ, վտանգիչ
4 Տե՛ս Հռոմ. Զ 16:
5 Սաղմ. ԺԷ 14

1 Ա Յովհ. Ա 8
2 Տե՛ս Ա Կոր. ԺԵ 10, Գաղ. Բ 20:

ոքի: Որովհետեւ մարմինը կարողացան անշաղախ պահել, սակայն խորհուրդներից մաքուր մտքի օրինակ ոչ ոք ցոյց չտուեց նրա պէս:

Ով [Դու], որ առժամանակեայ կեանքից փրկեցիր ինձ եւ առաջնորդեցիր դէպի մշտնջենաւորները:

Դո՛ւ փրկեցիր, ասում է, ոչ թէ իմ ջանքը: [Փրկեցիր] ոչ միայն ամուսնութեան հոգսից, այլեւ բոլոր զգայարանների հեշտութիւնից, որոնք սովոր են թաւալեցնել առժամանակեայ կեանքի մէջ. մէկը՝ նայելով, միւսը՝ լսելով, ուրիշներ՝ խօսելով եւ ձեռնագործելով: Ասում է՝ ինձ փրկեցիր սրանցից, այսինքն՝ զգալի մարմնիս մէջ իմանալի հոգիս զգայարանների նետերից անխոցելի պահեցիր: Եւ առաջնորդեցիր դէպի մշտնջենաւորները՝ Քեզ հետեւելու գործերով եւ միշտ Քեզ մօտ լինելու իմացական մտքով:

Ով [Դու], որ մարմնաւոր աղտեղութիւնից հեռացրիր ինձ:

Մարմնի ախտը [մարդու] բնութիւնից դուրս բոլոր կրքերն են՝ ցանկութիւնները. ոչ միայն գիճութիւնը, այլեւ մարմնի՝ աչքերով հեշտանալը, ականջներով մեղկանալը եւ խօսքով ստորաքարշ լինելը: Եւ ամէն մի գործ կամ խորհուրդ՝ կատարուած շնչով ու մարմնով, ազատութիւն է ասում: Իսկ անազատ է իմացականի շարժումը ըստ բնութեան, եւ նրա անունդն ու կերակուրն են սէրը եւ Աստուծոյ գիտութիւնը: Արդ, ասում է. այս զգայարաններից եւ սրանց հեշտութիւնից վշտանալուց միտքս հեռացրիր եւ միշտ պահեցիր Քեզ մօտ, որի շնորհիւ տիրեցի զգայարաններիս եւ նրանց դաստիարակեցի անախտութեան նոյն շաւղով:

Ով [Դու], որ ինձ ազատեցիր դառը մահուանից եւ հաստատեցիր միայն Քո մէջ:

Մահ է տգիտութեամբ եւ առանց խղճմտանքի մեղանչելը՝ լինի փոքր թէ մեծ, եւ մահու չափ մեղք է գիտութեամբ մեղանչելը եւ հեշտութիւնից խղճմտանքի յաղթութեամբ ազատուել չկարենալը: Առաքինի [մարդու] համար մեղք է [ուղիղ] ընթացքից ընկրկելը, ըստ մարմնի տկարութեան սայթաքելը եւ դարձեալ զղջալը: Արդ, ասում է՝ տգիտութեան մահուանից ազատեցիր [ինձ], եւ երբ ազատեցիր, ու [ես] ճանաչեցի Քեզ, չկամեցայ հաստատուել ուրիշ բանի մէջ, ինչպէս ոմանք, ովքեր Քրիստոսին ճանաչելուց յետոյ այս աշխարհի իրերի ցանկութեանը վերադարձան: Սակայն ես ազատուելով՝ հաստատուեցի միայն Քո մէջ եւ ոչ թէ՝ փառքի, ընտանիքի սիրոյ կամ բազում իշխանութիւնների, որոնք սովոր են զրաւել մաքուր հոգիներին: Ինձ Քո մէջ հաստատեցիր, ասում է, եւ իմ կամքն ու սէրը, դուրս բերելով ամէն ինչից, սովորեցրիր հաստատապէս բեւեռուել միայն Քո մէջ:

Ով [Դու], որ սանձեցիր իմ հոգու ծածուկ ախտերը եւ նրա յայտնի գործերը խափանեցիր:

Հոգու ծածուկ ախտը խորհուրդների կրքերն են, իսկ յայտնի գործը խորհուրդների կամքը մարմնով աւարտին հասցնելն է: Իմ առջեւից, ասում է, երկուսին էլ նահանջի մատնեցիր, որովհետեւ հոգիս սրբեցիր չար խորհուրդներից եւ մարմնոս՝ անարգ գործերից: Բայց տե՛ս, որ ասում է՝ խորհուրդներս սանձեցիր, ոչ թէ՝ խափանեցիր, քանզի արգելք է դրւում մարմնի գործի վրայ եւ ոչ՝ անմարմնի ու մշտաշարժի, որովհետեւ մշտաշարժ հոգին անձնիշխան է. ինչ կամենում է, [այն էլ] խորհում է: Արդ, ոչ թէ անձնիշխանութիւնը վերցրեց նրանից, որպէսզի չճանաչի չարը, այլ սանձեց խորհուրդը եւ դժուարաշարժ դարձրեց [չարի] հանդէպ, ինչպէս հրեշտակներինը:

Ով [Դու], որ նեղեցիր եւ հալածեցիր իմ մէջ [եղող] խռովարարին:

Մեր մէջ եղող խռովարարը այս անասնեղէն շունչն է, քանզի անճառ խառնմամբ կազմուած ենք երեք բանից՝ բանական հոգուց, անբան շնչից [եւ զգալի մարմնից]: Զգալի մարմինն ու շունչը զինւում են մեր մտքի օրէնքին հակառակ՝ այն գերելով դէպի մեղքի օրէնքը, այսինքն՝ դէպի այն, ինչը խառնուած է զգայարաններին: Որովհետեւ այլ է զգայարանների հեշտութիւնը, եւ այլ՝ իմացականինը. աւելին՝ հակառակ են միմեանց, քանզի [երբ] մեր զգայարանը հեշտանում է, միտքը տրտմում է խղճմտութեամբ: Արդ, իմանալին տրտմեցնող այս խռովարարը, այսինքն՝ զգալի շունչը, Քո զօրութեամբ նեղեցիր ու հալածեցիր, այսինքն՝ վարժեցրիր եւ նուաճեցիր դէպի իմանալի մտքի հաւանութիւնը:

Ով [Դու], որ հաստատեցիր Քեզ մօտ [բերող] իմ անբիծ ճանապարհը:

Երբ [Աստուած] միտքը հաստատեց Յիսուսի մէջ, Նրանով սանձահարեց շունչը եւ զգայարանները դաստիարակեց մտքի [իշխանու-

թեան) ներքոյ, ո՞ր բիծը կարող էր տիրել այս մարմնաւոր հրեշտակին նրա կեանքի ճանապարհին: Որովհետեւ բծաւոր ենք լինում, երբ սրանք զինւում են միմեանց դէմ, ինչպէս ասում է առաքեալը. «Կամքը կայ իմ առջեւ, սակայն բարին գործելը՝ ոչ»[1]: Իսկ երբ մտքի կամքին հետեւում է շունչը, իսկ շնչին՝ մարմինը, եւ միտքը, սրանցով հեռանալով այս աշխարհից, խառնւում է Աստուծոյ միեղինութեանը, անբիծ եւ արդար է գնում դէպի Նա [տանող] ճանապարհով, ինչպէս որ նա գնաց եւ խոստովանում է:

Ո՛վ [Դու], որ անսայթաք պահեցիր դէպի Քեզ [տանող] իմ շաւիղը:

Ի՜նչ անհասանելի [բարձրութիւն]՝ մարմինն անմարմնապէս կառավարող... Քանզի չի ասում՝ որեւէ բանով թողեցիր ինձ շեղուել կեանքի ճանապարհից ու թաւալուել այս աշխարհի մէջ: Սա արդարեւ կատարուեց Քրիստոսի շնորհների կողմից, Ում եւ վերագրում է ամէն ինչ, սակայն ոչ պակաս՝ եւ իր անձնիշխան կամքի անախտութիւնից: Քանզի որչափ եւ բացում ենք մեր բերանները[2], այնչափ էլ [դէպի մեզ] ենք ձգում Հոգին. եւ Աստուծոյ մօտ աչառանք չի տեսնւում երբէք:

Ո՛վ [Դու], որ աներկմիտ պահեցիր Քո հանգէպ իմ հաւատը:

Հաւատը իմացականի գործն է, եւ ով ազատ չէ մարմնի կրքերից ու կամքից, Աստուածութեան իմանալի գիտութեան մէջ նրան բազմիցս տարակոյս եւ երկմտութիւն են տիրում: Ինձ, ասում է, սրբեցիր այս կրքերից: Որովհետեւ ինչպէս նա, ով զգալի աչքերի առջեւ ունի արեգակի լոյսը եւ չի երկմտում, այնպէս էլ ես, հաւատիս աչքերի առջեւ ունենալով եւ տեսնելով Քեզ ու Քեզ մօտ [եղող] իմանալի փառքի վայելչութիւնը, բնաւ չվարանեցի երկմտանքի մէջ:

Ո՛վ [Դու], որ սահմանեցիր ինձ Քո սուրբ գիտութիւնը:

[Մեր] միտքը իմացական է, իսկ իմացականութիւնը՝ անյագ: Ուրիշներն այլ կերակուր են տալիս նրան՝ այս աշխարհի իմաստութիւնը եւ այս կեանքի խելամտութիւնն ու հանճարը, որ սուրբ չեն եւ [սուրբ] չեն ասում: Մինչդեռ ճշմարիտները այն ուղղում են դէպի

1 Հռոմ. Է 8

2 Այսինքն՝ աղօթում:

բնական եւ սուրբ գործառութիւնը, այսինքն՝ դէպի Աստուծոյ գիտութիւնը եւ Նրա իմացութեան հաւատը: Իմ այս գիտութեան առջեւ, ասում է, ուրիշ սահման եւ նպատակ չդրեցիր, բացի մշտապէս Քեզ հպուելուց: Եւ թէպէտ աշխարհում եմ, ամենեւին չտուեցիր ինձ միտքս սահմանել սրա ներքոյ, այլ սահմանեցիր միշտ լինել Քո այդ գիտութեան մէջ: Սա ուսանեցինք իբրեւ հրեշտակներին յատուկ եւ Աստուածութեանը վերաբերող օրէնք, ինչը եւ [Յովհաննէսը] պատմում է իր անձի մասին եւ մարմնաւորներիս մէջ անմարմին [հրեշտակի] պէս փայլատակում մարմնով: Սակայն ոչ ոք թող չասի, թէ ամենայն ինչ միայն Աստծուց է, ում որ տալիս է, եւ թէ՝ դիւրին էր Աստծուն այս եւս իրականացնելը: Քանզի դա յանդգնութիւն է եւ մեր անձնիշխան [կամքի] ուրացութիւն: Ինքը՝ [Յովհաննէսը, իր] կամքով եւ յօժարութեամբ իրեն հասցրեց ծայրագոյն մաքրութեան եւ ծայրագոյն շնորհն ընդունող եղաւ: Քանզի եթէ խոստովանում ենք Քրիստոսի կամքը բնական եւ չենք մեղանչում, առաւել եւս՝ Յովհաննէսի [դէպքում]: Սակայն ինչպէս որ Քրիստոս Իր [մարդկային կամքը] հետեւեցրեց աստուածեղէն կամքին եւ Աստուածութեան լոյսով հալածեց մեր բնութեան խաւարը, այնպէս էլ սա, նոյնի վրայ յենուելով, հաստատուեց ի՛ր կամքով: Եւ, առնելով Հոգու զօրութեան լոյսը, ետ չդարձաւ Առաջնորդին կամովի հետեւելուց: Սակայն Աստուածութեան հետ խառնումը Քրիստոսի [մէջ] բնութեամբ էր եւ անճառ ու անբաժանելի միութիւն էր, իսկ սրանը միութիւն էր Քրիստոսի հանդէպ սիրոյ յարակցութեամբ եւ ոչ՝ բնութեամբ:

Ո՛վ [Դու], որ իւրաքանչիւր գործի արժանի վարձը հատուցեցիր:

Տեսնո՞ւմ ես կանխաւ ասածների հաստատութիւնը այս խօսքի յաջորդմամբ: Քանզի սրանով բժշկում է [այնպէս] խորհողների կարծիքը, թէ [իբր] նրա մէջ սա եղաւ միայն Քրիստոսից եւ ոչ իր կամքի գործակցութիւնից: Որովհետեւ եթէ գործը միայն Քրիստոսինն էր, [ապա] նրանը չէր, ուստի քանի որ գործն իրենը չէր, վարձի չէր սպասի: Մինչդեռ պէտք է իմանալ, որ աստուածեղէն զօրութիւնը խառնւում է մեր կամքի նիւթին, եւ Նրա ու մեր միջոցով է տնօրինւում փրկութիւնը: Իսկ սա, խոնարհութեամբ զիջելով եւ բնաւ չյիշելով իր կամքը Նրա առջեւ, Ով ամէն ինչ տեսնում է, ամէն ինչ այժմ Քրիստոսին վերագրեց, թէ՝ Դո՛ւ հարթեցիր իմ ճանապարհը, զօրացրիր պարկեշտութեան մէջ եւ միտքս Քո մէջ հաստատեցիր: Եւ ապա,

որպէսզի այս լսելով չկարծենք, թէ Քրիստոս այսպիսի առաքինութիւններով զարդարեց նրան իբրեւ անբան նիւթի, աւելացնում է, թէ՝ իւրաքանչիւր գործի վարձ հատուցեցիր ըստ արժանիքի. այսինքն՝ ըստ իմ կամքի յօժարութեան եւ իմ մարմնի ճգնութեան այժմ հատուցեցիր ինձ այս վարձը՝ իմ մաքրութիւնը, եւ խոստացել ես տալ նրա պտուղը՝ հանդերձեալ կեանքիդ փառքը եւ ուրախութիւնը:

Ո՛վ [Դու], որ իմ հոգում դրեցիր Քեզանից առաւել պատուական չհամարել որեւէ ստացուածք:

Երանի՛ քեզ, ո՛վ աստուածազգեաց, եւ [երանի՛] քո հոգուն, որ ճշմարիտ Պատուականին ընտրեցիր ու սիրեցիր եւ ոչ թէ՝ կարծեցեալները, որոնց ծառայ ենք մենք՝ անմաքուրներս: Բայց այստեղ իմացի՛ր նաեւ իր եւ Աստուծոյ կամքերի բացայայտութիւնը. քանի որ Դու, ասում է, հոգուս սովորեցրիր Քեզանից աւելի պատուական չհամարել ոչինչ, եւ ես սովորածս կատարեցի գործով ու ծանր չհամարեցի: Եւ այսպէս, այս երկու յօժարութիւնից հաստատուեց կապը՝ իմ կամքից եւ Քո սիրոյ շնորհներից: [Քանզի] Դու սիրեցիր, եւ ես Քո սիրուն արժանաւոր օթեւան եղայ:

Թ

Եւ արդ, Տէ՛ր իմ Յիսուս, [այն] մատակարարութիւնը, որ ընդունեցի Քեզանից, աւարտին հասցրի:

Ամենքի Փրկչին միայն իր Տէր անուանելը ցոյց է տալիս առաւել սիրոյ հարազատութիւնը, որով կապուած էր: Քանզի Աստուած եւս անում էր այս՝ միայն իւրայինների Աստուած անուանելով [Իրեն]: Իսկ մատակարարութիւն է նախ եւ առաջ իր անձի սրբութիւնը, որին ջանքով եւ կամքով հպատակուեց որպէս Աստուծոյ տաճարի՝ ըստ այնմ. «Թող իւրաքանչիւր ոք գիտենայ իր ամանը սրբութեամբ ստանալ»[1]: [Մատակարարութիւն է ասում] նաեւ, [որովհետեւ] իրեն վստահուել էր առաքելական պաշտօնը՝ խօսքի քարոզութեամբ հեթանոսներին սպասաւորելը, ինչպէս [Պօղոս] առաքեալն է ասում իր մասին[2]: Այս, ասում է, աւարտին հասցրի, որովհետեւ, հասնելով մինչեւ [կեանքիս]

1 Ա Թես. Դ 4

2 Տե՛ս Գաղ. Ա 16:

վախճանը, անձիս մէջ [որեւէ] բիծ չկարողացաւ զետեղուել, եւ քարոզելը ամօթ չհամարեցի:

Արժանի՛ արա ինձ Քո հանգստեանը՝ շնորհելով ինձ Քո ողորմութիւնը, որն անփախուստ եւ անճառ փրկութիւն է:

Քանզի ճգնութեան բոլոր աշխատութիւնները այն հանգստեան յոյսով են: Արդ, որովհետեւ սրա համար զօրացրիր՝ կրելու աշխատութիւններ, որոնց համար վարձդ խոստացար, արժանի՛ արա եւ վարձիդ հատուցմանը: Քանզի մարդկանց գործերի վարձը հատուցելը Նրա ողորմութեան շնորհն է: Որովհետեւ մարդիկ ահա ճգնում են միեւնոյն աշխատութեամբ. մէկը վարձ է ստանում յոյսի համար, իսկ միւսը, նոյն աշխատութիւնները կրելով, ամենեւին ոչինչ [չի ստանում]: Ուրեմն պարզ է, որ գործերը բնաւ չեն կարող որեւէ բան անել եւ արդարացուցիչ չեն [իրենց] բնութեամբ, այլ արդարացուցիչ է Նրա ողորմութեան շնորհը, որն [էլ], ասում է, շնորհի՛ր ինձ: Որն անփախուստ եւ անճառ փրկութիւն է. անփախուստ է կոչում իշխանական արդարութիւնը, մինչդեռ փրկութիւն՝ ողորմութիւնը: Որովհետեւ մեղաւորները, ասում է, չեն կարող փախչել Քեզանից, երբ արհամարհում են [Քեզ], իսկ արդարները չեն զրկւում փրկութիւնից, որի յոյսն ունեն:

Սակայն այստեղ տարակուսելի քննութիւն ունենք, թէ՝ ո՞ր հանգիստն է արդեօք խնդրում երանելին, դէպի որն ընթանալով՝ ընթացքի մէջ զգուշանում է այս աղօթքի յաջորդ խօսքերով: Քանի որ եթէ մարմնի [հանգիստն] է խնդրում, [ապա] այն թողնելու էր այստեղ՝ գերեզմանում. իսկ եթէ՝ հոգունը, [ապա] հոգիների հանգիստ կայ եւ առանց մարմինների, ինչպէս ասում է առաքեալը. «Իւրաքանչիւր ոք իր մարմնով ժառանգում է այն, ինչ որ գործեց՝ թէ՛ բարի, թէ՛ չար»[1]: Արդ, եթէ մարմնով է [հանգիստ] ժառանգում, ապա ի՞նչ են լինում հոգիները մահից յետոյ. արդեօք նրա՞նք էլ են մարմնի հետ մեռնում մինչեւ յարութիւն: Ո՛չ երբէք: Որովհետեւ հոգու անմահ լինելու մասին կարիք չունենք ուսանել Եկեղեցուց, արտաքին իմաստունները եւս նոյնն են խոստովանում, եւ Տէրն ասում էր. «Սպանում են մարմինը, բայց հոգին սպանել չեն կարող»[2]: Ուրեմն ո՞րն է սուրբերի հոգիների հանգիստը նախքան յարութիւնը: Ինքը Քրիստոս ուսուցանեց

1 Տե՛ս Բ Կոր. Ե 10:

2 Մատթ. Ժ 28

մեզ այս, երբ Պետրոսն ասաց Նրան. «Թողեցինք ամէն ինչ եւ եկանք Քո ետեւից. ի՞նչ պիտի լինի մեզ», իսկ Նա ասաց. «Դուք, որ եկաք Իմ ետեւից, եւ ամէն ոք, ով գալիս է, հարիւրապատիկ ստանում է այս աշխարհում եւ յաւիտենական կեանք՝ գալիք աշխարհում»[1]: Իսկ [Նրանց հետ,] ովքեր Իր ետեւից չգնացին, այսպէս [չի վարում], այլ դատաստանի է բերում, պահանջում ողորմութիւն ու սէր եւ դրանցով արդարացնում:

Սրանով սովորում ենք, որ մարդկանց հոգիները մահից յետոյ երկու շաւիղ ունեն: Սուրբերին (որոնց մէջ այս աշխարհի իշխանը իրենից ոչինչ չի գտնում) մարտ է սպասւում օդի իշխանութիւնների եւ պետութիւնների հետ, որոնք երկնքի ներքոյ են: Սրանցից զերծանելով ըստ իրենց գործերի ու հաւատի՝ հոգիները ժամանում են Քրիստոսի մօտ եւ այնտեղ, Նրա մօտ, ուրախութեան եւ զուարճութեան մէջ են [գտնւում]: Եւ երկրորդ Գալստեանը գալու են Նրա հետ, ոչ որպէսզի դատաստանի ենթարկուեն, այլ որպէսզի իրենց առաքինութիւններով դատեն ուրիշներին, ինչպէս ասաց Քրիստոս: Քանզի ինչպէս առաքեալները [դատելու են] Իսրայէլը, այնպէս էլ բոլոր առաքինութեամբ կատարեալները [դատելու են] վարքով միեւնոյն շաւղով [ընթացող] յանցաւորներին: Եւ, հագնելով մարմիններ, նրանցով ժառանգելու են յաւիտենական կեանքը, ինչպէս ասաց Քրիստոս: Իսկ ովքեր չկարողացան պարկեշտ վարք ստանալ, այլ [իրենց] գործերով կրեցին սատանայի ներգործութիւնը, մինչեւ որ մեղքերի ծանրութիւնը յաղթեց բարեգործութեան ներգործութեանը, Աստուծոյ արդար իրաւունքը նրանց թոյլ չի տալիս անցնել երկնքի ներքոյ [գտնուող] չար այսերի[2] միջով, այլ նրանք նոյնպէս մնում են երկնքի ներքոյ՝ սպասելով հանդերձեալ Դատաստանին եւ Աստուծոյ ողորմութեանը, որ այնպէս դիւրաւ պատրաստ է քաւել նրանց շնորհով եւ գթութեամբ: Սրան բազում հաւաստի վկայութիւններ [կարող ենք] բերել [Սուրբ] Գրքից եւ սուրբերից, ովքեր խորհրդաբար յայտնեցին այս մասին, իսկ Աւետարանում Տէրը յայտնապէս ցոյց է տալիս մեծատունի եւ Ղազարոսի առակով[3]. որովհետեւ մինչեւ այնժամ Աբրահամը տակաւին աղամական անէծքի տակ էր ու խաւարի իշխանութեան ներքոյ եւ յետոյ ազա-

1 Տե՛ս Մատթ. ԺԹ 27-29:

2 Այս - դեւ, չար ոգի

3 Տե՛ս Ղուկ. ԺԶ 19-31:

տուեց դրանից, որ գնալով քարոզեց բանտի մէջ[1] [գտնուող] հոգիներին, ինչպէս ասում է Պետրոսը[2]: [Պօղոս] առաքեալը նոյնպէս գրում է. «Կփրկի ինձ,- ասում է,- խաւարի իշխանութիւնից (այսինքն՝ օդային այսերից) եւ կփոխադրի Իր սիրելի Որդու արքայութիւն»[3]: Իսկ թէ որն է արքայութիւնը, յայտնում է եբրայեցիներին [ուղղուած թղթում]. «Մօտեցել էք,- ասում է,- Սիոն լեռանը, անդրանիկների եկեղեցուն՝ բիւրաւոր հրեշտակներին եւ կատարեալ արդարների հոգիներին»[4]: Տե՛ս, որ սոսկ արդարներ չի ասում, այլ՝ կատարեալ արդարներ, որ այնտեղ զուարճանում են:

Արդ, որպէսզի խօսքս չերկարի վկայութիւնների առատութեամբ, սրան [որպէս] կնիք դնենք Անտոնի տեսիլքը, քանզի ինչի մասին [առաքեալները] խօսեցին խորհրդաբար՝ նորահաւատների՝ [խօսքը] տանելու անկարողութեան պատճառով, նա յայտնապէս տեսաւ Աստուծոյ կամքով եւ այդ սոսկալի գիտութիւնը [իբրեւ] կերակուր տուեց կատարեալներին: [Սուրբ Անտոնը] մի անգամ տեսաւ, թէ [ինչպէս] ինքը երկինք էր ելնում, եւ օդում քննիչներ ելան նրան ընդառաջ ու բաղում էին[5] մանուկ հասակում [իր] գործածների համար. [սակայն] նրանցից ազատուեց անվնաս: Եւ դարձեալ տեսաւ սատանային, որ օդում տարածել էր ձեռքերը եւ հոգիներից ոմանց բռնում ու ցած էր քաշում: Իսկ ովքեր զերծանում եւ դէպի վեր էին թռչում, նրանց դէմ ատամներն էր կրճտում: Անտոնն այս տեսիլքը տեսաւ արթմնի, եւ Աթանասը գրեց, որով հաստատեցին մեզ հոգու կայեանի մասին, թէ սուրբերից ովքեր որ յաղթում են սատանային, ելնում են երկինք՝ Քրիստոսի մօտ, իսկ ովքեր տկարանում են մարտում, երկնքի ներքոյ հանգրուանելով՝ սպասում են հանդերձեալ Դատաստանին:

Իսկ թէ որքան է օդի չար իշխանի համարձակութիւնն ու քննութիւնը Աստուծոյ սիրելիների վրայ, ուսանում ենք այստեղ եւ սոսկում: Որովհետեւ եթէ Յովհաննէսը, այսպիսի մաքրութիւն [ունենալով], չէր հաւատում, թէ դեւերի ամաչեցուելը իր վարքից է, այլ [դա]

1 Այսինքն՝ դժոխքում:

2 Տե՛ս Բ Պետ. Գ 19:

3 Տե՛ս Կող. Ա 13:

4 Տե՛ս Եբր. ԺԲ 22-23:

5 Բաղբաղել - ստուգեամբ մեղադրել, յանցանքներ բարդել

Քրիստոսի շնորհներից է, Ումից եւ խնդրում էր, [ապա] որքա՜ն պատրաստութիւն է պէտք մեզ այն ճանապարհից առաջ:

Եւ արդ, Քեզ մատ իմ գալու ժամանակ թող հուրն ընկրկի...

*Այսինքն՝ հոգուս [առջեւից], որ պատրաստուել է այս մարմնից դուրս ելնել ու դէպի Քեզ դիմել, թող հուրը, այսինքն՝ սատանայական բռնութիւնը, ընկրկի: **Խաւարը վանուի.** մենք չգիտենք, թէ հուրն ու խաւարն ինչպիսին են այնտեղ. նրա՞նք իմացան եւ գրեցին, ինչպէս Պողոսն է ասում. «Մարտ ունենք խաւարի աշխարհակալի իշխանութեան հետ»[1]: Վիհը տկարանայ. վիհը այնտեղ նշանակում է հոգով ընթացողների գայթակղութեան դարան: Հնոցը խամրանայ[2]. ոչ թէ՝ հանդերձեալը, այլ այն, ուր մեծատունն էր պապակում: Գեհենը շիջանի[3]. դարձեալ սատանայի բռնութիւնն ու յանդգնութիւնն է: [Իսկ] կարծել, թէ սա հանդերձեալ [գեհենն է], թոյլ չի տալիս խօսքի շարունակութիւնը. չարի հրեշտակներն ամօթահար լինեն՝ նրանք, ովքեր հակառակում են հոգիները տանող սուրբ հրեշտակներին եւ մեր գործերից առած իրենց մաքսը որպէս թէ գրով պարզում [մեր] առաջ: Եւ երբ չեն յաղթում, այլ [մեր կողմից] Աստուծոյ կամքի իրագործումը դերազանցում է նրանց [չար կամքի իրագործմանը], ամօթահար են լինում զուր պարտաւորելու համար: **Դեւերը երկնչեն, իշխաններն անզօր դառնան.** քանզի Աստուած դատաւորն է, իսկ սատանան՝ դատախազը եւ չի բռնադատում առանց Նրա կամքի: Երբ Աստուած ըստ արդար իրաւունքի հրամայում է, թէ՝ իշխանութիւն չունէ՛ք դրա վրայ, եւ բարի գործը չարից առաւել է, [դեւերն] ընդունում են արդար իրաւունքը եւ երկիւղից անզօր են դառնում՝ մարտնչելու եւ արգելելու հոգու վերելքը: **Զօրութիւններն ընկճուեն.** սատանայի՛ զօրութիւնն է, որ այս իշխանութիւնը Աստծուց ստացաւ մեր ճանապարհին՝ մահուանից յետոյ այդպէս բռնադատելու մեզ: **Աջակողմեանները կենան, ձախակողմեանները չմնան.** աջակողմեանները հրեշտակներն են՝ բարեգործութեան ջատագովներն ու վկաները, իսկ ձախակողմեանները չար դեւերն են՝ նրանց հակառակորդները եւ չար գործերի մասին բողոքողները՝ ըստ այս [խօսքի]. «Քո կողմից կընկնեն հազարներ, եւ*

1 Տե՛ս Եփես. Զ 12:

2 Խամրանալ - թուլանալ

3 Շիջանել - նուազել, սպառուել

*Քո աջ կողմից՝ բիւրաւորներ»[1]: Արդ, թող կենան նրանք, ասում է, ովքեր դէպի Քեզ ընթանալու առաջնորդներն են, եւ թող ջնջուեն [նրանք], ովքեր հակառակում են՝ խափանելու այն: **Բանսարկուն պապանձուի, սատանան զարհուրի.** բանսարկու եւ սատանայ[2] ենք ասում նրան [իր] գործի պատճառով, որովհետեւ միշտ չար խորհրդի խօսքեր է գցում մեր սրտի եւ մտքի մէջ: Իսկ սատանայ է, որովհետեւ հակառակ է ամէն բարեգործութեան եւ փրկութեան: Նա, ասում է, թող պապանձուի ու չկարողանայ չարախօսել ինձանից, կործանուի եւ զօրութիւն չունենայ ինձ յաղթելու: Նրա **սրտմտութիւնը**[3] **տոչորուի, նրա մոլորութիւնը սուզուի.** նա չունի սրտմտութեան այլ [պատճառ], բացի մարդկանց փրկութիւնից, եւ դրան է ջանում հակառակուել մոլութեամբ ու դատապարտութեան պատճառներ հնարել: Երբ ես յաղթում եմ Քո շնորհներով, ասում է, [սատանայի] սրտմտութիւնը սպառուելով՝ անգործ է մնում, եւ մարտի մոլորութիւնը՝ անզօր սուզւում: **Նրա տանջանարաններն**[4] **ամաչեն.** նրա տանջանարանները ոչ թէ անբան նիւթեր են (ինչպէս մարմնի դէպքում է), որոնք ամօթ չեն զգում, այլ՝ չար ու ատելի հոգիներ: Եւ ամենքին չեն կարող տանջել, այլ՝ [նրանց], ում ծառայեցրին իրենց: Սա յայտնի է մեծատունի եւ Ղազարոսի [առակից]: Արդ, ասում է, թող ամաչեն ինձանից՝ որպէս իրենց մարտը Քո շնորհներով յաղթողից: Նրա **յարձակումը դադարի.** ինչպէս որ թռչնորսն է երկարում ձեռքը՝ յուսալով բռնել թռչնին, եւ երբ վերջինս ազատւում է, հասկանում է, որ թեւերի արագութիւնը օգնեց նրան, այնպէս էլ սատանան [իր] չարութեան առաւելութեան պատճառով ձեռքերը երկարում է նաեւ դէպի արդարները՝ բռնելու, ինչպէս Անտոնին, իսկ երբ չի կարողանում, [դադարում է՝ տեսնելով,] որ առաքինութիւնների թեւե՛րը բարձրացրին նրանց՝ ըստ Աստուծոյ արդար իրաւունքի: **Նրա մանուկները չարչարուեն, եւ նրա բոլոր արմատները գողդողան.** մանուկներ են [սատանայի] չարիքներին գործակից դեւերը, որոնք չարչարւում են՝ անբիծների կողմից յաղթուելու պատճառով սպասելով, որ իրենք են դատապարտուելու անաչառ Ատեանում՝ ըստ նրանց հանդէպ իրենց գործած բոլոր չա-*

1 Սաղմ. Ղ 7

2 Եբրայերէն *սատանայ* բառացի նշանակում է հակառակորդ:

3 Սրտմտութիւն - ցասում, բարկութիւն, զայրոյթ

4 Տանջանարան - տանջանքի գործիքներ

րիքների, որոնց [անբիծները] տեղի չտուեցին: Եւ, իմանալով, որ մարդը բարձրացաւ անմեղ լինելով, հաստատում են, որ միւս մարդիկ եւս ոչ թէ սեփական կամքը, այլ իրենց դաւաճանութիւններն են մեղանչական համարում: Ուստի եւ [դեւերը] դողդողում են հանդերձեալ Դատաստանի երկիւղից, քանի որ գիտեն, որ ոչ միայն Քրիստոսի Մարմնից, այլեւ Նրա շնորհներով սրբուածներից են դատապարտուելու քանզի գիտեն ահեղ պատիժների սաստկութիւնը:

Եւ տո՛ւր ինձ դէպի Քեզ [տանող] իմ այս ճանապարհը անբասիր եւ անբռնադատ աւարտել...

Թէ ովքեր են ճանապարհին բամբասողները կամ բռնադատողները, ահա ցոյց տուեց ճշգրտութեամբ: Արդ, երբ ազատում եմ նրանց բռնութիւնից, ասում է, այնուհետեւ Քեզ մօտ եմ հանգստանում յոգնութիւնից: Որովհետեւ սրանից ազատուածներին [չի սպասում] այլ բան, քան անճառ խնդութիւնը եւ անպատում ուրախութիւնը իրենց Յոյսի՝ Քրիստոսի մօտ:

...ստանալու այն, ինչ խոստացար նրանց, ովքեր սրբութեամբ ապրեցին եւ պարկեշտութեամբ սիրեցին Քեզ:

Ո՞վ կարող է նկարագրել այդ խոստումը, քանզի «աչքը չտեսաւ, եւ ունկը չլսեց, եւ մարդու սրտի մէջ չընկաւ [այն], ինչ պատրաստեց Աստուած Իր սիրելիներին»[1]: Ինձ ե՛ւս արժանի արա, ասում է, այդ խոստմանը՝ ոչ վայրապար, այլ՝ որովհետեւ պարգեւը սուրբերինն է եւ Քո սիրոյ մէջ պարկեշտութեամբ մնացածներինը: Եւ ես Քո շնորհներով աւարտեցի այն:

Ժ

Եւ ապա, խաչակնքելով իրեն եւ ասելով՝ Դո՛ւ եղիր ինձ հետ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս...

Փրկական Խաչի նշանը կնիք դրեց մարմնի եւ հոգու վրայ, որով եւ Քրիստոս էր նրա մէջ դրոշմւում, ինչպէս որ ասաց. «Դո՛ւ եղիր ինձ հետ», այսինքն՝ Քո այդ զօրութիւնը, Յիսո՛ւս Քրիստոս եւ Տէր:

...ընկողմանեց խորափիտում, ուր եւ տարածեց իր հանդերձը:

1 Տե՛ս Ա Կոր. Բ 9:

Այս բոլոր աղաչանքները կատարեց մարմնի հսկումով եւ, աւարտին հասցնելով, ընկողմանեց՝ պատրաստ վախճանի, որպէսզի հոգին աւանդելուց յետոյ հարկ չլինի, որ ուրիշ մէկը թաղի մարմինը, մանաւանդ որ աշակերտները կհաստատեն այս:

Եւ ասելով մեզ՝ խաղաղութի՛ւն ձեզ հետ, եղբայրնե՛ր...

Յայտնի է, որ վերջին [խօսքն] է, որ այլեւս մարմնապէս չէք լսելու վարդապետից: Սակայն ի՞նչ խաղաղութեան մասին է [ասում]. այն, ինչն ինքն ընդունեց Քրիստոսից, որ ասաց. «Իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ»[1]: Որովհետեւ՝ իմ վախճանից յետոյ էլ, ասում է, ձեզ հետ ունեմ սէր եւ խաղաղութիւն եւ ձեր բարեխօսն եմ Նրա առջեւ, Ում մօտ ընթանում եմ:

...եւ մինչդեռ մենք ուրախ էինք ու լալիս էինք, իր հոգին աւանդեց Տիրոջ ձեռքը:

Միաժամանակ ինչպէ՞ս կարող են մարդուն տիրել այս երկու ներհակ բաները՝ ուրախութիւնը եւ արտասուքը, ինչպէս որ պատահեց նրանց: Սակայն [պէտք է] իմանալ, որ այնպէս էլ չգիտէին վախճանի ստուգութիւնը եւ տարակուսանքի էին մատնուած: Ուրախ էին յոյսով, որ այս աղօթքն իրենց կասկածանքի համաձայն չէր, որովհետեւ [կարծում էին, թէ Յովհաննէս Աւետարանչին] սահմանուած է անմահութեան մէջ մնալ, եւ լալիս էին, որովհետեւ տեսնում էին նրան դէպի մահ ընթանալիս: Ուստի եւ տարակոյսներով վարանումը նրանց հակում էր երկու մտքի եւ գործի. նախագէտ խորհրդի յոյսը՝ ուրախութեան, իսկ առաջիկայ գործը տեսնելը՝ տրտմութեան եւ արտասուքի:

Եւ մինչդեռ այսպէս վարանում էին նրա շուրջը, նա չյապաղեց, այլ շտապով աւանդեց հոգին նրանց առջեւ, քանզի չէին կարող համարձակուել կափարիչ դնել գերեզմանին, եթէ ստոյգ չտեսնէին այս: Այլ տեսան ըստ ամենայնի, որ վախճանուեց իրենց առաջ, եւ ապա ծածկեցին հանգստարանը: Սակայն աւելորդ չեմ համարում յիշեցնել, որ այս պատմութիւնը հասաւ [իր] լրմանը. մարմինը բարձրացաւ երկրից եւ չկայ [այնտեղ], ինչպէս միւս առաքեալներինը կամ սուրբերինը, այլ միայն թափուր գերեզմանն է եւ հանդերձը, որ տարածեց խորափիտում: Իսկ թէ ինչու [սա] չի յիշատակւում այս պատմութեան

1 Յովհ. ԺԴ 27

մէջ, [պէտք է] իմանալ Աւետարաններից: Որովհետեւ ահա նրանք երկար ու ճշգրիտ պատմում են Քրիստոսի չարչարանքների ճառը, իսկ յարութիւնը նկարագրում են համառօտ եւ համբարձումն էլ բնաւ փոյթ չարեցին գրել, բացի մէկից՝ յանձնելով մեր հաւատին: Նոյն հոգին էր նաեւ վարդապետների աշակերտների եւ նրանց վարքագիրների մօտ: Սակայն մենք ստոյգ սովորել եւ հաւատում ենք, որ սրանից յետոյ եկան, բացեցին դերեզմանը եւ այն դատարկ գտան երանելու մարմնից, քանզի [Յովհաննէս Աւետարանիչը], հատուցելով այս բնութեան պարտքը, մահուան միայն համն առաւ, ինչպէս Տիրամայրը:

Սակայն [այն մասին], որ ոմանք ասում են, թէ ապագայում նա գալու է Ենովքի ու Եղիայի հետ, չսովորեցինք սուրբերից, ովքեր պատմեցին այն խորհուրդը: Եւ դարձեալ՝ Ենովքն ու Եղիան գալու են, որովհետեւ մարմնով չեն մեռել, որպէսզի մեռնեն, քանզի Ադամից սերուածներիս համար անհնար է չճաշակել նրա դատապարտութիւնը: Իսկ [Յովհաննէսն] ահաւասիկ ճաշակեց, քանզի վախճանուեց ու աւանդեց հոգին, եւ մէկ անգամ այս վախճանուածի համար երկրորդ մահ չկայ, այլ մեռնելուց յետոյ դարձեալ մարմին հագաւ: Թէպէտեւ ասում ենք՝ [մարմին] հագաւ, սակայն երկբայական այս խորհուրդը թողնում ենք Աստուծոյ անհաս իմաստներին եւ հաստատում մեր ճշգրիտ [գիտեցածը], որ մարմինը չմնաց [մահուանից յետոյ]. իսկ թէ ուր է, Աստուած գիտէ, որ փոխադրեց: Մանաւանդ՝ եթէ մէկը կամենայ սա հաստատելու համար [վկայակոչել] Աւետարանի նրա խօսքը. «Յիսուս չասաց նրան,- ասում է,- թէ չի մեռնի, այլ թէ՝ Ես կամենում եմ, որ դա մնայ, մինչեւ Ես գամ»[1]: Այսինքն՝ Քրիստոս ոչ թէ ասաց, թէ Յովհաննէսը մահ չի ճաշակելու, որը նաեւ Ինքն էր ընդունելու, այլ թէ՝ կամենում եմ, որ նա մեռնելուց յետոյ մշտնջենապէս մնայ անապականութեան մէջ, ինչպէս եւ միւսներդ էք լինելու ձեր մարմինների ապականութիւնից յետոյ: Իսկ «մինչեւ»-ը այստեղ սահմանի ընդարձակութիւնն է, ինչպէս բազում տեղերում, եւ ոչ՝ լրման կէտը՝ ըստ այնմ. «Յաւիտեաններից մինչեւ յաւիտեաններ Դու ես»[2]:

Այս կարծիքը ոչ թէ հաստատում ենք, այլ [նրա] ճշգրտութիւնն [ու] հաւանութիւնը յանձնում քննողների կամքին եւ մանաւանդ՝ քո,

1 Յովհ. ԻԱ 22

2 Սաղմ. ՁԹ 3

որ ամէն ինչում ճշմարտասէր ես եւ իմաստասէր՝ այն աստիճան, որ քոնով չբաւարարուեցիր եւ մեզ էլ հաւանութեամբ գցեցիր յանդգնութեան մէջ, ո՛վ պատուական հայր Ստեփաննոս, որիդ խնդրանքը Աստուծոյ շնորհն իրականացրեց տառապած գործիքիս միջոցով՝ Իր փառքի, քո հաւատի եւ այս Աստուածաբանի հանդէպ ճշմարիտ սիրոյ վայելման համար: Եւ ոչ թէ, ինչպէս որ պէտք էր, բովանդակապէս լուսաբանել եմ սրա իմաստը, որ անհաս էր ինձ, այլ փութացել եմ իմ որդիական հպատակութեան հնազանդութեամբ առիթ տալ իմաստունիդ՝ սրա իմաստութեան մէջ առաւել բարձրանալու մեր Յոյսի եւ Լոյսի՝ Քրիստոսի շնորհով, որ օրհնեալ է յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց
Սեդա Ստամբոլցեանը

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Կենսագրական ուրուագծեր

Կիրակոս Երզնկացին ԺԳ-ԺԴ դդ. Հայ Եկեղեցու մեծագոյն դէմքերից է: Եկեղեցական աւանդութեան մէջ նա մեծարուել է որպէս «մեծ եւ հոչակաւոր վարդապետ», «արժանաւորն ամենայն գովեստի եւ յիշման»[1], «գերաշնորհ եւ եռամեծ ռաբունապետ»[2], «երիցս երանեալ ռաբունապետ»[3] եւ այլն: Նա շարունակել եւ զարգացրել է Երզնկայի դպրոցի եւ նրա մեծ ռաբունապետների՝ Յովհաննէս Պլուզ Երզնկացու եւ Մովսէս Երզնկացու աւանդները:

Կիրակոս Երզնկացու կենսագրութեան մասին տեղեկութիւնները սակաւաթիւ են: Նա ծնուել է Եկեղեաց գաւառի Ագրակ կամ Ագարակ բնակավայրում[4] 1270-ական թուականներին[5]: Նախնական կրթութեան եւ ծնողների մասին տեղեկութիւններ չունենք: Առաջին անգամ նրա մասին յիշատակւում է 1315 թ. մի ձեռագրի յիշատակարանում[6]. «...բուրման խնկոց անուշահոտութեան, զրաբունապետս զՅովհաննէս եւ զկիրակոս յիշեսջի՛ք ի Տէր Յիսուս»[7]:

Կիրակոս Երզնկացին երկար ժամանակ ապրել եւ գործել է Երզնկայում: Մեզ հասած մի շարք յիշատակարաններից պարզւում է, որ նա բաւական բեղուն գրական գործունէութիւն է ծաւալել: Յաճախ նրա անունը յիշւում է որպէս ձեռագրի պատուիրատու կամ գրիչ, յաճախ՝ նաեւ ստացող: Գարեգին կաթողիկոս Յովսէփեանը

1 «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմ. Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 212

2 Նոյն, էջ 225

3 «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմ. Ն. արքեպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, հտ. Դ (=«Ցուցակ Երուսաղէմի»), էջ 384

4 Մենք չկարողացանք պարզել, թէ Ա. Սրապեանին որտեղից է յայտնի, որ Երզնկացին ծնուել է Ագարակ կամ Ագրակ աւանում. տե՛ս ՀՍՀ, հտ. 5, էջ 450-451:

5 Ծննդեան մօտաւոր թուականը վերցրել ենք Ա. Սրապեանից. տե՛ս նոյն, էջ 450:

6 Հ. Քիւրտեանը գտնում է, որ Կ. Երզնկացին առաջին անգամ յիշատակւում է 1317 թ. մի յիշատակարանում իբրեւ ստացող եւ գրիչ. տե՛ս Հ. Քիւրտեան, Երիզա կամ Եկեղեաց գաւառ, Վենետիկ, 1953, հտ. Ա, էջ 225:

7 «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 116

նշում է, որ «Կիրակոսը ինքն էլ ԺԴ դարի առաջին կէսի նշանաւոր գրիչներից եւ վարդապետներից մէկն է, որը իւր եղբօրորդի Յովհաննէսի հետ բազմաթիւ ձեռագրեր ունի գրած եւ երկար ժամանակ ուսուցչութեամբ է զբաղուել յատկապէս իւր հայրենիքում՝ Երզնկայում...»[8]:

1304 թ. ոմն Ոսկան վարդապետ «ի վանս Գլաձոր Ս. Ստեփանոսին, ի դաստիարակութիւն հայոց դպրոցի՝ Եսայի վարդապետին», «ի հոյլս հոգնաթիւ աշակերտաց Եսայայ...», յիշատակում է նաեւ Կիրակոս Երզնկացու անունը[9]: Այս տեղեկութիւնից եզրակացնում ենք, որ Կիրակոս Երզնկացին ուսանել է Գլաձորում, Եսայի Նչեցու ռաբունապետութեան օրոք: Կիրակոս Երզնկացին 1318 թ. «մեծ ռաբունապետ բոլոր Հայաստանեայց»[10] է կոչում Եսայի Նչեցուն:

Կիրակոս Երզնկացու մահուան թուականի մասին վստահելի աղբիւրը Երզնկայում Ստեփանոս երէցի գրած ժողովածուն է, որի յիշատակարանում կայ հետեւեալը. «յիշեսջիք եւ զերջանիկ եւ զերիցս երանեալ ռաբունապետն մեր զԿիրակոս վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, նոյեմբեր ԺԵ (15) եւ զմեզ եթող որբս յայս կենցաղս...», ապա մի քիչ ներքեւ կայ հետեւեալը. «գրեցաւ ի թուին հայոց ՊԵ (1356) յամսեանն մարտի ԺԸ (18)...»[11]:

Ըստ Յակոբ Կարնեցու վկայութեան՝ Կիրակոս Երզնկացին թաղուած է Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցում: Նրա տապանի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «...Եւ Կիրակոս վարդապետին, որ Արեւելքն է ասացեալ»[12]:

Աստուածաբանական վաստակը

Կ. Երզնկացու ժառանգութիւնը բազմաբովանդակ է՝ դաւանական եւ մեկնողական երկերից մինչեւ ներանձնական-խրատական բնոյթի մեծարժէք գործեր, որոնցից մի քանիսը մեզ յայտնի են բազ-

8 Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 191

9 Ղ. Ալիշան, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 134

10 Տե՛ս Գ. Գրիգորեան, Սիւնիքը Օրբելեանների օրոք, Երեւան, 1981, էջ 163:

11 «Ցուցակ Երուսաղէմի», էջ 384

12 Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց. տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ.», կազմ. Վ. Ա. Յակոբեան, Երեւան, 1956, հտ. II, էջ 551:

մաթիւ ընդօրինակութիւններով: Կ. Երզնկացու անունով պահպանուել եւ մեզ են հասել հետեւեալ գործերը:

Ա. Նախերգան Տեառնընդառաջին՝ Կիրակոս վարդապետի ասացեալ[13]:
սկ. «Հուր է սէրն Քրիստոսի, եւ հոգիս մաքուր բորբոքի...
վրջ. Իսկ Հայաստանեայց Եկեղեցին Թ ընկալան ի Գրիգորէ...»:

Բ. Կիրակոս վարդապետի ասացեալ ի բանն, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն»[14]:
սկ. «Ամենայն գոյից որք մի անգամ ի գերագոյն Գոյէն են եւ ի սկզբնապետաց ոյ պատճառեն բաղկացան հիասքանչ եւ զարմանալի արարչակերտութեան...
վրջ. ...Այլ ամենայնիւ մի բաց յառանձնաւորեացն հաւասար միաւոր բնութեամբ Աստուած: Ամէն»:

Գ. Կիրակոս սուրբ վարդապետի արարեալ ի սաղմոսն ՃԹ, որ ասէ. «Ասաց Տէր ցՏէր Իմ՝ նի՛ստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եդից զթշնամիս Քո պատուանդան ոտից Քոց»[15]:
սկ. «Կանուխ եւ ամենաիմաստ գիտութեամբ Իւրոյ Աստուած...
վրջ. ...Ցորս եւ մեք ժամանեսցուք յանճառ բարիսն եւ ի խոստացեալ պարգեւս»:

Դ. Ի բանն որ ասէ. «Ջայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց եւ Տէրն Ինքը ի վերայ ջուրց բազմեաց»: Կիրակոս վարդապետի Երզնկեցոյ արարեալ[16]:
սկ. «Արուեստաւորք եւ մակացուք նախ եւ առաջ նիւթն պատրաստեն...
վրջ. ...Արդ, այս բաւականասցին ի տեսութիւն բանիս»:

Ե. Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն[17]:

13 Տե՛ս ՄՄ ձեռ. N 2187 (1346 թ.), էջ 224ա-264ա, N 2178 (ԺԴ դ.), էջ 89բ-90ա:
14 Տե՛ս ՄՄ N 1098 (1320), 110ա-141բ, N 933 (ԺԵ), 136բ-151ա:
15 Տե՛ս ՄՄ N 4139 (ԺԴ), 372ա-378բ:
16 Տե՛ս ՄՄ N 2187 (1346):
17 Տե՛ս ՄՄ ձեռ. N 2542 (1476), 99բ-110բ, N 8727 (ԺԵ), 301ա-313բ, N 3050 (1593), 152ա-165ա, N 1720 (1720), 169բ-182ա, N 2939 (1774-1799), 318ա-329բ, Վենետիկի Սուրբ Ղազարի մատենադարան (=ՍՂՄ) N 241 (1495), 3ա-19բ:

սկ. «Աստուծոյ ամենակալէ աւրհնութիւն եւ պահպանութիւն...
վրջ. ...Աչն հայրական եւ ամենայն սուրբ Իւր բառնան ի ձէնջ զինչ ցասում կայ...»:

Զ. Լուծմունք հարիւրաւոր թուոցն Եւագրեայ[18]:
սկ. «Տնտես հաւատարիմ եւ իմաստուն ամենեցունց Տեառնէ ընտրեալ...
վրջ. ...Զի ամենայն կրաւնք իւրեանց հաւանին մեղացն, որ ծնանի մահ, յորմէ փրկեսցէ Քրիստոս... ամէն»:

Է. Կիրակոս վարդապետի Եզնկացւոյ ասացեալ ի սուրբ Աստուածածինն. «Աստուածածին տաճար Բանին, բարեխօսեա՛ց քո Միածնին...»[19]:

Ը. Կիրակոս վարդապետի ասացեալ է Աստուածածնի փոփոխման. «Արեւելք գերարփին...»[20]:

Թ. Ցաղագս Ը խորհրդոցն Եւագրեայ[21]:
սկ. «Զարմանալի քննութեամբ անաւթն ընտրութեան Պաւղոս...
վրջ. ...Այսպէս եւ չար շղթայքն մեղաց ի միմեանս ընդելուզեալ են...»:

Ժ. Թուղթ առ Կարնեցիս[22]:
սկ. «Ընկալայ նուաստս Կիրակոս եւ Յովհաննէս վարդապետ զնամակ հրամանի ազնուական...
վրջ. ...նոյնպէս եւ Ծնունդն Քրիստոսի յորում աւուր պատուես,

18 Տե՛ս ՄՄ N 1980 (1391), 1ա-40բ, N 518 (ԺԸ), N 1480 (1617), 1ա-60բ, N 6462 (1807-1808), 1ա-51բ, N 1812 (1780), 208ա-291բ, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարան (=ՍՅՄ) N 132 (1354), 161-279, N 620 (1354), 1ա-371բ, N 1407 (1354), 3ա-87բ, N 2616 (1668), 461ա, N 2828 (1875-1877), 305-381, Ղալաթիայի ձեռ. N 84 (1675), 805-881, N 115 (ԺԷ), 697-722, Անկիւրիայի ձեռ. N 628 (1700), 211-223:
19 Տե՛ս ՍՂՄ N 258, 143ա-144բ:
20 Այս շարականը կայ մեր բոլոր Շարականոցներում. այն մեր վերջին շարականն է, որ մտել է կանոնի մէջ, եւ որի հեղինակը յայտնի է:
21 Տե՛ս ՄՄ N 4040 (1474), 41բ-71ա, N 2542 (1476), 132բ-160բ, N 6832 (ԺԵ), 432ա-471բ, Ղալաթիայի N 481 (1745), 87-99, ՍՅՄ N 1407 (1354), 41-60, N 1262 (1378), 3ա-15բ, N 589 (1668), 309-402:
22 Տե՛ս ՄՄ N 750 (ԺԴ), 199ա-233բ, N 639 (1409), 12բ-76ա, N 6608 (ԺԵ), 70բ-101բ, N 728 (1621), 52ա-100բ, N 614 (1625), 151ա-199բ, N 4063 (1694), N 2283 (ԺԸ), N 6302 (ԺԸ), 23բ-63բ, N 2715 (ԺԹ), 69ա-101բ, N 774 (ԺԹ), 139ա-154բ:

բարի է, միայն սիրով ի փառս Աստուծոյ լիցի»:

Թուղթ առ Կարնեցիս

Իկոնիայի սուլթանութեան կործանումից յետոյ նրա տարածքում առաջացան մի շարք էմիրութիւններ. «...Երկուսը դրանցից ավելի ուժեղ էին եւ զաւթող: XIV դարի 20-ական թուականներին, երբ օսմանեան թուրքերը, նուաճելով Փոքր Ասիայի բիւզանդական գաւառները, շարժւում էին դէպի Մարմարայ ծով, սելջուկ թուրքերն ու կարաման թուրքերը սկսեցին արշաւել Կիլիկիա»[23]: Այս արշաւանքի մասին արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Գրիգոր Կարնեցի եպիսկոպոսը. «Եւ արդ, մինչեւ էր [թուականս] Հայոց Ձ եւ Հ (1321), ամպարիշտն ոմն յազգէն Նետողաց, որում անուն Դամուրտաշ ասի, այսինքն՝ Երկաթաքար, անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց, եւ տեսեալ զերկիրն Հայոց զԿիլիկին, զի որպէս ճիւղ մի ձիթենոյ մնացեալ դադարէին ի նեղ եւ ի յանձուկ եւ ի խորշակահար երկրին: ...Եւ անօրէն Երկաթաքարն այն մտեալ յերկիրն Հայոց՝ բազում հետեւակօք եւ ձիաւորօք եւ բազում աւերմունս արարին...»[24]: Այս արշաւանքի մի այլ նկարագրող՝ Ներսէս Պալիանենցը, գրում է, որ Դամբուրտաշը «աւելի քան 30000 հեծելօք եւ բազում հետեւակօք, այսինքն՝ ամենայն ուրտուիւն իւր յակամաց եւ բռնութեամբ ի յաշխարհն Հայոց ի Կիլիկիա մտաւ եւ բազում աւեր արար, սպանութիւն եւ աւար...»[25]: «XIV դարի 20-ական թուականների սկզբին Կարամանիայում* իշխում էր Աբու-Սաիդի վեզիր Զուբանի որդի Դամիսդտաշը...[26], որը 1320-1322 թուականներին Եգիպտոսի սուլթան Նասիրի դրդմամբ արշաւեց դէպի Կիլիկիա եւ նրա հիւսիսային շրջանները: Դամուրդաշի այս արշաւանքների մասին հպանցիկ

23 **Г. Г. Микаелян,** История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 447

24 Ղ. Ալիշան, Հայապատում պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 530

25 Նոյն, էջ 532. հմմտ. «Մանր ժամանակագրութիւններ», կազմ. Վ. Ա. Ցակոբեան, Երեւան, 1956, հ. Բ, էջ 188:

* Շրջան Փոքր Ասիայում. տե՛ս "Энциклопедический словарь", изд. Брокгауз и Ефрон, СПб., т. 27, с. 433:

26 **Г. Г. Микаелян,** նշ. աշխ. էջ 447

ակնարկ կայ նաեւ Կ. Երզնկացու այս թղթում, որտեղ նա, խօսելով ժամանակաշրջանի պատերազմական խառնակ վիճակի մասին, յուսադրում է կարնեցիներին, թէ՝ իրաւ, ձեզ մօտ կայ ներքին պատերազմ «սուտ եղբայրների» դէմ, բայց, ասում է, մեզ մօտ էլ խաղաղ չէ, «այլ աւերումն եւ պաշարումն եւ սպանումն եւ գերութիւն եւ հրձգութիւն բազմապատիկ կրեցաք, զի մնացեալն ի մարախոյ Տամուրտաշ կոչեցելոյ եկեր թրթուրն...»[27]: Այս ակնարկի եւ վերը ներկայացուած պատմական իրողութիւնների համադրմամբ կարող ենք եզրակացնել, որ կարնեցիներին ուղղած իր կարեւոր ուղերձը Կիրակոս Երզնկացին գրել է Դամուրդաշ թաթարի կիլիկեան արշաւանքի աւարտից անմիջապէս յետոյ՝ 1323 կամ ամենաուշը 1324 թուականին:

Թղթի ստեղծման հիմնական շարժառիթ է հանդիսացել Հայ Եկեղեցու կողմից միարարական շարժման դէմ ծաւալուած սուր պայքարը: Թղթի բազմաթիւ ընդօրինակութիւնները վկայում են այն մասին, որ այն մեծ տարածման եւ ընդունելութեան է արժանացել Եկեղեցու եւ ժողովրդի կողմից: Այս պայքարով են պայմանաւորուած մեր հեղինակի մերձաւորագոյն նախորդներ Ստեփանոս Օրբելեանի եւ Մովսէս Երզնկացու հակաճառական երկերը, որոնց ազդեցութեան հետքերը ակներեւ են Երզնկացու այս թղթում:

Ցոյց տալով դաւանափոխութեան կործանարար հետեւանքները՝ Կ. Երզնկացիին յորդորում է զգուշութիւն եւ շրջահայեացութիւն հաւատի մաքրութեան հարցերում: Պատասխանելով կարնեցիների հարցադրումներին՝ նա անդրադառնում է դաւանական, ծիսական եւ բարոյական մի շարք կարեւոր խնդիրների:

Թղթի կենտրոնական թեման Եկեղեցու եօթ խորհուրդներն են, որոնց մասին իր խորհրդածութիւններում հիմնականում հետեւում է Դիոնեսիոս Արեոպագացուն[28]: Ուշագրաւ է, որ նա եօթ խորհուրդների շարքին է դասում հիւանդների եւ ապաշխարողների օծման կարգը՝ նշելով, որ այն յաճախ չի կատարւում քահանաների կողմից «վասն տգիտութեան եւ վասն ծուլութեան»: Անդրադառնալով ապաշխարութեան խորհրդին՝ Կ. Երզնկացին նշում է, որ քահա-

27 Տե՛ս բնագրի էջ 1:

28 Տե՛ս «Ցաղագս եկեղեցական քահանայապետութեան»:

նայագործութեան ամենադժուարին եւ ամենապատասխանատու ոլորտը խոստովանահայրութիւնն է: Սակայն ամէն մի հոգեւորական չի կարող խոստովանահայր լինել, այլ՝ միայն նրանք, ովքեր տիրապետում են հոգեւոր բժշկութեան այդ բարձրագոյն արուեստին:

Կ. Երզնկացու դաւանական խորհրդածութիւնները բացառաբար քրիստոսաբանական են: Քրիստոս ճշմարիտ Աստուած է եւ կատարեալ մարդ: Աստուած անճառելիօրէն մարդացաւ՝ առանց փոփոխման եւ շփոթի, որպէսզի մարդն աստուածանայ: Անդրադառնում է նաեւ անապականութեան խնդիրներին:

Եզրափակւում է ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի հետ կապուած տոմարագիտական հարցերի համառօտ տեսութեամբ:

Այս մեծարժէք թուղթն ունի զարմանալի այժմէականութիւն: Այսօր էլ հրամայական է դարձել դաւանական մաքրութեան եւ սեփական աւանդութեան ճանաչման խնդիրը, որի համար դարեր շարունակ պայքարել են մեր հայրերը՝ սերնդից սերունդ փոխանցելով Քրիստոսի փրկութեան լոյսը:

***

Ստորեւ ներկայացնում ենք «Թուղթ առ Կարնեցիս» երկի բնագիրն ըստ ՄՄ N 750 (199ա-233բ) գրչագրի: Հարկ եղած դէպքում դիմել ենք այլ ընդօրինակութիւնների՝ բնագիրն առաւել ստոյգ ներկայացնելու համար: Կատարուած են ուղղագրական աննշան միջամտութիւններ. օրինակ՝ ընդրեմ-ընտրեմ, մանգան-մանկան, ընգդմեմ-ընկդմեմ, իպիսկոպոս-եպիսկոպոս, ըմբել-ըմպել, անկոսնելի-անգոսնելի, պոռնգութիւն-պոռնկութիւն, ասաւղ-ասող եւ այլն: Վերականգնուած են բաց թողնուած յ-երը, անտեսուած են գաղտնավանկի ը-երի աւելորդագրութիւնները: Գրչագրում առկայ օ-ի եւ աւ-ի զուգահեռ գործածումները միօրինակացրել ենք՝ նախընտրելով առաւել դասական աւ տարբերակը:

Աւետիս քահանայ Դանիէլեան

ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՑՒՈՅ ԹՈՒՂԹ ԱՌ ԿԱՐՆԵՑԻՍ

/199ա/ Ընկալայ նուաստս Կիրակոս եւ Յոհանէս վարդապետ զնամակ հրամանի ազնուական, ընտրեալ եւ պատուական, ծնունդ մեծաբոյս մտաց ձերոց տեսութեան, լի քաղ[ց]ր պտղով իմաստութեան, եւ ծանեաք որպէս ի դիմաց հարազատ մանկան զծնող հրաշագեղ դէմ յանդիման, ո՛վ սրբազան եւ վսեմական, արժանապատիւ դէտ կարգեալ յԱստուծոյ եւ մշակ ժրաջան, Սարգիս քահանայ, հանդերձ աստուածասէր ժողովրդեանդ Կարնոյ միաբան: Զի իմաստութիւն մտաց մարդկան ի նամակի /199բ/ իւրում ճանաչի եւ լինի թարգման, զի ներձայնոջքն ներանձիցն կրից են նշանակք, եւ ներգրեց[ե]ալքն՝ ներձայնոջացն, այսինքն՝ զի գիրն զբանն ցուցանէ, եւ զբանն՝ զմտաց իմաստութիւնն: Վասն որոյ իբրեւ լուաք եւ ծանեաք ի գրոյ աստի զիմաստութիւն մտաց ձերոց եւ զհոգաբարձութիւն ամենայն Եկեղեցւոյ, յոյժ գոհացաք զԱստուծոյ՝ յիշատակելով զձեզ յաղաւթս, հանդերձ միաբան եղբարցս լրման, զի լինիջիք հաստատուն եւ առանց գայթակղութեան յաւրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ իբրեւ զծառ բազմաբեղուն, կենդանի եւ բանական, լի ամենայն պտղովք բարութեան, ի փառս Տնկագործողին եւ ի պարծանս մեր, ի յայտնութիւն /200ա/ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում փառք յաւիտեանս:

Այլ վասն զի գրալք էիք առ մեզ զբազմադիմի փորձանսն հոսեալ իբրեւ զյորձանս հեղեղաց ի յարկածից սատանայ[ի] ի վերայ անշարժ մտաց ձերոց, ի ներքոյ մարտք եւ արտաքոյ արհաւիրք[29], այսինքն է՝ ի սուտ եղբարցն զմարտ պատերազմի եւ յայլասեռիցն զանազան եւ զազգի ազգի նեղութիւնսն եկեալ ի վերայ ձեր, յոյժ տրտմութեամբ լցաք: Այլ վասն զի հասարակաց է նեղութիւնդ յամենայն տեղիս՝ որպէս առ ձեզ, նոյնպէս եւ առ մեզ. զի թէպէտ եւ ոչ գոյ առ մեզ երկպառակութիւն ի սուտ եղբարց, այլ աւերումն եւ պաշարումն եւ սպանումն եւ գերութիւն եւ հրձգութիւն բազմապատիկ կրեցաք, զի

29 Տե՛ս Բ Կոր. Է 5:

մնացեալն ի /200բ/ մարախոյ Տամուրտաշ կոչեցելոյ եկեր թրթուրն ի աղպատի, եւ զմնացեալն ի թրթրոյ եկեր ջորեակն խալիթ՝ ըստ կանխաձայն մարգարէիցն[30]: Ո՞ր առաւել. քանզի երկիր մեր աւերակք, եւ աւանք մեր հրձիգ եղեն, եւ զբազմապատիկ նեղութիւնսն՝ զոր կրեցաք, ո՞ կարասցէ ընդ գրով արկանել: Այլ վասն զի հազարապետն խորոցն Աստուծոյ եւ երրորդ երկնից արժանաւորն եւ անհաս խորոցն բանալին, որ Քրիստսիւն խաւսէր՝ Պաւղոս, ի Տիմոթիայ երկրորդ թղթին ի յէ-երորդ գլխին ասէ, թէ՝ «Ամենեքեան, որ կամիցին աստուածապաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կայցեն»[31], եւ Տէրն յԱւետարանին երանէ զհալածեալսն[32], /201ա/ զի ըստ առաքելոյն՝ «Նեղութիւն[ք] զհամբերութիւն գործեն, զհամբերութիւն՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս, յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ»[33], զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս ամենայն հաւատացելոց, եւ վասն այնորիկ համբերեն վշտաց եւ նեղութեանց եւ կցորդ լինին չարչարանացն Քրիստոսի եւ սուրբ առաքելոցն, որով եւ փառացն հաղորդ լինելոց են: Վասն որոյ պարտ է համբերել նեղութեանց, եթէ յեղբարց է եւ եթէ յաւտարաց, քանզի առաքեալն Պաւ-[ղ]ոս ասէ ի Գաղատացւոց թղթին, եթէ՝ «Մեք եւ կամ հրեշտակք յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի, քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ եղիցի»[34], եւ դարձեալ կրկնէ զբանն վասն հաստատութեան: Արդ, եթէ ինքն Պաւղոս վասն իւր ասէ, թէ՝ «Ես եւ կամ հրեշտակ ի յերկնից գայ առ ձեզ եւ այլազգ քարոզէ, նզովեալ լիցի»[35], /201բ/ ո՞վ այնչափ յանդուգն եւ լիրբ, որ զսուրբն Լուսաւորիչին զեղեալ հրամանքն կ[ամ] զկանոնքն պեղծ բերանով հայհոյել իշխէ եւ փոխել, որ զՏրդատ ի խոզի կերպարանս դարձոյց եւ զյայլ սուրբ հարցն, որ զմեռեալս յարուցին եւ զկոյրս լուսաւորեցին եւ զանդամալոյծս բշկեցին եւ զգետս որպէս Յեսու յետս դարձուցին[36] եւ զվիշապն քարացուցին եւ ապա զայս աւրէնքս հաստատեցին: Ի դոսա ի՞նչ նշան կամ

30 Հմմտ. Ցվլ. Ա 4:
31 Բ Տիմ. Գ 12
32 Հմմտ. Մատթ. Ե 11:
33 Հռոմ. Ե 3
34 Գաղ. Ա 8
35 Տե՛ս Գաղ. Ա 8, 9:
36 Հմմտ. Յես. Գ 9-13:

սքանչելիս տեսին եւ հաւատացին: Ուրեմն յայտ է, թէ վասն հեշտասէր քարոզութեան եւ մարմնոյ անխայութեան. այսինքն՝ լուծանել զպահս ձկնիւ եւ ձիթով եւ գինեաւ եւ զայլ մարմնոյ հեշտութիւնս անխտիր ունել եւ անարժան խառնակութեամբ ի քահանայագործութիւն ձեռնարկել առանց խղճի մտաց, որպէս եւ տեսաք, եւ տեսանեմք ի բազումս: Զի /202ա/ ոմանք գնացին, կրկին մկրտեցան եւ յետ այնորիկ զՔրիստոս ուրացան եւ թլփատե[ա]լ զմահմետի հաւատսն առին, որպէս Գրիգոր սարկաւագ ի Թաւրէժ եւ Ստեփանոս աբեղայն, եւ կէսք պոռնկին եւ անխտիր ժամ առնեն լրբութեամբ իբրեւ զՅուդա: Վասն որոյ մի՛ հաւատայք նոցա, զի այնպիսիքն սուտ առաքեալք [ե]ն, մշակք նենգաւորք, կերպարանին ի կերպարանս առաքելոցն. եւ չէ ինչ զարմանք, քանզի եւ ինքն սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ. եւ ոչ ինչ է մեծ, եթէ պաշտաւնեայք նորա կերպարանին իբրեւ զպաշտաւնեայս արդարութեանն, որոց դատաստանն եղիցի ըստ գործոց իւրեանց[37], որպէս ասէ առաքեալն. «Որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ դատաստան, որք եւ իցէ»[38]:

Արդ, հա՛րք եւ եղբա՛րք, լուարո՛ւք խրատուն Պաւղոսի, որ առ Տիմոթէոս, /202բ/ եթէ՝ «Մի՛ բանակռիւ լինիր յոչինչ պէտս ի գործ»[39], եւ մի՛ հաւատայք անմիտ եւ հակառակորդ մարդկան, որ խոստանան գիտել զԱստուած եւ գործովք իւրեանց ուրանան եւ, ի ճշմարիտ գիտութենէ Գրոց աւտարացեալք, իբրեւ զարբեալ եւ զխելագար խաւսին: Քանզի արբեալ ամբարտաւանութեանն գինւովն զամենայն քրիստոնէից ոչ զմեղս բամբասեն, այլ զառաքինութիւնս, զպահս եւ զչորեքշաբթու եւ զուրբաթու եւ զշաբաթապահս, առ որս ասացից, եթէ պահոց եւ աղաւթից եւ այլ առաքինութեան շնորհ ոչ այլ ուստէք է, եթէ ոչ ի Հոգւոյն Սրբոյ: Եւ որ հայհոյէ զպահս կամ զաղաւթս, զՀոգին Սուրբ հայհոյէ, որպէս ասէ մեծն Բասիլիոս. «Զհոգւոյն Սրբոյ գործս չարին դնելով, որ անթողելի է, զի ամբարտաւանութիւն է գլուխ ամենայն չարեաց», որպ/203ա/էս ասէ Տէրն. «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝

37 Բ Կոր. ԺԱ 13, 14
38 Գաղ. Ե 10
39 Բ Տիմ. Բ 14

բարձրացի»[40]: Եւ Առակախաւսն ասէ. «Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց»[41], քանզի ասէ աստուածայինն առաքեալ, թէ՝ «Փոքր ի շատէ եղեւ կորուստն Իսրայեղի, զի նախ զմարգարէսն հալածեցին եւ սպանին եւ յետոյ՝ զՏէր մարգարէիցն»[42]: Նոյնպէս եւ Հռոմայեցւոց թագաւորութեանն լինելոց է ըստ տեսլեանն մարգարէին Դանիելի[43], զի նախ ի Ժ թագաւորութիւն պատառին, եւ ապա յետ այնորիկ ի մէջ տասանցն ելանէ փոքրիկ եղջիւրն, որ է Նեռն, եւ երիս թագաւորս ի Ժ թագաւորացն սպանանէ, որք ոչ հաւատան նմա, եւ զէ թագաւորսն հնազանդեցուցանէ եւ ապա հպարտանայ ի վերայ ամենայն կրաւնից եւ աւրինաց եւ Հռոմայեցւո/203բ/ց աւրէնքն մեծ քարոզէ եւ զկրաւնք՝ քան զամենայն աւրէնս եւ զկրաւնս, եւ ապա նստեալ ի տաճարին, զինքն քարոզէ Աստուած, որպէս ասէ սուրբ առաքեալն Պաւղոս ի Թեսաղոնիկեցւոց թղթին ի յերկրորդ գլխին. «Զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւն, եւ յայտնեսցի մարդն անաւրէնութեան՝ որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ աստուած կամ պաշտաւն, մինչեւ նստեալ նմա ի տաճարին Աստուծոյ եւ ցուցանել զանձն, թէ Աստուած իցէ»[44]: Եւ յառաջ տարեալ զբանն ասէ, թէ՝ «Խորհուրդն անաւրէնութեան արդէն իսկ զաւրանայ, բայց յայնժամ մինչ ի միջոյ բարձցի, որ այժմ ունի»[45] զՀռոմայեցւոց թագաւորութիւնն, «եւ ապա յայտնեսցի անաւրէնն, զոր Տէրն Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ Իւր/204ա/ոյ»[46]:

Արդ, հա՛րք եւ եղբա՛րք, զգո՛յշ լերուք, գուցէ կարապետ Նեռինն իցեն, որ այդպիսի վնասակար գործ գործեն եւ խաւսին հակառակ աստուածային աւրինացն, զի առաքեալն Պաւղոս ասէ յԵբրայեցւոց թղթին յէ-երորդ գլխին, թէ՝ «Անհնար է մի անգամ մկրտելոցն, որք ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակս ճաշակեցին եւ զզաւրութիւն

40 Մատթ. ԻԳ 12
41 Առակ. Գ 34
42 Տե՛ս Ա Թես. Բ 15:
43 Հմմտ. Դան. Է 1-28:
44 Բ Թես. Բ 3-4
45 Բ Թես. Բ 7
46 Բ Թես. Բ 8

հանդերձելոյ աշխարհին եւ կործանեցին, ի միւս անգամ նորոգել յապաշխարութիւն, ի վերստին ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ»[47]: Եւ բանից զաւրութիւն է այս, թէ որ զմկրտեալն մի անգամ երկրորդ անգամ մկրտէ, ի խաչ հանել է զՈրդին Աստուծոյ, եւ ի խաչահանուացն է, զի «որք մի անգամ մկրտ/204բ/եցան ի Քրիստոս, զՔրիստոս զգեցան»[48] եւ զհին մարդն մերկանան, եւ որ մկրտած է եւ դարձեալ մկրտի, զՔրիստոս մերկանայ եւ զսատանայ զգենու: Եւ դուք զայն մկրտողքն եւ զմկրտեալքն իբրեւ զանհաւատ եւ իբրեւ զշուն կատաղի հալածեցէ՛ք եւ մի՛ խառնիք ի նոսա եւ մի՛ գնայք ի նոցա մահն եւ ի կեանքն եւ ի հացէ անտի նոցա մի՛ ուտիցէք, զի չեն քրիստոնէ, այլ ջհուտ, մինչեւ զղջացին եւ ապաշխարեսցեն: Ապա զայն ֆռանգ քրիստոնէն, որ զմեզ քրիստոնեայ համարի եւ հաւատայ եւ ի մեր մկրտութիւնն եւ ի պատարագն հաւատայ եւ յայլ ամենայն կարգաւորութիւնն եւ ոչ հայհոյէ զմերս եւ զիւրեանցն պահէ, զայն պատուեցէ՛ք, զի մեր աւագ եղբայր են: Ապա գիտացիք, եղբա՛րք, որ զայդ եկեալ առ ձեզ առնեն, չեն ճշմարիտ քրիստոնեայք ֆռանգ, այլ՝ /205ա/ հերձուածողք եւ վատթար գործաւք, եւ վասն այնորիկ յիւրեանց աշխարհէն հալածեալ են, ն[ոքա]ա եկեալ առ մեզ՝ իբրեւ զգող, կամին աւծել եւ պատառել զՔրիստոսի հաւատն: Եւ դոքա, եթէ ճշմարիտ վարդապետք էին, ընդէ՞ր ոչ մտանեն ընդ դուռն ոչխարաց, այլ գողաբար այլ ընդ այլ ելանեն, զի դուռն Քրիստոս է, եւ դռնապանն՝ առաջնորդք: Ընդէ՞ր առանց դռնապանին գայլաբար մտանեն ի փարախ եկեղեցւոյ եւ երկրորդ մկրտութիւն քարոզեն, զոր ոչ է հրամայել Քրիստոս եւ ոչ առաքեալք: Եւ կաթողիկոսն գիր է գրել, թէ որ զՀայ քահանայից մկրտածն կրկին մկրտէ, ի քրիստոնէութենէ որոշած է եւ չար եւս քան զանհաւատսն է զայն գրինս [Հ]աւատոյն այլ առաքեցաք առ ձեզ, որ կաթողիկոսն իւր ձեռաւքն է գրել, որ կարդայք առաջի ամենայն քրիստոնէիցդ: /205բ/ Այլ վասն որոյ գրեցէքն առ մեզ, թէ ասեն նոքա, թէ յորժամ մկրտեն զոք, ոչ է պարտ մեռոնել կամ հաղորդել եւ պարտ է ասել՝ ես մկրտեմ զքեզ:

Առաջին առարկութիւն դոցա, որ ասեն, թէ ոչ է պարտ մեռոնել զմկրտեալն եւ ոչ հաղորդել եւ ասեն, թէ՝ ես մկրտեմ զքեզ,

47 Եբր. Զ 3-6
48 Գաղ. Գ 27

պատասխանեմք այսպէս,թէ մկրտութեանն խորհուրդն եւ զայլ ամենայն Եկեղեցւոյ խորհուրդն Պաւղոս, յորժամ յափշտակեցաւ յերրորդ երկինս եւ լուաւ զբանս անճառս եւ ետես զերկնային քահանայապետութիւնն[49]: Եւ նոցա քահանայապետութեանցն համանման զմերս քահանայապետութիւն, որպէս եւ ինքն Պաւղոս ասէ ի Գաղատացւոց թղթին յառաջին գլխին, թէ՝ «Ես ոչ ուսայ ի մարդոյ եւ ոչ առ ի յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի»[50]: Արդ, Պաւղոս ուսեալ յԱստուծոյ զեւթն խորհուրդ Եկեղեցւոյ եւ աւանդեաց աշակերտին իւրոյ Դիոնեսիոսի եւ հրամայեաց նմա գրել, եւ նա /206ա/ այսպէս այսպէս ասէ ի գիրս իւր վասն մկրտութեան, եթէ յորժամ ոք գայ ի մկրտութիւն ի ձեռն կնքահաւրն առ եպիսկոպոսն կամ քահանան, ի դուռն եկեղեցւոյն բոկացուցանեն զեկեալն եւ զմի հանդերձն հանեն եւ երիցս անգամ ի սատանայէ հրաժարեցուցեն եւ ապա դարձուցանեն յարեւելս եւ հարցանեն, եթէ՝ հաւատա՞ս ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին՝ հանդերձ ամենայն աստուածաւանդիւքն եւ ձեռն ի վերայ եղեալ կարդան զգրեալսն ի ցուցակին: Եւ մտանեն յեկեղեցին եւ մերկացուցանեն զամենայն հանդերձսն, եւ աւրհնէ քահանայապետն կամ քահանայն զեղն, աւծանէ աւրհնեալ եղով զամենայն մարմինն՝ ի գլխոյն մինչեւ ցոտսն: Եւ այս եղի աւրհնութեան աղաւթքս գրեալ է ի Մաժդոցն ի Մկրտութեան կարգն: Այս եղս զատ է ի մեռոնէն, կովու ցեղ լինի կամ ձէթ, եւ այժմ վասն ծուլութեան եւ վասն տգիտութեան կէսք առնեն եւ կէսք ոչ, բայց /206բ/ Դիոնեսիոս հրամայէ աւծանել եւ ընդարձակ մեկնութ[իւն] առնէ վասն աւծմանն: Ապա յետ աւծանելոյն դառնայ քահանայապետն կամ քահանան առ մայրն որդեգրութեան, որ է Աւազանն, եւ լնու գջուրն եւ երիցս անգամ խաչանման հեղու զմեռոնն ի ջուրն եւ Գ անգամ ասէ՝ ալէլուիա: Եւ քահանայապետն կամ քահանան ասէ զանուն մկրտեցելոյն եւ զկնքահաւրն, թէ՝ «Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ միջնորդութեամբ այս անուն կնքահաւրն, մկրտի յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Եւ երիցս ընկղմէ եւ վերացուցանէ եւ ապա մեռոնովն դրոշմէ զճակատսն եւ յամենայն զգայութիւնսն եւ զգեցուցանէ սպիտակ հանդերձ եւ հաղորդեցուցանէ սուրբ խորհրդոյն՝ Քրիստոսի Մարմնոյ եւ Արեանն, եւ խառնէ ի հաւտ իւր:

49 Տե՛ս Գործ. Թ 3-7:

50 Գաղ. Ա 11-13

Արդ, Պաւղոս այսպէս աւանդեաց Դիոնեսիոսի, եւ նա այսպէս գրեաց եւ զամենայն բան ուրիշ ուրիշ մեկնե[ա]լ է, եւ մեք այսպէս առնեմք, եւ որ /207ա/ այլ աւելի ասէ զնորայն կամ պակաս, հակառակ է առաքելոյն Պաւղոսի եւ Դիոնեսիոսի: Այլ վասն այն բան[ի]ն, որ ասեն նոքա, թէ պարտ է ասել, թէ՝ ես մկրտեմ զքեզ, եւ ոչ է պարտ ասել, թէ՝ «Մկրտի յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», առ այդ պատասխանեմք, եթէ Տէրն հրամայեաց առաքելոցն մկրտել յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ էական անուն է եւ սեռական հոլովի, զՍտացողն եւ զստ[աց]ուածն նշանակէ, ոչ ի դեր առաքելոցն, որ է ես: Որպէս եւ Պաւղոս ասէ ի Կորնթացւոց թղթին, թէ՝ «Գոհանամ զԱստուծոյ, զի ոչ զոք ի ձէնջ մկրտեցի, զի մի՛ ասիցէ ոք, թէ յիմ անուն մկրտեցարուք»[51]: Այլ ճշմարիտ մկրտութիւն յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. եթէ ես մկրտեմ, եւ եթէ դու, եւ եթէ այլ ոք ի քահանայից, կատարեալ մկրտութիւն է, զի թէ գործով կատարես զամենայն արարողութիւն մկրտութեան, եւ տեսանէ Աստուած եւ հրե/207բ/շտակք եւ մարդիկք, որ դու կու մկրտես, ի՞նչ հարկ է ասելն, թէ՝ ես մկրտեմ զքեզ: Այլ պարտ է ասել, որպէս Լուսաւորիչն է կարգել, թէ՝ «Այս անուանս (ով որ է՝ թէ Յովհաննէս, թէ այլ ոք) մկրտի յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»՝ կամաւ եւ ոչ ի հարկէ եկեալ ի մկրտութիւնն: Իսկ որք ասեն, թէ՝ ես մկրտեմ, զմկրտիչն միայն ցուցանէ եւ զմկրտեալն ոչ ցուցանէ, թէ կամաւ է եկեալ ի մկրտութիւն, այլ՝ թէ ես անձնիշխան կամաւքս մկրտեմ զքեզ, թէ՛ կամիս եւ թէ՛ ոչ, եւ եթէ ետն առանց կամաց մկրտելոյն բաւական է կատարել զմարդն, ի վերայ ամենայն մարդոյ ասացի՝ հաւատացելոյ եւ անհաւատի, եւ եղիցի մկրտեալ. այլ այս անհնար է: Այլ որք հաւատով եւ անձնիշխան կամաւք գան ի մկրտութիւնն, նոքա լինին կատարեալ քրիստոնեայ, /208ա/ վասն այնորիկ մեք ասեմք, թէ՝ «Յովհաննէս՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, կամաւ եկեալ մկրտի յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», եւ դու քահանայդ գործով կատարես զմկրտութիւնն, ի՞նչ հարկ է ասել, թէ՝ ես մկրտեմ: Զոր աւրինակ վարդապետ, որ ուսուցանէ զաշակերտն, չէ պարտ, որ ասէ, թէ՝ ես ուսուցանեմ զքեզ, զի գիտէ աշակերտն, որ վարդապետն կու ուսուցանէ զնա: Եւ դարձեալ՝ զի յԵկեղեցւոյ յէ խորհրդոյն մի եւ առաջինն

51 Ա Կոր. Ա 14

է մկրտութիւնն, եւ եթէ աստ պարտ է ասել զեսն, եւ եսն հաստատէ զէութիւն բանին, նա պարտ է եւ ի պատարագն ասել զեսն, եթէ՝ «Ես առաւել զհացս աւրհնեմ, գոհանամ». եւ ի պսակն զնոյն էութիւն եսին պահել եւ [յ]այլ խորհուրդսն Եկեղեցւոյ: Եւ արդ, եթէ պատարագն, որ աստուածագործութիւն է, /208բ/ առանց ես ասելոյ լինի Քրիստոսի Մարմին եւ Արիւն, եւ զուգաւորութիւն ամուսնութեան՝ երկոքեան մի մարմին լինին առանց զեսն ասելոյն, նոյնպէս եւ՝ մկրտութիւն: Թէ ասես զեսն, թէ՝ ես մկրտեմ քեզ, եւ թէ մկրտես գործով դու եւ բանիւ, թէ ասես, թէ՝ «Այս անուն մկրտի յանուն Հաւր ու Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», զմկրտեալն ի քէն կատարի՝ առանց ես ասելոյ: Երիցս ընկղմելով ի ջուր, եռաւրեայ թաղմանն Քրիստոսի կցորդելով եւ բանիւ զէութիւն բանին պահելով, թէ՝ «Յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», որ է էական անուն, եւ ոչ ի բերանոյն մարդոյ, որ է ես: Զի «ես մկրտեմն» Յովաննու մկրտութիւնն է, որ ասէր. «Ես մկրտեմ ջրով յապաշխարութիւն, թարց Հոգւոյ, իսկ Նա մկրտեսցէ ձեզ Հոգւովն Սրբով եւ հրով»[52]. եւ ո՞ զդոցա եսն:

Արդ, Պաւղոս, որ ի յերրորդ երկինս վերացաւ եւ ի դրախտն, զայս աւ/209ա/անդեաց խորհուրդ մկրտութեան, այլ լինի, թէ դոքա ի չորրո՞րդ երկինս վերացան եւ յա՞յլ դրախտ՝ ի Յանէսին եւ Յամբրեսին, եւ ա՞յլ առաւել խորհուրդ լուան, քան զՊաւղոսի եւ զԴիոնեսիոսի: Եւ ի ճառ սրբոյն Մինասայ գրեալ է, թէ զԵրմոգինէս այսպէս մկրտեաց քահանայն, թէ փառաւոր Եպարքոսն Երմոգինէս մկրտի շնորհաւքն: Այս՝ փոքր ի շատէ վասն դոցա ընդունայնաբանութեացն պատասխանի:

Եւ երկրորդ՝ գրեալ էիք, թէ ասեն աղթարմայքն, թէ Տէրն ի Վերնատունն զհացն որիշ ետ եւ զբաժակն՝ որիշ՝ առանց մկրտելոյ, եւ զՅուդային միայն եթաց ի գինին: Առ այդ պատասխանեմք նախ եւ առաջին զայս, եթէ զՅուդային ի ջուրն եթաց եւ ետ եւ ոչ ի գինին, եւ երկրորդ՝ զի Քրիստոսի Բ մկրտու/209բ/թիւնն խոստովանի սուրբ եկեղեցի. մինն՝ ի Յորդանան ջրով, եւ զմիւսն՝ ի խաչին արեամբ, որպէս եւ Տէրն ասաց առ որդիսն Զեբեդեայ, եթէ՝ «Զմկրտութիւնն, զոր Ես մկրտելոց եմ, մկրտիցիք»[53]: Վասն արեան մկրտութեանն

52 Տե՛ս Մատթ. Գ 11, Ղուկ. Գ 16, Յովհ. Ա 26:

53 Տե՛ս Մարկ. Ժ 40:

ասաց, զի տիգաւոց կողէն եւ ի բեւեռաց տեղւոյն ել արիւն, եւ մկրտեցաւ արեամբ Քրիստոսի մարմինն՝ ըստ կանխասաց ձայնին Եսայեայ, որ ասէ. «Իսկ Այս ով է, որ դիմեալ գայ յԵդոմայ, կարմրութիւն ձորձոց Իւրոց Բոսորայ»[54], եւ եթէ՝ «Վասն էր կարմիր են ձորձք Քո»[55]: Արդ, մեք վասն արեան մկրտութեանն Տեառն, որ ի խաչին, մկրտեմք եւ ապա ճաշակեմք, զի կրկնակի վտակքն, որ ելին ի կողից Տեառն որիշ որիշ՝ մինն զարեանն մկրտութիւնն նշանակէ, եւ միւսն՝ զաւազանին, որպէս ասէ առաքեալն յէ-երորդ գլխին ի Հռոմայեցւոց թղթին, թէ՝ «Որք մի անգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր Նորա մկրտեցաք, /210ա/ թաղեցաք ընդ Նմին մկրտութեամբն ի մահ»[56]: Եւ երկրորդ՝ զի Քրիստոսի մարմինն առանց արեան ոչ էր ի խաչին, զի ընդ ամենայն թանձրութիւն մարմնոյն թափանցանց էր արիւնն, եւ առանց արեան ոչ գոյր մի մասն մարմնոյն, ահա յայտ է, զի ի խոցուածէ գեղարդեանն ել արիւն եւ ջուր. արիւն՝ վասն զի կենդանի էր Աստուածութեամբն, եւ ջուր՝ զի մեռաւ մարմնով:

Ահա յայտ է, զի մարմինն առանց արեան ոչ էր, այլ թաց էր Քրիստոսի բոլոր մարմինն արեամբ ոչ միայն արտաքոյ, այլեւ ներքոյ: Վասն այնորիկ մեք մկրտեմք եւ ապա ճաշակեմք, այլ դոքա զիւրեանց ժողովուրդն հաղորդեն Մարմնոյ Տեառն եւ յԱրենէ Տեառն զրկեն զժողովուրդն, զի Տէրն ասէ, թէ՝ «Որ ուտէ զՄարմին Իմ եւ ըմպէ զԱրիւն Իմ, ունի կեանս, եւ որ ոչ ուտէ զՄարմին Իմ եւ ըմպէ զԱրիւն Իմ, ոչ ունի կեանս»[57]: Ապա թէ ի Քրիստոսի մարմինն /210բ/ արիւն չկայ, ու ցամաք է յարենէ, նա դոցա ժողովուրդն կեանք չունի, եւ Քրիստոս յորժամ ի Վերնատունն զպատարագն արար եւ հաղորդեաց զաշակերտսն, կենդանի էր մարմնով, եւ արիւն կայր ի մարմինն, եւ աշակերտացն ետ եւ ասէ. «Այս է Իմ մարմին»[58], եւ մեք հաւատամք, թէ որպէս Քրիստոսի մարմինն կենդանի է, նոյնպէս եւ այն հացն, զի ասէ Տէրն, եթէ՝ «Ես կենդանի եմ վասն Հաւր, եւ որ

54 Ես. ԿԳ 1

55 Ես. ԿԳ 2

56 Հռոմ. Զ 3, 4

57 Հմմտ. Յովհ. Զ 54-55:

58 Տե՛ս Մատթ. ԻՁ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19:

ուտէն զԻս՝ եւ նա կեցցէ վասն Իմ»[59]: Այս բաւական լիցի վասն հաղորդութեան:

Իսկ երրորդ բանի առարկութեան դոցա, որ ասեն՝ պարտ է ջուր արկանել ի սուրբ խորհուրդն, առ այդ պատասխանեմք եւ ասեմք, եթէ զպատարագն նախ եւ առաջին Քրիստոս մատոյց ի Վերնատունն, որպէս եւ գրեալ է յԱւետարանն: Ասէ. «Առեալ հաց՝ աւրհնեաց, գոհացաւ եւ ետ աշակերտացն եւ ասէ. «Առէ՛ք, կերա՛յք, զի այդ է մարմինն Իմ», եւ զբաժակն առեալ՝ աւրհնէ /211ա/ եւ ասէ. «Առէ՛ք, արբէ՛ք ամենեքեան, զի այդ է արիւն Իմ»[60]». եւ ջուր բնաւ ոչ յիշէ: Զի աւանդող խորհրդոյդ Քրիստոս է եւ ոչ այլ ոք, եւ Նա ջուր ոչ աւանդեաց, այլ գինի, զի յառաջ տարեալ զբանն ասէ. «Ցայսմ հետէ ոչ եւս արբից ի բերոյ որթոյ»[61]: Եւ որթն գինի ծնանի եւ ոչ ջուր, որպէս ասէ Յոհան Ոսկեբերանն ի նոյն բանի մեկնութիւն. «Եւ զի՞ դոքա այլ ասեն, թէ էութիւն պատարագին յայս բանս կատարի, որ ասաց Տէրն. «Առէ՛ք, կերա՛յք ի սմանէ, զի այդ է մարմին Իմ, եւ արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, զի այդ է արիւն Իմ»[62]:

Արդ, ցուցցեն, թէ էութիւն ջրին յո՞ր բան կատարի, քանզի բան մարդոյ ոչ կարէ զհացն մարմին առնել Քրիստոսի եւ ոչ՝ զգինին արիւն եւ ոչ՝ զջուր աղբեր՝ ջուր կողին Քրիստոսի, բայց միայն՝ բանն Քրիստոսի, որ ասաց. «Առէ՛ք, կերա՛յք, զի այդ է մարմին Իմ. եւ առէ՛ք, ա/211բ/բէ՛ք, զի այդ է արիւն Իմ: Զա՛յդ արարէք առ Իմոյ յիշատակի»[63]: Հաց եւ գինին ասէ եւ ոչ ջուր, ապա ուրեմն էութիւն ջրոյ ոչ գոյ ի պատարագն, եւ ոչ լինի լոկ ջուր՝ ջուր կողին Քրիստոսի առանց էութեան բանին, զի էութիւն բանին ի յայս բանէս ի հետ է, որ ասէ Տէրն. «Առե՛ք, կերա՛յք, զի այդ է մարմին Իմ, եւ արբե՛ք, զի այդ է արիւն Իմ»[64]. մինչեւ ի յայն բանն, որ ասէ. «Որով զհացս աւրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես եւ զբաժակս աւրհնեալ արիւն ստուգապէս արասցես»: Զի անհնար է, թէ Հայր իրք

59 Տե՛ս Յովհ. Զ 58:
60 Ղուկ. ԻԲ 19
61 Ղուկ. ԻԲ 18
62 Տե՛ս Մատթ. ԻԶ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19:
63 Ղուկ. ԻԲ 19
64 Տե՛ս Մատթ. ԻԶ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19:

ստեղծանէ առանց Որդւոյ եւ Հոգւոյ, եւ [յ]անուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ մինչեւ յայս բանս է, որ ասէ. «Որով զհացս աւրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես եւ զբաժակս արիւն ստուգապէս արասցես», զի Տէրն ասէ. «Զայդ արարէք առ Իմոյ յիշատակի»[65]: Եւ ապա [յ]ետ եւ Պաւղոս ասէ, թէ՝ «Քանիցս անգամ եթէ ուտիցէք եւ ըմպիցէք, զմահ Տեառն /212ա/ պատմեցէ՛ք»[66], զի անհնար է հացին եւ բաժակին Քրիստոսի մարմին եւ արիւն լինել՝ առանց պատմելոյ զՔրիստոսի չաբչարանքն ի վերայ հացին եւ բաժակին: Եւ յետ այս բանիս, որ ասէ, թէ՝ «Եւ արդ, մեք, Տէ՛ր, ըստ այսմ հրամանատրութեանս յառաջ բերեմք զայս խորհուրդ», ասէ Տեառն մերոյ եւ ոչ մարմին, եւ ապա յետ այսորիկ ասէ. «Յիշեմք զԴորա, որ վասն մերոյ զփրկագործ զչարչարանսն, զերեքաւրեայ թաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումն, զնստելն ընդ աջմէ Քո, Հա՛յր, զահաւոր եւ զմիւսանգամ փառաւորեալ գալուստ Քո խոստովանիմք եւ աւրհնեմք»: Եւ ապա յառաջ տարեալ զբանն՝ ասէ. «Այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյս կարգեցեր սպասաւոր»: Եւ ապա ասէ. «Առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եդեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից Քո եւ զէակից Սուրբ Հոգիդ: /212բ/ Որո[վ] զհացս աւրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ զբաժակս աւրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ...». եւ աստ լինի ճշմարիտ մարմին եւ արիւն Որդւոյն Աստուծոյ, եւ ջրի յիշատակ ոչ առնէ: Եւ արդ, ո՞ւր է էութիւն ջրոյ բանն, զի ասէ մարգարէն Դաւիթ, թէ՝ «Նա ասաց եւ ապա յեղեն, հրամայեաց եւ ապա հաստատեցան»[67], զի ըստ աւետարանչին Յովհաննու՝ «Առանց Նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեւն»[68]: Թէպէտ արկանեն ջուր ի բաժակն, ոչ լինի ջուր կողին Քրիստոսի, զի Քրիստոս չէ ասացեալ, թէ՝ այս է ջուր, զա՛յս արարէք, այլ՝ գինի, եւ ոչ առաքեալքն, զի Պաւղոս ասէ ի Կորնթացւոց յառաջին թղթին ի Ե-երորդ գլխին, թէ՝ «Բաժակն, զոր աւրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւնն է արեանն Քրիստոսի»[69]. եւ ոչ ասէ

65 Ղուկ. ԻԲ 19
66 Ա Կոր. ԺԱ 27
67 Սաղմ. ԼԲ 9
68 Յովհ. Ա 3
69 Ա Կոր. Ժ 16

հաղորդութիւն ջրոյ, այլ արեան: Եւ դարձեալ ի նոյն թղթին ասէ յէ-
երորդ գլխին. «Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի, թէ
Տէրն Յիսուս /213ա/ ի գիշերին, յորում մատնէր, առ հաց, գոհացաւ,
եբեկ եւ ասէ. «Այս է մարմին Իմ, որ վասն ձեր, զա՛յս արարէք առ
Իմոյ յիշատակի»[70]: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն առ եւ ասէ.
«Այս բաժակ նոր ուխտ է Իմոյ արեան»[71], եւ ոչ ջրոյ: Եւ Պետրոս
ասէ, եթէ՝ «Ոչ ապականեցու արծաթեղինաւք եւ ոսկեղինաւք
փրկեցաք ի ձերոց հա[յր]ենատուր գնացիցն, այլ արեամբ ամբիծ եւ
անարատ Գառինն Աստուծոյ»[72]: Եւ Տէրն յԱւետարանն Յոհանու ի
վաթսուներորդ վեցերորդ համարին ասէ. «Եթէ ոչ կերիջիք զմարմին
Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն Նորա, ոչ ունիք կեանս յանձինս:
Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, ունի զկեանս
յաւիտենականս, զի մարմին Իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն Իմ
ճշմարիտ ըմպելի: Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, նա յիս
բնակէ/213բ/սցէ, եւ ես՝ ի նմա»[73]: Եւ ջրոյ յիշատակ ոչ առնեն բնաւ:

Արդ, Տէրն եւ առաքեալն այսպէս աւանդեցին՝ առանց ջրոյ զխոր-
հուրդ պատարագին, եւ մեք այսպէս կատարեմք: Եւ սուրբ Դիոնե-
սիոս ի ճառ պատարագին ասէ, թէ՝ դնեն ի սեղանն սուրբ զաստուա-
ծային նշանակքն՝ զհացն եւ զգինին, եւ ջուր ոչ յիշէ բնաւ: Արդ, եթէ
ջուր կայր ի պատարագն, զիա՞րդ ոչ յիշէ Դիոնեսիոս, զի զայն
ջուրն, որ քահանայն զմատին ծայրն լուանայ եւ ի պատարագ
մտանէ, ասէ եւ մեկնէ զխորհուրդն: Թէ ի պատարագն ջուր կայր,
զայն զիա՞րդ ոչ ասէր եւ մեկնէր: Եւ եթէ ասեն դոքա, թէ Յոհաննէս
ի Կաթողիկէից թղթին ասէ, թէ՝ «Սա է, որ եկն ջրով եւ Հոգով եւ
արեամբ»[74], զա/214ա/յն ասէ, զի նախ մկրտին ջրով եւ առնուն
զՀոգին Սուրբ մկրտութեամբն եւ յետ այնորիկ հաղորդին մարմնոյ եւ
արեանն Քրիստոսի եւ լինին կատարեալ քրիստոնեայ՝ որպէս ասէ
Դիոնեսիոս աշակերտն Պաւղոսի, թէ՝ նախ մկրտեն ի ջուրն եւ ապա
դրոշմեն միռոնաւն զճակատն եւ զամենայն զգայութիւնսն եւ
հաղորդեցուցանեն սուրբ խորհրդոյն, եւ ոչ որպէս դոքա մեկնեն ի

70 Ա Կոր. ԺԱ 24
71 Ա Կոր. ԺԱ 25
72 Ա Պետ. Ա 18-20
73 Յովհ. Զ 54-58
74 Ա Յովհ. Ե 6

վերայ պատարագին: Նոյնպէս եւ զՍողոմոնին խառնարանն մեկնէ
Դիոնեսիոս ի վերայ պարզ իմաստութեան, որ ի մարմնաւոր նշա-
նակքն է խառնեալ՝ ի մեռոնն ի ջուրն, ի հացն եւ ի գինին եւ յայլսն:
Զի տեսանեմք մարմնաւոր աչաւք հաց եւ գինի եւ հաւատոյ աչաւք
եւ իմաստութեամբ իմանամք ի մարմին եւ արիւն, եւ զմեռոնն
տեսանեմք ձէթ եւ հաւատով՝ Հոգի Աստուծոյ կամ Քրիստոս, որ
զՀոգին բաշխեաց, եւ զսեղանն տեսանեմք վէմ՝ հաւատամք Յիսուս՝
/214բ/ ըստ Դիոնեսիոսի, եւ զայլ ամենայն նշանակսն, եւ որ յԱս-
տուածաշունչ Գիրս խառնեալ կայ՝ ի մարմնաւոր նշանակսն հոգեւոր
տեսութիւն: Եւ ոչ մեկնէ Դիոնեսիոս զխառնարանն ի վերայ ջրին եւ
գինւոյն, այլ ի վերայ իմաստութեան խառնարանին, որպէս ասացաք.
եւ այս այսքան բաւականասցի:

Այսուհետեւ եկեսցուք ի չորրորդ բանն, որ գրեալ էք վասն
Բիրկադուրին, եւ պատասխանատրեսցուք այսպէս, եթէ զԲիրկադուրն
ոչ Տէրն եւ ոչ առաքեալքն եւ ոչ սուրբ հայրապետքն չեն ասացեալ
մինչեւ ի Գրիգոր պապն, որպէս եւ գրեալ է ի Բենեդիգտոս գիրքն, զի
նա ասէ զԲիրկադուրն, զոր այժմ դոքա քաւարան ասեն: Ապա յառա-
ջին սուրբքն, որ զԲիրկադուրն չգիտէին, նոքա չե՞ն աստուածահա-
ճոյ. Աթանաս եւ Կիւրեղ, Գրիգոր Աստուածաբանն, Սեղբետրոս եւ այլ
ամենայն սուրբքն քաւարան չեն ասացեալ: Ապա զճշմարիտն են
ասացեալ, որպէս Տէրն ասէ յԱւետար/215ա/անն, թէ՝ «Գայ գիշեր,
յորում ոչ ոք կարէ գործել»[75], զի գիշեր է մահն, եւ յետ մահուանն
մարդ ոչ չար կարի գործել եւ ոչ բարի, որպէս ասէ զԳրիգոր
Աստուածաբանն, եթէ՝ «Կարաւտեալ այլոց մաղթանաց, եւ քանզի
մարդ հոգով եւ մարմնով գործէ զբարին եւ զչարն, եւ յորժամ արձակի
հոգին ի մարմնոյն, ոչ չար կարէ գործել եւ ոչ բարի, եւ ոչ բարիքն
հատուցումն բարեաց ունի կատարելապէս առանց մարմնոյ, եւ ոչ
չարքն՝ զհատուցումն տանջանացն կատարելապէս առանց մարմնոյ,
այլ արդարքն յուսով բարեացն զուարճանան միշտ, եւ մեղաւորքն
տրտմին վասն անվրէպ տանջանացն, որ հանդերձեալ են առնուլ»: Զի
յորժամ ելանէ հոգին ի մարմնոյն, եւ իւրաքանչիւր ոք թէ յորժամ
զհատուցումն գործոց իւր ընդունէր անպակաս, զիա՞րդ ասէ
առաքեալն Պաւղոս /215բ/ Կորնթացւոց երկրորդ թղթին ի վեցերորդ

75 Յովհ. Թ 4

գլխին, եթէ՝ «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւր մարմնովն, զոր ինչ գործեաց յառաջն՝ եթէ բարի եւ եթէ չար»[76]: Եւ ոչ հոգովն միայն, որպէս ասեն դոքա, այլ՝ հոգին իւր մարմնովն, որպէս ասէ առաքեալն Պաւղոս ի Հռոմայեցւոց Թղթին ի Ժ-երորդ է-երորդ գլխին, եթէ՝ «Ամենեքին կալոց եմք առաջի ատենին Աստուծոյ»[77], եւ յառաջ տարեալ զբանն ասէ. «Ապա ուրեմն, իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ անձին համարս տաց Աստուծոյ»[78]: Եւ Տէրն յԱւետարանին ասէ, թէ՝ «Ցորժամ Որդի մարդոյ նստցի յաթոռ փառաց Իւրոց, եւ ժողովեսցին առաջի Նորա ամենայն ազգ, եւ մեկնեսցէ զաւդիս յայծեաց՝ զաւդիսն յաջմէ եւ զայծիսն ի ձախմէ: Ցայնժամ ասասցէ Թագաւորն ցա/216ա/յնոսիկ, որ ընդ աջմէն իցեն. «Եկա՛յք, աւրհնեա՛լք Հաւր Իմոյ». եւ՝ ցայնոսիկ, որ ընդ ահեկէն իցեն. «Երթա՛յք յինէն, անիծեա՛լք»[79]: Եւ յայտ է, թէ յայնժամ առնուն զհատուցումն գործոց եւ ոչ այժմ, զի եթէ այժմ առնուին զհատուցումն գործոց, ապա ի՞նչ հարկ էր Աստուծոյ դատաստան առնել: Զի եթէ ամենայն ոք զիւր հատուցումն ի մահուան աւրն առնոյր, յորժամ վերջին մարդն ծնանի, եւ նա զիւր հատուցումն առնու, յայնժամ Աստուած ո՞ւմ առնէ զդատաստանն, զի ամենայն մարդ զիւր հատուցումն առել է. եւ դատաստանն վասն մարդկան է եւ ոչ վասն հրեշտակաց կամ այլ արարածոց: Ապա որ զԲիրկաթուրն ասեն, Դատաստանի աւր ոչ խոստովանին եւ հակառակ է աստուածային Գրոց. զի Պետրոս գլուխ առաքելոցն ասէ ի Կաթողիկեայց ի յերկրորդ Թղթին ի երրորդ գլխին, թէ՝ «Այժմ երկինք եւ երկիր գանձեալ [են], պահին /216բ/հրոյ յաւուրն Դատաստանի եւ կորստեան ամբարիշտ մարդկան»[80]: Եւ դարձեալ ասէ, եթէ՝ «Եկեսցէ աւր Տեառն իբրեւ զգող գիշերի»[81]: Եւ առաքեալն Պաւղոս ասէ ի Թեսաղոնիկեցւոց յառաջին Թղթին ի Ե-երորդ գլխին, թէ՝ «Աւր Տեառն իբրեւ զգող գիշերի՝ այնպէս

76 Բ Կոր. Ե 10
77 Հռոմ. ԺԴ 10
78 Հռոմ. ԺԴ 12
79 Տե՛ս Մատթ. ԻԵ 31-41:
80 Բ Պետ. Գ 7
81 Ա Թես. Ե 2

հասանիցէ»[82]: Եւ [ի] ԻԶ գլխին ի Գործս առաքելոցն ասէր Պաւղոս առ աթենացիսն, թէ՝ «Հաստատեաց աւր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ»[83]: Ապա ուրեմն Բիրկաթուրն ոչ հետեւի աստուածային տառից, զի ի Հին եւ ի Նոր Կտակարանին մի աւր ասեն դատաստանի եւ հատուցման գործոց մարդկան, եւ Բիրկաթուրն ամենայն մարդոյ ասեն ի մահու աւրն առնու զհատուցումն՝ հոգին միայն առանց մարմնոյն, եւ այս զիա՞րդ լինիցի, զի հոգին մարմնովն գործէ զգործն: Եւ թէ զհատուցումն առանց մարմնոյ հոգիքն առեալ են, ապա զիա՞րդ Պաւղոս յԵբրայեցւոց Թղթին ի ի վեշտասան գլխին ի ՇՂ տանն ասէ վասն /217ա/ ամենայն արդարոցն, որ յԱբելէ մինչեւ ի մարգարէսն, զոր կերակրեաց Աբդիու, թէ՝ «Սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն»[84]: Արդ, եթէ նոքա ոչ են առեալ զվարձ վաստակոյն, յայտ է, թէ ոչ այլ սուրբք, ապա թէ այսպէս է, ապա սուտ է Բիրկաթուրն: Ապա մի՛ հաւատայք նոցա, որ հակառակ քարոզեն առաքելոցն, զի ինքն առաքեալն հրամայէ. «Թէ հրեշտակն ի յերկնից կամ մենք գանք, եւ այլ զքարոզեն, նզովեա՛լ լիցի»[85]:

Արդ, բաւական է իմաստնոցդ վասն Բիրկադուրին: Եւ առ Ե-երորդ բանն, որ ասեն, թէ հայք զէ խորհուրդ Եկեղեցւոյ չգիտեն եւ ոչ զէ մահու չափ մեղքն: Մեք էլ առ այդ պատասխանեմք նոցա եւ ասեմք, թէ ոչ է պարտ զմիոյ կամ զերկուց տգիտութիւն ի վերայ բոլոր ազգին առնուլ: Զի բազումք եւ ի նոցա ազգն գտանի տգէտ է խորհրդոցն, եւ միայն վարդապետքն գիտակ են եւ զայլսն ուսուցանեն: /217բ/ Սակայն տգէտքն գործով կատարեն, թէպէտ եւ զպատճառն ոչ գիտեն՝ որպէս երաժշտականն, որ գիտէ թէ է-ն եւ աւն բնութեամբ երկար են, այլ զպատճառն ոչ գիտէ, թէ վասն էր են երկարք, այլ զպատճառն գիտէ բնական իմաստասէրն. սակայն առեալ յիմաստասիրութենէն անպակաս՝ յարդարէ զարհեստ իւր: Եւ բազումք յաշխարհականաց ուղեղ խաւսին առանց գիտելոյ զքերականութիւն, եւ ոչ կարեմք ասել, թէ նոքա ոչ են երաժշտական կամ

82 Նոյն տեղում
83 Գործ. ԺԷ 31
84 Եբր. ԺԱ 39
85 Տե՛ս Գաղ. Ա 8:

բանական, զի անվրէպ զգործս իւրեանց կատարեն: Նոյնպէս եւ զէ խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ հանապազ կատարեմք գործովք, զի քրիստոնէութիւն է խորհուրդ Եկեղեցւոյն է, զոր սուրբն Դիոնեսիոս պատմէ: Եւ է առաջին խորհուրդ Մկրտութիւնն եւ երկրորդ՝ Պատարագն եւ երրորդ՝ /218ա/ Մեռոն աւրհնելն, զոր դոքա Դրոշմ ասեն, եւ չորրորդ՝ Ձեռնադրութիւն, եւ հինգերորդ՝ Պսակն, եւ վեցերորդ՝ Եղն, որով աւծանեն [զ]հիւանդսն եւ զապաշխարողսն, եւ է-երորդ խորհուրդ՝ Կատարումն ի վերայ ննջեցելոցն: Այլ, դոքա զապաշխարութիւն ասեն. եւ մի է եղն, որ վասն ապաշխարողացն եւ հիւանդացն. նոյն է ապաշխարութիւն: Իսկ է մահու չափ մեղքն. առաջին՝ որովայնամոլութիւն եւ փափկութիւն, եւ երկրորդ՝ պոռնկութիւն, եւ երրորդ՝ արծաթասիրութիւն, որ է ագահութիւն եւ արմատ ամենայն չարեաց՝ ըստ առաքելոյն[86], եւ չորրորդ մահու չափ մեղք է տրտմութիւն ըստ աշխարհի, որ մահ գործէ, զի յորժամ վրիպէ ոք ցանկութենէն եւ տրտմի եւ նախանձի ընդ այլոց բարիս, վասն որոյ ոմանք զտրտմութիւն նախանձ ասեն. եւ Ե-երորդ՝ է բարկութիւն, եւ Զ-երորդ՝ ձանձրութիւն, որ է ծուլութիւն, եւ Է-երորդ մահու չափ մեղ/218բ/ղք է սնափառութիւն եւ անբարտաւանութիւն, որ է վերջին եւ առաջին չար, որ ի դոսա առաւել գտանի քան զամենայն ազգս, զոր ի դէպ է ասել դոցա զտերունական առակն, թէ՝ «Զի՞ տեսանես զշեղ յական եղբաւր քո եւ ի քում ականդ զգերանդ ոչ նշմարես: Կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ եւ ապա հայեսցիս հանել զշեղ յականէ եղբաւր քո»[87]. զի գերան է է մահու չափ մեղքն: Եւ առաջին, որպէս ասացաք, է փափկութիւն, եւ ի դոսա առաւել գտանի քան ամենայն ազգս, քանզի փափկացեալք եւ պարարեալք իբրեւ զուարակ ի սպանումն, եւ զմեր առաքինութիւն եւ զպահսն բամբասեն եւ ոչ՝ զմերն միայն, այլ եւ՝ զամենայն քրիստոնէից. եւ զպահս չորեքշաբթու եւ զուրբաթու եւ զշաբաթապահս, զոր կարգեաց սուրբ Լուսաւորիչն եւ այլ ամենայն սուրբ հարքն: Քանզի ասէ սուրբն Եփրեմ ի ճառ որ Վասն պահոց, եթէ՝ «Որ լու/219ա/ծանէ չորեքշաբթն, մասն զՅուդային առցէ, եւ որ լուծանէ զուրբաթն, ընդ խաչահանացն դասեսցի: Եւ սուրբ Բասիլիոս ի Փողեցէք ճառն ամենայն բարեաց առիթ պահսն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. եւ

86 Հմմտ. Ա Տիմ. Զ 10:

87 Մատթ. Է 3-6

ամենայն չարեաց պատճառ ասէ զփափկութիւնն: Եւ քանզի ոչ կարեն բերել դոքա զպնդութիւնն պահոցն եւ վասն այնորիկ բամբասեն: Այլ ամենայն սուրբ առաքեալքն եւ մարգարէքն պահաւք տեսին զԱստուած. Մովսէս խ տիւ եւ խ գիշեր պահելով ընկալաւ զաւրէնս աստուածագիծ[88] եւ Եղիա՝ նոյն չափով պահելով, ետես զՏէր ի մէջ սիքն հանդարտ[89] նոյնպէս եւ Դանիէլ երիս է-երեակս պահելով, արժանի եղեւ աստուածային տեսլեանն[90]: Եւ Պաւղոս ի Կորնթացւոց յերկրորդ թղթին պարծի ասելով ընդ այլոց առաքինութեանցն եւ զայս ի քաղց եւ ի /219բ/ծարաւ ի պահս բազում անգամ[91]: Եւ Տէրն աստուածացեալ մարմնովն պահելով յաղթեաց փորձողին[92]: Եւ յորժամ հարցին առաքեալքն, թէ՝ «Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զդեւն»[93], պատասխանեաց, եթէ՝ «Այլ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահաւք եւ աղաւթիւք»[94]: Արդ, Տէրն եւ ամենայն սուրբք զպահսն գործով կատարեալ մեզ աւանդեցին առաջին պատուիրան. զի նախ ի դրախտին աւանդեցաւ պահքն, եւ հասակակից է մարդոցն՝ որպէս ասէ մեծն Բասիլիոս, վասն որոյ պարտ է հնազանդել Աստուծոյ եւ սրբոց իւրոց եւ ոչ՝ դոցա:

Իսկ վասն Զատիկ եւ Ծննդեանն, որ իրիկունն լուծանենք, այսպէ՛ս գիտասջիք. յառաջագոյն առաքեալքն եւ սուրբ հայրապետն Կիւրեղ եւ այլքն այսպ/220ա/էս են սահմանել՝ Զատկին իրիկունն պատարագ ոչ առնէին, այլ զերեկոյին պաշտաւնն ի գիշերին յարէին, եւ յորժամ առաւաւտն մերձենայր, զպատարագն մատուցանէին եւ զՍուրբ Աստուածն յարեաւ ասէին: Իսկ յետոյ փոխեցին եւ յիրիկունն առնեն զպատարագն, վասն որոյ եւ զՍուրբ Աստուածն այն իրիկունն յարեաւ ասեմք՝ ըստ առաջին սովորութեանն, որ յառաւաւտին առնէին, եւ զայլ տարւոյն շաբաթն ոչ ասեմք, զի Ցարութիւն կիրակի գիշերն է: Իսկ այլ քրիստոնէքդ Զատկի իրիկունն պահաւք անցուցանեն՝ ձուկն միայն ուտեն եւ զայլ ուտեաց կերակուրս ոչ ուտեն եւ

88 Հմմտ. Եղ. Ի 1-26:

89 Հմմտ. Գ Թագ. ԺԸ 5:

90 Հմմտ. Դան. Ա 1-21:

91 Տե՛ս Բ Կոր. ԺԱ 27:

92 Հմմտ. Մատթ. Դ 2-11:

93 Տե՛ս Մատթ. ԺԷ 19:

94 Տե՛ս Մատթ. ԺԷ 20:

պահոցն ձուկն ուտեն անխտիր: Վասն այ/220բ/նորիկ մեր սուրբ հարքն սահմանել են՝ յայնմ յիրիկունն զատ ի մսէ զամենայն կերակուրս ուտել, քանզի ձուկն առաւել է, քան զայլ կերակուրն՝ զպանիր եւ զմածուն եւ զձու, զի ձուկն կենդանի է, մանաւանդ՝ գազան, ի[ս]կ պանիր եւ մածուն ոչ կենդանի, այլ ի կենդանեացն: Եւ եթէ զկենդանին ուտեն, որ է ձուկն, պարտ է եւ զծնունդն ուտել, վասն որոյ զայն, որ նոքա պահոցն ուտեն, մեք Զատկին իրիկուն ուտեմք: Նոքա զբոլոր տարին ձկամբ լուծանեն զպահսն եւ համարին, թէ ի պաս ենք, եւ զայլ կերակուրս ոչ ուտեն, որ է յոյժ անտեղի, զի պարտ է կամ զձուկն ոչ ուտել պահոցն կամ զայլսն այլ ուտել, զի ձուկն կենդանի է իբրեւ զամենայն կենդանի եւ զսահման կենդանեացն ունի՝ զեզին եւ զոչխարին, զի սահման է կենդանւոյն /221ա/գոյացութիւն, ներշնչական, սգա[յա]կան, եւ միապէս առնու ի վերայ ձկանն եւ եզին: Թէ զձուկն ուտեն, պարտ է եւ զեզն ուտել, եւ եթէ զեզն ուտել ձուկն ուտելովն, զձուն ընդէ՞ր ոչ ուտեն, ապա ուրեմն, որ ուտեն զձուկն եւ համարին, թէ ի պաս ենք, սուտ են:

Արդ, եթէ նոքա զբոլոր տարին լուծանեն զպահսն ձկամբ, եւ մեք զնոսա ոչ բամբասենք, նոքա զմեզ ընդէ՞ր բամբասեն վասն միոյ աւուր. զիւրեանց անկարգութիւնն ընդէ՞ր ոչ տեսանեն, զի զառաքելական կանոնիւն զանցանեն, զոր եդին առաքեալքն հեթանոսաց Եկեղեցւոյ զչորեսինս զայս՝ ի բաց կալ յարենէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ եւ ի կռապաշտութենէ[95]: Եւ դոքա զչորեսինն /221բ/ անխտիր գործեն, զի վասն դանգի միոյ զմարդն սպառնանեն, եւ եկեղեցականք եւ կայսերականք բիւր Ռ ի միմեանց կոտորեն, եւ զմեռելոտին ուտեն անխտիր, եւ պոռնկութեամբ շաղախին եկեղեցականք եւ աշխարհականք, եւ ոչինչ համարին զառաքելական կանոնն, որ ասէ եպիսկոպոսին եւ այլ եկեղեցականացն՝ անարատ լինել: Եւ շաղախեաք պոռնկութեամբ դարձեալ յանդգնի քահանայագործութիւն, եւ կռապաշտութեամբ կարծեն, թէ Աստուած պաշտեն, զի ագահութիւն է երկրորդ կռապաշտութիւն, մանաւանդ թէ՝ առաջին որպէս ասէ առաքեալն Պաւղոս, թէ՝ «Ագահութիւն, որ է կռապաշտութիւն»[96]: Եւ դոքա մամոնայի ծառայելով գանձեն գանձս

95 Տե՛ս Կող. Գ 5:

96 Կող. Գ 5

յերկրի առաւել, քան զամենայն ազգս, ագանին բեհեզս եւ ծիրանիս եւ ուրախ լինին առատապէս իբրեւ զմեծատունն, /222ա/ եւ Ղազարոս անկեալ առ դուրս նորա[97], ոչ տան ի փշրանացն: Եւ ի վաճառն զտունն մութն գործեն ըստ խաւարային գործոց իւրեանց խաբեն զտխմարս, զի երեւի նոցա պայծառ եւ գեղեցիկ, եւ յորժամ ելանեն արտաքս ընդ դուռն, յայնժամ տեսանեն վատ եւ զազիր. եւ յորժամ ի Տէրն դարձուցանեն, ոչ առնուն: Եւ դարձեալ, ի տապլեքն խաղալով՝ զմիմեանց զմեծութիւնս յափշտակեն, այսինքն է՝ ի նարտն եւ ոչինչ համարին մեղս: Այլ եւ բազում անիրաւութիւնս առնեն, զոր ոչ պարտ է ասել այժմ մի ըստ միոջէ: Եւ զամենայն կերակուրս անխտիր ուտեն վասն ագահութեան՝ զառաքելական բանն պատճառելով եւ զտերունականն, եթէ՝ «Ոչինչ է, որ մտանէ ընդ բերանն եւ կարէ պղծել զմարդն»[98], եւ՝ ըստ /222բ/ առաքելոյ. «Ամենայն ինչ սրբոցն սուրբ է»[99]: Եւ թերակատար մեկնութեանք այլայլեն զբանն, զի Տէրն ոչ ասէ, եթէ պարտ է ամենայն ինչ մտանել ընդ բերանն եւ զմարդն ոչ պղծել[100], այլ՝ թէ որ ինչ մտանել ընդ բերանն: Եւ ի բերան մարդոյն մտանէ հաց եւ այլ սուրբ կերակուրք, եւ թէ անլուայ ուտեն, այն ոչ պղծէ: Եւ առաքեալն ասէ, թէ՝ «Ամենայն ինչ սրբոյն գործն սուրբ է»[101]. եւ ոչ եթէ պեղծ գործեն, նա սուրբ դառնայ, կամ պեղծ ուտեն, նա սուրբ դառնայ. եւ պղծոց գործն չարութիւն եւ պղծութիւն լինի: Դարձեալ քանզի ի Ե սգայութեանցն մէկ սգայութիւն է ճաշակելիքն եւ առաւել թանձր, քան զերիս սգայութիւնսն, այսինքն՝ քան զտեսանելիսն եւ զլսելիսն եւ զհոտոտելիսն, եւ Տէրն ասէ յԱւետարանն, թէ՝ «Որ հայի ի կին առ ի ցանկանալոյ ն/223ա/մա, շնացաւ»[102]: Եւ ականջացն պատուիրանոյ՝ «Մի՛ ընկալցիս լուր սուտ ի տարապարտաց»: Արդ, եթէ աչիցն եւ այլ սգայութեանցն սուրբ եւ պեղծ կայ, ինչ պատճառ է, որ բերանին սուրբ եւ պեղծ չկայ: Թէ բանիցն սուտ եւ իրաւ կայ, նա՛ ճաշակելոցն սուրբ եւ պեղծ կայ՝ որպէս եւ Մովսէս ասէ յաւրէնսն վասն սուրբ թռչնոցն եւ պղծոցն,

97 Հմմտ. Ղուկ. ԺԶ 20:

98 Տե՛ս Մատթ. ԺԵ 11:

99 Տիտ. Ա 15

100 Տե՛ս Մատթ. ԺԵ 11:

101 Տե՛ս Տիտ. Ա 15:

102 Մատթ. Ե 28

վասն կենդանացն ցամաքայնոց եւ ջրայնոց՝ սրբոցն եւ պղծոցն[103]: Քանզի Տէրն ասէ յԱւետարանն, եթէ՝ «Ոչ եկի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս, այլ զթերի[ն] լնուլ»[104]: Եւ որպէս զայլ պատուիրանսն՝ զթերին ելից Տէրն, նոյնպէս եւ զայս, զի ի Հինն գրեալ էր. «Մի՛ շնար»[105], եւ Տէրն զթերին ելի[ց]՝ ասելով. «Մի՛ հայիր յարատ»[106]: Նոյնպէս եւ աստ՝ ոչ եթէ միայն ի պեղծ կերակրոյն պարտ է ի զատ կալ յամենայն ժամ, այլ եւ ի կերակրոյն պարկեշտութեամբ ճաշակել յաւուրս պահոցն, ի պարարտ կերակրոյն եւս հրաժարել: Եւ այսքան բաւականասցի, արգելով զանկարգ բերան դոցա, /223բ/ եթէ կամեսցին. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Եւ առ բանն, որ ասեն, թէ քահանայքն զխոստովանութիւնն ոչ գիտեն առնուլ եւ ոչ զդեղն դնել մեղուցելոցն, առ այդ պատասխանեմք, թէ խոստովանութիւն առնուլն քան զամենայն քահանայագործութիւն է դժուարին: Զի թէ մարմնոյն՝ որ երեւելի է եւ զգայութեամբ ըմբռնի, ոչ ամենայն մարդոյ ցուցանեն զցաւն, բայց միայն նոցա՝ որ ճանաչել գիտեն զցաւսն եւ զննել զերակսն եւ իւրաքանչիւր ցաւոցն մատուցանել զսպեղանիսն, նոցա յայտնել զվէրն, որ հմուտք են խարանաց եւ խարանելոյ եւ դեղոց եւ սպեղանաց, զի քան զամենայն մարմնաւոր արահետս պատուական է բժշկան արուեստն եւ դժուարին: Զի հիւսն, որ շինէ աթոռ, թէ բեկանէ զփայտ, նիւ/224ա/-թոյն եղեւ պակասութիւն, իսկ բժիշկն, եթէ ոչ գիտէ ըստ պատշաճին մատուցանել զդեղն, մահ գործէ հիւանդին եւ կենացն եւս գրաւ է: Եւ մարմնաւոր բժիշկն մարմնաւոր կենդանութեան լինի առիթ եւ զմարմինն ողջացուցանէ, որ յետոյ մեռանելոց է. թէ լինի բժիշկ եւ թէ ոչ՝ չկարեն դարձուցանել, զի մահու վճիռն յԱստուածոյ է, որ ասաց. «Հող էիր եւ ի հող դարձցիս»[107]: Եւ Տեառն վճիռ ծննդեան, որ ասաց, թէ՝ «Ցաւալք եւ տրտմութեամբ ծնեցիս»[108], հաստատուն եղեւ, եւ անհնար է մարդոյ գալ յաշխարհս առանց ծնանելոյ՝ բաց յԱդամայ եւ յԵւայէ, որ յԱստուծոյ ստեղծան, նոյնպէս եւ անհնար է ծնիցելոցն ոչ

103 Հմմտ. Ղեւ. ԺԱ 1-35:
104 Մատթ. Ե 17
105 Տե՛ս Ել. Ի 15:
106 Տե՛ս Մատթ. Ե 28:
107 Ծն. Գ 19
108 Ծն. Գ 16

մեռանել: Եւ թէ վրիպէ հաքիմն, զմարմինն սպանանէ եւ ոչ զհոգին, եւ թէպէտ մեռանի մարդն, դարձեալ նորոգի եւ յառնէ ի մեռելոց: Բայց քա/224բ/հանայն թէ ոչ գիտէ բժշկել զհոգով հիւանդացեալսն, սպանանէ զհոգին եւ զմարմինն յաւիտենական մահուամբ, որ այլ կենդանանալ ոչ գոյ, զի անվախճան մահ է, որ միշտ կենդանի տանջի ի հուր գեհենին: Վասն որոյ խոստովանահայր լինել քան զամենայն արուեստս դժուարին է: Եւ դարձեալ, եւ այլ ազգ դժնդակ է, զի մի՛ փոխանակ բժշկելոյն զայլս եւ ինքն հիւանդանայ եւ մանաւանդ թէ մեռցի, այսինքն է՝ զմեղս զոր ոչ գիտէ, լսէ եւ ուսանի եւ գործէ եւ մեռանի Աստուծոյ: Եւ երրորդ, զի պարտ է յետ խոստովանութեանն պտուղ արժանի ապաշխարութեան ցուցանել: Վասն որոյ պատշաճ է գիտել քահանայ[ին], թէ այս մեղացս ապաշխարութեան պտուղն ի՞նչ է, եւ ընդդէմ մեղացն զապաշխարութիւնն կշռել, որ աւելի եւ պակաս չլինի՝ որպէս հաքիմն, որ դեղով /225ա/ զԴ տարերքն, որ ի մարդն է, հաւասարէ՝ որ ոչ աւելի լինի եւ ոչ պակաս, եւ ապա առողջանայ հիւանդն. նոյնպէս եւ ի հոգեւորն: Եւ թէ որպէս է բանդ, այսպէ՛ս իմա. ծիծաղեցար յաճախ՝ յաճախապէ՛ս լաց, գողացար՝ այսպէս չորեքկի՛ն հատո, որպէս արար Զաքէոս[109], զի անհնար է զրկողացն թողութիւն գտանել խոստովանութեամբն, թէ զինչ զրկել է եւ գողացել՝ ի Տէրն չդարձուցանէ: Զի այն է ճշմարիտ խոստովանութիւն, որ յետ խոստովանութեանն այլ չգործէ, ապա թէ յետոյ այլ գործէ, եւ զառաջինն եւս պահանջէ Աստուած: Արդ, ինչ աւգուտ է խոստովանելն, թէ՝ զրկել եմ եւ գողացել եւ հարամ կերել, եւ դարձեալ գնայ ի տունն եւ զգողցած եւ զրկած ինչքն ուտէ եւ ի բան ածէ. եւ կամ թէ պոռնիկ խոստովանի եւ դարձեալ ի գործոյն չկտրի: Զի յորժամ խոստ/225բ/ովանի, եւ քահանայ եթող յերկրի, եւ Աստուած յերկինս. իսկ յորժամ դարձեալ ի նոյն փսխած դառնայ, քան զառաջինն ատելի լինի, որպէս ասէ Սողոմոն: Եւ այն, որ դոքա ասեն, թէ ձեր քահանայքդ կու ասեն, թէ՝ Աստուածն թողու քո յանցանքն, նա յայնով թողութիւն չլինի, զի Աստուած զիշխանութիւնն ի քո ձեռքն է դրել, թէ դու թողուս յերկրի, Նա թողու յերկինս: Ճշմարիտ է, Աստուած զիշխանութիւնն ի մեր ձեռս է դրել, որ միմեանց թողումք ոչ մեր անուամբս, այլ Աստուծոյ, վասն այնորիկ ասեմք՝ Աստուած թո-

109 Հմմտ. Ղուկ. ԺԹ 1-19:

ղու զքո յանցանքն ինեւ. ոչ ես, այլ Աստուած՝ իշխանութեան տուողն: Որպէս ասէ Յոհաննէս ի Յայտնութիւնն, թէ՝ «Անկայ առ ոտս հրեշտակին եւ երկիր պագի նմա, եւ ասէ. «Յո՛տն կաց եւ մի՛ երկիր պագաներ ինձ, այլ Աստուծոյ երկի՛ր պագ, զի Նման է տեսիլդ /226ա/ եւ ոչ յինէն, եւ ես ծառայակից քո եմ»[110]: Նոյնպէս եւ մեք ասեմք, թէ Աստուած է, որ թողու զյանցանս քո, Նմա՛ մատո զերկրպագութիւն եւ մի՛ ինձ, զի սատանայի նմանէ, որ ջանայ զԱստուծոյ պատիւն յինքն դարձուցանել:

Զի առաքեալն Պաւղոս ասէ. «Ոչ եթէ ես, այլ շնորքն Աստուծոյ՝ որ յիս»[111], եւ առ Տիմոթէոս ասէր վասն քահանայիցն. «Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ ի դատաստանս սատանայի անկանիցի»[112], եւ ի Կորնթացւոց յառաջին թղթին ի Դ գլխին ասէ. «Զի՞նչ է՝ զոր չես առել Աստուծոյ, եւ թէ արեր՝ զի՞ պարծիս իբրեւ զչարեալ»[113]: Եւ հրեշտակն էր, որ մաքրէր զԵսայի կայծակամբքն, եւ ոչ ասաց, թէ՝ ես մաքրեմ, այլ այդ կայծակնդ, որ մերձեցաւ ի բերան քո[114]: Նոյնպէս եւ մեք ասեմք մեղուցելոցն, որ խոստովանին, թէ՝ Աստուած է, որ թողու զմեղս քո եւ զիմս խոստ/226բ/ովանութեամբն: Զի Եսայի մարգարէ ասէ ի ԻԳ համարին, թէ՝ «Ասա՛ դու նախ զանաւրէնութիւնս քո, զի արդարասցիս»[115]: Իսկ ոմանք ասեն, թէ՝ «Անուամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ թողեալ եմք զքո մեղքն». այն այլ բարի: Եւ կէսք ասեն, թէ՝ «Մեր կարգիս իշխանութեամբն, որ Աստուած է տուեալ, թողեալ եմ զքո մեղքն». եւ այն եւս բարի է, եթէ գիտէ դնել զսպեղանիսն, եւ հիւանդն կարէ բանալ զխոցն առաջի բժշկին յայտնապէս յանուանէ, ոչ՝ սեռիւ մեղացն, այլեւ ոչ՝ տեսակիւն, որ հատովն, որ է մէկն: Եւ թէ որ է սեռն՝ սեռ է, գողութեան չարութիւն, եւ տեսակն է չարութեան, անզգամութիւն, խորամանկութիւն, յանդգնութիւն, երկչոտութիւն, բղջախոհութիւն, ուշտութիւն, անիրաւութիւն, աւելի արդարութիւն: Իսկ անհատ է գողութեան՝ որ թէ այսպէս է գողացել՝ զայն ասէ, թէ /227ա/ Բ, զայն

110 Յայտ. ԻԲ 8-9
111 Ա Կոր. ԺԵ 11
112 Ա Տիմ. Գ 6-7
113 Տե՛ս Ա Կոր. Դ 7:
114 Տե՛ս Ես. Զ 7:
115 Ես. ԽԳ 26

ասէ. Նոյնպէս պոռնկութիւնն՝ տեսակ չարութեան, եւ անհնար՝ որ ասես, թէ հետ կնոջ մի անգամ ես պոռնկել, թէ՝ այլ աւելի, կամ արուագիտութեամբ կամ անասնագիտութեամբ, յայտնես զգործն եւ զչափն, եւ թէ գիտութեամբ է՝ զայն ասես, եւ թէ ծեր էիր, տղայ էիր, ինչ գործեցեր՝ զայն ասես, թէ բռնութեամբ ակամայ գործեցեր՝ զայն յայտնես, որ խոստովանահայրն գիտենայ զցաւն եւ զդեղն դնել կարէ: Որպէս ի մարմնաւոր հիւանդութիւնն, թէ ցաւ կայ ի քեզ, նա ոչ ասես սեռիւն, թէ հիւանդ եմ, դե՛ղ տուր, զի սեռ է հիւանդութիւն, եւ տեսակ է հիւանդութեան աւելին եւ պակասն, զի կամ առաւելու Ա տարրն քան զմիւսն, եւ հիւանդանայ մարմինն եւ կամ պակասին հիւանդանայ, այլ յատկաբար է ախտացեալ: Թէ աչքդ՝ զայն ասես բժշկին եւ թէ ոտքդ՝ զայն, զի թէ /227բ/ զոտիցն դեղն ի վերայ աչիցն դնեն, կուրանայ. զի ձոյթն ոտիցն դեղ է, թէ յաչիցն ի վերայ դնեն, կուրանայ: Նոյնպէս դեղ է պոռնկութեանն խորհրդոյն, որ փարատի քաղց եւ աշխատանք եւ հեռանալ ի կանանց: Եւ թէ դնես ի վերայ դեղ՝ եւ ի սեղան կոչել զկանայս եւ կերակրել եւ սիրել բանիւ եւ արդեամբք, ուտել եւ ըմպել ընդ նոսա, վնաս գործեցեր մահու չափ՝ նիւթ տալով հրոյ ցանկութեան զկերակուրն եւ զդէմս կանանցն: Նոյնպէս եւ յայլ մեղսն իմա՛, վասն զի դժուարին է խոստովանութիւն առնուլն, վասն այնորիկ ընտրել պարտ է զխոստովանահայրն, որ իմաստուն լինի եւ առաքինի: Եւ թէ առաքինի չէ եւ իմաստուն, նմա մի՛ խոստովանիս. լաւ է, որ իմաստուն մեղաւորի խոստովանիս, քան անգէտ արդարոյն: Եւ այս բաւական է վասն խոստովանութեան, զի գրեալ է. «Տո՛ւր իմաստնոյն պատճառս, եւ իմ/228ա/աստնագոյն լիցի»[116]:

Իսկ վասն այն բանին, որ գրեալ էիք, թէ ասեն թէ լոկ մարդ էր ի խաչին եւ արտաքս ելանէր իբրեւ զամենայն մարդ, առ այդ պատասխանեմք, եթէ անգոսնելի կիրք տալ Քրիստոսի եւ մարդ միայն ասել ի խաչին, պատճառ է Բ բնութիւն ասելն եւ Բ անձն, զոր Նեստորն ասաց: Իսկ Ֆռանկ քրիստոնէքն մի անձն խոստովանին եւ զայն մի անձն Աստուած եւ մարդ դաւանեն: Լոկ մարդ զի՞րդ կարեն ասել ի խաչն, այլ Աստուած եւ մարդ, զի Գ միաւորութիւն է Քրիստոսի. մի՝ միաւորութիւն Բանին Աստուծոյ յԻւր մարմինն, որ ի Կուսէն

116 Տե՛ս Առակ. Թ 9:

էառ, եւ մի՝ միաւորութիւն Բանի Աստուծոյ ընդ մարդկային հոգին, եւ մի՝ միաւորութիւն Քրիստոսի մարդկային հոգւոյն ընդ իւր մարմնոյն: Եւ Բ միաւորութիւն՝ Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն եւ Բանին Աստուծոյ ընդ մարդկային հոգւոյն անշփոթ եւ անբաժանելի մնացին եւ մնան յաւիտեանս յաւիտենից, նախ քան զխաչն, եւ ի խաչին եւ յետ խա/228բ/չին անսպառ յաւիտենիւ: Իսկ մի միաւորութիւն՝ Քրիստոսի մարդկային հոգւոյն ընդ մարմնոյն, յորժամ աւանդեաց զհոգին ի խաչին, Գ աւր բաժանեցաւ ի մարմնոյն, եւ բանական հոգւովն եւ Աստուածութեամբն գնաց ի դժոխքն եւ աւերեաց զդժոխսն, եւ մարմնովն եմուտ ի գերեզմանն, եւ աւերեաց զմահ: Եւ յետ Գ աւուրն դարձեալ մարդկային հոգւովն միացաւ ի մարմինն եւ յարեաւ ի մեռելոց՝ անբաժանելի մնալով յաւիտեանս յաւիտենից, որպէս ասէ առաքեալն, թէ՝ «Գիտեմք, զի Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետեւ ոչ մեռանի եւ մահ Նմա ոչ տիրէ»[117]: Եւ ի մահուանն անբաժանելի էր Աստուած Բանն ի մարմնոյն եւ ի բանական հոգւոյն, զի մեռեալ էր մարմնով եւ աւանդեալ զհոգին, բայց կենդանի էր Աստուածութեամբ այն մեռեալ մարմինն ի խաչին, զի Աստուծոյ բնութիւնն անչարչարելի է եւ անմահ: Ոչ ոմն եւ ոմն, /229ա/ այլ միեւնոյն Քրիստոս չարչար[էր] Իւր մարմնովն եւ անչարչարելի էր Աստուածութեամբն, զի անհնար է Աստուծոյ անմահ եւ անչարչարելի բնութեանն չարչարել եւ մեռանել առանց մարդկային բնութեանս: Ապա վասն անճառ միաւորութեան Բանին Աստուծոյ ընդ մարդկային բնութիւնս Աստուծոյ ասի մահ եւ չարչարանք, որպէս ասէ առաքեալն Պաւղոս ի Կորնթացւոց թղթին. «Զի թէ էր ծանուցեալ, ո՞չ արդեւք զՏէր փառացն ի խաչ հանէին»[118] եւ ի Թեսաղոնիկեցւոց յառաջին թղթին ասէ վասն հրէիցն, թէ՝ «Որք զՏէր Յիսուս սպանին եւ մարգարէսն եւ զմեզ հալածեցին եւ Աստուծոյ յաչաց ելին»[119]: Եւ Տէր փառաց եւ Տէր Յիսուս Աստուած է: Զի որպէս երկաթ, որ միանայ ի հուր՝ ոչ ինչ պակասէ ի հրոյ, զի այրէ իբրեւ զհուր. եւ ոչ կարես ասել զհրացեալ երկաթն, թէ չէ հուր, սակայն զբնութիւն իւր ոչ կորուսանէ, զի ծանր է եւ ընդդիմահար, թէպէտ միացեալ է ի հուր: Նոյնպէս եւ հուրն զբնութիւն իւր ոչ կորուսանէ,

117 Հռոմ. Զ 9
118 Ա Կոր. Բ 8
119 Ա Թես. Բ 15

/229բ/ զի թեթեւ է եւ վերամբարձ, սակայն միացեալ է յերկաթն, եւ յորժամ հարկանեն զերկաթն, հարկանեն հանդերձ հրովն, սակայն հուրն ոչ չարչարի ինքն ըստ ինքեան, զի անըմբռնելի է: Նոյնպէս եւ Աստուծոյ բնութիւնն անչարչարելի է եւ անմահ, սակայն միացեալ ի չարչարելի եւ մահկանացու մարմինն, Աստուծոյ մահ եւ չարչարանք ասի վասն անճառ միութեանն: Եւ որպէս ոչ է միապէս մարդ սպանանել եւ անասուն, զի ասէ Գիր, եթէ՝ «Արիւնն հանցես զանասնոցն եւ կերիցես, իբրեւ զբանջար խոտոյ»[120], իսկ վասն մարդոյն ասէ, թէ՝ «Որ հեղու զարիւնն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա»[121]. եւ մարդ հոգին է, եւ հոգին արիւն ոչ ունի եւ ոչ մեռանի, եւ վասն միութեան մարմնոյն մարդոյ մահ ասի, եւ սպանանողն՝ մարդասպան: Եւ որպէս ասացաք, զհոգին ոչ կարէ սպանանել, զի անմահ է, այլ՝ գործարանն իւր նոյնպէս եւ Քրիստոս, քանզի ոչ սոսկ մարդ էր, այլ Աստուած ճշմարիտ եւ մարդ կատարեալ՝ միացեալ ի մարմնի անշփոթ եւ անբաժան/230ա/ելի: Եւ ոչ ասի լոկ մարդոյ մահ կամ մարդոյ չարչարանք, այլ Աստուծոյ չարչարանք եւ Աստուծոյ մահ՝ վասն միութեանն ընդ չարչարելի եւ մահկանացու մարմինն, սակայն աստուածային բնութեամբն մնայ անմահ եւ անչարչարելի: Իսկ սպանողքն Քրիստոսի տիրասպանք ասին՝ որպէս ասէ Տէրն յԱւետարանին ի Մատթէոս[ի] գլխին յՄԺԹ համարին. «Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միտս. «Սա է ժառանգն, եկա՛յք սպանցուք զսա եւ կալցո՛ւք զժառանգութիւն սորա: Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին եւ սպանին»[122]: Եւ արդ, եթէ Տէրն, որ Ինքն էր Որդի Աստուծոյ եւ Ինքն մեռաւ, Որդի Աստուծոյ ասէ սպանեալ ի խաչին, ի հրէիցն ո՞վ իցէ, որ ժպրհիցի եւ լոկ մարդ ասէ, զի լոկ մարդոյ մահ փրկութիւն ոչ առնէ, այլ՝ Որդւոյն Աստուծոյ: Իսկ որ անգոսնելի կիրք ասեն Քրիստոսի, որպէս Փառնդ ազգդ յոյժ ընդ մեղադրանաւք են՝ աւտար յԱստուածային Գրոցն, զի Աստուածային Գիրք զյղութիւն Փրկչին անապական ասէ եւ զծնունդն անապական, նոյնպէս եւ զսնունդն անապական, այսպէս /230բ/ եւ զմահ անապական: Եւ քանզի Աստուած էր եւ մարդ, վասն այնորիկ յղութիւնն իբրեւ զմարդոյ էր, իսկ ի Հոգւոյն Սրբոյ առանց սերման՝ իբրեւ

120 Տե՛ս Ծն. Թ 3:
121 Ծն. Թ 6
122 Մատթ. ԻԱ 38-40

Աստուծոյ: Եւ ծնունդն՝ իբրեւ զմարդոյ, քանզի մարդ ծնանի, իսկ ի Կուսէ ծնանել եւ յետ ծնանելոյն ոչ խախտել կուսութիւն ծնողին, իբրեւ՝ Աստուծոյ: Այսպէս եւ կերակրիլն՝ իբրեւ մարդոյ, իսկ ծախիլն կերակրոյն իբրեւ ի հրոյ եւ անապական մնալն ի յանգոսնելի կրից՝ իբրեւ Աստուծոյ: Նոյնպէս եւ մահն. մեռանիլն եւ ի գերեզման դնիլն՝ իբրեւ մարդոյ, եւ անապական մնալն եւ յառնելն ի մեռելոց՝ իբրեւ Աստուծոյ: Զի թէ Քրիստոսի մարմինն ապականեալ էր, զիա՞րդ ապականեալն կարիցէ անապականութիւն շնորհել ապականեցելոցն, այլ անապականն յանապականութենէ իւրմէ կարէ անապականութիւն շնորհել ապականացելոցն, որպէս ասէ Դաւիթ եւ առաքեալն Պետրոս, եթէ՝ «Ոչ թողաւ ոգի Նորա ի դժոխս եւ ոչ մարմնին Նորա ետես զապականութիւն»[123]: Եւ արդ, որք ապականու/231ա/թիւն [ասեն] Քրիստոսի մարմնոյն, հակառակ են առաքելոցն եւ մարգարէիցն, զի մարգարէքն եւ առաքեալքն անապական ասեն, եւ դոքա՝ ապականեալ: Եւ եթէ ասեն կերակուրն եւ ըմպելին, զոր ուտէր եւ ըմպէր Քրիստոս, զի՞նչ լինէր՝ եթէ ոչ ելանէր արտաքս, ասեմք, թէ այն, որ յետ յարութեանն կերաւ՝ հաց եւ ձուկն եւ խորիսխ մեղու, այն զի՞նչ եղեւ, քանզի ոչ կարես ասել, թէ արտաքս ելաւ յետ յարութեանն: Նոյնպէս եւ յառաջ քան զյարութիւնն. զի թէ կերակուրն արտաքս ելանէր, ապա եւ ջուրն. եւ եթէ ջուրն ելանէր արտաքս, ապա եւ սերմն եւ գիջութիւն, զի եւ այն բնական է՝ ի կերակրոյն լի սերմն եւ ի սերմէն՝ ցանկութիւն հեշտութեան, եւ քանզի ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի եւ մեղքն կատարեալ զմահ ծնանի[124], որպէս ասէ Յակոբոս ի թուղթն Կաթուղիկէից. եւ հեշտ ցանգութիւն ասել ի Քրիստոս կարի անաւրէնութիւն է եւ անհաւատութիւն: Զի Տէրն ասէ յԱւետարանն. «Ո՞վ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց»[125], եւ՝ «Գայ իշխան աշխարհի եւ յիս /231բ/ ինչ ոչ գտանէ»[126], «Որ ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան Նորա»[127], որպէս ասէ մարգարէն Եսայի ի ԽԴ համարին եւ Պետրոս առաքեալն՝ յառաջին թղթին ի յիններորդ համարին: Ապա յայտ է, թէ որ Քրիստոսի ապակա-

123 Գործ. Դ 31
124 Յակ. Ա 15
125 Յովհ. Ը 46
126 Յովհ. ԺԴ 30
127 Տե՛ս Ես. ԾԳ 9, Ա Պետ. Բ 22:

նութեանն կիրք տան, մեղանչեն ի Քրիստոս, եւ որ Քրիստոսի Բ բնութիւն ասեն՝ որիշ որիշ եւ ոչ միացեալ անշփոթաբար, հերձուածողք են, մի՛ հաւատայք նոցա: Եւ որ Քրիստոսի Ա բնութիւն ասեն՝ շփոթեալ երկուս, նոյնպէս չար է, զի Նեստոր ասաց Քրիստոսի Բ բնութիւն որիշ որիշ եւ Բ անձն, զոր նզովէ Եկեղեցի սուրբ, եւ Եւտիքէս շփոթեալ ասաց՝ որպէս ջուր եւ գինի խառնեալ ընդ իրար, զի ոչ գինի է եւ ոչ ջուր. նոյնպէս եւ Քրիստոսի միութիւն ասաց շփոթեալ, վասն որոյ եւ զնա նզովէ Կաթողիկէ եւ Առաքելական Եկեղեցի:

Այլ խոստովանիմք անշփոթ միացեալ զԲանն Աստուած ի մեր բնութիւնս փոխաւորապէս եւ ոչ փոխարկաբար, զի թէպէտ եւ Աստուած մարդացաւ, բայց զիւր պարզ եւ անմարմին բնութիւնն ոչ կորոյս, եւ մարդն՝ թէպէտ աստուածացաւ, այլ զիւր թանձր եւ յաւդական բնութիւնն ոչ կորոյս, այլ՝ /232ա/ միացեալ անշփոթաբար անճառելի միութեամբ: Քանզի Քրիստոսի անուն ոչ սոսկ մարդկութեան է անուն եւ ոչ յատուկ Աստուածութեան, այլ՝ միաւորութեան, զի Քրիստոսն աւծեալ ասի ի հայ լեզուս, զի Աստուածութեամբն էաւծ զմարդկային բնութիւնս եւ եղեւ աւծեալ՝ որպէս որ Աւծն, որպէս ասէ Աստուածաբանն: Եւ որպէս եղն միայն ոչ ասի աւծեալ, եւ ոչ Այն՝ որ չէ աւծեալ եղաւ, այլ յեղոյն միանալն ի յԱւծեալն՝ ապա ասի աւծեալ: Նոյնպէս եւ Աստուած Բանն նախ քան զմարդանալն ոչ ասի Քրիստոս: Իսկ յորժամ մարդացաւ, ասի Քրիստոս վասն միաւորութեանն Բանին Աստուծոյ ի մեր բնութիւնս, զի թէպէտ մարգարէքն յառաջագոյն ասացին զՔրիստոսդ անուն, այլ վասն մարդեղութեան գուշակեցին որպէս զՅիսուս անունդ, որ թարգմանի փրկիչ, որ են տնաւրինական անուանք Մարդացելոյն վասն մեր, Որում փառք յաւիտեանս. ամէն:

Իսկ վասն Ծննդեանն, զոր նոքա ի դեկտեմբերի ի ԻԵ տաւնեն եւ մեք ի յունուարի ի Զ-ն, չէ ինչ հարկ գրել, զի Ղուկաս յայտնապէս /232բ/ ասէ յիւրում Աւետարանին, թէ՝ «Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից»[128]: Եւ յայնմ աւուր, յորում ծնեալ է լինիլ ասաց ամենայն մարդ, նոյնպէս եւ Տէրն ի յունուարի ի Զ-ն եւ երեկ եւ ապա եղեւ Լ ամաց, եւ յայտէ թէ աւրս ծննդեանն եւ մկրտութեանն ի Զ-ն է ի

128 Ղուկ. Գ 23

յունուար, զի յորում աւուր ծնաւ եւ յայնմ աւուր եղեւ Լ ամաց եւ մկրտեցաւ: Թէպէտ եւ պատկեր աւուրն ոչ էր նոյն, այլ քանիք ամսոյն նոյն էր՝ ի յունուարի Զ-ն: Եւ յետոյ փոխեցին ի դեկտեմբերի Ի-ե, վասն զի Բեթղեհէմ հեռի էր ի Յորդանանու եւ յաղագս այնորիկ, զի ոչ կարէին առնել զԾնունդն ի Բեթղեհէմ եւ զՄկրտութիւնն ի Յորդանան ի միում աւուր՝ վասն հեռաւորութեանն տեղացն, նա ի դեկտեմբերի Ի-ե փոխեցին՝ զԾնունդն, եւ զՄկրտութիւնն ի յունուար ի Զ-ն առնեն հետ մեզ:

Այլ յառաջ ամենայն քրիստոնեայքն ի յունուարի Զ-ն առնէին զԾնունդն եւ զՄկրտութիւնն՝ ի միում աւուր: Զի Աւետիքն ի յապրիլի Զ է, որպէս ասէ աւետարանիչն, թէ յամսեանն Զ-երորդի առաքեցաւ Գաբրիէլ առ Կոյսն /233ա/ եւ ի յղութենէն Եղիսաբեթի[129], որ է ի թշրինի ԻԲ եւ ի հոկտեմբերի ի Թ, մինչեւ ի նիսանի ԺԶ-ն եւ յապրիլի Զ-ն լինի Զ ամիս, եւ անտի մինչեւ ի յունուարի Զ-ն եւ տբէրի ԻԱ լինի Թ ամիս եւ է աւր ըստ անդրանկացն, յորում աւուր ծնաւ Քրիստոս: Եւ յետ Լ ամացն դարձեալ ի յունուարի Զ-ն մկրտեցաւ, որպէս պատմէ սուրբ աւետարանիչն Ղուկաս, թէ Յիսուս էր ամաց երեսնից[130]. եւ մեք վասն այնորիկ ի միում աւուր առնեմք զծնունդն եւ զմկրտութիւնն՝ ըստ առաջին սահմանին: /233բ/ Այլ թէ մեք ի յունուարի Զ-ն առնեմք, եւ թէ նոքա դեկտեմբերի Ի-ե-ն, ամենայն ի փառս Աստուծոյ է, զի հաւատան նոքա եւ մեք, թէ ծնաւ Քրիստոս ի Կուսէն եւ արար փրկութիւն աշխարհի, եւ վասն այնորիկ տաւնեմք մեք եւ նոքա, եւ քանզի յարութիւն Քրիստոսի ի կիրակէի եղեւ ի սուրբ Զատիկին միայն, եւ յամենայն կիրակէի յարութեանն տաւնեմք, եւ զինչ վնաս համարիմք, այլ աւգուտ եւ շահ մեծ պարգեւէ իսկ բազում բարեաց պատուել զյարութիւնն Քրիստոսի, նոյնպէս եւ ծնունդն Քրիստոսի, յորում աւուր պատուես՝ բարի է, միայն սիրով ի փառս Աստուծոյ լիցի:

129 Տե՛ս Ղուկ. Ա 27:

130 Ղուկ. Գ 23

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Այրիս Էլմըսրի

ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻ*

ՄԱՍ Ա
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Ղպտի Եկեղեցու հիմնադիրը եւ Ալեքսանդրիայի առաջին պատրիարքը ս. Մարկոս աւետարանիչն է: Նա ծնուել է Հիւսիսային Աֆրիկայի Կիւրենիա քաղաքում: Եղել է Պետրոս եւ Պօղոս առաքեալների աշակերտը:

Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը քարոզելու համար նա վերադարձաւ իր հայրենիք: Սկզբում գնաց Պենտապոլիս, որտեղ եւ սկիզբ դրեց աֆրիկեան առաջին քրիստոնէական համայնքին, ապա 61 թուականին եկաւ Ալեքսանդրիա: Այստեղ նրա առաջին հետեւորդը դարձաւ Անանիա անունով մի կօշկակար, որին ս. Մարկոսը առաջինը Աֆրիկայում եպիսկոպոս ձեռնադրեց: Նրա հետ ձեռնադրեց նաեւ տասներկու քահանաներ եւ եօթ սարկաւագներ, որոնք իրենց եպիսկոպոսի հետ միասին աֆրիկեան հոգեւորականների առաջին խումբն էին, որը շարունակեց աւետարանչի սկսած գործը: Հաւատացեալների պահանջով նա գրեց իր Աւետարանը եւ նրանց կտակեց պատարագը, որը յետագայում յաւելուեց ս. Կիւրեղ Աղեքսանդրացու կողմից եւ այժմ յայտնի է Կիւրեղեան պատարագ անուանումով:

68 թուականին Սերափիս չաստուծոյ տօնի նախօրեակը համընկաւ ս. Զատկի նախօրեակին: Տօնի առթիւ հաւաքուած ամբոխը առաջնորդների կողմից հրահրուեց քրիստոնեաների դէմ: Վերջիններս հազիւ էին աւարտել տօնակատարութիւնը, երբ մոլեգնած ամբոխը ներխուժեց եկեղեցի: Բռնելով ս. Մարկոսին՝ նրա վզին պարան կապեցին

---

* Թարգմանութիւնը, որոշակի կրճատումներով, ներկայացնում է ըստ հետեւեալ հրատարակութեան՝ "Introduction to the Coptic Church", by Iris H. Elmasry, Jerusalem, 1977:

եւ քարշ տուեցին փողոցներով: Քիչ անց, երբ գլուխն անջատուեց մարմնից, թողեցին սուրբի մարմինն ու ցրուեցին: Հաւատացեալները եկան վերցրին այն, գլուխը տեղաւորեցին աճիւնասափորի մէջ եւ դրեցին եկեղեցում: Եւ եկեղեցին կոչեցին նրա անունով: Ս. Մարկոս աւետարանչի գլուխն այնտեղ է մինչեւ օրս իբրեւ գանձ, իսկ մարմինը դրուեց ծովափնեայ մի եկեղեցում: 9-րդ դարում վենետիկեան վաճառականները գողացան այն եւ դրեցին ս. Մարկոսի անունը կրող Մայր տաճարի սուրբ սեղանի տակ՝ նրան հռչակելով իրենց քաղաքի հովանաւոր սուրբը:

1968 թ. յունիսին Հռոմի Պօղոս Զ պապը ս. Մարկոսի նահատակութեան 1900-ամեակի առթիւ նրա մասունքները յանձնեց Ալեքսանդրիայի Կիւրեղ Զ պատրիարքին: Այս առիթով կառուցուեց մի փառայեղ Մայր տաճար՝ ս. Մարկոսի անունով, որի բեմի տակ տեղ պատրաստուեց սուրբի մասունքների համար, որոնք երեքօրեայ տոնակատարութիւնից յետոյ թափօրի ուղեկցութեամբ դրուեցին իրենց յատկացուած տեղում:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԱԹՈՌԸ

Ս. Մարկոսի ցանած սերմն արմատներ արձակեց եւ վերաճեց մի մեծ ծառի[1]: Դեռեւս առաքեալի կենդանութեան օրօք կառուցուեց մի եկեղեցի, որը նրա մարտիրոսութիւնից յետոյ կոչուեց իր անունով: Ալեքսանդրիայի Ս. Մարկոս Մայր տաճարն այժմ գտնւում է ճիշտ նոյն տեղում, որտեղ կառուցուած է եղել Եգիպտոսի առաջին Եկեղեցին:

Ս. Մարկոսի կողմից ձեռնադրուած Անանիան շարունակեց հաւատացեալների առաջնորդութիւնը: Այդ ժամանակից ի վեր առաքեալի յաջորդների շարքը ձգւում է մինչեւ մեր օրերը առանց ընդհատման: Ներկայումս նրա յաջորդը աբբա Շենուդա Գ-ն է՝ Ալեքսանդրիայի 117-րդ պատրիարքը:

Սկսած Անանիայի ժամանակներից՝ ս. Մարկոսի բոլոր յաջորդները (Ալեքսանդրիայի պատրիարքները) կոչուել են պապ: Տիեզերական եկեղեցու ամենահռչակաւոր հայրերից մի քանիսը Ալեքսանդրիայի

1 Մարկ. Դ 31, 32, Ղուկ. ԺԳ 19

պատրիարքներից են:

Աբբա Դեմետրիուս (12-րդ պատրիարք, 199-232). կոչւում էր Խաղողագործ: Նա գտաւ մի եղանակ, որով Զատկի օրը կարելի էր հաշուարկել բոլոր ժամանակների համար: Տիեզերական Եկեղեցում այն օգտագործուեց մինչեւ 1582 թուականը:

Աբբա Դիոնիսիոս (14-րդ պատրիարք, 249-270). Նրան կոչում էին Տիեզերական ուսուցիչ: Նրա միջնորդութեամբ Հռոմի աթոռի երկու թեկնածուների միջեւ ծագած վէճը խաղաղ լուծում ստացաւ:

Աբբա Պետրոս Ա (17-րդ պատրիարք, 293-303). նահատակուեց Դիոկղետիանոս կայսեր կողմից այն պատճառով, որ, հաւատի անաղարտութիւնը պահպանելով եւ հաւատացեալներին նեցուկ լինելով, յանդգնել էր ընդդիմանալ նրան: Զղջացող հաւատացեալներին վերստին եկեղեցի ընդունելու նրա սահմանած օրէնքները քրիստոնէական գթասրտութեան եւ հայրական հոգածութեան օրինակներ են, որ մեծ համարում ունեն Տիեզերական եկեղեցում:

Աբբա Աթանաս Առաքելաշնորհ (20-րդ պատրիարք, 326-372). յայտնի է ուղղափառութիւնը շեղումներից պաշտպանելու իր անվեհերութեամբ:

Աբբա Կիւրեղ Ա (24-րդ պատրիարք, 412-443). Նրան կոչում էին Հաւատի սիւն եւ ս. Մարկոսի զաւակ՝ ուղղափառ վարդապետութիւնը լուսաբանելու եւ նեստորականութեանն ընդդիմանալու համար:

Աբբա Դիոսկորոս Ա (25-րդ պատրիարք, 443-458). Քաղկեդոնի ժողովում իր անվեհերութեան պատճառով արտաքսուեց Մարկիանոս կայսեր կողմից: Նա գերադասեց մեռնել աքսորում, քան հրաժարուել իրեն վստահուած հոգեւոր ժառանգութեան թէկուզ չնչին մասից:

Աբբա Թէոդոսիուս (35-րդ պատրիարք, 519-536). Յուստիանոս Ա եւ Բ կայսրերը ձգտում էին հնազանդեցնել նրան՝ խոստանալով առաջնորդ կարգել ամբողջ Աֆրիկայում: Նա հրաժարուեց, որի պատճառով քսանութ տարի բանտարկուեց Կոստանդնուպոլսում, որտեղ եւ մահացաւ:

Աբբա Բենիամին Ա (38-րդ պատրիարք, 625-664). Նա յաջողութեամբ հովուեց իր հօտը Կոստանդնուպոլսի անկման եւ արաբական նուաճումների ժամանակաշրջանում: Արաբների ներխուժումից յետոյ վերակառուցեց քանդուած եկեղեցիները եւ իր հեղինակած եկեղեցա-

կան օրէնքները տարածեց հաւատացեալների մէջ:

Աբբա Միքայէլ Ա (46-րդ պատրիարք, 743-766). Նա հաստատուն մնաց ուղղափառ վարդապետութեան մէջ՝ բանտարկութիւնը, գանահարութիւնները, մահուան սպառնալիքները, հսկայական տուգանքների վճարումը նախընտրելով այս աշխարհի հզօրների առջեւ խոնարհուելուց:

Աբբա Շենուդա Ա (55-րդ պատրիարք, 858-869). Չնայած խիստ հալածանքներին, նա Ալեքսանդրիայի փողոցների տակ ջրատարներ փորել տուեց, որոնցով խմելու ջուր էր հասցնում տառապած ժողովրդին:

Աբբա Միքայէլ Դ (68-րդ պատրիարք, 1092-1102). Նա միջնորդ եղաւ Եգիպտոսի սուլթանի եւ Եթովպիայի թագաւորի միջեւ եւ կանխեց պատերազմը՝ նպաստելով նրանց միջեւ բարեկամութեան հաստատմանը:

Աբբա Կիւրեղ Գ (75-րդ պատրիարք, 1226-1234). Հաւատի վարդապետութեան վերաբերեալ իր նամակներով ու գրքերով նա մեծապէս հովուել է Դամասկոսի, Նուբիայի եւ Եթովպիայի ժողովրդին: Նա ս. Մարկոսի առաջին ժառանգորդն է, որը Երուսաղէմում ղպտի արքեպիսկոպոս ձեռնադրեց՝ առաջնորդելու համար Մերձաւոր Արեւելքի երկրներում բնակուող ղպտիներին:

Աբբա Մատթէոս Մեծ (87-րդ պատրիարք, 1378-1409). Նա ունէր առաքելական բոլոր շնորհները. բժշկում էր հիւանդներին, հալածում դեւերին, յարութիւն տալիս մեռելներին: Ունէր նաեւ մարգարէութեան շնորհ: Կարողանում էր իշխել անգամ գազանների վրայ:

Աբբա Ռուզ. Նա աբբա Մատթէոսի ժամանակակիցն է՝ մի աղքատ ու անգրագէտ գիւղացի, որ ստիպուած էր մանուկ հասակից չարքաշ կեանք վարել: 20 տարեկանում, քրիստոնեաների հալածանքներից առաջ, նա ստիպուած էր հեռանալ հայրենի գիւղից: Եւ սակայն այնքան մեծ էր նրա սէրը Յիսուսի եւ իր տառապած հայրենակիցների հանդէպ, որ շրջում էր գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, յուսադրում տկարներին եւ հոգեւոր եռանդով լցնում նրանց սրտերը: Մի քանի տարի այս թափառական կեանքով ապրելուց յետոյ նա հաստատուեց մի վայրում, որն այն ժամանակից ի վեր յայտնի դարձաւ որպէս Աբբա Ռուզի երկիր: Շատերն էին գալիս եւ աշակերտում նրան, քանզի

Աստուած նրան օժտել էր անտեսանելին տեսնելու, ապագան կանխատեսելու, մոլորուածներին դարձի բերելու եւ տարածութեան մէջ հոգով ճամփորդելու հազուագիւտ շնորհներով: Եկեղեցին նրան շնորհել է աբբա տիտղոսը, որին արժանանում են միայն պատրիարքներն ու եպիսկոպոսները:

Աբբա Յովհաննէս ԺԳ (94-րդ պատրիարք, 1483-1526). Յայտնի է Կիպրոսի իր հօտին ուղղած խրատական նամակներով:

Աբբա Յովհաննէս ԺԶ (103-րդ պատրիարք, 1676-1718). Չնայած սովին, արհաւիրքներին ու հալածանքներին, նրան յաջողուեց վերականգնել Արեւելեան անապատի վանքերը, նաեւ վերանորոգել ու վերաշինել բազմաթիւ եկեղեցիներ: Նա այնքան լի էր կարեկցանքով, որ կարգադրեց քահանաներին հաղորդութիւն տանել այն հիւանդներին, որոնք անկարող էին եկեղեցի գնալ:

Աբբա Կիւրեղ Դ (110-րդ պատրիարք, 1854-1861). Ղպտիների մէջ յայտնի է որպէս Վերածնդի հայր: Նա դպրոցներ բացեց, որոնցից մէկը՝ աղջիկների համար: Վերակենդանացրեց ղպտերէնը, կանոնակարգեց սարկաւագների աշխատանքը, ինչպէս նաեւ գնեց Եգիպտոսում երկրորդ տպագրական մեքենան: Նա ձգտում էր Ուղղափառ եկեղեցիների միութեանը, սակայն չապրեց մինչեւ դրան հասնելը: Նրա միջնորդութեամբ խաղաղութիւն հաստատուեց Եգիպտոսի եւ Եթովպիայի միջեւ:

Աբբա Կիւրեղ Ե (112-րդ պատրիարք, 1874-1927). Նա կիրակնօրեայ դպրոցներ հիմնեց Ալեքսանդրիայից մինչեւ Ասուան եւ Սուդան ընկած տարածքներում, բացեց ներկայիս Աստուածաբանական ճեմարանը եւ Տեխնիկական դպրոցը՝ Կահիրէի ամենաաղքատ թաղամասերից մէկում: Սուդանում կատարած հովուական շրջագայութեան ընթացքում նուիրագործեց մի քանի եկեղեցիներ: Նպաստեց ժամանակակից շատ հեղինակների գրքերի հրատարակմանը: Նա մեծ հայրենասէր էր եւ օժանդակում էր արաբների ազգային-ազատագրական պայքարին:

Աբբա Կիւրեղ Զ (116-րդ պատրիարք, 1959-1971). Նա օժտուած էր բժշկելու, դիւահալածութեան եւ պայծառատեսութեան շնորհներով: Նա սկսեց Մարիուտի Ս. Մինաս վանքի վերակառուցման գործը, սակայն չտեսաւ դրա աւարտը: Նրա մարմինն ամփոփուած է մեծ Մայր

տաճարի սուրբ սեղանի տակ:

Ս. Մարկոսի մասունքների վերադարձի տարում Աստուծոյ շնորհն առատապէս յայտնուեց օրհնեալ Կոյսի երեւումով Կահիրէում նրա անունը կրող եկեղեցու վերեւում, 1968 թ. ապրիլի 2-ին, որ շարունակուեց երկու տարուց աւելի: Հազարաւոր մարդիկ աշխարհի տարբեր ծագերից ապրում էին Տիրամօրը տեսնելու հոգեզմայլութիւնը մայրամուտից մինչեւ արեւածագ:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Եգիպտոսում պարբերաբար մոլեգնել ու հանդարտուել են քրիստոնեաների հալածանքները: Ս. Մարկոսի նահատակութիւնից յետոյ նրա հիմնած Եկեղեցին անընդմէջ խաղաղութիւն վայելեց մինչեւ 202 թուականը: Խաղաղութեան այս տարիները Աստուած շնորհեց Եկեղեցուն, որպէսզի նա զօրանայ՝ դիմակայելու համար յետագայ կատաղի յարձակումներին, հալածանքներին ու հերձուածներին: 202-642 թթ., հռոմէա-բիւզանդական տիրապետութեան ժամանակաշրջանում, զպտիների հալածանքների ժամանակ տղամարդիկ, կանայք եւ երեխաները չարչարւում ու սպանւում էին առաւելագոյն դաժանութեամբ: Պէտք է ասել, որ զպտիները երբեւէ չեն պատկերել խոշտանգումների տեսարաններ, եւ այս չարչարանքների մասին միակ յիշատակութիւնը օրացոյցն է: Այդ հալածանքները աննշան դադարներով շարունակուեցին 642-1805 թթ.՝ մինչեւ Մուհամեդ Ալի փաշայի գալը: Այսպիսով, ս. Մարկոսի հիմնած Եկեղեցին գոյատեւում էր՝ շարունակ գտնուելով ճակատային գծում: Եւ չնայած այսպիսի ծանր փորձութիւններին, Ղպտի Եկեղեցին ոչ միայն ապրում, այլեւ վերածնդի զարթօնք է վայելում թէ՛ հայրենիքում եւ թէ՛ այլ երկրներում:

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ղպտի Եկեղեցուն տրուած մեծագոյն աստուածային շնորհը թերեւս այն է, որ, անցնելով վտանգների եւ փորձութիւնների միջով, նա կարողացել է դիմակայել՝ միեւնոյն ժամանակ պահպանելով իր երբեմնի կենսուրախութիւնը:

Քրիստոնէութեան վրայ ունեցած նրա ամենահեռահար եւ սրբա-

գործող ազդեցութիւնը վանականութիւնն է: Այսօրինակ սրբակեցութեան հակառակորդները պնդում են, թէ վանականները իրականութիւնից խոյս տուող մարդիկ են: Սակայն նրանց իրական նպատակն այլ է:

Նախ՝ յիշենք, որ հին եգիպտացիներն անապատը համարում էին չարի աստուծոյ տարածքը, ուր նրան վտարել էր բարու Աստուածը. ուստի վանականներին կարելի է նմանեցնել թշնամու տիրոյթում կռուող մարտիկի:

Երկրորդ՝ նրանցից շատերը հարուստ եւ ազդեցիկ դասից էին եւ, չնայած հալածանքներին, կարող էին ապրել ճոխութեան մէջ:

Երրորդ՝ երբ հալածանքներն ու արհաւիրքները սկսում էին մոլեգնել, անապատականները թողնում էին իրենց օթեւանները եւ գնում քաղաքները՝ աշխարհում իրենց եղբայրների հետ տանջանքը դիմագրաւելու:

Եւ վերջապէս՝ նուազ կարեւոր չէ նաեւ այն, որ հալածողներն արշաւում էին անապատի խորքերը եւ առանց երկմտանքի սպանում վանականներին՝ անկախ նրանց տարիքից, սեռից, սրբութիւնից: Ուստի ակնյայտ է, որ աշխարհը լքած մարդիկ առանձնութիւն են փնտրում՝ Աստուծոյ հետ մենակ լինելու համար:

Վանականութիւնը, սկզբնաւորուելով Ղպտի Եկեղեցում, անցել է երեք փուլ.

ա) **Կատարեալ մենութիւն.** աղօթքի, պահեցողութեան կամ հայցողական կեանքի ձգտող տղամարդը կամ կինը միայնակ գնում է անապատ, գտնում որեւէ բնական այր կամ փոս է փորում եւ իր կեանքի մնացած մասն անցկացնում անճանաչ, առանց պահանջների եւ կատարելապէս ինքն իր հետ:

Ամենանշանաւոր մենակեացը ս. Պողոսն է՝ առաջին ճգնաւորը, որ քսան տարեկանում թողեց աշխարհը եւ իննսուն տարի ապրեց կատարեալ մոռացութեան մէջ: Միայն մահուանից մէկ շաբաթ առաջ Աստուծոյ հրեշտակը նրա մասին յայտնեց ս. Անտոնին, որը գտաւ նրան եւ իմացաւ նրա կեանքի պատմութիւնը[2]: Արեւելեան անապատում

2 Սուրբ Անտոն Անապատականի վարքը տե՛ս «Գանձասար» Ա., Երեւան, 1992, էջ 240:

այժմ էլ դեռ կանգուն է նրա անունը կրող մի վանք, որ կառուցուել է նրա ապրած քարանձաւի մօտակայքում:

Իսկ ամենանշանաւոր մենակեաց կինը Մարիամ Եգիպտացին է[3]:

բ) **Անտոնեան կանոն.** ս. Անտոնը, գնալով անապատ, ձգտում էր միայնանալ, սակայն նրան չյաջողուեց երկարատեւ վայելել առանձնութիւնը: Շատերն էին գնում նրա մօտ՝ հայցելով հոգեւոր խորհուրդ կամ մարմնի բժշկութիւն, սակայն քչերն էին կամենում մնալ նրա հետ: Իսկ իր հետեւորդներին ս. Անտոնը խորհուրդ էր տալիս մի խուց գտնել եւ այնտեղ մնալ կիրակի երեկոյից մինչեւ կէսօր: Եւ շաբաթ կէսօրին բոլորը հաւաքւում էին նրա մօտ եւ մինչեւ կիրակի երեկոյեան մնում այնտեղ: Սուրբը յորդորում էր նրանց ձեռքի աշխատանք սովորել եւ աղօթքն ընդմիջել դրանով, «որովհետեւ,- ասում էր նա,- վանականը պէտք է վաստակի իր ապրուստը. քանզի եթէ ծոյլին բազում դեւեր են շուրջկալում, ապա աշխատողին՝ միայն մէկը»: Ս. Անտոնը նրանց համար յատուկ զգեստ ստեղծեց՝ սպիտակ քաթանից պատմուճան, որ իջնում էր ծնկներից ցած, զգաստ պահելու համար մէջքին կապւում էր կաշուէ լայն գօտի: Երբ նրանցից որեւէ մէկը քաղաք էր գնում իր ձեռքի աշխատանքը վաճառելու կամ այլ նպատակով, ամառանը հագնում էր քաթանէ, իսկ ձմռանը՝ կաշուէ թիկնոց:

Հինգ ու կէս օրուայ մենութեան եւ մէկ ու կէս օրուայ ընկերակցութեան կանոնը յայտնի է որպէս Անտոնեան կանոն: Հայր Անտոնն առաջին անապատականն է, որն ունեցաւ աշակերտներ, որոնց ուսուցանում եւ ուղղութիւն էր տալիս: Նա յայտնի է որպէս վանականների հայր:

գ) **Համայնքային կեանք.** այն սկզբնաւորուել է աբբա Պախոմի կողմից, որը հեթանոս ծնողների զաւակ էր: Կոստանդին կայսեր օրօք քսան տարեկան հասակում բանակում ծառայելիս նա ականատես եղաւ մի իրադարձութեան, որի շնորհիւ դարձի եկաւ եւ քրիստոնեայ դարձաւ: Եւ, բանակից վերադառնալով, անմիջապէս գնաց Էսնա քաղաքի մերձակայ անապատը, որի քարանձաւներից մէկում գտաւ մի տարէց ճգնաւորի: Պախոմը նրա հետ ապրեց երեք տարի: Ապա սուրբ այրի խորհրդով առանձնացաւ մի քարանձաւում եւ սկսեց միայնակ ճգնել: Լինելով շատ նրբազգաց ու կարեկից՝ նա խորհում էր, որ անշուշտ կլինեն մարդիկ, ովքեր կուզենան ամբողջովին նուիրուել Աստծուն, սակայն չեն կարող դիմանալ մենութեանը: Եւ աստուածային առաջնորդութեամբ Թաբենիսի կոչուած վայրում, Նեղոսի վերին սահմաններում, կառուցեց տղամարդկանց՝ աշխարհում առաջին վանքը: Մի քանի ամիս անց նրա քոյրը եկաւ նրա մասին տեղեկանալու եւ, այդ ապրելակերպով հմայուած, խնդրեց մի վանք կառուցել կանանց համար: Եւ վանականները մերձակայքում նոյնպիսի մի վանք կառուցեցին կանանց համար:

Ս. Պախոմի վանքերը դէպի իրենց էին ձգում ոչ միայն եգիպտացիներին, այլեւ օտարազգիներին: Ոմանք իրենց ամբողջ կեանքն էին ապրում այնտեղ, ուրիշները՝ մի քանի տարի, եւ վերադառնում էին հայրենիք՝ Պախոմեան կանոններով վանական կեանք սկսելու համար: Եգիպտոսում Պախոմեան կանոնը միակ վանական կարգն է, մինչդեռ Արեւմուտքում զարգացել են բազմաթիւ կարգեր, որոնք, սակայն, ծնուել են նոյն կանոնից: Այստեղից էլ ս. Պախոմը կոչւում է համայնքով ապրող վանականների հայր:

Ամենանշանաւոր ճգնաւորներից է աբբա Մակար Մեծը (Եգիպտացին)՝ ս. Անտոնի աշակերտների մէջ ամենաառաջինը, որն ապրում էր Շի-Հիթում՝ Արեւմտեան անապատում, եւ զպտիների շրջանում յայտնի էր որպէս անապատի հայր: Իսկ պատմաբանները նրան կոչել են պատրիարքների հայր, քանի որ Աղեքսանդրիայի պատրիարքների մեծ մասն ընտրուել է Մակարի հետեւորդներից: Նրա վանքն այժմ էլ շարունակում է ծաղկել:

Աբբա Բիշոյ. նրա անունով է կոչւում Արեւմտեան անապատի տակաւին պահպանուած վանքերից մէկը: Պատարագի ժամանակ նրան բնութագրում են «կատարեալ մարդ», «մեր Փրկչի սիրեցեալ» որակումներով: Նրա վանքը վերանորոգուել է ներկայիս աբբա Շենուդա 3-րդ պատրիարքի կողմից:

Աբբա Յովհաննէս–Քամի. յայտնի է որպէս Աս-Սուրիանի վանքի հիմնադիր: Սա այն վանքն է, որտեղ ապրել է աբբա Շենուդան մինչեւ պատրիարք դառնալը: Այստեղ են ապրել են եւ ներկայիս բարձրաստիճան մի շարք եպիսկոպոսներ:

Աբբա Շենուդա–Վարդապետ. ապրել է 118 տարի՝ հինգերորդ դարի կէսից մինչեւ վեցերորդ դարի կէսերը: Արեւմուտքում համար-

3 Սուրբ Մարիամ Եգիպտացու վարքը տե՛ս «Գանձասար» Ե, Երեւան, 1994, էջ 286:

ւում է եգիպտացիներին Բիւզանդիայի կապանքներից ազատող գլխաւոր առաջնորդը:

Հայր Մարկոս Անտոնեան *(ԺԴ-ԺԵ դդ.). ծնուել է Վերին Եգիպտոսում: 23 տարեկանում մտել է Արեւելեան անապատի ս. Անտոն մեծ լուսաւորի վանքը՝ շուտով դառնալով վանականների առաջնորդն ու ուսուցիչը: Վանականները նրան կոչում էին իրենց հոգեւոր հայրը: Ապրել է մօտ մէկ դար:*

Մովսէս Սեւ. *երիտասարդութեան տարիներին եղել է ստրուկ: Նա բարձրահասակ էր, յաղթանդամ, մեծ ուժի տէր եւ այնքան վայրենի ու սանձարձակ, որ տէրը վռնդեց նրան: Ուրախացած իր ազատութեամբ՝ նա ահաբեկիչ դարձաւ՝ սպանելով, կողոպտելով, հարբելով ու չարիք պատճառելով բոլորին:*

Եւ սակայն աստուածային նախախնամութիւնը հետեւում էր նրան: Մերթ ընդ մերթ նա նայում էր արեւին եւ ասում. «Դու Աստուա՞ծ ես: Եթէ ոչ, ապա որտե՞ղ է Նա»: Մի օր, այս տանջող հարցը կրկնելիս, լսեց մի ձայն, որ ասում էր. «Եթէ դու կամենում ես ճանաչել Աստծուն, գնա՛ Շի-Հիթ: Այնտեղ մի սուրբ մարդ կասի քեզ»: Հետեւելով այդ կանչին՝ նա գնաց անապատ: Շի-Հիթի քահանայ Իսիդորոսը նրան յանձնեց Մակար Մեծին: Եւ Աստուծոյ շնորհը փայլեց այս անկեալ մեղաւորի մէջ: Նա դարձաւ վանահայրը մի վանքի, որտեղ ճգնում էին երեք հարիւր վանականներ: Եւ երբ վանքն ասպատակութեան ենթարկուեց, եօթ քահանայ սպանուեց: Նրանցից մէկը Մովսէս Սեւն էր:

Եկեղեցին նրան տուել է Զօրեղ անունը, քանզի նրան յաջողուեց անդունդի յատակից մագլցել մինչեւ սրբութեան բարձունքները:

ՄԱՍ Բ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԴԱՒԱՆԱՆՔԸ

Քրիստոնէական Եկեղեցու աճելուն զուգընթաց, իրենց քարոզչութեան ընթացքում առաքեալները դիմադրութեան էին հանդիպում

հեթանոսների եւ հրեաների կողմից թէ՛ արտաքուստ եւ թէ՛ ներքուստ: Վերջինս առաւել ուժեղ էր եւ առանձնայատուկ բնոյթ էր կրում:

Քրիստոնէական ուսմունքի ըմբռնումը վեր է մարդկային մտքից եւ տրամաբանութիւնից. այն հասանելի է միայն հաւատի շնորհիւ: Սակայն եղան մարդիկ, որ փորձում էին մարդկային ճանաչողութեան սահմաններում պարփակել Աստուծոյ շնորհը: Այսպէս աճեցին որոշ աղանդներ, որոնք տարածում էին զանազան հերձուածողական ուսմունքներ: Մենք կսահմանափակուենք միայն նրանցով, որոնք նզովուած են Տիեզերական Եկեղեցու կողմից: Դրանք են արիոսականութիւնը, նեստորականութիւնը, եւտիքէսականութիւնը, ինչպէս նաեւ Մակեդոնի հերձուածը:

*1. **Արիոսականութիւն.** սկզբնաւորուել է լիբիական քահանայ Արիոսի կողմից: Այն մերժում է Քրիստոսի Աստուածութիւնը: Աբբա Ալեքսանդրոսը (Ալեքսանդրիայի 19-րդ պատրիարքը, 303-326), որը բոլոր Եկեղեցիներում «կատարեալ անբասիր» էր համարւում, համբերութեամբ եւ քրիստոնէական գթութեամբ Արիոսին յորդորում էր ապաշխարել, սակայն՝ ապարդիւն: Ուստի, պայմանաւորուելով Կորդովայի եպիսկոպոս Յոսիուսի եւ Կոստանդին կայսեր պատուիրակի հետ, նա ձեռնարկեց առաջին տիեզերական ժողովի գումարումը, որը տեղի ունեցաւ 325 թուականին Նիկիա քաղաքում: Մասնակցում էր երեք հարիւր տասնութ եպիսկոպոս: Այս ժամանակից ի վեր տիեզերական ժողովին եպիսկոպոսներ հրաւիրելու իրաւունքը վերապահւում էր բացառապէս Կոստանդնուպոլսի կայսերը:*

Քրիստոնեայ եպիսկոպոսների այս առաջին ժողովի հիմնական նպատակը մարմնացեալ Բանի նկատմամբ իրենց հաւատը բիւրեղային մաքրութեամբ արտայայտելն էր: Այս գերագոյն խնդիրը յանձնարարեցին աբբա Ալեքսանդրոսին, նրա սարկաւագ Աթանասին եւ կեսարացի եպիսկոպոս Ղեւոնդիոսին, այսինքն՝ երկու եգիպտացիների եւ մէկ փոքրասիացու: Նրանք տուեցին հաւատի ձեւակերպումը, որն ընդունուեց միահամուռ կերպով եւ յայտնի դարձաւ որպէս Հաւատոյ Հանգանակ: Ստորագրելով այն եւ վճիռ կայացնելով Արիոսին արտաքսելու մասին՝ ժողովական հայրերը քննարկեցին հետեւեալ խնդիրները.

*ա) **Մի մկրտութիւնը.** հալածանքների ընթացքում որոշ քրիստոնեաներ հրաժարուել էին իրենց հաւատից, սակայն յետագայում՝*

զղջացել: Այս խնդրի վերաբերեալ ալեքսանդրեան հայրերը յայտարարեցին, որ եթէ քննութեան ենթարկուելուց յետոյ պարզուի, որ նրանք անկեղծ են, ապա կընդունուեն Եկեղեցի՝ առանց կրկին մկրտուելու: «Որովհետեւ,- ասում էին նրանք,- մկրտութիւնը հոգեւոր ծնունդ է եւ, ինչպէս մարմնաւոր ծնունդը, լինում է միայն մէկ անգամ: Այն նաեւ հին մարդու մահն է եւ նոր մարդու ծնունդը: Եւ, ինչպէս ֆիզիկական մահը, հոգեւոր մահը լինում է մէկ անգամ: Բացի այդ, մկրտութիւնը կնիք է, որով Քրիստոսի պատկերը դրոշմւում է մկրտուողի հոգու վրայ: Այս կնիքը, որքան էլ մոռացութեան մատնուի, պահպանւում է՝ կնքուածի մասին դէմ կամ կողմ վկայելու համար»: Այս բոլոր պատճառներով մկրտութիւնը պէտք է կատարուի կեանքում մէկ անգամ: Նիկիական հայրերը, լսելով այս հիմնաւորումը, միաձայն ընդունեցին այն:

բ) **Քահանաների ամուսնութիւնը**. որոշ հոգեւորականներ առաջարկել էին, որ կուսակրօնութիւնը պարտադիր լինի բոլոր քահանաների համար: Աբբա Պափնոտիոսը՝ Թիբայեդի եպիսկոպոսը, ասաց հետեւեալը. «Առաքեալների մէջ կային ե՛ւ ամուսնացեալներ, ե՛ւ կուսակրօններ: Կանչուածներից նրանք, որոնք ամուսնացած էին, շարունակեցին մնալ ամուսնացած, իսկ կուսակրօնները մնացին կուսակրօն: Ուստի մենք հետեւում ենք առաքելական օրինակին՝ յայտարարելով, որ ամուսնանալ ցանկացողը պէտք է ամուսնանայ մինչեւ ձեռնադրուելը: Կուսակրօն ձեռնադրուելուց յետոյ նա պիտի մնայ կուսակրօն: Ուրեմն եկէք չպարտադրենք մի լուծ, որն անտանելի է շատերի համար»: Քանի որ աբբա Պափնոտիոսն անբասիր վանականի համբաւ ունէր, որը Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ կորցրել էր իր աջ աչքը եւ ձախ ոտքը, ուստի ժողովը յարգանքով ունկնդրեց նրան եւ միաձայն ընդունեց այդ կարծիքը:

գ) **Զատկի օրը**. առաջին դարերում Զատիկը պէտք է տօնուէր հրէական Զատկից յետոյ: Դա հիմնականում պայմանաւորուած էր հոգեւոր եւ պատմական պատճառներով: Հոգեւորն այն էր, որ Քրիստոս մարգարէութիւններում դիտւում էր որպէս զատկական Գառ եւ այդպէս էր հռչակուել Յովհաննէս Մկրտչի կողմից. «Ահա՛ Աստուծոյ Գառը, որ պիտի վերցնի աշխարհի մեղքը»[4]: Իսկ պատմական պատ-

4 Յովհ. Ա 28

ճառն այն էր, որ մեր Տիրոջ խաչելութիւնը տեղի ունեցաւ այն բանից յետոյ, երբ Նա Իր առաքեալների հետ կերել էր զատկական ընթրիքը: Սակայն խնդիրն այն է, որ հրէական օրացոյցը լուսնային է, եւ Զատկի օրը նշելու համար հրեաներն այն տօնում էին իրենց բերքի առաջին պտղի՝ երախայրիքի զոհաբերման ժամանակ[5], այսինքն՝ ապրիլ եւ մայիս ամիսների առաջին շաբաթների միջեւ ընկած ժամանակահատուածում:

Եգիպտացիների համար այս խնդիրը լուծելու նպատակով աբբա Դեմետրիուս Խաղողագործը հաշուարկեց էպակտը, ըստ որի՝ Զատիկը տօնւում էր ապրիլի առաջին շաբաթուայ եւ մայիսի առաջին շաբաթուայ միջեւ եւ միշտ՝ հրէական Զատկի տօնից յետոյ: Նիկիայում քննարկուեց նաեւ այս հարցը: Ժողովական հայրերն ընդունեցին էպակտը, որը շարունակեց գործել մինչեւ 1582 թուականը բոլոր Եկեղեցիների համար:

2. **Մակեդոնականութիւն**. սկզբնաւորուել է Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Մակեդոնի կողմից: Այն մերժում էր Սուրբ Հոգու Աստուածութիւնը: Այդ հերձուածը հերքելու նպատակով Թէոդոսիուս Ա-ը 381 թուականին գումարեց երկրորդ տիեզերական ժողովը: Հարցի քննարկումից յետոյ ժողովական եպիսկոպոսները Հաւատոյ հանգանակին աւելացրին վերջին կէտը: Հաստատելով Սուրբ Հոգու համագոյութիւնը Հօրը եւ Որդուն՝ երկրորդ տիեզերական ժողովն արտաքսեց Մակեդոնին իր հերձուածի մէջ յամառելու պատճառով:

3. **Նեստորականութիւն**. այս հերձուածը տարածւում էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Նեստորի կողմից: Քանի որ Հաւատոյ հանգանակն առաւելագոյն յստակութեամբ հռչակում էր, որ Քրիստոս մարմնացած Աստուած է, ուստի Նեստորը չէր կարող մերժել Նրա Աստուածութիւնը եւ ասում էր, թէ Քրիստոս մարդացեալ Աստուած չէ, այլ Աստուած է եւ մարդ, եւ քանի որ Աստուածութիւնն անհաղորդ է չարչարանքներին, ուրեմն Խաչեալը մարդ էր՝ Աստծուց առանձին:

Եկեղեցին միանշանակ հերձուած յայտարարեց այս տեսակէտը, եւ Թէոդոսիուս Բ կայսեր վճռով 431 թուականին Եփեսոսում գումարուեց երրորդ տիեզերական ժողովը, որին մասնակցում էին երկու հա-

5 Ղեւ. ԻԳ 11-12

րիւր եպիսկոպոսներ: Ժողովի նախագահ ընտրուեց Կիւրեղ Աղեքսանդրացին: Ջանալով մեկնաբանել մարմնացեալ Բանի միեղինութիւնը՝ նա տուեց հետեւեալ բացատրութիւնը. «Երբ դարբինը երկաթից որեւէ բան է կռում, սպիտակելու աստիճան տաքացնում է այն եւ յետոյ միայն կռում՝ տալով իր ուզած ձեւը: Մեր Տիրոջ Աստուածութեան եւ մարդեղութեան միութիւնը կարելի է նմանեցնել կրակի եւ երկաթի միութեանը: Որովհետեւ չնայած կրակը եւ երկաթը միացած են, սակայն նրանցից ոչ մէկը չի փոխւում, չի խառնւում եւ կամ հալուելով չի փոխարկւում միւսին: Դարբինը մուրճով կռում է երկաթը, քանի դեռ երկաթը եւ կրակը միացած են: Ճիշտ է, կրակը միացած է երկաթին, սակայն չի զգում մուրճի հարուածները: Ճիշտ նոյն կերպ էլ մեր Փրկչի Աստուածութիւնը նման է կրակին, իսկ մարդեղութիւնը՝ երկաթին. ծեծուեց եւ մտրակուեց աստուածայինին միացած մարդկայինը, մինչդեռ աստուածայինն ամենեւին չարիւնոտուեց ու չքրտնեց: Աստուածայինի ու մարդկայինի միութիւնը սկսուեց ս. Կոյսի որովայնից եւ շարունակւում է մինչեւ յաւերժութիւն, քանի որ Քրիստոս երկինք բարձրացաւ Իր Մարմնով»:

Այս պարզաբանումից յետոյ աբբա Կիւրեղ Ա-ը ձեւակերպեց Հաւատոյ հանգանակի ներածութիւնը, որն ընդունուեց միաձայն:

*4. **Եւտիքէսականութիւն.** աւելի քան տասնհինգ տարի անց դատապարտուեց Եւտիքէսը՝ Կոստանդնուպոլսի վանքերից մէկի վանահայրը, որ մերժում էր Քրիստոսի մարդեղութիւնը՝ ասելով, թէ Նրա մարմինը եթերային է: Նա դատապարտուեց եւ Եկեղեցուց արտաքսուեց մի տեղական ժողովի որոշումով, որի նախագահողը Կոստանդնուպոլսի Փլաբիանոս եպիսկոպոսն էր:*

Ժողովի ընթացքում Հռոմի Լեւոն Ա պապից ստացուեց մի նամակ՝ յայտնի «Լեւոնի տումարը», որը մարմնացած Բանի նկատմամբ հաւատի արտայայտութիւն էր: Սակայն նամակի ձեւակերպումից, ինչպէս եւ Եւտիքէսի դէմ ուղղուած դատավճռից նեստորականութեան հոտ էր փչում: Սա յարուցեց Կոստանդնուպոլսի հասարակ ժողովրդի զայրոյթը: Եւ Եւտիքէսը, լինելով վարպետ խաբեբայ, օգտուեց այս առիթից՝ պնդելով, թէ ինքն անմեղ է, եւ խնդրանքով դիմեց Թէոդոսիոս Բ կայսերը, որպէսզի սա հրաւիրի միւս Եկեղեցիների եպիսկոպոսներին իր դատավճիռը վերանայելու համար: Կայսրը համաձայնեց եւ Եփեսոսում 448 թուականին ժողով հրաւիրեց, որը պէտք է

գործէր իբրեւ վճռաբեկ ատեան: Նախագահներ էին նշանակուած Ալեքսանդրիայի պատրիարք Դիոսկորոսը, Երուսաղէմի եպիսկոպոս Իվենալը եւ Անտիոքի եպիսկոպոս Դոմնուսը: Հաւաքուած հարիւր երեսուն եպիսկոպոսներին Եւտիքէսը ներկայացրեց իր Հաւատի խոստովանութիւնը՝ գրուած եւ արտագրուած իր ձեռքով: Ժողովը որոշեց, որ այն լիովին համապատասխանում է Նիկիայի հայրերի ընդունած եւ Կոստանդնուպոլսի ու Եփեսոսի հայրերի վաւերացրած Հաւատոյ հանգանակին եւ միաձայն արդարացրեց Եւտիքէսին: Փլաբիանոսը եւ նրա համախոհներն արտաքսուեցին: Կոստանդնուպոլսի եպիսկոպոս ընտրուեց Անատոլիուս վանականը, որը մինչ այդ սարկաւագ էր Ալեքսանդրիայում:

Թէոդոսիոս կայսրը մահացաւ անժառանգ: Նրա աւագ քոյրը՝ Պուլքերիան, իշխանութեան տենչ ունէր եւ այնքան նախանձախնդիր էր հօր գահի նկատմամբ, որ կուսակրօնութեան ուխտ արեց՝ նոյնը պարտադրելով նաեւ կրտսեր քոյրերին, որպէսզի նրանցից որեւէ մէկի ամուսինը ապօրինաբար չզաւթի իր եղբայրների օրինական գահը: Երբ, չնայած նրա ջանքերին, եղբայրը ժառանգ չունեցաւ, նա հրաժարուեց իր ուխտից եւ ամուսնացաւ Մարկիանոսի հետ՝ նրան գահակից դարձնելով իրեն: Քրիստոնեայ բոլոր եպիսկոպոսների մէջ նա չկարողացաւ գտնել մէկին, որն օրինականացնէր այս ամուսնութիւնը, բացի Հռոմի Լեւոն Ա պապից, որն այսպիսով դարձաւ ընտանիքի բարեկամը: Միաժամանակ նա անմիտ նախանձ ունէր Ալեքսանդրիայի պատրիարքի ունեցած իշխանութեան հանդէպ: Եւ Մարկիանոս կայսրը 451 թուականին ժողով հրաւիրեց Քաղկեդոնում: Ջանդրադառնալով այն կեղծիքներին ու խարդաւանքներին, որոնք յանգեցրին Տիեզերական Եկեղեցու առաջին պառակտմանը, ասենք, որ կայսրուհի Պուլքերիային եւ նրա համախոհներին յաջողուեց Մարկիանոս կայսերը վաւերացնել տալ քաղկեդոնականների կողմից հրատարակուած մի վճիռ՝ աբբա Դիոսկորոսին աքսորելու մասին, որն այսպիսով վտարուեց Փոքր Ասիայի Գանգրա կղզին:

Զբաւարարուելով այս անարդարութեամբ՝ կայսրը դաժան հալածանքներ սանձազերծեց ընդդէմ Ղպտի Եկեղեցու: Հաւատացեալների անյողդողդ կամքին հանդիպելով՝ նրանք ոչ միայն չարչարեցին ս. Մարկոսի հօտը, այլեւ խաբէութեամբ նրա աթոռին բազմեցրին իրենց դրածոներին: Աւելին՝ ամբաստանեցին Ալեքսանդրիայի պատրիարք-

ներին՝ նրանց ներկայացնելով իբրեւ եւտիքէսականների: Դեռեւս Քաղկեդոնի ժողովի առաջին նիստում, երբ աբբա Դիոսկորոսին հարցրին, թէ ինչպիսին կլինէր նրա վճիռը՝ կապուած Եւտիքէսի հետ, եթէ նա մերժէր Եփեսոսում ներկայացրած Հաւատի խոստովանութիւնը, նա անմիջապէս զօրաւոր մի պատասխան տուեց. «Եթէ Եւտիքէսը մերժել է իր իսկ ձեռքով գրուած Ուղղափառ դաւանանքը եւ շեղուել Եկեղեցու ուսուցումներից, ապա նա ոչ միայն պէտք է արտաքսուի, այլեւ պէտք է այրուի»: Չնայած այս վճռորոշ արտայայտութեան շեշտադրութեանը, աբբա Դիոսկորոսը իր յաջորդների եւ իր Եկեղեցու հետ միասին հերձուածող է համարւում անգամ բարի համարում ունեցող քրիստոնեաների կողմից, որոնք անտեղեակ են այս փաստերին: Սակայն անհերքելի է, որ ղպտիներն ուղղափառ են իրենց Եկեղեցու հիմնադրման օրից ի վեր:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ղպտի Եկեղեցու խորհուրդները եօթն են.

1. **Մկրտութիւն.** սա մարդու հոգեւոր ծնունդն է: Խորհրդի տեսանելի նշանը ջուրն է: Ղպտի Եկեղեցին հրահանգում է մանուկների մկրտութիւնը կատարել ամբողջովին ընկղմելով: Մկրտուողը պիտի ունենայ կնքահայր (կամ կնքամայր), որը խոստում է տալիս երեխային դաստիարակել քրիստոնէական սկզբունքներով: Ղպտի Եկեղեցու կողմից ընդունուած մկրտութիւնը կատարւում է ձեռնադրուած քահանայի կողմից, յատուկ ծէսով: Գոյութիւն ունի նաեւ մկրտութիւն արեամբ, երբ յանուն Քրիստոսի մարտիրոսուածը, առանց մկրտուած լինելու, համարւում է Եկեղեցու անդամ. իր արեան հեղումը նրա համար դառնում է մկրտութիւն:

2. **Դրոշմ.** սրա շնորհիւ Սուրբ Հոգին բնակւում է մկրտուողի հոգում: Սրա տեսանելի նշանը յատուկ համեմունքների եւ ձիթապտղի իւղի խառնուրդն է, որը կոչւում է միւռոն: Նրանով առաջին անգամ օծուել է Փրկչի մեռած մարմինը: Նրա հրաշափառ Յարութիւնից յետոյ միւռոնի բաղադրութիւնը կազմող համեմունքները բաժանուեցին առաքեալների միջեւ: Սկզբնական շրջանում նրանք ձեռք էին դնում մկրտուողի գլխին, որն այսպիսով ստանում էր Սուրբ Հոգին: Իսկ երբ հաւատացեալների թիւն աճեց, եւ մարդիկ ձեռնադրուեցին, ձեռքը

դնելուն սկսեց փոխարինել միւռոնը:

Ս. Մարկոսն իր բաժին միւռոնը բերեց Եգիպտոս: Սերնդէսնրունդ, նրա քանակը նուազելիս, պատրիարքը եպիսկոպոսների հետ միասին հայթայթում է անհրաժեշտ համեմունքներն ու ձիթապտղի իւղը եւ կատարում սրբագործման ծէսը՝ նախորդից մնացած մասն օգտագործելով որպէս մերան: Այս ծիսակատարութիւնը կոչւում է միւռոնի եփում:

Ղպտի Եկեղեցին, հետեւելով առաքեալների օրինակին, դրոշմի խորհուրդը կատարում է մկրտուողին աւազանից հանելուց եւ չորացնելուց անմիջապէս յետոյ: Եւ ինչպէս որ երեխան մօր որովայնից դուրս գալուց յետոյ պէտք է անմիջապէս շնչի, այլապէս կմեռնի, այդպէս էլ նոր ծնուած հոգին պիտի շնչի հոգեւոր օդը, որը հնարաւոր է միայն Սուրբ Հոգով: Այս պատճառով դրոշմն անմիջապէս հետեւում է մկրտութեանը:

3. **Հաղորդութիւն.** սա խորհուրդների խորհուրդն է, քանի որ նրա կատարման ընթացքում տեսանելի նշանը՝ հացը եւ գինին, խորհրդականապէս դառնում են Յիսուսի Մարմինը եւ Արիւնը: Հաղորդուողը նախ ճաշակում է Մարմինը, այնուհետեւ՝ Արիւնը: Իսկ մկրտուած եւ դրոշմուած մանկանը տրւում է միայն Արիւնից. նա չի ճաշակում Մարմնից մինչեւ ծամել կարողանալը եւ հաղորդւում է անգամ մանուկ հասակում, որովհետեւ դարձել է Քրիստոսի Մարմնի անդամը եւ, որպէս այդպիսին, պէտք է հնարաւորութիւն ունենայ շնչելու հոգեւոր օդը:

Ուշագրաւ է, որ հաղորդութիւնից յետոյ ղպտի հաւատացեալը ո՛չ երկրպագում է, ո՛չ ծնրադրում, ո՛չ էլ խոնարհւում, քանզի իր մէջ կրում է Քրիստոսին:

4. **Խոստովանութիւն եւ ապաշխարութիւն.** քանի որ մարդկային բնութիւնը հակուած է մոլորութեան, ապա խոստովանութիւնն այն միջոցն է, որով մկրտուածը կարող է մեղքերի թողութիւն ստանալ: Խոստովանութիւնը մարդու ամենադժուար պարտաւորութիւններից է, որովհետեւ սեփական անձի մեղաւորութիւնն ընդունելու համար անհրաժեշտ է խոնարհութիւն, որը շատերը չունեն: Ղպտի Եկեղեցում խոստովանութիւնը կոչւում է հոգեւոր բժշկութիւն, իսկ խոստովանահայրը՝ հոգեւոր բժիշկ: Ուստի իւրաքանչիւր անձ իր խոստովանահօրն

ընտրում է այնպէս, ինչպէս կընտրէր իր մարմնի բժշկին: Խոստովանութիւնը մեղքերի պարզ շարադրանք չէ. նրա նպատակն է, որ խոստովանողն առաւել ճիշտ ուղղութիւն եւ առաջնորդութիւն ստանայ խոստովանահօր կողմից: Խոստովանահայր կարող են լինել քահանաները:

5. **Օծում.** այս աղօթքը երգւում է իւղի վրայ, որով օծւում է հաւատացեալը: Այն կազմուած է ս. Յակոբի խօսքերից. «Ձեզանից մէկը հիւա՞նդ է, թող կանչի Եկեղեցու երէցներին, եւ նրանք նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատով եղած աղօթքը կփրկի հիւանդին, եւ Տէրը նրան ոտքի կկանգնեցնի: Եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի»[6]: Ամէն տարի Աւագ շաբաթին նախորդող ուրբաթ օրը Եկեղեցին կատարում է այս ծէսը, որի աւարտից յետոյ ներկաները մօտենում եւ օծւում են պաշտօնակատար քահանայի կողմից:

6. **Պսակ.** ամուսնութիւնը Աստուծոյ կողմից հաստատուած օրէնք է: Այն սրբազան կապ է, որը խորհրդանշում է Քրիստոսի միութիւնը Իր Եկեղեցու հետ՝ ըստ այս խօսքի. «Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի»[7]: Ուստի ամուսնութիւնը տղամարդու եւ կնոջ միջեւ անքակտելի է եւ պէտք է լինի ապահով ու յարատեւ: Պսակի տեսանելի նշանը ծէսն է: Արարողութեան վերջում քահանան, դիմելով հարսին եւ փեսային, ասում է. «Այս սուրբ ամուսնութիւնը ձեզ միաւորում է Աստուծոյ սեղանի առջեւ»:

7. **Սուրբ ձեռնադրութիւն.** մեր օրհնեալ Փրկիչն Իր առաքեալների միջոցով հաստատեց քահանայութեան կարգը: Քահանայութիւնն ունի նուիրապետութեան երեք աստիճան՝ ըստ երկնային քահանայապետութեան: Դրանք են՝ եպիսկոպոսութիւն (եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, պատրիարքներ), քահանայութիւն (քահանաներ, աւագ քահանաներ), սարկաւագութիւն (սարկաւագներ, դպիրներ, երգողներ):

Ձեռնադրութեան կարգի տեսանելի մասը ձեռքը գլխին դնելն է եւ յայտնի աղօթքները Աստուածաշնչից եւ առաքելական կանոններից: Իսկ աներեւոյթն այն է, որ ձեռնադրուողը կնքւում է անջնջելի

6 Յակ. Ե 14-15
7 Մատթ. ԺԹ 6

նշանով, որը պահպանւում է նրա ողջ կեանքի ընթացքում, ինչպէս նաեւ նրան պարգեււում է Աստուծոյ շնորհը, որը բաւարար է՝ կատարելու այն ծառայութիւնը, ինչին նա կոչուած է:

Առաջին վեց խորհուրդները կատարւում են եպիսկոպոսների եւ քահանաների կողմից, իսկ եօթերորդը՝ միայն եպիսկոպոսների. ընդորում, քահանայ ձեռնադրելու համար բաւական է մէկ եպիսկոպոսը, իսկ եպիսկոպոսի ձեռնադրութեան համար անհրաժեշտ են երկուսը:

Ղպտի Եկեղեցին հաւատում է, որ Մարիամը մշտնջենական Կոյս է, ինչպէս գրուած է Սուրբ Գրքում: Տիրամօր Վերափոխումը տօնւում է օգոստոսի 22-ին: Ղպտի հայրերը առաջինն էին, որ օրհնեալ Կոյսի հանդէպ իրենց մեծարանքն արտայայտեցին՝ նրան անուանելով Աստուածամայր: Աւելին՝ նրան կոչեցին նաեւ Լուսոյ Մայր, Մայր Ողորմութեան, Մայր Շնորհի, Նաւ Ապահովութեան...

ՄԱՍ Գ
ԳՈՐԾՆԱԿԱՆԸ

ԱՂՕԹՔ

Ղպտի Եկեղեցին ի սկզբանէ եղել եւ մնում է աղօթքի Եկեղեցի: Հակումը միստիցիզմի նկատմամբ, որ այնքան շեշտուած է եգիպտացիների մօտ, իր վառ արտայայտութիւնն է գտել քրիստոնէութեան մէջ: Այստեղից են սկիզբ առնում նուիրումի, պաշտամունքի, երախտագիտութեան, առհասարակ աղօթքի բազում արահետները, որոնցով ընթացել են սուրբ հայրերը:

Դրանց բարձրագոյն արտայայտութիւնը պատարագն է՝ այն ծէսը, որի միջոցով Սուրբ Հոգին իջնում է հացի եւ գինու վրայ՝ դրանք փոխարկելով Քրիստոսի խորհրդական Մարմնի եւ Արեան: Համոզմունքը այս փոխակերպման իրական լինելու հանդէպ արտայայտում է պատարագիչ քահանան պատարագի վերջում՝ իր եւ ժողովրդի հաղորդուելուց անմիջապէս առաջ. «Ամէն: Ամէն: Ամէն: Ես հաւատում եմ: Ես հաւատում եմ: Ես հաւատում եմ: Եւ խոստովանում եմ մինչեւ վերջին շունչս, որ սա այն կենսատու Մարմինն է, որը Քո Միածին Որդին՝ մեր Տէրը, մեր Աստուած եւ մեր Փրկիչը, ստացել է մեր տիրու-

հուց եւ թագուհուց՝ Աստուածամօրից, սրբուհի անարատ Կոյսից: Նա այն մի է դարձրել Իր Աստուածութեան հետ՝ առանց խառնելու, միաձուլելու եւ փոփոխելու...»:

Ղպտի Եկեղեցում պահպանուած պատարագներն են.

Կիւրեղեանը. ըստ աւանդութեան՝ այն տրուել է ս. Մարկոս առաքեալի կողմից եւ շարունակել է բանաւոր փոխանցուել, մինչեւ որ աբբա Կիւրեղ Ա-ը գրառել է այն՝ բերելով այժմեան տեսքին: Այստեղից էլ գալիս է նրա անունը: Այն այնքան հոգեւոր է, որ երգւում է յատկապէս պահոց շրջանում, երբեմն էլ՝ Հոգեգալստի ժամանակ:

Գրիգորեանը. գրուել է ս. Գրիգոր Աստուածաբանի կողմից չորրորդ դարի վերջին: Այն կատարւում է տարբեր առիթներով կամ էլ պատարագիչ քահանայի ցանկութեամբ:

Բարսեղեանը. գրուել է ս. Բարսեղ Կեսարացու կողմից, որը Կապադովկիայի եպիսկոպոսն էր եւ Գրիգորի ժամանակակիցը: Սա ամենայաճախ կատարուող պատարագն է:

Ղպտի Եկեղեցում կատարուող արարողութիւններից են նաեւ.

Եօթ կանոնական ժամերը. յայտնի չէ, թէ առաջին անգամ երբ են դրանք արուել, սակայն գիտենք, որ անապատական հայրերը դեռեւս երրորդ դարում կատարել են այդ կարգը՝ տեղեկացնելով, որ դա իրենց է աւանդուել նախորդներից: Այս կարգը բաղկացած է եօթ ժամերգութիւններից, որոնք կատարւում են օրուայ որոշակի ժամերի:

1. Աւում է արեւածագին՝ ի յիշատակումն Փրկչի Յարութեան:

2. Աւում է արթնանալու ժամանակ՝ ի յիշատակումն Պիղատոսի արձակած դատավճռի, նաեւ՝ այդ ժամին առաքեալների վրայ իջած Սուրբ Հոգու:

3. Աւում է միջօրէին՝ ի յիշատակումն խաչելութեան ժամի:

4. Աւում է կէսօրից յետոյ՝ ժամը չորսին մօտ, երբ Քրիստոս Իր Հոգին աւանդեց Հօրը:

5. Աւում է երեկոյեան՝ Տիրոջ մարմինը խաչից իջեցնելու ժամին:

6. Աւում է ի յիշատակումն Քրիստոսի թաղման, ինչպէս նաեւ՝ մեր երկրային կեանքի աւարտը յիշեցնելու համար:

7. Աւում է կէսգիշերին, երեք մասով, կէս ժամով իրարից բաժանուած՝ յիշատակելու համար Փրկչի տառապանքը Գեթսէմանիում եւ աշակերտների մօտ Նրա երեք անգամ գնալը:

Եօթ ժամերգութիւններից իւրաքանչիւրը սկսւում է Տէր ունեցեալ աղօթքով, գոհութեան աղօթքով եւ ԾԱ սաղմոսով: Այնուհետեւ ասում են տասներկու ընտրովի սաղմոսներ, հատուած Աւետարանից, տուեալ ժամին վերաբերող խնդրուածքներ, «Տէր, ողորմեա»-ն (քառասունմէկ անգամ)՝ ըստ չարչարանքների ընթացքում Քրիստոսի կրած մտրակի հարուածների թուի, «Երեքսրբեան»-ը, Տէրունական աղօթքը եւ թողութեան մի աղօթք՝ դարձեալ ժամին համապատասխան, ինչպէս նաեւ՝ մի աղերս, որն ասւում է այս բոլոր աղօթքների վերջում:

Միւս ծէսն է Կիակը: Այսպէս է կոչւում ղպտիների այն ամիսը, որը վերջանում է յունուարի 8-ին: Ուստի ղպտական հաշուարկով Սուրբ Ծնունդը եղել է Kyak-ի 29-ին: Այս ամսուայ իւրաքանչիւր կիրակիի նախօրէին երգւում են աղօթքներ, որոնք հիմնականում նուիրուած են սուրբ Կոյսի մեծարմանը: Սրանք կոչւում են «եօթ եւ չորս», որովհետեւ կիրակի երեկոյեան եօթ հիմն երգւում է ի պատիւ Աստուածածնի, եւ չորսը՝ այդ շաբաթ յիշատակուող սուրբերի եւ մարտիրոսների:

ՊԱՀՔ

Հնագոյն աստուածային հրամանին եւ հետեւելով Տիրոջ օրինակին՝ Ղպտի Եկեղեցին կիրառում է պահքը հինգ պատճառներով.

1. Պահքը մարմինը ծանր կերակուրներից մաքրելու եւ որկրամոլութիւնից զերծ պահելու միջոց է:

2. Այն մարմնի ախորժակը կառավարելու, այսինքն՝ ինքնատիրապետման վարժանք է:

3. Պահքը ձգտում է վերականգնել այն վիճակը, որը Ադամն ու Եւան վայելում էին անկումից առաջ:

4. Այն հոգեւոր նախապատրաստութիւն է, որը նպաստում է առաւել մերձենալու Աստծուն: Այն մարդու՝ Աստուծոյ հանդէպ ունեցած սիրոյ արտայայտութիւնն է:

5. Այն մի միջոց է, որով քաղց կրելու շնորհիւ կարեկցում են տուեալներին:

Լինելով հոգեւոր նախապատրաստութիւն՝ պահքը միշտ նախորդում է որեւէ տօնի, որպէսզի իրապէս ապրուի տօնական հրճուանքը: Ղպտի Եկեղեցու պահքերն են.

ա) Գալստեան պահքը, որը նախորդում է Սուրբ Մնունդին (քառասուներեք օր)՝ ամբողջացրած Աստուածայայտնութեանը նախորդող երեք օրերը:

բ) Մեծ պահքը (յիսունհինգ օր)՝ Քրիստոսի պահքի քառասուն օրերը, Ամաղ շաբաթը եւ լրացուցիչ մէկ շաբաթ՝ շաբաթ օրերը պահքը լուծելու փոխարէն:

գ) Երեք օր՝ ի յիշատակ Նինուէի ապաշխարութեան[8]:

դ) Հոգեգալստին անմիջապէս հետեւող պահքը, որը կոչւում է Առաքեալների պահք, որովհետեւ առաքեալները պահք պահեցին Սուրբ Հոգով լցուելուց անմիջապէս յետոյ՝ նախապատրաստուելու համար իրենց ծառայութեանը եւ ի յիշատակ Տիրոջ պատասխանի՝ տրուած փարիսեցիներին. «Մի՞թէ կարելի է, որ հարսանքատրները ծոմ պահեն... Բայց կգան օրեր, երբ Փեսան նրանցից կվերցուի, եւ ապա այն օրը նրանք էլ ծոմ կպահեն»[9]: Այս պահքը շարժական է՝ կախուած Զատկի օրից:

ե) Սուրբ Կոյսի պահքը, որն աւարտւում է Տիրամօր Վերափոխմամբ եւ տեւում է տասնհինգ օր:

Բացի սրանցից, պահքի օրեր են տարուայ բոլոր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը (բացառութեամբ Զատկի եւ Հոգեգալստի միջեւ ընկած յիսուն օրուայ), քանզի հրեաները Յիսուսի դէմ դաւ նիւթեցին չորեքշաբթի օրը եւ Նրան խաչեցին ուրբաթ օրը:

Ղպտիների համար պահքը նշանակում է կերակուրների սահմանափակում միայն հողի բարիքներով: Ժուժկալողներն ուտում են բանջարեղէն կամ մրգեր եւ դրանք եփելիս իւղ չեն գործածում:

Ղպտի Եկեղեցում խորին յարգանք է վայելում Մեծ պահքը: Սա խոկման ժամանակահատուած է: Այն նաեւ ամբողջ օրը ժուժկալելու շրջան է, որի ընթացքում խիստ համեստ կերակուրներ են մատուցւում նոյնիսկ նրանց, ովքեր չեն կարող ժուժկալել:

8 Տե՛ս Յվն. Գ 5-10:
9 Մարկ. Բ 18-20

Մեծ պահքի նուիրաբերումների գագաթնակէտը Ամաղ շաբաթն է, որը սկսւում է Ծաղկազարդի կիրակի կէսօրից եւ աւարտւում Ամաղ ուրբաթ օրը: Այս ընթացքում եկեղեցու սիւները պատուած են լինում սեւ ժապաւէններով, իսկ քահանաներն ու սարկաւագները հագուստի վրայ կրում են մանուշակագոյն գօտիներ եւ ուրարներ: Աղօթքների հնչերանգներն արտայայտում են Եկեղեցու անասելի վիշտը Տիրոջ չարչարանքների համար: Դրանք երգւում են ամէն օր՝ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւնների ընթացքում: Պատարագ չի մատուցւում, քանզի Փրկիչը, Ում Մարմինն ու Արիւնը բաշխւում է այս ծէսի վերջում, դեռեւս Իր տառապալից չարչարանքի մէջ է, որ կամաւորապէս կրեց իբրեւ փրկագին մարդկութեան համար: Բացառութիւն է կազմում Ամաղ հինգշաբթին, երբ Փրկիչն Ինքը բաշխեց Իր Մարմինն ու Արիւնը ի քաւութիւն մեր մեղքերի:

Եթէ Մեծ պահքի գագաթնակէտը Ամաղ շաբաթն է, ապա վերջինիս բարձրակէտը Ամաղ ուրբաթն է, որը կոչւում է նաեւ Մեծ կամ Տխուր ուրբաթ: Այս օրը աղօթքներն անընդմէջ շարունակւում են առաւօտից մինչեւ երեկոյ՝ եզրափակուելով նրանով, որ Քրիստոսի մարմինը պատկերող սրբապատկերն իջեցւում է խաչի վրայից եւ, դրուելով սուրբ սեղանի վրայ, պատւում է զանազան համեմունքներով, խունկերով եւ վարդի թերթիկներով:

Փրկչի թաղման խորհրդական պահից յետոյ էլ հաւատացեալները չեն լքում Նրան, այլ ժամը 6-ին գնում են տուն, ժուժկալութեան օրերից յետոյ ուտում եւ հինգ ժամ հանգստանալուց յետոյ վերադառնում են եկեղեցի՝ կատարելու հսկման կարգը: Այս սքանչելի գիշերն ընթերցւում են բոլոր սաղմոսները, Յայտնութիւնը, Հին եւ Նոր Կտակարաններում գրուած աղօթքները, ինչպէս նաեւ Դանիէլի մարգարէութիւնից այն հատուածը, ուր պատմւում է Երեք մանկանց պատմութիւնը: Այս ամէնն ուղեկցւում է գովաբանութիւններով եւ փառաբանական աղօթքներով: Գիշերային հսկումն աւարտւում է պատարագով, որը վերջանում է առաւօտեան եօթին մօտ:

Ղպտի Եկեղեցին երբէք չի երգում միայն տխուր կամ միայն ուրախ մեղեդիներ, այլ խորին վշտի պահին անգամ հնչեցնում է ուրախ մի նոտա, իսկ գերագոյն հրճուանքն արտայայտելիս ներմուծում է տխուր մի շնչա: Այսպէս, Ամաղ շաբաթուայ չափազանց տխուր մեղեդիներն ընդմիջւում են ցնծութեան նոտաներով: Եւ շաբաթ օրն էլ, երբ

Եկեղեցին հսկում է կատարում իր թաղուած Տիրոջ գերեզմանի մօտ, կոչւում է Ցնծութեան շաբաթ:

Ինչ վերաբերում է Զատկի արարողութեանը, ապա այն սկսւում է երեկոյեան ժամը եօթին եւ աւարտւում կէսգիշերից յետոյ՝ երկուսին մօտ: Այստեղ Եկեղեցին ամբողջովին արտայայտում է իր ցնծութիւնն ու հրճուանքը: Եւ յետագայ յիսուն օրերի ընթացքում, մինչեւ Հոգեգալուստ, զպտիների աւանդական ողջոյնի ձեւն է «Քրիստոս անեսթի: Ալթոս անեսթի» («Քրիստոս յարեաւ: Իսկապէս յարեաւ»): Այնքան մեծ է Յարութեան ուրախութիւնը, որ այդ շրջանում պահք չի լինում անգամ չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին:

Հոգեգալստեան կիրակի երեկոյեան երգւում են յատուկ «Մնաղրութեան աղօթքներ», որոնք երախտիքի ու փառաբանական աղօթքների հետ մէկտեղ ներառում են մի աղօթք հանգուցեալների համար: Ի դէպ, հանգուցեալները յիշատակւում են նաեւ Մնդեղեան արարողութեան եւ պսակադրութեան ծէսի ժամանակ: Սա նշանակում է, որ Յաղթանակած Եկեղեցին սերտօրէն կապուած է Մարտնչող Եկեղեցու հետ, քանզի, ինչպէս սուրբերն են բնորոշել, Եկեղեցին նման է բանակի, որի առաջապահները Աստուծոյ առջեւ են կանգնած, իսկ թիկունքը այս երկրի վրայ է:

Զպտի Եկեղեցին աղօթքը եւ պահքը զուգակցում է Սուրբ Գրքի ընթերցանութեան հետ: Հաւատացեալներն Աստուածաշունչն ընթերցում են ամէն առաւօտ ու երեկոյ կամ առնուազն օրական մէկ անգամ: Նրանց մօտ ընդունուած է նաեւ տանն առանձնացնել մի անկիւն, ուր կախւում է որեւէ սրբապատկեր՝ դիմացը վառուող կանթեղով: Այն կոչուած է ընտանիքի անդամներին օրուայ ընթացքում խորհրդածութեան մղելու եւ մշտապէս յիշեցնելու հոգեւոր աշխարհի մասին:

Մէկ այլ աւանդոյթ է ազապէն կամ սիրոյ ճաշը: Այն խիստ տարածուած էր վաղ շրջանում, ապա դադարեց գործել մեծ քաղաքներում, սակայն գոյատեւեց գիւղերում եւ աւաններում: Այժմ այն վերստին կիրառւում է քաղաքներում, բայց միայն՝ Մեծ պահքի ընթացքում: Ըստ այս սովորութեան՝ քանի որ մարդիկ Եկեղեցի են գնում առանց նախաճաշելու, ուստի նախապէս պայմանաւորւում են, որ մէկ կամ մի քանի ընտանիք հոգայ պատարագից յետոյ համայնքի սնուելու հարցը: Դա իրականացւում է հերթով: Ճաշը մատուցւում է եկեղեցուն կից սրահում կամ սենեակում, եւ քանի որ ողջ համայնքն

է մասնակցում, կոչւում է սիրոյ ճաշ:

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին դարում, երբ քրիստոնեաներին չէր թոյլատրւում աղօթել եկեղեցիներում, նրանք աղօթում էին գերեզմանոցներում՝ սրանով հեթանոսներին յայտնելով, որ ննջեցեալները տակաւին կենդանի են, թէպէտեւ անտեսանելի են: Ննջեցեալներին նրանք անուանում էին Յաղթանակած Եկեղեցի, իսկ նրանց, ովքեր դեռեւս այստեղ են՝ Մարտնչող Եկեղեցի: Այս հաստատուն համոզմունքը հաւատացեալներին մղում էր հայցելու սուրբերի բարեխօսութիւնը եւ աղօթելու հանգուցեալների համար:

Բարեխօսութիւնը սուրբերի սիրոյ արտայայտութիւնն է: Զպտի հաւատացեալը խորհում է, որ եթէ երկրի վրայ իրար սիրելու շնորհիւ մարդիկ աղօթում են միմեանց համար, եւ եթէ պէտք է բարեխօսել նրանց համար, ովքեր տակաւին գտնւում են մարմնի կապանքներում, ուրեմն որքա՞ն առաւել ընդունելի կլինի աղօթքը ազատ հոգիների համար: Եւ եթէ բարեխօսութիւնը գործում է նրանց համար, ովքեր տակաւին ենթակայ են գայթակղութեան ու փորձութիւնների, ապա որքա՞ն արդիւնաւէտ կլինի այն կատարելութեան հասած հոգիների համար[10]: Ուստի պատարագի ընթացքում աղօթքներ են մատուցւում ոչ միայն մեղաւորների, այլեւ սուրբերի համար:

Բարեխօսութեան հանդէպ նման հաւատով է, անշուշտ, պայմանաւորուած եւ յարգանքը սրբապատկերների նկատմամբ: Որեւէ սուրբի կամ մարտիրոսի սրբապատկերը համարւում է նրա հոգու ներկայութեան առհաւատչեան, որը մարդու հայեացքը երկրայինից բարձրացնում է դէպի երկնայինը: Այսպէս Եկեղեցին, ճգտելով իր զաւակներին առաջնորդել դէպի հոգեւոր բարձունքներ, պատուիրում է Գործք առաքելոցի ընթերցումից յետոյ կարդալ սուրբերի եւ մարտիրոսների վարքերը, որոնք հաւաքուած են Յայսմաւուրքում: Տարուայ իւրաքանչիւր օր ունի իր սուրբը կամ մարտիրոսը, որի անունը կրող եկեղեցում նրա յիշատակման օրը պատարագ է մատուցւում: Որոշ յիշատակումներ նշւում են մեծ հանդիսութեամբ, ինչպէս օրինակ՝ այն օրը,

10 Տե՛ս Եբր. ԺԲ 23:

երբ սուրբ ընտանիքը, Հերովդէսի բարկութիւնից խոյս տալով, ոտք դրեց եգիպտական հողի վրայ, նաեւ՝ ս. Մարկոս առաքեալի մարտիրոսութեան օրը:

Ղպտի Եկեղեցում ընդունուած է պատարագ մատուցել հաւատացեալների պատուէրով՝ ընտանիքի որեւէ մահացած անդամի անուան յիշատակութեան նպատակով: Այս պատարագը, որը կոչւում է մասնաւոր պատարագ, կատարւում է, երբ եկեղեցին ազատ է, եւ ներկայ են միայն այդ ընտանիքի անդամներն ու բարեկամները: Նման պատարագ կարող է մատուցուել նաեւ հարսի եւ փեսայի համար նախքան նրանց պսակադրութիւնը՝ համատեղ կեանքը սկսելուց առաջ յաւելեալ շնորհ ստանալու նպատակով, ինչպէս նաեւ՝ նրանց համար, ովքեր պատրաստւում են քննութիւն յանձնել, վիրահատուել, մեկնել երկարատեւ ճամփորդութեան, նոր աշխատանքի անցնել եւ այլն: Այսպիսով, հոգեւոր յատուկ սնունդի կարիք ունենալու դէպքում բաւական է, որ հաւատացեալը գնայ քահանայի մօտ եւ պայմանաւորուի մասնաւոր պատարագի օրուայ եւ ժամի համար:

ՄԱՍ Դ
ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ինչպէս նշուեց, Ղպտի Եկեղեցին ունի նուիրապետութեան սուրբ կարգի երեք աստիճան՝ եպիսկոպոսութիւն, քահանայութիւն եւ սարկաւագութիւն: Պատրիարքը եպիսկոպոսներից մէկն է, բայց քանի որ մայրաքաղաքի եպիսկոպոսն է եւ ս. Մարկոսի ժառանգորդը, նրան նախապատուութիւն է տրւում որպէս աւագ եղբօր:

Եկեղեցու ամենավաղ օրէնքների եւ կանոնների համաձայն՝ եպիսկոպոսները, ինչպէս նաեւ սուրբ կարգի միւս անդամներն ընտրւում են նրանց կողմից, ում պիտի առաջնորդեն: Սարկաւագների ու քահանաների ընտրութիւնը բնականաբար սահմանափակւում է նրանց սեփական ծխով, եպիսկոպոսներինը՝ իրենց թեմերով, իսկ պատրիարքն ընտրւում է ընդհանուր քուէարկութեամբ: Սուրբ կարգի աստիճաններում տեղափոխութիւնը կամ պաշտօնից հրաժարուելը բացառւում է: Հնարաւոր է միայն, որ քահանան դառնայ աւագ քահանայ, իսկ սարկաւագը՝ աւագ սարկաւագ. սակայն սա տեղի է ունենում ծխի ներ-

սում, այնպէս որ հոգեւորականները անփոփոխ մնում են ծառայելու իրենց համայնքին: Իսկ եպիսկոպոսները կոչուած են ծառայելու ժողովրդին իրենց ողջ կեանքի ընթացքում: Եպիսկոպոսութեան անփոփոխ մնալը պայմանաւորուած է առաքելական աւանդոյթների հանդէպ Ղպտի Եկեղեցու հաւատարմութեամբ[11]:

Երբ ս. Մարկոսի աթոռի ժառանգորդը հեռանում է կեանքից, եպիսկոպոսներն ու աշխարհիկ առաջնորդները խորհուրդ են հրաւիրում եւ վանականների միջից ընտրում նրանց, ում առաւել արժանի են համարում օգոստոսափառ այդ աթոռին: Թեկնածուների թիւը պէտք է լինի երեքից մինչեւ տասնմէկ: Ընտրութիւնը կատարւում է քուէարկութեան միջոցով՝ ձայների մեծամասնութեամբ: Սա ընդունուած կարգն է, սակայն եղել են նաեւ որոշ բացառութիւններ:

Ղպտի Եկեղեցին գտնում է, որ մարդը, ինչ հոգեւոր բարձունքի էլ հասնի, անսխալական չէ: Ուստի Եկեղեցու բարձրագոյն իշխանութիւնը եպիսկոպոսների ժողովն է, որը պէտք է խորհրդակցի աշխարհիկ առաջնորդների հետ, որպէսզի կառավարելու ընթացքում որեւէ անհատի տեսակէտ գերիշխող չդառնայ: Եւ խնդիրները քննարկելիս յաղթում է մեծամասնութեան տեսակէտը, անգամ եթէ պատրիարքը փոքրամասնութեան մէջ է: Նրա միակ արտօնութիւնն այն է, որ երբ ժողովականների ձայները կիսւում են, նա ստանում է երկու ձայնի իրաւունք:

Ղպտի աշխարհականներն ակտիւօրէն մասնակցում են Եկեղեցու կեանքին: Այսպէս՝ եպիսկոպոսութիւններին կից, ինչպէս նաեւ պատրիարքարանում գործում են սոցիալական ծառայութիւններ՝ հիւանդներին եւ ծերերին խնամելու, գործազուրկներին աշխատանք հայթայթելու, արուեստի եւ արհեստի կենտրոնները ղեկավարելու, եպիսկոպոսի բոլոր յանձնարարութիւնները կատարելու համար: Իսկ ծխերում քահանան ունի իր սարկաւագը եւ աշխարհիկ ծառայութեան օգնականները՝ Եկեղեցու տարբեր հոգսերը հոգալու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ղպտի Եկեղեցու նշանաւոր ուսումնական հաստատութիւններից է

11 Տե՛ս Գործ. Ա 15-26:

Աստուածաբանական ճեմարանը, որը վերաբացուեց աբբա Կիւրեղ Ե-ի՝ 112-րդ պատրիարքի կողմից: Մինչեւ 1953 թուականը այն գտնուում էր Կահիրէի ամենաաղքատ արուարձաններից մէկում: Մէկ տարի անց բացուեց Ղպտական հետազօտութիւնների բարձրագոյն ինստիտուտը: Այս երկու հաստատութիւնների տարբերութիւնն այն է, որ ճեմարանում ուսուցանում են միայն ապագայ հոգեւորականներին, իսկ ինստիտուտում կարող են սովորել նրանք, ովքեր ցանկանում են հետազօտել ղպտի ժողովրդի ժառանգութիւնը:

Ճեմարանը բաղկացած է երկու դպրոցից՝ ցերեկային, ուր դիմորդներն ընդունւում են երկրորդական դպրոցի վկայականով (համազօր է բարձրագոյն ուսումնական հաստատութիւն ընդունուելուն), եւ երեկոյեան, որի ուսանողները համալսարանի շրջանաւարտներ են: Ճեմարանի մի ճիւղ է Դիդիմուսի դպրանոցը, որտեղ ուսանում են դպիրները:

Ղպտական հետազօտութիւնների բարձրագոյն ինստիտուտում ուսումնասիրւում են երաժշտութիւն, ղպտերէն, Ղպտի Եկեղեցու պատմութիւն, արուեստ (խճանկարչութիւն, ապակեգործութիւն, քանդակ եւ արհեստներ), իրաւունք, աստուածաբանութիւն, հասարակագիտութիւն, լուսանկարչութիւն, ինչպէս նաեւ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն:

Հին Կահիրէում երկու ամենահին եւ նուիրական եկեղեցիների՝ Օրհնեալ Կոյսի եւ Աբու Սերգանի միջեւ է գտնւում Ղպտական թանգարանը: Նրան կից, գրադարանից բացի, կան նաեւ երկու մայր գրադարաններ Ալեքսանդրիայում եւ Կահիրէում: Միեւնոյն ժամանակ իւրաքանչիւր վանք կամ կուսանոց ունի իր գրադարանը:

Ցայտնի է "La Sosiété de l'Archéologie Copte" ընկերութիւնը, որը հիմնադրուել է 1932 թ. եւ զբաղւում է գրքերի հրատարակչութեամբ, կազմակերպում սեմինարներ եւ դասախօսութիւններ: Ունի պատկառելի գրադարան:

Աբբա Կիւրեղ Ե-ի ժամանակներից ի վեր Ղպտի Եկեղեցում գործել են կիրակնօրեայ դպրոցներ, որոնք այժմ տարածուած են Ալեքսանդրիայից մինչեւ Ասուան՝ ընդգրկելով նաեւ գիւղերը: Դրանք յայտնի են որպէս հոգեւոր կրթօջախներ եւ գործում են ուրբաթ եւ կիրակի օրերին: Դասարանները նախատեսուած են ամենատարբեր մակարդակների համար:

Կան նաեւ յատուկ դպրոցներ, մանկանոցներ՝ նախատեսուած աշխատող կանանց երեխաների համար: Այս հաստատութիւնները սովորաբար գտնւում են եկեղեցուն կից սենեակներում կամ պարտէզում: Դաստիարակները մեծ մասամբ կամաւորներ են եւ աշխատում են քահանաների առաջնորդութեամբ:

Անգլերէնից թարգմանեց
Սարգիս Այվազեանը

ՋԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁԱԳԵՑԻ (855-877)

«ՃԱՌՔ»

Աշխատասիրութեամբ ճ. Պօղոս Անանեանի
Վենետիկ, Ս. Ղազար, 1995, 543 էջ

Սոյն հրապարակումը «Մատենագրութիւնք նախնեաց» շարքի Մէ հատորն է: Երկար սպասուած հատոր, որ, առաջին անգամ լինելով, ամբողջացնում է մեծանուն հայրապետի ճառագրական անտիպ ժառանգութիւնը: Գիրքն ունի քննական հրապարակումներին վայել գիտական ապարատ, իւրաքանչիւր ճառից յետոյ ունի «Մանօթութիւններ» բաժինը, վերջում՝ Ցանկեր՝ «Յիշատակուած Ս. Գիրքի տեղիքներու» եւ «Յատուկ անուններու» (անձնական եւ տեղագրական):

Ճառերին կցուած Ներածութեան մէջ (էջ է-իէ) աշխատասիրողը պատշաճ համակողմանիութեամբ ներկայացնում է հեղինակի ապրած ժամանակաշրջանը («Կեանքը», «Աշոտ սպարապետ», «Դուինի երկրաշարժը,» «Կալանաւոր իշխաններու դարձը»), եկեղեցավարչական գործունէութիւնը («Շիրակաւանի ժողովքը»՝ 858 թ.), բանասիրական քննութեան ենթարկում Զաքարիա կաթողիկոսի անունով աւանդուած ճառական միաւորները, արծարծում հեղինակային պատկանելութեան հարցեր: Հեղինակի ճառերը, որոնք տարտղնուած են Ճառընտիրների մէջ, ընթերցուել են եկեղեցական այս կամ այն տօնի ժամանակ: Թուով տասնչորս այդ ճառերը նուիրուած են Քրիստոսի Մնդեանը, Յարութեանը, Համբարձմանը, Աստուածածնի Վերափոխմանը, ս. Եկեղեցուն, Ս. Խաչին եւ այլ տօների: Զաքարիայի ճառերը պարունակող համեմատաբար ամբողջական, ընդգրկուն ժողովածուն ՍՂՄ N 939 գրչագիրն է (13 ճառ, բացի առաջինից՝ «Ի Մնունդն Քրիստոսի»)՝ ընդօրինակուած ԴԶ-ԺԷ դդ.: Ճառերի քննական բնագիրը կազմուած է՝ համաձայն ՍՂՄ N 14, Վիեննայի N 2, ՍՅՄ N 2 եւ ՄՄ N 4 ձեռագրերի: Աշխատասիրողը մանրամասն նկարագրում է հիմք-ձեռագիրը (N 939), խօսում նրա «ուղղագրական յատկանիշների» մասին: Ներածութեան մէջ մասնաւոր բաժին է նուիրուած ճառերի աստուա-

ծաբանութեանը («Քրիստոսաբանութիւն», «Պատարագ եւ հաղորդութիւն», «Աստուածամայրը», «Եկեղեցին», «Պատկերայարգութիւն»): Զաքարիա կաթողիկոսի ճառերն աչքի են ընկնում վարդապետական բանիբուն դիտումներով, տեսական նրբին թափանցումներով: Դրանց գերակշիռ մասն ունի մեկնաբանական ուղղուածութիւն, ինչը յատուկ էր մասնաւորաբար վաղ շրջանի ճառերին: Հետեւելով ս. Գրիգոր Նազիանզացու (Աստուածաբանի) քրիստոսաբանական վարդապետութեանը («Ո՛վ նոր խառնումն, ո՛վ սքանչելի խառնուածոյս». «Ի Յայտնութիւն Տեառն», ՄՄ ձեռ. N 948, էջ 183բ) եւ արտայայտելով Հայ Եկեղեցու դիրքորոշումը՝ Զաքարիա կաթողիկոսը Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութեան միութիւնն անուանում է «խառնումն» (χρᾶσις): Իբրեւ Հայ Եկեղեցու կողմից ընդունուած եւ հաստատագրուած կայուն եզր՝ Զաքարիան այն կիրառում է՝ բնորոշելու համար բնութիւնների միութեան իրողութիւնը. «...ծնանի յայրին Աստուած եւ մարդ գոլով: Նորաձեւ հրաշափառ խառնին բնութիւնքն. քանզի աննիւթ եւ անմարմին բնութիւն Բանին միանայ ընդ նիւթական բնութիւնս հողեղէն՝ վասն փրկութեան մերոյ, զի զմերս զգենու զկերպարան եւ զանխառնելիսն խառնէ վերստին» (անդ, էջ 22, տ. 612-617): Նոյն ճառում դարձեալ կարդում ենք. «Ժամանակական բերմամբ առլցեալ, քանակաւոր ձեւով ըստ հասարակաց բնութեան մարդկան խառնի անճառաբար յանբաւ էակից Հաւր Բանն: Անդուստ յորովայնէ միանայ բնութեամբ՝ ըստ համակային տիոց աճմամբ մարմնոյ» (էջ 4, տ. 96-101): «Արդ, Յիսուս՝ Փրկիչ թարգմանի, եւ Քրիստոս՝ Աստուած: Արդ, Քրիստոս Յիսուսդ անուն ոչ յատուկ Աստուածութեան ասի եւ ոչ սոսկ մարդկութեան, այլ ի վերայ իւրաքանչիւր բնութեանց, միացելոցն եւ խառնեցելոցն, անճառ եւ հրաշափառ» (անդ, էջ 16, տ. 438-443): Այդ միութիւնն անբաժանելի է. «Եւ առող Բանն աւծանէ զվերառեալ մարդկութիւնն Իւր, եւ եղելոյ որ առաւն, որպէս որ էառն եւ աւծն, եւ այսպէս ի մի տեսակ հաւաքեալ անբաժ եւ անորիշ» (էջ 16, տ. 450-453): Սակայն «անբաժ եւ անորոշ» բնութիւնները մէկմէկու հետ յարաբերակցում են «անշփոթաբար»: «Այսպէս նորահրաշ եւ նորաձեւ եղեն բնութիւնք աստուածային եւ մարդկային խառնեալ անշփոթաբար ի միմեանս,- կարդում ենք Տիրոջ Մնդեանը նուիրուած ճառում,- ի մի անձն եւ ի մի դէմ եւ ի մի կերպարանս խառնեալ եւ միացեալ եւ ոչ փոփոխեալ յԻւրմէ Աստուածութենէն. քանզի անփոփոխելի է եւ անպարագրելի» (էջ 6, տ. 155-161):

Ուրեմն բնութիւնների անշփոթ խառնումն արդիւնաւորւում է մէկ անձի եւ մէկ դէմքի մէջ: Աւելի եւս ընդգծելու համար անձի եւ դէմքի միութեան պարագան՝ Զաքարիան հինկտակարանային Ուխտի տապանակի օրինակով շօշափելիօրէն տեսանելի է դարձնում աստուածաբանական այդ նրբանուրբ խնդիրը. «Եւ տապանակն պատեալ էր ներքոյ եւ արտաքոյ ոսկւով սրբով: Անճառ միութիւն Աստուածութեան եւ մարդկութեանն ի մի անձն եւ ի մի տեսակ միաւորեալ որպէս տապանակն յոսկւոյ եւ ի փայտէ մի տեսակ տապանակին, այսպէս եւ Քրիստոս յԱստուածութենէն եւ ի մարդկութենէս՝ մի Որդի» (էջ 48, տ. 276-281):

Հայ Եկեղեցու մարեմաբանութեան մի ոչ անկարեւոր պահն է ճշտորոշւում այն բառերով, որ ճառագիր հեղինակը դնում է Պետրոս առաքեալի շուրթերի վրայ. «...եւ ոչ կարէր զնա մահ զբռամբ ածել. քանզի ոչ գոյր յանարատ վարս սորա տեղի եւ ճարակ մահու: Այլ յաղագս նախահաւրն պարտեաց զմահ ճաշակեաց, դուզնաքեայ խուն ինչ ժամանակ, զպարտեաց կատարելոց զսահմանեալ արարչադիր իւրակութեան» («Ի փոխումն Աստուածամաւր Կուսին» էջ 449, տ. 762-769): Անդրադառնալով այս պահին՝ Հ. Պ. Անանեանը գրում է. «Հոս կարեւոր աստուածաբանական սկզբունք մը կը հաստատուի, թէ Աստուածամայրը ամբողջապէս անմեղ եւ անարատ ըլլալուն համար մահը անոր վրայ իշխանութիւն չունէր, բայց արարչադիր Օրէնքը կատարելու համար, որ Ադամի մեղքին պատճառաւ դրուած էր մարդկութեան վրայ, ինքն ալ փոքր ժամանակի համար մեռաւ: Երկու հաւաստումներն ալ կարեւոր են. թէ՛ անոր մահուընէ ազատ մնալուն պատճառը, այսինքն՝ մեղքէն զերծ մնալուն եւ անարատ ըլլալուն համար, եւ թէ՛ փոքր ժամանակի համար մահը ճաշակելուն» (էջ ԽԱ):

Իբրեւ ազգային եկեղեցու դաւանական անձեռնմխելիութեամբ մտահոգ հեղինակ՝ Զաքարիա կաթողիկոսը լաւագոյնս օգտագործում է անցեալի աստուածաբանական մտքի կարեւորագոյն ձեռքբերումները: Այսպէս, ճառերը շարադրելիս հեղինակն իր աչքի առջեւ ունեցել է ոչ միայն ս. Գրիգոր Աստուածաբանի Յայտնութեան (ինչպէս նկատում է Հ. Պ. Անանեանը), այլեւ Տիեզերական եկեղեցու այս հռչակաւոր վարդապետի «Ի Մկրտութիւնն» ճառը: Այս մասին է վկայում հետեւեալ զուգադրումը.

Գրիգոր Աստուածաբան

Երիս ծնունդս գիտէ մեզ բանս, որ ի մարմնոցն եւ ի մկրտութենէ եւ ի յարութենէ: Եւ յայսցանէ մին գիշերային է եւ աղախին եւ ախտաւոր... («Ի Մկրտութիւնն», ՄՄ ձեռ. N 946, էջ 26ա):

Զաքարիա կաթողիկոս

Քանզի երիս ծնունդս գիտեմ ես. առաջին՝ բանն որ ի մարմնոյն է եւ գիշերային կոչին եւ ախտաբեր եւ ընդ ծառայութեամբ ընթադրեալ. եւ երկրորդն՝ ջրով եւ հոգւով որդիագործեալ շնորհաւք Տուողին: Եւ երրորդն՝ սոսկալի եւ հրաշափառ, որ զոչ երեւեալն յական թաւթափելոյ յերեւոյթ վերածեալ՝ ի մի վայր գումարէ եւ Ստեղծողին հուպ կացուցանէ յատենին... («Ի Մեծի Համբարձման Տեառն», էջ 389, տ. 242-250):

Աստուածային եւ մարդկային բնութիւնների միաւորման խորհուրդը առաւել յստակ մեկնաբանելու նպատակով Զաքարիան «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառում գրում է. «Լոյս անստուեր յանժամանակ լուսոյն, եկեալ ի մարմին նիւթական, մարդկային բնութեամբ, եւ խառնեալ միացան բնութիւնք անյայտք եւ աննմանք, եւ եղեւ մի: Զոր աւրինակ երկաթ եւ հուր խառնեալ՝ շանթ ասի սեւ կամ ծիրանի, եւ աստ խառնեալ՝ մին տեսակ ասի յերկուց բնութեանց. այսպէս նորահրաշ եւ նորաձեւ եղեն բնութիւնք աստուածային եւ մարդկային խառնեալ անշփոթաբար ի միմեանս ի մի անձն եւ ի մի դէմ...» (էջ 6, տ. 149- 158): Կրակի եւ երկաթի յարաբերութեան օրինակը, որ պէտք է լայնօրէն կիրառուէր հայ դաւանաբանական մատենագրութեան մէջ (տե՛ս «Գանձասար» Բ, էջ 218, ծնթ. 66ա-66բ), հեղինակը քաղել է ս. Բարսեղ Կեսարացու «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառից. «Եւ զինչ աւրինակ ի մարմնում Աստուածութիւն, որպէս հուր երկաթում... ոչ փոխատրեաց ի նա զիւր տկարութիւնն» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», հրատ. Հ. Պ. Տէր-Պողոսեան, 1968, էջ 422, տ. 44-61): «Ի Մեծի Համբարձման» ճառում, խօսելով Տիրոջ Համբարձման ժամանակ երկնաբնակ «բանաւոր» էակների ուրախութեան, օրհնաբանական երգերի մասին, Զաքարիա կաթողիկոսը գրում է. «Եւ այսպէս զուարճացեալ հաճոյացան առաջին անդամքն, որ են հրեշտակք: Եւ փոխի յերկրորդ դասս հրեշտակապետացն եւ երկրպագեալ փառաւորեցաւ ի նոցանէ: Եւ անցանէ յերրորդ դասն, որ են տէրութիւնք, մխիթարեալ զնոսա եւ երկրպագեալ ի նոցանէ: Եւ համբառնայ ի չորրորդ դասն, որ կոչին

զաւրութիւնք, սփոփեալ զնոսա եւ բարեբանեալ ի նոցանէ, ի հինգերորդն համբառնայ ի դասն, որ կոչին պետութիւնք, հրճուեալ բարգաւաճէ զնոսա եւ երգաբանեալ ի նոցանէ, ի վեցերորդն թեւապարէ ի ջոկսն, որ կոչին իշխանութիւնք, եւ ցնծալից ուրախ առնէ զնոսա եւ երանաւետեալ ի նոցանէ, եւ յեւթներորդն վերաթեւեալ յերամս աթոռոցն հրճուեալ բերկրէ զնոսա, եւ բարեհամբաւեալ ի նոցանէ՝ յութերորդն փոխադրի ի պարս քերովբէիցն, եւ զուարճալից ուրախ առնէ զնոսա փառաւորեալ ի նոցանէ՝ յիններորդն վերամբառնայ ի հոյլս սերովբէիցն եւ խնդամտութեամբ լցուցանէ զնոսա սրբաբանեալ ի նոցանէ...» (էջ 403-404, տ. 564-586): Երկնային զաւրութիւնների ինը դասերի վերաբերեալ այս միտքը Զաքարիան անտարակոյս փոխառել է ս. Դիոնեսիոս Արեոպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկից (ՄՄ ձեռ. N 49, էջ 29բ-50ա): Թւում է, ինը դասերի մասնայատուկ յիշատակումն ունէր իր պատճառը: Ինչպէս երեւում է, այն աստուածաբանական պատասխանն էր յունական կողմի հայերին ուղղուած այն մեղադրանքի, թէ Հայոց Եկեղեցին չի ճանաչում եւ չունի նուիրապետական իննաստիճան համակարգ:

Աշխատասիրողը արդէն նկատում է, որ Զաքարիայի քրիստոսաբանութիւնը, որ հարազատ արտայայտութիւնն է Հայ Եկեղեցու վարդապետութեան, հիմնուած է ս. Կիւրեղ Ալեքսանդրացու դաւանական դրութեան վրայ (էջ ԼԴ): Այս դրսեւորւում է ոչ միայն քրիստոսաբանական ընդհանուր համակարգի մէջ, այլեւ (առանց հեղինակի անուան յիշատակման) նրա երկերից քաղուած բառացի վկայաբերմամբ: Այսպէս, «Քրիստոս յերկուց բնութեանց միացեալ՝ յանմարմին Աստուածութենէն եւ ի մարդկային մարմնոյն...» («Ի սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի», էջ 474-475, տ. 515-517) արտայայտութեան ընդգծուած բառերը ս. Կիւրեղի ἐκ δύο φυσεων εἷς («Յերկուց բնութեանց մի») խօսքի բառացի պիտառումն են:

Զաքարիա կաթողիկոսը քաջատեղեակ է եկեղեցական աւանդութեանը: Նրա ճառերում առկայ են տեղեկութիւններ, որոնք ճառագիր հեղինակը քաղել է հնաւանդ պատմութիւններից ու պարականոն զրոյցներից: Այսպէս, «Ի Մնունդն Քրիստոսի» ճառում ասում է, որ Բեթղեհէմի քարայրը, ուր ծնուեց Յիսուս, էր «շիրիմ նախամաւր Եւայի» (էջ 13, տ. 371), իսկ «Ի Մեծի ուրբաթին» ճառում հաստատելով արձանագրում, որ Գողգոթան, ուր խաչուեց Տէրը, «է շիրիմ առաջնաստեղծ մարդոյն, զոր յաւուրս ջրհեղեղին առեալ Նոյ ի տապանն, եւ ի զիջանել ջրոյն՝ զԱդամայն պահեաց ի Գողգոթայ եւ Եւային ի Բեթղեհէմ...» (էջ 282, տ. 693-697): Ամենայն հաւանականութեամբ այս աւանդութիւնը հեղինակը քաղել է ս. Եպիփան Կիպրացու Աւետարանի մեկնութիւնից, որ հայերէն է թարգմանուել Ե դարում (ՄՄ ձեռ. N 4750, էջ 949): Աստուածաշնչի պարականոն զրոյցներից է քաղուած Աստուածածնի ծնողների՝ Յովակիմի եւ Աննայի պատմութիւնը (էջ 432-434), որ մի տարբերակն է «Մեծի աստուածայայտնութեան ճրագալուցին Յովակիմայ եւ Աննայի ծնողացն Մարիամու Աստուածածնի» կամ «Յաղագս ծննդեան ամենասրբուհւոյ Աստուածածնին եւ ամէնօրհնեալ Կուսին Մարիամու ի ծնողաց իւրոյ ի Յովակիմայ եւ յԱննայէ ի պատմութեանց գրոց սրբոյն Յակոբայ եղբօր Տեառն» պարականոնում առկայ զրոյցի («Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց. Բ. Անանուն գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898, էջ 1-6): Տիրամօր կեանքի հետ կապուած պատմութիւնները եւս հեղինակը բերում է պարականոն զրոյցներից (Զաքարիա, էջ 441, 447): Զաքարիայի օգտագործած աղբիւրները պարունակում են ուշագրաւ մանրամասներ, որոնք յաճախ իւրովի լրացնում են պարականոններից արդէն յայտնի պատումները:

Զաքարիա Զագեցի կաթողիկոսի ճառերը նպաստամատոյց են նաեւ հայոց լեզուի բառագանձի հետազօտման համար: Նրանց մէջ առկայ բազմաթիւ բառամիաւորներ բացակայում են Նոր Հայկազեան բառգրքում:

Ըստ ամենայնի բարձր գնահատելով աշխատասիրողի հմտութիւնն ու ջանքը՝ այսուամենայնիւ հարկ ենք համարում արձանագրել հետեւեալը: Ոչ առանց մասնաւոր նկատառման տուրք տալով մխիթարեան հայագիտութեան մէջ ընդունուած յայտնի մօտեցումին՝ վաստակաւոր բանասէրը աստուածաբանական անհրաժեշտութիւնից չբխող զուգահեռներ է անցկացնում Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումների եւ Զաքարիա կաթողիկոսի քրիստոսաբանական հայեացքների միջեւ: Դարձեալ ժամանակավրէպ է թւում աշխատասիրողի նկատումը «Հռոմի աթոռի» գերագահութեան վերաբերեալ Զաքարիայի ճառերում առկայ խորհրդածութիւնների կապակցութեամբ (էջ ԽԳ):

Նկատուած թերութիւնները, սակայն, ի զօրու չեն նսեմացնելու կատարուած հսկայական աշխատանքը: Զաքարիա Զագեցի կաթողի-

կոսի ճառերի ներկայ հրապարակումն անտարակոյս կարեւոր ներդրում է արդի հայագիտութեան, մասնաւորաբար՝ աղբիւրագիտութեան մարզում: Այն կարող է իր լուրջ նպաստը բերել հայ աստուածաբանական մտքի առաւել համակողմանի ու խոր հետազօտման գործին:

Յակոբ Քեոսէեան

ՀԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

«Գանձասար» կենտրոնը հրատարակութեան է պատրաստում «Հայ աստուածաբանական մատենադարան» շարքը, որը ներառելու է հայ հայրերի եւ նշանաւոր վարդապետների բոլոր աստուածաբանական երկերը: Այս շարքը կամ մատենաշարը, փաստօրէն, ոչ միայն հայ աստուածաբանական մտքի լիակատար ներկայացման առաջին փորձն է, այլ առհասարակ հայ հոգեւոր կեանքի օրինաչափութիւնների բացայայտման, դասակարգման եւ վերաարժեւորման մի եզակի ձեռնարկում է մեր իրականութեան մէջ:

Մեր հոգեւոր ժառանգութեան համակարգուած ներկայացման խնդիրը վաղուց արդէն դարձել է մի հրամայական պահանջ՝ նկատի ունենալով, որ մեր մատենագրութեան պատկառելի մասի հրատարակուած չլինելու պատճառով հնարաւոր չէ որեւէ ամբողջական պատկերացում ձեռք բերել հայ աստուածաբանական մտքի օրինաչափութիւնների եւ առանձնայատկութիւնների մասին: Միւս կողմից՝ արդէն հրատարակուած բնագրերը հիմնականում չունեն արդի բնագրագիտութեան պահանջներին համապատասխան քննական մակարդակ, իսկ թարգմանական մարզում իրավիճակը առաւել եւս հեռու է գոհացուցիչ լինելուց. կատարուած հատուկենտ թարգմանութիւնները յենուած չեն ո՛չ բնագրագիտական լուրջ քննութեան վրայ, ո՛չ աստուածաբանական գիտելիքի բաւարար իմացութեան վրայ:

Մօտ մէկուկէս տարի է, ինչ «Գանձասար» կենտրոնում իրականացւում են «Հայ աստուածաբանական մատենադարանի» հրատարակման անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Իւրաքանչիւր հատորի համար կատարւում է առանձին մատենագիտական քննութիւն, որոշադրւում է այն գրչագրերի քանակը, որոնցով հնարաւոր է առաւել անաղարտօրէն վերականգնել տուեալ բնագիրը, զուգահեռաբար կատարւում են թարգմանութիւններ: Բնագրային եւ թարգմանական աշխատանքների նմանօրինակ զուգահեռումը պայմանաւորուած է հետեւեալ կարեւոր նկատառումով: Գիտական թարգմանութեան համար նախ եւ առաջ անհրաժեշտ է քննական բնագիր: Սա-

կայն գոյութիւն ունի յետադարձ կապ բնագրի եւ թարգմանութեան միջեւ. թարգմանութիւնը մեծապէս նպաստում է բնագրի առաւել ճշգրիտ վերականգնմանը եւ զերծ պահում խաբուսիկ իմաստային ըմբռնումներից: Իրականում բնագիրն ու թարգմանութիւնը լծորդուած եւ փոխկապակցուած հասկացողութիւններ են, եւ քննական բնագիրն անպայմանօրէն պէտք է ուղեկցուի զուգահեռ թարգմանութեամբ: Սրանով առաւել եւս յստականում է թարգմանութեան իմաստն ու նպատակը. այն ընդարձակ գիտական մեկնաբանութիւն է քննական բնագրին, որով ցուցադրւում է տուեալ բնագրի ըմբռնման աստիճանը այսօրուայ լեզուամտածողութեամբ օժտուած մարդու կողմից: Հետեւաբար պէտք է խուսափել անհարկի իմաստային եւ լեզուական երանգների ներմուծումից թարգմանութեան մէջ եւ ծայրագոյն ճշգրտութեամբ վերարտադրել բնագրի իմաստները:

Մեր աշխատանքների արդիւնքում ձեւաւորուեցին մատենաշարի պատրաստման հիմնական սկզբունքները, որոնք հակիրճօրէն ներկայացնում ենք ստորեւ.

ա) մատենաշարն ընդգրկելու է հայ հայրերի եւ նշանաւոր վարդապետների աստուածաբանական վաստակը, բաց են թողնուած նրանց պատմագիտական, բնագրագիտական եւ այլ բնոյթի երկերը.

բ) հատորները լինելու են անուանական եւ համարակալուելու են ըստ ժամանակագրական հնութեան.

գ) ներկայացուելու են իւրաքանչիւր հեղինակի անունով մեզ հասած թէ՛ վաւերական, թէ՛ անվաւեր երկերը.

դ) բոլոր նոր պատրաստուող բնագրերը լինելու են քննական, սակայն որոշ դէպքերում բնագիրը կարող է ներկայացուել ըստ հնագոյն գրչագրի, եթէ քննութիւնը ցոյց է տալիս, որ ուշ ընդօրինակութիւններն էական տարբերութիւններ չեն տալիս.

ե) որոշ դէպքերում նոյնաբար ներկայացնելու ենք արդէն հրատարակուած բնագրերը, եթէ նրանք կատարուած են անհրաժեշտ գիտական մակարդակով եւ ըստ հնագոյն գրչագրերի (խօսքը գլխաւորաբար վերաբերում է Ս. Ղազարի որոշ հրատարակութիւններին).

զ) բնագրին զուգահեռ ներկայացուելու է արեւելահայերէն թարգմանութիւնը.

է) իւրաքանչիւր բնագիր ունենալու է իր վերնագրային յապաւում, համարակալուած է լինելու ըստ պարբերութիւնների եւ ըստ նախադասութիւնների.

ը) ծիսական մատեանները, որպէս ժողովածուներ, հրատարակուելու են առանձին հատորներով, ուստի ծիսական մատեանների առանձին միաւորներ չեն ներկայացուելու հեղինակային հատորներում (օրինակ՝ շարականներ, ծիսական աղօթքներ, վարքեր եւ այլն).

թ) իւրաքանչիւր հեղինակի երկերից առաջ տրուելու է հակիրճ ներածական, որն ունենալու է բնագրագիտական եւ աղբիւրագիտական բնոյթ.

ժ) զուգահեռաբար ներկայացուելու են առանձին հատորների անգլերէն, գերմաներէն եւ ռուսերէն թարգմանութիւնները:

«Հայ աստուածաբանական մատենադարան» շարքի հրատարակման նախապատրաստութեան մատենագիտական քննութեան շնորհիւ նախ եւ առաջ բացայայտուեցին այն ծաւալները, որոնց հետ մենք գործ պիտի ունենանք: Նախնական հաշուարկով՝ մինչեւ ԺԷ դար (մինչեւ Ղուկաս Կեղեցի) շարքը կազմելու է աւելի քան հարիւր հատոր: Բնականաբար, այսպիսի մեծածաւալ շարքի հրատարակման ծրագիրը պէտք է ունենայ իրագործման որոշակի փուլականութիւն: Ծրագրի առաջին փուլը կամ մասը ներառում է ս. Գրիգոր Լուսաւորչից մինչեւ Յովհաննէս Սարկաւագ (1129 թ.) ընկած ժամանակաշրջանը եւ կազմում է երեսուն հատոր: Այժմ «Գանձասար» կենտրոնը հիմնականում աշխատում է այս առաջին փուլի իրագործման ուղղութեամբ, որի հատորների ցանկը ներկայացնում ենք ստորեւ.

Ա-Բ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Գ. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ, ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, ԿՈՐԻՒՆ, ԵՂՆԻԿ

Դ. ԵՂԻՇԷ

Ե. ԽՈՐԵՆԱՑԻ, ՄԱՄԲՐԷ, ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎ

Զ. ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ

Է. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Ը. ԲԱԲԿԷՆ ՈՒԹՄՍԵՑԻ, ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵՒԱՆՑԻ, ՅՈՎՀ. ԳԱԲԵՂԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ, ՄՈՎՍԷՍ ՅՈՒՐՏԱՒԱՑԻ, ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ, ԱԲՐԱՀԱՄ ԱՂԲԱԹԱՆՑԻ, ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԳՐԻԳՈՐ

ՔԵՐԹՈՂ

Թ. ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻ, ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵՑԻ, ԹԷՈԴՈՐՈՍ ՔՈԹԵՆԱՒՈՐ

Ժ. ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ, ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, ՍԱՀԱԿ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ

ԺԱ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԺԲ. ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ

ԺԳ. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ

ԺԴ. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

ԺԵ. ՋԱՔԱՐԻԱ ՁԱԳԵՑԻ, ՇԻՐԱԿԱՒԱՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԺԶ. ՀԱՄԱՄ ԱՐԵՒԵԼՑԻ

ԺԷ. ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ, ՍԱՀԱԿ ՄՌՈՒՏ, ԱՏՈՄ ԱՆՁԵՒԱՑԻ, ՏԻՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ, ԱՐԱՄ, ԱՐՏԱՒԱԶԴ, ԹՈՎՄԱ

ԺԸ. ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ

ԺԹ. ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

Ի-ԻԱ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԻԲ. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

ԻԳ-ԻԴ. ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ

ԻԵ. ՅՈՎՀ. ԿՈՋԵՌՆ, ԳԷՈՐԳ ՄԵՂՐԻԿ, ՎԱՐԴԱՆ ԱՆԵՑԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

ԻԶ. ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ, ՎԱՐԴԱՆ ՀԱՅԿԱԶՆ

ԻԷ-ԻԸ. ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑԻ

ԻԹ-Լ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Հատորները, գրքային հրատարակումներից զատ, մատչելի են լինելու նաեւ էլեկտրոնային հրատարակութիւնների տեսքով (օրինակ՝ լազերային սկաւառակներով), որը առաւել կդիւրացնի բնագրերի վրայ կատարուող ուսումնասիրական աշխատանքների զանազան դժուարութիւնները: Նիւթական դժուարութիւնների պատճառով մատենաշարի տպաքանակը լինելու է խիստ սահմանափակ եւ տարածուելու է միայն բաժանորդագրութեան միջոցով: Անշուշտ, եթէ կգտնուեն իրենց անունները յաւերժացնել ցանկացող բարերարներ, որոնք կհոգան այս կամ այն հատորի հրատարակման ծախսերը, մենք հնարաւորութիւն կունենանք ընդարձակել մեր հրատարակչական սահմանները: Մատենաշարի մասին շուտով կհրատարակուի առանձին բուկլետ, ուր աւելի մանրամասն ներկայացուած կլինեն հատորների հրատարակման սկզբունքները, ժամկէտները եւ բաժանորդագրութեան պայմանները:

Մեսրոպ քահանայ Արամեան

Կազմը՝ **Արմեն Քիւրքչեանի**

մուտքագրողներ
Աշխէն Ղարագեօզեան,
Անահիտ Գրիգորեան,
Գայիանէ Ինիջեան,
Մարինէ Մկրտչեան

վերստուգող սրբագրիչ
Շուշան Վարդանեան
սրբագրիչ
Անուշ Սիմոնեան
էջադրող
Արայիկ Ստեփանեան

տպագրութեան պատասխանատու՝ **Միսաք Քանսուզեան**
տպագրիչ՝ **Յարութիւն Սմսարեան**
կազմարարներ՝ **Սահակ Հայրապետեան, Մալաք Արամեան**

«ԳԱՆՁԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոնի տպագրատուն